



ՀԱՄԱՐԵԼ
ԴԵՄՈՒՆԵՐԻ

9(47.925)
4h-70


ՀԱՅ
ՄԱՏԵ
ՆԱԳԻՐ
ՆԵՐ

ԼՆԱԲԵՆ ԻՆՎԵՐՏԻՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունը, առաջաբանը
և ծանուցագրությունները
վարագ Առաքելյանի

2428



Հրատարակության է երաշխավորված ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանի գիտական խորհրդի կողմից:

Խմբագրական կոլեգիա՝
Արզարյան Գ. Ղ., Արևշատյան Ս. Ս.,
Դերիկյան Գ. Խ., Նալբանդյան Վ. Ս.,
Տեր-Ղևոնդյան Ա. Ն.

Բնագրի հետ համեմատեց և խմբագրեց Վ. Գ. Համբարձումյանը

Առախել Դավրիժեցի.

Ա 706 Պատմություն | Առաքել Դավրիժեցի [բնագրի հետ համեմատեց և խմբ. Վ. Գ. Համբարձումյանը] — Եր.: Սովետ. գրող. 1988. 592 էջ. [Հայ մատենագիրներ խմբ. կոլեգիա՝ Արզարյան Գ. Ղ. և ուրիշ.]:

Առաքել Դավրիժեցու «Պատմություն» մեջ նկարագրված է հայ ժողովրդի՝ 1602—62-ի քաղաքական զրույթունը: Որպես ժամանակակից, պատմիչը մանրամասն նկարագրում է Շահ-Աբաս I հրամանով 1604 թ. հայերի բռնագաղթը, ժողովրդի տառապանքները:

Ա 4702080101 (34) 8.88
705(01)88

ԳՄԴ 8421
ԵՅ.Յ(22)

ISBN 5—550—00008—3

ՀԱՅԿԵՆԿԱՆ ԳՐԱԴՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՏԱՐԱՆԿՆԵՐԻ ԲԱՐԳՄԱՆԵՐԻ, ԱՌԱՋԻՆԻ, ԵՆԱԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ, ԿՄԲԱԳՐԱՆ ԵՎ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԵՄԻՄ, 1988

Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Առաքել Դավրիժեցին հավանորեն ծնվել է 16-րդ դարի վերջերին, Ատրպատականի Քավրիզ քաղաքում, այդ պատճառով էլ կոչվել է Դավրիժեցի (Քավրիզեցի): Նրա մասին մինչև էջմիածնի միաբան դառնալը տեղեկություն չկա: Հայտնի չէ, թե ինչ կրթություն է ստացել, ինչպես է ընկել էջմիածին: Միայն գիտենք, որ էջմիածնում եղել է Փիլիպոս կաթողիկոսի աշակերտը, և Փիլիպոսը նրան ուղարկել է մի շարք երկրներ իբրև նվիրակ: Նա համփորդել է Հունաստանում, եղել Սպահանում, Սերաստիայում, Ուսճայում, Հայկսում, Անկարայում և այլն: Այս համփորդությունների ընթացքում նյութեր է հավաքել իր գրելիք պատմության համար: Պատմություն գրել նրան հանձնարարել է Փիլիպոս կաթողիկոսը 1651 թվականին, այն ժամանակ, երբ իր ասելով, ժեր մարդ էր: Ուրեմն, երբ նա ստանձնեց պատմություն գրելու հանձնարարությունը, առնվազն վախճանանց պետք է լիներ: Շահ-Աբասի՝ հայերի առաջին տարագրության ժամանակ (1603 թ.) Առաքելը տասնչորս-տասնհինգ տարեկան պետք է լիներ, որովհետև հիշում է. «Ես ինքս տեսել եմ Հայաստան աշխարհի ավերակ և մեր ազգի նվազելն ու մահմեդականների շարությունը»: Այս ասելով՝ նա նկատի ունի հայոց մեծ տարագրությունը և հաջորդած ահաբեկությունը 1606—1609 թվականներին:

Առաքել Դավրիժեցին եղել է էջմիածնի միաբան վարդապետ: Փիլիպոս կաթողիկոսը հանձնարարելիս հատկապես նկատի ուներ հայոց մեծ տարագրությունը և Հայաստանի անախատումը: Դավրիժեցին ջանում է խույս տալ դժվարին պարտականությունից, բայց չի կարողանում: Կաթողիկոսի հարկադրանքի տակ 1651 թվականին սկսում է աշխատանքը: Չորս տարի աշխատելուց հետո՝ 1655 թվականին, Փիլիպոսի մահվան տարում դադարեցնում է աշխատանքը՝ վճռելով այլևս չգրազվել դրանով: Փիլիպոսին հաջորդած շուղաշեղի Հակոբ կաթողիկոսը նույնպես ստիպում է, որ շարունակի և վերջացնի պատմությունը:

Երեք տարի հետո՝ 1658 թվականին նորից ձեռնարկում և շորս տարի հետո 1662 թվականին ավարտում է պատմությունը՝ ներկայացվող ժամանակով ու զլխակարգությամբ: Առաքել Դավրիժեցին գրել է 60 տարվա պատմություն՝ 1602-ից մինչև 1662-ը: Սրանից հետո նա ապրել է ևս ութ տա-

րի: Գիրքը լույս տեսավ 1669 թվականին, մահվանից մի քանի տարի առաջ, Դավրիժեցին այս առումով երջանիկ էր: Գիրքը Ամստերդամում հրատարակեց Ոսկան Սրեանցին, խմբագրելով առանց կաշկանդումների և բովանդակաչափ ազավաղելով բնագիրը: Բայց մինչ այդ հեղինակը հասցրել է իր ծախքով գիրքը բազմացնել տալ մինչև 7 օրինակ: Ըստ նրա հայտարարության գիրքը գրվել է այլևայլ վայրերում, բայց սկիզբը և ավարտը շարագրվել են էջմիածնում:

Առաքել Դավրիժեցին վախճանվել է էջմիածնում 1670 թվականին և թաղված է Գայանե եկեղեցու մոտ գտնվող գերեզմանատանը: Երբիմը ծածկված է մի անշուք ու փոքր քարով, որի վրա գրված է՝ «Պատմագիրն այս է տապան Առաքել վարդապետին ՌՃԺԹ թուին (1670)»:

Հր. Աճառյանի հավաստումով Դավրիժեցու տոհմի սերունդները ապրում են Թավրիզի հայոց Աստվածածին եկեղեցու ներանցքում Պատմագրյան սզգանունով:

Գիրքն ունի 57 համարակալված գլուխներ (Ա—ՄԶ): Համարակալված չեն գլուխ ՍԱ- ից եկող հատվածները՝ «Կարգ օսմանցուց թագաւորացն», «Վասն օսմանցուց թագաւորաց, թե ո՞չք են մի զկնի միոյ», «Այլևս բան վասն օսմանցուց թագաւորաց»: Այլևս բան և կար օսմանցուց թագաւորացըն»: Ապա ՄԲ-ից հետո ևս երկու հատված՝ «Անուանք ականց» և վասն անուանց և որպիսութեանց: Այլև՝ զլ. ՄԴ-ից հետո՝ «Այլևս բան վասն փանզագրին»: ՄԵ-ից հետո ևս մի փոքրիկ հատված. «Բանք համաօտք նշանակաւք թուականու յսկզբանէ մինչևց մեր ժամանակա»: ՄԶ գլխից հետո մի բնորոշակ հատված կա, որ համարակալված չէ. «Պատմութիւն անցից հըրլից ազգին և Սպաւթայ անուն ջհտին...»: Այս հատվածից հետո ՄԶԷ-ն կրկնվում է՝ «Պատմառ առնելոյ զգիրս պատմութեանց, յորում և յիշատակարան առնողին»: Բացի «Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ ծարեցի Յովհաննէս վարդապետին», որ ունի ՄԴ համարը: Առաքել Դավրիժեցին ուրիշներից վերցրած նյութերը չի համարակալել:

Սրանից հետո հաջորդ գլուխներում բացվում են վրացիների վերաբերմամբ Շահ-Աբասի նենգավոր քաղաքականությունը ներքին ծալքերը, քաղաքականություն, որի նպատակն էր վրաց թագավորների ու իշխանների բնաջնջումը և երկրի նվաճումն ու ստրկացումը: Առաքել Դավրիժեցին այս երկու պարագայում էլ փայլում է իրրև պատմիչ և բունկականների գաղտնի մտադրություններին գիտակ: Հետագա գլուխներում (ԺԳ, ԺԴ, ԺԵ) պատմվում է այն նեղությունների և աղքատության մասին, որ տարագրված հայությունը բաշտում էր օտար հորիզոններում:

ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ գլուխներում նկարագրվում է էջմիածնի անկյալ վիճակի, Մելիքիսեթ կաթողիկոսի արկածների, շահամուրթյան, կաշառակերություն և այլ արարքների մասին, որոնց պատճառով վանքն ընկնում է ծանր պարտքերի տակ և հոգևորականությունը պատակալվում է. հայոց եկեղեցին անշքանում և կորցնում է վաղեմի փառքը: Նկարագրվում են նաև

կաթողիկոսության աթոռին հետամուտ հոգևորականների զգվտացն ու շարարարքները, կաթողիկոսների փախուստը էջմիածնից:

Սրանց զուգահեռ մի շարք գլուխներում Առաքել Դավրիժեցին հիշատակում ու պատմում է այն հոգևորականների մասին, որոնք կրթական լայն գործունեություն են ծավալում, իրենց աշակերտներին քրիստոնեական գրականությունից բացի ուսուցանում են փիլիսոփայական գրքեր՝ Արիստոտել, Պլատոն, Պորփյուր և այլն: Անկման հետ նաև վերելքի շուռչ է առաջանում երկրում: Այս առումով ուշագրավ են երկի ԻԱ, ԻԲ, ԻԵ, ԻԶ, ԻԹ գլուխները:

Այստեղ են ընկած ԻԷ, ԻԸ գլուխները, որոնք այլ տեղում պետք է լինեին: Առաջինը Անդրեաս երեցի նահատակության պատմությունն է, որի սխրանքը արժեք, որ պատմության նյութը դառնար: Կա կեղում է պատանի աշակերտներին, որ տեղը երևան և շահի առևանգման ու պղծության զոհ շղանան: Եվ շահ, այս բանը իմանալով, Անդրեասին սրախողխող է անել տալիս: Անդրեսը զոհվում է, բայց մի տանչակ, գուցեև ավելի հայ աշակերտներ ազատվում են պիղծ անարգանքից ու կորստից: Անդրեաս երեցի նահատակության պատմությունը շատ է հօշիւ սերունդներին: Մուրացանը մշակել է իրրև գեղարվեստական գրվածք «Անդրեաս երեց» խորագրով:

Սրա համեմատությամբ մյուս նահատակությունները, որ այնքան ողբվորությամբ պատմում է Դավրիժեցին, զուտ կրոնական մոլեռանդության արդյունք են (տես գլուխ ԽԵ, ԽԶ, ԽԷ, ԽԸ): Մի նահատակության պատմություն էլ շարադրված է ԺԳ գլխում, որն ունի հասարակական ու ազգային նշանակություն. ձեռք բահանայի բռնի մահաբանականացման այս պատմությունն է, որ Հովհաննես Թումանյանը մշակել և ստեղծել է հրաշակերտ «Թագավորն ու շարչին»:

Շահ-Աբասի բռնազաղթից և հատկապես 1639 թվականի Իրանա-թուրքական հաշտությունից հետո սկսվում է մի խաղաղ շինարարական, ստեղծագործական և մտավոր զարգացման աշխուժացում: Հայ ժողովուրդը ամեն ահավոր ժամանակներում, երբ կանգնած է լինում ստույգ ու հավաստի կործանման շեմին, ուժեր է հավաքում ապրելու, զարգանալու, մտավոր ու շինարարական նոր եռանդ մեղտեղ բերելու ոչ միայն հարատևելու, այլև իր կործանված մշակույթը վերականգնելու ու զարգացնելու համար: 17-րդ դարում Հայաստանի ողջ տարածքի վրա հիմնվում կամ վերանորոգվում են վանքեր և իրրև կանոն դրանց կից բացվում են դպրոցներ, որոնց մասին Դավրիժեցին շատ մանրամասն է խոսում: Նա հատկապես նշում է Մյունիքի Մեծ անապատի ու Բաղեշի դպրոցների մասին: Դպրոցներ են բացվում և մտավոր շարժում է առաջանում նաև գաղթօթյախներում: Խաշատուր Կեչառեցին և Միմեոն Զուլայեցին դպրոց են բացում նոր Զուղայում տարագրված հայության մեջ ուսումն ու գրականությունը տարածելու համար, այնտեղ էլ ձեռագրեր են գրվում և նկարազարդվում:

Դավրիժեցին հրաշալի ծանոթ է հայ գրականությանը և գրական մըշակներին, Զաքարիա Սարկավազը, որ անձամբ ծանոթ է եղել նրան, գրում է, որ վերջինս տեղյակ էր բոլոր պատմագիրներին, և իսկապես բընա-

րական սքով վերլուծում ու զնահատում է այս կամ այն գիրքը, նշում ներ-
րանց թերիներն ու առավելությունները:

Դավրիժեցուն քառածանոթ է նաև լեհահայոց կյանքին, նիկոլ Քորո-
սովիչի գործունեությունը վերլուծում է ամենայն մանրամասնությամբ, գա-
տապարտում նրա հակաղղային արարքները՝ որակումների մեջ խորություն
չդնելով: Լույս տեսնելու ժամանակներից մինչև այսօր Դավրիժեցու գիր-
քը զնահատվում ու վերազնահատվում է ըստ արժանվուն: Ժամանակա-
կիցները շատ բարձր են դասել նրա գիտելիքները, իսկ սույն երկը գիտել
իրրև ճշմարիտ ու հավաստի պատմությունն Ջաքարիա Սարկավազը իր
«Պատմություն» մեջ հաճախ է վկայակոչում Դավրիժեցուն, ի վերջո նրան
բնութագրում այսպես. «Առաքել Վարդապետն, որ տեղյակ էր ամենայն
պատմագրաց»²:

Դավրիժեցուն բարձր է զնահատում նաև նրա ժամանակակից Ստեփա-
նոս Լեհացին, որ նույնպես անձնական ծանոթություն է ունեցել և մոտիկ
է եղել նրան: Լեհացին գրում է. «Այն ժամանակ երևելի վարդապետներ
շատ կային (էջմիածնոս), որոնք ճարտարախոս, աստվածաշնչական զրո-
քերի խոսքասեղծ, ճարտար, գիտուն և հմուտ: Դրանցից մեկն էր Առաքել
Վարդապետ պատմագիրը, որը հայրապետների և թագավորների ժամանա-
կագրությունները գեղեցիկ ու պատշաճ խոսքով գրոշմել է»³:

Մևրուպ Քաղիաղայանը միայն հակադրվում է Դավրիժեցուն, ԵՊՀ-
Աբասի հայերին տարադրելու հարցում, երբ Դավրիժեցին միանգա-
մայն ճշմարիտ է և արդար թե՛ իր ժամանակի, և թե՛ ներկայիս տեսակե-
լունից գիտելով: Քաղիաղայանը գրում է. «Այստեղ մանրամասն է նկարա-
գրում Առաքել Վարդապետ Դավրիժեցին մեծ արքայի հարվածները, դրա-
մաշորթությունները, գերեվարությունները՝ նրան ցույց տալով իր հոռու-
թյան մեջ իբրև աշխարհի ծայրահեղ բարբարոսներից մեկը: Իսկ եթե երե-
վույթները արդարորեն կշռադատել կամենաք, նույն Առաքելի գրվածքից
այնպիսի բարի վարք կգտնենք նրա մեջ, մինչև իսկ աշխարհի շատ քիչ
թագավորներ կարող են ունենալ»⁴:

Ահա Քաղիաղայանի՝ շահին արդարացնելու անարդարությունը:
Ստեփանոս Նազարյանը մի կարճ խոսքով այսպես է բնութագրում. «Պար-
զությունը և անկաշխանդվածությունը Առաքելի շարագրանքում խոսում են
նրա պատմության հավաստիության և անկեղծ ու շիտակ բնույթի մասին»:

Հնունյալ խոսքերով է բնորոշում Առաքել Դավրիժեցուն Անտոյ Ալիշա-
նը. «Է՛նտ կանոնավոր պատմւց ժԳ դարու և ժԳ-ին սկզբան արժանավոր
պատմիչ մի շէ հասած մեզ հետագա դարերուն մինչև ի սա, իրմէ առջի
երկու գարուց պատմիչներին և թե իրմէ վերջնոց ամենեն լավագույնն է
և կարժն օրինավոր պատմւց դասակցելը»:

Բանասերները զժգահ են Դավրիժեցու պարզ ու անպահույճ պատմելու

ձևից և լեզվից: Ջարպահանայանը հետևյալն է ասում. «Ո՞ն կողմանի որ-
շարի ալ զովելի հայրենասիրության մը հորդորամիտ ըրած է զինքն առ
այն,— ընտիր լեզու մը ունենալ շատ հեռու կը սեպվի»⁵:

Դժբախտաբար այսպես է մտածում նաև Ալիշանը: Նա գրում է. «Եթե
և հայաբանությամբ ստորին է, բայց կարգաբանությամբ զովելի և շատ
հարգի և պատվական է ծանոթությամբ Ժէ դարու սկզբեն մինչև ի կենն
ավելի անդին, այն ժամանակից քաղաքական մեծ դիպաց նկատմամբ»⁶:
Դժգոհությունը եթե միայն վերաբերի օտար արևելյան բաների
գործածությունը, այսօրվա տեսակետով արդարանալի կլինեն, սակայն
վերապահությունը ընդհանրապես լեզվի մասին է, որը մեր կարծիքով ոչ
միայն պարզ, դուրսմտաշնչի գրաբար է, այլև այդ դարում, երբ լատինա-
բանության վտանգ կար և խրթնաբանությունը համարվում էր արվեստ ու
հմտություն, Դավրիժեցու պարզ ու անպահույճ լեզուն վերածննդի դրսևորում
է: Եթե նա չլինի կրոնամոլ, սնահավատ, նրա պատմությունը լեզվական
և մանաճանդ ազգային ըմբռումների առումով վերազարթի շատ տարրեր
կունենար:

Ամենախիստը Մանուկ Աբեղյանն է արտահայտվելու նա զսեղում է, որ
պատմության մեջ շատ կրկնություններ ու ավելորդաբանություններ կան:
Ըստ Աբեղյանի, Դավրիժեցին իր աղբյուրները չի կարողանում մշակել,
ինչպես լսել է զանազան մարդկանցից, այդպես էլ շարագրել է, ուստի և
այն զանազան զրույցների անմշակ ժողովածու է: Աբեղյանը շատ կտոր-
ներ համեմատում է իրար հետ կապ չունեցող անկախ զրույցներ. օրինակ,
անկախ զրույցներ են բազմաթիվ նահատակությունները, վկայաբանություն-
ները չալալիների Եճ-Աբասի մասին պատմածները, և առհասարակ՝ բո-
լոր պատմությունները⁷:

Եթե այսպես դատենք, ապա մեր ողջ պատմագրությունը զրույցների
գրքեր պետք է համարենք, որովհետև իրարից անկախ նման նյութեր բո-
լոր պատմիչների մոտ էլ կգտնենք: Դավրիժեցին զուցե չի հասցրել իսկա-
պես այդ նյութերի մեջ շարագրման ու բովանդակության կապ ստեղծել,
իսկ Եճ-Աբասի ողջ պատմությունը և նրա հետևողական քաղաքականու-
թյունը նա տալիս է իսկական պատմիչի հմտությամբ՝ բոլոր մասերը կա-
պելով իրար և բխցնելով մեկը մյուսից: Նա ճիշտ է վարվել, որ Եճ-
Աբասի պատմությունը հաճախ ընդմիջարկել է, որովհետև նրա գիրքը մեկ
դարի պատմությունն էր, և այդ պատմությունը վերաբերում էր հայ ժո-
ղովրդի կյանքի բոլոր բնագավառներին՝ կրոնին, եկեղեցուն, նահատակե-
նեթին, կոտորածներին ու զաղթերին, մշակույթին, պատմական ու եկեղե-
ցական գործիչներին և այլն: Այս բոլոր հարցերն այս կամ այն չափով
Առաքելի պատմության նյութ են դարձել: Ընդհատ է, թարգմանության ըն-
թացքում մենք ևս զգացել ենք նահատակությունների պատմության որոշ
ավելորդությունը, բայց դա մեր այսօրվա ըմբռնումով: Երևք հարյուր տա-
րի առաջ դրանք խոշոր իրադարձություններ էին համարվում և չէին կա-

2 Ջաքարեայ Մարգկասազի պատմ. հ. 3, էջ 4:
3 Ջարպահանայան Գ. Պատմ. Հայերեն դպրություն, Վենետիկ, 1878,
էջ 172:
4 Քաղիաղայան Մ. Պատմ. Պարսից, հ. Ա, Կալկաթա 1846, էջ 169:

5 Ալիշան Ղ., Հայապատմ., Վենետիկ, 1901, էջ 131:
6 Ջարպահանայան Գ., Նշվ. աշխ. էջ 178:
7 Մանուկ Աբեղյան, Երևան, 1970, էջ 524:

բող տեղ չգտնել այս պատմության մեջ: Սրանք ինչպես էլ կցեր պատմության շարագրանքին, այդպես պետք է լիներ: Եվ հետո, պատմության մեջ չկա մի դեպք, որ իրողությունը չի նկատվում և չկրի ժամանակի համար էական լինելու պարտադրանքը: Այս բոլոր իրողությունները Առաքելը պատմում է անուններով, օրերի ու ժամերի ճշտությամբ իբրև իսկապես պատմական եղելություններ: Սրանք զրույցներ կուշեր ճիշտ չէ, երբ կա ճիշտ տեղը, ժամանակը, իրական անձը հոր ու մոր անուններով, տոհմով ու արհեստով:

Արեղյանը վրիպում է նաև, երբ գրում է. «Եկեղեցու հարագատ, եկեղեցական ոգով սնված, առանց աշխարհական գաղափարների մասնակցության»⁸: Դավրիժեցին Շահ-Աբասի քաղաքականությունն ու սրա նպատակները մեղմացնում է միմիայն աշխարհական գաղափարներով, ճիշտ է, նա եկեղեցական ոգով է սնված, բայց խորթ չեն նրան նաև աշխարհիկ գաղափարները:

Մնացած հարցերում Արեղյանի բոլոր դատողությունները ճիշտ են ու դիպուկ: Նա շատ խորն է ուսումնասիրել նյութը և նշել է այնպիսի հատկանիշներ, որոնք այդ պատմության բուն էությունն ու նպատակն են: Ամենից առաջ նշենք նրա կրթում ու բոցավառ հայրենասիրությունն ու ազգասիրությունը, որոնց մասին Արեղյանը գրում է. «Եվ իրավ, հորենացու հայրենասիրության ոգին անցել է այդ վարդապետին... հորենացու հայրենասիրությամբ, բայց և առանց հորենացու ճարտասանության, պարզ ու բնական, հորենացուց ավելի սրտառու է սղբում յուր հայրենիքը, որից ավելի գեղեցիկ չէր կարող ոչ մի իրեն ժամանակակից բանաստեղծ ոգրալ»⁹: Դավրիժեցու լեզվի հարցում էլ Արեղյանը միանգամայն ճիշտ տեսակետ է արտահայտում: Նա գրում է. «Ինչպես երևում է, այդ դպրոցը [Էջմիածնի] կարողացել է կարճ միջոցում բավական ուսում տալ իր աշակերտներին, թեպետև զարբարի ոչ կատարյալ ուսումը, հին զարբարի, բայց և այնպես դրեթե անսխալ, պարզ շարադրություն կարողացել է և, որ զբոխավորն է, իբրև Սիմեոն Ջուղայեցու քերականության աշակերտ, լատինացած լեզվին ենթարկվելու տեղը, ավելի հետևել է ժողովրդական պարզ շարադրությանը, կենդանի ժողովրդական ձևերին ու դարձվածներին, լիսորշելով, ճշտության ու պարզության համար, նույնիսկ գովառական ու թուրքերեն բառերից, որ և ոչ թե պատմագրի պակասություն, այլ առավելություն պետք է համարել, զի ամեն պատմություն կամ զրույցների ժողովածու, ինչպես է Առաքելի պատմությունը, յուր կենդանությունը, գույնն ու երանգը ստանում է միայն ժամանակի կենդանի լեզվով պատմվելով: Առաքել պատմագիրը, անշուշտ, ոչ շատ անգամ հասկանալով, գեղեցիկ գործադրել է մանավանդ ուրիշների խոսքերը մեջ բերելիս, լիսորշելով նույնիսկ զուտ աշխարհաբարից»¹⁰: Հետաքրքրական կլինի իմանալ Լեոյի կարծիքը, որ պատմաբան լինելով՝ 17-րդ դարի հայոց պատմությունը շարադրել է մեծ մասամբ հիմք ընդունելով Դավրիժեցու սույն աշխատությունը. «Որ-

քան և համեստ լինի նրա կարծիքն իր ընդունակության և կարողության մասին, նրա կատարած գործն ինքնբերական ապացույց է, թե որքան պատկանելի գրական ուժ էր այդ թավրիզեցի ձեռ վարդապետը: Նա տվել է մեզ մի ստվար հատոր, որի մեջ ամեն քայլում մենք հանդիպում ենք գրական կիրթ ճաշակի, որ կարող էր պատիվ բերել մեր գրականության ավելի հին շրջաններին, երբ հայ մատենագիտությունը դեռ չէր հասել թաթարական ժամանակների սոսկալի անկման: Իսկ երբ վերջնում ենք այդ անկման շրջանը, այստեղ Առաքելը հանդիսանում է առաջնակարգ գրական մի աստղ, որ շուրջ իր նմանը թե նախորդ դարերում և թե իր ժամանակակիցների մեջ: Նրա լեզուն պարզ ու հասկանալի է, ոճը վայելուչ, թեև ոչ քիչ ճապաղ¹¹, նկարագրությունների մեջ կարողանում է պատկերացնողի ընդունակություն ցույց տալ: Այս կողմից նա շատ աչքի է ընկնում մանավանդ Շահ-Աբասի գերեվարության և սրան հետևած նյութական և մտավոր վայրենացման խորապես ազդող նկարագրությունների մեջ: Ընթերցողի աչքի առջև շարունակ կանգնած է հեղինակի ինքնատիպ պատկերը: Իսկ մի հավատացյալ վանական է, լցված մի վառ սիրով դեպի հայրենի աշխարհը, զեպի ազգային մտավոր կուլտուրական ստացվածքը ներկայացնող եկեղեցին¹²:

Արեղյանը բերելով ու ջատագովելով մի շարք հետաքրքրական նկարագրություններ՝ վերջում ավելացնում է. «Այսպիսի դեպքերում, անշուշտ, կարելի չէ խոսել Առաքել պատմագրի զբավածքի գեղարվեստականության մասին, զրական արժեքի մասին»¹³: Դավրիժեցու գրքի գեղարվեստական լինելու հարց ոչ ոք չի գրել, նրա գիրքը պետք է քննվի իբրև պատմական աղբյուր 17-րդ դարի համար, չնայած, որ հենց Արեղյանի բերած օրինակների մեջ առկա է նաև գեղարվեստական խոսքի օրինակը, թեկուզ հենց Շահ-Աբասի ու գեղջկուհու զրույցը:

Առաքել Դավրիժեցու պատմությունը ժամանակագրական մի ճշգրիտ վավերագրություն է, ուր հեղինակը քիչ է մնում, որ հիշատակի կատարված պատմական իրողության նաև ժամը: Նա արդեն հորենացու պատգամով՝ «չիք պատմությունն առանց ժամանակագրության» գրում է: «Այլև այստեղ հարկ է իմանալ, որ անհրաժեշտության պարագայում թվականը իբրև հիմք պետք է զննել, ապա նրան կցել պատմությունը իբրև շինվածք»:

Դավրիժեցին ժամանակագիր պատմիչ է, այսինքն՝ նկարագրում է իր ապրած ժամանակի անցքերն ու եղելությունները: Նա մի տեղ նշում է, որ սեփական աչքով տեսել է հայ ժողովրդի ահասարսուռ գաղթիցումը Շահ-Աբասի կողմից, երբ երեկ նա երեսա պետք է լիներ, որովհետև նրա մահվան ստույգ թվականը 1670-ն է: Ժամանակագիրը ոչ միայն պատմում է իր տեսածներն ու լսածները, այլև օգտագործում է տվյալ ժամանակի վավերագրերը և ուրիշ ժամանակագիրների գործերը: Սակայն իբրև 17-րդ դարի պատմիչ ժամանակագիր նա ամենանշանավորն է: Ամբողջ 16-րդ դարը,

8 Նույն տեղում, էջ 515:

9. Նույն տեղում, էջ 519

10. Նույն տեղում, էջ 514

11 Անհասկանալի է այս խոսքը ճապաղության մասին:

12 Լեո, Երկերի ժողովածու, 3, Երևան, 1969, էջ 353:

13 Արեղյան, նշված աշխատություն, էջ 524:

Թաթար-թուրքական բարբարոսության հետևանքով, ոչ մի հայ պատմիչ կամ ժամանակագիր չունի, որ անցյնը 17-րդ դարը և նկարագրեր այս գարսուկերի պատմական անցքերը:

17-րդ դարը հայ ժողովրդի համար սկսվում է մի ահավոր աղետով: 1603 թ. Եաճ-Աբասը հակալական բանակով Սպահանից շարժվում է դեպի Արաքսի ափերը, դեպի Արարատյան աշխարհը, որպեսզի սկսի Քուրբանյի հետ վաղուց ծրագրվող պատերազմը, մտնելանդ որ վերջինս իր շրջափոխները պարզել էր մինչև Քավրիզ: Պատերազմը չէր նախատեսում մեծ բանակների հանդիպում և վճռական ճակատամարտ: Իմանալով, որ Եաճ-Աբասը մեծ բանակով շարժվում է դեպի Քավրիզ, թուրքերը իրենց բերդապահ զորքերը հետ են քաշում Երևան և վերջինս դարձնում են Եաճ-Աբասի դեմ մղվող պատերազմի հիմնական հենակետը: Եաճ-Աբասը արագ ռազմերթով մտնում է Արարատյան աշխարհը և շարժվում Երևանի վրա: Երկար պաշարումից հետո նա գրավում է Երևանի բերդը և ռազմերթը ուղղում դեպի արևմուտք: Թուրքերը մեծ բանակով գուրս են գալիս նրան ընդոտաջ, բայց շահը ճակատամարտի չի բռնվում, այլ նահանջում է՝ իր հետևից թողնելով ամալություն, հրդեհ ու անապատ, բնակիչներին տեղահանելով ու քշելով դեպի արևելք: Ականատիաների վկայությամբ պատերազմի այդ հակալական դաշուն ուներ լավագույնց խիտ ազգաբնակչություն: Այդտեղ հաշվում էին քսանից ավելի քաղաքներ և հազարավոր գյուղեր: Եաճ-Աբասը Երևակից, Կարինից, Արճնից, Խնուսից, Բասենից քաներեք հազար հայ գաղթական բերեց կուտակեց Արարատյան դաշտում և ապա սկսեց վերջինիս դատարկումն ու հրդեհումը, որպեսզի թուրքական արշավող բանակը իր կարիքների համար ոչինչ չգտնի ճանապարհին: Արևմտյան Հայաստանի մի մասի, Երևակի, Արարատյան աշխարհի ու հարակից գավառների ամբողջ հայությունը քշվեց Արաքսի ափը և տարվեց Պարսկաստան: Հայաստանի մեծ մասն ամալացավ: Այս աղետը ժամանակակիցների վրա ցնցող տպավորություն է թողել: Մեծ տարագրությունը, որ ժամանակակիցները կոչում են «մեծ սուրբյուն», այնքան էր ահավոր իր չափերով ու հետևանքներով, որ անկարելի էր սրա մասին գրավոր հիշատակարաններ լինողնել գալիք սերնդի համար: Եվ Առաքել Դավրիժեցին գրում է իր «Պատմությունը», որ գրեթե սկսվում է «մեծ սուրբյունի» նկարագրությամբ ու ոչքով: Իր պատմության բովանդակությունը Դավրիժեցին գրքի առաջարանում հստակ ու կարճառոտ ընդամենը է հետևյալ խոսքերով. «Պատմություն է այն անցքերի ու հարվածների, որոնք վերջին ժամանակներս Եաճ-Աբաս կոչված թագավորի և նրա ազդի կողմից, որ պարսիկներ են կոչվում, թափվեցին մեր հայոց աշխարհի վրա: Նաև էջմիածնի Սուրբ աթոռի, նրա կաթողիկոսների անշքանայու և քրիստոնեական կրոնի աղավաղված կարգերի մասին է»:

Ինչպես տավեց, սա մի անսակ ժամանակագրություն է: Բայց հեղինակը 1651 թվից առաջ փաստագրել է պատմական անցքադարձը. հավանորեն ու: Օթիկ աշգյախի մի բան արվել է, ապա 1651 թվից հետո, այսինքն՝ մի տասնամյակի պատմություն, երբ շարադրվում էր այս գիրքը:

Դավրիժեցու ազդեցությունը եղել են նախ և առաջ ակնանատես մարդիկ:

Փիլիպոս կաթողիկոսը պարտադրել է Դավրիժեցուն պատմություն գրել իմաստուն, առաքինի և շատ ծեր մարդկանց դիմումների պարտադրանքով, որոնք տեսել էին իրականությունն ու անցքերը: Պատմիչը շրջել է Հայաստան, Պարսկաստան, Փոքր Ասիա և ամենուր հանդիպել է ժամանակի անցքերին տեղյակ անձանց, հարցուփորձել նրանց ու գրանցել: Բայց որովհետև իրեն պատասխանատու է համարել պատմություն, ժողովրդի ու եկեղեցու առջև, պատմական միևնույն իրողությունները ստուգել է բազմաթիվ ականատեսների ու տեղյակների միջոցով, և այնպես է եղել, որ միևնույն պատմությունը տասն անգամ գրել է ու չնչել, մինչև վերջնական տեսքի է բերել: Համարտության հասնելու միտումով:

Մյուս կարևոր ազդեցությունը եղել են գրավոր հիշատակությունները: Այստեղ էլ նա ոչ մի ջանք չի խնայել գտնելու իր պատմության համար պիտանի նյութեր: Ընդ որում գրավոր նյութերին շատ անգամ այնքան վստահություն էր և մոտեցել, որ դրանք ամբողջովին ներառել է իր գրքում: Այդպես է «Պատմություն Աղուանից աշխարհին» գրութը:

Դավրիժեցին այն եզակի պատմիչներից է, որոնք ուշագրություն են դարձրել մեր ձեռագրաց հիշատակարանների վրա իբրև պատմության հավաստի աղբյուրների և օգտվել է դրանցից: Այս պատմության առանցք Եաճ-Աբասի արշավանքները և հայոց մեծ գաղթը կատարվել են Դավրիժեցու պատմության գրաման օրից ամբողջ կես դար առաջ: Այնպիսի մանրամասն ստուգապատում ու սրտատուչ շարադրանք այդ անցքերի մասին պատմիչը չէր կարող հիշել, մանավանդ որ այն ժամանակ դեռևս մանուկ է եղել:

Եաճ-Աբասի արշավանքներին ու հայերի բռնի գաղթեցմանը հաջորդող ժամանակները ունենում են մեղմեցնող խաղաղության տարիներ: Ահա այս տարիներին հայությունը իր ազգային գոյության հարստեաման զիտակեցությունն ու ներքին բնազդին հավատարիմ՝ չանում է համատարած խավարի ու ամալության անապատում վառել լուսո ճրագներ և ազատվել բռնի վայրենացման ճիրաններից: Պատմիչը մի շարք հատվածներում ոգևորված, սիրով ու հրմանքով պատմում է անհատական այն հերոսական խիզախումները, որոնց շնորհիվ երկրում կազմավորվում են միարանություններ և սրանց կից զպրոցներ: Մեր պատմության ամենատաննելի մի իրադրություն է այս, որ Առաքել Դավրիժեցին դարձրել է իր երկի առանցքային նյութերից մեկը: Նա մանրամասն պատմում է, թե ինչպես տեր Կիրակոսն ու Սարգիս նպիսկոպոսը Սյունիքում նոր անապատ են կազմակերպում, որի զպրոցից գուրս են գալիս Պողոս վարդապետ Մոկացին, Մովսես վարդապետ Սյունեցին, Ներսես վարդապետ Մոկացին, որ բաց է անում Լիւնի անապատն ու զպրոցը, տեր Արիստակեսը, որ հիմնադրեց Տանձափարախի անապատը, Դավիթ նպիսկոպոսը, որ ստեղծեց Չարեքագետի անապատը, և ուրիշ շատերը, որ գնացին դանազան տեղեր, շինեցին անապատներ ու վանքեր և սրանց կից զպրոցներ: Դավրիժեցին փաստորեն գրում է իր դարի մեր զպրոցների կազմակերպման ու զարգացման պատմությունը՝ ավելացնելով. «Եվ սուրբ հոգին... բացում է նրանց մաքուր մտքերի առջև զիտության դռները, խելամուտ է դարձնում նրանց զրբերի շավիղներին, որոնցով լու-

սամօրվում են իրենք և լուսավորում մերձակներին և սրանցով մեր հայտնաց ազգին, որովհետև մինչև այս ժամանակները տղիտությամբ խոպանացել էր ու կորացել մեր հայտնաց ազգը, որ ոչ միայն չէին կարողում, այլև գրեկարող շքիտեին և չէին ըմբռնում գրքերի նշանակությունը, որովհետև հետև գիրքը մարդկանց աչքում իր պիտանիությունը կորցրել էր: Հայտնաց հարուստ պատմագրության մեջ չկա մի գիրք, որ այնքան մանրամասնորեն ներկայացնի հայտնաց դպրոցների պատմությունը, ինչպես Գավրիթեցին և ներկայացնել: Նա շրջելով Հայաստանում և հայաբնակ օտար վայրերում՝ ամենուրեք ուսումնասիրել է դպրոցական գործը և նկարագրել: Այս առումով ամենից հետաքրքրական գրվագը Բաղեշի Ամրդու վանքի ու դպրոցի նկարագրությունն է, որ նա ավել է իր գրքի ի՞նչ գլխում: Գրքը բոցներում կրոնական գրքերը կարգացնելն ու բացատրելը շատ հեշտ էր. սակայն Ամրդու վանքի միաբան Բարսեղ վարդապետը որոշում է զբոսը բոցներում տարածել հունական փիլիսոփայության և Գավթի Անհաղթի գրքերի ուսումը:

Բարսեղից հետո փիլիսոփայական գրքերի ուսումնասիրությունն ու տարածումը ստանձնում են ներսես վարդապետն ու Մելիքիսեթ Վժնցի արեղան: Եվ պետք է կարողալ Գավրիթեցուն ու տեսնել, թե ինչ հրճվանքով է խոսում նրանց տիտանական ջանքի ու տքնության մասին, որ կարողացան բուրբուխի անհասկանալի գրքերը հասկանալի դարձնել և ուսուցանել ու տարածել:

Գավրիթեցին կսկիծով է նշում, որ իր ժամանակ հայ ազգը ոչ միայն չունի անկախ պետություն, այլև վերացել են տեղական անկախությունները, ուստի և դառն ու ավանդական բացատրությամբ ողբում է այս ժանր իրականությունը: «Մեր հայտնաց ազգը... ստրի կոխան ծառա ու գերի դարձավ օտար ազգերի ու թագավորների»: Չկա քաղաքական իշխանություն, պետականություն, որ պատմիչը դարձնի իր պատմության առանցքը, ուստի նա ուշադրությունը սեռում է իր ժողովրդի մշակութային կյանքի պատմության վրա:

Մեր պատմիչներից ոչ մեկը այնպիսի մանրամասնությամբ չի խոսում երկրի շինարարական գործի մասին, ինչպես Գավրիթեցին: Նա ոչ միայն նկարագրում է նոր վանքերի, եկեղեցիների, ամրոցների ու շենքերի կառուցումն ու նրանց կառուցողներին, այլև մանրամասն պատմում է հին կառույցների մասնակի վերանորոգումները, նկարագրումները, պարսպապատերը և այլն: Զհաշված այն կառույցները, որոնք նկարագրված են միջանկյալ կերպով գրքի տարբեր հատվածներում, պատմիչը ամբողջ ի՞նչ գլխում շարադրում է երկրում կատարված կառուցողական աշխատանքները, հիշատակում նրանց կառուցողներին:

Առաքել Գավրիթեցին, լինելով իր դարի զավակը և տուրք տալով ժամանակի անհավաստություններին, սրբաբար հրաշագործություններին, վերկայաբանական հրաշքներին, այնուամենայնիվ, մի լուսամիտ ու առաջադեմ մարդ էր: Իբրև կրոնավոր և 17-րդ դարի մարդ նա շատ շպետ է ողևորվել հունական փիլիսոփայական գրքերի ուսուցմամբ ու տարածմամբ, բայց մենք տեսանք, թե ինչ խանդավառությամբ է ընդունում այդ փաստը:

Նա փառաբանում է նկարչական արվեստը, և ամենից էականն այն է, որ նաև հասկանում, վերլուծում ու գնահատում է այն Ահա ինչպես է հայրենասեր պատմիչը նկարագրում հայտնաց վանքերի ճարտարապետական ու քանդակագործական բարեմասնությունները: Եվ պատմիչը շատ լավ է ըմբռնում, որ այդ ձևական բոլոր կատարելությունները ինքնանպատակ չեն, դրանք ունեն իրենց իմաստն ու նշանակությունը, որ արտահայտել է խորհրդական բառով:

Այս առումով շատ ավելի հետաքրքրական է Նոր Զուղայի հայ տաղանդավոր նկարիչ Մինասի արվեստի ըմբռնումն ու վերլուծությունը, որին պատմիչը անդրադարձել է ի՞նչ գլխում: Պատմիչը հստակ գաղափար ունի յուզանկարչության, շրանկարչության, դրվագման, որմնանկարչության, մանրանկարչության, դիմանկարչության, քանկարչության և այս կերպ արվեստի այլ տեսակների մասին: Նա այսօրվա ընթերցողին հստակ ու պարզ գաղափար է տալիս Մինասի արվեստի էության մասին: Թվելով Մինասի բոլոր թեմաները, նա ասում է, թե նկարում էր նաև մարդկանց, որ ազգից էլ որ լինեին, և ինչ ազգի մարդու կերպարանք որ նկարում էր, հար ու նման էր նկարում: Ահա երկարաբանության արդյունքը, որով հանդես է բերվում 17-րդ դարի մի մեծատաղանդ նկարիչ և այդ նկարի ժամանակի մի քննադատ, որ ինքը Գավրիթեցի պատմիչն է: Իսկ կարճաբանության արդյունքը այն է, որ Մինասի հետ հիշատակված նկարիչ Հակոբջանի մասին ոչ մի խոսք ու տեղեկություն չկա: Հավանաբար, տարվելով Մինասի արվեստի գեղեցիկ վերլուծությամբ, մոռացել է Հակոբջանին: 14

Գավրիթեցին նաև գրականության պատմության է: Նա մանրամասն տեղեկացնում է, թե ինչ գրքեր են գրվել ու թարգմանվել 17-րդ դարում, քննադատում է այդ գրքերի թերություններն ու պակասությունները: Նա մանրամասնորեն ներկայացնում է Սիմեոն Զուղայեցու և Ստեփանոս Լեհացու գրական գործունեության պատկերը, մեկ առ մեկ թվում է այն գրքերն ու աշխատությունները, որ իր այդ երկու ժամանակակիցները գրեցին, բացատրում է նրանց բովանդակությունը, քննում ու քննադատում է միանգամայն առողջ ու առաջավոր դիրքերից: 17-րդ դարի հեղինակը, որ ծնվել ու կրթվել է լատինարան հայերենի շրջանում, առիթ չի կորցնում այդպիսի հայերենը քննադատելու: Նա որևէ գրքի առաջին թերությունը համարում է նրա ճոռոմաբանությունը, անհասկանալիությունը:

Փանի որ խոսք եղավ լեզվի քննադատության մասին, շոտանանք այստեղ հիշատակության արժանացնելու նաև իր՝ Գավրիթեցու լեզվի ու ոճի առանձնահատկությունները: Նա իր գիրքը գրել է գրաբար: 17-րդ դարի գրաբարը անկման եզրին էր հասել: Այն ոչ միայն խոսակցական լեզու չէր, այլև լատինամուկ կրոնավորների ձեռքով սկսել էր աղավաղվել ու կորցնել իր ազգային ու ժողովրդական կերպարանքը թե՛ քերականական

14 Արվեստաբան Մ. Ղազարյանի հաղորդումով Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի թանգարանում կան երկու դիմանկարներ, որոնք վերագրվում են Մինասին (տես «Պատմա-բանասիրական հանդես», 1968, №1, էջ 201):

սավորվում են իրենք և լուսավորում մերձականերին և սրանցով մեր հայրենի ազգին, որովհետև մինչև այս ժամանակները տղիտուխյամբ խոսակցել էր ու կորցացել մեր հայրենի ազգը, որ ոչ միայն չէին կարգում, այլև գրեկ-կարգալ չգիտեին և չէին ըմբռնում գրքերի նշանակությունը, որովհետև գիրքը մարդկանց աչքում իր պիտանիությունը կորցրել էր: Հայրենի հարուստ պատմագրության մեջ չկա մի գիրք, որ այնքան մանրամասնորեն ներկայացնի հայրենի պատմությունը, ինչպես Դավրիժեցին է ներկայացրել: Նա շրջելով Հայաստանում և հայաբնակ օտար վայրերում՝ ամենուրեք ուսումնասիրել է դպրոցական գործը և նկարագրել: Այս առումով ամենից հետաքրքրական գրվածք Բաղշի Ամրոցու վանքի ու դպրոցի նկարագրությունն է, որ նա ավել է իր գրքի ի՞նչ գլխում: Գրություններում կրոնական գրքերը կարդացնելն ու բացատրելը շատ հեշտ էր սակայն Ամրոցու վանքի միաբան Բարսեղ վարդապետը որոշում է զբաղվել գրքերում տարածել հունական փիլիսոփայության և Դավրիժ Անահապի գրքերի ուսումը:

Բարսեղից հետո փիլիսոփայական գրքերի ուսումնասիրությունն ու տարածումը ստանձնում են Ներսես վարդապետն ու Մելիքսեթ Վանքի արքեպիսկոպոստը: Եվ պետք է կարգալ Դավրիժեցուն ու տեսնել, թե ինչ հրճվանքով է խոսում նրանց տիտանական ջանքի ու տրեմության մասին, որ կարողացան բոլորովին անհասկանալի գրքերը հասկանալի դարձնել և ուսուցանել ու տարածել:

Դավրիժեցին կսկիծով է նշում, որ իր ժամանակ հայ ազգը ոչ միայն չուներ անկախ պետություն, այլև վերացել են տեղական անկախությունները, ուստի և դառն ու ավանդական բացատրությունը ողբում է այս ժանր իրականությունը: «Մեր հայրենի ազգը... օտար կոտորածով ու գերի դարձավ օտար ազգերի ու թագավորների»: Չկա քաղաքական իշխանություն, պետականություն, որ պատմիչը դարձնի իր պատմության առանցքը, ուստի նա ուշադրություն սեռում է իր ժողովրդի մշակութային կյանքի պատմության վրա:

Մեր պատմիչներից ոչ մեկը այնպիսի մանրամասնությամբ չի խոսում երկրի շինարարական գործի մասին, ինչպես Դավրիժեցին: Նա ոչ միայն նկարագրում է նոր վանքերի, եկեղեցիների, ամրոցների ու շենքերի կառուցումն ու նրանց կառուցողներին, այլև մանրամասն պատմում է հին կառուցների մասնակի վերանորոգումները, նկարագրումները, պարսպապատերը և այլն: Չհաշված այն կառույցները, որոնք նկարագրված են միջնադարյան կերպով գրքի տարրեր հատվածներում, պատմիչը ամբողջ ի՞նչ գլխում շարադրում է երկրում կատարված կառուցողական աշխատանքները, հիշատակում նրանց կառուցողներին:

Առաջիկա Դավրիժեցին, լինելով իր դարի գավազի և տուրք տալով ժամանակի անհավասարություններին, սրբաբար հրաշագործություններին, վերկայաբանական հրաշքներին, այնուամենայնիվ, մի լուսամիտ ու առաջադեմ մարդ էր: Իրեն կրոնավոր և 17-րդ դարի մարդ նա շատ լավատր է ողևորվել հունական փիլիսոփայական գրքերի ուսուցմամբ ու տարածմամբ, բայց մենք տեսանք, թե ինչ խանդավառությամբ է ընդունում այդ փաստը:

Նա փաստարանում է նկարչական արվեստը, և ամենից էականն այն է, որ նաև հասկանում, վերլուծում ու գնահատում է այն: Ահա ինչպես է հայրենասեր պատմիչը նկարագրում հայրենի վանքերի ճարտարապետական ու քանդակագործական բարձրագույնությունները: Եվ պատմիչը շատ լավ է ըմբռնում, որ այդ ձևական բոլոր կատարելությունները ինքնանպատակ չեն, դրանք ունեն իրենց իմաստն ու նշանակությունը, որ արտահայտել է խորհրդական բառով:

Այս առումով շատ ավելի հետաքրքրական է Նոր Զուղայի հայ տաղանդավոր նկարիչ Մինասի արվեստի ըմբռնումն ու վերլուծությունը, որին պատմիչը անդադարձնել է ի՞նչ գլխում: Պատմիչը հստակ գաղափար ունի յուզանկարչության, ջրանկարչության, գրվածքի, որմնանկարչության, մանրանկարչության, դիմանկարչության, բնանկարչության և այս կերպ արվեստի այլ տեսակների մասին: Նա այսօրվա ընթացիկ հստակ ու պարզ գաղափար է տալիս Մինասի արվեստի էության մասին: Թվելով Մինասի բոլոր թեմաները, նա ասում է, թե նկարում էր նաև մարդկանց, որ ազգից էլ որ լինեին, և ինչ ազգի մարդու կերպարներ որ նկարում էր, հար ու նման էր նկարում: Ահա երկարաբանություն արդյունքը, որով հանդես է բերվում 17-րդ դարի մի մեծատաղանդ նկարիչ և այդ նկարիչ ժամանակի մի քննադատ, որ ինքը Դավրիժեցի պատմիչն է: Իսկ կարճաբանություն արդյունքը այն է, որ Մինասի հետ հիշատակված նկարիչ Հանդրեանի մասին ոչ մի խոսք ու տեղեկություն չկա: Հավանաբար, տարվելով Մինասի արվեստի գեղեցիկ վերլուծությամբ, մոռացել է Հակոբջանին: 14

Դավրիժեցին նաև գրականության պատմաբան է: Նա մանրամասն տեղեկացնում է, թե ինչ գրքեր են գրվել ու թարգմանվել 17-րդ դարում, քննադատում է այդ գրքերի թերություններն ու պակասությունները: Նա մանրամասնորեն ներկայացնում է Սիմեոն Զուղայեցու և Ստեփանոս Լեհացու գրական գործունեության պատկերը, մեկ առ մեկ թվում է այն գրքերն ու աշխատությունները, որ իր այդ երկու ժամանակակիցները գրեցին, բացատրում է նրանց բովանդակությունը, քննում ու քննադատում է միանգամայն առողջ ու առաջավոր դիրքերից: 17-րդ դարի հեղինակը, որ ծնվել ու կրթվել է լատինաբան հայերենի շրջանում, առիթ չի կորցնում այդպիսի հայերենը քննադատելու: Նա որևէ գրքի առաջին թերությունը համարում է նրա ճոռումարանությունը, անհասկանալիությունը:

Քանի որ խոսք եղավ լեզվի քննադատության մասին, լուսանալի այստեղ հիշատակության արժանացնելու նաև իր՝ Դավրիժեցու լեզվի ու ոճի առանձնահատկությունները: Նա իր գիրքը գրել է գրաբար: 17-րդ դարի գրաբարը անկման եզրին էր հասել: Այն ոչ միայն խոսակցական լեզու չէր, այլև լատինամուկ կրոնավորների ձեռքով սկսել էր աղավաղվել ու կորցնել իր ազգային ու ժողովրդական կերպարանքը թե՛ քերականական

14 Արվեստաբան Մ. Ղազարյանի հաղորդումով Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի թանգարանում կան երկու դիմանկարներ, որոնք վերագրվում են Մինասին (տես «Պատմա-բանասիրական հանդես», 1968, №1, էջ 201):

կառուցվածքով և թե՛ բառապաշարի փոփոխությամբ: Դավրիժեցիին զիտակացարք չի հետևում ժամանակի հակաժողովրդական լեզվական այդ ուղղությունը. սա դեռևս քիչ է նրա համար: Նա մերժում ու քննադատում է այդպիսի լեզուն ու ոճը և իր գրքի ստեղծման գաղափարի հիմքում դնում է ժողովրդին հասկանալի դառնալու ազնիվ սկզբունքը, որին նա հավատարիմ է մնում ամբողջ շարադրանքի ընթացքում: Այս սովորաժամյալ գրքում շեք գտնի գրաբար այնպիսի մի արասհայտություն ու դարձվածք, որ ժամանակի սովորական կրթությունն ստացած՝ միջակ գրագիտություն ունեցող մարդու համար անհասկանալի լինի: Ամեն ջանք ու հնարք հեղինակը գործադրում է ընդհանրության համար հասկանալի դառնալու, որովհետև նրա ողջ մտահոգությունն ու վիշտը այն է, որ երկար ժամանակ հայությունը մնացել է առանց դպրոցի ու գրքի: Դավրիժեցիին յուրահատուկ լուսավորել է՝ առանց 17-րդ դարի լուսավորական գաղափարներին ծանոթ լինելու: Նա գրում է զարմանալի կենդանի լեզվով, այնպիսի գրաբարով, որ կարդացողը կրթեք մտքով չի անցկացնի, թե սա միայն գրական լեզու է առանց բանավոր խոսքի կենսատու շնչի ու չերմության: Կարելի է ենթադրել, որ կրթնավոր հեղինակը իր միջավայրում հենց այս լեզվով էլ խոսել է: Գրքի ամենագրական հատվածը, որ կորնեւացու մեծ շնչով ու թախծով զբրված հույսակա ողբ է, գրաբար հայերենի վերակենդանացման զարմանալի փորձ է և վերաբերում է հեղինակի՝ օտարների ամաչացված ու անմարդարենակ գարձարած, չբնաղ հայրենիքին: Ե՛նա և գրարհամ ու զականակիտ զմշտահոտան աղբերակունս ջուրցն. և զկարկաշահոտ ծիծաղախիտ յակտոբննաց յառաջխաղաց վտակս ջուրն, որ ի զխոց ձիւնարարդ սպիտակափայլ բարձրաբերձ լեռանց առ ի ստորև հոսեալ, իջանէ ի դաշտ անդր և շինութիւն (չէնութիւն) նոցին մատակարարէ:

Նա և զքաղցրաշունչ և զառողջարար և զկենդանապարզ և զօդ և զհողմ սորին և զայլ ամենայն վայելություն սորա տեսանելով հնդձամղձուկ եղեալ փղձկիմք և հարեալ յարտասուս ողբամք և աշխարեմք, զի անապատ եղև վայելուչ և քաղցր աշխարհս մեր: Եւ ազգ և ժողովուրդ մեր խելալք ի տեղեաց և անշատեալք ի հայրենի և բնիկ ժառանգութեանց և յօրհնեալ լեռիքէ, որ լի էր նշխարօք սրբոց աստուծոյ և ոռոգեալ արեամբ սրբոց վկայիք և օրհնեալ քարոզութեամբ սրբոց առաքելոց՝ եղև վտարանդեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ այլստեա և այլալեզու, որ և թըշնամիք հոգոյ և հուատոյ, և արեան ծարափք մարմնոյ: Որք և անդէն օր աւուր առ սակաւ սակաւ նուազին, ո՞մանք մահուամբ և կորստեամբ և ո՞մանք հաւատոյ ուրացութեամբ, որք դառնան յանօրէն օրէնս պղծոյն անապատիք:

Պարզ ժողովրդական, նույնիսկ տեղ-տեղ հեթանոսալիկ եճով ու արտահայտություններով է գրում Դավրիժեցիին: Ուշադրություն դարձրեք, թե ինչպե՞ս է ուրիշի անուղղակի խոսքը ձուլում իր հեղինակային խոսքի հետ ճիշտ այնպե՞ս, ինչպե՞ս անում է մեր գլուղացին, երբ որևէ բան է պատմում: Ե՛նալ մնացեալ զօրքն օսմանցուց, որք ի քաղաքին Քարվիզու փախեան և որք ի պատերազմէն դերժան, գնացեալ ժողովեցան ի քաղաքն Նախչուան: Եւ ընդ զօրացն Նախչուանու խորհեցան խորհուրդ, թէ թագաւորն

Պարսից վասն այսմ աշխարհիս եկեալ է, և զիարդ և իցէ, վերջն այն է, որ նա անկոց է զաշխարհս դայս ի ձեռաց մերոց: Արդ՝ նախ քան զգալն նորա մեք կողպտեալ և աւարեալ յափշտակեցուք ի զեղորից գաւառիս, որքան կարեմք և առեալ գնասցուք: Գեղջկական այս պարզությունը արատ է գիտական պատմագրության համար, բայց սա չի սոված 17-րդ դարի համար. մենք արդևս ասացինք, որ սա բարձր լուսավորականության ու վերազարթնումի արտահայտություն է, որ նկատվում է ոչ միայն Առաքել Դավրիժեցու, այլև Զարարիա Քանաքեղոցու, Գրիգոր Կամախեցու պատմագրություններում: Ընդ տե՛ս, սա տանում է զեպի գրաբար լեզվի կանոնազանցում ու աղավաղում, բայց բնական խոսքի պարզության կենսահոգավիշները այնքան են հարագատ, որ մոռացնել են տալիս ամեն կարգի կանոնազանցություն ու սխալանք: Դավրիժեցիին չի խուսափում թուրքերենն ու պարսկերենն ու չխուսառայ թառերի կիրառությունից: Դրանք երկու ձևով են երևում հեղինակի բառամթերքում. մեկ հանդես են գալիս բնագրում՝ մյուս բառերի հետ հավասար մակարդակով, իբրև մյուս բառերի հետ բնագրի շարադրանքի արտահայտիչ, մեկ էլ դառնում են կաղմեակի բացատրություն, հայերեն բառը թարգմանելու և հասկանալի դարձնելու օժանդակ միջոց: Նշենք նաև, որ առաջին դեպքում, այսինքն, կրք օտար բառը խլել է հայերեն բառի բնագրային տեղը, վերջինս (հայերեն բառը) է դառնում օժանդակ բացատրության միջոց: Օրինակ՝ «Հարամայեաց խղաք (պարզ) տալ նոցա, և ետուն հինգ խղաք»: Իհարկե միշտ չէ, որ օտար բառերը բացատրվում են, երբև՛ն մոռացմամբ գրում է օտար բառը ու անցնում, կամ գուցե սովյալ դեպքում մոռանում է հայերեն համառնիչը. «Երբեմն սիբայ բարձրագոցեալ ի վերուստ ծեծէին. երբև՛ն ի ներքուստ գլատակս պարսպացն փորեալ ճաղմն անէլին և զայն լնտին բարուրով, հրղհէին»:

Դավրիժեցիին ունի նաև խոսքի տիպականացման ըմբռնումը. նա ըստ խոսողների հասարակական դիրքի, ըստ սովյալ իրադրության, ըստ մարդկանց կրթության աստիճանի և այլն, կիրառում է համապատասխան բառեր ու արտահայտություններ և ստեղծում է սովյալ պարագային ու միջավայրին համապատասխան ոճ ու խոսքաձև: «Լուրջալ անուամբ վոյթն առաքեաց պատգամս առ վարդապետն ասելով թէ՛՝ մեծ իշխանն մերթ թուզթ է ուղարկել մեզ՝ թե այդ վարդապետդ, որ ի թուրքի աշխարհէն եկիւր է, յաշուտ է եղևր, հրաման չկայ, որ ի քաղաքէդ ելանէ, մի թողուք, որ երթայ, թե ոչ ձեք գլուխն կերթայ»:

Անցյալում այն միտքն է հայտնվել, որ այս գրքի գրական արժեքը չէին է՛ն, մինչդեռ մեր կարծիքով հայ հին գրականության պատմության մեջ Դավրիժեցիին իր արժանի տեղը ունի թե՛ իբրև արժանահավատ պատմիչ և թե՛ իբրև գրական երկի հեղինակ: 17-րդ դարի մեր գրականությունն ու լեզուն, մանավանդ վերջինը, սպասում են իրենց ուսումնասիրողին: Ինչպիսի սովյալներ կան գրքում մեր բարբառների, աշխարհաբարի պատմության ուսումնասիրության և գրաբարի վերջին փուլի լեզվական երևույթների վիճակի բացահայտման համար: Որքան հայերեն նորակազմ բառեր են գուրս մնացել հին բառարաններից և չեն հավաքվել, բացատրվել նոր

բառարաններում: Առաքել Գավրիժեցին վարպետ լեզվաշինարար է: Նրա կիրառած աշխարհարարյան ձևերը գրաբարյան սխալներ չեն. դրանք պատմիչը բերել է լեզվի արհեստականության վերացման, բնականության ու հասկանալիության համար. այդպես էլ նորակերտ բառերը աչքի են ընկնում հակիրճությամբ, ճշտությամբ ու գեղեցկությամբ:

Այս լուսամիտ պատմիչը ոչ միայն պատմում է կենդանի գրաբարով, այլև, ինչպես երևում է, շատ լավ ծանոթ է մեր բարբառներին: Մի տեղ վանի վանքերը թվարկելիս դրանք անվանում է վանեցիների նման: Իսկ ինչպես լավ է ուսումնասիրել Հայաստանի աշխարհագրությունը: Ամենամանջան գյուղի մասին էլ տեղեկություն ունի և անշիթ կերպով հիշատակում է Հայաստանի բնակավայրերի հին ու նոր անունները, սրանց յուրաքանչյուրի հետ առնչվող պատմական դեպքերը:

Նա հայոց պատմության շարագրանքը վերցնում է լայն առումով: Գուցե առաջին պատմիչն է մեզանում, որ իր գրքում մայր հայրենիքի պատմության հետ հյուսում է հայ գաղութների մեջ կատարվող անցուղարձեցը: Լեհահայոց եպիսկոպոս շարափառ Նիկոլի ու նրա շահատակությունների մասին խոսում է ամենայն մանրամասնությամբ: Քանի որ Հայաստանը ենթակա է Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետություններին, ուստի Առաքել Գավրիժեցին 17-րդ դարի հայոց պատմությունը հյուսում է այդ երկրներում տեղի ունեցող քաղաքական անցուղարձեցի և սրանց միջև կատարվող ռազմական ընդհարումների և այլ կարգի փոխհարաբերությունների հետ: Առանձին գլուխներով ներկայացնում է օսմանական ու պարսկական թագավորների ազգաբանությունն ու ժամանակագրությունը: Մեկը սկսում է 1242 թ. Օսման առաջինով և վերջանում է 1623 թ., երբ թագավոր է դառնում սուլթան Մուրադը, իսկ պարսկական թագավորների կարգը սկսում է Սեֆյան հարստության սկզբից (14-րդ դարի կես) Շեյխ-Սեֆինով և վերջացնում է Շահ-Սուլեյմանով (1666 թ.):

Գավրիժեցու գիրքը Գրիգոր Դարանաղցու (Կամախեցի), Զաքարիա Սարկավազի ժամանակագրությունների հետ կարևոր աղբյուր է Զալալիների շարժման ու գործունեության և Վրաստանի 17-րդ դարի պատմության համար: Սա մի գիրք, մի բազմաբնույթ հիշատակարան է բովանդակությամբ հարուստ, ժողովրդասիրությամբ տոգորված, հայ ժողովրդի անկախության ու ազատության գաղափարի վառ արժարժումով հագեցած:

Վարազ Ասաֆյան


82/2

Ա.Ռ.Ա.ՋԻԿԱ ՊԱՏՄԱԳՐՔԻՍ
Ա.Ռ.Ա.ՋԱՐԱՆԸ

Պատմություն այն տառապանքների ու անցքերի, որ պատահեցին հայոց աշխարհին վերջին ժամանակներս Շահ-Աբաս կոչված թագավորի և նրա ազգի՝ պարսիկների կողմից: Նաև Սուրբ աթոռ էջմիածնի և սրա կաթողիկոսների անշքանալու, այլև քրիստոնեության կարգերի ու կրոնի խանգարվելու մասին: Սրանց հետ պատմության խոսքեր քաղաքների, գավառների դիպվածների, որոնք պատահեցին թագավորների, իշխանների, կաթողիկոսների և այլոց կողմից, կգտնես այստեղ գլուխների բաժանված ըստ ժամանակագրական կարգի:

Նաև հարկավոր է գիտենալ, որ ըստ անհրաժեշտության այստեղ պետք է թվականը [ժամանակը] դրվի իբրև հիմք, ապա նաև նրա վրա հենվի պատմությունը իբրև շինվածք ըստ պատմագրքերի օրենքների: Բայց քանի որ մեր ազգը ավարառունների, գերիշների, հարկահանների կողմից ցիրուցան է եղել, ջարդվել, կապկալվել, տառապել և կապված է եղել աղքատությունը ըստ Սաղմոսի*, և ամեն մեկը հաղիվ էր իր կյանքի ապրուստը հայթայթել, ուստի չգտանք որևէ այնպիսի գիտակ անձ, որ պատմության հետ նաև թվականը իմանար: Բայց մենք ծանր աշխատանքով հետազոտեցինք, որը գտանք, նշանակեցինք պատմության հետ նաև թվականը, իսկ որը չգտանք, պատմեցինք առանց թվականի: Իսկ դու այս այսպես ընդունիր առանց մեղադրելու և քո աղոթքներում հիշատակիր սրա աշխատասիրողներին:

* Ոչին նստելին ի խաարի եւ ի ստուրերս-մահու կապաւ էին յաղքատութեան որպէս յերկաթս (Սաղմ. ճՁ 10): Նրանք նստում էին խավարի ու մահվան սուվերներում, կապված էին աղքատությանը, ինչպես շղթայով:



ՔՐԻՍՏՈՍԻԱՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՊԱՀԱՆՋՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԿՐԱՅ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդ՝ վերջին ժամանակներս նվազեցին քրիստոնեությունը պաշտող ժողովուրդները, և զորացան այն ժողովուրդները, որոնք մահմեդական էին: Արևելքում [զորեղացան] պարսիկները, իսկ արևմուտքում՝ օսմանցիք, որոնք հայոց 902 [1453 թ.] թվականին հոռոմներից առան հռչակավոր Կոստանդնուպոլիս քաղաքը:

Օսմանցիները Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո ավելի մեծացան, զորեղացան, և նրանց իշխանությունը ձգվեց դեպի արևելք, հասավ մինչև Թավրիզ. այդ էր պատճառը, որ օսմանցիների փաշաները նստում էին Թավրիզում, Սրևանում, Գանձակում, Շամախիում, Գամուրղափունում՝ և մինչև Նուզաֆրին² ենթարկել էին իրենց իշխանությանը: Նաև Վրաց Արևելքն էին ենթարկել իրենց և հարկատու դարձրել:

Այս ժամանակներում Սուրբ էջմիածնի աթոռի կաթողիկոսն էր նույն էջմիածին գյուղից տեր Առաքելը: Սա մի բարեներ, պահեցող [պաս պահող], պարկեշտ և վայելուչ մարդ էր ամեն ինչում՝ գործերի մեջ, խոսքի մեջ և հագուստներում, որ իր կյանքում վարելով կաթողիկոսությունը՝ հանգավ ի տեր:

Սրանից հետո Սուրբ էջմիածնի կաթողիկոսը եղավ դարձյալ նույն էջմիածին գյուղից տեր Դավիթը: Կաթողիկոս դառնալուց հետո [կաթողիկոսությունը] վարում էր ժամանակի թելադրության և իր կարողության համաձայն: Մի քանի տարի կառավարելուց հետո մինչդեռ կենդանի էր և կաթողիկոսական իշխանության տեր, ինքը ձեռնադրեց մի այլ կաթողիկոս, որի անունն էր Մելքիսեթ. սա Գառնո գավառի Աղշոց-վանք³ կոչվող գյուղից էր: (Դավիթը) սրան ձեռնադրեց այն հույսով, որպեսզի իրեն օգնական լինի, սակայն նա եղավ խանդարիչ ու հակառակորդ նրան, ինչպես որ հետո պատմությունները ցույց կտան:

Եվ Դավիթ կաթողիկոսի Մելքիսեթին կաթողիկոս օծելը երկու կերպ են պատճառաբանում: Ոմանք ասում են օգնելու և իրեն ընկերություն անելու համար օրհնեց (կաթողիկոս), քանզի այլազգիների հարկապահանջությունը ծանրա-

ցել էր քրիստոնյաների վրա, որոնք (այլազգիները) կեղեքում էին նրանց կյանքը: Կաթողիկոսից ևս պահանջում էին շատ ինչք, իսկ նա ինչ կարողանում, տալիս էր և ինչը չէր կարողանում, հալածական էր ընկնում և թաքնվում պահանջողներից: Եվ այսպես որոշ ժամանակ հալածական և զաղտագողի կյանքով ապրելով՝ ձանձրացավ տազնապալից կյանքից, որովհետև մշտապես փախչում էր ու թաքնվում, իր մտքում որոշեց մեկին իրեն ընկեր դարձնել, որպեսզի միմյանց օգնական ու վշտակից լինեն, գուցե երկուսով կարողանան՝ մեկը այս կողմ, մյուսը այն կողմ շրջագայել և պատրաստել որևէ բան կաթողիկոսարանի կարիքներն ու պակասությունները բավարարելու համար: Ոմանք ասում են այս պատճառով Դավիթը Մելքիսեթին կաթողիկոս օծեց, որ իրեն օգնական լինի:

Իսկ այլ ոմանք ասում են, թե Մելքիսեթ կաթողիկոսը փառամուլ մարդ էր և հետամուտ էր նախագահ իշխանության (ինքը առաջինը լինի), այդ պատճառով ամենքին առատություն բաշխում էր ինչքեր և բոլորին գրավում իր կողմը, ամենին իրեն բարեկամ էր դարձնում Արխողոմի⁴ նամաթյանը, որպեսզի օգնեն իրեն և կամակից լինեն, որ ինքը լինի կաթողիկոս, նույն կերպ էլ տեղի իշխանին շատ ինչքեր տվեց կաթողիկոս լինելու համար: Իսկ այդ իշխանը ինչքերը ստանալուց հետո Դավիթ կաթողիկոսին հարկադրեց, որպեսզի Մելքիսեթին օծի: Իսկ Դավիթը՝ ճար շունենալով, կամքով, թե հակառակ իր կամքի Մելքիսեթին կաթողիկոս օծեց: Ոմանք էլ այսպես են ասում: Արդ՝ այսպես թե այնպես մի աթոռ երկու կաթողիկոս ունեցավ միևնույն ժամանակում:

ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԷԶՄԻԱՍԵՆԻ ՍՈՒՐԲ ԱԹՈՒ ԳԱՌՆ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԼԻՆԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Թեպետ եղան երկու կաթողիկոսներ, ինչպես ասացի, որպեսզի գուցե պարտքերը թեթևացնեն, բայց ավելի շատացրին, քանի որ մինչև այժմ մեկն էր կաթողիկոսը, և ծախսողն էլ մեկն էր, իսկ այժմ երկու կաթողիկոս եղան և երկու ծախ-

սող: Արդ՝ թե նրանց ծախսելուց, թե ժամանակի հարկապահանջությունից, և թե այլ ինչ պատճառից, այնուամենայնիվ նրանց ձեռքով պարտքը շատացավ: բարդվեց, դիզվեց Սուրբ Էջմիածնի աթոռի վրա. ասում են, թե պարտքը մինչև հիտուն հազար դուռուշի հասավ, և չէին կարող վճարել: Եվ երբ պարտք տվողները գալիս պահանջում էին իրենց տված պարտքը, այլև թագավորական ու իշխանական հարկահանները գալիս պահանջում էին արքունի [գիմոսական] հարկերը, կաթողիկոսները չքավորության պատճառով ոչինչ չունեին, որպեսզի վճարեին: Այդ պատճառով մշտապես փախուստի ու թաքստի մեջ էին և ոչ կարողանում էին մի տեղում մնալ երկու կամ երեք օր և ոչ էլ ցերեկվա լույսով այս գյուղից այն գյուղը գնալ, այլ գիշերն էին գնում: Նրանց կյանքը այն ժամանակ շատ էր ողորմելի, ինչպես որ պատմում են տեսնողները: Նրանք տառապանքների նեղությունից և հարկերի ծանրությունից անճար լինելով՝ մշտապես հոգսերի ու մտատանջությունների մեջ էին, թե գուցե մի հնար լինի փրկելու: Երկար ժամանակ մտածելով և մտատանջ լինելով այս խորհրդածությունների մեջ՝ երկու կաթողիկոսները իրենց և բոլոր իրենց խորհրդակիցների կամքով հանդում են այսպիսի եղբակացության, այն է, որ մեծարանքի և սիրո ողջունով նամակ գրեն մեծ վարդապետ Սրապիոնին, որ Տիգրանակերտ քաղաքի առաջնորդն էր, որպեսզի գա և վճարի պարտքերը: Եվ նամակում գրված էր, թե ահավասիկ մենք մեր կամքով հեռանում ենք կաթողիկոսությունից, և թե գաս և պարտքերը վճարես թող քեզ լինի աթոռն ու կաթողիկոսությունը:

Իսկ Սրապիոն վարդապետը Ուռհա քաղաքից էր, բարեպաշտ և խիստ հարուստ ծնողների զավակ, և ծնողների մահից հետո (վարդապետին) մնացին շատ ինչք ու հարստություն: Սա սիրեց սուրբ կյանքը և առաքինի վարքը, հետևեց Սուրբ գրքի ընթերցման ու աշակերտ մտավ մեծ վարդապետ Ղուկաս Կեղեցուն, որ ժամանակի վարդապետների գլխավորն էր: Նրան աշակերտելով, դարձավ կատարյալ մարդ ամենայն իմաստությամբ և Աստվածաշունչ գրքերի գիտությամբ: Ղուկաս վարդապետը և ողջ ժողովուրդը, որ Ղուկաս վարդապետի առջև վկայեց, տեսնելով սրա արժանիքները՝ դրա համար նրան տվեց վարդապետական գավազան Ամիդ⁵ քաղաքում

հայոց 1035 (1586) թվի փետրվարի 20-ին: Սա երբ կյանքի խոսքը (Սուրբ գիրքը) քարոզում էր, աղբյուրի նման ոռոգում էր ժողովրդի պապական հոգիները, իսկ ամբողջ ժողովուրդը սիրելով ու հավանելով՝ նրան իրենց քաղաքի առաջնորդ են դարձնում: Իսկ նա առաքյալի խոսքի համաձայն իր պաշտոնը փառավորում էր*, քանզի նրա ժամակարգությունը** երկնայինների հանդեսին էր նմանվում իր գեղեցիկ ու վայելուչ կարգավորությամբ, երգելով ու եղանակներով, գանձերով ու մեղեդիներով, թագավորներով***, ալելուաներով: Իսկ դասը**** և քարոզը իրրև սովորական գործ ինքը կատարում էր մշտապես, առանց որևէ ծովության ասում էր դասը և քարոզը: Նաև իր կյանքը անցկացնում էր ժուժկալութամբ ու պասերով, ինչպես՝ անապատականները: Սրա իմաստության ու առաքինության համբավը դուրս գալով ամենուրեք հռչակվեց: Այդ պատճառով նրա մոտ էին գալիս եկեղեցուն նվիրված իմաստության ձգտող պատանիները բոլոր գավառներից Սուրբ գրքի ուսմունքը սովորելու համար: Իսկ նա կենդանի աղբյուրի ջրի նման ամենքի պապակը զովացնում էր, ուստի Սուրբ գրքի աշակերտների համար դպրոց կարգավորեց և ուսուցանում էր բոլորին, որոնք նույնին աշակերտելու էին մտնում: Նրա աշակերտներից շատերը եղան երևելի ու անվանի մարդիկ:

Գրանցից էր կեսարացի Գրիգոր վարդապետը, որ գիտակ էր նուրբ ու արտաքին գիտելիքների և էր ճշմարտության զեմ կովողներին հաղթող ախոյան՝ լինեին մերազնյա, թե այլազգի:

Եվ Բարսեղ մեծանձն վարդապետը, որ Սրապիոն վարդապետից հետո Տիգրանակերտ քաղաքի, այսինքն՝ Ամիդի առաջնորդ նստեց:

Եվ Հովհաննես Ուռհայեցի վարդապետը, որ եղավ Ուռհայի առաջնորդ, և որը քաջահմուտ էր աստղագիտության և մաթեմատիկայի մեջ:

* Զպատշտուն իմ փառաւոր առնն (Հոմ. ԺԱ 13):

** Եկեղեցական երգեր, որ ժամագրքերում սկսվում են «Թագաւոր յախտեան» կաղապարով:

*** Եկեղեցական ասմունքի համակարգը:

**** Ժամերգության երկու կարգը՝ աջ և ձախ խմբերի ասմունքը:

Եվ տարոնացի Արիստակես վարդապետը, որ կատարյալ գիտակ էր երաժշտական երգերի ու եղանակների:

Եվ Հովսեփ ու Հովհաննես վարդապետները՝ Հղութից:

Եվ մյուս Հովհաննես վարդապետը Քաջբերունուց, այսինքն՝ Արճեշից:

Եվ Մովսես կաթողիկոսը Սյունյաց երկրից, որ եղավ լուսավորիչ մեր երկրի արևելյան մասի համար և նորոգող Սուրբ Էջմիածնի, որի ծախսերի պատմությունը առաջիկայում անելու եմ:

Էլ ինչո՞ւ երկարեմ, սուրբ վարդապետ Սրապիոնը երևելի ու փառավոր էր ամենքի աչքում, ոչ միայն մեր հայոց ազգի, այլև հոռոմների, ասորիների և մահմեդականների: Նրա ձեռքում աշխարհիկ ոչ մի գործ ետ չէր մնում, եթե կամենում էր անել:

Այս պատճառով երկու կաթողիկոսներն էլ նրան ողջունի սիրալիք նամակ գրեցին և ասացին: «Ահավասիկ մենք՝ տկարացանք, էլ չենք կարող մեծ պարտքերը վճարել, որի մեջ թաղվել ենք: Ահա և մենք մեր հոժար կամքով հեռանում ենք կաթողիկոսությունից և Սուրբ աթոռի տիրությունից: Արդ՝ քեզ է շնորհվել ամենը, ինչպես որ արժանես, կաթողիկոսությունը և աթոռը: Արդ՝ խնդրում ենք քեզնից՝ զանց շառնես գալու մեր փրկության և մանավանդ քո ծեր և հոգևոր ծնողի՝ Էջմիածնի Սուրբ աթոռի վերականգնման համար»:

Իսկ Սրապիոն վարդապետը, լսելով Սուրբ Էջմիածնի առուներ, համաձայնվեց գալ ոչ թե կաթողիկոսության ու փառքի համար, քանզի նա աստծուց ու մարդկանցից փառավորված էր, այլ եկավ լուսասփյուռ աթոռի փրկության համար, որովհետև իբրև հարազատ որդի ցավեց ծերացած ծնողի վրա: Դրա համար Տիգրանակերտից դուրս գալով և ձանապարհ ընկնելով վան քաղաքի վրայով, եկավ հասավ Հայաստանի վերնաշխարհը՝ դուրաքաղաք Զուղա, որ մեծ և նշանավոր բնակավայր էր այն ժամանակ մեր արևելյան երկրում, քանզի այն ժամանակ [բնակչությունը] տակավին քշված չէր Պարսկաստան: Այնտեղ գալով՝ Զուղայում դադար է առնում, իսկ նրա գալստյան լուրը տարածվեց ամեն տեղ. այս լսելով երկու կաթողիկոսները՝ առան իրենց խորհրդակիցներից Հավուց թառի Մանուկ եպիսկոպոսին և մյուսին՝ Խորվիրապի Մանվել եպիս-

կոպոսին, Գեղարդի Աստվածատուր եպիսկոպոսին և իրենց արյունակից ազգականներից ոմանց, եկան հասան Զուղա գյուղը, որտեղ եկել էր Սրապիոն վարդապետը:

Մի քանի օր անցնելուց հետո գործի մասին խոսք բաց արին, որի համար բերել էին վարդապետին [Սրապիոնին]: Եվ մինչդեռ բանակցությունների մեջ էին, և խոսակցությունը նրանց միջև առաջ էր ընթանում, արդարության թշնամին և ճշմարտության հակառակորդ բանասրկուն, որ մշտապես պառակտում է Քրիստոսի եկեղեցին, հանկարծակի նրանց միջև երկպառակություն ու խոտվություն դրեց: Քանզի այն մարդիկ, որ կաթողիկոսներ էին, չհանդուրժեցին վարդապետի [Սրապիոնի] ինչ-որ սակավ հանդիմանական խոսքերին, այդ պատճառով վեճ ու խոտվություն բարձրացրին, իսկ Հավուց թառի՝ Մանվել եպիսկոպոսը ինքնազուլս ոտքի կանգնեց այնտեղ հանդիսության մեջ, բարձրաձայն գոռում-գոչումով վեճ ու կռիվ բորբոքեց նրանց միջև և խանգարեց ասուլիսը: Այս բանը վատ ազդեց գործի վրա, բոլոր նստածները խոժոռվեցին, զզվեցին, ամեն ինչ լքեցին և միմյանց իբրև ատեւիներ թվալով՝ իրարից անջատվեցին չուրաքանչյուրը իր համար:

Այդտեղից կաթողիկոսները և իրենց մարդիկ վեր կացան գնացին Սյունիք Տաթևի վանքը: Իսկ Սրապիոն վարդապետը մնալով այնտեղ Զուղայում որոշ ժամանակ՝ իբրև նոր Սիրոնի բարձրաձայն ավետարանիչ ուսուցանում և լուսավորում էր բոլորին լուսասփյուռ վարդապետությամբ, որ սիրեցին ու հավանեցին ջուղայեցիները, և բոլոր արևելցիները ուրախանալով՝ օրհնություն էին վերառաքում ի բարձունս [աստծուն]:

Սրանք առնելով վարդապետին՝ բերին հասցրին բարձրագահ աթոռը՝ Սուրբ Էջմիածին: Եվ հավաքելով երկրի ողջ ժողովրդին՝ եկեղեցականներ, աշխարհականներ, արին մեծ ժողով և այդպիսի բազմամարդ հանդեսով Սրապիոն վարդապետին ամենայն հայոց կաթողիկոս և Էջմիածնի Սուրբ աթոռի հաջորդ ձեռնադրեցին մեր թվականության 1052 [1603]-ի օգոստոսի 14-ին. նրա ձեռնադրության օրը նրան Գրիգոր վերանվանեցին ըստ սուրբ Լուսավորչի [Գրիգորի]

անվան, որ թերևս նույնի ազոթքներով նաև սա վերջերում լուսավորի հայազուններին, ինչպես նա հնում. մեր օրերում կատարվեցին այս խորհուրդն ու մտածումը:

Գ Լ Ո Ւ Խ Գ

ՊԱՐՄԻՅ ԹԱԳԱՎՈՐ ՇԱՀ-ԱՐԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼՈՒ,
ԱՄԵՆ ԻՆՉ ԳՐԱՎԵԼՈՒ ԵՎ ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԳԱՊԵՏԻ ՆՈՐԻՅ ԻՐ
ՏԵՂԸ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երկու կաթողիկոսն էլ՝ Դավիթն ու Մելքիսեթը, և այն մարդիկ, որ նրանց հետ էին, երբ տեսան, թե իրենց և Սրապիոն վարդապետի մեջ միաբանություն չեղավ, մանավանդ թե միաբանության փոխարեն խռովություն ևս ընկավ, ելան Ջուղայից, գնացին Տաթևի վանքը և այնտեղ մնացին տասն օր. մտածեցին, խորհեցին, որպեսզի գուցե մի հնար գտնվի, կաթողիկոսությունից շղրկվեն, այլ կաթողիկոսությունը մնա իրենց ձեռքում, և որևէ կերպ աղատվեն պարտատերերի ձեռքից: Խորհուրդ արին, բայց ոչ տիրոջ միջոցով ըստ գրվածի, ի կորուստ իրենց և ի կործանում և տապալում երկրի, ի բռնավ ջնջում իրենց ազգի, քանզի որոշեցին իրենց միջև արված հաստատության, որպեսզի գնան Սպահան պարսից թագավորի մոտ, որի անունն էր Շահ-Աբաս:

Սրանց՝ շահի մոտ գնալու պատճառը հետևյալն էր. նրանք հավաստի և ստույգ գիտեին, թե շահը պատրաստվել է գալու Հայաստան, որովհետև սրանցից առաջ Ատրպատականից շատ մարդիկ՝ իշխաններ, կուսակալներ՝ մահմեդական և քրիստոնյա գնացել էին պարսից թագավորի մոտ, քանի որ խիստ շարաշար նեղության մեջ էին նրանց օսմանցիները ծանր հարկապահանջության, կեղեքումով զրկում էին ու կողոպտում, իրենց հավատքի նկատմամբ խստություն էին բանեցնում և այլ բազմապիսի տանջանքներով շարաշարում էին ոչ միայն հայոց, այլև վրաց և մահմեդական ազգերին: Այդ նեղությունների համար գնացին պարսից թագավորի մոտ, որպեսզի գուցե նրա միջոցով թեթևություն գտնեն՝ ազատվելով օսմանցիների ստրկությունից:

Քրդերից Ղազի խան անունով մեկը, որ մեծ իշխան և

կուսակալ էր մարերի երկրում,⁷ նեղվելով օսմանցի ազգից, քանի որ օսմանցիք կամենում էին նրան սպանել և նրա իշխանությունը իրենց գրավել, այս պատճառով նա էլ [Ղազի խանը] շահի մոտ ուղարկեց Ավգալ խան կոչված իր հավատարմին, որպեսզի գա, փրկի իրեն, իսկ ինքը անցնի շահի կողմը:

Այսպես նաև մարերի ազգից Ուլամի որդի Հայրաթեկ կոչված մի այլ իշխան. սա ոչ թե ուրիշի ուղարկեց, այլ ինքը գնաց շահի մոտ: Նաև վրաց թագավորներն էին կամենում, որ պարսիկները գրավեն երկիրը, քանզի մինչև հոգու խորքը վշտացած էին օսմանցիներից ոչ միայն նրանց նեղությունների, այլ մանավանդ իրենց Սիմոն խան թագավորին բռնակալ համար, որին օսմանցիք բռնեցին, տարան Կոստանդնուպոլիս և այնտեղ սպանեցին. այլև սրա թոռին ևս խարելով տարան Կոստանդնուպոլիս, նրան էլ սպանեցին: Նաև վրաց այս թագավորները շատ պատանդներ ունեին պարսից թագավորների մոտ. սրանք էին Թիֆլիսի վերոհիշյալ Սիմոն խանի դուստրը և որդին, նաև Կախեթի Ալեքսանդր թագավորի Կոստանդին անունով որդին, Սոմխեթի Աթաբեկ իշխանի Քահմազը լի անունով եղբայրը և շատ ուրիշներ վրաց ազգից պարսից թագավորների մոտ էին:

Իսկ Աղվանից երկրից և հայոց ազգից գնացին Սարուխան բեկը և իր եղբայր Նազարը Ոսկանապատ⁸ գյուղից: Օղլան քեշիշը և իր եղբայր Ղալաբեկին՝ Հաթերը⁹ գյուղից, Ջալալ բեկն իր եղբոր որդիներով Խաչենից¹⁰, Մելիք Սուլումը՝ Գիզակից¹¹, Մելիք Փաշիկը՝ Քոչիկ¹² գյուղից, Մելիք Բաբան՝ Բրիտաս¹³ գյուղից, Մելքիսեթ եպիսկոպոսը՝ Վերին Ջակամից¹⁴, Մելիքդատա գյուղից, Մելիք Հայկազը՝ Քշտադսի¹⁵ գավառի Խանածախ գյուղից:

Նաև շորս գյուղ Դիզակի շրջանից միանգամից թողին գնացին Պարսկաստան, և շահը սրանց բնակեցրեց Սպահան քաղաքում: Այլև Դաշտ կոչված տեղի ժողովրդի երեք մասը, որ Գողթան գավառում է՝ Ազուլիսին մոտիկ, գնացին Պարսկաստան, և շահը սրանց ևս բնակեցրեց Սպահան քաղաքում: Իսկ դիզակեցիների և դաշտեցիների գնալու պատճառը ծանր հարկապահանջությունը, կեղեքումը, կողոպտելը, խստություն բանեցնելը և քրիստոնյաներին անխնա սպանելն էր:

Արանք ամենքն էլ խիստ չբավոր և պարտատուներ էին, մնացել էին ճարահատ, այդ պատճառով փախան գնացին Պարսկաստան: Այն անձանց անունները, որ հիշատակեցինք, բոլորն էլ նշանավոր մարդիկ էին: Արանք և սրանցից ավելի շատերը գնացել էին շահի մոտ: Կաթողիկոսները այս բանը գիտեին, նաև տեղեկացրել էին, որ շահը հավաստի կերպով գալու է Հայաստան, դրա համար իրենք ևն կամեցան գնալ, որպեսզի մտերիմ երևան շահին, գուցե թե որևէ դյուրություն և օգնություն ստանան նրանից իրենց նեղությունների ու պարտքերի համար:

Այն ժամանակ իբրև ավարտումն բոլոր խորհուրդների՝ Կաթողիկոսը և խորվիրապի Մանվել եպիսկոպոսը մնացին Հայաստանում, իսկ Մելքիսեթ կաթողիկոսը Հավուց թառի Մանվել եպիսկոպոսը և Գեղարդի Աստվածատուր եպիսկոպոսը ելան Տաթևից և ինչ-որ պատճառաբանությամբ գնացին Պարսկաստան: Եվ երբ նրանք ճողովրդեցին պարսից երկրի սահմանը, անհապաղ շտապեցին գնալ, մինչև հասան Սպահան քաղաքը և ներկայացան Շահ-Աբաս թագավորին, հայտնեցին նրան իրենց խորհրդակցությունը: Երբ շահը այդ լսեց և հասկացավ, հոգով ցնծաց, մտքով ուրախացավ, մարմնով գլխով թառախեց, որովհետև այդ օրը նրա ուրախությունը ավելի մեծ եղավ, քան իր ամբողջ կյանքի ընթացքում էր եղել: Եվ ըստ իր խորամանկ սովորության Շահ-Աբասը սկսեց նրանց մեծարել ու պատվել ընծաներով, թանկագին պարգևներով և օր առ օր իր մոտ էր կանչում նրանց, խոսում էր հետները ըստ նրանց ցանկություն և նրանց սրտակից էր դարձնում իրեն, իսկ ինքը իրեն նրանց վատահիլի ու բարեկամ էր ձևացնում, խոստանում մեծամեծ բարիքների հասցնել նրանց, և այնքան դատարկ ու պատիր խաբեություններ իրեն կեղծելով նրանց մտերիմ ցույց տվեց, մինչև որ նրանց սրտերի բոլոր գաղտնիքները դուրս քաշեց, նրանց երկրների վերուդիրը և իշխանավոր անձանց իմացավ: Եվ երբ իմացավ, որ իրոք նրանց սրտինը այն է, ինչ որ բերանով խոսում են, հրաման տվեց իր զորավարներին զորքը պատրաստել մեկնելու համար: Իսկույն շուտափույթ հրամանը կատարվեց: Այնուհետև ամբողջ զորքը շարժվում է դեպի Թավրիզ՝ օսմանցիների

զորքի վրա, որ այնտեղ էին բնակվում և գրավել էին Թավրիզը ու նրա գավառները:

Եվ երբ շահը ելավ Սպահանից Թավրիզ գալու, հանվանե վերահիշյալ մարդկանց բոլորին առավ իր հետ, և արագընթաց ու օդասույց երիվարներով Սպահանից ելնելով՝ շուտով քիչ օրերի ընթացքում հասավ Թավրիզ: Օսմանցիների զորքը բնավ չիմանալով պարսիկների գալը, որովհետև ոչ թե շատ օրերի ընթացքում, այլ քիչ օրերում հասավ Թավրիզ: Իսկ նրա Շահ-Աբասը հասավ Թավրիզ, բանը հաջողակ ստացվեց նրա համար, որովհետև Թավրիզի Ալի Փաշա անունով տերը, որ այդ երկրի պաշտպան, օսմանյան բոլոր զորքերի հրամանատարն էր, իր ողջ քսան հազար զորքով հավաքվեցին միասին, գնացին Սալմաստ գավառը նախապես հիշատակված քուրդ պարոնի՝ Ղազի խանի վրա, որովհետև օսմանցիներին հայտնի էր եղել, որ Ղազի խանը հեռացել է օսմանցիների դաշինքից, դարձել է պարսիկների դաշնակից, և իր հավատարմատարին՝ Ավդալ խանին ուղարկել է շահի մոտ: Այս պատճառով օսմանցիների զորքը հավաքվեց և գնաց Սալմաստ Ղազի խանի վրա: Իսկ Ղազի խանը օսմանցիների զորքի հասնելուց առաջ ելավ Սալմաստից, գնաց Ուրմի գավառը և մտավ Ուրմիի ծովակում գտնվող մի անառիկ բերդ, որ կոչվում է Գոգարչին բերդ՝ և այնտեղ ամրացավ: Իսկ Ալի փաշան ու օսմանցիների զորքը գալով Սալմաստ՝ տեսան, որ Ղազի խանը գնացել է Ուրմի, իրենք չգնացին Ուրմի, որովհետև նախ կամեցան Սալմաստի այն երկրամասն ու բերդը գրավել, ենթարկել իրենց իշխանության և հետո գնալ Ուրմի Ղազի խանի վրա, քանի որ Սալմաստի երկրամասում կար մի ամուր բերդ, որը կոչվում էր Ղառնիյարուխ: Սրա շուրջը կռիվ բորբոքեցին և մինչև երեք ամիս օսմանական զորքը մնաց այնտեղ, պատերազմեցին բերդի դեմ, բայց չկարողացան գրավել:

Այն օրերին, երբ օսմանցիները Ղառնիյարուխ բերդի դեմ ճակատամարտում էին, շահը եկավ հասավ Թավրիզ: Քաղաքը թողեց, անցավ եկավ օսմանցի զորքերի դեմ: Իսկ օսմանցիք, երբ զգացին պարսիկների գալը և ստույգ իմացան,

* նշանակում է Աղավնաբերդ:

որ շահը ինքն է, քանի որ նախապես կարծում էին, թե ինչ-որ զորապետ է, իսկույն բերդի դեմ ճակատամարտը դադարեցրին, դարձան եկան Սոֆիան գյուղի մոտ և այնտեղ Սոֆիանի դաշտում, հանդուգն բախումով խմբավորվեցին ճակատամարտի: Այդ ճակատամարտում մեծ քաջություն ցույց տվեց Ուլամի որդի Հայբաթ բեկը, որովհետև այս ճակատամարտում շահի առջև քսան գլուխ բերեց: Իբրև գիշակներ ու անկուշտ գազան նորից մտավ ճակատամարտի մեջ, բայց այդքան շատ արշավանքների ու շարշարանքների պատճառով հոգնել էր նրա երիվարը. օսմանցի գինվորները շրջապատելով իրենց միջև նիզակափակ արին նրան և այնտեղ Հայբաթ բեկին դարկին սպանեցին: Պարսից զորքերը այս տեսնելով՝ երկյուղ կրեցին, որով թեթև կերպով պարտված երեսաց պարսից կողմը: Եվ շահը իսկույն իր առջև կանչեց Զուլֆիղար մեծ խանին ու քաջալերելով սրտապնդեց նրան և հրավիրեց ճակատամարտի: Իսկ նա շահի քաջալերանքներից սիրտ առնելով մտավ ճակատամարտի ասպարեզը և մեծ զորությամբ հարվածեց ու ջախջախեց օսմանցիների զորքերը: Պարսից զորքերը տեսնելով այս՝ ընդհանրապես բոլոր կողմերից հարձակվեցին, սրահար արին, առհասարակ բնաջնջեցին բոլորին, դիատապաստ թափեցին դաշտերում, իսկ մնացածները փախչելով կորան: Իսկ Ալի փաշան տեսնելով իր կողմի պարտությունը և այն, թե ստույգ շահը ինքն է, իր հետ առավ որդուն և եկավ ընկավ շահի ոտքերը, ազաշում էր ազատություն համար: Իսկ շահը սիրով ու գթասրտությամբ ընդունեց նրան ու մեծ պատվով իր մոտ էր պահում ու իր հետ էլ Սպահան տարավ:

Ճակատամարտը տանելուց հետո շահը եկավ մտավ Թավրիզ: Գրավելով տիրեց քաղաքին ու բոլոր գավառներին: Իսկ քաղաքամիջի բերդը տակնուվրա արեց, ամբողջը հիմքից քարուքանդեց: Այնտեղ մնալով որոշ օրեր՝ մինչև ողջ երկիրը նվաճեց իր իշխանության տակ, նշանակեց իշխաններ ու գործադիրներ երկրի բոլոր սահմաններում:

Իսկ օսմանցիների մնացած զորքերը, որ Թավրիզ քաղաքից փախան և պատերազմից ազատվեցին, գնացին հավաքվեցին Նախիջևան քաղաքում: Նախիջևանի զորքերի հետ խորհրդակցեցին [և եկան այն եզրակացություն], թե պար-

սից թագավորը այս երկրի համար է եկել, և ինչպես էլ լինի, վերջը այն է, որ նա մեր ձեռքից այս երկիրը առնելու է: Արդ՝ նախքան նրա գալը մենք կողոպտելով, ավարելով հափշտակենք այս գավառի գյուղերից ինչքան որ կարող ենք, առնենք գնանք: Նրանց այս խորհրդակցությունը հայտնի դարձավ գավառների գյուղացիներին, մանավանդ Զուլայի [բնակիչներին]: Այս մտադրությունը առանձնապես Զուլային էր վերաբերում, այդ պատճառով բոլորը դուրս եկան իրենց բնակավայրերից և գյուղամիջից փախան ելան լեռները, քարայրերը, ամուր վայրերը՝ տեսնելու, թե վերջը ինչ է լինելու:

Այս լուրը Թավրիզում հասավ շահին, դրա համար զորավար նշանակեց Զրադ սուլթանին և մեծ զորքով ուղակեց Նախիջևանի գավառացիներին ապահովելու համար: Նա եկավ հասավ Զուլա: Երբ օսմանցիները այս տեսան, ձախողվեցին իրենց մտադրությունների մեջ: Թեպետ ոչ շատ, բայց օսմանցիք ինչ որ կարողացան կողոպտել մերձակա գյուղերից, կողոպտեցին, ավարեցին և հավաքվեցին Նախիջևանում:

Իսկ Նախիջևանում գտնվողները՝ թե սպաշակազմը և թե գյուղացիները, երբ լսեցին Թավրիզի գրավումը և այնտեղի զորքի պարտությունը, նաև այն, թե պարսիկները պատրաստվում են իրենց վրա արշավելու, լեղինները ջուր կտրեցին, սրտերով լքվեցին և ձեռնթափ եղան: Իսկ օսմանցիների այն զորքերը, որ Թավրիզից փախան և եկան Նախիջևան, չկարողացան այնտեղ մնալ և դիմադրել, ի սիրտ և հոգի բռնվեցին երկյուղով, հապճեպ տափնապալից ելան Նախիջևանից եկան, իրենց գցեցին Երևան քաղաքը: Եվ Երևանի բերդի հարավային կողմում նրան կից պարիսպ քաշեցին, շինեցին մի այլ բերդ և իրենք մեջը մտան ուղղակի հանդերձանքով:

Այս տափնապալից օրերում այն օսմանցիք, որոնք պարտք էին տվել Դավիթ և Մելքիսեթ կաթողիկոսներին, բռնեցին Սրապիոն կաթողիկոսին և նրանից էին պահանջում իրենց ինչքը՝ ասելով, թե մեր տված պարտքը Աթոռի վրա է, որի հաջորդը ու կաթողիկոսը դու ես, հարկ է, որ դու վճարես մեզ: Ու նա թեպետ արագարացի ու իրավացի շատ խոսքերով պատասխանում էր, սակայն նրանք չէին լսում: Նաև կամենում էին նրան ևս իրենց հետ բերդը տանել. բայց աստծու

ողորմությունը օգնեց, որովհետև ոմանց շատ, ոմանց քիչ ինչքեր տվեց և ազատվեց նրանց ձեռքից, որ շտարան բերդը, մնաց գավառում, մինչև շահը եկավ Երևան:

Շահ-Աբասը իր գալուց առաջ Թավրիզից Զուլֆիզար խանին ուղարկեց Նախիջևան՝ մնալու այնտեղ և տիրելու քաղաքը մինչև իր գալը: Զուլֆիզար խանը գնաց և արեց այնպես՝ Եկավ, Նախիջևանի բերդի մոտ բանակ դրեց, նստեց, այնքան մոտ էր, հրացան կրակելին, գնդակը կհասաներ: Այդ պատճառով Զուլֆիզար խանի բարեկամները ասացին նրան, թե ղզույշ պահիր քեզ, որպեսզի օսմանցիք հրացանով չըխփեն քեզ: Սրանց պատասխանեց ժպտալով և օսմանցիներին անարգելով, թե նրանց հրացանը իմ աչքերին կդիպչի: Ապա երկրորդ օրը Նախիջևան քաղաքի իշխանների մոտ պատգամավորներ ուղարկեց, թե հրացան կամ նետ մի արձակեք, որովհետև ես քիչ մարդկանցով գալիս եմ ձեզ մոտ ձեզ հետ բանակցելու իրավունքով և օրենքով: Եվ առնելով իր հետ քսան հոգի՝ բանակից դուրս եկավ ու ոտքով գնաց քաղաք: Հասնելով քաղաքադռանը՝ նստեց այնտեղ: Երբ նրա մոտ հավաքվեցին քաղաքի բոլոր իշխանները, Զուլֆիզար խանը այնժամ ասաց օսմանցի իշխաններին. «Արդ ու՞մ հույսին կամ ո՞ր օրվան եք սպասում, քանի որ ոչ թե ես եմ եկել ձեր դեմ պատերազմելու, կամ թե ինձ նման մի խան, այլ ինքնակալ թագավորն է մեծ բանակով եկել և իր երկիրն է պահանջում: Իսկ դուք ի՞նչ ուժով կարող եք դիմադրել ու նրա դեմ պատերազմել: Արդ՝ բարեկամի խոսք եմ ասում ձեզ, քանի որ ինձ այսպես բարի լինել է թվում, նաև ձեզ բարի պետք է թվա. հենց այժմ դուք բոլորը ձեր ընտանիքներով ու ունեցվածքով ելեք, խաղաղությամբ գնացեք և համառելով մի հակառակեք ու պատերազմեք, որովհետև միզուցի պարսպեք ու մատնվեք ոչնչացման, իսկ ձեր ընտանիքները գերություն տարվեն և ձեր ունեցվածքը ավարի ենթարկվի:

Այդ ժամանակ իշխանները և օսմանցիք համաձայնեցին ու նրանից խնդրեցին սահմանված օրեր, որ քաղաքից ելնեն. խանը այդպես էլ արեց: Այնուհետև բոլոր օսմանցիները սկսեցին Նախիջևան քաղաքից ելնել և բանակ դրին քաղաքի մի կողմում, մինչև որ բոլորը հավաքվեցին այնտեղ: Եվ մինչդեռ օսմանցիները դուրս էին գալիս քաղաքից, ղզբաշի¹⁶

զորքերից ղորականներ եկան ու կանգնեցին քաղաքադռանը, միայն հրացան եղած զենքն էին առնում օսմանցիներին և ուրիշ ոչինչ: Բացի դրանից ամեն ինչ և իրենց զենքերը օսմանցիք առան զնացին: Քաղաքի ղորականներից բազմաթիվ մարդիկ եկան Զուլֆիզար խանի մոտ ու ասացին. «Ա՛րանք, որ դուրս են գալիս գնում, բնիկ այս քաղաքից չեն, այդ պատճառով գնում են, ինչ վերաբերում է մեզ, մենք բնիկ այս քաղաքից ենք ու չենք կամենում այստեղից գնալ, մինչև այժմ տիրում ու իշխում էր խոնդկարը¹⁷, նրան էինք ծառայում, իսկ այժմ, որովհետև տիրեց և իշխեց Շահ-Աբասը, կամենում ենք այստեղ մնալ ու նրան ծառայել: Այս խոսքերը խիստ դուր եկան խանին, սիրով ու զթասարտությամբ ընդունեց նրանց ու կարգադրեց, որ այդպես լինի. ուստի զինվորները եկան, շուտափույթ հանեցին օսմանցիների տարազը, հարթեցին իրենք իրենց երկայն մորուքները ու հագան ղզբաշի տարազը և եղան իբրև վաղուցվա ղզբաշներ: Խանը նաև կարգադրեց, որ մուսուլմանները դուրս գա և քաղաքի մեջ բարձրաձայն հայտարարի, թե այսուհետև տերությունը, իշխանությունը և աշխարհակալությունը պատկանում են շահին, ով որ սիրում է շահին, թող այստեղ մնա անհոգությամբ, իսկ ով որ կամենում է գնալ, թող խաղաղությամբ գնա իր ճանապարհը: Եվ այս պատվիրանով մնացին քաղաքի մյուս մարդիկ, մինչև որ շահը ինքը եկավ Նախիջևան:

Եվ ինքը շահը մինչ Թավրիզում էր, շատ շտապ աճապարանքով կարգավորեց այդ կողմերի վիճակը: Եվ իսկույն հրամայեց իր ղորապետներին, որպեսզի ճանապարհ ընկնեն և գնան ուղիղ Նախիջևան քաղաքը: Գալու ժամանակ, երբ հասան Զուղա գյուղաքաղաքը, Զուղայի բոլոր բնակիչները բազմաթիվ, զանազան և տեսակ-տեսակ հորինվածքով պատրաստություն տեսած ելան շահին ընդառաջ, ինչպես վայել է թագավորին: Իշխանները, ծերերը, երիտասարդները զարդարանքներով, զենքերով, ոսկեհուռ սքանչելի հանդերձներով պճնազարդված ընդառաջ էին գնում: Իսկ նորաբողբոջ դեռահաս մանուկները ոսկի բաժակով անուշահամ ու աղնիվ դինի էին մատուցում: Քահանաները՝ վառված մոմերով, խոնկելով ու կնդրուկներով, և աշխարհիկ երգիչները առջևից ընթանալով ներդաշնակ ձայնով նվագում էին: Իսկ շահի ըն-

թացուղին զարգարել էին, գետեզրից մինչև խոջա հաշիկի ապարանքը փոել էին գորգեր թագավորի ոտքերի տակ, թանկարժեք, մեծահարգի ու վայելուչ կերպասներ, որոնց վրայով թագավորը անցավ գնաց խոջա հաշիկի տունը: Իսկ այնտեղ տանը խոջա հաշիկը ոսկե սկուտեղը ոսկով լցրած տված իր որդու ձեռքը մատուցեց թագավորին. նույնպես և Զուղայի բոլոր մեծամեծերը ընծաներ մատուցեցին, ինչպես վայել է թագավորին: Շահը այնտեղ մնաց երեք օր, իսկ շուղայեցիները պատվեցին նրան համադամ կերակուրներով ու ծաղկահամ գինիով:

Իսկ անդնդային վիշապ Շահ-Աբասը, որ հենց սկզբից օձաբար էր տրամադրված ընդդեմ քրիստոնյաների, երբ տեսավ սրանց այդքան հարստությունն ու բարեվայելությունը, սիրտը մաղձով լցվեց, և ներբուստ դառնում էր պիղծ, թե ինչպես պատճառ ու ժամանակ գտնի դավելու նրանց: Բայց առժամանակ թույնը թաքցնելով՝ երեսանց սրտահամ էր ցույց տալիս: Երեք օրից հետո Զուղայից ելավ, գնաց Նախիչևան, մտնելով քաղաքը՝ տիրեց այն առանց պատերազմի, առանց որևէ ջանքի, այնտեղ մնաց քիչ օրեր և նշանակեց իշխանների ու պաշտոնյաներ նրա բոլոր սահմաններում:

Ինքը՝ շահը իր ամբողջ բանակի հետ առաջանալով՝ շարժվեց գնաց Երևան քաղաքի վրա: Երբ Երևան հասավ, շուրջանակի պատեց, պաշարեց բերդը և ամենևին առանց որևէ շարիքի ու շարչարանքի նստեց նրա շուրջը, որովհետև շրջակա երկրամասը, որ շեն էր ու ամեն բարիքներով լի, զբրավել էր և ենթարկել իր հրամանին, ուստի պարսից բանակի բոլոր կարիքները լրացված էին՝ թե մարդկանց, թե կենդանիների. և այսպիսի անհոգություններով [բերդի շուրջը] նստած սպասում էր: Երբեմն խստագույն կերպով էր ճակատամարտում, երբեմն շատ թույլ, երբեմն էլ խաղաղության, զաշինքի ու ուխտադրության խոսքեր սուտ երդումով և խաբեբայական առաջարկություններով բերդի ներսն էր ուղարկում, որպեսզի միայն բերդը իրեն տան, իսկ իրենք առնեն իրենց ունեցվածքը խաղաղությամբ գնան իրենց երկիրը: Բայց օսմանցի զորքերը ականջ չէին դնում շահի խոսքերին, այլ տակավին համբերում էին հույսով, գուցե թե որևէ տեղից մի փրկություն հասնի նրանց:

Այս օրերին շահը հրամայեց պարսից զորքին գնալ Արարատյան երկիրը և նրա բոլոր շրջակա գավառները, ամեն տեղից տղամարդիկ հանել, որ կոչվում է ժողովուրդ (առյաթ)*, թե քրիստոնյաներից, թե մահմեդականներից, ինչ ազգից էլ որ լինեն, հավաքել, բերել պարսից բանակը, որպեսզի պարսից զորքերին մարտակից լինեն, բաղիսար քշեն և այլ գործակցություններ օգնական լինեն պարսից զորքերին: Եվ ճակատամարտի ժամանակ, երբ հարձակվում էին կամ բաղիստը հրում վեր, քրիստոնյաներին առաջ էին մղում, հրի ու սրի դեմ էին տալիս, որով կոտորվում էին հայերը երկու կողմերից, առջևից օսմանցիների ձևերով, իսկ ետևից՝ պարսիկների:

Եվ երբ շահը թավրիզը գրավեց ու մինչ ինքը այնտեղ էր, այնտեղից Ամիրգոննա խանին ուղարկեց Գանձակ, որպեսզի այնտեղ մնալով դիմադրավի օսմանցի զորքերին, որ հանկարծակի շղան և փորձանքի ենթարկեն պարսից բանակը: Իսկ նա Գանձակ գնալով երկու ամիս մնաց ու երբ իմացավ, որ օսմանցիները թույլ են ու չեն կարող այն գրավել, այնժամ Գանձակի երկրից, ուր նա կարողացավ հասնել, հրո ճարակ արեց և սրով ոչնչացրեց՝ ոմանց կոտորեց, ոմանց կողոպտելով գերեց ունեցվածքով ու ընտանիքներով, բերեց լցրեց Երևան պարսից բանակի լիության և զխության համար:

Այլևս՝ մինչդեռ շահը նստել էր Երևանի բերդի շուրջը ու ճակատամարտում էր, այդ ժամանակ Երևանի երկրամասը հանձնեց Ամիրգոննա խանին և նրան նշանակեց այդ երկրամասի խան:

Եվ երբ շահը եկավ Երևան, երկրամասի բոլոր բնակիչները եկան երկրպագելու և ողջունելու թագավորին ու իրենց կարողություն համապատասխան ընծաներ բերին: Սրապիտն կաթողիկոսն էլ ընծաներով եկավ ու հայտնվեց թագավորի առջև. և երբ թագավորը հարցրեց, թե ո՞վ է սա ու որտեղից է, պատասխան տրվեց, թե հայոց կաթողիկոսն է և Ամիրգի երկրամասից է: Իսկ շահը անտեսեց նրան ու նրա հետ չխոսեց, որովհետև նրան չընդունեց, քանի որ կամե-

* Բնագրում ըտաղար:

նում էր Մեկթիսեթին կաթողիկոս նշանակել, որին իր հետ էր պահում: Իսկ [Մեկթիսեթը] շահասեր* (շահին սիրող) էր ձևանում: Սրապիոնը տեսնելով, որ շահը իրեն չընդունեց, ելավ Երևանից, գնաց Զուղա, որ այնտեղից մեկնի իր տեղը:

Այդ օրերին շարիք մտորելու մեջ հանձարեղ Շահ-Աբասը կանչեց իր մոտ Դավիթ ու Մեկթիսեթ կաթողիկոսներին, ու ասաց. «Թագավորները սովորություն ու կարգ ունեն, այդ նաև ձեզ է հայտնի, այս երկիրը առաջ պատկանում էր օսմանցիներին, իսկ այժմ մերն եղավ. այդպես էլ ամեն ինչը և ունեցվածք նրանցն էր, որ անտեր են մնացել, բայց պետք է լինեն արքունական, այսինքն՝ պետական ունեցվածք: Արդ՝ ձեզ մոտ են գտնվում օսմանցիների շատ գանձեր, որոնք դուք նրանցից եք պարտք առել և պարտավոր եք վճարել առանց որևէ պատճառարանության, քանզի պարտքեր են, և գանձերի վճարն էլ արքունի գանձարանին պետք է վճարվի, որովհետև օսմանցիների ունեցվածքն է: Ինչպես որ նրանց երկիրը գրավեցինք, այնպես էլ նրանց բոլոր ունեցվածքը արքունական պետք է լինի: Երբ դուք վճարեք արքունի գանձարանին, ես ձեզ զիվան-դատաստանով ազատության թուղթ կտամ, թե ես ստացա բոլոր այն գանձերը, որ սրանք պարտք էին, և ոչ ոք թող սրանց նկատմամբ պահանջող չլինի, որովհետև ինձ վճարել են»:

Այս կաթողիկոսները պարտքերի պատճառով փախան ու ապավինեցին շահին, որ դուցե շահը նրանց աղատի պարտատերերից, մինչդեռ շահն ինքը նրանց իր առջև բերելով՝ նրանցից պարտքերն է պահանջում: Արդ՝ այս է օգնությունը շահի, որին ապավինեցին նրանք: Եվ կաթողիկոսները հասկացան, որ չեն ազատվի նրա ձեռքից, քանզի իմացան նրա ազահությունը: Կամա թե ակամա բոլոր պարտքերը վճարեցին Շահ-Աբասին, ումն էլ որ պարտ էին: Այս պատճառով հիշվեց նաև Սրապիոն կաթողիկոսը. դրա համար շահը ասաց կաթողիկոսներին. «Ահա ես իմ ծառաներից այսինչ անունով մեկին ուղարկում եմ այն կաթողիկոսի ետևից, դուք

* Պատմության 3-րդ տպագրության մեջ (Վաղարշապատ, 1896, էջ 27) շահիսկվանը փակագծում բացատրված է՝ շահին սիրող, և ըստ ազմ թարգմանում ենք՝ շահասեր:

ևս պատրաստեցեք մի մարդ ձեր կողմից, որպեսզի իմ ուղարկվելիք մարդու հետ գնան ու հասնեն նրան, և որքան [պարտք] հասնում է նրան, առնեն բերեն: Այս պատճառով կաթողիկոսները իրենց կրոնավորներից մեկին թագավորի ծառայի հետ ուղևորեցին Սրապիոն կաթողիկոսի ետևից: Սրանք գրեթե անապատ Ջուղա՝ գտան Սրապիոն կաթողիկոսին, բռնեցին նրան, ռանտարկեցին և պահանջում էին շատ գանձեր: Նա թեպետ կարողացածի չափով տալիս էր, բայց նրանք զբաղվեցին չէին բավարարվում, այլ սոմարդի ու անագորույն բրնույթ ունենալով՝ բերին Սրապիոնին զցեցին շարժարանների փորձություն մեջ, հարվածների ու ծեծի [ենթարկեցին]: Եվ այդ պատվավոր մարդուն խիստ անպատիվ արին, մինչև իսկ փողոցի հրապարակի մեջ ռոքերից կախած ուժգին բրածեծ արին նրան բազում օրեր: Երբ Սրապիոնը տեսավ, թե ոչ մի տեղից փրկության սպասելիք չկա, շատ գանձեր փոխ առավ ու ավեց նրանց, մինչև սր նրանց աչքերը լիացան գանձերով ու կաշառքներով շուղայի նմանությունով, և ապա բաց թողին նրան: Իսկ նա ազատվեց նրանցից, ինչպես դառը գայլի բերանից: Հագիվ ճողոպրելով նրանց ձեռքից՝ Ջուղայից ելավ, գնաց Վան քաղաքը՝ թախիծը հոգում, տրամալից սրբատով, անմխիթար հոգով և դառը հեծեծանքներով: Այնտեղից էլ [մեկնեց] Ամիգ քաղաքը: Ապրեց մի տարի և երկրորդ տարում վախճանվում է այս աշխարհում, մահվամբ ու հանգստյամբ ավելանում տիրոջը: Այդ վախճանը տեղի ունեցավ մեր թվականի 1055 [1606]-ի ապրիլ ամսի 23-ին. նրան թաղեցին այնտեղ Ամիգ քաղաքում: Սրա հիշատակը թող օրհնված լինի, իսկ նրա աղոթքներով թող տերը մեզ ողորմի. ամեն:

Իսկ շահը քանի դեռ նստած Երևանի բերդի շուրջը ճակատամարտում էր, չէր դադարում մեր երկիրը ավերելուց և հայոց ազգը գերելուց: Փանդի բազմաթիվ զորքերով զորապետներ ուղարկեց Կարինի¹⁸ կողմերը. սրանք գնացին ավերեցին Բասենի¹⁹, Խնուսի²⁰ գավառները, Կարինի դաշտը և այլ վայրեր, ուր կարողացան հասնել: Փանդեցին, ավերեցին և ոչնչացրին երկիրն ու շեները, կողոպտեցին ինչքան և հարստությունը, աղամարդկանց կոտորեցին, իսկ կանանց ու մանուկներին գերելով բերին Երևան իրենց բանակը:

Այդպես էլ Արճեշի կողմերը զորք ուղարկեց, որոնք զընացին, արին վերևում ասածի համապատասխան ավար, գերութուն, ոչնչացում հայոց ազգին ձեռն ժամանակ:

Նաև այս ժամանակ, մինչ շահը նստած էր բերդի շուրջը և ճակատամարտում էր, Շիրազից Երևան շահի մոտ եկավ Ալահվերդի խանը. սրա գալը մեծ օգնություն եղավ պարսիկներին: Շահը Ալահվերդի խանին ուղարկեց Արծկե²¹ քաղաքի վրա. սրան Արծկե քաղաք ուղարկելու պատճառը հետևյալն է:

Երբ հայոց 1049 [1600] թվականն էր, մեծ Սիմոն խանը՝ վրաց թագավորը ապստամբվեց օսմանցիների պետությունից և եկոտրեց բերդապահ օսմանցիներին, որոնք գտնվում էին Վրաստանում: Այս պատճառով սուլթան Մահմադ խոնդկարը հրամայեց Զաֆար փաշային, որ Քավրիզի իշխողն էր, մեծ զորք հավաքել և գնալ Սիմոն խանի վրա: Թագավորի հրամանի համաձայն Զաֆար փաշան մեծ զորքով գնաց Սիմոն խանի վրա: Եվ երբ Սիմոն խանը ընկավ օսմանցիների ձեռքը, Զաֆար փաշան Սիմոն խանին հանձնեց մի փաշայի, որի անունն էր Մահմադ փաշա, որպեսզի սա տանի Կոստանդնուպոլիս խոնդկարի մոտ: Եվ երբ այս Մահմադ փաշան Սիմոն խանին հասցրեց խոնդկարի մոտ, խոնդկարը նրան պարզեց խիլա*, Կարինի փաշայությունը, իսկ Վանի փաշայությունն էլ Կարինի փաշայությանը իրրև կալվածք: Թագավորի հրամանի համաձայն Մահմադ փաշան եկավ Կարին և վարում էր փաշայությունը: Իսկ Վան քաղաքը ու շրջակա գավառները շուղեցին այս վիճակը, որովհետև նրանց ծանր թվաց, թե Վան քաղաքը իր բերդերով այնքան նվաստացավ, որ դառնա Կարինին կալվածք. այս պատճառով չէին կամենում հնազանդվել Մահմադ փաշային: Իսկ Մահմադ փաշան Կարինից ելավ եկավ Վան քաղաքը, նրանց համաձայնեցրեց ու ենթարկեց իր կամքին: Այնտեղից գնաց, որպեսզի շրջակա շեները նույնպես համաձայնեցնի. հերթով շրջելով հասավ մինչև Արծկե: Իսկ Արծկեի իշխողը, որի անունը նորից Մահմադ փաշա էր, յկամեցավ հնազանդվել,

* Խիլան թանկագին հագուստ է, որ թագավորները նվիրում էին իրենց մեծագործ հպատակներին:

այլ երբ լսեց նրա գալու մասին, մեծ զորք հավաքեց, շատ ուտելիք առավ, մտավ բերդը, ամրացավ և շնազանդվեց, քանի որ բերդը ամուր էր: Մահմադ փաշան եկավ, բերդը պաշարեց և նրա դեմ կռիվ սկսելով հզորապես մարտնչում էր: Իսկ մյուս Մահմադ փաշան, որ բերդի մեջ էր, պատերազմը իրենից հեռու վանելու համար խորհրդակցեց իր համախոհների հետ և իր հավատարիմ մարդկանցից ոմանց ուղարկեց, որպեսզի գաղտագողի ընթացքով հասնեն շահին, որ այն օրերին Երևանի բերդի շուրջը նստած կուլում էր: Մարդիկ հասնելով ասում են նրան. «Թագավոր, հավետ ապրիր: Մահմադ փաշան, որ գտնվում է Արծկե բերդում, կամենում է շահասեր [շահին սիրող] լինել և բերդը հանձնել շահին: Իսկ Վանի փաշան այս բանը չի կամենում, այլ եկել շրջապատել է բերդը և կամենում է գրավել իր համար: Այս պատճառով Մահմադ փաշան մեղ ուղարկեց քո մեծություն մոտ և խնդրում է քեզնից, որ իրեն օգնություն զորք ուղարկես, որպեսզի ինքը փրկվի և երկիրը բերդը հանձնի քո զորավարին»:

Իսկ շարիք մտորելու մեջ հանճարեղ Շահ-Աբասը հրամայեց Ալահվերդի խանին մեծ զորք առնել և գնալ այդ գործով: Եվ պատվիրեց նրան. «Եթե քեզ կտա բերդը և երկիրը, շատ լավ կտիրես երկիրը և կնստես բերդում, իսկ եթե քեզ հետ խաբուսթյան խաղ կխաղան, ապա դու ինչ վնաս կարող ես տալ նրանց, ատր, իսկ հետո երկիրը գերելով՝ կվերագառնաս այստեղ»:

Ալահվերդի խանը գուրս գալով Երևանից՝ գնաց Արծկե, իսկ Մահմադ փաշան, որ բերդը շրջապատել էր, լսելով խանի գալուստը, այնտեղից չվեց գնաց Մշո գավառը: Խանը գալով Արծկե՝ սպասում էր, թե բերդի միջի Մահմադ փաշան՝ գալով իր մոտ, խոստումը կկատարի: Իսկ նա չեկավ խանի մոտ և ոչ էլ բերդը հանձնեց, այլ խանի դեմ կովի պատրաստվեց: Խանը հարձակվեց բերդի վրա, իսկ փաշան զորքով ելնելով բերդից՝ սկզբում փախուստի մատնեց խանի զորքը, իսկ երկրորդ անգամ, երբ կամենում էին հարձակվել բերդի վրա, խանը դարանակալներ դրեց, իսկ դարանակալներին պատվիրեց, թե դուք թաքնվելով մնացեք դարանատեղում, իսկ մենք գնալով կկոպենք բերդի դեմ, երբ բեր-

դականները ելնեն, մենք կփախչենք նրանց առջևից և նրանց կհեռացնենք բերդից: Այդ ժամանակ դուք վեր կկենաք թիկունքի կողմից, իսկ մենք առջևից մեջտեղ առնելով կկոտորենք նրանց: Այդպես էլ արին, բերդից ելած զորքը մեջտեղ առնելով կոտորեցին, իսկ բերդի մեջ մնացած զորքը փակեց բերդը ու չհանձնեց խանին:

Երբ խանը հասկացավ բերդականների հաստատուն մտադրությունը, որ բերդը չեն հանձնելու, բերդը թողեց, հարձակվեց երկրի դավառների վրա և Արծկեի ամրոցը երկրամասը հավասարապես ավերեց և հրդեհելով այրեց, ողջ տղամարդկանց կոտորեց, իսկ ինչքն ու հարստությունը, ուստրերն ու զուստրերը, կանայք ավարի ենթարկեց ու գերեց: Այստեղից դուրս ելավ, եկավ Արճեղ²², Բերկրի²³, Վան, սրանց բոլոր դավառներում այդպես վարվեց: Որպես գավառի տեր ու իշխան, որ առանց ահի ու կասկածանքի շրջում է իր գավառում, այսպես էլ սա էր շրջում. քանզում էր ու ավերում երկրամասը, որտեղ որ հասնում էր: Եատ օրեր մնաց այդ տեղերում, քանի որ ոչ ոք չկար, որ կարողանար դիմագրավել նրան: Ինչ կամեցավ ու կարողացավ անել, արեց: Հավաքեց բոլոր գերյալներին, խոշոր անասունների նախիրներ, ոչխարների հօտեր, ձիերի երամակներ՝ և իբրև մեծ հորդացած հեղեղ բոլորը քշեցին, բերին, հասցրին Երևան, պարսից բանակի լիություն համար: Արդ՝ այսպիսի պատճառով Ալահվերդի խանը գնաց Արծկե. նրա ձեռքով գերվեցին քրիստոնյա այդքան անձեր, որոնց թիվը, ասում են, եղել է քսաներեք հազար՝ չհաշված սպանվածները:

Բայց Երևանի բերդի մեջ գտնված օսմանական զորքը, որի գլուխը կանգնած էին Սայիդ փաշան ու Սուլեյման փաշան՝ իջող փաշայի որդին, քաջություն ցուցաբերեցին արքային և պարսից զորքերին ճակատամարտում էին: Բայց դիմադրեցին ութ ամիս, իսկ իններորդ ամսին անճար մնալով՝ բերդը հանձնեցին: Քանզի օսմանցիք խորհելով տեսան, որ ոչ մի տեղից օգնության սպասելիք չկա՝ ոչ այն քաղաքներից, որ իրենց շրջապատում էին, ոչ էլ իրենց թագավորի արքունիքից, քանզի թագավորի արքունիքը խառը վիճակում էր, որովհետև սուլթան Մահմադ խոնգկարը նույն տարում մեռավ, իսկ սրա որդին՝ Ահման սուլթանը, որին թագավոր

կարգեցին, հաստիով տասներկուամյա պատանի էր. թագավորը նոր էր և այն էլ պատանի: Նաև՝ իշխանները միմյանց հետ սեր ու միաբանություն և թագավորի տան հետ մտերմություն չունեին, այլևս ապստամբ ջալալիները²⁴ շատ ու շատ էին վեր կացել երկրի մեջ, որոնք ավերում էին թագավորի քաղաքներն ու երկրները: Նրանք դրանցով էին զբաղված, ուստի չէին կարողանում օգնել Երևանում գտնվող զորքին: Այս ջալալիների անունները կհիշենք առաջիկայում սրանց մասին գրված գլխում [է գլուխ]. ջալալիների որպիսությունը կիմանաս այդ գլուխը կարդալով: Վերոհիշյալ պատճառներով, այլև շատ նեղությունների համար, որ կրեցին Երևան քաղաքի բերդի մեջ պաշարված օսմանյան զորքերը, նեղվեցին, անհույս եղան օղնողների ու փրկողների նկատմամբ, այս պատճառով բերդը հանձնեցին պարսից զորքերին:

Երբ շահը բերդը գրավեց, հրամայեց մուսուլմաններին հեռանալ ու հրապարակել պարսից ու օսմանյան բանակների մեջ. «Հրաման է մեծ արքա Ծահ-Աբասից. ով որ սիրում է այս երկիրն ու շահին և կամենում է մնալ իր հայրենիքում սիրով կմնա և շահից պատիվներ ու ընդունելություն կգտնի ըստ արժանվույն, իսկ ով որ կամենա գնալ յուր աղզի ու ժողովրդի մոտ, խաղաղությամբ կգնա իր ունեցվածքով ու հարստությամբ: Սայիդ փաշան եղավ շահասեր և շահից խնդրեց իշխանություն և իմամուռուղի²⁵ վերակացությունը. նա սաացավ իր խնդրածը և զնաց խորասան իմամուռուղին սպասավորելու: Իսկ Սուլեյման փաշան շահից խնդրեց գնալ իր ժողովրդի մոտ, մի բան, որ շահը թույլատրեց նրան գնալ նա էլավ գնալու. նրա հետ կային հինգ հազար հեծյալ ու քաղաքանակ ժողովուրդ: Իսկ պարսից դիվանման զորքերը զունդագունդ հետապնդելով նրանց՝ գաղտագողի ընթացքով հասան ու հարձակվեցին նրանց վրա. ոմանց խփեցին սպանին, ոմանց փախցնելով ցաբուցրիվ արին և նրանց ունեցվածքը կողոպտելով՝ դարձան իրենց բանակատեղը:

Արդ՝ այս ամենը կատարվեց պարսից թագավորի ձեռքով. իսկ օսմանցիները և նրանց թագավորը, որ նստում էր Կոստանդնուպոլսում, լսելով այս ամենը՝ միաբանվեցին ու արի գործ ձեռնարկեցին՝ ելնել և թշնամուն դիմագրավել

Մեկին նշանակեցին գլխավոր և զորահրամանատար, որի անունն էր Սինան փաշա, մականունով կոչում էին Ջղալօղլի։ Սա հավաքեց մեծ քանակությամբ զորքեր, որոնց հետ ելնելով Կոստանդնուպոլսից, շարժվում դալիս էր արևելյան կողմերը։

Բերդը գրավելուց հետո շահը հրամայեց, որքան ժողովուրդ, որ օտարական են ու պանդուխտ, նաև նրանք, որ գերությունից ազատված են, լինեն քրիստոնյա, մահմեդական, թե հրեա, որոնց բերին ասպատակության, ավարտություն իրենց հատկացված տեղերը գնացած խաները՝ թե Ամիրգունա խանը, որ բերեց Գանձակի ներհամասից, թե Ալահվերդի խանը, որ բերեց Արծկեից, Արճեշից, Բերկբից ու Վանից, թե մյուս խաները, որ մյուս անգամ բերին Արճեշից, Մանաղկերտից²⁶, Ալաշկերտից²⁷ և Մակուից²⁸, թե մյուս խաները, որ այլ անգամ բերին Կարսից, Կաղզվանից²⁹, Բասենից, Կարինից, Խնուսից, և այլ ամենը, որ ինչ-որ տեղից եղել են, հրամայեց, որ սրանց բոլորին որոնեն գտնեն Երևանի նահանգում և ամենին քշեն Պարսկաստան։ Այս հրամանը շուտափույթ կատարվեց, որովհետև որքան որ այդպիսի ժողովուրդներ կային, բոլորին քշեցին Պարսկաստան։ Նաև՝ երբ շահը Քավրիզը գրավեց, մինչդեռ այնտեղ Քավրիզում էր, հրամայեց այնտեղ եղած օտարականներին քշել տանել Պարսկաստան, և այդպես էլ արին։

Երբ Քավրիզից ելավ, Նախիջևանում անցավ, եկավ Երևան, Նախիջևանի օտարականները լսեցին, թե շահը Քավրիզի օտարականներին քշեց տարավ Պարսկաստան, իրենց համար դա ինչ-որ լավ գործ համարեցին. նրանցից ոմանք եկան Երևան և շահին իմացրին, թե մենք նույնպես շահասեր ենք և կամենում ենք գնալ Պարսկաստան։ Իսկ շահը նրանց սրտին գոհացում տալու և սրանց նման անմիտներին խաբելու համար հրամայեց պարզև տալ նրանց. և տվին հինգ պարզև. նրանց վրա վարիչներ նշանակեց, որոնք նրանց ևս տարան Պարսկաստան։

Եվ այս ամենը կատարվեց երկու տարում, որովհետև Սրապիոն կաթողիկոսի էջմիածին գալը և կաթողիկոս լինելը, նույն տարում շահի գալը և Քավրիզը, Նախիջևանն ու Երևանը գրավելը, Սրապիոնի իր տեղը դառնալը և այլ բա-

նեք որ այս գլխում պատմեցինք, տեղի ունեցան երկու տարում. որ մեր թվականության 1052, 1053 (1603, 1604) տարիներն էին։

Գ Լ Ո Ւ Ե Գ

ՋՂԱՅՈՂՈՒ ԱՌԱՋԻՆ ԳԱՆՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐԻ ՊԱՏԱՌՈՒՎ
ՇԱՀԸ ԲՈՎԱՆԴԱԿ ԱՐԱՐԱՏՏԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՄՐԱՆ
ՄՈՏԻԿ ՍԱՀՄԱՆԱԿԻՅ ԳԱՎԱՌՆԵՐԸ ՄՐԱ ՀԵՏ ՄԻՍԱՍԻՆ
ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՏԱՐԱԳՐԵՑ

Շահը այս ամեն գործերը և եղելությունները կատարելուց հետո, Երևանից իր ամբողջ բանակով առաջ շարժվեց դեպ Կարս քաղաքի վրա այն ևս գրավելու նպատակով։ Եվ երբ հասավ Շիրակավանի³⁰ գավառը, Ջղալօղլու գալու մասին բազմաթիվ լուրերի հետ, որ մշտապես բերում էին դնացած լրտեսները, այնտեղ եկան այլ լրտեսներ և ստույգ լուր բերին, թե ահավասիկ Ջղալօղլին եկավ մուտք գործեց Կարս գավառը, որ էրզրումն է՝ Երբ շահը այս լուրը լսեց, իր երեսը շուտ տվեց, եկավ Նախիջևան Երվանդակերտ³¹, որ այժմ կոչվում է Աղջաղալա։

Եվ այն, որ վաղուց մտադրվել էր քրիստոնյա ժողովրդին տարազրել և հալոց աշխարհը ավերել, այդտեղ հայտնեց իր խորհրդակիցներին։ Քանզի իր մտքում հասկանում էր, թե չի կարող պատերազմով Սինան փաշային, այսինքն՝ Ջղալօղլի զորահրամանատարին, դիմադրել, այդ պատճառով հրամայեց Հայաստանի բոլոր բնակիչներին՝ թե քրիստոնյա, թե հրեա, թե մահմեդական, քշել Պարսկաստան, որպեսզի օսմանցիները գան երկիրը մարդկանցից թափուր տեսնեն, և չգտնվեն ուտելիք ու օրապահիկ և այլ պիտույթ նրանց ու նրանց անասունների համար. և հարկավոր առարկաների չգոյություն հետևանքով օսմանյան զորքերը նեղվեն։ Նաև՝ քշված տարված ժողովուրդները նրա համար լինեն կայուն հարկատուներ, ծառաներ ու հողգործներ մինչև հավիտյան։

Եվ նա մինչ մտավարանքի մեջ էր, լսեց, թե Ջղալօղլին դուրս եկավ Կարինից։ Այդ ժամանակ իր մոտ կանչեց Հա-

յաստանք մեծամեծերին, իրեն կեղծավորաբար ցավակից ցույց տալով հայոց ազգի նկատմամբ, ասաց հայոց մեծամեծերին ու ավագներին. «Լսեցիք, թե եկել է Ջըլալօղլին և ահավասիկ անթիվ զորքով գալիս մտնում է ձեր երկրները: Նաև մեր զորքերն են անթիվ, դիտեր, որ սրանց մեջ երկու կողմերում էլ այսպիսի ժամանակ կան հոգով դաժանացածներ՝ ավազակներ, զոդեր ու սրիկաներ, որոնց ով և որտեղից լինելը չգիտենք. գուցե ոմանք նրանցից անփութ են դարձել իրենց կյանքի և իշխանների հրամանատարների նկատմամբ, հանկարծակի հարձակվեն և կտտորեն երկրի մի մասը և ձեր ժողովրդին, կամ ավարին ունեցվածքը, ընտանիքները և առնելով հեռու ճողոպրեն, ու ձեր ժողովուրդը կորստի ու գերության մատնվի: Այդ պատճառով խղճալով ձեզ՝ մտածել եմ ձեզ փրկել հետևյալ կերպով. որ գավառապետերը և ձեր երկրի բնակիչները դուրս գան իրենց տեղերից, քիչ առաջ շարժվեն, գնան մի քանի օրվա ճանապարհ, իսկ մենք այստեղ դեմները կտրելով կռվենք օսմանցիների հետ. եթե տերը մեզ հաջողություն տա, այդ ժամանակ կդառնաք ձեր տեղերը և կյիներ մեզ ժողովուրդ. իսկ եթե աստված նրանց տա, մենք կթողնենք կգնանք, և դուք կդառնաք ձեր տեղերը, կլինեք նրանց ժողովուրդը»: Երբ շահը այս ասաց հայոց ավազանուն, որոնց զխավորի առուն էր տեր Հովհաննես, որին հարգալից մակդիրով ասում էին աղս տերտեր: Նրանք հասկացան գավաղրական նենգությունը և վատ զգացին նրա խոսքերից. պատճառներ մտածելով մտեցան շահի նախարարներին, ասացին: Այդ ժամանակը աշուն է,— քանի որ սուրբ խաչի տոնից հետո էր, երբ երկիրը տարագրեցին,— երկրի բոլոր բնակիչները ճանապարհի պատրաստություն՝ գրաստ և այլ բեռնակիր շունեն ունեցվածքն ու մանուկները բառնալու համար. թեպետ առողջներն ու կարողները ոտքով կգնան, իսկ ծերերն ու մտաղաշ մանուկները շեն կարող գնալ: Այս պատճառով խնդրում ենք արքայից այժմ մեզ ներել, իսկ այդ հրամանը աստծու հաջողությամբ դարնանը կկատարենք. այս ասում էին գուցե իրենցից [փորձության] ժամը անցնի:

Իսկ երկրների ավերիչը, քրիստոնյա ազգերի վատնիչը, սատանայի բնակարանը՝ Շահ-Արաս թաղավորը շանսաց հա-

յրի խոսքին: Այլ իր նախարարներին կանչեց իր առջև ու նրանցից վերակացուներ, երկրի բնակիչների վարիչներ նշանակեց. ամեն մի գավառի իշխան իր զորքով վարող ու քշող կլինի իր գավառի բնակիչներին:

Իսկ Ամիրգունա խանին հատկապես Երևան քաղաքի, Արարատյան երկրի և սրան մերձ գավառների [վերակացու նշանակեց]: Եվ շահը նրանց հրամայեց՝ որտեղ կարող են ձեռ գցել, տարագրեն-քշեն՝ լիթղնելով ամենևին կենդանի շղմշ, թե քրիստոնյա, թե մահմեդական, խոսքով համոզվողներին, չհամոզվողներին, թագավորի հրամանին շանսացողներին՝ սրով, մահվամբ, գերությամբ:

Իսկ զորապետները այսպիսի աշխարհակործան ու դաժան հրամանը թագավորի կողմից ընդունելուց հետո յուրաքանչյուր զորավար իր գնդով ելավ դիմեց հայոց աշխարհի հրամայված գավառը իբրև հողմակոծ հուր, որ անցնում է եղեգնուտով: Տազնապալից աճապարանքով գավառների բոլոր բնակիչներին շուտափութ շորթնելով իրենց բնակավայրերից և վտարելով իրենց տեղերից ինչպես հոտ ու նախիր բազմաթիվ ոշխարների ու տավարների առաջները անելով բռնությամբ քշեցին բերին հասցրին Արարատյան գավառը: Նրա լայնանիստ դաշտը ծագեծագ լցրին, որովհետև Գառնիի լեռների ստորոտներից մինչև Արաքս մեծ գետը բանակի լայնքն էր, իսկ երկայնությունը ըստ այդ լայնության դու կշռադատիր. ես կասեմ մի օրվա ճանապարհ, բայց այլուր տեսա՝ գրված էր հինգ օրվա ճանապարհ: Հայոց թվականը երբ էր վերջացել, մտել էինք 1054 (1605) թվականի հայոց նավասարդ³² առաջին ամիսը, երբ երկիրը տարագրեցին:

Եվ պարսից զորքերը, որ անցան երկրի տարագրմանը, որտեղից որ ժողովրդին դուրս էին քշում, գյուղերից, թե քաղաքներից, բոլոր շեները, տները, բնակավայրերը անխնայորեն այրելով հրկիզում էին: Հրկիզում էին նաև խոտի, հարդի, ցորենի, գարու և այլ պիտույքների համբարանոցները, ամեն ինչ այրելով ոշնացնում էին: Այսպես ավերելով գատարկեցին երկիրը օսմանցի զորքերի համար, որպեսզի նրանց որևէ օրվա պահիկ շմնա և նրանք վտանգավոր կացության մեջ լինեն: Նաև տեղահանված ժողովուրդը այդ տեսնելով հուսահատ լինի ու հտ շղառնա:

Արդ՝ պարսից այն զորքերը, որ նշանակվեցին իբրև ժողովրդին տարազորղներ, ժողովրդին քշելով բերին հասցրին էջմիածնի դաշտը: Այդ ժամանակ Շահ-Աբասը նստած էր Աղջաղալա³³, իսկ օսմանցիների զորահրամանատար Ջղալ-օղլին իր զորքով հասել էր Կարս³⁴: Շահ-Աբասը գիտեր, որ գեթ հանդիման ճակատամարտելով չէր կարող օսմանցիներին դիմադրել, վախենում էր նրանց մեծաքանակությունից, ուստի դարձավ իր ամբողջ բանակով, հետևեց ժողովրդի շվերթին գեպի Պարսկաստան: Նաև օսմանյան զորքերը շարժվելով հետևեցին պարսից բանակին: Եղան երեք մեծ ու անթիվ բանակներ. առաջին բանակը ժողովրդի բանակն էր, երկրորդը պարսից բանակն էր, իսկ երրորդ բանակը օսմանյանն էր: Այնպես էր պատահում, որ երբ ժողովրդի բանակը չվում էր, սրանց հանգրվանում Շահ-Աբասն էր պարսից զորքով իջնում-բանակում, իսկ սրանց շվերթից հետո նույն տեղում օսմանյան զորքերով բանակում էր Ջղալօղլին. և այսպես միմյանց կրնկակոխ հետամտելով գնացին մինչև որ ժողովուրդը և պարսիկները հասան Զուղա գյուղը, իսկ օսմանցիները հասան Նախիջևան: Այսուհետև պարսիկները և ոչ մեկ ժամ չթույլատրեցին ժողովրդին հանգիստ առնել, այլ խիստ տաղնապով նեղում էին ժողովրդին, ոմանց մահու հարվածներով ծեծում էին, ոմանց քթերն ու ականջներն կտրելով, ոմանց էլ գլուխները կտրում էին ու ցցում էին ձողի վրա, ինչպես Առաքել կաթողիկոսի եղբորը, որի անունն էր Օհանջան. սրա և մի այլ մարդու գլուխները կտրեցին և Աբաքս գետի ափին ձողի վրա ցցեցին: Սրանք և սրանցից առավել կատանքների ու խոշտանգումների էին ենթարկում ժողովրդին իբրև ահ ու սարսափ ժողովրդին և տեսնողներին, որպեսզի գետը շտապ անցնեն: Պարսից խորամանկ աղվաջ այս ամեն փորձություններին էր ենթարկում ժողովրդին օսմանցիների սարսափից, որոնք հետապնդում էին պարսիկներին: Որովհետև պարսիկները տեսնում էին, որ ժողովրդի բանակը անթիվ է, նույնպես տեսնում էին, որ իրենց բանակն էլ շատ է, մինչև այսքան բազմությունը գետը անցնելու շատ օրեր կանցնեին: Օսմանյան զորքից երկնյում էին, թե մի գուցե այդքան օրերի ընթացքում հանկարծակի կհարձակվեն պարսից բանակի վրա, կոտորած կսարքեն, կամ

վնաս կհասցնեն իրենց և կամ ժողովրդին իրենցից հափշտակելով՝ հոտ կղարձեն և իրենց շար դիտավորությունը կխափանվի: Այս պատճառով տաղնապալից ստիպում էին ժողովրդին գետն անցնել: Եվ ժողովրդի շատություն պատճառով նրանց նավ կամ արկղ չէր բավականացնում, որոնցով գետը անցնեին. թեպետ այլ տեղերից ուրիշ նավեր բերին ու այնտեղ շատ արկղեր շինեցին, սակայն ժողովրդի բանակը և պարսից զորքը շատ-շատ էին, տակավին չէր բավականացնում: Եվ պարսից այն զորքերից, որոնք նշանակված էին իբրև ժողովրդին քշողներ, ժողովրդին շրջապատած էին պահում, որպեսզի ոչ ոք չփախչի. նաև փայտով ծեծում, հարվածում, ջարդում ու մղում էին, լցնում գետը: Եվ այսպես ժողովրդի փորձությունն ու վիշտը սաստկանում էր:

Իսկ թշվառ ժողովուրդը նայում իր առջև տեսնում էր ծովի նման անհուն գետը, որ խեղդում էր, իսկ հտևից պարսից սուրն էր, որ սպանում էր, և փախուստի ոչ մի հնար չկար: Ընդհանուր կերպով ազիտորմ ողբեր, հորդ արցունքներ աչքերից թափելով երկրորդ Աբաքս էին գոչացնում. իսկ լացի, հառաչանքների, ճիչերի, վայերի, կսկծանքների, մորմոքների ձայները միմյանց խառնվելով ուժգին զոռում-զոռյուններ էին առաջացնում, բայց ողորմածություն ու փրկություն ոչ մի տեղից չկար:

Այստեղ մեր ժողովրդին խիստ անհրաժեշտություն պետք եղավ հին Մովսեսը³⁵ ու նույնի աշակերտ Հեսուն³⁶ նոր Իսրայելը երկրորդ փարավանի³⁷ ձևաբաց փրկելու համար, կամ դադարեցնելու հորդահոս, լայնատարած մեծ գետի հոսքը, բայց չգտնվեց, քանզի մեր մեղքերի հորդությունը մեր գեթ փակեց գթառատ աստծո ողորմության դուռը:

Բայց պարսից անողորմ զորքերը ժողովրդին քշելով լցնում էին գետը, իսկ սրանք վտանգից գետի մեջ ալիելի ու ավելի էին շատացնում աղաղակի ու ողբերի ձայները: Սրանցից ոմանք բռնելով նավերի, ոմանք արկղերի եղբրից, ոմանք ձիերի, եզների ու գոմեշների պոչերից, ոմանք էլ ինքնուրույն լողալով անցնում էին: Իսկ նրանք, որոնք լողալ չգիտեին, կամ ուժ չունեին՝ ծերեր, պառավներ, տղաներ, աղջիկներ, մատղաշ մանուկներ լցված էին ջրի երեսը, և գետը քշած տանում էր նրանց իբրև չոր ձյուղ գարնան ժամանակ:

Գետատար մարդկանցով ծածկված էր գետի երեսը. թեպետ անցնողները անցան, բայց շատերը նրանք էին, որ ջրում խեղդվելով մեռան:

Պարսից զորքերի հեծյալներից ոմանք, որ ուժեղ ձիեր ունեին և իրենք արի տղամարդիկ էին և կարող, շրջում էին քրիստոնյաների մեջ ու տեսնելով քրիստոնյա ուսուրերին ու դուստրերին, որոնց հավանում էին, լինեին կանաչք, աղջիկներ և տղաներ, երբեմն խաբում էին տերերին, թե տուր քեզ համար գետից այն կողմ անցկացնեմ, և երբ անցկացնում էր այնտեղ գետին շեր դնում, այլ առնում-տանում էր ուր կամենում էր: Ուրիշներն էլ զոգությամբ էին առնում-տանում: Մի մասն էլ հափշտակելով ու սպանությամբ էր տերերից առնում-տանում: Եվ շատ մայրեր երկխաներին ու տերեր հիվանդներին ճանապարհ գցեցին, դարձրին լքյալ, թողին գնացին անհանդուրժելի ու անտանելի փորձության պատճառով, որ հասել էր նրանց: Եվ միանգամից ասեմ, որ անտանելի թշվառություններ, արհավիրքներ հասան մեր ազգի վրա և շփտեմ, թե ինչ ձևով դամբանական ու ապաշխարական ողբեր հյուսեմ հայ ազգի խորտակման վրա, որ ունակ դարձավ այսքան շարիքներ կրելու: Քանի որ հին Իսրայելի նման գերի էին քշվում երկրորդ բարեկացիների³⁸ ձեռքով, բայց Երեմիան³⁹ չկար, որ խրատեր, ոչ էլ Եղեկիելը⁴⁰ կար, որ լուսավորեր, ոչ էլ Հեսուն կամ Զորարարելը⁴¹, որ դարձը առաջնորդեր, այլ դարձել էին անհույս հոտեր, ցրվել ու հալածվել էին պատառտող գալլերի ու գիշատիչ գաղանների առջև, որոնք նրանց քշում էին բռնի կերպով: Եվ նրանք գնալով գնում էին ու լալիս էին, որ բարձած տանում էին իրենց սերմերը:

Իսկ սրան հաջորդ տեսանելի շեղավ այն, որ ասում է. գալով թող գան ու ցնծան, որովհետև ոչ եկան, ոչ էլ ցնծություն եղավ, այլ այնտեղ մնացին, ուր տարան, արգելեցին այսինքն՝ պարսից աշխարհը:

Եվ եղավ, որ ողջ ժողովուրդը գետը անցավ, ժողովրդի հետ խառը գետը անցավ նաև պարսից բանակը: Մինչև այդտեղ Ամիրգունա խանն էր ժողովրդին քշողը, այստեղ Շահ-Աբասը հրամայեց նրան գնալ իր բանակի հետ. ժո-

ժովրդին քշող նշանակեց Խալիֆալու Էլիազ սուլթանին. և սրան հրամայեց շտապ ու շուտափույթ քշել ժողովրդին ու հեռացնել օսմանյան զորքերից և հասցնել Պարսկաստան: Իսկ ինքը շահը պարսից ամբողջ բանակով արքունի ճանապարհով, այսինքն՝ կենտրոնական ճանապարհով ուղի ընկավ, գնաց Թավրիզ: Սակայն ժողովրդին միևնույն արքունի ճանապարհով շտարան Թավրիզ օսմանցիներից երկյուղ ունենալու պատճառով, որ զուցե հետևներից հասնելով ժողովրդին խլեն պարսիկներից: Շահը Էլիազ սուլթանին հրամայեց, որ նեղ ու անձուկ, դժվարին վայրերով տանի, որով օսմանյան բանակը չկարողանա նրանց հետևից գնալ: Եվ նա քշելով ժողովրդին ձորի ճանապարհով, որտեղով Արաքս գետը հոսում է իր ընթացքով, լեռների ու ձորերի դժվարին ելևէջներով, կածան տեղերով: Եվ բազում տառապանքներով ու փորձություններով անցան լեռների դժվարին տեղերը: Ժողովրդին դժվարին վայրերից անցկացնելով տարան Թաբրումխալխալ, Ահար, Մուշկուն և սրանց մոտակա վայրերը, ուր տեղավորեցին նրանց ամիսներ ձմռան սաստկաստույց ու դառնաշունչ ցրտերի պատճառով, երբ չէին կարող գնալ:

Իսկ երբ եկավ գարնանային քաղցրաշունչ եղանակը, Արուսուրաբ բեկ անունով մի այլ իշխան նշանակեցին ժողովրդին քշող, որ կրկին սկսեց քշել ժողովրդին մինչև տաբավ, հասցրեց Սպահան քաղաքը: Այնտեղ, ովքեր քաղաքացիներ էին, նույն քաղաքում տեղավորվով՝ բնակեցրին, իսկ ովքեր շինականներ ու գյուղացիներ էին, Սպահան քաղաքի շրջակա գավառներում բնակեցրին, այսինքն՝ Լնջանում, Ալնջանում, Գանդիմանում, Զղախոտում, Փարխյում և Իուրվարիում. այդ տեղերում բնակվեցին ու մնացին մինչև այսօր: Քանզի տարիքով մարդիկ, որ Հայաստանից էին գնացել և ծանոթ էին հայ աշխարհի վայելչություններին, սրանք մեռան այնտեղ, իսկ նրանք, ուր այնտեղ ծնվեցին, սնվեցին ու վարժվեցին, այդ երկիրը սիրեցին, նրան ընտելացան, քանզի վարժվեցին նրան, այդ պատճառով այնտեղ մնացին մինչև այսօր:

Սպահան տարված հայոց այս ժողովրդից հինգ հարյուր տուն բաժանեցին, տարան Սպահան, հինգ հարյուր տուն բաժանեցին տարան Շիրազի երկրամասը և այնտեղ բնա-

* Սաղմ ձեռն 6.

կեցրին: Քանզի Շիրազի տեր Ալահվերդի խանը Շահ-Աբասից խնդրեց իրեն շնորհել հայ ազգից մի մաս հայ ազգի բարեմատության ու հավատարմության համար, որպեսզի դառնան նրա ժողովուրդը. թագավորը հարգեց նրա խնդրանքը, և նա տարավ բնակեցրեց Շիրազի գավառում:

Գարձյալ անդրադառնանք մեր պատմության սկզբին: Քանզի երբ թագավորի հրամանով Ամիրգունա խանը պատրաստվեց տարագրելու Արարատյան երկիրը, իր զորքերից մի զորամաս ուղարկեց Գառնու գավառը, որպեսզի նրանց ևս քոչեցնեն, բերեն խառնեն ժողովրդի շվերթին: Իսկ գնացած զորքը նախ մտավ Նույն Գառնի գյուղը. սրանք թագավորի հրամանի համապատասխան չվարվեցին, այլ իբրև գերեզմարիչներ ու ավարառուներ սկսեցին քրիստոնյաների ունեցվածքն ու դավակներին հափշտակել: Այս տեսնելով՝ գյուղի բնակիչները միմյանց ձայն տվին ու կազմեցին մեծ ամբոխ, ապա սրով, քարով ու փայտով խփեցին, վիրավորեցին, զխատեցին նրանց ու իրենցից հեռացրին, իսկ իրենք այնտեղ մնացին անհոգ, ինչպես Մորիկի ժամանակներում⁴², և ոչ մի տեղ չփախան և ոչ էլ գնացին խանին իմացնելու նրա զորքի հափշտակության մասին: Իսկ հալածված զորամասը գնաց Ամիրգունա խանի մոտ, սկսեց ամբաստանել ժողովրդին և մեծամեծ հանցանքներ հերյուրել նրանց վրա: Սա խիստ բարկությանք զայրացած իր հետ վերցրեց մեծ զորամաս, եկավ Գառնու գավառը. նախ Նույն Գառնի գյուղի տղամարդկանց բռնեց, հնթարկեց խոշտանգումների ու շարչարանքների՝ գանահարությանք, հոգերի հատումով. և հետո իսկույն տեղահանեց, տվեց իր զորականների ձեռքը, որ սրանց տանեն խառնեն ժողովրդի մեծ շվերթին, որ և տարան խառնեցին ժողովրդի շվերթին, ու սրանք նրանց հետ գնացին պարսից սոլթանարհր: Այնտեղ Գառնիում Ամիրգունա խանին ասացին, թե Գառնու գավառում այլ գյուղեր ևս կան, որոնք ամբացել են այս երկրի լեռների ամուր վայրերում, այրերում, քարանձավների ծերպերում: Եվ հանվանե հիշեցին Հավուց թառի վանքի եպիսկոպոս Մանվելին և Գեղարդի վանքի Աստվածատուր եպիսկոպոսին, թե սրանք մտել են այսինչ այրերը և այնտեղ ամբացել: Քանզի այս երկու եպիսկոպոսներն էլ երբ լսեցին երկրի տարագրության մասին, հո-

գացին իրենց կարիքների համար անհրաժեշտ պետքերը՝ իրեր, ուտելիք, ըմպելիք և իրենց հետ առնելով իրենց մերձավորներից ոմանց՝ կրոնավոր ու աշխարհիկ մարդիկ, ու սրանց հետ ելան, գնացին Գեղարդի ձորը և մտնելով քարանձավային մի այլ՝ գաղարեցին: Որովհետև Գեղարդի ձորում շատ հին ժամանակներից կան փորած այրեր ու ամրոցներ, Ամիրգունա խանը այս լսելով՝ առավ իր հետ եղած զորամասը ու եկավ Գեղարդի ձորը և ինքը եկավ կանգնեց եպիսկոպոսների գտնված այրի դիմաց. դեպի այրը բարձր ձայն տալով՝ խոսում էր նրանց հետ խաղաղությամբ, որպեսզի գան թագավորի հրամանին հնազանդվեն: Իսկ նրանք անարդանքի, հայհոյանքի, անպատվության տղեղ խոսքեր էին այնտեղից ձայնելով ասում խանին: Նաև քար ու նետ արձակեցին դեպի խանը՝ իսկ երբ խանը տեսավ, որ խաղաղությամբ թագավորի հրամանին հնազանդության չեն գալիս, այնժամ հրամայեց իր զորամասին, ինչ որ կարող են անել, թող անեն: Խանի զորականներից քարաղնաց մարդիկ ելան լեռան գագաթը, որտեղ քարայրն էր և բռնելով քարաժայռերից հնարավոր ընթացքով իշան քարայրի մուտքի կողմը: Քարաղնաց տաճիկներից մեկը կանգնեց քարայրի դռանը, որտեղ Մանվել եպիսկոպոսն էր, և նայելով ներս՝ տեսավ եպիսկոպոսին նստած: Եվ տաճիկների լեզվով նախ ողջույն տվեց եպիսկոպոսին, իսկ եպիսկոպոսը չկարողացավ պատասխանել, այլ ապշեց մնաց, իսկ տաճիկը սրտով ու գործով արիացավ, մտավ քարայրը և իսկույն մեջքը կապած կարճ սուրը դուրս քաշեց, զարկեց, այնտեղ սպանեց եպիսկոպոսին և դուխը կտրելով ցած գցեց խանի առջև: Ապա պարսից զորքի այլ զինվորներ ևս սրտապնդվելով շտապ բարձրացան քարայր, եպիսկոպոսի մյուս ընկերներին ևս բռնեցին, իջեցրին ցած խանի առջև. բոլորին հենց այդտեղ սպանեցին: Ապա նույն ձորը մանրակրկիտ հետախուզեցին, որոնեցին ու բոլոր փախածներին, որոնք քարերի խոռոչներում ու ծակերում թաքնված էին, ամենին գտան, նրանց ունեցվածքը կողոպտեցին, նրանցից ոմանց կոտորեցին, ոմանց թողնելով կենդանի տարան խառնեցին ժողովրդի բուն հավաքի շվերթին:

Արդ՝ հենց այստեղ հայտնի եղավ աստծո արգար դա-

տաստանը, որ բաժանում է մինչև շնչի, ուղեղի, օդի հատվածքը⁴³ այս երկու եպիսկոպոսների վրա, որոնք գնացին Սպահան, բերին պարսիկ ազգը, որոնք ավերեցին հայոց աշխարհը, և իրենք էլ նույն սրով սատկեցին, որովհետև ում հետ հույս կապեցին, նրանք էլ եղան իրենց սատակիչները, ըստ այն խոսքի, որ գրված է Օրինաց գրքում. ինչով որ մեկը մեղանշում է, նրանով էլ տանջանքի կենթարկվի*։ Ոչինչ չօգտվելով իրենց փուշ առաջարկություններից ու անօրեն գործերից, նաև պարտական մնացին աստու արդար դատաստանի առջև Հայոց աշխարհի ավերման, մեր ազգի կործանման, անմեղ մարդկանց կորուստի, այնքան անպարտ արցունքների թափման, սուրբ եկեղեցիների հանգման, այլ տեսակ-տեսակ շարաշար դիպվածների համար, և այս բոլորից հետո իրենք ևս սատկեցին պարսից սրով։

Այս ամենից հետո խանը հավաքեց իր ողջ զորքը ու գրեաց նույն Գառնու գավառի այլ փախստականների վրա. որոնց որ չկարողացան բռնել, թողին հեռացան, իսկ որոնց որ բռնեցին, թալանեցին ու սպանեցին, կամ բռնելով տարան իրենց հետ։ Գնալով գնացին մինչև հասան մեծ ձորը, որին անվանում են Քոռադարա։ Եվ շնայած այնտեղ ձորում շատ քարայրներ ու ամրոցներ կային, որտեղ քրիստոնյաները թաքնված էին. թողին բոլոր թաքստոցները, դիմեցին մի նշանավոր քարայրի վրա, որին կոչում էին Յախշխան այր, քանի որ նրա ամրությունը շնորհիվ այնտեղ շատ քրիստոնյա տղամարդիկ ու կանայք էին հավաքված՝ մոտ հազար հոգի՝ Քարայրի մուտքը քրիստոնյաները զգուշութամբ պահպանում էին։ Իսկ պարսից զորքը թեպետև բազմաթիվ ժամեր նետաձգությամբ ու հրացանով կռիվ մղելով մարտնչում էր, սակայն չկարողացավ հաղթել, որովհետև ներքևի կողմից խիստ շատ բարձր էր։ Ապա շարագյուտ պարսից ազգը գտավ մի այլ հնար։ Իրենց զորքից անջատեցին երկու հարյուր մարդիկ, որոնք ձորից բարձրացան գնացին ժայռի գլուխը, և որովհետև ձորի ժայռերն ու վեմերը միմյանց վրա դասավորված էին գո-

* Այս խոսքը Սողոմոնի իմաստությունից է. «Ձի գիտացեն, թե որովք մեղանչ է սք, նորիմբ և տանքի» [ԻՄ. ԺԱ 17]։

տիներով, շատ պարաններ իրար կապելով՝ իջեցնում էին միմյանց գոտի առ գոտի. և գոտուց գոտի իջնելով հասան այն գոտու գլուխը, որի մեջ քարայրն էր. այդտեղ բերին շորս մարդ և հագցրին երկաթե զրահներ՝ դրանց ոտից գլուխ դարձրին երկաթապատ. յուրաքանչյուրի մեջքը կապեցին շորսից հինգ թուր, որպեսզի երբ մեկը կտորվի, մյուսը պատրաստ լինի. և նրանց ձեռքը տվին մերկացրած սուսերներ ու յուրաքանչյուրի մեջքը կապեցին երկու-երեք պարան, որպեսզի երբ մեկը կտորվի, մյուսը նրան պահի։ Ապա անսահման բարձրությունից նրանց կախեցին, մինչև եկան հասան քարայրին. և մտնելով քարայրի մեջ՝ դիմելով տղամարդկանց ու կանանց վրա մերկ սուսերներով, սկսեցին անխնա կոտորել նրանց, ինչպես գայլեր, որ մտնելով ոչխարների մակաղատեղին, կոտորում են առանց զթալու։ Եվ խեղճ քրիստոնյաները տեսնելով պարսից անողորմ սուրբ, որ կոտորում է իրենց, սկսեցին ողբի, լացի ու կոծի, աղաղակի, բարձր ձայնով լալ ու ողբալ, կոծել իրենց կորուստը։ Խոռվված աղմկում էին իբրև փոթորկված ծով, ալեկոծված միմյանց հետ մրցում էին, մի կողմից մի այլ կողմ էին ընկնում աղատվելու հնար գտնելու համար, բայց փախուստի տեղ չկար։ Եվ այն մարդիկ, որ պահպանում էին քարայրի մուտքի ճանապարհը, լսելով աղաղակը ու իմանալով տեղի ունեցածը, թողեցին պահպանությունը և իրենց ընտանիքներին խղճալու պատճառով գնացին քարայրի ներսը ընտանիքները փրկելու։ Դրոսի կողմից պարսիկները տեսնելով պահպանների գնալը՝ հավաքված միասին մտան քարայր և սկսեցին քրիստոնյաներին սպանել մարդախողտող սրերով քարայրի դռնից մինչև քարայրի բուն ներսի անկյունները. խոտհարների նման բոլորին ջարդած վայր թափեցին։ Եվ որովհետև արուներին, պառավներին և իրենց համար ոչ հաճելիներին սպանեցին, ուստի քարայրի հատակը ծովացավ քրիստոնյաների արյունով, ու բոլոր քարերը ներկվեցին։ Կաթնկեր մանուկներին մայրերի գրկերից խլում էին և քարայրից վայր նետում։ Իսկ կանանցից, տղաներից, աղջիկներից ումանք, որ սպանումից փրկվեցին, երբ տեսան իրենց մատնված անիրավ մարդակիր պապանների ձեռքը, որ իրենց քշելու են գերություն ու տեսակ-տեսակ կեղտոտություններով ապականելու են իրենց

մաքրությունը, այդ պատճառով լավ համարեցին մաքուր վիճակով մահը, քան ժամանակավոր կարճ կյանքը, որ այն էլ պետք է անցնի մեղքերով ու շարիքներ կրելով. շատերը նրանցից իրենց երեսները ծածկում էին իրենց զլխարկով կամ զգեստով և անսահման բարձրությունից իրենց վայր էին նետում քարայրից ու մեռնում: Եվ որովհետև ձորի մեջ խիտ ծառերի անտառ կար, նրանցից ոմանք, որ իրենց վայր էին նետում քարայրից, գալով հանդիպում էին ծառերի ոստերի ծայրերին ու մնում էին նրանց մեջ, ոմանց էլ ճյուղը փորից մտնում, մեջքից ելնում էր, ոմանց էլ սքալից մտնում, թիկունքից էր ելնում: Սրանք էլ այսպիսի դաժան ու դառն մահով վախճանվեցին: Իսկ սրանցից մնացածներին գերի դարձնելով տարան. նրանց ունեցվածքը կողոպտեցին ու բաժանեցին իրար մեջ ի լիություն իրենց: Պարսից զորքերը ելան այնտեղից, վերցրին իրենց հետ բոլոր գերիներին, եկան պարսից բուն բանակատեղը:

Այս ամենը մենք լսելով ու գրելով՝ ճմլվում է մեր սիրտը, գալարվում են մեր որովայնի աղիները, իսկ մեր աչքերը արտասուքի վտակներ են հոսեցնելով իջեցնում մեր ժողովրդին թշվառություն գալու և հասնելու համար: Եվ շենք՝ կարողանում այստեղ [իմանալ], թե ի՞նչ օրինակով կամ ի՞նչ ձևով ողբեր սկսելով՝ ողբանք մեր ազգի և երկրի խորտակման վրա, ի՞նչ պատճառով ելավ մահաբեր հրամանը երկրորդ Սաբուտոսի⁴⁴ բերանից և հրախառն շունչը նրա ունդներից ու կերավ կիբանանի եղևնափայտերը⁴⁵, որովհետև միանգամից անմարդարնակ դարձրեց ամեն ինչով լի ու հուռի աշխարհս Հայոց, որովհետև տարագրելիս ոչ թե մեկ կամ երկու գավառ քեց Պարսկաստան, այլ շատ գավառներ: Եվ սկսեցին նախիջևանի սահմաններից, անցան Եղևգնաձոր, Գեղամա ծովի եզերքով, Լոռիով, Համզաչիման գավառը, Ապարանը, Շարաբխանան, Շիրակավանը, Զարիշատը⁴⁶, Կարսի գյուղերի մի մասը, Կաղզվանի ձորը՝ ամբողջովին, բովանդակ Ալաշկիրտը, Մակուի գյուղերը, Աղբակի⁴⁷, Սալմաստի, Խոյի Ուրմիայի գավառները, նաև ինչ պանդոխտներ, որ մնացել էին Թավրիզ քաղաքում կամ գյուղերում, բովանդակ Արարատյան գաշաղ, Երևան քաղաքը, Կոտայքի շրջանը, Մաղկունքի ձորը⁴⁸, Գառնու ձորը, Ուրծաձորը⁴⁹, սրան-

ցից առաջ Կարինի, Բասենի, Խնուսի, Մանազկերտի, Արծկեի, Արճեշի, Բերկրիի. Վանա գավառները ավարով ու գերությամբ բերել էին Երևան, բոլորին սրանց հետ քեցին տարան:

Արդ՝ այս բոլոր գավառները և նրանք, որ սրանց հետ էին, շահը հրամայեց՝ քեցին տարան Պարսկաստան, և հայոց վայելատես աշխարհը ավերակ ու անմարդարնակ դարձրեց: Եվ այժմ տեսնում ենք սրա արգավանդ ու բերրի հողերը, արտերն ու անդաստանները և բազմապատիկ գյուղերի ու մեծատարած ավանների ավերակները: Նաև [տեսնում ենք] անառիկ ամուր, հաստահողույս քարեղեն, կրով հեղուկած անմատչելի բերդերի ավերումը, տապալումն ու քայքայումը. Եվս ավելի մեծափառ, հուշակավոր վանքերը սուրբ աստծու տեղ ու հանգստարան էին: Իսկ Հայոց աշխարհի երկնանման, բարձրաբերձ, զմբեթաշեն, կոփածո, հաստահողույս վիմերով կառուցված եկեղեցիները, որոնց մեջ հորինված էին շուշանների, կենդանիների զանազան ու պեսպես նկարների ու ձևեր՝ գեղեցիկ հորինվածքով տեսակ-տեսակ հնարամտությամբ քանդակված վիմերի վրա: Սրանց ձևն ու շինվածքի դիրքը, սյուների, տեսակ-տեսակ կամարների վերնախարիսխները, լուսանցույցներն ու դռները և ամեն ինչ խորհրդավոր են: Նաև տեսնում եմ քաղցրահամ, ականակիտ, մշտահոս ջրերի աղբյուրակները և կարկաշահոս, ծիծաղախիտ, մշտնթաց, հառաջախաղաց ջրերի վտակները, որ ձյունաբարդ, սպիտակափառ, բարձրաբերձ լեռների գագաթներից ներքև հոսելով իջնում են դաշաղ ու նրանց շենություն պարգևում:

Նաև տեսնում եմ քաղցրաշունչ, առողջարար ու կենսապարգև օդը ու սրա հողմը: Եվ սրա այլ ամեն վայելչությունները տեսնելով, հեղձամուգձ լինելով փղձկում եմ և արտասու վելով ողբում ու կսկծում եմ, որովհետև անապատ եղավ մեր վայելուչ ու քաղցր երկիրը: Եվ մեր հայրենի ու բնիկ ժառանգություններից, օրհնված երկրից, որ լիքն էր աստծու սրբերի մատունքներով, ոռոգված էր սուրբ մարտիրոսների արյունով և օրհնված էր սուրբ առաքյալների քարոզներով, եղան վտարանդի ու տարագրված օտար երկիր, այլացեղ և այլալեզու ազգերի մոտ, որոնք հողու և հավատի թշնամիներ են ու մարմնի արյան ծարավի նրանք այնտեղ օրավուր քիչ-

քիչ նվազում են, ումանք մահվամբ ու կորուստով, ումանք հավատի ուրացութեամբ դառնում են պիղծ անապատի անօրեն կրօնիկն:

Իսկ երկնամասն ու դրախտակերպ եկեղեցիներին ի՞նչ ասեմ, որոնք մնացել են խավարում, բնակիչներից թափուր են դարձել, մերկացել են դարդերից, եղել են համբարունների ու ջալլամների հանգրվաններ, ըստ մարգարն Եսայու⁵⁰ գառձել են ազվեսների, նապաստակների որջեր, խաշների ու խոշոր անասունների մակաղատելի, թռչունների ու ավիրաբնակ բլերի բներ: Փոխանակ օրավուր նորոգման, օր առ օր խարխլվում, քայքայվում, ավերվում ու փլուզվում են: Փոխանակ անուշահոտ խունկերի բուրման լցվում են ուղբերով, լռել են փառաբանիչների ձայները, տարեկան տոների ասմունքները և փրկական պատարագների նվիրաբերումները:

Արդ՝ այստեղ մեզ անհրաժեշտ է հին Երեմիան⁵¹, որ ողբա նոր Իսրայելը (Հայաստանը), քանի որ ըստ քերթողահայր որբերգակ Մովսեսի (Խորենացու), այլևս փեսան չի դառնալու դեպի մեզ⁵², այլ անդարձ ընթացքով հեռացավ մեզնից: Արդ՝ մեր ազգի անունը կոչենք վայքաբով⁵³, քանզի վերացավ Իսրայելի փառքը ըստ հնում ասվածի:

Կրկին դառնանք մեր առաջին պատմության շարադրանքին, այն ասքին, որ Ջղալօղլուն հասցրինք Նախիջևան, իսկ շահին տարանք Թավրիզ: Արդ՝ շահը գնաց Թավրիզ ու այնտեղ պարսից զորքով ձմեռեց, որովհետև օսմանցիների ահը նրանից հեռացավ:

Իսկ Ջղալօղլին, որ՞ գալիս էր պարսից բանակի հետևից, երբ Նախիջևան հասավ, լսեց, որ շահը տարագրված ժողովրդին Արաքս գետից անցկացրել, տարել է Պարսկաստան: Նաև բոլոր ջողալեցիներին քշել տարել է, իսկ շենքերը հրդեհել: Նա մեծ զարմանքով շվարած ապուշ կտրեց, թե ինչպես շտապ սուղ օրերի ընթացքում այգբան մեծ ու ծանր գործը պարսիկները գլուխ բերին: Դրա համար պատրաստեց երկու լրտեսներ ու սրանց հրամայեց գնալ Ջուղա, տեսնել ու իմանալ խոսքերի իսկությունը և իրեն ստույգ լուր բերել:

* Վայքաբով էրբ. բառ, որ նշանակում է անփաստնակ, թշվառական:

Իսկ լրտեսները գնացին տեսան ամեն ինչ ըստ ասվածի կտտարված վերջացած է, նաև Ջուղայի շենքերը հրդեհված են և դեռ խանձողները ծխում էին: Լրտեսները այնտեղից դարձան Ջղալօղլու մոտ (և ասացին), թե բոլոր լուրերը ճիշտ էին: Այդտեղ Ջղալօղլին իր մեջ խորհեց՝ չգնալ Ջուղայի ճանապարհով, այլ Արաքս գետը անցնել ու հետամտել պարսիկներին: Նախ՝ կասկածի մեջ ընկավ ու երկչուղեց պարսից հրամարմտությունից, որ միգուցե ետ դառնան և հանկարծակի հարձակվեն օսմանցիների վրա, շրջափակեն Արաքսի ու ձորերի միջև և կոտորեն: Երկրորդ՝ տարագրված ժողովրդին այլ ճանապարհով քշեցին, (մի ճանապարհ), որով օսմանցիների ծանր բանակը չէր կարող անցնել, եթե անգամ կամենար: Երրորդ՝ նրանց դարձի նշանավոր օրը, որ կոչում են դասում գյունի⁵⁴, մոտեցել էր: Այս բաները և սրանց նմանները կշտադատելով, Թավրիզ չգնաց [Ջղալօղլին], այլ Նախիջևանից շարժվելով Աստապատ գյուղի մոտ Արաքսը անցավ ու իր բանակով գնաց վան քաղաքը և մինչև գարուն այնտեղ ձմեռեց:

Գ Լ Ո Ւ Ե Ծ

ԱՄԵՆԱՓԱՐԹԱՄ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔ ԶՈՒՂԱՅԻ ԳԵՊԻ ՊԱՐՍԻՅ ԵՐԿԻՐԸ ՏԱՐԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվ արդ՝ այս ամենից հետո, որ գործվեց Շահ-Արաս թագավորի կողմից մեր երկրի և մեր հայոց ազգի հանդեպ, որ տարագրեց Պարսկաստան, և որ մենք պատմեցինք, ժամանակն է, որ այսուհետև պատմենք մեծ ու անվանի գյուղաքաղաք Ջուղայի մասին, քանի որ հին ամբարած դառը թույլն ու նախանձը, որ Ջուղայի համար իր սրտի խորքում թաքուն բորբոքուն էր պահում շահը, այստեղ առիթ ներկայացավ արտահայտելու, ցույց տալու, որովհետև շահը իր մեջ բերում էր իր նախատիպ Սաբյուռոսի [Շապուհ 2-րդի] խորհուրդը: Որովհետև, ինչպես պատմեցինք նախորդ գլխում, շահը պարսից զորքերից նշանակեց հայոց ազգի տարագրիչներ, որոնց

* Թուրքերի «դատկի» օրն է, որ ընկնում է հոկտեմբերի 26-ին:

ուղարկեց հայոց ողջ երկիրը, և սրանք հանեցին տարագրեցին, այսպես էլ վարվեց Զուղայի հետ:

Իր առջև կանչեց Հանիս Քահամազդուլի բեկին, որի մասին նախապես պատմեցինք, թե Աթաբեկի եղբայրն է. սա վրացիների կողմից պատանդ էր տրված պարսից թագավորներին, որոնց մոտ դաստիարակվելով ուրացավ հավատր: Այժմ շահը կանչեց այս Քահամազդուլուն իր առջև, գրեց հրաման-հրովարտակ, տվեց նրան և հրամայեց գնալ Զուղա ու միանդամից տարագրել նրանց՝ յթողնելով նրանում և ոչ մի բնակիչ: Քահամազդուլին ելնելով շահի մոտից սրբնթաց արշավանքով շեշտակի աճապարեց Զուղա և կանչեց ավագանուն ու խիստ բարկությամբ սպառնաց նրանց, թե սարսուհեցնող ու տանջալից մահով նրանց կոչնչացնի, եթե անմիջապես ու շուտափութ չկատարեն թագավորի հրամանը: Նաև թագավորի հրաման-հրովարտակը հանեցին ողջ ժողովրդի առջև կարգացին. այնտեղ գրված էր, թե հրաման է մեր թագավորությունից ձեզ՝ ջուղայեցիներիդ, որ ելնեք ձեր տեղերից ու գնաք Պարսկաստան:

Գրանից հետո Քահամազդուլի բեկը հրամայեց, որ մունետիկ ելնի, այսինքն՝ ջառչի, ու կանչի ամենուրեք Զուղայի շենի մեջ: «Հրաման է մեծ թագավոր Շահ-Աբասի կողմից, ձեզ Զուղայի բոլոր բնակիչներիդ ելնել ձեր բնակութունից ու գնալ Պարսկաստան: Արդ՝ երեք օր ձեզ է շնորհվում, որ ելնեք, իսկ ով երեք օրից հետո այստեղ գտնվի, իրեն կսպանեն, իսկ նրա ընտանիքը ու ունեցվածքը կդերելվարեն. նաև՝ եթե փախչի կամ թաքնվի, ով որ այդպիսինին մատնացույց անի, նրա ունեցվածքը մատնացուցողին կլինի, իսկ գլուխը՝ թագավորին»: Եվ այս հրամանը միշտ հայտարարելով կանչում էր մունետիկը և սարսափեցնում բոլորին: Մահվան սպառնալիքի սարսափից շղանդաղեցին ջուղայեցիք, այլ անմիջապես կատարվեց նրանց ուղղված թագավորի հրամանը, պատրաստվեցին դուրս գնալ: Բայց շտապանքով ու հանկարծակի դուրս գալու պատճառով զրաստ ու բեռնակիր անասուն չէին գտնում, ուստի խիստ վտանգված էր ժողովուրդը, որովհետև նրանց ունեցվածքը ցրված ու թափված էին իրենց առջև ու չէին կարողանում բառնալ տանել զրաստներ շինելու պատճառով: Ինչ որ կարողացան բարձել, բարձին, իսկ

ինչ որ չկարողացան բարձել, ամեն մեկը պահուստ արին, և իրեն թաքուստ թաղեցին: Բայց նրանց ունեցվածքի մեծ մասը կորավ ու հափշտակվեց, քանզի ոչ միայն այն զորքերը, որ եկել էին Քահամազդուլի բեկի հետ, սրանք միայն հարկադրում էին ժողովրդին շտապ դուրս գալու համար, այլև մահմեդականներից շատերը, որոնք շրջակա գյուղերից էին գալիս, և որոնք պարսից զորքերից էին կամ իրենց բուն բանակից, գալիս էին խառնվում Քահամազդուլի բեկի զորքերի հետ, և օրավուր պարսիկները ավելանում էին Զուղայում: Եվ մահմեդականները գումարվելով միասնաբար երբեմն տասն, երբեմն քրսան, երբեմն երեսուն հողի մտնում էին քրիստոնյաների տըները, նրանց ստիպում էին դուրս գալ ու գնալ, սաստիկ ծեծում էին, ինչքից ու կարասիքից իրենք էին հափշտակում, ինչ որ սրաները ուզում էր, իսկ մնացածը ցաք ու ցրիվ էին տալիս, որպեսզի ուրիշները հափշտակեն, և այսպես կողուպատի ու կորստի էր մատնվում քրիստոնյաների հարստությունը:

Եվ դառնազույն շարիքները, որ թափեցին ժողովրդի գլխին ծեծնն էր, կեղեքելը, հարստահարելը Զուղայի բոլոր բնակիչները՝ ճար չունենալով, յուրաքանչյուր ոք իր կամքից անկախ ելավ գնալու: Թեպետ մարմնապես զորեղները, կամ նրանք, որոնք ունեին գույք, հարստություն, նրանցով էին պատրաստվում գնալու, բայց նրանք, որոնք թույլ էին, այսինքն՝ տնանկները, այրիները, ծերերը, չէին կարողանում գնալ, աղիողորմ ձայնով աղաղակ էին բարձրացնում, արտասուքով, լացուկոծով առհասարակ ողբում էին: Ոմանք ողբում էին իրենց տներն ու շենքերը, ոմանք բնակավայրն ու հայրենիքը, ոմանք եկեղեցիները, ոմանք իրենց նախահայրերի գերեզմաններն ու դամբարանները, ոմանք իրենց գնալու մարմնական անկարողությունը. լալիս էին, ողբում էին, աչքերից հորդ արցունքներ էին թափում, բայց մեկը չկար, որ խղճար նրանց ու օգներ, որովհետև գլխառատ աստծու ողորմության դուռը փակված էր նրանց առջև:

Վերին կաթան կոչվող եկեղեցու բանալին քահանաները առան և երբ Զուղայի պարսպի դռնից դուրս եկան և հասան առաջին եկեղեցուն, որ Աստվածածին անունով շինված կա Զուղայից դուրս, երբ նայեցին ու տեսան Աստվածածին եկե-

դեցին, շատ քրիստոնյաներ եկան խառնվեցին քահանաներին. նրանք ևս բերին իրենց տների բանալիները և միասին աղիողորմ ձայնով աղաղակ բարձրացրին, փղձկացող սրտով, արտասվալից աչքերով գոռում էին ու լալիս և աղաղակելով կանչում էին Աստվածածնին ու ասում. «Ով սուրբ Աստվածածին, մեր սուրբ եկեղեցու ու տների բանալիները քեզ ենք հանձնում, որ դու այն օտար երկրից, ուր տանում են մեզ, վերադարձնես մեր տեղերը: Այս ասելով բանալիները նետեցին գետը և մորմոքանքով շատ ժամեր բարձրաձայն լաց եղան, ու ապա զնացին»:

Եվ այսպես Զուղայի բնակչությունը՝ հարուստներ, թե աղքատներ, դուրս եկավ Զուղայից և զնաց Արաքս գետի ափը գետն անցնելու համար: Այնտեղ խմբված տեղավորվեցին, մինչև որ ողջ ժողովուրդը գլուղից դուրս եկավ. գետեզրում հավաքված խմբվածների մոտ: Եվ երբ ժողովրդի գալը դադարեց, այն ժամանակ պարսիկների կողմից հրամայվեց ժողովրդին, թե գետն անցեք:

Այս օրերին Շահ-Աբաս թագավորը հասել էր Զուղա և բանակել Արաքս գետի ափին. այդ ժամանակ իբրև թե խղճալու և ջուղայեցի ժողովրդին օգնելու համար Շահ-Աբաս թագավորը հրամայեց իր զորապետներին, որպեսզի սրանք էլ կարգադրեն իրենց զորքերին, ժողովրդին օգնեն, ձիանքով, ուղտերքով անցկացնեն գետի այն կողմը: Պարսից հեծյալները քրիստոնյա ժողովրդին անցկացնելիս ում իրենց սիրտը կպչում էր, լինել կին, աղջիկ, տղա կամ ապրանք, առնում տանում էին, ուր կամենում էին, իսկ նրանց տերերը չէին կարող զնալ նըրանց հետևից, և նրանք կորուստի ու գերություն էին մատնվում: Իսկ ովքեր տկար էին, թափվում էին շուրք, ծփալով ու ճչալով գնում էին ջրի երեսին, և շատերը խեղդվում էին ջրում ու մեռնում: Գետի երկու եզրերում ցրված էին ջրից խեղդված մարդանց մարմիններն ու դիակները: Ահա այսպիսի տառապանքով ժողովուրդը անցավ Արաքս գետը. մի քիչ առաջ զնալով՝ ճամբար դրեցին, մինչև ամենքը ժողովվեցին հավաքատեղում:

Եվ նույն տագնապալից օրերում չարիք մտորելու մեջ հանճարեղ Շահ-Աբասը ավելի նոր չարիքներ մտածեց Զու-

ղայի համար. կանչեց իր առջև նույն Հանիս Քահամազդուլի բեկին և հարցրեց, թե՛ «Զուղայի բնակիչներին տեղահանելուց հետո, այրեցի՞ն Զուղայի շինվածքները»: Երբ պատասխան ստացավ նրանից, թե թագավորի կողմից մեզ չէր հրամայված, այդ պատճառով չայրեցինք, բազմաթիվ հանդիմանություններից հետո անմիջապես հրամայեց իսկույն մեծ զորքով վերադառնալ և այրել տների ու այլ շենքերի կառույցները: Սա բազմաթիվ հրոսակներով շեշտակի հասավ Զուղա, առան իրենց ձեռքերը վառված ջահեր, բոցավառ եղեգներ, նավթի լապտերներ, սկսեցին այրել ու հրդեհել, քանդել առատագնները, տապալել պատերի շարվածքները: Բնավ չթողին ծածկված կամ շեն հարկ, այլ ավերի ու ոչնչացման հասցրին: Երբ իրենց չարագործությունը վերջացրին, դարձան եկան բուն բանակատեղը ու ներկայանալով արքային պատմեցին, թե տեք, եղավ այնպես, ինչպես հրամայեցին:

Այնուհետև շահը հրամայեց Քահամազդուլի բեկին, թե մի թողնիք Զուղայի ժողովուրդը նստի, այլ քշելով տար հասցրու Քավրիզ: Եվ նա իսկույն եկավ, ժողովրդին շարժեց այնտեղից, որտեղ ճամբարված էին: Եվ այն օրն ու ժամին, երբ ամեն մեկը բարձում էր իր բեռը, երկինքն ու իր օդը միասին փոթորկվեցին քրիստոնյա ժողովրդի վրա, քանզի կուտակվեցին ամպերը, փոթորկվեց օդը, մթնեց երկինքը, փրչեցին ուժգին հողմեր, փայլատակում էր կայծակը մեծ ճայթյունով, տեղացին ձյունախառն անձրևներ ու ծեծելով տանջեցին քրիստոնյաներին: Նրանք, ովքեր մարմնով զորեղ էին, կամ գրաստ ունեին, զնացին, իսկ տկարները օրեր հետո եկան հասան տառապանքով ու չարչարանքով: Ծանր տառապանքներով ու տաժանքի մեջ բերին հասցրին Քավրիզ քաղաքը:

Այնտեղ՝ Քավրիզում չար մարդիկ իրենց սրտի չար մաղձից չար Քահամազդուլի բեկի մոտ շարախոսեցին Զուղայի մասին, հիշեցին, թե դեռևս Զուղայում մնացած մարդիկ կան, որովհետև շատերը փախչելով լեռներն ու ձորերը, մի մասն պատճառաբանելով տկարությունը, ոմանք ծնրությունը, ոմանք աղքատությունը, իսկ ուրիշներն էլ այլ պատճառներով չեկան, այնտեղ մնացին ու այժմ գտնվում են Զուղայում: Երբ Քահամազդուլի խանը այս լսեց, սաստիկ զայրացավ:

բայց որովհետև որևէ շար բան անել ի վիճակի չէր, ուստի թողին, որ մնան մինչև գարուն:

Եվ երբ գարունը բացվեց [Թահմաղուլի բեկը] պատրաստեց իր մարդկանցից Հադամ անունով մի երեկելի մարդու մեծ զորքով, այլև հրովարտակ-հրաման անելով թագավորից տվեց նրա ձեռքը, ուղարկեց Զուլա մնացած ժողովրդին բերելու Հադամ աղան իր զորքով եկավ Զուլա և մնացած ժողովրդին կանչեց իր առջև, ու նրանց հետ խոսեց բռնի ահաբեկութամբ. «Եթե հնազանդվելով կանսաք թագավորի հրամանին, ելեք ձեր ընտանիքներով և ունեցվածքով միասին գնանք, իսկ եթե չեք կամենում գնալ, ձեր արուններին ու զորեղներին սրով կկոտորենք, իսկ ձեր ունեցվածքն ու ձեր ընտանիքները կգերակարենք: Նաև գնացին լեռներն ու ձորերը՝ փախստականների տեղերը, գտան փախածներին ու բերին Զուլա: Հինանց [հիսուն օր դատկից հետո] երկրորդ կիրակվա երկուշաբթի օրը Զուլայից բռնեցին, ճանապարհ դրեցին դեպի Թավրիզ: Թավրիզից անցկացնելով բերին, հասցրին ժողովրդի առաջին ճամբարին Ղազրին քաղաքում: Նրանց հետ տեղավորեցին այնտեղ Ղազրին քաղաքում ու նրա գյուղերում ձմեռվա ցրտի պատճառով, երբ չէին կարող գնալ:

Գարնանային հողմը փչելու ժամանակ վերստին բռնեցին նրանց, մինչև տարան, հասցրին Սպահան քաղաքը և այնտեղ բնակեցրին՝ հանձնելով նրանց շինություն տեղեր: Նրանք շինեցին շենքեր ու իրենց համար բնակարաններ՝ հրաշալի ձևավորումով, կամարակապ փողոցներով, թևավոր ապարանքներով, հովասուն դատիկոններով, բարձրաբերձ ու արքայավայել շինվածքներով, զարդարեցին ոսկու և լաջվարդի պեսպես երանգ ունեցող ծաղիկներով, որ տեսնողի աչքերը խաղտում էին:

Սրանց նման ըստ աստծու փառքի արժանիքի հրաշակերտ հորինվածքով, երկնանման խորաններով, բարձրաբերձ կաթողիկեններով եկեղեցիները շինեցին, որոնք ամբողջովին ծաղկազարդված էին տեսակ-տեսակ գույներով, ոսկով ու լաջվարդով, տիրոջ մարդեղություն գործերով, սրբերի պատկերներով: Եվ բոլոր եկեղեցիների [գմբեթ] գլխին դրված էր նը-

րանց եկեղեցիների [Հայաստանում ունեցած] սուրբ խաչի նշանը իբրև պսակ ու պարծանք քրիստոնյաների:

Եվ Զուլայի ժողովուրդը, բոլոր հայկազունները, որոնք գնացին Սպահան քաղաքը ու այնտեղ բնակված մնացին, շատ պատճառներ ունի: Քանզի Շահ-Աբաս թագավորը բազմահանճար, խելացի, կանխատես մարդ էր. հայոց ազգի համար հնարեց բազում ու տեսակ-տեսակ հնարավորություններ, որպեսզի մնան Պարսկաստանում, եթե այդպես չվարվեի, չէին մնա:

Նախ՝ ինքը Շահ-Աբասը սիրալիր էր հայ ազգի հանդեպ, մեծարում էր նրանց՝ մանավանդ շուղայեցիներին, որոնց գըլխավորի անունն էր խոջա Սաֆար, սրա եղբորը՝ խոջա Նազար, և սրանց որդիները՝ Մելիք աղա, Սուլթանում ու Սաֆրազ: Մշտապես շահը գալիս էր նրանց տները, ուտում ու խմում էր նրանց հետ նրանց կերակուրները առանց խտրություն գնելու, ինչպես որ պարսիկները սովորություն ունեն քրիստոնյաների նկատմամբ խտրական լինելու: Այլև շահը ինքը նրանց տուն էր հրավիրում իր սեղանին ու պատվում էր իր մեծամեծների հետ, այլև պատվիրում էր իր նախարարներին նույնը անել:

Երկրորդ՝ որովհետև թագավորական տուրքը, որ քրիստոնյաները վճարում էին, թեթև էր առնում, այնպես որ քրիստոնյաներին հաճելի լիներ:

Երրորդ՝ եթե վեճ ու կռիվ, խռովություն էին պատահում քրիստոնյաների ու մահմեդականների միջև, կամ դատական այլ գործ՝ մեծ կամ փոքր, քրիստոնյաներին արդարացնում էր: մահմեդականներին դատապարտում:

Չորրորդ՝ երբ քրիստոնյաներին բերեց հասցրեց Սպահան, ու սրա գյուղերը, շատ մահմեդականների արտաքսեց իրենց տեղերից ու բնակավայրերից, նրանց տներն ու արտերը տըվեց քրիստոնյաներին:

Հինգերորդ՝ հոժար կամքով հրամայեց ամենուրեք լայնահաս ու բարձրաշեն եկեղեցիներ շինել Զուլայում (Նոր) ու գյուղերում, նաև քաղաքի բերդի մեջ (գուցե միջնաբերդում), այնքան հոժարությամբ, որ ինքն էր հորդորում քրիս-

տոնյաներին եկեղեցիներ շինել: Մեծամեծ տոների օրերին՝ հարության, համբարձման և այլ տոներին, գալիս էր եկեղեցիները և ուրախանում քրիստոնյաների հետ:

Վեցերորդ՝ քրիստոնեական ամեն կարգ ու դավանություն քրիստոնյաները կատարում էին համարձակորեն. զանգեր զարկել, ժամասացություն անել, ջրօրհնեքը մեծախումբ հանդեսով տոնել, նաև ինքը՝ շահն էլ էր գալիս ջրօրհնեքին և տեսնելով ուրախանում էր: Մեռելներին խաչվառով, շարական երգելով հանում էին քաղաքից, անցկացնում էին շուկայի միջով ու տանում թաղելու, և պարսիկներից ոչ ոք անարգական կամ հայհոյական բառ չէր ասում: Եվ այսպիսի շատ օրինակներով ու տեսակ-տեսակ միջոցներով շահը ամոքում էր քրիստոնյաների սրտերը, որի համար էլ [հայերը] մնացին Պարսկաստանում: Շահը քրիստոնյաներին այնքան համարձակություն տվեց, որ երբ հրապարակներում կամ շուկաներում քրիստոնյաների ու մահմեդականների միջև վեճ ու կռիվ էր պատահում, (կռիվները) համահավասար միմյանց ծեծում էին և հայհոյում առանց երկյուղի: Սրա վրա այնքան էին վշտանում պարսիկները և նրանց զրազետներն ու մեծամեծերը, մինչև որ շահին ասել էին, թե ինչու՞ քրիստոնյաներին թույլ ես տվել այդքան համարձակվել և կամ ինչու՞ մոլար կրոնից չես դարձնում Մահմեդի ճշմարիտ կրոնին:

Իսկ շահը տեսնելով նրանց սրտի վիշտը, հայտնել էր նրանց իր սրտի գաղտնիքը և ասել էր. «Դուք այդ դատարկ սիրալիրության համար, որ, տածում եմ քրիստոնյաների հանդեպ, մի վշտանաք ու ինձ մեղադրեք, որովհետև ես ծախսերով, ջանքով ու հնարներով հագիվ կարողացա նրանց այս երկիրը բերել: Ես նրանց չբերեցի իրենց օգուտի համար, այլ որպեսզի մեր երկիրը շենացվի ու մեր ազգը ավելանա՝ եվ այժմ քրիստոնյա ազգի մարդկանց, որոնք իրենց երկրից եկել են ու այժմ մնում են, եթե նրանց ամենքին մաս առ մաս կոտորենք, հող առ հող բաժանենք, նրանցից ոչ ոք մեր կրոնին չի դառնա, նաև մյուսները խրտշելով կսկսեն թաքուն փախչել և վերադառնալ իրենց երկիրը, իսկ մեր աշխատանքը իզուր կանցնի: Այդ պատճառով եմ ես նրանց նկատմամբ սիրալիր, որպեսզի դրանով կապված մնան մեր երկրում, իսկ նրանց մեծ մարդիկ, որոնք ծնվել են Հայաստանում ու

եկել այստեղ, ամենքը կմեռնեն, նրանցից ծնվածները, որոնք այս երկրում են ծնվում, նրանք բոլորը առանց մեր կանչի ու ջանքի իրենք իրենց հոժարությամբ կգան մեր օրենքին: Արդ՝ եթե դուք էլ եք կամենում մեր ազգի շահը, դուք էլ արեք այնպես, ինչպես ես եմ անում»: Այս նրանց դուր եկան շահի խոսքերը, և նրանք, գովելով շահի իմաստությունը, հեռացան:

Շահ-Աբասի իր մեծամեծներին ասված այդ խոսքերը այս ժամանակ՝ մեր օրերում, լիապես կատարվեցին, որովհետև մեծ մարդիկ, որ ծնված էին Հայաստանում և այնտեղից եկել էին Պարսկաստան, նրանք ամենքը մեռան: Եվ չընայած մտադրվել էին վերադառնալ իրենց երկիրը, չկարողացան վերոհիշյալ պատճառներով, նաև պարսիկները թույլ չէին տալիս: Իսկ նրանցից ծնվածները, որ ծնվեցին Պարսկաստանում, այնտեղ էլ սնվեցին, սրտով կապվեցին այդ երկրին, որի համար գտնվում են այնտեղ ու մնում են, չնայած նրանցից ոմանք՝ երկյուղած, բարեմիտ մարդիկ կամենում են գնալ Հայաստան, բայց պարսիկները չեն թողնում: Իսկ քրիստոնյաների նոր աշխարհ եկած զավակներից ոմանք, թողած քրիստոնեության լուսապայծառ հավատքը, դարձան և տակավին դառնում են Մահմեդի անօրեն կրոնին՝ իրենց թերահավատության, զոդության ու անառակության համար: Դրանք միանալով պարսիկների հետ նեղն են զցում քրիստոնյաներին բազմաթիվ ու տեսակ-տեսակ հնարներով: Եվ մանավանդ նրանով, որ կաշառք են տալիս մահմեդականներին ու սուտ վկաներ են դարձնում, քրիստոնյաներին քարշ են տալիս մահմեդական դատավորների մոտ դատաստանի և քրիստոնյաներից պահանջում են, ինչ որ կարողանում են հնարել: Ոմանցից (պահանջում են), թե պարտք ես ինձ, պարտքդ հատուցիր: Ոմանցից էլ, թե քո ազգականն եմ, քո ամեն ինչը, բոլոր ունեցվածքը հասնում է ինձ, տուր. և այլ այս կարգի զրպարտություններ, ինչ որ կարողանում էին հրեաները: Իսկ դատավորներն ըստ իրենց անօրեն օրենքի ուրացողների խոսքերը արդարացնում են, թե որովհետև նա եկել է Մահմեդի կրոնին, նրան են հասնում իր ազգականների բոլոր գույքերը: Եվ այսպես զրկում են խեղճ քրիստոնյաներին, հափշտակում են ամեն մի ունեցվածք և տալիս են

այդ ուրացողներին: Եվ այն էլ ոչ թե ունեցվածքը, այլ մինչև հինգ հարյուր թուման արժեցող տները. անիրավներն այս իրավունքով արդարացրին ուրացողների խոսքերը, հափշտակեցին քրիստոնյաների ժառանգութունը և տվին ուրացողներին, որը մեր աչքերով տեսանք: Նաև մեռած քրիստոնյաների ազգականներից ուրացող ոմանք քրիստոնյա մեռյալի ամեն ունեցվածքը, տները գրավելուց հետո, եկան տիրեցին մեռածների որդիներին, դուստրերին, աղախիններին: Եվ Զուլայի ժողովուրդը թեպետ շատ շարշարվեց տղաների փրկության համար իշխանների դոները ղեզերելով, ոչինչ չտացվեց, որովհետև բոլորը մահմեդական լինելով՝ իրենց կողմն էին քաշում: Իսկ դու իմ այս երկու խոսքով, որ օրինակի համար գրեցի քեզ, բոլոր վտանգավոր փորձությունները մտաբերելով կիմանաս, թե ինչ են քաշում քրիստոնյաները օձաբարո պարսից ազգից:

Եվ ինչպես Սուրբ գիրքը* ասում է, թե վախճանվեց Հովսեփը և նրա բոլոր եղբայրները, այն ամբողջ ցեղը, նստեց այլ թագավոր, որ չէր ճանաչում Հովսեփին, և ասում է իր ազգին, եկեք հնարենք որևէ բան Իսրայելի ազգի համար**: Ըստ այս օրինակի պատահեց նաև մեր ազգին, որովհետև Շահ-Աբաս թագավորը, թե հայ ազգին ինչքան նեղութամբ տարավ Պարսկաստան, իմանում էր այդ ամբողջ տառապանքը, որ ինքը պատճառեց հայոց ազգին, գթում ու խղճում էր հայերի վրա ու սեր էր տածում, և թեպետ սուտ ու դատարկ և ոչ սրտանց, այնուամենայնիվ սեր էր ցույց տալիս: Վախճանվեց նա, վախճանվեցին նաև այն ժամանակվա բոլոր իշխաններն ու մարդիկ:

Շահ-Աբասից հետո թագավորեց նրա թոռը՝ Շահսեֆին. նա ևս բավարար էր վարվում քրիստոնյա ազգի հետ, որովհետև Շահ-Աբասի նախարարներից ոմանք նրա մոտ էին, իսկ սրանք հիշեցնում էին նրան Շահ-Աբասի վերաբերմունքը հայ ազգի հանդեպ, այլև հայերի բարեսրտությունը սրա [Շահսեֆի] նախնիների հանդեպ, այս պատճառով հայերը նեղութուններից թեթև էին մնում: Վախճանվեց նաև Շահ-

* Տես Ելք Ա 6.
** Ելք Ա 8:

սեֆին և բոլոր հին մարդիկ: Իսկ Շահսեֆից հետո թագավորեց սրա որդին, որին դարձյալ Շահ-Աբաս կոչեցին ըստ անվան իր ապուլապի. այս պատճառով սրան կկոչենք Շահ-Աբաս Երկրորդ: Սա թեպետ լսել էր այն իրողությունները, որ անցել էին հայ ազգի գլխով, սակայն աչքերով չէր տեսել. նաև չէին տեսել սրա նախարարները, որ սրա թագավորության պաշտոնյաներն էին: Այդ պատճառով հայ ազգը նրանց փուլթը չէր, ոչ հոգում էին, ոչ խղճում. նրանց հոգսը միայն այն էր, որևէ պատճառով հայերին դարձնել մահմեդական կրոնի: Գրա համար հարձակվեցին քրիստոնյաների վրա արյունարբու, անօրեն, զին ու շվայտ մարդիկ, մարդիկ, որ մարմնական ցանկությունն ու փափկակեցութունը երջանիկ կյանք են համարում: Նրանք, որ հայոց ազգից հրաժարվել էին և նրանք, որ բնիկ պարսիկներ էին, նեղում էին, բռնադատում, պիղծ համարում և բռնութամբ էին վարվում քրիստոնյաների հետ: Նաև քրիստոնյաների դավալներին, որը որ պարսիկներին հաճելի էր թվում, լինեք տղա, աղջիկ, թե հարս, բռնի հափշտակում տանում էին թագավորի տները և անվանում թագավորական ծառու ու այլևս չէին վերադարձնում իրենց տներին և Քրիստոսի հավատից հանում, դարձնում էին մահմեդական: Նախ՝ իրենց պղծագործությունների համար, և երկրորդ, որպեսզի հավելում լինի թագավորական ծառաներին և պարսից ազգին, և երրորդ, որպեսզի առժամանակ հետո այս տարված զավակների պատրվակով գերվեին, զուգվեին, հափշտակվեին նրանց՝ քրիստոնյաների հետնաթող (իրենցից հետո զավակ թողած) ընտանիքների տները, տեղերը, ունեցվածքը և ապրանքը:

Եվ մինչև այսօր ու այս ժամանակը, որի մեջ գտնվում ենք, ջուղայեցիք չգիտեին, նաև բոլոր այն հայազունները, որ գտնվում էին Պարսկաստանում, չգիտեին օձաբարո պարսիկ ազգի նենգաժեստությունը, որ կար իրենց հանդեպ: Եվ արդ՝ իմանալով հեծում, հոգոց են հանում, հալվում ու մաշվում են, որ դուցե աղատվեն պարսից աշխարհից, կամ հայտնի կամ ծածուկ գնան հայոց աշխարհը, բայց չեն կարողանում, քանզի պարսիկները թույլ չէին տալիս իրենց երկրից դուրս գալ, ինչպես որ եգիպտացիք թույլ չէին տալիս իսրայելցի ազգին: Գուցե տիրոջ նույն բարձրացած բազուկն ու հը-

զոր ձեռքը նաև սրանց հանի այստեղից, ինչպես նրանց այնտեղից՝ մեծ նախնի նահապետ Մովսես մարգարի և մեծ լուսավորչի՝ սուրբ Գրիգորի մաղթանքներով:

Գ Լ Ո Ւ Ե Ձ

ՋՂԱՍՈՂԻ ԶՈՐԱՎԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԳԱԼՈՒ, ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ Ջղալօղլի զորավարը հասավ Վան, իր զորքերով տեղավորվեց այնտեղ: Հրամայեց, որ զորքերը բաժանվեն այդ երկրի բնակիչների միջև ձեռնելու համար. և բոլոր զորքերը բաժանեցին Վանա գավառի ու սրա շրջակա գավառների վրա: Իսկ այն զորքը, որ բաժանվեց երկրի վրա և անցավ ձմեռման իրրև Գանիելի տեսիլքի գազան*, կերավ, մանրեց, իսկ մնացորդը ոտնակոխ արեց: Փոխանակ երկիրը շենացնելու, ավեր դարձնելով քայքայեցին ու հասցրին վերջին թշվառության, թե անխիղճ կեղեքումով և թե այլ պղծագործություններ:

Իսկ Ջղալօղլին, երբ տեսավ, թե շահը Երևանից թավրիզ վերադարձավ, իսկ Երևանի երկրամասը անտեր մնաց, Օմար աղա անունով նշանավոր մարդկանցից մեկին նշանակեց զորապետ և նրա հետ մեծ զորք դնելով ուղարկեց Երևանի կողմերը, որպեսզի տիրի երկիրը: Նա եկավ բանակեց Նախիջևանում և պահպանում էր այդ երկրամասը: Իսկ թավրիզում գտնվող շահը, երբ այս լսեց, նա ևս Ամիրդունա խանին մեծ զորքով ուղարկեց Օմար աղայի վրա: Ամիրդունա խանի զորքը եկավ կռվեց Օմար աղայի դեմ, սպանեց նրան, ջարդեց նրա զորքը և զորքից շատերին կենդանի բռնեց. այս բռնածներին ու սպանվածների գլուխները ուղարկեց թավրիզ շահի մոտ, իսկ ինքը անշարժ նստեց Օմար աղայի տեղում՝ Նախիջևանում, և պահպանում էր երկիրը, ինչպես որ նրան հրամայել էր շահը:

* Գանիելը աստվածաշնչական մարգարե է. երազում շորս գազան է տեսնում: Զորքորդ գազանի մասին ասվում է. «Ուտեր և մանրեր և զրմնացորդս առ ոտն տրորեր (Գան. է 7):

Իսկ Ջղալօղլին, ապրելով Վան քաղաքում, այնտեղ անցկացրեց ձմեռվա ցրտաշունչ եղանակը. երբ հասավ զարնան ժամանակը, հանեց իր ու իր բանակի ձիերի բոլոր երամակները կանաչի վրա արոտի, որպեսզի ձիերը զարնան կազդուրրե առնեն: Իսկ շար խորհուրդների մեջ հանճարեղ Շահ-Աբասը, որ այդ ժամանակ թավրիզում էր, Ալահվերդի խանին բազմաթիվ զորքով պատրաստեց և ուղարկեց Վան (թուրք) զորավարի ձիերի հարցով, որ ինչ կարող է անել, անի: Եվ Ալահվերդի խանը թավրիզից ելավ անսպասելի ու անկարծելի մի օր հասավ Վասպուրականի գավառը, այսինքն՝ Վանա գավառը: Նախքան որևէ գործ անելը հասավ օսմանցիների ձիերի հավաքածեղին և ձիերից ինչ որ արձակ գտավ, ավարեց, տաքավ իր բանակը, իսկ ինչ որ շղթայված էր և ոտնակապված, բոլորը ջլատեց ու կոտորեց, իսկ ինքը երկրում բանակ զարկեց և անշարժ նստեց:

Երբ Ջղալօղլին տեսավ, որ Ալահվերդի խանը եկավ և այս բանը կատարեց, նա էլ բազմաթիվ զորքեր կազմեց-պատրաստեց և սրանց զորապետ նշանակեց Վանա փառային: Եվ երբ հասավ կռվի օրը, Վանա բերդի դիմացի դաշտի մեջ ելան միմյանց դեմ ճակատամարտելու. իսկ Ջղալօղլին նստած բերդի պարսպի վրա նայում էր մարտիկներին, որովհետև բերդից շատ հեռու չէր ճակատամարտի տեղը: Երբ երկու կողմերն էլ խառնվեցին իրար, այնտեղ եղավ խիստ դժուր գործ և անասելի ջարդ, որովհետև ինչպես հող ու քար մարդկանց զգեկները ընկած մնացել էին դաշտի երեսին: Եվ օսմանյան կողմը պարտվեց, իսկ պարսից կողմը ուժեղացավ: [Պարսիկները] օսմանցիների զորքերին հալածեցին մինչև Վանա բերդի դուռը: Օսմանցիներին հալածելիս երկու պարսիկներ հետամտելով նրանց և թշելով հասցրին մինչև բերդի դուռը: Եվ երբ օսմանցիք մտան պարսպի մեջ, մտան նաև պարսիկները. այնտեղ երկու պարսպների միջև, որոնց կռում են Սիրհաճ, երկուսից մեկին օսմանցիք բռնեցին ու տարան: Իսկ մյուս պարսիկը այնտեղ սպանեց մի օսմանցու և իրեն վերցրեց օսմանցու գլուխը: Ապա նույն պարսիկը վերցրեց իր թաշկինակը ձգեց դեպի երկինքը և ներքևի կողմից բաշեց իր սուսերը և օսմանցիների ու Ջղալօղլու առջև կտրելով երկուսի բաժանեց իր թաշկինակը. այս բանը Ջղալօղլին իր աչքով

տեսալ, քանի որ նստած էր պարսպի վրա այդ տեղին մոտիկ: Եվ երբ այս տեսալ Ջղալօղլին, իր թաշկինակը դրեց աչքերին, արտասովելով լաց եղալ, քանզի իր հոգում իմացալ իր ազգի պարտութունը և պարսիկների հաջողութունը: Իսկ այն պարսիկը, որ իր թրով զարկեց ու կտրեց իր թաշկինակը, դուրս եկալ պարսպից, գնաց խառնվեց իր գնդին՝ պարսից զորքերին:

Ալահվերդի խանը օսմանյան զորքին հաղթելուց հետո ելալ այնուհետև երկիրը ավարելու և ոչնչացնելու ըստ տիրոջ ասածի, թե նախ հզորին կկապի, ապա հետո նրա տունը ավարի կենթարկի: Այսպես էլ սա արեց, որովհետև ցորենի ու այլ ընդեղենների, խոտի ու հարդի բոլոր ամբարանոցները և տների բոլոր շինվածքները՝ հրով այրեցին: Ուր որ կարողացան հասնել, գավառների բոլոր ձեռք ընկած բնակիչների արուներին կոտորեցին, իսկ մյուսներին գերեցին: Եվ մեծ ամբոխ կաղմած թե մարդ, թե անասուն միասին քշեցին բերին հասցրին Թավրիզ պարսից ազգի լիության համար:

Իսկ Ջղալօղլին երբ տեսալ այսպիսի մեծ պարտութունը, վանից ելալ, մտալ նալ ու ծովով գնաց Արծկե, այնտեղից Խնուս, Խնուսից էլ Կարին ու նստեց այնտեղ: Իր մոտ կանչեց շրջակա բոլոր իշխաններին, վրաց ու մարերի կողմերի իշխաններին. սրանց հետ էր նաև մարերի Միրշարաֆ անունով մեծ իշխանը: Եվ այսպես այն սահմանների բոլոր կուսակալներին հավաքեց Կարին քաղաքում, այսինքն՝ էրզրումում: Եվ նրանց հրամայեց, որ յուրաքանչյուրը իր զորքով ամեն կազմվածով ու ռազմական սարվածքով պատրաստ լինի, որպեսզի, երբ ինքը՝ Ջղալօղլին, վան հասնի, սրանք ևս այնտեղ գտնվեն և միանալով միասին գնան Թավրիզ պարսից դեմ պատերազմելու:

Ապա Ջղալօղլին Կարինից դուրս եկալ, գնաց Տիգրանակերտ⁵⁵, այսինքն՝ Ամիդ. այնտեղ դադար առնելով՝ հոգում էին ռազմական պատրաստութունները, հավաքում էր իր մոտ

⁵⁵ Այլ ոչ ոք կարճ զկարասի հզորի մտեալ ի տուն նորա ասար հարկանել, եթէ ոչ նախ զհզորն կապիցէ և ապա զտուն նորա ասար հարկանիցէ (Մարկ. 9՝ 27):

Միշերկրյա⁵⁶, Ասիայի ու Միջագետքի գավառների բոլոր զորքերը:

Այդ ժամանակի ամենամեծ ու անվանի փաշան, որին կոչում էին Նասիֆ փաշա, Բերիա քաղաքից էր, որ Հալեպն էր: Սա նույնպես եկալ Ամիդ Ջղալօղլու մոտ: Սրանք միասին էին տեսրինում պատերազմի հոգսերը, որովհետև սա պատվով հավասար էր Ջղալօղլուն: Սրանք երկուսն էլ իրենց շուրջ հավաքեցին օսմանյան երկրի բոլոր զորքերը և Տիգրանակերտից ելնելով միանգամից վան եկան: Այնտեղ իրենց մոտ հավաքեցին ևս Քրդաստանի, Կարինի կողմերի զորքերը և կազմեցին մի մեծ ու անհամար բանակ: Եվ վանից նլնելով ուղղվեցին Թավրիզ. հասնելով նրա սահմանները՝ Սոֆիան գյուղի մերձակայքը, այդտեղ դաշտում ճակատամարտ տվին, և օսմանյան զորքը պարտվեց:

Քանզի բազմաթիվ հնարներ մտածող Շահ-Աբասը պարսից զորքը բաժանեց չորս գնդերի. առաջին գունդը հանձնեց Ալահվերդի խանին և սրան հրամայեց, որպեսզի սա բացահայտ գեմհանգիման ելնի օսմանյան բանակի դեմ ճակատամարտի: Իսկ մյուս երեք գնդերը հանձնեց իր երեք նախարարներին՝ մեկը Ղառչա խանին, երկրորդը՝ Զուլֆիզար խանին, իսկ երրորդը՝ Փիրբուղաղ խանին, և սրանց հրամայեց, որպեսզի երեք կողմից թաքուն դարանակալեն: Իսկ շահը իր ծառաներով հետո լեռների զլխին թաքստոցում դադար էր առել:

Երբ հասալ ճակատամարտի պայմանավորված օրը, Ալահվերդի խանը իր գնդով ելալ և հայտնվեց օսմանցիներին գեմհանգիման: Երբ օսմանցիք տեսան նրանց, իրենց մեջ մտածեցին, թե միայն այդ երևացողն է պարսից զորքը, ուստի ուրախությամբ հարձակվեցին ու սկսեցին ճակատամարտել: Այդ ժամանակ պարսից կողմը ըստ նախապես զրված իրենց պայմանի բարձրացրին ծխանշանը: Եվ դարանամուտ պարսիկները, տեսնելով ծուխը, շտապանքով ելան իրենց տեղերից, հարձակվեցին օսմանյան զորքերի վրա և, չորս կողմից շրջափակելով, կոտորեցին, բոլորին դիաթավալ անելով գետնաբեկ լցրին դաշտը: Եղալ անասելի աղետ ու դաժան օր:

Ջորահրամանատարը [Ջղալօղլին] իր բանակի մեջ կանգ-

նած էր, բայց վշտագին ցավով ինչպես ծննդկան կին պազատագին երկունքով մի տեղում դու ու դադար չէր առնում, այլ խոռովված սրտով նայում ու դիտում էր կովոզ զորքերի ճանապարհները, թե գուցե գտնվի մեկը, որ գալով բարի լուր բերի իրեն, բայց այդպիսին չկար:

Ջորահրամանատարին մոտիկ կանգնած էր մեծ պարոն քուրդ Միրշարաֆը, որին նախապես հիշատակեցինք. և սա հոգում հասկացավ, որ զորահրամանատարի կողմը պարտվեց, այդ պատճառով էլ լուր չեկավ: Եվ ջանում ու հնարներ էր մտածում, որ մի ինչ-որ կերպով հեռանա զորահրամանատարից, գուցե թե կարողանա փախչել:

Եվ սկսեց զորահրամանատարին կեղծավոր խոսքերով ու կեղծ գթասրտությամբ ասել. «Խնդրում եմ քո վեհ իշխանությունից, որպեսզի ինձ ևս հրաման տաս ճակատամարտի մեջ մտնել, որ գուցե թե ճակատամարտում պատահեմ շահին»: Շատ խնդրելուց հետո [Ջղալօղլին] հրամայեց գնալ: Իսկ Միրշարաֆը, կր հեռացավ բանակից, երեսը դարձրեց դեպ իր երկիրը, ուր և անդարձ գնաց:

Իսկ պարսից զորքը հաղթեց օսմանցիներին ու փախուստի մատնեց դեպի օսմանցիների բանակը, իսկ [պարսիկները] հետապնդելով, կոտորելով (օսմանցիներին) տարան լցրին բուն բանակի մեջ, որտեղ մտան նաև պարսիկները ու կոտորեցին օսմանցիներին: Իսկ Ղառչդա խանը, գնալով զորահրամանատարի վրանի մոտ, թրով դարկեց, կտրատեց զորահրամանատարի վրանը և միջով անցավ գնաց ոչ ոք չկարողացավ գուրս գալ նրա դեմ: Մինչև երեկո շրջադարեց արյունահեղ գործը. ոմանց կոտորեցին, ոմանց փախցրին, ոմանց բռնեցին ու տարան շահի առջև. քանզի ասում էին, թե երեսունչորս անվանի իշխաններ են բռնված եղել՝ փաշա, քահիա (հազարապետ), ղուլար աղասի⁵⁵, սանջախ բեկ [կուսակալ] և շատ ուրիշներ:

Ըստ ասվածի, երբ գործը իր ավարտին հասավ, և Ջղալօղլին տեսավ, որ իր զորքերը պարտվեցին ու մյուս անգամ չի կարող զորք կազմել ու պատերազմել, նաև իր մնացած զորքերը գաղտագողի էտ էին փախչում: Մտատանջություն մեջ ընկավ, թե գուցե ինքն էլ բռնվի պարսիկների ձեռքով. մտածեց, որ նորից դառնա Վան քաղաքը: Այդ գիշեր էլնե-

լով զորահրամանատարը և իր ամբողջ զորքը սկսեցին ևտ գառնալ, և երբ այսպես եղավ, ամեն ոք ջանում էր իր անձը ազատել և շտապում էր հապշտապ ու տազնապալից, որպեսզի ինքը ընկերոջից շուտ փախչի, գուցե թե պարսիկները հետևից գան և կոտորեն իրենց: Այս տազնապալից փախուստի պատճառով թողին իրենց ամեն ունեցվածքը, կահկարասիները, ուղտերը, գրաստները, կերակուրի մթերքները, անդուկներով ու արկղերով գանձերը, քանզի ճրագները վառած թողին, վրբանները խփած, ինչպես որ նախապես խփված էին, այնպես էլ թողին, և ինչ որ ունեին լքեցին ու երեսներ ևտ դարձրած աճապարում էին փախչել. մինչև առավոտվա լուսաբացը ոչ մեկը չմնաց: Իսկ առավոտ լուսաբացին պարսիկ զորքերը իմացան օսմանցիների փախուստը: Երբ զեկուցեցին Շահ-Աբասին, այնժամ (Շահ-Աբասը) հրամայեց պարսից զորքերին մտնել օսմանցիների բանակատեղը և ավարել. զորքերը անմիջապես հափշտակելով յուրացրին իրենց լիություն համար: (Մրանից հետո) ուրախությամբ վերադարձան Թավրիզ, և այնտեղ բանակեցին շահն ու իր զորքերը:

Իսկ զորահրամանատարը (Ջղալօղլին) Սոֆիանից էլնելով փախուստով գնաց մինչև հասավ Վան քաղաքը, այնտեղից մտնելով նավ, ծովը անցավ, գնաց Ամիդ և այնտեղ մեռավ: Պատերազմը տեղի ունեցավ հոկտեմբերի 25-ին իսկ ինքը գնաց Ամիդ և փետրվար ամսի վեցին մեռավ: Ոմանք էլ ասում են, թե ինքը իրեն թունավորեց պարտության ամոթից:

Ուրեմն՝ Ջղալօղլի հրամանատարի գալը երկու անգամ եղավ. առաջինը 1054 (1605)-ի սկզբին, երբ նոր նավաարդ ամաամուտն էր, եկավ նախիջևան և այնտեղից գնաց քաղաք Վան: Երկրորդ գալը այն է, որ եկավ Սոֆիան, պարտվեց ու վերադարձավ՝ 1055 (1606) թվի տարեմուտի սկզբին առաջին աշնան ծամանակ:

Այս երկու տիեզերակալների շարժումից, որոնք իրար դեմ պատերազմի են գուրս եկել, թե Ջղալօղլի զորահրամանատարը, որ եկավ արևմուտքից, և թե շահը, որ արևելքի կողմում էր, թե ինչքան ավեր ու կործանում պատահեց երկրին՝ թե գալիս, թե վերադառնալիս, թե որքան ծանր հարկապահանջություն ծանրացավ ժողովրդի վրա, որ բռնի կերպով

առան, նույնպէս նաև ժողովրդից հալածած ուտելիքն ու անասունները, որ զորքերից հետո բերել էին տալիս, թէ զորքը որ ձմռանը իրենց ձիանքով ձմեռում էին, կամ աների ու այգիների կործանումը, արտերի կոխոտումը, ամբարանոցների ցորենի և այլ սերմունքի հանումը, ունեցվածքի և ստացվածքի, ուստրերի ու դուստրերի առևանգումն ու հափշտակությունը, անմեղ մարդկանց սպանությունները՝ ոմանց ակնհայտ, ոմանց գաղտնի, և այլ ամեն շարիք, որ բերին երկրի վրա, մենք անկարող ենք թվարկել, այլ նա կարող է, որ հաշվում է աստղերի բազմությունը և ստեղծեց այնքան մարդիկ, որոնք մատնվեցին այս անխիղճ ու մարդակերպ գազաններին:

Գ Լ Ի Ե Է

ՋԱԼԱԼԻՆԵՐԻ ՀԱՅՏԵՎԵԼՈՒ, ՍԱՍՏԻԿ ՍՈՎԻ, ՄԱՐԳԱԿԵՐ
ԳԱՅԼԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՎԱՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ
ԹԱՓՎԵՑԻՆ ԵՐԿՐԻ ՎՐԱ

Այս երկու տիեզերակալների միջև, այսինքն՝ շահի ու Զղալօղլու, ամայի մնաց Արարատյան երկիրը իր առանձին գավառներով, քանզի շահը գնաց թավրիղ, ուստի անկարող է, իսկ օսմանցիների հրամանատարը մեռավ, և սրանք իրար մեջ թշնամություն ունեն և միաբան չեն: Այդ պատճառով ինչ-որ իշխաններ, որոնք խրախուսված էին և հույս էին կապել իրենց հզորության հետ, եկան և տիրեցին Արարատյան երկիրը, այսինքն՝ Երևանը, ինչպես այն իշխանը, որին Քանաքըլու Մահմադ էին կոչում, եկավ տիրեց երկիրը:

Սրանից հետո մի այլ ջալալի փաշա, որին թոփալ Օսման փաշա էին ասում՝ Զիալ փաշայի որդին, եկավ կովեց Քանաքըլու Մահմադի դեմ Կոտայք գավառում, որ այժմ կոչվում է Ղրխբուկաղ [Աբովյանի շրջանը] Առինջ գյուղի մոտ և փախուցրեց Քանաքըլու Մահմադին: Ինքը Օսման փաշան իր շուրջը հավաքելով սրիկա մարդիկ՝ իր համար զորք կազմեց մոտ հազար հոգի և իրեն իբրև նստատեղ ընտրեց Կարբի⁵⁶ գյուղը և նստում էր այնտեղ. այդ ձմռանը ձմեռեց այնտեղ. որտեղից իր զորքերը ուղարկում է շրջակա գավառներն ու գյու-

ղքը բերելու իրենց և իրենց անասունների համար ուտելիքներ: Եվ գնացած մարդիկ, ինչ շեն որ մտնում էին, չէին գոհանում բավական լինելով. գրավվածը հոգալուց հետո, ավելորդներին էին ձեռք զարկում, քանզի մարդկանց բռնելով՝ կախում էին, ոմանց ոտքերից, ոմանց բազուկներից, ոմանց էլ ամորձիքներից և անողոք ծեծով բրաջարդ էին անում, մինչև որ անշնչանալով մեռել էին դառնում. դրանցից ոմանք տանջալից մեռնում էին: Ոմանց ականջներն էին կտրում, ոմանց քթի միջով սլաք անցկացնելով շրջեցնում էին: Եվ այսպիսի շաբաշար տանջանքներով շարշարում էին, որպեսզի իրենց ցույց տային ցորենի ու գարու ամբարները, գանձերի, ունեցվածքների թաքստոցներն ու պահոցները: Տների և այլ շենքերի հատակները փորելով բրբրում էին ունեցվածք գտնելու համար. շենքերի պատերի ծածկերը փլցնելով՝ որոնում էին ունեցվածքներ և այս պատճառով բազմաթիվ ավերածություններ էին անում: Նախ Կարբի գյուղը այսպես արին. մի մարդու նույն գյուղից ունեցվածք պահանջելու համար շատ օրեր տանջեցին և հետո սպանեցին. մեջտեղից երկու մասի բաժանելով կախեցին պատից ճանապարհի վրա՝ գյուղացի տեսնողներին ահ ու սարսափ:

Եվ այս ջալալիներից ոմանք գնացին Օհանավանքի⁵⁷ մեծափառ միաբանությունը. սրանց տեսքից վանքի բոլոր բնակիչները փախան. բայց բռնեցին մի թույլ ու հիվանդ արեղայի և պահանջում էին ցույց տալ թաքստոցներն ու պահոցները: Երեք օր արեղային բազուկներից կախած ծեծում էին: Եվ երբ որեւէ պահուստ ցույց չուվեց, զայրացած ջալալիները որպես կատաղի գազան բազուկներից իջեցրին, կախեցին ամորձիքներից ու շարաշար տանջեցին: Նա, անել վիճակում մնալով, նրանց ցույց տվեց թաքստարանը: Մտնելով թաքստարանի ներսը՝ կողոպտեցին, հափշտակեցին բոլոր ինչքերը և հետո արեղային էլ սպանեցին ու գցին վանքի հորերից մեկը: Այնտեղից՝ թաքստոցից, հանեցին մեծ հարբատություն, թե հագուստեղեն, թե պղնձեղեն, թե անոթներ, խաչ, սկիհ, շուրջառ, բուրվառ և զրքեր, որոնք բոլորը ուսուցողական թանկագին զրքեր էին: Նաև այստեղ թաքստոցում էին վանքի սրբությունները՝ Քրիստոսի երեսի վարչամակը (ծածկոցը), Քրիստոսի փշյա պսակի մի մասից, սուրբ Ստե-

փանոս նախավկայի աջը: Նաև այլ սրբություններ ու սուրբ նշաններ, որոնք բոլորը ջալալիները առնելով տարան կորցրելին, և սրանց գլխավորին Աբդուռահման Մուսալիմ էին կոչում:

Օշական⁵⁸ գյուղում բռնեցին մի այլ մարդու, կախեցին ամորձիքներից և տանջում էին, որ պահուստի տեղը ցույց տա. մյուս գյուղացիները այս տեսնելով առան իրենց ընտանիքները, փախան Գեղարքունյաց գավառը⁵⁹: Այսպես արին Կարբի բոլոր շրջակա գյուղերն ու գավառները. Ապարանի գավառը⁶⁰, Կոտայքը⁶¹, Մաղկունյաց ձորի⁶² շրջանը, Գառնու ձորը⁶³, Ուրծաձորը⁶⁴, Արաքս գետից այն կողմ Մահաթի շրջանը, Կողբը⁶⁵, Աղջաղալան (Կարսի շրջանում):

Այս ջալալիներից ոմանք գնացին Գառնու գավառը և գրտան մի փորածո քարայր, որի մեջ բազմաթիվ քրիստոնյաներ նրանց ահից փախել թաքնվել էին: Այդ քարայրը գետնափոր էր և մեծ, որը միայն մուտք ուներ և ոչ մի տեղից որևէ ծակ կամ օդանցք կամ զովամուտք չկար. հին ժամանակներից իշխանները փորել էին և սարքել իրենց ինչ-որ պետքերի համար: Եվ արդ՝ սրանք մտան այնտեղ ու ջալալիների ահից թաքնվեցին: Երբ ջալալիները եկան ու գտան, շատ օրեր կոպում էին, բայց չէին կարողանում այդ քարայրը գրավել: Ապա հնար գտան. բերին կրակ վառեցին քարայրի դռան առջև, որպեսզի կրակի ծուխը մտնի քարայրը, տանջի նրանց, որոնք ներսում են: Կրակի վրա գցին ժահահոտ գեշ, որի հոտը օդը ներս էր տանում քարայրը: Այրի մեջ մարդիկ շատ էին, հինգ հարյուր կամ նույնիսկ ավելի: Քարայրը մութ ու խավարշուտ լինելու պատճառով ճրագներ էին վառել: Կրակի վրա գցված գեշի ժահահոտությունից, որ մտնում էր քարայրը, այնտեղի օդը սկսեց ապականվել, բոլոր քարերը քրտնեցին, քարերից քրտինքը ջրի նման հոսում էր, բոլոր ճրագները սկսեցին աղոտանալ, մինչև որ ամենևին հանգան. մարդկանց մարմինները սկսեցին ուռչել ու բշտել, և նրանցից դեղին ջուր էր հոսում: Բոլորը շնչարգել լինելով նվաղեցին և յուրաքանչյուրը իր տեղում թուլացավ, թալկացավ ու անշնչացավ. և ընդհանրապես տղամարդիկ, կանայք՝

ծերեր ու տղաներ, մատղաշ մանուկներ միասին մեռան, նրբանցից ոչ մեկը դուրս չեկավ: Ջալալիները, որ քարայրի դռանը հսկում էին, իմացան, թե փախած մարդիկ, որ քարայրի մեջ էին, չհնազանդվեցին իրենց, այդ պատճառով երկմտելով կասկածի մեջ էին դանվում: Եվ երբ ջալալիները նույն գավառից մի այլ տղամարդ բռնեցին և ստիպեցին ցույց տալ ապրանքների տեղերը, նա սպանության սարսափից ասաց. «Եկեք ինձ հետ, որ զնանք Քոռադարան և այնտեղ ձեզ ցույց կտամ ապրանքները»: Երբ նրանք զնացին, այդ ժամանակ աստծու նախախնամությամբ ինչ-որ մարդիկ, որ նույն թաքստոցից (քարայրից) նախապես դուրս էին եկել և իրենց ինչ-որ գործերի համար գնացել էին այլ տեղ, նույն ժամին եկան հեռվից թաքուն դիտեցին քարայրի դուռը, տեսան այնտեղ ոչ ոք չկա: Ապա եկան քարայրի դուռը, տեսան այս ամենը կատարված, շտապ կրակը հեռու ցրեցին, վառեցին ճրագները և մտան ներս քարայրը, տեսան բոլորին ինչպես մակաղած ոչխարներ յուրաքանչյուրը իր տեղում մեռած՝ հայրը որդու հետ, մայրը դստեր, եղբայրը եղբոր, միմյանց գրկած ու մեռած: Նրանք շտապելով նախ իրենց ընտանիքները դուրս քաշելով այրից դուրս ձգեցին և ապա ուրիշներին. որքան կարողացան, դուրս բերին: Եվ ումը, որ դուրս բերին, հոգ տանելով սպասավորում էին ձյուն ու ջուր էին վրանները լցնում, և աստծու շնորհիվ կենդանանում էին: Այսպես շատերին դուրս բերելով աղատեցին դառը մահվանից, իսկ նրանց, որ չկարողացան դուրս բերել, բոլորը այդ մահով մեռան: Եվ ովքեր թաքստոցից ելան, ջալալիների ահից այլևս չկարողացան մնալ այդտեղ, այլ շտապ մեկնեցին այդտեղից, փախան այլ տեղ իրենց անձերը փրկելու համար: Եվ այսպես՝ Արարատյան գավառների բոլոր գյուղերը ավերի ու ոչնչացման ենթարկեցին և ուտելի ընդհանրությունը ու բնակիչներից թափուր թողին:

Ապա ջալալիները մտածեցին զնալ Գեղամա գավառը, որ Գեղարքունիքն է, քանզի գիտեին, որ այնտեղ են ցորենի ու գարու ամբարները և ոչխարների հոտեր ու խոշոր անասունների նախիրներ, այսինքն՝ պախրներ*, շատ կան: Այս

* Պախր է հեռու նշանակում էր նախիր

պատճառով ջալալիներին շատերը ելան զնացին Գեղամա գավառը և բազմաթիվ գյուղեր կողոպտելով ավարեցին: Բանալով նրանց ցորենի ու գարու ամբարները ու սրանց (ամբարների) տերերի ձեռքով բարձին այս վերջինների անասուններին, իրենց էլ դարձրին պահապաններ իբրև կոտ՝ բռնակիր անասուններ վարող ու քշող. սրանց միջոցով ցորենը բերում էին իրենց տները: Նաև կանանց ու տղաներին գերեցին, բերին իրենց հետ, որպեսզի գերինների տերերը գերիններին գնելու և ետ դարձնելու համար արժաթ ու ոսկի բերեն: Եվ երբ ըստ իրենց սրտի ուզածի նման ինչ կամեցան, արին, ապա գերված կանանց ու տղաներին քշեցին և պահապան բռնված տղամարդկանց միջոցով բոլոր բեռները բարձին նրանց գրաստներին ու եղևներին: Բազմաքանակ անասուններ՝ հոտով ոչխարներ, նախիրներ, երամակով ձիեր քշած բերում էին: Երբ երկու օրվա ճանապարհ կհան, քանի որ այս զործողությունները կատարվում էին ձմռանը, իսկ այդ ձմեռը ծանր էր ու ձյունաշատ, այդ պատճառով բոլոր անասունները հոգնած մնացին ճանապարհին և ձյան շատությունից ու թանձրությունից չէին կարողանում գնալ: Այս պատճառով մնացած գրաստների բեռները շալակ-շալակ բաժանեցին և դրին գերինների՝ տղամարդկանց, կանանց, տղաների շալակները: Եվ այսպես սարը անցկացնելով հասցրին Կարբի գյուղը: Բայց թե ժողովուրդը որքան դաժան աղետի ու փորձությունների ենթարկվեց այս գործից. ոմանց ձեռքերը, ոտքերը, քթերը ցրտահարվեցին, ոմանք մարմնի մասերով հողախախտ եղան, իսկ ուրիշները սառնացուրտ, դառնաշունչ օդը շնչելուց սառեցին, այնտեղ իսկ ճանապարհին մնացին, մեռան: Իսկ այլ ուրիշներ ցորեն շալակած կանանց մասին ասում էին՝ ծանր բեռից հոգնած, ցրտից ու ծանապառված, կյանքից վհատված չէին կարողանում գնալ. շալակով նստում էին ձյան վրա, այդպես մնում ու մեռնում էին: Եվ այսպես, ովքեր ճանապարհին մեռան, մեռան, իսկ ովքեր մնացին, բոլորին բերին հասցրին Կարբի: Ոմանց փողով վաճառեցին, ոմանց պահեցին գործերի ծառայության համար: Իսկ ջալալիները այսպես մնացին մինչև գարուն՝ հասան մոտ համբարձման օրերին: Ապա այնտեղից ելան զնացին Ախալցխայի գավառը, այնտեղ էլ այդ գործն էին կատարում:

Ոչ միայն այս ջալալիներն էին այդպես անում. կային այլ ջալալիներ, ոմանք շատ, ոմանք քիչ, որ տեղից տեղ կանգ առնելով որջանում էին ու այդպիսի գործեր էին կատարում: Նաև քրիստոնյաներից ոմանք, որոնք ասածու երկչուղը իրենց մեջ շունեին, երբ անհում էին, թե չալաղգինները ինչպես են անում. իրենք նույնպես սկսեցին անել, որովհետև աչքերով տեսան, սրտով համաձայնվեցին. թե հայտնի հափշտակությունք, թե դադունի գողությունք այնպես էին անում, քանզի երկիրը անտեր ու ամայի էր աշխարհակալ բռնապետներից, ամեն ոք իր ցանկացածը կատարում էր ըստ իր կամքի: Արդ՝ ինչպես պատմում են ժամանակի տեսնողները, բնավ այն օրերին բարություն նշույլ չի եղել. բացի թշվառությունից, ինչպես որ պատմեցինք և տակավին պատմելու ենք: Որովհետև արևելքի թագավոր Շահ-Աբասը պարսից զորքերով արևելյան երկրի մի բաժինը ավերակ դարձրեց՝ Այդպես էլ ջալալիները, որոնք արևելյան երկրի մի մասում էին, նրանցից գերազանց ավերիչներ ու ոչնչացողներ եղան: Օսմանցիների զբառհրամանատարը նրանց զորքերով Միջերկրյաքում՝ սկսած Կոստանդնուպոլսից մինչև Երևան քաղաքը ավերակ դարձրեց: Այսպես էլ ջալալիները, որ այդ օրերում օսմանցիների երկրի կողմերում էին, նրանցից գերազանց ավերիչներ էին: Եվ սրանք անվանի, հաղթական, բաշ պատերազմող և անպարտելի կովող մարդիկ էին: Եվ քանի որ այս ջալալիները շատ էին, անհրաժեշտ եմ համարում նրանց անունները թվարկել, որով կարողանաս վերահասու լինել երկրների ավերմանը, որ նրանց ձեռքով կատարվեց: Թե որքան է եղել, ինչ որ լսել ենք ականատես պատմողներից, այն ենք զրի առնում:

Նախ Ղարա Յազիչին բազմաթիվ հեծյալներով, որ 1047 (1598) թվին ապստամբվեց թագավորից, եկավ Ուոհան⁶⁶ քաղաքը, մտավ բերդը և ամրացավ: Թագավորի կողմից հրամայվեց, որ զորահրամանատարը գա սրա վրա, իսկ զորահրամանատարը քառասուն հազար մարդով եկավ, Ղարաքաղաքով հաղթել, ետ դարձավ: Ապա Յազիչին ելավ բերդից, այլ զորքեր հավաքելով իր շուրջը և նրանցով սկսեց երկիրը ավերել՝ նախ Ուոհան, և ապա այլ վայրեր՝ Թոքաթը, Սերաստիան⁶⁷, Բուրսան⁶⁸, Անկյուրան⁶⁹ և այլ վայրեր, ուր հանդի-

պեց: Գլխահարկը, որ միշտ ժողովրդից թագավորն էր առնում, այս Յազեղիին երկու տարվա գլխահարկը ինքը առավ և իր զորքերին ոտճիկներ բաժանեց:

Հուսեցին փաշան 1048 (1599) թվականին ապստամբվեց թագավորից: Քոսա Սաֆարը ապստամբվեց նույն թվականին: Ահմադ փաշան ապստամբվեց 1050 (1601) թվականին: Ինչաղան ապստամբվեց 1053 (1604) թվականին: Յուլարդը ստին ապստամբվեց 1054 (1605) թվականին: Թավուլը՝ տասներկու հազար մարդով, ապստամբվեց 1042 (1593) թվականին: Այս Թավուլի եղբայրը, որի անունը չգտանք: Մահմադ փաշան՝ 20 հազար մարդով: Մանողլին: Զանփուլատողլին: Ալի փաշան: Սրա եղբայրը, որի անունը չգտանք, Քոռողլին, այս այն Քոռողլին է, որ շատ երգեր է ասել, որ այժմ աշուղները երգում են: Գղիրողլի Մուստաֆա բեկը հազար մարդով, սա և Քոռողլուն ընկեր է, որին շատ տեղերում երգերի մեջ [Քոռողլին] հիշատակում է: Մյուս Մուստաֆա բեկը: Ղարաղաշը: Գալունասիպը: Յուսաղմաղը: Թանդրի Թանիմաղը: Գոկապախան: Չրփլախը: Քյասաքյասը: Քրլուն: Ղարասահաթը: Աղաղանփիրին: Սրանք բոլորը ջալալիներ էին, որ թագավորին չէին հնազանդում և որևէ տեղում կանգ չէին առնում ու բնակվում, այլ աշխարհավերներ ու աշխարհակործաններ էին, և որտեղ որ շենության լուր էին առնում, դիմելով այնտեղ էին հասնում, ավարում, կողոպտում էին և շինվածքները հրդեհելով այրում էին:

Կոստանդնուպոլսի մոտերքից մինչև Երևան քաղաքը, Բաղդադից մինչև Դամուղափու, Սպիտակ և Սև ծովերի միջև՝ այս սահմանները, որ գծեցի սրանց միջև, այսքան երկրներ ավերեցին ու ոչնչացրին:

Այս պատճառով յուրաքանչյուր տեղում եղած երկրագործներն ու հողագործները սրանց ահից ու սարսափից փախան բերդերը, ամրոցները և լեռների խոտոշներում ամրացան: Ուստի չէին կարողանում հողագործությամբ զբաղվել. այդ պատճառով սերմ ցանելը, հնձելը, կալուկուտը ամենևին վերացան, և սկսվեց հացի ու ամեն ուտելիքների սղություն, և չէին ճարվում. և եթե տեղ-տեղ ճարվում էր, այն էլ շատ թանկ գնով: Եվ այս սղության ժամանակ եկավ մորեխը ընդհանուր Միջերկրայրում և միանգամայն հարվածեց ամբողջ

երկիրը, կերավ խոտ, բույս և երևացող այլ կանաչներ: Սրանից հետո եղավ սաստիկ սով. բնավ չէին երևում հաց, կերակուր և ուրիշ որևէ ուտելիք:

Այս ժամանակ հայ ազգը ցիրուցան եղավ. յուրաքանչյուր ոք գնում էր իր դիմացի կողմը ապրելու և ազատվելու տեղ գտնելու համար: Ոմանք գնացին Ռումելի⁷⁰, ոմանք Բուլղան⁷¹, ոմանք Լեհաստան, ոմանք Կաֆա⁷², ոմանք Պոնտոսի⁷³ ծովեզրերը, ոմանք Խավրիզ ու Արդարիլ և սրանց գավառները: Որովհետև հիշված երկրներում ու գավառներում որքան պանդուխտ հայեր կան, այս ժամանակ և այս պատճառով են գնացել: Եվ Շահ-Աբաս թագավորը, որ հայ ազգից այդքան շատ քրիստոնյաներ քշեց ու տարավ Սպահանի ու Ֆահրապառի գավառները, նրանք բոլորը այս ժամանակ էին եկել, երբ շահը տարավ:

Եվ ըստ այս ասածի նրանք, որ սովի ժամանակ ցրվեցին ու գնացին, և նրանք, որ մնացին Հայաստանի միջնաշխարհում, հաց չլինելու պատճառով, սկսեցին ուտել կենդանիներ, խոշոր անասուններ ու ոչխարներ: Երբ ուտելի կենդանիները սպառվեցին, անցան անմաքուր կենդանիներին՝ ձի, ջորի, էջ և այլ անմաքուր կենդանիներ, մինչև իսկ շուն, կատու և այլ ինչ, որ ձեռք էր ընկնում կերակուրի պետքի համար: Իսկ երբ սովն էլ ավելի սաստկացավ, սկսեցին մեռածներին ուտել, այլևս չէին թաղում, այլ ուտում էին, որովհետև երկրում սովը սաստկացել էր: Եվ շատերը շատ տեղերում կենդանի մարդկանց բռնում, ուտում էին:

Ինչպես պատմեցին մեզ, թե Արարատյան երկրում Օշական կոչված գյուղում մի մարդ թաքուն փոս էր պատրաստել իր տան մեջ. օտարական մարդուն խաբում բերում էր իր տունը և սպանում ու թաքցնում էր այն փոսի մեջ և օր առ օր քիչ-քիչ ուտում էր. այս բանը հետո գյուղի բնակիչները իմացան և հալածելով [նրան] փախցրին գյուղից:

Մի անգամ Բջնի անվանված գյուղում ճանապարհորդները, որ այնտեղով անցնում էին, տեսան, որ մի տանից ծուխ է բարձրանում: Նշան բռնեցին ծուխը և գնացին այդ տունը, տեսան տանը երեք կին, որ պուտուկը դրել, կերակուր էին եփում: Երբ խուփը բարձրացրին, տեսան ձեռքեր ու բազուկներ և մարդու այլ միս, որ եփում էին, որպեսզի ուտեն: Երբ

ստիպեցին, կանայք այդ խոստովանեցին. այդ ժամանակ նրանք ճշմարտությունը ասացին, թե հարկադրանքից, ոչինչ չունենք ուտելու, այդ պատճառով անցորդ մարդկանց, որ այստեղից անցնում են, խաբելով բերում ենք տուն և սպանելով կփում, ուտում ենք:

Նաև Կարին քաղաքում այս օրինակով նման գործ էր եղել, որ տեսնողները պատմեցին ինձ. շորս կանայք համաձայնության էին եկել և մի տուն դարձրել էին իրենց բնակարան. նրանցից մեկը կամ երկուսը որոշ օրեր դուրս էին գալիս շրջում. գայթակղիչ խոսքերով խաբում էին մարդկանց ու բերում տուն. մարդուն բռնում սպանում էին, կփում, ուտում: Եվ մի օր մի մարդ տարան տուն և մինչ կամենում էին մարդուն բռնել, մարդը իմացավ նրանց մտադրությունը, շուտափույթ դուրս թռավ աղատվեց նրանց ձեռքից, փախավ, տանից ելավ. զննաց փաշայի մոտ, որ քաղաքի իշխանն էր, տեղեկացրեց նրան. իշխանը հրամայեց զինվորներին զնալ այդ մարդու հետ և կանանց բռնել. զինվորները գնացին, կանանց բռնեցին: Ապա սկսեցին տունը խուզարկել. երբ մտան խորքի սենյակը, տեսան քսանչորս մարդու դուլս, որոնց սպանել ու կերել էին: Զինվորները ստիպում ու խոշտանդում էին կանանց ճիշտ կերպով պատմել իրենց գործի մասին: Նրանք պատմեցին, թե սովի հարկադրանքից, մարդկանց խաբելով բերում էինք այստեղ և սպանում, ուտում: Կանանց բռնած տարան փաշայի մոտ, իսկ փաշան հրամայեց, շորս կնոջն էլ սպանել. այդպես էլ արին:

Բասենի գավառին մոտիկ մի գավառ կա, որի անունը Նալիլաղի է. այժմ այդ գավառը անբնակ է: Այստեղից էլ մի արդարամիտ ու բանիմաց մարդ, սա պատմեց, թե սովի ժամանակ երկու տղաներ մեզ մոտ էին բնակվում, քանի որ մենք ուտելու ցորեն ունեինք: Եվ մի օր այդ տղաները շերեվացին: Իմ մեջ կասկած առաջացավ, թե տղաները ընկան մարդակեր մարդկանց ձեռքը և կեր դարձան: Մարդակեր մարդկանցից երկյուղելով ինձ հետ առա երկու մարդ ևս, որովհետև ես էլ էի վախենում մենակ զնալ նրանց մոտ, զնացի կասկածելի տեղը, որտեղ հավաքվել էին բազմաթիվ սովալուկ այր մարդիկ ու կանայք, որոնց վրա մարդակերության կասկած կար: Երբ մտա տուն, նրանց հարցրի, նրանք

ուրացան. թոնիրը վառն էր ու պուտուկ կար վրան, որի մեջ կերակուր էին կփում: Խուփը բարձրացրի, նայեցի պուտուկի մեջ, տեսա տղայի ոտքը, ապա տղայի եղբայրը եկավ և ասաց, թե իմ եղբորը մորթեցին ու կերան. այդ նրա ոտն է: Իսկ ես շատ կսկիծ անելուց հետո կենդանի մնացած տղային, որ աղատվեց, առա, մեր տունը տարա:

Նաև նույն մարդը ասում էր, թե տեսա, որ երկու պառավ կանայք բռնեցին մի փոքրիկ աղջիկ, խեղդեցին ու կերան. իսկ ես այս հայտնեցի Սարգիս անունով մի մարդու, նա երկու պառավին էլ սպանեց: Շատերն էին շատ տեղերում այս բաները արել, մարդիկ էին որսացել ու կերել:

Եվ ոչ միայն օտար մարդ էին ուտում, այլև տղամարդիկ ու կանայք իրենց զավակներին էին կերել: Ինչպես լսեցինք, Սեբաստիայի⁶⁵ գավառում ոմանք կերել են իրենց զավակներին: Նաև մի այլ գավառում մի կին կերել է իր երկու ուստերին և մի դստերը:

Ոմանք սովի հարկադրանքից ելնում, շրջում էին շենամիջում և ուժի պակասելու հետևանքով՝ շարշարված, մաշված, ցամաքած, չէին կարողանում զնալ, ընկնում էին շենամիջում, ճանապարհների անցատեղերում, պատերի անկյուններում, զոռալով, նվալով ու հեծելով մեռնում էին:

Ոմանք համաձայնության գալով մինչև տասը, քսան, երեսուն մարդ գյուղից գյուղ, գավառից գավառ էին գնում ուտելիք որոնելու, բայց չէին կարողանում գտնել, որովհետև սովը իբրև աստվածառաք պատիժ ընդհանուր աշխարհի վրա էր սփռված՝ ըստ մարգարեի [այն] խոսքի [թե] կանչեց սովը նրանց երկիրը և հացի ամբողջ բերքը կտրեց: Պատահում էր՝ նրանցից ոմանք հասնում էին շենները, կային, որ ճանապարհին մեռնում էին:

Այս մեռյալների դիակներից ուտում էին վայրի գազաններն ու անընտել կենդանիները, մանավանդ գայլերը: Ուտելով մեռածներին՝ սովորեցին նաև ուտել կենդանի մարդ, որին (մարդ ուտողին) մարդագալ էին ասում: Գայլերը այն-

* Սաղմ. ԺԳ 16:

ԳԱՆՁԱԿ ՈՒ ՇԱՄԱԽԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

քան վարժվեցին ու համարձակութուն ստացան մարդկանց հանդեպ, որ մինչև անգամ կենդանի մարդ էին պատառտում ու ուտում: Այս պատճառով ճանապարհների երթևեկությունը մարդազայլերի ահից դադարեց: Գայլերը այնքան համարձակութուն առան մարդկանց հանդեպ, որ գալիս էին շենամեջ, մտնում էին տները, ում որ հանդիպում էին՝ անկողնում քնած երեխայի, թև օրորոցում կամ թև մայրերի գրկերում, վրա էին տալիս և բռնի կորզում էին գրկերից, օրորոցից, հափշտակում, առնում փախչում էին, տանում ուտում: Այս զարմանալի ու սարսուռ աղդող բաները տեսած շատ մարդիկ կային, որոնցից յուրաքանչյուրը իր տեսածը պատմում էր: Այն ժամանակվա գայլատար մանուկներից այժմ շատերը կան, որոնք դարձել են չափահաս մարդիկ ու ծերացել. սրանց գլխի, երեսի ու մարմնի այլ տեղերի վրա տեսնվում են պատռված ու գիշատված վերքերի սպիներ, որոնք արել են գայլերը: Երբ սրանց հարցնում ենք (մարմնի) տեղերի գիշատվածների մասին, պատասխանում են, թե ինձ գայլը հափշտակեց, տարավ ուտելու, և շատ մարդիկ հավաքվել են ու ինձ ազատել գայլի բերանից:

Այս սովը եղավ երկու մեծ ծովերի այսինքն՝ Սպիտակ ծովի և Սև ծովի միջև, Սև ծովին մոտիկ կոչաանդնուպոլսի գավառներից մինչև Թավրիզի գավառները, Բաղդադից մինչև Գամուրդափու: Այսքան սահմաններում սով եղավ ու սաստկացավ այնքան, որ մարդիկ շան, կատվի և այլ անմաքուր կենդանիների ու մարդու միս կերան, ինչպես որ պատմեցինք: Սովը սկսվեց 1055 (1606) թվականին: Այդ տարի թույլ էր սովը, խիստ չէր, իսկ 1056 (1607) թվականը մտնելիս և 1057 (1608)-ին սաստկացավ: 1058 (1069) թվականին թուլացավ և 1059 (1610)-ին բոլորովին վերացավ ամենախնամող աստծու ողորմությամբ, որ լրիվ չի բարկանում իր ստեղծածների վրա և հավիտյան քնն չի պահում (նրանց դեմ), նրան փառք հավիտյանս ամեն:

Ջզալօղլի զորավարի երկրորդ գալուստից ու ետ դառնալուց հետո, որ եկավ Սոֆիան ու պարսից դեմ պատերազմեց, պարտվեց դարձավ Ամիդ և մեռավ, պարսից Շահ-Աբաս թագավորը այն ձմեռ իր բոլոր զորքերով գտնվում էր Թավրիզ քաղաքում, իսկ երբ հարավային հողմը փչեց՝ գարնան ժամանակ, հավաքեց իր բոլոր զորքերը, գնաց օսմանական զորքերի վրա, որ տակավին Գանձակ քաղաքում էին, որ Գանջան է. թվով սակավ էին: Այդ տարի մեր թվականության 1055 (1606)-ն էր: Եվ այնտեղ հասավ, բերդը շրջապատեց, նստեց: Ամբողջ երկիրը գրավեց իր իշխանության ներքո և պահպանում էր խաղաղությունը: Հրաման տվեց իր զորքերին՝ երկրի բնակիչներին ոչ ոքի չենդել և ոչ ոքի պարտադրանքի չենթարկել, որտեղից (երկիրը) լրացվում էր նրա մարդկանց ու անասունների կարիքները: Ինքը շահը ու չ ու միտքը տվել էր պատերազմին, որ բերդը տեսակտեսակ հնարներով գրավել կարողանա: Երբեմն բաբան բարձրացնելով՝ վերևից ձեռնում էին, երբեմն ներքևից պարսպի հիմքերը փորում ական էին բանում, այն լցնում էին վառոդով ու հրդեհում, որ պարիսպը բարձրացնելով երկինք էր ցնդեցնում: Երբեմն սուտ երդում ու խաղաղության գաշինք էր գրում շահը և ուղարկում բերդը՝ «Թե դուք բոլորդ ձեր ունեցվածքով ու ամենայն ընտանիքներով ելեք, գնացեք ձեռ երկիրը, մենք ձեզ ոչ մի վնաս չենք տա, միայն թե բերդը մեզ տվեք»: Իսկ օսմանական զորքը բերդը չէր տալիս, այլ դիմանալով համբերում էր և քաջությամբ կռվելով դիմադրվում էր:

Իսկ պարսից զորքերը ոչ մի նեղություն չէին կրում, կամ ուտելիքի, կամ ցրտի, կամ շրջակա թշնամիների կամ ուրիշ որևէ բանի, այլ առանց պակասության մտնում ու միշտ կռվում էին: Եվ երբ շահը տեսավ, թե կռիվը մի քիչ երկարում է, այնտեղ երկու մեծ, հզոր ու ժեղահարված թնդանոթներ ձուլեց, որոնք կրակելիս փլցնում էին բերդի պարիսպները և դրանով խիստ վտանգվում էին օսմանցիները: Ամբողջ պա-

տերազմի վերջում բերդի բնակիչները՝ օսմանական զորքերը, նայում էին իրենց շուրջը (և տեսնում), որ իրենց ոչ մի տեղից օգնություն չկար. ոչ իրենց շրջակա քաղաքներին, ոչ էլ իրենց թագավորի արքունիքին, որովհետև շատ ջալալիներ կային օսմանյան երկրում, դրանց անունները անցյալ գլխում հիշեցինք, իսկ նրանք [օսմանցիք] նրանցով էին զբաղված: Նաև Գանձակի փաշան ընկած էր պատերազմում, որի անունն էր Ջեջիլդան Ալի փաշա: Բացի այդ նոր ձուլված թնդանոթը խիստ փրցնում էր պարսպը, այդ պատճառով, ամեն կողմից նեղն ընկնելով, բերդը տվին պարսիկներին: Երբ շահը Գանձակի բերդը գրավեց, տիրեց ողջ երկիրը և այնտեղ իշխող նշանակեց Աղոսաղ Մահմադ խան անունով մեկին:

Մինչև այժմ շահը իր մոտ էր պահում Կախեթի Ալեքսանդր թագավորի թոռ Քամրաղին, իսկ այժմ նրան ազատեց դնալու իր հայրենի երկիրը՝ նրան իշխանություն հրաման տալով, որ տիրի իր հայրենի երկիրը և վարի իր թագավորական գործը: Բայց մնա միաբան ու հնազանդ պարսից թագավորությունը: Քամրաղը զնաց Կախեթ՝ իր հայրենիքը, վարում էր թագավորական իշխանությունը և մնում էր պարսիկներին հնազանդ:

Նաև ոմանք ասացին, թե շահի՝ Գանձակ քաղաքը գրավելուց հետո, Գանձակի գավառում կար հավատքով մահմեդական մի ցեղ, որին իրենք էլ են անվանում, իսկ այս էլի անունը Ջեկիրլու էին կոչում, որոնք օսմանցիների գավառանքին ու կրոնին էին, այսինքն՝ սյունի էին: Շահը հրամայեց սրանց բոլորին մի վայրում՝ ինչ-որ տեղում հավաքել: Որ հեղեղատ էր և ուներ նեղ մուտք պարսիկների պահպանությունը: [Հեղեղատը] որքան ներքև էր ձգվում, այնքան լայնանում էր, իսկ եղրերը բարձր փուլեր էին, որոնցից չէին կարող բարձրանալ և փախչել: Շահը հրամայեց նրանց բոլորին այնտեղ սրածելով սպանել տղամարդկանց, կանանց ձեռքերին, տղաներին, մինչև անգամ մատուշ մարդկանց էլ կոտորեցին, բնաջինջ արին:

Իսկ Շահ-Աբաս թագավորը Գանձակի բերդը գրավելուց և ամբողջ երկիրը տիրելուց հետո սկսեց ճանապարհ ընկնել և գնալ վրաց կողմերը՝ Թիֆլիս քաղաքը: Իր հետ առավ զորքերից մնացածներին, նաև այն օսմանցիներին, որոնք բեր-

դի կոտորածից ազատվեցին: Սրանց խարեց գայթակղիչ խոսքերով՝ դատարկ հույս տալով, ասաց. «Դուք եկեք իմ բանակի ետևից, որովհետև գուցե ավազակ մարդիկ ձեզ վրենաս հասցնեն. մեր զորքերից ձեզ պաշտպան զորք եմ նշանակել, որպեսզի ձեզ խնամելով և հովանավորելով տանեն, մինչև հասցնեն ձեզ երկրի սահմանները: Այսպիսի խաբկանքով նրանց առավ տարավ իր հետ: Հասնելով Աղսուև⁷⁴ գավառը՝ բանակ զարկեց Ինջայու կոչված ձորում ջրի ափին: Այնտեղ պարսից զորքերին հրամայեց բոլոր մնացած օսմանցիներին կոտորել և կողոպտել նրանց ունեցվածքը, վերցրնել նրանց կանանց ու մանուկներին: Եվ ըստ շահի հրամանի արին, կատարեցին ամենը:

Սրանից հետո Շահ-Աբասը իր ողջ բանակով շարժվեց Ինջայու գավառից, զնաց Թիֆլիս քաղաքը, խաղաղություն մտավ ու խաղաղություն ելավ գնաց, որովհետև դաշինք կար պարսից ու վրաց միջև:

Թիֆլիսից շահը դուրս եկավ, զնաց Գեղամա գավառը, արքունի բանակը այնտեղ բանակեց, իսկ ինքը շահը իջավ մելիք Շահնազարի տանը, որ Մազրա⁷⁵ գյուղում էր, բնիկ նույն գյուղից: Մելիք Շահնազարը հայ էր, հավատով քրիստոնյա. նա իշխան էր հզոր ու փառավոր և շահին այնպես հյուրընկալեց, ինչպես վաչել էր թագավորին. ինքը բարեկամ ու մտերիմ էր (թագավորին) և հարգված թագավորի մոտ: Այդ պատճառով էլ թագավորը թանկագին ու ազնիվ զգեստներ նվիրելով շքեղացրեց: Նրան գավառի մելիքություն իշխանությունը պարգևեց, այլև դաստակերտներ, գյուղեր տրվեց նրան ու նրա եղբայրներին: Հաստատուն հրովարտակ գրեց, թագավորական կնիքով կնքեց ու տվեց նրանց, որպեսզի հաստատուն լինի այդ ժառանգությունը նրանց ու նրանց զավակների համար սերնդեսերունդ մինչև հավիտյան:

Եվ այնտեղից վեր կացավ դանդաղ ընթացքով հասավ Քավրիզ իր ամբողջ զորքով: Այդտեղ մնաց մինչև մյուս տարեմուտը, երբ մեր 1056 (1607) թվականն էր: Ապա առնելով իր ողջ զորքերը՝ զնաց Շամախու վրա, նստավ բերդի շուրջը՝ շրջապատելով ու պաշարելով այն: Եվ ինչպես պատմեցինք Գանձակի մասին, նույն ձևով էլ ճակատամարտեց Շամախու դեմ և օսմանցիներից այն գրավեց: Օսմանյան զորքը սրով կո-

տորեց, իսկ ընտանիքները, ունեցվածքները հափշտակեց: Շամախիում իշխան նշանակեց Զուլֆիզար խանին, իսկ ինքը իր բանակով շարժվեց, գնաց Թավրիզ: Եվ երբ 1057 (1608) թվականի տարեմուտն էր, շահը գնաց Սպահան քաղաքը:

Գ Լ Ի Խ Ե Թ

Թ Ե Ի Ն Չ Պ Ա Տ Բ Վ Ա Կ Ո Վ Շ Ա Ն Ա Ռ Ա Ս Ը Վ Բ Ա Ց Թ Ա Գ Ա Վ Ո Ր Ն Ե Ր Ի Ն
Ի Ր Մ Ո Տ Կ Ա Ն Չ Ե Ց Ե Վ Ի Ն Չ Ը Ն Ա Ր Ն Ե Ր Ո Վ Գ Ա Վ Ե Ց Ն Բ Ա Ն Ց

Պարսից թագավոր Շահթահմադի թագավորության ժամանակներում այս Շահթահմադին հաջողվեց զորեղանալ և բռնանալ իր շրջաբնակ այլ ազգերի վրա. սա բռնացավ վրաց ազգի վրա և նրանց թագավորներից պատանդներ վերցրեց: Թիֆլիսի թագավորից, որ մեծ Սիմոն խանն էր, վերցրեց սրա դստերը և եղբորը: Կախեթի թագավորից, որ Ալեքսանդրն էր՝ սրա որդուն, որի անունն էր Կոստանդին: Այս Ալեքսանդր թագավորն ուներ երկու որդի ևս՝ Գավիթ և Գորգի: Սրանք երկուսն էլ գտնվում էին իրենց Ալեքսանդր հոր մոտ: Իսկ Կոստանդինը, որ տրված էր պարսից Շահթահմադ թագավորին պատանդ, մնաց այնտեղ և դաստիարակվեց նրանց մոտ, մեծացավ և թագավորի արքունիքում հայտնի մարդ դարձավ, որովհետև քրիստոնեական դավանանքից հանեցին, դարձրին մուլար առաջնորդի [Մահմեդի] կրոնին: Շահթահմադը մեռավ, թագավորեց սրա որդի Շահխամայելը տարի ու կես, սրան սպանեցին: Սրանից հետո թագավորեց սրա եղբայր Շահխուդաբանդան՝ ինը տարի: Սրանից հետո թագավորեց սրա որդին՝ աշխարհավեր Շահ-Աբասը: Իսկ այս Կոստանդինը [Կախեթի Ալեքսանդր թագավորի որդին] մնաց մինչև հիշյալ Շահ-Աբասի ժամանակները: Երբ շահը թավրիզ, Նախիջևան, Երևան եկավ և գրավեց դրանք իր իշխանության ներքո, այս Կոստանդինը շահի հետ էր:

Եվ այն օրերին, երբ շահը Երևանում էր և ճակատամարտում էր Երևանի բերդում գտնվող օսմանցիների դեմ, շարմտահաղացումների մեջ հարուստ Շահ-Աբասը մտածեց, որ վրաց թագավորներին սա բերի իր մոտ: Այդ բանի համար նը-

րանց մոտ հրավիրողներ է ուղարկում նրանց կողմից տրված պատանդներին, որոնցից մեկն էլ այս Կոստանդինն է, որին [շահը] իբրև հրավիրող ուղարկեց սրա հոր Ալեքսանդրին կանչելու: Իսկ Հանիս Թահմազդուլուն, որ Աթաբեկի եղբայրն էր, որին նախապես հիշատակել ենք, հրավիրող ուղարկեց Թիֆլիսի Գորգի թագավորին: Իսկ այս Գորգի թագավորը մեծ Սիմոն խանի որդին էր, որ Սիմոն խանի բռնըվելուց հետո, այս Գորգուն նրա փոխարեն թագավոր նշանակեցին: Իսկ շահը, որ հրավիրողներ ուղարկեց վրաց թագավորներին մոտ, հիշեցրեց նրանց և ասաց, եթե հաստատուն մնում եք նախապես կնքված դաշինքի վրա, որը մեր նախնիները պայմանավորված հաստատել են, պարտավոր եք շարշարվել, գալ մեզ օգնության, որ պատերազմի մեջ ենք թշնամիների դեմ: Իսկ վրաց թագավորները այս առնչությանը վարանքի մեջ ընկան, որովհետև չէին կամենում զրնալ. բայց երկար մտածելուց հետո հանձն առան զնուլ ոչ թե իրենց կամքով կամ անգիտությանը, այլ անհնարինությունից: Որովհետև շկան այնպիսի թագավորներ, որ կարողանան ընդդիմանալ օսմանցիներին ու պարսիկներին, այլ թույլ են ու անզոր, դրա համար անհրաժեշտ է, որ սրանց մեկնեմեկի հովանու ներքո գտնվեն: Առաջ Շահթահմադի ժամանակ պարսից հովանու ներքո էին, իսկ կալա փաշան, որ օսմանցիների զորահրամանատարն էր, եկավ զրավեց վրաց քաղաքները և նրանց մեջ բերդեր շինեց, իսկ բերդերում նշանակեց ենիշերիներ, որովհետև Սիմոն խանին փախցրեց: Եվ հետո օսմանցիների մյուս զորավարը՝ Զաֆար փաշան եկավ, բռնեց Սիմոն խանին և ուղարկեց Կոստանդնուպոլիս խոնդկարի մոտ, որտեղ սպանեցին Սիմոն խանին ու նրա թուանը: Այս պատճառով վրացիք հեռացան օսմանցիներից: Եվ արդ՝ շահը սրանցից պահանջում է գալ հնազանդության ու պատրվակներ է կցնցում նախապես կնքված դաշնագրությունը, որ նախնիների ժամանակ է կնքվել: Եվ սրանք [վրաց թագավորները] ոչ թե դաշնագրության, ոչ թե անգիտաբար, ոչ թե կամքով, այլ անկախելի վիճակից [մտածում էին], թե միգուցե շահը օսմանցիների դեմ պատերազմն ավարտելով, դառնա վրացիների վրա: Խորհեցին

դրանով գրավել նրա սիրտը, որ թերևս դրանով հեռացնեն իրենցից ու իրենք մնան խաղաղության մեջ: Եվ այն չէին իմանում, թե հետագայում նույնի ձեռքով է լինելու իրենց ազգի կորուստն ու կյանքի վերջը:

Արդ՝ վրաց երկու թագավորն էլ՝ Ալեքսանդրն ու Գորգին ելան, եկան Երևան, տեսան շահին: Իսկ շահը, ինչպես որ նրանց ազգի մեջ ի բնի գոյավորել է խորամանկությունը, նախապես սիրով ու մեծարանքով ընդունեց նրանց, հանգերձանվերով պատվեց, որպեսզի իր մոտ նրանց սիրեն, տեսնողների սիրտը գրավի: Խաղաղությամբ պահեց, մինչև որ Երևանի բերդը գրավեց:

Ապա ըստ գյութական ու կախարդման իրենց արհեստի թույն խմեցրեց Գորգի թագավորին, որ քիչ օրերից հետո մեռնի, իսկ Գորգի թագավորը նույն ժամին շիմացավ այս դավադրությունը, որ շահը նրա հանդեպ գործադրեց: Այս դավադրությունից հետո շահը սիրով ու պարզեցրեց Գորգուն ուղարկեց գնալու իր տեղը: Եվ նա ելավ Երևանից զընաց իր Թիֆլիս քաղաքը ու քիչ օրեր ապրելով մեռավ ըստ [թույնի] ազդեցության ու շահի ցանկություն: Տեղի ժողովորդն ու իշխանները Գորգու տեղը թագավորեցրին նրա տարիքով մանուկ որդուն՝ Լավասափին: Արդ՝ Գորգու վախճանը շահի ներգործությամբ այդպես եղավ:

Իսկ Ալեքսանդր թագավորին շահը իր մոտ պահեց, շքողեց գնալ, այլ իր հետ տարավ շրջեցրեց այստեղ-այնտեղ և նրանից պատանդ էր պահանջում: Այս պատճառով Ալեքսանդրը ճարահատյալ կամքով թե ակամա բերեց իր մանուկ թոռին, որի անունն էր Թամրազ, տվեց շահին պատանդ, որից հետո շահը թույլատրեց նրան գնալ: Եվ Ալեքսանդրը շահի կողմից ազատ արձակվեց, զնաց իր տեղը: Նրա թոռ Թամրազը մնաց շահի արքունիքում. իսկ Թամրազը Ալեքսանդրի որդի Դավթի որդին էր:

ՇԱՀ-ԱՐԱՍԻ ՄԻ ԱՅԼ ԳԱՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ՈՒՐԻՇ ԱՆԳԱՄ ԱՐԵՑ ՎՐԱՅ ԹԱԳԱՎՈՐԻ ԿԱՍՏԱՄԱՐ

Կախեթի վերոհիշյալ Ալեքսանդր թագավորը իր հոծար կամքով թագավորությունը հանձնել էր իր Դավիթ որդուն, և Դավիթը վարում էր թագավորական իշխանությունը: Իսկ Ալեքսանդրի մյուս որդին՝ Գորգին քննով լցվեց նրա դեմ և սպանեց իր Դավիթ եղբորը, որպեսզի ինքը լինի թագավոր: Նրանց հայր Ալեքսանդրը կենդանի էր, թագավորությունը չհանձնեց Գորգուն, այլ ինքը գրավեց ու ինքն էր վարում թագավորությունը:

Այս ժամանակ շար հնարքների մեջ խորամանկ Շահ-Արասը մտածեց կործանման մի ինչ-որ հնար՝ երկպառակություն գցեց քրիստոնյաների թագավորության մեջ: Իր մոտ կանչեց նախապես հիշատակված ուրացող Կոստանդինին՝ Ալեքսանդրի որդուն, որ շահի պալատում էր, խոսեց ըստ նրա սրտի, ցանկության ու հաճույքի և ասաց նրան. «Մեր զորքերից բավականաչափ զորք վերցրու քեզ հետ, որ ես քեզ կտամ, և զնա քո հայրենի երկիրը. քո հայր Ալեքսանդրին ու քո եղբայր Գորգուն սպանելու հնար մտածիր, որպեսզի քո հոր փոխարեն դու լինես թագավոր և վարես քո հայրենի թագավորությունը:

Բայց առայժմ թե մեր ազգի և թե այնտեղ վրաց ազգի մեջ մի ցույց տա քո գնալու նպատակը, թե գնում ես քո երկիրը, այնտեղ ապրես, այլ կձեռացնես և իրքև բացահայտ պատճառ ամենքի մոտ այս կխոսես, թե շահը ինձ այս զորքով ուղարկել է, որ գնամ Շամախի՝ այն գրավելու: Եվ երբ կհասնես քո երկիրը, որը քեզ կհաջողվի, այն կանես՝ կամ քո հոր և քո եղբոր սպանությունը և կամ Շամախու գրավումը»:

Արդ՝ դարանակալ օձը այսպիսի պատվեր ընդունելով ելավ զորքով զնաց Կախեթի գավառը իր հայր Ալեքսանդրի մոտ, բայց այդ ժամին չկարողացավ դավել, որովհետև կասկած ընկավ վրացիների սիրտը՝ հիշելով նրա անօրեն զործերը. նա ինքը նույն ժամին վարագուրեց իր մտքում կու-

տակած մտադրութիւնը: Իրեն անկեղծ ու աննենդ ցուցադրելու և վրացիների սիրտը դրավելու համար իր հոր վրացի զորքերից իր հետ վերցրեց մեծ թվով զորք, ելավ, գնաց Շամախու վրա: Իսկ վրացիները շատ էին կամենում նրա կործանումը, այս պատճառով ճակատամարտի ժամանակ հտ էին մնում ու հավատարմորեն շէին ճակատում, որպեսզի զուցե այդ կովում օսմանցիների ձեռքով լինի նրա կորուստը: Իսկ շար Կոստանդինը իր հոգում հասկացավ այս իրողութիւնը, նաև այն դիտեր, թե պարսից զորքով չի կարող օսմանյան զորքին հաղթել, և մինչդեռ կովի մի խմբում մարտընչում էին օսմանցիների դեմ, թողեց, լքեց ճակատամարտի գործը և ուղիղ փախավ պարսից աշխարհը, գնաց շահի մոտ: Իսկ օսմանցիք շրջապատելով պարսից մնացած զորքը, իսպառ կոտորեցին նրանց և նրանց ամբողջ ունեցվածքը ավարեցին:

Իսկ շահը կրկին անգամ զորքեր ավելց Կոստանդինին մոտ երեսուն հազար և կրկին ուղարկեց իր հայրենի երկիրը միլենույն մտադրութեամբ: Եվ երբ Կոստանդինը հասավ իր հայրենի երկիրը, իրեն ձևացնում էր իբրև ուրացութեանց զղջացած և իբր կամենում էր կրկին դառնալ քրիստոնեական հավատին, այս պատճառով իբրև բարեպաշտ մեկը սըրտով համաձայնեց շրջազայել վրաց եկեղեցիներն ու վանքերը և այս կերպով եկեղեցիներից հավաքեց բազմաթիվ անոթներ՝ խաչ, սկիհ, բուրվառ և այլն, ինչ որ կամեցավ, և հետո այդ բոլոր անոթները ջարդոտեց և իբրև ոռճիկ բաժանեց պարսից զորքերին, որոնք իր հետ եկել էին: Երբ վրացիները տեսան այս, սրտով ու հոգով խոցվեցին և անմիջապես ցանկացան նրան զրկել կյանքից: Խորհրդակցեցին Ալեքսանդրի՝ նրա հոր հետ, որ սպանեն նրան, իսկ Ալեքսանդրը հապաղում էր այս զործում, տակավին մտածում էր կատարման միջոցների մասին: Եվ մինչ Ալեքսանդրը այս մտքերի մեջ էր, Կոստանդինին հայտնվեց այս մտադրութիւնը, իսկ այս Կոստանդինը շտապեց նախապես և սպանեց իր հայր Ալեքսանդրին և եղբայր Գորգուն, իր ձեռքն առավ իշխանութիւնը և բռնացավ երկրի վրա:

Սրանից հետո Կոստանդինը դարձյալ հավաքեց իր զորքերը և վրաց ազգից երկրի զորքերը և նրանցով ելավ գնաց

Շամախու վրա: Երբ մի երկու օրվա ճանապարհ գնացին, այն ժամանակ վրաց զորքը միաբանվեց. մինչ ճանապարհ էին գնում, հարձակվեցին Կոստանդինի վրա սրախողխող անելով կտոր-կտոր հոշոտեցին նրան և շարը մեջտեղից վերացրին: Իսկ պարսից զորքերը, որ Կոստանդինի հետ էին եկել, սաստիկ խոթոռվեցին այդ բանի վրա. կամեցան կովի ելնել վրաց զորքի դեմ: Իսկ վրաց զորքերը մի գրված թուղթ ցույց տվին, իբրև թե շահի կողմից էր ուղարկված նրանց այդ անելու համար: Սրանով վրացիները պատասխանեցին պարսիկներին, թե շահի հրամանով արեցինք այդ. ապա պարսից կողմը թուլացավ և չկովեցին, այլ միմյանցից բաժանվելով՝ գնացին դեպ իրենց ժողովուրդն ու տեղերը: Այս Կոստանդինի առաջին ու երկրորդ գալուստը և սատակումը տեղի ունեցան մեր թվականութեան 1054 (1605)-ին:

Իսկ Կախեթի թագավորական իշխանութիւնը իր իսկ հրամանով ստանձնեց Ալեքսանդրի հարսը՝ Դավթի կինը: Եվ այն երկու պատճառով՝ նախ՝ երկրի իշխանները այդպես կամեցան, որովհետև Դավթի կինն էր, իսկ Ալեքսանդրի թագավորութիւնը տրված էր Դավթին: Երկրորդ՝ որովհետև թամրազի մայրն էր. իսկ թագավորութեան ժառանգ թամրազն էր մնացել. (երրորդ)՝ իբրև ավանդապահ թագավորութիւնը պահում էր իր որդի թամրազի համար, որ տակավին պատանդ էր մնում շահի մոտ, որ Գանձակի բերդը գրավելուց հետո, ինչպես նախօրոք ասել ենք, շահը թամրազին Կախեթ ուղարկեց, որ եկավ թագավորեց իր հայրենի տեղը:

Այս թամրազին Կախեթ ուղարկելու պատճառը հետևյալն է. որովհետև երբ Շահ-Աբասը իր հնարավոր ներգործութեամբ սպանել տվեց այս թամրազի պապին նրա երեք որդիներով իրար ձեռքով, սրանց տեղը մնաց թագաւոր, տեղի ժառանգը միայն թամրազն էր, իսկ սա շահի մոտ պատանդ էր մնում, այս պատճառով սրան ուղարկեց: Նաև շահը քաջ գիտե՞ր, որ եթե պարսիկ ուղարկի Կախեթի երկրին իշխող, Կախեթի իշխանները չեն ընդունի, ուստի թամրազին ուղարկեց:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՃԱՌ ՎՐԱՑ ԵՐԿՐԻ ԱՎԵՐՄԱՆ
ԵՎ ՍՐԱՆՑ ԼԱՎԱՍԱՓ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՀՎԱՆ, ՈՐ ԵՂԱՎ
ԱՌԱՋԻՆ ՇԱՀ-ԱՐԱՍԻ ՁԵՌՔՈՎ

Երբ վրաց Գորգի թագավորը Երևանից դարձավ և գնաց հասավ Թիֆլիս, շապրեց, այլ շուտով մեռավ, քանզի Շահ-Աբասը թունավորել էր նրան, ինչպես որ վերևում պատմեցինք:

Վրաց իշխանները Գորգի թագավորի տեղը նույնի որդուն, որի անունն էր Լավասափ, թագավոր կարգեցին մանուկ հասակում:

Եվ այնպես եղավ, որ Լավասափ թագավորի հրամանով մի մարդ նշանակվեց Թիֆլիս քաղաքի վրա մովրդություն [գավառապետի] պաշտոնով, որ հիմա կոչում են տարուղա*: Այս մովրդով նշանակվածը խոսքով խելացի, մտքով հարուստ և իր գործի մեջ խելամուտ մարդ էր. նաև հսկայակերպ, ուժեղ, քաջ, մարտիկ և անպարտելի կտրիճ, որ ինչ կողմի միանում էր, մյուս հակառակ կողմին հաղթում էր, և դիմադիր զորքը իբրև բանջար կոտորում, թափում էր դաշտի երեսը: Սրա քաջությունը առաջիկայում շատ տեղերում կհիշատակվի, որից դու հավաստին (ճշմարտությունը) կիմանաս: Բայց այս գավառապետը ազնվորդի, կամ իշխանազուն, կամ երևելի տոհմից սերված մարդ չէր, այլ հասարակ ու ցածր տոհմից էր սերված, որ վրացիք պեխի (գյուղացի) են ասում: Այս գավառապետը ուներ նաև մի քույր, նորահաս մի կույս, շքեղ ու գեղեցիկ, մարմնի ու հասակի դրվածքները գեղեցկատես ու գեղակաղմ:

Իսկ Լավասափ թագավորը զարգացավ, չափահաս դարձավ, տասնհինգ-տասնվեց տարեկանից ավել կամ պակաս, երբ մարդու մեջ սեռական ցանկությունը զորեղանում և իր իշխանության տակ առնելով (մարդուն) շրջեցնում է: Այդ ժամանակ Լավասափ թագավորը հրապարակում է գավառապետի քրոջով, մուլեզին կրթությունը սիրում նրան և գաղտնի խա-

* Տարուղա կամ դարուղա նշանակում է ոստիկանապետ

զում նրա հետ: Բայց նրանք շեն զուգավորվում, այլ երկուսն էլ կույս են մնում՝ Լավասափն էլ, աղջիկն էլ: Այս գործը թե պետ որոշ ժամանակ ծածուկ մնաց, բայց հետո հայտնի դարձավ ըստ տիրոջ այն խոսքի, թե շիա ծածուկ բան, որ հայտնի չդառնա*: Այս լուրը հետո ընկավ նաև գավառապետի ականջը: Նաև նրանք, որ նախանձախնդիր էին ու սխալալ գավառապետի հանդեպ՝ չարիքի զավակներ ու խռովություններ հրահրողներ, այս բանը հիշեցին գավառապետի ներկայությամբ և երեսօժանք արին նրա համար: Գավառապետը այս պատճառով հոգու խորքում վշտացավ և թախծոտ սրտով իր համար մահ էր որոնում, բայց չէր գտնում: Երկար ժամանակվա ծածուկ տրտունջներից հետո գավառապետը տըրտընջում էր բացահայտ ու համարձակ, բուրդի հետ խոսում էր և ասում. «Ես սպանելու եմ Լավասափին, քանզի շիա կարող տանել այսպիսի նախատինք, որ ասում են իմ երեսին, որովհետև ամոթալից առակ դարձա աշխարհի մեջ»: Իսկ Լավասափ թագավորի իշխաններն ու մտերիմները, երբ լսում էին գավառապետի խոսքերը, վախենալով խուսափում էին նրանից, քանզի գիտեին, որ նա կարող է գործով անել այն, ինչ խոսքով ասում է: Այդ պատճառով հարմար ու պատշաճ ժամանակ ողբքով ու աղաչանքով խնդրում էին Լավասափին հեռու մնալ այդպիսի գործից, որ բնավ չի վայելում թագավորական անունին: Նաև գավառապետի սպառնական խոսքերը միգուցե գործնականում իրականանան: Եվ իր քարեկամների բազում թախանձանքներին ունկնդիր Լավասափը ասաց. «Չեմ կարող այն կույսից հեռանալ, քանզի ես հոգուս շափ սիրում եմ նրան, բայց քանի որ այդպես եք ասում և դիտեք իսկ, որ ես կին չեմ առել, այն կույսն էլ՝ մարդ. արդ օրինավոր կարգով նրան ինձ կին խոսեցեք և նշան դրեք, որպեսզի հարսանիք անենք, և ձեր տրտունջները կվերանան»: Լավասափի այս խոսքը հաճելի եղավ բոլոր իշխաններին, նաև հենց գավառապետին: Եվ ուրախանալով փառք էին տալիս աստծուն, որ խռովությունը մեջտեղից վերացավ: Եվ այս խոսքով այն աղջկան նշան դրին Լավասափի կնություն համար: Իսկ աղջկա եղբայր գավառապետը շատ ուրախացավ

* Մատթ. Ժ 20

այս գործի առիթով և գոհ մնաց Լավասափից, իրեն համարում էր նրա ծառան ու պաշտոնյան, և (ասում էր), թե՛ «ինձ և իմ կյանքը դրել եմ նրա ճանապարհին ու հրամանին, որովհետև շարժամարձեց իմ անտոհմիկությունը, քանի որ գլխուս որդի էին ասում, այլև այնչափ հաճեցավ իմ հանդեպ մինչ որ իմ քրոջը առավ կնության և թագուհության իրեն»:

Իսկ բիրտ, զոռոզ ու ինքնահաճ վրաց ազգը, որ (այսպիսի գեպքում) տոհմիկությունն ու նախնի հայրերի սերունդներն են քննում ու հետախուզում, շահեցին այս գործը, քանզի իշխանների, ազնվորդիների ու թավադների կանայք, որոնք մեծատոհմիկ էին, անցյալ ու արդի ժամանակի իշխանների դուստրեր, կանայք ու մայրեր էին, սրանց հետ նաև որոշ ազամարդիկ բնավ չցանկացան և այս գործին կամակից չգտնվեցին: Քանզի երևելի իրենց ամուսիններին ու որդիներին կանայք ասում էին. «Ինչպե՞ս կարելի է, որ մենք դուստրերս այսինչ անունով ազնվորդիների, կանայք ու մայրեր այսինչ անունով իշխանների գնանք խոնարհության ու ողջույնի մեկին, որ դուստրն է մի գլխի [գլուղացի] մարդու, մի շինակա՞նի: Արդ՝ Լթև համոզեք թագավորին ես կանգնել այդ մտքից և իրեն կին առնել թագավորների դուստրերից, լավ կլինի. իսկ եթե ոչ այսպես, մենք էլ չենք կամենա գնալ ողջույնի ու խոնարհության մի գլուղացի աղջկա, որովհետև մեզ համար այդ բանը ծանր է, իսկ եթե կամենում եք, մեզ արձակեցեք ձեր կնությունից ու այլ կին առեք»: Եվ շատ օրեր այս դարձավ մեծ ու անփարատ շփոթ, վեճ, խռովություն վրաց ազգի մեջ: Որքան էլ հնարամտում էր հավանություն տվողների կողմը, չէր կարողանում համոզել անհավան կողմին: Այս պատճառով խաղաղասերները ճարահատույալ ընկան Լավասափի ոտքերը և աղաչեցին, որ գուցե խաղձողությամբ այս խնդրին մի ելք գտնի: Իսկ թագավորը նույնպես անճար մնալով այս առթիվ, ասաց նրանց, թե դուք գիտեք. իսկ իշխանները [մարդ] ուղարկեցին Մենգրելիա և Մենգրելիայի թագավորի գտները նշանեցին Լավասափի համար իբրև կին: Այս պատճառով Լավասափը հեռացավ գավառապետի քրոջից:

Իսկ այս գավառապետը, որ սկզբում իր մեջ բնակեցրած ունեք մեկը շար սատանայի զորքերից, և արդ՝ այն առաջին

սատանան յոթ այլ իրենից ավել շար սատանաներ իր հետ առաջ, եկավ բանակեց այս գավառապետի մեջ: Սրա վերջինը ավելի շար, քան առաջինը: Որովհետև փոնգտում էր իբրև մարտասեր երիվար, մոնչում էր իբրև առյուծ և արտափչում էր Լավասափի վրա իբրև հրաշունչ վիշապ. [առիթներ] էր որոնում նրան սպանելու երկու պատճառով: Առաջին՝ իր քրոջ նախկին խայտառակության համար, և երկրորդ՝ նույնի վերջին անարգանքի համար. և որոնում էր, որ առիթ գտնի, Լավասափին զարկի, սպանի:

Իսկ մահերիմ իշխանները [Լավասափի] ու ցավակից բարեկամները զգուշանում ու պահպանում էին Լավասափին, նրան զգուշացնում էին, որ իրեն պահպանի գավառապետից: Նրան խրատում էին, որ գավառապետին սպանի: Եվ երբ իշխաններն ու Լավասափը գավառապետի սպանությունը իբենց մեջ համոզմունք դարձրին, այս դիտավորությամբ մի օր շատ գինի խմեցրին գավառապետին, գուցե փոքր-ինչ թուլանա իր զորությունից, որպեսզի հեշտությամբ սպանեն նրան: Երբ ժամը հասավ, թագավորը դուրս եկավ, իսկ իշխաններից ով տեղյակ էր, նրանք էլ մեկ-մեկ դուրս եկան: Լավասափի մոտ կանչեցին մի գահճի, որ Լավասափը հրամայի նրան ներս գնալ ու գավառապետին սպանել: Եվ այն սահճին մինչ գահճի հետ այդ էր խոսում, գավառապետի ծառաներից մեկը, որ նրա առաջադնաց ծառան էր, որին շաթը են ասում, և իսկույն ինչպես թռչուն թռավ ներս՝ տունը, որտեղ գավառապետն էր և նրան ասաց. «Ահա գալիս են քեզ սպանելու, քանի որ թագավորի կողմից քո մասին այդպես հրամայվեց»: Իսկ գավառապետը երբ լսեց, սաստիկ երկյուղից այնպես գինեթափ եղավ, որպես թե բնավ գինի չէր խրմել: Այդ ժամին նա գոտիարձակ, գլխաբաց նստած էր. տագնապալից այդպես բոբիկ, գոտիարձակ, գլխաբաց վեր թռուավ տեղից, սլացավ թագավորի երիվարների ախոռը, որտեղ կապված էին արքունի երիվարները, քանի որ մոտիկ էր: Եվ գավառապետը ինքը փորձով գիտեր, թե երիվարներից որ մեկն է արագագնաց ու սրընթաց, սանձը դրեց երիվարի բերանը և ախոռի ներսում հեծավ առանց թամբի, միայն ջուլը վրան երիվարը մահվան երկյուղի պատճառով, որպեսզի չբռնվի ու սպանվի: Այդպես հեծած երիվարը ախոռից դուրս

եկավ, թուլացրեց երիվարի երասանը, մտրակեց նրան, որ իրեն առնի, փախցնի: Իսկ օդասուլաց այն երիվարը իբրև երկնաթիռի թռչուն, նրան առած այնպիսի մի ընթացքով էր գնում, որ ոչ ինչպես հողի վրա, այլ իբրև օդի երեսով: Թեպետ ևավասափի զորքերից շատերը երիվար նստեցին և ընթացան հետևից, բայց նրանցից ոչ ոք չկարողացավ հասնել բացի երկու մարդուց: Իսկ գավառապետը ասաց նրանց, որ նրանք սպասեն, տեղում կանգնեն մի պահ. երբ եկողները կանգնեցին, գավառապետը սկսեց աղաչանքի խոսքերով խոսել նրանց հետ. որպեսզի շրոնեն իրեն, այլ թույլ տան իրեն գնալ: Այնքան խոսեց, մինչև գուժ ու խղճմտանք զցեց նրանց սիրտը, նրանք շրոնեցին նրան, այլ թողնեցին: Եվ նա անցավ, զնաց Քիֆլիս քաղաքը: Գիշերը մտավ, միևնույն գիշերն դուրս եկավ. առավ իր հետ մի թարգման, որովհետև ինքը այլազգիների լեզուն չգիտեր: Գնաց Աղասուի գավառը Ղազախի Սուլթանի մոտ, որ նստում էր նույն գավառում. ժանոթացրեց նրան իր գլխի անցածը և խնդրեց նրանից իրեն ուղարկել Շահ-Աբասի մոտ: Նրանք լցվեցին անպատմելի ուրախությամբ, իրենցից շատ մարդիկ պատրաստեցին, նրան առան, հասցրին շահի մոտ, որ այն ժամանակ գտնվում էր Շամախու գավառի Ղզըլաղաջ անվանված վայրում:

Եվ դադախ զորականները գավառապետին տարան, ներկայացրին Շահ-Աբասին: Իսկ շահը խոսում էր գավառապետի հետ և հարցնում, ով, որտեղից լինելը և ինչի համար (գալը): Գավառապետը բոլոր հարցումներին պատասխանում էր կանոնավոր խոսքերով: Եվ ասում էր, եթե քո տերութիան հովանու տակ ընդունես ինձ, ես շատ գործերի ու իրողությունների մեջ պետք կգամ քեզ ծառայելով: Շահը իր բանակով որոշ ժամանակ մնաց այնտեղ, ապա այնտեղից շարժվեց դեպի Սպահան, իր հետ տանելով նաև գավառապետին: Օր առ օր առաջ շարժվելով հանդարտությամբ զնացին, մինչև հասան Սպահան: Ամեն հարմար պահի շահը խոսում էր գավառապետի հետ և տեղեկանում էր վրաց երկրին ու ազգին, երկրի ամրությունը, թագավորների ու իշխանների խելքին, ազգի քանակին, զորքերի շաջությունը և այլն, ինչ որ կամենում էր: Մնացին այնտեղ Սպահանում, անցավ այդ տարին, մտան երկրորդ տարին. շահը ասում էր գավառապետին.

«Ահա անցան շատ օրեր. ի՞նչ կերպով պատրվակներ հերյուրենք, որ այդ պատճառով զորածողով անենք, գնանք վրաց ազգի վրա»:

Իսկ գավառապետը ըստ ամենայնի կամենում էր վրեժ առնել ևավասափից, որը ստորութիան և քրոջը անվանարկելու համար էր. այդ պատճառով էլ իսկապես եկել էր. ըստ այդ ուղղութիան ու կերպի խոսեց՝ հրահրելով Շահ-Աբասին՝ ասաց. «Լավասափն ունի մի թագավորացն քույր. սա նորահաս կույս է չքնաղագեղ ու գեղատես և ամեն որպիսութիամբ վայելուչ, որ արժան է ոչ ոքի, բայց միայն իմ տեր արքային: Արդ՝ խնդրիր նրան քեզ կին. կույսի դալուց հետո մորն էլ պահանջիր կույսի համար: Երբ մայրը գա, մորն էլ կպահես այստեղ կույսի պատճառով: Նրանցով դուրսն է ևավասափին ի կորուստ որսալ: Արդ՝ եթե այս խորհուրդը իրականանա, լավ է, որովհետև դուրսն է ու հեշտ. իսկ եթե չսեն և աղջիկը քեզ շտան, այն ժամանակ նրանց շտալը կլինի քեզ պատրվակ նրանց վրա հարձակվելու համար»:

Իսկ սատանայի անսայթաք կամարարը՝ երկրորդ Սարյուռոս այս Շահ-Աբասը գավառապետից այսպիսի խորհուրդ լսելուց հետո սիրո ու ողջույնի նամակ գրեց ևավասափին և սրա մորը ևավասափի քրոջ մասին մի նամակ, որ վրան ունեք կենաց խոսքը, բայց տականց լրիվ մահու հրավեր էր: Եվ նամակի խոսքի էությունը այս ձևով էր. «Կամենում ենք ճշմարտութիամբ, որ հաստատուն ու անխախտ լինի մեր ու ձեր թագավորությունը սեր ու միաբանություն [լինի] երկու ազգերիս՝ պարսից և վրաց. իսկ մենք բոլոր իշխանների և այդ կողմերի երկրների վերահսկողությունը կհանձնենք ձեզ, որպեսզի դուք հոգաք և վարեք հյուսիսային այդ կողմերի թագավորական իշխանությունը, իսկ մենք այլ կողմերի [իշխանությունը] հոգ տանենք: Եվ սրան՝ այս միաբանության նշան ու պատճառ լինի այն, որ ձեր օրիորդ դուստրը բերեք մեզ մոտ: Նախ որ նա կլինի այս գործի ավարտը և կդառնա նշան և շաղկապ երկու ազգերիս միություն, երկրորդ՝ [լինի] դշխո ու թագուհի ամբողջ արյաց ազգին»:

Արդ՝ այս օրինակով զրված թուղթը ուղարկեց վրաց երկիրը՝ Քիֆլիս քաղաքը ևավասափին ու սրա մորը:

Երբ նամակը կարդացին, հասկացան, որ նամակի ամբողջ

խոսքը գավառապետի թեկադրությամբ ու թշնամությամբ գավառաճանություն էր. ոչ իրենց գնալը, ոչ էլ աղջկան տալը կամեցան, քանզի Լավասափին մայրը գրեց. «Այն ժամանակ, երբ դու Երևան քաղաքում պատերազմի մեջ էիր, մեզ կանչեցիր քեզ մոտ բարեկամության պատճառաբանությամբ, և մենք անկեղծ սրտով իբրև ճշմարիտ բարեկամ և թագավոր եկանք քեզ մոտ, բայց դու թշնամու գործ արիր մեր նկատմամբ, քանզի թույնով իմ ամուսնուն սպանեցիր ու ինձ խայտառակեցիր: Արդ՝ մենք, որ այդպիսի գործեր տեսանք քեզներից, ինչպե՞ս վատահենք երկրորդ անգամ գալ քեզ մոտ: Արդ՝ եթե ստույգ կերպով մեր հաստատությունն ու հանգիստն ես կամենում, ինչպես գրել ես, մի նեղիր մեզ և խռովելով մի վրդովիր մեր խաղաղությունը, այլ մեզ թող խաղաղության մեջ մնալ, որովհետև մեր այս փոքրիկ իշխանությունը բավական է մեր պետքերի ու կարիքների համար. ողջ եղիր»:

Այս պատասխանը հասավ Շահ-Աբասին, երբ նա Սպահանում էր, որտեղ ինքն ու գավառապետը մշտապես մտորում էին վրաց երկրի ավերման ու նրանց թագավորության անկման մասին: Այն պատգամը, որ նախապես շահը գրեց, երկու-երեք անգամ կրկնեց ու ուղարկեց Լավասափին ու նրա մորը, որպեսզի թերևս Լավասափին կամ մորը, կամ քրոջը իր ձեռքը գցի: Բայց չկարողացավ:

Պատգամների երեք անգամ գնալ-գալուց հետո, երբ չեկան, այն ժամանակ շահը իր երեսը դարձրեց դեպ Վրաստան: Ժողովեց իր զորքերը, Սպահանից շարժեց՝ իր հետ ունենալով շարիքների խրատատու աշխարհավեր գավառապետին: Եվ ելնելով Սպահանից դանդաղ ու հանդարտ ընթացքով հասան մինչև Ղարաբաղ երկիրը՝ Գանձակ քաղաքը: Այնտեղ տեղավորվելով ամուսնը մնացին: Շահը գավառապետին ասաց. «Արդ՝ շատ ժամանակ վրա անցավ, ե՞րբ կլինի, որ մեզ տանես Վրաստան»: Գավառապետը պատասխանելով ասաց. «Գիտես համբերիր, որովհետև այժմ էլ ժամանակը չէ. և երբ ժամանակը գա, ես ինքս կհեղեցնեմ քեզ այնտեղ գնալու: Եվ գավառապետը այս ասում էր այն պատճառով, թե ժամանակը չէ, որպեսզի ամառն անցնի, ձմեռը վրա հասնի, և մայրի ծառերը տերևաթափ լինեն, որ դյուրին լինի պարսից զորքերի համար ձիանքով խաղաղ

մտնել վրաց աշխարհը՝ նաև այն վրացիները, որոնք փախել, ամրացել ու տեղահան են եղել երկրի ամուր վայրերում, լեռնախոտոշներում, դժվարագնաց տեղերում, ձմեռային ժամանակի ցրտի ու ձյան խստությունից ու սովի և այլ կարիքների նեղությունից չկարողացան դիմանալ ցրտին ու մնալ ամրոցներում, այլ դառնան իրենց բնակավայրերը՝ ձիանքաց տեղերը, որպեսզի դյուրին լինի պարսից հափշտակող ու ավարիչ զորքերին ձիով շարժվել և նրանց ավարի ենթարկել: Հետագայում գործի կատարումը ըստ նրա նախապես արված խորհրդի եղավ:

Իսկ երբ վրացիները լսեցին շահի իրենց վրա գալու մասին, սկսեցին մտահոգվել ղեկավարի ելքի համար. երկու թագավորներն էլ մտածեցին իրար հետ միաբանվել, Լավասափը, որ Թիֆլիսի ու Քարթլիի տերն էր, և Թամրազը, որ Կախեթի ու Գրիմի տերն էր, որպեսզի իրար օգնելով կարողանան պարսիկներին դիմադրել: Այս պատճառով Լավասափն ու յուրալիները (մարդ) ուղարկեցին Կախեթ և Թամրազին կանչեցին Թիֆլիս միաբանության համար: Իսկ Թամրազը բաժանման և երկատման վնասը շատ անգամ էր կրել. նաև պարսիկների պատճառած վիշտն ու թշնամանքը, որ բազմիցս արել էին նրան, զիտեր և հոգալափ հոժար էր միաբանության համար: Այս պատճառով վեր կացավ եկավ Թիֆլիս: Մրա Թիֆլիս դալը անպատմելի ուրախություն պատճառեց Լավասափին և յուրալիներին: Նրանք ուխտ ու դաշինք կընքեցին լինել միաբան ու միախորհուրդ, անձերը գնել իրար համար և մեռնել հանուն Քրիստոսի անվան:

Այս օրերին, երբ Թամրազը Թիֆլիս եկավ, շահի լրտեսները ինչ որ տեսան ու լսեցին, գնացին, լուրը տարան Շահ-Աբասին: Եվ ընկած՝ սաղայելի հոժարակամ կամակատար Շահ-Աբասը նյութ քաղեց սրանից. նորուզուտ հնարներ է ստեղծում քրիստոնյաների թագավորության կործանման ու երկպառակության համար: Քանզի մինչ իր բանակով տեղավորված էր Գանձակ քաղաքում, այստեղից էլ սկսեց գայթակղել ու խաբիրայության նամակներ ուղարկել, ինչպես

* Ընկած սաղայելը սատանան է, որին իբրև թշնամու ըստ ավանդության ասված երկնքից ցած գցեց:

նախօրոք ուղարկել էր Սպահանից. այդպես էլ այժմ այստեղից, որ իր վրա (նամակը) կրում էր սեր ու խաղաղություն, իսկ խորքում ունենր գայթակղություն, խարեբայություն ու նենգություն. գոնե երեքից մեկին գցի իր ցանցերը՝ կամ կավասափին, կամ մորը, կամ քրոջը, բայց չկարողացավ:

Եվ նորագուտ հնարը սա էր. քանի որ պատգամների նամակը, որ բացահայտ ուղարկում էր, սրա հետ ծածուկ ուղարկում էր մի այլ նամակ և՛ ծածկված խորհուրդներով ու նենգություններով գրում էր կավասափին ու Քամրազին միմյանցից գաղտնի՝ կավասափին գրում էր, թե դու մի հավատա այդ Քամրազին և մի միաբանվիր նրա հետ, որովհետև դա քո թշնամին է և կամենում է բարեկամությամբ դավել ու սպանել քեզ և տիրել քո երկիրը, ինչպես այդ գաղտնիքը ինձ ասել է. արդ՝ քանի դեռ չես սպանված, շտապիր դու սպանիր նրան և կտիրես քո ու նրա երկրին: Նաև ես քեզ օգնական եմ, եթե զորքի պետք ունենաս կամ գանձի. իսկ ես համաձայն եմ, որ դու տիրես նրա երկիրը: Սուլյալես և այս ձևով գրում էր նա Քամրազին կավասափից թաքուն. դու սպանիր կավասափին և դու կտիրես երկու երկիրն էլ: Երեք անգամ այս նամակները ուղարկեց նրանց, թե հայտնին ու թե գաղտնին միասին: Եվ կավասափը և իր մայրը ոչ իրենք գնացին և ոչ էլ աղջկան ուղարկեցին:

Իսկ ծածուկ նամակները, որ միմյանց մասին Քամրազն ու կավասափը ստացել էին, պահել էին իրենց մոտ. տակավին մտորում էին իմանալու ճշմարիտն ու ստաքը: Աստուծու կամքով երկու թագավորներն էլ միմյանց հայտնեցին այս գաղտնիքը. նաև նամակները ցույց տվին, որ շահը ուղարկել էր նրանց: Եվ տեսնելով իմացան ու ստույգ կերպով ճանաչեցին շահի թշնամությունը իրենց նկատմամբ: Եվ փոխանակ թշնամության, անխղճի սեր, անքակտելի բարեկամություն հաստատեցին իրենց միջև: Որովհետև կավասափը իր այն քրեջը, որ շահն էր ուզում, տվեց Քամրազին կնություն, քանի որ Քամրազի առաջին կինը մեռել էր: Եվ անմիջապես Քամրազի ու կավասափի Փարի անունով քրոջ հարսանիքը արին: Հարսանիքից հետո Քամրազն ու կավասափը գնացին Մցխեթ, որ իրենց պատրիարքարանի աթոռանիստն էր, և կրկնակի երդվեցին միաբան ու միախորհուրդ լինել և պատե-

րազմել պարսիկների դեմ: Այս ամենը այսպես եղավ. պարսիկների նամակաբերները, որ հայտնի եկել էին, լրտեսները, որ ծածուկ էին եկել, գնացին, պատմեցին շահին, իսկ նա խոցված էր սրտով ու հոգով: Ինքը քանի անգամ ինդրեց այն աղջկան և այսքան զորքով նրա համար եկավ, իրեն չտվին, այլ տվին Քամրազին: (Շահը) կանչեց գավառապետին ու ասաց նրան. «Այս բոլոր զորքերով մեզ բերիր մինչև այստեղ, և այն աղջիկը, որի մասին խոսում էիր, ահա տեսար, ինձ չտվին, այլ տվին իմ թշնամուն, որ իմ ծառաներին հաղթվ թե հավասարվի: Արդ՝ ինձ ծաղր ու ծանակ արիր աշխարհի առջև. և եթե ինձ չտանես մտցնես վրաց երկիրը, չգրավես, իմ ձեռքը տաս նրանց աշխարհը, դու իմացիր, որ կենդանի չես մնալու, այլ մաս առ մաս բաժանվելու է քո ողջ մարմինը»: Գավառապետը պատասխանեց. «Եթե քեզ չտանեմ այն երկիրը, այդպես կանես, իսկ եթե տանեմ, ի՞նչ կանես»: Շահը նրան ասում է. «Իմ բոլոր խորհրդական ու առաջին նախարարների բուն գլխավորն ու նախապատիվը և ամենից գերագույնը դու ես լինելու»: Եվ գավառապետի խորհրդով համբերեցին մինչև զեկտեմբեր ամիսը, մինչև ավագ տոները*: Երբ եկավ հասավ ձմեռ ժամանակը, ու ցուրտը սաստկացավ, ձյունը եկավ ծածկեց լեռների գագաթներն ու փախուստի ճանապարհները, իսկ ամբողջ մտած մարդիկ ցրտից նեղված իջան շեներն ու գյուղերը, ծառերի տերևները թափվեցին, որ ամեն տեղ աչքերի ակներև տեսանելի եղավ,— ապա գավառապետը շահին ասաց. «Արդ՝ ահա այժմ գնանք վրաց աշխարհը, որովհետև հիմա է ժամանակը»: Եվ Գանձակ քաղաքից շարժվեցին եկան Կախեթի սահմանները, որ Քամրազի երկիրն է:

Կախեթի երկրի ճանապարհը ձորով էր մտնում, ձորով անցնում, ապա մտնում էին երկիրը, և ձորը նեղ էր ու անձուկ, իսկ վայրերը դժվարագնաց. ձորի երկու կողմերը բարձրանում էին քարավեժ լեռներ՝ ծածկված մացառուտով և թավ մայրիներով. սրանցով մարդ ու ձի չէին կարող գնալ: Քամ-

* Ավագ տոնը ասելով Գավրիժեցին հասկանում է Քրիստոսի ծնունդը, Բարեկենդանը, որ այն ժամանակ՝ հին տոմարով, ընկնում էին զեկտեմբերի վերջերին:

բազմն ու Լավասափը եկան մեծ զորքով բռնեցին ձորի բերանը և ամուր քարով ու փայտով պարիսպ կանգնեցրին: Ներսի կողմից շինեցին ճակատամարտի տեղ, որտեղից իրենք ներսում մնալով կռվելու էին դրսից եկող թշնամու դեմ:

Իսկ պարսից բանակը արձակ վայրում, ձորի հանդեպ բանակել էր: Երբ պարսիկները տեսան, որ վրացիները բռնեցին ճանապարհի անցքը, ճարահատ տարակուսանքի մեջ ընկան: Շահը դարձյալ կանչեց գավառապետին և մահու սպառնալիք կարդաց. գավառապետը ինքն էլ տարակուսանքի մեջ էր: Երկու օր հետո գավառապետը շահին ասաց. «Ես մտածելով ինչ-որ կողմով ճանապարհ գտա, բայց երկու օրվա ճանապարհով հետու է այստեղից. նաև պետք են կացնավորներ, բահավորներ, մուրճավորներ, որ անտառը կտրատեն և դժվարին տեղերը հարթելով հեշտացնեն»: Երբ շահը այս խոսքը լսեց, ցնծաց մեծ ուրախությամբ. իր զորքերին հրամայեց՝ առնել շատ կացիներ, բահեր և այլ գործիքներ, զնալ տեղը և ճանապարհ բանալ: Եվ նրանք գնացին, կտրատեցին անտառը, դժվարին տեղերը դարձրին դյուրին և ճանապարհ բացին, ապա եկան շահին իմացրին, թե կատարվեց այն, ինչ որ հրամայեցիր»:

Եվ շահը իր բանակին հրամայեց, որ մինչև այդ ժամը ինչպես որ կազմված, կառուցված, խփված էին վրանները, և ուղտ, և բեռնակիր անասուններ, և բանակի մատակարարները և այն ամեն ինչ, որպես նախօրոք գտնվում էին, այդպես էլ մնան իրենց տեղերում, որ վրացիները կարծեն, թե պարսից զորքերը տակավին այնտեղ են: Բայց միայն կովոզ զորքը իր ռազմի զենքերով ու ձիանքով գաղտ ու թաքուն ելնեն, գնան բացված ճանապարհով, մտնեն Կախեթի երկիրը: Այնժամ պարսից կովոզ զորքերը ելան գնացին, նոր բացված ճանապարհով մտան Քամրազի երկիրը, հասան շեներն ու գյուղերը և սկսեցին անխնա կոտորել վրացիներին: Իսկ Քամրազն ու Լավասափը, որ վրաց զորքերով նստած էին ձորաբերանին, շփոտեցին պարսից զործողությունների մասին, մինչև որ անսպասելի տեսան մի մարդ՝ գլուխն ու մարմինը վիրավորված ու ողջ հասակով մեկ արյամբ թաթախված, որ փախել էր պարսից կոտորածից և գուժկան ու բոթաբեր էր եկել պարսիկների գալու և վրաց երկիրը մտնելու մասին: Երբ

Քամրազն ու Լավասափը այս լսեցին ու նրանք նաև, որ նրանց հետ էին, ապշեցին ու հիմարացան ու ոչինչ չկարողացան անել, ոչ ունեցվածք կամ ապրանք բառնալ, բացարձակ ոչինչ: Միայն յուրաքանչյուր մեկը, հետը առնելով իր ընտանիքը և մոտիկ սիրելիներին՝ հազիվ մեկական ձիեր հեծած, շուտափույթ տազնապով շտապ փախան, հեռացան որպեսզի չընկնեն պարսիկների ձեռքը:

Արդ՝ այս պատճառով Քամրազն ու Լավասափը այստեղից փախչելով իրենց գեցեցին Թիֆլիս և այնտեղից՝ Գորի, բայց այնտեղ էլ չկարողացան մնալ, այլ Կուրայի ճանապարհով անցան Կովկաս լեռը, որը Յաշբուզ լեռն է, և գնացին Պաշիաշուխի երկիրը, Իմերեթի, որովհետև Լավասափի մայրը Պաշիաշուխի թագավորի գուստրն էր: Այս պատճառով Քամրազն ու իր կինը, Լավասափն ու իր մայրը և սրանց այլ ընտանիքներ փախան Պաշիաշուխ, ազատվեցին պարսիկների ձեռքից:

Եվ պարսից այն զորքերը, որ մյուս կողմից եկան մտան Քամրազի երկիրը, հասան մինչև ձորաբերանը, որ վրացիք փակել էին, քանդեցին կապանը, բացին լայն ու ընդարձակ ճանապարհ, որով պարսից բանակը եկավ մտավ Քամրազի երկիրը: Այնտեղ բանակեցին ու մնացին մինչև հիտուն օր՝ եվ այսքան օր, որ մնացին այնտեղ, թե ինչ արին, բերանը չի կարող խոսել և ոչ էլ լեզուն ասել, դու մտքով խորհիր ու վերահասու եղիր, թե քրիստոնյաների ինչքան անմեղ անձանց սրախողխող անելով վիրավորեցին կամ թե բուրդովին սպանեցին, անմեղներին գերեցին ու խայտառակեցին, ինչքերն ու ունեցվածքները հափշտակեցին, շինվածքները հրդեհելով այրեցին կամ քանդեցին, եկեղեցիները ավերեցին, սուրբ սեղանը և սուրբ խաչի նշանը կործանեցին: Եվ գերվածներին պահում էին բանակի մեջ, իրենց մոտ և զանազան տառապանքներով տանջում՝ ցրտով ու մերկությունով, քաղցով ու ծարավով և բազմազան այլ ձևերով:

Եվ երբ Շահ-Արասը մտավ Կախեթի երկիրը և տեսավ, որ Քամրազն ու Լավասափը փախել են, ժողովուրդն ու երկիրը մնացին իր ձեռքում, այն ժամանակի շարիքների մտահոգացումների մեջ հանճարեղը և աշխարհավերջ հնարներ ստեղծեց, քանզի հրամայեց, որ մուսուլմաններ շրջեն Կախե-

Քի բոլոր գավառներն ու գյուղերը և բարձր ձայնով շատ օրեր հայտարարեն ու ասեն, հզոր, խաղաղասեր ու աշխարհաշեն Շահ-Աբաս թագավորից հրաման կա, որ Կախեթի երկրի բոլոր բնակիչները՝ թե իշխաններ, թե հեծյալներ, թե արհեստավորներ, թե ուսմիկ ժողովուրդ, ամեն ոք, որ ելել ամրացել է լեռներում, անտառներում, բերդերում և ամեն ամուր տեղերում, ետ դառնան և դան իրենց բնակատեղերն ու բնակավայրերը, մնան խաղաղությամբ, կասկած ու երկյուղ չունենան պարսից զորքերից, որովհետև թագավորը նրանց հրամայել է՝ ոչ ոքի չնեղել, երկրի ժողովուրդից ոչ ոքի չշարժարել, որ կզան ի հնազանդություն շահին և կլինեն շահասեր [թագավորասեր]։ Նրանց որևէ վնաս չի լինի, այլ կապրեն խաղաղությամբ։ Իսկ նրանք, որ համառելով չեն հնազանդվի թագավորի հրամաններին, թագավորը նրանց դեմ մեծ զորք է ուղարկելու, որոնք նրանց ամրոցները գրավելով կավերեն, իսկ իրենց կսպանեն, ընտանիքները կզերեն և ունեցվածքը կհափշտակեն։ Արդ՝ ելեք ամրոցներից, եկեք հնազանդության և եղեք շահասեր և մնացեք խաղաղության մեջ։ Իսկ իշխաններից և նշանավոր անձերից ով ավելի վաղ գա, թագավորը նրան շնորհելու է փառք ու պատիվ, բազում պարգևներ և իշխանական կառավարչություն։

Իսկ Կախեթի երկրի բնակիչները երբ լսեցին մունևտիկների հայտարարության խոսքերը, ումանք խարվելով հավատացին, եկան, եղան շահասեր, ումանք սպանություն ու գերության երկյուղից եկան և եղան շահասեր, ումանք էլ տեսան, թե այսինչ ամրոցը գրավեցին և ամրոցում բնակվողներին նկատմամբ արին սպանություններ ու գերություն, աճաբեկվեցին ու ահալցվեցին, թե միգուցե իրենց ևս այդպես պատահի. այս պատճառով ամրոցներից իջան, եկան եղան շահասեր։

Նաև շահը հրամայեց, որ շահասեր եղածներին բնակեցնեն յուրաքանչյուրին իր շենում և բնակատեղիում և մեծ բարիքների հույսով ու քաջալերությամբ խոսեն նրանց հետ, և նրանց անունները՝ տղամարդկանց ու կանանց, ուստրերի ու դուստրերի և ամեն ընտանիքի գրանցեն թղթի վրա ու պարսիկները իրենց մոտ պահեն։ Նաև նրանց վրա պարսից զորքերից պահակներ նշանակեցին ամեն տեղերում, որովհետև

գուցե մեկը նրանցից փախչի այլ տեղ։ Բայց խաբում էին նրանց և ասում էին. «Այն պատճառով ենք ձեզ վրա պահակապաններ դնում, որպեսզի պարսիկներից ոչ ոք ձեզ չնեղի, կամ ձեր ունեցվածքը չհափշտակի»։ Եվ ուլքեր եկան շահասիրություն, այդպես արին, ինչպես որ պատմեցինք։

Իսկ նրանք, որ չեկան, այլ մնացին իրենց ամրություններում, պարսիկները զնացին նրանց ամրոցների վրա և շատ օրեր տեսակ-տեսակ հնարամտություներով կովեցին ամրոցների դեմ, մինչև որ հաղթելով գրավեցին ու սրածելով անխնա կոտորեցին, որ համարում էին, թե բարի պաշտամունք են մատուցում աստծուն ըստ տիրոջ վկայության։ Ապա ունեցվածքները կողոպտելով ավարում էին, իսկ մնացած կանանց, մանուկներին գերելով բերում էին իրենց բանակատեղը։ Եվ ինչպես ասացի, հիսուն օր մնացին այնտեղ, ամրոց չմնաց, որ չգրավեին և կամ տեղ, որ չավերեին. և միանգամայն ամենալի, հուլիսի ու բազմամարդ Կախեթի և Գրիմի երկիրը ավերի ու ոչնչացման ենթարկեցին։

Եվ Կախեթի ու Գրիմի եկեղեցիների անոթները, սրբությունները՝ խաչ, սկիհ, ավետարան, բուրվառ, շուրջառ և այլ անոթներ ու սրբություններ, որոնք մեծարժեք ու թանկագին էին և դանազան ընդելուզումներով, ակնհերով, մարդարիտներով հորինված էին, շահը սրանց համար հրամայեց, որպեսզի չչարդոտեն, այլ տանեն Սպահան քաղաքը և դնեն արքունի դանձարանը։ Իրանք այնտեղ արքունական դանձարանում են մինչև այսօր, որ մեր ազգականներից [հայերից] շատերը վկայեցին՝ այդ սրբություններին ականատես լինելով։ Նաև Քրիստոսի անկար պատմությանն են ուրիշ սրբությունների հետ այնտեղից տարել և գտնվում է Սպահան քաղաքի նույն դանձարանում, ուր դեռևս լույս են վառում նրա առջև. այս խոսքեր ասողները իրենք իրենց աչքերով տեսել էին, իսկ դրանք վստահելի մարդիկ էին։

Այդ երկրի բազմաթիվ ավերումներից հետո շահը շարժվեց այնտեղից և եկավ երկու երկրների՝ Կախեթի ու Քարթլիի սահմանը և այնտեղ բանակ զարկեց։ Հրամայեց իր զորքերին՝ չնեղել ու չշարժարել Քարթլիի երկրի բնակիչներից որևէ մեկին. իսկ եթե պարսից զորքերի, մարդկանց և անասունների կարիքների համար որևէ բան պետք գա, գավառա-

ցիներին փողով զնեն և ըստ վաճառողի պահանջի վճարեն զինն: Նաև շահը հրամայեց, որ մունետիկներ էլենն շրջեն Քարթլիի բոլոր գավառները և բարձրաձայն հայտարարեն, թե հրաման է մեծ ու աշխարհաշեն թագավոր Շահ-Աբասից, որ Քարթլիի երկիրը իր բոլոր բնակիչներով իր իշխաններով ու ռամիկներով խաղաղության մեջ մնան, իսկ նրանք բոլորը, որ էլի էն բերդերն ու ամուր տեղերը պարսից զորքերից երկյուղելով, այսուհետև թող չվախենան ու կասկած չունենան, այլ իջնեն իրենց բնակավայրերը և զբաղվեն իրենց գործերով, շինարարութեամբ, և սեր, խաղաղություն ու երթևեկություն լինի պարսից ու վրաց ազգերի միջև, քանզի Քարթլին իմ երկիրն եմ համարում և չեմ ավերի ինձ ու Լավասափ թագավորի համար, որովհետև նրան ինձ որդի, հղբայր ու բարեկամ եմ համարում, և երբ նա գա, նրա երկիրը իրեն եմ հանձնելու, իսկ ես զնալու եմ իմ երկիրը: Արդ՝ եթե Լավասափ թագավորը կամենա և գա այդպես եմ անելու, իսկ եթե չգա, ահա գավառապետը, որ Քարթլի երկրից է, վրաց ազգից և մեզ հետ է, Քարթլի երկիրը կհանձնեմ գավառապետին, իսկ ես կգնամ իմ երկիրը:

Նաև շահը պատվիրեց գավառապետին, որ նա իր ծառաներից ուղարկի երկրի բոլոր վայրերը, որպեսզի սույն օրինակով խոսեն գավառների բոլոր բնակիչներին նրանց հավատացնելու համար: Նաև գավառապետին էր խաբում դատարկ ու գայթակղիչ հույսով՝ ասելով. «Լավասափը թե գա, թե չգա, քեզ եմ տալու Քարթլիի իշխանութունը»: [Այսպես էր խոսում] որ գավառապետի ծառաները նույնպես խոսեին գավառացիների հետ: Եվ այս ձևով սուտ ու գայթակղիչ խոսքերով խաբեցին բոլոր գավառացիներին, որոնք ոչ կովով, ոչ խոովովյամբ, այլ սիրով ու խաղաղությամբ բոլոր գավառացիներին համոզեցին, իջեցրին ամրոցներից և բնակեցրին գյուղերում: Սրա հետևանքով պարսից բանակի բոլոր կարիքները հոգացվում էին՝ մարդկանց ու անասունների. և ոչ մի կողմից պարսից զորքին վտանգ չէր սպառնում, այլ բոլոր կողմերից գտնվում էին խաղաղության ու անդորրության մեջ:

Բայց Քարթլի երկրի բնակիչները երկյուղով կասկածում էին, թե գուցե չգա Լավասափը, և այդ քենի պատճառով շահը հրամայի իր զորքերին ավարել ու գերել Լավասափի

իշխանության երկիրը: Այս բանը պարսից զորականները նույնպես ասում էին և խոսում գավառացիների հետ. այլև ասում էին. «Եկեք դուք էլ գրվեցեք շահասեր, որպեսզի գերության շատնվեք, ինչպես Կախեթի ժողովուրդը, որովհետև ուլթեր շահասեր գրվեցին, գերության շատնվեցին»: Այս պատճառով Քարթլի երկրից շատերը եկան գրվեցին շահասեր, և ուլթեր շահասիրության էին գալիս, իրենց և իրենց ընտանիքի բոլոր անդամների անունները գրում էին թղթի վրա, և պարսիկները պահում էին իրենց մոտ: Իսկ արձանագրված շահասերներին բնակեցնում էին յուրաքանչյուրին իր տեղում մեծագույն բարիքների ու խաղաղության հույսով:

Եվ մինչդեռ շահը նստում էր երկու երկրների սահմանի վրա, նոր հնարամտություններ արեց: Իր խորհրդականներից մեկին, որ ավելի մեծ իշխան էր ու փառքի արժանացած նախարար՝ Սարու խոջա անունով, նշանակեց խաղաղության դեսպան և սիրալիք նամակով ուղարկեց Պաշխաշուխ Լավասափի մոտ. պատգամագիրը հետևյալ ձևով էր.

«Արցաջ Շահ-Աբաս արքայից բազում սիրով ողջույն թող հասնի վրաց Լավասափ արքայիդ: Շատ անգամ քեզ սիրով գրեցինք և ցույց տվինք մեր սրտի քո նկատմամբ հղած բարեկամութունը, բայց դու շանսացիր և չհավատացիր մեր խոսքերին: Արդ՝ ահա գործից նկատի ունեցիր և հավատա, ինչպես որ տեսնում ես, Թամրազի երկիրը ավերեցի, իսկ քոնը ահավասիկ շեն ու ամբողջական պահել եմ քեզ համար և սպասում եմ քո գալստյանը: Արդ՝ մի դանդաղիր գալուց և անմիտ ու անխելք խրատատուններին մի՛ լսիր և քեզ թագավորութունից զրկիր. քանզի իմ սրտում ոխ ու նենգություն չկա քո նկատմամբ, ինչպես որ դու բնավ ոչ մի վնաս չես արել ինձ: Իսկ քո գալը նրա համար եմ խնդրում, որովհետև ինչպես մեր նախնիների ժամանակ միաբանություն կար երկու ազգերիս միջև, այնպես էլ կամենում եմ, որ մեր ժամանակներում լինի: Եվ մենք հյուսիսային բոլոր կողմերը, որ Արաքս գետից այս կողմն են, հանձնենք քեզ, որ դու լինես վերակացու և հրամայող այս կողմերի բոլոր իշխանների վրա, որպեսզի քո այս կողմերի հոգացութեամբ և մենք անհոգ լինելով՝ մյուս կողմերը հոգանք և թշնամիների դեմը առնենք. ողջ եղիք»: Այս նամակը գրեց, տվեց Սարու խոջային և այլ

խարդախութեան շատ խոսքեր ու հնարամտութիւններ, որ ամբարեղ էր իր սրտում, բանալոր պատվիրեց նրան, թե ինչ հնարքով ուղում է լինի, համողիր կալսաստիճան գալու շահի մոտ: Իսկ Սարու խոջան գնաց Պաշխաշուխ, հանդիպեց կալսաստիճան, մատուցեց ողջունն ու նամակը: Երբ նամակը կարդացին, հասկացան, որ բոլոր խոսքերը սուտ են. թե կալսաստիճան, թե մայրը, թե քույրը և թե Քամրազը չհամաձայնեցին: Թեպետ Սարու խոջան բազում ու զանազան կերպերով հորդորում էր կալսաստիճան, սակայն չհավատացին:

Օրեր հետո շահի խոսքերին պատասխան գրեցին հետևյալ ձևով. «Թե ճշմարիտ են քո խոսքերը, և ստույգ կամենում ես, որ մեր միջև բարեկամութիւն լինի, ահա քո սիրո ու խաղաղութեան նշանը թող այս լինի. որ դու շին ու ամբողջ թողնես մեր երկիրը, և մեր ժողովուրդը մնա իրենց տեղերում, իսկ դու քո փոխարեն քո իշխաններից մեկին թողնես այդտեղ, որպեսզի ամեն սեր ու միաբանութիւն և զաշնագրութիւն, որ դու կամենում ես, նրա միջոցով քեզ հետ հաստատենք, իսկ դու մեր երկրից ելնես, գնաս, մենք զանք մեր երկիրը տիրենք և քեզ հետ մնանք սիրո ու միաբանութեան մեջ. ողջ եղիր»:

Շատ հնարամիտ խոսքերից հետո, երբ Սարու խոջան տեսավ, թե չհավատացին, կալսաստիճան նամակը առավ, եկավ շահի մոտ, նրան հայտնեց բոլոր խոսքերը և նրանց հաստատակամութիւնը:

Շահ-Աբասը այս պատասխանը լսելուց հետո ամբողջ բանակով շարժվեց, եկավ Գորիից վերև ճանապարհի վրա, որպեսզի գնա Պաշխաշուխ և այնտեղ ճանապարհի վրա բանակեց: Այս տեղում բանակելու պատճառը հետևյալն է, որպեսզի եթե վրաց ազգից մեկը իշխան կամ ռամիկ, կամ նա փախչել ու գնալ Պաշխաշուխ, չկարողանա գնալ:

Այստեղից շահը Սարու խոջային կրկին ուղարկեց կալսաստիճան մոտ խոսքով ու նամակով, որ գուցե խաբովի, գա, բայց չեկավ: Երբորդ անգամ նույն Սարու խոջային ուղարկեց կալսաստիճան մոտ, դարձյալ չեկավ:

Շատ գնալ-գալուց ձանձրացան կալսաստին ու յուրայինները: Վերջին անգամ Սարու խոջայի նկատմամբ անարգալից գործ արին, որպեսզի շահը նրանց մոտ այլևս դեսպան

չուղարկի: Այդ անարգանքի գործը, որ արին, հետևյալն էր: Նրա ամեն ինչը հափշտակեցին, ամբողջովին մերկացրին զենքից ու զարդից, հագուստներից, ձիերից, մինչև իսկ այն ջորին, որն ինքը հեծել էր, առան ու իրեն հետիոտն ճամփու գրին, որ գնա: Մեծ սպառնալիքներով կալստիճանին, որ այլևս չգա. և այսպես անարգված Սարու խոջան եկավ շահի մոտ: Իսկ շահը երկայնամտութեամբ տեղում համբերում էր և միտքը վարժեցնելով շարիքների ու նենգութեան խորհուրդներ էր մտորում կալսաստիճան ու Քամրազի համար:

Մինչ շահը այս վարանքի մեջ էր և ելք չէր գտնում այդ վիճակի համար, հենց այդ օրերին շարիքների սպասալոր, անեծքի որդի, զեկերի կողմից գրգռված, սատանայի ներգործութեամբ կրող մի մարդ թիֆլիսից ելած եկավ արքունի բանակը և շահին ծանուցում հայտնեց, թե խնդիր կա կալսաստիճան բերելու տերութիւն. «Եթե ստույգ կամենում ես և վնաս չես տա, ես կգնամ, նրան կրեւում քեզ մոտ»: Մարդու այդ խոսքի վրա շահը շատ զարմացավ. մարդուն հարցրեց, թե դու ինչպե՞ս կարող ես բերել նրան. մարդը ասաց. «Մենք բարեկամ ենք կալսաստիճան հետ, որովհետև նա կնունքով իմ սանիկն է, մենք միմյանց հանգեպ մեծ վստահութիւն ունենք, այդ պատճառով գիտեմ, որ նա կհավատա իմ խոսքերին»: Իսկ շահը այս խոսքի ժամանակ անպատմելի ցնծութեամբ լցվեց, քանզի այն գործը, որի համար նա ծանր շարժարաններով ջանք էր թափում, չէր լինում, որը երկար ժամանակ ցանկանում էր, բայց չէր հասնում, այժմ շատ հեշտութեամբ գլուխ է գալիս: Այս պատճառով այդ մարդուն մեծ դանձեր ու պարգևներ, մեծ փառքի հասցնել խոստացավ, եթե կալսաստիճան բերի:

Իսկ շարքաբաստիկ ու անզգամ այդ մարդը, որ դարձավ բրիտանացիների թագալորութեան կործանման պատճառ, գնաց Պաշխաշուխ կալսաստիճան ու Քամրազի մոտ և շատ օրեր խոսեց կալսաստիճան հետ համողիչ ու թուլացնող խոսքերով, մինչև որ նրա հաստատամտութիւնը կտորեց: Բայց Քամրազը, կալսաստիճան մայրն ու քույրը և նրանց բոլոր հավատարիմները չէին լսում այդ մարդու խոսքերը, այլ քամահրում էին, քանզի ստույգ գիտեին, թե շահի կախարգային հնարներն են: Բայց սպառնալի բնակարան եղած այդ մարդը, ինչպես օձը

Եվ ային, Թեքեց, դարձրեց Լավասափի կամքը շահի մոտ գր-
նալու: Իսկ Լավասափի մայրը, քույրը, Քամրազն ու իշխան-
ները և բոլոր բարեկամները արտասովորին լացում ու ողբում
էին և ասում. «Մի՛ մատնիր քեզ թո թշնամու ձեռքը, որով-
հետև նա թո թշնամին է, ոչ թե բարեկամը և քեզ կորցնել է
ջանում»: Իսկ Քամրազն ասում էր. «Մի՛ հավատա այդ ան-
հավատին ու խորամանկ գազանին, որովհետև դա մեզ
կորցնել է ջանում»: Իսկ Լավասափը մտքով շարիքների ծառա
մարդու խոսքերին ավելի էր հավատում, քան թե իր բարե-
կամի խոսքերին: Եվ ամենքին այս էր պատասխանում, «Թե
ահա շահը եկել է, նստել մեր երկրում և ինձ խնդրում է, ոչ
խաղաղություն անենք. եթե չգնամ, ամբողջ երկիրը ավերե-
լով կոշնչացնի, եկեղեցիները կքանդի, քրիստոնյաներին կզե-
րի, և այս ամենը կլինի իմ պատճառով: Փոխանակ որոշ ժա-
մանակ ապրեմ խղճի տանջանքով և այդքան մարդկանց
կյանքի պարտական, ավելի լավ է, որ ես գնամ շահի մոտ և
ամբողջ երկիրը ազատեմ, որպեսզի իմ պատճառով երկիրը
չավերվի: Հույսս դնելով աստծու վրա ուղիղ գնում եմ նրա
մոտ. և այնտեղ ինչ էլ պատահի ինձ՝ թե մահ, թե կյանք,
տիրոջ կամքը թող օրհնյալ լինի»:

Արդ՝ այդպիսի ցնդաբանական խելքով Լավասափը շահի
իր բարեկամներին, այլ հավատաց շահի երդման խոսքին,
եկավ Պաշիաշուխից, եկավ շահի մոտ: Եվ երբ նրա գալու
լուրը շահին բերին, չէր իմանում, թե ինչ ձևով ցնծա:

Եվ երբ Լավասափը եկավ, մոտեցավ պարսից բանակին,
բոլոր իշխաններով ու զորքով շահը ինքը եկավ նրան ընդա-
ռաջ. և երբ միմյանց տեսան, սիրով, խնդությամբ ու մեծ
շուքով ողջույն ուրիշ իրար: Իսկ այն ինչ շահն էր, սրտով ու
հոգով ցնծում էր, քանի որ այս օրը նրա համար ավելի եր-
ջանիկ օր էր, քան նրա ամբողջ կյանքի որևէ օր, որովհետև
նրա շար կամքը կատարվեց, որ երկար ժամանակ բաղձում
էր, ինչպես հատուկ է խորամանկ ու օձաբարո պարսից ազ-
գին, մանավանդ այս շահին՝ բազմահարազյուտ վիշապին,
նախապես մեծ սիրով ու մեծարանքով ընդունեց նրան, միշտ
սուտ ու դատարկ խաբեբայական խոսքերով ի հաճույս նրա
էր խոսում, մինչև որ վրաց ողջ երկրում այնպես լուր տա-

րածվեց, թե շահը Լավասափին պահանջում էր, ուրիշ պատ-
ճառով չէր, եթե ոչ սիրու ու միաբանություն:

Ապա շահը իր բանակով այնտեղից շարժվեց, գնաց Թիֆ-
լիս՝ իր հետ տանելով նաև Լավասափին. և նրան պահում
էր իրեն հավասար մեծ փառքով. մշտապես խոսում էր նրա
ցանկություն համապատասխան ու իրեն մատրիմ էր ցույց
տալիս նրան:

Այս Լավասափը, այն ժամանակ, երբ նոր էր թագավոր
նստել, որոշ տարիներ հետո և շորս-հինգ տարի շահի գա-
լուց առաջ, զրույցի կարգով մի պատմություն եղավ Լավա-
սափի պապի՝ Սիմոն խանի մասին, որին օսմանցիները բռ-
նեցին, տարան Կոստանդնուպոլիս և այնտեղ թաղեցին, — իր
պապի վրա Լավասափի սիրտը տաքացավ, ցանկացավ իր
պապի՝ Սիմոն խանի նշխարները բերել իրենց հայրենի գե-
րեզմանատունը և թաղել իր այլ նախնիների ու ընտանիքի
մոտ: Երբ տեղեկացավ, գտավ ինչ-որ մարդիկ, որոնք գի-
տեին Կոստանդնուպոլիս քաղաքում թաղված Սիմոն խանի
նշխարների տեղը, իսկույն այդ իմացող մարդանց ուղարկեց
Սիմոն խանի մասունքները բերելու: Նրանք գնացին Կոս-
տանդնուպոլիս, նրա մասունքները հանին և բերին, հասց-
րին Թիֆլիս: Եվ երբ այդ մարդիկ եկան և բերին Սիմոն խա-
նի մասունքները, զուգադիպեց այն ժամանակին, երբ շահը
Թիֆլիսում էր: Երբ շահը իմացավ, թե Սիմոն խանի մա-
սունքները բերին, լցվեց սատանայի խորհրդով ու խարդա-
խությամբ: Սա (Շահ-Աբասը) այնքան թշնամի էր քրիս-
տոնյաներին ու նրանց արյանը ծարավի, որ նա կենդանի
մարդկանց սպանությամբ ու դերությամբ շահացավ, այժմ
մեկույթի ոսկորների նկատմամբ էլ թշնամություն արեց, որով-
հետև խիստ հրամանով հրամայեց իսկույն բերել իր առջև
Եվ երբ հրամանը կատարվեց, ասաց. «Սրան ես ձեռնից ավե-
լի եմ պատվում ու փառավորում, քանի որ դուք թագավորների
արժանի պատվը չեք իմանում, ես կամենում եմ սրան
ուղարկել իմամուղա, որպեսզի մեր նախնի թագավորների
ու պետերի հետ փառավորվի»:

Արդ՝ այսպիսի կախարդական խոսքերով Սիմոն խանի
ոսկորները ուղարկեց Պարսկաստան և շիրոկեց վրաց հողում

Թաղել: Ոչ որ շիմացավ, թե ինչ արին, ուր տարան, և այսպես անհայտացնելով կորցրին:

Եվ այսքան ժամանակ, որ շահը մնաց Վրաստանում, իր իշխանությունն անբռնելով ամբողջ երկիրը: Բայց թամբազի բովանդակ երկիրը հայտնի կերպով այնպես արեց, որ լինի պարսից իշխանության տակ, իբր թե իր թրով է գրավել այն. այդ պատճառով պարսից զորք ուղարկեց, որ վերաշինեցին թամբազի երկրում եղած բերդերը և նրանցում դրեց պարսից զորքեր. և Սելիմ խանին, Փեքար խանին, Բեքդաշ խանին նշանակեց այնտեղ իշխաններ և զորապետներ, որպեսզի երկիրը պահեն պարսից իշխանության ներքո:

Կախեթի ու Գրիմի բնակիչներին վերջ տվեց՝ ոմանց սպանելով, ոմանց գերեվարությունները, իսկ որոնք մնացին, գրվեցին շահասեր. սրանց մասին հրաման եղավ՝ բոլորին տեղահանել, քչել տանել Պարսկաստան: Այս գործը զուլա բերելու համար նշանակեց իշխաններ ու զորքեր, որպեսզի նախապես արված գրով ու թղթով, որ դրանց անունները գրեցին ու իրենց մոտ ունեին, այդ գրով սկսեցին ամենքին քննել իրենց ընտանիքներով, ապա դրանց բոլորին իրենց ընտանիքներով, ունեցվածքով իրենց տեղերից հանեցին. ումը որ հանում էին, բերում բնակեցնում էին Կուր գետի ափին՝ այն տեղը, որ Ղազրին է կոչվում, քանզի այնտեղ որոշեցին բանակատեղին: Այսպես արին, մինչև որ բոլոր շահասեր գրովածներին հանին: Երբ հանելը վերջացավ, նույն գրով և մատյանով շարժեցին այնտեղից, քչեցին, որ տանեն պարսից աշխարհը: Բերին հասցրին մինչև Ղազրին. քաղաքը, այստեղից տարան Ֆահրապատ քաղաքը՝ Երբ հասցրին Ֆահրապատ, նրանցից ոմանց բնակեցրին Ֆահրապատ քաղաքում՝ թե վրացիներից, թե հայերից, թե մահմեդականներից և թե հրեաներից: Նրանցից շատ մարդիկ բնակեցրին գյուղերում և սրանց բոլորին տներ, այգիների ու հանդերի տեղ տվին: Այս ձևով ավերեց վրաց Կախեթի ու Գրիմի գավառները և տարավ լցրեց Ֆահրապատի գավառը:

Բայց այս գնացած ժողովուրդը շահեց այն երկրում, որովհետև սովոր չէր երկրի տաք ու խոնավ, դաժան, շունչը կրտորող մզլած օդին, նաև ուտելիքներին ու խմելիքներին, երկրի կենցաղավարությունը: Այս պատճառով (մարդիկ) սկսեցին

կոտորվել, մեռնել: Եվ կարճ միջոցում այնքան կոտորվեցին ու մեռան, որ հազիվ թե ամեն տան մի հողի մնաց: Իսկ նրանք, որ մնացին, մի առ ժամանակ հետո հիվանդություններից, ցավերից ճնշված ու մաշված ցավագար դարձան և չէին կարողանում ձեռքի աշխատանք կատարել իրենց կյանքի ապրուստը հողալու համար: Նաև պանդխտությունից ու օտարությունից դարձան աղքատներ, չքավորներ, ուստի ինչ ունեին, վաճառեցին, կերան: Չքավորության պատճառով վրացիները բողոքեցին շահին, որ այդ օրերին Ֆահրապատում էր, իրենց կրած չքավորության ու սովի համար: Շահը պատասխանեց նրանց, թե ուրացեք ձեր հավատը և եղեք կրոնով մահմեդական, և ես ձեզ կտամ շատ բան, որ ուտեք, ապրեք: Իսկ նրանք սովի կարիքից հարկադրված կատարեցին շահի հրամանները և դարձան մահմեդականներ: Սակայն շահը նրանց շատ բան չտվեց ըստ իր խոստումի, այլ ստեց, որովհետև խարում էր նրանց: Բայց յուրաքանչյուր անձի՝ թե մեծ, թե փոքր, տվեց մի-մի դահեկան (ոսկի դրամ) և ուղարկեց իրենց տները:

Արդ՝ ոմանք զովում են այս շահին, թե քրիստոնեասեր, աշխարհաշեն ու խաղաղարար թագավոր էր. այս է նրա քրիստոնեասիրությունը, որ քրիստոնյաների ողջ երկիրը՝ հայոց, վրաց ավերեց և բոլորին սպառեց սրով, սովով ու գերություններով, իսկ մնացյալներին քչեց տարավ Ֆահրապատ ու Սպահան, որպեսզի նրանք էլ այնտեղ օրավուր սպառվեն պեսպես ձեռքով: Եվ ով որ նրան գովաբանել է կամենում, թող նախապես նայի ու տեսնի նրա արած գործերը, որ արեց քրիստոնյաների նկատմամբ, ապա գովաբանի նրան:

Արդ՝ ինչ ձևով պատմեցինք շահի արարքը թամբազի երկրի շահասեր գրված ժողովրդի հանդեպ, այս նույն օրինակով նա վարվեց Լավասափի երկրի շահասեր գրված ժողովրդի հետ: Որովհետև նրանց վրա նույնպես նշանակեց զորք ու զորապետ, որոնց նախապես արված գրով ու թղթով հանեցին իրենց տեղերից և քչին տարան Պարսկաստան: Բայց այն ժողովուրդը, որ Քարթլի երկրից էր, շտարան Ֆահրապատ, այլ տարան Սպահան և բնակեցրին Սպահանի լեռնային գյուղերում, որտեղ բնակեցրել էին հայազգիներին: Եվ այժմ ներկա ժամանակ, որ մեր թվարկության 1107

[1658] տարին է, երբ գրում ենք պատմութիւնս, այս վրացիք բոլորն իրենց հավատը ուրացան, դարձան մահմեդական և այնքան դաժան ու դահիճներ. էին քրիստոնյաների համար, որ երբ որևէ ճանապարհի մենք նրանց պատահելիս բարևում ենք, մեր բարևը չեն առնում, բարև առնելը մեզք են համարում իրենց համար: Նաև հայհուլիով անարգում են իրենց հայրերին ու նախնիներին, թե նրանք անհավատներ էին և անհավատ մեռան: Նաև իրենց նոր հավատի վրա գոհանում են աստուծոց, թե այս է ճշմարիտ հավատը, որ այժմ ստանձնեցինք: Այլև վրացի այս ժողովրդից այն ժամանակ, երբ նոր բերին Սպահան, մի մասը բաժանեցին և առաջ քշելով՝ տարան Շիրազի գավառը և այն գավառը, որ անվանում են Աստիփաս. սրանք նույնպես պեսպես ձևերով սպառվեցին, իսկ մնացած բոլորը միանգամից ընդունեցին Մահմեդի անօրեն կրոնը:

Այն ժամանակ, երբ շահը թիֆլիսում էր և իր մոտ էր պահում Լավասափին, այդ պատճառով խնդում ու բերկրանքով ուրախանում էր, որ նրան իր ցանցը գցեց. բայց Քամրազի համար տխրում էր, որ չկարողացավ բռնել. նրա համար մըտորում էր իր սրտի մեջ, գետածի՞տու խշտու վրա, թե ինչպես կարողանա կորցնել նրան:

Այդ պատճառով և նրա համար հնարում է մի այսպիսի որոգայթ. մի մարդու համոզեց և ուղարկեց Պաշխաշուխ, նրան մատնացույց արեց հնարավոր բոլոր միջոցները՝ հաստատ պատվիրելով, թե ինչ կերպ ուզում է լինի, Քամրազին ծածուկ կամ բացահայտ սպանի:

Եվ այս մարդուն, որ ծածուկ ուղարկեց Քամրազին սպանելու, իր նախարարներից թաքուն ու գաղտնի արեց. ոչ ոք չգիտեր: Եվ այս մարդը գնաց հասավ Պաշխաշուխ. որոշ օրեր ելումուտ արեց Քամրազի եղած տեղը, դիտեց, տեսավ ամեն ինչ, ճանապարհը, տեղը, որտեղ գիշերը քնում էր Քամրազը. տեղը վերնահարկ էր, ուր փայտյա սանդուղքով ելնում-իջնում էին: Եվ մի օր ծածուկ, որևէ մեկից աննկատ այդ մարդը սպասելով հսկեց գիշերը, որ գուցե Քամրազին սպանելու հարմար ժամ գտնի. և երբ կես գիշեր եղավ, իմացավ, որ բոլորը քնել են, նաև գիշերապահ տղամարդիկ, որ քեշիկչիներ են կոչվում, քնել են, այդ մարդը գաղտ ու թա-

քուն եկավ և փայտյա սանդուղքով ելավ վերնահարկը, որտեղ քնած էր Քամրազը. սա տեսավ, որ վերնատան մի կողմում միևնույն անկողնում քնած էին երկու հոգի, նաև մյուս կողմում մի անկողնում նույնպես երկու հոգի էին քնած: Եվ սրբանք, որ քնած էին վերնահարկում մի անկողնում, Քամրազն ու իր կինն էին, իսկ մյուս անկողնում երկու աղախիններն էին, որոնք սպասավորության համար նրանց մոտիկ քնած էին մի անկողնում: Իսկ այն մարդը, որ եկել էր սպանության նպատակով, չկարողացավ ստույգ վերահասու լինել, թե նրանցից որ մեկն է Քամրազը: Այս պատճառով մտածեց սպանության գործը այդ գիշեր թողնել և գնալ, իսկ առաջիկա օրերում կդիտի ստույգ կերպով, վերահասու կլինի, թե նրանցից որ մեկն է Քամրազը, ապա գալով՝ նրան անվրեպ կտա կսպանի: Բայց այս մտադրությունը աստված գցեց այն մարդու միտքը և դարձրեց նրան, որպեսզի չսպանի քրիստոնյաների թաղավորին, այլև շահի խարդախ շարունջունը հայտնելով՝ նրան խաշտառակեց: Արդ՝ այս մտադրությամբ մարդը դարձավ վերնահարկից և սկսեց իջնել այն փայտյա սանդուղքով, որով եկել էր: Եվ մինչդեռ մարդը իջնում էր, իր իսկ թուրը, որ կապել էր մեջքը, կպավ սանդուղքին, որից աղմուկ առաջացավ, աղմուկից գիշերապահների շունը արթնացավ ու սկսեց մարդու վրա հաչել, շան հաչոցից պահապանները արթնացան, տեսան մարդուն և շրջապատելով բռնեցին նրան: Եվ նրանք, որ տեսան այդ մարդուն, բոլորը սարսափահար ապուշ կտրեցին: Առավոտյան Քամրազը և իշխաններից ուրիշները այդ մարդուն կանչեցին իրենց առջև և հարցումով տեղեկացան: Մարդը ամեն ինչ ստուգությամբ խոստովանեց, թե շահն է ուղարկել իրեն, թե կգնաս, Քամրազին կսպանես:

Այդ ժամանակ Քամրազը սրտի խորքից հառաչելով ասաց. «Արդ՝ եղբայրներ, տեսեք, շահը իմ երկու որդիներին ինձներից առավ տարավ իր մոտ և ներթնացրեց, իմ մորը տարավ, կորցրեց Պարսկաստանի խորքերում, այժմ իմ երկիրը ամբողջովին ավերեց, իմ ողջ ժողովուրդն ու ազգը գերեվարեց, իսկ ես միայն իմ գլուխը առա, փախցրի և գտնվում եմ պանդխտության մեջ: Բայց նա, այնուամենայնիվ, չի գոհանում, այլ զեռես ձգտում է հեռվից ինձ էլ սպանել: Արդ՝ նա, որ

այսքան ջանք է գործադրում, որ ինձ սպանի, ես ի՞նչ հույսով համարձակվեմ նրա մոտ գնալ: Եվ այն բոլորը, որ տեսան այս գործը և լսեցին Քամրաղին, արդարացրին նրա խոսքերը: Եվ Քամրաղը այն խղճալի մարդուն շտպանեց, այլ ազատեց, որ դնա իր ճանապարհով: Իսկ ինքը շտտահեց մնալ Պաշխաշուխում, գուցե շահը նրա համար ուրիշ որոգայթներ հնարի, այլ ելավ այնտեղից, գնաց Գաղիանի երկիրը և (ավելի) հեռացավ շահից:

Արդ՝ այն բոլոր շարահնար գործերի որպիսութունը, որ շահը կատարեց վրաց երկրի նկատմամբ, մենք ի վիճակի շինք գրել, որովհետև խոսքի սահմաններից շատ վեր է: Քանզի մի ամբողջ տարի նա իր ողջ պարսից բանակով մնաց այնտեղ՝ վրաց երկրում և մի տարի հետո մտածեց դուրս գալ վրաց երկրից և գնալ պարսից աշխարհը:

Բայց շահը վարանքի ու խոտվքի մեջ էր, թե ինչպես կարողանա կորցնել կավասափին: Սրա համար նա առաջարկեց իր նախարարներին կավասափին ասել, թե որովհետև բարով ու աստծու հաջողութեամբ դու եկար շահին տեսութեան, և ձեր միջև եղավ սեր ու միաբանություն, արդ՝ դաշինքի սիրո և ուխտի հաստատութեան համար նաև վայել է ու պատշաճ, որ դու նրա հետ գնաս երեք-չորս օրվա ճանապարհ, ինչպես ուղեկից մինչև թո երկրի սահմանները, ապա դառնաս թո աթոռը, որովհետև շահը ելնում, գնում է թո երկրից, (այդպես) հարմար է: Այսպիսի խոսքեր շահը ինքն էլ ասաց կավասափին զրույցի ընթացքում: Եվ կավասափը քանզի իր սրտում կեղծավոր խորամանկութուն չուներ, որպես հատուկ է քրիստոնյաներին, բարեհաճեց անել նրանց ասածը:

Երբ շահը Քիֆլիս քաղաքից շարժվեց, իր հետ վերցրեց նաև կավասափին համաձայն յուր նախապես նշանակված պայմանի:

Երբ երեք-չորս օրվա ճանապարհ գնացին, նոր մի բան էլ շահը առաջարկեց իր նախարարներին, որ կավասափին ասեն: «Որովհետև այսքան օրվա ճանապարհ եկար, շատ լավ արիք, արդ՝ խնդրում ենք, որ քեզ դժվար չլի՛վա, որ առաջանաս, գաս մինչև Գանձակ քաղաքը: Ե՛հ հարմար չի՛լի է՛ այնտեղ՝ Գանձակում կանչել իր առջև այս կողմերի բոլոր իշխաններին՝ Եամախու, Երևանի և ամենքին կամենում է նշանակել, որ

մնան թո իշխանութեան ներքո, իսկ քեզ վերակացու և հրամայող բոլորի վրա, որպեսզի բոլորը ամեն ինչ թո հրամանով կատարեն, ինչ որ արվելու է»: Կավասափը սրան էլ համաձայնեց և շահի հետ գնաց մինչև Գանձակ: Երբ այնտեղ Գանձակում շատ օրեր անցան, ոչ մի նշան չերևաց շահի այն խոսքերի, որ ասել էր նախարարներին, այլև շին երևում իր արձակման նշան ու նշարանք: Այդ ժամանակ կավասափը իր հոգում հասկացավ, թե հնարանքներով իրեն հանին իր երկրից, այլևս շին թողնի գնալ իր երկիրը. այս պատճառով կավասափը գտնվում էր մեծ տրամոթեան ու մտածումների վարանքի մեջ, և թեպետ մտածում էր, բայց ոչ մի փրկութեան հնար չէր կարող գտնել:

Նաև բազմարվեստ հնարագյուտ Եահ-Աբասը իր նենգավոր կասկածների մեջ խորհում էր, թե միգուցե կամ գիշերը, կամ ցերեկը կավասափը հարմար պահ գտնի, որևէ հնարքով փախչի: Այս կասկածների պատճառով նոր հնարանքներ ստեղծեց հետևյալ ձևով: Ե՛հ հարմար կավասափին պարզեց մի թագ, որ իրենց գլխին իշխաններն են դնում: Թագը խիստ ազնիվ, պատվական, գեղեցիկ մեծարժեք էր: Թագը պարզավելիս կավասափին սիրով պատվիրեց, թե միշտ երբ ինձ մոտ գաս, սա թո գլխին լինի: Կավասափը շահի մոտ գնալիս միշտ այդպես էլ անում էր:

Օրեր հետո շահը իր գողերին, որոնց մշտապես իր մոտ էր պահում (սրանք հնարամիտ գողեր էին, պեսպես հնարանքների համար շահը սրանց իր մոտ էր պահում, ինչպես, որ այժմ արեց) պատվիրեց, որ թագուն ու գաղտնի գիշերը մտնեն կավասափի վրանը, գողանան հատկապես այն թագը և այլ իրեր: Գողերը արին, ինչպես որ սովորեցին շահից, գողացան թագը և շատ բան նրա ունեցվածքից: Եվ մի օր կավասափին կանչեցին շահի մոտ ըստ մշտապես կանչի: Երբ կավասափը եկավ ու բազմեց, թագը նրա գլխին շէր, ինչպես առաջ լինում էր: Ե՛հ տեսնելով նրան՝ անգետ ձևանալով հարցրեց, — ինչո՞ւ թագը գլխիդ շին դրել, — երբ լսեց, թե գողացել են, այդ ժամանակ շահը ըմբող ձևանալով իրրև բարեկամ ու ցավակից մղկտաց, ափսոսաց: Եվ ապա խոսքը դարձնելով իր նախարարներին, որոնք այնտեղ էին, բարկացավ նրանց վրա, հանդիմանեց, մահվան սպառնալիք

կարդաց և ասաց. «Ինչո՞ւ լավ հոգատարութիամբ ու հնազանդութիամբ ծառայութիւն չեք արել սրան և այնքան անհոգ ու ծուլ եք, մինչև իսկ գողեր են մտնում սրա վրանը և գողութիւն անում, մանավանդ այնպիսի նշանավոր թանկագին բան»: Եվ այս ասում էր թագի համար: Ապա ասաց. «Արդ՝ միգուցե մյուս անգամ գողերը գան, ձեր անհոգութեան հետեւանքով գողանան այլ ինչքեր սրա ունեցվածքից, և մեզ կըրկնակի ամոթ լինի: Արդ՝ դուք պատրաստեցեք քաշ և զգուշավոր մարդիկ, որպեսզի ամեն գիշեր [կամ ամբողջ գիշերը] գիշերապահներ պահպանութիամբ շուրջանակի պահպանեն վրանը, որ սրան որևէ վնաս չպատահի, ապա թե ոչ ձեզ բոլորիդ բնաջինջ կանեն: Նախարարները այսպիսի խտտիվ հրամանները ընդունելուց հետո պահպաններ գրեցին նրա շուրջը, որոնք գիշեր-ցերեկ նրան զգուշութիամբ պահում էին:

Շահը այսպիսի հնար արեց և կալսասփի վրա պահպաններ նշանակեց, որ միգուցե փախչի. և այսպիսի պահպանութիամբ բերեց հասցրեց թավրիդ, իր հետ տարավ Ղազբին, Ֆահրապատ, Սպահան և այնտեղից ուղարկեց Շիրազ քաղաքը նրան հսկողութեան տակ պահելու. այնտեղ նույնպես պահպաններ նշանակեց նրա վրա, որոնք զգուշութիամբ հսկում էին:

Այնպես եղավ, որ շատ տարիներ հետո ոտուաց թագաւորից զեսպաններ եկան սիրո և շատ գործերի համար: Այն օրերին շահը գնացել էր Սպահանի գավառը և նստած էր գետի ափին, որին Ավիքուրան են անվանում. կամենում էր այդ գետի ջուրը բերել, խառնել Սպահանի գետին, քանզի Սպահանի ջուրը քիչ էր. շատ արհեստավորներ ու բանվորներ աշխատում էին ջրուղու վրա, ինքը շահը ևս այս պատճառով այնտեղ էր տեղավորված: Ռուսաց զեսպանները այստեղ գալով հանդիպեցին շահին. շատ խնդիրներ անելու հետ խնդրեցին նաև կալսասփի համար, որպեսզի վերադառնա իր տեղը և մնա շահի հրամանի ու հնազանդութեան ներքո: Խորամանկ խորհրդով Շահ-Աբասը խնդրութիամբ ընդունեց այդ խոսքը և հոժարութիամբ ու զվարթութիամբ հանձն առավ կատարել այդ խնդրանքը՝ կալսասփին ուղարկել իր տեղը: Այս ձևով համոզելով զեսպաններին՝ ուղևորեց իրենց երկիրը:

Այս անցքերից հետո շահը իր առջև կանչեց այն իշխա-

ներ, որին հանձնված էր կալսասփը. ասաց նրան. «էյ դու կորստյան ու սպանման արժանի, ինչո՞ւ ես թողել կալսասփին, որ մինչև այս ժամանակ կենդանի ապրի, որ այժմ սրանք գան, խնդրեն նրա ազատումը: Արդ՝ եթե շուտափութի չգնաս և չբերես նրա կորստյան լուրը, դու քո խններով հանդերձ բնաջինջ ես լինելու»: Իսկ իշխանը, ստանալով այսպիսի հրաման, շտապ հասնում է Շիրազ քաղաքը և կալսասփի մոտ իրեն ձևացնում, թե սիրո ու խաղաղութեան համար է եկել:

Եվ օրերից մի օր ելան միասին՝ կալսասփն ու իշխանը գետեզրը զվարճանալու. գետում սկսեցին ձուկ որսալ. նախ պարսիկ իշխանը ձեռքն առավ ցանցը, որ պատրաստի գետը նետելու ձկան որսի համար. ինքը դիտավորյալ անհարմար սարքեց ու ծուռ ու թեք ձգեց գետը՝ իրեն ցույց տալով, որ չգիտի: Իսկ կալսասփը՝ շունենալով մտքում որևէ կասկած, ոչ էլ իր անձի վերաբերյալ տարակույս, ցանցը առավ իշխանի ձեռքից, որպես թե ինքը երկրորդ անգամ ցանցը ավելի լավ նետի գետը. և մինչդեռ գլուխը կախ զցած ու խոնարհված ցանցի վրա իր ձեռքում ուղղում էր ցանցը, հետևի կողմից պարսիկ իշխանը հանում է սուրը, որ կապած էր մեջքից, բերում, հանկարծակի հարվածում է կալսասփի պարանոցին. հարվածից կալսասփի գլուխը անջատվեց իրենից, թռավ ընկավ հեռու: Նույն պարսիկ իշխանը կալսասփի գլուխը առած բերեց նախապես հիշված Ավիքուրան կոչված տեղը՝ արքունի բանակը, շահի առջև՝ Շահը տեսնելով գլուխը և իմանալով, որ կալսասփի գլուխն է, իր սրտի գաժանութիւնից ցասումով ու բարկութիամբ լցվեց գլխի դեմ, անարգեց, հայհոյեց և քամահերկով խփում և այս ու այնտեղ է ձգձգում: Եվ շատ ժամեր սրտի ցասումից զբաղվեց գլխով, ապա բռնեց գլխի ականջից, շարտեց հետո, և գլուխը գլորվելով գնաց վառիվայրով, քանզի տեղը վառիվայր էր: Արդ՝ այսպես եղավ թիֆլիսի կալսասփ թագավորի կյանքի վախճանը, որովհետև շարահնար Շահ-Աբասը այս ձևով կորցրեց նրան և նրա երկիրը գրավեց իր իշխանութեան ներքո:

ԿԱՆԵԹԻ ԹԱՄՐԱԶ ԹԱԳԱՎՈՐԻ ՄՈՐ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՏԱՐՎԱԾ ՆՈՒՅՆ ՇԱՀ—ԱՐԱՍԻ ՁԵՌՔՈՎ

Մինչ թամրազ թագավորը իր Կախեթի երկրում էր, իր իշխանությունը վարում էր խաղաղություն և հնազանդվում պարսիկներին, քանի որ շահը տակավին չէր եկել վրաց երկիրը, փախցրել թագավորին և ավերել երկիրը, որը անցյալ գլխում պատմեցինք, այլ թամրազը դռնվում էր իր երկրում, իսկ շահը Պարսկաստանում, շահը թամրազի մոտ (մարդ) ուղարկեց և պատանդ պահանջեց. նա ուղարկեց իր որդիներից մեկին. շահը մյուս անգամ կրկին պատանդ պահանջեց, թամրազը մյուս որդուն էլ ուղարկեց, շահը երրորդ անգամ պատանդ պահանջեց, թամրազը ուղարկեց իր մորը: Իսկ շահը թամրազի երկու որդուն էլ ներքինացրեց, որպեսզի նրանցից զավակ չծնվի, որ դուցե դառնա նրանց թագավորություն ժառանգորդը: Իսկ թամրազի մորը ուղարկեց Պարսկաստանի խորքերը՝ Շիրազ քաղաքը Իմամղուլի խանի մոտ հսկողություն տակ պահելու համար: Եվ այսպես՝ Շահ-Աբասի հրամանով թամրազի մայրը, որի անունն էր Մարիամ, գրտնրվում էր հսկողություն տակ: Բայց ժամանակներ անց նա նահատակվեց Քրիստոսի աստվածությունը. նույն Շահ-Աբասի ձեռքով քրիստոնեական հավատքի համար նահատակություն վասճանվեց հետևյալ պատճառով: Որովհետև վրաց ազգից Պարսկաստանում կային այլ մեծատոհմիկ կանայք, որ պարսիկների կողմից գերված էին: Նույնպես գերված էին պարսիկների կողմից նաև սրանց որդիները և նշանակված էին մեծ ու առաջին Շահ-Աբաս թագավորի ծառաներ, որովհետև նրանց մեծատոհմիկություն համար դրանց մշտական սպասավորներ ու առաջակալներ էին նշանակել թագավորի համար: Մի օր շահը ինչ-որ խոսք է խոսում այս ծառաների հետ և խոսքի մեջ փորձելու համար նրանց ասում է, թե ինչո՞ւ եք թողնում ձեր մայրերը մնան քրիստոնյա, որ ի վերջո կորուստ է, և չեք դարձնում Մահմեդի հավատին ու կրոնին, որի վերջը արքայություն վայելչություն է: Ծառաները ասում են՝

շատ ենք ասում, բայց չեն դառնում: Արքան ասում է՝ ինչո՞ւ չեն դառնում, իսկ ծառաները քանզի երկյուղից անճար մնացին ու չիմացան, թե ինչ պատճառ բռնեն, կամ ինչ պատանախան տան: Բայց նրանցից մեկն ասել է ոչ թե գիտակցաբար, այլ անգիտակցաբար, երբ մեր մայրերին ասում ենք, թե մահմեդական դարձեք. նրանք մեզ ասում են, թամրազի մայրը քրիստոնյա է, մենք ինչո՞ւ մահմեդական դառնանք:

Այն ժամանակ խորամանկ Շահ-Աբասը այս խոսքը իր սրտում թաքցրել է և օրեր հետո իր իշխաններից մեկին ուղարկել է, որ արքայամորը կամ քրիստոնեությունից մահմեդական դարձնի, կամ տանջալից մահով կորցնի: Եվ իշխանը գնացել է Շիրազ քաղաքը, կանգնել է արքայամոր դռան մոտ, կանչել է նրան և առանց երեսը տեսնելու, դռան դրսի կողմից խոսել է նրա հետ և ասել. «Թագավորի հրամանը այսպես է, որովհետև անհրաժեշտ է, որ դու մահմեդական դառնաս. եթե համաձայն ես, շատ լավ է, իսկ եթե համաձայն չես, լեզվովդ մի բան ասա, իսկ սրտումդ պահիր քո հավատը. մարդկանց աչքին ձևացրու իբր Մահմեդի կրոնն ես ընդունել, բայց ծածուկ քո հավատը դավանիր, որպեսզի մենք ազատ մնանք մեր խղճի տանջանքից, որ քո կողմից է»: Այսպիսի խոսք է ասում իշխանը և լալիս է Հերովդեսի դահճի նման, որ գնաց գլխատելու Հովհաննես Մկրտչին⁷⁶:

Իսկ արքայամայրը ներսից ասաց. «Դու իմ եղբայր, և իմ որդի, ինչո՞ւ ես թաքուն խոսում ինձ հետ, եկ, գեմդիմաց խոսիր, որովհետև ես թագավորի դուստր եմ, թագավորի կին եմ և թագավորի մայր. ես ինքս թագավորություն եմ կառավարել իմ ամուսնուց հետո, մինչև որ իմ որդին շափահաս դարձավ, սակայն անցավոր ու դատարկ է այս աշխարհի մեծությունը. եթե քո թագավորը բովանդակ արարածների տերը լինի և բոլորի թագավորությունը ինձ տա, ես իմ Քրիստոս աստվածը չեմ ուրանա և չեմ փոխանակի նրա սիրո հետ, որ ունեմ նրա հանդես, իսկ դու ինչ որ անելու ես, դու գիտես»:

Արքայամոր հետ երկու վրացի քահանաներ և այլ ծառաներ ու աղախիներ կային. արքայամայրը դարձավ նրանց և ասաց. «Եթե ինձ անգամ առ անգամ կտրատեն, ես չեմ թուլանա Քրիստոսի սիրուց և չեմ դառնա միևնույն հավատից»:

իսկ ձեր օգուտը դուք ընտրեցեք: Իսկ նրանք առհասարակ գոռալուծ լալիս էին ու ողբում իրենց բարեփառ տիկնոջից զրկվելու համար:

Եվ ապա երկար խոսակցությունից, աղաչանքներից ու սպառնալիքներից հետո, երբ եկած իշխանը նկատեց նրա հաստատամտությունը, հրամայեց երկաթե ճանկերով ճղճղել նրա մարմինը և խիստ վիրավորել. բայց նա գոհունակությամբ էր հայտնում աստծուց և արտասուքներով տիրոջից իր համար համբերություն էր հայցում:

Սրանից հետո պղնձի սաղավարտ կարմրեցրին [կրակի վրա] և դրին նրա գլուխը. դրանով էլ շկարողացան նրան հավանության բերել:

Ապա բերին երկաթե բաճ, որով հողն են փորում, խիստ կարմրեցրին և դրին արքայամոր ստինքների միջև՝ կրծքի ու սրտի վրա, ու դրանով նա իր անուշարույր հոգին ավանդեց աստծուն:

Քահանաներից մեկն էլ նրա հետ նահատակվեց, իսկ մնացածները ցրվեցին:

Այս արքայամայրը նախապես պատվիրեց, թե երբ ինձ սպանեն, իմ մարմինը դուրս մի գցեք ի տես ուսմիկների, բայց հետո զղջալուծ ասաց. «Ես որ Քրիստոսի հավատի համար մարտիրոսանամ, ինչ որ կամենան, թող իմ մարմնի նկատմամբ անեն»: Եվ երբ սպանեցին, նրա մարմնի պատվական մասունքները դուրս գցեցին, որ կեր դառնա շներին ու գաղաններին: Բայց աստված փառավորեց նրան երկնային հրաշքով. որովհետև ֆռանկ հայրերը [վարդապետներ], որ գտնվում էին քաղաքում, գողացան նրա պատվական մարմինը, կեսը պատեցին մաքուր կտավներով, խունկերով, անուշահոտ յուղերով ու ուղարկեցին Ֆռանգստան⁷⁷, որ այնտեղ մեծ փառքով պատվվի: Այսպես էլ մյուս կեսը պատեցին մաքուր կտավներով, խունկերով, անուշահոտ յուղերով և տարան վրաստան Թամրազ որդուն: Նա անպատմելի խնդությամբ լցված, մեծ գոհունակությամբ փառավորում էր մեր Քրիստոս աստծուն, որ իր մորը արժանացրեց մարտիրոսական մահվան. և ասաց. «Սրա բարեխոսությունը աստված մեր թագավորությունը հաստատ կպահի»: Եվ պատվով հանձնեց

իր եկեղեցուն: Սրա հիշատակը թող օրհնության մը լինի, և նրա աղոթքներով տերը ողորմի բոլոր քրիստոնյաներին: Արքայամոր նահատակությունը եղավ մեր թվարկության 1074 (1625)-ին ի փառս մեր հավիտյան օրհնված Քրիստոս աստծու, ամեն:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐ ԿՐԵՑ ՀԱՅՈՑ ԱՋԿԸ ԱՌԱՋԻՆ ՇԱՀ—ԱՐԱՍ ԹԱԳԱՎՈՐԻ ՁԵՌՔԻՑ

Հայոց ազգից ոմանք իրենց կամքով ու մատով կուրացրին իրենց աչքերը, որովհետև իրենք կործանեցին իրենց թագավորությունը իրենց նենդության մը, անհնազանդության մը և եղան այլ ազգերի ու թագավորների ոտքերի կոխան, ծառաներ, գերիներ, և երբ ինչ-որ նեղություններ են վրա հասնում՝ որևէ տեղից օգնություն չգտնելով ու ճարահատ մնալով փախըստական լինելով ճողոպրում են այստեղ-այնտեղ:

Արդ՝ թե այս պատճառով, թե նախապես ասված մեծ սո՛վի ու ջալալիների պատճառով հայոց ողջ ազգը ելավ, դարձավ վտարանդի իր տեղերից, հայրենի բնակավայրերից ու երկրներից և գլուխ առած իր երեսի ուղղությամբ ցիրուցան լինելով սփռվեց ամբողջ աշխարհում՝ Կիպրոս, Կոստանդնուպոլիս և սրա շուրջ եղած քաղաքներում, Ուռումելի^{*}, Բողդան^{**}, Իլախների երկիրը^{***}, Կաֆայի կղզին [Ղրիմ], Պոնտոսի^{****} ծովեզրերը: Այլև շատերը Ատրպատական երկիրը, Երևան, Գանձակ, Թավրիզ, Արտաբիլ և սրանց շրջակա գավառները:

Հայոց ազգի այն ժողովուրդը, որ եկավ զետեղվեց Ատրպատականում, պարսից թագավոր մեծ ու առաջին Շահ-Աբասը սրանց բոլորին քշեց տարավ Պարսկաստան, մի մասին՝

* Բալկանները:

** Մոլդավիան:

*** Լեհերի երկիրը [Լեհաստան]:

**** Սև ծովի ափերը:

Ֆահրապատ, մի մասին՝ Սպահան քաղաքը ու նրա գավառները: Եվ այս գործը, այսինքն՝ հայոց ազգին քշել-տանելը, ոչ թե մի կամ երկու, կամ երեք անգամ արեց և դադարեց, այլ հավատարի գտա շատ մարդիկ, որոնք իրենք իսկ քշված էին, սրանց հարցնելով տեղեկացա նաև ձեռագրերի հիշատակարաններից, որոնք կարդացի, [իմացա], որ յոթից-ութ անգամ առանձին- առանձին միմյանց հետևից քշել-տարել է: Եվ այս Սպահան տարված ժողովրդից ոմանց շատերին առ ներկա օրերս տեղավորեցին իշխանատանը, այսինքն՝ քարվանսարալուս, որ կոչում են Գեղզունի իշխանատուն: Եվ այս ժողովրդի անձինք միասին չէին եկել, այլ միմյանցից զատ-զատ, որի պատճառով երկու խմբի էին բաժանված. մի խմբի պետ ու գլխավոր Մելիք շահը նրանց վրա նշանակել էր ներանցից մի մարդու, որի անունն էր Մուրադ՝ Արխայան մականունով, մյուս խմբի մելիք էր նշանակված Հովսեփ անունով մի մարդ, որին մականունով Արաբաշ մելիք էին ասում:

Սպահան եկած հայ ժողովուրդը շուղայեցիներից ու երեվանցիներից բացի աղքատացավ, որովհետև, ինչպես ամենքին հայտնի է, Սպահան քաղաքում ամեն ինչ՝ թե ուտելիք, թե հագնելիք և թե այլ ինչ, սուղ է ու թանկ, այս պատճառով այդ եկած ժողովուրդը աղքատացավ, որովհետև ինչ ունեք ծախեց, կերավ: Մանավանդ աղքատացան ժողովրդի հիշյալ երկու խմբերը, որոնք իրենց աղքատանալու ու սովելու պատճառով այստեղ-այնտեղ գնալով ու որ հանդիպում էին, պատմում էին իրենց աղքատությունը, մանավանդ պատմում էին իրենց վերակացու պարսիկ իշխանին ու նրա զինվորներին, որովհետև շահը իր իշխաններից մեկին նրանց վերակացու էր նշանակել դիտելու և իմանալու նրանց խոսքի ու գործի ամեն անցուդարձ, այլև գուցե Սպահանից դուրս գան գնան Ատրպատական կամ այլուր:

Եվ նրանց աղքատության լուրը վերակացու իշխանի միջոցով հասավ շահին. այդ վերակացուների անուններն են. ավագին՝ Աղաշահար, երկրորդին՝ Ուղուրու, որոնց քրիստոնյաները աղաչեցին իրենց չքավորության մասին հայտնել շահին և խնդրել նրանից պետքերի, ուտելիքի և իրենց այլ կարիքների համար ինչք ու պարեն: Իշխանները իմացրին, այդ պատճառով շահը կանչեց երկու խմբի մելիքներին և նրան-

ցից ուրիշների. սրանց ասաց. «Կտամ ձեզ դրամ ու ինչք թագավորական դանձարանից ձեր կյանքի ու ապրուստի համար, բայց պայման կղնեմ և այս պայմանով կտամ: Պայմանը այս է. ինչ որ տալիս եմ, ձեզ փոխարինարար եմ տալիս երեք տարի ժամանակով, երեք տարի հետո պետք է մեզ վերադարձնեք: Եվ այս փոխը ոչ թե շահով ու տոկոսով եմ տալու այլ առանց շահի, որպեսզի դուք այդ առած դրամով առևտուր անեք, շահեք և նույն շահը կպարզալի ձեզ, որ շմեք նեղուք թյունների մեջ, այլ հիմք լինի ձեզ առևտրի, շահելու և նրանով ապրելու: Երեք տարին լրանալուց հետո պարտքի գլուխը [պարտքը առանց տոկոսի] նորից կվերադարձնեք թագավորի գանձարանին, որովհետև դա թագավորական դանձ է, որը չպետք է կորչի թեկուզ մեկ կոպեկ: Եվ երբ ամբողջը կվճարեք, կառնեք աղատություն ու վճարման թուղթ, այսինքն՝ դարս»:

Արդ՝ ձեռնից ամեն մեկը, ով էլ որ առնի թագավորական դրամից, երբ բերի առած դրամը և վճարի թագավորի գանձարանին, ազատ կլինի: Իսկ եթե լինի մեկը, որ առած դրամը չվճարի, այլ դրամը կերած, վատնած, կորցրած լինի և որևէ բան չունի, որ վճարի, արդ՝ այդպիսին դրամի փոխարեն կամ իր հավատից պետք է դառնա մահմեդական և կամ որդուն, դստերը պետք է տա, որ լինեն թագավորական ծառայող, սրանց զինն էլ հայտնեց. ուստի գինը ասաց շորս թուման, դստերը՝ երեք. ով դրամ չունի տալու, շորս թումանի փոխարեն որդուն կտա, երեք թումանի փոխարեն դստերը:

Այդ պայմանով շահը ժողովրդի այս երկու խմբերին անհատաբար թուման տվեց, որպեսզի երեք տարի առևտուր անելով շահեն, երեք տարուց հետո վերադարձնեն թագավորի գանձարանին:

Իսկ հարեցող, անխելք, անմիտ, անբանական մարդիկ ոչ սկզբում մտածեցին, ոչ էլ վերջին նայեցին, թե ինչ է լինելու այս գործի վերջը. այլ, լինելով իբրև անբան ու անմիտ անասուն, զնացին առան թագավորական դրամը, որը օձի մահարար թույն էր և նրանց կորսության պատճառ: Նրանք չմտածեցին, թե այդ դրամը օձի մահացնող փուշ է: Այլ եր-

կու մեկիքներն էլ իրենց ժողովրդի հետ առանձնաբար թագավորական գրամը: Ղարաբաղ մեկիքի ժողովուրդը առավ երեք հարյուր թուման, Ղրխալան մեկիքի ժողովուրդը՝ հարյուր թուման, և այդ համարեցին իրենց համար բարու ինչ-որ լավ գյուտ: Այն տարին, երբ շահը այս գրամը տվեց հայ ժողովրդին, մեր թվականության 1057 (1608) տարին էր. հասան մինչև 1062 [1613] թվականը և այդ ժամանակ շահը, որ անմոռաց իր մտքում պահում է շարիքների հիշատակը, հիշեց այդ և տված գրամի հարցը բարձրացրեց: Իսկ գանձ առնող եղանման մարդիկ ոչ միայն շահեցին, այլև գրամագլուխն էլ կորցրին. ոմանք չբավորությունից, ոմանք անխելքությունից, ոմանք ճաղաքի առևտրի անտեղյակությունից, գրամը կերան, վատնեցին, ցնցխեցին և թագավորի տված գրամը կորցրին:

Ուղուրու բեկին, որ ժողովրդի վերակացուն էր, շահը դարձյալ նշանակեց նրանց վրա, որպեսզի թագավորական գրամը առնի ժողովրդից, հանձնի թագավորի գանձարանին: Սա ղորականներով եկավ նստեց ժողովրդի շնչի վրա և ճշտիվ պահանջում էր գրամը. իսկ ժողովուրդը եղած բանն էր պատասխանում, թե շունենք, որովհետև չքավոր ու աղքատ էինք և սովի հարկադրանքից բոլորը կերանք, վատնեցինք:

Նվ վերակացու իշխանը իր զորականներով մշտապես հարկադրում էին ու շարշարում ժողովրդին, կախում էին, ծեծում, բանտարկում, բայց ժողովուրդը մեծ նեղության մեջ էր և թեպետ ոչինչ շունենին, իսկ ինչ էլ որ ունեին, այն էլ զինվորների ծախսերի համար վատնեցին. որովհետև մի մասը ծածուկ կաշառք էին տալիս, մի մասը բացահայտ տալիս էին ժամանակամիջոցի համար, մի մասն էլ զինվորների ու սրանց ձիանքի կերի համար, նաև ուրիշ պատճառով վատնեցին, սպառեցին և եղան բացարձակ աղքատ ու չքավոր:

Իսկ երբ Ուղուրու բեկը տեսավ, թե հայերից ոչինչ չի կարող առնել, թագավորին հայտնեց ժողովրդի չքավորության մասին. այդ պատճառով շահը հրամայեց հայերին իր առջև կանչել. խոսեց նրանց հետ և ասաց. «Գուր չհամարեք և ինձ ամբաստանեք, թե ես թագավորական բռնություններ և իշխանություններ եմ ձեզնից գրամը պահանջում և առնում, այլ խոսում եմ դատաստանով ու իրավունքով, որովհետև այդ

գրամը ես ձեզ փոխարինարար եմ տվել և այժմ միևնույն փոխ տված գրամը ձեզնից պահանջում եմ. ոչ թե ինչ-որ նոր գրամ եմ ուղում, այլ իմ տված փոխն եմ պահանջում և այն էլ առանց վաշխի ու տոկոսի, միայն գրամագլուխը: Արդ՝ եթե այս խոսքը իրավացի է թվում ձեզ, տվեք ձեռնադրություն, իսկ եթե ոչ, ահավասիկ դատավորներ ու դատաստաններ կան այստեղ՝ քաղաքում, ես և դուք միասին կգնանք դատարան դատավորների մոտ, ինչ կարգադրություն անեն դատավորները, ընդունելի կլինի ինձ ու ձեզ համար»: Ինչ կողմից էլ որ խոսում էին, հայոց կողմը պարտված էր մնում:

Հայերը շատ օրեր շատ իշխանների բարեխոս ուղարկեցին շահի մոտ աղերսագրով և շատ աղաչանքով խնդրեցին թագավորին՝ զթալ չքավոր ու աղքատ ժողովրդի տառապանքներին, ներել ու զիջել այդ պարտքը, բայց նա չկամեցավ ներել:

Երբ հայոց կողմը խիստ ստորացավ ու խոնարհվեց, ժողովուրդը հավաքեց իր բոլոր դուստրերին և ուստրերին, բերեց կանգնեցրեց թագավորի առջև՝ ասելով. «Քանզի գրամ շունենք, որ տված պարտքի դիմաց վճարենք թագավորին, մեր ուստրերին ու դուստրերին տալիս ենք թագավորին, որպես կանխավ պայմանավորվեցինք»: Ուստրերի ու դուստրերի հետ, որոնց նրանց հայրերը բերել էին, աղետը ցավակցելու համար եկել էին նաև նրանց բոլոր ազգականները՝ մայրերը, կղբայրները և ուրիշներ, որոնք համախմբված կանգնած բարձրաձայն ողբում ու արտասուքներով լալիս էին այնպես, որ բոլոր տեսնողների սիրտն ու աղիքները մորմոքով կտրատում էին: Թագավորը տեսնելով նրանց այսպիսի ողբերի ու հառաչանքների մեջ՝ հրաժարվեց երկխոսություն վերցնել և շտապ. այն բանի համար, որ թագավորը երկխոսություններ կերպրեց երկու պատճառ են դնում. ոմանք ասում են, թե տեսնելով ժողովրդի արտասուքները՝ ասածուց վախեցավ, այդ պատճառով էլ շտապ. ոմանք էլ ասում են երկխոսություն շտապ, որպեսզի ամբողջ ժողովրդին միանգամից մահմեդական դարձնի: Վերջին կարծիքը ճիշտ է թվում երկու փաստով. նախ որ բարկացավ Ուղուրու բեկի վրա նրանց այդտեղ բերելու համար և ասաց. «Ինչ օգուտ է ձեզ, որ դու երկխոսություն բերել ես, որովհետև ես կամենում եմ բոլորին

մահմեդական դարձնելու: Երկրորդ՝ որ վճռեց ու ասաց. «Եթե վճարեն ամբողջ փոխատվությունը, լավ է, ազատ կլինեն, իսկ եթե չվճարեն, պետք է իրենց հավատից դառնան և հավատով լինեն մահմեդական, իսկ ես նրանցից առած պարտքը կշնորհեմ նրանց, այլև պարզեներ կտամ նրանց»: Այս վճիռն էլ կտրեց և ստիպեց պարտքը առնել: Սրանով երևում է, վերջին կարծիքն է ճիշտ:

Իսկ զինվորները՝ թագավորից այսպիսի հրաման առնելուց հետո, սկսեցին քրիստոնյաներից պարտքը պահանջել խիստ ճշտությամբ. կախում էին, ծեծում, բանտարկում և բազմաթիվ ձևերով նեղում, որ գուցե նեղությունների պատճառով իրենց հավատից հետ կանգնեն. բայց ժողովուրդը համբերում էր, դիմանում էր բոլոր շարշարանքներին և հավատից հետ չէր կանգնում: Այնուհետև հայոց ողորմելի ժողովուրդը որդիներով, ընտանիքներով շրջում էր քաղաքի պողոտաներով ու փողոցներով ամենքի մոտ լալիս ու ողբում էր, գուցե թե որևէ տեղից օգնություն հնար լինի՝ փոխատվությամբ կամ ողորմությամբ:

Շրջագայելով գնացին ֆռանկների վանքերը, որոնք Սպահան քաղաքի մեջ են գտնվում: Ֆռանկների ազգից մի եպիսկոպոս այդ ժամանակ եկել էր Սպահան և բնակվում էր ֆռանկների վանքում. այդ եպիսկոպոսին Հուսիսիա են կոչում: Այս եպիսկոպոսը երևելի ու հարուստ մարդ էր, որին շատ անգամ շահը կանչել էր իր մոտ. խոսել և մտերմացել էր նրա հետ: Եվ երբ այս եպիսկոպոսը տեսավ հայերի արտասուքը, հարցնելով տեղեկացավ ամեն ինչին, նրանց հետ հուսադրական խոսքերով խոսեց և ասաց. «Մի վախենաք, այլ հաստատուն մնացեք ձեր քրիստոնեական հավատի վրա, իսկ ես ինչ որ ունեմ, կտամ ձեզ ոչ թե փոխարինաբար, այլ Քրիստոսի սիրո և նրա հավատի համար, իսկ դուք տվեք շահին, վճարեցեք ձեր պարտքերը և ձեր հավատից հետ մի կանգնեք»: Իսկ հայերը արտասուքներով օրհնում էին աստծուն ու եպիսկոպոսին և շնորհակալությամբ իրենց գոհունակությունն էին հայտնում նրան, որովհետև անհնարին նեղությունների մեջ օգնություն հասավ իրենց:

Եպիսկոպոսը ըստ իր խոստման ժողովրդի երկու խմբին էլ դրամ տվեց. Ղարաբաշ մելիքի ձեռքով սրա խմբին երկու

հարյուր թուման զուտ արծաթ դրամ: Նաև մյուս խմբին [տվեց], որի զխավորը Ղրխյալան մելիքն էր և Բաղդասար անունով մի քահանա՝ մի մարդ խելոք ու իմաստուն ճշմարտությամբ ու Քրիստոսի հավատով հաստատուն. սրանց ձեռքով սրանց խմբին տվեց հիսուն թուման զուտ արծաթ դրամ: Ժողովրդի երկու խմբերն էլ տարան տվին վերակացու իշխանին իրենց պարտքի դիմաց, իսկ պարտքի մնացորդի համար խնդրեցին որոշ օրեր ներող լինել, մինչև որ այն ևս որևէ տեղից գտնեն, վճարեն:

Բայց որպես Քրիստոսի մատնիչ Հուզան, որ բաժանվելով անջատվեց տասներկուսի խմբից, հայերից երկու մարդ՝ Ղարաբաշ մելիքի խմբի ժողովրդից, Բաղդասար ու Ախիջան անուններով, եղան սատանայի սպասավորներ ու շարի աման. սրանք հակառակ կանգնեցին քրիստոնյաներին և ասացին. «Եթե մեզ յուրաքանչյուրիս տաք տասական թուման ֆռանկ եպիսկոպոսի տված դրամից, լավ, ոչինչ չենք ասի, իսկ եթե շտաք, կգնանք իշխանների, նաև հենց թագավորի մոտ կասենք՝ սրանք գնացին դարձան ֆռանկ, այդ պատճառով եպիսկոպոսը սրանց դրամ տվեց, որ բերին ձեզ տվին»: Իսկ մյուս մարդիկ աղաչում ու ասում էին. «Այժմ համբերեցեք, որ դրամը տանք թագավորի պարտքը, որը ահա ձեր աչքով տեսնում եք, թե ինչպես ներկայումս ճշտիվ պահանջում են, հետո մեզնից ամբողջ ժողովրդից կվճարենք, կտանք ձեզ, ինչպես դուք եք ցանկանում»: Նրանք չզսպվեցին և ոչ էլ նրանց խոսքերն ու աղաչանքները հաշվի առան, այլ ելան գնացին մահմեդական իշխանների մոտ, հայերի մասին սուտ խոսեցին ու ասացին, թե հայերը գնացին ֆռանկների մոտ, ընդունեցին նրանց հավատը և այս դրամը առան, բերին վճարեցին ձեզ: Նաև այդ երկու մատնիչ մարդիկ իրենց ողջ ընտանիքներով դարձան մահմեդական և ամուր բռնեցին այդ հավատը, քանի որ ամբողջ ընտանիքով թլպատվեցին:

Այս խոսքի վրա մահմեդական իշխանները սաստիկ խոժոռվեցին և միմյանց ասելով խոսքը հասավ թագավորի ականջը. այս բանը թագավորին շատ ծանր ու դառը թվաց: Նա հրամայեց իր առջև բերել մելիքներին. նախ այդ օրը Ղարաբաշ մելիքին գտան, տարան, որի հետ արբան խոսեց և մեղադրանքներով ու սպառնալիքներով ասաց. «Ով պակ-

ըախտ ու շար ժողովուրդ և արժանի բնաջինջ կոտորման. ես խղճալով ձեզ՝ տվի այսքան դրամ և այդքան տարվա շահը ևս նվիրեցի ձեզ, խոստացա նաև այլ շնորհներ անել, եթե դառնաք մեր հավատքին, իսկ դուք ասացիք, թե դրամի համար մեր հավատքը չենք ուրանա, իսկ այժմ ինչպե՞ս դարձաք ֆոանկների հավատին և նրանցից դրամ առաք. արդ՞ եթե դրամի համար հավատից հավատ էիք դառնում, ի՞նչ նվաստություն և արատ ուներ մեր հավատը, որին չդարձաք»: Մեկիք իր ընկերներով պատասխանեց. «Ում հրաշափառ ու տիեզերակալ արքա, քավ լիցի, որ մենք դառնանք մեր հավատից, մենք չենք դարձել մեր հավատից, այլ կանք մեր հավատին, ինչպես որ առաջ էինք, և ովքեր որ մեր մասին քո տերության առջև այդ խոսքերը ասել են, նրանք սուտ են ասել. և այն դրամը, որ ֆոանկներից առանք, փոխարինարար առանք, որը և բերինք, տվինք պարտքի դիմաց»: Արքան պատասխանելով ասաց. «Ձեր խոսքը ճշմարիտ չէ, քանզի պատրվակ է այդ փոխը, որովհետև եթե իսկպպես դա փոխ էր, ինչո՞ւ այլ ազգերից չվերցրիք, այլ միայն ֆոանկներից»:

Ու թեև շատ օրեր շատ ձևերով խոսեց ժողովուրդը, այնուհետև արքան նրանց խոսքը բանի տեղ չդրեց: Այլ ինչպես սկզբում ասել էր, այնպես էլ այժմ ասաց. «Եթե դառնաք մեր կրոնին, շատ լավ կանք, որովհետև ինչ որ պարտք եք, այդ ամենը ձեզ կշնորհեմ. և ի լրացում դրա բազմաթիվ պարգևներ ու նվերներ էլ կբաշխեմ ձեզ: Իսկ եթե չդառնաք, ձեզ կենթարկեմ անխոստափելի տանջանքների, որպեսզի տանջանքների մեջ ձեր ոգիները վատնվեն, սպառվեն, և իզուր սատկեք»: Եվ իսկույն հանձնեց դահիճների ձեռքը, որ առանց որևէ ներման միշտ տանջեն մինչև կամ դարձի գան, կամ մեռնեն:

Այնուհետև մեզ ու մառախուղ և անփարատելի խավար եկան հասան ողորմելի ժողովրդի վրա, քանզի անօրեն դահիճները անմիջապես շտապեցին այստեղ-այնտեղ, գտան ժողովրդի բոլոր մարդկանց, բռնեցին ու սկսեցին անխնա շարձարել, ծեծել, վիրավորել կախադանի վրա, մեջքի վրա գրչած, շղթաներում, կոճղերում, բանտերում, արգելարաններում, սովով ու ծարավով և այն էլ շատ օրեր: Իսկ ժողովրդի ազա-

ղակը, տղամարդկանց ու կանանց լացուկոծը միմյանց խառնելով՝ երկինք էր հասնում:

Ղարաբաշ մելիքին գլխիվայր կախած այնքան բրածեծ արին, որ ոտքերի եղունգները թափվեցին, ամբողջ մարմինը արյունով շաղախվեց և անշնչացավ ինչպես մեռել: Ավելի խիստ անողորմ ծեծեցին՝ բռնված մյուս քրիստոնյաներին՝ ահ ու երկյուղ ներշնչելու համար: Նրա [Ղարաբաշի] ընտանիքը նրան տարավ ծածկեց դոմաղբի մանրուկով: Իսկ պարսիկ զորականները որ ժողովրդին շարձարում էին, ուրիշներին խարելու համար լուր տարածեցին, թե Ղարաբաշ մելիքը մահմեդական դարձավ: Այն պարսիկները, որ այս ամբողջ շարիքները թափեցին նրանց վրա, իմացան նրանց հաստատուն մտադրությունը և հասկացան, թե կկամենան մեռնել, բայց մահմեդականությունը չեն ընդունի, ուստի այնուհետև բռնի վայր էին կախում, թլպատում և իրենց հավատքի դավանության [համապատասխան խոսք] էին ասել տալիս: Քրիստոնյաներից շատերը կաշառքներ տվին զորականներին ու թլպատողներին և թլպատությունից զերծ մնացին:

Ապա գնացին, շահին ասացին, թե Ղարաբաշ մելիքն ու իր ժողովուրդը կատարեցին թագավորի հրամանը, որովհետև թլպատվեցին ու դավանեցին մեր դավանությունը ու դարձան մուսուլմաններ:

Այդ ժամանակ շահը ուրախացավ, հրամայեց՝ դրանց ամենքին, ովքեր հավատի եկան, ղիջիլ առաջին պարտքերը, որ պիտի տային, որովհետև ես շնորհեցի, նաև նոր պարգևներ հիմա տվեք, որպեսզի միթիթարվեն կրած տառապանքներից: Թագավորի այս հրամանի հիման վրա նրանց բոլորին կապանքներից արձակեցին և նրանց պարգևներ տվին՝ յուրաքանչյուր տանը առանձին երեք թուման փող: Սրանց նկատմամբ այս կերպով վերջացրին գործը [և սրանք] վերադարձան իրենց տները, որովհետև ցերեկը երեկոյացել էր:

Սրանցից հետո հերթը հասավ Ղրխյալան մելիքին ու իր ժողովրդին: Այդ նույն երեկոյան դահիճները եկան, բռնեցին Ղրխյալան մելիքին ու տարան: Սրան թագավորի կողմից հրամայվեց. «Դարձիր մահմեդական կրոնին, ստացիր պարգևներ ու մեծություն ու պետական պաշտոն, քո անձը անմտաբար մի մատնիր տանջանքների և մի եղիր կեր առյուծների

ու շնորհ», գազաններ, որ այնտեղ կապած պատրաստ պահում էին: Իսկ Ղրխյալան մելիքը ահարկությունից, թագավորական ատյանի ամոթից, տանջանքների երկյուղից, թե խոստումների գայթակղությունից հանձն առավ կատարել թագավորի հրամանը, որ և հենց այնտեղ իսկ նրան դավանեցրին Մահմեդի հավատը՝ մահմեդական դարձավ: Իսկ իշխանները և այլ մահմեդականներ սկսեցին նրան դովել ու ասել. «Այդ շատ լավ արիր, որ երկար ճշմարիտ հավատքի և ի լրացում դրա դու պետք է քո ողջ ժողովուրդը բերես այս հավատքին»: Իսկ Ղրխյալան մելիքը սկսեց անիմաստ անգետ բարբառանքներով խոսել և խոսելու հետ տեր Բաղդասարին մատնել: Քանզի նա ասաց. «Այն կարծիքին եմ, որ ողջ ժողովուրդը բոլորը կդառնան ու դիմադարձ չեն կանգնի. թե դիմադարձ կանգնի, Բաղդասար երեցը միայն դիմադարձ կկանգնի: Իսկ եթե նա դառնա, ամբողջ ժողովուրդը կդառնա»:

Այս մահահրավեր լուրը, դառնահամբավ բոթը այն իսկ երկկոյան հասավ Բաղդասար քահանային և ժողովրդին, որոնք սարսափից հասան դժոխքի դռները:

Իսկ Բաղդասար քահանան այն գիշեր հուշան ու հավատը արիական հաստատամտությամբ իր մեջ ամփոփելով՝ ողջ քրիստոնյա ժողովրդին հավաքեց աղոթքի տանը, որ այնտեղ իջևանատանը հաստատել էին, սկսեց ժողովրդին աստժու մարդասեր գթությունն ու ողորմածությունը քարոզել, ինչ որ գիտեր: Եվ ամենին հորդորեց աղոթքներով, աղաչանքներով, բազմահառաչ ու մեծածայն ողբերով, աղբյուրահոս արտասուքներով դյուրալուր ու անոխակալ տիրոջից խնդրել, որ նա ներողամտության գութի փոխի իրենց դեմ թագավորի սրտի բարկությունն ու ցասումը: Ամբողջ ժողովուրդը մեծ պաղատանքով մինչև առավոտ կանգնած էր այնտեղ աղոթատանը տիրոջից գութ ու ողորմություն խնդրելու համար:

Եվ ինքը Բաղդասար քահանան երեկոյան սկսեց ցայգապաշտամունքային սաղմոսերգությամբ գիշերային աղոթքներ կատարել և այնտեղ ժողովրդին խոստովանեցնելով մատնացույց արեց աստվածային պարզը՝ հաղորդեց արժանավորներին աստվածորդու պատվական մարմնից ու արյունից: Եվ վաղ առավոտյան, մինչ չէին բաժանվել լույսն ու խավարը, բոլոր աղոթական կարգերը ավարտի բերին, վերջացրին:

Իսկ առավոտվա լուսանալու հետ շեշտակի ձիւնթաց արշավումով դինվորներն ու զորականները իբրև շար գազաններ եկան, շրջապատեցին տեր Բաղդասարին, դուրս քաշեցին, գցեցին ձիերի առջև և ձիերի ընթացքով քշում էին, որ շուտ հասնեն թագավորի դիվանը: Երբ հասան թագավորի պալատին, նրան շրջապատեցին մարդադեմ գազանները, կրճտացնում էին ատամները ու ամբարտական խոսքերով ջանում ատամներով քրքրել նրա մարմինը:

Երբ թագավորը ատյան նստեց, տեր Բաղդասարին տարան առջևը. արքան նրա հետ խոսեց նրա քրիստոնեական հավատքից դառնալու մասին՝ ասելով, եթե համառես ու չհամաձայնես, շնորհի ու առյուծների կերակուր կդառնաս, որ և նրանց վախեցնելու համար գազանները պատրաստ պահում էին այնտեղ:

Եվ մեր տեր Հիսուս Քրիստոսի խոսքը այստեղ հաստատորեն կատարված երևաց, որ ասաց. «Երբ ձեզ տանեն դատավորների ու թագավորների առջև, մի մտահոգվեք և մի մտածեք, թե ինչ պետք է դուք խոսեք, որովհետև այն ծամին ձեզ կտրվի խոսք ու իմաստություն, թե ինչ պետք է խոսել, քանզի ոչ թե դուք եք խոսում, այլ ձեր հոր հոգին է խոսելու ձեր մեջ»: Սրանով Բաղդասար քահանան պատասխանեց ու ասաց. «Եթե ասես ինձ, որ ես իմ կամքով եմ կկանգնեմ իմ հավատից, ես իմ կամքով չեմ դառնա, իսկ եթե բռնի դարձնես, այդպես չի հրամայել քեզ քո օրենսդիրը: Եթե քո պարտքի համար ասես ու խնդրես, շատը տվել ենք, իսկ ինչ մնացել է այն էլ այսօր ու վաղը կվճարենք»: Ինչպես որ սառը ջուրը լցնում էս եռացող կաթսայի մեջ, նույն պահին նրատեցնում է նրա փրփրալից եռը, այդպես տեր Բաղդասարի խոսքերը իջեցրին թագավորի բարկությունը. այդ պատճառով այլևս ոչինչ չասաց արքան, բայց միայն այս, թե զնա քո մնացած պարտքը տուր:

Արդ՝ տեր Քրիստոսն էր, որ ասաց. «Ուր երկու կամ երեք հոգի հավաքվել են ինձ համար, ես այնտեղ՝ նրանց մեջ

* Մատթ. Ժ 10:

եմ»^{*} նույն ինքը նաև այժմ նայեց սրանց հավատքին և գիշերապաշտումային արտասովորից աղոթքներին և իշեցրեց թագավորի բարկութունը, որի հետևանքով ազատվեցին տեր Բաղդասարն ու ժողովուրդը երկու վտանգից՝ տանջանքներից և ուրացութունից: Այնուհետև թագավորի պարտքի մնացորդը վճարեցին, առան ազատության թուղթ, և գոհանալով տիրոջից, մնացին խաղաղ:

Երբ այս ամենը կատարվեց ժողովրդի նկատմամբ, նրանք ժողովրդի մի մասին, նաև մելիքներին դարձրին մահմեդական: Այնուհետև վերոհիշյալ ֆոանկե կախկոպտը եկավ Շահ-Արաս թագավորի մոտ, ասաց. «Քեզ հետ դատարանով խոսելիք ունեմ, որովհետև դու քո տված պարտքը պահանջեցիր հայերից, նրանք ոչինչ չունեին, որ վճարեին, իսկ ես քրիստոսական հավատի համար նրանց փող տվի, որպեսզի քո պարտքը տան և մնան Քրիստոսի հավատին. այդ դրամը նրանք բերին տվին քեզ և վճարեցին քո պարտքերը: Իսկ դու փողը առնելուց հետո չթողեցիր նրանց Քրիստոսի հավատին, այլ դարձրիր ձեր հավատին: Որովհետև այդպես արիր, դատաստանական իրավունքը հաստատում է իմ տված դրամի համար, որ ինձ վերադառնա: Արդ՝ խնդրում եմ արքայից, որ իմ դրամը ինձ վերադարձնի»: Իսկ թագավորը մտածեց, տեսավ, որ կախկոպտի խոսքը իրավացի էր, երկու հարյուր թուման դրամը վերադարձնելով կախկոպտին՝ վճարեց նրան:

Իսկ Ղարաբաշ մելիքն ու այն ժողովուրդը, որոնց բռնությամբ շահը մահմեդական դարձրեց, միայն այն եղավ, որ այնտեղ ատյանում մահմեդականների դավանության խոսքը ասացին. դրանից հետո էլի մնում էին Քրիստոսի հավատին՝ ուրացության խղճի տանջանքից էլ ավելի հաստատուն, քան առաջ էին: Որովհետև երեխաներին մկրտում էին. մեռելներին քահանաներով էին թաղում, միշտ եկեղեցի գնալով աղոթում էին, խոստովանելով հաղորդում էին, իսկ մահմեդականների վեճը չէր դրանց այդպես անկու համար: Իրենցից հետո իրենց բոլոր դավակները այժմ քրիստոսյա են և քրիստոսյա ժողովրդի մեջ են բնակված:

Իսկ Ղրխյալան մելիքի խղճմտանքը առավել դատապար-

տելով անարգեց նրան, որ տարիներ անցնելուց հետո ինչ-որ պատրվակով առավ իր կնոջը, թե գնում եմ Թավրիզ. և այնտեղից անցավ գնաց Երուսաղեմ, կատարեց Քրիստոսի մարգեղության ամբողջ ուխտը: Եվ ինքն ու կինը մնացին այնտեղ: Եվ քանի որ արհեստով քարագործ էր, սուրբ Երուսաղեմի համար աշխատում էր առանց վարձի՝ ակնկալելով տիրոջից վարձի հատուցում. և իր կյանքի ամբողջ ժամանակը, որ ապրեց, այդպես մնաց և այնտեղ Երուսաղեմ քաղաքում վախճանվեց, և Ղրխյալան մելիքն ու իր կինը թաղվեցին (այնտեղ): Սրանց թող ներում ու թողութուն տա տեք Քրիստոսը յուր անսահման ողորմությամբ. ամեն:

Գ Լ Ո Ւ Ն Ժ Ի

ՄՅՈՒՍ ԱՅՆ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ՂԱՅ
ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՔԱՇԵՑ ԱՌԱՋԻՆ ՇԱՀ-ԱՐԱՍ ԹԱԳԱՎՈՐԻ
ՁԵՆՔԻՑ

Եվ ժամանակների օրերում, երբ մեր թվականության 1069 (1620) թվականն էր, այնպես եղավ, որ Շահ-Արաս մեծ և առաջին թագավորը Սպահան քաղաքից ելավ, գնաց Փարիսի և Բուրվարի գավառները, որտեղ հայ ժողովրդին էր բնակեցրել:

Եվ քանի որ այս Շահ-Արասը սովորութուն ուներ երբեմն-երբեմն իրեն այլակերպում, ձևանում էր իրրև մեկը զորականներից և գնում էր այնտեղ, ուր գնալու էր. ըստ այդ սովորության այս անգամ ևս նույնը արեց: Ինքը միայն և իր առջևից գնացող հեծիոտներ [փայեկը] նախքան ամբողջ զորքը՝ եկան Փարիս երկրի առաջին գյուղը, որ Դարբնի գյուղ են անվանում: Նրան [շահին] միևնույն գյուղից մի կին հանդիպեց, որ Ղբիտեր, թե սա շահն է: Շահը խոսեց կնոջ հետ և ասաց. «Քե վաճառելու հավ ունես, բեր ինձ՝ գնեմ:» Երբ կինը հավը բերեց, հավի պատճառով կնոջը փորձելու համար շատ խոսք առաջարկեց. դատարկարանութուն էր անում և իր սրտի մեջ անօրեննություն էր կուտակում: Խոսքի ընթացքում շահը ասաց. «Տասը փող եմ տալիս քեզ իբրև այս հավի գին, և թե դու շահին սիրում ես, այս հավը տուր մեզ»: Կինը ասաց.

* Մատթ. ԺԸ 20,

«Մենք ի՞նչ լավ բարիքներ և երախտիք տեսանք շահից, որ շահի սիրո համար հավս քեզ տամ»: Շահը ասաց. «Ձեզ էլ ի՞նչ բարիքներ անի շահը, քանի որ այսպիսի լավ ու վայելուչ երկրում բնակեցնելով՝ ամեն նեղութուններից ապահով պահում է ձեզ և քաղցրությամբ ու գթով է վարում ձեր ազգի հետ»: Եվ կինն ասաց. «Երանի թե մեզ բերած չլինեի որովհետև վտարանդի արեց մեզ, հանեց մեզ մեր բնիկ երկրից, բնիկ տեղերից, հայրենի ժառանգութուններից և բերեց այստեղ՝ օտար աշխարհում բնակեցրեց իբրև պանդուխտներ»: Կնոջ այս խոսքը իբրև երկասյրի սուր դիպավ շահի սրբտին, որովհետև նրան խիստ ծանր ու դառը թվաց. սրտով ու հոգով խոցված էր և ավելի բարկութունից լուծ էր մնացել ու ոչինչ չէր խոսում: Այս ժամին շահի մոտ եկան, հասան նույնի նախապատիվ և փառավոր նախարարները՝ Սպանդիար-բեկը և այլք: Եվ տեսնելով նրան այդպես զայրագին բարկությամբ լցված, ոչինչ չխոսեցին, այլ լուծ կանգնեցին հեռու:

Եվ ահա գալիս, նրանց մոտով անցնում էր այդ գյուղի քահանան, որի անունն էր տեր Ավետիս. սա դաշտային աշխատանքից գալով՝ գնում էր իր տունը: Երբ շահը նրան տեսավ, կանչեց իր մոտ ու հարցրեց, թե ինչ մարդ ես. քահանան ասաց՝ հայ եմ. շահը ասաց՝ ինչի՞ համար է մորուքդ երկար. քահանան ասաց՝ այս գյուղի քահանան եմ. շահը ասաց՝ եկ դարձիր մուսուլման. քահանան ասաց՝ ես գոհճիկ մարդ եմ, մանավանդ ծերացած եմ, ուստի չեմ կարող մուսուլմանական կրոնի արարողութունները կատարել: Թագավորի զայրագին սրդողութունը սարսափելի հորդելով ավելացավ: Շահը իր բարկութունից չհանդուրժելով իր հետիոտն առաջավորի ձեռքից առավ կացնակը, որ նաջախն է, և նրանով ուժգին բախումով հարվածեց քահանայի գլխին և լայն պատռեց: Քահանան վերքին ու հարվածին չդիմանալով, ուշաթափ ու խելահորույս լինելով՝ անշնչացած ընկավ ինչպես մեռել: Շահը իր սաստիկ բարկութունից այնտեղ միևնույն պահին մերձականերին հրամայեց նրան թլպատել, որ և անմիջապես արեցին, չնայած քահանան իբրև մեռել անզգա էր: Թողնելով քահանային այդպես՝ ինքը անցավ զնաց բանակատեղ իր վրանը:

Այնուհետև հայերի հանգեպ գութն ու խիղճը վերացավ թագավորի սրտից. իր առջև կանչեց առաջին վեղիրին, սրահեռ նաև շեխին, որի անունն էր Միրավդուլա, և հրամայեց նրանց զինվորներով մտնել այն գավառները և ծայրեծայր մահմեդականացնել ու թլպատել: Եվ նա, որ կամքով ու հոժարությամբ կհնազանդվի, լավ, իսկ նա, որ չի հնազանդվի, տանջանքներով ու բռնությամբ թլպատեն և դարձնեն մուլար առաջնորդի [Մահմեդի] կրոնին: Բազմաթիվ ծանր հանդիմանութուններով ու սպառնալիքներով նրանց պատվիրեց կատարել իր բոլոր հրամանները, իսկ ինքը Փարիսյից դարձավ զնաց Սպահան քաղաքը:

Թագավորի հրամանի հետևանքով մեծ հալածանք գործվեց հայոց դեմ. այնպես որ թողեցին տներ, ընտանիքներ, ունեցվածքներ և ելան ցրվեցին իրենց երեսի կողմը՝ լեռներում, անապատներում, անմարդաբնակ տեղերում: Շատերը զնացին հեռավոր գավառները, փոխեցին անունները, կերպարանքները և այդպես մնում էին անճանաչելի՝ նրանցից ոմանք շատ օրեր քաղցելով ու սովալլուկ լինելով թափառական շրջում էին լեռներում և չէին կարողանում շններ մտնել, կամ որևէ մեկին երևալ թագավորի ու թլպատողների երկյուղից:

Եվ այն իշխանները, որ նշանակվեցին թլպատողներ, մտան գավառները և ումը գտան խիստ անարգանքով, տանջանքների սպառանալիքներով ու բռնությամբ բուրբին թլպատեցին՝ թե աշխարհական, թե հոգևորական:

Ըստ իմ ասած օրինակի անելով՝ հասան Փառշիշ գյուղը, այնտեղ էլ իրենց անօրեն գործը կատարելով. այնտեղից ելնելով կամենում էին զնալ Փահրան գյուղը: Փահրան գյուղի նուրիշան անունով տանուտերը իր գյուղացիներին ասաց. «Եկեք զինվենք և դեմ կանգնելով միարանությամբ կովենք այլազգի թլպատողների դեմ և չթողնենք մտնեն մեր գյուղը»: Գյուղացիները շեղան նրան միարան ընկեր, այլ փախան ցրվեցին լեռները: Իսկ նուրիշանն ինքը միայնակ կապեց սուսերը, առավ նետ ու աղեղ և զնաց ճանապարհի կեսը և ելավ մի փոքր բուրբակ բլրի գլուխը, որի ստորոտով ճանապարհն էր անցնում: Թլպատողները ելան Փառշիշից, ճանապարհ ընկան, գնում էին Փահրան. երբ մտեցան բլրի ստորոտին,

մեկ էլ հանկարծակի ահեղ գոռոցով ձայն արձակեց Նուրի-
ջանը և իր դարանակալած տեղից սկսեց նետեր արձակել
Նրանց վրա: Այդպիսի նետածագութիամբ արգելեց, կանգնեց-
րեց նրանց, ապա դուրս դալով դարանից, հաճախակի նետա-
ծագութիամբ հալածելով նորից ետ դարձրեց Փառշիշ, մտքրեց
գլուխը մեջ, իսկ ինքը դարձավ իր Փահրան գլուխը:

Իսկ Փառշիշ վերադարձած թլպատողները մնացին մինչև
երեկո, ապա լրտես ուղարկեցին, որ իմանան, թե ուր է Նու-
րիջանը. իսկ լրտեսն եկավ, ասաց, թե ահա իր տանն է: Այն
ժամանակ պարսիկ բոլոր սպառազինվածները գիշերանց ելան
գնացին Փահրան, Նուրիջանի տունը շրջապատեցին և նրան
բռնելով կապեցին: Օրը լրտանալիս գցեցին մեջքի վրա ու
սկսեցին բրածեծ անել նրան: Այնքան զարկեցին, որ նրա
մարմնի վրա ամենևին ողջ անդամ չմնաց, դարձավ ինչպես
մեռել, և տեղնուտեղը անմիջապես թլպատեցին, ապա հե-
ռացան նրանից: Գլուխացի կանաչք տարան թաղեցին գոմաղ-
բի մանրուքի մեջ մինչև երեք օր: Նուրիջանը մնաց անկող-
նում այն ցավով, հյուսիսից մարմնով, շորս ամիս չէր կարո-
ղանում ոտքի վրա կանգնել:

Եվ այսպես, թլպատող իշխանները շրջեցին երկու գավառ-
ներում՝ Փարիայում ու Բուրվարիում, ումը գտան, թլպատե-
ցին՝ թե աշխարհական, թե քահանա: Եվ ըստ ամենայնի վեր-
ջացնելով՝ վերադարձան Սպահան քաղաքը ու պատմեցին
թագավորին: Շահը հրաման արձակեց թլպատված քահանա-
ների վերաբերյալ, թե արքունական գանձից յուրաքանչյուր
քահանայի տան համար քառասուն ոչխար. այդպես արին՝
Շահը այս ոչխարները այն բանի համար տվեց քահանաներին,
որ քահանաներից ոմանք՝ ազահ լինելով ինչքի հանդեպ,
գոհանան այդ տվածով և իրենց ժողովրդին չգրգռեն մահ-
մեզականությունից ետ կանգնել, իսկ ոմանք էլ եթե կերած,
վատնած լինեն, վճարելու երկյուղից մնան մահմեզական:

Նախաչարի այս մտածումով լցված շահը ուղարկեց նաև
այլ իշխաններ գինվորներով և հրամայեց նրանց գնալ այդ
երկու գավառները, շրջել բոլոր գյուղերը, բռնել բոլոր քահա-
նաներին և սպառնալիքներով սարսափեցնել նրանց և առնել
երգում ու պայման նրանց բերանից, որ իրենց զբեքից ոչ մի
զիրք չպահեն, իսկ եթե լինի մեկը, որ պահած է, ով այդ

հայտնի, պահողի գլուխը դառնում է թագավորական, իսկ ողջ
հարստությունը և ընտանիքը՝ մատնացույց անողին: Զորա-
կանները այս հրամանը առնելով գնացին շրջեցին երկու գա-
վառներում, գրքերն ու եկեղեցական անոթները՝ ինչ որ գտան,
բռնի հափշտակեցին քրիստոնյաներից, առան բերին Սպահան
քաղաքը, հայտնեցին շահին, և շահը կարգադրեց՝ բոլորը
պահել:

Սրանից հետո շահը պարսից ազգից շատ մուլաներ ուղար-
կեց Փարիա ու Բուրվարի, որպեսզի այնտեղ մնան և հայերին
Մահմեդի կրոնը սովորեցնեն. ամեն օր հավաքեն մզկիթում
աղոթելու, իսկ քրիստոնյաների երեսաներին պարսկերեն
կարդացնեն: Մուլաները եկան ցրվեցին գավառների գյուղե-
րում՝ որտեղ երկու, որտեղ երեք, և բռնանում էին քրիստոն-
յաների վրա, որպեսզի մզկիթ գան, հաղորդակցվեն մուլար
առաջնորդ Մահմեդի կրոնին: Իսկ քրիստոնյաների համար
գժվար էր այդ, ուստի չէին հնազանդվում, այլ զիմազբավե-
լով՝ բանավիճում էին. և օրավուր խոսքակովի մեջ առաջ
գնացին այնքան, մինչև որ մուլաներից երեք-չորսին սպանե-
ցին: Այլ մուլաներ այս տեսնելով՝ վախեցան սպանությունից,
և բոլորը փախան գնացին իրենց տեղերը: Խեղճ քրիստոնյա-
ները երկու տարի մնացին պարսիկների ձեռքը հալածանքի
ու շարչարանքի մեջ:

Ապա Գրիգոր անունով քրիստոնյա մի մարդ, որ առաջ
վալոց ձորից էր, որին եղեգնածոր են կոչում, Արփա [Արե-
նի] գյուղից, այժմ Փարիա գավառում լինելով՝ բնակվում էր
Ներքին խոյիկան կոչված գյուղում. սա մարմնով պարթևա-
հասակ էր ու հաղթանդամ, սրտով քաջ, խոսքով ու խելքով
խելոք և Քրիստոսի հավատով ու սիրով հաստատուն ու ջերմ:
Այս Գրիգորը ելավ շրջեց գավառի գյուղերը, քաջալերեց ու
հորդորեց ամբողջ ժողովրդին, դարձավ նրանց համար ղեկա-
վար ու առաջնորդ, իր հետ առավ յոթ մարդ, եկավ Սպահան
քաղաքը, գնաց, փոխարինարար շատ դրամ ճարեց, բերեց
տվեց շահի իշխաններին իբրև կաշառք և բոլորին համոզեց, որ
պատեհ ժամին թագավորի առջև իրենց մասին լավ խոսեն:

Ապա ինքը աղերսագիր գրեց ու հանձնեց թագավորին ոչ
թե մեկ կամ երկու անգամ, այլ հինգ-վեց անգամ: Թագավո-
րի գիվանում ու ատյանում այնքան խոսեց, մինչև որ թագա-

վորը ձանձրացավ և ասաց. թողնում եմ ձեզ ձեր կամքին, գնացեք, ձեր հավատը պաշտեցեք: Եվ Գրիգորը աղաչում պաղատում էր, ծոնկի գալով ու լացով խնդրում էր շահին ու ասում, թե այդ հրամանը, որ բանավոր ես ասում, մի մատ թղթի կտորով մեզ շնորհիր:

Եվ մի օր, երբ շահը իր ապարանքից ելած գնում էր Հազարաջրի բայրին, ասացին, թե հինգ անգամ եկավ շահի առաջ ու նույն թուղթը խնդրեց, որի անձանձիր խնդրանքից շահը ձանձրացավ, թագավորական կնիքով հրովարտակ գրեց, ավեց Գրիգորին՝ թե հրաման տվի Փարիսյի ու Բուրվարի գավառներում բնակվող բոլոր քրիստոնյաներին, որ համարձակորեն պաշտեն իրենց քրիստոնեական կրոնը:

Սրանից հետո Գրիգորը շահից խնդրեց, որ այցելության գալով խղճա թագավորը և իրենց շնորհի իրենց գրքերը, որոնք հափշտակել տարել են: Արքան այդ էլ շնորհեց նրանց: Գրիգորն ու իր ընկերները առան հրովարտակն ու իրենց գրքերը և ուրախությամբ գնացին գավառ իրենց ժողովրդի մոտ:

Այս պատճառով Շահ-Աբաս թագավորը տուգանք դրեց քրիստոնյաների վրա՝ ասելով. «Որովհետև չհնազանդվեցին թագավորի հրամաններին, պետք է թագավորի զիվանին հազար թուման տուգանք տան: Եվ իր երեւելի, առաջակա իշխաններից խոսքով սուլթան կոչված մեկին նշանակեց վերակացու, որ ժողովրդից առնի, հանձնի թագավորի գանձապահներին: Խոսքով սուլթանը շատ զինվորներով եկավ, արեց ու կատարեց թագավորի հրամանները:

Եվ խեղճ քրիստոնյաները քրիստոնեական հավատի համար այս հազար թումանից և այն պարտքը, որ Գրիգորն ու իր ընկերները Սպահանում արին, և այլ եղած ծախքեր՝ բոլորը վճարելով հատուցեցին ու դարձան հույժ աղքատ ու չքավոր, բայց մնալով Քրիստոսի հավատին՝ ուրախ են և գոհանում են տեղ աստծուց:

Իսկ այս Գրիգորը օրավուր գորանում էր հավատի ու բարեգործությունների մեջ. նաև ուրիշներին էր հաստատուն պահում Քրիստոսի հավատի վրա և նախանձախնդիր էր քրիստոնեական կրոնին: Սրան նախանձեցին արյունարբու մահմեդականները և մահվան զրպարտանք բարդեցին Գրիգորի վրա, բանվե՛ իրենց ժողովրդից մի մահմեդականի իրենք սպանե-

ցին, ծածուկ տարան գցեցին Գրիգորի արտը: Եկան դատախազները, սուտ վկաներ բերին կանգնեցրին, թե Գրիգորն է սպանել այս մեռյալին: Եվ առան տարան իրենց անիրավունք դատարանը դատավորների առջև: Սրա վերաբերյալ վճիռ կտրեցին, թե որովհետև սա է այդ արել, կամ պետք է (հավատը) ուրանա, կամ սպանվի: Եվ այս զրպարտությունը դատապարտելով՝ սպանեցին քրիստոսասեր Գրիգորին: Նրա մասին շատերը վկայեցին, թե տեղը փառավորեց նրան երկնքի լույսի երկնային հրաշքներով: Նրան թող Քրիստոսը տա իր խոստացած արքայությունը, իսկ մեզ ևս ընդունի իր սրբերին մասնակից լինելու իր ողորմությամբ. ամեն:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ե

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒ ԱՐԱՂՍՏԱՆ ԿՈՉՎԱԾ ԵՐԿՐՈՒՄ
ՈՉԽԱՐՆԵՐԻ ՀԱՐԿ ԳՎՍ.

Շահ-Աբաս առաջին արքան շատ սիրեց Ֆահրապատ քաղաքը, այդ պատճառով բոլոր երկրներից ժողովուրդ հավաքեց ու լցրեց այնտեղ, որպեսզի քաղաքը մեծանա: Իսկ ինքը, երբ ապահով էր լինում թշնամիների պատերազմից, ձմեռ ժամանակները այնտեղ էր գնում, անցկացնում: Եվ Շահ-Աբասը իր մշտական սովորության համաձայն գնում էր Ֆահրապատ: Եղավ մի անգամ, երբ գնում էր, գնաց հասավ Ղաղբին քաղաքի սահմանները, այն գավառին, որ կոչվում է Թարիմ, և գյուղին, որ անվանում են Խոռոմապատ: Արքունի բանակը այնտեղ իջևանելով՝ բանակեց:

Իսկ Շահ-Աբասը ըստ իր մշտական սովորության, որ իրեն այլակերպելով ձևանում էր իբրև զինվորներից մեկը և գնում էր տղամարդկանց ու ժողովրդի մեջ որևէ բան իմանալու, տեղեկանալու: Այս անգամ էլ այսպես արեց. ինքը ու իր առաջընթաց հետիոտնը [փայկիլ] ամբողջ զորքից առաջ եկան Խոռոմապատ ասված գյուղը՝ իբրև հեծյալ զինվորներից մեկը:

Տեսավ գյուղի գլխավորներից ոմանց, որ կանգնած էին փողոցում և հարկահան իշխանների հետ հոգում էին արքա-

յի և այլ իշխանների կարիքների հոգսը. շահը խոսեց նրանց հետ ու ասաց. «Միայն ես, ձիս ու առաջընթացս ենք, շատ շենք, որ ծանր թվանք ձեզ, ձեզնից խնդրում եմ ի սեր շահի մեզ տեղ տաք այս գիշեր»։ Իսկ գյուղի մարդիկ նրա խոսքը բանի տեղ չդրին, քանզի ողջ էութամբ թագավորի կարիքներով էին դբաղված։

Ապա մի կին՝ տարեց պառավ, որ նույն գյուղից էր, շահին ասաց. «Եկ, որդյակ, եկ գնանք մեր տունը, եղիր մեզ հյուր»։ Եվ կինը շահին առավ տարավ իր տունը։ Շահը այնտեղ մնաց մինչև երեկո։ Պառավի ողջ ընտանիքը մեռել էին. ուներ միայն մի որդի, որի անունն էր Լալա, սա էլ իրենց խիստ աղքատ լինելու պատճառով գյուղի նախորդ էր դարձել։ Երեկոյան գալիս Լալան նախիրը բերեց, լցրեց գյուղը և ըստ իր սովորության սկսեց գյուղի տներից յուրաքանչյուրից մի-մի հաց հավաքել. հավաքեց տասնհինգ հաց, որ բռնել էր իր բազուկների վրա, և բերեց իրենց տուն։ Եվ երբ տեսավ, թե տանը հյուր կա, բոլոր հացերը բերեց դրեց հյուրի առջև. որ շահը ինքն էր։ Իսկ պառավը բացեց թոնիրը, հանեց պուտուկով եփված կտրկտ ապուրը, որը ոմանք վտոշ են կոչում. շահը այն հացով կերավ այդ կերակուրը և խոսեց ու շատ բան հարցուփորձեց նրանց հետ։ Ուշ երեկոյան, երբ գիշեր եղավ, ելավ գնաց իր տեղը։

Շահը այնտեղից շարժվեց գնաց հասավ Փահրապատ. և երբ Փահրապատից վերադարձավ և վերստին հասավ նույն գյուղը, իրեն այլակերպեց և գյուղացիներից իջևան խնդրեց, բայց չտվին։ Իսկ միևնույն պառավը կշկին եկավ նրա առջև և ասաց. «Որդյակ, դու մեր ծանոթն ես և հյուրը, եկ նաև հիմա գնանք մեր տուն»։ Եվ շահը գնաց պառավի տունը, իսկ պառավը կերակրեց նրան ըստ այն օրինակի, որ նախապես պատմեցինք։ Շահը մնաց այնտեղ մինչև երեկո. շատ բան, ինչ որ մտքում ուներ, հարցրեց նրանցից։

Ապա շահը նրանց ասաց. «Մի բան եմ կամենում հարցնել ձեզ, եթե շահին սիրում եք, ստույգ ասացեք ինձ. ահավասիկ այս տունը, որի մեջ մենք նստած ենք, սա և սրա շուրջ գտնվող մյուս սենյակները լայն, ընդարձակ ու մեծաշուք են երեկում. ինչպես սենյակներն են երևում, այնպես էլ ձեր խոսքը ու շարժմունքը մեծատան խոսք ու շարժմունք են, բայց

ձեզ խիստ չքավոր եմ տեսնում, իսկ տունն էլ ամբողջովին դատարկ է։ Խնդրում եմ սրա ստույգ պատճառը ինձ ասեք»։

Իսկ պառավը հոգոց հանելով խոր հառաչեց և սկսեց խոսել. «Տեսնում ես, որդյակ, այս ամենը, քո ասածը ճիշտ է, թե այդ տունը և սրա տակ եղած հարկերը մեծաշուք են երևում։ Ստույգ կերպով մենք մեծատուն էինք ու հարուստ այնպես, որ շատ կարոտյալներ ու պանդուխտներ այս տնով հովանավորված ապրում էին. թե չքավորները, թե աղքատները սրանով լինում էին ունեցվածքի և գույքի տեր. մենք ունեինք հոտով ոչխար՝ հազար հինգ հարյուր գլուխ, մատակ ձիերի երամակներ և շատ խոշոր անասուններ՝ լծկան ու կթան, արտ ու այգի, ջրաղաց, ոսկի ու արծաթ և տան շատ կահկարասիներ, Այս ամենը հեռացավ մեզնից, գնաց, և ոչինչ չմնաց, որովհետև մի մասը վաճառեցինք, տվինք արքունական հարկը, մի մասը վաճառեցինք, տվինք պալատքատերերին, մի մասն էլ [ծախսեցինք] մեր կարիքների վրա և եղանք դառն աղքատ։ Հետո իմ ամուսինը ու իր եղբայրները, այլ ընտանիքներ և սրանց որդիները բոլորը մեռան, այժմ մնացել ենք ես ու իմ այդ որդին, որ արդեն մոտ է լինելու երեսուն տարեկան, աղքատության պատճառով չեմ կարողանում դրա համար կին բերել, իսկ այլ տեղից ապրելու միջոց չունենք, ուստի իմ որդուն արի գյուղիս նախորդ, որ ամեն երեկո իր վարձի հացը հավաքում, բերում, կերակրվում ենք, ինչպես որ տեսարո եվ այսպես անց եմ կացնում իմ օրերը՝ սպասելով մահվան, որ գուցե նա ինձ հանգստացնի իմ տառապանքներից»։

Պառավի ասած խոսքերի վրա շահը մեծ զարմանքով բռնրվեց, սակայն շահը ասաց. «Այդ, որ ասացիր, թե իմ ամուսինը և մեր ողջ ընտանիքը մեռան, դա ասածու ձեռքն է, որովհետև նա պահում է, նա էլ մեռցնում, իսկ ինչ վերաբերում է ձեր ունեցվածքին, որ ասացիր, թե գնաց մեր ձեռքից, և եղանք չքավոր, սրա պատճառը ի՞նչ է»։

Պառավը ասաց. «Ոչխարի հարկն է, որ թագավորի հարկահանները գալով իբրև ոչխարների հարկ են առնում, որ տարեցտարի գնալով միմյանց հետևից, որքան գնաց, հարկը ծանրացավ, այնքան ծանրացավ, որ բոլոր ոչխարները ծախեցինք, տվինք հարկը, բայց դրանով էլ չազատվեցինք,

պարտքեր էլ առանք հարկ տվինք, ապա ունեցվածքները օրավուր վաճառելով՝ որը հարկ տվինք, որը պարտատերերին վճարեցինք, ոչինչ չմնաց, քանզի ոչխարի հարկը շատ ծանր էր: Արքան ու նրա նախարարները այս չգիտեն, այլ գրում են հարկի որքանութունը և տալիս են զինվորների ձեռքը, իսկ նրանք գալով կամա, թե ակամա բռնությամբ առնում են՝ ասելով. «Դիվանից այդպես գրված, տրված է և հրամայված է մեզ. այդ պատճառով այսպես ենք առնում և ոչ պակաս. որովհետև եթե պակաս առնենք, պակասը մեզ վրճարել կտան՝ ասելով, թե դուք եք զողացել: Այս պատճառով աղքատացանք ոչ միայն մենք, որ տեսնում ես, այլ բազմաթիվ մեծատուններ այդպես եղան, ոմանք մեր գյուղից, իսկ այլք այս գավառի ուրիշ գյուղերից»: Պառավը սկսեց նրանց բուրբին անուն առ անուն հիշել:

Շահը ասաց. «Ենչո՞ւ ձեր երկրից գիտուն ու ճարտարախոս մարդիկ չեն գնում և շահին հայտնում, և ես գիտեմ, երբ շահը վերահասու լինի դրանց, այդ հարկի ծանրութունը կվերացնի, որովհետև շահը աշխարհաշեն թագավոր է և չի կամենա, որ մեկնում եկը զրկանք կրի»: Պառավն ասաց. «Շատ անգամ գնացին, աղմկեցին, բայց դիվանական մատյանից հարկի որքանութունը չկարողացան հանել»: Շահը պառավի տանը մնաց մինչ առավոտ, իսկ առավոտյան մի մթնաժամի ելավ գնաց իր վրանը:

Եվ մի քանի օր հետո քննիչներ ուղարկեց այդ երկիրը. որ երկրի ամեն որպիսութունը ստույգ կերպով իմանան. սրանք գնացին, տեսան և գալով շահին պատմեցին՝ ասելով. «Թե շատ ավելի նեղության մեջ են այդ երկրի բնակիչները պեսպես պատճառներով, մանավանդ ոչխարի հարկի պատճառով. սրանով շահը գտավ, որ պառավի բոլոր ասածները իրավացի են: Եվ այս եղավ պատճառը, որ Շահ-Աբաս թագավորի սիրտը գուժ ու խիղճ ընկավ, որի հետևանքով ոչխարի հարկը վերացրեց ոչ միայն Ղազբինի երկրից, այլև ամբողջ Արաղստան երկրից: Ամբողջ երկրում, որ Արաղստան էր կոչվում, այժմ ոչխարի հարկ չկա:

Նաև իշխաններ ուղարկեց Խոռոմապատ գյուղը սպանելու այն մարդկանց, որ իրեն շքնդունեցին [իբրև հյուր], և

իր մոտ բերելու պառավին ու նրա որդուն՝ Լալային: Իշխանը գնաց, արեց ըստ շահի հրամանի. գյուղի մարդկանցից երեքին սպանեց, Լալային ու մորը առավ բերեց շահի մոտ: Իսկ շահը Լալային փառք ու պատիվ և կառավարական իշխանութուն տվեց. նշանակեց իր պալատում մեծապատիվ ու հավատարիմ նախարար, որ այդ օրից հետո կոչվեց Լալաբեկ: Սրանից հետո սրա որդիքն էլ հավատարիմ ու նախապատիվ էին պարսից թագավորների պալատում, սրա որդիներից մեկին, որի անունն էր Մահմադդուլի բեկ, թագավորը խանության իշխանութուն տվեց, որ կոչվեց Մահմադդուլի խան, և ուղարկեց Երևան քաղաքը: Սա գալով [Երևան], որոշ տարիներ իշխեց երկրի վրա:

Այս Լալաբեկի մասին մի զրույց է պատմվում, թե Շահ-Աբասի առաջակացներից ոմանք նախանձելով՝ Լալաբեկի վերաբերյալ շահի առջև շարխոսեցին, իսկ շահը կամեցավ խել նրա ունեցվածքը և իջեցնել հետին աղքատության: Շահը ինքը եկավ Լալաբեկի տուն և սկսեց բոլոր գույքերը գրի առնել ու զբաղել իրեն: Գրելիս տեսան մի սնդուկ ոսկե փականքը վրան դրված, փակված: Նրան ասացին՝ բաց, իսկ Լալաբեկը չբացեց, այլ շահին ասաց. «Այդ ամենը, որ գրի առար և տակավին գրելու ես, ամենը բովանդակ քեզ են պատկանում, իմը չեն, այս է միայն իմը, քանզի իմ հայրենի տանից այս եմ բերել: Արդ՝ խնդրում եմ, երբ քոնը կառնես, իմը ինձ շնորհես»: Ապա հարկադրելով սնդուկը բանալ տվին և տեսան, որ ոչինչ չկա նրա մեջ, բացի միայն մի զույգ մաշված ու չորացած տրեխից, որ շարուխն է, և հնոտի ու պատառտված գուլպաներից: Ամենքը ի տես սրանց զարմացած մնացին, դրա համար հարցրին, թե ի՞նչ բան է այս Լալաբեկը ասաց. «Այս այն տրեխն է, որ իմ հայրենի տանը հագնում էի և արդ՝ դրել եմ այստեղ ու միշտ գալիս նայում եմ, հիշում ու [ինձ] ասում. դու այն ես, որ միայն այս ունեիր. շահը քեզ այդպիսի աղքատութունից բերեց այսքան մեծության հասցրեց, զգույշ կաց, միգուցե թո սրտում նենգութուն գտնվի շահի վերաբերյալ և նրա մասին այլ շարխոսների հետ մի եղիր համաձայն, մի մոռանար նրա երախտիքը, որ այս ամենը շնա կոկորդոմոգ, ասածու և մարդկանց

առջև սեփական շահանքով: Երբ շահը այս լսեց ու տեսավ, հաս-
կացավ, որ նախանձից են շարախոսել նրան, ոչ մի բան
նրանից չառավ, այլ շնորհեց իրենից և առավել պատվով
փառավորեց, շքեղացրեց նրան և իր պալատում նրան պա-
հում էր իբրև բոլորից ամենահավատարիմը իր ողջ կյանքի
ընթացքում:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍ ՀՌԻՓՍԻՄԵՒ ՆՇԽԱՐՆԵՐԻ
ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՏԵՎԵՑԻՆ ՈՒ ՀԱՆՎԵՑԻՆ ՅՈՒՆԱԿՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԱՐՎԵՑԻՆ ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔԸ

Մեղքիսեթ կաթողիկոսի առաջնորդութան ժամանակ, մեծ
աքսորանքից հետո ֆռանկների երկրից ֆռանկ հայրեր եկան
Հայաստան, մտան Արարատյան գավառը և սկսեցին շրջել
հայոց այն վանքերում, որ գտնվում են այդ գավառում: Պար-
զամիտ հայրը չգիտեին, թե նրանք ինչ նպատակով են շրջ-
ում: Բայց նրանց ըստ իրենց մարդագող, երեսահաճ և խա-
բուսիկ բարքի ամենքին առիթնում էին. սրանք հանդիպե-
ցին նաև Մեղքիսեթ կաթողիկոսին, նրան խնդրեց տվին ու
ոսկի դահեկան, որ չհետաքրքրվի կամ հետաքնին շինի նրանց
գործերին, ինչ հետագայում անելու էին:

Հայրերը իրենց հետ քարտեզանման մի գիրք ունեին ի-
րենց լեզվով ու տառերով, որ ճշտորեն ու անսխալ ցույց էր
տալիս, թե որտեղ են սրբերի գերեզմաններն ու դամբարան-
ները, որ գտնվում են հայոց վանքերում, մատուռների շին-
վածքների որպիսությունը և թե որ կողմն են դուռն ու լու-
սամուտը. և շրջելով վանքերում՝ նրանք այն գրքով գտնում
էին սրբերի նշխարները, վանքերի բնակիչներին բան էին
տալիս և նշխարները առնում էին:

Նրանք շրջագայելով եկան Կարենի⁷⁸ գյուղը և իջան Առա-
քելոց վանքը, որ շինված է ձորի մեջ: Այն գրքով գտան Անդ-
րե առաքյալի գլուխը, որ մինչև այդ ժամանակ վանքի բնա-
կիչները, նաև բոլոր գավառացիները չգիտեին, թե որտեղ են
առաքյալների գերեզմանները, այլ միայն ավանդաբար լսել

էին սերնդնսերունդ, թե այնտեղ են գտնվում սուրբ ավետա-
բանիչ Մաթեոսի ու Անդրե առաքյալի գերեզմանները, բայց
տեղը բնավ չէին իմանում: Երբ հայրերը գնացին վանք և բե-
մի ներքևը ինչ-որ տեղ, որ գիրքը մատնանշում էր, փորեցին,
ահա տեսան՝ բացվեց ու երևաց Անդրե առաքյալի գլուխը,
ինչպես որ գիրքը գլխի վերաբերյալ մատնանշում էր: Երբ
գլուխը հանեցին, ինչ-որ սոսկում ու զարհուրանք ընկավ հայ-
րերի վրա: Երբ գլուխը հանվել է, նույն ժամին վանքի եպիս-
կոպոսը գլուխը հափշտակել է հայրերի ձեռքից ու շի տվել,
այլ նրանց դատարկ արտաքսել է վանքից: Եվ Անդրե առաք-
յալի սուրբ գլուխը գտնվում է միևնույն վանքում, որ շաա
անգամ ուխտ ենք արել ու համբուրել այն:

Իսկ հայրերը շատ ու քիչ շրջագայելուց հետո եկան Սուրբ
աթոռ էջմիածին և այնտեղ օթևան բռնելով մնացին շատ
օրեր: Ըստ իրենց մարդագող հնարքների մտերիմ երևալով
վանականների ու գյուղացիների աչքին՝ նրանց առիթնել էին:
Հայրերը ամեն օր գնում-գալիս էին սուրբ կույսեր Գայանեի
ու Հոփսիսիմեի տաճարները⁷⁹: Այս երեք տաճարներն էլ՝ թե
էջմիածնի, թե Գայանեի և թե Հոփսիսիմեի, ավերված խախտ-
ված, խարխուլված ու անշքացած էին իբրև մրգապահների այ-
գում եղած տաղավարը և իբրև սեխենիների մեջ գտնված հո-
վանին ըստ Եսայի Մարգարեի⁸⁰: էջմիածնում միայն սակա-
վաթիվ միաբաններ կային և այն էլ խիստ տգետ ու գռհհիկ:
Իսկ Գայանեի ու Հոփսիսիմեի վանքերը ամենևին անբնակ էին
ու անպարիսպ: Նաև եկեղեցիներն ու խորանները դռներ չու-
նեին, իսկ արտաքին կողմից՝ ամբողջ տանիքը և որմնաբեա-
ները քանդված էին, իսկ հիմքերը խարխուլված, ու խրամատ-
ված: Ներսի կողմից բնմն ու եկեղեցու հատակը քանդված
էին ու ամբողջ եկեղեցին և խորանները անասունների աղ-
բով լցված, որովհետև ամռան ու ձմռան օրերին անասուն-
ները՝ եղներն ու ոչխարները, մակաղում էին եկեղեցիների
մեջ. Գայանեի տաճարի տանիքը ամբողջովին նստել էր, միայն
պատերն էին կանգուն և ուրիշ ոչինչ:

* Ակնարկում է Եսայու մարգարեության այս խոսքը՝ «Լքված թողնվի
Սիոնի գուռը իբրև տաղավար այգում և իբրև մրգապահների հովանոց
սեխենիների մեջ» [Ես. Ա 8]:

Ըստ իրենց սովորութեան հայրերը [Ֆռանկ] անխափան գնում-գալիս էին սուրբ կույս Հովհաննիսի տաճարը և Հովհաննիսի գերեզմանի մատուցը, որ շինված էր գետնի խորքում՝ ավագ բեմի ներքեւը. և բեմը վերևի կողմից մատուցի վրա կառուցել, շինել էին իր տեղում՝ ավագ խորանի մեջ: Իսկ մատուցի դուռն ու լուսամուտը ոչ ոք չէր տեսել, որովհետև հայտնի չէր. մատուցի և եկեղեցու շինողը շինելիս իմաստութեամբ էր արել: Մատուցի դուռը և սրա ճանապարհը կողքից թողել էր եկեղեցու հյուսիսային խորանի մեջ: Մատուցի դռան լայնութեան ու երկարութեան շահով մի մեծ ու անշարժ վեմ քար, որ ոչ ոք չէր կարող շարժել, կոփել ու դրել էին մատուցի դռան մեջ իբրև սրա կափարիչ, բայց վեմ քարը այնպիսի հնարամտութեամբ էին դրել, որ ոչ ոք չիմանար և կամ համարեր, թե այնտեղ դուռ կա կամ վեմը նրա կափարիչն է, այլ վեմը համարում էին որմի շարած քարերից մեկը: Մեր ազգից ոչ ոք սրանց տեղյակ չէր՝ ո՛չ մատուցին, ո՛չ էլ սրա դռանը: Իսկ Ֆռանկ հայրերը իրենց գրքով գտել էին մատուցի դուռը և շատ աշխատանք ու շարչարանք էին կրել կափարիչ վեմի վրա, որ վեր բարձրացնեն, բայց շին կարողացել: Եվ դուռը բանալու շարչարանքից, մտորումներից ու խոհումներից հետո եկել են այն համոզման, թե չի լինի, ապա թողել են մատուցի դուռը, եկել էլ են բեմը՝ ավագ խորանը: Առաջաբեմի վերևի կողմից և ընծայարանի ներքեւից ըստ իրենց գրքի ցուցման դռան ճանապարհն է. նրա հանդեպ այնքան են փորել, մինչև որ դռան ճանապարհի առաստաղը ծակել են և իջել ներս ճանապարհի մեջ, ապա ներքուստ և արտաքուստ այնքան են շարչարվել, մինչև որ կափարիչ վեմը թրոցրել են տեղից և դուրս են գցել հյուսիսային խորանի մեջ:

Սրանցից հետո իջել են մատուցի գերեզմանի մեջ և գերեզմանի տապանաքարը գլորել են հեռու և փորել Հովհաննիսի կույսի գերեզմանը այնքան, մինչև հասել են տապանին, որի մեջ դրված են եղել Հովհաննիսի սուրբ մասունքները: Առավել ևս փորել են, մինչև որ նշխարների տապանը իր բուն տեղից ու ամբողջունից թոցրել են: Ապա նշխարներով լի տապանը մատուցից դուրս են բերել մեծ եկեղեցու մեջ և կամեցել են նշխարները վերցնել:

Եվ աստժու խնամքների ու ողորմությունների և սուրբ

Լուսավորչի աղոթքների շնորհիվ այդ նույն օրվա միևնույն ժամին սուրբ էջմիածնի եպիսկոպոսներից երկու հոգի՝ մեկի անունը Գրիգոր եպիսկոպոս, մյուսին՝ Վարդան եպիսկոպոս, ելել են զվարճանալու համար շրջագայելու և շրջելով հասել են սուրբ Հովհաննիսի տաճարը. և այն ժամին են վրա հասել, որ հայրերը [Ֆռանկ] տապանը նշխարներով բերել են եկեղեցու մեջ և կամեցել են նշխարները վերցնել: Եպիսկոպոսները հայրերին այդ գործի վերաբերյալ հարցրել են, իսկ նրանք թեպետ խոսք են կցմցել և բարբաջել, բայց չի հարմարվել: Իսկ եպիսկոպոսները շրջելով եկեղեցում՝ ամեն ինչ տեսնում են՝ վերևից ծակը, կողմից դուռը և մատուցը, գլորած տապանաքարն ու փորված գերեզմանը: Լուզված ու զայրացած եկել են հայրերի մոտ և կոխել ու աղմուկ են արել նրանց հետ, մինչև անգամ միմյանց ծեծել, վիրավորել: Վարդան եպիսկոպոսի գլխին հայրերը խփել էին ու վիրավորել, որովհետև հայրերը երեք հոգի են եղել, իսկ եպիսկոպոսները՝ երկու. սպին ու վերքի տեղը այս ժամանակ մեզ ցույց տվեց և այս պատմությունը մեզ նա պատմեց, որոնց ինքը ականատես էր եղել. սրան թող տերը ողորմի և թողություն տա նրա հանցանքներին: Եպիսկոպոսները շին թողել, որ հայրերը այդ ժամին նշխարներից մաս վերցնեն և ծեծ կռվից հետո երկու եպիսկոպոսները վերցրել են նշխարներով լիքը տապանը և բերել են էջմիածին. հայրերը նույնպես նրանց հետ եկել են էջմիածին: Իսկ եպիսկոպոսները տապանը նշխարներով լիքը դրել են հրապարակի վրա. միաբանները լսելով՝ վրա են հավաքվել, այլև եկել են գյուղացիները և մինչև իսկ Մելքիսեթ կաթողիկոսը ինքը: Եվ ովքեր եկել տեսել և իմացել են, հիացել ու զարմացել են և ասել. «Մենք որ հայրերից ու պապերից այստեղ ենք ծնվել ու սնվել, այսքան ժամանակ բնավ տեղյակ չենք սրանց, իսկ սրանք օտար մարդիկ, նաև պանդուխտ, ինչպե՞ս կարողացան գտնել և այսպիսի գործ անել: Եվ եղած գործի պատճառով վանքի եպիսկոպոսներն ու միաբանները խիստ սրտմտութեամբ ու սաստիկ բարկութեամբ վիճաբանում ու կռվում էին հայրերի հետ: Սպասում էին կաթողիկոսին, թե կգատապարտի հայրերին ու վրեժխնդիր կլինի նրանցից: Իսկ նա, որ հայրերից առել էր ոսկի դահեկան-

Աւեր, այն ոսկով կաշառակուր եղաւ նրա մտքի տեսողութիւնը, շեղաւ վրեժխնդիր, այլ թույլ տալով՝ անհող մնաց:

Այն ժամին հայրերը իրենց հետ ունեին նախապես պատ-բաստած մտմաթից, այսինքն՝ մուշամբայից քսակ: Վստահ լինելով կաթողիկոսի մարդահաճութեան վրա՝ առաջ եկան նշխարներով լիքը տապանի մոտ և քսակը բացին. հայրերից մեկը իր ձեռքը պատեց մաքուր ու սպիտակ թաշկինակով և նշխարներից վերցրեց, լցրեց քսակը. կամենում էր բոլոր նըշխարները վերցնել: Եպիսկոպոսները այդ տեսնելով՝ լցվեցին ցասմամբ ու բարկութեամբ, վրա հասան խփեցին հայրերին ու դեն հրեցին. շթողին այլևս նշխարներից վերցնել, շատը մնաց տապանի մեջ. հայրերը գլուխն էլ էին վերցրել, եպիսկոպոսները այն ևս հափշտակեցին և դրին տապանի մեջ՝ Վերոհիշյալ Վարդան եպիսկոպոսը ասում էր, թե քանի ձեռք չէին մոտեցրել նշխարներին, նշխարների որակն ու գույնը սպիտակ էր, իսկ երբ ձեռք մոտեցրին, նշխարների գույնը դեղնեց:

Եվ այս ամենի վրա եպիսկոպոսները սկսեցին լալ ու ողբալ և կաթողիկոսին դժգոհութեան ու մեղադրութեան խոսքեր ասել. թե թող արդարադատ աստված քեզնից վրեժխնդիր լինի սրբերի նշխարների համար, որովհետև սուրբ Լուսավորչի օրերից մինչև այսօր այս սրբերի նշխարները չէին խախտված կամ որևէ տեղ ցրված. և սրանք էին հայրերի հավատի սկիզբը ու հաստատութունը և մեր երկրի լիութունն ու բարութունը, իսկ դու այսօր ցրվեցիր: Իրենց լաց ու սուգից հետո եպիսկոպոսները վերցրին տապանը մնացած նշխարներով և դարձյալ տարան սրբուհի Հռիփսիմեի տաճարը և իջեցնելով մատուռի մեջ և գերեզմանը ավելի խոր փորելով՝ նշխարներով լիքը տապանը դրին գերեզմանի մեջ և ամեն կողմից կրով ու խճով մածուցին, ամբարցրին և ծածկելով գերեզմանը, տապանաքարը դրին վրան: Իսկ մատուռի դուռը շիցեցին, այլ մնաց բաց, ինչպես որ հիմա տեսնվում է. այն ծակը, որ վերեկից՝ բեմից ծակեցին, խցեցին, բայց հետաքրքրվողին հայտնապես երևում է ճանապարհի ներքեկից, որովհետև ծակի վրա դրված քարերը դեռևս սպիտակ են:

Իսկ հայրերը սուրբ Հռիփսիմեի նշխարները քսակով առան և դնացին Երևան քաղաքը. մտածում էին, թե ինչ ճանապար-

հով տանեն իրենց երկիրը, քանզի հոռոմների երկրով (Թուրքիա) չէին կարող գնալ օսմանցիների երկուղից, որովհետև այն ժամանակ մեծ թշնամութուն ու ուժեղ պատերազմ կար օսմանցիների ու ֆոանկների միջև. այս պատճառով չէին կարող օսմանցիների երկրով գնալ: Ապա հայրերը Երևանից ելան, նշխարները իրենց հետ առած եկան Նախիջևան երկրի Երնջակի⁸⁰ գավառը՝ ֆոանկների Ապարաներ⁸¹ գյուղը. այնտեղ նշխարները բաժանում են երկու-երեք մասի, իսկ հայրերը իրենք մնացել են այնտեղ, նշխարների երկու մասը պահել են իրենց մոտ, իսկ մի մասը իրենց հավատարիմ մարդկանց հետ ուղարկել են Սպահան քաղաքը, ֆոանկների վանքը, որ Հուսենիա են կոչում, քանզի ֆոանկները Սպահան քաղաքում երեք վանք ունեն: Նշխարներ բերողները նշխարները հասցրել են ֆոանկների Հուսենիա վանքը և սնդուկով պահել մի տան մեջ. սպասելիս են եղել հարմար ժամանակի, որ առնեն, տանեն Բանդարի վրայով Գվա՝ քաղաքը Փորթուզալիային պատկանող երկիրը, որ այնտեղից նավով տանեն բուն Ֆոանկստան:

Դավիթ կաթողիկոսը այս ամեն եղելութուններին տեղյակ չէր, քանզի այդ օրերին նա բնակված էր Սպահան քաղաքում: Դավիթ կաթողիկոսը ուներ մի հավատարիմ հայ սպասավոր, որի անունն էր Գրիգոր. սա հմուտ ու զգուշավոր էր իր սպասավորութեան ու գործի մեջ: Այս մարդը գիտեր ֆոանկների լեզուն, որովհետև միշտ գնում էր ֆոանկների վանքը և նրանց սպասավորում էր իր օգտի համար: Մի օր գինի խմելիս ասածու խնամքներով քաղցրացել են խոսքի մեջ և շատ խոսքերի հետ նշխարներ բերող ֆոանկների սպասավորները այն էլ են ասել կաթողիկոսի սպասավոր Գրիգորին, թե գնացինք ձեր երկիրը և տեսանք ձեր էջմիածին աթոռը և այնտեղից հանեցինք սրբուհի կույս Հռիփսիմեի նշխարները և բերինք այստեղ. և ահա սնդուկով գտնվում է այնինչ տանը, կամենում ենք տանել Փորթուզալիա երկիրը, որ այնտեղից էլ տանենք բուն իսկ Ֆոանկստան:

Իսկ խելոք ու խոհուն [հայ] մարդը խոսքը այդ ժամին թաքցրել է իր սրտում և ասողին ուրախացրել է, բայց հաշորդ

* Հեղինակը նկատի ունի Հնդստան թերակղզու արևմտյան ափի Գոան:

օրը գնացել է Դավիթ կաթողիկոսի մոտ և հայտնել ֆռանկներին լսած խոսքը:

Այդ ժամանակ Արարատյան երկրից շատ հայ քրիստոնյաներ և մանավանդ Նրեան քաղաքի ժողովուրդը բնակվում էին Սպահան քաղաքում: Նրանցից Դավիթ կաթողիկոսը նշանավոր ու վստահելի ոմանց կանչեց իր մոտ և նրանց հայտնեց խոսակցությունը: Նրանք շատ տխրեցին և լցվեցին վրեժխնդրության բենով: Թե կաթողիկոսը, թե նրանք միասին գնացին ջուղայեցիների մեջ խոջա Սաֆարի մոտ, որ ջուղայեցիների ավագն էր. ոչ միայն ջուղայեցիների, այլև այն բոլոր հայերի, որոնք գտնվում էին պարսից թագավորության ներքո, քանզի խոջա Սաֆարը և իր եղբայր խոջա Նազարը լավ ընդունելություն էին գտնում պարսից թագավորի ու նրա իշխանների մոտ. խոջա Սաֆարին հայտնեցին այս գործի մասին: Խոջա Սաֆարը, կաթողիկոսը, Աղա տերտերը, որ երկվանցիների ավագն էր, միասին գնացին Միրզամահմադ անունով քաղաքապետի մոտ, որին շահը նշանակել էր Սպահանի քաղաքապետ, իսկ շահը այս ժամանակ Սպահանում չէր, այլ Թավրիզում էր. խոջա Նազարն էլ այնտեղ շահի մոտ էր: Քաղաքապետին հայտնելուց հետո նրանից զինվորներ առան, հանկարծակի գնացին ֆռանկների վանքը և բանալով ասված տան դուռը՝ գտան նշխարով սնդուկը՝ նշխարներով լիքը սնդուկը առան, բերին քաղաքապետի մոտ, իսկ նա իր մատանիով կնքել էր սնդուկը, ավանդ տվել խոջա Սաֆարին այն պահելու համար, մինչև շահի գալը և այն պահանջելը:

Այս ամբողջ գործի անցուղարձը և որպիսությունը խոջա Սաֆարն ու Դավիթ կաթողիկոսը գրավոր հայտնել են խոջա Նազարին, որ Թավրիզում էր գտնվում: Իսկ խոջա Նազարը, որովհետև համարձակ էր շահի մոտ, հայտնեց նրան և շահից խնդրեց՝ հրամանագիր ու թագավորական սպասավոր ուղարկել հայերի հետևից, որոնք նշխարները հանել են, որպեսզի նրանց բռնի ու բերի թագավորի առջև: Շահը խոջա Նազարի խնդրանքը լրիվ կատարեց: Բայց գործը այսպես դասավորվեց. թագավորական ծառան, որին պատրաստեցին գնալու համար, ազգությամբ հայ էր և հավատքով քրիստոնյա հայոց դավանությամբ, իսկական անունն էր Ավետիք, բայց մի այլ մականունով նրան կոչել էին Ալթուն: Այն ամե-

նը, ինչ պատշաճ էր այդ գործի վերաբերյալ, խոջա Նազարը պատվիրեց Ալթունին: Եվ այս Ալթունը գնաց հասավ Նախիջևան դավառը, մտավ ֆռանկների Ապարանի գլխավոր, նույն ժամին եպիսկոպոսին, քահանաներին և ֆռանկների ժողովրդի երեկելիներին բռնեց, կապեց ու, կալանավորեց և նրանցից պահանջում էր ցույց տալ նշխարներ հանող հայերին, իսկ նրանք չէին կամենում ցույց տալ: Բայց Ալթունը նրանց շարձարում էր և կախելով բրածեծ էր անում, և նրանք հարկադրված ցույց տվին նշխարներ հանող հայերին, որոնց անուններն էին՝ հայր Գլելուն և հայր Արքանջելի: Այնուհետև խիստ պարտադրանքով նրանցից պահանջում էր նշխարները, իսկ նրանք չէին կամենում ցույց տալ: Բայց Ալթունը սկսեց կախել, սաստիկ բրածեծել և ավելի խիստ շարձարել ու տանջել նրանց: Եվ այսպես շատ օրեր անխղճորեն շարձարում էր նրանց, որովհետև նշխարները ցույց չէին տալիս:

Մի օր այն գյուղի քահանաներից մի քահանայի կախեցին և երկար ժամեր անխղճորեն ծեծում էին. այդ քահանանուններ ևղբորդի մի փոքրիկ տղա, որ նրա մոտ կանգնած աղիողորմ լաց էր լինում: Երբ տղան այնտեղ կանգնած մարդկանց հարցնում է, թե ինչու են իմ տերտերին կախել ծեծում, մարդիկ մանուկին պատասխանում են, թե սրբերի նշխարները բերել են այս գյուղը, պահանջում են դրանք ցույց տալ, իսկ մենք տեղյակ չենք, որպեսզի ցույց տանք, այս պատճառով կախել ծեծում են: Տղան [հարցը] կրկնելով ասաց նրանց՝ ապա այն ի՞նչ է, որ մեր ամենաներսի սենյակում է, և ամեն օր ճրագ են վառում նրա առջև: Մինչև այդ վայրկյանը Ալթունը բնավ հայերեն չէր խոսել և կամ իրեն հայ չէր ցույց տվել. ինքը նույնպես մարդկանց մեջ կանգնած էր, երբ տղան այդ խոսքն ասաց: Եվ երբ ինքը՝ Ալթունը տղայից այդ խոսքը լսեց, նույն պահին դարձավ տղայի կողմը և խանդաղատանքով խոսեց նրա հետ և ասաց. ի՞նչ ասացիր, որդի, մեկ էլ ասա: Իսկ տղան կրկնելով դարձյալ նույն խոսքը ասաց: Ապա Ալթունը տղային ասաց. «Ըթե ասածդ ինձ ցույց տաս, քո տերտերին արձակելով կթողնեմ, իսկ քեզ ու քո տերտերին վերարկու կհագցնեմ իբրև նվեր, ապա թե ոչ այնքան կծեծեմ քո տերտերին, որ փայտի տակ կմեռնի»: Ապա ինքը՝ Ալթունը բռնեց տղայի ձեռքից և ասաց. «Եկ, որդյակ,

գնանք ձեր տունը և ասածդ ինձ ցույց տուր:» Հասնելով տուն՝ անցան սենյակի սենյակ մինչև ամենաներսի սենյակը, որտեղ նշխարներն էին: Ալթունը տեսավ, որ բարձր տեղում հանգստանում էին՝ մաքուր շորերով ծածկված, իսկ ճրագը նրանց առջև վառվում էր: Ալթունը բացեց, վերցրեց ողջ ծածկույթը և տեսավ, որ իրոք նշխարներն էին: Ինքը առավ իր գիրկը, դուրս բերեց և ըստ տղային տրված իր խոստման քահանային թողեց և խոստացած վերարկունները պարզեց քահանային ու տղային:

Այնուհետև Ալթունն սկսեց խստագույնս շարշարել մյուս կալանավորներին, մանավանդ նշխարներ հանող հայրերին. դրանք շղիմանալով դառը տանջանքներին, ասացին թե՛ «Բացի այն մեկից, որ սարում ենք պահել, ուրիշը չկա, այժմ ցերեկը համբերիր, որովհետև շի լինի, իսկ գիշերը գնանք տեղը, հանենք տանք քեզ»: Այն սարը, որտեղ նշխարները թաքցրել էին, այդ ամբողջ երկիրը Բոլու է կոչվում, որ մոտիկ է Ապարանի գյուղին. սա մի բարձր քարածայռոտ սար է: Եվ այն գիշեր, երբ հայրերը գնացին սարը, Ալթունն էլ գնաց ջրանց հետ: Երբ նշխարները թաղել են այնտեղ, բեռուային աստղի նշաններով էին թաղել, այժմ էլ սկսեցին բեռուային աստղի նշաններով երթևեկ կատարել: Այնքան այստեղ-այնտեղ երթևեկ արին, մինչև ստույգ եկան թաղված տեղի վրա կանգնեցին: Ապա սպասավորներին հրամայեցին տեղը փորել: Եվ երբ մինչև վերջ փորեցին, տեսան նշխարներով լիքը մի արծաթյա թաս. այն էլ վերցրին տվին Ալթունին, իսկ Ալթունն առավ նշխարներն ու հայրերին, վերադարձավ Ապարանի գյուղը և նրանցից այլ նշխարներ ևս պահանջեց: Իսկ նրանք ոտքերը ընկան, լաց եղան և ծանր երդումներով երդվեցին, թե էլ չկա:

Իսկ Ալթունը ինքը Աստապատ գյուղից էր. որի տունը այնտեղ էր: Նա ելավ Ապարանի գյուղից, իր հետ վերցրեց նըշխարները և նշխարները հանող հայրերին, եկավ իր Աստապատ գյուղը:

Այս օրերին սուրբ վարդապետ Պողոսը պատահաբար եղավ Աստապատ գյուղում. այս վարդապետի պատմությունն ևմ արել ներկա շարադրանքի մեջ. Պողոսի մոտ է գնում Ալթունը և նրա առջև տանելով բոլոր նշխարները՝ վարդապետին առա-

ջարկում է իր բաժինը վերցնել. վարդապետը նշխարներից մի մատի չափ մաս է վերցնում, մնացածը Ալթունը հալաքում է իր մոտ: Ալթունը վարդապետին այս էլ է ասել. «Եթե ինձ շնորհաբար հայրերի համար, սրանց մարմինները կթողնեմ այստեղ, կվերցնեմ սրանց գլուխները միայն և կտանեմ թագավորին»: Իսկ սուրբ վարդապետը խղճում է հայրերին իրրև քրիստոնյաների, շի թողնում, որ նա ասածը անի:

Վարդապետը տարիներ հետո գնաց Նախիջևան քաղաքը. այդ քաղաքին մոտիկ մի գյուղ կա, որ Քուլթափա են կոչում: Մինչև այդ ժամանակ գյուղում եկեղեցի չկար, այնտեղ հիմնարկեց եկեղեցի և եկեղեցու հիմքում դրեց նշխարների այն մասը, որ վարդապետը վերցրեց. սրա վրա եկեղեցի շինեց, ավարտեց: Եկեղեցու օժման օրը եկեղեցին անվանեց Սուրբ Հովհիսիմես: Բայց այժմ այն գյուղում եկեղեցու վրա հաստատված հայկազուն քրիստոնյաները սակավ են:

Իսկ Ալթունը Աստապատից ելավ, իր հետ առավ հայրերին ու նշխարները, գնաց հասավ Թավրիզ և խոջա Նազարին ներկայացրեց նշխարներն ու հայրերին: Խոջա Նազարը հայտնեց շահին. խնդրեց ու ասաց. «Քո՞ մեր թագավորի բախտի հաջողության համար շիողեց, որ այն նշխարները գնան Ֆոանկստան: Որովհետև եթե գնային, ողջ հայ ժողովուրդը նրա հետից կգնար, քանզի ողջ հայ ժողովուրդը կխաված է նրանից. մանավանդ ջուղայեցի և Գողթան գավառի ժողովուրդը, որոնցից շատերը այժմ վաճառականությամբ Ֆոանկստանում են և հազիվ թե նրանք վերադառնան այս երկիրը: Իսկ մեր խնդրանքը արքայից այս է. մի գուցե այս նշխարներից մի մաս բաժանված է, և եթե ֆոանկները սրանցից [մաս] են առել, այն ևս նրանցից առնի և մեզ տա: Այս բանը նախքան դատաստանի քննության օրը խոջա Նազարը ասաց շահին: Իսկ շահը պատասխանեց, թե որովհետև ջուղայեցիների կամքը այդպես է, ջուղայեցիների ցանկության համար և քո միջնորդության շնորհիվ կանեմ այնպես, ինչպես դու ասացիր:

Եվ այն օրը, երբ շահը դատաստանի նստեց, Ալթունը նըշխարը և հայրերին բերեց շահի առջև: Շահը հարցրեց և ըստ ամենայնի տեղեկացավ: Հայրերին թողեց առանց պատժի, քանզի այն ժամանակ միմյանց միջև խաղաղության դաշինք

էին ուխտել ու հաստատել շահն ու ֆոանկներին թագաւորը, և հաճոյակատարութիւն անելով նրանց՝ հայրերին չպատժեց, այլ ազատ արձակեց առանց պատիժների: Իսկ հայրերը շահի ներողամտութիւնից համարձակութիւն անենով շահին ասացին. «Այսքան շարժարանք ու նեղութիւն, որ մենք կրեցինք նշխարների համար, խնդրում ենք, որպէսզի նշխարներից մի մաս արքան մեզ պարգևի»: Շահը նրանց պատասխանեց զարմացական մեղադրանքով, ասաց. «Որո՞նց ինչքը առնեմ, ձեզ տամ, որովհետեւ այս նշխարը, որ խնդրում եք հայրերինն է. և ի՞նչ օրենք կհաստատի, որ ես նրանց ինչքը առնեմ, ձեզ տամ»: Ապա շահը հրաման տվեց՝ բոլոր նշխարները տալ խոջա Նաղարին, այդպէս էլ եղավ: Սրանից հետո շահն է կամեցել նշխարները ուղարկել Սպահան քաղաքը. խոջա Նաղարին ասել է, թե այսպէս եմ կամենում անել, նա էլ սրան հավանութիւն է տվել: Ապա շահը նամակ է գրել Սպահան խոջա Սաֆարին, թե՛ «ձեր միջնորդութիւն համար ե ըստ ձեր սրտի ցանկութիւն, ֆոանկներից առա ձեր սրբերի նշխարները և պարգևեցի ձեզ. արդ՝ ուղարկեցի քեզ, իբրև ավանդ պահելու համար, այժմ ընդունիր այդ և պահիր, մինչև պահանջեմ, քերես իմ առջև»: Իսկ խոջա Սաֆարը առել և ընդունել է նշխարները, իր տանը պատրաստել է պատշաճավոր տեղ և այնտեղ հանգստի է դրել: Եվ ըստ արժանւոյն սրբութիւնների՝ ամեն օր անուշահոտ խունկերով, պայծառ մոմերով պաշտում էր դրանք որքան ինքը և որդիքը կային, իսկ այժմ էլ [նույնը անում են] թոռները, և այնտեղ են գտնւում մինչև այսօր:

Արդ՝ սրբուհի Հռիփսիմեի նշխարները այսպէս են խլված եղել ֆոանկներից և այսպէս են եկել Սպահան քաղաքը:

Իսկ նշխարները հանող հայրերը, որոնց շահը ազատեց, թավրիղից ելան, երկրորդ անգամ գնացին Նախիջևան, որպէսզի վերստին գնան Արարատյան գավառը սրբերի նշխարներ որոնելու:

Մինչ հայրերը տակավին Նախիջևանի գավառում էին, մի օր պատահաբար տեսան Նախիջևան քաղաքի բոլոր գավառների իշխան Մախսուդ սուլթանին: Նրանց միջև կայացած խոսք ու զրույցի երկարելով, որ վերաբերում էր հավատին, սուլթանն ասել է հայրերին. «Ապա մեր պատգամաբեր Մահ-

մեդին ամենեկին չեք պատվում և ընդունում»: Նույն ժամին նրանց դիմաց նստած է լինում մի շուն. մեկը հայրերից ձեռքը մեկնելով դեպի շունը՝ ասում է. «Ի՞նչ է Մահմեդը, որ նրան պատվենք, թե Մահմեդը և թե այն շունը զուգահաւասար են»: Այս խոսքի վրա սուլթանը, նրա բոլոր մարդիկ ու ծառաները խոր խոցվել են և մահու շափ վիրավորվել, բայց ոխը ժամանակավորապէս թաքցրել են իրենց սրտերում և դո՛ւրս չեն բերել:

Իսկ հայրերը շատ թե քիչ օրեր հետո Նախիջևանից ելած գնացին Սրևան, իսկ այնտեղից ելել են, որ գնան Գեղարքունիք և, երբ հասել են այն լեռանը, որ Սուլեյմանի սար են ասում, նրանց հետևից եկել են հինգ հեծյալ՝ ազգով զլլրաշ մարդիկ, հասել են հայրերին. և մինչ նրանց հետ զրուցելու ճանապարհ էին գնում, հանկարծակի սրով զարկել և սպանել են երկու հայրերին, որոնք Հռիփսիմեի նշխարները հանողներն են եղել:

Նրանց հետ եղել է մի այլ աշխարհական մարդ, որ հայրերի սպասավորն էր. սրա անունը Աղամիր է եղել՝ ֆոանկների Ապրակունիս գլուղից: Հայրերին սպանելու ժամանակ այս մարդը փախել է մի քարածալուի կողմ, զլլրաշ զինվորներից մեկը ընթանալով նրա հետևից՝ այնտեղ նրան հարվածել է սրով՝ գլխին, պարանոցին, ուսին, արմունկին: Վիրավորւած մարդը ընկել է գետին և իրեն ձևացրել է մեռած: Զինվորը ևս նրան ստույգ մեռած է համարել, որովհետև մարդուն հարվածել է ոտքով և բարձրից՝ քարածալուի գլխից նրան նետել է ներքև քարի վրա, ինքը գնացել է իր ընկերների մոտ: Իսկ այս գործը կատարած զինվորները առել են նրանց ունեցվածքը, ինչ որ հավանել են և գնացել են իրենց ցանկացած տեղը:

Եվ այս զլլրաշ զինվորները, որոնք հայրերին սպանեցին, ոմանք ասացին, թե Մախսուդ սուլթանի զինվորներից էին, որոնք Մահմեդին անարգելու համար [հայրերը անարգեցին՝ ասելով, թե նա զուգահաւասար է շան] Մախսուդ սուլթանը ուղարկեց նրանց թաքուն սպանելու, և զինվորները եկան այդպէս էլ արին: Ոմանք էլ ասացին, թե հայրերին սպանող զորականները Ամիրգուճախանի զինվորներից էին, որ էջմիածնի գավառի իշխանն էր: Սա հայրերի հետևից [մարդ] ուղար-

կեց նրանց սպանելու երկու պատճառով. նախ՝ Սուրբ Հոսիփ-
սիմեի նշխարների վրեժխնդրությունը լուծելու, որ Ամիրզու-
նա խանի գավառից նշխարները հանեցին և տարան այլուր.
և երկրորդ՝ ասացին, թե Ամիրզունա խանը լսել էր, որ այդ
հայրերի մոտ ոսկու և արծաթի մեծ գանձեր կան, այդ գան-
ձերի համար զինվորներ ուղարկեց, սպանեց նրանց և գան-
ձը առավ: Արդ՝ Մախսուդ սուլթանից, Ամիրզունա խանից,
թե որտեղից [փաստ է, որ] զինվորներ եկան և սպանեցին
հայրերին, իսկ հայրերի սպասավորներին վերավորված զցե-
ցին քարաժայռից ցած:

Իսկ մենք, երբ պատմություն գրելու համար ելանք, շեր-
ջեցինք, գնացինք Նախիջևանի երկիրը՝ Երնջակ գավառը,
Ապարաններ գյուղը, հանդիպեցինք այս մարդուն՝ Աղամիրին.
տեսանք իրեն, վերքերի տեղն ու սպիները: Նա մեզ պատմեց
վերոհիշյալ պատմությունը: Իսկ վերջում ասաց. «Թե երբ
ինձ քարաժայռից զցեցին, վայր ընկա գետի ջրի մեջ. սա այն
գետն էր, որ Կոթա գետ են կոչում: Գետի ջուրը ինձ առավ
տարավ ու դեմ արեց մի քարի, այն քարը եղավ ինձ արգելիչ,
և ինձ արգելեց մինչև երեկոյան մթնելը՝ աստղերի ելքը: Եվ
այս ամենը եկավ իմ գլուխը, ու ես ասածու շնորհներով կեն-
դանի էի և գիտեի այն ամենը, ինչ որ պատահել էր ինձ: Աստ-
ծու ողորմությամբ գետի ջուրը ինձ շխեղեց, իսկ երբ երեկոն
մթնեց, գետից դուրս եկա, գնացի, բայց չգիտեի, թե ուր եմ
գնում. բայց գնալիս հանդիպեցի մի շատ բանով ու ոտնա-
կոխ ճանապարհի: Ինձ ու ինձ մտածեցի, թե ճանապարհի
վրա կանգնեմ, որպեսզի սրա անցորդներին հարցնելով իմա-
նամ, թե ինչ պետք է անեմ: Այնպես եղավ, որ առավոտյան
արշալույսին գրաստներով ինչ-որ հայ մարդիկ եկան, որ
զնում էին ինչ-որ գյուղ: Ես ելա խառնվեցի նրանց, իսկ նրանք
իմանալով ինձ հետ ամբողջ պատահածը, ինձ գրին գրաստի
վրա և հասցրին մի գյուղ, իսկ ես գյուղացիներին ամեն ինչ
պատմեցի: Գյուղացիներից ոմանք գնացին հայրերի սպանու-
թյան վայրը, տեսան հայրերը սպանված, և նրանց բոլոր
գրքերը, թղթերը, զգեստները ցրված անբնակ վայրում: Այն-
տեղ ճանապարհին մոտ փոս փորեցին, հողով արին, ծած-
կեցին նրանց: Իսկ ես մնացի գյուղում, մինչև իմ վերքերը
առողջացան, ապա ելա եկա իմ տունը: Արդ՝ Աղամիր անու-

նով այս մարդը, որ ականատես էր եղել բոլոր գործողություն-
ներին, պատմեց մեզ այն տեղից, որ ելել են Նախիջևանից
մինչև այստեղ:

Իսկ հետագայինը, որ այժմ պիտի պատմեմ, Մարտիրոս
անունով մի եպիսկոպոս պատմեց, որ ինքն էր աչքով տեսել
Ասում էր, թե «Ֆոանկների երկրից եկավ մի այլ հայր՝ Մել-
քիոր անունով. սա արժանացավ շահի տեսությանը, որ այն
ժամանակ Թավրիզում էր: Եահը իր ամբողջ բանակով Թավ-
րիզից ելավ, եկավ Գեղամա երկիրը, նրա հետ եկավ նաև
հայր Մելքիորը, որովհետև իբրև եկած դեսպան էր ձևանում
և շահից պատիվ էր ստանում: Սա մեծատոհմիկ էր ու փա-
ռավոր, և շահը շատ էր խոսում նրա հետ: Մի օր խոսքի մեջ
Մելքիորը շահին ասել է, թե ժամանակներ առաջ մեր հայրե-
րից ոմանք եկել են այս երկիրը, ավաղակների կողմից սպան-
վել ու թաղվել են լեռներում: Արդ՝ ես ցանկանում եմ նրանց
ոսկորները հանել և տանել իրենց հայրական գերեզմանա-
տուն: Իսկ շահը կրոնով և ազգով հեթանոս լինելով, մեռել-
ների ոսկորները նրա փուլթը չէին: Նրան պատասխանել է՝ դու
գիտես: Ապա Մելքիորը մարդիկ է ուղարկել վայրը, որոնք
հանել են Գլելումի և ընկերոջ ոսկորները, բերել են իրեն, իսկ
ինքը իր հետ տարել է իրենց ընդհանրապես երկիրը իբրև
մարտիրոսի նշխարներ: Այս էլ այսպես:

Այս ժամանակ, երբ մենք կանք, մեր հայոց 1107 [1658]
թվականն է, որ ժամանակ նաև այս պատմությունը շարա-
դրելով գրեցինք. այնպես պատահեց, որ մենք եկանք Սպա-
հան մեծահանդես քաղաքը: Քանզի այստեղ էր եկել ամենայն
հայոց խոհամիտ, մեծահոգի, արժանաժառանգ հայրապետը՝
Սուրբ Էջմիածնի տեր Հակոբ կաթողիկոսը ի տեսություն և
այցելություն Քրիստոսի բանավոր հոտին, որ վստահեց նրան
[կաթողիկոսին], նաև եկել էր իբրև Սուրբ Էջմիածնի նվի-
րակություն ու արքունիքի հետ կապված աշխարհական
գործերի կարգավորման համար: Կաթողիկոսին սպասավորե-
լու համար շատերս էինք եկել. գնացինք խոշա Սաֆարի տու-
նը ուխտի ու երկրպագության սրբուհի Հոսիփոսիմի նշխար-
ների և ուրիշ շատ նշխարների, որոնք այնտեղ են գտնվում:
Բանալով նշխարները՝ բոլորս տեսանք և ուխտ կատարելով
արժանացանք սրբերի օրհնություններին: Զուղայեցի մարդ-

կանցից ոմանք մեզ պատմեցին նաև այլ կարճ պատմություններ. նրանց պատմածի շարադրանքը հետևյալն է:

Առաջվա մեր պատմած պատմություններից ժամանակներ անցնելուց հետո շահը եկել է Սպահան և ըստ իր մշտական սովորության եկել է խոջա Սաֆարի տունը. այնտեղ եղել են նաև ֆոանկների հայրեր, որոնք վերոհիշյալ հայր Գլեղումի կարգից են եղել: Խոսքի մեջ հիշել են նաև սուրբ Հոփսիմի՝ յանների նշխարները և սրբուհի Հոփսիմի բոլոր նշխարները բերել են շահի առջև ի տես բոլորի: Եվ երբ նշխարները բացել են, այդ ժամանակ հարմար պահ գտնելով՝ հայրերը շահից խնդրել են, իրրև պարզև իրենց տալ այն նշխարների մի մաս: Շահն ինքը, վերցնելով ոսկորներից մի ոսկոր, դանակով խփել է կտորել, ոսկորի կեսը դարձյալ գցել է մյուս նշխարների մեջ, իսկ կեսը տվել է հայրերին. իսկ նրանք առել են, ամփոփել իրենց մոտ: Խոջա Սաֆարին հրամայել է մյուս նշխարները և կես [նշխարը] տանել, պահել: Եվ նա վերցնելով մեջտեղից տարել է այն տեղը, ուր առաջ դրված էր և այնտեղ է մինչև այսօր: Իսկ ինչ վերաբերում է այն մասին, որ հայրերը այժմ վերցրին, [նրանք] տարել են Բանդարի երկիրը՝ այն քաղաքը, որ կոչվում է Գվա: Այդ քաղաքում վանք են շինել և հիշյալ մասը դրել են այդ վանքի եկեղեցու հիմքում. այժմ այդ վանքը կոչվում է Կուսանաց վանք, որտեղ բնակվում են բազմաթիվ ճգնավոր կանայք: Արդ՝ օրհնյալ է աստված ամեն ժամանակ:

Գ Լ Ո Ւ Ե Ժ

Թ Ե Ի Ն Զ Պ Ե Ս Կ Ա Մ Ի Ն Զ Պ Ա Տ Ճ Ա Ռ Ո Վ Ս Պ Ա Ն Ա Ն Ք Ս Ա Ր Ա Ն Մ Ե Ր Լ Ո Ւ Ս Ա Վ Ո Ր Ի Զ Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Ի Ա Ջ Ը Ե Վ Ս Ո Ւ Ր Ա Խ Ո Ւ Է Ջ Մ Ի Ա Մ Ն Ի Ք Ա Ր Ե Ր Ը

Պարսից մեծ թագավոր Շահ-Աբաս առաջինը, որ հայոց ազգը արտաքսեց հայոց բնիկ երկրից և քչեց Պարսկաստան, արեց այն դիտավորությունք, որպեսզի Հայաստանը ավերվի, և շենանա Պարսկաստանը, նվազի հայ ազգը, բազմանա պարսիկ ազգը: Եվ քանի որ Շահ-Աբասն ինքը զգուշավոր ու կանխահոգ մարդ էր և միշտ ու հարածամ խորհում

էր ու մտածում, թե ինչպիսի միջոցներ հնարի հայոց ազգի համար, որ շղառնա իր երկիրը, այլ մնա պարսից աշխարհում: Ըրովհետև հայերից նրանք, որ ծնվել էին Հայաստան աշխարհում, շատ էին բաղձում Հայաստան դնալ. այդ պատճառով հնարներ գտնելու համար Շահ-Աբասը խոնարհվում, իջնում էր իր վեհ փառավորությունից և խոսում էր ամեն հայի հետ, ում որ հանդիպում էր՝ թե նշանավոր երևելի մարդկանց, թե հարուստների, թե աղքատների հետ: Խոսեցնում էր ժողովրդին, իսկ ինքը համակ ուշադրություն դարձած մտքով ականջ էր դնում նրանց խոսքերին, իր սրտում կուտակում էր անօրենություն և հղանում էր տառապանքներ:

Եվ ինչպես նախօրոք ասացինք, շահը այլակերպվում էր և շրջում էր փողոցներն ու պողոտաները լսելու, թե ինչ են ասում: Տնետուն էր մտնում, ում էլ որ պատահում էր, խոսք էր գցում ու խոսում էր շահի և հպատակների մասին. [ասում էր], թե շահը խաղաղասեր ու արդարադատ է և չի թողնում, որ իշխանները հարստահարեն հպատակներին: Եվ մանավանդ ավելի հոգատար է հայ ազգի հանդեպ, որ նրանց բոլոր գործերն ու խոսքերը ըստ նրանց կամքի է անում: Բայց ինչո՞ւ հայերը ջերմ ու հոժար չեն մնալու Սպահանի երկրում, քանի որ շեն երկիր է և թիկունքային, իսկ Հայաստան աշխարհը սահման է ու թշնամու բերան, միշտ ավար ու գերություն:

Եվ բազմիցս պատասխան է լսել, թե հայոց աշխարհում ամեն բարեքնների լիություն է, առատություն ու էթանություն, իսկ այստեղ սուղ է ու թանկություն: Այնտեղ են իրենց հայրերի ու նախնիների գերեզմանատները, վանքերն ու ուխտատեղիները, որտեղ սրբերի դամբարաններն են և մանավանդ մեծահանդես աթոռը՝ Սուրբ Էջմիածին, ուր գտնվում է Գրիգոր Լուսավորչի սուրբ աջը, որով օրհնվում է սուրբ մեռուներ, որտեղից [էջմիածնից մեռուներ] գնալով սփռվում է ամբողջ աշխարհում ապրող հայերի մեջ, որտեղ էլ լինեն: Այս պատճառով հայոց ողջ ազգը հնազանդվում է էջմիածնի Սուրբ աթոռին և սրա կաթողիկոսին, որ նստում է այնտեղ: Եվ այս խոսքերը ասել են ոչ միայն տգետ ու աննշան ոմանք, այլ նշանավորներ ու գիտուններ: Այլև ոմանցից լսեցինք, թե նաև այն են ասել, եթե շահը կամենում է, որ հայոց ազգը պար-

սից աշխարհում անխախտ մնա, նա պետք է Սուրբ Գրքերը
Լուսավորչի աջը Սպահան բերի և այնտեղ շինի նոր էջմիածին,
որ մեռնօրհնեք լինի և այնտեղ կաթողիկոս նստի, որ հայ
ազգը այնտեղ կայունանա, մնա, որովհետև աջի և էջմիած-
նի հետ հայոց ողջ ազգն է կապված:

Արդ՝ դարանակալ օձը ու քրիստոնյաների կյանքի, հոգի-
ների և հավատքի խորամանկ թշնամին, որ հար հավիտ հայոց
ազգի նկատմամբ տարակուսանքի մեջ էր ընկած, այժմ հենց
նրանցից [հայրերից] լսեց իր տարակուսանքի ստույգ լու-
ծումը: Այնուհետև հաստատ ու անփոփոխ մտադրվեց Սուրբ
էջմիածինը քանդել, խափանել այնտեղի կաթողիկոսություն-
նը, Լուսավորչի աջն ու էջմիածնի քարերը բերել Սպահան և
այնտեղ շինել նոր էջմիածին, որպեսզի այնտեղ նստի կաթո-
ղիկոսը, ու այնտեղից մեռնել սփուլի ողջ աշխարհը, և դրա-
նով հայ ազգը մնա Պարսկաստանում, նաև ամբողջ աշխար-
հի օգուտն ու եկամուտը հավաքվի իր քաղաքում ու իր ազգի
համար: Այդ պատճառով Սպահան քաղաքի մեջ տեղ հատ-
կացրեց ու առանձնացրեց, որտեղ կամենում էր էջմիածին
շինել. և այդ տեղը մոտ էր այն այգուն, որ պարսկերեն բա-
ղիզրիշկ [ծորենու այգի] են ասում. այս այգու հետևից՝ արև-
մըտյան կողմից նույն այգուն կից:

Մի օր շահը գնաց նշանակված տեղը. նրա հետ էին նաև խո-
ջա նազարը և այլ հայեր. շահը խոջա նազարին ասաց. «Ձեզ
համար այստեղ էջմիածին եմ շինում, որպեսզի այն էջմիած-
նի համար ձեր սրտերը կարոտ քաշելով շնամլվեն. կհրամայեմ՝
բաղմաթիվ ուղտեր, ջորիներ, սայլեր գնան, որպեսզի այն
էջմիածնի քարը, հողը քանդեն, բերեն այստեղ, որ այն քա-
րով, հողով շինվի այս էջմիածինը, որպեսզի առանց որևէ
երկամտության ձեր սրտերը կպշեն այս՝ նոր շինվածքին»:

եվ այս կերպ [պատրվակ] հնարելով՝ կամենում էր քան-
դել Սուրբ էջմիածինը, իսկ խոջա նազարը քանի որ չէր ցան-
կանում Սուրբ էջմիածնի քանդումը, դա նրա սրտին կսկիծ
էր, շահի մտադրությունը խափանելու համար պատասխա-
նել է այսպես. «Թագավորը ողջ մնա, եթե քո կամքը ուզի
գեղեցիկ ու հաստատուն էջմիածին շինել, կարող ես արծա-
թից ու ոսկուց շինել, ոչ թե քարից: Ի՞նչ հարկ կա քարի ու
հողի համար այդքան տառապանք կրել ու այդքան ծախս

անել դրա վրա. հեռու և օտար աշխարհից քար ու հող բերել:
Այս աշխարհի քարն էլ, հողն էլ և բավական է, և լավ, եթե
կամենում ես շինել, սրանցով շինիր, և մեզ ընդունելի է:

Իսկ ամենաթագավոր աստված, որի թագավորությունն է
միայն հավիտենական, որ և զանց է առնում մարդկանց
բազում մտադրությունները՝ թագավորների, ազգերի, ցեղե-
րի ըստ գրվածի թե՛ «Տերը ցրում է հեթանոսների մտադրու-
թյունները, անարգում է ժողովուրդների մտադրությունները
և արհամարհում է իշխանների մտադրությունները: Իսկ տի-
րոջ մտադրությունը մնում է հավիտյան և նրա սրտի մտադ-
րությունը ազգից ազգ է»*: [Տերը] այն ժամանակ չկամեցավ
շահի մտադրության կատարումը, չնայած անխախտ հաս-
տատված էր նրա մտքում: Բայց նրա մտադրությունը խա-
փանվեց հետևյալ պատճառով: Նա պատրաստվել էր գնալու
Վրաստան նրանց թագավորի և ազգի վրա. բաղմաթիվ զոր-
քերով և խիստ պատրաստությամբ ելավ Սպահանից, գնաց
Վրաստան: Նա մտավ Կախեթ, Կախեթի թագավոր Թամրա-
զին փախցրեց և երկիրը ավերեց: Եկավ, մտավ Քարթլի եր-
կիրը և բանակեց Գորի քաղաքի վերին կողմը՝ այն ճանա-
պարհի մոտ, որ տանում է Պաշիաշուխ: Մտածում էր ու
սպասում, թե ինչ հնարքով բուռը գցելով բռնի վրաց թագա-
վորին: Չնայած Կախեթի թագավոր Թամրազը և Թիֆլիսի
թագավոր Լավասափը երկուսն էլ փախան Պաշիաշուխ [Իմե-
րեթիա], բայց Թամրազը շխաբվեց և չեկավ շահի մոտ, իսկ
Լավասափը խաբվեց ու հավատաց շահին և եկավ շահի մոտ,
իսկ սա նրան տարավ Պարսկաստան, կորցրեց, ինչպես որ
նախօրոք ամեն որպիսություն պատմեցինք: Արդ՝ սրանք
այսպես:

Այժմ ասենք կաթողիկոսների հակառակության պատճա-
ռը, որովհետև էջմիածնի քարերի և Լուսավորչի աջի Սպա-
հան տանելու պատճառը նրանց հակառակությունն է:

Այն ժամանակ, երբ շահը կատարեց մեծ արքորը և հա-
յոց ազգը բռնեց, տարավ Սպահան, նրանց հետ Սպահան զը-
նաց նաև Գավիթ կաթողիկոսը և այնտեղ էր մնում: Մելքի-
սեթ կաթողիկոսը ևս գնաց արքորի հետ, բայց կես ճանա-
պարհից դարձավ, եկավ էջմիածին և կաթողիկոսություն էր

* Սուրբ. լր 10—11

անում: Բայց ինքը՝ Մելքիսեթի կաթողիկոսը բնավ չէր հոգում էջմիածնի շինություն, պայծառության, ժամակարգության և հաստատության մասին, այլ իր համար բնակության տեղ էր ընտրել Սրբան քաղաքը, կաթողիկե եկեղեցին՝ իր գլխին հավաքելով իր ազգականներին ու մերձավորներին և նրանց հետ էջմիածնի Սուրբ աթոռի մուտքով ու արդյունքով փափկակենցաղ, մեղկ ու լայն կյանքով ապրում էր:

Այն ժամանակ եպիսկոպոսներ կային Սուրբ էջմիածնում նույն էջմիածնի գյուղից, որոնց անուններն էին Կարապետ, Մարտիրոս և Օհան, սրանց հետ և այլ եպիսկոպոսներ ու աբեղաներ. սրանք էջմիածնի մասին էին հոգում և միշտ ցավում էին անշուքության, նույնի դատարկության համար և զայրանում էին Մելքիսեթ կաթողիկոսի արարքների վրա: Շատ անգամ աղաչանքով, բողոքով ու զայրացմամբ ասում էին՝ թե «Մի թողնիր աթոռը այսպես թափուր ու անշուք, այլ աթոռ նստելով՝ ապրիր քո ցանկության համաձայն, գոնե միայն այստեղ լինես, այդ էլ մեզ և աթոռին բավական է: Իսկ Մելքիսեթը հզիփացած և ուռճացած պետական իշխանությանը չէր անսով, բանի տեղ չէր դնում նրանց ասածները: Իսկ եպիսկոպոսները սրտնեղվելով էջմիածնի աղոտացման, անշքության և իրենց խոսքերը բամազրելու պատճառով՝ բոլորը միակամ եղած հայտնեցին երկրի իշխան Ամիրզունյա խանին, որոնց ամբաստանությանը խանը բռնեց կաթողիկոսին և վաթսուն թուման տուգանք առավ: Այս բանի վրա կաթողիկոսը վերալորվեց խանից, ելավ, գնաց Վրաստան իբրև խանից խոտված: Խանի իշխաններն ու բարեկամները կաթողիկոսի գնալու համար մեղադրեցին նրան, որի պատճառով խանը ոմանց ուղարկեց Մելքիսեթի հետևից իբրև հրավիրակներ՝ խոստանալով նրան պահել պատվով ու կատարել նրա բոլոր ցանկությունները: Ապա Մելքիսեթը դարձավ եկավ Սրբան, իսկ խանը նրա սիրտը շահելու համար բռնեց եպիսկոպոսներին և տուգանք առավ: Այնուհետև Կարապետ եպիսկոպոսը թողեց երկիրը և գնաց անապատ կրոնավորելու: Այս այն Կարապետ եպիսկոպոսն է, որին հիշեցինք մեծ անապատի գլխում*, թե եկավ բնակվեց Սևան կղզում: Իսկ ինչ

* Կարապետ եպիսկոպոսը գեոն հիշատակված չէ: Սրա մասին պատմիչը խոսում է իմ գլխում, երբ պատմում է Սևանի անապատի մասին:

վերաբերում է Մարտիրոս եպիսկոպոսին. Մելքիսեթ կաթողիկոսը խնդրեց խանին, որպեսզի նրան արտաքսի Արարատյան երկրից, իսկ խանը այդպես էլ արեց. մի գինվոր նշանակեց Մարտիրոս եպիսկոպոսին հսկող, որ նրան հսկողության տակ տարավ մինչև Հին Զուղա, Արաքս գետը անցկացրեց այն կողմ, ապա գինվորը վերադարձավ:

Իսկ Մարտիրոս եպիսկոպոսը ոչ մի տեղ չարգելվեց, այլ գնաց Սպահան, մուտք գործեց [կաթողիկոսի մոտ] և միացավ Դավիթ կաթողիկոսին: Օրավուր, ժամին, թե անժամանակ պատմում էր Մելքիսեթի արարքները և էջմիածնի ավերանքներն ու ամայությունը: Այդպես էլ ջուղայեցի ու երևանեցի ժողովրդի առջև մշտապես խոսում ու տեղեկացնում էր՝ իսկ ջուղայեցիներն ու երևանեցիները Մելքիսեթի արարքների ու էջմիածնի ամայության համար շատ վշտացան: Հավաքվեցին Դավիթ կաթողիկոսի մոտ և նրան ստիպեցին էջմիածնի գնալ, տիրել ու հոգալ, նրա շնությունը՝ ասելով, թե մենք քեզ ամեն գործում ու խոսքում կօժանդակենք: Դավիթ կաթողիկոսը Սպահանից ելավ, ընդ որում և Մարտիրոս եպիսկոպոսը, եկավ Սրբան քաղաքը և էջմիածնի: Բայց այս օրերին, երբ շահը Գորիում բանակ էր դրել ու նստել, Դավիթ ու Մելքիսեթ կաթողիկոսները երկուսն էլ միասին Սուրբ էջմիածնում էին: Բայց նախանձը, ռխակայությունը, հակառակությունը քիչ չհորդացավ ու ավելացավ նրանց [կաթողիկոսների] միջև այս պատճառով:

Քանզի Դավիթ կաթողիկոսը Մելքիսեթից ավելի առաջ էր եղել կաթողիկոս և տարիքով այնորոթյամբ ծեր էր. նաև Դավիթն էր Մելքիսեթին կաթողիկոս օծել, որպեսզի լինի իրեն ընկեր՝ ու օգնական, բայց նա եղավ խոշորագույն: Տարիներ հետո, երբ Մելքիսեթը անունով ու կաթողիկոսական գործով առաջ գնաց, ամբողջովին կորցեց ու գրավեց կաթողիկոսական իշխանությունը. ինքն էր կառավարում, իսկ Դավիթն ճնշեց, գեներալով հեռացրեց իշխանությունից: Իսկ ինչ Դավիթն էր, ասում էր Մելքիսեթին. «Թեպետ ինձ հեռացրիր կաթողիկոսական իշխանությունից, բայց գոնե իմ ծերությունը գթա ու խնայիր, տուր ինձ օրվա պարենի, կերակուրի պետքերի համար միջոց ու զգեստ, որպեսզի իմ ծերության քիչ մնացած ժամանակը անցկացնեմ և մի վշտացնիր իմ ծերու-

թլունը»։ Իսկ Մեկքիսեթը գիրացած, հաստացած ու հոռացած իշխանության մեջ՝ չէր կամենում լսել Դավթին ըստ տերու- նական այն առակին*, որ այրու և անիրավ դատավորի մա- սին պատմում է, որովհետև ինչ որ Դավթիթը ասում էր, Մեկ- քիսեթը խոսքով նրան հանդիմանում էր։ Այլև այն մարդիկ, որոնք Մեկքիսեթի կողմնակիցներն էին, կամ խորհրդակից- ները, կամ սպասավորները, Դավթին մարդատեղ չէին դնում, արհամարհում էին նրան. արհամարհելով անարգալից ու քա- մահբանքի խոսքեր էին ասում նրան, և այն էլ ոչ թե ծածուկ, այլ բացահայտ, նրա հրեանք և նրա շնչին կարիքների ու պետ- քերի առիթով անտեղի վշտացնում էին նրան։ Երկար ժամա- նակվա նրանց ամարդի գործի վրա Դավթիթը սաստիկ դառ- նացավ, որովհետև բնավ չէին մեղմանում իրենց բիրտ վե- բարերմունքով։ Եվ մահու շափ վշտացավ հոգով. այնուհետև թախծոտ սրտով ելավ, գնաց Գորի՝ շահի բանակատեղը, որ- պեսդի ներկայանա շահին, ամբաստանի Մեկքիսեթ կաթո- ղիկոսին։ Այս ժամանակ շահը տակավին Վրաստանում էր՝ Գորի քաղաքի մերձակայքում բանակել, նստել էր։ Շահը եր- կու կաթողիկոսին էլ քաջածանոթ էր, բայց Դավթին ավելի լավ էր ընդունում, քան Մեկքիսեթին, որովհետև երբ շահը մեծ արտորը կատարեց, երկու կաթողիկոսներն էլ գնացին արտորանքի հետ. և երբ հասան Ահար ու Մուշկուն կոչված դավառները, այնտեղից Մեկքիսեթը առանց շահի գիտություն վերադարձավ Երևան, էջմիածին և կաթողիկոսական իշխա- նությունը վարում էր առանց շահի հրամանների։ Իսկ Դավթիթ կաթողիկոսը արտորանքի հետ գնաց Սպահան և այնտեղ Սպահանում շատ անգամ հանդիպեց շահին, իսկ շահը նրա հետ գովեց ու քաղցրությամբ էր խոսում, մինչև անգամ՝ շա- հը հայր էր կոչում նրան՝ թե կեղծավորությամբ, թե իրոք։ Արդ՝ Մեկքիսեթի Երևան վերադարձը շահին ծանր թվաց, իսկ Դավթի Սպահան գնալը նրան դուր եկավ, դրա համար շահը ավելի լավ էր ընդունում Դավթին։

Իսկ Դավթիթ կաթողիկոսը գնաց, հասավ արքունի բանա- կո և մի օր եկավ, ներկայացավ շահին, և երբ շահը տեսավ նրան, նախկին գովեց ու քաղցրությամբ էր խոսում նրա հետ, հարցնում էր, թե ինչպե՞ս ես ապրում քո կյանքում՝

* Գուկ. ԺԸ 1—6:

դուրությամբ ու անդորրությամբ։ Դավթիթը պատասխանե- լով ասաց. «Քաղավոր, հավիտյան կեցցես, թեպետ ինձ նե- դողներ ու դառնացնողներ կան, բայց տեսնելով քո դեմքի քաղցրությունն ու վայելչությունը և քո խոսքերի մխիթարությու- նը, իմ բոլոր վշտերը մոռացվում ու փարատվում են»։ Շահը հարցրեւ է, թե ո՞վ է այն մարդը, որ քեզ վշտացնում է. Դա- վթիթը այլազգիների լեզվով է պատասխանել. «ամուկ սաթան խալիֆեն», որ նշանակում է՝ ոսկորներ ծախող կաթողիկո- սը. «ամուկ սաթան» ասելով սկսել է ամբաստանել Մեկքի- սեթին, նրա արարքները հիշատակել է շահի առջև, որ սըր- բուհի Հոփսիսմեի նշխարները կաշառքով ֆռանկներին թույլ է տվել տանելու Այլև ուրիշ մարդիկ ասացին, թե Դավթիթը այս խոսքն էլ է ասել շահի ներկայությամբ. «Եթե լուսավոր- շի աջը և էջմիածնի քարերը զնան Սպահան, անհնար է, որ հայ ազգը Սպահանում մնա»։ Երբ շահը լսեց նշխարները ծախելու մասին, հետաքրքրվեց ու տեղեկացավ ամեն ման- բամասնություններին և Մեկքիսեթի արարմունքների վրա տըխ- րեց, ցասմամբ ու զայրացմամբ բորբոքվեց, այնքան, մինչև որ Մեկքիսեթին պատժի ու տանջանքի մատնեց։

Այդ ժամանակ շահը իր մոտ տարավ Ամիրգունա խանին, երբ Վրաստանում էր, ասելով, թե կգաս մեզ մոտ, կմնաս պատերազմական գործողությունների մեջ ընդդեմ մեր թշնա- միների։ Եվ նա գնաց Վրաստան, գտնվում էր շահի բանա- կում։ Իսկ շահը Ամիրգունա խանին իբրև փոխանորդ ու տե- ղապահ ուղարկեց նրա որդուն, որի անունն էր Քահամազդու- լի բեկ։ Սա եկավ Երևան քաղաքը, մտավ բերդը, և այնտեղ նստելով՝ պահպանում էր երկիրը։

Իսկ շահը մեծ ցասումով հրամայեց արքունի հրամաննե- րի հրովարտակ գրել Քահամազդուլի բեկին և ուղարկել Երևան նրան։ Գրված խոսքի բովանդակությունը հետևյալն էր. «Քահ- մազդուլի, հրամայված է քեզ, որ Մեկքիսեթ կաթողիկոսին բռնես և տանջանքներով շարշարես, իր իսկ մարմնի միտք կտրես, իբրև ուտեցնես։ Ապա Մեկքիսեթին կապանքով և հա- յոց ազգի լուսավորի աջը այստեղ ինձ ուղարկես»։ Այս գրու- թյունը տվին Նաղդի բեկ անունով մի իշխանի, որ շտապ հասցրեց Երևան Քահամազդուլի բեկին։ Քահամազդուլի բեկը շտապ ձեռք գցելով բռնեց Մեկքիսեթ կաթողիկոսին և սկսեց

չարչարել, մեծ հարկադրանքներով պահանջում էր մեր լուսավորիչ սուրբ Գրիգորի աջը: Իսկ կաթողիկոսն ու իր միաբանները մնացին անել վիճակում, չգիտեին ինչ հնարել, որովհետև Քահնազդուլին սաստիկ տանջանքով խոշտանգում էր նրանց: Այս պատճառով Քահնազդուլի բեկի առջև բերին Լուսավորչի սուրբ աջը: սրա հետ նաև մի.ոսկետուփ ունեցող թանկագին ավետարան և մի արծաթյա խաչ: Քահնազդուլին առավ սրանք ու Մեղիսեթ կաթողիկոսին, եկավ Երևան քաղաքը:

Սրանից հետո Մեղիսեթին բերին Երևանի բերդի մեջ, գետնի վրա տարածեցին նրան և շորս կողմերից կապկպեցին. կապելով ցցերի՝ ցցեցին մեջքի վրա: Առան բևեռաբաշները, այսինքն՝ աքցանները և դրանցով կտրեցին ծղիների, այսինքն՝ թևերի միսը և այդ կտրած միսը դրին նրա բերանը: Երկու կողմից կանգնած փայտավորները ծեծում էին նրան և ասում՝ ծամիր և կուլ տուր: Իսկ Մեղիսեթը թեպետ չէր կամենում, սակայն տառապանքից ճարահատ ծամեց և կուլ տվեց: Ապա մունետիկը բարձրաձայն կանչեց, թե թագավորի հրամանը կաթողիկոսի վերաբերյալ կատարվեց: որովհետև իր միսը ծամեց և կուլ տվեց: Այլազգիների այս գործերն ու տանջանքները Մեղիսեթի վերաբերյալ արին Աստվածածնի փոխման պատի օրերին*:

Այս գործերից հետո Քահնազդուլի բեկը պատրաստեց զինվորներ, որոնց գլխավորի անունն էր Նաչիրյու Դուբաթ աղա. Մեղիսեթ կաթողիկոսին կապանքով [Քահնազդուլի բեկը] տվեց նրանց, սրա հետ նաև Լուսավորչի աջը, ավետարանը և խաչը: Սրանք տարան, հասցրին արքայի բանակը և հայտնեցին շահին, իսկ նա հրամայեց բերել իր առջև, բերին, շահի առջև բացին աջը, ավետարանը և խաչը: Շահը մեկ առ մեկ վերցնում էր ձեռքը և նայում՝ [սկզբում]՝ ավետարանը, ապա խաչը և հետո Լուսավորչի աջը: Եվ հարցնում էր, թե իրոք ա լս է, ապա համբուրելով աջը վայր դրեց: Իսկ Մեղիսեթ կաթողիկոսին շահը հաստատ մտադրվել էր սպանել, բայց Ամիրզունա խանը խիստ լավ էր ընդունում Մեղիսեթին, որովհետև բարևկամ էր նրան: Այս պատճառով այնպես հնարեց, որ իր երեք նորահաս տղա որդիները ուղարկեց շահի առջև, որ այդ ժամանակ անցնում էր բանակի միջով: Տղաները իրենց

սրերը դրել էին իրենց պարանոցին, որոնց երբ շահը տեսավ և հարցրեց, հասկացավ, որ Մեղիսեթի համար են խնդրում, որ չսպանի, այլև իմացավ, թե Ամիրզունա խանն է հնարել այդ, դրա համար սպանելու կամքը թուլացավ: Ամիրզունա խանի արած այս գործը Մեղիսեթին արքայի առջև բերելուց շատ օրեր առաջ է եղել, այդ պատճառով շահը Մեղիսեթին սպանելու կամ տանջելու հրաման չի տվել այն օրը, երբ Մեղիսեթին և սրբությունները ներկայացրին թագավորին: Սրբությունները տեսնելուց հետո շահը իր խոսքը ուղղելով Մեղիսեթ կաթողիկոսին ցասումով ու գայլույթով՝ շատ խոսքերով հանդիմանեց նրան: Եվ խոսքի վերջում ասաց. «Բո դատաստանը այստեղ անել չի լինի, քանի որ քո վնասը մեծ է, այժմ դու պետք է Սպահան գնաս և այնտեղ մնաս, մինչև ես գամ, քո դատաստանը անեմ»:

Արդ այստեղ մենք պետք է սքանչանանք և զարմանանք այն գործի հատուցման վրա, որ կատարվեց Մեղիսեթ կաթողիկոսի նկատմամբ, որովհետև նախ՝ սա աստծու օգնությունն անտես արեց, հույսը կապեց մարդու հետ և շանսաց օրենքի խոսքը, որ ասում է «Անիծված է նա, որ իր հույսը կապում է մարդուն»*: Երկրորդ՝ արհամարհեց Սրապիոն վարդապետին, որ Սուրբ աթոռ էջմիածնի պարտքը վճարելու և Նշա նորոգման համար էր եկել Ամիրզից: նաև իր հույսը դրել էր շահի վրա, իր սրտի ապաստանը նրան արած գնաց նրա մոտ Սպահան, որպեսզի ապագայում բաղամաթիվ բարեքներ ընդունի նրանից: Այնտեղից նա շահին բերեց հայոց աշխարհը, ամբողջ երկիրը ավերեց, ծագեծագ անմարդաբնակ դարձրեց: Իսկ այսօր ինքը ևս իր երախտիքի հատուցումը և ակնկալությունը նրանից այս շարչարանքը ընդունեց, ինչպես որ պատմեցինք ու տակավին դեռ պատմելու ենք փոքրիշատի: Եվ այնպես է լինում խոսքի կատարումը, որ դրված է թե. «Ինչով որ մեկը մեղանշում է, նրանով էլ կտանջվի»**: կամ թե «Մի հուսացեք իշխանների ու մարդկանց որդիների վրա, որովհետև նրանցում փրկություն չկա»***

* Սաղմուններում ասված է. «Բարի է յուսալ ի տեր, քան յուսալ ի մարդիկ, բարի է յուսալ ի տեր, քան յուսալ ի իշխանս» [Սաղմ. ԾժԷ8—9], ** Որովք մեղանշեց էք, նորիմք և տանջեցի (Իմ. ԺԱ 17):

*** Սաղմ. ԽԵ:

* Աստվածածնի պատը լինում է օրոտոտի կեսերին:

եմ դարձյալ՝ ինչպես երևում է, այստեղ է լինելու կատարումը շահի բազմաժամանակյա բաղձանքների, որովհետև նա, որ երկար ժամանակ ցանկանում, խորհում, մտորում էր, թե ինչ հնաբքով քանդի Սուրբ էջմիածինը ու խափանի անտեղ ղեկավարած կաթողիկոսութունը և Սպահանում շինի էջմիածինը, այնտեղ նշանակի կաթողիկոսութունը: Արդ՝ ահա գտավ պատճառը ստ իրենց [հայերի] հոժար կամքի, Որովհետև Մեկքիսեթ կաթողիկոսին դարձրեց Երևան՝ Քահամազդուլի խանի մոտ և հրաման նամակ գրեց նրան այսպես և այս օրինակով: «Եմացիր, Քահամազդուլի, ահա քեզ մոտ ենք վերադարձնում Մեկքիսեթ կաթողիկոսին, Լուսավորչի աջը, ավետարանն ու խաչը: Նաև կգնաս էջմիածին և էջմիածնի նշանավոր քարերը կրանդես, կհանես տեղերից և էջմիածնի այդ քանդված քարերը, Լուսավորչի աջը, ավետարանն ու խաչը և Մեկքիսեթ կաթողիկոսին և սրանց ամենքին կուղարկես, գնան Սպահան քաղաքը»: Երբ թագավորի հրամանը հասավ Քահամազդուլի խանին, սա հոժարակամ պատրաստվեց ամենը անթերի կատարել, որպեսզի գրանով շահի առջև հաճոյակատար ծառա երևա:

Քահամազդուլի խանը էջմիածնի քարերը ուղարկելուց առաջ կամեցավ Լուսավորչի աջը ուղարկել, որովհետև մտքով դիտել նկատել էր, որ մինչև քարերը քանդեն, մինչև տանելու ողջ բոլոր պատրաստեն, նաև քարերը տանելու ընթացքը ավելի զանդաղ ու ծանր կլինի, շատ ժամանակ կանցնի և կուշանա, ուստի կամեցավ աջը առաջ ուղարկել: Դրա համար զորականներ պատրաստեց, որ աջը Սպահան տանեն: Նաև [պատրաստեց] Հովհաննես անունով մի քահանա՝ ոչ զորական, որ ճարտար ու խելոք էր խոսքերի ու գործերի մեջ և նույն էջմիածին գյուղից էր. սրան ևս Քահամազդուլի խանը հրամայեց գնալ զորականների հետ աջին սպասավորելու համար: Ապա նշանակված զորականները և տեր Հովհաննեսը առան Լուսավորչի աջը, այն ոսկեկզամ ավետարանը և այն արծաթյա խաչը. այս երեքը միասին առան, Երևանից ելան, գնացին, մինչև որ հասան Սպահան քաղաքը: Երբ մոտեցան Սպահան քաղաքին, ողջ հայ ժողովուրդը, որ Սպահանում էր, քրին և հրամայել էր շահը, խաչվառով, ավետարանով, խրնկերով, մոմերով և հրգով երաժշտությամբ ընդառաջ ելան

Լուսավորչի աջին և մեծ պատիվներով բերին խոջա Սաֆարի տունը ի հանդիստ սրբուհի Հռիփսիմեի նշխարների և այլ սրբությունների հետ, որ այնտեղ էին գտնվում: Արդ՝ մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը այսպիսի պատճառով և ձևով գնաց Սպահան:

Իսկ Քահամազդուլի խանը Լուսավորչի աջը ուղարկելուց հետո, մեծ ջանքերով հոգ էր տանում քարերը ուղարկելու համար. այս պատճառով ինքը բազմաթիվ զորականներով գնաց Սուրբ էջմիածին, և նշանավոր քարերը քանդեցին, հանեցին տեղերից. դրանք հետևյալներն են՝ սուրբ սեղանը, որի վրա սուրբ պատարագն էր մատուցվում, այս սեղանի սյունը, Քրիստոսի իշման տեղի քարը, ավազանը, մի քար բեմի հարավային կողմի աստիճանից, մի քար բեմի հյուսիսային կողմի աստիճանից, որովհետև ավագ բեմի աստիճանները երկու կողմանի են՝ հյուսիսից ու հարավից, չորս քար եկեղեցու շրջանկյուններից՝ դռների կողմից երկու քարե մոմակալ՝ աշտանակ, որ մեռոնաքերների մեծ մոմերը⁶² դնեն մեջը և վառեն, երեք ուրիշ քարեր բեմի սալարկի քարերից՝ ընդամենը տասներհինգ քար: Այս քարերը քանդեցին, հանեցին էջմիածնից, դրին կաշվի մեջ ու կարեցին, ապա պատրաստեցին զորական մարդիկ. որոնց գլխավորի անունն էր Նազի բեկ, և այն տեր Հովհաննեսին, որ Լուսավորչի աջի հետ ուղարկեցին աջին սպասավորելու համար. սա Սպահանից դարձել եկել էր. սրբան երկրորդ անգամ նշանակեցին քարերի հետ գնալ նրանց սպասավորության համար: Ապա պատրաստեցին քարերը տանելու շափով սալը, բարձին սալերին, լծեցին գոմեշներ, քաշեցին տարան, մինչև որ հասցրին Սպահան քաղաքը: Բայց քաղաք շատեցրեցին, այլ քաղաքից դուրս՝ Քոխի դարպասի մոտ այլազգի մահմեդականների գյուղ կա, որի անունը Բաթուն են կոչում, քարերը հասցրին մինչև այս գյուղը, դրին գմբեթի մեջ, որ շինված էր գյուղին մոտիկ: Երբ քարերը եկան, մոտեցան այն գյուղին, հայոց ազգից ովքեր որ բնակված էին Սպահան քաղաքում, քաղաքապետի հրամանով ելան քարերին ընդառաջ խաչով, ավետարանով, խունկերով, մոմերով, հրգով ու երաժշտությամբ, մինչև որ բերին Բաթուն գյուղը, դրին գմբեթի մեջ:

Քարերը այնտեղ գմբեթի մեջ մնացին ոմանց ասելով եր-

կու տարի, ոմանց ասելով յոթ տարի, ոմանք էլ ավելի կամ պակաս ասացին: Ապա Բաթուն գյուղի բնակիչները խնդրագիր ներկայացրին շահին, թե արքայից խնդրում ենք, որ հրաման տա էջմիածնի քարերի վերաբերյալ՝ հանելու մեր գյուղից և տանելու այլ տեղ, որովհետև մեր գյուղի մարդիկ մեռնում են, իսկ հանդերը այլևս այնպես պտուղ չեն տալիս, ինչպես առաջ տալիս էին: Այս պատճառով շահը հրամայեց, որ այնտեղից քարերը հանեն և տանեն ջուղայեցիների մեջ, որը և այդպես արին: Քարերը բերելու ժամանակ, երբ մոտեցան Ջուղային [նոր Ջուղա], առաջվա պես բոլոր եկեղեցականներն ու աշխարհականները խաշով, ավետարանով, խոնկերով ու մոմերով, հոգևոր երգերով բերին, դրին խոշենց եկեղեցին, որտեղ մինչև այսօր մնում են: Երբ այս քարերը հանվեցին էջմիածնից և ճամփու գրվեցին Սպահան գնալու մեր թվականության 1063 (1614)-ն էր: Եվ երբ հասավ Սպահան, տարին փոխվել էր, մտել 1064-ը: Եվ այս տարին մենք եկանք Սպահան, քարերը մեր աչքերով տեսանք, հաշվեցինք, ապա գրեցինք:

Այդպես էլ զորականները Մելքիսեթ կաթողիկոսին բերին Սպահան քաղաքը. նրան տանող էր նշանակված Թահմազդուլի խանը և նրանց ավազի անունն էր Թահմազդուլի բեկ: Երբ Մելքիսեթ կաթողիկոսը հասավ Սպահան, շահը կարծում էր, թե նա բանտում կապանքներով արգելափակված է, բայց նա ազատ էր և Սպահան քաղաքում և նրա բոլոր շրջակա գավառներում բնակված հայազուն քրիստոնյաների վրա կաթողիկոսական իշխանություն էր քանեցնում: Արդ՝ քարերի տանելու թվականը գտանք և գրեցինք, իսկ Լուսավորչի աշխու Մելքիսեթ կաթողիկոսի տանելու [թվականը] չգտանք, որի պատճառով չգրեցինք. այս էլ այսպես:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը

ՀԱՐՅՈՒՐ ԹՈՒՄԱՆ ՏՈՒԳԱՆՔԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՇԱՀԸ ԴՐԵՏ
ՄԵԼՔԻՍԵԹ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎՐԱ

Արդ՝ ինչպես կանխավ պատմեցինք Դավիթ կաթողիկոսի մասին, թե գնաց շահի պալատը և ամբաստանեց Մելքիսեթ կաթողիկոսին, իսկ շահը բարկացավ Մելքիսեթի վրա, գցեց

կաթողիկոսությունից և ուղարկեց Սպահան: Իսկ Դավիթ կաթողիկոսը մնաց այնտեղ բանակում՝ շահի պալատում, այնտեղ էր նաև Ամիրգունա խանը, որ ամբողջ Արարատյան գավառի և Սուրբ էջմիածնի տերն ու իշխանն էր:

Եվ մի օր, երբ շահը հանդես էր արել և նստել էր հանդեսում, նրա առջև կանգնած էին բոլոր իր նախարարներն ու իշխանները. այդ հանդեսում էին նաև Ամիրգունա խանը և Դավիթ կաթողիկոսը: Շահը Դավիթ կաթողիկոսի հետ քաղցրությամբ խոսեց՝ ասելով. «Շնորհեցինք քեզ էջմիածնի կաթողիկոսական իշխանությունը, այժմ կգնաս կնստես էջմիածնում և կվարես կաթողիկոսական իշխանությունը»: Այդ ժամանակ Դավիթը խնդրանքով ասել է շահին. «Թագավոր իմ, ինձ խանին հանձնարարիր, ինձ խանին հանձնարարիր»: Ապա շահը իր խոսքը Ամիրգունա խանին դարձնելով՝ Դավիթ կաթողիկոսին հանձնարարեց նրան, թե բարի խնամակալությամբ կպահես կաթողիկոսին՝ մեր հորը: Իսկ Ամիրգունա խանը մինչև մեջքը խոնարհվեց, ձեռք դրեց իր գլխի վրա, շահին պատասխանեց՝ ասելով. «Իմ գլխի վրա դա հանգրստանալու տեղ ունի»:

Քանի դեռ շահը Վրաստանում էր, այնտեղ էին կաթողիկոսն ու Ամիրգունա խանը, իսկ երբ շահը ելավ գնաց Պարսկաստան, Ամիրգունա խանը և Դավիթ կաթողիկոսը վերադարձան, եկան Երևան՝ խանը իր խանությանը, իսկ կաթողիկոսը՝ իր կաթողիկոսությանը: Որքան որ շահը Ատրպատականի երկրում էր՝ մերձաքաղաքներում ու գավառներում, Ամիրգունա խանը պատվում էր Դավիթ կաթողիկոսին, քաղցրությամբ էր խոսում նրա հետ՝ շահից երկյուղելով, իսկ երբ շահը հեռացավ, երկյուղը խանի սրտից վերացավ, սկսեց խոժոռվել Դավիթ կաթողիկոսի հանդեպ, չէր պատվում և [հետը] չէր խոսում, իսկ երբ խոսում էր, խրոխտանքով էր խոսում, որովհետև Դավիթի էջմիածին նստելը չէր կամենում, նա Մելքիսեթին էր ուղում: Այդ պատճառով խանը խոժոռ դեմքով էր երևում և խոսում Դավիթի հետ. ոմանք ասում էին, թե խանը ջանում էր ծածուկ հնարներով որևէ կերպ սպանել Դավիթին: Թշնամական այս գործողությունը, որ խանը անում էր Դավիթի հանդեպ, ոմանք ասում էին պատճառը Մելքիսեթ կաթողիկոսի գաղտնի նենգադրությունն էր, քանզի թեպետ

դտնվում էր Սպահանում, բայց մշտապես ծածուկ նամակ ու խնդրագիր իբրև սիրո նշան պակաս չէր անում խանին, այլ ճիշտ ուղարկում էր: Նաև կաթողիկոսական իշխանության մեջ Մելքիսեթը դրամի և այլ իրերի հարցում ավելի ձեռնբաց էր առ առատաձեռն իշխանների, զինվորների, իր համախոհների նկատմամբ, դրա համար էլ խանը և այլ ամենքը Մելքիսեթի կաթողիկոսությունն էին ուզում և ոչ Դավթի:

Երբ այդ ժամանակ, երբ օսմանցիների զորահրամանատուրը՝ Օքուլահամադ փաշան եկավ Երևանի բերդի վրա, շահը նույնպես եկավ Երևան բերդին օգնության. նա գտնվում էր Գառնու լեռներում. իսկ երբ [օսմանցիների] զորահրամանատարը Երևանից կարին վերադարձավ, շահը տակավին գավառների լեռներում էր բնակվում: Իսկ Դավիթ կաթողիկոսը խանից երկյուղելով, որ մի գուցե թե ծածուկ դավելով սպանի իրեն, վտանգից ճարահատյալ, առանց խանի գիտության երկրորդ անգամ զնաց շահի մոտ. և ներկայացավ նրան: Երբ շահը հարցրեց Դավթի որպիսությունը, Դավիթը օտար լեզվով ասաց. «Փաղիշահում, Ջանգի շայինդան մանա բիր իշում սու վերմագիլար» [Իմ թագավոր, Հրազդան գետից ինձ մի պուտ ջուր չեն տալիս]: Ջանգի շայը Երևանի մեծ գետըն է, որ բերդի ներքևից է անցնում: Այս ապստամբությամբ շահը իմացավ, որ Ամիրզունա խանն է, որ հանգիստ չի տալիս Դավթին և նրան չի ընդունում: Նաև այն իմացավ, որ Մելքիսեթի պատճառով խանը Դավթին չի ընդունում. դրա համար շահը շարկացավ խանի վրա, մի քիչ էլ աշառու եղավ նրա հանդեպ, բայց Մելքիսեթ կաթողիկոսի զեմ խիստ զայրացավ. նաև այն իմացավ, որ Մելքիսեթը Սպահանում ազատ լինելով՝ կաթողիկոսական իշխանություն է վարում առանց շահի հրամանի: Սրա համար պատրաստեց զորական, որ զնա Սպահան, Մելքիսեթին բռնի, կապանքով բերի շահի մոտ, որ և իսկույն ուղարկեցին մի թագավորական ծառա Չարբազ Իբրահիմ անունով. սա հասնելով Սպահան քաղաքը՝ այնտեղ չգտավ Մելքիսեթ կաթողիկոսին, որովհետև զնացել էր Գանդիման գավառը: Չարբազ Իբրահիմը նույնպես զնաց Գանդիման և կաթողիկոսին գտավ Քաթակ գյուղում, որին բռնեց, կապանքով բերեց Սպահան, այնտեղից էլ՝ շահի մոտ, որ այն ժամանակ եկել էր Վայոց ձոր, այսինքն՝

Եղեգնաձոր: Չարբազ Իբրահիմը այդտեղ՝ արքունի բանակ բերեց Մելքիսեթ կաթողիկոսին և հայտնեց շահին: Բայց շահը անտեսեց Մելքիսեթի դատաստանը, թողեց, որ մնա կապանքներում, ինքը Վայոց ձորից շարժվեց զնաց նախիջևան:

Մինչև այս ժամանակ, մինչև Մելքիսեթ կաթողիկոսի գալը Դավիթ կաթողիկոսը շահի բանակում էր: Երբ Դավիթ կաթողիկոսը տեսավ, թե թողնելով անտես արեց Մելքիսեթին, որ մնա կապանքներում, իր հոգում հասկացավ, որ շատ օրեր կհետաձգվի այդ անտեսությունը, մտածեց հրաժարվել կաթողիկոսությունից և գնալ Սպահան. մոտենալով շահին՝ Սպահան զնալու հրաման խնդրեց, և շահը նրան հրաման տրվեց: Դավիթ կաթողիկոսը զնաց Սպահան և մնաց լոռային մեջ, քանզի շահը նրան Չղախոռ գավառում, որին կոչում էին Ֆուրնգիկան, իբրև միջոց նրա ապրուստի, մի գյուղ պարզեց որպեսզի ուտի այն գյուղի եկամուտը և աղոթի թագավորի կյանքի համար: Նա զնաց Սպահան և այդպես ապրում էր: Իսկ Մելքիսեթ կաթողիկոսը մնաց արքունի բանակում շղթաների կապանքների մեջ:

Շահը նախիջևանից շարժվեց, զնաց Ագուլիս գյուղաքաղաքը, այդ ժամանակ նահատակեց տեր Անդրեաս քահանային, Մովսես վարդապետին և Պողոս վարդապետին. այս [վերջին] երկուսին բռնեց, դրեց կապանքներում և նրանցից տուգանք պահանջեց, առավ երեք հարյուր թուման. նրանք տուգանքը տվին, ազատվեցին:

Արդ՝ ինչպես որ շահը բռնեց Մովսես և Պողոս վարդապետներին, առավ երեք հարյուր թումանը, սույնպես էլ Մելքիսեթ կաթողիկոսին բռնեց, պահանջում էր երեք հարյուր թուման տուգանք երեք հանցանքների համար: Նախ՝ սրբուհի կույս Նոբիսիմեի նշխարների համար, որ Մելքիսեթի թույլտվությամբ ֆոանկները տարան. շատերը ասում էին, թե առած կաշառքի համար Մելքիսեթը թույլ տվեց: Երկրորդ՝ մեծ աքսորանքից ետ դառնալու համար, որ առանց շահի հրամանի վերադարձավ, եկավ էջմիածին և վարում էր կաթողիկոսական իշխանությունը և այն էլ առանց շահի հրամանի: Երրորդ՝ երբ շահը Մելքիսեթին կաթողիկոսությունից զցեց և ուղարկեց Սպահան, շահը կարծում էր, թե նա կալանքի տակ է, բայց Մելքիսեթը ազատ լինելով վարում էր

կաթողիկոսութեան իշխանութիւնը և այս էլ առանց շահի հրամանի Այսքան հանցանքի համար շահը Մելքիսեթին բռնել էր և կամենում էր սպանել, իսկ Ամիրզոնա խանի բարեխոսութեամբ ներեց ու շսպանեց, բայց պահանջում էր երեք հարյուր թուման տուգանք, որի համար էլ երկաթե կապանքներում կալանքի տակ էր պահում, որպեսզի այն [տուգանքը] վճարի և գնա որևէ տեղ մնա՝ առանձնանալով կաթողիկոսութեան իշխանութիւնից:

Շահը Ազուլիսից ելնելով զնաց հասավ Դանդի. Սպահանից մինչև այստեղ կապանքի մեջ էր Մելքիսեթ կաթողիկոսը և այդպես արքայի բանակի հետ շրջում էր: Այդ տեղում Մելքիսեթ կաթողիկոսը աղերսագիր գրեց, հասցրեց շահի ձեռքը և հայտնեց իր տառապանքների մասին, թե՛ այսպիսի շարշարանքի մեջ եմ, խնդրում եմ արքայից, որ անդորրութիւն տա իմ տառապանքներին՝ կամ մահով և կամ կյանքով: Իսկ շահը պատասխան էր տվել Սպանդիար բեկի միջոցով. «Ոչ կսպանեմ, ոչ էլ կթողնեմ, այլ այդպես կապանքի տակ կպահեմ, մինչև մեռնի ու ազատվի, և կամ երեք հարյուր թուման դրամը տա, որ հրամայել եմ նրան, և ազատվի»:

Իսկ այդ ժամանակ խորհրդական և նշանավոր մարդիկ, որ արքայի արքունիքում էին՝ թե այլազգիներից, որ Սպանդիար բեկն էր, Ուղուրու բեկը և էլի շատերը, թե քրիստոնյաների մեծամեծները, որ էր խոջա Նազարը, խոջա Սուլթանումը, Միրվելին, մելիք Հայկազնը և ուրիշ շատերը, ասացին Մելքիսեթ կաթողիկոսին, թե անհնար է քո այս գործը, պետք է տաս և ազատվես սրա ձեռքից:

Արդ՝ այս գլխի պատմութիւնը հարյուր թուման տուգանքի մասին է. մինչև այստեղ պատմութիւնս միաշաղկի էր, որը առանց երկրայութեան գրեցինք, իսկ այսուհետև բաժանվում է երկու շավիղի, և պատմութեանս երկարութիւնը մեզ համար շարշարանք է ավելացնում: Եվ որովհետև պատմութեան իսկութիւնը ոչ ոք չգիտի, հարկ համարեցինք երկուսն էլ գրել: Քանզի ոմանք պատմողներից, մանավանդ շատերը, պատմեցին, թե Մելքիսեթ կաթողիկոսը՝ ոսոխ ունենալով Դավիթ կաթողիկոսին, սա մշտապես իր հակառակութիւնը

շարունակում էր, իբրև ախոյան սաղորում ու դավադրում էր Մելքիսեթի իշխանութեան դեմ՝ չտալով հանգիստ ու անդորրութիւն. այս պատճառով Մելքիսեթը մտածեց և մտավ ծանր հարկի տակ, որպեսզի հարկի ծանրութեան պատճառով Դավիթ կաթողիկոսը այլևս չհանդգնի դեմ կանգնել, դրդել ու խառնակել մեջտեղը, այլ հեռու մնա: Սրա հետև մնալով Մելքիսեթը անսխալ կվարի կաթողիկոսական իշխանութիւնը: Եվ այս պատճառով Մելքիսեթն աղերսագիր գրեց շահին. «Եթե թագավորի կամքը քաղցրանա մեր վրա, մեզ այցի գա և մեզ տա կաթողիկոսութեան իշխանութիւնը, մենք տարեց-տարի թագավորի դիվանին կտանք ամեն տարի հարյուր թուման ռոճիկ թագավորի ծառաների համար», իսկ թագավորը տեսնելով իր կողմի մեծ օգուտը, մեղմացավ, զիջեց Մելքիսեթի խոսքերին և կատարեց նրա խնդրանքը. նրան տվեց կաթողիկոսութեան իշխանութիւն՝ գրված ու կնքված թագավորական հրովարտակով: Սրանով Մելքիսեթը, ելնելով ողջ երկիրը, կաթողիկոսութիւնը վարում էր ամբողջ հայազուն ժողովրդի վրա: Իսկ Դավիթ կաթողիկոսը հեռու էր մնացել, նախանձով լցված ետ էր կանգնել հակառակութիւնից և իբրև գառագզում կապած գազան սպասում, տենչում էր հարմար ժամի: Արդ՝ այն, ինչ որ ասացինք այս պատմութեան մասին՝ թե երկու ճյուղի բաժանվեց, մեկն այս է, որը գրեցինք, որ ոմանք և մանավանդ շատերը այսպես էին պատմում:

Իսկ պատմագիրներից ոմանք ասացին, թե շահը երեք հարյուր թուման տուգանք գրեց Մելքիսեթի վրա, բայց Մելքիսեթը այդ չէր կարողանում վճարել, սակայն, որովհետև մնաց անել կացութեան մեջ և նեղութիւնների հարկադրանքից ակամա մտածեց տալ: Այդ պատճառով թողթ գրեց և ուղարկեց շահին հետևյալ ձևով. «Ինքնակալիդ տերութիւնը մեր մասին հրամայել է, որ մենք երեք հարյուր թուման տանք՝ Հանձն եմ առնում տալ այդ երեք հարյուր թումանը, բայց երեք տարում կտամ՝ մինչև որ երեք տարում վճարեմ, վերջացնեմ, քանզի մի տարում չեմ կարող վճարել»: Իսկ շահը առել էր Մելքիսեթ կաթողիկոսի այս ինքնագիրը և արձակել էր նրան կապանքներից. նրան հրաման ու կաթողիկոսութեան իշխանութիւն էր տվել: Բայց արքունական դիվանի բնիկ մատչանում այս օրինակի համապատասխան չէր գրված, ինչ-

պես որ էր կաթողիկոսի ինքնագիրը, թե երեք հարյուր թու-
ման կտամ և ուրիշ ոչինչ: Բայց շահը գրել էր, թե՝ «Մեկքի-
սեթ կաթողիկոսը խնդրեց էջմիածնի կաթողիկոսությունը և
խոստացավ տարեկան հարյուր թուման տուգանք տալ թա-
գավորի դիվանին, որի համար էլ մենք նրան շնորհեցինք
կաթողիկոսության իշխանությունը, որպեսզի նա կառավա-
րի»: Շահի այսպես գրած լինելը ոչ ոք չգիտեր՝ ոչ կաթողի-
կոսը, ոչ էլ հայերից մեկ ուրիշը, և երբ իմացան, ոչ ոք չկա-
րողացավ որևէ բանով օգնել, որովհետև անկարելի էր կեղ-
ծել այնպիսի գոռոզ թագավորի հրամանը, և կամ գրածը հա-
նել թագավորական ու դիվանական մատյաններից, որոնցում
գրված էր:

Մինչև այստեղ պատմությանս երկրորդ ճյուղն է, որ ոմանք
այսպես պատմեցին, իսկ դու [ընթերցող] ընդունիր, որը որ
հավանական ես համարում, կամ, որը որ երկու պատմու-
թյուններից քո մտքի տեսությունը կհավանի:

Արդ՝ թե այսպես, թե այնպես ստույգ ու հաստատ հարյուր
թուման տուգանք դրվեց Մեկքիսեթ կաթողիկոսի վրա, որ պետք
է տար թագավորին տարեցտարի. և այս պատճառով տո-
գանքը ընկավ էջմիածնի Սուրբ աթոռի վրա, և աթոռը մնաց
պարտքի տակ: Սա եղավ ծանր բեռ և տաժանելի լուծ, ան-
խզելի շղթա Սուրբ աթոռ էջմիածնի վրա զուր ու անտեղի,
իսկ հայոց ամբողջ ազգին [պատեցին] անմխիթար սուր
անփարատելի տրտմություն՝ թե եկեղեցականներին, թե աշ-
խարհականներին:

Իսկ Մեկքիսեթ կաթողիկոսը կապանքներից արձակվելուց
և կաթողիկոսական իշխանությունը առնելուց հետո, մեծ
ջանքերով աշխատում էր խոստացած հարկը վճարել, որպես-
զի ազատվի. այս պատճառով ելել է շրջագայության հայ ժո-
ղովրդի մեջ ժողովքի համար. նախ զնացել է Թիֆլիս, այն-
տեղից՝ Քավրիզ, այնտեղից՝ Սպահան:

Երբ տարին բոլորեց, շահը անմոռաց միտն էր պահում
այն, դրա համար իր թագավորական ծառաներից չորս զըլ-
խավոր մարդիկ, որոնց անուններն էին Զիալ բեկ, Ասադ բեկ,
Զրադ բեկ, Բահրամ բեկ, ուղարկեց Մեկքիսեթի մոտ, թե տու-
գանքը, որ խոստացար տալ արքունի դիվանին, տուր թա-
գավորական ծառաներին իրենց նշանակված ոտճիկների դի-

մաց: Իսկ սա եղավ դառնագին փորձանք ու աղետ անխզելի
անուր կաթողիկոսարանի համար, որովհետև բեռը բարձվեց
բեռան վրա: Որովհետև առձեռն պատրաստ դրամ չկար, որ
տային ծառաներին, այս պատճառով ծառաները բեռ էին մը-
նում կաթողիկոսի վրա իրենց ծառաներով ու ձիերով. և իրենց
կերակուրի և այլ կարիքների բոլոր պիտույքները կաթողի-
կոսից էին առնում:

Իսկ կաթողիկոսը թագավորական տուգանքի և այս ծա-
ռաների պետքերի համար ելնում ու շրջում էր հայերի մեջ,
իսկ ուր որ շրջում էր կաթողիկոսը, ծառաները նրա հետ շըր-
ջում էին: Սրանք ծանրանում էին ժողովրդի վրա իրենց տե-
սակ-տեսակ կարիքներով՝ իրենց և իրենց ձիերի: Իսկ նրանց
ամենօրյա սեղանը առանց դինու չէր. նրանց ծախսերը քիչ
չէին, ժամանակները անցկացնում էին միշտ զինարբության
մեջ:

Ամբողջ երկրում ու ժողովրդի մեջ իր շրջագայության ծա-
մանակ կաթողիկոսը ուր էլ լիներ, իրավամբ իր հասույթն էր
առնում, բայց երբ այն չէր բավականացնում իր ու ծառա-
ների և տուգանքի ծախսերը, անպարտ մարդկանց՝ լինել և
պիսկոպոս, արեղա, քահանա. թե աշխարհական, բռնում էր
սրանց առանց որևէ պարտքի ու վնասի, անիրավաբար պատ-
ճառներ էր կցմցում նրանց վրա և դրամ էր պահանջում,
հանձնում էր ծառաների, զինվորների ձեռքը, որոնք նրանց
կախում էին ոտքերից և բրածեծ անում, մինչև որ իրենց ցան-
կացածի չափ դրամ էին առնում, ապա արձակում էին:

Նաև՝ այս պատճառով բազմաթիվ անկարգություններ ու
օրինազանցություններ մտան հայոց ազգի մեջ՝ կաշառքով
անարժան մարդկանց ձեռնադրություն տալ՝ թե եպիսկոպոս-
ների, թե քահանաների, կաշառքով սեփական վիճակից այս
վանքից կտրել, ուրիշ վանքի շնորհել, չհասի, ապօրինի պա-
կի, կնաթողության, երկակնության համարձակ հրաման տալ
ամուսնության: Սրանք և սրանց նման բազմաթիվ անկար-
գություններ էին գործվում: Կաթողիկոսը և իր եպիսկոպոս-
ները ոգի ի բուռն ջանք էին թափում, թե իրավամբ, թե ան-
իրավությամբ հնարքներ էին մտածում ժողովելու ինչքեր,
որ թերևս բավականացնի իրենց, ծառաների ու տուգանքի

վճարման ծախսերը, սակայն չէր լինում, որովհետև ոչ թե աստուծով, այլ մարդկային խելքով էին մտորում գործ անել, դրա համար չէր կատարվում ըստ Սաղմոսի վկայություն. «Եթե տերը չի շինում տունը, նրա շինողները դատարկ շար- շարանքի մեջ են»^{*}

Բայց կաթողիկոսը չէր թուլանում ու չէր դադարում շրջ- ջազայությունից, որ գուցե վճարի խոստացածը։ Սրա համար Սպահանից ելավ, գնաց Ֆահրապատ, այնտեղից նախիջևան, այնտեղից դարձյալ Սպահան։ Ապա բազմաթիվ նեղություն- ների պատճառով, որ ծառաները տալիս էին կաթողիկոսին և պահանջում էին նրանից դրամը, կաթողիկոսը աղերսագրով հայտնել էր շահին իր նեղությունները, բայց շահը անտես էր արել կաթողիկոսի խոսքը, որի համար մնացել էր անել կա- ցություն մեջ։ Ապա գնացել, ընկել էր շահի գոմը և շահին կաթողիկոսը իմացրել էր, թե ութ հարյուր թուման տվել եմ, բայց այլևս ուժ չունեմ տալու։ Իսկ շահը ասել էր, թե ես այդ հարյուր թուման տուգանքից մեկ կոպեկ չեմ զիջի, եթե նույ- նիսկ մեկ այրի պառավ մնացած լինի [երկրում], ես կառնեմ։ Ապա Մելքիսեթը ելավ Սպահանից եկավ Երևան և էջմիածին, շահի ծառաները նույնպես եկան կաթողիկոսի հետ և պահանջ- ջում էին իրենց ոռճիկը, որ շահը պարտագրել էր կաթողիկո- սի վրա նրանց տալու հարյուր թուման տուգանքի հաշվին։ Կաթողիկոսն ուր էլ որ շրջում էր, նրա հետ շրջում էին նաև ծառաները, և ծանր բեռ էին դառնում ժողովրդի վրա իրենց անհրաժեշտ կարիքներով և անխնա շոռայությունը ցնցխում էին ժողովրդի ունեցվածքը, իսկ այս նեղությունը խիստ ծանր էր ժողովրդի համար, որովհետև [ծառաները] իրենց կենցա- ղավարությունը զխությունը ու շոռայությունը էին անցկաց- նում։ Այս պատճառով բոլորը ձանձրացան, սրտով լքեցին կաթողիկոսին և յուրայիններին, հեռացան նրանցից։ Եվ այ- նուհետև իրավունքով ու կանոնավոր կարգով չէին [պահանջ- ջում], այլ այլազգիների իշխանությունը և իբրև կապալա- վոր հարկատու բռնանում էին ժողովրդի վրա, առանց իրա- վունքի կեղեքում, կողոպտում էին ժողովրդին։ Եվ թեպետ կե- եքելով էին առնում, թեպետ իրավունքով, սակայն իրենց ծախ- քերին չէր բավականանում, դրա համար պահանջների պա-

կաւ բավարարելուց և ծառաների հարկադրանքից գնացին տոկոսատու փոխատուների մոտ և մեծ տոկոսով նրանցից փոխ առան՝ ավելի շատ այլազգիներից, քան քրիստոնյանե- րից, քանզի քրիստոնյաները տալ չէին վստահում։

Եվ ներկայում այնպես եղավ, որ պարտքերը երկուստեք ավելացան. նախ՝ հարյուր թուման տուգանքից, որ չէին կա- րողանում տալ, ուստի մնաց տարուց տարի և հասավ մինչև վեց հարյուր թուման տուրքի, և երկրորդ՝ իրենց արած պարտ- քը, որ պարտատուներից առել էին ծառաների ու իրենց կա- րիքների համար։

Արդ՝ պարտքերի շատանալու, ուրիշների նեղություններից, որ կրում էր կաթողիկոսը, նաև շրջողովելով հայոց ազգից, մտածեց իր մեջ, որ իր վրայից վերցնի ուրիշի վրա դնի կա- թողիկոս անունը, սրա հետ նաև պարտքերը, դրա համար ասաց Մովսես վարդապետին, որ այդ ժամանակ բնակվում էր Երևան քաղաքում սուրբ առաքյալ Անանիայի դամբարանի մոտ⁹³, որ գտնվում է քաղաքի ծայրում։ «Ահա հայոց ազգը մեծ ու փոքր երես դարձրին ինձնից, իսկ քեզ սիրում են և ընդունում, մանավանդ ես ծերացել եմ, իսկ արքունի հարկը պարտք դարձավ ու շատացավ իմ վրա։ Արդ՝ տալիս եմ քեզ էջմիածին Սուրբ աթոռն ու կաթողիկոսությունը, դու վարիք այսուհետև կաթողիկոսությունը, որպես դու ես արժան, իսկ ինձ տուր տարեցտարի ապրելու միջոց և վանքերիցդ մեկը, որպեսզի այնտեղ լուռ նստեմ ու վերջացնեմ իմ ծերությունը։ Իսկ Մովսես վարդապետը հանձն չի առել, այլ հրաժարվելով հրաժարվել է։

Մելքիսեթ կաթողիկոսը ուներ Սահակ անունով մի եղբոր- որդի, որ նրա կողմից եպիսկոպոս էր ձեռնադրված և ծառա- յում էր նրան։ Սա խոսք էր հասցնում Մելքիսեթ կաթողիկո- սին, թե այդ կաթողիկոսությունը քեզ է պատկանում, եթե վարես, շատ լավ է, իսկ եթե դու չես վարում, ինչո՞ւ ես ուրիշ- ներին շնորհում և ոչ թե ինձ, որ ծառանդ եմ և քո որդին եմ։ Այս մտքով նաև իրենց բարեկամներն էին հորդորել կաթո- ղիկոսին։ Իսկ Մելքիսեթ կաթողիկոսին հաճելի եղան Սահա- կի ու բարեկամների խոսքերը։ Իրենց բարեկամների հավա- նությունը ու միաբանությունը Մելքիսեթ կաթողիկոսը Սահա- կին տարել է էջմիածին և հրեշտակապետների կիրակի օրը

^{*}Սաղմ. միջ 1.

նրան կաթողիկոս է օծել, առել տարել է Երևան քաղաքը և այս բանը հայտարարել է ամբողջ ժողովրդին: Նաև կոնդակ է գրել ու տվել Սահակ կաթողիկոսին, թե՛ ռեժիմ ծանուցում լինի ողջ հայ ազգին, որ ես ծերացել եմ ու անկարացել, սրա համար հրաժարվեցի կաթողիկոսությունից, իմ որդի Սահակին օծեցի կաթողիկոս և կարգեցի էջմիածնի Սուրբ աթոռին: Արդ՝ ով որ մեզ հնազանդ է և խնդրող մեր օրհնությունը, թող հոժարությունը հնազանդվի սրա հրամաններին»: Եվ այդպես նրան կաթողիկոս հռչակեց ամենայն հայոց ազգի մեջ, վարդապետների ու եպիսկոպոսների առջև: Նաև տարավ Ամիրզունա խանի առջև կանգնեցրեց և ասաց, թե կաթողիկոսությունը տվի սրան, որին նաև խանը հավանություն տվեց: Մելքիսեթ կաթողիկոսը խանից ևս խնդրեց, որ նա խնդրագիր գրի շահին, որպեսզի կաթողիկոսությունը սրան տա: Մելքիսեթը ինքը ևս աղերսագիր գրեց շահին, թե՛ ռեժիմ ծերացել եմ և անկարող եմ վարել այս իշխանությունը. սա իմ որդին է, խնդրում եմ սրան շնորհես կաթողիկոսությունը»:

Այս բոլորից հետո, որովհետև Սահակը նշանակվեց կաթողիկոս, հրաման ստացավ Մելքիսեթ կաթողիկոսից և Ամիրզունա խանից, այնուհետև Սահակը սկսեց վարել կաթողիկոսական իշխանությունը, իսկ շահի ծառաները նույնպես հավաքվեցին Սահակ կաթողիկոսի մոտ և նրա հետ էին շրջադառնում:

Օրեր հետո Սահակն առավ Մելքիսեթ կաթողիկոսի և Ամիրզունա խանի հրամանները, գնաց շահի արքունիքը իր վրա հաստատելու կաթողիկոսությունը:

Իսկ Մելքիսեթ կաթողիկոսը մնաց էջմիածնում, և պարտաւերերը խիստ ճշտությամբ նրանից պահանջում էին իրենց տրված պարտքերը. ամեն օր գալիս առջևը կտրում և անհանգրսուացնելով պահանջում էին տված պարտքերը, իսկ նա ոչինչ չուներ, որ տար, և ոչ ոք էլ չէր վստահում նրան պարտք տալ, այլ տեղից էլ ակնկալություն չկար: Այս պատճառով Սուրբ էջմիածնի բոլոր մնացած անոթները, ինչ որ գտնվում էր, նաև մեր կուսավորիչ սուրբ Գրիգորի որդի Արիստակես հայրապետի աջը, Աղջուց վանքի սուրբ Ստեփանոսի աջը և բոլորը, որ հիշատակեցի, բերել, գրավ էր դրել այլազգի մահմեդա-

կանների մոտ, իսկ առած դրամը տվել էր պարտատուներին և այդ կերպ նրանց հեռացրել իրենից:

Եվ այնուհետև Մելքիսեթ կաթողիկոսը ներքուստ կասկած ունենալով, թե գուցե մյուս պարտատուները նույնպես գան նեղեն իրեն, նաև թագավորական տուգանքը ունենալով մտքում և հավաստի իմանալով, որ չի կարող վճարել, նաև նեղությունների համար, որ շրջապատել էին իրեն, մտածեց թաքուն որևէ կողմ ճողոպրել: Գրա համար մի օր երեկոն մոտենալիս ինքը և մի սպասավոր ելան էջմիածնից՝ պատճառ բռնելով, թե Երևան է գնում: Հասնելով կես ճանապարհին՝ ձիու սանձը շուտ տվին ուղիղ դեպի Սահաթի գավառը⁸⁴, որ Արաքսի մյուս ափն է՝ Կողբի կողմերը: Այնտեղից գնաց Կաղզվան⁸⁵, այնտեղից Կարին: Եվ այսպես թաքուն, գաղտագողի փախուստով Մելքիսեթ կաթողիկոսը ճողոպրեց օսմանցիների երկրի մասը: Կարին քաղաքից ելնելով դանդաղ գնալով հասավ մեծ քաղաք Կոստանդնուպոլիս: Այնտեղ էլ ժողովուրդը և ժամանակի վարդապետները չընդունեցին նրան ինչ-որ պատճառով: Ապա այդտեղից ելավ, գնաց Իլով⁸⁶ քաղաքը, իսկ Իլով քաղաքի ժողովուրդը նրան ընդունեց մեծ պատվով ու փառքով: Այնտեղ սակավ ժամանակ մնալով, այս աշխարհից պակասեց, ավելացավ իր հայրերին մեր թվականության 1075 (1626) տարում. այնտեղ վախճանվեց ու այնտեղ թաղվեց: Բայց քանի դեռ Մելքիսեթը կենդանի էր, իլովցիների համար եպիսկոպոս ձեռնադրեց Նիկողայոս [Նիկոլ]* անունով մեկին, որ նույն Իլով քաղաքից էր: Այս Նիկողայոսը քիչ տարիներ հետո շատ նեղություններ տվեց ժողովրդին, որի որպիսությունները կիմանաս նրա պատմությունից, որ հետո անելու ենք:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ

ԿԱԹՈՒԼԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՓԱՆՍՏՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես կանխավ պատմեցինք, թե Սահակը ընդունեց կաթողիկոսություն աստիճանը, նաև աղերսագիր Մելքիսեթից և Ամիրզունա խանից՝ ուղղված շահին. մի այլ նամակ էլ Ամիրզունա խանը գրեց իր որդի Թահմազդուլի խանին, որ միշտ

* Փակագիծը բնագրային է:

շահի սպասին կանգնած էր, որովհետև շահի կնքապահն էր: Այս ան Քահնազդուլին է, որ շահի հրամանով էջմիածնի քարերը հանեց, ուղարկեց Սպահան և այս ժամանակից շահի մոտ կանգնած էր սպասի: Սրան Ամիրզունա խանը գրեց, թե՝ «Այս Սահակին կներկայացնես արքային և սրա բոլոր խնդրանքները նրան կհայտնես, կխնդրես, որ կաթողիկոսությունը սրան տա»: Սահակը առավ այս նամակները և գնաց Յահրայատ, քանզի շահը այդ ժամանակ այնտեղ էր: Եվ երբ հասավ Քահնազդուլի խանի մոտ, հուսադրանքի շատ խոսքեր լսեց նրանից, թե հոգ մի տանիր, ինչ խնդիր որ ունես արքայից, ամենը կկատարեմ:

Օրեր հետո Սահակին ներկայացրել է արքային, և շահը հարցումով տեղեկացել է նրա մասին, կարդացել է Ամիրզունա խանի և Մելքիսեթ կաթողիկոսի նամակները: Նաև շահը իմացավ, որ Սահակը Մելքիսեթի եղբորորդին է: Սահակը ինքը ըստ իր կարողության ընծա է մատուցել շահին: Որի հետ կար մի թանձազին ձի: Երբ Սահակի ընծան բերին թագավորի առջև, թագավորը հարցրեց, թե պարտքի մնացորդը, որ տուգանքից արքունի դիվանին տալու էր Մելքիսեթ կաթողիկոսը, հանձն առնում ևս տալ, թե ոչ: Սահակը հանձն առավ տալ: Դրա համար արքան հաճել ու հավանել էր նրա խնդրանքի խոսքերը և Սահակին էր տվել կաթողիկոսական իշխանությունը և ասել՝ շնորհավոր լինի քեզ կաթողիկոսությունդ, այլև Սահակի բերած ձին նույն պարգևներով շնորհել էր [նրան]:

Շահը հրամայեց թագավորական հրաման գրել, որը և գրեցին, բայց մնաց կնքելու և գրանցելու, քանզի թագավորն ու իր գրասենյակը Յահրայատից ելնելով գնացին Ղազրին: Այդ օրերին Սահակը սկսել էր Յահրայատից ժողովքը անել: Քահնազդուլի խանը Սահակին ասաց. «Շրամանագիրը տուր ինձ, որպեսզի ինձ հետ տանեմ, կնքել տամ, իսկ դու մնա Յահրայատում ժողովքդ արա, հետո կգաս, քեզ կտամ»: Այսպես անելով Սահակը մնաց Յահրայատում, իսկ հրամանագիրը Քահնազդուլին իր հետ տարավ Ղազրին: Շահն ու իր բանակը այնտեղից եկան Սուլթանիա և Արտաբիլ ու վերագարձան Սուլթանիա: Եվ մինչ Սահակը Յահրայատի ժողովքն արեց, եկավ Սուլթանիա, Քահնազդուլի խանը նախօրոք գնացել էր Երևան, քանզի Ամիրզունա խանը հիվանդ էր վեր-

ջից, որ պատերազմում ստացել էր վրացիներից: Այս պատճառով Քահնազդուլի խանին ուղարկեցին Երևան, որպեսզի տիրի երկրին: Քահնազդուլի խանի գնալուց հետո Սահակը եկավ Սուլթանիա. երբ Քահնազդուլի խանին չգտավ, նրա ծառաներին հարցրեց և խնդրեց հրամանը, նրանք ասացին, որ չգիտեն:

Երբ Սահակ կաթողիկոսի ճարը կտրվեց հրամանի վերաբերյալ, նեղությունից հարկադրված ինչ-որ հնարով նորից խնդրագիր տվեց շահին, թե հիվանդացա, հրամանագիրը կտրավ: Շահը ասել է, թե գնա Դիվան բեկի մոտ, իսկ Դիվան բեկը աչքածակություն պատճառով Սահակին կոպիտ էր պատասխանել, մինչև որ իր աչքածակությունը բավարարել էր: Ապա գրել էր նոր հրաման, բայց չէր կնքել: Մինչդեռ վիճակը այսպիսին էր, թագավորը դարձյալ վեր կացավ, գնաց Բաղդադ, հետևից գնաց նաև Սահակը: Եվ երբ մեծամեծները չէին կատարում Սահակի խնդրանքը, հարկ եղավ մի անգամ ևս խնդրագիր տալ շահին: Երբ թագավորը տեսավ խնդրագիրը, ասաց. «Վաղորդք քեզ կաթողիկոսություն և հրաման եմ տվել»: Սահակն ասաց. «Այո, թագավոր, տվել ևս, բայց հրամանը չեն կատարում, քանզի նրանք շատ ինչք են պահանջում, բայց ես տալու կարողություն չունեմ, սրա համար նրանք հապաղում են կնքել և գրանցել: Այդ ժամանակ շահը իր առջև կանչեց մի փայտակիր [փայտ բռնող] ծառա՞ն և ասաց. «Այսօր հրամանի ամեն գործ ու որպիսություն պետք է կատարես և վաղը տաս իրեն»: Իսկ զինվորը թագավորի հրամանի համաձայն գրության ամեն որպիսությունը հոգաց և հրամանը տվեց Սահակ կաթողիկոսին: Սահակը առավ գրությունը, եկավ Սպահան ջուղայեցիների մոտ: Բայց ջուղայեցիք նրան չընդունեցին, ոչ միայն նվիրակ չտվին, այլև նրան հարևանցի պատիվ ևս չարին:

Այդ ժամանակ Դավիթ կաթողիկոսը Սպահանում էր. ջուղայեցիները նրան ասացին, թե՝ «Մենք չենք կամենում, որ սա լինի կաթողիկոս, այլ քեզ ենք ցանկանում, դու գնա շահի պալատ և ստանձնիր կաթողիկոսական իշխանությունը, ինչ ծախս որ լինի, քեզ բնկերակից ենք»: Երբ Դավիթ կաթողիկոսը համաձայնեց այս խորհրդին և պատրաստվեց գնալ Բաղ-

դադ շահի արքունիքը, Սահակ կաթողիկոսը իմացա՞վ այս խորհուրդը, նա էլ ելավ գնալու շահի արքունիքը՝ տեսնելու այս գործի վախճանը:

Այս խորհրդի մասին Սահակը խոսեց Դավթի հետ, թե՛ «Ինչո՞ւ ես հակառակութիւն անում եւ այդ շարիքը գործում»: Դավթի վատրվակ էր հնարել, թե՛ «ոչ թե քեզ հակառակվելու համար, այլ իմ գործի համար եմ գնում. քանզի Չուֆլուկի գյուղը, որ շահը պարգևել էր ինձ, իշխաններից ոմանք բռնութիւյամբ եւ ինչ-որ պատճառաբանութիւյամբ սրա համար հարկ են առնում. դրա համար եմ գնում թագավորի արքունիքը, որ ազատութեան թուղթ առնեմ Չուֆլուկի համար»:

Եվ երբ նրանք Բաղդադ են հասել, առաջ Սահակն էր գնացել, ներկայացել շահին. և երբ շահը հարցրել էր, թե ի՞նչ ես ուզում, Սահակը ասել էր, թե թագավորի հրամանը չընդունեցին: Շահը հարցրել էր, թե ո՞վ: Սահակը վախից հանվան չի հիշատակել, այլ միայն ասել է, թե թագավորին հայտնի է: Շահը իմացել է, որ խոջա Նազարն է, որի մասին ասել է՝ գիտեմ որ կույրն է՝ և կույր մականունը շահը խոջա Նազարին էր ասում:

Օրեր հետո նաև Դավթի կաթողիկոսն էր եկել ներկայացել շահին, բայց կաթողիկոսական իշխանութեան մասին ոչինչ չի խոսել, քանզի իր հոգում հասկացել է, որ չի լինի, այս պատճառով ոչինչ չխոսեց: Այլ խոսեց Չուֆլուկի մասին և հրաման ստացավ արքունի հարկից ազատ այն տիրելու մասին: Սրանից հետո Սահակ ու Դավթի կաթողիկոսները ելել են Բաղդադից, դարձյալ եկել են Սպահան, իսկ ջուղայեցիները նորից չընդունեցին Սահակ կաթողիկոսին: Եվ երբ երկու կաթողիկոսները դուրս եկան Բաղդադից, շահը նույնպես քիչ օրեր հետո Բաղդադից ելավ, գնաց Ֆահրապատ:

Մի տարի առաջ շահը իր մոտ Բաղդադ էր կանչել Մովսես վարդապետին սպիտակեցրած մոմի առիթով և հարցնելով տեղեկացել էր այդ արհեստին, այսինքն՝ թե ինչպիսի են մոմը սպիտակեցնում: Եվ ապա իր թագավորական ծառաներից երեք ծառա աշակերտութեան էր տվել նրա մոտ և հրամայել էր, թե «գնա Սպահան և բեր ինձ մոտ, ուր էլ լինեմ ես»: Մովսես վարդապետը գալով Սպահան սովորեցրեց ծառաներին և շատ մոմեր ավելի պայծառ սպիտակեցրեց: Եվ երբ

լսեց, թե շահը գնաց Ֆահրապատ, իր հետ վերցրեց սպիտակեցրած մոմերը և սովորեցրած ծառաներին, գնաց Ֆահրապատ և մատուցեց թագավորին: Երբ թագավորը սպիտակեցրած մոմերը շատ պայծառ և ուրախալի տեսավ, այլև թափելը ավելի հարմար, շատ հաճեց ու հավանեց. նաև ծառաների սովորելու համար առավել ուրախացած, զվարթացած խնդում էր:

Քիչ օրեր հետո վրա էին հասնում մեր Քրիստոս աստծու հայտնութեան մեծ տոնի օրերը: Այս օրերում ջուղայեցի խոջա Նազարը նույնպես Ֆահրապատում էր: Շահը խոջա Նազարին հրամայեց, թե պատվիրի վարդապետին ավելի լավ հոգացողութեամբ պատրաստութիւն տեսնել ջրօրհնեքի համար, որ հանդիսավոր լինի: Տոնի օրը, երբ վարդապետ Մովսեսը եկել էր գետի ափը ջուրը օրհնելու, զարդերի գեղեցիկ հարմարեցումը, կարգ ու կանոնավոր էրթը, եկեղեցական սպասավորների կանգնելը շատ հաճելի ու հավանելի էին եղել արքային և խանդաղատանքով էր լցվել Մովսեսի հանդեսը: Մենք այս ճանաչում ենք իբրև ամենակալ աստծու արած խնամք, որ բոլոր թագավորների սիրտը իր ձեռքում է պահում, և ոչ թե Մովսեսի հաճոյացուցիչ արարքը: Բայց և խոջա Նազարը շատ բարի խոսքեր էր ասել շահին Մովսես վարդապետի վերաբերյալ: Իսկ շահը հարցրել էր խոջա Նազարին, թե՛ «վարդապետը իր սրտում ի՞նչ խնդրանք ունի, որ կատարենք. ոսկի, արծաթ կամ այլ ինչ, որը որ կամենա»: Իսկ վարդապետը ոչ մի իր չէր հաճել, «որովհետև իմ տերք օրըստօրե իմ կարիքները հոգում է»:

Օրեր հետո խոջա Նազարը ասաց արքային. «Եթե էջմիածնի լուսարարութեանը շնորհես սրան, շատ լավ կանես, քանզի ինքն էլ այդ է խնդրում»: Եվ աստծու խնամքով թագավորը շնորհեց այդ խնդրանքը. նաև հրաման էր գրել, տվել էր Մովսես վարդապետին, իսկ Մովսես վարդապետը ելավ Ֆահրապատից, գնաց էջմիածին:

Իսկ Սահակ կաթողիկոսը մինչդեռ Սպահանում էր, լսեց, թե Մովսես վարդապետը ստանձնել է էջմիածնի լուսարարութեանը, Սահակը ելավ եկավ Ֆահրապատ թագավորի արքունիքը այս գործի պատճառով: Երբ մտավ բեկի դիվանը, նրան հայտնեց իր վտանգավոր վիճակը և ասաց, թե փորձանք եր

ստեղծել իմ գլխին, որ էջմիածինը տվել եք Մովսեսին: Բեկի դիվանը պատասխանեց. «Թեպետ նրան էջմիածինն ենք տվել, բայց լուսարարությունն ենք տվել և ոչ թե կաթողիկոսությունը. կաթողիկոսությունը բռնն է, իսկ լուսարարությունը նրանը, դու բռնը կառավարիր, նա՛ իրենը»: Նաև Սահակը բազմաթիվ մեծամեծների դռներ շրջեց, սակայն ոչ մի օգուտ չստացավ: Երբ տեսավ ոչինչ չի օգնի, ելավ Չահրապատից եկավ Թավրիզ: Սահակի հետ եկան նաև շահի ծառաները, որ հարյուր թուման տուգանքը պահանջեին. սրանց հետ Թավրիզից դուրս ելան, եկան Խոյի գավառը:

Եվ Սահակը իր ներքնատեսությամբ նկատեց, որ ողջ հայոց ազգը իրենից երես է թեքել. նաև էջմիածնի աթոռը այդ կերպ գրավվեց Մովսես վարդապետի կողմից: Եվ հարյուր թնաման տուգանքը տարեցտարի ապառք մնաց, մնացած ապառքը հասավ մինչև ութ հարյուր թուման և տակավին օրավուր շատանում է: Հավաստի իմացավ, որ իրեն ոչ մի բանով փրկություն չկա, եթե ոչ՝ փախուստով. դրա համար եկել էլ խոյ, որովհետև կամենում էր ծառաներից թաքուն Խոյից փախչել վան քաղաքը՝ օսմանցիների իշխանության երկիրը:

Մինչ Սահակը այս մտորումների մեջ տարուբերվում էր և վարանման մեջ էր, թե ինչպես անի, իր հին բարեկամներից ոմանք, որոնցից էին Խորվիրապի Մանվել եպիսկոպոսը և Հավուց թառի Մկրտիչ եպիսկոպոսը: Սրանք Երևանի գավառում գտնվող ուրիշների հետ հուսադրական նամակ ուղարկեցին Խոյ՝ Սահակին, թե՛ «Մի երկնչիր, եկ Երևան քաղաքը, քանզի Թահմազդուլի խանը բարյացակամ է քո նկատմամբ, իսկ մենք բոլորս քո համախոհներն ենք, ուստի եկ այստեղ մեզ մոտ, ապա գործերի վերաբերյալ պատշաճը կմտածենք: Սահակ կաթողիկոսը այս հուսադրական խոսքերից քաջալերված այդ ժամանակ չփախավ, այլ եկավ Երևան, շահի ծառաներն էլ նրա հետ էին: Երբ ամբողջ երկրում այս կողմ, այն կողմ շրջեց, ոչ ոք չէր ընդունում նրան և չէր նայում նրա երեսը: Մինչև իսկ նրա հյուրընկալությունը հարեանցի ու վայրիվերո էին անում: Իսկ ծառաները մշտապես նեղում էին նրան, թե թագավորի պարտքերը վճարիր և մեր ռոճիկը տուր: Եվ որովհետև նա ոչինչ չունեի ու ամեն կողմից վճատված էր

ու ճարահատ մնացած, իսկ իր հուսադրող բարեկամները չկարողացան նրան օգնել, այս պատճառով հաստատ մտադրվեց, որ մի հնարքով պոկվի փախչի:

Այդ օրերին եկավ, վրա հասավ տիրոջ հայտնության տունը [գատիկը], որն ամեն տարի Մովսես վարդապետը մեծախումբ հանդեսով և հրաշալի փառավորությամբ անում էր: Բոլորը Երևան քաղաքում էին՝ Մովսես վարդապետը, Սահակ կաթողիկոսը և շահի ծառաները: Սահակը գնաց, ծառաներին ասաց, թե՛ «Նաևը հրամայել է ջրօրհնքի տոնը բազմազան ու մեծահանդես անել, դրա համար Մովսես վարդապետը ինձ ասաց, դու գնա էջմիածին և բոլոր թանկագին ու հին անոթները, որ դուք պահել եք թաքստոցում, բերեք այստեղ, որպեսզի տոնը անենք»: Այս ասելով՝ նրանց համաձայնեցրեց, որ իրեն թույլ տան գնա, իսկ նրանք հավատացին նրան ու թողին:

Իսկ Սահակը քանի որ թանկագին ձի ուներ, որը շահը նրան պարգև էր թողել, հեծավ, բռնեց էջմիածնի ճանապարհը, իբրև թե գնալու է էջմիածին անոթները բերելու: Կես ճանապարհին հասնելով՝ փոխեց զգեստները զորականի հագուստների և ձիու սանձը շուռ տալով՝ դիմեց դեպի Նախիջևան քաղաք և նրա սահմանները: Իսկ երբ մտրակեց, օդասլաց, քաջազոր ու բարձրապարանոց ձին ոչ թե գետնի վրայով, այլ երկնքով, ամպերի թևերով շեշտակի առավ բերեց Նախիջևանի գավառի սահմանները: Եկավ Գարաշամբ գյուղի նավակայանը, նավով անցավ Արաքս գետը, գնաց Չորս, որտեղից Խոյ, այնտեղից էլ վան քաղաքը: Եվ այս կերպ Սահակ կաթողիկոսը ճողպրելով փրկվեց ծառաների ձեռքից և գնաց օսմանցիների երկրի բաժնեմասը:

Սրանից հետո, երբ շահի ծառաները իմացան Սահակի փախուստը, եկան Մովսես վարդապետի մոտ, թե դու ես Սահակին էջմիածին ուղարկել անոթների համար: Իսկ Մովսեսն ասաց. «Ես Սահակին ոչ տեսել եմ, ոչ էլ ուղարկել, այլ նա այդ խոսքով ձեզ խաբել ու փախել է»: Իսկ ծառաները թեպետ շատ ձեռքով դես ու դեն ընկան, երբեմն խանի մոտ

գնալով, երբեմն շեյխի, երբեմն դատավորի և երբեմն էլ Մովսէսի վարդապետի, ոչինչ չկարողացան կոտրել Մովսէս վարդապետի վրա, այլ ամեն կողմից վհատված, բոլոր ծառաները վերադարձան, գնացին իրենց տեղերը: Այս էլ այսպես:

Գ Լ Ո Ւ Խ Ի

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱԿԱՌԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԳՈՐԾԵՑ ԸՆԳԴԵՄ ԷՋՄԻԱՄՆԻ ՈՒ ՄՈՎՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Մտհանկ կաթողիկոսի օսմանցի տերութեան երկիրը փախչելուց հետո պարսից թագավոր Շահ-Աբասը մեռավ, որը հարյուր թուման տուգանքը դրել էր կաթողիկոսների վրա: Շահ-Աբասի փոխարեն թագավոր դարձավ նրա թոռ Շահսեֆին:

Իսկ ողջ հայոց ազգը՝ արևելքիցիները և արևմուտքիցիները, մշտապես հեծում էր, երկնում, հոգոց հանում հարյուր թուման տուգանքի համար, որ անտեղի դրվեց աթոռի վրա. անմխիթար սուգ ու անփարատ տրտմութիւն էր պատել բոլորին. միահամուռ տրտմութեամբ համակված տարակուսանքի մեջ էին, և որքան մտածում էին, չէին կարողանում գտնել թե ինչ հնարքով վերցնեն այսպիսի ծանր ու հաստ լուծը աթոռի պարանոցից: Եվ աստծու խնամքով այդ ժամանակ, երբ թագավոր դարձավ Շահսեֆին, գտան: Քանզի նոր թագավոր էր ու հասակով մանուկ, իսկ բոլոր նախարարներն ու իշխանները, որոնք նրա արքունիքում էին, ճանաչում էին քրիստոնյաների երևելի մարդկանց, մանավանդ խոջա Նազարին, որ բոլորից ավելի նախապատիվ էր: Այս խոջա Նազարը Սպահանից գրում է Մովսէս վարդապետին և սուրհանդակի միջոցով հասցնում է նրան, որ այն ժամանակ Սուրբ Էջմիածնում էր, շտապ գալ արքայի պալատ, որպեսզի գուցե միջոց գտնեն վերացնելու հարյուր թուման տուգանքը:

Այդ ժամանակ Մովսէս վարդապետը աճապարեց, հասավ Սպահան և խոջա Նազարի միջնորդութեամբ, շատ դրամ ծախսելով ու մեծ ջանքով հազիվ կարողացավ վերացնել հարյուր թուման տուգանքը, որ իբրև ծանր բեռ ընկավ կաթողիկոսաբանի վրա: Շահսեֆին հրամայեց և թուղթ տվեց, թե հարյուր թուման տուգանքը զիջեցի:

Մրանից հետո քրիստոնյաները [հայերը] Շահսեֆի թագավորից խնդրեցին հրաման Մովսէս վարդապետի կաթողիկոսութեան համար, իսկ շահը հրաման ու թուղթ տվեց Մովսէս վարդապետի կաթողիկոսութեան: Ապա հայոց ողջ ազգը, որ ապրում էր արևելքում ու արևմուտքում, միաբանվեց գրութեամբ ու խոսքով, Մովսէս վարդապետին օծեցին կաթողիկոս և նստեցրին Էջմիածնի Սուրբ աթոռին:

Իսկ շար սատանան Մովսէս վարդապետի կաթողիկոսութիւնը ծանր նստեցրեց Սահակ կաթողիկոսի սրտին, որ իր մտքում համարում էր, թե Մովսէսը առանց իրավունքի ինչոր հնարքով աթոռը և կաթողիկոսութիւնը հանել է նրա ձեռքից՝ իրեն կորզելով ընդունել է երկուսն էլ: Եվ մշտապես նախանձ ունենալով իր սրտում՝ սկսեց քինախնդիր լինել:

Իսկ Մովսէս վարդապետը, որ կաթողիկոս դարձավ, ուներ միաբաններ ու բազմաթիվ աշակերտներ: Սուրբ Էջմիածնի նորոգութեան համար, որ նոր էր սկսել, իր աշակերտներին ուղարկեց նվիրակութեան [միջոցներ հավաքելու], որպեսզի բերեն իբրև օժանդակութիւն Սուրբ աթոռ Էջմիածնի նորոգման: Եվ Փիլիպոս վարդապետը, որ Մովսէսի աշակերտներից մեկն էր, սրա հրամանով նվիրակութեան գնաց Կարին, Իսդեհ, Վան: Մինչ Փիլիպոս վարդապետը Վան քաղաքում էր, այնտեղ գտնվեց նաև Սահակ կաթողիկոսը, որ շրջազայում էր այստեղ-այնտեղ: Եվ դեռ նոր էր դրվել զոթթի հակառակութեան սկիզբը, և Փիլիպոս վարդապետը և Վան քաղաքում եղող երևելի անձեր՝ Խանենց խոջա Ամիրխանը, խոջա Թումեն, խոջա Շիրաքը, խոջա Միրաքը, խոջա Փուլատը, խոջա Սարուխանը և ուրիշ շատերը ասացին Սահակ կաթողիկոսին, որ հակառակութիւնն ու խռովութիւնը թողնի և այլազգիների դոները դեզերելով չցրի քրիստոնյաների միջոցները: Փիլիպոս վարդապետը հարուստների համակամութեամբ միաբան հանձն առան, որ Սուրբ Էջմիածնից տարեկան երեք հարյուր ղուռուշ ամեն տարի անխափան տան Սահակ կաթողիկոսին իր կարիքների համար ծախսելու, որքան որ սա կենդանի է: Եվ Ղուռուբաշի վանքը իր եկամուտներով տվին նրան, որպեսզի այնտեղ խաղաղութեան մեջ նստած մնա: Եվ թեպետ Փիլիպոս վարդապետն ու խոջաները շատ օրեր բազմիցս խո-

սեցին խաղաղությունից, բայց Սահակ կաթողիկոսը շահեց
և հաշիւանքն իր շար դիտավորություններից, մտքերից, այլ
գնաց վեղիրի պալատը իր սրտի խորհուրդը կատարելու:

Մինչ Սահակ կաթողիկոսը շրջում էր օսմանցիների իշխա-
նության տակ գտնվող հայերի մեջ՝ այստեղ-այնտեղ, երկրներ
ու քաղաքներ, վարդապետներից, եպիսկոպոսներից որոշ
մարդիկ գտավ իր խորհուրդներին կամակից, որոնցից մեկն
էր Պողոս անունով ոմն վարդապետ, որ Սսի⁸⁸ կաթողիկո-
սարանից էր՝ Սսի Հովհաննես կաթողիկոսի եղբորորդին: Քեւ
շատերը կային շար խորհուրդին համախոհ, բայց շար գործը
կատարողները սրանք երկուսն էին՝ Սահակ կաթողիկոսն ու
Պողոս վարդապետը:

Եվ Պողոս վարդապետը գնաց մեծ քաղաք Կոստանդնու-
պոլիս Զաքարիա վարդապետի մոտ, որ Վասպուրական երկ-
րից էր և այդ ժամանակ Կոստանդնուպոլսում ապրող հայ
ժողովրդի առաջնորդն էր, որ պատրիարքության անունով,
թագավորական հրամանագրով ու հրամանով Կոստանդնու-
պոլսում նստած էր իբրև առաջնորդ: Սա Մովսես կաթողիկո-
սին խիստ հակառակ էր, իսկ Սահակ կաթողիկոսին ձեռք
մեկնող ու օգնական: Այս պատճառով խնդրագիր գրեց և
ներկայացրեց սուլթան Մուրադին, որ այդ օրերում Կոստանդ-
նուպոլսում էր. «Մեր՝ հայ քրիստոնյաներիս խնդրանքը թա-
գավորից այն՝ է, որ Սահակ կաթողիկոսին շնորհի կաթողի-
կոսության հրաման, որպեսզի մեր օրենքով հովվի այն քրիս-
տոնյաներին, որ ազգով հայ են և որ գտնվում են օսմանցի-
ների ինքնակալ թագավորութայանդ իշխանութայան ներքո»: Եվ
թագավորը հրաման ու թուղթ տվեց Սահակի կաթողիկոսու-
թյան, ինչպես որ խնդրեց Զաքարիա վարդապետը: Իշխանու-
թյան այս թուղթը Զաքարիա վարդապետը հանձնեց Պողոս
վարդապետին և ուղարկեց Սահակ կաթողիկոսի մոտ և պատ-
վիրեց՝ շնորհակալ և հաշիւանքն շար դիտավորություններից,
այլ ջանալ և աշխատել մինչև վերջ: Եվ այն ժամանակ, երբ
Զաքարիա վարդապետը այս թուղթը պոկեց թագավորից, այն-
տեղ թագավորի մոտ չէր թագավորի մեծ վեղիր խոսքով փա-
ջան՝ մի շատ խելք և խրոխտ իշխան: Վեղիրը բնավ տեղյակ
չէր այս գործից: Ինչպես ամենքին հայտնի է, օսմանցիները
կարգ ու դրվածք ունեն, որ ազգերի, ցեղերի, իշխանների,

պետերի, կողմնապետերի, կուսակալների բոլոր գործերը վե-
ղիրն է հոգում, տալիս է և առնում, որի համար էլ նշանակ-
ված է: Բայց սրանք զանց արին վեղիրին և, թագավորի մոտ
գնալով, կաթողիկոսության հրամանը ձեռք բերին: Այդ թղթ-
թով Սահակ կաթողիկոսն ու Պողոս վարդապետը գնացին
Տիրքանակերտ քաղաքը, որ Ամիդն է, մեծ վեղիր խոսքով
փաշայի մոտ, որպեսզի նրանից էլ կաթողիկոսության հրա-
ման ու թուղթ առնեն:

Իսկ Ամիդ քաղաքում բնակվող հայազգի բարեմիտ քրիս-
տոնյաները, որոնցից էին խոշա Երեմիան, խոշա Մախսուզը,
վանեցի խոշա Ռոհիջանը, որ այս վեղիրի մուշտակագործների
պետը, հավատարիմն ու նրա առջևի հավատարիմ ու հաճե-
լի սպասավորն էր, նաև Բարսեղ վարդապետը, որ նույն քա-
ղաքի առաջնորդն էր և Սուրբ էջմիածնի և Մովսես կաթողի-
կոսի բարեկամը, քանզի սա էլ Սրապիոն կաթողիկոսի աշա-
կերտներից էր, որի մասին հիշատակեցինք Սրապիոնի մասին
գլխում, և այլ շատ հարուստներ ու վարդապետներ հավաք-
վեցին Ամիդ քաղաքում Սուրբ էջմիածնի կողմից և ջանացին
խափանել Սահակ կաթողիկոսի շար դիտավորությունը:

Որովհետև Սահակ կաթողիկոսը և իր բոլոր համախոհնե-
րը իրենց մեջ սահմանել էին, թե Սահակ կաթողիկոսը վեղի-
րից առնի կաթողիկոսական իշխանությունը, գնա Մշո Սուրբ
Կարապետ իր աթոռը հաստատելով այնտեղ նստի և այնտեղ
օրհնի մեռոն և այնտեղից ուղարկելով բաժանի այն հայերի
մեջ, որոնք գտնվում են օսմանցիների իշխանության ներքո,
և Սուրբ էջմիածնի վաղեմի սահմանված թեմն ու վիճակը
շորթի իրեն, թագավորական իշխանության բռնի ուժի միջո-
ցով գցի իր իշխանության տակ, խափանի Սուրբ աթոռ էջ-
միածնի նվիրակությունն ու իշխանությունը:

Իսկ բոլոր քրիստոնյաները՝ եկեղեցականներ, թե աշխար-
հականներ, շատ օրեր գնում էին Սահակ կաթողիկոսի մոտ,
ազալում էին ու խնդում, թե հայոց տառապալ ազգը մի
զցիր այլազգի բռնավորների և մարդադեմ գազանների բերա-
նը: Սահակ կաթողիկոսին խոստացան, թե քաղաքներից կամ
վանքերից, որն էլ կամենա, իրեն լինի թեմերով ու վիճակ-
ներով, քանի կենդանի է ինքը. և էջմիածնի նվիրակ չի մտնի
այնտեղ, այլ և սրա հետ միշտ և ամեն տարի էջմիածնում

նստող տարեկան հինգ հարյուր դոտուշ տա Սահակ կաթողիկոսին իր օրվա ծախսերի համար: Արդ՝ այսպես և այս օրինակով բազում ու շատ անգամ ջանք թափեցին և Սահակ կաթողիկոսին ու Պողոս վարդապետին հորդորեցին խաղաղության, բայց նրանք չհամաձայնվեցին:

Եվ Մովսես կաթողիկոսը, որ էջմիածնում էր, և Փիլիպոս վարդապետը, որ տակավին Վանում էր, սրանք էլ յուրաքանչյուրը իր տեղից հորդորական թուղթ գրեց Սահակ կաթողիկոսին ու երևելի մարդկանց միջոցով ուղարկեցին, որ դադարեցնի խռովիչ գործը: Նաև նամակ գրեցին նրանց բարեկամներին, որպեսզի սրանք համոզեն Սահակին՝ գա խաղաղության, իրենք կհատարեն նրա կամքը, ինչ որ պահանջի:

Իսկ Սահակ կաթողիկոսը և Պողոս վարդապետը բնավ չանսացին, այլ իրենց կողմից խնդրագիր գրեցին և Յաղոբ փառայի միջնորդությամբ հասցրին վեղիբի ձեռքը, իսկ խընդրագրի բովանդակությունը հետևյալն էր. «Էջայտնի լինի մեծ ու անպարտելի տերության հղորիդ, խնդրում ենք, որպեսզի շնորհես մեզ հայոց ազգի կաթողիկոսական իշխանությունը: Եթե այս բանը հաճո լինի վեհիդ, և մեզ արժանացնես այս սպասավորության, մենք արքունի գանձարանին տարեցտարի յուրաքանչյուր տարում կտանք տասը հազար դոտուշ, որ տարի առ տարի կտանք»: Նաև՝ այս գործի համար թագավորից նույնպես հրամանագիր խնդրեցինք և նա պարզեց, որն ահավասիկ ունենք մեզ մոտ: Եվ արդ քո մեծությունից ևս խնդրում ենք, որպեսզի մեր գործը քո հովանավորությամբ հաստատուն լինի»: Այս խնդրագիրը Յաղոբ փառան ներկայացրեց վեղիբին, վեղիբը կարգաց, մտքով համաձայնվեց, բայց խոսքով ոչինչ չասաց:

Մի այլ օր այն մարդիկ, որ էջմիածնի կողմից էին, նույնպես խնդրագիր գրեցին և մի պատշաճ ժամի ներկայացրին վեղիբին. խնդրագրի բովանդակությունը հետևյալն էր. «Խնդրում ենք հղորիդ աշխարհաշեն ու խաղաղասեր տերությունից, որպեսզի մեր աղքատ ու տառապյալ ժողովուրդը չմատնես զրանց ձեռքը, որովհետև զրանք իրենց փառամտությունյան ու ազահույթյան համար խեղճ հպատակների կենթարկեն ծանր հարկի, որ ժողովրդի համար ծանր տուգանք է, իսկ գործողների համար՝ մեղք»: Այս խնդրագրի բնթերցու-

մից հետո խնդրագիրը ներկայացնող մարդկանց պատասխանել է. «Անխելք հայեր, ինչպես նրանց շտամ կաթողիկոսությունը, քանի որ նրանք տարեկան տասը հազար դոտուշ են ավելացնում թագավորի գանձարանին»: Իսկ խոջա Ռուհիջանը, որ իր հավատարմության շնորհիվ համարձակություն ուներ վեղիբի առջև, վեղիբին ասաց. «Փառավոր տեր իմ, ևթե հայոց խեղճ ու տառապյալ ժողովուրդը զրամի համար վաճառում ես նրանց, ինձ վաճառիր, իսկ ես ոչ թե տասը հազար դոտուշ, այլ քսան հազար դոտուշ կտամ»:

Եվ ամենաթագավոր աստված, որ ըստ Սողոմոնի ձեռքում է պահում բոլոր թագավորների ու իշխանների սրտերը, Ռուհիջանի խոսքի վրա բացեց վեղիբի մտքի տեսողությունը. նա կրկին հարցում արեց, իսկ խոջա Ռուհիջանը ամեն ինչ, որ պատշաճ էր հաղորդելու, այնտեղ ասաց վեղիբի սիրտը քննեցելու համար, այն ևս հիշեցրեց նրան, թե օսմանական ազգի բոլոր պետերը և իշխանները, կողմնակալներն ու կուսակալները խոնարհվում են քո իշխանության առաջ, քեզ մոտ են գալիս պատիվ ու իշխանություն խնդրելու և առնելու, իսկ սրանք քեզ զանց անելով գնացել են թագավորի մոտ կաթողիկոսական իշխանություն ևս ստացել: Ամբողջ խոսակցությունը ավարտվելուց հետո, խոջաները վեղիբի կողմից արձակվեցին և հեռացան:

Եվ այն օրը, երբ վեղիբը բազմախումբ հանդեսով ատյան նստեց դատ անելու, Յաղոբ փառան, որ Սահակ կաթողիկոսի գործի միջնորդն ու կարգավորողն էր, Սահակ կաթողիկոսին ու Պողոս վարդապետին հանդես բերեց և ներկայացրեց վեղիբին:

Նույն հանդեսին եկան նաև այն մարդիկ, որ էջմիածնի կողմից էին. զրանք շատ էին, որոնց պիտավորներն էին խոջա Երևմիան, խոջա Մախսուղը, խոջա Ռուհիջանը և Բարսեղ վարդապետը: Վեղիբը սկսեց խոսել՝ դիմելով Սահակ կաթողիկոսին ու Պողոս վարդապետին, ասաց. «Ի՞նչ է ձեր ցանկությունը, ով մարդիկ, որ դեգերում եք իշխանության դռները»: Սահակը պատասխանեց. «Այն, ինչ խնդրագրով ներկայացրինք մեր տերոջը»: Վեղիբը հրամայեց խնդրագիրը կարդալ, որի մեջ գրված էր, թե՛ «Թագավորից կաթողիկոսության

հրաման ստացանք և այժմ քեզնից էլ ենք խնդրում: Վեղիրը Սահակին հարցրեց, թե «Երո՞ք թագավորից կաթողիկոսության թուղթ եք ստացել»: Նա ասաց. «Այո, մոտեցանք թագավորին և հրամանն ստացանք»: Վեղիրն ասաց. «Երուք ո՞ր օրը հայտնեցիք ձեր որպիսությունը, իսկ մենք անտես արինք ու չկատարեցինք ձեր խնդրանքը, որ մեզ զանց արիք, գնացիք թագավորի մոտ նրա գլուխը տանելու»: Նույն ժամին վեղիրը հրամայեց իր մոտ գտնվող սպասավորներին ու դահլճներին՝ Սահակ կաթողիկոսին ու Պողոս վարդապետին դնել զեղարան և բրածեծել. այնքան ծեծել, մինչև կամ իրենց հավատից գառնան մահմեզի անօրեն կրոնին, կամ փայտի տակ մեռնեն: Իսկ վեղիրի սպասավորները անմիջապես հրամանը կատարեցին: Սահակ կաթողիկոսին ու Պողոս վարդապետին դրին զեղարան և երկու կողմից կանգնած մարդիկ հաստ բրհրով սկսեցին անողորմ ծեծել: Միշտ ծեծում ու միշտ ասում էին. «Այժմ դարձեք ձեր մզլար հավատից և ընդունեցեք մեր ճշմարիտ հավատը, կաղատվեք տանջանքներից ու դառը մահվանից, իսկ թե ոչ, չենք դադարի ծեծելուց մինչև ձեր մահը»:

Եվ երբ Սահակ կաթողիկոսն ու Պողոս վարդապետը մատնեղվեցին ծեծի հարվածներին, իսկ զինվորները անխղճորեն և ուժգին ծեծում էին, որ գուցե տանջանքների ցավից դառնան իրենց հավատից, այդ ժամանակ խոշա Երևմտյան և իր ընկերները [մտածեցին] որ մի գուցե չկարողանան զիմանալ տանջանքներին, դառնան հավատից և դա դառնա նրանց համար խղճի տանջանք և հայոց ազգին մեծ ամոթ ու նախատինք, անմիջապես նույն խոշաները այտեղ-այնտեղ գնացին վեղիրի վերադաս իշխանների մոտ և խոստացան նրանց շատ փող, որպեսզի բարեխոսեն վեղիրի առջև Սահակ կաթողիկոսի և Պողոս վարդապետի փրկության համար: Իշխանները ըստ պատշաճի բարեխոսեցին վեղիրի առջև, որով իջավ վեղիրի բարկությունը, և հրամայեց արձակել տանջանքներից և դիվանի գոնից հեռացնել: Զինվորները արձակելուց հետո ծեծելով ու թակելով նրանց գլուխները՝ հանդեսից արտաքսեցին:

Երբ այսպես վերջացավ Սահակ կաթողիկոսի և Պետրոս վարդապետի գործը, նրանց վրա իջավ ամոթ ու պատկառանք, գլուխները կախ գցեցին, այլևս չէին կարողանում նայել քրիս-

տոնյաների երեսներին, ամոթից չէին համարձակվում շրջել մարդկանց մեջ:

Ապա Պողոս վարդապետը դնաց մեծ քաղաք Կոստանդնուպոլիս, այնտեղից Ուոռմեզի՞* և այնտեղից՝ Լեհաստան: Որոշ ժամանակ [այնտեղ] մնալով վախճանվեց ու այնտեղ թաղվեց: Նույնպես էլ Սահակ կաթողիկոսը. քիչ-քիչ գնալով հասավ Կարինի գավառը, այնտեղից դնաց Վրաստան, այնտեղից Արարատյան գավառը և Սուրբ էջմիածին. մնաց այնտեղ՝ էջմիածնի Սուրբ աթոռում:

Մարդկային ցավակիր բնույթի համաձայն Սահակ կաթողիկոսի ոտքերին ցավ պատահեց. օրավուր ցավը ավելացավ, որի պատճառով նրա երկու ոտքերն էլ ուռան. օրավուր ուռուցքը ավելացավ, հասավ մինչև փորը և շատ օրեր այդպես մնաց: Հիվանդությունը խիստ ցավեցնում էր նրան ու շատ տանջում:

Իսկ ցավի նեղությունից մի օր Սահակ կաթողիկոսը խընդրեց իրեն վերցնել, տանել էջմիածնի սուրբ տաճարը, և ընկնելով Քրիստոսի իշման տեղի վրա, որտեղ Քրիստոսը իջել է, և շատ հառաչանքներով փղձկացող սրտով, հորդարուխ արցունքներով և ցավազին մարմնով դեմքը գետնին փարելով երկար ժամեր դառնապես լաց եղավ, իսկ արտասուքների հետ պաղատագին խոսքերով ասաց. «Ով տեր իմ և աստված Հիսուս Քրիստոս, ըո դատապարտված ծառան եմ և մեղավոր եմ հոգով ու մարմնով: Եթե քեզ հաճելի է, որ ես կենդանի մընամ, շուտափույթ փրկիր ինձ այս ցավերից և ինձ առողջություն տուր: Իսկ եթե քեզ հաճելի է, որ ես մեռնեմ, շուտափույթ ինձ մահ տուր, որպեսզի հանգստանամ ցավերիս տանջանքներից»: Եվ այնտեղ միևնույն տեղում, եկեղեցու մեջ կանչել է իր մոտ մի ծեր եպիսկոպոս և խոստովանել իր մեղքերի բոլոր հանցանքները և հավատով ու հույսով հաղորդվել աստվածորդու պատվական մարմնից ու արյունից: Ապա վերջին տարան այն տունը, որտեղ մնում էր հիվանդ: Այդ նույն գիշեր մահ է հասնում նրան, ավանդում է հոգին, ավարտում իր կյանքը և հանգստանում ցավի տառապանքներից ըստ իր

* Այդպես էր կոչվում Քուրթիայի եվրոպական մասը:

խնդրանքի նրա վրա կատարելով թաղման կարգը՝ տարան
թաղեցին սուրբ շիրիմների մոտ:

Արդ՝ Սահակ կաթողիկոսի և Պողոս վարդապետի վերջը
այսպես եղավ, որոնց տեր Քրիստոսը ողորմելով թող ների
իբր անսահման մարդասիրութեամբ. ամեն:

Գ Լ Ա Ի Ե Ի Ս

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵԿՈՐԾ ՄԱՐԿՈՍԻՆՅ՝ ՍԱՐԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՎ ՏԵՐ ԿԻՐԱԿՈՍԻ, ՈՐՈՆՔ ԵՂԱՆ ԱՆԱՊԱՏ-
ՆԵՐ ԵՆԵՆԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՍԿԶԲԵՆՎՈՐՈՂՆԵՐ ԳՐԱՆՈՎ
Է՛Լ ՊԱՏՃԱՌ ԳԱՐՄԱՆ ՎԱՆՔԵՐԻ, ԵԿԵՂԵՑՈՒՆԵՐԻ ԲԱՐԵ-
ԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՐԱՆՅ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԲԱՐՈՐՈՒԹՅԱՆ

Այս Սարգիս եպիսկոպոսը Արարատյան երկրից էր, Ամ-
բերդի⁸⁹ դավառից, որ Արագածոտն է, այն գյուղից, որ կոչ-
վում է Հարենի մերձ Կարբի⁹⁰ գյուղին, իսկ այժմ այժերակ է
ու անմարդաբնակ, բայց մեր հայրերի ժամանակ այս Հա-
րենի գյուղը շեն էր, որտեղից էր հիշյալ Սարգիս եպիսկոպո-
սը: Սա նկավ բնակիւնց Սաղմոսավանքի⁹¹ մեծափառ միա-
բանութեան մեջ, ելավ սպասավոր բաղմածողով օրրութեան-
ներին, որ կան այնտեղ և որոշ տարիներ անց դարձավ նույն
վանքի առաջնորդ:

Բայց այս վանքին մոտիկ կար մի փոքրիկ գյուղ, որտեղից
մի քրիստոնյա [հայ] մարդ որսորդ լինելով օրեր շարունակ
շրջում էր լեռները՝ որսալու վայրի երևներ: Այնպես եղավ, որ
այս մարդը օրերից մի օր որսի համար գնաց Արագած մեծ լե-
ռը: Լեռան գագաթին շրջելիս հանդիպեց ոմն ճղնավորի, որ
քարերի խոտըում նստած էր ծնկած՝ գլխին ունենալով վե-
ղար, վրան՝ փիղոն: Մոտ եկավ, որ ստույգ տեսնի, թե ինչ է
այն. տեսավ, որ իրոք մարդ էր. մեռած էր և այդպես նստած,
բայց մարմինն անապական: Այս տեսիլքից սույն որսորդ
մարդու սիրտը երկյուղ ու սոսկում ընկավ: Այլևս չկարողա-
ցավ մնալ այդ տեղում, այլ դառնալով եկավ իր տունը: Գա-
լով Սաղմոսավանք՝ ամենքին պատմեց ճղնավորի հանգումի
մասին, որ հանդիպեց նրան լեռան կատարին: Երբ Սարգիս
եպիսկոպոսը լսեց, ստուգելով վերահասու էղավ. թե որտեղ է:

Մի օր Սարգիս եպիսկոպոսը իրեն հանձնելով աստուծու,
հուսալով աստուծու առաջնորդութեան վրա, ելավ գնաց Արա-
գած լեռը և այստեղ-այնտեղ երեք օր շրջելով գտավ վախ-
ճանված ճղնավորին և մեծ փափագով ու ջերմեռանդ սիրով
համբուրում էր նրա ձեռքերն ու ոտքերը: Շատ արտասուք թա-
փելուց հետո նրան ամփոփելով թաղեց նույն հագուստով,
վերագարձավ, եկավ վանքը:

Սարգիս եպիսկոպոսի զղումի և աշխարհից հրաժարվե-
լու պատճառը սա եղավ. նրա սրտի ցանկութեանն հերին տաղտ-
կալի թվաց այս աշխարհի ստապատիր, դատարկ, խենեշ ա-
խարուսիկ վայելչութունը: Այն օրից և հետագայում Սար-
գիս եպիսկոպոսը ձգտում էր հեռանալ աշխարհից և հետևել
առաքինական վարքի լուսաշավիղ երկնադնաց ճանապարհին:
Բայց այն ժամանակ անապատ կամ կրոնական վարքի կար-
գերը իմացող չկար, վրա եկող բաղմաթիվ ավազակների, թըշ-
նամիների և հայոց աշխարհի վերիվայրումների, ավերանքե-
րի պատճառով: Ամենեկն բնաջնջվել էին և վերացել առաքինի
գործերի և բարի կարգերի նշույն ու նշմարանքը հայոց աշ-
խարհից: Եվ մինչդեռ Սարգիս եպիսկոպոսը այս վարանումի
մեջ էր, մտադրվեց գնալ սուրբ քաղաք Նրուսաղեմ երկրպա-
պութեան մեր Քրիստոս աստուծու մարդեղութեան. և ելավ, գնաց
Նրուսաղեմ:

Սույն ժամանակ գտնվեց ևս մի մարդ տեր Կիրակոս անու-
նով, որ կամբով ու հոժարութեամբ նման էր Սարգիս եպիս-
կոպոսին: Այս տեր Կիրակոսը Տրապիզոն քաղաքից էր՝ Սա
մտավ աշխարհիկ կարգ, բայց չվայելեց, որովհետև քիչ օրեր
անց վախճանվեց նրա կինը. իսկ ինքը մնաց որպես ողջախոս՝
տատրակ և միշտ մտածում էր աստուծու պատվիրանների մա-
սին և անձանձիր կարդում էր աստվածային գրքերը [Աստ-
վածաշունչը], մտքում պահում նրանց պատգամները և ջան-
քով ու աշխատանքով իրեն վարժում էր ըստ Աստվածաշնչի
պատգամների ապրել:

Այս նույն ժամանակ նման մտքերով տարված տեր Կիրա-
կոսը ոմանցից լսեց Սարգիս եպիսկոպոսի մասին, թե նա ևս
զղջացել է աշխարհիկ կյանքի համար, կամենում է հրաժար-
վել և հետևել առաքինի կյանքի: Սրա համար տեր Կիրակոսը

ելավ Տրապիզոնից, եկավ Արարատյան երկիրը՝ Սաղմոսա-
վանք, Սարգիս եպիսկոպոսին ընկերակցելու, բայց նրան տես-
նել չկարողացավ, որովհետև գնացել էր Երուսաղեմ: Այս
պատճառով սա ևս մտադրվեց գնալ Երուսաղեմ: Սաղմոսա-
վանքից դառնալով եկավ Տրապիզոն, վաճառեց իր ողջ ունեց-
վածքը, որոշ մաս տվեց աղքատներին, տունն ու հողերը հանձ-
նեց Տրապիզոնի եկեղեցուն, մի մասը վերցրեց իր հետ իբրև
ճանապարհի ծախս և ելավ գնաց Երուսաղեմ: Եվ սրանք եր-
կուան էլ՝ Սարգիս եպիսկոպոսն ու տեր Կիրակոսը հանդիպե-
ցին միմյանց: Մի քանի օր միասին ապրելուց հետո,
իրար գտան միևնույն դիտավորությունը, միևնույն ցանկու-
թյամբ, միևնույն ցավով հիվանդացած: Եվ այդ օրից միա-
կամ, միաբան, միախորհուրդ լինելով [որոշեցին], հետագա-
յում ևս միասին ապրել:

Բայց որոնում էին խաղաղ, պատշաճավոր անապատի տեղ՝
հեռու աշխարհային պղտորումներից: Եվ լսելով իմացող մարդ-
կանցից, թե այդպիսի տեղեր շատ կան Հայաստանի արևել-
յան մասում, մանավանդ Սյունյաց երկրում. հին ժամանակ-
ներից աչապատ է եղել այդ երկրում, որի տեղերը այժմ էլ
երևում են: Եվ երբ ստուգեցին ասվածը, Երուսաղեմից ելան
հոմարությունը դիմեցին ու եկան արևելյան աշխարհը՝ Սյու-
նյաց երկիրը և հասան Ստաթե⁹² առաքյալի մեծափառ ուխ-
տը, որ այժմ կոչվում է Տաթևի վանք: Կարճ ժամանակ այնտեղ
մնալով, գնացին այնտեղ, որ անվանվում էր Զորո վանք՝
ասվում է նաև Ցրվանց⁹³: Կարճ ժամանակ անց այդտեղից
գնացին այն տեղը, որ անվանվում է Թանահատի վանք⁹⁴:
Այնտեղից ևս դուրս գալով՝ որոնում էին առավել խաղաղ, ան-
պղտորիչ և ապահով վայր, մինչև որ գտան տեղը, որտեղ
այժմ շինված կա մեծ անապատը: Այնտեղ շինեցին եկեղեցի,
անապատին ու մենակյացին պատշաճ խավար ու մթին փոք-
րիկ խցեր, ինչպես ցույց են տալիս «Շարանց վարրի»⁹⁵ և այլ
ճգնավորների զբերքը, խավար ու մթին ավելի փոքր խցեր
և սկսեցին տեղավորվել այնտեղ:

Իսկ տերերի տերը և աստծո անտված, որ միշտ բարին է
կամենում, առաջ էր տանում, հաջողում և ուղղում էր նրանց
գործերը, ինքը թիկունք ու օգնական էր լինում, որովհետև
նրանց բարի համբավը լսելով՝ շատերը եկան և միացան նը-

բանց, եզան նրանց միաբան և տեղի բնակիչներ, ոչ միայն
աշխարհական և աննշան մարդիկ, այլև եկեղեցականներ ու
անվանի մարդիկ, վարդապետներ, եպիսկոպոսներ և քահա-
նաներ: Դրանցից էին Պողոս վարդապետ Մոկացին և Մովսես
վարդապետ Սյունեցին, որ հետո եղավ կաթողիկոս. այս եր-
կուսի պատմությունները և (գործերը) արդյունքները մի այլ
գլխում երկար պատմելու ենք: Նաև Ներսես վարդապետ Մո-
կացին, որ հետո գնաց Լիմ⁹⁶ կղզին և այնտեղ անապատ շի-
նեց, նաև Տաթևի եպիսկոպոսը, որ հետո եղավ վարդապետ
գնաց Շամախու գավառ այդ կողմերի ժողովրդին հովվելու
և առաջնորդելու: Եվ Կարապետ եպիսկոպոս էջմիածնեցին,
որ հետո գնաց Սեան կղզին, այնտեղ անապատ շինեց, որ
մինչև այսօր հաստատուն գոյություն ունի. նաև շամբեցի⁹⁷
Արիստակես վարդապետը, որ հետո եղավ առաջնորդ նույն
մեծ անապատի ու այնտեղ մնաց մինչև իր կյանքի վերջը,
այնտեղ էլ թաղվեց: Մյուս տեր Արիստակեսը, որ Բարկաշատ⁹⁸
գավառից էր, հետո գնաց Տանձափարախ⁹⁸ անվանված վայ-
րը, այստեղ շինեց անապատ և մնաց մինչև իր կյանքի վերջը
ու այնտեղ թաղվեց. անապատը կա հաստատուն մինչև այս-
օր: Դավիթ եպիսկոպոսը, որ Շամբորի⁹⁹ ձորից էր՝ իշխանա-
կան տոհմից, որին Ղարամանենց են կոչում. սա ևս եկավ
մնաց այս մեծ անապատում, ապա ելավ գնաց
Շամբորի ձորը և այնտեղ շինեց անապատ, որ կոչում են Զա-
րեբազետի անապատ, որ բազմահավաք միաբանների բնա-
կություն է և շատ հաստատուն անապատի մասն կարգերով
ու զրվածքով մինչև այսօր. ինքը Դավիթ եպիսկոպոսը այնտեղ
վախճանվեց ու այնտեղ թաղվեց: Նաև ուրիշ բազում շատե-
րը, որոնք այնտեղ մնացին և հանգյան ի տեր: Իսկ ովքեր այլ
տեղեր գնացին, շինեցին անապատներ ու վանքեր:

Քանզի իբրև մայր Սիոն, որի մասին Ստալի մարգարեն
ասում էր, թե՝ «օբրևնքները Սիոնից»¹⁰⁰ են դուրս գալիս, իսկ տի-
րոջ խոսքը՝ «Երուսաղեմից», սրանք երկուսն էլ եղան այս անա-
պատի սկզբնավորողները, իսկ այս անապատը եղավ բոլոր
անապատների մայր ու ծնող և հայ ազգիս լուսավորության
առիթ:

Որովհետև, ինչպես ասացի, Մոկացի Ներսես վարդապե-
տը այստեղ վարժվելով սովորեց կրոնավորական վարքը և

Ելլավ զնաց Վասպուրականի գավառը ու մտավ Լիմ կղզին ծովի մեջ, և այնտեղ նրա մոտ հավաքվեցին եղբայրների [միաբանների] բազմություններ, և եղավ հաստատուն անապատ մենակության վարքի բոլոր կարգերով ու օրենքներով: Իսկ ինքը ներսես վարդապետը այնտեղ մնաց կրոնավորի ժուկալություններ, կառարեց իր կյանքի ընթացքը առաքինի վարքով, այնտեղ վախճանվեց ու այնտեղ թաղվեց: Իսկ նրա վախճանը եղավ մեր թվականի 1076 (1627) տարին:

Սրանից հետո տեղի առաջնորդությունը ստանձնեց նույնի ընկեր Ստեփանոս վարդապետը: Նաև այս ժամանակ անցին Լիմ անապատի մեարանները: Դրա համար ոմանք Լիմից ելնելով զնացին այնտեղ, որ Կտուց¹⁰¹ է կոչվում. սա էս կղզի է միևնույն ծովում [Վանա], այնտեղ էլ շինեցին անապատ ու եղբայրանոց [միաբանություն], որ այժմ կա հաստատուն ամենայն կրոնավորական կարգերով:

Այստեղ-այնտեղ շինված կան նաև այլ մանր անապատներ, բայց մենք հիշատակեցինք նշանավորները, որ այս մեծ անապատից սովորած ու վարժված զնացին այլ տեղեր ևս հաստատեցին (անապատներ): Սրանց ամենքի սկիզբն ու պատճառը վերահիշյալ երկու մարդիկ էին՝ Սարգիս եպիսկոպոսը և տեղի Կիրակոսը: Քանզի միանգամից ամբողջ սրտով մի կողմ լքեցին աշխարհը և մնաս բարով ասացին սրա (աշխարհի) բոլոր կենցաղային հոգսերին և իրենց դարձրին աշխարհի խաշյալներ, իսկ աշխարհը՝ իրենց խաշյալ ըստ առարչալի խրատի: «Սրանով ինձ համար աշխարհը խաշ է ելել, և ես՝ աշխարհի»*: Որովհետև դիշեր-ցերեկ իրենց հոգիների սենյակի ընդունարանում էին կրում Քրիստոսին, որ ոչ միայն ազոթքի մասին և եկեղեցում, այլև խցի մեջ երկար ժամանակ արգելում էին իրենց՝ պարապելով աղոթքներով, աստծու խոսակցություններով և Սուրբ գրքի ընթերցումով՝ անելով ազոթքը կերակուր, իսկ արտասուքը ըմպելիք:

Եվ սուրբ հոգին, որ աստծու խորքերի քննիչն* է և վերակացուն գրքերի իմաստների, նրանց մաքուր մտքերի առջև բացում էր գիտություն գոները և խելամուտ էր դարձնում

* Տես Գաղ. 2 14:

** Տես Ա Կորնթ. Բ 10:

նրանց գրքերի շավիղներին. քրքերով լուսավորվեցին նրանք և լուսավորեցին մերձակայքը, նաև մեր հայոց ազգը: Քանզի մինչև այս պահը տգիտությունը խոպանացել ու կորացել էր մեր հայոց ազգը. ոչ միայն չէին կարդում, այլև գրքեր չէին ճանաչում և չգիտեին գրքերի ուժն ու զորությունը, որովհետև մարդկանց աչքում գիրքը անպիտանացած էր և իբրև փայտի կոճղեր ընկած էր որևէ անկյուն պատված հողով ու մոխրով: Եվ երբ սրանք մտան առաքինի գործերի ծառայության լծի տակ, սիրով կարդում էին գրքերը և ինքնակամ կրթում էին իրենց մտքերով, գործերով, կատարում էին խոսքով ընթերցվածը, որովհետև աներկբայալի մտքով հավատում էին գրքերի խոսքերին, թե աստծու պատգամներն են՝ Եվ սրբանք երկուսն էլ վերահիշյալ մարդկանցով, որոնց անունները՝ վարդապետների ու եպիսկոպոսների, հիշատակեցինք, ըսկըսեցին ընթերցումից գրքերը ուսուցանելուց, վերստին նորոգել ու հարդարել անապատների, վանքերի ու ժամատեղերի [որ ժամին ինչ ասմունք կատարել] բոլոր բարի կարգերը սուրբ հոգու օգնությամբ և օժանդակությամբ, որ վերակացու է գրքերի խոր իմաստների, բանում, հայտնում, ծանոթացնում էր նրանց մտքի տեսողության առջև իմաստությունը, ուղիղ կարգերը, որին ձգտում էին:

Դրանով սահմանեցին, թե անապատականները պարտավոր են միայն մնալ և համբերել խցում և միտքն ու խորհուրդը հոգեկան ու մարմնական ամեն անմաքուր մտածումներից սուրբ պահել. թողնել իր կամքը և հնազանդ ու կատարող լինել առաջնորդի կամքին. ոչ որի սեփական ունեցվածք չպետք է լինի, ամեն ինչ ընդհանուր պիտի լինի, իսկ առաջնորդը պետք է հոգա բոլոր եղբայրների կարիքները և բաշխի, ում որ պետք լինի. խցում ոչինչ չպետք է ունենալ և կամ ուտել, տարին միշտ պատվ պետք է անցկացնել, բացի շաբաթ և կիրակի օրերից և տերունական տոն օրերից: Իսպառ պետք է հրաժարվել զինուց ու մսից և ամեն օր առավոտ և երեկո անխափան խոստովանել օրվա անցածներն ու մտածումները: Ամեն շաբաթ ու կիրակի և տերունական օրեր գիշերը մինչև առավոտ պաշտամունքով անցկացնել, իսկ սույն օրերը ան-

* Տես Գաղ. 2 14, Տես Ա Կորնթ. Բ 10:

խափան պատարագ մատուցել: Ընդհանրապես բոլորը՝ մեծ
թիվի դերը [պարտավոր են] միասին գալ մարմնավոր գործերի
կանչին, մարմնավոր սեղանին և աղոթատեղին, յուրաքանչյուրին
առանձին դեռևս մարմնավոր կերակուրը մեծից փոքր
միաշափ, այդպես միաշափ Պրզերի բաժանումը:

Նաև գրքերից գտան զգեստների որպիսությունն ու ձևը՝
քուսիթան, որ գլխի կնդուզն է, քառակուսին*, սքեմը, քուր-
ձը, որ մազից է՝ զգեստների տակ մերկ մարմնի վրա. առհա-
սարակ բոլորի զգեստները ամբողջովին բրդից պետք է լինեն
և ոչ բամբակեղեն. բրդից շապիկը պետք է արվի երկար
պեհղավոր մինչև ոտքերը, իսկ չոտին կաշվից: Սահմանեցին,
որ յուրաքանչյուր ոք իր զգեստներով պետք է շքի. և թե՛
մենակյաց է քուսիթայով և քառակուսով, եթե քահանա է՝
փիլոնով, եթե արքայ է՝ փիլոնով ու վեղարով: Այս կրոնա-
կան զգեստը ամենեին անհետացել էր, իսկ այժմ սրանք գը-
տան: Իսկ վեղարն ու փիլոնը թեև կային, այլ միայն աղոթ-
քի ժամին էին հագնում. ազատ ժամին դեն էին դնում և շք-
չում էին իրրև աշխարհականներ:

Նաև ժամատեղների [որ ժամին ինչ ասմունք կատարել]
կարգը սահմանեցին. զիշերվա առաջին ժամին պաշտամունքով
կատարել կիրակնօրյա [ասմունքը] «չիշեսցուք այլովքն»-ի
եղանակով, երկու կանոն սաղմոս, վերջում կանոնապետի¹⁰²
ձայնով, հանգստյան շաբափան, ավետարան, պաշտամունք
նշեցյալների համար և օրհնություն ըստ օրվա [սորհրդի
[նշանակության] և սրանց վրա քաղվածքների շաբափաննե-
րից, ձայնով թագաւորք [այն երգերը, որ «Ժամագրքում»
սկսվում են՝ «Թագաւորք յափտեան»] և ալիւու: Սրանցից
հետո կարդալ Յայսմավուրը¹⁰³, սրա վրա՝ շաբափան¹⁰⁴ ըստ
ընթերցված գլխին պատշաճ, հետո երկու կանոն, նաև սաղմոս,
սրա հետ «հարցն իւրովք սարօքն» [եկեղեցական ասմունք,
որ սկսվում է «օրհնեալ ես տէր Աստուած հարցն մերոց». տեր
աստված մեր հայրերի, օրհնված ես]: Հարցն շաբափանից հետո
գալիս են Մեծացուցէ, Ողորմեայն և Տեր երկնից շաբափան-
ները, որոնք Հարցնի կազմածներն են, բարբերը, արեւելքի
ժամը իր կանոն սաղմոսով: Առավոտվա ժամից հետո և երե-

* Հավանորեն շորս եզրանի զվարկ է:

կոյան ժամին արձակելուց հետո կարդալ ամեն օրվա խրա-
տական գիրքը: Ցերեկվա երրորդ ժամին, վեցերորդ ժամին,
իններորդ ժամին իրենց նշանակված սաղմոսով, միմյանցից
զատ ու առանձին յուրաքանչյուր նշանակված ժամին ասում
էին, հետո սուրբ պատարագն էին մատուցում, պատարագի
արարողությունը [կատարում էին] դպիրներով, սարկա-
վազներով և յուրաքանչյուր մեկը իր զգեստներով. ամենքը
խոստովանում, ապա զգեստավորվում էին, ահով ու դողով
էին կանգնում պատարագի առջև և մտավոր ու սրտառուչ
աղոթում էին և իմանում սրտով, թե ինչ են աղոթում. և այդ
պատարագի սկզբից մինչև «Իբրև ճաշեցին» ավետարանի* ըն-
թերցման ավարտը, անգագար ու անընդմիջում արտասուք էին
թափում եկեղեցում ինչպես աղբյուրի բխմունք: Պատարագից
հետո անմիջապես ճաշ չէին ուտում, այլ եկեղեցուց ելնելով
լուսյայն գնում էին յուրաքանչյուր ոք իր խուցը, որպեսզի ըն-
դունած շնորհը և մտքի լուսավորությունը, որ ընդունեցին
սուրբ պատարագից, մի գուցե փարատվի նրանց մտքից: Այն-
տեղ խցում առանձին աղոթքներով էին անցկացնում, մինչև
որ խաղաղվում էր նրանց սրտի բորբոքը: Եվ երբ սեղանի
կոշնակը զարկում էին, ապա բոլորը հավաքվում էին սեղա-
նատանը և միաժամանակ սեղան էին նստում և ուտում լուս-
յայն: Կլոր տարին օրական մեկ անգամ էին կերակուր ուտում,
և կերակուրը ուտելիս որոշեցին զիրք կարդալ, որպեսզի
բիմքները համը ճաշակեն, նույնպես և մտքները աստծու
խոսքերը քննեն:

Արդ՝ նրանց այս հայտնի կարգն ու դրվածքը, որ վերոհիշյալ
վարդապետները սահմանեցին երկու մարդկանցով. իսկ նը-
րանց թաքուն առաքինությունները, որ ունեին, նա է միայն
իմանում, որ քննում է մարդկանց որդիների սրտերն ու երի-
կամները: Քանզի ամենքը զարդարված էին դանադան առա-
քինություններով, ոմանք կանգնած մնալով, ոմանք պաս պա-
հելու ամբույթամբ, ոմանք արթուն մնալով, ոմանք արտաս-
վահողությամբ, ոմանք լուսկյացությամբ, ոմանք հիվանդա-
պահությամբ, ոմանք այլ կերպով, մինչև որ բոլորն էլ ար-
ժանացած էին սուրբ հոգու շնորհներին, որին հաճելի էին

* Տես Ցով. ԻԱ 18:

Նրանց սրբանվեր աղոթքները: Տեր Կիրակոսի մասին պատմում են հետևյալը. «Աշխարհից մի մարդ եկել, դարձել է մենակյաց. քիչ ժամանակ մնալով անապատում, թեև խոստովանել էր և աշխարհականի հաղուստները փոխել, բայց հաղորդված չէր, որովհետև անապատի կարգը այդպես էր, տարին լրանալուց հետո նորեկին հաղորդում էին: Այս եղևծ մարդը տակավին տարին չէր լրացել և դրա համար էլ չէր հաղորդվել: Այնպես պատահեց, որ սա հիվանդացավ և անհաղորդ մեռավ: Սրա անհաղորդ մեռնելը մեծ խղճի խայթ դարձավ անապատավորների համար, ոմանք կամեցան նույն օրը թաղել նրան: Իսկ տեր Կիրակոսը պատճառաբանում, պատրվակներ էր հորինում, չէր թողնում թաղել: Ասում էր. «Այս մարդը եկավ մեզ մոտ և այսքան օրեր մնաց, ոչինչ չօգտվեց մեզնից և այժմ էլ անհաղորդ մեռավ: Եվ արդ՝ առանց ծնսի ու պատարազի թաղում ենք սրան: Արդ՝ խղճացեք սրբան, այսօր ևս պահեցեք, իսկ վաղը պաշտում-պատարագ կանենք սրա հոգու համար և այդպես կթաղենք դրան»: Միաբանները համաձայնվեցին անել այդպես, բայց չէին իմանում տեր Կիրակոսի մտքում ունեցածը: Երբ գիշերը անցավ, առավոտյան տեսան մեռածը հարուժյուն առած ու նստած խոսում ու շարժվում էր. ինքնուրույն ելավ անկողնուց, զնաց եկեղեցին, հաղորդվեց տիրոջ սուրբ մարմնից ու արյունից և զնաց իր հանգստավայրը. երբ մյուս գիշերը եկավ, նորից վախճանվեց, որին տարան թաղեցին միաբանների շիրմատանը: Այս էին պատմում Կիրակոսի մասին: Եվ ուրիշ շատ լսելու արժանի պատմություններ են պատմում անապատի մենակյացներից, որովհետև աստված-հոգին վերակացու էր նրանց:

Սարգիս եպիսկոպոսը մարմնավոր պետքերի հոգաբարձու էր, իսկ Գրքի [Աստվածաշնչի] ուսուցիչները տեր Կիրակոսը, Պողոս վարդապետը, Մովսես վարդապետը, Ներսես վարդապետը և Քումա եպիսկոպոսը, որոնք երկար ժամանակ միասին մնացին: Սրանք բոլորը, ապա տեր Կիրակոսը և Քումա եպիսկոպոսը զնացին Քշաթաղ գավառը,՝ Հոշանց¹⁰⁵ գյուղի մոտ շինեցին անապատ և այնտեղ բնակվեցին: Իսկ Սարգիս եպիսկոպոսը մնաց միևնույն մեծ անապատում և համբերությամբ կրում էր վրա եկած բոլոր նեղությունները, մինչև

որ հասավ խորին ծերություն՝ առաքինի վարքով կյանքի ընթացքը ավարտած և հավատք պահած այստեղից փոխվեց կենդանության երկիրը՝ նույն մեծ անապատում, որտեղ թաղված կան նրա մարմնի պատվական նշխարները. նրա վախճանը տեղի ունեցավ մեր թվականության 1069 [1620] տարում: Իսկ տեր Կիրակոսը, որ զնաց Հոշանց, այնտեղ մնաց կրոնական ժուժկալությամբ, նույն տեղում, Հոշանց գյուղի մոտ, իր անապատում վախճանվեց մեր թվականության 1070 [1621] տարում և զնաց իր սիրեցյալ Քրիստոսի մոտ, որին փափագելով մշտապես կրում էր իր հոգում: Նույն տեղում թաղված են նրա մարմնի պատվական նշխարները ի փառս օրհնված Քրիստոս աստծու հավիտյանս. ամեն:

Գ Լ Ո Ւ Ե Ի Ր

ՄԵԿ ԱՅԼ ՊԱՏՄԱՌԹՅՈՒՆ ՍՈՒՅՆ ՄԵՍ ԱՆԱՊԱՏԻ ՄԱՍԻՆ

Սույն մեծ անապատի մասին շարադրենք մյուս պատմությունը ևս: Անապատի շինությունից հետո, երբ անցան բառասունհինգ կամ ավելի տարիներ, անապատի արևմտյան կողմը գետինը պատովեց դեպի հյուսիս և հասավ մինչև արևելյան կողմը, մինչև հանդիպակաց լեռնաժայռը: Իսկ արևմտյան կողմից անցնելով գերեզմաններից հասավ մինչև արևմտյան կողմի լեռանը: Պատվածքը շատ էր՝ լայն, ընդարձակ ու խոր. եթե պատահեր եղ, ձի կամ այլ անասուն ընկներ պատվածքի խորափոսը, չէր կարող դուրս գալ: Բացի սրանից պատվածքը այստեղ-այնտեղ օրավուր շատանում էր: Այս պատճառով երկյուղալի կասկած ընկավ անապատի բնակիչների սիրտը, թե այն գետինը, որի վրա շինված է անապատը, սահելու է իր տեղից: Այդ էին հաստատում նաև այնտեղի պատահած գավառացիները՝ տեսնելով այն պատռվածքը:

Երբ հասավ մեր 1107 [1658] թվականի ապրիլ ամիսը, այս գարունը անձրևային եղավ, իսկ պատվածքները օրավուր սկսեցին լայնանալ, և հավաստի ամենքի սրտում հաս-

տատվեց, թե այսօր-էգուց սահելով հոսելու է այս անապատի տակի գետինը: Այնպես եղավ, որ ավագ եկեղեցու կիրակի օրը, որ ապրիլ ամսի քսանհինգն էր, երեկոյան եկեղեցի գնալու ժամանակ, արևմտաի մոտ գետինը սկսեց պատուել անապատի հարավային կողմից՝ բարձր լեռնից այն կողմ և իբրև մրրկաբեր ամպ շարժված գալիս էր լեռան բարձունքից ահավոր դղրդումով, թնդունով, որոտումով ու ճայթումով: Ինչպես կայծակնացայտ ամպերի որոտում: Որոտումն ու թնդունը այնքան ահավոր էին, մինչև որ Շիմուհայր և Հալիձոր¹⁰⁶ գյուղերի բնակիչները ձայնը լսել են և ելել իրենց

գյուղերի հանդիպակաց տեղը և տեսել այդ արհամիրքը: Հավիտենական հաստակերտ ժայռերը միմյանցից ճեղքվելով բաժանվում էին: Ի սկզբանե իրար վրա կառուցված քարերը, որ գետնի հիմքն էին, եռալով բարձրանում էին գետնի երեսը. այդպես նաև տարիների բոլոր ծառերն ու տունկերը՝ թե ընկուղենի, թե կաղնի. սրանց հետ մեծամեծ քարեր ներքև սուզվելով անդունդներում՝ կլանվելով աներևութանում էին: Մեծամեծ քարերը լեռնից պոկվելով միմյանց հետևից գլորվելով ջած էին գալիս, որոնք միմյանց բախվելով փշրված, խորտակված հեռու էին ցրվում: Սրանց բախման ուժգնութունից սաստիկ ցնցվում էին բոլոր վայրերը. սրանց դղրդալու և որոտման ձայնը ականջ էր խլացնում և ամենքին սրտաճաք անում:

Եվ որովհետև օրը երեկոյացել էր և ցերեկվա քիչ ժամանակն էլ անցավ, և եկավ գիշերը, սկսեց անձրև թորալ և սաստիկ մթնագիշեր լինել այնպես, որ իրար կողք կանգնածների միմյանց չէին տեսնում: Անապատի բոլոր բնակիչները անապատից ելան և գնացին հավաքվեցին անապատի արևելյան կողմը՝ քարքարոտ լեռը, և այնտեղ տեղավորվելով՝ ճրագներ և մեծամեծ մոմեր վառեցին: Ահաբեկ սարսափով կանգնած սպասում էին վերջին և տենչում առավոտյան լույսին:

Շատերը համարեցին, թե անապատը միանգամից քանդվեց սահած այլ գետնի հետ, բայց զթացող աստծու ալարչական խնամքը նախելով խեղճ միաբանների մշտապազալ մաղթանքներին, շթողեց իսպառ ավերվի, այլ՝ մասնակի:

Անապատի արևմտյան կողմը՝ պարիսպն ու հյուրատունը, անասունների ախոռը, ամբարները, միաբանների սենյակից մի մաս և արևմտյան մեծ եկեղեցու արևմտյան սյուների հետևի կողմից բոլորը ավերվեցին:

Գործված աղետը խիստ սարսափելի ու երկյուղազդու էր, քանզի ինչպես ծովի ալիքների լեռնացած կոհակներ, որոնք միմյանց հետևից սահելով ընթանում են, այդպես էլ հաստահիմ վեմերը, այդ վայրերի քարը, հողը եղան: Որովհետև լեռան սրտից, որի վրա շինված է Թանահատի վանքը, խոր անդունդներից լեռան բնական քարերը սկսեցին պատուել և հողով, խճով, մեծամեծ վեմերով իբրև եկած տներ վերից վայր հոսում էին: Եվ վերից եկած հոսքը իր ուժով և ուժգին հոսանքով իր առջևի վայրերը բնական տեղից հեռու թոցնելով՝ իր հետ առած միասին, միմյանց հետևից ընթանում էին իբրև ծովի հորձանք վերումվայր անելով: Եվ այսպես սահելով գնացին հասան Որոտան մեծ գետին, որ ձորի մեջ անցնում է, և արգելեցին ջրի ընթացքը մոտ ութ ժամ: Իսկ գետի ջուրը, որ վերևից իջնում էր, եկավ, ծովացավ և տեղը լցրեց. ապա ինչ-որ կողմից իրեն գնալու տեղ գտավ, գնաց: Իսկ քարերը, հողերը, որ արգելվեցին գետեզրում, եղան մեծ բլուր:

Իսկ անապատականների գերեզմանոցը անապատի արևմտյան կողմից էր. տեղանքի հոսելու հետ այս գերեզմանները առհասարակ միանգամից բոլորը միասին իրենց խոր ու անդնդային հատակով թռան իրենց տեղից, սահելով գրանացին մեծ հեռավորությամբ մի վայր, դադար առան, կանգնեցին: Նաև սույն տեղում էին թաղված սուրբ վարդապետ Պողոսը, որի պատմութունը արել ենք մի այլ գլխում, և պարոն Սարգիսը, որի մասին անցյալ գլխում պատմեցինք, և Արիստակես վարդապետը, որ պարոն Սարգիսից հետո եղավ անապատի առաջնորդը, նաև ճգնավոր ու ընտիր, առաքինի գործեր կատարող տեր Բարսեղ արեղան: Սրանք չորսն էլ միմյանց կից էին թաղված ու նրանց վրա մատուռ էր շինված: Գերեզմանատան տեղի հոսելու ժամին աստծու խրնամքը սբանչլագործություն արեց այս սրբերի վրա, որովհետև սրանց գերեզմանները ամենեկին շխախտվեցին, նույ-

Իսկ տապանաբարերը չլինելուցին, այլ իրենց դիրքը դեպի ուղիղ արևելք ընդունելով կանգնեցին, ինչպես որ նախապես թաղված էին, բայց սրանց վրայի եղած մատուցը փուլզվեց, ցրիվ եկավ:

Այս ամբողջ սոսկալի գործերը լինելով՝ այնուամենայնիվ ամենակալ աստծու խնամքով ոչ մեկի վնաս չեղավ, ոչ մարգո, ոչ անասունի, միայն մի միաբան մնաց իր խուղում, այնտեղ հողի տակ մեռավ, որովհետև երբ երեկոյան ժամին սկսվեց հոսքը, ոմանք միաբաններից գնացին, նրան հայտնեցին, որ ելնի այնտեղից, որ շնա հողի տակ, բայց նա երկար ժամանակ ցանկանալով սպասում էր մահվան, դուրս չեկավ, այլ մնաց այնտեղ՝ հույսով ակնկալելով տիրոջը, որ պետքի թերևս իր անմեղ մահվան համար ընդունի իր բազմազույթ տեր աստծուց իր հոգու այցելությունը:

Իսկ անապատի մյուս բոլոր բնակիչները հավաքված էին լեռան վրա, որ անապատի արևելյան կողմն էր, հորդաբուխ արտասուքներով և ծանր հառաչանքներով կոծում էին իրենց և աղաչում էին աստծուն, որ թերևս ազատվեն մահից, և անապատի շինվածքները փրկվեն փուլզումից, որովհետև կատարված արհավիրքից հուսահատված էին. մինչև լուսանալը առավոտովա լույս երկուշաբթի իրրև պաղատավորներ երկյուղի մեջ էին: Իսկ նա, որի գլխովն էր ընկ ողորմության աղբյուր է, տեր աստված ոչ միայն նրանց մահից փրկեց, այլև ողջ անապատը պահեց և շթողեց ավերվի, իր ամենազոր աջով անապատը անխախտ պահեց, բացի նախապես հիշատակված ավերվածքներից:

Անապատի միաբաններից մեկը պատմեց այսպիսի մի երազային տեսիլք. ասաց թե՛ «Տեսնում էի շքնաղաղեմ, մեծաշուք, պայծառ հագուստներով, սպիտակ ձի հեծած մեկին, որ կանգնած էր եկեղեցու տանիքին, որի առջև հավաքված միաբանները պատմում էին սարսափելի շարժարանքների անցքերը: Իսկ երևացած փառավոր մարդը նույնը կրկնելով խոսում էր միաբանների հետ, ու իր խոսքի ընթացքում այդ փառահեղ մարդն ասաց, և ես այդ գործերի մասին կանգնած եմ և հոգում եմ. այդ պատճառով իմ ծունկը մի քիչ ցավեց, որովհետև ոտքերս դեմ էի արել քարածայլին և լեռը

պահում էի, որպեսզի փուլզվելով շծածկի միաբանների կացարան անապատը: Իսկ դուք մի ծուլանաք առաքինություն գործեր կատարելուց և մշտապես դո՛հ փառավորեցեք տեր աստված, որ փրկեց ձեզ և հետագային նույնպես կփրկի իբ ողորմությամբ, նրան հավիտենական փառք. ամեն:

Գ Լ Ո Ւ Ե Ի Գ

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՊՈՂՈՍԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ վարդապետ Պողոսը Մոկաց¹⁰⁷ երկրի Քար անվանված գյուղից էր: Գալով սուրբ ու մեծահոշակ վարազի¹⁰⁸ միաբանությունը՝ կապվեց Կարապետ վարդապետի հետ, որի մականունն էր Ջագ վարդապետ: Սրան աշակերտելով սովորեց Հին ու Նոր կտակարանների բոլոր գրքերը, և երբ գիտությունամբ ու տարիքով կատարյալ դարձավ, Ջագ վարդապետը նրան քարոզչության իրավունք տվեց: Իսկ նա գնալով քրիստոնյաների [հայրերի] մեջ՝ քարոզում էր աստծու պատվիրանները: Քարոզելով եկավ հասավ Թավրիզ և այնտեղ զբաղվելով իր քարոզչական գործով, ամենօրյա քարոզով ու դասով և հորդաբուխ վարդապետությունամբ լուսավորում էր քրիստոնյա ժողովրդին, որոնք որ այնտեղ հանդիպում էին: Քանզի ամեն կողմից Թավրիզ եկած վաճառականները, երբ հաջողվում էր լսել սուրբ վարդապետի քարոզը, հոգով մխիթարված զվարճանում էին և օրհնություն էին մատուցում աստծուն՝ այդպիսի շնորհների տվողին:

Իսկ Պողոս վարդապետն ինքը վարքով սուրբ էր ու առաքինի. մշտապես սաղմոսերգու էր և արտասուքներով և մըտքով աղոթարար. ու շաբաթ օրվա գիշերը, երբ լուսանում է կիրակին, ու երեկոյից սկսած ոտքի վրա էր և մինչև լուսանալը հսկում էր կատարում. և ամեն շաբաթ օրվա գիշերը այդպես էր անում. «Հիշեսցուքը», «Կանոն գլուխը», «Ալեւուն» երգով էր ասում «Ուր կանոն սաղմոսի» հետ, իսկ առավոտյան «Պատարագի փրկական խորհուրդն» էր մուտուցում: Նաև ամենեկին հրաժարվել էր գինուց ու մսից. շաբաթ ու կիրա-

կի օրերն էր միայն նավակատիքի կերակուրներ ճաշակում, իսկ տարվա մյուս օրերը պաս պահելով էր սպրում: Նաև ոչ ոքից ինչք ու ունեցվածք չէր առնում, որովհետև անդրամ էր քարոզում: Իսկ եթե ժողովուրդը որևէ բան էր տալիս, այն էլ ծախսում էր գերիների, կարտալանների և եկեղեցիների կառուցման համար: Նաև ուր որ ճանապարհ էր գնում՝ հեռավոր, թե մոտիկ, ոտքով էր գնում, ուստի քարոզի գրքերը ինքն ու իր աշակերտները շալակում ու գնում էին: Թավրիզ քաղաքում թեպետ եկեղեցի կար, բայց այնտեղ պատարազի տեղ չկար. իսկ սա նույն եկեղեցում շինեց պատարազի գեղեցիկ խորան:

Ժողովուրդը շատ էր սիրում նրան ճշմարիտ վարքի համար, իսկ վաճառականները, որ Գողթնյաց գավառից էին, աղաչում էին՝ քարոզության գնալ իրենց երկիրը: Սրանցից մեկն էր ցղնացի խոջա Հայրապետը, և նրա հետ նաև ուրիշները. այս բանը շատ օրեր թախանձում էին: Իսկ վարդապետին դուր եկան նրանց խոսքերը, գնաց Գողթնի¹⁰⁹ գավառը, եկավ Ագուլիս¹⁰⁹ գյուղը:

Այնտեղ կար առաքելաշեն մի եկեղեցի, որի մասին ասում էին, թե սուրբ առաքյալ Թադեոսի շինածն է, որը շատ տարիներ անց դուռը բանալուց հետո մենք նույնպես տեսանք այն եկեղեցին: Այդ եկեղեցու դուռը շատ վաղ ժամանակներից ինքնիրեն փակված էր առանց նիզի ու փականքի: Եվ թեպետ շատ անգամ աշխատել էին ու ջանացել, որ բանան, բայց բանալու հնար չէր եղել. այս պատճառով վճատվել էին ու ձեռք քաշել: Այս դրան փակվելը ամենայն որսիստության մեջ պատմվեց վարդապետին:

Եվ երբ եկավ շաբաթվա լույս կիրակիի դիշերը, վարդապետը իր մշտական սովորության համաձայն՝ եկավ, կանգնեց եկեղեցու փակված դռան առջև, որպեսզի հսկում անելով գիշերվա պաշտամունքը կատարի: Կանգնեց փակված դռան առջև, սկսեց իր սրտի խորքից ուժգին գոչումով և հորդահոս արտասուքներով աղաչել ու խնդրել եկեղեցու դռան բացումը դուրին լսող տիրոջից: Բեկված սրտով, հորդահոս արտասուքներով, որ աչքերից բխեցնում էր իբրև աղբյուրների, իր անձը տարածում էր աստծու առջև: Նախքան հսկում սկսելը գոչարարեց արև, և, երբ երեք անգամ բախեց դուռը

և ասաց. «Տեր, բաց մեզ համար, տեր, բաց մեզ համար, տեր, բաց մեզ համար ըստ ողորմության դուռը, որ ողբալով կանչում ենք քեզ»: Եվ աստծու շնորհներով առանց որևէ մեկի մոտենալու անմիջապես դուռը բացվեց: Իսկ գյուղի քահանաներից, աշխարհականներից նրանք, որ մոտիկ կանգնած էին, քարացած, զարմացած, ապուշ էին կտրել: Ապա ուշքի գալով՝ շտապ գնացին, ամբողջ ժողովրդին հայտնեցին. սրանք լսելով՝ թողին տուն ու ընտանիք, խոր գիշերին շտապ այնտեղ հասան մեծ ու փոքր: Եվ երբ տեսան, օրհնություն էին վերառաքում ի բարձունս աստծուն: Եվ երբ եկեղեցու դուռը բացվեց, ամբողջ ժողովրդով ներս մտան, ուրախությամբ ու ցնծությամբ այնտեղ՝ նույն եկեղեցում սկսեցին գիշերային կարգը, իսկ առավոտյան մատուցեցին պատարազի փրկական խորհուրդը և ամենքը միաբերան օրհնում էին հրաշագործ աստծուն, որ նրանց արժանի արեց այդ պարգևին: Այս լուրը հռչակվեց գավառի բոլոր կողմերը քրիստոնյաների [հայ] և ալլազդիների մեջ. ովքեր լսում էին, զարմանալով օրհնում էին աստծուն:

Արդ՝ այս փակված դռների բացումով ինչ-որ մեծ խորհուրդ հայտնվելով երևաց, քանզի նրա հետ արևելյան մեր աշխարհում բացվեց կենաց խոսքի քարոզության դուռը, որոնք [ժողովուրդը] մինչև այդ ժամանակ անդիտության խոր խավարի մեջ էին թաղված եկեղեցականները և աշխարհականները, ինչպես կապաշտության ժամանակ: Ինչպես տեր Քրիստոս, իբրև արդարության արեղակ ծաղեց երկրում և լուսավորեց բոլորին աստվածազդիտության հավատով, այդպես էլ սուրբ վարդապետ Պողոսը՝ մեր արևելյան կողմը. որովհետև մեջտեղից վերացրեց ամեն ավելորդ անկարգություն եկեղեցականներից ու աշխարհականներից, ուղիղ քարոզությամբ կարգադրեց, շքեղացրեց բոլորին: Որովհետև եկեղեցու դռան բացվելով, բացվեց արևելյան մեր աշխարհի հավատի դուռը սրա քարոզությամբ և անբիծ ու անկեղծ վարդապետության մեջ, քանզի առաքելաբար շքեղում էր ամեն տեղեր, քարոզում էր կենաց խոսքը, կարգում էր քահանաներ, շինում էր եկեղեցիներ և եկեղեցիներում ու գյուղերում հաստատում էր բարի կարգեր, մանուկներին հավաքում էր Սուրբ գրքի ուսման և տեղ-տեղ հաստատում էր դպրոցներ:

յութ աշակերտներին նշանակում էր դասատուներ, ընդունակ մանուկներից ոմանց իր հետ շրջել տալով սովորեցնում էր: Ամենքը հասան աստիճանին՝ արեղա, քահանա՝ բավական իրենց և ժողովրդին: Ուր էլ որ շրջեց նա, ամենուրեք շինեց եկեղեցի, քանդի նրանից առաջ ամեն տեղ եկեղեցի չկար: Եվ եթե որևէ տեղ էլ կար, այն էլ անշուք, անպատշաճ էր եկեղեցի անվան, հասարակ, մթին, խարխլված, փլվիված, լըցված հողով ու մոխրով, որի ձևը և դիրքը ծուռ ու թեթ: Իսկ սա, ուր էլ հասնում էր, հիմնարկում էր պատշաճավոր ձևով եկեղեցի՝ դիրքը ուղղված դեպի արևելք, խորանների, լուսամուտների, գմբեթի և այլ ամենի գեղեցիկ շինվածքով:

Այս ձևով քարոզելով և եկեղեցի շինելով հասավ մինչև Աստապատ¹⁰ գյուղաքաղաքը, նախ նրանց վանքը շինեց, որ Սուրբ Ստեփանոս Նախավկայի անունով է՝ ամուր պարիսպներով և երկաթապատ դռներով: Վանքը ավարտելուց հետո ժողովրդի թախանձանքով սկսեց գյուղի եկեղեցիին շինել, որովհետև եկեղեցիին փոքր էր և ժողովրդին չէր տեղավորում, իսկ ժողովուրդը շատ էր: Ընդ որում կամեցան եկեղեցու շուրջն եղած խցերից քանդել, միացնել եկեղեցուն, որ մեծանա: Իսկ արեղաները, որ բնակվում էին գյուղում և խցերի տերերն էին, խոժոռվելով ըմբոստացան և չէին թողնում խցերը քանդել: Իսկ ժողովուրդը ուշադրություն չդարձրեց նրանց ըմբոստացման վրա, այլ հարձակվելով խցերը քանդեցին: Իսկ արեղաները, չկարողանալով արգելել, գնացին վանք, առան եպիսկոպոսների, եկան գյուղ, մեծ աղմուկ բարձրացրին և վարդապետին անվայել խոսքեր էին ասում: Իսկ սուրբը նմանվելով հեղ ու ճշմարիտ Քրիստոսին՝ խորհում էր մտքում, թե եթե ձեզ հալածեն այս քաղաքից՝ փախեք մյուսը՝ դրա համար ամենից գաղտնի գիշերը ելավ լռելյայն գնաց գյուղ: Իսկ ժողովուրդը, երբ իմացավ վարդապետի գնալը, այն ժամանակ հարձակվեց արեղաների վրա՝ ծեծելով քարով, փայտով գյուղից դուրս քշեց, և շտապ գնալով վարդապետի հետևից՝ մեծ աղաչանքով նրան նորից գյուղ դարձրեց և սկսեց լայն ու ընդարձակ, բարձր կերտվածքով եկեղեցի շինել՝ գմբեթը վրան կառուցված, նույնպես

* Տե՛ս Մատթ. Ժ 93:

նաև տների ու պարիսպների այլ հարկեր: Իսկ արեղաները և եպիսկոպոսները, երբ տեսան իրենք չկարողացան վարդապետին հաղթել, գնացին Գարաշամբ և Նախավկայի վանքի բոլոր եպիսկոպոսների հետ միաբանվելով՝ իրենց հետ առան, եկան վարդապետի վրա նման Ամաղեկի¹¹ թագավորների, որոնք միաբանված եկան աստծու զորավար Հեսուի վրա: Բայց ինչպես նրանք այնտեղ պարտվեցին, այնպես էլ այստեղ՝ սրանք, որովհետև թեպետ շատ անգամ հակառակվեցին վարդապետին, բայց նա բոլորովին չքվեց բարի առաջընթացից: Իսկ միաբանված արեղաները նախանձից ավելի ևս գրգռված՝ գնացին Մելքիսեթ կաթողիկոսի մոտ, որ կաթողիկոսական իշխանությունը կապալով պարսից թագավորից առել էր, և այնքան բարկություն մղեցին նրան, մինչև որ շատ անգամ սպառնական ու հանդիմանական խոսքեր ուղարկեց վարդապետին, թե դուրս կգաս մեր երկրից և կըգնաս քո երկիրը, ուստի եկել ես, որովհետև մեզ պետք չէ քո խաբեբա և նորաթուխ քարոզությունը, և ոչ էլ քո կեղծավոր վարքը: Իսկ եթե ոչ, խայտառակություն նշավակ, ծառք ու ծանակ կդառնաս իմ ձեռքում: Իսկ վարդապետը այդ բնավ հաշվի չառավ, որովհետև նրա հույսը տիրոջ վրա հաստատուն էր, այլ մշտապես շրջում էր ու քարոզում, շինում էր եկեղեցիներ և բոլորը ուղիղ կարգերով ու զրվածքներով հարգարում:

Իսկ տարիներ անց Մելքիսեթ կաթողիկոսը և Պողոս վարդապետը Նախիջևան քաղաքում հանդիպեցին միմյանց. կաթողիկոսը իր սրտում տարիների կուտակած դառը թույնն ու մաղձը այդ ժամանակ ծայթեց վարդապետի վրա: Բազմաթիվ հանդիմանություններից, կշտամբանքներից ու անպատշաճ խոսքերից հետո, որ կաթողիկոսը ասաց վարդապետի երեսին, ասաց նաև՝ թե այն բոլոր եկեղեցիները, որ դու շինեցիր, քո դիսին կքանդեմ: Եվ հրամայեց նրան ելնել այս երկրից ու գնալ իր տեղը: Իսկ եթե դարձյալ ուշանա, այնուհետև կհանձնվի աշխարհիկ իշխաններին: Վարդապետը իր կողմից ոչ մի օգնող չունե՞ր՝ ոչ եկեղեցական և ոչ էլ աշխարհիկ, որովհետև բոլորը վախենում էին կաթողիկոսից, քանդի կաթողիկոսությունը կառավարվում էր թագավորական իշխանությամբ: Այս պատճառով վարդապետը ճարա-

հասյալ նախիջևանից ելավ, գնաց Շամբ գյուղը, որպեսզի գնա իր տեղը:

Ըստ իր մշտական սովորության, կեսգիշերին վարդապետը աղոթում էր. այդ գիշեր աղոթքից հետո խթեց աշակերտի կողը և դարթեցրեց նրան: Ուրիշները նույնպես զարթնեցին. Սկսեց հարցնել նրանց, թե որն է ձեզ լավ թվում՝ արխա-նալ ընդդեմ այս փորձության, դիմագրավել այս խոտվությունը և քարոզել կենաց խոսքը, թե տեղի տալ ու հեռանալ սրանց խառնակությունից: Իսկ աշակերտները պատասխանեցին. «Դու ինքդ տեսնում ես տգիտության խավարը, թե ինչպես սփռված է ժողովրդի վրա. տեսնում ես նաև այն, թե ինչպես տերը բացեց քարոզության դուռը, որովհետև ինչ էլ որ քարոզում ես, անմիջապես արդյունավորվում է: Արդ՝ չլինի վհատվես, որովհետև տեր աստված օգնական է քեզ, դու պետք է արիանաս և համբերես փորձության՝ ժողովրդի օգտի համար և քարոզես կենաց խոսքը»:

Երբ սուրբ վարդապետը այս քաջալերանքը ստացավ նըրանցից, այդ ժամանակ իր աշակերտներին ասաց. «Արդ՝ իմ որդիներ, որովհետև այդպես ասացիք, մենք պետք է գընանք թագավորի մոտ ու նրանից թույլտվություն առնենք եկեղեցիների շինության համար. իսկ ես ակնկալում եմ տիրոջից, որ թագավորը մեր խնդրանքը կհատարի: Արդ՝ եթե նրանից այս թույլտվությունն առնենք, մեզ համար բարի անուն կլինի, և եթե մեզ սպանեն, բարի վարձք ենք ընդունելու Քրիստոսից նրա վաստակավոր ծառաների հետ»: Աշակերտները նույնպես հաստատեցին, թե շատ լավ է այդ մտադրությունը:

Նույն ժամին, նույն գիշերը վեր կացան, Շամբից ելան, անցան Արաքս գետը և ճանապարհ ընկան գնալու թագավորի մոտ, որ ինքը առաջին Շահ-Աբասն էր, եկեղեցի շինելու հրաման առնելու նրանից: Սաղմոսի կանոնի ավարտից հետո, որ ճանապարհին գնալիս երգում էին, պատահեց այն քարոզը, որտեղ ասվում է «նաղաղության ճանապարհներին մեր ընթացքը ուղղելու համար տիրոջն ենք աղաչում»: Մյուս տունն էլ ասում է. «Հակառակորդին շուտափույթ ոտքերի տակ խորտակելու համար տիրոջն ենք աղաչում»: Այդ ժամանակ

վարդապետը նրանց, որոնք իր հետ էին, ասում է. «Տեսեք որդիներ իմ, որ մեր ճանապարհը ըստ այս սաղմոսի վկայության ուղիղ է»: Սրանով ավելի ևս հաստատուն դարձան, ուրախացան և մեծ հույսով գնում էին:

Եվ երբ հասան Արաղբար կռված գավառը և օրը տարածամելու հետ մտան այլազգիներին մի գյուղ գիշերելու այդ գիշեր, տեսան, հավատով մահմեդական մի մարդ ընդառաջ եկավ իրենց. աղաչեց և ասաց. «Ձեզնից խնդրում եմ, աստծու սիրուն, մի դարձեք իմ այլազգությունից, այլ զիջեք իմ աղաչանքներին, եկեք իմ տունը, որպեսզի ձեզ հյուրընկալեմ: Որովհետև աստծուն ուխտ եմ արել, որ այսօր առանց հյուրի չճաշեմ: Մինչև այժմ այս գյուղամեջում սպասում եմ ու նայում հյուրի, և արդ՝ աստված ձեզ ուղարկեց, ուստի սիրով ցանկանում եմ ձեր գալուստը իմ տուն»։ Իսկ երանելի վարդապետը մարդուն ցնծություն քառապսխանեց և ասաց. «Թող այդպես լինի, ինչպես ասացիք, գնանք քո տունը»: Եվ այն գիշեր օթեանեցին այդ մարդու տանը: Մարդը շատ լավ սպասավորեց նրանց՝ ամեն պիտույքներով և հանգստություն: Եվ երբ առավոտյան կամեցան գնալ, այլազգին եկավ աղաչեց, խնդրեց և ասաց, թե՛ «Ես զավակ և հիշատակ չունեմ երկրի վրա, խնդրում եմ ձեզնից՝ աղոթք անել ինձ համար, որպեսզի զավակ ունենամ, քանզի իմ կիներ ամուլ է»:

Իսկ սուրբ վարդապետը մշտատարած ձեռքերը բարձրացրեց երկինք և պատշաճ աղոթքներով խնդրեց աստծուց, որ նրան զավակ տա: Իսկ դյուրալուր տերը, որ խոստացավ իր ծառաներին, թե այն ամենը, ինչ որ խնդրում եք հավատով, կատանաք. սուրբ վարդապետի աղոթքով այն մարդուն զավակ պարգևեց, ինչպես որ հայտնեց նույն մարդը: Քանզի որոշ ժամանակ անցնելուց հետո այդ այլազգի մարդը, նվիրներով եկավ և վարդապետի առջև ընծա ղնելով երկրպագեց, գոհություն հայտնեց և խոստովանեց, որ նա շնորհներով է օժտված, թե՛ «Թո աղոթքներով աստված ինձ զավակ պարգևեց, արդ՝ խնդրում եմ աղոթես, որպեսզի աստված նրան պահի երկար ժամանակ»: Իսկ սուրբ վարդապետը վրան աղոթք արեց և մխիթարեց նրան շատ խոսքերով, ուղարկեց իր տեղը:

Արդ՝ այս իրողության պատահումը նման եղավ այն բա-

նին, որ Աստված արեց մեծ նահապետ Արքահամի հետ, ինչպես որ նա իշավ Արքահամին հյուր և պարգևեց նրան զավակ, սուշնպես էլ վարդապետը եկավ այլազգիին հյուր և աղոթքով խնդրեց աստծուց՝ նրան զավակ պարգևել, որով փառավորվի Հիսուս Քրիստոսի՝ մեր տիրոջ անունը ըստ իր անսուտ խոսքի, թե կտանեն ձեր բարի գործերը և կփառավորեն ձեր հորը, որ երկնքում է*:

Արանից հետո վարդապետը դուրս եկավ այնտեղից, գնաց ազվանից երկիրը՝ Ղարաբաղ, այն վայրը որ անվանվում է Քոթուկու¹², քանզի այնտեղ էր բանակել Շահ-Արաս թագավորը իր ամբողջ սպայակույտով:

Իսկ երբ վարդապետը հանգիպեց թագավորին, տերը իր ջնորհալի ծառային ներկայացրեց այլազգի ահարկու թագավորին. և երբ արքան վարդապետին հարցրեց, թե ինչ խնդրանք տանես մեր թագավորությանից, վարդապետը պատասխանելով՝ ասաց. «Նախ՝ արքայի կյանքի երկարությունը և նրա ամուսնի հաստատությունը. երկրորդ՝ որ, արքա, քո խաղաբարձր թագավորությունը հայ ազգը ամեն բարիքներից ոչ մի պակասություն չունի, բացի միայն աղոթքներից, քանի որ աղոթատեղ չկա, որպեսզի առ աստված աղոթեն աշխարհի և թագավորի կյանքի համար: Արքայից այս եմ խնդրում, որ ինձ եկեղեցի շինելու հրաման ու հրովարտակ տա: Եվ եթե սա վարձք ունենա, թագավորին լինի, իսկ եթե մեղանշանք ունենա, ինձ լինի»: Արքան այս լսելով զվարձացավ իր մեջ և բարձր ձայնով ասաց իր նախարարներին. «Իշխաններ ու դատավորներ, ո՞րն է ձեզ արժանի և ուզի՞լ թվում՝ հրաման տա՞լ եկեղեցի շինելու, թե՞ արգելել»: Ինքը դարձյալ շտապ պատասխանեց իր խոսքերին, թե չպետք է արգելել, այլ պետք է շինելու հրաման տալ, որովհետև դրանք ևս աստծու աներ են: Եվ անմիջապես հրամայեց հրովարտակ գրել և տալ նրան: Երբ [հրամանը] կատարեցին, տվին թուղթը, նա տարավ հեռու, կարդալ տվեց, տեսավ, որ այնպես օգտակար չէր, որ բավարարեր ներկա ժամանակի կարիքներին, դրա համար հարկազրկած կրկին ներկայացավ արքային և հիշեցրեց

* Մատթ. Ե 16:

նրան իր խնդրելիք հրովարտակը: Երբ թագավորը վերահասու եղավ վարդապետի դիտավորությունը, այդ ժամանակ թագավորը վրանից դուրս եկավ, գնալ-գալով ճեմում էր. նույն ժամին գրագիրներինց մեկին կանչեց, նստեցրեց իր առջև գետնին, իսկ արքան ոտքի վրա մնալով՝ ինքը ասում էր, իսկ գրագիրը գրում, մինչև վերջացրեց գրության բոլոր խոսքերը. ապա նույն գրագրին հրամայեց [գրությունը] շրջեցնել բոլոր իշխանների մեջ, որպեսզի ստորագրեն ու կնքեն: Եվ երբ ամեն ինչ ավարտվեց, հրովարտակը բերին տվեցին վարդապետին, իսկ սուրբ վարդապետը գոհանալով տիրոջից, առավ արքունական հրովարտակը, եկավ հայոց Արևելյան երկիրը* և այնուհետև աներկյուղ էլ ավելի վայելուչ եկեղեցիներ սկսեց շինել, համարձակ շրջել ու քարոզել:

Իսկ Մեղիքիսեթ կաթողիկոսը առավել քննով լցվեց Պողոս վարդապետի հանգեպ-զրպարտանքի խոսքեր խոսեց վարդապետի մասին մեծ հզոր իշխան Ամիրզունա խանին, որ Երևանի իշխանն էր ասաց «Մի շենթարկվող ու անհնազանդ մարդ, մարերի օտար երկրից քանի քանի տարի է, որ շրջազայում է պարսից երկրում, մանավանդ ըստ իշխանության գավառներում և սուտ ու խաբերայական ջարդությունը և կեղծավոր վարքով բոլոր մարդկանց առինքնում է: Ոսկի արծաթ և այլ ունեցվածք չմնաց որևէ մեկի մոտ, այլ բոլորը կողոպտում է ամենքից և առնում է ուղարկում իր երկիրը: Քանիցս խոսքով պատվիրեցինք նրան, նաև երես առ երես ասացինք, որ ելնի այս երկրից և գնա իր տեղը, նա մեր խոսքը բանի տեղ չդրեց և շակնածեց թագավորական հրամանից, որ մեր ճշտությամբ կա, այլ գործում է ըստ իր կամքի ու հաճույքի, քանզի անհնազանդ է իշխաններին ու պետերին:

Այս պատճառով խանը իր առջև է կանչում իր զինվորներից մեկին և ասում. «Մեր իշխանությունից հրաման է, որ դու գնաս մեր տերություն երկրում շրջես և վարդապետ Պողոսին գտնես, բերես այստեղ մեզ մոտ»: Իսկ զինվորը գրեհում, որոնելով նրան գտնում է Ագուլիս գյուղում. այնտեղից նրան առնում բերում է Երևան քաղաքը: Եվ գալիս, երբ եկան հասան Դվին¹³, այն գիշեր այդտեղ օթևանեցին: Այդ

* Երկիր արևելից Հայոց-ը Արցախը, Այունիքն է:

գլխուղում կար մի քրիստոնյա (հայ) մարդ, որի որդու ձեռքը գոսացել էր, սրան (հայրը) բերեց վարդապետի առջև և խընդ-րից նրա վրա աղոթել, որպեսզի մանկան ձեռքը բուժվի: Իսկ սուրբ վարդապետը բռնեց մանուկի ձեռքից և աղոթք արեց նրա վրա և ասաց. «Հայր մեր, որ երկնքում ես և տվեց հո-րը, որ առավ գնաց:

Վաղ առավոտյան [այն մարդը] առած որդուն եկավ վարդապետի առջև, երկրպագում և համբուրում էր նրա ոտ-քերը, գոհություն հայտնում և խոստովանում էր, որ վար-դապետը օժտված է շնորհներով. ամենքին ցույց էր տալիս մանկան ձեռքը, թե վարդապետի աղոթքով իմ մանկան ձեռ-քը բուժվեց: Քանզի Քրիստոսի շնորհիվ և սուրբ վարդապե-տի աղոթքով բուժրովին բուժվել էր այն մանկան ձեռքը, որով փառավորվեց մեր տեր Հիսուս Քրիստոսի անունը:

Այնտեղից ելան, եկան Երևան քաղաքը: Ձինվորը, որ վարդապետին բերեց, նույն օրը նրան ներկայացրեց խանին: Իսկ խանը, ինչպես կաթողիկոսից ընդունել էր նյութը, մեծ քեն ու դառնություն ունեւր մտքում ամբարած, որպեսզի բազ-մակի շարչարանքների փորձությունը անցկացնի վարդապե-տին: Բայց նա, որ թագավորների թագավորն է ու տերերի տերը, որ իր ձեռքում է պահում բոլոր բռնակալների սիր-տը՝ ըստ Սողոմոն իմաստունի, անմիջապես խանի սիրտը խա-ղաղեցրեց, ինչպես Արտաշես արքան (քաղցրացավ) Մուրա-քեի վրա և բարկացավ Համանի¹¹⁴ վրա: Որովհետև վարդա-պետի երեսին խոսքը ասելիս ոչ թե բարկություն ասաց կամ զայրացած դեմք ցույց տվեց նրան, այլ մեղմ և հանդարտ խոսքով ասաց նրան. «Այսօր մնա մեզ մոտ, քանզի մեր հյուրն ես, իսկ վաղը քեզ կտանեմ կաթողիկոսի մոտ և նրան քեզ հետ կհաշտեցնեմ, որովհետև Մելքիսեթ կաթողիկոսը խանին իր բարեկամներով հանդերձ հրավիրել էր պա-տիվ տալու հաջորդ օրը. սրա համար խանն ասաց, թե կտանեմ քեզ ինձ հետ կաթողիկոսի մոտ և կհաշտեցնեմ»:

Իսկ մյուս օրը կաթողիկոսի կոշուներին գալիս խանը վար-դապետին իր հետ տարավ. իսկ երբ եկավ խոսելու ժամը, խանը կաթողիկոսին ասաց. «Արդ՝ իմ սրտի ցանկությունը այս է կամենում քեզնից, որ դու հաշտվես վարդապետի հետ և լինեք իբրև հայր ու որդի, որովհետև թեպետ շրջում է ժողովրդի մեջ, դատապարտության ոչ մի գործ կամ վնաս չի անում՝ ոչ ինձ, ոչ քեզ, ոչ էլ ժողովրդին, և ես կամենում եմ, որ ձեր միջև խաղաղություն ու սեր հաստատվեն»: Իսկ կա-թողիկոսը երբ տեսավ, թե ինչ որ մտքում մտածել էր և խո-սել էր խանին, այնպես շեղավ, այլ դրան հակառակ: Եվ չը-նայած չէր կամենում հաշտվել, բայց և խանի հրամանին ընդդիմանալ անկարելի էր համարում, որովհետև նրա սիր-տը շահելու համար էր հրավիրել, մանավանդ այնքան պատ-վավոր մարդկանց մեջ, և իր սեղանի շուրջը, իր տանը: Այդ պատճառով ակամայից առերես ու կեղծ սրտով հաշտվում է վարդապետի հետ ըստ խանի հրամանի: Խախտանքից հե-տո, երբ խանը պատրաստվում էր գնալու, կաթողիկոսին ասում է. «Այս վարդապետը այս գիրքը հանձնվում է քեզ, իսկ վաղը քո ինձ մոտ գալու ժամանակ քեզ հետ կբերես, որովհետև դրա հետ գործ ունեմ»:

Իսկ առավոտյան կաթողիկոսը ինքը շնաց, այլ իր եպիս-կոսոսանքից մեկին դրեց վարդապետի հետ, ուղարկեց խա-նի մոտ: Իսկ խանը պատվեց, զգեստանվեր տվեց վարդա-պետին, որովհետև նրա վրա զցեց թանկագին ու ոսկեհու-կապա: Գարձյալ կանչեց նույն զինվորին, որ վարդապետին բերել էր և ասաց նրան. «Արդ՝ կառնես այս վարդապետին և կտանես, կհասցնես այնտեղ, որտեղից բերել ես սրան և կը-հանձնես տեղի մարդկանց, ապա կդառնաս այստեղ»: Իսկ զինվորը և վարդապետը խոնարհություն արին իշխանին, ելան նրա մոտից գնացին դեպի Գողթան գավառը:

Արդ՝ այս գործի կատարումը նմանվեց այն բանին, որ կատարվեց Բաղակ թագավորի հետ¹¹⁵. Ինչպես որ նա վար-ձեց Բաղայամին, որ սա անիծի Իսրայելը, իսկ Բաղայամը եկավ, օրհնեց Իսրայելը: Սույնպես էլ կաթողիկոս Մելքիսեթը զրդեց խանին, որպեսզի պատժի վարդապետին, իսկ նա բե-

* Գավրիթեցին եկառի ունի Աստվածաշնչի խոսքը. «Որպես սահանք ըրոյ, նոյնպէս սիրտ թագաւորի ի ձեռս Աստուծոյ, ընդ որ կոյս կամի հա-լեցուցանել, դարձուցանէ (Առաք. ԻԱ 1):

րեց, ամենքի առջև պատվեց և զգնատանվերով ուղարկեց իր գործին: Այստեղ էլ Սողոմոնի խոսքը կատարված է տեսնվում. «Մեղավորը նայում է արդարին և մտածում է սպանել նրան, բայց տերը նրան չի թողնում նրա ձեռքում և չի զատապարտում նրան, երբ դատում է նրան»:»

Երբ վարդապետն ու զինվորը Երևանից ելան, գնացին Գողթան գավառը, հասան Շոռոթ գյուղը և այնտեղից ելան, կամենում էին գնալ Յղնա գյուղը: Եվ մինչդեռ ճանապարհին գնում էին, երբ մոտոցան նորակերտից եկող և Բղեի ընթացող զետին և տակավին չէին հասել զետին, տեսան այնտեղ հովտում արածող վայրի այծյամներ, որոնք տասներկուսն էին: Վարդապետը նրանց իր մոտ կանչեց, և այծյամները եկան նրա մոտ. իսկ զինվորը շփուտ, որ վարդապետը այծյամներին կանչել է, բանդի վարդապետից հեռու էր: Երբ (զինվորը) տեսավ կանգնած այծյամներին, անմիջապես լարեց ազդը, որպեսզի այծյամներին նետահարի. իսկ այծյամները անմիջապես խրտչելով այնտեղից հեռու ցատկեցին, որտեղ կանգնած էին և սկսեցին փախչել լեռան կողմը: Իսկ վարդապետը ետ նայելով՝ տեսավ, որ զինվորն այդ արեց, զինվորին սաստելով դադարեցրեց, ապա կրկին կանչեց այծյամներին և ասաց. — «Եկեք, տիրոջից օրհնվածներ, եկեք ինձ մոտ, ոչ ոքի չեմ թողնի, որ ձեզ վնասի»: Եվ նրանք իրրև մտավոր ու բանական մարդ դարձյալ եկան վարդապետի մոտ և կանգնեցին նրա առջև: Իսկ վարդապետը, մոտենալով նրանց, ձեռքով շփում էր նրանց վրա և քորքորում նրանց պարանոցներն ու թիկունքները, զգվանքով ողջագործում էր նրանց և նրանց հետ խոսում էր իբրև բանականի հետ:

Երկար ժամանակ կանգնած էին նրա առջև, և հետո նրանց ասաց. «Այժմ խաղաղությամբ գնացեք ձեր արտոնները, և տերը կպաշտպանի ձեզ ըստ ձեր կարիքների»: Իսկ նրանք ճամփա բռնելով գնացին լեռան կողմը իրենց ընթացքով:

Զինվորը այդ բանի վրա կանգնած էր զարմացած ու ապշած, իսկ սուրբ վարդապետը սկսեց նրան պատմել սուրբ

Թաղեսու առաքյալի արած հրաշալիքները, որ վայրի եղնիկները բերեց Ոսկյանների¹¹⁶ առջև:

Զինվորը վարդապետին տարավ հասցրեց Ազուլիս գյուղաքաղաքը, հանձնեց նրանց, իսկ ինքը վերադարձավ Երևան խանի ծառայության: Նա պատմում էր բոլոր հրաշքները, որ ինքը տեսավ՝ ամենքի առջև փառավորելով մեր Քրիստոս աստծու անունը:

Իսկ այն մարդիկ, որոնք նախանձախնդիր էին վարդապետի նկատմամբ, երբ տեսան, թե մատնություններ, որ արին Ամիրզունա խանի մոտ, շարողացան վնասել վարդապետին, սույն օրինակով մի մատնություն էլ արին Ղառչա խանի մոտ, որ ավելի գոռոզ էր, փառքով ու ամեն որպիսությամբ Ամիրզունա խանից ավելի մեծ: Ղառչա խանը իշխում էր Թավրիզ քաղաքի վրա. սրա մոտ գնաց Մելքիսեթ կաթողիկոսն ինքը և ուրիշներ եկեղեցականներից ու աշխարհականներից և ամբաստանեցին Պողոս վարդապետին: Ղառչա խանը զինվորներ ուղարկեց, Պողոս վարդապետին տարավ Թավրիզ, իսկ գործի ավարտը այնպես եղավ, ինչպես Ամիրզունա խանի մոտ, և սյանով ամօթապարտ մնացին նախանձորդները:

Կա նաև մեկ այլ պատմություն, ինչպես որ դրելու ենք առաջիկայում Անդրեաս քահանայի նահատակության պատմության գլուխներում, թե (ինչպես) մատնեցին Պողոս վարդապետին ու Մովսես վարդապետին Շահ-Աբաս թագավորին, որոնց բռնելով (շահը) առավ երեք հարյուր թուաման տուգանք, և այսա՝ թողեց: Սրանք արձակումից հետո ելան, ավելի համարձակ քարոզեցին կենաց խոսքը, որովհետև ինքը՝ նբբատես Շահ-Աբասը իր մտքով նկատեց ու դիտեց նրանց, որ նրանց մեջ կեղծավոր որևէ բան չկա, այլ աստծու ճշմարիտ ծառաներ են:

Կան սուրբ վարդապետ Պողոսի վարքի ու հրաշքների այլ պատմություններ ևս, որ ցավադարներ, դիվաճարներ բժշկեց և այլ այսպիսիք, բայց այսբանն էլ բավական է ծանոթացնելու համար նրա ամեն որպիսությունը:

Ամեն անցքերը պատմելուց հետո, մեկը ևս ավելի գերազանցներից: Մինչդեռ Պողոս վարդապետը քարոզությամբ շրջում է քրիստոնյաների (հայերի) մեջ ըստ իր մշտական սո-

* Սաղմ. 12 32.

ՏՆԻ ՄՈՎՍԵՍԻ ՎԱՐԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՔՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ, ՄԻՋՍՄԱՆԱԿ ԷԶՄԻԱՍՆԻ ԼՈՒՍԱԿԱՌՈՒՅՑ ՍՈՒՐԲ
ԱՔՈՒԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեծազնատ, սրբաանունդ և բարեփառ մեր տեր Մովսես կաթողիկոսը Սյունյաց երկրի Բաղք¹¹⁷ գավառի, որ այժմ Աճանան է կոչվում, Խոտանան կոչված գյուղից էր Գեռես տասնհինգ տարեկան էր՝ ավել կամ պակաս, նրան քահանայության աստիճան տվին և օրհնեցին կուսակրոն արեղա: Նրան բախտ վիճակվեց հանդիպել տիեզերալույս վարդապետ Սրապիտինին, որին առնչակից դատնալով՝ աշակերտեց նրան: Բայց Սրապիտնի վախճանը շուտ վրա հասավ. այդ ժամանակ տեր Մովսեսը ուսմամբ ու տարիքով տհաս էր: Բայց Սրապիտն վարդապետը մտքով նկարել և հոգով իմացել էր, որ տեր Մովսեսի վրա աստվածային շնորհք է երևում, որի համար սրտացավորեն հոգաց նրա մասին: Իր մոտ կանչեց իր ավագ աշակերտ կեսարացի Գրիգոր վարդապետին և տեր Մովսեսին նրան հանձնարարեց՝ ասելով. «Սրան քեզ եմ հանձնում, որպեսզի իմ փոխարեն սրան հովվելով պահես և հասցնելով արքունքի հասակի և վարդապետական ուսման տաս վարդապետական գավազան ու պատիվ, իսկ իմ օրհնությունը լինի քո և սրա վրա»:

Սրապիտնի վախճանից հետո տեր Մովսեսը մնաց Գրիգոր վարդապետի մոտ իբրև նրա աշակերտ: Քիչ տարիներ անց, տեր Մովսեսը թույլտվություն խնդրեց Գրիգոր վարդապետից, որպեսզի գնա Երուսաղեմ ուխտի ու երկրպագության մեծ աստված Քրիստոսի մարդեղության վայրերին: Նա թույլատրեց, իսկ տեր Մովսեսը եկավ, գնաց հասավ Երուսաղեմ և տիրոջ բոլոր մարդեղության տեղերին ուխտ արեց: Ապա այնտեղից գնաց Եփրատի երկիրը և շրջեց զպտիների վանքերն ու անապատները, որովհետև շատ վանքեր ու անապատներ կան, որտեղ բնակված են բազմախումբ միաբանների կրոնավորական կարգերով ու դրվածքով, որոնք ամեն ինչով կարգավորված են եկեղեցիների, բնամատեղների, զգեստների, խցակցության, կրոնավորական ժուժկալության և այլ ամեն բաների: Նրանց մեջ շրջելով, հարցնելով ու տեսնելով՝ ամեն ինչին տեղեկանում էր. թեպետ ինքը՝ տեր Մովսեսը

վորություն, նրան պատահեցին Մելքիսեթ կաթողիկոսի եղբորորդի Սահակ կաթողիկոսը և նրանց համախոհներից ուրիշներ: Եստ օրեր տանջեցին նրան, ասելով՝ լռիր դու քո քարոզությունից: Իսկ Պողոս վարդապետը չէր կամենում լռել, որովհետև խիստ ցանկանում էր և փութեռանդ էր քարոզության մեջ: Բայց հակառակորդները մշտապես խիստ բազմահնար խորամանկության շղթաներով և զրպարտության մեքենաներով ճմլեցին, կորացրին նրան՝ ասելով. «Դու այլևս չպետք է շրջես ժողովրդի մեջ և քարոզես, այլ մեզ մահմեդականներին վկայություն ստորագրություն տուր, թե եթե այսուհետև քարոզես, լինես թաղավորի թշնամին և մահվան ու սպանման ենթակա»: Եվ շատ օրեր հակառակորդները բազմազան ձևերով ճնշեցին վարդապետին, որը մնաց ճարահատ, քանի որ նրանց դիմաց միայն ինքն էր առանց որևէ օգնականի: Չնայած քրիստոնյաներից շատ բարեկամներ ու սիրողներ ունեյր վարդապետը, բայց հակառակորդների երկյուղից ոչ ոք չէր հանդգնում վարդապետին օգնել: Այս պատճառով մնաց ճարահատյալ և նրանց ստորագրություն տվեց հետևյալ ձևով. «Ես Պողոս վարդապետ ստորագրություն եմ տալիս, որ այսուհետև չեմ շրջի ու չեմ քարոզի, իսկ եթե սրանք անեմ, ես լինեմ թաղավորին թշնամի»: Երբ հակառակորդները այս ստորագրությունը Պողոսից առան, ուրախացան անասելի խնդությունը:

Այնուհետև Պողոս վարդապետը գնաց Մեծ անապատը, մնաց մենակեցություն, խցում լռեց, մշտամատուց աղոթքներով խոսակցում էր աստու հետ: Այնտեղ մնաց և անապատից դուրս չեկավ մինչև իր կյանքի վախճանը. հանգավ ի տեր և այնտեղ թաղվեց:

Սրա վախճանը տեղի ունեցավ մեր թվականության 1069 (1620) տարում: Նրա գերեզմանից բազմաթիվ հրաշագործություններ ենք լսում հիվանդների ու ցավազարների մեջ, որոնք հույսով գնում են նրա մոտ, ամեն ցավի բժշկություն են ստանում մեր Քրիստոս աստծու՝ նրան զորացնողի շնորհներով, որին փառք հավիտյանս. ամեն:

այդ բաների նկատմամբ անհոգ ու անփութ էր, բայց տընօրինող սուրբ հոգին ման տալով շրջեցնում էր այսպիսի կրոնավորական կարգերի մեջ նրան ուսուցանելու ապագա ժամանակների համար, որպես և պետք է եկավ Մեծ անապատի կարգավորության ժամանակներում: Տե՛ր Մովսեսը Եգիպտոսից դառնալով եկավ Երուսաղեմ և եղավ Սուրբ Հարության տաճարի լուսարար:

Այդ ժամանակ պատահեց, որ պարոն Սարգիսը և տեր Կիրակոսը այնտեղ էին, որոնց մասին գրեցինք, թե եղան անապատի ու կրոնավորական կարգերի սկզբնավորողներ: Սըրանք գտնվում էին Երուսաղեմում, շրջում էին այն երկրում, հունաց վանքերում, Հորդանան գետի եզրերին, Փորձության լեռան վրա և որոնում էին ուշադրությունից զերծ ու անգայթակղիչ անապատի տեղ, բայց ըստ պատշաճի չէին գտնում: Այդ առթիվ տեր Մովսեսը ասաց. «Այդպիսի տեղ, որ որոնում եք, [հայոց] արևելյան երկրում շատերը կան, մանավանդ Սյունյաց աշխարհում, որոնց ես իսկն ականատես եմ. այն աշխարհում շատ ավելի պատշաճ է անապատ շինել, որովհետև բուն Հայաստանն է. վանքեր, գյուղեր ու քրիստոնյա ժողովուրդ շատ կան, ուստի անապատի բոլոր կարիքները կլրացվեն: Նաև ինքը տեր Մովսեսը հանձն առավ, որ երբ նրանք ժամանեն այն երկիրը և որևէ տեղ անգորրանալով գետեղվեն, որտեղ էլ ինքը՝ տեր Մովսեսը լինի, ամեն ինչ կթողնի այնտեղ, նրանց մոտ կժամանի և նրանց հետ կրնակվի իբրև միաբան: Արդ՝ այսպիսի հորդորող խոսքով նրանց ուղարկեց Արևելյան վերին աշխարհը [Սյունիք], ինքը մնաց Երուսաղեմում: Սուրբ Գրիգոր եպիսկոպոսի, որ սուրբ Հակոբի առաջնորդն էր, հրամանով [Մովսեսը] գնաց նվիրակության Երուսաղեմի համար և, քրիստոնյաներից մեծ քանակությամբ արդյունքներ հավաքելով, բերեց Երուսաղեմ Գրիգոր եպիսկոպոսի առջև:

Ապա Երուսաղեմից ելավ, եկավ իր վարդապետ Գրիգոր Կեսարացու մոտ, որը Կոստանդնուպոլսում էր, քանզի թագավորական հրամանով նստել էր իբրև քաղաքի առաջնորդ՝ պատրիարք կոչումով: Մի քանի տարի մնալով իբրև Գրիգոր վարդապետի աշակերտ պարկեշտ և սրբակրոն վարքով՝ ոչ պերճապաճույճ և փափուկ հագուստով, որպես այդ ժամա-

նակ ուրիշներն էին, այլ կոշտազգեստ էր, պահեցող, որ շաբաթ և կիրակի օրերն էր [պասը] լուծում նավակատիքի¹¹³ կերակուրներով՝ զերծ մսից ու զինուց, մշտապես սաղմոսերգող և պատարագամատույց:

Այս բանին հավանելով ու հաճելով Կոստանդնուպոլսի ողջ ժողովուրդը՝ եկեղեցականներ, աշխարհականներ և երևելի մարդիկ, օրինակ՝ Շահին շալաբին², որ թագավորի արքունիքում նշանավոր մարդ էր, և ուրիշ շատեր: Նաև Արևելյան երկրի վաճառականները, որոնք պատահեցին Կոստանդնուպոլսում, մանավանդ ջուղայեցիներն ու գողթնեցիները, քանի որ գիտեին, թե Մովսեսը Արևելյան աշխարհից է, ամենքը մոտենալով Գրիգոր վարդապետին՝ խնդրում էին տեր Մովսեսին վարդապետություն շնորհել:

Իսկ Գրիգոր վարդապետը ահարկու և շատ գոռոզ մարդ էր և դժվարահավան, բայց տեսնելով տեր Մովսեսի քաղցր, սրբասեր բարքը և պարկեշտ վարքը, նաև ժողովրդի վկայությունը, շեղավ շտոյ, այլ ըստ նրա անձի և ողջ ժողովրդի վկայության նրան վարդապետական գավազան տվեց մեծ հանգեսով: Այնուհետև տեր Մովսես վարդապետը բոլոր եկեղեցիներում անխափան, վճիտ ու պայծառ քարոզությամբ քարոզում էր Քրիստոսի ավետարանը:

Տարիներ հետո Գրիգոր վարդապետի հրամանով Մովսես վարդապետը ուղարկվեց գնալ ինքնագլուխ քարոզությամբ շրջագայելու: Նա ելավ Կոստանդնուպոլսից եկավ հասավ Տիգրանակերտ քաղաքը, որտեղ էր Սրապիոն վարդապետի տապանը: Նրան սուրբ տապանի միջոցով համբուրեց և, նըրանից օրհնություն առնելով, ելավ այնտեղից՝ վասպուրական [Վան] քաղաքով եկավ Թավրիզ և այնտեղից իր հայրենի աշխարհը՝ Սյունյաց գավառը, Տաթևի վանքը: Սրա գալստյամբ եղավ անպատմելի ուրախություն ամենքի համար՝ եկեղեցականների և աշխարհականների: Նրան առաջինը սիրով ընդունեցին Տաթևի վանքի միաբանները՝ եպիսկոպոսներ, արեղաներ, բայց հետո ետ կանգնեցին նրանից, քանզի նրա քարոզությունը չընդունեցին: Այդ պատճառով Տաթևի վանքից դուրս գալով՝ գնաց Մեծ անապատը՝ Սարգիս եպիսկո-

² Չալաբի հայերին տրվող պատվանուն էր Թուրքիայում:

պոսի և տեր Կիրակոսի մոտ ըստ իրենց նախկին ուխտադրու-
թյան, որ Երուսաղեմում պայմանավորված էին: Այնտեղ
անապատում իր բնակության համար դադար առավ և ժա-
մանակ առ ժամանակ ելած շրջում էր քրիստոնյաների մեջ
[հայերի] և քարոզում աստծու պատվիրանը, վերստին վե-
րադառնում անապատը, որովհետև ինչպես որ ձուկը ջրից
դուրս գալով մոտենում է մեռնելու և նորից ջուրն ընկնելով
կենդանանում է, այնպես էլ սա անապատից ելնելով և անա-
պատ մտնելով:

Իսկ Մովսես վարդապետի քարոզությունը ողջ ժողովուր-
դը խնդրությամբ էր ընդունում, սիրով էր կատարում և ուրա-
խությամբ փառավորում էին աստծուն՝ մարդկանց այդպիսի
շնորհներ տվողին: Բայց գավառի նպիսկոպոսները և վան-
քերի արեղաները չէին ախորժում Մովսեսի քարոզությունը,
որովհետև Մովսես վարդապետը ինչպես ինքը մերկ էր ամեն
աշխարհիկ նյութականությունից, պասով, սրբությամբ և
կրոնական վարքով էր ապրում ըստ գրքերի պատվիրանների:
սույնպես էլ քարոզում էր, որ բոլոր վանականները լինեն:
Իսկ նրանք արհամարհելով նրա խոսքերը՝ չընդունեցին,
որովհետև հայոց ազգի բոլոր վանքերում յուրաքանչյուր
սևազուխ ուներ իր սեփական հարստությունը՝ ալգի, ծաղ-
կաստան, փեթակ, տուն, մառան, ամբարներ, եկամուտներ:
Նաև ընդհանուր վանքի եկամուտը բաժանում էին իրար մեջ:
Եվ այդ ամենը ծախսում էին իրենց, իրենց ազգականների,
իրենց հաճելի մարդկանց կարիքների համար: Եվ աստծուն
նվիրված վայրերը, որոնք սքանչելագործ սրբերի և աստծու
շնորհները կրող հրաշքների բնակարաններ են, լցված էին
կանանցով, տանտիկիներով և իրենց ազգականներով:

Ինչպիսիք չգիտեին, որ կրոնավորը պարտավոր է վեղար ու
փիլոն կրել կամ կոշտ ու բրդյա հագուստ հագնել, այլ որ-
պես աշխարհական և մարմնավոր իշխաններ, թանկագին հա-
զուստներով պնդվում էին, անդրավարտիք, կապա, թանկա-
գին զլխարկ գլուխներին և մեկնոց էին վրաները առնում:
Նաև չէին համարում, թե վանականները պարտավոր են պա-
սով, ծոմական տքնությամբ կյանք վարել, այլ ամբողջ տա-
րին անխտիր ուտիս ճաշեր, միս էին ուտում և գինի խմում:
Այդպես էլ գյուղական քահանաները անուսով էին միայն

քահանաներ, բայց ոմանք ստանձնում էին մեկընթացի, ու-
մանք տանուտերության իշխանություն, ոմանք պոռնիկներ ու
երկկանայք էին, ոմանք միանում էին այլազգի իշխաններին
և դառնում նրանց շար գործերի արբանյակներ, քրիստոնյա-
ների մատնիչներ: Ոմանք մարմնական արհեստներով և հո-
գազործությամբ էին զբաղվում իրրև աշխարհականներ՝ բո-
լորովին լքելով ժամն ու պատարազը: Աղոթքի ժամին եկե-
ղեցի չէին գնում, և գյուղերում ժամկոչի* ձայն չէր լսվում:
Նրանցից լրիվ վերացել էր քահանայության շնորհը, բայց տա-
կավին իրենց քահանաներ էին անվանում և քահանայական
գործ էին անում ոչ իրրև քահանաներ, այլ իրրև արհեստա-
վորներ իրենց մարմնական վարձի համար:

Ոչ միայն գյուղական քահանաներն ու արեղաները ըստ
ասածիս անուղղա կարգականոնով թափառում էին, այլև կա-
թողիկոսները, որովհետև մեկը չէր, այլ երեք և շուրս կաթո-
ղիկոսներ և այն էլ՝ փառամոլության ու ազատության պատ-
ճառով իրրև մաքսավորներ կապալով ու հարկով պարսից
թագավորից գնում էին կաթողիկոսական իշխանությունը և
Մուրթ աթոռ էջմածինը: Եվ ժողովրդի մեջ շրջագայելի թա-
գավորական ծառա և այլազգի զորականներ էին շրջեցնում
իրենց հետ և ժողովրդի տուրքը, հասը ճշտվել և ուժի բռնու-
թյամբ առնում էին ինչպես Հեղիի որդիները¹⁰, Եվ կաթո-
ղիկոսները, ինչպես իրենք դրամով ու կաշառքով կաթողի-
կոսական աստիճան էին ստանում, այդպես էլ իրենց ձեռ-
նադրած եպիսկոպոսները, քահանաները տղետ, խոտան, ան-
պետք ըստ Սաղմոսի, որոնք որովայնի պաշտոնյաներ** էին,
մշտապես գինաբրուքի մեջ շրջում էին գուսաններով ինչպես
մարմնավոր իշխաններ առավտից մինչև երկոտ, հետևում
էին կատակների, լկտի խոսակցությունների և դատարկա-
մտություն:

Եվ սրանց բոլորի պատճառը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հե-
ռացումը Աստվածաշնչից և աստծու երկյուղից. բնավ գրքեր

* Ժամկոչ կարծում եմ պետք է ժամական [եկեղեցի կանչելը] հառ-
կանել, որ կատարվում էր զանգահարությամբ:

** Զի այդպիսիքն տեսն մերոյ Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իրեանց
որովայնի [Հոովմ. ԺԶ 18]:

չէին կարողում, աստվածային մատչանները փակվել ու լռել էին, որովհետև խափանվել էր Աստվածաշնչի ընթերցումը, որ արհամարհված էր նբանց աչքում. հողով ու մոխրով պատված ընկած էին որևէ անկյուն, որովհետև ըստ տիրոջ խոսքի ոչ գիրք էին ճանաչում, ոչ էլ գրքերի զորությունը*:

Արդ՝ եթե եկեղեցականները այսպես էին, ի՞նչ ասեմ աշխարհականների մասին, որոնք բնավ չգիտեին, թե քրիստոնյաները պարտավոր են խոստովանել, հաղորդվել, կամ ամեն օր աղոթատեղ այցելել, նաև պատճառով ու գինիով փշացնում էին. ոմանք կնաթող էին, ոմանք երկկին, չճաս և ազգապղծության մեղքերով շողախված:

Իսկ եկեղեցիներն ու վանքերը՝ բոլորն անշուք ու անպատիվ, զարդերն ու սպասքները՝ բոլորովին կոզոպտված, մինչև իսկ սուրբ սեղանը՝ ամենևին մերկ ու բաց: Երկար ժամանակ փակված դռներով, խավար ու անլույս, պաշտամունքից ու պատարագից լուռ, շինվածքը ավերված ու խախտված, տանիքն ու պատերը իբրև անտեր ու այրի՝ զրկված փեսայից, օտարացած որդիներից, նստած թախծատ ոգով ու անմխիթար լալիս էին մարդու երեսին¹²⁰:

Արդ՝ բազմապատիկ ավելի քան ինչ որ շարադրեցինք, աղավաղված ու եղծված էր բարեկարգությունը հայոց վերին աշխարհից¹²¹: Դրա փոխարեն արձանացել ու արմատացել էր անկարգությունը: Այս պատճառով վշտանում և հոգու շափ ցավում էին այս տգետ մոլորությունների վրա այս երկու սուրբ վարպետները՝ Մովսեսն ու Պողոսը, որի որպիսությունը անցյալ գլխում ծանոթացրինք: Պողոս վարդապետը Մովսեսից քիչ ժամանակ ավելի առաջ էր եկել Վերին երկիրը [Սյունիք] և իր մենակության պատճառով հակառակորդները ճնշում էին նրան, իսկ երբ Մովսես վարդապետը եկավ, իրաք զորավիգ լինելով բոլոր գավառներում համարձակ քարոզում էին: Այս երկու վարդապետները, պարոն Սարգիսը և տեր Կիրակոսը՝ հիշված մյուս մարդականցով, որոնց Մեծ անապատի գլխում հիշատակեցինք, նախ՝ անապատի ու կրոնավորության այն ամեն կարգն ու զրվածքը սահմանեցին, որոնք

* Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. Մոլորեալք, ոչ դիտէք զգիրքս և ոչ զզօրութիւն Աստուծոյ [Մատթ. ԻՔ. 29]:

գրքերի ընթերցումով գտան և որոնք Մովսես վարդապետը զփթինների անապատում տեսել ու սովորել էր, ապա նրանք անապատում մնալով աղոթում էին աշխարհի փրկութեան համար և նույն աղոթքով նպաստում էին վարդապետներին՝ խնդրելով սուրբ հոգուց օժանդակելու նրանց կենաց խնսքի քարոզության մեջ: Իսկ երկու վարդապետները՝ Պողոսն ու Մովսեսը հավատքի ամուլներ լինելով՝ շրջեցին մեր Արևելյան աշխարհի բոլոր գավառները, ամենքին քարոզում էին ճշմարտությունը, շինում էին եկեղեցիներ, կարգում էին քահանաներ, հաստատում էին դպրոց, սովորեցնում էին մանուկներին, որովհետև առաքելաբար հետիոտն շրջում էին՝ գնալով. որևէ մեկից ոչինչ չէին վերցնում, այլ միայն ուտելիք, իսկ ամբողջ շաբաթը պաս էին պահում, միայն կլոր տարին շաբաթն և կիրակի օրերն էին նավակատիքի կերակուրներով ճաշակվում, իսկ գինուց ու մսից ամենևին հեռու էին:

Իսկ Վերին աշխարհի [Սյունիքի] քրիստոնյաները [հայերը] լսելով նրանց ճշմարիտ քարոզները և տեսնելով նրանց գործերը՝ բոլորը ետ կանգնեցին իրենց թշուր ճանապարհից, հնազանդվեցին նրանց կարգերին ու սահմանադրությանը՝ իշխաններ, եպիսկոպոսներ, քահանաներ և նշանավոր մարդիկ բոլոր ռամիկներով հանդերձ: Բայց շատ անվանի մարդիկ՝ եկեղեցականներ ու աշխարհականներ, ոչ միայն չընդունեցին նրանց քարոզները, այլև հակառակվում էին, կենսամոլ ու խաբերա անվանում, և նրանց սահմանած կարգերը իրենք և իրենց արքայականներն էին խանգարում, ուր որ հասնում ու կարողանում էին:

Բայց հակառակության այս գործը անում էին թշուր ու օրինազանց մարդիկ, որոնց հաճելի չէին ճշմարտության ճանապարհները. վարդապետների մասին չարահամբավ լուրեր էին տարածում և նրանց ամբաստանում. նրանց ամբաստանության լուրը մինչև անգամ հասավ երկրի այլազգի իշխաններին՝ խանին ու սուլթանին, մանավանդ Մեթիսեթ կաթողիկոսին, որը թագավորական բռնությանը էր վարում կաթողիկոսության իշխանությունը: Որովհետև ինքը նույնպես ուղիղ ճանապարհի վրա չէր, այդ պատճառով տեղի էր տալիս այնպիսիների ամբաստանությանը և նրանցից նյութ առնելով

նեղում էր վարդապետներին: Շատ անգամ կաթողիկոսը պատահելով այստեղ-այնտեղ՝ նրանց սահմանած կարգը խախտում էր և նրանց կողմից առաջ քաշված անձանց ետ էր մղում, իսկ նրանց կոպիտ խոսքերով սպառնական պատգամներ էր ուղարկում:

Նաև վարդապետները հանդիպեցին կաթողիկոսին և նույն անարգալից խոսքերը լսեցին նրանից: Որովհետև թագավորական իշխանությունը էր խրոխտանում վարդապետների վրա, և այնքան վտանգեցին վարդապետներին, մինչև որ Պողոս վարդապետից ստորագրություն առան, որ այլևս չի շրջի քրիստոնյաների [հայերի] մեջ և չի քարոզի, ինչպես նախօրոք պատմեցինք նույնին վերաբերող գլխում*:

Իսկ երբ այնպես եղավ, որ Պողոս վարդապետին մի կողմ մղեցին և Մովսես վարդապետին միայնակ գտան, սկսեցին սաստիկ մրցանքով մաքառել նրա դեմ և նրան այնքան նեղը լծեցին, մինչև որ Մովսես վարդապետը ինքն իր փիլոնը, գավազանը և գորգը ուղարկեց Մելքիսեթ կաթողիկոսին՝ ասելով. «Որովհետև շես կամենում մեր քարոզությունը, ահա և առ քեզ մեր իշխանությունը, իսկ մենք լռելով կղաղարենք քարոզելուց, և եթե դրա առիթով որևէ մեղք լինի, դու պատասխան կտաս աստծուն»: Իսկ բարիքներ կամեցող աստված, որ ամեն ինչ տնօրինում է, Մովսեսի արարքը հաճելի շարեց Մելքիսեթի խորհրդակիցներին, դրա համար համոզեցին Մելքիսեթին՝ Մովսեսի իշխանությունը չառնել, այլ իր գավազանը իրեն վերադարձնել և հրաման տալ քարոզության: Մելքիսեթը այդպես էլ արեց:

Թեպետ Մելքիսեթը Մովսեսին քարոզելու հրաման տվեց, բայց նենդելուց չղաղարեց, քանզի անընդհատ ճնշում էր, գատափետելով պարտավոր էր դարձնում ու զրպարտում, ինքն ու իր համախոհները անխնայորեն նրա վրա նեղություններ էին բարդում:

Մովսես վարդապետը դրանց արարքներից զղված, ոգով շափ դառնացած, ձանձրացած, սրտով վհատված ու լքված մտածում էր տիրոջ խոսքը. թե՛ «կհալածեն ձեզ այս քաղաքից, փախեք մյուսը**»: Մտածեց հեռանալ Արևելյան աշխարհից և դնալ արևմտյան աշխարհը և այնտեղ գտնված քրիստոնյաներին քարոզել: Այս դիտավորություններ ելավ, եկավ Երևան քաղաքը, որպեսզի այնտեղով անցնի, դնա թեոփուպոլիս, որ Կարին քաղաքն է:

Այս ժամանակ Երևան քաղաքի և Արարատյան աշխարհի մեծ ու հզոր իշխանն էր Ամիրզունա խանը, որը պատահմամբ ու դիպվածով տեսավ Մովսես վարդապետին. խանը սրա մասին հարցրեց իր առջև ծառայող քրիստոնյաներին. սրանք պատասխանեցին որտեղից և ինչպիսին լինելը: Եղավ, որ մի անգամ էլ խանը պատահեց վարդապետին և որքան տեսնում ու խոսում էր վարդապետը, խանին հաճելի էր թվում, որովհետև աստծու խնամքը իր ծառային բռնավորի առջև շնորհալի է ցույց տալիս: Խանը Մովսեսին շնորհեց դնալ արևմտյան աշխարհը, այլ այնտեղ Երևան քաղաքում արգելեց: Թրավուր խանը դալիս էր և լսում էր պատարագը և գալիս էր ժամակարգության այլ արարողությունների պահերին և խոսում էր նրա հետ երբեմն իմաստություն, երբեմն հավատքի վերաբերյալ և լսում վարդապետի պատասխանները, որոնք ախորժելի էին ու հաճելի և լի աստծու շնորհներով: Նրա պարկեշտ վարքի համար խանը նրան սիրեց, այդ պատճառով նրան պահեց Երևան քաղաքում՝ նշանակելով կաթողիկե եկեղեցում երեք տարի:

Վաղեմի ժամանակներից սուրբ առաքյալ Անանիայի դամբարանի վրա մի վայելուչ մատուռ կար շինված, որ Երևան քաղաքի հյուսիսային կողմում այգիների մեջ էր. սա ավերակ ու անմարդաբնակ էր. սրա համար խանը վարդապետին ասաց. «Տեսնում ես, այս եկեղեցին, որ ամայի կանգնած է. այժմ լսիք ինձ ու մի գնա ուրիշ երկիր, այլ սա դարձրու քեզ բնակավայր և դաղարի: այստեղ, որպեսզի իրար մոտիկությունը ու տեսակցությունը մխիթարվենք»: Նաև ողջ ժողովուրդը՝ քաղաքացիներ, վաճառականներ աղաչելով նույնն էին խնդրում վարդապետից: Սրանց խոսքը հաճելի լինելով վարդապետի համար՝ գործի ձեռնարկեց շինելու տեղը քրիստոնյա տեղացիների ու վաճառականների արդյունքներով ու օգնություններով, որոնք սիրահասակ, առաջին էին ողորմություն սուրբ տեղի կառուցման և վարդապետի սիրու համար, որպեսզի

* Տե՛ս նախորդ գլուխը
** Մատթ. Ժ 23:

բնակվի իրենց մեջ: Այդ պատճառով շտապ շինեցին շուրջա-
նակի պարիսպ, խուցեր, ժամատուն, սարավույթ և այլ շատ
տներ: Վերջացնելով բոլոր շինվածքները՝ վարդապետը իր
միաբաններով բնակվեց այնտեղ այն կարգուկանոնով ու զըր-
վածքներով, որ կարգել էին Մեծ անապատում: Նրա մոտ հա-
վաքվեցին բազմաթիվ միաբաններ, մենակյացներ, Սուրբ
գրքի իմաստուն ու սրբակյաց աշակերտներ: Մեծ և փոքր
միասին սիրով ու խաղաղ մնում էին խցում՝ միշտ կատարե-
լով աղոթքներ և Սուրբ գրքի ընթերցում:

Սրա ուղիղ ուսմունքի և բարի կենցաղավարության համ-
բավը աշխարհում ծագեծագ տարածվեց՝ Հունաստան, Քուր-
դիստան, Վրաստան, Պարսկաստան, որովհետև բոլոր երկրնե-
րից վաճառականներ էին գալիս այնտեղ, տեսնում էին ու
համբավը տանում: Մեղքիսեթ կաթողիկոսը, Մովսես վարդա-
պետի այս բոլոր հաջողություններն ու առաջադիմությունը
տեսնելով, շարունակաբար լցվում, սրտում փոթորկվում էր,
բայց չէր կարողանում Մովսեսին որևէ շար բան անել խանից
երկուդեղծով, որովհետև նա վարդապետին շատ էր սիրում:

Մեղքիսեթ կաթողիկոսը իր խորհրդակիցներով արեց այս-
պիսի խորհուրդ. սա ոչ թե աստծու փառքի ու Մովսես վար-
դապետի օգտի, այլ իրենց շահի ու օգտի համար էր, որպեսզի
շատ ինչք ու արծաթ գումարվի իրենց: Սահմանեցին, թե
Սուրբ աթոռ էջմիածնում մեռնօրհնեք ենք անում և այն
Մովսես վարդապետի ձեռքով, որպեսզի նրա համբավով շատ
երկրներից բազմաթիվ մարդիկ հավաքվեն, որոնցից մեզ
շատ ինչքի ու արծաթի շահ լինի: Այս պատճառով Մեղքիսեթ
կաթողիկոսի եպիսկոպոսներից ոմանք եկան Մովսես վար-
դապետի մոտ և նրան մեծարեցին Մեղքիսեթ կաթողիկոսի
խոսքով, որ գա էջմիածին և մեռնօրհնեք անի: Մովսես վար-
դապետը այդ ժամանակ տակավին եպիսկոպոսության աս-
տիճան չուներ, այդ պատճառով հրաժարվեց՝ ասելով. «Ես
եպիսկոպոսության աստիճան չունեմ, այդ իմ գործը չէ, այլ
նրանց գործն է, որոնք եպիսկոպոս են»: Այս պատճառով
Մեղքիսեթ կաթողիկոսն ասաց. «Եթե պատճառը եպիսկոպոսու-
թյունն է, ես իրեն եպիսկոպոս կօրհնեմ, որպեսզի պատրվակ
չընի և գա մեռնօր օրհնի»: Իսկ Մովսեսը հրաժարվում է եպիս-
կոպոսության աստիճանից՝ իրեն անարժան համարելով, բայց

նրա աշակերտները, բոլոր քահանաներն ու ժողովուրդը թա-
խանծում էին հանձն առնել եպիսկոպոսության աստիճանը,
որի համար Մովսես վարդապետը հանձն առավ լինել եպիս-
կոպոս:

Ապա Մեղքիսեթ կաթողիկոսը եկավ սուրբ առաքյալ Անա-
նիայի դամբարանը, որտեղ Մովսես վարդապետի բնակու-
թյունն էր, որը և անվանեցին անապատ. այնտեղ (Մեղքիսե-
թը) նրան օրհնեց եպիսկոպոս ավագ երկուշաբթի օրը: Ապա
կաթողիկոսն ու վարդապետը եկան էջմիածին, և բոլոր եկեղե-
ցականները, աշխարհականներն ու ավագ հինգշաբթի օրը մեռն
օրհնեցին: Մեռն օրհնելուց հետո, շտապ ճամփու դրին ժողո-
վըրդին, քանզի բազմաթիվ երկրներից ժողովուրդ էր եկել.
որոնք, սուրբ մեռնի և էջմիածնի օրհնությունը առնելով,
գնացին իրենց տեղերը:

Իսկ ջուղայեցի վաճառականները հասնելով Սպահան քա-
ղաքը իրենց համազգայինների մոտ՝ ամենքին պատմեցին
բարեվայելուչ արարողությունների մասին, որ տեսել էին
Մովսես վարդապետից: Իսկ ջուղայեցիները՝ եկեղեցականներ
ու աշխարհականներ, լսելով այդ՝ տնչում էին վարդապետի
սիրուն և խանդակաթ սրտով փափագում էին նրա տեսությու-
նը: Նրանք պատրաստեցին նշանավոր մարդիկ՝ քահանաներ
ու աշխարհականներ, և ուղարկեցին իրրև հրավիրակ Մովսես
վարդապետի, որպեսզի գա Սպահան իրենց մեջ: Նա ջուղա-
յեցիների գլխավորը՝ Քրիստոսի ողորմությունները իրեն ար-
ժանի խոջա նազարը, գրեց իր որդուն՝ խոջա Սաֆրազին, որ
այդ օրերին Ատրպատական երկրում էր, մեծարել Մովսես
վարդապետին Սպահանում: Նրանք եկան, Մովսեսին առան,
տարան Սպահան: Իսկ նա այնտեղ ըստ քրիստոսական վար-
դապետության և ավետարանական քարոզության սիոփելով՝
մխիթարում էր նրանց և հաստատում քրիստոսական հավատ-
քի մեջ, ոչ միայն քաղաքի բնակիչներին, այլև ամբողջ շրջա-
կա դավառին: Այնտեղ որոշ ժամանակ մնալով մեծ փառքով
փառավորվեց նրանցից, ապա այնտեղից վերադարձավ Երևան
քաղաքը՝ իր տեղը:

Մինչդեռ Մովսես վարդապետը անհոգ միամտությամբ
մնում էր Երևան քաղաքում՝ իր տանը, Մեղքիսեթ կաթողիկոսը
նենգություն նյութեց նրա դեմ հետևյալ ձևով: Մի թուղթ մեջ-

տեղ հանեց իբրև ստացագիր, որտեղ գրված էր, թե՛ «Ես Մովսես վարդապետս պարտք եմ Մելքիսեթ կաթողիկոսին հարյուր թուման, զնամ Սպահան, այնտեղից վերադառնամ, տամ»:

Այս թուղթը տարան Ամիրզունա խանի դիվանը և ճշտիվ պահանջում էին հարյուր թուման: Իսկ Մովսես վարդապետը ինչպես որ անպարտ էր, նույնն էլ պատասխանում էր, թե անպարտ եմ դրանից, որովհետև այդ թուղթը ես չեմ տվել, այլ դավադրությունը ու ինչ-որ հնարքով են սարքել այդ գրությունը: Եվ թեպետ Մովսես վարդապետը բազում խոսքերով պատասխանում էր, սակայն փրկություն չէր լինում, որովհետև զրպարտիչների կողմը ճարտասան էր և շարիքներում փորձված: Իսկ խանը իր իշխաններով և բոլոր քրիստոնյաները վերահասու եղան, որ այդ թուղթը ինչ-որ հնարանք է, իսկ Մովսեսը անպարտ է, ուստի ամենքը ջանում էին փրկել Մովսեսին, բայց չէին կարողանում: Այս գործի դատը երկարաձգվեց երկու ամիս, բայց ազատարար աստված նրան փրկեց հետևյալ ձևով:

Մելքիսեթը և իր եղբորորդի Սահակ կաթողիկոսը ռս ունեին Համազասպ եպիսկոպոսի դեմ, որ Հավուց թափ վանքի և Երևան քաղաքի առաջնորդն էր: Սա խրոխտ և ճարտարաբան մարդ էր, որ ճարտարախոսություն վախեցնում էր Մելքիսեթի կողմին և իշխում էր նրանց վրա: Մելքիսեթյանները այս քեների պատճառով վնասը պահեցին Համազասպ եպիսկոպոսի վրա:

Մի օր երբ դատական ատյանում էին, Սահակ կաթողիկոսը խանի առջև ատյանի մեջ կանգնեց և ասաց ի լուր ներկաների. «Այդ թուղթը ամբողջովին զեղծ է, որովհետև ոչ իմ հորեղբայր Մելքիսեթ կաթողիկոսը գիտի, ոչ էլ ես, այլ ես գիտեմ, որ Համազասպ եպիսկոպոսն է այդ նենգությունը արել»:

Այն ժամանակ խանը և այնտեղ գտնված բոլորը ցնծություն մտնեցին աստծուն, որ անպարտին զրպարտիչների ձեռքից ազատեց: Նույն ատյանում այդ թուղթը պատեցին, իսկ Մելքիսեթյանները կորագլուխ ու ամոթապարտ գնացին իրենց տեղերը: Սրանից հետո անցան քիչ ժամանակներ, երբ մեծ Շահ-Աբաս սրբալից Ամիրզունա խանին Մովսես վարդապետի վերաբերյալ հրովարտակ եկավ հասավ, որի մեջ գրված էր, թե՛ «Ամիրզունա խան, ճանաչիր Մովսես անու-

նով վարդապետին, որ բնակվում է քո քաղաքում՝ քեզ մոտ, շտապ նրան ինձ մոտ ուղարկես, ես ուր որ լինեմ, թող դա ինձ գտնի»:

Այս որոնման պատճառը սպիտակեցրած մոմն էր, որովհետև այն ժամանակ, երբ Մովսես վարդապետը Երուսաղեմ քաղաքում էր, այնտեղ սովորեց մոմ սպիտակեցնելու արհեստը և ներկայումս ինքը ամեն տարի [մոմը] սպիտակեցնում և եկեղեցում պատարագին և բոլոր ժամերգություններին սպիտակ մոմ էր վառում, որ տերունական և նշանավոր սրբերի տոները կատարում էր մեծ հանդեսով, սպիտակ ու պայծառ մոմերով, մեծ ցնծությամբ, ինչպես որ գրված է սուրբ Հովհանն Օձնեցու պատմության մեջ¹²²:

Դարձյալ՝ թագավորները սովորություն ունեն, որ տղաներ ու աղջիկներ հավաքեն բոլոր երկրներից: Այս սովորության համաձայն նաև Շահ-Աբաս թագավորը իր նախարարներից մեկին, որի անունն էր Բայինդուր բեկ, սրա հետ նաև այլ ներքինիներ ուղարկեց Ատրպատական երկիրը թագավորի համար հավաքելու տղաներ ու աղջիկներ: Նրանք գալով եկան, հասան Երևան քաղաքը: Մի օր Բայինդուր բեկն ու Ամիրզունա խանը միասին զրոսանքի ելած շրջում էին. զրոսանելով եկան այն անապատը, ուր բնակվում էր Մովսես վարդապետը: Այնտեղ Մովսես վարդապետը բերեց սպիտակ մոմից յոթ մոմ նվիրեց Բայինդուր բեկին, յոթն էլ Ամիրզունա խանին: Բայինդուր բեկը տեսնելով մոմի առավել պայծառ, շքեղ, հրճվալի սպիտակությունը, խիստ սքանչացավ, հաճելիություն զգալով հավանեց և ասաց. «Պահեմ սա և տանեմ, նվեր մատուցեմ շահին»: Երբ Ամիրզունա խանը այս լսեց, ասաց. «Որովհետև այդպես ասացիր, իմն էլ բաժին եմ զնում քոնի հետ, որպեսզի դրա հետ նվեր մատուցվի թագավորի առջև»:

Իսկ երբ Մովսես վարդապետը լսեց իշխանների խոսքերը և տեսավ նրանց գործերը, ասաց. «Որովհետև այդպես արիք, յոթ մոմ ևս բերում ավելացնում եմ դրանց վրա, այդպես կմատուցես թագավորին»: Իսկ Բայինդուր բեկը գործերը վերջացնելուց հետո գնաց թագավորի մոտ և շատ ու զանազան նվերների հետ թագավորին մատուցեց նաև սպիտակ մոմերը, որոնք թագավորը տեսնելով՝ ձեռքն առավ մոմերը,

նայում ու գննում էր և հարցնում, թե որտեղից է: Իսկ Բաշինդուր բեկը ասաց, թե որտեղից է: Արդ՝ դրա համար թագավորը հրովարտակ գրեց Ամիրզունա խանին, որ Մովսես վարդապետին ուղարկի իր մոտ, առանց չնչին հապաղման Ամիրզունա խանը Մովսես վարդապետին ուղարկեց շահի մոտ*:

Դրա համար Մովսես վարդապետը Երևանից ելավ, գնաց Բաղդադ քաղաքը, որովհետև այնտեղ էր Շահ-Աբաս թագավորը, որ կամենում էր Բաղդադ քաղաքը ետ գրավել օսմանցիներին, որը և գրավեց քիչ օրեր անց: Մինչ տակալին չէր գրավել Բաղդադը, այլ նստած պատերազմում էր նրա շուրջը, այնտեղ Մովսես վարդապետը ներկայացավ թագավորին, երբ մեր թվականության 1075 [1626] տարին էր: Թագավորը հարցրեց մոմի սպիտակության մասին, իսկ վարդապետը առջևը կանգնած ըստ պատշաճի պատասխանում էր:

Ապա շահը հրովարտակ գրեց, տվեց Մովսես վարդապետին և ուղարկեց Սպահան քաղաքը կալաբեկ իշխանի մոտ, որ թագավորի կողմից Սպահանի քաղաքապետ էր նշանակված, որ Մովսես վարդապետին տա հարյուր լիտր** մոմ, թագավորի ծառաներից երեք ծառա և նրանց բոլոր ծախսերը հոգա: Իսկ Մովսես վարդապետը այգիներից որին հավանի, անպատճառ տան նրան, որպեսզի այնտեղ մոմ սպիտակեցնի, ծառաներին սովորեցնի, տանի թագավորի մոտ, ուր էլ նա լինի:

Մովսես վարդապետը, առնելով արքունական հրովարտակը, եկավ Սպահան քաղաքը, ցույց տվեց կալաբեկին, իսկ նա կատարեց թագավորի բոլոր հրամանները, Մովսեսին մոմ և երեք ծառաներ տվեց, որոնց անուններն էին՝ Ֆառուխ, Ղարչխա, Բեհզադ, և այն այգին, որը կոչում են Քիլիմ խանի այգի: Մովսեսը այնտեղ ութ ամիս աշխատեց, մոմը սպիտակեցրեց, ծառաներին սովորեցրեց, ապա սպիտակեցրած մոմը և ծառաներին առավ, գնաց Ֆահրապատ, քանզի շահը այնտեղ էր, որովհետև Բաղդադ քաղաքը գրավել էր և դարձել, գնացել էր Ֆահրապատ այնտեղ ձմեռելու համար. այս պատճառով Մովսեսը գնաց այնտեղ:

* Առանց որոշ լրացումների մոմերի պատմությունը արված է նաև ժողովրդում:

** Լիտրը մոտավորապես 4 800 գրամ է կամ 12 ֆունտ:

Այդ նույն օրը այնտեղ էր մեծ փառավոր իշխան ջուղայեցի խոջա Նազարը, որ խիստ բարեկամ էր Մովսեսին և հարգված Շահ-Աբաս թագավորի առջև: Սրա ձեռքով Մովսես վարդապետը սպիտակ մոմն ու սովորեցրած ծառաներին ներկայացրեց թագավորին, որը տեսնելով արքան շատ ուրախացավ, ձեռքը առավ և զվարճանում էր նրանցով ու բազում հուսադրական խոսքերով անմիջապես ճամփու գրեց վարդապետին:

Այդ օրերին եկավ վրա հասավ մեր Քրիստոս աստծու ծննդյան հայտնության տոնը. և որպես Մովսեսը սովորության ունեցող մշտապես մեծ հանդեսով էր կատարում տերուհական տոները: Եվ ավելի առավել այս տոնը [նախատեսել էր] մեծ պատրաստությամբ շատ ավելի պատշաճ կարգավորությամբ, քանզի ինքը թագավորը ևս պատրաստվել էր գալ տոնը տեսնելու և զվարճանալու, որ և եկավ: Մովսես վարդապետը թափեց երկու մարդաշափ մոմ և ճրագալույցի գիշերը լույս տոնի օրը վառեց երեկոյան սուրբ Աստվածածնի անունով, իսկ ինքը ոտքի կեցած մինչև առավոտ հսկում էր կատարում ջերմագույն սիրով և հաստատուն հավատով: Հորդարույս արտասուքներով շղթում էր առ տերը՝ տիրամայր սուրբ Աստվածածնին բարեխոս բռնելով տիրոջ մոտ, որպեսզի տոնախմբությունը շնորհալի ցույց տա այլահավատ թագավորին և նրա սիրտը գուժով ու խղճով լցնի քրիստոնյա ազգի հանդեպ: Աստծու ողորմությամբ եղավ ըստ վարդապետի խնդրանքի, որովհետև տոնի օրը մինչև արքան նստած էր զվարճանքին, իսկ վարդապետը զգեստավորված իր պաշտոնյաներով կատարում էր ջրօրհնեքի կարգը, արքան մեծ հաճությամբ էր ստացել և հավանել տոնախմբությունը: Մովսեսի նկատմամբ համակրանք էր առաջացել, ուստի թագավորը վարդապետի մասին հարցրել էր խոջա Նազարին, իսկ նա բարի խոսքեր էր ասել և թագավորի մոտ շատ էր խոսել Մովսեսի մասին:

Օրեր հետո արքան ասաց խոջա Նազարին. «Ձեր վարդապետը ի՞նչ խնդրանք ունի, որ կատարենք, գա՞նձ, կավածք կամ ուրիշ որևէ բան, ինչ ինքը կամենում է»: Խոջա Նազարը պատասխանել էր, թե՛ «Նա այնպիսի մարդ է, որ

աշխարհն ու նրա հարստութիւնը զանց է արել, և դրանցից ոչ մեկի պետքը չունի: Իսկ եթե շնորհ անես, սրան իբրև պարզև տուր էջմիածնի լուսարարութիւնը, որպեսզի այնտեղ այն եկեղեցուն սպասավորելով՝ աղոթի թագավորի կյանքի համար: Նրա [Նազարի] խնդրանքը հաճելի եղավ, և արքան շատ հավանեց, ուստի թագավորական հրովարտակով Սուրբ էջմիածնի լուսարարութիւնը տվեց Մովսեսին:

Ապա Մովսես վարդապետը Ֆահրապատից դուրս եկավ մեծ փառքով և անպատմելի ցնծութեամբ, ոչ միայն իր, այլև բոլոր քրիստոնյաների [ցնծութեամբ] եկավ, հասավ Երևան քաղաքը, ապա Սուրբ էջմիածին և առանց հապաղելու ձեռնարկեց Սուրբ աթոռի վերանորոգութեան. մեր թվականութեան 1078 (1627) տարին վարդավառի պասի երկուշաբթի օրը սկիզբ դրին շինութեան ու նորոգութեան:

Արդ՝ տեսնում ես նորոգութիւնը, բայց չգիտես, թե ինչպիսին էր ավերակութիւնը. դրա համար հարկադրված զբրտում եմ ավերակութեան մասին, որպեսզի ծանոթանան Սուրբ աթոռի թշվառութեանը, սրանով նաև այն ցավին ու կսկիծին, որ ունեին ողջ հայ ազգն ու վարդապետները ժամանակին Սուրբ աթոռի համար: Սրա հետ նաև [ծանոթանան] Մովսես վարդապետի և իր աշակերտների աշխատանքներին, քրիստոնյաների նվիրատվութիւններին ու ողորմութիւններին Սուրբ աթոռի նորոգութեան համար:

Ինչպես ասում է Դավիթ մարգարեն, թե՛ «Երուսաղեմը գարձրին ինչպես մրգապահների հյուղեր»*: Իսկ Եսայի մարգարեն Սիոնի մասին ասում է. «Սեխենիների մեջ իբրև հովանի»**: Սրա նման համարիք նաև աստվածաբնակ Սուրբ աթոռը, որովհետև բոլորովին դատարկվել էր ունեցվածքից, կողոպտվել էր զարդերից. ոչ գիրք կար, քանի որ այնտեղ ժամասացութիւն չկար, և ոչ էլ ընթերցում, ոչ զգեստ ու շուրջառ, որովհետև յա՛տարգոթիւն ու պատարագ չկային: Մինչև անգամ Զրիստոսի իջման տեղն ու սուրբ սեղանը ծածկոց չունեին: Ոչ կանթեղներ, Դրովհետև լույս չկար, այլ մըշտապես խավալի ձեռք էր, բայց մի այլազգի մահմեդական

* Մաղմ. 2Ը 1.

** Ես. Ա 8.

ձեթի ճրագ էր վառում և դնում բեմի վրա, այն էլ երբեմն-երբեմն անցորդ-ճամփորդների համար, որպեսզի տեսնելով այն՝ իրեն ողորմութիւն տան: Ոչ խնկարկութիւն, որովհետև բուրվառ ու խունկ չկար: Եկեղեցու սալարկած հատակը քանդ-քնդված էր, դարձել էր զեռունների ու սողունների բույն, իսկ ունեցած մեծամեծ լուսամուտները բոլորը բաց էին առանց շրջանակի, որտեղից թռչունները ներս էին մտնում, եկեղեցին լցնում ծիրաներով ու ծեղերով և այլ աղբերով, որոնք ամեն օր հարկադրված սրբում էինք: Իսկ առավոտյան լուսանալիս թռչունների ձայները խլացնում էին ժամասացութիւնը:

Իսկ դրսից գմբեթի զագաթը, ամբողջ տանիքը, պատերի երեսները քանդքնդված էին ու քարերը թափված, պատերի հիմքի քարերը փշրված ու ծակոտված: Վաղեմի ժամանակներից եկեղեցու շուրջը եղած շինութիւնները դարձյալ ավերված են և միմյանց վրա փլված: Հողն ու մոխիրը այնքան էին բարձրացել, որ եկեղեցու շուրջը ամեն կողմից աղբն ու հողը յոթ կանգուն բարձրացել, եկել ծածկել էր եկեղեցու հիմքերն ու աստիճանները, որ դրսի կողմից են:

Իսկ եկեղեցու կամ տան զարդերը, սպասքներ ու անոթներ բնավ չկային, որովհետև ինչ որ եղել էին հին ժամանակներից, կաթողիկոսները բոլորը վաճառելով կամ գրավ դնելով վատնել էին, և այժմ նույնպես գրավ դրված անոթներ կային մահմեդական իշխանների մոտ: Սրանք Մովսես վարդապետը ազատեց. դրանք էին սուրբ Գրիգոր լուսավորչի որդի Արիստակես հայրապետի աջը, նաև Աղջուց վանքի սուրբ Ստեփանոսի աջը, որոնց հետ խաչ, սկիհ, բուրվառ, շուրջառ և այլ իրեր:

Իմ ասած խոսքերը ցույց են տալիս, որ տեղը թափուր էր մարդկանցից. ճիշտն ասեմ, ամենևին անբնակ չէր, իսկ դու համարիք իբրև անբնակ, որովհետև կաթողիկոսները այնտեղ՝ էջմիածնում չէին բնակվում, այլ Երևան քաղաքում՝ կաթողիկե եկեղեցում կամ երկրներում շրջագայում էին: Իսկ ոմն սևագլուխներ՝ սինլոբրներ, գոեհիկներ, ինչպես գյուղացի հողագործներ, ստորին մշակների հետ բնակվում էին էջմիածնում և տարվա շատ օրերը ավելի գյուղերում էին անցկացնում, քան էջմիածնում:

Երբ Մովսես վարդապետը սկսեց նորոգումը, հողի ու մոխրի համար տարակուսում էին, որ բլրացել էր շուրջանակի, թե ինչպես կլինի պեղելու Բայց որովհետև ասածու կամքը քաղցրացել էր, և գործի ձեռնարկությունը նրա հաճությունը էր, դուրսին եղավ հողի վերացումը: Որովհետև գեաից վարար ու հորդ ջուրը բերին, հողի մի կողմը կապեցին և բազմաթիվ մշակներ գործի գրին. մշակները սկսեցին հողը փորել և խառնել ջրին. այդպես անելով՝ ջուրը հողը առած տանում էր, իսկ քարը մնում: Քիչ օրեր հետո շուտափուլթ ամեն կողմից հողը վերացավ և ամբողջ տեղը բացվեց, դարձավ հարթահատակ գետին: Մնացած քարերը շարեցին տների պատերում, որ գործին օգտակար եղավ: Ապա շուրջանակի լայն ու ընդարձակ պարիսպ քաշեցին՝ նրա վրա ութ բուրգ կառուցելով:

Իսկ շինված պարիսպը այսպես ձևեցին: Ինչպես որ եկեղեցու մեջ տեսնվում են եկեղեցու շորս խորաններ, որոնք հորինված են նրա մեջ աշխարհի շորս կողմերը ուղղված. եկեղեցու արտաքին կողմից այս շորս խորանների ճակատներից [սկսելով]: Նախ շափեցին արևելյան ճակատից դեպի արևմտ: արքի քառասունհինգ գաղ*, որ անում է վաթսուներեք հալարի**, ապա քաշեցին արևելյան կողմի պարիսպը. այսպես իմացիր նաև արևմտյան կողմինը: Սույնպես և հյուսիսային կողմի խորանի ճակատից շափեցին դեպի հյուսիս քառասուն գաղ, որ անում է հիսունվեց հալարի, ապա պարիսպը քաշեցին. այսպես իմացիր նաև հարավային կողմինը: Ապա արևմտյան կողմում պարսպի մեջ շինեցին դարբաս, տներ իրենց և հյուրերի պետքերի համար: Հյուսիսային և արևելյան կողմերում շինեցին միաբանների բնակության խցեր, իսկ հարավային կողմում շինեցին սեղանատուն, փուռ, տնտեսատուն, ցորենի և այլ նյութերի ամբարանոց: Այս բոլոր շինվածքներից միայն պարիսպն է հողից շինված, իսկ մնացած բոլորը շինվեցին տաշված քարով, թրծված աղյուսով, կրով ու գաջով, գեղեցիկ ու վայելուչ հորինվածքով:

* Գաղը մեկ մետր 12 սմ է:

** Հալարի—արաբական երկարության շափ է, որ մոտավորապես հավասար է 94 սմ:

Սրանից հետո եկեղեցու գմբեթի տանիքը նորոգեցին, քանզի սակերը քանդվել և տեղերից հեռու էին թռել: Իսկ եթե մեկը ցանկանում է իմանալ Սուրբ էջմիածնի լուսակառույց, քրիստոսանկար, աստվածաբնակ տաճարի շափը, այսքան է. հիսուն հալարի շափ երկայնքն է արևելքից դեպի արևմուտք, քառասունութ հալարի լայնքն է հյուսիսից դեպի հարավ. երեսունհինգ հալարի բարձրությունն է՝ ներսի կողմի գմբեթի պատից մինչև գետին: Այս շափերը եկեղեցու մեջ ներսի կողմին են առանց պատերի:

Եվ օրավուր նորոգում, հաստատում էր Սուրբ աթոռը, որով [հաստատում էր] քրիստոնեություն հավատի ամեն կարգ ու կրոն:

Որովհետև Սուրբ աթոռի նորոգման լուրը հռչակվելով ծավալվեց ողջ աշխարհում՝ Հունաստանում, Պարսկաստանում, Քրդաստանում, Վրաստանում, ուստի ամենքն էլ ուրախանալով ցնծում էին:

Մովսես վարդապետը նաև իր աշակերտներից ուղարկեց ամեն կողմ քարոզության, որոնք գնացին հոգևորվս քարոզությանը և բարեկրոն վարքով հաստատեցին քրիստոնեական հավատի և եկեղեցական ավանդության կարգերն ու կրքոնը, որովհետև ուր էլ գնում էին, ըստ իրենց վարդապետի նմանության ճշմարիտ գործեր էին ցույց տալիս: Եինում էին եկեղեցիներ, կարգում էին քահանաներ և պարտելով կործանում էին ճշմարտության հակառակորդներին, որի հետևանքով դորանում, առաջանում էր ճշմարտությունը: Այլև այս հոգևից սուրբ վարդապետ տեր Մովսեսը հաստատեց դպրոց Օհանավանքի¹²³ մեծափառ Սուրբ Ուխտում, որտեղ հավաքեց բազմաթիվ մանուկներ և ամենի ծախսն ու պետքերը ինքն էր հոգում, իսկ մանուկները անզբաղմունք ու անխափան սովորում էին եկեղեցական ուսումը, աստվածաշնչական զորքերը, իմաստասիրություն: Սրանք բոլորը եղան երկրին պիտանի մարդիկ և օգտակար՝ վարդապետներ, եպիսկոպոսներ, արքեպաններ, քահանաներ և բոլոր վանքերը, որ ամայացել ու խավարի մեջ էին, լցվեցին միաբաններով, արեղաներով, կրոնավորներով, իսկ գյուղերը հմուտ քահանաներով: Այս պատճառով ողջ ժողովուրդը, որ ամբողջ աշխարհում բնակված է, առաջին կաթողիկոսի անկարգությունից ձանձրացած, իսկ

սրա բարեկարգությունից մխիթարված, սիրով ու հոծարու-
թյամբ, կաթողին սրտով կամենում էին, որ մեր սուրբ հայր
Մովսես վարդապետը լինի կաթողիկոս: Ամեն տեղերից գրու-
թյուններով ու աղաչանքներով թախանձում էին վարդապետ-
ներ, եպիսկոպոսներ և նշանավոր մարդիկ, որ հանձն առնի
կաթողիկոսության աստիճան, բայց նա հրաժարվում էր՝ իրեն
անարժան համարելով առաքելական աստիճանին:

Բայց աստծու մարդ այս տեր Մովսես վարդապետը մըշ-
տապես իր հոգում վարանում, տխրում ու ցավում էր հար-
յուր թուման տուգանքի համար, անտանելի ծանր բեռ ու
անխաղի շղթա եղավ էմիածնի Սուրբ աթոռի վրա. ոչ միայն
նա, այլև ողջ հայոց ազգը [տխրում ու ցավում էր]: Քրիս-
տոսաբնակ Սուրբ աթոռի փրկության համար Մովսես վար-
դապետը շնուպացավ՝ իրեն կամ իր տկար ժերությունը խնա-
լելով, այլ ելավ գնաց արքայի արքունիքը՝ Ղազրին քաղաքը,
քանզի այնտեղ էր Շահ-Աբաս թագավորը մեր թվականու-
թյան 1077 (1628) տարում: Եվ դիմելով այստեղ-այնտեղ՝
թագավորների նախարարների մոտ, աղաչում էր նրանց
իմացնել արքային հարյուր թուման հարկը վերացնելու էջ-
միածնի վրայից: Նախարարները հարմար չհամարեցին,
ասելով. «Այս թագավորը շատ փողասեր է և ազահ. փողի
այդքան շահից չի հրաժարվի, մանավանդ որ այդ գործը ինքն
է հաստատել, որով ավելի երևում է, որ չի հրաժարվի դրա-
նից: Այս պատճառով դու պարտավոր ես լռել այս ժամին և
օրերին: Իսկ մենք հարմար ժամանակ գտնելով՝ կխոսենք
արքայի առջև: Այս պատճառով թախձալից սրտով վերա-
դարձավ Ղազրինից, եկավ Սուրբ էջմիածին:

Իսկ Շահ-Աբաս արքան ելավ Ղազրինից, գնաց Փահրապատ
քաղաքը, որ կոչվում էր Աշրավ, այնտեղ ձմեռելու: Եվ մարդ-
կային հյուժվող բնույթին համապատասխան հիվանդացավ,
մեռավ մեր թվականության 1078 (1629)) տարվա հունվար
ամսի 7-ին և կտակով հաստատեց, որ թագավորությունը
տրվի իր թոռին: Քանզի արատամիտ ու բազմախորհուրդ
Շահ-Աբաս թագավորը իր բեղիններից ոմանց սպանեց, ոմանց
կուրացրեց՝ երկուղելով, թե մի գուցե [նրանցից մեկնումե-
կին] իշխանները թագավորեցնեն: Մնացել էր մի թոռ՝ իր
ավագ որդու որդին, այս պատճառով թագավորությունը տը-

վեց իր թոռին: Բոլոր նախարարները, թագավորի տան հա-
վատարիմները հավաքվեցին թոռին թագավորեցրին և նոր թա-
գավորի անունը կոչեցին Շահսեֆի, քանի որ վիճակով դը-
րին նրա անունը. վիճակն ու կոշուքը անվանը հարմարվեց,
որովհետև նորընծա թագավորի հոր անունը Սեֆի էր: Նոր-
ընծա թագավոր Շահսեֆին թագավոր նստավ նույն թվակա-
նին՝ 1078 տարվա հունվար ամսի 19-ին:

Այս ժամանակ պատշաճ ու հարմար պահեղավ հարյուր
թուման տուգանքը վերացնելու համար: Այդ պատճառով
Սպահան քաղաքում բնակված շուղայեցի ժողովուրդը, մա-
նավանդ աստծու ողորմությունների արժանի քրիստոսասեր
մեծ իշխան խոջա Նազարը նամակ գրեցին և արագընթաց
սուրհանդակի միջոցով հասցրին էջմիածին Մովսես վարդա-
պետին, որ շուտափույթ հասնի նորընծա թագավորի պալա-
տը հարյուր թումանը վերացնելու համար: Մովսես վարդապետը
անհապաղ շտապանքով գնաց Սպահան քաղաքը՝ թագավորի
պալատը և թագավորի պալատում ութ ամիս մնալով, տես-
նելով բոլոր նախարարներին՝ հներին ու նորերին, և նրանց
սրտերը զրավեց բազմանվեր աղերսանքով:

Ապա աստծու սուրբ մարդը պատրաստեց ընծա որպես
վայել է թագավորներին, սկուտեղով զուտ ոսկի դահեկան և
այլ թանկագին իրեր, խնդրագիր, որ կոչվում է արզա: Վար-
դապետն ու խոջա Նազարը նախարարների միջնորդությամբ
ներկայացրին թագավորին: Վարդապետի վերաբերյալ արքա-
յի հարցումին խոջա Նազարը նրան տեղեկացրեց՝ պատմելով
վարդապետի ազնվության մասին, նաև թե նախածանոթ և
հաճելի ծառա էր նախորդ մեծ թագավորին՝ ըստ պապին և այժմ
աղոթող է թագավորի կյանքի համար. բայց այս խնդրանքը
ոռնի, որպեսզի արքան քննելով գթա իր տառապալ ժողո-
վրդի վրա և ծանր բեռը, որ անտեղի և զուր դրվեց մեր վրա,
այսինքն՝ հարյուր թուման տուգանք, արքան հրամայի վե-
րացնել:

Եվ արքա Շահսեֆին այնտեղ ատյանում շատ բան խո-
սեց խոջա Նազարի հետ, Մովսես վարդապետից հարցրեց
հարյուր թուման տուգանքի մասին և աստվածային ողոր-
մությամբ ու շնորհներով վարդապետի բոլոր խոսքերը դու-
րին ու խնորժելի թվացին թագավորին, քանզի ամենաթագա-

վոր աստված, որ իր ձեռքում պահում է թագավորների սրբ-
տեղը, թագավորի կամքը հաճելի դարձրեց ու քաղցրացրեց,
ուստի ի լուր ամբողջ ատյանի ասաց. «Զիջեցի հարյուր թու-
ման տուգանքը, որ պիտի տայիք թագավորի դիվանին, այ-
սուհետև կացեք ազատ և ազոթեցեք մեր կյանքի ու հաջո-
ղության համար»: Այն ժամանակ խոջա Նազարն ու Մովսես
վարդապետը և բոլոր իշխանները, որ կանգնած էին թագա-
վորի առջև, ձեռքերը բարձրացրին, գոհության ձայնով օրհ-
նեցին աստծուն ու թագավորին: Եվ ուրախությամբ ատյա-
նից արձակվեցին, գնացին իրենց տեղերը: Այնուհետև Մով-
սես վարդապետը և խոջա Նազարը ամեն օր շրջելով իշխան-
ների պալատները և դիվանական մատյանների վերակացու-
ների ու գրագիրների մոտ այնքան շարշարվեցին, մինչև որ
բոլոր մատյաններից, որտեղ որ գրված էր այդ բանը, ամեն
տեղից հանին, դուրս գրեցին:

Ապա խոջա Նազարը գրեց մի այլ խնդրագիր և մատուցեց
թագավորին՝ խնդրելով, որ տա թագավորական կնիքով հրո-
վարտակ հարյուր թուման տուգանքը վերացնելու մասին, սրա
հետ արքայից խնդրեց Մովսես վարդապետին տալ կաթողի-
կոսություն իշխանությունը: Արքա Շահսեֆին կատարեց նը-
րանց բոլոր խնդրանքները, քանի որ թագավորական կնիքով,
ազոու և հատու խոսքով հրովարտակ տվեց, թե՛ «թող վե-
րացվի հարյուր թուման տուգանքը, որը մեր թագավորներից
գրված էր ձեր էջմիածնի աթոռի վրա, այլև տրվի հրաման Մով-
սես վարդապետի կաթողիկոսության ըստ ամենայն հայոց ազգի
խնդրանքին»: Արդ՝ այսպես մեծ շարշարանքով և շատ դրամ
ծախսելով, մոտ հազար թուման, հազիվ կարողացավ վե-
րացնել հարկի ծանր բեռը Սուրբ աթոռից:

Սուրբ վարդապետ Մովսեսը թագավորական հրովարտա-
կը առավ, վերադարձավ մեծ ուրախությամբ, եկավ հասավ
աստվածաբնակ աթոռ Սուրբ էջմիածին: Սուրբ աթոռի աղա-
տության լուրը տարածվեց ընդհանուր աշխարհի հայ ազգի
մեջ. ամենքը լցվեցին անպատմելի ուրախությամբ, ցնծու-
թյան ձայնով գոհանում էին աստծուց:

Այնուհետև ամբողջ աշխարհի երեկի մարդիկ, եկեղեցա-
կաններ, աշխարհականներ [խոսքը հայերի մասին է] սկսե-
ցին առավելապես աղերսագիր ուղարկել Մովսես վարդապե-

տին. խնդրում, աղաչում էին, որպեսզի նաև մի այլ պատ-
ճառ հնարի հավատի հաստատության և եկեղեցու կարգի հա-
մար, հանձն առնի կաթողիկոսությունը: Այս խնդրագրերը
ուղարկվեցին Պարսկաստանից, Վրաստանից, Քուրդիստա-
նից, Հոռոմստանից: Իսկ մեր սուրբ հայրը ոչ թե անձնական
փառքի, որ փառավորված էր աստծուց և մարդկան-
ցից, այլ աստծու ժողովրդի օգտի և հոգևոր կրո-
նի հաստատության համար լսող եղավ ամենքի աղաչանքնե-
րին, ընդունեց կաթողիկոսական աստիճան և աստծու ամե-
նասուրբ հոգու օծմամբ օծվեց ամենայն հայոց ազգի հայ-
րապետ՝ պայծառ և պանծալի ժառանգորդ Սուրբ էջմիածնի
բարձրագահ աթոռի մեր թվականության 1078 [1629] տար-
վա հունվար ամսի 13-ին՝ տիրոջ տնօրինության [մարդեղու-
թյան] օրը: Եվ տիրոջ խոսքի համաձայն լուսավորող ճրագ՝
գրվեց բարձր աշտարակի մեջ գերագահ աթոռում՝ լինելու
լուսատու մեր Արամյան տան. և իր աստվածաշնորհ վար-
դապետությամբ մխիթարում էր բոլորին քաղցր քարոզու-
թյամբ՝ ուղղելով արդարության ճանապարհը:

Եվ մեր սուրբ հայրը մաքրակենցաղ էր ու սրբասուն, եր-
կայնամիտ էր ու ողորմած: Սրա ձեռքով շատ գերիներ ազատ-
վեցին գերիչներից, որովհետև սրա ժամանակ անհաշտ խոռ-
վություն կար պարսիկների ու օսմանցիների միջև, ուստի
ավար ու գերություն շատ էր լինում երկու կողմերից: Գերի-
ններից ում էլ տեսնում էր, անպատճառ գնում էր և ազատում:

Սա մնաց Բարձրագահ աթոռի վրա՝ Սուրբ էջմիածնում
ուղիղ վարդապետությամբ, նորոգեց ավերակները նոր շինու-
թյամբ, պայծառացրեց միաբաններով ու վարդապետներով,
պատշաճ ու հաստատուն ժամանակագրությամբ. հարստաց-
րեց եկեղեցական անոթներով, նյութական հարստությամբ:
Սա կաթողիկոս մնաց երեք ու կես տարի և 1081 [1632]
թվի մայիս ամսի 14-ին վախճանվեց. այս կյանքից մահով
պակասեց և հանգստով ավելացավ տիրոջը, գնաց իր անձկալի
Քրիստոսի մոտ, որ հանապաղ, մշտապաղատ և սրբանվեր
աղոթքներով կրում էր հոգում:

Այնպես պատահեց, որ սրա մահը տեղի ունեցավ Երևան

* Նննդոց Ա 14, 15, 17:

քաղաքում՝ Սուրբ առաքյալ Անանիայի դամբարանի վանքում, այս պատճառով տարան ընդհանուր գերեզմանատուն՝ Կոզեռն կոչված բլուրը, որ Կոզեռ վարդապետի այնտեղ գտնվող գերեզմանի համար այդպես են կոչում բլուրը: Կոզեռ և Մելքիսեթ վարդապետների գերեզմանին կից, այս երկուսը մեջտեղում պատրաստեցին այս սրբի հանգստյան շիրիմը: այնտեղ երկու փակված տապանների միջև դրին նրա սրբասուն մարմնի նշխարները մեծ պատվով ու փառքով՝ ի փառս Քրիստոսի և ի բարեփոխություն քրիստոնյաների:

Եվ ինչպես սրա կենդանությունը ամեն ոք ուրախանալով ցնծում էր, այդպես էլ սրա մահով ամեն ոք սղով տոգորված տխրեց, ոչ միայն քրիստոնյաները [հայերը], այլև մահմեդականները, նաև ինքը քաղաքապետ Մահմադդուլի խանը՝ Ամիրզոնա խանի որդին, և իր բոլոր իշխանները, որոնք եկան Մովսես կաթողիկոսի թաղման և սգակից լինելով քրիստոնյաներին, ողբում էին նրա մահը, որովհետև այնպիսի աստվածահաճո և աշխարհաշեն մարդ պակասեց երկրից, որի հիշատակը թող օրհնությունը լինի և նրա ազոթքներով տերը մեղ ողորմի. ամեն:

Գ Լ Ո Ւ Ե Ի Ե

ՏԵՐ ՓԻԼԻՊՈՍԻ ՎԱՐԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ, ՄԱՍԻՆ, ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՍՐԲՈՒՂԻ ԳԱՅԱՆԵԻ ԵՎ ՀՌԻՓՍԻՄԵԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆՈՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՅ ՆՇԽԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԵՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեր Փիլիպոս կաթողիկոսը Բարմ¹²⁴ երկրից էր, որ այժմ կոչվում է Աղբակ. այն գյուղից որի անունն է էրնկան¹²⁵: Սա լինելով մանուկ՝ տասնչորս տարեկան, ավելի կամ պակաս, լսեց Մեծ անապատի մենակյացների ճգնական վարքի մասին: Մեծատենչ փափագով ելավ, գնաց Մեծ անապատը կրոնավոր դառնալու և հետևելու առաքինական վարքի մարդկենցաղ սրբությունը, որը խլիստ փափագում էր: Իսկ անապատի կրոնավորները նրան անապատ շթողին մանուկ հասակի և անմորուք լինելու պատճառով: Սակայն նա աշխարհ չդարձավ, ափսոսելով անապատից դուրս անտանների մեջ մնաց, որ

անապատի շրջապատում էին և այդպես համբերեց ուժ ամիս: Այս ժամանակները Մովսես կաթողիկոսը տակավին վարդապետ լինելով քարոզություններ շրջում էր երկրում և լուսավորում բոլոր մարդկանց ինչպես արեգակ, իսկ պարոն Սարգիսը՝ Մեծ անապատի հայրը, Փիլիպոսին տվեց Մովսես վարդապետին աշակերտություն: Սրա մոտ մնալով Փիլիպոսը հասավ արբունքի՝ երիտասարդական հասակի: Նրան օրհնեցին արեգա՝ կուսակրոն քահանա, իսկ նա գիշեր-ցերեկ հետևում էր ճգնական վարքի, առաքինի գործերի և Աստվածաշնչական գրքերի ընթերցման: Մովսես վարդապետը տեսնելով սրա առաջադիմությունը՝ իր համաձայնությամբ ու բոլոր միաբանների վկայությամբ նրան վարդապետական իշխանություն, քիչ տարիներ անց վարդապետական գավազան տվեց. 1079 (1630) թվականին նրան օրհնեց եպիսկոպոս:

1081 (1632) թվականին, երբ հասավ Մովսես կաթողիկոսի վախճանը, նրա մոտ հավաքվեցին եպիսկոպոսներ, վարդապետներ և երևելի մարդիկ, նաև Թահմադդուլի խանը՝ քաղաքի իշխանը, և ողբալով ասացին. «Որովհետև քո տերը և կյանք տվողը այդպես կամեցավ, որ դու հեռանաս ու գնաս մեզնից, ուստի այժմ խնդրում ենք քո հայրախնամ գութից, որպեսզի մեզ բոլորովին որբ չթողնես, այլ հայտնես մեզ, թե ում են տալիս մեզ, որ քեզնից հետո լինի հայր և հովիվ: Նա ասաց. «Դուք գիտեք, ում կամենում եք, ընտրեցեք»: Իսկ ժողովի բազմությունը ասաց. «Մենք ամբողջ աշխարհով քեզ ընտրեցինք, իսկ այժմ դու ում ընտրես, մեզ ընդունելի է»: Նա ասաց. «Ես կամենում եմ, որ Փիլիպոս վարդապետը լինի իմ փոխանորդը և Սուրբ Էջմիածնի աթոռի հաջորդը»: Երբ նրանք բոլորը լսեցին, հոժար կամքով հաճեցին և ընդունեցին, որ Փիլիպոսը լինի կաթողիկոս: Երբ Մովսեսի մահվան լուրը տարածվեց ողջ աշխարհում՝ արևելքում, արևմուտքում, նաև այն իսսքը, թե Փիլիպոսի համար պատվիրել է կաթողիկոս անել, բոլորը հոժարությամբ և կամովի հավանություն տվին. այս պատճառով ամեն տեղից ուղարկեցին վկայական թղթեր, որպեսզի Փիլիպոս վարդապետը լինի կաթողիկոս: Մինչև վկայական թղթերի գալը այդ տարին անցավ, վրա հասավ 1082 (1633) թվականը, երբ նրան հունվար ամսի 13-ին տի-

րոջ անօրինութեան տոնին սուրբ հոգու օծմամբ օրհնեցին կաթողիկոս: Եվ մեր հայոց ազգը շնայած Մովսեսի մահւման առիթով վշտալից եղած տխրեց, սակայն Փիլիպոսի հաջորդութեամբ ուրախանալով ցնծաց, որովհետև հոր փոխարեն որդին մնաց հանուր ազգի իշխանը՝ ըստ մարգարե Գավթի վկայութեան. «Եվ թեպետ Մովսեսը¹²⁶ վախճանվեց, նրան հաջորդեց Հեսուն, և թեպետ վերացավ Եղիան, նրա փոխարեն նդիսեոսը մնաց միևնույն հոգով»:

Իսկ երբ վրա հասավ մեր թվականութեան 1084 (1635) տարին, Կոստանդնուպոլսի թագավոր Սուլթան Մուրադ կոչեցյալը՝ շափազանց խրոխտ, հզոր, հաղթական և խելացի մի մարդ, Կոստանդնուպոլսից յոթ հարյուր հազար հեծելազորով ելավ, եկավ Արարատյան աշխարհը: Նստեց Երևանի բերդի շուրջը, պատեց, պաշարեց այն և ինը օրում գրավեց բերդը. իշխան Քահազդուլի խանին՝ Ամիրզունա խանի որդուն բռնեց, ուղարկեց Կոստանդնուպոլիս, իսկ իր նախարարներից մեկին՝ բարի ու խելացի իշխան Մուրթուզա փաշային, նշանակեց բերդի մեջ իշխան տասնհինգ հազար սպանազեն և ընտիր հեծյալներով: Իսկ ինքն անցավ, գնաց Քավրիզ քաղաքը, այնտեղից վերադարձավ Վանի վրա և գնաց իր տեղը:

Երբ այդ ամառը անցավ և եկավ ձմեռը, երբ մեր թվականութեան 1085 (1636) տարին էր, պարսից թագավոր Շահ-սեֆին հարյուր հազար հեծյալներով ելավ, եկավ, մտավ Արարատյան աշխարհը և նստավ Երևանի բերդի շուրջը իննսուններեք օր. մեծ տաժանքով, բազում շարշարանքով և շատ արյան հեղումով հազիվ կարողացավ օսմանցիներին ձեռքից Երևանի բերդը ետ գրավել: Այս երկու ինքնակալ թագավորների շարժումից ավերվեցին, ոչնչացան երկրներ՝ արևելք և արևմուտք, մանավանդ Արարատյան աշխարհը իր շրջակա գավառներով: Որովհետև երկու թագավորներն էլ իրենց հեծյալներով ու հետևակներով այնտեղ միանալով՝ կատարեցին իրենց գործը և ետ դարձան:

Իսկ Մուրթու Քավրիզին բացի եկեղեցուց և գմբեթաշեն տներից բոլորը լրիվ ավերվեցին. ինչ որ փայտաշեն շենքեր կային, քանդվեցին: Այս պատճառով Փիլիպոս կաթողիկոսը բազմաշխատ շարշարանքով բոլոր շենքերը նորից շինեց: Միայն փայտաշեն շենքերի համար հազար դուռուչ

կանխիկ դրամ դրանց (շենքերի) արհեստավորներին տվեց: Սեղանատան մեջ հացկերույթի սեղանը և նրանցում գտնված այլ կայքերը Մովսեսի ժամանակ փայտից էին շինված, այս պատճառով հեշտութեամբ ավերվեցին, բայց այժմ Փիլիպոս կաթողիկոսը հացկերույթի սեղանը, նստելատեղը և նույնի (սեղանատան) հատակը քարով շինեց, որպեսզի հեշտութեամբ չավերվեն հեծյալների շարժման ժամանակ: Արևելյան կողմի խցերը լրիվ նոր շինվեցին, ընդ որում ոչ ըստ նախնական ձևի, այլ շինված են ուրիշ ձևով: Նաև եկեղեցու տանիքը բացի գմբեթի ծածկից լիակատար նորոգվեց: Քարակապ սալահատակը, որ եկեղեցու շուրջն է, և մյուս սալահատակը, որ խցերի և այլ տների առջևն է [շինվեցին]: Պարսպից դուրս հարավային դռանը մոտիկ երկու գմբեթավոր ձիթհանք նոր շինվեցին. որովհետև բնավ չկային: Սրանցից դատ աշատեղայնտեղ կառուցեց շատ այլ մասնավոր շինվածքներ, որոնք անվանապես շենք հիշում:

Իսկ Երևանի անապատում, որի մասին ասացինք, թե կար Անանիա առաքյալի դամբարանը, ինչ շինվածք որ կար այնտեղ բացի մատուռից, բոլորը փայտակերտ էին. սրանք բոլորը քանդվեցին, ավերվեցին, վերահիշյալ երկու թագավորների գալով. այդ բոլորը լրիվ վերստին շինեց ոչ թե փայտով, այլ քարով, գմբեթի կրով՝ ժամատունը, սեղանատունը, խցերը և բոլոր մյուս շինվածքները:

Բոլոր շինվածքների ավարտից հետո, որ կատարվեց էջմիածնում ու անապատում, 1086 [1637] թվականին Մեր սուրբ հայրը՝ տեղի Փիլիպոս կաթողիկոսը գնաց Սպահան քաղաքը և այնտեղ գտնվող քրիստոնյաների մեջ մնաց տարիուկես՝ քարոզելով նրանց աստվածային օրենքներն ու հաստատելով քրիստոնեական հավատքի մեջ. նաև նրանցից հավաքում է Մուրթու էջմիածնի նվիրակը. իսկ չօղակցիները և բոլոր քրիստոնյաները նրան ընդունում էին մեծ ու բազում փառքով իբրև աստծու հրշեղակի նրա ճգնական ու առաքինական վարքի համար:

Մուրթու Լուսավորչի աջի համար, որ տակավին Սպահանում էր, ինչպես նախորդը պատմեցինք սրա մասին, թե առաջին Շահ-Աբասի հրամանով աջը տարան Սպահան քաղաքը: Այս Փիլիպոս կաթողիկոսը մշտապես ըղձատուր ու խանդակաթ

տենչանքով փափագում էր, թե ինչով հնար կլինի, որ սուրբ աջը առնի, բերի Սուրբ էջմիածին: Այս մասին շատ օրեր նա խնդրանքով խոսեց քահանաների, ջուղայեցի ժողովրդի, մանավանդ մեծահավատ քրիստոսասեր իշխան խոջա Սաֆրազի որդու՝ խոջա Նազարի հետ, որ ներկա ժամանակ ջուղայեցիների ավագն էր: Փիլիպոս կաթողիկոսը խոսում ու աշաշում էր, որ պետք է լուսավորչի աջը տան իրեն, որ տանի Սուրբ էջմիածին՝ իր [աջի] տեղը:

Իսկ ջուղայեցիները չէին կամենում սուրբ աջը տալ, կամ նրա հեռանալը իրենց միջից, որովհետև ասում էին. «Յոտարտի երկրում և այլատեսակ աղզերի, մանավանդ նենգածեռ և օձաբարո պարսից աղզի մեջ ենք բնակված և որևէ նշան կամ հիմք չունենք քրիստոսական հավատքի հաստատության համար, ոչ վանքեր, ոչ ուխտատեղիներ, և ոչ էլ քրիստոսական սրբերի հրաշագործության կառուցվածքներ, աստծու սրբերի, կամ մեր հայրերի ու պապերի գերեզմաններ ու դամբարաններ չունենք, այլ միայն այս սուրբ աջն է, որի հրաշագործությունը տեսնելով մեր նորահաս զավակները կմնան քրիստոսական հավատքի մեջ. իսկ եթե սա էլ առնեն-տանեն, էլ ինչով մխիթարվենք այս երկրի պանդխտության մեջ, որում գտնվում ենք»: Արդ՝ այս պատճառով ջուղայեցիք շցանկացան աջը տալ: Այս առիթով պատճառներ հնարեցին և Փիլիպոս կաթողիկոսին ասացին, թե՝ «Սուրբ լուսավորչի այս աջը, որ դու մեզնից խնդրում ես, պարսից արքան բերել, հանձնել է մեզ, իսկ մենք ինչպե՞ս կարող ենք սա քեզ տալ առանց թագավորական հրամանի, երբ վախենում ենք թագավորական պատիժներից և մատնիչների նենգությունից»:

Իսկ այնուհետև տեր Փիլիպոս կաթողիկոսը Երևանի հայ ժողովրդի երևելի մարդկանցով, որ կամենում էին աջի էջմիածնի գնալը, սկսեց շրջել թագավորի իշխանների ղռնեքը և առատաձեռն նվերներով ամենքի սիրտը գրավեց: Ապա այս ամենից հետո զուտ ոսկի դահեկան լցրեց սկուտեղը և որա հետ գրված խնդրագիր մատուցեց Շահսեֆի արքային՝ նրանից սուրբ լուսավորչի աջը տալու հրաման խնդրելով: Իսկ ամբողջ հավիտենից և ազգաց տերն ու աստված, որ իր ձեռքում պահում է բոլոր թագավորների սրտերը և որ կողմը կամենում շրջում է այն, այս ժամին քաղցրացրեց թագա-

վորի սիրտը. նա շնորհ արեց հայրապետին, կատարեց նրա խնդրանքը և գրով, թագավորական կնիքով հրաման տվեց, որ ջուղայեցիք սուրբ լուսավորչի աջը տան տեր Փիլիպոս կաթողիկոսին: Երբ Փիլիպոս կաթողիկոսը առավ թագավորի հրաման-հրովարտակը, բերեց խոջա Սաֆարի թոռների մոտ, որովհետև որդիները վախճանվել էին. թոռների անուններն էին՝ Զալալ, Միքայել, Սինան և Պատիկ աղա: Սրանք շկամեցան աջը տալ, կաթողիկոսը սրանց մեծ բարկությամբ սաստեց, իսկ նրանք վախենալով նրա սրբությունից և հայրապետական անեծքից, փափկեցին համառությունից: Եվ տեր Փիլիպոս հայրապետը բազմաթիվ քահանաներով ինքը գնաց խոջա Սաֆարի տունը, այնտեղից աջը առավ և բերեց խոջենց եկեղեցին: Կիրակի օրը պատարագ տվեց և աջը բաց արեց: Այս լուրի վրա բոլոր ջուղայեցիները հավաքվեցին, ուխտ արին և տակավին ընդդիմանում էին և չէին թողնում աջը տանել: Այս պատճառով այնտեղից աջը գաղտնի հանեցին, բերին Զուղայի վանքը, այնտեղից գաղտնի տարան քաղաք երևանցիների մեջ, այստեղից էլ թաքուն հանին, տարան Բրինջուրի իջևանատունը և դրին մի քրիստոնյա (հայ) վաճառականի բեռների մեջ, որի անունն էր Մարգարա, որ Գողթան զավառի Յոնա գյուղից էր և վաճառականության համար եկել էր Սպահան: Նա աջը բեռան հետ միասին առած վաճառականական կարգով նախապես դնում հասնում է Քավրիդ, որից ջուղայեցիք ոչ մի տեղեկություն չունեին: Ապա Փիլիպոս կաթողիկոսը Սպահանից ելավ, գնաց Թավրիզ, աջը Մարգարայից առավ, բերեց հասցրեց էջմիածին՝ նույնի (աջի) սեփական աթոռը: Եվ այս անպատմելի ուրախություն պատճառեց բոլոր հայերին, որովհետև երբ բոլորը լսեցին, ցնծության ձայնով, մեծ գոհունակությամբ օրհնում էին աստծուն՝ քրիստոնյաներին հասնողին: Սուրբ լուսավորչի աջի Սպահանից Սուրբ էջմիածին իր աթոռը գալը տեղի ունեցավ մի 1087 (1638) թվականի սեպտեմբեր ամսի 20-ին:

Սուրբ հայրապետ Փիլիպոսի կաթողիկոսությունը օրավուր դորանում ու հաստատվում էր, որովհետև տերը նրա հետ էր, քանզի վարքով խիստ ճգնող, պաս պահող, մտքով սրբախորհուրդ, աղոթքներում անձանձիր, խոսակցությունը աստվա-

ծային էր. ինչ որ աստծուց խնդրում էր, աստված ամենը անթերի պարգևում էր: Մեր աչքերով հենց տեսանք, որ բազում ղիվահարներ նրա աղոթքներով ազատվեցին, հիվանդներ, պես-պես ցավազարներ, անդամալուծներ առողջացան, ամուլ կանայք նրա աղոթքներով զավակներ ծնեցին: Նրա բժշկություններից այստեղ երկուսը միայն հիշեմ: Մինչ միաբաններ էինք մեծ միաբանությունը բնակված Սուրբ Էջմիածնում Փիլիպոս կաթողիկոսի ժամանակ, պատահեց, որ միաբաններից մեկը այսահարվեց: Չարը այնքան ուժեղացավ, որ մինչև անգամ նրան առած-տանում էր շինությունից դուրս՝ դաշտ, հանդեր, այստեղ-այնտեղ մարդկանցից հետու շրջեցնում էր, որին միշտ բռնում, բերում էին վանքը. ապա նրա ոտքերը երկաթյա ոտնակապեր՝ դրին և այդպես պահելով ամեն օր քահանաները ավետարան էին կարդում. և երկարեց այսպես մինչև հիսուն օր: Ապա մի օր, որ կիրակի էր, փրկական խորհրդի սուրբ պատարագը մատուցելուց հետո, երբ ողջ ժողովուրդը եկեղեցուց դուրս գալով գնաց, տեղ Փիլիպոս հայրապետը հրամայեց՝ այսակիր միաբանին եկեղեցի բերել, որպեսզի պատարագիչ քահանան ատյանի* մեջ սրբություն զգեստով նրա վրա ավետարան կարդա: Տեղ Փիլիպոսը այս ասաց և ինքը ելավ, գնաց տուն, որովհետև անհրաժեշտ գործ ուներ, պատվալոր ինչ-որ մարդիկ նրան հյուր էին եկել: Գնաց նրանց մոտ, սեղան բացեց նրանց առջև և մի քիչ մնաց նրանց մոտ նրանց սիրտը շահելու համար, ապա թողեց նրանց հացկերույթի սեղանին, ինքը վերադարձավ եկեղեցի. եկեղեցու արևմտյան դռնից հանդարտ մտնելով, խաղաղորեն եկավ մինչև ատյանի մոտ և այնտեղ ընկավ իր ծնինների վրա՝ իր դեմքը պահելով սուրբ սեղանի հանդեպ: Մի գոթոյախի** չափով սաղմոսի սրտառուչ պաղատանքով և հարկ արտասուքով աղոթեց: Այդ ժամանակ այսակիր մարդը կամենում էր ազատվել, փախչել բռնողների ձեռքերից: Եվ երբ չկարողացավ ազատվել, այդ ժամանակ ուժգին բարձրաձայն գոչումով աղաղակեց ընկավ գետին ու փսխեց և դար-

* Ատյանը բեմից ներքև բեմի առջևի մասն է:

** Սաղմոսի երկու, երեք, չորս հատվածները կազմում են մի գորգա, ամբողջ Սաղմոսյանը 56 գորգայից է բաղկացած:

ծավ ինչպես մեռել: Այնուհետև տեղ Փիլիպոսը դադարեց աղոթելուց և մոտականներին հրամայեց վերցնել նրան և տուն տանել: Եկեղեցու սպասավորները մոտեցան սրբեցին փութաթափ տեղը: Այդ օրից և հետագայում Քրիստոսի շնորհներով և աստծու մարդ տեղ Փիլիպոսի աղոթքներով այն միաբանը ազատվեց այդ հիվանդությունից: Ազատված միաբանը ինքն էր պատմում, թե՛ «Մինչդեռ միաբանները ինձ բռնած ունեին ավետարանի ներքո, որ ժամարարը կարդում էր, տեսնում էի, որ մի ահագին սև վիշապ օձ պատել էր իմ մեջքը, պարանոցս և ամբողջ մարմինս: Նաև տեսա Փիլիպոս հոգևոր տիրոջը, որ իր ձեռքով բռնել էր խիստ մեծ մերկ սուսեր, սրբեթաց հարձակումով մտավ եկեղեցու դռնով և հասավ ինձ մոտ. այդ սրով զարկեց օձին, որ փաթաթվել էր ինձ, և կրտսրատելով ինձնից ցած թափեց: Ծծի գլուխը և կտորները մեծ շապակներով փախուստի դիմելով ելան եկեղեցուց ու կորան»:
Ոչ միայն այս, այլև այսպիսի շատերի բժշկեց, բայց այս միայն գրեցի իբրև օրինակ նաև մյուսների համար:

Պատմեմ նաև մյուս հրաշքը: Երբ տեղ Փիլիպոս կաթողիկոսը քարոզություններ շրջում էր օսմանցիների երկրում, Անկարա քաղաքում զատկի մեծ տոնի կիրակի օրը այսպիսի բան պատահեց: Մինչդեռ տեղ Փիլիպոս հայրապետը առանձնացած նստած էր, իսկ իր աշակերտներից Հովհաննես անունով մի վարդապետ՝ երևելի մի մարդ, կանգնած էր նրա առջև Տեսան, որ մոտ տասնհինգամյա մի պատանի եկավ, որ մեջքին ուներ մի փոքրիկ, մոտ յոթնամյա մանուկ, որին բերեց, դրեց հայրապետի առջև: Նույն պատանին նաև իր ձեռքում բռնած էր իր գլխարկով լիքը խնձոր և ներկած ձու: Այդ էլ գրեց հայրապետի առջև և աղաչանքով ու աղերսանքով խոսեց և ասաց նրան. «Քո ծառան եմ, տեղ հոգևոր, այս փոքրիկ մանուկը, որ գրի բո սրբություն առջև, իմ եղբայրն է. այսքան տարի է, որ ծնվել է, ոչ կարողանում է խոսել, քանզի համր է, և ոչ կարողանում է կանգնել, քանզի ոտքերը թույլ են: Գրա համար մեծ պաղատանքով խնդրում եմ բո սրբությունից, որպեսզի սրա վրա աղոթք անես, և ես հավատամ տիրոջը, որ բո աղոթքով առողջություն լինի իմ եղբորը: Իսկ մեր հայրը և սուրբ հայրապետը ծնկի եկավ, ձեռքերը վեր բարձրացրեց և իր մեջ հավաքելով մտքերը և իր

մաքի տեսողութիւնը հառելով բոլոր սրտերը տեսնող աստ-
ծուն, աչքերից արտասուք հոսեցնելով աղոթք արեց բավա-
կան ժամեր. աղոթքից հետո, երբ ասաց «հայր մեր երկնքում»,
առավ խնձորից, գլորեց հետո և խանդաղատական խոսքով
ասաց փոքրիկ մանկանը. «վեր կաց, որդակ, վեր կաց և
գնա այն խնձորը բեր»: Այն ժամանակ շնորհներով ու ողոր-
մութիամբ բարերար աստծու մանուկը ոտքի ելավ, գնաց վերց-
րեց խնձորը, բերեց հայրապետի մոտ: Մյուս անգամ հայ-
րապետը մանկանն ասաց. «վերցրի՞ր խնձորը, որդակ»: Այն
ժամանակ աստծո շնորհներով համր մանուկը պատասխանեց.
«Այո, վերցրի, և հա այն»: Սուրբ հայրապետն ասաց. «Այժմ
փառք տուր աստծուն, որդակ, և գնա զոհացած նրանից»:
Մանուկն ասաց. «Փառք աստծո»: Ապա մանկանը տվեց եղ-
բորը, որ առավ գնաց՝ փառավորելով հրաշագործ աստծուն,
որ զորութիւն շնորհ է տալիս իր ծառաներին: (Կան նաև ուրիշ
շատ հրաշագործութիւններ, որ սուրբ կաթողիկոս տեր Փի-
լիպոսը արել է, և որ մեր իսկ աչքերով տեսել ենք, բայց այս-
քանը բավական է):

Նա նաև խոր մտածող, խելոք, աշխարհաշեն և արդյու-
նարար մարդ էր. աստվածաշնչական գրքերի մեջ սրամիտ,
ներաքնին, խրատների ու քարոզների մեջ քաղցրախոս, արդ-
յունավոր: Եվ սրանք աղոթքների շնորհով աստիճանաբար
հետո ստացավ, որովհետև ամեն տեղ, ուր էլ քարոզում էր
ու կանոնադրում, ամենը պտղաբերում և արդյունավետ էր
դառնում:

Նաև շատ տոնասեր էր, տոները պայծառացնող, եկեղե-
ցիները զարդարող, տերունական և սուրբ աստծո տոների
պատվիչ, ինչպես որ գրված է Հովհան Օձնեցու մասին: Այս
պատճառով նրա անունը չափազանց հռչակվեց և համբավը
տարածվեց ողջ աշխարհում՝ ոչ միայն հայերի մեջ, այլև մահ-
մեղականների, վրացիների, և ամենքը սիրում, հարգում էին
նրան: Առավել ճգնութիւն, սրբութիւն և աստծուն հաճելի
ծառա լինելու համար խիստ վախենում էին նրանից ոչ միայն
ռամիկները, այլև աշխարհակալները, իշխանները, զորավար-
ները, քանզի նրա թշնամիներից շատերին տեսան, որոնք կոր-
ծանվեցին, մեջտեղից վերացան և նրա սիրելիներից, որոնք
զորանալով առաջադիմեցին:

Եվ այն դպրոցը, որ Հովհանավանքում հաստատեցին, սա-
ևս ամուր հաստատեց և ուսումով ու առաքինութիւնով վար-
ժեցնելով հասցրեց կատարելութիւն և տարիներ հետո Հով-
հանավանքից փոխեց, բերեց Սուրբ էջմիածին և դպրոցը
այնտեղ հաստատեց, որտեղ բոլորը սովորեցին և եղան պի-
տանի մարդիկ՝ վարդապետներ, եպիսկոպոսներ, քահանաներ:
Եվ վաղուց ի վեր խափանված վանքերը լցվեցին արեղանե-
րով, իսկ գլուղներն ու քաղաքները՝ քահանաներով, և դեռևս
օրավուր աճում է նույն դրվածքով: Եվ սրանով բազմաթիվ
կիսավեր ու խախտված եկեղեցիներ նորոգվեցին և գլուղե-
րում, քաղաքներում շատ եկեղեցիներ նոր շինվեցին հրա-
շալի հորինվածքով, պայծառ ու փառավոր ամեն որպիսու-
թիւնով:

Էջմիածնի բոլոր շինութիւններից հետո, որոնք սուրբ
հայրապետ Փիլիպոսը արեց, այնուհետև ձեռնարկեց, որպեսզի
սրբուհի կույսեր Գայանեի և Հռիփսիմեի տաճարները նորո-
գի: Որովհետև, ինչպես քիչ չափով նշեցինք Հռիփսիմեի վե-
րաբերյալ գլխում երկու կույսերի տաճարների ավերակների
մասին, որտեղ և պատմեցինք, թե ինչպես Ֆոռանկ հայրերը
եկան և նրանց նշխարները գտան: Բայց սուրբ Գայանե կույ-
սի տաճարը ավելի ավերված էր, որովհետև ողջ տանիքը
իջած էր, միայն շուրջանակի պատերը և շորս սյուներն էին
կանդուն մնացել, գլուխը բաց, պատերի հիմքերը այստեղ-
այնտեղ ծակտուված, խրամատուված: Սրանց նորոգման սկիզ-
բը տեր Փիլիպոս կաթողիկոսը գրեց: Մեծատենչ կարոտով
ու ջանքով և շատ դրամ ծախսելով հիմքից մինչև գմբեթի
ծայրը գեղեցիկաշեն նորոգեց, որի վրա դրեցին տերունական
խաչի նշանը [խաչը]:

Սուրբ կույս Գայանեի եկեղեցին նորոգելիս գտնվեցին
նրա և նրա ընկերների նշխարները: Անպատմելի ուրախու-
թիւն պատճառեց ամբողջ հայ ազգին որպես վերականգնում
կործանված թագավորութիւն: Որովհետև ամենքը խորհում
ու մտածում էին սուրբ կույսերի նշխարների մասին՝ արդյոք
տեղում են, թե ոչ, քանզի ավագ խորանի ներքո շինված
մատուռը, որ այս սրբերի նշխարների հանգստանալիս էր,
ավերված էր ամբողջովին, ոչ միայն մատուռը, այլև նրա

վրա կատուցված ավագ բեմն էր ավերված ու քանգված մինչև հատակը և աղբով ու փողոցի կեղտով լցված էր մինչև վերո։ Այս նորոգման ժամանակ տեր Հովհաննես անունով մի քրեղա կար, որ մի ստեղծարար, գործունյա և խորախորհուրդ մարդ էր. սրան տեր Փիլիպոս կաթողիկոսը նշանակել էր այս գործի վերակացու և գործերի վարիչ։ Սա մի օր ինչ-որ պատրվակով բոլոր գործավորներին ուրիշ տեղ է ուղարկած լինում, իսկ առանձնացրած տեղը մի գիշեր և ցերեկ ինքը միայնակ քանդեց գետինը, որտեղ մտքի աղդեցությամբ կարծիք էր ունեցել. այնքան փորեց հողը, մինչև հասավ անշարժ հողին, որի վրա դրված էր եկեղեցու հիմքը. այնտեղ՝ հիմքի տակ, երեք տապան գտավ, որոնցից մեկը հարավային կողմն էր, մյուսը՝ հյուսիսային, երրորդը՝ արևելյան։ Երբ տապանը բացեց, իսկույն նորասքանչ ու զարմանալի անուշ հոտ բուրեց, որի անուշության որպես լինելը ոչ ոք չի կարող պատմել, որ ծավալվելով լցրեց ամբողջ վայրը՝ նա տեսնում է տառապանքի մեջ յուրաքանչյուրի նշխարները՝ սպիտակ, փայլուն, ինչպես ձյուն, և տապանների մեջ ամբողջ նշխարները լրիվ անպակաս։ Սրա վրա ցնծալից բերկրությամբ լցված տեր Հովհաննեսը ընկնում է երեսի վրա և երկրրպագում աստծուն և զոհանում նրանից, որ իրեն արժանի արեց այդպիսի շնորհների։ Ապա առնելով սրբերի ոսկորներից մի մասունք՝ վերցնում է իրրև հավաստիության նշան, ապա կափարիչ վեմը դնում է տապանների վրա, խճով, կրքով ամրացնում, փակում է տապանները և նշանները անհետ անելով կորցնում է։ Գործավոր մարդկանցից ոչ ոք այդ շիմացավ։ Այս անելուց հետո վերցրած մասունքը բերում ցույց է տալիս վարդապետներին ու բոլոր միաբաններին ու պատմում որպիսությունը, որի համար բոլորը ցնծության ձայնով զոհանում են աստծուց և ուրախանում անպատմելի ուրախությամբ։ Սուրբ կույս Գայանեի ու նրա ընկերների նշխարների գլուտը և նույնի եկեղեցու նորոգումը կատարվեցին 1101 [1652] թվականի հոկտեմբեր ամսի 19-ի երեքշաբթի օրը։

Երբ Գայանե կույսի տաճարի ամբողջ շինվածքը ավարտվեց, ապա գնացին սրբուհի կույս Հռիփսիմեի տաճարը և ձեռնարկելով սկսեցին այն ևս նորոգել, որովհետև եկեղեցու

արտաքին կողմից գմբեթի զուլսը, ամբողջ տանիքը, պատերի երեսները և նրանց հատակները, իսկ ներսի կողմից բեմը, հատակի սալարկը, շորս խորանների մեջը՝ բոլոր հիշածներս ավերված ու քայքայված էին, դրա համար մեծ ջանքով և երկար աշխատանքով ճիգ թափելով ամբողջը նորոգեցին, վերջացրին և եկեղեցու զագաթին [գմբեթին] շինեցին տերունական խաչի նշանը [խաչը]։ Եվ մեր տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով ու ողորմածությամբ այստեղ ևս ի հայտ գալով գտնվեց սրբուհի կույս Հռիփսիմեի նշխարը՝ ոչ միայն մեկ, այլ երեք տեղում, որ բաժին-բաժին էին արել և ամփոփել ապահով տեղերում, երկու տեղերի նշխարները գրել էին վեմերի միջև, իսկ մեկը, որի նշխարները շատ էին, գրված էին փայտյա արկղի մեջ, որ անդուկն է, իսկ փոքրիկ տեղը իբրև մատուռ շինված էր նշխարների համար և այնտեղ գրել էին նշխարներով լի սնդուկը, իսկ մատուռի պատին գրեր էին գրված, որի օրինակը առաջ ասվածսիկ գրեցի այստեղ, որ հետևյալն է։

+ Ով անբաժանելի ծոցածին հոր և համազույգ հոգու, այսինքն՝ երկրայիններին կամեցողի, անխակալ երկնավոր փեսայի հարս հրաշափառ ու երջանիկ նահատակ, բարեգործ արքային նվաճող՝ լինելով զլիսավոր միշտ և անընդհատ քեզ ծանոթ սուրբ հոգու համար սպասավոր։

+ Ով սրբուհի, աղաչում եմ քո բարեխոսությամբ և անսպառ աղոթքներով այնտեղ պահապան եղիր քո անվան հիշատակողներին և այնտեղ ինձ, որով հանդես կգաս երկրայիններին համար լինելու սուրբ կույս, արագ օգնական, որ և կլինես պատասպարան ամեն բանի մեջ, հաղթող ու բարեխոս։

+ Հիշիր և ինձ, որ ինքնահաճ նվիրվեցի իսկապես ըստ անվան վերստին աստվածաստեղծի այս տաճարին իբրև մասնակի զոհ, որի շնորհներով ես բավարարվեցի. աղաչում եմ անձով և հարակից անունով քեզ, Հռիփսիմե՞։

+ Սուրբ կաթողիկե արքեպիսկոպոսարանի Հակոբ քահանա։

+ Ես Խոսրովիկ Սուրբ Հռիփսիմեի ծառա։

* Քարգմանեցիք մտավորապես, քանի որ դժվար հասկանալի է (Վ. Ա.)։

+ Սուրբ Ուրբին:

+ Ստեփանոս:

Արդ՝ այսքան խոսքերը, որոնց սկզբում խաչանշան եմ գրել, առանձին-առանձին գրված էին մատուռի պատին, որի մեջ գրած էր նշխարներով լի սնդուկը, իսկ մենք այնտեղից առանք օրինակը, գրեցինք այստեղ հուրայտություն ձեռք՝ ապագայում պատահող ընթերցողներին և մեզ աշխատասիրողիս Քրիստոսի կողմից բարեբանների վարձի առիթ ձեռք աշոթքնեքով և սրբուհի Հովիտիմեի բարեխոսություններ:

Երկու վկայանոցների՝ սրբուհի Գայանեի և սրբուհի Հովիտիմեի սկիզբն ու ավարտը եղան երեք տարում, որովհետև 1100 [1651] թվականին սկսեցին նորոգությունը և 1102 [1653] թվականին ազատվեցին գործից. մեծ ծախսերով և շատ աշխատանքով շինեցին, վերջացրին ի փառս Քրիստոսի և նրա սուրբ վկաների:

Մեր սրբազան հայր տեր Փիլիպոսը կամեցավ զնալ Երուսաղեմ, որը և ելավ մեծ ամբոխով՝ վարդապետներով, եպիսկոպոսներով, քահանաներով և սպասավորներով, որոնք իր միաբաններն էին՝ իսկ քաղաքներից ու գավառներից շատ նշանավոր անձինք՝ բազմաթիվ վարդապետներ, եպիսկոպոսներ, իշխաններ, որոնք լսելով սուրբ հայրապետի զնալու լուրը, նրանք ևս շտապեցին զնալ: Երբ Փիլիպոս կաթողիկոսը հասավ Թեոդուպոլիս, որ Կարին քաղաքն է, և նրա զնալու համբավը հասավ մեծ քաղաք Կոստանդնուպոլիս, Կոստանդնուպոլսում բնակված հայ ժողովուրդը իր հայրապետի մեծաշուք փառքի համար մոտեցավ թագավորի եպարքոսին, որ վեզիրն է, և խնդրեցին նրանից թագավորական ծառայության արժույթից, սրա հետ նաև հրովարտակ թագավորական կնիքով, որպեսզի ծառայողով իշխանը գործաշտապանելով սպասավորի հայրապետին այն երկրներում շրջադայելու ընթացքին, որոնք օսմանցիների իշխանության տակ են գտնվում, որպեսզի չլինի թե իշխաններից կամ կուսակալներից որևէ մեկը զրպարտելով տանջի կամ բռնադատելով վշտացնի հայրապետին: Սրանց խնդիրքը հաճո թվաց եպարքոսին, նրանց տվեց թագավորական հրովարտակ և մի բարի իշխան, որը և զնալով հայրապետի մոտ՝ կատարեց իր պարտականությունը՝ սպասավորելով հայրապետին նրա բո-

լոր շրջադայությունների ընթացքում: Փանդի այն բոլոր քաղաքները, որոնք օսմանցիների իշխանության ենթոթ էին, կաթողիկոսը շրջեց, իսկ իշխանը նրա հետ շրջադայելով սպասավորում էր, մինչև որ նրան բերեց հասցրեց նրա աթոռ՝ Սուրբ Էջմիածին և հանձնեց երկրի իշխան Մահմադղուլի խանին և առնելով նրանից հավաստիքի և ազատության թուղթ դարձավ իր թագավորի պալատը՝ Կոստանդնուպոլիս:

Եվ տեր Փիլիպոս կաթողիկոսը Երուսաղեմում մնաց չորս ամիս, իսկ քաղաքի փաշան, հոռոմների պատրիարքը և ֆոանկների վանքի պետը շատ սիրով, մեծաշուք փառքով էին ընդունում և պատվում նրան, որքան նա այնտեղ մնաց:

Նա Սուրբ Հակոբ եկեղեցու հատակը գեղեցիկ հորինվածքով և նկարակերտ ներդաշնակություններով, գույնզգույն քարերով սալարկեց: Թեպետ և նախապես ուներ սալարկ, բայց հավասար ու հարթ չէր, այլ բարձր ու ցածր, անհարմար ու կոպիտ: Բարձրացրեց նաև ավագ խորանի բեմը, որ առաջ շատ ցածր էր:

Այն նույն տարին, երբ տեր Փիլիպոս կաթողիկոսը զնացել էր Երուսաղեմ, այնտեղ՝ Երուսաղեմ էր եկել նաև Սսի կաթողիկոս տեր Ներսեսը, այդ ժամանակ Երուսաղեմի առաջնորդն էր Աստվածատուր վարդապետը: Իսկ հոգեկիր հայրապետ տեր Փիլիպոս կաթողիկոսը, որ Պողոս առաքյալի նման մշտապես ցավում ու հոգում էր եկեղեցու թերությունների ու անկարգությունների համար, իր վիճակի բոլոր ծառայողներին հետ միակամ եղած կամեցավ անկարգությունները մեշտեղից վերացնել. առօրյա խոսքով բոլորին հորդորում էր գալ սիրո ու միաբանության և վերացնել անկարգությունն ու ատելությունը: Սրա քրիստոսաստիճուք քարոզության ու հոգեբուխ վարպետությանը զուգարված ընդհանուր ժողովը բարիանալով՝ եկեղեցականներ, աշխարհականներ, որոնց մեջ էին զխավորներ Սսի կաթողիկոս տեր Ներսեսը, Երուսաղեմի առաջնորդ Աստվածատուր վարդապետը, միաբանությանը խոնարհվեցին հայրապետի հրամանի առջև և հաստատեցին տասներեք զուլա կանոնադրություն, որոնք համառոտ կերպով բերում են այստեղ: Սրանց առա-

ջինն է սեր ու միաբանությունն երկու աթոռների միջև՝ էջ-միածնի ու Սսի կաթողիկոսների յուրաքանչյուր կաթողիկոս յուր վիճակի նվիրյալին ձեռնադրի և ոչ թե այլ վիճակի, իսկ եթե այնպես պատահի, որ ձեռնադրի այլ վիճակից որևէ մեկին, նրան պետք է տեղավորի իր վիճակում, և եթե ձեռնադրյալը տվյալ կաթողիկոսի վիճակից փոխադրվի մյուս կաթողիկոսի վիճակը, անընդունելի լինի:

Երկրորդ՝ ինքը նվիրյալն էլ չհամարձակվի իրենը թողնելով մյուս կաթողիկոսի մոտ գնալ, այլ պետք է մնա իր կաթողիկոսի մոտ:

Երրորդ՝ առանց ժողովրդի խնդրանքի և վկայադրերի որևէ մեկին չպետք է եպիսկոպոս ձեռնադրել:

Չորրորդ՝ ինչ պատճառով ուղում է լինի, որևէ մեկը մյուս վիճակի եպիսկոպոսին չպետք է հափշտակի:

Հինգերորդ՝ մի վիճակը երկու եպիսկոպոս և երկու առաջնորդ, չպետք է ունենա, եթե խիստ պատճառ մեջտեղ չգա:

Վեցերորդ՝ որևէ մեկը չհամարձակվի այլ վիճակից մեկին եպիսկոպոս ձեռնադրել, իսկ եթե համարձակվի, ինքն ու իր ձեռնադրածը լուծվեն:

Յոթերորդ՝ եթե եպիսկոպոսը ոչ իր կաթողիկոսի հրամանով, այլ կաշառքով կամ այլազգիների բռնությամբ համարձակվելով իշխի այլ վիճակի, իր կարգից լուծվի:

Ութերորդ՝ որևէ վարդապետ չհամարձակվի ամեն մեկին ինքնազուխ վարդապետության իշխանություն տալ, եթե նրան նվիրյալը ուսումով, առաքինությամբ, հասակով և աստվածային երկյուղով կատարյալ և ամենքի կողմից վկայված չէ, որովհետև այս պատճառով շատ անկարգություններ ու գայթակղություններ մուտք գործեցին եկեղեցի, իսկ եթե չստեղծվեց ճշմարիտ շատ հրամանը, իշխանություն տվող զրկվի պատվից, իսկ իշխանություն ստացողը չընդունվի:

Իններորդ՝ քահանա կամ այլ ժառանգավոր ձեռնադրություն պետք է ստանա իր եպիսկոպոսից իր ժողովրդի համաձայնությամբ, իսկ եթե այդպես չէ, կարգից զգվի:

Տասներորդ՝ իրավունքն ու հասույթը, որ եպիսկոպոսները և քահանաները սահմանել են ժողովրդից, ըստ հայրապետական կանոնների ստանան եպիսկոպոսներն ու քահանա-

ները և իրար չզրկեն, որոնց առիթով հաճախ տրտունջներ ու զժգոհություններ ենք լսում մշտապես:

Տասնմեկերորդ՝ քահանաները իրար չպետք է զրկեն՝ միմյանց ծուխն ու հասույթը հափշտակելով կեղծավոր բարեձեղությամբ, կամ այլազգիների բռնությամբ, այլ յուրաքանչյուր մեկը պետք է իր բաժնով բավարարվի, իսկ եթե այդպես չէ, հանդգնողը պետք է կարգազուրկ արվի:

Տասներկուերորդ՝ երբ պատրաստվում են նշան դնել որևէ աղջկա մի որևէ երիտասարդի համար, կանայք կամ բնակիչները չհանդգնեն այդ անել առանց երկար քննության կամ առանց առաջնորդի զիտության. քահանաները շատ օրեր պետք է եկեղեցու մեջ բարոզեն և առհասարակ բոլորին հայտնեն, որպեսզի գուցե թե մեկը տեղյակ լինի նրանց արյունակցության, որը լսելով գա նախապես իմացնի: Իսկ երկար քննություններից հետո, եթե չգտնվի նրանց միջև արյունակցություն, ապա քահանաների և ժողովրդի ներկայությամբ բացահայտ կերպով օրհնեն այդ նշանը և հաստատեն գործը:

Տասներեքերորդ՝ այրի քահանաները, եթե պարկեշտ են և ծեր կամ սնուցելու մանուկներ ունեն, մնան եկեղեցում, իսկ եթե այսպես չէ, պետք է գնան վանքերն ու անապատները, իսկ եթե չգնան, հեռացվեն ժառանգությունից ու կարգից:

Խրատական խոսքի այսքան գլուխները իբրև կանոն դրեց սահմանեց և ամեն օր բարոզում էր բոլորի առջև, որ ընդունեցին և հավանեցին, սիրով հանձն առան Սսի ներսես կաթողիկոսը, Աստվածատուր վարդապետը, բոլոր վարդապետները, իշխանները. ստորագրեցին, կնքեցին և ինքնակամ հոժարությամբ օրինակը առան, տարան իրենց երկիրը. շատ տեղերում սրա լրիվ օրինակը կա և տակավին նույն ուխտով ու սիրով մնում են Քրիստոսի շնորհներով: Նաև ուղիղ երախտագիտության արժանի և ուղիղ գործեր սահմանեց այնտեղ՝ Երուսաղեմում:

Ապա Երուսաղեմից ելավ, նստեց նավ ու ծովով գնաց Կոստանդնուպոլիս, այնտեղ մի կլոր տարի մնաց. այնտեղ ևս երախտագիտության արժանի ուղիղ գործեր սահմանեց: Այս բոլորից առաջ նրանց անջատողական երկպառակությունը

միաբանութեան վերածեց, քանզի ժողովրդից ովքեր որ բնիկ տեղացիներ էին՝ Կոստանդնուպոլիս քաղաքից, բարձրամիտ պարծանքով ճնշում, իշխում էին եկվոր ժողովրդին և իբրև գոնհիկ ու սամարդի էին համարում: Իշխանական բոլոր իրողութունները, գործերն ու խոսքերը վերցրել էին իրենց ձեռքը և այդպես էին գործում, իսկ եկամտաները շորթելով՝ անհաղորդ էին պահում (եկվորներին): Այս պատճառով նրանք հոգու խորքում վշտանում էին իրենց քահանաներից, և մըշտապես վիրավորական ու ատելութեան խոսքերով էին դիմավորում միմյանց և կոպում էին. խոռվութունը նրանց մեջ հաստատվել, արձանացել էր անհաշտ ու արյան ատելութեամբ:

Իսկ Փիլիպոս կաթողիկոսի այնտեղ դալով և նրանց այնտեղ տեսնելով՝ ամեն գործից ավելի կարևոր համարեց դրա մասին հոգալ: Շատ օրեր բազմազան ձևերով, երբեմն ընդհանուր, երբեմն առանձին-առանձին խրատելով, սովորեցնելով, ամենօրի սիրտը, կամքը շղճելով բերեց իր խոսքին և նրանց հաշտեցնելով միաբանեց, որ լինեն համահավասար եղբայրներ և ամեն գործ ու բան միասին հոգան և կատարեն: Այնուհետև շեբմ սիրելիներ և վշտալից եղբայրներ լինելով մնում են Փիլիպոս հայրապետի սահմանադրութեանը ենթակա գեղեցիկ սիրով ու միաբնութեամբ շնորհիվ օրհնյալ Քրիստոս աստծու:

Ապա դրանից հետո ձեռնարկեց եկեղեցիների պարտքը վճարելու, որովհետև քառասուն հազար դուռուշ պարտք կար հայոց այն եկեղեցիների վրա, որոնք Կոստանդնուպոլսում են: Պարտքերի պատճառը նախ՝ սոսկ միայն կոշումով, միայն պատրիարք անվանված առաջնորդները, որ թագավորական իշխանութեան օգնությամբ են նստում, դրամի ընտրությամբ սպրդելով ներս են մտնում, իրենց և դրամի ծառայությանն են նվիրված և ոչ աստծուն: Եվ երկրորդ՝ ժողովրդից կովասերներ, խոռվարարներ, որոնք փառասիրութեան, նախանձի, մարմնավոր շահի ակնկալութեան համար խմբավորվում են ոմանք այս առաջնորդի, ոմանք այն առաջնորդի շուրջը, դրամի ծառայության արբանյակներ և զորավիգներ էին լինում նրանց: Ապա գնալով մատյանավարի (քարտուղարի),

վեղիրի, թագավորի մոտ՝ շատ կաշառք էին տալիս նրանց և վանում էին ախտյանին և առնում իշխանութունը իբրև սոսկ անուն պատրիարքութեան, առաջնորդութեան: Նաև բազմապատիկ կաշառք իշխանների դռներն էին ցրում այստեղ-այնտեղ: Եվ այսպես անելով, պարտքը շատացավ, բարդվեց, հասավ մինչև 40 հազար դուռուշի:

Այս պատճառով Կոստանդնուպոլիս քաղաքը մեծ խոռվութեամբ լցվեց. իբրև փոթորկված ծով անդնդապտույտ հատակով, լեռնանման կոհակով, շարժումով, շաշումով, շատաշումով, բարձրաձայն գոշումով, իբրև կայծակընկեց և հուր ցանող ամպիրի դողացնում էր բոլոր մարմնավորներին: Եվ այս խոռվութեան լուրը ծավալվելով սարածվեց բոլոր քաղաքներում ու գյուղերում, արևելքում, արևմուտքում. ամեն օր բերանը բացած այս մասին էր խոսում: Այս պատճառով շատ անվանի ու երևելի մարդիկ՝ քահանաներ, երեցփոխաններ և ուրիշներ Կոստանդնուպոլսից ելած երկարածիգ ճանապարհով եկան Սուրբ աթոռ էջմիածին կաթողիկոսի մոտ, որպեսզի մի հնար գտնեն խոռվութունները վերացնելու և պարտքերը վճարելու: Իսկ կաթողիկոսը իր ողջ զորութեամբ ջանք էր թափում երբեմն գրութեամբ, երբեմն մարդ ուղարկելով և այլ կերպ հնարներ գործադրելով, բայց ժողովրդի խոռվութուններին խաղաղութուն չեղավ: Այս պատճառով քաղաքի ժողովրդի շատ մարդիկ վշտացան, վտանգվեցին, որովհետև ոմանք դարձան տնանկներ և աղքատներ՝ զրկված ունեցվածքից, ապրանքներից, տներից, ոմանք հայրենիքից, ոմանք բանտերում ու կալանատներում մեռան, ոմանք վտարանդի լինելով հեռավոր քաղաքներում պանդխտութեամբ շրջում էին՝ հեռացած ընտանիքներից ծանոթներից և այդպես էին իրենց կյանքը անցկացնում: Տասնութ տարի երկարեց այս դառը գործը, մինչև որ այնտեղ գնաց աստծու ծառա տեր Փիլիպոս կաթողիկոսը և որովհետև տերը նրա հետ էր, նրա շրջնորհներով նույն քաղաքի ժողովրդի այնքան պարտքը վճարեց: Որովհետև ժողովրդից ամեն մեկին հրամայում էր ըստ իր կարողության օգնական լինել պարտքը վճարելու համար: Եվ այն մարդը, որին ուղղվում էր կաթողիկոսի հրամանը, բոլորովին չէր հանդգնում որևէ բան ասել, այլ սիրահոծար կատարում էր հայրապետի հրամանը նրա օրհնութեան

համար Կստահելի մարդկանց այս գործի համար հոգաբարձուներ նշանակեց, որոնք մեծ ջանքով ու աշխատանքով ութ ամսում հավաքեցին ժողովրդի նվերները և վճարեցին ամբողջ պարտքը, և եկեղեցին ազատեցին պարտքերից հավիտյան օրհնյալ մեր Քրիստոս աստծու շնորհներով: ամեն:

Տեր Փիլիպոս կաթողիկոսի արդյունավետ գործունեություն, աստվածաբանական վարպետության և առաքինական ճգնություն համբավը, ինչպես բոլոր երկրներում, սիրովելով տարածվեց, այնպես էլ հասավ կվով քաղաքը: կվով քաղաքի Նիկոլայոս անվանված եպիսկոպոսը իր հոգում հասկացավ, որ առանց որևէ կասկածի ու նրկայություն իր վերքերի դեղն ու սպիղանին և ձախողված գործերի ուղղությունը սույն հայրապետից և հոգևոր բժշկից է լինելու, ուստի առանց դանդաղելու ելավ կվովից, եկավ Կոստանդնուպոլիս հայրապետի ստորը և հնազանդությունը հանձն առավ նրա հրամանների կարգն ու կանոնները, որով և (ստացավ) կաշկանդումների արձակում և եպիսկոպոսական իշխանություն: Այս մեծ ուրախությունը գարձավ, զնաց իր քաղաքը՝ կվով: Դու այս պատմության ամեն օրպիսությունը, եթե կամենաս, նույն լվովցիների վերարևրյալ գլխից կսովորես, որ հետագայում դասակարգել եմ. այնտեղ լրիվ շարադրել եմ ըստ իր պատշաճի*:

Տեր Փիլիպոսը, ապրելով Կոստանդնուպոլիս քաղաքում, բազմաթիվ բարի գործեր և ուղիղ կարգեր հաստատեց այնտեղ եկեղեցականների ու աշխարհականների համար և ապա բազմաթիվ թանկագին եկեղեցական անոթներով ու առտին կազասիներով ելավ Կոստանդնուպոլիսից, ճանապարհ ըրունեց, եկավ, հասավ բարձրագահ աթոռ Սուրբ Էջմիածին. սուրբ կույս աստվածածնի փոխման տոնին¹²⁸ մտավ էջմիածին: Փիլիպոս կաթողիկոսի գնալ-գալը տեևց երեք տարի, որովհետև 1100 [1651] թվականին գնաց Երուսաղեմ, 1101 թվականին մնաց Կոստանդնուպոլսում և 1102 [1653] թվականին եկավ էջմիածին:

Երբ եկավ 1103 [1654] թվականը, ավագապսի¹²⁹ օրերում սկսեց հիմք դնել Սուրբ Էջմիածնի զանգակատան (շինարա-

բությունը), որովհետև նախապես էջմիածնի վանքը զանգակատուն շունկեր: Բայց Փիլիպոս կաթողիկոսի արտում կար զանգակատուն շինելու բուն ցանկություն: Եվ [աստված] յուր երկյուղածների կամքը կատարում է, նրա սրտի ցանկությունը կատարեց հետևյալ ձևով:

Այն ժամանակ, երբ տեր Փիլիպոս կաթողիկոսը Կոստանդնուպոլսում էր, այնտեղ էր ազգով հայ քրիստոնյա մի մարդ, որի անունն էր Անտոն շելիպի: Սա Բուրսա քաղաքից էր, որի տունտեղը և բնակությունը այնտեղ՝ Բուրսայում էր: Բայց նաև Իզմիր քաղաքում ուներ տուն ու ապարանք. Կոստանդնուպոլսում էլ ուներ հոյակապ ոսկեղօծ զույնզույն զարդարված տուն ու ապարանք: Այս Անտոն շելիպին շափազանց երևելի ու այնքան հռչակված էր, որ մինչև իսկ հայտնի էր օսմանցիների թագավորի արքունիքում, նաև ֆոանկների հեռավոր երկրներում, Պարսկաստանում, քանի որ շափազանց ունեւոր էր ու հարուստ: Իր գործը վաճառականությունն էր, որի առիթով երբեմն լինում էր Կոստանդնուպոլսում և երբեմն Ջմյուռնիայում, որ Իզմիրն է: [Եվ երբ վաճառականների կարավանները պարսից երկրից գալիս էին Իզմիր, կարավանի ամբողջ բեռները միանգամից գնում էր, ինչ էլ որ լիներ, թե մետաքս, թե որևէ հազվագյուտ բան, և միանգամից գինը վճարում էր: Այսպես էլ ֆոանկների երկրից, երբ նավերը թանկագին հարստություն բարձրված բեռներով ծովով գալիս էին, նավի բեռը ինքը միայնակ միանգամից գնում էր և անմիջապես գինը վճարում:]

Եվ այն օրերին, երբ Փիլիպոս կաթողիկոսը Կոստանդնուպոլսում էր, պատահեց, որ այնտեղ եղավ նաև Անտոն շելիպին, որը տեսնելով տեր Փիլիպոսի առաքելաշնորհ վարդապետությունը և մաքրակենցաղ ապրելակերպը՝ սիրով կապվեց: Սրան տեր Փիլիպոսը ասաց. «Որովհետև աստվածային իշխանությունից ամեն ինչ անպակաս պարզեցած է քեզ՝ թե ինչքի առատություն, թե ծառաների բազմություն, թե անվան մեծություն, արդ դու պետք է ըստ քո հարգարժան անվան երևելի հոգևոր հիշատակ թողնես երկրում քեզ համար. դրանցից մեկը, որ քո առաջ կա, այդ էջմիածնի զանգակատունն է, որ շափազանց հարկավոր է, բայց չկա: Արդ՝ կամենում եմ, որ դու Սուրբ աթոռի այս պակասությունը լրացնես: Իսկ շե-

* Տե՛ս ստորև՝ գլուխ ԻԸ:

լեպին մեծ հոծարությամբ և ինքնակամ խոնարհությամբ ենթարկվելով հայրապետի հրամանին հանձն առավ կատարել նրա խնդրանքը՝ նա ասաց հայրապետին. «Որովհետև այդպես է քո ցանկությունը, նաև հարկավոր է Սուրբ աթոռ էջմիածնին, իմ կողմից դու եղիր ինձ փոխարինող և հայր Աստուծու օգնությունը երբ էջմիածին գնաս, որքան անհրաժեշտ է և հաճելի քո սրտի ցանկությունը, լայն, ընդարձակ, հաստահեղույս, բարձրաշեն գեղեցկատես նկարակերտությունը ձեռնարկելով կշինես, իսկ դրամական ամբողջ ծախսը, որ այնտեղի լինի, ես լիովին և հոծարությունը հավելումով կըվճարեմ»:

Արդ՝ այս պայմանով երբ Փիլիպոս կաթողիկոսը հասավ Սուրբ էջմիածին, սկսեց զանգակատան շինությունը, որի սկիզբն ու հիմնարկումը տեղի ունեցան մեր թվականության 1103 [1654] տարվա աղուհացքի* օրերում: Սուրբ էջմիածնի աստուծու մեծ տաճարի արևմտյան կողմում, արևմտյան զբառն վրա, սրա պատին ընդհուպ և կից սույն տարում բարձրացավ շենքը, մինչև կապվեցին ներքին կամարները, վրա հասավ ձմեռը, և փոխվեց 1104 թվականը, և երբ հասան մարտ ամիսը՝ աղուհացքի հինգերորդ կիրակին, տեղի ունեցավ մեծ հայրապետ տեր Փիլիպոս կաթողիկոսի վախճանը, ուստի և խանգարվելով խափանվեց զանգակատան կառուցումը:

Քանզի Երևան քաղաքի իշխանը կալբեկի որդի Մահմադ խանն էր. այս այն կալբեկն է, որ ոչխարի հարկի մասին գրված գլխում հիշատակեցինք: Սրա որդի Մահմադղուլի խանն էր, մի գոռոզ հաստազուխ, այլև քրիստոնյաների նրկատմամբ կոպիտ մարդ էր: Թեպետ կաշառքով և շատ խընդրանքով Փիլիպոս կաթողիկոսը հրաման խնդրեց նրանից զանգակատան շինության համար, սակայն խանը նրան չըսեց իր կոպտության պատճառով: Բայց կաթողիկոսը, որի հույսն առ աստված հաստատուն էր և այդ հույսով զանգակատան հիմքը դրեց և սկսեց շինել: Իսկ երբ Փիլիպոս կաթողիկոսը վախճանվեց, զանգակատունը խանի շարունակյալ պատճառով մնաց կիսաշեն, որովհետև միշտ ասում էր, թե

* Մեծ պատը:

զանգակատունը չեմ թողնի շեն, այլ քանդելու եմ: Այդ տարին նախախնամող աստված պահեց զանգակատունը և խանին քանդեց, քանզի անվանի և ավելի մեծ իշխաններ երկրորդ Շահ-Աբաս Թագավորի կողմից ուղարկվեցին Արարատյան աշխարհը պետական գործերի և Մահմադղուլի խանի բարքի (քննության) համար, որը մարդատեղ չլինելով անպատիվ էր անում իշխաններին, շարանում էր նրանց դեմ. ախքան արեց, մինչև որ զայրացրեց իշխանների սրտերը, իսկ նրանք երբ գնացին Թագավորի մոտ, սկսեցին ամբաստանել խանին, ուստի Թագավորը ցասումով լցվեց խանի դեմ, նրան իշխանությունից ցցեց՝ հափշտակելով, բռնադատվելով նրա ողջ հարստությունը, և կապանքներով տարավ Սպահան քաղաքը: Թագավորական ծառայողներից նախադուլի խան անունով մեկին ուղարկեց Երևան իրրև կառավարել: Սրա մոտ գնաց տեր Հակոբ կաթողիկոսը և շատ օրեր նրա դանկը դնալ-գալով և շատ ասի ու դրամ տալով նրան ու նրա իշխաններին, հաղիվ զանգակատան շինության թույլտվություն առավ: Արդ՝ մինչև ամենը եղավ, վերջացավ, թվականը փոխվեց և հասավ 1106 [1657] թվի հուլիս ամիսը: Ապա այնուհետև սկսեցին կառուցել մինչև ավարտը հրաշալի արվեստով, քարերի վրա բոլոր պատշաճավոր տեղերում քանդակազարդեցին կենդանիների, գազանների, անասունների, թռչունների, բույսերի և տունկերի զանազան տեսակներ. նաև կառույցի հորինվածքը շատ գեղեցիկ ու ներդաշնակ է՝ խարիսխները, սյուները, խոյակները, կամարները և մնացած ամենը: Նրա օրհնության օրը անվանեցին Սուրբ հրեշտակապետ՝ խորհրդանշելով գարրիսյան փողը, որ բարձունքից կանչելու է: Զանգակատան ավարտը տեղի ունեցավ 1107 [1658] թվականին և խաչվերացի¹³⁰ տոնին օրհնեցին խաչը, որ զանգակատան գլխին է, ապա քանդեցին տախտակամածները, Արդ՝ զանգակատան ստույգ պատմությունը այս է, թեպետ նրա վրա գրված թվականները այլ են:

Որքան Փիլիպոս կաթողիկոսը ապրեց աշխարհում՝ թե իր վարդապետության, թե կաթողիկոսության ժամանակ, անդադար ու անխափան արեց ու գործեց արդյունավետ գործեր աշխարհում, մանավանդ բարձրագահ աթոռ, Սուրբ էջմիածնի համար: Սրանով ավելի հաստատուն դարձավ, հա-

ըրեստացավ եկեղեցական անոթներով, ոսկով ու արծաթով, թանկագին զգեստներով, պատվական զրթներով, բազմաթիվ վարդապետներով: Այդպես էլ [հարստացավ] առտնին սպասքներով, կահկարասիով, պղնձեղենով, բրդեղենով և այլ այսպիսի բաներով: Նաև (շատացան) կենդանիների նախիրները՝ ուղտեր, շորիներ, մատակ ձիերի երամակներ, ոչխարներ հոտեր, խոշոր անասունների նախիրներ, նաև արտեր, այգիներ, ծաղկատաններ: Նա բազմազան ձևերով հողեր ու մարմնավոր գործերի մեջ օգտակար էր լինում երկրին, որովհետև բերդի նման ամուր էր նա հայոց ազգի շուրջը ընդդեմ մահմեդականների, որոնք չէին կարողանում հարստահարել, զրկել հայերին, քանզի բոլոր հակառակորդ թշնամիները, որոնք լեռան նման հզոր դեմ էին կանգնում, բոլորը խորտակված մեջտեղից վերացան՝ լինելին եկեղեցականներ, թե աշխարհականներ, այլասեռ ու այլազգի փառավոր իշխաններ: Եվ նա մնաց աշխարհում մինչև ծերություն ժամանակը՝ լինելով վաթսուներեք տարեկան հարգարժան, մեծաշուք բոլոր ազգերի մոտ՝ հայերի, հոռոմների, վրացիների, օսմանցիների, պարսիկների, մեծամեծ իշխանների, մինչև իսկ թագավորների:

Եվ այն օրից հետո, երբ ստանձնեց վարդապետական իշխանություն, անխափան զբաղվեց քարոզություններով ու խրատներով՝ գյուղերում, քաղաքներում, վանքերում, անապատներում և ամենուրեք, և ինչ որ քարոզում ու խրատում էր, չէր սխալվում, այլ բոլորը արդյունավորվում, պտղաբերում էին:

Իր վախճանի մոտիկ օրերին տեր Փիլիպոս կաթողիկոսը Սուրբ էջմիածնում էր: Աղո՛հացքի օրերում՝ շորորդ կիրակի օրը ըստ իր մշտական սովորության նստեց աթոռին և սկսեց այդ կիրակվա քարոզն ասել, որի բնաբանն էր. «Մի հարուստ մարդ, որը ուներ մի տնտես. սրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե նրա ունեցվածքը վատնում է»^{*}: Մեկնաբանելով հասավ այն խոսքին, որ ասում է. «Չես կատարանա այլևս տնտես լինել»^{**}: Այստեղ խոսքը վերջացրեց: Իսկ

* Ղուկ. Ժ 21

** Ղուկ. Ժ 21

երկրորդ օրը, որ երկուշաբթի էր, տկարացավ և ընկավ մահի՛: Նրա մոտ հավաքվեցին բոլոր միաբաններն ու նրա աշակերտները: Հարցնում էին տկարության մասին: Նրանց պատասխանելով ասաց. «Այս է իմ վերջին տկարությունը, այլևս չեմ առողջանա, քանզի մինչ քարոզս էի ասում, երբ հասա այն խոսքին, որ ասաց՝ չես կարող այլևս տնտես լինել, ինձ թվաց, որ ինչ-որ մեկից հայանվեց իմ սրտում, թե այլևս մարմնավոր կյանքով չես ապրի, այլևս չես տնտեսի ասածու տանը, այլ մահվամբ ես վճարվում, ինչպես որ խոսքը վկայելով ասաց. չես կարող այլևս տնտես լինել»: Նրա այս խոսքերը լսելով բոլորը մոռմոռում ու մղկտում էին նրա ասածի վրա, բայց նա ըստ իր աստվածատուր շնորհների բոլորին մխիթարում էր: Այդպես տկար մնաց մինչև հասավ հինգերորդ կիրակին և այդ գիշեր առավոտովա դեմ սկսվեց հոգեվարքը: Ինքը իմացավ, որ հոգեվարքի մեջ է, ուստի միշտ աղոթք ու օրհնաբանություն ուներ բերանում ասածու հանդեպ՝ ասելով. «Այժմ արձակիք թո ծառաներին», տեր, դեպի խաղաղություն ըստ թո խոսքի»: Փիլիպոս սուրբ հայրապետը յուր սրբասուն հոգին ավանդեց ասածու ձեռքը:

Նրա մահվան լուրը տարածվեց Արարատյան աշխարհի բոլոր շրջակա գավառները: Ամեն ոք, ով լսում էր, վճատված, թուլացած գետին էր ընկնում, որովհետև նա հայերի շուրջը ամուր պարիսպ էր, որ փլվեց: Շրջակա գավառներից մեծ բազմություններ հավաքվեցին, եկան, որովհետև վեց օր անթաղ մնաց: էջմիածնի միաբանները և բոլոր վարդապետները կամենում էին Սուրբ էջմիածնի դռանը իր շինած զանգակատան մեջ թաղել, բայց իշխան Մամադղուլի խանը, որ մեծ ոխ ու նախանձ ուներ հայրապետի դեմ, հայրապետի՝ խանի համեմատությամբ ավելի հզոր լինելու, այլև զանգակատունը շինելու պատճառով, քանի որ խանը չէր թույլ տալիս զանգակատուն շինել, իսկ կաթողիկոսը իր ուժի հզորությամբ հիմնարկեց և սկսեց շինել, և ներկայումս հայրապետի վախճանված լինելու ժամանակ, երբ լսեց, թե կամենում են զանգակատան մեջ թաղել, խիստ զրզովեց, շարացավ և չէր թողնում զանգակատան մեջ թաղել, այլ մեծ հոխորտան-

* Ղուկ. Բ 29:

քով ասում էր, թե ես զանգահատունը քանդելու եմ: Եվ այս պատճառով կաթողիկոսը վեց օր անթաղ մնաց. դազադով էջմիածնի տաճարի մեջ դրված էր, նա զվարթ երեսով ինչպիսի կենդանի մարդ քնած էր, և նրանից անուշ հոտ էր բուրում. ամենքը, որ մոտենում էին նրան համբուրելու, արմատում ու զարմանում էին հորդաբուխ անուշահոտի և երեսի զվարթության վրա. ոչ միայն քրիստոնյաները, այլև այլազգի մահմեդականները հիացած վերև աստծուն փառք էին առաքում, որ փառավորում է իր սրբերին:

Եվ որովհետև Մահմադղուլի խանը շնորհմացավ իր բիրտ բարքից, յթողեց կաթողիկոսին Սուրբ էջմիածնում թաղել, այս պատճառով Սուրբ էջմիածնից վերցրին նրա մարմնի պատվական մասունքները խաչով, ավետարանով, մոմերով, հոգևոր երգերով տարան սուրբ կույս Հռիփսիմեի տաճարը և այնտեղ տաճարի մեջ խորանի հյուսիսային կողմում հանգրստի դրին նրան: Նա Քրիստոսի մոտ բարեխոս է բուր քրիստոնյաների և իր հոգեծնունդ որդիների համար: Այժմ երկրի բոլոր բնակիչներից ցավագարները, ախտավորները ուխտ են գալիս նրա սուրբ տապանը համբուրելու և առողջութուն են գտնում իրենց ցավերից և փառավորելով Քրիստոսին՝ գրնում են իրենց տեղերը:

Սուրբ ու տեղեկաբալույս հայրապետ տեր Փիլիպոսի վախճանը տեղի ունեցավ մեր թվականության 1104 [1655] թվականի մարտի քսանհինգին աղուհացքի պատի հինգերորդ կիրակի օրը: Նա կաթողիկոսություն արեց քսաներկու տարի երեք ամիս, իսկ ինքը երբ վախճանվեց, վաթսուներեք տարեկան էր:

Նրանից հետո Սուրբ էջմիածնի կաթողիկոսությունը ստանձնեց ջուղայեցի Հակոբ վարդապետը: Քանզի Փիլիպոսի մահվան առթիվ հավաքված վարդապետները, եպիսկոպոսները մնացին Սուրբ էջմիածնում մինչև ծաղկազարդի¹³¹ տոնը և այդ տոնին, միևնույն թվականի ապրիլ ամսի յոթին Հակոբ վարդապետին օրհնեցին կաթողիկոս, ապա յուրաքանչյուրը զնաց իր տեղը՝ փառավորելով հորը, որդուն և սուրբ հոգուն հավիտյանս հավիտենից. ամեն:

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԾԱԽՍՈՒ ՄԵՅՄՎԱՅՆԵԼՈՒՉ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես գարնանը, երբ հարավային հողմը փչելով ծննդագործում է հողը և բխեցնում է բազմազան ծաղիկների սեռերն ու տեսակները, որոնցով երփնազարդվելով վայելուչ տեսք է ստանում երկրի երեսը, այդպես էլ կարծես այս երկու կաթողիկոսների՝ Մովսեսի ու Փիլիպոսի ժամանակները: Որովհետև բազմաթիվ վանքեր, անապատներ ու եկեղեցիներ շինվեցին, որոնցից մեկը Սուրբ Սպեփանոս նախավայի մեծ ու անվանի վանքն է, որ Դարաշամբի ձորում է: Սա նախապես անպարիսպ էր, նաև տների ու հարկերի շինվածքները խարխլված, բլրված էին, իսկ կառույցների դիրքը վատ ու անպետք: Սակայն ջուղայեցի Հակոբ վարդապետը, որ Փիլիպոսից հետո դարձավ կաթողիկոս, Փիլիպոսի կաթողիկոսության ժամանակ սկսեց նորոգել և միանգամից բուր շինվածքները հիմքից քանդել՝ եկեղեցին, տները, խցերը և մյուս բոլորը, ապա ինքը հիմնարկեց եկեղեցին. սրբատաշ քարերով, բարձրաբերձ գմբեթով, գեղեցկատես ու զանազան արվեստավոր նկարակերտություններով զարդարված խաչանման եկեղեցի շինեց: Այսպես էլ շուրջանակի պարիսպը, տները, խցերը ամուր ու հաստահողույս քարերով կառուցեց, որոնց ձևն ու դիրքը հարմարությունները շափազանց վայելուչ ու պատշաճ էին, որոնք մեծ աշխատանքով և շատ ծախսերով տասը տարում հաղիվ ավարտվեցին, որովհետև քարն ու աղյուսը Աստապատ¹³² գյուղից Արաքս գետի ջրերի վրայով տուփերով էին բերում, քարերի մի մասն էլ ձիով բերում էին Արարդ¹³³ գյուղից: Այդպես էլ կիրն ու փայտը, հացը մեծ շարշարանքով ու ջանքով հետու տեղերից էին բերում. այդպես կատարելով ավարտեցին աստծու և նրա սրբերի փառքի համար:

Այդպես էլ Եսայի վարդապետը, որ Մեղրի¹³⁴ կոչված գյուղից էր, տեր Մովսես կաթողիկոսի աշակերտներից. սա Փիլիպոս կաթողիկոսի կողմից եպիսկոպոս ու առաջնորդ կարգվեց սուրբ Կարապետի վանքի, որ Երնջակի¹³⁵ գավառում

է: Սա Փիլիպոս կաթողիկոսի օրերում նույնպէս սկսեց նորոգել սուրբ Կարապետի վանքը, որովհետեւ նախապէս եղած բոլոր շէնքերը միանգամից քանդեց, վերացրեց մեջտեղից՝ եկեղեցին, տները, խցերը և պարիսպը, ապա շուրջանակի լայն, ընդարձակ հաստ ու բարձր պարիսպ գցեց, իսկ մեջը իրենց և հյուրերի բնակութեան համար տներ, անպարանքներ (շինեց): Առավելապէս եկեղեցին կառուցեց հին եկեղեցու տեղում՝ լայն ու ընդարձակ, բարձր կամարներով ու գմբեթով, սրբատաշ քարերով շորս սյունների վրա: Ամբողջ եկեղեցին հիմքից մինչև նրա գագաթը ավարտեց. ծանր աշխատանքով, մեծ ծախսերով ավարտեցին բոլոր կառուցյունները և 1102 [1653] թվականի հոկտեմբեր ամսի տասնյոթին եկեղեցին օրհնվեց մեծահանդես նավակատիքով ի փառս աստծու:

Այսպէս նաև Զաքարիա վարդապետը, որ էջմիածին գյուղից էր, առաջնորդն էր Հովհաննավանքի մեծափառ միաբանութեան. սա էլ Մովսէս կաթողիկոսի աշակերտներից էր, երկրում երևելի և փառավոր մարդ էր, շատ խելոք, ճարտարախոս, մտքով ու խելքով հմուտ, դեմքով ահարկու: Սա էլ Փիլիպոսի օրերում ձեռնարկեց Հովհաննավանքի եկեղեցիներն ու տները վերանորոգելուն, որովհետև պարիսպը, որ շուրջանակի էր, միակ պիտանիին էր, իսկ մնացած բոլորը անպետք, վատ, և բոլոր եկեղեցիների տանիքներն ավերված ու քանդված էին: Զաքարիա վարդապետը հավաքեց բազմաթիվ վարպետներ՝ քարհատներ, հյուաններ, դարբիններ, և ձեռնարկեց նորոգելու վանքերը: Նախ բոլոր տներն ու խցերը շինեց, վերջացրեց, ապա անցավ եկեղեցիներին, բայց հասպնայ, քանի որ երկու տարում ավարտվեց եկեղեցիների նորոգումը, քանզի առատորեն զբաղ մեջտեղ գրեց, որ տալիս էր աշխատողներին: Երեսուն քարտաշներ միշտ նստած քար էին տաշում, երկու ճարտար որմնադիրներ մշտապէս շարում էին, իսկ ուրիշ վարպետներ ու գործավորներ շատ շատ էին, այս պատճառով շուտափուլթ ավարտվեց: Քարն ու կիրը ձորի այն կողմից ձիով էին բերում: 1101 [1652] թվականին պրծան գործից և խաչվերացի տոնին խաչը օրհնեցին, որ գրված էր գմբեթի ծայրին, և զոհացան աստծուց:

Իսկ ինքը Զաքարիա վարդապետը կատարյալ մարդ էր և երկրին խիստ պիտանի. թեպետ շատ ծերացել էր, բայց ապ-

րեց մինչև մեր 1108 [1659] թվականը, երբ և վախճանվեց: Նախքան իր վախճանը ինքը փորեց իր գերեզմանը և պատրաստեց տապանքար: Հուլիս ամսի տասին վարդավառի տոնի օրը այս կյանքը փոխեց մահով և ավելացավ տիրոջ հանգստով: Սրան թաղեցին իր պատրաստած գերեզմանում իր տապանքարով: Այնպէս պատահեց, որ սա վախճանվեց Սուրբ էջմիածնում: Եվ քանի որ նա հարազատի նման ու ցավակցարար Սուրբ էջմիածնի սպասավորութունը հոգում էր իր լավագույն խորհրդով և հմուտ խելքով, հարմար ու պատեհ առանձնացնում և ընտրում էր բոլոր խորհուրդներն ու խոսքերը, ուստի այնտեղ Սուրբ էջմիածնում էին պահում մըըտապես, այս պատճառով այնտեղ վախճանվեց և այնտեղ թաղվեց զանգակատան առջև արևմտյան կողմից, որի հիշատակը օրհնութեամբ լինի, իսկ նրա աղոթքներով մեղողորմի:

Այն ժամանակ Փիլիպոս կաթողիկոսի օրերում վերստին շինվեց սուրբ առաքյալ Թադեոսի վանքը, որ Արտազ գավառում է, Մակու¹³³ գյուղում, որովհետև բոլոր շինվածքները միանգամից ավերված էին: Այս ժամանակ Մկրտիչ անունով ոմն եպիսկոպոս իր միաբաններով, արեղաներով, սարկավազներով, որոնք բոլորը նույն Մակու գյուղից էին, որ չընայած աղքատ էին, և հարստութունից զուրկ, բայց բոլորը վառվեցին սուրբ առաքյալ Թադեոսի սիրով, հույսը գրին ամենազոր աստծու ողորմութեան և սուրբ առաքյալ Թադեոսի բարեխոսութեան վրա, ձեռքները գործի դարկեցին և սկիզբ գրին վանքի շինութեան: Նախ սկսեցին տաճարը շինել, որի արևելյան և հյուսիսային կողմերի պատերի մինչև կեսն էր միայն շին մնացել, էլ ուրիշ ոչինչ: Սրանք ամբողջը միանգամից մինչև գմբեթի ծայրը ներբուստ ու արտաբուստ սըրբատաշ քարերով ամուր ու գեղեցիկ շարեցին: Տաճարի կառուցման գործը ավարտվեց 1099 [1650] թվականին: Տաճարի կառուցումից հետո նույն հուլիսով, որ ունեին աստծու վրա, սկսեցին մշակված քարով ու կրով ժամատունը կառուցել, իսկ սա ավարտվեց 1102 [1653] թվականին: Սրանից հետո շինեցին սուրբ կույս Սանդուխտի վկայարանը: Ապա շինեցին Նահատակ անվանված եկեղեցին, որ գտնվում է սուրբ առաքյալ Թադեոսի նահատակութեան տեղում: Այս բո-

լոր կառույցները ավարտվեցին աստծու շնորհներով ու ողորմածութեամբ: Նույն Մկրտիչ եպիսկոպոսը և իր միաբանները գտնվում են այնտեղ և պաշտում են աստծուն ու նրա սրբերին՝ ակնկալելով աստծու ողորմությունը, որին փառք հավիտյանս. ամեն:

Տեր Փիլիպոս կաթողիկոսի օրերում սրանց նման շինվեց նաև սուրբ Գևորգ զորավարի վանքը, որ Մուղնի¹³⁷ գյուղում է, իսկ սա մտտ է Կարբի գյուղաքաղաքին, Մարտիրոս եպիսկոպոսի սպասավորութեամբ և ծախսով, որ նույն Մուղնի գյուղից էր, նույն վանքի եպիսկոպոս: (Սուրբ Գևորգի) եկեղեցին շատ փոքր էր և մյուս շինվածքները անպետք ու անհարմար, սրա համար այս Մարտիրոս եպիսկոպոսը եղած եկեղեցին և մյուս բոլոր շինվածքները միանգամից վերացրեց: Նոր պարիսպ քաշեց շուրջանակի, հասարակ իսկ պարսպի մեջ չորս սյունների վրա կառուցեց վայելուչ եկեղեցի, պարսպին կից տներ, խցեր, ամենը շինեց, ավարտեց և թողեց իրեն բարի հիշատակ աստծու և մարդկանց առջև, ինքն էլ այնտեղ թաղվեց՝ սուրբ Գևորգին բարեխոս բռնելով իր և բոլոր քրիստոնյաների համար:

Այսպես էլ սուրբ Սարգիս զորավարի վանքը, որ Ուշի¹³⁸ գյուղում է, շինվել է մեր մեծ վարդապետ Սուրբ Մեսրոպի կողմից: Սա ևս մտտ է Կարբի գյուղին, որ Աբաղած լեռան ստորոտում է: Այս վանքը նորոգվեց Ոսկան վարդապետի ձեռքով, որ Երևան քաղաքից է և Փիլիպոս կաթողիկոսի աշակերտներից: Չնայած եկեղեցին կար վայելուչ, սրբատաշ քարով շինված և բարձրաբերձ գմբեթով, բայց բոլոր եկեղեցիների տանիքները քանդված ու ավերված էին: Եկեղեցիները իրենց տեղերում միայնակ էին, սակայն շրջապատում բնավ շինություն չկար, այլ սաստիկ քարոտ էր: Իսկ Ոսկան վարդապետը թեպետ չկարողացավ եկեղեցիների տանիքները նորոգել, քանի որ այնքան միջոց չունեիր, բայց մեծ շարշարանքով և երկար աշխատանքով եկեղեցու չորս կողմը պեղեց և շուրջանակի խիստ ամուր պարիսպ քաշեց: Պարսպի մեջ ըստ պատշաճի խցեր, տներ շինեց և ինքը այնտեղ է բարվոք կարգավորութեամբ՝ հույսը դրած աստծու որորմության վրա սուրբ Սարգիս զորավարի բարեխոսութեամբ:

Նաև աստծու փառքի հոյակապ, լայնանիստ, բարձրաբերձ տաճարը՝ Սուրբ Մեսրոպ մեծ վարդապետի հանգստարանը, այն Մեսրոպի, որ հայոց գրերը գտավ. ինչպես որ նրա պատմության խոսքերն են ասում, թե նրան տարան ամփոփեցին այն գյուղում, որ անվանվում է Օշական¹³⁹, Արդ՝ Սուրբ Մեսրոպ վարդապետի այս տաճար-հանգստարանի ողջ տանիքը վաղ ժամանակներից փլվել, նստել էր, միայն ավագ խորանն էր մնացել ծածուկ: Եվ սուրբ հայրապետ Փիլիպոսը իր կաթողիկոսութեան ժամանակներում սկսեց այն ևս նորոգել, որ և արեց մեծ ծախսերով և աշխատանքով, մշակված քարով, մածուցիկ կրով մինչև ամբողջը ավարտեց մեր թվականի 1094 [1645] տարում ի փառս աստծու:

Նաև բարձրաբերձ, լայնանիստ մեծաշուք տաճարը, որ հանուն սրբուհի Աստվածածնի շինեց, կար հին և վաղ ժամանակներից Բջնի¹⁴⁰ գյուղում: Այս տաճարի տանիքը ամբողջովին ավերված, քայքայված էր. նորոգվեց Փիլիպոս կաթողիկոսի հրամանով, քրիստոսասեր մեծ պատրիկի՝ ջուղայեցի խոջա Պետրոսի միջոցներով, որին մականունով Բղուզ Պետրոս էին ասում: Վանքի եպիսկոպոսի անունն էր Փիլիպոս. այդ ժամանակ մեր թվականության 1092 [1643] տարին էր: Հետո նույն վանքի առաջնորդ եղավ տեր Փիլիպոս կաթողիկոսի աշակերտ Մովսես վարդապետը, որը վանքին շուրջանակի պարիսպ քաշեց գեղեցիկ ներդաշնակութեամբ և տեսողներին հաճելի:

Իսկ Քասախ¹⁴¹ գետի վրա շատ խոր ձորի մեջ, Աշտարակ գյուղին մոտիկ կամուրջը, որ մեծաշք և բարձրաշին կրով ու տաշած քարով էր շինված, հնացել, աչքի կեսը խախտվել ու փլվել էր, բայց չափազանց անհրաժեշտ էր, քանզի շատ գավառների ու ճանապարհների անցատեղի էր: Այս պատճառով բարեպաշտ և քրիստոսասեր մի մարդ՝ Մահտեսի խոջա Գրիգորը, որ մականունով Մոծակենց Գրիգոր էին ասում և բուն տեղացի Երևան քաղաքից էր, հին կամուրջը, որ փլուզվելու էր մոտեցել, քանդեց, ապա տեղը փոխեց և սկսեց հիմքից ամուր, հաստատուն, կրով ու տաշած քարով նորը շինել պատշաճ ու բարեխալով: Կառուցելով հիմքից մինչև ավարտը իր հոգու փրկության և առ աստված ունեցած հույսի համար: Շատ շարշարանք քաշեց, շատ փող ծախսեց, մինչև որ

ավարտեց մեր Թվականության 1113 [1664] տարում ի փառս
աստծու¹⁴²,

Ուրիշ շատ վանքեր էլ կան նորոգված, կամ բաղմամբիւ
եկեղեցիներ հիմքից շինված Քիֆլիսում, Լոռու գավառում,
Արարատյան երկրում, Սիսական գավառում, Ղափանի գա-
վառում, Նախիջևան քաղաքում և սրա գյուղերում, ինչպես
Աստապատի մեծաշուր և վայելչատես եկեղեցին, Նախիջևան
քաղաքի եկեղեցին, Ճահուկ, Շահակերտ, Գաղ գյուղերի եկե-
ղեցիները, որոնք շինվեցին տեր Հակոբ կաթողիկոսի օրերում:
Նաև Շոտթի եկեղեցին, Ազուլիսի վանքը և գյուղի շորս եկե-
ղեցիները, Թավրիզ քաղաքի եկեղեցին, Գարաշամբի եկեղե-
ցին, Յղնայի եկեղեցին, սրանք և ուրիշներ, որոնք չեմ հիշա-
տակում, մի մասը Մովսես կաթողիկոսի օրերում շինվեց, մի
մասը՝ Փիլիպոս կաթողիկոսի օրերում, որոնք թող տեր աստ-
ված անասան պահի մինչև հավիտյան:

Գ Լ Ո Ւ Ե Ի Է

ՏԵՐ ԱՆԿՐԵԱՍ ՔԱԶԱՆԱՅԻ ՆԱԶԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այնպես էր լինում, որ պարսից մեծ և առաջին Շահ-
Աբաս թագավորը ականջ էր կախում զբոլորտի ժողովանց,
որոնք չար բաներ էին խոսում Նախիջևան քաղաքի բնակիչ-
ների մասին: Շահը մեծ ցասումով լցվեց նրանց դեմ և հրա-
մայեց քաղաքի բոլոր բնակիչներին հանել, արտաքսել, քը-
շել տանել Փահրապատ քաղաքը, իսկ Նախիջևան քաղաքը
ավերել, տներն ու բոլոր շինվածքները քանդել, այգիները
կտրատել: Թագավորի հրամանը անարգել կատարվեց նը-
րանց վերաբերյալ, որովհետև բոլոր բնակիչներին հանեցին,
քշեցին Փահրապատ: Իսկ Նախիջևանի բնակիչներից աննշան-
ները, ստորին խավը փախչելով շրջակա գյուղերը, թաքնվե-
ցին այստեղ-այնտեղ: Սրանցից մեկն էլ տեր Անդրեասի ժը-
նոդներն էին, որոնք գնացել էին Ազուլիս գյուղը և այնտեղ
տեղավորվել:

Մինչդեռ տեր Անդրեասը մանուկ էր, նրան ուսման տվին.
սովորեց եկեղեցական ամբողջ ուսմունքը: Երբ մեծացավ,

չափահաս դարձավ, նրան աշխարհ մտցրին՝ հարսանիք արին:
Եվ ինչպես գրված է, ըստ իր անձի և ժողովրդի վկայություն,
նրան քահանա ձեռնադրեցին, իսկ նա քահանայությունը վա-
րում էր որպես վայել էր քահանայություն կարգին:

Սույն ժամանակներում Մովսես վարդապետը, որ հաս-
նել էր միաձնի կաթողիկոս եղավ, և Պողոս վարդապետը, որի մա-
սին պատմեցինք, հայտնվեցին հայոց Արևելյան աշխար-
հում անբիժ ու պարկեշտ վարքով, որովհետև երկրի երկիր
շրջում էին, քարոզում, շինում եկեղեցիներ, կարգում քահա-
նաներ ըստ առաքյալների կարգի:

Մեր հավատի և կրոնի հաստատության համար գլխոց-
ներ բացին պատշաճավոր տեղերում՝ Աստապատ և Շոտթ¹⁴³
գյուղերում, որպեսզի շրջակա գյուղերից երևխաները այնտեղ
հավաքվեն սովորելու համար: Այդպես էլ Ազուլիս գյուղում
դպրոց բաց արին և մանուկների համար ուսուցիչ նշանակե-
ցին տեր Անդրեասին: Այդտեղ հավաքվեցին մոտ հիսուն-
վաթսուն երեխաներ, որոնց վերակացուն տեր Անդրեասն էր,
որ զեկավարում և ուսուցանում էր մեր եկեղեցու ընդհանուր
ուսմունքը:

Այնպես եղավ, որ Շահ-Աբաս թագավորը եկավ Ազուլիս
գյուղը այսպիսի պատճառով: Օսմանցիներից ոմն զորավար
Օթուզ Ահմադ փաշա անունով մեծ զորքով եկավ Երևանի
բերդի վրա, որպեսզի պարսիկներից գրավի, դարձնի օսման-
ցիների կողմը: Այս պատճառով պարսից Շահ-Աբաս թագա-
վորը հավաքելով պարսկական ողջ զորքերը՝ եկավ Երևանի
բերդին օգնություն:

[Օսմանցիների] զորավարը նստավ բերդի շուրջը, երկու
և կես ամիս կովեց, չկարողացավ գրավել: Վրա հասավ ցուրտ
աշունը, և նեղվելով ցրտից ու սովից, վերադարձավ իր ողջ
բանակով և շարժվեց գնաց Կարին քաղաքը՝ օսմանցիների
երկիրը: Զորավարի գնալուց հետո շահն էլ Երևանից վերա-
դարձավ և գնաց Նախիջևան, այնտեղից էլ Ազուլիս: Արդ՝
այս պատճառով շահը Ազուլիս եկավ: Շահը սովորություն
ունեի, ուր էլ կմտներ՝ թե քաղաք, թե երկիր, տեղի բոլոր բը-
նակիչները միանգամից ընդառաջ էին ելնում՝ իշխաններ,
ժողովուրդ, տղամարդիկ, կանայք, աղջիկներ, երիտասարդ-

ներ ու մանուկներ: Բոլորն էլ զարդարվում էին ազնիվ ու թանկագին զարդերով, (տանում էին) քաղցրահամ մրգեր, համադամ ու անուշաբույր ուտելիքներ, ծաղկահամ գինիներ: Վայելչահասակ ու գեղեցկատես մանուկներն ու աղջիկները, կանայք ձեռքները բռնած դիմին ոսկե բաժակով մատուցում էին շահին: Նաև աշխարհիկ գուսաններն ու երգիչները առջևից ընթանալով և գեղարվեստական երգերով քաղցրանվագ երգում էին: Նաև եկեղեցականները՝ քահանաներ, պաշտամունք կատարողներ, հազած շուրջառ ու ժամաշապիկ, առած խաչ, ավետարան, բարձրացրած խաչվառ, խունկերով, մոմերով, զանգակներով ու ծնծղաներով դուրս էին գալիս շահին ընդառաջ և երգելով գնում, մինչև հասցնում էին նրա իջևանատեղը:

Արդ՝ երբ Ազուլիս գյուղի քահանաները եկան շահի առաջ հագած շորերով, նրանց հետ կային դպրոցի մանուկներից ոմանք, որոնք շապիկ էին հագած, վերցրել էին մոմակալներ ու մոմեր և գնում էին խաչվառների առընթեր: Մինչ քահանաները երգելով գնում էին շահի առջևից, շահը նայում էր այստեղ-այնտեղ և ըստ իր չարահույ մտքի ու բարոյախոսության զննում էր բոլորին և զննելիս նայեց մանուկներին, տեսավ, որ մանուկների գագաթները ածիլած էին: Այս բանը նրան սարսափելի ծանր թվաց, որովհետև համարեց, թե իր համար են այդ արել, որպեսզի մանուկները նրա աչքին վայելագեղ շերտան և շահին հաճելի շինի, որ նրանցից շվերցընի: Ծահը վայրկենապես ցասումով լցվեց այն մարդու դեմ, որ մանուկների գագաթները ածիլած է եղել: Նաև մահմեդական հավատք ունեցող մարդիկ, որ բնիկ Ազուլիս գյուղի բնակիչներ են՝ երևելի իշխաններ, որ շահի հետ շրջում էին և նրան մոտիկ սպասավորում, քրիստոնյաների դեմ ունեցած բնական նախանձի պատճառով ավելի ևս դրգռեցին ու զայրացրին քրիստոնյաների դեմ թագավորի ցասումը, դրա համար շտապ հուզմունքով շահը հրամայեց քննել ու դատել նրան և սպանել, ով այդ բանն արել է: Եթե մանուկների ծընողներն արած լինեն այդ, նրանց սպանել և ունեցվածքները հափշտակել, իսկ մանուկներին վերցնել թագավորի ծառայության մեջ: Իսկ թագավորի առաջիկա ծառայողները

սկսեցին քննել, սրանից, նրանից հարցնել, թե ո՞վ այն արած կլինի: Ամենքը պատասխանում էին, թե չգիտեն: Ապա մեջտեղ բերին տեր Անդրեասին, ստիպելով պահանջում էին, թե ասա մեզ, քանի որ մանուկների վերակացուն դու ես և դու ես անդլակ: Իսկ տեր Անդրեասը մտքում խորհում էր. եթե ծնողներին մեղադրեմ, նրանց կսպանեն և մանուկներին կհհափշտակեն, եթե մեկ ուրիշի մեղադրեմ, նրան կսպանեն, իսկ այդ կղաղնա ինձ համար խղճմտանքի անփարատելի ցավ ըստ սուրբ ավետարանի վկայության, թե՛ «Լավ է, մի մարդ մեռնի, որ ամբողջ ժողովուրդը չկորչի»^{*}: Այս պատճառով լավ համարեց իրեն մատնել ու շատերին փրկել: Եվ երբ զինվորները շատ ստիպեցին, տեր Անդրեասը ուրիշներին փրկելու համար ասաց, թե ես եմ արել այդ: Զինվորները նրա խոսքը հայտնեցին շահին, իսկ շահը հրամայեց՝ բռնել նրան և պահել կալանքի տակ: Թրեք հետո շահը հրամայեց նրան բերել իր առջև. հարցրեց. «Թե ճիշտն ասա, ո՞վ է այդ գործի անողը»: Տեր Անդրեասը ասաց. «Ոչ ոք, այլ միայն ես»: Իսկ շահը տեսավ, թե ուրիշ մեկի շմատնեց, սարսափելի բարկացավ նրա վրա, հրամայեց տարածել գետնի վրա ու անխնա բրածեծել: Ետ հարվածներից հետո շահը ասաց. «Դու այդպիսի վնաս ու հանցանք ես գործել, եթե կամենում ես կենդանի մնալ, ուրացիր ձեր քրիստոնեական հավատը, ընդունիր մեր կրոնը և մեր մուրք առաջնորդի դավանանքը, ես քեզ կտամ պատիվներ ու մեծություն. իսկ եթե չհամաձայնվես, շների ու գաղանների առջև կնետեմ քեզ»: Նա հանձն առավ ուրանալ, այլ պատասխան տվեց, թե քրիստոնյա եմ և Քրիստոսի ծառայող եմ: Իսկ թագավորը այդ լսելով զայրագին բարկություն հրամայեց դարձյալ բանտ գցել:

Մյուս օրը վերստին բերեց իր առջև և հարցրեց՝ «Ուրանո՞ւմ ես քո հավատը»: Տեր Անդրեասը ասաց. «Չեմ ուրանում»: Կրկին անգամ արքան ասաց. «Քեզ պատիվներ ու մեծություն կտամ, եթե ուրանաս ձեր հավատը»: Իսկ նա չըհամաձայնվեց, և դարձյալ հրամայեց բանտ գցել:

* Դավրիժեցին բռնացի չի բերել. Ավետարանում ասված է. «Լաւ է ան միւմ մեռանել ի վերայ ժողովրդեանն» (Յովհ. ԺԸ 14): Լավ է, որ մի մարդ մեռնի ժողովրդի համար:

Իսկ քրիստոնյաները մոտեցան թագավորի նախարարներին և խոստացան մեծ դրամ, որ գուցե աղատեն նրան: Թեպետ նախարարները երկիցս, երիցս խնդրեցին, արքան չըլաեց: Նաև ցղնացի խոջա Անձրևի կինը, որին շահը մայր էր առել, և հարգանք ուներ շահի առջև, մեծ աղաչանքով ընկալ շահի ոտքը, խնդրեց աղատել նրան, սրան նույնպես չլսեց:

Գարձալ տեր Անդրեասին բերին արքայի առջև. շատ անգամ արված հարցուփորձից, պարզենների խոստումով, տանջանքների սպառնալիքով, երբ թագավորը տեսավ, չի համաձայնվում, հրամայեց սպանել: Իսկ քաջ նահատակ և ճշմարիտ քահանա տեր Անդրեասը հաստատուն հավատով կանգնած էր քրիստոնեություն մեր հավատի անշարժ հիման վրա:

Իսկ զինվորները առան տեր Անդրեասին կապանքներով տարան ի կատար ածելու տեղը, և նա ուրախությամբ ու հոժար կամքով գնում էր: Եվ երբ հասավ կատարման տեղը, ինքը արձակեց իր գոտին, հանեց հագուստները և դահիճներին ասաց, որ իր վրա կատարեն թագավորի հրամանը: Բայց դահիճները ուշացնում էին, թե գուցե համաձայնի թագավորի առաջարկներին:

Եվ մինչ սուրբը կանգնած էր կատարման տեղում, թագավորը նրա մոտ ուղարկեց նախարարներից ոմանց կրկին անգամ, թե՛ «Մի կորցնիր քո գեղեցկությունն ու երիտասարդությունը, եկ, համաձայնվիր իմ խոսքերին և ինձնից պարզեներ ու մեծություն առ»: Իսկ քաջ նահատակը նրանց բոլոր խոսքերին պատասխանում էր, թե՛ «Ձեր դատարկ խոստումները չեմ ընդունում և իմ ճշմարիտ հավատը չեմ ուրանում»: Դահիճները հանել էին սրերը, խաղացնում էին նրա վրա, գնում էին որովայնին նրան վախեցնելու համար, բայց նա չէր երկնչում:

Նահատակության տեղը եկան սրբի ծնողները և կանգնած էին մոտը. աղիողորմ ու հորդաբուխ լալիս էին և աղաչանքով ասում սրբին. «Մեր քաղցրիկ որդյակ, որ ստանձնեցիր քահանայության կարգ և եղար Քրիստոսի զինվոր, երբեք չուրանաս Քրիստոսին և լինես Քրիստոսի ատողների վիճվոր. չթողնես Քրիստոսի լուսապայծառ հավատքը և ժամանակավոր կյանքի համար զրկվես հավիտենական կյանքից, այլ հիշիր Քրիստոսի ճշմարիտ մարտիրոսներին, որոնց պատ-

մությունը մշտապես կարգալով պատմում էիր մեզ, համբերիր, ինչպես նրանք, որպեսզի նրանց պատկին արժանանաս»: Անողները փղձկացող սրտով, հորդաբուխ արտասուքներով, ազերսելով այս և սրա նման խոսքեր էին ասում սրբին նրա մոտ կանգնած: Իսկ դահիճները երկար ժամանակ ուշացնում էին այնտեղ, որ թերևս երկմտելով թուլանա, բայց սուրբը անզրդվելի կանգնել էր ճշմարիտ հավատի վրա և զեմքը խաչակնքելուց չէր դադարում: Երբ դահիճները տեսան նրա հաստատուն մտադրությունը, որ չի դառնա [իր հավատից], այդ ժամանակ սուրբը երկարելով պատուեցին նրա որովայնը, և փորից աղիքները դուրս թափվեցին: Իսկ սուրբը մի ձեռքով աղիքներն էր հավաքում փորում, մյուս ձեռքով խաչակնքում էր երեսը և հիշում Քրիստոսի անունը: Ապա [դահիճները] ոտքի սրունքների շիլերը ծակեցին և պարանով բարձրացրին վեր և սրբին զլիսվայր կախեցին: Նա մնաց կենդանի մինչև արևամուտ. երեկոյան մաքուր հողին ավանդեց աստծու ձեռքը որպես անուշաբույր խունկ և ընդունելի մատաղ:

Սրբի մահից հետո շահը հրամայեց նրա մարմինը նետել շինությունից դուրս, որպեսզի կերակուր գառնա գաղաններին ու թուղունների: Իսկ քրիստոնյաները այնտեղից վերցրին. բերին Ազուլխի ներքին եկեղեցին, որ այժմ կոչվում է եցածորի եկեղեցի, և այնտեղ թաղեցին. այժմ էլ այնտեղ թաղված են նրա ոսկորների պատվական նշխարները բոլոր քրիստոնյաների բարեխոսության համար:

Աստծու սուրբ քահանա տեր Անդրեասի նահատակությունն ու մարտիրոսական մահը տեղի ունեցավ հայոց մեծ թվակալության 1066 [1617] տրե՞ ամսի 10-ին, այսինքն՝ նոյեմբեր ամսի տասնութին: Նրա հիշատակը թող օրհնությամբ լինի, իսկ աղոթքներով տեղը մեզ ողորմի. ամեն:

Տեր Անդրեասի նահատակությունից հետո, երբ արդեն երեք կամ չորս ամիս անցել էր, խոսք ու պրույցի մեջ Շահ-Աբասի առջև վերստին հիշվեցին տեր Անդրեասի արարքի որպիսությունն ու իրողությունը: Եվ այնտեղ նախկին շարա-

* Տրևն հայոց տոմարի 4-րդ ամիսն է, որ անշարժ տոմարով համապատասխանում է նոյեմբերի 9-ից դեկտեմբերի 8-ը:

խոսներէց մեկը՝ Ագոլիսի մահմեդական բնակիչ, որի մասին կանխավ հիշատակեցինք, Շահոուզ բեկ անունով շահի առջև ասաց, թե՛ «Տեր Անդրեասը, որ մանուկների կուլակները ածելի էր, ոչ թե իր խելքով էր արել, այլ իր վերագասի խորհրդով, քանզի իրեն խրատիչ ուներ: Անմիջապես հարցում արին խրատողի մասին, թե ով է: Մարդկանց ու անասունների համեմատութեան մեջ մահմեդականները համեմատվում են օձի հետ նախանձի ու նենգութեան պատճառով, որ ի բնի ունեն ջրիստոնյա ազգերի ու հավատի հանդեպ: Դրանցից մեկը այս Շահոուզ բեկն էր նույն ախտով հիվանդացած. սա Մովսես վարդապետին մատնեց շահի ձեռքը՝ ասելով. «Կա մի մարդ, որի անունն է Մովսես, որ քրիստոնեական կրոնի վարդապետ է. սրա բնակութեան վայրը Տաթև վանքն է, իսկ ինքը Սյունյաց երկրից է: Նա է տեր Անդրեասի օրինասուտւյցն ու դաստիարակը: Սրա համար թագավորից հրաման եղավ զորականներ ուղարկել, Մովսեսին բռնել և կապանքներով բերել թագավորի մոտ: Զորականները գնացին Մովսես վարդապետին բռնեցին, սրա հետ նաև Պողոս վարդապետին: Զուգափայտից օղակ սարքեցին, դրին նրանց պարանոցները, և երկաթե ոտնակապեր՝ ոտքերը, ձյուն-ձմեռովա ցուրտ օրերին երկու վարդապետներին բերին շահի բանակը և հայտնեցին նրան: Իրենց խորհրդակցութեան սենյակում քննել էր շահը և ասել. «Եթե երկու մարդ սպանեմ, քրիստոնյաներին քիչ վնաս կլինի, մեզ էլ քիչ օգուտ, բայց նրանցից կառնեմ դրամի խոշոր տուգանք, որով մեզ ավելի օգուտ կլինի, իսկ նրանց վնաս»: Ել այսպես ազահութեան և դրամամուլութեան հետևանքով տուգանք դրեց վարդապետների վրա. ասելով՝ «Եթե հինգ հարյուր թուման տան, ապա ազատ կզնան»: Իսկ քրիստոնյաները աղերսագիր ներկայացրին թագավորի նախարարներին, որպեսզի նրանք արքային խնդրեն տուգանքը թեթևացնել: Նախարարների միջնորդութեան հետևանքով տուգանքը իջավ երեք հարյուր թումանի, և այնտեղ վճեց, թե անպատճառ պետք է տան: Նրանց վրա դրականներ նշանակեց, որ առնեն: Իսկ վարդապետները, որովհետև միջոց չունեին, որ տուգանքը տային, ուստի ելան շրջազառութեան ողորմութուն խնդրելու հայոց ողջ ազգից:

Իսկ աստվածասեր քրիստոնյաները թեպետ աղքատ ու շքավոր էին, բայց ըստ իրենց կարողութեան աղքատներ ու հարուստներ, տղամարդիկ ու կանայք առանց խնայելու ինչք ու ողորմութուն էին թափում վարդապետների առջև: Իսկ նրանք առնելով ողորմութունը, ուր էլ լինեք, գերի, բանտարկյալ, անազատելի պարտական և այլ պակասավոր, նախ սրանց էին տալիս և ազատում: Այս պատճառով շատ գերիներ, բանտարկյալներ, պարտապաններ ազատվեցին, իսկ մնացածը տալիս էին իրենց հակող զորականներին իրենց տուգանքի դիմաց: Եվ այսպիսի շրջազառութեամբ մինչև շորսհինգ ամիս վճարեցին երեք հարյուր թումանը, իսկ իրենց ազատվեցին կապանքից աստճու ողորմութեամբ և քրիստոնյաների ավաժներով: Բայց մինչ երեք հարյուր թուման վճարեցին արքայի զանձարանին, շորս հարյուր թուման, մանավանդ էլ ավելի, այստեղ-այնտեղ ծախսվեց, և ապա վարդապետները ազատվեցին:

Իսկ Շահոուզ բեկը, որ Մովսես վարդապետին մատնեց, քիչ օրեր անց սրով սպանվեց շահի զորականների կողմից՝ այստեղ ընդունելով իբրև իր վաստակների հատուցում մարմնի սատակում, իսկ այնտեղ հողու կորուստ և հավիտենական տանջանք, որոնցից մեզ փրկեց մեր փրկիչ Քրիստոսը, որին փառք հավիտյանս. ամեն:

Գ Լ Ո Ւ Ե Ի Ը

ՊԵՏՄՈՒԹՅՈՒՆ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻ, ՈՐ ԿՐԵՅԻՆ ԼՎՈՎ ՔԱՂՍՔՈՒՄ ԲՆԱԿՎԱԾ շԱՅ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԸ

Վերևում պատմութեան ընթացքում գրեցինք Մեթրեմի կաթողիկոսի մասին, թե նա գնաց լեհերի երկիրը՝ Արդ՝ երբ նա այնտեղ հասավ և մտավ կվով քաղաքը, որոշ օրեր անցնելուց հետո նույն կվովում մի ոման արևդա, որի անունն էր Նիկոլայոս¹⁴⁴ [Նիկոլ], ինչ-որ մարդկանց միջնորդ ու բարկոս անելով ուղարկեց Մեթրեմի կաթողիկոսի մոտ, որպեսզի իրեն եպիսկոպոս օրհնի կվով քաղաքում և նրա շրջազառութեամբ ապրող հայերի համար, որովհետև այդ ժամանակ

Նրանք եպիսկոպոս շունկին: Միջնորդները եկան կաթողիկոսի մոտ, նրան ընծայեցին մեծ քանակությամբ ոսկի և խնդրեցին Նիկոլայոս արեղային եպիսկոպոս անել: Կաթողիկոսը տեսնելով առձեռն ոսկու շատությունը, նաև հետազայում շատ քակի և ստանալու ակնկալությունը, բարեհաճեց Նիկոլայոսին Լվովի եպիսկոպոս օրհնել:

Իսկ քաղաքի քահանաներն ու ժողովուրդը, իշխաններն ու ռամիկները, վաղուց խմանալով Նիկոլայոս արեղայի վարքի որպիսությունը՝ միանգամից բոլորը հավաքվեցին, եկան կաթողիկոսի մոտ, նրան հայտնեցին իրենց խոսքը, ասացին. «Մենք զրան և զրա վարքի որպիսությունը գիտենք, ուստի գա մեզ համար անընդունելի է, զրան մի (օրհնիր), այլ մեկ արիշին արա մեզ եպիսկոպոս»:

Իսկ կաթողիկոսը արհամարհելով անարգեց ժողովրդին ու նրանց խոսքը և հեռացնելով իրենից՝ նրանց ետ դարձրեց: Բայց ժողովուրդը հաստատ մնաց իր խոսքին, ուստի շատ օրեր խոսեցին կաթողիկոսի հետ և շփոզին, որ Նիկոլին եպիսկոպոս օրհնի:

Այա կաթողիկոսը քաղաքից՝ դուրս եկավ, գնաց վանքը, որ սրբուհի աստվածածնի անունով շինված է քաղաքից դուրս, որին լվովցիները Հաճկատար աստվածածին են ասում. այնտեղ առանց ժողովրդի գիտության և նրանից մեկուսի կես գիշերին սկսեց Նիկոլ արեղային եպիսկոպոս օրհնել: Այս բանին քաղաքի ժողովուրդը իրազեկ դառնալով՝ անմիջապես հենց նույն գիշերը իշխաններն ու ռամիկները շտապ հավաքվեցին միատեղ, քաղաքի փոքր դռնից ելնելով հապճեպ հասան այնտեղ: Գոռում, գոչում էին կաթողիկոսին. «Դրան մի օրհնիր և մեզ ու մեր եկեղեցին մի մատնիր այդ անիրավի ձեռքը, որովհետև մենք զրա և զրա վարքի որպիսությունը իմանում ենք, ուստի մեզ համար անընդունելի է»: Իսկ կաթողիկոսը նստած աթոռի վրա Նիկոլ արեղային եպիսկոպոս էր օրհնում և ձեռքին բռնած խաչով սաստում էր ժողովրդին ու նրանց ասում էր այնպիսի տգեղ խոսքեր, որ այնտեղ հիշատակել անհնար է: Թեպետ խեղճ ժողովուրդը խռովված աղմկում ու ավելի շատ էր աղաղակում, բայց կաթողիկոսը չլսեց նրանց, այլ Նիկոլին եպիսկոպոս օրհնեց:

Կարճ ժամանակ անց Մելքիսեթ կաթողիկոսը կամեցավ

Լվովից ելնել և գնալ Կամենից¹⁴⁵ քաղաքը: Ժողովուրդը մըտածեց, որ թերևս Նիկոլին կաթողիկոսի հետ ճանապարհ դրնեն գնալու: Երբ ժողովուրդը Նիկոլի հետ խոսեց կաթողիկոսի հետ գնալու մասին, նա խաբեց նրանց՝ իրեն ցույց տալով, թե հոժար կամքով գնում է: Եվ երբ որոշ օրեր ճանապարհ գնացին, կաթողիկոսը Նիկոլին ասաց. «Բավական է, որքան եկար, այսուհետև խաղաղությամբ վերադարձիր քո տեղը և քո եպիսկոպոսության գործին»: Նիկոլն ասաց. «Քո իսկ աչքերով տեսար, թե որքան հակառակվեցին քեզ և ինձ չէին ուղում. իսկ այժմ ինչպե՞ս հանդգնեմ գնալ նրանց մեջ»: Նիկոլը այնքան հնարամտեց, մինչև որ կաթողիկոսը բանադրանքի, նզովքի ու կապանքի թղթեր գրեց ժողովրդի վրա և տվեց Նիկոլ եպիսկոպոսի ձեռքը, որպեսզի եթե որևէ մեկը ընդդիմանալով հակառակվի և նրան (Նիկոլին) եպիսկոպոսության պատվով չընդունի, ընկնի բանադրանքի տակ: Նիկոլը առավ այս թուղթը և եկավ Լվով, ասաց ժողովրդին. «Քուր բոլորդ կիրակի հավաքվեք եկեղեցում, քանզի կարևոր խոսք ունեմ ընդհանրապես ձեզ բոլորիդ ասելու»:

Կիրակի օրը, երբ ժողովուրդը հավաքված էր եկեղեցում, հանեց բանադրանքի թուղթը և կարդալ տվեց ի լուր բոլորի: Երբ ամբողջ ժողովուրդը այդ տեսավ ու լսեց, մեծ սգով տրտմեց, վհատված սրտով ապուշ կտրեց, ափիբերան եղած լոնց: Իսկ կաթողիկոս Մելքիսեթը, որ գնում էր Կամենից, նրբ այնտեղ հասավ, մի քանի օր հետո հիվանդացավ և մեռավ: Ծիշտ աղուհացքի պատին՝ ծաղկաղարդի շաբաթ օրը, Ղաղարոսի հարության տոնին, մեր թվականության 1075 [1626]-ին, և այնտեղ թաղվեց: Սրանից հետո, օրեր տարիներ անց պատահեց, որ Նիկոլ եպիսկոպոսը գնաց Կամենից նույն քաղաքից խաչկո անունով ոմն սարկավագի օրհնեց արեղա, անունը փոխեց և կոչեց Օնոփրիոս:

Եվ կեսաբացի Գրիգոր վարդապետը, որ վարդապետության գավազան էր տվել Մովսես կաթողիկոսին, երևելի մարդ էր, վարքով պարկեշտ, շորակյաց*, իմաստությամբ հարուստ, բանիբուն և շատ խելոք, որի պատճառով նա երկրում ան-

* Չորակյաց նշանակում է շոր բաներ ուտող, զրանք մինչև իսկ ձեթ չէին ուտում, զինի չէին խմում:

վանի էր և ամբողջ երկիրը կախված էր նրանից: Այնպես պատահեց, որ այս Գրիգորը այդ օրերին եկավ լեհերի երկիրը. նախ մտավ Կամենից քաղաքը. այնտեղ՝ Կամենիցում էր նաև Նիկոլ եպիսկոպոսը: Նիկոլ եպիսկոպոսը և ուրիշներ կամեցան նորընծա արեղա Օնոփրիոսին քառասունքից¹⁵ դուրս բերել: Գրա համար եկան Գրիգոր վարդապետի մոտ, մեծարանքով հրավիրեցին գալ մյուս եկեղեցին, որտեղ նորընծան պատարագ էր մատուցելու: Բայց նորընծան դեռևս քառասունքը լրիվ չէր պահել, քանի որ տասնհինգ օրվա օրհներված էր, սակայն կամենում էին դուրս բերել: Այդ պատճառով վարդապետը ասաց. «Որովհետև քառասուն օրը դեռևս չի լրացել, քառասունքից չպետք է հանել, այլ պետք է քառասունքը լրիվ պահել ըստ հայոց եկեղեցու ավանդության և ըստ մեր հայրապետների կանոնների, և միայն դրանից հետո նորընծան իրավունք ունի պատարագ մատուցել և քառասունքից դուրս գալ: Այս պատճառով նրանք այդ շաբաթ լուսին և նորընծային դուրս չբերին: Երբ մյուս կիրակին վերա հասավ, Նիկոլը և մյուսները կամեցան նորընծային դուրս բերել, ուստի շաբաթ օրը երկրորդ անգամ եկան վարդապետին՝ հրավիրեցին, իսկ վարդապետը չգնաց, այլ ասաց. «Սոսքը մեկ կլինի, քանի դեռ քառասունքը չի լրացել, չպետք է պատարագ մատուցի, այլ սպասեցեք, մինչև քառասունքը լրանա, ապա պատարագ անի և քառասունքից դուրս գա, ինչպես որ հայ ազգի ավանդությունն է և մեր հայրապետների կողմից կանոնված»: Իսկ նրանք չանսացին վարդապետի խոսքերին և չհամբերեցին, այլ գնացին այն կիրակի օրը նորընծային դուրս բերին, որ պատարագ մատուցեց: Իսկ այդ կիրակին, երբ նորընծան պատարագ մատուցեց, դեռ նրա քսաներկուերորդ օրն էր, որ քառասունք էր պահում:

Այդ նույն կիրակի, երբ պատարագ էին մատուցում, Նիկոլ եպիսկոպոսը չափազանց հանդուգն և անպատշաճ գործարեց: Այն եկեղեցին, որի մեջ գտնվում էր վարդապետը, եպիսկոպոսը՝ դուռը փակեց, բանալին վերցրեց իր մոտ՝ չհիշելով տիրոջ հրամանը՝ «Եթե մատուցես քո պատարագը և այնտեղ հիշես, որ քո եղբայրը քեզնից խռով է, թող քո պատարագը սեղանի վրա և գնա նախ հաշտվիր քո եղբոր հետ,

ապա եկ մատուցիր քո պատարագը»¹⁶: Այն գործի համար, որ եպիսկոպոսը փակեց եկեղեցին, վարդապետը շատ վշտացավ, ուստի ասաց. «Անիծվի այն մարդը, որ այսօր գնա այն եկեղեցին»: Պատարագը ավարտելուց և նորընծային դուրս բերելուց հետո եկեղեցու դուռն էլ փակեց, և երկու եկեղեցիների դռներն էլ եղան փակ: Այդ օրերը ավագ տոնների օրեր էին. նույն կիրակվանից հետո եկող երկուշաբթի օրը Գիավիթ մարգարեի և տեր Հակոբի եղբոր տոնն էր, երեքշաբթի օրը Ստեփանոս նախավկայի տոնն էր: Այս օրերին եկեղեցիները փակ մնացին առանց ժամի ու պատարագի:

Ի լրացումն սրանց Նիկոլը մի այլ նենգություն ևս արեց վարդապետի նկատմամբ և վշտացրեց նրան, որովհետև գընաց Կամենից քաղաքի քաղաքազլխի մոտ. սա մեծ իշխանի կողմից Կամենից քաղաքի վերակացու էր կարգված, որի անունն էր Լուքաշ: Եպիսկոպոսը սրա հետ խոսեց և նրան համոզեց, որ վարդապետին արգելի, շթողնի կվով կամ այլ քաղաքներ գնալ, այլ Կամենից դարձնի նրան, ետ դառնա իր եկած ճանապարհով և գնա այլ երկիր: Ուստի Լուքաշ անունով քաղաքազլխը վարդապետի մոտ պատգամավոր ուղարկեց՝ ասելով, թե՛ «Մեր մեծ իշխանը մեզ թուղթ է ուղարկել, թե այդ վարդապետը, որ թուրքի երկրից է եկել, լրտես է եղել, չի թույլատրվում քաղաքից դուրս գալ, մի թողնեք, որ գնա, և թե ոչ ձեր գլուխը կգնա»: Այսպիսի խոսքերով վարդապետին արգելեցին գնալ, իսկ վարդապետը այնտեղ մնում էր իբրև նախնական կալանատան մեջ: Ապա քաղաքի ժողովրդից բարեպաշտ մարդիկ գնացին քաղաքապետի մոտ և նրան հայտնեցին վարդապետի անմեղությունը: Ապա վարդապետին թույլատրվեց, որ ելնի գնա ոչ թե կվով, այլ ետ այնտեղ, որտեղից եկել էր: Վարդապետը Կամենիցից ելավ, գնաց Մուղավիա ու Եվրոպական Թուրքիա և ճանապարհից բանադրանքի, նդովքի ու կապանքի թուղթ գրեց Նիկոլի վրա և ուղարկեց կվով: Նիկոլը բանի տեղ չդրեց բանադրանքը, այլ մնում էր իր [հոգևոր] կարգի և քահանայագործության մեջ: Բայց քահանաներից ու ժողովրդից

* Մատթ. Ե 23:

նրանք, որոնք առաջվանից հակառակ էին Նիկոլին, բերան առած խոսում էին, նաև երեսին էին շարտում, ոմանք էլ հակառակորդ էին դառնում և օրավուր զորեղանում էին Նիկոլի հակառակորդները:

Նաև Գրիգոր վարդապետը այս անցքերի ամբողջ որպիսությունը, այլև Նիկոլի անուղղելի բարբը նամակով իմացրեց Սուրբ էջմիածնի Մովսես կաթողիկոսին և խնդրեց նրանից, որպեսզի նա ևս բարձր հրամանով Սուրբ էջմիածնի և կաթողիկոսական իշխանությունը բանադրի Նիկոլի եպիսկոպոսին: Մովսես կաթողիկոսը նույնպես բանադրանքի թուղթ գրեց և ուղարկեց Նիկոլի եպիսկոպոսի վրա և այս պատճառով ավելի զորեղացան հակառակորդները Նիկոլի դեմ, ներան մարդատեղ չէին դնում:

Այս ժողովրդից ոմանք Նիկոլին հարցրին, թե ինչու՞ չես գնում Գրիգոր վարդապետի մոտ և արձակում ստանում նրա կապանքներից: Նա պատճառարանեց, թե ճանապարհի ծախս չունեմ: Իսկ ժողովուրդը հավաքեց երեք հազար զուռուշ և տվեց նրան իբրև ճանապարհի ծախս: Այսուհետև եպիսկոպոսը թե յուրայինների խորհրդով, թե իր բարեկամների զորումով, կամ թե ժողովրդի հարկադրանքով կվովից դուրս եկավ գնաց Կոստանդնուպոլիս, Կեսարիայի կողմերը, որպեսզի թերևս որևէ տեղ գտնի Գրիգոր վարդապետին, մեզա ասի և նրա կապանքներից արձակում ստանա: Եկավ, հասավ Բուրսա¹⁴⁷ քաղաքը. այնպես պատահեց, որ այդ օրերին այնտեղ էր նաև խարբերոցի¹⁴⁸ Արիստակես վարդապետը: Արդ՝ այս Արիստակես վարդապետը և այն կեսարացի Գրիգոր վարդապետը իրար հետ շատ սաստիկ ոխ ունեին, բայց թե ինչ էր նախանձի ու ռիսակալության պատճառը, երկար որոնեցի, հավաստի կերպով չիմացա, ուստի և անհավաստին չգրեցի: Այս ռիսակալության պատճառով Արիստակես վարդապետը երկար ու զանազան ձևերով խոսեց Նիկոլի եպիսկոպոսի հետ և նրան արգելեց գնալ Գրիգոր վարդապետի մոտ: Երբեմն ասում էր. «Դու եպիսկոպոս ես, իսկ նա վարդապետ, նա իշխանություն չունի քո վրա»: Երբեմն էլ ասում էր. «Եվ ուր և նախանձից է բանադրել քեզ»: Երբեմն ասում էր. «Ես էլ նրա նման վարդապետ եմ, ես կարձակեմ քեզ կապանքից»: Ուրիշ բազմազան ձևերով խոսեց և լիթոցեց գնալ

Կեսարիա¹⁴⁹ Գրիգոր վարդապետի մոտ: Այնուհետև Նիկոլը ինքը չգնաց, այլ աղերսագիր գրեց Գրիգոր վարդապետին, թե՛ «Մինչև Բուրսա եկա, այստեղ հիվանդացա և մահի՞ճ եմ ընկած, ուստի չեմ կարող գալ. խնդրում եմ, որ իմ վրայից վերցնես բանադրանքը, արձակես կապանքից և ինձ ու ժողովրդին օրհնություն թուղթ ուղարկես, որպեսզի թերևս քո աղոթքներով ու օրհնությամբ այստեղից վերադառնամ և ողջ հասնեմ իմ տեղը»: Իսկ վարդապետը ստանալով աղերսագիրը՝ անկեղծ սրտով հավատաց եպիսկոպոսի խոսքերին իբրև ճշմարիտ խոսքերի, արձակման և օրհնության թուղթ գրեց եպիսկոպոսին, նաև օրհնության գիր՝ կվով քաղաքին և ուղարկեց Նիկոլին, որ Բուրսայում էր: Նիկոլը այդ թղթերը առավ, գնաց, հասավ կվով: կվովցիները, երբ տեսան Գրիգոր վարդապետի թղթերը, ուրախացան և միաբանվեցին եպիսկոպոսի հետ: Իսկ Գրիգոր վարդապետը ճանապարհորդներին և իմացող մարդկանց միջոցով վերահասու եղավ, թե Նիկոլի եպիսկոպոսը Բուրսայում եղած ժամանակ ոչ հիվանդացել և ոչ էլ տկարացել է, այլ Արիստակես վարդապետի հետ խորհրդակցելով կանգ է առել Բուրսայում և հնարքով ու խաբեական խոսքերով արձակման թուղթ է առել և գնացել իր տեղը: Վարդապետի հանդեպ եպիսկոպոսի արած այս խաբեության համար վարդապետը խիստ վշտացել և նրա խաբեության կանգործների վերաբերյալ զրավոր հայտնել է լվովցիներին և գրել է, թե այն նույն առաջին նզովքը և բանադրանքը տակավին այդ եպիսկոպոսի վրա է: Ուստի և լվովցիները հեռացան եպիսկոպոսից և նրան չէին ընդունում: Չափազանց խիստ հակառակություն ընկալվեց եպիսկոպոսի ու ժողովրդի միջև:

Այսպես մնացին հակառակության մեջ, մինչև վրա հասավ մեր 1079 [1630] թվականը, երբ Մովսես կաթողիկոսը իր մեծ աշակերտ կեսարացի Խաչատուր վարդապետին Սուրբ էջմիածնի նվիրակության համար առաքեց Արևմտյան աշխարհը Ասորիք ու Հռոմաստան: Խաչատուր վարդապետը հեզ, խաղաղ և քաղցրաբարո մարդ էր, ոչ անմիտ ու անբան, այլ իմաստուն ու բանիրուն, որ լուկ միայն տեսքով պատահածներին առինքնում էր. այս պատճառով նրան նվիրակ նշանակեցին: Խաչատուր վարդապետը անցավ բոլոր տեղերով:

եկավ, հասավ կեսարիա և այնտեղ հանդիպեց մեծ վարդապետ Գրիգորին: Գրիգոր վարդապետը բաղձաթիվ հույժ կարևոր բաներ պատվիրեց խաչատուր վարդապետին, թե հասնելով Լիով, գուցե Նիկոլին եպիսկոպոսության կարգ ու պատվի հրավիրես: Իսկ խաչատուր վարդապետը ամեն տեղ նվիրակություն անելով հասավ Լիով: Ժողովրդից սրան [մարդիկ] մոտեցան և սկսեցին բաղձաթիվ օրինակներով կսկծալի ամբաստանություն անել Նիկոլի մասին՝ նրա տեսակ-տեսակ անցքերի. ու գործերի առիթով, որ նրա կողմից տեսել էին ու կրել: Իսկ վարդապետը ըստ իր քաղցր և հեզ բնավորության առերես չէր հանդիմանում Նիկոլին, այլ մեղմ խրատական կերպով ինքը նրա հետ միայնակ էր խոսում ըստ տիրոջ այն պատվիրանի, թե՛ «Ասա նրան, երբ միայն գու և նա լինեք»: Իսկ Նիկոլի հոգը չէր, ոչ մի բան հաշվի չէր առնում, որովհետև ոչ վարդապետից էր ամաչում, ոչ էլ ժողովրդի ամբաստանությունից վախենում, այլ իբրև անշարժ լեռ արձանացած էր իր կամքի վրա:

Այնպես եղավ, որ մի կիրակի օր ավետարան պետք է կարդային: Նիկոլ եպիսկոպոսն հրամայեց իր արեղային, թե գնա ավետարան կարդա: Իսկ խաչատուր վարդապետն ասաց, թող նա շկարդա, այլ այն մյուսը: Իսկ Նիկոլ վարդապետը նրա խոսքին չանսաց, այլ իր արեղային կարգալ տվեց ավետարանը: Երբ վարդապետը տեսավ, թե քահանաների և ժողովրդի մեջ բաց ու համարձակ արհամարհեց իր խոսքը և իրեն մարդատեղ չդրեց, դարձավ դեպի ժողովուրդը և ասաց. «Թող անիծվի այն մարդը, որ սրա հետևը ծունր կդնի»: Վարդապետը այս ասաց և եկեղեցուց ելավ, գնաց իր տեղը՝ վերնատուն, որտեղ լի օրերին լինում էր: Իսկ երբ ժողովուրդը այս լսեց, տեսավ, իրենք նույնպես միանգամից, զրոհեցին և դուրս եկան եկեղեցուց: Եկեղեցում մնացին Նիկոլն ու ուրիշ ոմանք, որոնք ժամը արձակելուց հետո նույնպես զրնացին իրենց տեղերը: Իսկ հայոց ժողովրդի դատավորներն ու իշխանները նույն ցերեկը եկան ու փակեցին եկեղեցու գուռը և բանալին վերցրին իրենց մոտ, իսկ եկեղեցին որս շրջի փակված մնաց: Նաև հայոց դատավորներն ու իշխանները խոսեցին խաչատուր վարդապետի հետ և համոզեցին նրան, որ պետք է նստի աթոռ և նշանակի դատական ատյան

Նիկոլին դատելու հանդեմության, այլև անկարգության և հանցանքների համար: Երբ եպիսկոպոսը իմացավ այս գործը, իր մոտ բերեց ֆոնանկ երկու վկաներ, որ ողջ դատի ընթացքում նրանք գան, վկայություն տան և ըստ նրանց վկայությունների դատավորները դատական վճիռ կտրեն, քանզի Լեհաստանում լեհերը իրենց մեջ այդպիսի կարգ ունեն: Նիկոլը այդ վկաների հետ խոսեց և առավ նրանց համաձայնությունը, որ պետք էր նրանց կանչի, նրանք անհապաղ գան իր կանչին: Եվ այն օրը, երբ վարդապետը դատի նստեց, նրա հետ նստեցին հայոց իշխաններն ու դատավորները. կանչեցին նաև Նիկոլին դատելու համար: Բայց Նիկոլը կանխավ այդ վկաներին բերել էր այն տունը և նրանց թաքցրել էր առանց հայ մարդկանց գիտության: Երբ Նիկոլին ներս կանչեցին, նա գալով սպասավորներին հրամայեց իր աթոռը դնել մշտական տեղում, որ պետք էր ինքը այնտեղ նստի: Իսկ իշխանները Նիկոլին ասացին. «Ի՞նչ ես անում, ինչու՞ ես նստում, չէ որ քեզ դատելու են կանչել, ոտքի կանգնիր»: Նիկոլն ասաց. «Իսկ ո՞վ է ինձ դատողը»: Իշխանները ասում են. «Եկած այս նվիրակը, որին տեսնում ես, և այս դատավորները, որոնք ահա այստեղ են»: Այդ ժամանակ Նիկոլը բարձր ձայնով կանչեց թաքցրած վկաներին, թե դուրս եկեք: Նրանք անմիջապես եկան և կանգնեցին ատյանի մեջ: Սրանց Նիկոլն ասաց. «Աստծու սիրուն ձեր աչքերով տեսեք և ինձ համար վկաներ եղեք, քանի որ ես եպիսկոպոս եմ, իսկ սրանք աշխարհականներ լինելով՝ հավաքվել են ինձ դատելու: Իսկ այս վարդապետը, որ թուրքերի երկրից է եկել այստեղ, լրտեսության համար է՝ եկել այս երկիրը, որ պետք է մեր երկրի որպիսությունը իմանա: Եվ սա այժմ սրանց հետ նստել են, որ ինձ դատեն»: Վկաներն ասացին. «Ի՞նչ մեր աչքերով տեսանք, սրա համար վկայություն կտանք, որ էլ մեզ տանեն, կվկայենք»: Այդ ժամանակ հայերից հավաքվածները՝ թե քահանաներ, թե իշխաններ, թե դատավորներ ֆոնանկների երկյուղից սարսափահարվեցին ու զարհուրեցին և սկսեցին մեկ-մեկ ելնել ու փախչել, վարդապետը նույնպես ելավ, գնաց իր տեղը:

Սրանից հետո Նիկոլ եպիսկոպոսն սկսեց խաբեբայություններ ու կեղծավորություններ միջնորդներ ու պատգամավոր-

ներ ուղարկել վարդապետի, քահանաների ու իշխանների մոտ հաշտութեան նպատակով. ասելով՝ «Ձեր այգբան հակառակութունը բավական է, այլևս մի՛ հակառակվեք և եկեղեցին մի՛ փակեք, այլ բացեք եկեղեցու դուռը»: Իսկ լվովցիք բռնորդ իմանալով նրա խարդախութիւնը՝ նրան չհամատարացին: Բայց վարդապետը յուր մտքում նկատել ու տեսել էր, որ ինչքան գրգռեն խռովութուն, վեճ ու կոխով անեն եպիսկոպոսի հետ, ապագայում ավելի շատ շարագործութիւն կ'օրդի նրանից, ուստի այս՝ վտանգի համար ակամայից կամեցավ եպիսկոպոսի հետ հաշտվել: Նա խոսեց քահանաների ու իշխանների հետ, որպեսզի հաշտվեն: Սակայն նրանք չցանկացան: Վարդապետը ասաց. «Ապագա շարիքների համար, որ պատրաստվել են գալու այդ եպիսկոպոսից, ես վախենում եմ և կասկած ունեմ, թե միգուցե մեր համառութեան վերջում դրանից ավելի մեծ վնաս կրենք»: Պատասխանեցին. «Մե՛նենին մի վախենա, վարդապետ, որովհետև մենք բազմաթիվ հրովարտականներ ունենք առաջին և վաղեմի թագավորներից, որն է գործի վերաբերյալ եթե դատ լինի, դատը պետք է անեն հայոց ազգի դատավորները և ոչ թե Ֆրոնանկների ազգի դատավորը: Նաև նրանց ապրանքների դիմաց ապրանք ունենք և խելքների դիմաց՝ խելք. դու ինչու՞ ես վախենում»: Վարդապետին այս խոսքը զուր չեկավ, այլ երբեմն ընդհանուր կարգով, երբեմն առանձին նրանց հետ խոսում էր, որ հաշտութեան գան, սակայն նրանք չկամեցան: Դրանից հետո վարդապետը իր ձեռքով բռնեց իր օձիքը, թափ տալով ասաց. «Դրան մեղադրելուց ես անպարտ եմ, դուք դիտեք»:

Իսկ երբ Նիկոլ եպիսկոպոսը տեսավ, թե իր առաքածների՝ սուտ ու կեղծավոր պատգամավորների միջնորդութեամբ լվովցիները հաշտութեան չեն գալիս և եկեղեցին չեն բացում, այնուհետև գնաց Ֆոնանկների եկեղեցականների մոտ, որոնք կլով քաղաքում են, մանավանդ նրանց մոտ, որոնք ճիզվիտների կարգին են պատկանում, միաբանվեց նրանց հետ և անլուծելի ստորագրութիւն տվեց, թե՛ «Ես հայոց Նիկոլաշուս եպիսկոպոսս իմ կամքով միաբանվեցի Հոռմի եկեղեցու հետ և մտա պապի հնազանդութեան ներքո իմ բոլոր

հետևորդներով կատարելու նրա բոլոր հրամանները»: Սրա վրա ճիզվիտների կարգի գլխավորը վեր կացավ առավ այլ կարգերից ուրիշ եկեղեցականներ, իրենց հետ վեցրին նաև հայոց Նիկոլ եպիսկոպոսին և տարան իրենց արքեպիսկոպոսի մոտ: Իսկ սա սրանց միջոցով քաղաքի իշխանին պատգամաբար ուղարկեց հայոց ժողովրդին հրամայելու, որ կամ հնազանդվեն իրենց եպիսկոպոսին և բանան եկեղեցին և կամ գան դատական ատյան միմյանց ներկայանան: Իշխանը արեց ըստ արքեպիսկոպոսի հրամանի, բայց հայոց ժողովուրդը ոչ եկեղեցին բացեց, և ոչ էլ դատարան գնաց: Մինչև երեք անգամ այսպես կրկնեց իշխանը, իսկ հայերը ոչ եկեղեցին բացին, ոչ էլ դատարան գնացին:

Ապա մի օր ճիզվիտական կարգից բազմաթիվ եկեղեցականներ հավաքվեցին, առան նաև այլ կարգերից [եկեղեցականներ], բազմաթիվ դպրոցական տղաներ, գնացին իրենց արքեպիսկոպոսի մոտ, նրանից վերցրին նաև այլ կարգավորներ, գնացին քաղաքի իշխանի և դատավորների մոտ, նրանից զորականներ ու դատավորներ առան իրենց հետ և այս բոլորը եկան հայոց եկեղեցու դուռը, որ հայոց իշխանները փակել էին: (Մարդ) ուղարկեցին որ իրենք գան դուռը բանան, կամ բանալին ուղարկեն: Իսկ նրանք ոչ իրենք եկան, ոչ էլ բանալին ուղարկեցին: Ապա եկածները խփեցին եկեղեցու դուռը խորտակեցին և Նիկոլ եպիսկոպոսին առան, մտցրին ներս: Նրան հանձնեցին եկեղեցին այն բոլոր ինչքերով, որ եկեղեցուն են վերաբերում: Այնուհետև Ֆոնանկների զորականները գնացին հայոց քահանաներին ու իշխաններին որոնելու, որպեսզի իշխանական բռնութեամբ բռնեն նետեն բանտ և տուգանեն: Իսկ նրանք փախան և թաքնվեցին և բնավ չերևացին: Եկեղեցու մեջ կար գանձատուն, իսկ նրա մեջ՝ բազմաթիվ գրքեր ու անոթներ. գրքերը ավելի քան հազար կտոր էին, բոլորն էլ ընտիր, պատվական ու ուսուցողական: Սրանց մեջ՝ ոսկեկաղմ աստվածաշունչներ, ավետարաններ, շարահնոցներ և այլ բազմաթիվ գրքեր: Այսպես նաև՝ անոթներ, սկիհներ, խաչեր, քրոցներ, բուրվառներ, կանթեղներ, աշտանակներ, շուրջառներ, ուսանոցներ [ուրար], թագեր, վակասներ, սուրբ խաչվառներ ու սրբերի նշխարներ: Նաև հայերից, պապերից, վաղեմի ու նախ-

կին թագավորներից ունեին մուրհակներ, հրովարտակներ և բազմաթիվ այլ բաներ, որոնք բոլորն էլ եկեղեցու մեջ նույն գանձատանն էին, որը Նիկոլը գրավեց իր իշխանութիւնի ներքո: Ոչ միայն այս եկեղեցին, այլև մյուս եկեղեցիները, վանքերը, որ քաղաքի մեջ կամ սրա շուրջն էին, նրանց բոլոր ավանդները, տները, հանդերը, աղացները, խանութները եպիսկոպոսն առավ իր իշխանութիւնի տակ, ասելով, «Ես եպիսկոպոս եմ, բոլոր եկեղեցիները և իրենց ավանդները իմն են»:

Իսկ խաչատուր վարդապետը և հայոց ողջ ժողովուրդը, որ ապրում էր կվովում, եկեղեցուց դուրս մնացին, քանզի եթե մտնեին եկեղեցի, պետք է մտնեին պապի իշխանութիւնի տակ և ընդունեին նրա դավանանքը, նաև պարտավոր էին հնազանդվել Նիկոլ եպիսկոպոսին, իսկ կվովցիք արանք չէին ուզում, ուստի մնացին վարանքի ու տարակուսանքի մեջ և որևէ ճար չէին գտնում: Եվ կվով քաղաքի հայ ժողովուրդը մնաց առանց եկեղեցու:

Այնպես եղավ, որ խաչատուր վարդապետը քաղաքից դուրս եկավ և գնաց Սուրբ Խաչ կոչված վանքը, իսկ ժողովրդից ով կամենում էր նրա մոտ գնալ, համարձակ գնում գալիս էր: Եվ ահա մի օր տեսան, որ բազմաթիվ զինվորներ և զորականներ զինված ու պատրաստ շուրջանակի պաշարեցին վանքը: Տեսնողների հարցումին զինվորները պատասխանում էին, թե՛ «Թուրքերի երկրից լրտես է եկել և ահա այստեղ է, կամենում ենք բռնել նրան»: Եվ երբ կարճ ժամանակ անցավ, տեսան, որ Նիկոլ եպիսկոպոսը իր սպասավորներով ու փառքով եկավ և մոտենալով զինվորներին՝ հարցրեց նրանց, թե՛ «Ինչի՞ համար եք հավաքվել այստեղ»: Զինվորները ասացին. «Թուրքերի երկրից լրտես է եկել, այստեղ, կամենում ենք նրան բռնել»: Առ այս Նիկոլն ասաց. «Չի կարելի և պատշաճ չէ, որ զուր նրան բռնեք, զուր վերադարձեք և գնացեք ձեր տեղը, իսկ ես կզնամ, կտեսնեմ և կխոսեմ նրա հետ»: Զինվորները բոլորը իսկույն ցրվեցին ու գնացին: Երբ զորքը այսպես վերջացավ, այս առիթով հայ ժողովուրդը կարծեց, թե զինվորները եկել էին եպիսկոպոսի հնարանքներով վարդապետին վախեցնելու համար: Իսկ եպիս-

կոպոսը գնաց վարդապետի մոտ, նրան այնտեղից վերցրեց իր հետ, բերեց քաղաք:

Քանի վարդապետը քաղաքում էր, միշտ նրա մոտ էին գալիս արեղաներ և ֆոռանկներից ուրիշներ և վարդապետի հետ հակաճառում էին երկու և մեկ բնութիւն¹⁵⁰ մասին և իբրև ելտիքեական¹⁵¹ հերձվածով խոտորված և տգիտութիւնով ու հիմարութիւնով մոլորված էին համարում հայերին: Իսկ վարդապետը խորհելով անցյալի ու ապագայի գործերի մասին և տեսնելով ներկայի գործերը՝ իմացավ, որ որևէ օգուտ չկա, այլ զուր աշխատանք է և ավելորդ շարշարանք, ուստի ելավ կվովից, գնաց իր ճանապարհը, մինչև եկավ հասավ էջմիածին Մովսես կաթողիկոսի և այլ վարդապետների մոտ, որոնք բոլորը ցավազին սրտով, արտասովաթոր աչքերով սգում էին կվով քաղաքի հայ ժողովրդի մասին, թե ինչպե՞ս նրանք կփրկվեն:

Ինչպես տեր Քրիստոսն ասաց. «Նախ հզորին թող կապի, ապա նրա տունը ավարի ենթարկի»^{*} Այսպես արեց և Նիկոլ եպիսկոպոսը, որովհետև վարդապետի գնալուց հետո, ինչպես Գանիելի տեսիլքի գազանը^{**}, սկսեց ամբողջ ժողովրդին, գանձերը և եկեղեցու ամեն ինչը ուտել ու մանրել, իսկ մնացորդները ոտքի տակ տալ: Քանզի ինչպես կռապաշտ թագավորների ժամանակներում քրիստոնյաները հայածանքներ էին կրում, այդպես էլ այս ժամանակ պատահեց կվով քաղաքում բնակված հայերին, որովհետև մեծ զորութիւնով գործողացավ Նիկոլ եպիսկոպոսը և բռնացավ հայ ժողովրդի վրա: Քահանաներին բռնում էր որևէ մեկի մոտ և եթե չնչին զանցանք էր գտնում, բանտ էր նետում և տուգանք էր առնում երեք-չորս հարյուր զուտուշ. այսպես էլ իշխաններին, որոնք դատավորներ էին նշանակված, բռնում, տուգանում էր: Ամբողջ հասարակ ժողովրդին վնասում էր. փողի համար չէր թողնում մեռելներին թաղել և, երբ փողն առնում էր ըստ

^{*} Մարկոսի ավետարանում ասված է. «Այլ ոչ ոք կարէ զկարասի հզորի մտեալ ի տուն նորա աւար հարկանել, եթե ոչ նախ զհօրն կապիցէ և զտղուն նորա աւար հարկանիցէ (Գ 27):— Բայց ոչ ոք չի կարող տունը մտնել ու ավարի ենթարկել նրա կահկարասին, մինչև որ նախպես հզորին չկապի և հետո նրա տունը ավարի ենթարկի:

^{**} Դան. Գ. 30:

իր ցանկութեան, ապա հրաման էր տալիս թաղման և գերեզմանի տեղ թաղելու համար: Թաղելուց հետո, երբ կամենում էին գերեզմանի տապանաքար դնել, այդ պատճառով երկրորդ անգամ դրամ էր առնում, ապա հրաման էր տալիս քարը դնել: Այս նույն պատճառով պսակները, մկրտութիւնները խափանվեցին. տանում այլ քաղաքներ էին պսակում ու մկրտում, մեռածներին էլ այլ քաղաքներ էին տանում, թաղում: Այս բաները ծածուկ էին անում առանց եպիսկոպոսի գիտութեան: Իսկ երբ իմանում էր, մեծ ցասումով զայրանում էր, բռնում էր քահանային և այդ բանը անող մարդկանց խոշտանգումներով տանջում և ծանր տուգանք էր առնում:

Այնպես պատահեց, որ կամենում էին ծածուկ, մի երիտասարդի պսակել առանց եպիսկոպոսի գիտութեան: Սրա համար երեք քահանաներ բերին, որպեսզի պսակը տանը կատարեն: Եպիսկոպոսին այս բանը ծանուցվեց, ուղարկեց զորականներ քահանաներին ու հարսանիքի տերերին բռնելու ու բանտ նետելու: Հարսանիքի տերերը և քահանաները, իմանալով այս, երկյուղից սկսեցին թաքնվել. քահանաներից մեկին զրին սնդուկի մեջ, կողպեցին, իբրև թե կանացի իր ու զարդ է, իսկ քահանաներից երկուսը մտան թոնիր, որ շինել էին տան մեջ կրակ վառելու համար: Զորականները քահանաներին որոնելիս գտան թոնրի մեջ. նրանց թոնրից հանեցին, ձեռքերը հետևներից կապեցին, զլխարաց, բոկոտն, սևացած երեսներով ու մարմնով, քանի որ թոնրի մուրը սեղանի վրա էր նրանց, տարան եպիսկոպոսի մոտ: Բազում անարգանքներից ու սպառնալիքներից հետո քահանաներին ու հարսանքատերերին բանտ նետեց. շորս հարշուր դուռուշ քահանաներից, շորս հարշուր դուռուշ հարսանքատերերից առավ, ապա թողեց, որոնք գնացին հարսանիքը արեցին:

Բազմաթիվ երեխաներ մեռնում էին առանց մկրտութեան, շատ երեխաներ անկոնք դառնում էին 15—16 տարեկան: Բազմաթիվ հիվանդներ մեռնում էին առանց հաղորդութեան, իսկ շատ մեռելներ անթաղ էին մնում տարիներ: Մեռելներին դնում էին փայտյա դագաղի մեջ և դագաղը լցնում էին կուպրով մինչև որ մեռելին ծածկում էր, ապա դնում էին սառը տեղ ու պահում՝ սպասելով տիրոջ այցելու-

թեան: Եկեղեցու յոթ խորհուրդները և ամբողջ ժամակաբութիւնը խափանվեցին, իսկ խեղճ ժողովուրդը մնաց անասելի նեղութիւնների մեջ, ավելի քան կոստաշտութեան ժամանակներում:

Ապա ժողովուրդը իրենց բազում նեղութիւնների պատճառով բողոքեց Սուրբ աթոռ էջմիածին, որովհետև տեր Սիմոն անունով մի քահանա և մի երեկի աշխարհական մարդ ուղարկեցին տեր Մովսես կաթողիկոսի մոտ, որպեսզի հոգա և նրանց փրկութեան հնար գտնի: Կաթողիկոսը խոհեմ, իմաստութեամբ լեցուն, խոնարհ, մաղթողական խոսքով մի նամակ գրեց լեհաց թագավորին, նրա իշխաններին և կլափ քաղաքի արքեպիսկոպոսին, որ ազգով ֆրանկ էր, նաև պապին և խնդրեց թե ողորմացեք տառապալ ժողովրդին, եկեղեցին հանձնեցեք իրենց և մի խափանեք եկեղեցու յոթ խորհուրդը, որ Քրիստոսի քահանաներին վայել չի անել: Երբ այս հրովարտակները հասան կլով քաղաքը, և ժողովուրդը տարալ մատուցեց ըստ տերերի՝ թագավորին և այլոց, նրանք հրամայեցին թարգմանել լեհական գրով ու լեզվով, որոնք ընթերցելով հաճույք զգացին ու հավանեցին բոլոր խոսքերին ու որպիսութիւններին: (Նամակի) խոսքերից թագավորի, որի անունն էր Վլադիսլավ, սիրտը գոթ ընկավ, որը և հրամայեց, թե հայոց եկեղեցին տվեք իրենց: Բայց ճիգվիտները ընդդիմացան, չթողին, ասելով թագավորին. «Այս գործը եկեղեցական և հոգևորական գործ է, որ վերաբերում է պապին ու արքեպիսկոպոսին: Նրանք են պարտավոր հոգալու այս, որոնց հարմար է ու պատշաճ և ոչ քեզ, որ մարմնավոր թագավոր են. այս պատճառով քեզ հարմար չէ խառնվել այս գործին, որ հոգևոր գործ է»: Թագավորը հայ ժողովրդի տառապանքին գթալով խնդրեց արքեպիսկոպոսին՝ հայոց եկեղեցին իրենց տալ: Թագավորը հայոց վրա ավելի գթալու համար, ինքը՝ թագավորը վեր կացավ, գնաց հայոց եկեղեցին, որ հայոց եկեղեցին հանձնի իրենց՝ հայերին: Երբ նիկոլ եպիսկոպոսն այս իմացավ, իսկույն պատարագի ըզգեստ հագավ, վերցրեց պատարագի հաղորդը իր զլխից բարձր և ելավ, եկավ թագավորին ընդառաջ: Սրան թագավորը տեսնելով, զարհուրեց տերունական խորհրդից (հաղորդից),

ոչինչ չկարողացավ անել, այլ թողեց ամենը, դարձավ իր տեղը՝ պալատ:

Ապա հայերը անհրաժեշտութիւն զգացին զնալ Հոռոմ պապի մտտ. շատ աղաչանքներով թագաւորից և արքեպիսկոպոսից պապին ուղղված բարեխոսութեան թղթեր առան և զնացին Հոռոմ: Նախ պապին տվին Մովսես կաթողիկոսի խնդրագիրը, ապա թագաւորինը և արքեպիսկոպոսինը: Երբ Նիկիոյ եպիսկոպոսը տեսավ, թե ժողովուրդը Հոռոմ զնաց, ինքն էլ զնաց Հոռոմ, և այնտեղ էլ անիրավ ճիղվիտները թշնամութիւն արին հայերին և ձախողեցին նրանց գործը, այսինքն՝ եկեղեցին շտրվեց հայերին: Խեղճ ժողովուրդը ձեռնունայն դարձավ եկավ կվով:

Հոռոմից դարձավ նաև Նիկիոյ եպիսկոպոսը ու եկավ կըվով. մնում էր առաջվա նման՝ վնասելով ժողովրդին նաև անառակութեամբ:

Բացի առաջինից, երկու-երեք անգամ կվովցիները քահանաներ ու երեցփոխներ ուղարկեցին էջմիածին Փիլիպոս կաթողիկոսի մոտ, որովհետև Մովսես կաթողիկոսը վախճանված էր: Փիլիպոս կաթողիկոսը շատ անգամ զանազան կերպով նամակ գրեց կվով և իր աշակերտներից ու վարդապետներից ուղարկեց կվով, սակայն դրանից էլ հայ ժողովուրդը օգուտ չունեցավ: Նաև կվով քաղաքից եկեղեցական բարեպաշտ մարդիկ, որոնք արեղաներ, քահանաներ ու Աստվածաշնչի աշակերտներ էին, այս հալածանքների պատճառով եկան էջմիածին և այնտեղ բնակվելով մնացին: Սրանք նշանավոր մարդկանց զավակներ էին, որոնցից ոմանց Փիլիպոս կաթողիկոսը կվով եպիսկոպոս ձեռնադրեց և ուղարկեց այնտեղ հովվելու ժողովրդին. բայց դրանով էլ կվովի ժողովրդին օգուտ չեղավ, նաև սույն ժամանակ Գոմինիկյան¹⁵² կարգից Պողոս անունով մի վարդապետ՝ իմաստուն ու երևելի, ազգով ֆրանկ մի մարդ եկավ Նախիջևանի գավառը հայ կաթողիկեների* մեջ, որոնք այնտեղ կան: Փիլիպոս կաթողի-

* Բնագրում՝ ախարամայիցն. Աճառյանը, նկատի չունենալով Գավրի-
ժեցոն, ախարամոզ, ախարմազ, ախարմախ լրատ և որիննացու և Շե-
րահացու] ուղղում է ախարամաւ: Այստեղ խոսքը Նախիջևանի կաթողի-
կեների մասին է:

կոսը շատ սերտ սեր ու բարեկամութիւն արեց այս Պողոսի հետ մեր ժողովրդի օգտի և կվովի եկեղեցու փրկութեան համար: Իսկ այս Պողոսը իր գործը վերջացնելուց հետո կամեցավ Հոռոմ զնալ: Գնալիս իր ճանապարհին եղավ կվով քաղաքում, իսկ կվովցիները շատ աղաչանքներով խնդրեցին Պողոսից, մեծարանքներ ցույց տվին նրան, շատ դրամ տրվին իրրև ճանապարհածախս, թե գուցե կարողանա պապի պալատում օգնութեան հնար գտնել նրանց համար: Երբ Պողոսը Հոռոմ հասավ և մինչդեռ նա բարեխոսութեան խոսքեր էր հայերի համար առաջարկել և խոսում էր պապի պալատում, շտապ նրա հետևից Հոռոմ պապի պալատ զնաց նաև Նիկիոյ եպիսկոպոսը ու խափանեց Պողոսի օգնութեանը ճիղվիտների օգնութեամբ: Եվ այսպես բոլոր կողմերից խափանվեցին կվով քաղաքի տառապած ժողովրդի փրկութեանն ու օգնութեանը, և Պողոսի հետ զնացածները տխուր ու դատարկ վերադարձան այնտեղից:

Իսկ Նիկիոյ եպիսկոպոսը նույնպես վերադարձավ Հոռոմից, եկավ կվով քաղաքը, ապրում էր ըստ իր նախկին վարքի և էլ ալիւի անառակ: Իսկ վերոհիշյալ զբերքը, սրբութեան անոթները, եկեղեցու բոլոր ալանդները մասամբ վաճառեց, մասամբ իրրև կաշառք բաշխեց, մի մասն էլ հրեաների միջոցով ջարդելով արեց արծաթ ու վաճառեց և այնքան անթիվ ու բազում ինչքներն ու գանձերը ցիրուցան անելով, բոլորը վատնեց այնպես, որ ոչինչ չմնաց, մնաց միայն լոկ դատարկ քարե եկեղեցին, որովհետև ապրում էր անառակ, դեխ ու շքվայտ կյանքով հայտնի ու համարձակ՝ ոչ ոքից չվախենալով: Շատ զբեր ու անոթներ նույնի վաճառքից վերադարձան Հայաստան, հասան մեղ, որոնք վաճառականները փողով առած բերին, որ տեսնողները արանշանում էին:

կվովի խեղճ ժողովուրդը շատ վնասներ ու շարչարանքներ կրեցին եկեղեցու յոթ խորհուրդները* խափանելու պատճառով: Շատ երկյուղած ու հայրենի օրենքների համար նախանձախնդիր մարդիկ մեկնեցին տներից ու տեղերից և էլան

* Հայոց եկեղեցու յոթ խորհուրդներն են՝ ապաշխարութիւն, հազոր-
դութիւն, մկրտութիւն, դրոշմ, պատկ կամ ամուսնութիւն, կարգ կամ ձեռ-
նադրութիւն, այցելութիւն հիվանդներին:

բնիկ երկրից հեռացան՝ անջատված ընտանիքներով, ազգականներով, պանդուխտ ու տարագիր շրջագայելով օտար երկրում, և այդպիսի կյանքով հեծելով ու հոգոց հանելով վախճանվեցին: Հայոց ժողովուրդը նաև ուրիշ շատ շարշարանքներ ու նեղություններ կրեց, որովհետև նրանց նկատմամբ հալածանքը մեծ էր. նրանք զրկվեցին իրենց եկեղեցուց, այնքան ունեցվածքից, նաև իրենց դրամները վատնեցին իշխանների ու թագավորների դռներում, այստեղ-այնտեղ ուղեգնացություններ: Երկու կողմերն էլ այնքան շարշարվեցին, այսինքն՝ Նիկոլն ու ժողովուրդը, որ լքվեցին բազմատեսակ հնարագործություններից ու երկարաժամկետ հակառակությունից, քանզի խռովության սկիզբը եղավ 1078 [1639] թվականին, երբ Նիկոլը եկեղեցին հափշտակեց, և այդպես մնացին մինչև հասան մեր 1102 [1653] թվականը:

Այդ ժամանակ Սուրբ աթոռ էջմիածնի տեր Փիլիպոս կաթողիկոսը գնաց Երուսաղեմ և այնտեղից եկավ մեծահանդես Կոստանդնուպոլիս քաղաքը: Նրա գալստյան լուրը ամեն տեղ հռչակվեց, նաև հասավ Լվով քաղաքը:

Սույն ժամանակ խելոք ու խոհական Նիկոլ կաթողիկոսը լուր մտքի տեսողությամբ նկատել էր, թե ժողովուրդը այսքան շարշարվեց, բայց ետ չկանգնեց իր բիրտ կամքից, այլ տակավին նույն կամքի վրա հաստատուն է մնում: Այս պատճառով մտածեց գնալ Կոստանդնուպոլիս Փիլիպոս կաթողիկոսի մոտ, որ գուցե իրենից վերացնի բանադրվածի անունը, նաև նրանից ժողովրդին ուղղված օրհնության և իրեն ննջարկվելու թուղթ ստանա: Բայց միջոցներից զուրկ էր, ճանապարհի պաշար չունեի: Այս պատճառով մտածում էր հնար գտնել, որ և գտավ հետևյալ ձևով:

Թորթաթ քաղաքում հայազգի մի երեկելի ու անվանի մարդ կար, որի անունն էր մահտեսի Մարկոս. սա Սիմոն անունով իր որդուն մեծ գումար տվեց և ուղարկեց լեհերի երկիրը վաճառականություն: Այս Սիմոնը եկավ, հասավ Լվով քաղաքը: Մշտապես ուտում, խմում էր և ապրում ուրախության մեջ: Նա ծանոթ ու բարեկամ դարձավ Նիկոլ կաթողիկոսի հետ: Սա խոստացավ կաթողիկոսին և ասաց. «Եթե կամենում ես գնալ կաթողիկոսի մոտ, հոգ մի անիր պաշարի մասին, քանզի որքան քեզ դրամ պետք գա ճանապարհի համար, բոլորը

ես կտամ»: Նա ըստ իր խոստման կաթողիկոսին երկու հազար դուռուչ կանխիկ դրամ տվեց: Երբ կաթողիկոսը այն առավ, Լվովից դուրս եկավ, դնաց Մոզգավիա. գնում էր Փիլիպոս կաթողիկոսի մոտ: Լվովի հայ ժողովուրդը այս տեսնելով, թե Նիկոլ կաթողիկոսը գնաց կաթողիկոսի մոտ, իրենց կողմից իրենք ևս խաչքո անունով մի մարդ բնտրեցին, որը մեկն էր հայոց դատավորներից, զնաչու Փիլիպոս կաթողիկոսի մոտ: Նրան տվին զբված թղթեր և պատվիրեցին շատ բաներ: Թե Նիկոլ կաթողիկոսը և թե խաչքո դատավորը միմյանցից առանձին զնացին հասան Կոստանդնուպոլիս և հանդիպեցին կաթողիկոսին:

Եվ երկար օրեր երկար խոսակցությունից ու գործից հետո, գործի ավարտը այն եղավ, որ Փիլիպոս կաթողիկոսը հրամայեց, որ Նիկոլ կաթողիկոսը շուրս կետով խոսք հանձն առնի և այն իր ստորագրությամբ հաստատի և տա Փիլիպոս կաթողիկոսին:

Նախ՝ Լուսավորչի դավանությունը և նույնի աթոռակալ հայրապետներին դավանելով խոստովանվեն Նիկոլը և իրեն հետևող եկեղեցականներն ու աշխարհականները:

Երկրորդ՝ որ Հայաստանյայց եկեղեցու արարողությունը կատարեն ինքն ու իրեն հետևողները:

Երրորդ՝ որ Նիկոլի վախճանից հետո Նիկոլի տեղը նրստողը էջմիածնի կաթողիկոսից կաթողիկոս օծվի և նույնի հրամանով նստի նույն վիճակում և նույն կաթողիկոսին հրնազանդ ու հետևող լինի:

Չորրորդ՝ որ ինքը Նիկոլը միայն պապի անունը հիշատակի և այն էլ լոկ պատարագին և ոչ որևէ այլ խոսքերում, կամ արարողությունների մեջ: Նաև՝ ջուր շխառնի սուրբ պատարագի բաժակին: Իսկ եկեղեցական ժառանգավորներից և կղերականներից ոչ ոք բնավ պապի անունը չպետք է հիշատակի: Այդպես էլ Նիկոլից հետո նստող կաթողիկոսը ամենավին չպետք է հիշատակի պապի անունը՝ ոչ խոսքերում, ոչ գործերում, այլ միայն Նիկոլը պետք է հիշատակի և այն էլ պատարագում միայն:

Պապի անունը հիշատակելու համար Նիկոլն ինքը խնդրեց կաթողիկոսից, որպեսզի այդտեղ միայն զիջում անի, քան-

զի նիկոլն ասաց. «Տոանկներին տված իմ ստորագրությամբ ինձ կարգադուրկ կանեն, գուցե նաև մահապարտ անեն»։ Այս բանի համար կաթողիկոսը զիջեց։

Եվ այս շորս կետերը՝ գրված թղթի վրա, կնիքով կնքված և ստորագրությամբ հաստատված, նիկոլը տվեց Փիլիպոս կաթողիկոսին, իսկ կաթողիկոսը հանձնեց Խաչքո դատավորին, որպեսզի իր հետ տանի կլով քաղաքը, պահեն ապագայի ապահովության համար։

Ապա կաթողիկոսը արձակեց բանադրանքի կապանքներին և նրան տվեց եպիսկոպոսական իշխանության հրովարտակ իշխելու կլովի ժողովրդի վրա. նաև պատվիրեց նրան, որ զգաստանա իր թափառական ու անբարո կյանքից, գա դեպի կրոնը և արդարության բարեշավիչ ճանապարհը, որ վայել է եպիսկոպոսության անվան և աստիճանին։ Եվ նիկոլ եպիսկոպոսը կաթողիկոսի ընդ որ հրամանները սիրով ու հոժար կամքով հանձն առնելով՝ նրանից արձակված եկավ կլով քաղաքը։

Իսկ կլովի ժողովուրդը համարում էր, թե նիկոլը զղջալով թողել է իր թյուր վարքը, բայց տեսնում էին նույն վարքի մեջ անփոփոխ է. նաև հիշում էին իրենց անշափ գանձերի ու անոթների վատնումը և այն բազմաթիվ նեղությունները, որ հասցրեց նրանց նիկոլ եպիսկոպոսը, այրված, խորովված տռչորվում էին նրանց սրտերը։ Այս պատճառով չէին կամենում միաբանվել նրա հետ, առավել ևս փախչում էին և կամենում էին նրանից նզովվել։

Մինչդեռ նիկոլ եպիսկոպոսը չէր գնացել Կոստանդնուպոլիս, Փիլիպոս կաթողիկոսը իր աշակերտներից Հոհան անունով մի վարդապետի, որ ծննդավայրով Արդնիից¹⁵³ էր, իմաստությամբ հարուստ, խոսքով իմաստուն, ուղարկեց գնալու կլով, որ թերևս ջանք թափի նրանց եկեղեցիների համար փրկության հնար գտնելու։ Հոհան վարդապետը կլով գնալու և եպիսկոպոսը Կոստանդնուպոլիս գալու ժամանակ ճանապարհին հանդիպեցին միմյանց։ Նիկոլ եպիսկոպոսը նաև Հոհան վարդապետից կաթողիկոսին ուղղված հանձնարարական թուղթ առավ և գնաց Կոստանդնուպոլիս կաթողիկոսի մտա։ Իսկ Հոհան վարդապետը, հասնելով կլով, մը-

նաց այնտեղ, մինչև որ նիկոլ եպիսկոպոսն ու Խաչքո դատավորը Կոստանդնուպոլսից վերադարձան, եկան կլով։

Երբ Հոհան վարդապետը տեսավ, թե ժողովուրդը ընդդիմանում է եպիսկոպոսին և չի կամենում նրան հնազանդվել, սկսեց միջնորդել ժողովրդի և նիկոլի միջև վերացնելու համար երկար ժամանակվա շփոթ միճակն ու խռովությունը։ Երկար օրեր շատ խրատներով, քարոզով, ուսուցանելով, առանձին խոսելով ժողովրդի և եպիսկոպոսի հետ, մեծ ջանքով ու շատ աշխատանքով հաղիվ կարողացավ համոզել ժողովրդին, որ հնազանդվի եպիսկոպոսին։ Ապա Հոհան վարդապետը, միասին առնելով ժողովրդին ու եպիսկոպոսին, բերեց մտցրեց իրենց եկեղեցին, որ եպիսկոպոսը հափշտակել էր։ Երբ ժողովուրդը եկեղեցի մտավ, ինչպես գտնեցի խառնումը ոչխարների հոտին՝ իրենց մայրերին, գոռում-գոչում, ողբում ու աղիողորմ լաց, փղձկացող սրտով հորդառատ արտասուք էր թափում ժողովուրդը աչքերից մեծ հառաչանքով այն տարփալի կարոտի ու փափագի համար, որ տածում էր հր եկեղեցու հանդեպ։ Այնտեղ եկեղեցում նույն ժամին Հոհան վարդապետը սկսեց մխիթարել ժողովրդին Աստվածաշնչից, սրբերի վարքից ու օրինակներից, որի խոսքերի վրա ժողովրդի սիրտը զովանում էր։ Եվ բոլորին հաշտեցնելով եպիսկոպոսի հետ՝ թե ժողովուրդը, թե եպիսկոպոսը մխիթարվելով ուրախացան վարդապետի արարքով և գոհությամբ օրհնում էին ամենքի-աստծուն։

Հաշտության լուրը հասավ լեհերի թագավորին, որի անունն էր Յանգյաժիմիր, քանզի այս օրերին թագավորը կլով քաղաքում էր։ Թագավորը իր մոտ կանչեց Հոհան վարդապետին և առանձին սենյակում նրա հետ երկար խոսեց և լսեց խելոք ու հաճելի խոսքերով պատասխաններ։ Թագավորը սիրեց վարդապետին և շնորհակալություն հայտնեց նրան միջնորդության և ժողովրդին ու եպիսկոպոսին հաշտեցնելու և երկար ժամանակի խռովությունը վերացնելու համար։

Հոհան վարդապետը այնտեղ մնաց մի կլոր տարի, ապա վերադարձավ, եկավ Սուրբ էջմիածին։ Իսկ կլովի ժողովուրդն ու նիկոլ եպիսկոպոսը մնում են նույն պայմանագրության վրա, որ սահմանեցին Փիլիպոս կաթողիկոսն ու Հոհան վար-

դապետը, մինչև այսօր, երբ այս պատմությունը շարագրեցինք, մեր թվականության 1109 [1660] տարվա մայիս ամսի 10-ին: Կխնդրենք Քրիստոսից, որ ապագայում ևս խաղաղությամբ ու սիրով պահի ի հաճույս իր բարեսեր կամքի և ի դովեստ հավիտյանս օրհնված անվան: ամեն:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ք

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՎՔԵՐ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԳԱՐՉԱՆ ՊԱՏՃԱՌ
ՓԻԼԻՍՈՓՈՍՅԱԿԱՆՆԵՐԻ ԳՐՔԵՐԻ ՈՃՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՔԵՐՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐՈԳՆԵԼՈՎ
ՍՓՈՒՅՑԻՆ ՀԱՅՈՑ ՎԱՐԳԱՊԵՏՆԵՐԻ ՄԵՋ, ՈՐ [ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ,
ԱՐՎԵՍՏԸ] ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՎԵՐԱՅԵԼ ՈՒ ԱՆՉԵՏ ԷՒՆ ԵՂԵԼ

Արդ՝ հին ու վաղեմի ժամանակներից Բաղնշ քաղաքի Ամրդուլու վանքում¹⁵⁵ վարդապետների դպրոց կար, որ տեղիով հասավ մինչև մեր հայրերի ժամանակ, երբ այնտեղի վարդապետների հաջորդ ու առաջնորդ, պետ ու զխալորն էր Բարսեղ անունով մի վարդապետ: Սա երևելի ու մեծանուն և շատ աշակերտներ տնեցող մարդ էր: Ամրդուլու վանքը նախապես անճոռնի ու վատ էր շինված, այն էլ հնությունից խարխուլված էր: Սա [Բարսեղը] բոլոր շենքերը միանգամից քանդեց և ինքը վերստին հիմնադրելով շինեց, ամբողջովին ավարտեց՝ եկեղեցին, տները և այնտեղ եղած մյուսները:

Նաև Բարսեղ վարդապետը Տաթևացու կարգից էր առաջացել ու սերվել հետևյալ հաջորդականությունով:

Նախ՝ Գրիգոր Տաթևացին, նույնի աշակերտ Գանիելը, նույնի՝ Հովհաննես Համշենցին. նույնի՝ Չորթան Գրիգոր Արճիշենցին, նույնի՝ Ներսեսը, որ կոչվում է Մատաղ, նույնի՝ Ներսես Բաղիշենցին, նույնի՝ Ներսես Ամկեցին, նույնի՝ Բրբրատ Հովհաննես Ոստանցին, նույնի՝ Բարսեղ Գավառցին [Քավառ], որը այն Բարսեղն է, որին վերաբերում է մեր խոսքը: Սույնի աշակերտ Ներսես Մոկացին՝ Ասկնջավա¹⁵⁶ գյուղից, որի մականունն է Բեղլու, որովհետև մեծ ընչացք [բեղ] ունեւր. սույնի աշակերտ Մելքիսեթ Երևանցին՝ Վժան¹⁵⁷ գյուղից:

Արդ՝ այս Բարսեղ վարդապետը ինքնին գիտեր, որ հայոց վարդապետները անտեղյակ են փիլիսոփայական գրքերին ու քերականության գիտությունը: Իսկ ինքը մեծ ցանկութեամբ տենչում էր, թերևս հասնի այդ գիտությունը ոչ միայն իր համար, այլ մանավանդ ազգի, որ նորագլխով սփռվի մեր հայոց ազգի մեջ, որպեսզի բոլորը հասնեն այդ շնորհին ու գիտությունը:

Այս պատճառով մշտապես իր ձեռքն էր առնում փիլիսոփայական գիրքը և թեպետ չէր հասկանում, բայց առանց տատամսելու, առանց ձանձրանալու կարգում էր: Այնպես էր լինում, որ տեղ-տեղ վերահասու էր լինում իմաստին ու խոսքի բովանդակությանը և տեղ-տեղ էլ չէր հասկանում, բայց նա ամենայն ջանքով, անձանձիր մշտապես կարգում էր:

Եվ ինչպես տեր Քրիստոսը երեք նկանակի առակի մեջ ասաց, թե՛ ճիարեկամության համար չի տա, սակայն թախանձանքի համար կելնի, նրան կտա, ինչ որ խնդրի՞: Այսպես էլ սրան տվեց, որ անդադար, անձանձիր տքնություն մշտապես ու հանապազ կանգնած գիտության դռանը գիշեր-ցերեկ աղոթքներով ու ընթերցումով բախում էր: Իսկ ամեն գիտության աղբյուրն ու տվիչը՝ սուրբ հոգին՝ աստված իր էակցի բերանով խոստացավ, թե՛ «Ննդրեցեք, կտրվի ձեզ, բախեցեք, կբացվի ձեզ համար, հայցեցեք, կստանաք»¹⁵⁸, տեսնելով սրա անդանդաղ շուտ գալը ու բախելը, սրան շնորհեց իր խնդրածը, քանզի սրա մտքին տվեց տեսողություն ու խելք՝ խելամուտ լինելու խոսքին ու ռճին՝ և փիլիսոփայական գրքերի շավիղներին առանց որևէ մեկի առաջնորդության ու ցուցմունքի:

Քանզի սկսեց «Սահմանաց գրքից»¹⁵⁸, կարգում էր մինչև պրակի վերջը, դարձյալ վերադառնում էր պրակի սկզբին, այնքան էր կարգում ու վերադառնում, մինչև որ ամեն որպիսություն տեղեկանում էր, ապա անցնում էր մյուս պրակին: Այսպես անելով «Սահմանաց գրքի» տասը պրակը կարդաց, մինչև որ վերահասու եղավ, թե ուրիշներին ևս կարող է ուսուցանել: Ապա թողեց «Սահմանաց գիրքը», անցավ

* Ղուկ. ԺԱ 8:
** Մատթ. է 7, Ղուկ. ԺԱ 9:

Պորփյուրին՝¹⁵⁹ տեսնելու ու փորձելու սրա որպիսությունը: Սկսեց մեծ ջանքով կարդալ և մտքով խորհել: Շատ օրեր ծանր աշխատությամբ կարդալով ու վերադառնալով սուրբ հոգու շնորհով Պորփյուրից հասկացավ սեռն ու տեսակը:

Մերության օրերում այս Բարսեղ վարդապետը իր մոտ կանչեց բոլոր իր աշակերտներին և ինչ գաղափար քաղել էր փիլիսոփայական գրքերից, նրանց սովորեցրեց, որը ներանք բոլորը ուշադրության առան ու սովորեցին: Ապա ըսկըսեց խոսել նրանց հետ և պատվիրել. «Իմ սիրելի որդիներ, այն ինչ հոգևոր երկունքով տիրոջ միջոցով երկնեցի հին վարդապետների գրքերի մեջ, որ հիշատակում են սեռ, տեսակ, տարբերություն, հատուկ [մասնավոր], պատահումն [պատահական հատկանիշ], ստորասություն [հաստատումն], բացասություն [մխտում], որոնք բաղում ու շատ անգամ հանդիպում են «Պարապմանց գրքի»¹⁶⁰, և «Գանձուց գրքի»¹⁶¹ և սրանց մոտիկ ու այլ այսպիսի գրքերի մեջ, թեպետև կարդում ենք և անցնում, բայց թե սրանք ի՞նչ բան են և ի՞նչ է սրանց իմաստը, և ամբողջը, և մասերը, և որպիսությունը, չենք հասկանում. իսկ վարդապետներին անհրաժեշտ է, որ սրանց բոլորին քաջագիտակ լինեն, որովհետև առանց սրանց գիտության թեպետ որևէ մեկը կարդում է, ինչ էլ որ կարդում է, թե հասկանում է կարդացածը, բայց պատշաճ կերպով ու անհրաժեշտ չափով չի հասկանում, որովհետև բոլոր գիտությունների ու գրքերի ներածությունը սրանք են՝ թե փիլիսոփայական և թե [առհասարակ] հեթանոսական [գրականության]»¹⁶²

Այս պատճառով իբրև մահվան անփոփոխելի կտակ ձեռք պատվիրում եմ, մասնավանդ ծանր ու անկրելի բեռ եմ դնում ձեզ վրա, ինչպես ինձ տեսաք, որ մշտապես կարդում էի այս գրքերը և ծանր մտածումով խորհում էի ու երկնում այնքան, մինչև գտնում էի խոսքի նշանակությունը, և ինչ էլ որ գտա տիրոջ շնորհներով, այն ամենը ահավասիկ դաս տվի ձեզ: Եվ այժմ մեծ պարտադրանքով պատվիրում եմ ձեզ, որ դուք ևս այդպես անեք, քանի դեռ կենդանի եք: Եվ այն, ինչ ձեզ դաս տվի, մշտապես կարդացեք և ի լրացումն դրա դուք ևս լրացրեք՝ կարդալով և առաջ գնալով, և ինչ որ տա ձեզ աստված՝ սուրբ հոգին, ինձնից սովորածն ու ձեր գտածը

սովորեցրեք ձեզ աշակերտողներին և միշտ նրանց վարժեցրեք նույնի մեջ, մինչև որ նրանց մտքում ամրանա: Դուք նույնպես պատվիրեցեք ձեզ աշակերտածներին, որպեսզի այս օրինակով անեն: Եվ այսպես որդուց որդի անելով՝ հավատում եմ տիրոջը, որ կբանա և ցույց կտա ամեն ճանապարհ ու դռներ այս շքանաղ ու պանծալի գիտությունն»:

Արդ՝ լույսընկալ հոգի այս Բարսեղ վարդապետը ըստ վերևում ասածիս պատճառ դարձավ փիլիսոփայական գրքերի գիտություն գյուտին և այսպես պատվեր տալով ավելացավ իր հայրերին և հանգավ ի տեր: Նրան գերեզմանում հանգըստի դրին նույն Ամրդուլու վանքում, որ ինքը նորոգեց: Նրա հանգստյան տեղը թող լինի սրբերի ու երանելիների հետ ամեն:

Երջանիկ Բարսեղ վարդապետի պատվերի հանաձայն սրա աշակերտներից երեք հոգի արին, որոնք Մովսես գավառից էին. մեկի անունն էր Հովսեփ՝ Ողմի¹⁶³ գյուղից, մյուսինը՝ Հայրապետ, և սրա եղբորորդուն՝ Ներսես, որոնք Ասկնջավո գյուղից էին: Այս Ներսեսը Բեղլու Ներսեսն է, որ վերևում վարդապետների կարգի մեջ հիշատակեցինք: Այս Ներսեսը շատ աշխատեց՝ թե Բարսեղ վարդապետից և թե ընկերներից շատ ավելացրեց: Ապա այս Ներսես վարդապետը հիշելով և խորհելով մտաբերեց այս կյանքի ունայնությունը, սրա զբաղմունքները և մեծության պատրանքը, հիասթափվեց աշխարհից և լքվելով իրենից թոթափեց աշխարհը և սրա ամեն վայելանքները: Քանզի Մեծ անապատը նոր էր շինված ու հաստատված, որի պատմությունը նախապես արել ենք և նույն պատմության մեջ հիշել ենք նաև Ներսես վարդապետին: Ահա այդ հիշված Ներսեսը այս Ներսեսն է: Սա լսելով Մեծ անապատի միաբանների առաքինական ճգնությունների մասին՝ ելավ գնաց այնտեղ: Մեծ անապատի միաբաններից արեղաներ սկսեցին Ներսես վարդապետից սովորել փիլիսոփայական գրքերը: Եվ որովհետև գործնական առաքինությունը ավելի հարգված ու նախապատիվ էր նրանց մոտ, քանի որ հոգին զարդարելու նպատակ ունեին և ոչ թե խոսքը, ուստի սովորողներից ոմանք ետ կանգնեցին: Բայց տեր Մելքիսեղ անունով մի արեղա, որ Արարատյան աշխարհի Վժան [Ուշան]

գյուղից էր, շթուլացալ փիլիսոփայական գրքերի ընթերցման մեջ և ոչ էլ հեռացալ Ներսես վարդապետից, այլ որքան ժամանակ Ներսես վարդապետը մնաց Մեծ անապատում, այնտեղ մնաց նաև տեր Մելքիսեթը, և երբ Ներսես վարդապետը ելավ, գնաց Վասպուրական երկրի կիժ կոչված կղզին, որ ծովի մեջ է և այնտեղ անապատ շինեց, այս Մելքիսեթը նույնպես Ներսես վարդապետի հետ գնաց կիժ:

Եվ երբ շատերը հավաքվեցին և տեղի միաբանները բաղմացան, հինգ ուրիշ եղբայրներ միաբանվեցին Մելքիսեթի հետ, և բոլորն էլ ձեռք առան փիլիսոփայական գրքեր ու սկսեցին շանադութլամբ կարգալ Նրանք հայտարարելով օրական մեկ ժամ նշանակեցին միմյանց հետ հավաքվելու, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը, ինչ որ գտած լինի գրքերի խոսքերից [նշանակությունը պարզած լինի], այնտեղ ամենքին հայտնի, որպեսզի մյուսները նույնպես սովորեն, որով աճի, նորոգվի, ավելանա այն գիտությունը Այսպես արին երկու տարի, իսկ նրանից հետո միաբանված եղբայրները ձանձրացած փիլիսոփայական գրքերի ընթերցումից ևս կանգնեցին, որովհետև շարժարանքը շատ էր, իսկ մխիթարությունը՝ սակավ, որովհետև տակավին չէին իշխում խոսքի վրա և քաղցրության համը չէին առել, որով ամեն շարժարանք նվաստ ու երկրորդական է երևում դրա համեմատությամբ, ինչպես վկայում է Դավիթ փիլիսոփան [Անհաղթը]:

Բայց տեր Մելքիսեթը շթուլեց փիլիսոփայական գրքերը և զրանց ընթերցումից շթուլացալ, այլ անդադրում տքնութլամբ գիշեր-ցերեկ կարդում էր ու մտածում, բերում էր Ներսես վարդապետին ցույց տալիս և հարցնում, թե արդյոք ուղիղ է գտած խոսքը:

Բազմաշանք ընթերցման հետ, որ անում էր ու խորհում միշտ, մշտապես տեսական իմաստություն մեջ լինելով՝ սրտ հետ նաև զործնական առաքինությունը միասին վերցրած, առաջ էր տանում: Անապատի կարգ ու կանոնը հավասարապես սովորական եղբայր-միաբանների հետ կատարում էր: Նաև նրանցից ավելի զերազանց գիշերը անց էր կացնում աղոթքներով ու պազատանքներով՝ ուղղված տիրոջը և ամեն իմաստություն տվող տեր-աստծուն, որպեսզի սա իր հա-

մար բանա գրքերի իմաստության դռները և խելամուտ դարձնի նրանց հանճարին:

Այն, ինչ պատմեցինք վերոհիշյալ վարդապետների մասին, սա նրանցից բազմապատիկ ավելին էր: Փիլիսոփայական գրքերի ծանր աշխատանքը իր վրա առավ, շահաված այն ժամանակը, որ ընկերների հետ էր և կամ շափավոր ճգնությունը, կրում էր տքնությունը [անքնությունը], այլև ուղիղ տասը տարի առանց թուլանալու և իրեն խնայելու, իր մարմինը խաչ հանած՝ կարիքներով ու ցանկություններ հանդերձ ըստ Պտղոսի* Ավելի քան այս, երկու տարի օրը մեկ հաց էր ճաշակում և ուրիշ ոչինչ: Իսկ այդ երկու տարին ամենին լուռ մնաց և որևէ մեկի հետ չխոսեց, այլ [խոսում էր] աստծու և գրքերի իմաստության հետ. և բոլորովին կրակի շմտեցավ [տաքանալու], ճրագ կամ լույս իր հյուղակը չըտարավ, այլ միշտ ցերեկը գրքեր էր վերծանում, գիշերը խորհում:

Իսկ բոլոր էակներից անքննելին՝ սուրբ հոգին աստված, որ քննում է ամեն ինչ և աստծու խորքը՝ նայելով նրա մշտագիր հույսին ու անձանձրույթ խնդրանքին, նրա մեջ լցրեց իմաստության ու գիտության շնորհները, և պարզեց խնդրելին՝ նրա հաճախակի պաղատանքի համար ըստ նմանության իր էակից տեր Հիսուսի:

Քանզի բոլոր փիլիսոփայական գրքերի գիտությանը անտարակույս վերահասու իմացող եղավ՝ Սահմանացը¹⁵³, Պորփյուրին¹⁵⁹, Ստորոգությունը¹⁶⁴, Պերիարմենիասին¹⁶⁵, Աշխարհացն¹⁶⁶, Առաքինությունը¹⁶⁷, Վերլուծականին¹⁶⁸:

Նաև բոլոր ազգերի տոմարը, որոնց պատճենը գրված կա մեր մեջ, քաջապես, առանց տարակույսի ամենին վերահասու եղավ՝ իմանալով նրանց սկիզբը, պատճառը և ամեն կարգը: Նաև տեղյակ եղավ քերականական գիտությանը և իմացավ ավելի քան իր ժամանակակիցները:

Արդ՝ միայն այս չեն նրա շնորհքն ու գիտությունը, որ պատմում ենք, քանզի աստվածաշնչական գրքերից և ուսուցողական խոսքերից շատ բան անգիր էր արել և միշտ բերանացի էր ասում:

* Գաղ. Ե 16:

Բայց այս փիլիսոփայական գրքերը հիշատակում եմ այն պատճառով և շնորհակալ եմ նրանից, որովհետև այսպիսի օտար, այլատեսակ, այլանուն ու անծանոթ խոսք առանց վարժեցնողի և առանց որևէ մեկի ուսուցման, ինքնուրույն ամենը գտավ սկզբից մինչև վերջ:

Մարմնական հասակի համեմատությամբ առավել կատարյալ էր իմաստության և հոգու հասակը: Ներսես վարդապետը իր կամքով և անապատի բոլոր միաբանների վկայությամբ առաջ կանչեց նրան (Մելքիսեթին) բարձրագույն տեղի ու պատվի ըստ տիրոջ հրամանի, թե՛ «Բարեկամ, բարձրացիր»¹⁶⁵ և շնորհեց նրան վարդապետության զավազան, որ հարածամ քարոզությամբ ազդեցության ջրով մխիթարեր զովացնող լսողներին:

Այն ժամանակի օրերում Մովսես վարդապետը, որ եղավ էջմիածնի կաթողիկոս, դեռ նոր էր սկսել Սուրբ աթոռ էջմիածնի նորոգությունը և պարսպի շինությունը: Եվ Սուրբ աթոռ էջմիածնի նորոգության և Մովսես վարդապետի կաթողիկոսության լուրը տարածվել էր ամբողջ աշխարհում, և ա այս ամենը անկում էին գալ նրանց տեսության: Սրա համար Մելքիսեթ վարդապետը իմ անապատից ելավ, ելավ բարձրագահ աթոռ Սուրբ էջմիածին, երկրպագեց քրիստոսակոխ սուրբ տեղին, տաճարին և հանդիպեց Մովսես կաթողիկոսին և սրա աշակերտներին, որի զալով ամենքը անպատմելիորեն ուրախացան:

Երբ Մելքիսեթ վարդապետը դաս ու քարոզ էր տալիս, խոսքը նրա բերանից դուրս էր գալիս իբրև ուղիսի ու հեղեղի հորձանք, որի իմաստության վրա ամենքը ապուշ կտրած զարմանում ու բաղձում էին:

Այդ օրերին Մովսես կաթողիկոսը իր մեծ աշակերտ Կեսարացի Խաչատուր վարդապետին ինչ-որ միաբանների Շետ ուղարկեց Լեհաստան Սուրբ էջմիածնի նվիրակության համար: Եվ որովհետև Խաչատուր վարդապետի հետ զնացած

* Դավրիժեցին նկատի ունի Դուկասու Ավետարանից հետևյալը. Այլ յորժամ կոչիցես, երթիչի բազմիչի ի յնտին տեղոջ. զի յորժամ զայցե, որ կոչեացն զքեզ, ասիցէ քեզ, բարեկամ, ի վեր մատիր (Ղուկ. ԺԹ 10):— Երբ կանչվես, զնա, բազմիր վերջին տեղում, որ երբ քեզ կանչողը գա, ասի քեզ, բարեկամ, վեր գնա:

միաբանները ընդդիմախոս ախոյանի չէին պատահել, ուստի իրենց մտքում իրենց գիտնականներ ու կարող մարդիկ է՛ն կարծում: Այնտեղ՝ Լվով քաղաքում ֆրանկներից ինչ-որ հայրեր եկան Մովսեսի աշակերտների մոտ հակաճառության համար: Նախ՝ նրանք մերոնց հարցերին քերականությունից, ասացին. «Վառեմ բառը անո՞ւն է, թե՞ բայ»: Մերոնք հըմուտ շինելով այլևայլ պատասխան տվին: Այդ ժամանակ նրանք արհամարհելով ու ծիծաղելով ծաղրեցին մերոնց: Եվ շատ օրեր հակաճառության համար այսպես են արել, իսկ մերոնք սրտով ու հոգով խոցվել են և իմացել, թե այն, ինչ դիտեն, գիտություն չէ, այլ իրենք պարտավոր են փիլիսոփայական գրքեր կարդալ և այնտեղ հաստատ մտադրվել են, թե զնանք էջմիածին Մելքիսեթ վարդապետի մոտ, ամեն ինչ թողած նրա միջոցով փիլիսոփայական գրքեր կարդանք: Եվ երբ հասան էջմիածին, անմիջապես սկսեցին նույն գործին ձեռնամուխ լինել, նաև էջմիածնի մյարանության եղբայրներից հարեցին սրանց դաս առնելու: Երբ միաբանված եղբայրները եկան Մելքիսեթ վարդապետի մոտ և սկսեցին դաս առնել, նախ քերականություն սովորեցին, սրանից հետո սկսեցին Սահմանքը, ապա Պորփյուրը, Ստորոգությունը, Պերիարմենիասը, Աշխարհացը¹⁶⁶, Գովելին¹⁶⁹, սրանցից հետո բոլոր ազգերի տոմարները:

Եվ ի լրումն այս ամենի, որ Մելքիսեթ վարդապետը դաս տվեց աշակերտած եղբայրներին, մեծ ցնծությամբ և բերկրալից հոգով իր ձեռքերը երկինք բարձրացրեց, սկսեց զոհանալ աթաժուց. փառավորում էր և խոստովանում, որ իր շընորհները տիրոջից են և ասում էր աշակերտած եղբայրներին. «Ո՛չ մի այլ մտածածնք ու խոհ չկար իմ մտքում, բացի միայն այս իմաստություն համար [մտածելուց], որ երկար և անհաշիվ տանջանքով հաղիվ գտա, այն էլ տիրոջ շնորհով վախենում էի, թե առանց որևէ մեկի սովորեցնելու մեռնեի, և այս պանծալի ու շքնաղ գիտությունը ինձ հետ հող մտներ, ամփոփվելու: Բայց արդ՝ որովհետև դաս տվի ձեզ և տիրոջից ընդունած խոսքի արծաթը զցեցի լումայափոխներին»:

* Նկատի ունի. Պարտ էր քեզ արկանել զարծաթը իմ ի սեղանաւորս. Մատթ. Իմ 27:

այսուհետև փոխանակ տրամաբան, մխիթարություն ունեմ, որովհետև թեպետ ես կմեռնեմ, բայց ձեզ մեջ սերմանված տիրոջ խոսքը կմնա աշխահում, և այն, ինչ ես տասնհինգ տարի և էլ ավելի մեծ տաժանքով հաղիվ կարողացա գտնել, արդ՝ հեշտ ու դուրբին ութ ամսվա ընթացքում ձեզ հանձնեցի: Բայց ձեզնից խնդրում եմ, տիրոջով սիրված իմ եղբայրներ, ինչպես մեզ պատվիրեցին մեր նախնի վարդապետները՝ կտակ անելով և մեզ վրա պարտավորություն դնելով, նրանց նման ես էլ այսօր ձեզ պատվիրում և նույն պարտականությունն եմ դնում ձեզ վրա, որպեսզի շնորհակալ և հանդիստ չտաք աչքերին և նինջ՝ արտևանունքներին, այլ բռնելով այս իմաստության շավիղը ձեր կյանքի օրերում անդու ու անդադար աշխատեցեք սրա վրա մինչև ձեր վախճանի օրը: Իսկ ես հույս ունեմ սուրբ հոգի աստծու՝ աննախանձ պարզեատուի վրա, որ բազմապատիկ ավելացնելով կարգաւանգվորի ձեզ շնորհներով մեզնից ավելի, և ինչ էլ որ պարզեմ ձեզ, աննախանձաբար սովորեցրեք այլ խնդրողների, ով էլ որ նա լինի»:

Սրանից հետո Մելքիսեթ վարդապետը ընկավ հիվանդության մահիճ, քանզի առաջին ծանրատար ճգնությունների համար, որ կիմ անապատում դիմագրավելով համբերել էր ձմեռային ցրտին ու սառնամանիքին, սառը քամին արմատավորվել էր նրա մարմնում, որի պատճառով շուտ-շուտ հիվանդանում էր: Դրա համար եղբայրները համոզեցին Մելքիսեթ վարդապետին և նրա վրա բժշկ բերին, որ զուցե բժշկական դեղերով նրանից դուրս բերի ցուրտը: Իսկ բժշկը անհմուտ լինելով շատ ջերմ դեղ ներարկեց նրա մարմինը, որի պատճառով շորացան, ցամաքեցին նրա փոքոտիքի ներսի բոլոր մասերը, քանզի դեղի շատ ուժեղ ջերմությունը այրեց նրա անդամների ներքին մասերը՝ սիրտը, լյարդը, թոքերը և այլ մասեր, որի հետևանքով հյուծվելով մաշվեցին անդամների բոլոր մասերը: Այդ հիվանդությամբ վճարեց այս կյանքը և գնաց վերին իմաստության՝ տեր Քրիստոսի մոտ:

Բազմաշխատ Մելքիսեթ վարդապետի մահը եղավ Երևան քաղաքում, սուրբ առաքյալ Անանիայի դամբարանի վանքում: Նրան տարան ընդհանուր գերեզմանատուն՝ այն բլու-

րը, որ կոչում են Կոզեռ, որովհետև Կոզեռ¹⁷⁰ վարդապետի գերեզմանի պատճառով, որ այնտեղ է, այդպես են կոչում բլուրը: Այնտեղ Կոզեռ վարդապետի գերեզմանին մատիկ պատրաստեցին գերեզմանը և այնտեղ դրին հանգիստ նրա ժամնի պատվական, սրբասուն նշխարները և տապանքարի վրա գրեցին անունը: Սրա վախճանը տեղի ունեցավ մեր թվականության 1006 [1557]-ին: Այս դլիխ սկզբում, որ վարդապետների կարգում հիշեցինք գավառացի Բարսեղ վարդապետին և սրա աշակերտ մոկացի Բեղու ներսեսին և սրա աշակերտ երևանցի Մելքիսեթին՝ վժան գյուղից, այս այն Մելքիսեթն է, որի պատմությունը արեցինք. սրա հիշատակը օրհնությամբ լինի և նրա աղոթքներով տերը մեզ թողություն տա. ամեն:

Իսկ այն եղբայրները, որոնք միաբանվեցին և Մելքիսեթ վարդապետից փիլիսոփայական գրքերի դաս առան, թեպետ ամեն ոք ջանաց ու աշխատեց և կարգաց ըստ կարողության, բայց նրանցից Սիմոն անունով մի արեղա՝ նորահաս երիտասարդ, որ տոհմով ջուղայեցի էր, որոնք այժմ բնակվում են Սպահան քաղաքում: Այս Սիմոնը շափազանց շատ ավելացրեց, որովհետև այն որ կանխավ պատմեցինք, թե Մովսես կաթողիկոսի աշակերտները գնալով կլով քաղաք Փրոնանկների հետ հակահառություն հանդիպեցին, սրանց հետ էր այս տեր Սիմոնը, ուստի այժմ դաս առնելու ժամանակ շափազանց հոժարությամբ, ջերմեանդ սրտով, ծառավատու շոր կարտավ էր առնում դասը և հարածամ կարգում էր: Երբ դասառությունը վերջացավ, տեր Սիմոնը ելավ էջմիածնից, գնաց Սպահան քաղաքը, քանզի այս տեր Սիմոնի ուսուցիչը կեսարացի խաչատուր վարդապետն էր, որ շատ Հարանց վարքեր ու ժամագրքեր տպագրեց: Այս խաչատուր վարդապետը Մովսես կաթողիկոսի կողմից առաջնորդ նշանակվեց Սպահան քաղաքի ջուղայեցի ժողովրդի համար: Դասառությունը ավարտվելուց հետո [խաչատուր վարդապետը] տեր Սիմոնին առավ, գնաց Սպահան քաղաքի իր վանքը, որ շինված էր ջուղայեցիների մեջ, խաչատուր վարդապետը իր բոլոր աշակերտներին մարմնական գործերում [կենսական պայմաններով] ապահով էր պահում, ուստի աշակերտները մշտապես զբաղվում էին կարգալով ու ընթերցումով: [Տեր

կաշատուրը] առաւել զթում ու խնամում էր տեր Սիմոնին, որի խնամակալության ներքո տեր Սիմոնը ավելի կատարելագործվեց ուսման մեջ, որովհետեւ դաս առած փիլիսոփայական գրքերը մեջտեղ բերեց և սկսեց կարգով կարգալ և գիշեր-ցերեկ անդուլ ու անդադար տքնությամբ մտախոհության մեջ էր՝ աչքերին հանդիստ ու արտևանունքներին նիւջ շտալով: Այլև ինքը տեր Սիմոնը ի բն ուներ սուր ու հղացող միտք: Այս փիլիսոփայական գրքերի կարգալը նա ըսկըսեց երիտասարդական հասակում, երբ ստանում, պահում, բազմացնում էր, երբ ջանքը, աշխատասիրությունը և վաստակը անշափ էին, որ ուներ ընթերցելիս, քանզի բերանը ընթերցումից, միտքը խորհելուց ամենևին պարապ չէին մնում՝ տանը, ժամատանը, գրսում, ուր էլ լիներ:

Երեք տարի մեծ ջանքով ու ցանկությամբ իրեն կաշկանդել էր ընթերցումով, խոհով, այլև մեծ պաղատանքով և արտասուքներով խնդրում էր հեշտալուր տիրոջից, որպէսզի իրեն արժան համարի այնպիսի շքնաղ ու պանծալի և դերազանց իմաստություն, որովհետեւ որպէս մուլի ինչ որ այդ իմաստությանը բեւեռ էր իր սեռական տարփանքը*:

Բազմաժամանակյա և մշտաջան աշխատանքից սրա մտքում ավելացավ տեսական իմաստությունը աստծու սուրբ հոգու շնորհներով, որ մշտապէս զարդարում է Քրիստոսի եկեղեցիները ըստ իր բազմազան շնորհների, ինչպէս որ ուսուցանում է նրա առաքյալ սուրբ Պողոսը, թե հոգու կողմից մեկին տրված է իմաստության խոսք, մյուսին գիտության խոսք** և այլն: Արդ՝ նույն սուրբ հոգին սրան պարզեց վրձիտ, գերպանծալի և շնորհալի խոսք քարոզության, հակաճառության, Աստվածաշունչ գրքերի կամ փիլիսոփայական գրքերի մեկնության համար. բնագիտության, և փիլիսոփայական գիտության մեջ անհամեմատ գերազանց եղավ, քան այս ժամանակի բոլոր վարդապետները, որոնք բոլորը խոնարհվում էին նրան և ուսանում նրանից՝ դաս առնելով կամ այլ կերպով:

* Այս նախադասության մեջ մի բառ կա՝ իրե, որ շղիտներ իմն է, թե իրե, մենք թարգմանեցինք իբրև իմն:

** Ա. Կորնթ. ԺԲ 8.

Սրանք մայրաքաղաք Սպահանում լինելով, որ պարսից բուն մայրաքաղաքն է, պարսիկներից փիլիսոփա մարդիկ գալիս էին հարցաքննություն և հակաճառություն էին անում. տեր Սիմոնը բոլոր եկեղեցիներին հիացնում էր փիլիսոփայական գիտությամբ, բնագիտությամբ պատասխան տալով նրանց: Զուղայեցի առաջավոր մարդիկ, տեսնելով սրա արժանիքները՝ վկայեցին խաչատուր վարդապետի առջև, նաև հենց ինքը խաչատուր վարդապետը, տեսնելով նրան աստվածային շնորհներով օժտված, կանչեց նրան գերազույն պատվի ու աստիճանի և տվեց նրան վարդապետական գավազան, որը քարոզության հորդաբուխ խոսքերով բերկրանք պատճառելով ուրախացնում էր լսողների սիրտը: Նա կարիք չէր զգում Քարոզգրքի¹⁷¹ կամ Հարցնտեսի¹⁷², այլ ինչ որ անհրաժեշտ ու պատշաճ էր լինում պահին՝ Աստվածաշունչից բնաբան էր առնում, գեղեցիկ կարգավորված ու պատշաճ շարադրությամբ հորինում, հարդարում էր խոսքը ի փառս Աստծու հոգուն՝ շնորհներ տվողին:

Եվ քանզի հար ու հարածամ գիտության ու իմաստության մեջ մտքի խոհանք ուներ, խցում, գրսում, ժամատեղում այս Սիմոն վարդապետը ինքը ասում էր, թե՝ «Մի օր մնացի եկեղեցում կանգնած և Սուրբ գրքի ինչ-որ խոսքեր էի խորհում, քունը ծանրացավ վրաս, կանգուն ննջում էի և չգիտեի, տեսա բեմի վրա մի կին էր կանգնած ինչպէս թագուհի և շքեղ փառքով. ձեռքին բռնած էր մի գիրք, որ ինձ թվում էր, թե Աստվածաշունչ է: Կինը ձգեց իմ գիրկը և ասաց՝ առ այս քեզ, միաժամանակ ինձ հայտնվեց, թե այդ կինը Աստվածածինն է: Այնուհետև ինչ խոսքի մասին որ մտածում էի, հեշտությամբ գտնվում էր որոնելիս: Ես այնպէս եմ համարում, թե սուրբ Աստվածածինը ինձ հրամայեց, որ այսուհետև Աստվածաշունչը առնեմ ձեռքս և նրա վրա մտածեմ»: Սրա հետ նաև ինքը՝ Սիմոն վարդապետը ասում էր, թե՝ «Այս իմաստությունը ինձնից չէ, այլ սուրբ Աստվածածնից է, որ այս ինձ տվեց»: Մինչդեռ Սպահան քաղաքում էր, երեք անգամ փիլիսոփայական գրքերը և քերականությունը իր ընկեր աշակերտներին դասավանդեց: Անկիրթ ու անհմուտ

մանուկներին և բոլի միտք ունեցող մարկանց համար գրեց հեշտ հասկանալի նոր քերականություն իբրև հին քերականության ներածություն, որ թարգմանիչների կողմից թարգմանված է, որպեսզի սրանով դյուրութեամբ հասնեն հնի գիտությունը: Սրա օրինակները բազմացան, քանզի շատերը օրինակեցին:

Ապա Սպահանից ելավ եկավ գերադիր, բարձրագահ և քրիստոսաբնակ Սուրբ աթոռ էջմիածին. սրա գալստյամբ անպատմելի ուրախություն եղավ այնտեղ գտնվող աշակերտներին համար: Անմիշտպես պատրաստվեցին դաս առնելու ոչ միայն էջմիածնի միաբանները, այլև բոլոր վանքերի արևդաները, որոնք աշակերտում էին Աստվածաշնչին: Եվ միահամուռ հավաքվեցին երեսուն հոգի, սկսեցին դաս առնել: Նախ սկսեցին քերականությունից, ապա բովանդակ փիլիսոփայական գրքերը մինչև վերջ: Գրանից հետո կարդացին Պողոսի թղթի երթայեցիների գլուխը, և ամենքը օգտված, լուսավորված սրա գիտությունից, որ բավական էր իրենց և այլոց:

Երևան քաղաքի քահանաներին ու ժողովրդին շափազանց դուր եկան սրա բարքն ու բնավորությունը, որովհետև շափազանց մեղմ, հեզասիրտ, աննյութասեր բարք ունեւ: Եկան Փիլիպոս կաթողիկոսի մոտ և մեծ թախանձանքով խնդրեցին, որ նրան իրենց առաջնորդ նշանակի: Նա ըստ նրանց խնդրանքի այդպես արեց. ուղարկեց նրանց վանքը, որ Գառնիի գավառում էր Ամենափրկիչ¹⁷³ անունով, որ կոչվում է նաև Հավուց Թառ:

Տարիներ հետո մի գիրք գրեց և անվանեց «Տրամաբանություն». այս գիրքը իբրև ներածություն էր փիլիսոփայական գրքերի, քանզի փիլիսոփայական գրքերի շարադրված բառերն ու խոսքերը, միտքն ու ոճը մարդկանց միտքը դժգոհութեամբ է ըմբռնում, շատ աշխատանք է անհրաժեշտ իսկ Սիմոն վարդապետի այս արածը իբրև ներածություն վերաբերում է բոլոր փիլիսոփայական գրքերին և նրանց, որ մոտ են այս վերջիններին: Երբ լինի ժամանակ ապագայում, որ փիլիսոփայական գրքերի գիտությունը վերանա հայոց ազգի միջից, ինչպես օրինակ անցյալ և մեր ժամանակներում

էր եղել, որպես պատմեցինք, այս Սիմոն վարդապետի արածը, որ «Տրամաբանություն» անվանեց, առանց սովորեցնողի, և թե մեկը կարդա, կարող է հեշտութեամբ հասկանալ, վերահասու լինել, ապա սրանով փիլիսոփայական գրքերին ձեռք զարկել:

Նաև Պրոկ¹⁷⁴ իմաստասերի գիրքը, որ վրացերենից թարգմանված է մեր լեզվին, այլ նախապես եղած ոմն Սիմոն անունով քահանայի կողմից, այս Սիմոն վարդապետը այդ գիրքն էլ ուղղեց, որովհետև առաջին թարգմանությունը բազմաթիվ դժվարություններ էր պատճառում ընթերցողին: Անունների հոլովումը, բայերի խոնարհումը և բառերի շարադասությունը ըստ պատշաճի և ըստ քերականության չէր, որի պատճառով խոսքի միտքը աղավաղվում էր, այլև շատ տեղերում միևնույն խոսքի կրկնություններ կային, մի խոսքով ընթերցողը ծանր աշխատանք էր կատարում, բայց օգուտ քիչ էր ստանում: Իսկ սա ըստ քերականական գիտությունից բոլորը ուղղեց, հարդարեց, որ կարդացողին դյուրին հասկանալի լինի և մարդու մտքին շատ օգուտ տա:

Սրանից հետո ձեռքն առավ «Հոգյաց գիրքը»,¹⁷⁵ որպեսզի այն ևս ուղղելով դյուրացնի ինչ մինչդեռ այն նոր էր սկսել, քարոզության համար ելավ գնաց Հունաստան, հասավ Եվզոկիա քաղաքը, որ այժմ կոչվում է Թոքաթ. այնտեղ տկարացավ ըստ մարդկային հյուժակիան էություն և այդ հիվանդությունից վախճանվեց ու այնտեղ թաղվեց: Նրա պակասելը հայոց ազգից բոլոր հայերին անմխիթար սուղ և անփարատ տրտմություն պատեց, մանավանդ նրա ընկերներին ու աշակերտներին, որոնք այժմ հոգոց հանելով հիշում են, փնտրում, բայց չեն գտնում:

Սրա վախճանը եղավ մեր թվականության 1106 [1657]-ի փետրվար ամսի քսանութին՝ աղուհացքի պասին, որի հիշատակը թող օրհնությամբ լինի և նրա աղոթքներով տերը մեզ թողություն տա. ամեն:

Սրանից հետո կպատմենք մի այլ մաքրակենցաղ մարդու արդյունավետ գործունեությունը, որը կոչվում է Ստեփանոս վարդապետ:

Սա կվով մայրաքաղաքից էր, աղգություն հայ, ազնվա-

կան ու հարուստ տանից, բարեպաշտ ծնողների զավակ, որ մանուկ հասակում սովորեց կվովի դպրոցներում լատիներեն լեզվով ու գրով, սովորեց քերականական գիտությունը, և փիլիսոփաների գրքերը:

Այն ժամանակ, երբ կվովի նիկոլ եպիսկոպոսը նեղում ու վնասում էր կվովի հայ ժողովրդին, Ստեփանոսի ծնողները բարեպաշտության և ուղղափառության դրդամաներով սրբան հանեցին կվովից և ուղարկեցին Սուրբ էջմիածին Փիլիպոս կաթողիկոսի ժամանակներում: Երբ Ստեփանոսը հասավ էջմիածին, սովորեց հայոց լեզուն ու գիրը, անգիր արեց սաղմոս ու շարական և այլ եկեղեցական ուսմունքներ:

Այնուհետև սկսեց կարգալ Աստվածաշունչը, տասներկու վարդապետների ու փիլիսոփաների գրքերը: Եվ որովհետև նախապես գիտեր լատիներեն լեզուն ու գիրը, հետո սովորեց նաև մերը և երկուսը միմյանց համեմատելով՝ նույնն էր խորհում ու մտալարծվում: Այս պատճառով իր ընկերներից առաջ անցավ, նաև մտքով սուր էր և հղացող, ստացող [գիտություն] ու պահող, միշտ ընթերցող, վարքով մաքրակենցաղ ու պարկեշտ: Սրա գիտությունն ու վարքի մաքրությունը բոլոր վարդապետները տեսնելով՝ վկայեցին Փիլիպոս կաթողիկոսի առջև, այլ հենց ինքը տեր Փիլիպոսը տեսնելով նրա արժանավորությունը, կանչեց ավելի գերադրական փառքի, որովհետև նրան կուսակրոն քահանա օրհնելուց հետո տվեց վարդապետական իշխանություն՝ ասելով. «Բարեկամ վեր բարձրացիր՝ ըստ տերունական առակի»:

Ինքը Ստեփանոս վարդապետը օրըստօրե իրեն վարժում ու կրթում էր ուսումով ու պարկեշտ վարքով, որի համար ընդունեց սուրբ հոգու շնորհները և նույնի պարգևներով լատիներեն գրից ու լեզվից հայերեն գրի ու լեզվի թարգմանեց շրս գիրք, որոնցից մեկն է Հովսեպոս պատմագիրքը¹⁷⁵, բայց ոչ ամբողջը, այլ այն մասը, որտեղ խոսվում է Երուսաղեմ քաղաքի ու հրեական ազգի վրա հառնող պատերազմների մասին, որ վեց հատոր է: Երկրորդ՝ Դիոնիսիոս Արիստարգացու գիրքը¹⁷⁷. Թեպետ Ստեփանոս Սյունեցու¹⁷⁸ առաջին թարգմանությունը կար մեր մեջ, բայց այն համառոտ ու դժվար

* Չուկ. ԺԳ 10:

հասկանալի էր: Սրա թարգմանությունն էլ նորից նույնն է, բայց այնքան դուրըմբունելի է, որ անհասկանալի ոչինչ չի մնում ընթերցողին, որովհետև մեկնությունը շատ է և դուրահասկանալի: Երրորդը մի գիրք է, որի անունն է «Գիրք պատճառաց»¹⁷⁹. նաև այն կոչում են վեր բնականներից, քանի որ ինքնին աստվածաբանության գիրք է, որովհետև նրա բոլոր խոսքերը աստվածաբանություն են և կազմված է երեսունվեց պրակներից: Չորրորդ գիրքը՝ առակավոր խոսքեր, որ պատմում է մարգանց վարքի ու կենցաղավարության մասին որպես օրինակ ամեն մարդու համար, որի լատիներեն վերնագիրն էր «Վարքի հայելի», բայց երբ հայերեն թարգմանեցին, նորից դրեցին նույն «Հայելի վարուց»¹⁷⁷ վերնագիրը: Չափազանց հաճելի ու դուրեկան են այս գրքի խոսքերը:

Արդ՝ մինչև այժմ սա այսքան վաստակ ստեղծեց հայոց եկեղեցում: Կինդրենք բարեպարզե տիրոջից՝ աստծուց, որ սրան պահի երկար կյանքով, առանց որևէ փորձանքի, որպեսզի այլ վաստակներ ևս ավելացնի հայոց ազգին ու եկեղեցուն:

Նաև պարտքս եմ համարում այլ արժանիքներով շնորհալից մարդկանց, որոնց ևս տեսել եմ, նույնպես աչքաթող շանել, Թեպետ նրանք աշխարհականներ են, բայց հավատքով քրիստոնյա են և հայազգի, որոնք մեր ազգի համար պարծանք են և օգտակար, որոնց անուններն են Վարպետ Մինաս¹⁸⁰ և Վարպետ Հակոբշան¹⁸¹, սրանք երկուսն էլ ծագումով ջուղայեցիներ են:

Այս վարպետ Մինասը իր համար արվեստ ընտրեց նկարչությունն ու ծաղկաբարությունը: Քանզի մանուկ հասակում ինչ-որ պատճառով սրան պատահեց գնալ Բերիա քաղաքը, որ Հալեպն է: Այնտեղ գտավ ոմն նկարիչ վարպետ, որ ազգով ֆուանկ էր: Աշակերտեց ֆուանկ վարպետին և նրանից սովորեց: Ուսանելուց հետո դարձավ ինքնուրույն և եկավ Սպահան, բնակվեց իր տանը, որ ջուղայեցիների մեջ էր: Սա բանեցնում էր իր նկարչության արվեստը: Արվեստի առավել վայելչակերտ, գեղեցկատիպ, շքնադատես հորինվածքի համար ջուղայեցի մեծամեծները (Մինասին) տանում էին իրենց ապարանքների, տների հարկերը ծաղկելու և նկարազարդելու: Այսպես նաև

խոջա Սաֆրազը տարավ իր տունը իր ապարանքը ծաղիկներով ու պատկերներով զարդարելու: Եվ մինչ տակավին տների ծաղիկազարդումը չէր ավարտել, այնպես եղավ, որ պարսից թագավոր Շահսեֆին եկավ խոջա Սաֆրազի տունը: Սա նըստելով երբ զննեց, նայեց ծաղիկներին ու նկարներին, որ նկարված էին, տեսավ, որ բոլորը շքնաղ, գեղապանծ և շափազանց նման են նկարված: Թագավորը սկսեց հարցնել խոջա Սաֆրազին նկարիչ վարպետի մասին, թե որտեղից է նա ասաց. «Մեր ժողովրդից, մեր հայոց ազգից է և ահա այժմ այն ինչ-որ տան աշխատում է: Թագավորը հրամայեց կանչել նրան և երբ եկավ, թագավորը հարցրեց, տեղեկացավ ամեն որպիսությունը: Եվ այնտեղ՝ նույն խնջույքի մեջ, որտեղ բազմել էին, արքան հրամայեց Վարպետ Մինասին և ցույց տվեց իր նախարարներից մեկին, որի անունն էր Չրազ խան՝ կերպարանքով շափազանց տղեղ, զմեատես և ասաց. «Սրա պատկերը այժմ այստեղ նստած նկարիր»: (Այս ասվեց) իրենց զվարճության ծաղրի և ուրախության համար:

Իսկ Չրազ խանը երբ տեսավ, թե ձեռք առնելու համար են նկարում իր պատկերը, ուստի սկսեց աչքերը և բերանը ծածուկել, կերպարանքը այլալել և շրջմըջել կողմից կողմ, որ թերևս նկարված պատկերը համանման չլինի: Բայց Վարպետ Մինասը ըստ թագավորի հրամանի անմիջապես նույն տեղում, խնջույքի մեջ հիշատակված մարդու պատկերը նկարեց, որ այնքան հար և նման էր համեմատությունը, որ թագավորի հետ հանդեսում գտնվողները մեծ հիացումով զարմացան առավել նմանություն համար և փառք վեր առաքեցին ասածուն՝ մարդկանց այդպիսի շնորհներ տվողին: Այդ օրից սկսած և ապագայում թագավորն ու իր նախարարները նրան ձեռքից բաց չթողին, այլ մշտապես իրենց տներն էին պահում նկարակերտություն համար:

Այնպես եղավ, որ ուսաց թագավորը սիրալիրություն համար խաղաղություն մոնետիկ ուղարկեց պարսից թագավոր Շահսեֆիի մոտ. բազմազան նվերների հետ կար նաև մի բազմ թռչուն, որ պարսիկները իրենց բառով շունդար են կոչում: Կար նաև մի մարդ, որ ուսաց ազգից ու երկրից էր և եկել էր թռչունին սպասավորելու համար: Այս թռչունը և սրա սպասավոր մարդը խիստ առավել հաճելի ու դուրեկան թվացին

Շահսեֆի թագավորին, որի պատճառով թագավորը հրամայեց նկարիչ Մահմադ բեկին, թե սրանց երկուսի՝ բազմի ու սրա պահող սպասավորի պատկերները նկարիր, ինչպես որ տեսնում ես: Այս նկարիչ բեկը ազգով պարսիկ էր, գլխավորն էր բոլոր պատկերահան ու նկարիչ արվեստավորների և անվանի էր ողջ պարսից ազգի մեջ, որ միայն թագավորի և մեծամեծ իշխանների գործերն էր անում: Այս Մահմադ բեկը շատ օրեր նկարեց, բայց ոչ որակով և անդամների ոչ համեմատ ու փման: Ապա արքան հրամայեց վարպետ Մինասին՝ նկարել բազմի և սրա սպասավորի կերպարանքները: Նա ըստ աստվածատուր շնորհների քիչ օրերի ընթացքում նկարեց նրանց կերպարանքները, և այնքան համապատասխան, որ թագավորն ու իր նախարարները անպատմելի հիացումով սքանչացած, զարմացած էին նկարի վրա: Այն բանի համար, որ թագավորը շափազանց հավանեց, հրամայեց պարզաներ տալ վարպետ Մինասին՝ տասներկու թուման դրամ պարգև և ոտից գլուխ հագուստ: [Հրամայեց] նաև գրել թագավորի գինավորների շարքում, որպեսզի տարեցտարի նրան արքունական գանձարանից ուճիկ տան, ինչպես թագավորի այլ գինավորներին: Բայց Մինասը քրիստոնեական հավատքի համար հրաժարվեց գինավորական անուշից, նրանց արդյունքից և այլազգիների մերձակայությունից. եկավ, իր տանը զբաղվում էր իր արվեստով:

Առավել շքնաղ և նմանագիր նկարակերտություն համար շատերը աշակերտելով սովորեցին նրանից, բայց նրան ոչ մեկը չհավասարվեց, որովհետև բնական ձիրք ուներ և մտքի տեսողություն, որ նախապես կերպարանքների և ամեն իրերի որպիսին լինելը, հանգամանքները, որակը, քանակը ճշգրիտ կերպով պատկերացնում էր իր մտքում և ապա նկարում էր թե բույսերի, թե տունկերի, թե անասունների, թե գազանների, թե թռչունների և թե մարդկանց կերպարանքները: [Նկարում էր] ինչ ազգից որ լիներ, թե պարսից, թե հայոց, թե եբրայեցիների, թե հնդիկների, թե ֆոսանկների, թե ռուսների, թե վրացիների: Քանզի ինչ ազգի կերպարանք որ նկարում էր, հար ու նման էր նկարում: Սույնպես էլ մարդու հոգեկան վիճակները, ինչ հոգեկան վիճակում էլ լինեց մարդը՝ ծիծաղելիս, բարկանալիս, տրտմություն մեջ

հարբած, հորանջելիս, թե խրախճանքի մեջ, թե կույի, թե որևիցե վիճակում, այդպես էլ մարդու կերպարանքը նկարում էր, որ ազգին էլ պատկաներ, բոլորովին հար ու նման էր նկարում:

Այլև մտքով մարդու կյանքի ժամանակը պատկերացնում էր, ըստ այդմ էլ նկարում էր տեսքն ու գույնը, մարդու կերպարանքը նկարում էր ըստ հասակի, ըստ տարիքների բաժանման, թե ինչպես բաժանելով դանազանում են միմյանցից՝ տասնամյային, քսանամյային, երեսունամյային, քառասունամյային, ինչ հասակի որ լինե՞ր օրինակը, այդ հասակին էլ հարմարեցնելով նմանեցնում էր նկարված պատկերը: Նկարում էր թե յուզաներկ, թե ջրաներկ, թղթի վրա, կտավի, տախտակի, սղնձի, պատի և այլ ինչի վրա, որ պետք զար: Նաև գրքերի ծաղկող էր. ինչ գիրք պատահեր, ոսկով, լաշվարդով ծաղկում, զարդարում էր, քանզի ամեն մասնակի արհեստ, որ այս նկարչական արվեստի հետ առնչվում էր, բոլորը անթեքի գիտեր:

Նաև հմուտ էր բժշկագիտության մեջ, մարդկանց հակառակ ներգործության և հիվանդության, շորս տարրերի խառնվածքի, դեղերի բնույթի, կազմության առավել սպեղանիններ կազմելու և վերքեր բժշկելու մեջ: Նաև շատ ու բազմազան արվեստների մեջ հմուտ էր սա, ուստի հիշատակության արժանի համարելով գրեցինք, որին թող տեր աստված քրիստոնեության հավատի մեջ հաստատուն պահի անփորձանք կյանքով, իր զավակներով երկար օրեր ամեն:

Գ Լ Ո Ւ Ե Լ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՁԻ ԱՋԻ ՄԱՍԻՆ

Ավանդությամբ կարգուկանոն կա հայ ազգի մեջ. ազգի հայրապետը, որ կաթողիկոսն է, երեք տարին մեկ աթոռից նվիրակ է հանում, որ գնում է համայն հայ ազգի մեջ, մեռուն է նվիրում և ժողովրդի ողորմության տալիքն առնում և բերում է Սուրբ աթոռ: Այսպես էլ մեծ հայրապետ տեր Փիլի-

պոսը, որ Սուրբ էջմիածնի կաթողիկոսն էր, մեզ՝ նվաստիս, որ նրա ձեռնասուն աշակերտն էինք, Սուրբ էջմիածնի նվիրակության գործի համար ուղարկեց հունաց աշխարհը, որ օսմանցիների իշխանության տակ էր: Եվ եղավ, որ մենք հասանք Ամասիա¹⁸² քաղաքը, երբ մեր թվականության 1094 (1645)-ին էր, այնտեղ պատահեց նաև Սեբաստացի Ներսես վարդապետը, որ հետո եղավ Սսի կաթողիկոս: Շատ օրեր զրուցախոսության ընթացքում մի օր Ներսես վարդապետը մեզ ասաց. «Երբ մեռոնը օրհնում եք, ո՞ր սրբությունն եք վրան բերում»: Մենք ասացինք. «Մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը, սուրբ Թադեոս առաքյալի աջը և սուրբ Նշանը, որ կենաց փայտից է, գեղարդը, որ մխվեց տիրոջ կողմը»: Նա ամենը թողնելով, ասաց Լուսավորչի աջի մասին. «Այդ, որ Լուսավորչի աջ ես ասում, աջ ա՞ջն է, թե ձախ»: Մենք ասացինք. «Աջ աջն է»: Ներսես վարդապետը ասաց. «Սսի կաթողիկոսարանի բնակիչները ասում են, թե ստույգ կերպով ու հավաստյալ սուրբ Լուսավորչի աջը այն է, որ Սսում է: Եվ իբրև հաստատումն սրա ստուգության բերում են այն խոսքը, որ հայրապետների շարագործությունների մեջ գրված է Ստեփանոս հայրապետի և Լուսավորչի աջի մասին: Գրվածի պատճենը այս է. «Տեր Ստեփանոսը [աթոռակալեց] շորս տարի. սրա օրերում անասելի աղետ եղավ, որովհետև Եգիպտոսի անօրեն գոռոզ սուլթանը քանդեց, ավերեց սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը՝ Հոռմկլան¹⁸³, և բոլորին սրի քաշեց, իսկ մնացածին քշեց գերության, որոնց հետ նաև սուրբ հայրապետին, որ այնտեղ վախճանվում է: Իսկ սուրբ Լուսավորչի Գրիգորի աջը տարվել է այնտեղ: Երբ մտավ նրանց ապարանքը, պատժեց նրանց մահվամբ, ինչպես տապանակի¹⁸⁴ միջոցով (պատժվեցին), այլազգիները: Արդեն անհամար ու անթիվ էին մեռելները, երբ սուրբ Լուսավորչի Գրիգորի աջ ձեռքը վերադարձրին Կիլիկիա Հեթում բարեպաշտ թագավորին: Ապա ցատումը դադարեց նրանց նկատմամբ»: Արդ՝ նրանք այս վկայությամբ ասում են, թե այն աջը, որ Սսում էր, ստույգ այդ աջն է սուրբ Լուսավորչինք. իսկ այդ աջը, որ այժմ ունեք էջմիածնում, ինչպե՞ս եք իմանում, որ դա Լուսավորչի աջն է. եթե նախնիներից դրա մասին վկայություն ունեք, ցույց տվեք»: Իսկ մենք այս լսելով՝ լռեցինք.

որովհետև մաքուր սրտով հաստատ հավատ ունեինք այն աշխատանքի և այդ հավատի վերաբերյալ կասկած չունեցանք։ Բայց մեծ հոգացողությամբ հետևեցինք գրքերից վկայություն գտնելու ոչ թե մեր հավատի հաստատության համար, այլ ճշմարտությունը հայտնելու և հարցնողներին պատասխան տալու համար։

Բոլոր քաղաքներում ու գյուղերում մեր շրջելու ժամանակ՝ թե արևելքի, թե արևմուտքի, որտեղ էլ ծերունի վարդապետ, եպիսկոպոս, քահանա էինք գտնում, այդ խնդրի մասին հարցնում էինք։ Նաև բոլոր եկեղեցիներում, ուր էլ հանդիպում էինք, այնտեղ եղած գրքերի հիշատակարանները կարդում էինք, որոնց մեջ բազմաթիվ վկայություններ գրտանք, որոնցից առավել հավաստին առնելով՝ այստեղ շարադրեցինք։ Գնացինք Սպահան քաղաքը, մինչ գրքերի հիշատակարաններ էինք որոնում, գտանք մի ավետարան, որի հիշատակարանը այսպես էր. «Արդ՝ այս սուրբ ավետարանը գրվեց հայոց 878 [1429] թվականին սուտանուն կրոնավոր Գրիգորի ձեռքով Արգելան¹⁸⁵ կոչվող վանքում մորս՝ լույս սուրբ Աստվածածնի և տեր Հուսիկի որդու սուրբ գերեզմանի հովանու ներքո Լուսավորչի հայրապետության ժամանակ, քանզի այս տարի Մկրտիչ վարդապետի մեր սուրբ ուխտի առաջնորդության ժամանակ Սսից աջը վերացավ, և շփտեց, ինչ եղավ»։ Եղանք Սեբաստիայի սուրբ Հրեշտակապետի վանքում, այնտեղ կար մի ճաշի գիրք, որի հիշատակարանը այսպես էր գրված։ «Եվ այժմ այս ճաշու գիրքը գրվեց Արծկե¹⁸⁶ քաղաքում՝ սրբաստեղծ ծովի հանդեպ, որտեղից մանր ձկներ են դուրս գալիս, պատերազմի սուր նշանի¹⁸⁷ ամենամաքուր սուրբ Աստվածածնի կաթողիկեի հովանու տակ մեծ աթոռի հայրապետության ժամանակ, որ Սսում էր, խափանվեց, որովհետև սուրբ Լուսավորչի աջը այնտեղից գողացան, և երկու տարի հայոց մեր ազգը անտեր մնաց դառն ու շար ժամանակ, երբ շարժվել էր պիղծ Ջհանշահը¹⁸⁸, հայոց 890 [1441] թվականն էր, որ այս ամեն բանը կատարվեց»։

Գնացինք Սպահան քաղաքը, ջուղայեցիների մեջ գտանք մի Հայսմավուրք, որի հիշատակարանը այսպես էր գրված. «Եվ արդ՝ այս Հայսմավուրքը գրվեց հայոց 890 թվականին Վասպուրական երկրում, Վան կոչված քաղաքում սուրբ Աստ-

վածածնի տաճարի և այլ սրբերի հովանու ներքո մեծ աթոռ Սսի հայրապետության մեջ, երբ այս տարի Լուսավորչի աջը գողացան, տարան, իսկ աթոռը դատարկ մնաց, դառն ու շար ժամանակում՝ Ջհանշահի պարոնության ժամանակ, որ իր շարությանը լցված գնաց Վրաստան, իսկ վրացիք ինչ քրիստոնյաներ, որ հայ ազգից կային, բոլորին բռնի Շամշուղա բերդում արգելափակեցին և նրանց ամենեկին շոգնեցին։ Իսկ շար Ջհանշահը իր շար գործով վրա տվեց և գրավեց Շամշուղա բերդը, ինք հազար քրիստոնյա (հայ) և էլ ավելի քահանաներով հանդերձ սրի քաշեցին, իսկ կանանց ու երեխաներին գերեցին։ Այս աղետները ո՞վ կարող է պատմել կամ գրի առնել, իսկ այս ամենը մեր երկրի վրա գալիս են մեր մեղքերի համար»։

Սրանից հետո Սպահանից ելանք, գնացինք սրա գավառը, որ Գանդիման են կոչում, այն գյուղը, որ անվանվում է Վաստիկան. այդտեղ գտանք մի Հայսմավուրք, որի հիշատակարանը այսպես էր. «Ավարտվեց այս սուրբ Հայսմավուրք գիրքը հայոց 891 [1442] թվականին բազում մեղքեր գործած գրիչ Կարապետ քահանայի ձեռքով. մահտեսի Մխիթարի խնդրանքով։ Այս սուրբ գիրքը գրվեց Վան քաղաքում սուրբ առաքյալների Պետրոսի ու Պողոսի, սուրբ Ստեփանոս Նախավկայի և Սահակ հայրապետի¹⁸⁹ հովանու ներքո տեր Կիրակոսի կաթողիկոսության ժամանակ։ Այս տարի եպիսկոպոսների ու վարդապետների ժողով եղավ Վաղարշապատ մայրաքաղաքում, որոնց զխավորներն էին մեծ բարունապետ Թովման և Հովհաննես վարդապետը. ամենայն հայոց կաթողիկոս դրին էլմիածնում տեր Կիրակոսին։ Նոր նորոգվեց սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը ըստ մեծ ներսես հայրապետի, Սահակ Պարթևի և Վարազա սուրբ ուխտի մեր առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի, Ջհանշահի թագավորության ժամանակ, որ այս տարի գրավեց անառիկ Ջոն բերդը¹⁹⁰ և Ջուլամերիկ»։ այս էլ այսպես։

Մենք նաև գնացինք Ուռհա քաղաքը, Ուռհայի վանքը, որտեղ գտնվում է սուրբ Եփրեմ Խուրի Ասորու¹⁹¹ տապանը, տեսանք մի ճաշոց,¹⁹² որի հիշատակարանը հետևյալն էր՝

«Եվ արդ՝ այս ճաշոցի սկիզբը գրվեց սուրբ ուխտ Մատնավանքում¹⁹³ և ավարտվեց Արծկե քաղաքում ութ հարյուր

իննսուներկու [1443] թվին Ջհանշահի՝ Ղարալուսուֆի որդու թագավորության և մեր Լուսավորչի աթոռի տեղապահ տեր Կիրակոս ընդհանուր հայոց կաթողիկոսի հայրապետության ժամանակ, որովհետև մինչև սույն տարին մեր Լուսավորիչ Գրիգորի աչք Սսում էր, և մեր հայոց ողջ ազգը հրեազանդաված էինք Կիլիկիայի աթոռին, իսկ այժմ շնորհիվ նույնի և սուրբ հոգու օժանդակության վերստին եկավ նույն Վաղարշապատ¹⁹⁴։ Էջմիածին Շողակաթի տաճարը և հաստատվեց հայ ազգի գերապատիվ ու հրաշափառ աթոռը, որը թող հաստատուն պահի տեր շիսուքս՝ ամենն»։ այս էլ այսպես։

Նաև գտանք մի ավետարան, երբ կարդացինք հիշատակարանը, այսպես էր գրված։

«Եվ արդ՝ այս սուրբ ավետարանը սկսվեց Արղնիում հայ ազգի երկու կաթողիկոսներին՝ տեր Գրիգորի և տեր Կիրակոսի հայրապետության ժամանակ, որովհետև երբ գրվեց այս սուրբ ավետարանը շորս տարի էր, որ Լուսավորչի աչք Սսից կորել էր։ Լուրբ հասավ Վաղարշապատ, ուստի հավաքվեցին վարդապետներ, եպիսկոպոսներ, քահանաներ՝ յոթ հարյուր հոգի, և սուրբ Լուսավորչի աթոռը հաստատեցին Էջմիածնում և մի Կիրակոս անունով առաքինի ու ճգնավոր մարդու կաթողիկոս օժեցին և հաստատեցին սուրբ Լուսավորչի աթոռը։ Այժմ ավարտվեց այս սուրբ ավետարանը Արղնի¹⁹⁵ ամուր բերդում Սուրբ Աստվածածնի, Սուրբ նըշխարների¹⁹⁶ որ այստեղ էին հավաքված, հովանու ներքո, տեր Մկրտիչ արքեպիսկոպոսի առաջնորդության ու եպիսկոպոսության, Նովհաննես կրոնավորի երեցփոխության ժամանակ՝ դառն ու նեղ ժամանակ, բազմամեղ գրչի՝ Ավետիս անարժան արեղայի ձեռքով շամզա սուլթանի աշխարհակալության օրոք հայոց 893 [1444] թվականին»։ այս էլ այսպես։

Սրանք գրելուց հետո Լուսավորչի աշխ Սուրբ աթոռ էջմիածին գալու մասին էլ ավելի հաստատ պատմություն ունենք, որին ես հանդիպել եմ Անկյուրա քաղաքում. գտա մի Հայաստավորք այն եկեղեցում, որն անվանում են Սուրբ հոգի։ Հայաստավորքը շափազանց երկարաբան հիշատակարան

ուներ, բայց խոսքը կարևոր լինելու համար ամբողջ գրվածը նույն շարադրության անթերի գրեցի այստեղ։ Եվ խոսքի երկարության համար ոչ ինձ մեղադրիր, ոչ էլ առաջին գրողին, որովհետև պատմության բնույթը այդպես է պահանջում. քանզի երկար է պատմությունը, որի սկիզբը այս է. «Արդ՝ գրվեց այս սուրբ գիրքը հայոց 910 [1461] թվականին Քաջերունի¹⁹⁷ երկրում, Արճեշ քաղաքում ամենաօրհնված Սուրբ Աստվածածնի տաճարի հովանու ներքո ամենայն հայոց տեր Զաքարիա կաթողիկոսի հայրապետության, նևտողների ազգի¹⁹⁸ Ջհանշահ թագավորի բռնակալության ժամանակ, որը բազմաթիվ ավազակներով և անթիվ զորքով ելավ, գնաց, մտավ Իրաքի երկիրը և ամբողջը գերավեց իր իշխանության տակ. հասավ մեծ քաղաք Սպահան, որ Շոշ քաղաքն է, որտեղ Գանիել մարգարեն երազը տեսավ.¹⁹⁹ [քաղաքը] ամուր էր ու բազմամարդ, որոնք [բնակիչները] կուլով դիմադրեցին նրան, բայց սա հաղթեց նրանց և քաղաքը գրավեց, ամբողջ զորքը սրի ճարակ դարձրեց և սրածեց։ Քանզից ու ավերեց, գետի ջուրը կապեց քաղաքի վրա և նրանք, որոնք նկուղներում, ներքնատներում ու դարաններում մտած և թաքնված էին, բոլորը ջրասույզ ու խեղդամահ եղան, ոչնչացան։ Ամբողջ քաղաքը տապալվեց նրանց վրա, քանի որ հողաշեն էր։ Այնտեղից գնաց, մըտավ Հրե, Խորասան և թաթարների ամբողջ երկիրը առավ իր իշխանության տակ, դարձյալ վերադարձավ իր գահը՝ Շահաստան քաղաքը՝ Թավրիզ։ Սրան ընդառաջ գնաց Աղթամարի Սուրբ խաչի աթոռակալ տեր Զաքարիա հայրապետը, որ արքայազն էր՝ Գագիկ²⁰⁰ արքայի թոռներից ու շահալիդից, բազմաթիվ ընծաներով ու նվերներով, որոնք սիրով ընդունեց արքայից արքա Ջհանշահ փաղիշահը և Բեդում թագուհին. [նրանք] պատվեցին, մեծարեցին կաթողիկոսին, նրան սվին ղզեստանվեր և պարզեցին մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի աչքը և պատրիարքության պատիվ։ Սա (կաթողիկոս) աստժու առաջնորդությանը և սուրբ Լուսավորչի կամքով ու փաղիշահի հրամանով եկավ աստվածարյալ, աստվածակար սուրբ Գրիգորաշեն և երկնանման կաթողիկոս Սուրբ էջմիածին՝ սուրբ Գրիգորի առաքելաշնորհ աթոռը և նստեց իբրև ինքնակալ պատրիարք ընդհանուր ամբողջ

քրիստոնեական ազգի (հայերի) համար, որ սփռված է աշխարհի բոլոր ոլորտներում, և ողջ աշխարհը այնպես արեց, որ լինեն մի հոտ և մի հովիվ ըստ տիրոջ՝ խոսքի,^{*} և հովվում էր բոլորին Նիկիական²⁰¹ սուրբ դավանության ուղղափառ հավատքով:

Այդ ժամանակ պատահեց, որ թագավորը (Ջհանշահ) բարկացավ Բաղեշի ամիրայի վրա և ցասումով ուղարկեց շորս զորապետ տասներկու հազար հեծելազորով՝ իրաք քաղաքի վրա: Նրանք գնացին, ավարելով քանդեցին իրաքը և, ջատ ավար միատեղ հավաքելով, նստեցին բերդի շուրջը և նեղում էին այն գրավելու համար. և պատրաստվում էին Նույնը անել Բաղեշում, Մուշում, Խուսիում, Սասունում և սրբանց բոլոր գավառներում:

Նորընծա կաթողիկոս տեր Զաքարիան տեսավ այն երկրին սպառնացող այս վտանգը՝ գերեվարվելը, անօրենների ձեռքը մատնվելը, ավերվելն ու քանդվելը, եկեղեցիների խախտումն ու սուրբ սեղանների տապալումը, սրբությունների գերի տարվելը, աստծու փառաբանության խափանումը, ամբողջ առմիկ ժողովրդի տարագրվելը, գերվելն ու այստեղ-այնտեղ քշվելը: Մեծ հայրապետ տեր Զաքարիան այս ամենը մտածելով և հիշելով տերունական այն խոսքը, որ ասում է, թե՛ «Ես եմ քաջ հովիվը, քաջ հովիվը իր անձը դնում է ոչխարների համար»^{**} և այս խոսքը վերածելով գործի, իր անձը դրեց Քրիստոսի բանավոր հոտի՝ Բաղեշի ողջ ժողովրդի համար, և զորացած սուրբ հոգով, իր սիրտը դարձրած իրբև կարծր վեմ՝ մտավ թագավորի առջև, իր անձը դրեց իրբև փրկանք բազմության համար, դարձավ երաշխավոր, թե ինքը Բաղեշի ամիրայից հարկը կառնի և կտա կայսրին երկիրը խաղաղության մեջ մնալու նպատակով, և կաթոլիկ թագավորի ու նրա որդիների կյանքի համար: Այս բանին համաձայնվելով, արքան ու թագուհին նրան թողլի ու հրաման տվին՝ ինչ կամենա, անի: Նա դուրս եկավ նրանց մոտից հապճեպ ձիերեթաց արշավով գնաց հասավ Բաղեշ քա-

* Ըստ ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հոտ և մի հովիվ (Յոհաննու Ժ 10):

** Յոհաննու Ժ 11:

ղաքը: Սրան ընդառաջ ելավ ամիրան իր բոլոր մեծամեծներով և մեծարելով՝ առոք-փառք տարավ բերդի զուլսը և խոտացան կատարել նրա կամքը և տալ ինչ էլ պահանջի, միայն թե իրաքի բերդից ետ դարձնի ողջ հեծելազորը՝ նա վկայագիր անելով նրանցից՝ գնաց իրաք և զորապետներին կրկին ստորագրություն տվեց և, ցույց տալով նրանց թագավորի թողբը, համոզեց նրանց, որոնք խաղաղություն գնացին իրենց տեղերը, իսկ ինքը վերադարձավ Բաղեշ և երեք ամիս նստեց, առավ խոստացած կայսերական տուրքը և տարավ մատուցեց թագավորին, նրանց միջև խաղաղություն հաստատեց և ողջ առմիկ ժողովուրդը՝ թե հայ, թե մահմեդական, ազատեց անօրենների ձեռքից ու դառր գերությունից: Թող տեր աստված նրան ազատի հոգու և մարմնի ամեն փորձանքից. ամեն: Նա թագավորի մոտից վերադարձավ, նստեց իր աթոռը սուրբ էջմիածնում և երկու զոռոզ այլազգիների կողմից պարգևատրվեց՝ թուրքմեն թագավորից ու Քուրդ ամիրայից, ինչպես որ Զորարարելը²⁰² Դարեհից իր հավատացյալ ժողովրդին հովիվելու համար: Այնպես եղավ, որ կրկին անգամ Ջհանշահ թագավորը գնաց Իրաքի երկիրը՝ Շիրազ և Քրման, նա ուներ Հասան-ալի անունով մի որդի, որ թափառահած շրջում էր Արարատյան գավառի վերին կողմերը: Նա որոշ շարախոսների նենգությունը կամեցավ բռնել մեծ պատրիարք տեր Զաքարիային և նրանից պահանջել դրամ ու հարստություն: Մեծ հայրապետը, նրա այս նենգամտությունը իմանալով, առավ սուրբ Լուսավորչի աջը այլ սպասներով հանդերձ ձեռք օրով գնաց մինչև Բագվան²⁰³, այնտեղից եկավ Բայազետի բերդը,²⁰⁴ այնտեղից էլ իջավ Արգելան²⁰⁵ սուրբ ուխտը, որտեղ թաղված են Յուսիկի որդի սուրբ վարդապետ Ստեփանոսի նշխարները: Այնտեղ հասնելով ի հայտ բերեց աստվածային զանձը՝ մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի սուրբ աջը խաչվառի հետ միասին, ուր մի կողմում նկարված էր տիրոջ պատկերը, իսկ մյուս կողմում նկարված էին մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Տրդատ թագավորի, չքնադադեղ կույս սուրբ Հովհաննիսի (պատկերները): Նաև (խաչվառը) զարդարված էր ոսկեթել գործվածքով, երկնքներն զուլսերով, սուրբ ուրարով, որ տեսնող-

ների համար զարմանալի էր: Նա դիմելով գալիս էր իր հայ-
րենի աթոռը՝ գեղեցկաշեն, գմբեթահարկ Աղթամարի Սուրբ
խաչը: Նրա՝ սուրբ աջով ու ձողի ծալքին բարձրացված խաչ-
վառով, որի գլխին ոսկե խաչ էր շինված, գալու համբավը
տարածվեց: Այն տեղերը, որտեղից գալիս էր հայրապետը,
գավառի ողջ ընկալությունը գրոհ էր տալիս, բոլորը ընդա-
ռաջ էին ընթանում խունկերով, մոմերով, խոյրի ու զվա-
րակների զննումով: Երկրպագում էին սուրբ աջին ու հայ-
րապետին և համբուրում այն մեծ փափագով, մինչև որ եկավ
հասավ Տոսպի²⁰⁶ գավառը և մտավ վան քաղաքը բազմաթիվ
եպիսկոպոսներիով, ձիերով ու ձիավորներով՝ խաչվառը առջե-
վից, քահանաները առջևից ու ետևից երգում էին քաղցր
եղանակներով: Այդպես շքեղ ու փառավոր մտավ վան քաղա-
քը: Իսկ Մահմուդ բեկ կոչված այն պարոնը, որ նստում էր
Շամիրամի ամրոցում՝ վանա բերդում, որ կաթնեղբայրն էր
Ջհանշահ թագավորի, տեսավ քրիստոնյաների պայծառու-
թյունը և ցանկացավ սուրբ աջի տեսությունը: Եվ [մարդ]
ուղարկելով՝ տարավ բերդի զլուխը: Երբ մեծ հայրապետը
սուրբ աջով մտնում էր վեբին բերդի դռնով, գոռոզ Մահ-
մուդ բեկը իր բոլոր մեծամեծներով, տնով, Ամիրզա որդով
և ողջ ընտանիքով ընդառաջ ելավ: Երկրպագություն էին մա-
տուցում սուրբ աջին ու համբուրում, նվերներ էին տալիս և
մեծարելով ու պարզևատրելով հայրապետին վերադարձրեց
իր օթևանը: Այս տեսնելով, քաղաքի ու գավառի բազմու-
թյունը օրըստօրե երկրպագության էին գալիս սուրբ աջին և
ողջույնի մեծ հայրապետին բազմաթիվ ընծաներով ու նը-
վերներով:

Օրնը հետո պարոնից հրաման ստացավ [կաթողիկոսը]
իր հայրենի աթոռ՝ Աղթամար գնալու: Երբ քաղաքից ելավ,
նրա հետ դուրս եկան եպիսկոպոսները, վարդապետները,
քահանաների բազմություններ և վանի բոլոր ազատագունդ
խոջաները՝ ձիերով և ձիավորներով սպառազինված: Եկան,
հասան ծովահայաց Ոստան²⁰⁷ քաղաքին մոտիկ, որին ընդա-
ռաջ եկան քաղաքի բոլոր բնակիչները քահանաներով ու
բազմամբոխ ժողովրդով՝ մեծամեծներից մինչև փոքրերը
խունկերով, մոմերով, բարձրաձայն երգերով: Գրեթե մինչև

հազար մարդից ավելի կար մեծ հայրապետից առաջ և ետ:
խաչվառը իր գլխին ունենալով լույսի նման փայլող ոսկի
խաչ՝ առջևից էր տարվում: Այսպիսի շքեղ փառքով մտավ
Ոստան քաղաքը: Երբ Ոստան քաղաքի այլազգ բնակիչները
տեսան այս ուրախությունը, խոր խոցվեցին այս պայծա-
ռությունից և հայրապետի համարձակությունից, որ Տուրու-
բերան²⁰⁸ գավառից մինչև Ոստան քաղաքը խաչվառով, եպիս-
կոպոսներով և ժողովրդով էր եկել, ուստի միասին հավաք-
վեցին քաղաքի իշխանի մոտ, որ ազգով քուրդ, ժանտ անա-
գորույն ու ամբողջովին քրիստոնյաների թշնամին էր: Նրանք
չար խորհուրդ մտածեցին, որպեսզի գաղտագողի նենդեն
հովվապետին: Նրանց չարությունը քաջ քահանայապետը իմա-
նալով, առավոտյան լուսանալու մոտ առավ սուրբ աջը ու զնաց
ծովեզրը, որտեղ նավահանգիստն էր: Այս բանը իմանալով նրա
հետ եկածները՝ ոմանք վանից, ոմանք այլ գավառներից, ելան,
նրա հետ եկան աստվածապահ կղզու՝ Աղթամարի Մանածիհ-
րի²⁰⁹ մեծ բերդի դիմաց, որ քարապատ էր: Այնտեղ կանգ-
նելով շնորհաբաշխ սուրբ աջով օրհնեց բոլորին, սրբության
համբույրով համբուրեց բոլորին և արձակեց նրանց խաղաղու-
թյամբ ու օրհնությունք, որ զնան իրենց տները: Ինքը սուրբ աջը
առավ, մտավ նավ և զնաց Աստվածաբնակ Աղթամար կղզին՝
իր հայրենի ժառանգությունը: Երբ դուրս եկան ցամաք, նը-
րան ծովեզրում ընդառաջ ելան տեղի բոլոր բնակիչները՝
խունկերով, մոմերով, քահանաներով, քաղցրաձայն երգերով
և առան սուրբ աջը տարան, դրին Աղթամարի գեղակա-
ռույց Սուրբ խաչում, և երկրպագում էին սուրբ աջին ու հայ-
րապետին և օրհնություն ու փառաբանություն էին վերառա-
քում հրաշագործող աստծուն, որ ամենքին արժանի արևց լու-
սավորչի շնորհաբաշխ սուրբ աջի տեսությունը: Սուրբ աջը
մտավ Աղթամար ամուր կղզին և հանգիստ գտավ գմբեթա-
հարկում՝ իր բնիկ տեղում: Մեր թվականության 1020
(1571) տարվա սկզբում, որ նավասարդ ամսի 16-ն էր,
Սուրբ Հակոբի պատի ուրբաթ օրը (աջը) մտավ Սուրբ խաչ
Աղթամար՝ ի պահպանություն մեզ՝ բոլոր հավատացյալնե-
րիս, որոնց ոչ քիչ ուրախություն եղավ: Եվ գավառների բո-

լոր բնակիչները այս վստիպ, օրըստօրե գալիս էին սուրբ աջին երկրպագելու և մեծ հայրապետին ողջունելու բազմաքանակ ընծաներով, նվերներով ու օրհնությամբ և մեծ ուրախությամբ վերադառնում էին իրենց տները՝ փառավորելով ամենասուրբ երրորդությունը՝ հորը, որդուն և սուրբ հոգուն, այժմ և միշտ, հավիտյանս հավիտենից. ամեն:

Արդ՝ այս պատմությունը մինչև այստեղ մեզ իմացրեց, որ լուսավորչի սուրբ աջը հավաստի ու ստույգ Սուրբ դարձել, եկել է էջմիածին, այլև զնացել է Աղթամարու նաև թվականությունների շարքում գրված կա, թե 911 (1562) թվին Ջաքարիս կաթողիկոսը լուսավորչի աջը առավ, իր հետ Աղթամար տարավ:

Արդ՝ շնայած սուրբ լուսավորչի աջի մասին կան նաև այսպիսի խոսքեր ու պատմություններ, որոնք հավաքեցինք գրքերից, թե հավաստի կերպով աջը եկել է Սուրբ էջմիածին, սակայն բոլորը այստեղ շարադրեցինք, որ թերևս երկարաբանություն լիներ, ուստի և՛ ձանձրալի ընթերցողներին: Այլ այսքանը բավական համարեցինք շարադրել այստեղ անխարդախ և ճշմարտասեր իմաստուն մարդկանց հայտնելու անցած ժամանակների որպիսությունը:

Այսուհետև ժամանակն է, որ մենք պատմենք լուսավորչի աջի մասին, թե ինչպես Աղթամարից վերադարձավ, եկավ Սուրբ էջմիածին:

Մայրաքաղաք Նախիջևանին մոտիկ մի գավառ կա, որ կոչում են Շահբունոց ձոր, այս գավառում մի գյուղ կա, որ կոչվում է Օծոպի, այս գյուղի մոտ վաղեմի ժամանակներից շինված կա մի վանք սուրբ Աստվածածնի անունով, որ կոչում են Օծոպու վանք: Այս վանքի միաբաններից կար մի եպիսկոպոս, որի անունն էր Վրթանես եպիսկոպոս. սա իր գործում խորագետ ու խելամիտ էր, իսկ խոսքի մեջ ճարտարարան էր: Սա զնաց Աղթամար սուրբ լուսավորչի աջը գողացավ դարձյալ բերեց Սուրբ էջմիածին: Վրթանես եպիսկոպոսը այս բանը արեց էջմիածնի Սարգիս և Հովհաննես կաթողիկոսների խորհրդով ու կամքով: Նախ Վրթանես եպիսկոպոսը զնաց մի անծանոթ երկիր, այնտեղ այլափոխեց անունն ու հազուստը, հարդարելով թեթևացրեց մորուքը ու ստացավ մուղղուտու կերպարանք՝ անտեղյակ գրի ու կար-

դալու: Նաև ծունկից վերև ազդրը պարանով կապեց և ջիւր կարճացրեց, եղավ բնական կաղ, որ գնալիս կաղում էր: Ապա զնաց Աղթամար կղզին և բնակվեց այնտեղ. վանքին սպասավորություն էր անում: Լավ սպասավորության համար օրավուր ընտելացավ նրանց, մինչև որ նրան եկեղեցու լուսարար և վանքի անոթների ու սրբությունների պահպան նշանակեցին: Նա եկեղեցու լուսավորության գործում մնաց յոթ տարի: Այդ ժամանակ այնպես պատահեց, որ մի օր շատ վաճառական մարդիկ եկան, որոնց հայերեն փերեզակ, իսկ այլազգիների բառով շարչի են ասում: Այս շարչիները գրաստներով, էջերով շրջում էին գյուղի գյուղ. եկան, հասան մինչև Աղթամարի նավահանգիստը և այդպես իրենց էջերով, գրաստներով մտան Աղթամար կղզին կտավ, աստառ, շիթ, ալազա [զույնդզույն կտոր] և այլ ինչ վաճառելու համար:

Այս շարչի մարդիկ Ջուղա գյուղաքաղաքից էին, քանզի այն ժամանակ Ջուղան տակավին շեն էր: Սրանք երկուերեք օր մնացին այնտեղ՝ կղզում, իսկ Վրթանես եպիսկոպոսը կտրեց մի էջի համետը, որ փալանն է, բերեց լուսավորչի աջը, սրա հետ նաև վառը, որ խաշվառն է, և ուրարը, որը և անցյալ պատմության մեջ հիշեց. այս երեքը դրեց էջի համետի մեջ և կրկին կարեց, ինչպես որ սկզբում էր: Այս արեց թաքուն և բոլոր մարդկանցից գաղտնի, միայն էջի տիրոջը հայտնեց և պատվիրեց, որ լավ պահի, որպեսզի աջին որևէ վնաս չպատճառի: Նաև (պատվիրեց), որ ոչ մի տեղ չուշանա, այլ առնի և հասցնեց հասնի Ջուղա:

Չարչիների զնալուց օրեր անց ինքը՝ Վրթանես եպիսկոպոսը մի պատրվակով ելավ կղզուց, զնաց ինչ-որ տեղ: Նրբ այդ վայրերից հեռացավ անծանոթ տեղեր, ապա ոտքի կապը արձակեց, որ նախապես կապել էր, ճանապարհ բռնեց, գնում էր մեծ աճապարանքով: Իսկ Աղթամար կղզու բնակիչները տեսան, որ անցան պայմանավորված օրերը, բայց իրենց լուսարարը չեկավ, զնացին այստեղ-այնտեղ հարցրին, բայց չգտան: Իսկ երբ իմացան, որ աջը իր տեղում չէ, այդ ժամանակ սկսեցին բոլոր ճանապարհներով և ուղիներով շափազանց արտոբանքով հետամտել, որ թերևս հասնեն: Իսկ

գնացած որոնողները երբ հանդիպում էին եկող ճամփորդներին, հարցնում էին, թե մի կաղ մարդ տեսա՞ր: Եկողները պատասխանում էին, թե մենք կաղ մարդ չենք տեսել: Այս կերպ Վրթանես եպիսկոպոսը եկավ, հասավ Զուղա գյուղաքաղաքը և որոնելով գնաց գտավ այն մարդու տունը, որ էջի տերն էր:

Մեծ տաղնապով հոգում էր աջի համար, թե արդյոք ամբողջական հասե՞լ է աջը Զուղա: Երբ լսեց իշատիրոջից և տեսավ համետը, որտեղ ինքը աջը դրել էր (և իմացավ), որ ամբողջական էր մնացել աջը, այդ ժամանակ ցնծությամբ ուրախացավ և փառք տվեց աստծուն: Ապա Վրթանես եպիսկոպոսը գնաց Զուղայի առաջնորդների ու քահանաների մոտ և հայտնեց նրանց իր արարքը: Նրանք դարմացան նրա արած գործի վրա և լցվեցին երկնային ուրախությամբ. գնացին աջը, խաչվառը և ուրարը հանին, բերին եկեղեցի: Հապճեպով ավետավորներ ուղարկեցին Սուրբ աթոռ էջմիածին Սարգիս ու Հովհաննես կաթողիկոսների մոտ, որոնց կամքով ու խորհրդակցությամբ Վրթանես եպիսկոպոսը գնացել էր այդ գործին: Նրբ լսեցին, նրանք էլ ավելի ցնծալով ուրախացան և լցվեցին երկնային ուրախությամբ: Հապճեպ եկեղեցականներով, աշխարհականներով և Արարատյան երկրի բոլոր երեկելի մարդկանցով ճամփա ընկան, սուրբ աջին ընդառաջ գնացին: Աջը գտան Նախիջևան քաղաքում, քանի որ մինչև կաթողիկոսների գնալը ջուղայեցիները և Վրթանես եպիսկոպոսը աջը բերել էին Նախիջևան քաղաքը: Այնտեղ՝ Նախիջևան քաղաքում պատվելով փառավորեցին սուրբ աջը պայծառ մոմերի վառումով, անուշահոտ խոնկերի բուրումով, խոյերի, զվարակների մորթումով: Այնտեղ ուխտ կատարեցին, մեծատենչ փափաղով համբուրեցին սուրբ աջը և ապա աշխարհախումբ բազմությամբ առան սուրբ աջը և բերին Սուրբ աթոռ էջմիածին և դրին հանգստի իր սեփական, բնիկ աթոռը: Իսկ կաթողիկոսները և երկրի բոլոր մարդիկ՝ եկեղեցականներ, աշխարհականներ շատ ու անհաշիվ պարզևներ բաշխեցին Վրթանես եպիսկոպոսին. նաև որքան նվերներ և աջհամբույր ժողովուրդը նվիրեց սուրբ աջին, այդ ամբողջը նույնպես շնորհեցին Վրթանես եպիսկոպոսին.

նաև կաթողիկոսները ու ընդհանուր ժողովը որոշեցին, որ Վրթանես եպիսկոպոսը լինի կաթողիկոսների աթոռակալ [աթոռը մեռածից կենդանուն փոխանցող կամ տեղապահ], ով էլ որ լինի կաթողիկոս սուրբ աթոռին, որքան որ Վրթանես եպիսկոպոսը կենդանի լինի: Եվ սա աթոռակալություն արեց մինչև իր ծերության ժամանակը, ապա մարմնական տկարության պատճառով գնաց Օծոպի վանքը աղբականներին մոտիկ իր ծերությունը խնամելու համար. այնտեղ էլ վախճանվեց և թաղվեց 942 [1493] թվականին, ինչպես որ գրված է նրա տապանին:

Իսկ էջմիածնի կաթողիկոսները իբրև հայրապատվեր կըտակ ավանդություն ունեին իրենց մեջ, որ ամեն տարի միանգամ գնային Օծոպի վանքը, պատարազ մատուցեին, պաշտման դրամ բաժանեին վանականներին և աղքատներին կերակրեին Վրթանես եպիսկոպոսի հոգու համար: Մինչև 'Իավիթ ու Մելքիսեթ կաթողիկոսների ժամանակ այս ավանդությունը կատարվում էր, կաթողիկոսները գնում և անում էին: Իսկ վերևում գրված այս պատմությունը, որ վերաբերում է սուրբ աջի գալստյան, երբ Աղթամարից վերադարձավ և եկավ Սուրբ էջմիածին, ոչ թե հարևանցի խոսք ու զրույց է, այլ հաստատուն և հայրատուր ավանդությամբ պատմվում է բոլոր գավառներում, որոնք գտնվում են Նախիջևան քաղաքի շուրջը, մանավանդ Շահրունուց ձորի գավառում և այն վանքերում, որոնք նրան մոտիկ են, որովհետև բոլոր եկեղեցականներն ու աշխարհականները միաբան պատմում են այս պատմությունը, թե Վրթանես եպիսկոպոսի ձեռքով լուսավորչի աջը էջմիածին եկավ: Դրանցից մենք հավաստին առնելով այստեղ գրեցինք: Սուրբ լուսավորչի աջը այնտեղ Սուրբ էջմիածնում էր մինչև առաջին Շահ-Աբասի ժամանակը, որ տեսավ Սպահան քաղաքը և Շահսեֆի թագավորի ժամանակ Փիլիպոս կաթողիկոսը գնալով Սպահան քաղաքը Շահսեֆի թագավորից խնդրեց, դարձյալ առավ, բերեց Սուրբ էջմիածին իր աթոռը, որպես որ գրված է Փիլիպոս կաթողիկոսի պատմության մեջ [այստեղ]: Եվ նույն սուրբ աջը այստեղ՝ Սուրբ էջմիածնում է գտնվում մինչև այսօր և ըստ արժանվույն պատիվ է վայելում բազում փառավոր-

ըությամբ ի փառս իր և իրեն զորացնող Քրիստոսի Եվ անցյալ այս պատմության մեջ (հեղինակը) հիշեց խաչվառը և ուրաբը, ապա սրանք երկուսն էլ սուրբ աջի հետ պահված են Սուրբ Էջմիածնում իբրև հաստատուն վկայութուններ սուրբ աջի համար, մանավանդ առավել վկաներ են այն հրաշագործությունները, որ սուրբ աջի կողմից կատարվում են:

Այս պատմությունը մշակելով շարադրեցինք մեր թվականության 1111 [1662]-ին հուլիս ամսի մեկին Սուրբ աթոռ Էջմիածնում տեղ Հակոբ Զուղայեցու կաթողիկոսության, պարսից երկրորդ Շահ-Աբասի և օսմանցիների թագավոր սուլթան Մահմադի՝ սուլթան Իբրահիմի որդու թագավորության ժամանակ, նույն սուրբ աջի երջանիկ հոր՝ մեր սուրբ Լուսավորչի բարեխոսությամբ և աղոթքներով՝ ի փառս հավիտյան օրհնված մեր Քրիստոս աստծու:

Գ Լ Ո Ւ Խ Ա

ՄԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՇԱՐԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ԱՌԵՆՈՒ ՈՒ ՍԿՍԵՆ ԵՆՔ ՍՈՒՐԲ ԵՆՐՍԵՍ ԿԱՅԵՅՈՒՅ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՍՏՐԵՆ ԵՆՔ ՄԻՆՁԵՎ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Կաթողիկոսների կարգը սուրբ Գրիգոր Լուսավորչից շինք առել ու գրել այն պատճառով, որ շատ սրբերի ու իմաստունների ու վստահելի մարդկանց կողմից այն գրվել է, որպես ամենցին հայտնի է:

Իսկ ինչ սուրբ Ներսես Կլայեցուց հետո է, ամբողջ մի տեղում գրված չէ, այլ մի մաս այստեղ է, մի մաս այնտեղ, սակայն մենք ամբողջը հավաքեցինք մի տեղում:

Ի՞նչու կաթողիկոսներին անունները, որոնք հավաքեցինք, թե Սսի կաթողիկոսները և թե Էջմիածնի, երեք տեղից ենք հավաքել. մի մասը թվականներից (օծման թվից), որոնք մեզինից առաջ գրել էին. սրանց ինքը Քրիստոսը թող վարձահատույց լինի: Մի մասը վանքի կոնդակներից, որոնք կաթողիկոսներն էին շնորհել յուրաքանչյուր վանքի, մի մասն էլ գրքերի հիշատակարաններից, որ յուրաքանչյուր կաթողիկոսի ժամանակ գրել էին, իսկ մենք ժողովելով բոլոր

կաթողիկոսների անունները՝ սկսեցինք շարադրել դրանք ըստ ժամանակագրության. այն որ նախնի թվականությանն էր վերաբերում, նախադաս կարգեցինք, այն որ երկրորդ թվականությանն էր վերաբերում, երկրորդ դասում կարգեցինք, իսկ որ երրորդ թվականությանն էր վերաբերում, երրորդ դասում կարգեցինք: Այսպես անելով հասցրինք մինչև մեր ժամանակները: Այսպես անելով սկիզբը գրեցինք 620 թվականից, որը մինչև ութ հարյուր թիվը ուղիղ էր, սրանից հետո խառնիխառն ու խառնաշփոթ էր, մանավանդ որ շատ շատերը չկային, սրանք մեծ շարժարանքով շարակարգելով հասցրինք մինչև մեր ժամանակները:

Իսկ այն թվականը, որ յուրաքանչյուր կաթողիկոսի անվան սկզբում գրված է, ոչ թե նույն կաթողիկոսների գահակալության առաջին տարին է նշանակում, այլ միայն նշանի համար գրեցինք, որպեսզի այդ թվով հեշտությամբ ճանաչենք տվյալ կաթողիկոսին: Իսկ եթե լինեն երկու Կարապետներ, կամ երկու Պողոսներ իրար ժամանակով մոտիկ, այդ թվով դյուրությամբ կբաժանենք իրարից և շինք տարակուսի, թե սրանք ու՞րն անձն են, թե՞ երկու:

Իսկ այն թվերը, որ կաթողիկոսների անուններից հետո են գրված, ցույց են տալիս, թե այս անունով կաթողիկոսը այսքան տարի իշխեց: Այն թվերից շատերը չգրեցինք, միայն մի քանիսը, քանզի երկու և երեք օրինակ միասին բերելով, տեսանք, որ շին համապատասխանում, ուստի չգրեցինք, իսկ որոնք համապատասխանում էին, նրանց թվերը գրեցինք: Այս ասածս երկու թիվը Սսի կաթողիկոսների վրա է գրված, իսկ Էջմիածնի կաթողիկոսների ոչ սկզբում գրած գտանք և ոչ էլ վերջում, քանզի Էջմիածնի բոլոր կաթողիկոսների անունները գրքերի հիշատակարաններից հավաքեցինք, որոնք ոչ կաթողիկոսների սկիզբն են ցույց տվել, ոչ էլ վախճանը: Նաև՝ Էջմիածնի կաթողիկոսները, որ մի թվի մեջ են, երկու, երեք, չորս կաթողիկոսներ են գրված, այսինքն՝ որ գրքերի հիշատակարանները նաև թվականի կարգն են այդպես ցույց տրվել: Նաև՝ մեզ կասկածելի թվաց, թե այդքան կաթողիկոսներ հղել են միաժամանակ և միևնույն թվականին: Նաև՝ վերահասու չեղանք, թե ո՞րն է նրանցից ժամանակով առաջինը և ո՞րը վերջինը. այլև վերահասու չեղանք այն բանին,

թե ո՞վ է նրանցից ինքնակալ և ո՞վ է ձեռքի տակ կամ հնազանդված: Այլ գրքերի հիշատակարանները այդ մասին ցույց տվին, ուստի մենք այդպես կարգեցինք:

Արդ՝ սուրբ հոգու օժանդակութեամբ ըստ մեր խոստման հենց այժմ կարգով կսկսենք կաթողիկոսների կարգը, սուրբ Ներսես Կլայեցուց և կհասնենք մեր ժամանակները:

614 (1165) թ. մեռավ Գրիգորիս կաթողիկոսը և կաթողիկոս նստեց նրա եղբայր Ներսեսը 7 տարի:

621 (1172) թ. մեռավ տեր Ներսեսը և դահակալեց նրա եղբորորդի Գրիգորը օգոստոսի 13-ի հինգշաբթի օրը: Տեր Գրիգոր Քարավեժը, տեր Գրիգոր Ապիրատը, տեր Հովհան Մեծաբարոն. սրան գցեցին և սրա փոխարեն կաթողիկոս դրին տեր Դավիթ Արքակազնեցուն երկու տարի: Տեր Դավիթը մեռավ և դարձյալ կաթողիկոս նստեց նույն Հովհանը, առաջ և հետո [ընդամենը] տասնհինգ տարի:

669 [1220] թ. տեր Կոստանդին Բարձրաբերդցին քառասունյոթ տարի:

717 (1268) թ. տեր Հակոբ Գիտնականը՝ տասնութ տարի:

736 (1287) թ. Աղթամարի տեր Կոստանդին Պրոնազործ (այժի փափուկ մազից գործող) Կեսարացին երեք տարի:

738 (1289) թ. Կոստանդին Պրոնազործին աքսորեցին և կաթողիկոս դրին տեր Ստեփանոս Հոռմկլայեցուն շորս տարի. սրան և Լուսավորչի աջը գերի տարան Մսրը:

742 (1293) թ. տեր Գրիգոր Անավարդեցին տասներեք տարի:

756 (1307) թ. տեր Կոստանդին Կեսարացի հերձվածողը տասնհինգ տարի:

770 (1321) թ. տեր Կոստանդին Լամբրոնացին շորս տարի:

776 (1327) թ. տեր Հակոբ Սսեցին տասնչորս տարի: Սըրան գցեցին և տեղը դրին տեր Մխիթարին 796 (1347) թ. տասնչորս տարի: Այս Մխիթարը մեռավ, դարձյալ՝ աքսորյալ տեր Հակոբ Սսեցին շորս տարի:

814 (1365) թ. տեր Մեսրոպ տասներեք տարի:

823 (1374) թ. տեր Կոստանդինը:

825 (1376) թ. տեր Պողոսը:

829 (1380) թ. տեր Թեոդորոսը ութ տարի:

843 (1394) թ. տեր Կարապետը:

846 (1397) թ. տեր Դավիթը:

852 (1403) թ. մյուս տեր Կարապետը:

867 (1418) թ. տեր Գրիգորը: Այս տեր Գրիգորին, որ մականունով Խանձողաթ էր կոչվում, աքսորեցին և նույն թվականին կաթողիկոս դրին տեր Պողոսին, այս պատճառով նույն թիվը միևնույն տեր Պողոսի վրա կրկին անգամ ենք գրում:

867 (1418) թ. տեր Պողոսը:

879 (1430) թ. տեր Կոստանդինը:

886 (1437) թ. տեր Հովսեփը:

889 (1440) թ. տեր Գրիգորը, որ մականունով Մուսաբեկենց էր կոչվում:

Մինչ այստեղ, ինչ որ գրեցինք, վերաբերում էր Սսի կաթողիկոսներին, որոնք Սսում էին նստում և վարում էին կաթողիկոսութունը, որովհետև տակավին Սուրբ աթոռ էջմիածինը նորոգված չէր, այս ժամանակ նորոգվեց, քանզի սուրբ Գրիգորի՝ մեր Լուսավորչի աջը հայտնվեց էջմիածնում, ուստի շատ երկրներից իշխան մարդիկ, նշանավոր եկեղեցականներ ու աշխարհականներ հավաքվեցին, տեր Կիրակոսին կաթողիկոս օծեցին և կաթողիկոսութունը հաստատեցին Սուրբ էջմիածնում, ինչպես որ պատմում է Թովմա վարդապետը,²¹ ուստի սրանից հետո կարադրենք այն կաթողիկոսների անունները, որոնք նստեցին Սուրբ էջմիածնում. սըրանց առաջինը տեր Կիրակոսն է: Սուրբ էջմիածնի նորոգումը եղավ 890 (1441) թվին, այս պատճառով գրում ենք 890:

890 (1441) թ. կաթողիկոս նստեց տեր Կիրակոսը:

892 (1443) թ. տեր Կիրակոսին հանին կաթողիկոսութունից, կապալով նստեց Մակվեցի Գրիգորը: Այս Գրիգորը մասամբ նորոգել է Սուրբ էջմիածինը:

904 (1455) թ. նույն տեր Գրիգորը, նաև կաթողիկոս եղավ տեր Արիստակեսը:

910 (1461) թ. միևնույն տեր Գրիգորն ու միևնույն Արիստակեսը, նաև կաթողիկոս եղավ տեր Զաքարիան:

Այս տեր Զաքարիան նախապես Աղթամարի կաթողիկոս

էր, 910 [1461] թ. երբ Զհանշահ թագավորը Քավրիդ եկավ, սա բաղամթիվ ընծաներով թագավորին ընդառաջ գնաց Քավրիդում, իսկ թագավորը սրան իբրև պարգև տվեց Սուրբ Էջմիածնի կաթողիկոսությունը և մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը, սրա հետ նաև խաչվառը և ուրարը, ուստի Զաքարիա կաթողիկոսը իբր հետ ունենալով աջը, եկավ Էջմիածին, նստավ Էջմիածնի կաթողիկոս. իսկ նույն խաչվառը և ուրարը ահա պահված են Սուրբ Էջմիածնում. [սրանք] վկա են սուրբ աջի համար, որ այնտեղ է:

911 (1462) թ. տեր Զաքարիա կաթողիկոսը սուրբ Լուսավորչի աջը իբր հետ առած նավասարդի տասնվեցին, սուրբ Հակոբի պասի ուրբաթ օրը գնաց Աղթամար:

915 (1466) թ. նույն տեր Գրիգորը և նույն տեր Արիստակեսը, նաև կաթողիկոս եղավ տեր Սարգիսը:

923 (1474) թ. նույն տեր Սարգիսը, նաև կաթողիկոս եղավ տեր Հովհաննեսը:

925 (1476) թ. նույն տեր Հովհաննեսը, նաև կաթողիկոս եղավ մյուս տեր Սարգիսը: Այս Հովհաննես և Սարգիս կաթողիկոսների ժամանակ Լուսավորչի աջը Աղթամարից դարձավ, եկավ Էջմիածին Վրթանես եպիսկոպոսի ձեռքով:

942 (1493) թ. նույն տեր Սարգիսը, այլև կաթողիկոս եղավ տեր Արիստակեսը:

948 (1499) թ. նույն տեր Սարգիսը, նաև կաթողիկոս եղավ տեր Քաղեոսը:

953 (1504) թ. նույն տեր Սարգիսը, նաև կաթողիկոս եղավ տեր Եղիշեն:

955 (1506) թ. նույն տեր Սարգիսը և նույն տեր Եղիշեն, նաև կաթողիկոս եղավ տեր Ներսեսը:

964 (1515) թ. կաթողիկոս եղավ տեր Զաքարիան:

969 (1520) թ. կաթողիկոս եղավ տեր Սարգիսը:

972 (1523) թ. կաթողիկոս էր նույն տեր Սարգիսը:

985 (1536) թ. կաթողիկոս էր տեր Գրիգորը:

990 (1541) թ. նույն տեր Գրիգորը, նաև կաթողիկոս եղավ տեր Ստեփանոս Սալմաստեցին:

994 (1545) թ. նույն տեր Ստեփանոսն էր, նաև կաթողիկոս եղավ տեր Միքայելը:

1006 (1557) թ. նույն տեր Ստեփանոսը և նույն տեր

Միքայելը, նաև կաթողիկոսներ եղան տեր Բարսեղը և տեր Գրիգորը:

1016 (1567) թ. նույն տեր Միքայելը, նույն տեր Բարսեղը և նույն տեր Գրիգորը, նաև կաթողիկոս եղավ տեր Ստեփանոս Առնշեցին:

1025 (1576) թ. նույն տեր Գրիգորը, այլև կաթողիկոսներ եղան տեր Քաղեոսը և տեր Առաքելը:

1035 (1586) թ. նույն տեր Գրիգորը և նույն տեր Առաքելը, նաև կաթողիկոս եղավ տեր Դավիթը:

1042 (1593) թ. նույն տեր Դավիթը, այլև կաթողիկոս եղավ տեր Մելքիսեթը:

1052 (1603) թ. նույն տեր Դավիթը և նույն տեր Մելքիսեթը, նաև կաթողիկոս եղավ տեր Սրապիոնը:

1073 (1624) թ. նույն տեր Դավիթը և նույն տեր Մելքիսեթը, նաև կաթողիկոս եղավ տեր Սահակը:

1078 (1629) թ. կաթողիկոս էր տեր Մովսեսը երեք ու կես տարի:

1082 (1633) թ. տեր Փիլիպոս կաթողիկոսը քսաներկու տարի և կես:

1104 (1655) թվականին տեր Հակոբ կաթողիկոս Զուղայեցին, որ կա մեր օրերում և վարում է կաթողիկոսության իշխանությունը:

Արդ՝ 1042 (1593) թ. եղած կաթողիկոսները Դավիթն ու Մելքիսեթը նրանք են, որոնց մասին պատմությանս սկզբում գրել ենք, թե Սրապիոն վարդապետի մոտ (մարդ) ուղարկեցին, որ գա լինի կաթողիկոս. սա եկավ, Էջմիածնի կաթողիկոս եղավ մեր 1052 (1603) թ., իսկ 1053 (1604) թ. այս Սրապիոնը վերադարձավ գնաց Ամիդ և 1055-ի (1606) թ. ապրիլի քսաներեքին վախճանվեց: Սրապիոնի գնալուց հետո կաթողիկոսության իշխանությունը իրենց ձեռքում ունեին նույն Դավիթն ու Մելքիսեթը և վարում էին:

Բայց նախանձ ու զրգություն և հակառակություն քիչ չընկան Դավիթի և Մելքիսեթի միջև կաթողիկոսության իշխանության համար. այս պատճառով Մելքիսեթը ընկավ ծանր հարկի տակ և Դավիթին հեռացրեց, ինքն էր միայն վարում կաթողիկոսությունը: Հարկի ծանրության պատճառով չկարողացավ վճարել: Մելքիսեթը կաթողիկոսությունը հանձ-

նեց իր եղբորորդի Սահակին, իսկ ինքը փախալ օսմանցի-
ների եկիրը, (այնտեղից) զնաց կլով և այնտեղ վախճանվեց:
Կաթողիկոսության իշխանությունը վարում էր Սահակ կա-
թողիկոսը, բայց հարկի ծանրության պատճառով շկարողա-
ցավ վճարել, նա ևս փախալ օսմանցիների երկիրը: Սրա
փախուստից հետո հայոց ողջ ազգը՝ արևմուտքցիներ և
արևելքցիներ միարանվեցին և Մովսես վարդապետին օծե-
ցին Սուրբ էջմիածնի կաթողիկոս մեր թվականության 1078
(1629)-ի հունվարի տասներեքին, իսկ 1081 (1632) թ. մա-
լիս ամսի տասնչորսին վախճանվեց:

1082 (1633) թվականի հունվարի տասներեքին Սուրբ
էջմիածնի կաթողիկոս օծեցին Փիլիպոս վարդապետին, որ
կաթողիկոսական իշխանությունը իր ժամանակ վարեց ճոխ
ու փառավոր, մինչև որ վրա հասավ մեր թվականության
1104 (1655) տարին: Սույն տարվա մարտի քսանհինգին սա
վախճանվեց: Սրանից հետո կաթողիկոսության աթոռը գրա-
վեց Հակոբ Զուղայեցի վարդապետը, քանզի 1104 (1655)
թվականի ապրիլ ամսի ութին Հակոբ վարդապետին օծեցին
Սուրբ էջմիածնի կաթողիկոս, և այժմ սա է վարում կաթո-
ղիկոսական իշխանությունը մինչև այսօր, որ մեր թվակա-
նության 1111 [1662] տարվա հուլիս ամսի չորսն է, ուստի
և տիրոջից խնդրում ենք, որ երկար տարիներ պահ՛ք ջրան
հուրախություն մեր սրտերի և ի փառս իր անվան. ամեն:

Գ Լ ՈՒ Ն Լ Ր

ՎԱՐԳԱՊԵՏՆԵՐԻ ԿԱՐԳԸ՝ ՍԿՍԱՅ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻՑ
ԳԱՎԱԶԱՆՈՎ, ՈՐ ԻՋՆՈՒՄ Է ՄԻՆՉԵՎ ԷՍԵՄԱՍՆԻ ԳՊՐՈՑԸ

Նախ եռամեծ վարդապետ Մխիթարը, որ մականունով
Գոշ²¹² է կոչվում, նույնի աշակերտ Հովհաննեսը, որ վա-
նական²¹³ է, նույնի աշակերտ վարդանը²¹⁴, նույնի աշա-
կերտ Ներսեսը, նույնի աշակերտ Ծաային²¹⁵, որ Նիշ գավառից
է, նույնի աշակերտ Հոհան Որոտնեցին²¹⁶, նույնի աշակերտ
Գրիգոր Տաթևացին, նույնի աշակերտ Գանիել ձգնավորը,
նույնի աշակերտ Հովհաննես Համշենցին²¹⁷, նույնի աշակերտ
Թորոսը, նույնի աշակերտ Գրիգոր Տարոնացին, նույնի աշա-

կերտ Հովհաննեսը, որ մականունով Շիրակ է կոչվում, նույնի
աշակերտ Ղուկաս Կեղեցին, նույնի աշակերտ Սրապիոն Ու-
հայեցին, որ եղավ Սուրբ էջմիածնի կաթողիկոս, նույնի աշա-
կերտ Գրիգոր Կեսարացին, նույնի աշակերտ Մովսես Սյու-
նեցին, որ եղավ Սուրբ էջմիածնի կաթողիկոս և նրա նորո-
գող, նույնի աշակերտ Սուրբ էջմիածնի Փիլիպոս կաթողի-
կոսը, նույնի աշակերտ ևս անարժան և մեղապարտ, գրիշս
Առաքել և իմ աշակերտ Մակվեցի վարդանը:

ՎԱՐԿԱՊԵՏՆԵՐԻ ԱՅԼ ԿԱՐԳ ԵՎՍ

Մեր վարդապետների կարգը այս է, բայց ոչ առաջինների.
այլ վերջինների. նախ՝ Գրիգոր Տաթևացին և սրա աշակերտ
Գանիելը, սրա աշակերտ Հովհաննես Համշենցին, սրա աշա-
կերտ Արճեշի Գրիգորը, որ մականունով Չորթան էր կոչ-
վում, մյուս աշակերտը Թորոս վարդապետը, իսկ Չորթանի
աշակերտը Ներսեսն է, որ Մատաղ է կոչվում. սրա աշակերտն
է Ներսես Բաղիշեցին, սրանք Ներսես Ամկեցին. սա ունի եր-
կու աշակերտ Հովհաննես Ոստանցին Վառնուշտ գյուղից և
Աղարիան Մեծ Հայքի Շահկերտ գյուղից, որ մտ է նախի-
ջևան քաղաքին: Իսկ Հովհաննես Ոստանցու աշակերտներն
են Սիմոն Ապարանցին և Բարսեղ Գավառացին (Քավառ):
Սիմոնի աշակերտն է Կարապետ Կալոն, սրա աշակերտն է
մյուս փոքր Սիմոն ձգնազգյացը: Բարսեղի աշակերտներն
են Բուժիկ Հովհաննես Բաղիշեցին և ուրիշ շատեր: Այս Հով-
հաննեսի աշակերտն է Խաչատուր Բաղիշեցին, իսկ մյուս
արևելցիները բոլորը Չորթանից են սերված:

Կրկին նորից սկսում եմ Հովհաննես Համշենցուց. սրա
մյուս աշակերտն է Թորոսը, որ վերևում հիշվեց. Թորոսի
աշակերտն է Գրիգոր Տարոնացին, սրանք Հովհաննես Շի-
րակը, սրանք Ղուկասը, որ Խորձունյաց²¹⁸ գավառից էր, այ-
սինքն Կեղիից. սրա աշակերտներն էին Պետրոս Կարկոցին
և Սրապիոն Ուհայեցին, որ եղավ Սուրբ աթոռ էջմիածնի
կաթողիկոս մի տարի վեց ամիս և փոխվեց Քրիստոսի մոտ:
Նաև սրա աշակերտներն են Բարսեղը, որ Սասունի Նիճ գա-
վառ Մարման կոչված գյուղից էր, և Հովսեփ Ղզվեցին, էլ ավե-
լի նվաստ Կարապետը՝ խոսքի սպասավոր Բաղիշեցին Փար-

խինդ գյուղից, որի մասին լսեցինք այս պատմութիւնից և որին մեր աչքերով տեսանք. սրանք ուսումով և գործով պակաս չէին առաջին վարդապետներից, այլ ավելի առավել: Նաև երկու վարդապետի անուններն էլ պիտի գրեմ՝ Հովհաննես Անթաիեցի, որ կիլիկեացիների կաթողիկոսն է, և Գրիգոր Ղայսարցին Առաջին Հայքից, բանիբուն և սիրող իմաստասիրական հանճարի, իսկ Հովհաննեսը մեր ներսիսյաններից է, և Գրիգորը՝ Թորոսի աշակերտներից է:

Գ Լ Ո Ւ Ե Լ Գ

Թ Ե Ի Ն Չ Պ Ա Տ Ճ Ա Ռ Ո Վ Հ Ա Յ Ք Ր Ի Ս Տ Ո Ն Յ Ա Ն Ե Ր ՈՒ Ն Հ Ա Ն Ե Յ Ի Ն
Ս Պ Ա Հ Ա Ն Ի Ք Ա Ղ Ա Ք Ս Մ Ի Զ Ի Ց Ե Վ Տ Ա Ր Ա Ն Ք Ա Ղ Ա Ք Ի Ծ Ա Յ Ր Ա Մ Ս Ա Ր
Գ Ե Տ Ի Ց Ա Յ Ն Կ Ո Ղ Մ Բ Ն Ա Կ Ե Ց Ր Ի Ն

Սրկրորդ Շահ-Արասի թագավորութեան ժամանակ թագավորութեան գահը գտնվում էր մեծահանդես քաղաք Սպահանում:

Այնպես եղավ, որ այս Շահ-Արաս թագավորը Սպահան քաղաքից ելավ իր ամբողջ զորքով և գնաց Ղազբին քաղաքը. ոմանց երևելի մարդկանցից Սպահան քաղաքի վրա վերակացունելու ու իշխաններ նշանակեց, որպեսզի քաղաքը կառավարեն ըստ քաղաքի կարգերի պայմանի: Շատ պատվերներին հետ ավելի կարևոր, քան մյուս բոլոր պատվերները, այս կարգադրելով հրամայեց նրանց. արգելեն և վերացնեն գինին, որ բնավ քաղաքում գինի չերևա, ոչ ոք բնավ խաղող չձմռի և գինի չանի, ոչ ոք գինի չվաճառի և չխմի, գինու նշան կամ հոտ չերևա ոչ ոսմիկների, ոչ իշխանների և ոչ էլ հեծյալ սպայազորի մոտ: Իսկ եթե մեկի մոտ գտնվի՝ լինի վաճառող, թե գնող, այնպիսինին պատժեն տուգանքով, կտրեն քիթն ու ականջները: Իսկ եթե այդ անպատուության մեջ գտնեն շատ անգամ, այդպիսինին սպանեն որովայնը պատռելով և գլուխը հատելով, նաև տեսակ-տեսակ տանջանքների ենթարկելով: Ամեն բանից ավելի կարևոր այս պատվիրեց շահը իր նշանակած քաղաքապետներին, իսկ ինքը Սպահանից ելավ, Ղազբին գնաց:

Ամիսներ անցնելուց հետո թագավորի եպարքոսը, որին իրենք էհդիմալ-դովլաթ են ասում, որի անունն էր Մահմադ

բեկ. սա Ղազբին քաղաքում թագավորին էր ծառայում: Սպահանից եկողներին հարցնում էր քաղաքի որպիսութեան, ինչոր պես-պես բաների, մանավանդ գինու մասին: Սրանից նրանից քանիցս հարցրեց, բոլորն էլ միանման ասացին, թե գինու արգելքը չհաստատվեց, որովհետև մշտապես գինով հարբած մարդիկ են շրջում հրապարակներում ու փողոցներում, և բոլոր տեղերում: Իսկ եպարքոսը խիստ հոգալով սրանից-նրանից հարցնում էր, թե ինչու Սպահան քաղաքում գինու արգելքը չի հաստատվում: Ամեն մեկը ըստ իր կարծիքի պատասխանում էր: Բայց ոմանք, որոնք ոչ ունեին Սպահան քաղաքի պետի դեմ, հանցանքը նրա վրա բարդելով ասացին, թե գուցե քաղաքի պետը թույլ է տալիս իր շահի համար, որպեսզի ինքը վաճառողներին ու գնողներին բռնի, տուգանի, կաշառք առնի և շատ դրամ շահի նրանցից:

Իսկ եպարքոսը այս խոսքերը ուրիշների խոսքերի հետ, որ լսել էր պատմողներից, հայտնեց թագավորին զրույցի մեջ, որ իրար հետ անում էին թագավորն ու եպարքոսը: Եպարքոսը թագավորին ասաց. «Եթե հրամայես, արքա, թագավորի հավատարիմ ծառայողներից մեկին կողարկենք Սպահան քաղաքը, որպեսզի բարձր անդառնալով մունետիկ շրջեցնի քաղաքի մեջ, և գինու արգելք գնի, իսկ ինքը այնտեղ մնա, ծածուկ ղննելով դիտի, թե ստույգ են այն խոսքերը, որ քաղաքի պետի մասին ասվեցին»: Թագավորը այս խոսքին հավանություն տվեց, հրամայեց եպարքոսին, թե կանես ըստ քո ասածի: Իսկ եպարքոսը ընտրեց թագավորական ծառայողներից մեկին, որ թագավորի առջև սպասավորներից էր՝ մի մարդ, որ իր գործի մեջ զգաստ էր ու փութաջան և երիտասարդական հասակի մեջ էր, որի անունն էր Նաջաֆուլի բեկ: Նրան պատվիրեց զնալ Սպահան քաղաքը վերստին արգելք գնել գինու վրա, որպեսզի Սպահան քաղաքում բռնավ գինի չերևա, նաև ծածուկ զննելով տեղեկանալ այն խոսքերին, որ քաղաքի պետի մասին արվեցին:

Իսկ Նաջաֆուլի բեկը եպարքոսի հանձնարարությամբ փքացած մտքով, գոռոզացած սրտով ելավ Ղազբինից, եկավ մտավ Սպահան քաղաքը և սաստիկ տագնապահար, բազմաթիվ սպանալիքներով ու ահարկու խոսքերով բոլորին զարհուրեցնելով՝ արգելք դրեց գինու վրա. մունետիկ, որ

ջառչին է, հանեց բոլոր հրապարակները, որոնք ելան բարձրադազակ հայտնեցին, թե թագավորի հրամանով գինին արգելված է և ում մոտ գտնվի, թագավորի թշնամին է և մահապարտ, ուստի այդպիսին պիտի սպանվի: Նաև ինքը Նաջաֆղուլի բեկը պատրաստեց բազմաթիվ մարդիկ, որոնց պատվիրեց և անհրաժեշտ գործերը նրանց ցույց տալով՝ ուղարկեց քաղաքի բոլոր տեղերը և այն տեղերը, որտեղ կարծում էին, թե գինի կլինի, որպեսզի այդ մարդիկ այնտեղ ակընդիս կանգնած, գիշեր-ցերեկ դիտեն ամբողջ երթևեկը: Այսպես անելով շատ հարբած մարդկանց տուգանեց, քթերն ու ականջները կտրեց, ձեռքերն ու ոտքերը հատեց, սակայն դրանով չկարողացավ գինին արգելել: Բազում ու զանազան հնարագործությունների համար մտածմունքների մեջ ընկավ: Նաև սրան-նրան էր հարցնում, թե ինչպես պետք է լինի գործի ավարտը:

Այստեղ թագավորի ծառայողներից երևելի մարդիկ, որոնք նախապես ծանոթ էին այս Նաջաֆղուլի բեկին, մի օր նրան հրավիրեցին իրենց տուն պատիվ տալու սիրալիրություն համար: Նաև այդ խրախուսանքի մեջ կային բազմաթիվ նշանավոր մարդիկ, Գրանց հետ էր նաև մի իշխան, որ թագավորի գրքերի գրադանավարն էր, որովհետև թագավորի բոլոր գրքերը նրան էին հանձնված, որպեսզի պահի, և ում որ պետք գա, տա և առնի: Այդ հանդեսի մեջ տեղի ունեցող շատ խոսակցություններին եկավ խառնվեց նաև գինուն վերաբերող զրույցը, որի մասին Նաջաֆղուլի բեկը հարցականով խոսք առաջարկեց, թե՛ «Ձարմանում եմ, թե ինչու՞ չի հաստատվում գինու արգելքը, որ այսքան հրամայում է թագավորը, իսկ մենք այսքան շարշարանքներ ու պատիժներ ենք տալիս, բայց տակավին չենք կարողանում գինին վերացնել»: Նստած մարդկանցից ամեն մեկը ըստ իր կարծիքի էր խոսում և պատասխան տալիս:

Իսկ գրադարանավար իշխանը Նաջաֆղուլի բեկին պատասխանեց, թե՛ «Իզուր է ձեր շարշարանքը, գինու արգելքը չի հաստատվի, որովհետև շատ պատճառներ կան, մանավանդ այն, որ բոլոր ազգերը միասին խառնիխուռն բնակված են, մահմեդականները գինի չեն խմում, նաև այն ազգերը, որ պինի են խմում, այսինքն՝ ֆոսանկները, հայերը, հրեաները:

Արդ՝ եթե դուք բռնեք մեկին, որ հետը գինի ունի, և հարցնեք, թե որտե՞ղից ես բերում և ո՞ւր ես տանում, նա կպատասխանի այսպես՝ այսինչ հայի տանից և այնինչ հայի տուն եմ տանում, այդ ժամանակ ձեր հրամանը, այսինքն՝ գինու արգելքը վերանում է: Նաև ամեն մահմեդական մարդ, որը ցանկանում է գինի խմել, մտնում է նրանց տուն և գինի խմում, նաև նրանից բարձր գնով գնում, տանում է ուրիշ տեղ և խմում: Եվ այս բոլորի պատճառը ազգերի խառնիխուռն բնակվելն է: Արդ՝ եթե իրոք թագավորը կամենում է, որ պինի հրամայությունը վերանա այս քաղաքից, պետք է այդ ազգերը միմյանցից բաժանի. մահմեդականները ուրիշ ազգերից անխառն բնակեցնի այստեղ՝ քաղաքամիջում, իսկ մյուս ազգերին՝ հայերին ու հրեաներին, հանի քաղաքից, տանի քաղաքի ելքը, պատշաճավոր տեղերում բնակեցնի և յուրաքանչյուր ազգի համար ըստ նրա արժանավորություն կարգ ու սահման դնի: Ապա այն ժամանակ ինչ էլ հրամայեն թագավորն ու իր իշխանները, ամենը անխափան կկատարվի»:

Այս խոսքը, որ խոսեց գրադարանավար իշխանը, հանդիսականներին ու Նաջաֆղուլի բեկին հաճելի թվաց, ուստի նա ամփոփելով հավաքեց իր մտքի՝ պահարանում և խորհում էր, թե պատշաճ ժամին կհայտնեմ եպարքոսին: Սակայն ինքը մեծ հոգածությունը ջանք էր թափում կատարել թագավորի հրամանը և արգելել գինին:

Այն հանդեսին գրադարանավար իշխանի հայտնած խոսքի մասին ոմանք ասացին, թե նա իր մտածածը չի ասել, այլ վերցրել է ուրիշի առաջարկությունից, որ հետևյալն է:

Ինչպես որ թագավորների սովորությունն է իրենց տանը ներքինիներ ունենալ սպասավորելու իրենց և իրենց կանանց: Այս կարգը այս երկրորդ Շահ-Աբաս թագավորը չափազանց շատ ընդարձակեց, քանզի բազմաթիվ կանայք հավաքեց ամեն ազգերից, ըստ այսմ էլ շատ ներքինիներ ունեցավ: Ներքինիների բազմությունից ոմանց ծերություն, ոմանց տհաճություն համար, ոմանց էլ ուրիշ պատճառով թագավորի տնից հանեցին, հեռացրին, որպեսզի գնան այլ տեղ, առանձին ապրեն:

Այս ներքինիները, որոնք թագավորի տանից հանվում էին, գալիս բնակվում էին քաղաքամեջ՝ Շամշապատ անվանված թաղում հետևյալ պատճառներով: Նախ՝ այս թաղը մոտ

էր թագավորի տանը, որպեսզի, եթե իրենք կամենան զնալ թագավորի տունը, կամ իրենց ընկերներից ոմանք թագավորի տնից կամենան գալ սրանց մոտ, դյուրին լինի, շատ մոտիկ գտնվի: Երկրորդ՝ նույնպես էլ շուկայի վաճառանոցին մոտ է այդ թաղը: Երրորդ՝ մանավանդ ջրի համար. ամբողջ տարին այն տեղի ջուրը անպակաս է, քանզի մի մեծ առու ջուր՝ գետից քիչ փոքր, գալիս այդ թաղը և հոսում է Զարբաղ, որ թագավորական այգի է, այնտեղից գնում թագավորի տունը, և նրանց ամեն գործ ու կարիք այս ջրով է հոգացվում՝ մարդկանց, անասունների, այգիների, ծաղկանոցների և այլ գործերի. արդ՝ սրանք այսպես:

Նաև պետք է հետևյալը իմանալ: Մեծ և առաջին Շահ-Աբասը՝ Հայաստան աշխարհի ավերողն ու հայ ազգի կործանողը, այն ժամանակ, երբ հայոց ազգը քշում, տանում էր Պարսկաստան, այն հայոց ազգից մի մաս քրիստոնյաներ, որոնց դաշտեցիներ են անվանում՝ Գողթան գավառի Դաշտ անվանված գյուղից լինելու համար, բերեց բնակեցրեց այս տեղում՝ Շամշապատ կոչված թաղում, մահմեդականների մեջ: Տեղի լավ լինելու համար քաղաքի այլ տեղերից մեծ թվով մահմեդականներ եկան և բնակվեցին այս թաղում: Սուլթան էլ թագավորի տանից ելած ներքինիները եկան, այստեղ բնակվեցին: Ամեն տեղից՝ այստեղից-այնտեղից հավաքված մարդկանց բոլորին տեղը չէր բավականացնում տանել, ուստի դրա համար շատ նեղություններ էին քաշում: Այս պատճառով մյուս մահմեդականները միաբանվելով թագավորի ներքինիների հետ՝ սկսեցին ճնշել դաշտեցի քրիստոնյաներին, որպեսզի սրանց արտաքսեն այդ տեղից, որ իրենց տեղը լայն լինի: Այս պատճառով բազմաթիվ ամբաստանական խոսքեր էին առում հայ դաշտեցիների մասին՝ որը դուր, որը իրավացի:

Նվ որովհետև թագավորի հրամանը գինու համար էր, այժմ պարսիկները սկսեցին այս կողմից ամբաստանել քրիստոնյաներին, թե նրանք գինարբու ազգ են և միշտ գինով ջուրը պղծում են, որովհետև երբ խաղողը ճմլում են, քաղցուն գինի են անում, իսկ կնճիոը թափում են ջուրը, որով ջուրը պղծվում է: Իսկ երբ օդի են քաշում, մնացած մրուրը թափում են ջուրը, որով ջուրը պղծվում է: Իսկ երբ կամենում

են գինու կարասը լվանալ, բերում, դնում են առվի մեջ մեկ-երկու օր թրջոց և ապա լվանում են, և լվացաջուրը դարձյալ թափվում է առուն՝ ջրի մեջ, որով ջուրը պղծվում է:

Արդ՝ այսպիսի ամբաստանական խոսքեր և այն խոսքը, որ գրադարանավար իշխանն ասաց Նաջաֆուլի բեկին և այլ շատ խոսքեր, որն անտեղի և որը իրավացի, այստեղ Շամշապատ թաղը եկող և այդտեղ բնակվող ներքինիները ասել էին գրադարանավար իշխանին, որ այդ ժամին գրադարանավարն ասաց Նաջաֆուլի բեկին:

Երբ շահը և եպարքոսը Ղազբինից դարձան եկան Սպահան հարցում արին գինու արգելման մասին՝ կատարվե՞ց, թե ոչ: Այդ ժամանակ Նաջաֆուլի բեկը վշտագին սրտով ասաց, թե՛ ռոբբան ուժ ունեինք, ջանացինք, բայց գինեղմսավթյան խափանում չեղավ: Եպարքոսը շատ մտածողությամբ ու վարանքի մեջ ընկավ գինու արգելման պատճառով, քանզի ըստ իրենց անօրեն և ըստ իրենց առասպելախոս գրքերի գինին անմաքուր է համարվում և նույնը խմելը իրենց համար մեղք:

Իսկ Նաջաֆուլի բեկը հարմար ժամի գրադանավար իշխանի խոսքը խոսեց եպարքոսի առջև, որը հաճելի թվաց նրան և այլ հանդիսականների: Իսկ եպարքոսը պատշաճ ժամի գրադարանավար իշխանի խոսքը խոսեց թագավորի առջև: Ոչ միայն մի օր, այլև ամեն հարմար ժամի եպարքոսը և այլ նախարարներ, որոնք շահի առջև խոսողներն էին, մշտապես այդ կերպ էին խոսում թագավորի առջև, որովհետև եպարքոսը և այլ նախարարներ մեծ հոգս ունեին քրիստոնյաներին քաղաքամիջից հանելու: Այնքան խոսեցին, մինչև համաձայնեցրին թագավորին, որ գրավոր հրաման տվեց, թե՛ ռոբբեր գինարբու ազգեր են, թող եննեն բաժանվեն մահմեդականներից և գնան քաղաքի ծայրամասերը, առանձին բնակվեն:

Այս հրամանը թագավորից ընդունելուց հետո եպարքոսը կանչեց դաշտեցիներին իր մոտ, հայտնեց նրանց թագավորի հրամանը և կարգադրեց նրանց ելնել քաղաքամիջից և զնալ քաղաքի ծայրամասը: Նրանց համար ծանր էր դուրս գալ իրենց բնակություններից, ուստի զնացին մեծամեծների զոները, շատ աղաչեցին, որ դուրս մնան իրենց տեղերում, բայց ոչ ոք չսեց նրանց խոսքը, որովհետև իշ-

խանները մահմեդականներ էին, իսկ ամենքի ցանկութունն ու դիտավորութունը մեկ էր՝ նրանց դուրս հանել քաղաքամիջից: Արդ՝ այս կերպով, թե թագավորի հրամանից, թե իշխանների բռնութունից, թե իրենց մերձակա մահմեդականների ճնշումից մնացին անօգնական դաշտեցի հայերը, ելան իրենց տներից ու բնակատեղերից ոմանք Զուլա գնացին, ոմանք՝ Գավուպատ, տուն վարձեցին և այնտեղ հովանավորվեցին իրենց ինչքերով ու բնատանիքներով:

Երբ մահմեդականները դաշտեցի ժողովրդին հեռացրին, սկսեցին այնուհետև հայոց մյուս ժողովրդին հանել քաղաքից: Սրանք հայոց ազգից հավաքածու ժողովուրդ էին, որոնք յուրաքանչյուրը իր երկրից վտարանդի էին եղել և եկել Ատրպատական երկրում բնակվել: սրանցից ոմանք Ամիրգից էին, ոմանք Գազիկից, Բաղեշից, Մուշից, Բերկրիից, Արճեշից, Արծկեից, Երզնկայից, Դերջանից, Բաբերդից, Կարինից, Բասենից, Կաղզվանից, Շիրակավանից, Արարատյան առանձին բոլոր գավառներից, Ալաշկերտից, Մակվից, Խոյից, Սալմաստից, Ուրմիայից և նաև ամեն երկրներից, որոնց համար Շահ-Աբասը առաջինը հրամայեց ամենքին ժողովել և բշել Պարսկաստան, որոնց և բերին Սպահան քաղաքը և քաղաքի մեջ բնակեցրին այն թաղերում, որոնց անունները ասում են Քորոսական և Շիշաբանա: Սրանց նման նույն մեծ Շահ-Աբասը հրամայեց՝ Երևան քաղաքի բնիկ տեղացի հայերին հանին, բշեցին, տարան Սպահան քաղաքը և բնակեցրին քաղաքամեջ մահմեդականների հետ խառնիխուտն այն թաղերում, որոնց Թաղթիղարաշա և Բաղաթ են կոչում:

Իսկ այս ժամանակ՝ այս Շահ-Աբաս երկրորդի թագավորութւյան օրերում դաշտեցի ժողովրդին հանելուց հետո սկսեցին երևանցիների և շիշաբանցիների ժողովրդին հանել, քանզի եպարքոսը կանչեց երևանցիների ավագին, որի անունն էր խոջա Հակոբջան, այլ մարդկանց հետ և հայտնեց նրանց թագավորի հրամանը, թե պարտավոր եք ելնել քաղաքամիջից և դնալ քաղաքի ծայրամասում բնակվել: Բաղամթիվ բարիքներ խոստացավ նրանց համար անել, քանզի երևանցիների հետ շափազանց քաղցրութւյամբ խոսեց: Իսկ հայ ժողովրդից ոմանք համաձայնեցին, ոմանք՝ ոչ, կոպիտ և բիրտ հայերը սկսեցին դժգոհել և դիմադարձ կանգնել, աղմուկ բարձրաց-

նել, իրարանցում ու խռովութուն գցել, որոնց վերջը իրենց վնաս եղավ, քանզի բոլորը միասին եկան հավաքվեցին թագավորի ընթացքի անցատեղը և երբ թագավորը մոտեցավ նրանց, բոլորը սկսեցին բողբեկ թագավորին, որոնց այդ արարքը տհաճ ու ծանր թվաց թագավորին, ուստի թագավորը ցասումով բարկացավ հայ ժողովրդի վրա: Այս պատճառով, որ թագավորը բարկացավ հայերի վրա, այլազգիները քաշակրվեցին, զորանալով առյուծ կտրեցին հայերի դեմ և սկսեցին բռնութւյամբ բշել նրանց: Քանզի եպարքոսը զորականներով հանդերձ իշխաններ նշանակեց հայ ժողովրդի վրա, որպեսզի ժամանակի դիշում շանեն նրանց, դանդաղ օրըստօրի ելնեն, այլ հապճեպ առանց ժամանակի դիշումի, ուժգին բռնութւյամբ քաղաքամիջից հանեն:

Եվ այս ժամանակ հայ ժողովուրդը անօգնական, որովհետև բոլոր կողմերից կտրվեց նրանց հույսի ու ապաստանի տեղը, թե թագավորից, թե իշխաններից, որովհետև բոլորին բարկացրին իրենց դեմ. նրանց վրա նշանակված իշխաններն ու զորականները խիստ նեղացնելով նրանց, ստիպում էին ելնել քաղաքից:

Արդ՝ կրբ բրածեծը շատացավ հայերի գլխին, թողին իրենց բնական գոտոլութունը, որ ի բնե արմատացած է իրենց մեջ և խելքի ու զգոնության եկան, սկսեցին աղաչել իշխաններին, քանզի աղերսագիր գրեցին և հասցրին եպարքոսի ձեռքը, որպեսզի իրենց շնեղեն, այլ ներում ու ժամանակ տան, որ աստիճանաբար ելնեն: Եպարքոսը համաձայնվեց և հրամայեց այդպես անել, ուստի հեռացան նրանց հանող զորականները:

Սրանից հետո շահը, եպարքոսը և այլ նախարարներ խորհուրդ արին և համաձայնվեցին նրանց բնակութւյան տեղ տալ գետի այն կողմը՝ ջուղայեցիներին մոտիկ:

Սպահան քաղաքի դրվածքը այսպես է. մեծ գետը, որ գալիս է և մտնում Սպահան քաղաքը, գալիս է արևմուտքից և գնում է արևելյան կողմը, իսկ քաղաքը և բոլոր մահմահմեդականները, թագավորի պալատն ու վաճառանոցները և այն ամենը, ինչ կա, որ քաղաքին է վերաբերում, գետի հյուսիսային կողմում են: Իսկ ջուղայեցիները հարավային կողմում

գետից դեն են տեղավորված ուրիշ ազգերից զատ ու առանձին: Եվ այժմ այն տեղը, որ կամեցան քաղաքից հանված այս ժողովրդին նորից ջուղայեցիներին մոտիկ կամեցան տալ՝ ընդհուպ մերձ ու կից ջուղայեցիներին, գետեզրի մոտ: Այս մրտաքին բոլորն էլ հավանեցին՝ թաղավորը, իշխանները, հայ ժողովուրդը և բոլոր նրանք, ովքեր լսեցին:

Ապա թաղավորի հրամանով եպարքոսը երկրաշափենք ուղարկեց, որոնք նշանակված տեղը շափեցին և հանձնեցին ժողովրդին, իսկ ժողովուրդը բաժանեց իր մարդկանց ըստ սրանց քանակի: Մկսեցին շինել իրենց համար տներ ու բնակություն տեղեր: Թե երևանցիները, թե գաշտեցիները, թե մյուս այլ տարբեր վայրերից հավաքված ժողովուրդը՝ բոլորը միասին այստեղում գետեզրվելով բնակվեցին: Արդ՝ քրիստոնյաներին Սպահանից, քաղաքամիջից հանելու պատճառը դինեխմուխունը եղավ այսպես, ինչպես պատմեցինք:

Բայց քրիստոնյա ժողովուրդը, քաղաքից իրենց հանելու ժամանակ սկզբում դժվարանում էր, որովհետև ծանր էր թվում իր բնակարաններից դուրս գալը, իսկ այժմ շափազանց զոհ են և զոհանում են աստծուց, որովհետև նրա խնամարկությունը այս գործը եղավ ու կատարվեց քրիստոնյաների համար:

Եվ քրիստոնյաների զոհ լինելը բազմաթիվ պատճառներ ունի: Նախ՝ այնտեղ քաղաքամիջում, քրիստոնյաներն ու մահմեդականները խառնիխուռն միմյաց հետ էին բնակված, իսկ ոմանք թերահավատ քրիստոնյա մարդկանցից տեսնելով մահմեդականների հաճելի, ամենուրեք հասնող մարմնապաշտ օրհնքները և մշտապես նրանց օրհնքների քարոզներն ու պատմությունները լսելով, թերանում էին քրիստոնեական հավատի նկատմամբ, մինչև իսկ իսպառ դադարում և քրիստոնեական կրոնից անցնում էին մահմեդական կրոնին, գառնում էին մահմեդականներ: Երկրորդ՝ եթե քրիստոնյաների ուստրերը սիրում էին մահմեդականների դուստրերին կամ թե մահմեդականների ուստրերը սիրում էին քրիստոնյաների դուստրերին, մահմեդականները ծածուկ ու գաղտնի հնարքներով այնքան էի խոսում քրիստոնյաների ուստրերի ու դուստրերի հետ, մինչև որ նրանց կամքն ու հոժարությունը փոխում էին ըստ իրենց ցանկություն, ապա

համաձայնեցնելով դարձնում էին մահմեդական: Այսպիսի բաներ մենք շատ տեսանք մեր աշխարհում: շատերը զննում ընկնում էին մահմեդականների տները: Թեպետ քրիստոնյաները շատ ջանք էին թափում նրանց այնտեղից հանելու, հնարավոր չէր լինում, ուրանում էին: Երրորդ՝ որ այնտեղ՝ քաղաքամեջը քրիստոնյաների տեղերը շատ նեղ էին, անձուկ ու սակավաջուր: Չրի սղուխյուն շատերն էին զգում, իսկ այստեղ՝ նոր տեղում լայն ու ընդարձակ տեղ ստացան, որտեղ մեծածախս ու վայելուչ տներ շինեցին, լայն, ընդարձակ, զանազան հորինվածքով, բարձրաբերձ վերնահարկերով, ամառային հովանոցներով, որոնց առջև կային զվարճանքի տեղեր, պարտեզներ, ծաղիկներ և մրգատու ծառեր: Չորրորդ՝ որ անշատվելով բաժանվեցին մահմեդական օձաբարո ազգից, որ մշտապես կծոտելով նենգում ու ասնջում էին քրիստոնյաներին, իսկ այժմ բոլոր քրիստոնյաները մի տեղում են միավորված և ուրախությունը զոհանում են տեղ աստծուց, որին փառք հավիտյանս հավիտենից ամեն:

Պետք է իմանալ նաև, երբ սկսեցին քրիստոնյաներին հանել քաղաքամիջից, մեր հայոց 1104 (1655) թվականն էր, այս ժամանակ գաշտեցիներին հանեցին: 1105 (1656) թվականին երևանցիներին հանեցին, իսկ այժմ, երբ պատմությունը գրեցինք, մեր 1108 (1659) թվականն է. հայերը ելան քաղաքամիջից և հավաքվեցին նոր տեղում, որտեղ բնակության տներ շինեցին: Քաղաքում քրիստոնյա ժողովրդից ոչ ոք չմնաց, այլ բոլորը հավաքվեցին նոր տեղում:

ՄԻ ԱՅԼ ՊԱՏՄԻԹՅՈՒՆ, ՈՐ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՆՅՅԱԼ
ՊԱՏՄԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՄԲՊԻՆ

Ինչպես որ շատ տեղերում պատմել ենք, թե Շահ-Աբաս առաջինը ոչ թե երկու և երեք անգամ հայ ազգը Ատրպատականի երկրից թշնջեց Պարսկաստան, այլ շատ անգամ, ինչպես և այժմ, երբ մեր թվականության 1067 [1618] թվականն էր, մի անգամ էլ հրամայեց վերոհիշյալ թաղավոր Շահ-Աբաս առաջինը հայոց ազգի վերաբերյալ՝ արտաքսել ամբողջ Ատրպատական երկրից և թշնջեց Պարսկաստան:

Նրա հրամանով նրա իշխանները մեծ զորքով ելան, դնա-

ցին Երևան և սրա գավառները, Գանձակ և սրա գավառները, Թավրիզ և սրա գավառները, Արտաբիլ և սրա գավառները, սկսեցին քննութիւնն ու որոնում կատարել հայ ազգի մեջ, թե ով է բուն բնիկ, հայրերով, պապերով տեղացի, իսկ ով՝ ոչ, այլ ուրիշ երկրից եկվոր և հավաքածու: Բնիկներին թողեցին, իսկ եկվորների բոլորի անունները գրեցին թղթի վրա և նրանց վրա հայ ազգից պետեր ու վերակացունքը նշանակեցին, որոնց անվանեցին մելիք: Ամբողջ ժողովուրդը հանձնեցին նրանց, որ եթե գրված ժողովրդից որևէ մեկը փախուստով կամ այլ ձևով պակասի, նրանք գտնեն, բերեն ժողովրդին խառնեն, իսկ եթե չգտնեն, իրենք դառնան թագավորին պարտական և արժանի սպանվելու: Արդ՝ այս ձևով բոլորին հանին բնակված տեղերից և քշեցին, տարան Պարսկաստան:

Բոլոր քարգործ արհեստավորներին անջատեցին ժողովրդից, տարան Սպահան քաղաքը այն արհեստի համար, որ պետք էր գալիս այնտեղ թագավորի տան շինութիւն և ողջ պարսից ազգի համար: Սրանց Սպահանում բնակեցրին:

Մնացած բոլորին քշեցին, տարան Ֆահրապատ քաղաքը և այնտեղ ոմանց քաղաքում, ոմանց գյուղերում բնակեցրին, որոնք ոչ մնացին և ոչ էլ աճեցին, այլ օրեցօր պակասեցին, վատնվելով սպառվեցին դաժան, մզահատ, վնասակար օդի պատճառով, որին սովոր չէին: Թեպետ շատերը փախչել կամեցան, բայց չկարողացան, քանզի ճանապարհի հսկիչները, որոնց ռահար* էին կոչում, թագավորից պատվեր ունեին, թե ովքեր գալիս մտնում են Ֆահրապատի երկիրը՝ թողնել, իսկ որոնք ելնում են և կամենում են գնալ՝ արգելել: Իսկ եթե գտնեն որևէ մեկին, որ թաքուն գնացել է, բռնեն, սպանեն: Այս պատճառով ոչ ոք չկարողացավ փախչել և այնտեղ մնալով մահվամբ ու կոտորմամբ ոչնչացան, որովհետև ավելի քան տասն հազար տուն հայեր էին գնացել, իսկ այժմ շորս հազար տուն հաղիվ թե մնացած լինի: Եվ այժմ եթե պատահի, որ մի քրիստոնյա կարևոր

ճանապարհորդութիւն կամ այլ բաների համար գործ ունենա, պարտավոր է գնալ քաղաքապետի մոտ հրաման կամ անձի հաստատման վկայական խնդրելու՝ ուղղված ուղեկալներին, որ շարքի են և ետ շարձեն: Իսկ եթե թուղթ չլինի, չեն թողնի գնալ: Եվ քաղաքապետը նախ գնացողից նրա անձի փոխարեն մի այլ մարդու երաշխավոր էր պահանջում, հետո է թուղթ տալիս նրան, որ ճանապարհորդը գնա իր ճանապարհը:

Իսկ քարհատ արհեստավորներին, որ բերին Սպահան քաղաքը, քաղաքի հարավային կողմում՝ գետի այն կողմը, բնակեցրին, այն տեղում, որտեղ գավր* ազգն էր բնակեցվել: Նրանց կից նաև նրանց հետ խառը բնակեցրին քարհատ հայերին:

Այժմ հայոց 1108 (1659) թվականի մայիս ամսին Շահ-Աբաս երկրորդ թագավորը հրամայեց, որ այս հայ ժողովուրդը, սրանց հետ և գավր ազգը դուրս գան այս տեղից և գնան այն տեղը, որտեղ երևանցիները, շխարհանցիները և դաշտեցիները բնակվեցին: Սրանք նույնպես այնտեղ բնակվեն, որ բոլոր այլացեղ ու այլահավատ ազգերը առանձնացվեն մահմեդականներից, որպեսզի մահմեդականները նրանցից անխառն բնակվելով մաքուր մնան (չպղծվեն): Ուստի հայերը և գավրները ելան, գնացին և վերոհիշյալ քրիստոնյաներին մոտիկ բնակվեցին:

Իսկ եթե որևէ մեկը գավր ազգի մասին հարցնի, հետևյալն է: Շահ-Աբաս առաջինը սատանայի անարատ կամակատարը, ինչպես որ հայոց ազգը Ատրպատականի երկրից քշեց, բերեց Պարսկաստան, այնպես էլ գավրներին արտաքսեց իրենց բնիկ երկրից՝ Քիրմանից, Եզդից, Շիրազից և իրենց այլ տեղերից և բերեց, լցրեց հիմնավեր Սպահանում: Նրանցով լցրեց, շինեց ու մարդաշատ դարձրեց Սպահանը: Այս գավրերը այսպես էին եկել Սպահան և այնտեղ բնակվել: Այժմ նրանց նույնպես հանեցին այն տեղից և տարան հայոց ազգին մոտիկ ինչ-որ կողմ ու այնտեղ բնակեցրին. այս էլ այսպես:

* Գավր, ավելի ճիշտ՝ գաֆր այն պարսիկներն են, որոնք մինչև այժմ հետևում են զրադաշտական կրոնին, մահմեդականություն չեն ընդունել:

* Ռահար քշանակում է ուղեկալ, ճանապարհի հսկիչ:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԲՆԱԿՎԱԾ ՀՐԵԱՆԵՐԻ
ԵՎ ԱՅՆ ՀՐԵԱՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԵՆ ԲՆԱԿՎԱԾ, ԹԵ ԻՆՉ ՊԱՏՃԱՌՈՎ
ԻՐԵՆՑ ԿՐՈՆԻՑ ՀԱՆՅՈՒՆ ԵՎ ԳԱՐՁՐԻՆ ՄԱՀՄԵԳԱԿԱՆ

Սպահան քաղաքի քաղաքամիջից հայերին դուրս բերելուց հետո սկսեցին հրեաներին հանել: Որովհետև այս Շահ-Աբաս երկրորդի թագավորության ժամանակ և հայոց 1106 (1657) թվականին մի օր, և այդ օրը ուրբաթ էր, երեկոյան դեմ, որ մյուս օրը դառնում էր լույս շաբաթ, նույն եպարքոսը, որի անունն էր Մահմադ բեկ, որը և հայերին հանեց Սպահանի քաղաքամիջից, այժմ կամենում է նաև հրեաներին հանել: Այս նպատակով պատրաստեց զորականներ և ուղարկեց հրեաների վրա, որոնք ջհուղ են, թե՛ Գրուք բուլոթ հրեաներդ պարտավոր եք դուրս գալ քաղաքամիջից և զնալ քաղաքից դուրս քաղաքի ծայրամասերից մեկում բնակվել, որովհետև հավատով մահմեդական շեք, այլ անսուրբ ազգ եք, ելեք այս քաղաքից և քաղաքից դուրս բնակվեք, քանզի ձեր մասին թագավորի կողմից այսպես հրամայվեց»:

Այս առիթով հրեաները աղերսեցին՝ ասելով. «Որովհետև մեր մասին թագավորի կողմից այդպես հրամայվեց, թագավորի հրամանը մեր աչքի վրա. թագավորի հրամանը անթերի կկատարենք, բայց ձեզ խնդրում ենք երեք օր զիջել մեզ, որպեսզի ուստրերով, դուստրերով և մեր ամեն ունեցվածքով ելնենք, զնանք: Եվ մանավանդ տեսնում եք, որ այս օրը տարածամել է, նաև հիվանդներ, ցավազարներ, ծերեր, մատաղ մանուկներ շատ կան, որոնք շին կարող այժմ գիշերով զնալ, ուստի ձեզանից խնդրում ենք երեք օրով հետաձգել»:

Իսկ եկած զորականները թույլ չէին տալիս և չէին դիջում նույնիսկ մինչև վաղվան օրը, այլ ստիպում էին հապճեպով ու արագ ելնել այդ երկկոյան, քանզի եպարքոսը այդպես էր հրամայել իրենց. ոչ ներել և ոչ թողնել մինչև առավոտ, այլ նույն երեկոյից և նույն գիշերը նրանց բոլորին իրենց ողջ ընտանիքներով հանել: Իսկ եթե մեկնումեկը մնա մյուս օրը, ծեծի, բանտարգելության, տանջանքի ենթարկեն այդ-

պիսի մարդուն, որովհետև չհնազանդվեց եպարքոսի հրամանին և չզնաց»:

Այս բանը հրեաների վերաբերմամբ արեց եպարքոսը, որպեսզի դրանով հրեաները պատանդ լուծող և հանցավոր դառնան իրենց շաբաթի հանդեպ, որը պահում են առանց զործ անելու:

Իսկ եպարքոսի զորականները, որ եկել էին հրեաներին հանելու, տանջելով, ծեծելով, սրերով ու բերով վիրավորեցին և բռնի դուրս բռնեցին բոլոր հրեաներին յուրաքանչյուրին իր բնակությունից, նրանց կահկարասին ցրեցին, դռները խորտակեցին: Իսկ հրեաները ճիշ ու կական բարձրացնելով, աղաղակով, լալով ու ողբալով յուրաքանչյուր մեկը բռնած իրենց ուստրերի ու դուստրերի ձեռքերից և անկողիններն ու ձորձերը առած մեջքներին ելան իրենց տներից և գիշերը, անպատեհ ժամի շրջում էին մահմեդականների դռներում, փողոցներում, պողոտաներում, և չկար մեկը, որ գթար նրանց:

Ապա հրեաները ելան քաղաքից և գնացին Ջուղայի և Գավրապատի մեջ, բայց այստեղ էլ ապրելու տեղ չգտան, քանզի ինչ-որ զորականներ եկան, որպես թե եպարքոսի կողմից ուղարկված, և պատվիրեցին ջուղայեցիներին ու զավրապատեցիներին, որ նրանց տեղ շտան, ուստի և չտվին. և բոլոր հրեաները մնացին անօթևան:

Նրանք ընկան մեծ փորձանքի ու նեղություն մեջ, քանզի ժամանակը ցուրտ աշուն էր և ձմռան սկիզբը, ցուրտը խիստ նեղելով տանջում էր նրանց, որովհետև ծածկից դուրս, բացօթյա էին մնացել: Նրանց մեջ շատերը խղճալի տղամարդիկ և կանայք էին, որովհետև ոմանք ծեր էին ու տարեց, հյուծված, ուժից ընկած, ոմանք հիվանդ, ցավազար, մարմնով վտիտ, որոնք շրջել չէին կարողանում: Շատ մանկամայր կանայք, որոնք ունեին կաթնակեր մանուկներ իրենց ստիսքներից կախ, որոշ կանայք հղի ու ոտքը ծանր: Իսկ աղքիկ երիտասարդուհիներին և վայելչատես տղաներին, որոնց տարփացած պարսից ազգից պիղծ, վավաշոտ, շնաբարտ տղամարդիկ ասում էին տգեղ, պիղծ ախտավոր խոտքեր ծանր ամոթահարելով նրանց: Իսկ այլ մահմեդականներ, հանդիպելիս հայհուղում էին, անարգում, արհամարհում, ծեծում և

բազմաթիվ նեղութիւններ էին տալիս այդ ողորմելիներին։
Սրանից հետո, երբ եպարքոսը տեսավ, թե անհնար է նը-
րանց կամավոր մահմեղականացնել, մտածեց բռնութեամբ
մահմեղական դարձնել. քանզի մահմեղականներին հրա-
մայեց, մանավանդ զինվոր մարդկանց, որ ուր էլ գտնեն
հրեա մարդ, բռնեն, կապեն, բերեն եպարքոսի առջև։ Նա
սկզբում մեղմ էր խոսում նրանց հետ և ասում. «Սկեք դուք
մարդիկդ, դարձեք ձեր դատարկ կրոնից և ճանաչեցեք արար-
չին՝ երկնքի և երկրի տեր աստծուն, եղևք մեզ եղբայր»։
Իսկ հրեաները պատասխանելով ասացին. «Երկնքի ու
երկրի տեր աստծուն ճանաչում և պաշտում ենք, բայց ձեզ
եղբայր լինել չենք կամենում, իսկ մեր կրոնից չենք դառնա,
որովհետև մեր կրոնը ճշմարիտ է և աստվածատուր, որով-
հետև աստված Մովսէս մարգարեի միջոցով տվեց, որին դու
իսկ գիտակ ես»։
Եպարքոսը ասաց. «Եթե ընդունեք մեր հավատը, կլինեք
մեզ սիրելի եղբայրներ, նաև մեծ գանձեր, պարգևներ ու մե-
ծութիւն կտանք ձեզ»։
Սրան մի հրեա մարդ, որի անունը Հովսեփ էր, պատաս-
խանելով ասաց. «Երբ այս աշխարհի հողագործ մի մարդ գա-
լիս է մեզ մոտ պարտեզը պարարտացնելու համար մարդու
աղբ գնելու, մենք նախ աղբի գինը առնում ենք, ապա աղբը
նրան ենք տալիս, իսկ դուք գանձեր ու պարգևները դրած
ձեր հավատի վրա, գցում եք մեզ վրա»։ Այս բանն ասաց
Հովսեփը, որ թերևս այս խոսքի համար զայրանա եպարքո-
սը իր վրա և իրեն սպանի։ Այսպես էին ասում նաև բոլոր
հրեաները. «Սպանիր մեզ բոլորիս, որովհետև լավ է, որ
մենք բոլորս մեռնենք, քան թե ձեր կրոնը ընդունենք»։

Եպարքոսը ասաց. «Գիտեմ, որ այդպես զայրացուցիչ
խոսքեր այն պատճառով եք ասում, որպեսզի ես զայրանա-
լով ձեզ վրա՝ սպանեմ ձեզ, բայց իմացեք այնպես, որ ձեզ-
նից ոչ ոքի բնավ չեմ սպանի, այլ ավելի մեղմ ու երկար
տանջանքով այնքան կշարշարեմ ձեզ, մինչև որ ամեն կողմից
վհատվելով ընդունեք մեր կրոնը»։
Իսկ հրեաները համախորհուրդ եղած աղաչական խոս-
քերով խնդրեցին եպարքոսին բնակութեան տեղ և ասացին.
«Ինչպես որ հայերին հանելով քաղաքամիջից նրանց բնա-

կութեան ուրիշ տեղ տվիր, այդպես էլ մեզ բնակութեան տեղ
տուր, քաղաքի ծայրամասում մի որևէ տեղ պարելու համար,
որպեսզի քիչ-քիչ մեզ համար յուրաքանչյուրս բնակութեան
տուն շինենք և քաղաքից ելնելով, այնտեղ հավաքվելով
բնակվենք»։

Իսկ եպարքոսը պարսից այլ իշխանների հետ համախոր-
հուրդ նրանց ցույց տվին քաղաքից հեռու ինչ-որ տեղ, որի
անունը կոչում են Գոզալդարա. սա մոտ է Մուսալաս իմա-
մին, բայց այս տեղը անհարմար ու անձեռնտու էր. նախ՝ որ
քաղաքից շատ հեռու էր, երկրորդ՝ ջուր չունէր, եթե (ուզեին)
հեռվից ջուր բերել, ջուր չկար և չէր հասնի վայրի հեռավո-
րութեան պատճառով, իսկ եթե տեղում ջրհոր փորեին, ջուր
չէր բխի, որովհետև տեղը լեռնային էր ու քարքարոտ։

Այս անհարմար տեղը ցույց տվին այն պատճառով, որ-
պեսզի սրանով անճարութեան ու տարակուսի մեջ ընկնեն
հրեաները։ Այս պատճառով հրեաները չկարողացան զնալ
այն տեղը, այլ մնացին դուրս, բացօթյա։

Սրանից հետո եպարքոսը մտածեց քիչ-քիչ տանջանքի
մատնել հրեաներին։ Վաղ և հին ժամանակներից մի տեղում՝
քաղաքի ծայրամասում շինութիւններից ու բնակութեանից
դուրս ինչ-որ վայրում բարձր պարսպապատ, դուռը վրան մի
տեղ կար, բայց պարսպի մեջ տուն կամ բնակութիւն բու-
րովին չկար, այլ լուկ միայն պարիսպ շուրջանակի բուրոված։

Եպարքոսը պարսիկ զորականներին հրամայեց, որ երկու
հրեա մարդու մի զորական կանգնի իբրև շարլաբիչ, և բոլորին
բռնած և ձեռքի տակ ընկած հրեաներին կապանքով տանել
և լցնել այն պարսպի մեջ. ջուր շաղ տալ նրա հատակը՝ գետ-
նի վրա, բոլորի ձեռքերը հետևները կապել, նրանց վարտիք-
ները հանել, հագուստների փեշերը վեր քշտել և մերկ մարմ-
նով նստեցնել գետնի վրա։ Ժամանակը ցուրտ աշուն էր,
գետնի երեսը ջուր շաղ տալու ժամանակ գետնինը թացանում
էր, մանավանդ սառչում էր, իսկ խեղճ հրեաները մերկ
մարմնով նստում էին սառած գետնի երեսին, և պարսիկ
զինվորները զլխավերևները կանգնած ծեծում էին շրեանե-
րը երեք օր, երեք զիշեր այսպես մնացին քաղցած ու անկե-
րակուր, որովհետև ոչ ոք նրանց ուտելիք չէր տալիս։ շրեա-

ներքի ազգականները գալով պարսպի գրսի կողմում կանդ-
նում էին, բերած հացը գցում էին պարսպից ներս հրեանե-
րին կերակուր լինելու համար, այդ էլ զինվորները հափշտա-
կում ուտում էին, չէին տալիս հրեաներին: Այս պատճառով
երեք օր անկերակուր մնացին, մինչև եպարքոսը հրամայեց,
որ այնտեղից հանելով բերին քաղաք և գցեցին բանա:

Հրեաների մասին եպարքոսը հարցում արեց իրենց կրո-
նի առաջնորդին ու գլխավորին, որին իրենք սադր [մահմե-
դական կրոնի գերագույն առաջնորդ] են ասում, թե՛ «Սրանք
ինքնակամ մեր հավատին չեն գալիս, ի՞նչ անենք: Կարելի՞
է բռնաբռնել դարձնել, թե ոչ»: Սադրը պատասխանեց. «Մեր
օրենքներում հրաման չկա որևէ մեկին բռնաբռնելու դարձի
բերելու: Կրկին եպարքոսը հարցրեց. «Հապա ի՞նչ անենք»: Սադրը
ասաց. «Իմ գործը չի, դու գիտես»:

Գարձյալ եպարքոսը կանչեց հրեաներին իր մոտ և ասաց,
որ գան հնազանդության և ընդունեն Մահմեդի կրոնը: Նա
ասաց. «Որովհետև ով որ ընդունի Մահմեդի կրոնը, նրան
կտանք երկու թուաման պարգև, նա կաղատվի տանջանքնե-
րից և խաղաղորեն կնստի իր տանը: Իսկ ով ամենից առաջ
ընգունի մեր հավատը, նրան պաշտոն ու իշխանություն
կտանք»:

Հրեաների մեջ կային մարդիկ, որոնք թերահավատ էին
իրենց կրոնի նկատմամբ և շեղված էին թյուր գործերում՝
գողություն, բողոքյան և ուրիշ այսպիսի շարիքների մեջ և
իրենց խորքում արամադրված ու հակված էին գնալի Մահ-
մեդի կրոնը:

Երբ այս բոլոր անցուղարձը տեսան, որ կատարվեց հրեա-
ների հանգեպ, նաև լսեցին եպարքոսի հորդորիչ խոսքերը,
այս թերահավատ մարդկանցից մեկը, որ խիստ անհավատա-
րիմ ու պիղծ էր և որի անունն էր Ավատիա, ամենից առաջ
առ եկավ, կանգնեց եպարքոսի առջև և ինքնակամ հռնձն
առավ ուրանալու հրեությունը ու դավանելու մահմեդական
հավատը: Սրա խոսքերի վրա շափաղանց ուրախացավ ու
ցնծաց եպարքոսը և դատարկ սիրով գովեց ու սիրեց նրան
և նրան համարեց իր հոգևոր եղբայր, իր անձնական զգես-
աը, որ հագած էր, հանեց հագցրեց նրան և մինչև անգամ

մատներից մատանիները հանեց, դրեց նրա մատները, նաև
շատ բան պարգևեց և նրա սիրտը զբավեց իր կողմը:

Սլ այս ուրացող Ավատիան դարձավ պարսից իշխանների
համար հնարացույց, քանզի ասաց. «Հրեա մարդկանց շա-
տերին միմյանց հետ մի պահեք, կամ շոքսին, հինգին երար
հետ առյան մի բերեք, որովհետև քաջալերելով իրար սիրտ
են տալիս, այլ երկու և երեք միասին բերեք և բունի կերպով
դարձրեք, որովհետև նրանք ինքնակամ չեն դառնա: Այլ՝ նախ
բռնեք նրանց քահանային, որին խախամ են ասում և նրա
վրա մեծ ջանք գործադրեք՝ պարզենք խոստումով, սպառ-
նալիքներով, տանջանքներով, թերևս նրան դարձնեք, որով-
հետև եթե նա դարձավ, ամենքն էլ կդառնան: Այս ձևով պար-
սիկներին շատ հնարքներ ցույց տվեց այն պիղծը և ուրա-
ցողը՝ Ավատիան: Սրա խորհրդով պարսիկները անդադրում
փնտրությունով որոնելով գտան խախամին, որի անունն էր
Սայիդ, բերին, կանգնեցրին եպարքոսի առջև, որին (եպար-
քոսը) ասաց. «Համաձայնվիր իմ խոսքերին և կատարիր թա-
գալորի հրամանը, եկ ընդունիր մեր մահմեդական կրոնը և
ինձնից շատ պարգևներ ու բարիքներ ստացիր»: Իսկ խա-
խամը հանձն չէր առել, այլ հրաժարվել էր: Նաև իշխաննե-
րը շատ բաներ խոսեցին խախամի հետ, բայց նա չհամա-
ձայնվեց, այլ թույլտվություն ինքրեց զնալու իր տունը, իսկ
իշխանները թույլ տվին նրան գնալու: Այնտեղ անմիջապես
ուրացող Ավատիան աղգարարից իշխաններին որ շթողեն
գնա իր տունը, այլ պահեն իրենց մոտ: Այդպես էլ արին
իշխանները: Մյուս օրը գարձյալ կանգնեցրին ատյանում,
նորից նույն բանը հրամայեցին՝ ընդունել մահմեդական կրո-
նը: Այս անգամ էլ խախամը չհամաձայնվեց: Երրորդ օրն էլ
գործը այսպես կատարվեց. իսկ շորրորդ օրը շատ բաներից
հետո, որ խախամի հետ խոսեցին, նրա մասին վճիռ կարե-
ցին, որ եթե ընդունի մահմեդական կրոնը, որովայնը պատ-
ռեն, կախին ուղտից և շրջեցնեն քաղաքի մեջ, իսկ ունեցվածքն
ու ընտանիքը ավարի ենթարկեն: Այս վճիռը հանեցին և
ուղտը անմիջապես բերին, նստեցրին այնտեղ: Դահիճները
եկան, բացին որովայնը և հանելով սրերը հարկադրում էին
խախամին կամ ուրանալ, կամ (թե ոչ) որովայնը կպատռեն:
Խախամը սպանման աճից և առ ընտանիքը ունեցած սիրուց

թուլացավ, ուստի դավանեցրին նրան իրենց կրոնի դավանութիւնը, ընդունել տվին իրենց Մահմեդի կրոնը և սրա վրա ուրախացան անպատմելի ուրախութեամբ:

Սրանից հետո, երբ խախտմին ընդունել տվին իրենց հավատքը, հրեա մարդկանցից ատյան էին բերում մեկ կամ երկու (հոգի), և ասում էին նրանց. «էլ ի՞նչ կարող եք ասել, որովհետև ձեր խախտման էլ եկավ մեր հավատքին, իսկ դուք ինչու՞ եք համառելով հակառակ կանգնում»: Հրեաները չէին համաձայնվում, ուստի իշխանները հրամայեցին զորականներին՝ հրեաներին բանտ տանել և անմիջապես նորից բերել: Եվ այսպես շատ անգամ տանում-բերում էին: Եվ ամեն անգամ տանել-բերելիս իշխանների զորականները, ծառաները, սպասավորները, որոնք գտնվում էին այդ տեղերում, թքում, հայհոյում, խփում, ապտակում, գետին էին զարկում, քարը էին տալիս և բերում կանգնեցնում էին իշխանների ու եպարքոսի առջև և բռնութեամբ դավանեցնում էին մահմեդական կրոնի դավանութիւնը: Իսկ հրեաները նեղութեան ու տանջանքի պատճառով ակամա դավանում էին: Եվ դադանելուց հետո [պաշտամունքային արարողություն կատարում] պարսիկները բերում, դավանողներին հազցնում էին նոր կապա և նրանց արքունական դանձից յուրաքանչյուր մարդու երկու թուման դրամ պարգև էին տալիս և թողնում էին գնալու իրենց տները: Իսկ նրանք, որոնք չէին ուրանում, դարձնելով պահում էին բանտում և կրկին, երեք կին և բազմակի բերում կանգնեցնում էին (իշխանների) առջև և ստիպում էին ուրանալ: Այսպես անելով բոլոր բռնված մարդկանց դարձրին մոլար առաջնորդ Մահմեդի կրոնին: Մի ամսաչափ ժամանակում երեք հարյուր հիսուն մարդ դարձրին Մահմեդի կրոնին:

Այնուհետև հրեաները տկարացան պարսիկների առաջ, որովհետև նրանց կես մասը ընդունեց մահմեդական կրոնը, իսկ պարսիկները զորացան հրեաների վրա և այլևս չլսեցին նրանց, որպեսզի այդպես մնան, այլ բռնի օրավուր բերում էին եպարքոսի առջև և ուժով դարձնում էին մահմեդական:

Եվ պարսիկները այնքան հետամտեցին ու բռնացան հրեաների վրա նրանց մահմեդական դարձնելու և ոչ մի զիջում, ոչ իսկ չնչին, մինչև բոլոր հրեաներին, որոնք բնակ-

վում էին Սպահանի քաղաքամիջում դարձրին մահմեդական, որովհետև Սպահան քաղաքում բնակված հրեաները քիչ էին մոտ երեք հարյուր տուն, պակաս, քան ավելի:

Երբ բոլորին նվաճեցին, նրանց վրա նշանակեցին մահմեդական մուլա, որ նրանց մահմեդական կրոնը սովորեցնի և միշտ տանի պարսից աղոթանոցը, որպեսզի պարսկերեն աղոթեն և նրանց մանուկներին սովորեցնի գրեր և մահմեդական ավանդութիւններ. նաև օրենք դրին հրեաների համար, որ իրենց դուստրերին տան մահմեդականներին և նրանց ուստրերին իրենք առնեն: Նաև կենդանիների մորթ չէլատարեն, ինչպես առաջ անում էին, այլ շուկայում մահմեդական մորթողներից միս գնեն: Պարսիկները այսպիսի շատ օրենքներ պարտադրեցին հրեաներին:

[Այնուհետև նրանց վերակացու մուլան միշտ հավաքում էր նրանց և միասին գնում էին մզկիթ, և հրեաները աղոթում էին հակառակվելով պարսից քիչ օրերի ընթացքում: Եվ որովհետև լրիվ ցանկութեամբ չէին ընդունել մահմեդական ավանդութիւնները, քիչ օրեր գնացին և այնուհետև թուլացան, աստիճանաբար ետ մնացին: Երբ վերակացու մուլան հարցնում էր հրեաներին, թե ինչու աղոթանոց չեն դալիս, հրեաները այս կամ այն պատճառաբանութեամբ անց էին կացնում: Մուլան խրատում էր նրանց, նրանք դրան էլ չանսացին: Այս մուլան բարկացավ նրանց վրա, այդ էլ բանի տեղ շղրեցին: Այնուհետև մուլան գնաց մահմեդական իշխանների մոտ, հրեաներին ամբաստանել, թե չեն ենթարկվում մեր կրոնին: Հրեաները նույնպես ամբաստանեցին մուլային, թե կաշառքի ակնկալություն ունի մեզնից, այս պատճառով անտեղի շարշարում է մեզ, և որովհետև մենք չենք տալիս, ուստի մեզ ամբաստանում է: Եվ այնքան տեսակ-տեսակ կեղծիքներով և հնարքներով վարվեցին հրեաները պարսիկների հետ, մինչև որ պարսիկները ձանձրացան, իշխաններն ու մուլան հեռացան նրանցից: Նաև բոլոր պարսիկներին հայտնի եղավ, որ հրեաները չեն կամենում ընդունել մահմեդական կրոնը]:

Իսկ նրանք, որ մնացել էին հրեա, պարսից մզկիթ չգնացին, նաև բնավ նրանց չէին մոտենում, շուկայից միս չէին

գնում, այլ ծածուկ իրենց տներում ոչխարներ էին մորթում և կամ շատ օրեր առանց մսի էին անցկացնում: Այնպես էր լինում, որ երբեմն-երբեմն մատնողների և պարսից ահից ու երկյուղից հրեաները գնում էին շուկա և պարսիկ մորթող-ներից գնում միս և ակներև բացարձակ բոլորի ներկայությունը իրենց տներն էին բերում որպես թե իրենց ուտելու համար, բայց չէին ուտում, այլ գաղտնի գցում էին շների առջև, և շներն էին ուտում: Այսպիսի շատ բաներ էին անում հրեանե-րը, որոնցով հայտնի ստուգվեց, թե հրեաները հրեություն կրոնը չեն ուղում թողնել:

Բայց անօրեն, ուրացող այն Ավատիան և իր գործակից շար ընկերները, որոնք նրա հետ ուրացան, շափազանց ուրախ էին ու հաստատ իրենց նորագլուտ հավատի՝ Մահմեդի կրոնի վրա, ուստի շրջագայելով հրեաների մեջ քննում, զննում, տեղեկանում էին, թե ով իր հոժար կամքով է ընդունել մահ-մեղական կրոնը, և ով ոչ, և տակավին ծածուկ պահպանում է հրեական կրոնը: Այս պատճառով բազմաթիվ նեղություն-ներ էին հասցնում հրեաներին, որը իրավացի, որը անիրավ: Քանզի հրեաներից ոմանց բռնելով բռնություն էին գործ գնում, բանավիճում էին, քաշքշում և ասում. «Ինչու՞ դու մզկիթ չես գնում աղոթելու, այլ գնում ես հրեաների ժողո-վարանը»: Ոմանց էլ ասում էին. «Քո որդուն ուսանելու ես ուղարկում խախամի մոտ և ոչ թե մուլլայի մոտ»: Ոմանց էլ ասում էին, թե՝ «Շուկայից միս չես առնում, այլ քո տանն ես մորթում»: Եվ այսպիսի ուրիշ շատ բաներ էին անում հրեաների նկատմամբ սրանցից ուրացողները: Իսկ հրեանե-րը պարսիկներից երկյուղելով՝ շատ աղաչանքներ էին անում նրանց և կաշառք տալով հազիվ մի կերպ կարողանում էին ազատվել նրանց ձեռքից:

Նաև այս ուրացողները պատճառ դարձան, որ երեք հրեա մարդկանց դուստրերին պարսիկները առան իրենց համար կին, քանզի աղջիկներին հանվանե հիշատակեցին պարսիկների ներկայությամբ և շատ գովեցին, գրգռեցին պարսիկներին, որ աղջիկներին կին առնեն. նաև իրենք վրեժխնդիր լինելով՝ ստիպում էին աղջիկների տերերին (աղջիկներին) տալ պարսիկներին կնություն: Իսկ հրեաները չէին կամենում տալ, և աղջիկները տերերը բազմապիսի

հնարներ գործադրեցին, կաշառք տվին, որ գոնե աղջիկնե-րին ազատեն, բայց չկարողացան, այլ պարսիկները առան երեք աղջիկներին, իսկ հրեաները հոգու և սրախ խորքով խոցվեցին ուրացողների արարքների համար: Զայրազին ցա-սումով և վրեժով լցվեցին և հաստատորեն մտադրվեցին ուրացողներին սպանել. նախ Ավատիային, որովհետև նա շա-փազանց ավելի շար էր:

Հրեաների աղգից մի մարդ կար, որ խիստ նախանձա-խնդիր էր հրեություն համար. սրա անունը Փինհաս էր: Սա հայրենի կրոնի նկատմամբ նախանձախնդիր լինելով սրտով ու հոգով այրվում էր Ավատիային սպանելու համար: Խե-լացի հնարներով գտավ հրեաներից նաև ուրիշ երեք հոգի իրեն խորհրդակից ու ընկեր պիղծ Ավատիային սպանելու համար: Այս մարդկանցից մեկի անունը Իսահակ էր, մյու-սին՝ Մասիհ, երրորդին՝ Հուդա: Սրանք շորսը միարանվելով՝ հաստատուն պայման դրին իրենց մեջ, հարմար պահի Ավատիային սպանեն:

Իսկ աստծու խնամքներով մի օր այսպիսի գործ պատա-հեց. Ավատիան, ըստ իր մշտական սովորության, շրջում էր հրեաների տները նրանց զննելու և դիտելու համար, հան-դիպեց հրեաների քահանային, որին խախամ են կոչում: Նրան սարսափեցնելով ասաց. «Դու չես թողնում հրեաներին, որ մահ-մեղական կրոնը ընդունեն, որովհետև նրանց տները շրջում ես, խրատելով քաշալերում ես հաստատուն մնալ հրեու-թյան մեջ. նաև կենդանիների մորթ ես անում նրանց տնե-րում»: Եվ շնայած խախամը հրաժարվում էր և բազմաթիվ խոսքերով վկայում ու երգվում էր, որ գոնե ազատվի նրա ձեռքից, բայց չկարողացավ: Ավատիան ասաց. «Եթե ճիշտ է քո ասածը, որ կենդանիների մորթ չես անում, ինչու՞ ես քեզ մոտ պահում մորթելու սուրը, այժմ բեր ու տո: Ինձ»: Մորթելու այն սուրը, որ Ավատիան պահանջեց, այս է, որ այն ուրիշ սրերի նման հասարակ սուր չէ, որ ամեն մեկը իր վրա կրում է, այլ այն սուրը մի առանձին սուր է՝ մեծ, երկար և շափա-ղանց ավելի սուր, որ առաջին անգամ ոչխարի պարանոցին քաշելիս կտրում է գլուխը, իսկ եթե երկրորդ անգամ ավե-

լացվի, ոչինչ, բայց եթե կրկնվի երրորդ անգամ, մորթվածը անընդունելի է, և այս սուրբ հատկապես շինում են մորթի համար, և քահանան իր մոտ է պահում մորթը անելու համար և ուրիշ ոչ ոք:

Այս բանի համար Ավատիան ասաց քահանային, թե ինձ տուր մորթի սուրը: Եվ խախտման, որովհետև չկարողացավ ազատվել նրանից, ուստի մորթի սուրը տվեց նրան: Ավատիան առնելով այն՝ խփեց գոտկամեջը, թողեց խախտման և գնաց պողոտայով. եկավ, հասավ մինչև Փինհասի տան դուռը, և նույն ժամին պատահեց, որ Փինհասը նույնպես դուրս էր գալիս իր տանից. իսկույն պատահեց Ավատիային, և երկուսն էլ սկսեցին միմյանց բարեկեցի ու հարցնել իրար ողջութունից, Փինհասը խորամանկ նենգութամբ սկսեց կեղծութամբ առերես բարեկամ ու սիրելի ձևանալ և լուրջ սիրով ու բաղում թախանձանքներով հրավիրել իր տունը պատիվ տալու համար, ուստի Ավատիան գնաց Փինհասի տունը: Այնտեղ եկան նաև երեք ընկերները Փինհասի ուխտադիրները՝ Իսահակը, Մասիհը և Հուզան: Առաջ բերին սեղան, կերակուր և գինի. քանի որ ժամանակը գարնանային էր, սեղանի վրա կար նաև վարունգ, որ խիարն է: Փինհասը մորից դանակ պահանջեց վարունգը կեղեկելու համար, իսկ մայրը, որովհետև գիտեր Ավատիային սպանելու պատրվակով է դանակ պահանջում, ուստի շտվեց, այլ ասաց, թե այստեղ տանը դանակ չկա: Փինհասը կրկնեց, երեքկնեց, մորից դանակ պահանջեց, բայց նա շտվեց:

Այդ ժամանակ Ավատիան այն սուրը, որ առել էր քահանայից և իր մոտ էր, հանեց, տվեց Փինհասին. «Ահա դանակ, առ, սրանով կեղևիք»: Իսկ Փինհասը, երբ սուրը ձեռքն առավ, նույն ժամին հարձակվեց Ավատիայի վրա. ձախ ձեռքով բռնեց նրա մորտրից և ասաց. «Դու ես, որ ուրանում ես մովսիսական աստվածատուր կրոնը, նաև բռնանում ես Իսրայելի որդիների վրա, որ նույնը անեն»: Ավատիան թեպետ շատ աղաչեց, սակայն Փինհասը նրան չսեց, այլ նույն պահին այն նույն սրով կտրեց Ավատիայի գլուխը և հեռու նետեց իր երեք ընկերների օգնությամբ:

Պիղծ Ավատիայի սատակումից հետո շորս անձինք մտա-

ծեցին նրա պիղծ գեշը կորցնելու թեպետ շատ ձևերով խոսեցին, բայց որևէ վճռի չհանգեցին, այլ շորսի համաձայնությամբ արին հետևյալ ձևով: Երբ վրա հասավ գիշերը, կես գիշերին վերցրին պիղծ Ավատիայի դիակը և տարան, հեռացրին իրենց տներից և պողոտայի վրա ինչ-որ կողմ նետեցին այն, իսկ իրենք աներևութացան:

Այսպես անելու համար շատ հրեաների հարցրինք, թե ինչու այդպես անմիտ ու անվայել դործ արիք, որ սպանելուց հետո որևէ տեղում ծածուկ չկորցրիք, այլ տարաք պողոտայի վրա բաց գցեցիք: Բոլորը այս պատճառաբանություներովին: Հրեաների մեջ օրենք կա, եթե պատահի, որ որևէ մարդ մեռնի, պետք է նրա կինը ինքը ականատես լինի իր ամուսնու մահվան: Իսկ եթե կնոջ ամուսինը օտար երկրում մեռնի, պետք է մի ականատես մարդ գա, վկայի նրա ամուսնու մահվան մասին, և կամ հավաստի լուր, կամ վկայական թուղթ գա ծանուցի ամուսնու մահը, ապա օրենքը իրավունք է տալիս կնոջը այլ տղամարդու հետ ամուսնանալու: Իսկ եթե այդպես չէ, այդ կինը իրավունք չունի ամուսնանալու, այլ նստում է այրի ու անտեր, վշտով ու տառապանքով մինչև իր մահվան օրը: Այս շորս անձերը խղճալով Ավատիայի կնոջը, գեշը գցեցին պողոտայի վրա, որ նրա կինը տեսնի, իրավունք ունենա այլ մարդու հետ ամուսնանալու:

Եվ այն գիշեր, երբ պիղծ Ավատիայի դիակը գցեցին պողոտայի վրա, առաջնության լույսը բացվելուն պես տեսան դիակը և բազմաթիվ մարդիկ հավաքվեցին վրան, և ճանաչվեց, թե ով է: Ազդարարվեց հրեաներին և սպանվածի ազգականներին: Սրանք հավաքվեցին նրա վրա և բարձր աղաչակով, խռովքով, որոնում, պահանջում էին սպանողին: Իսկ Ավատիայի մայրը և կինը աճապարանքով գնացին եպարքոսի դուռը լալով ու հառաչանքներով կոծ արին, հայտնեցին նրան՝ ասելով. «Քո եղբայր Ավատիային սպանեցին»: Այդպես էլ գնացին թագավորի դիվանբեկի (գերագույն դատավոր) մոտ և նրան հայտնեցին: Նույն ժամին եպարքոսը և դիվանբեկը հրամայեցին շատ զորականների, որպեսզի շտապ հասնեն հրեաների թաղը, տներն ու պողոտաները, շուկաները և ինչ վայրում էլ լինի, բոլոր հրեա տղամարդկանց գտնեն, բռնեն, կապված բերեն դիվանբեկի առջև, որը և անմիջապես

զորակները կատարեցին, իսկ Ավատիայի գեշը իշխանների հրամանով վերցրին գեցեցին քաղաքի մեծ հրապարակը:

Եվ ապա սկսեցին մարդկանցից երեքին և չորսին առաջ բերել առյա՛ն. հարցնում էին, թե ո՞վ է սպանողը, իսկ հրեաները բոլորը միանման ասում էին, թե շնք իմանում: Թեպետ շատերին հարցրին, սակայն չկարողացան գտնել, բայց գտան հեռեկալ ձևով:

Հրեա ժողովրդից մի մարդ կար, որի անունն էր Սասուն: Սա շատ հարստություն ուներ և ուրացող սպանված Ավատիայի քեռին էր, բայց ինքը Սասունը չէր ուրացել: Մինչ Ավատիան կենդանի էր և ուրացած, մշտապես մեծաբանում էր իր քեռի Սասունի վրա, թե՛ Վժիռի որ ես մահմեդական եմ դարձել, քո ողջ հարստությունը ինձ կհասնի, ուստի քեզից պարսից օրենքով ու դատաստանով առնելու եմ: Իսկ Սասունը նրանից այսպիսի խոսքեր լսելով՝ շահազանց երկյուղում էր և միշտ սպասավորելով պատվում էր նրան ուտելիքներով ու խմիչքներով և թանկագին ինչք ու դրամ նրան կաշառք էր տալիս իբրև պարգև և նրան առինքնում էր, որպեսզի գործով չկատարի, ինչ որ խոսքով ասում է: Եվ այսպես անց էր կացնում իր օրերը: Եվ այս օրերին ու ժամին, երբ որոնում էին Ավատիայի սպանողին և չէին գտնում, վերոհիշյալ պատճառով կասկածեցին և բռնեցին Սասունին. նրա գլխին հավաքվեցին սղամարդկանց բազմություններ՝ ասելով. «Դու ես սպանել Ավատիային քո հարստության համար, որպեսզի քեզից շանի»: Եվ թեպետ Սասունը շատ էր խոստում, վկայություններ էր բերում և երզվում, բայց չէր կարողանում համոզել: Այս պատճառով անել վիճակում ընկավ Սասունը, սկսեցին ինքն ու իր բարեկամները հապճեպ փնտռությունով որոնել հրեաների մեջ և հարցնել սրանից, նրանից: Այսպիսի որոնումով պատահեցին Փինհասի ընկերներից մեկին, և ցավագին պաղատանքով Սասունը ինքը հարցնում էր և սա մեծամեծ երզումներով ու բազում խոսքերով հաստատում էր, թե՛ Վժիռի չեմ հայտնի: Արդ՝ մի հնար գտիր ինձ փրկելու համար: Որովհետև, եթե ինձ բռնեն, տուգանք, հարստություն շատ են առնելու ինձնից իմ անվան հարուստ համբավի պատճառով, իսկ քեզից շահավոր տու-

գանք կառնեն և այն, ինչ տուգանք որ քեզից առնեն, ես ամենը քեզ կտամ, միայն այս եմ խնդրում քեզից, հայտնիր ինձ գործի որպիսությունը»: Սասունի բազմաթիվ թախանձանքների, աղաչանքների ազդեցությամբ մարդը թուլացավ և Սասունին հայտնեց պիղծ Ավատիայի սպանության մասին, իսկ Սասունը իր փրկության համար պարսիկներին հայտնեց: Պարսիկները անմիջապես բռնեցին երեք ընկերներին՝ Փինհասին և նրանց, որոնք Փինհասի հետ սպանեցին Ավատիային: Բայց թեպետ մեծ ջանքեր գործադրելով որոնեցին, Փինհասին չկարողացան գտնել, որովհետև այն գիշերը, երբ Ավատիայի դին դուրս գեցեցին պողոտայի վրա, առավոտ լուսադեմին անդառնալի փախուստով Փինհասը ելավ քաղաքից, գնաց հեռու երկիր, որի պատճառով չգտան:

Սրանից հետո զիվանբեկը ատյան նստեց դատաստանի և նրա առջև բերին Ավատիայի երեք սպանողներին: Նրանց հարցրեց սպանության մասին, իսկ նրանք հանձն առան իրենց հանցանքը: Այս պատճառով զիվանբեկը վճիռ կտրեց և այս երեք սպանող մարդկանց համար հրամայեց, որ տանեն մեծ հրապարակ Ավատիայի գեշին ընդհուպ երեքին էլ սպանեն և գցեն նրա մոտ. այդպես էլ արին:

Այն ժամին, երբ զիվանբեկը եկավ նստեց դատելու սպանողներին, սրանց հետ այն բոլոր հրեա մարդիկ, որ բռնված էին պարսիկների կողմից, բոլորի ձեռքերը հետևները կապած էին և պարսիկ զորականները հսկում էին: Նաև այնտեղ էին հավաքված պարսից բոցոր դահիճները, զինվորները, զորականները և զորապետները, նաև գրեթե միանգամայն ողջ պարսից ժողովուրդը, ոչ թե իբրև թուշներ իրամներ, այլ իբրև անձրևի կաթիլներ և ավազների սարեր, որ անթվելի են, հավաքվել էին այնտեղ դատարանի դռանը այնքան, որ տեղը չէր բավարարում բազմությունը տեղավորելու: Եվ երբ զիվանբեկը հրաման տվեց երեք մարդուն տանել սպանել, այդ ժամանակ պարսիկ ժողովրդի մահմեդական բազմությունը՝ դահիճները, զորականները, աղնվական, ուսմիկ սկսեցին ձեռք գցել հրեաներին՝ ծեծել, գլխատել, սրերով ու բրեքով, թրի բուխ ծայրով, հրացանի կոթունով, գետնի վրա քարշ տալով, ջրերի լճակները խեղդելով և դարձյալ հանելով ու ծեծելով: Այնքան շարշարե-

ցին խեղճ հրեաներին, որ շեմ կարող թվել: Իսկ Ավատիա-
յին սպանող երեք մարդկանց տարան մեծ հրապարակը,
բիղծ Ավատիայի գեշի մոտ սպանեցին: Երեք մարդկանց
սպանելուց հետո իրենք՝ պարսիկները իրենց այդքան շատ
արարքներից ձանձրացան, մնացած հրեաներին թողին, հե-
ռացան: Սպանվածների դիակները երեք օր մնացին այն-
տեղ հրապարակի վրա և երեք օր հետո պարսից իշխանների
հրամանով այնտեղից վերցրին, տարան, թաղեցին:

Այնուհետև պարսիկները այլևս ոչինչ շտուկեցին կամ
արին հրեաների դեմ. ոչ նրանցից արքունական հարկ պա-
հանջեցին, ոչ էլ իշխանական որևէ պարտավորություն, այլ
նրանց համարում էին պարսիկ և մահմեդական կրոն ըն-
դունած, քանզի թողեցին, որ իրենց կամքով ապրեն, թե-
պետ պարսիկները գիտեին, որ հրեաները մահմեդական կրո-
նը չեն ընդունել, բայց ժամանակավորապես այդպես թողին:

Բայց հրեաները իրենց ժողովներում և ժողովրդի մեջ
հրեական օրենքներն ու ավանդություններն էին կատարում
և ոչ թե մահմեդական: Նաև ասում էին. «Թե մենք ամեն
տարի այն հարկը, որ տալու ենք արքունիքին, տարի առ
տարի առանձնացնում ենք, գցում գանձարկղի մեջ և պա-
հում, որպեսզի երբ պահանջեն, անմիջապես տանք, ազատ-
վենք»: Այլև ասում էին. «Այն երկու թումանը, որ ուրացու-
թյան օրը մեղ իբրև պարգևներ տվին, այդ նույնպես պահել
ենք և մշտապես յուրաքանչյուր տարվա շահը ավելացնում
ենք վրան, որպեսզի երբ պահանջեն, տանք, ազատվենք
նրանցից»:

Մինչ այս տարի, երբ այս պատմությունը շարադրեցինք,
որ մեր 1109 [1660] թվականի մարտ ամսի տասն է, այս-
պես ըստ մեր պատմածի են պարսիկները ու հրեաները,
իսկ ապագան աստօժն է իմանալի:

* *
*

Նաև պետք է այս իմանալ, որ այն օրերում, երբ Սպա-
հան քաղաքում գտնվող բոլոր հրեաներին կամա թե ակա-
մա դարձրին մահմեդական, ապա եպարքոսը հրովարտակ

հանեց թագավորից և ուղարկեց պարսից տերության բոլոր
երկրները, երկրների իշխաններին, որ ուր էլ լինեն հրեանե-
րը՝ թե գյուղերում, թե քաղաքներում, բոլորը պետք է թող-
նեն հրեություն կրոնը և ընդամենն մահմեդականությունը:
Ովքեր կամավոր հնազանդվեն, լավ, իսկ ովքեր ընդդիմա-
նան, այդպիսիներին իշխանները բռնությամբ ու տան-
ջանքներով բերեն անասպատի պիղծ հավատին [մահմեդա-
կանություն]:

Եվ երբ արքունական հրամանը հասավ տեղերում, ան-
միջապես ինչպես եղեգնուտում բորբոքված հուր, բոլոր հրեա-
ներին հավաքեցին և ստիպում էին կատարել թագավորի ողջ
հրամանը: Բոլոր հրեաները, որտեղ էլ գտնվեին, չէին կամենում
ընդունել Մահմեդի կրոնը, այլ ոմանք կաշառքով, ոմանք
փախուստով, ոմանք էլ այլ հնարներով դուրս էին պրծնում:
Իսկ նրանք, որոնք հնաք չէին գտնում, ակամա, առերես
կեղծավորությամբ ընդունում էին մահմեդականությունը. և
թեպետ պարսիկների աչքում ձևանում էին, թե մահմեդակա-
ն են, բայց այդպես չէին, այլ բոլորը ծածուկ հրեական կրոնի
էին պաշտում:

Հրեա ժողովրդից նրանք, որ պարսից ամեն քաղաքներում
բնակվում էին, անել վիճակում գտնվելով՝ ակամա, առե-
րես ընդունեցին մահմեդականությունը, սրանք են. նրանք,
որ բնակվում են Քաշանում, Ղումում, Թավրիզում, Արդա-
բիլում, Ղազրինում, Լառում, Շիրազում, Բանդարիքում,
Իսկ նրանք, որոնք կաշառքով, փախուստով կամ հայտնի
դիմադրելով ընդունեցին պարսից կրոնը, նրանք են, որ
բնակվում են Գուլբեքանում, Խունասարում, Բանդարում, Շուշ-
տարում, Համադանում, Եզդում, Քիրմանում, Խորասանում,
Գումավանդում, Աստապատում, Գիլանի երկրում, Ֆահրա-
պատի գյուղերում:

Իսկ Ֆահրապատ քաղաքում բնակված հրեաները բացա-
հայտ կերպով ընդդիմացան արքունական հրամանին և չըն-
դունեցին մահմեդական կրոնը, և նրանց վերակացու իշխա-
նը, որի անունն էր Միրզա Մադդը, երբ լսեց, թե Սպահան
քաղաքում բնակվող հրեաներին ընդունել են տվել մահմե-
դականությունը, ինքն էլ սկսեց ձեռք գցել Ֆահրապատ քա-
ղաքում բնակվող հրեաներին և բռնությամբ մահմեդակա-

ցին խեղճ հրեաներին, որ շեմ կարող թվելու Իսկ Ավատիա-
յին սպանող երեք մարդկանց տարան մեծ հրապարակը,
բլիղժ Ավատիայի գեշի մոտ սպանեցին: Երեք մարդկանց
սպանելուց հետո իրենք՝ պարսիկները իրենց այգրան շատ
արարքներից ձանձրացան, մնացած հրեաներին թողին, հե-
ռացան: Սպանվածների դիակները երեք օր մնացին այն-
տեղ հրապարակի վրա և երեք օր հետո պարսից իշխանների
հրամանով այնտեղից վերցրին, տարան, թաղեցին:

Այնուհետև պարսիկները այլևս ոչինչ չլիտսեցին կամ
արին հրեաների դեմ. ոչ նրանցից արքունական հարկ պա-
ճանջեցին, ոչ էլ իշխանական որևէ պարտավորություն, այլ
նրանց համարում էին պարսիկ և մահմեդական կրոն ըն-
դունած, քանզի թողնեցին, որ իրենց կամքով ապրեն, թե-
պետ պարսիկները դիտեին, որ հրեաները մահմեդական կրո-
նը չեն ընդունել, բայց ժամանակավորապես այդպես թողին:

Բայց հրեաները իրենց ժողովներում և ժողովրդի մեջ
հրեական օրենքներն ու ավանդություններն էին կատարում
և ոչ թե մահմեդական: Նաև ասում էին. «Թե մենք ամեն
տարի այն հարկը, որ տալու ենք արքունիքին, տարի առ
տարի առանձնացնում ենք, գցում դանձարկղի մեջ և պա-
հում, որպեսզի երբ պահանջեն, անմիջապես տանք, ազատ-
վենք»: Այլև ասում էին. «Այն երկու թումանը, որ ուրացու-
թյան օրը մեզ իբրև պարգևներ տվին, այդ նույնպես պահել
ենք և մշտապես յուրաքանչյուր տարվա շահը ավելացնում
ենք վրան, որպեսզի երբ պահանջեն, տանք, ազատվենք
նրանցից»:

Մինչ այս տարի, երբ այս պատմությունը շարադրեցինք,
որ մեր 1109 [1660] թվականի մարտ ամսի տասն է, այս-
պես ըստ մեր պատմածի են պարսիկները ու հրեաները,
Իսկ ապագան աստծուն է իմանալի:

* *
*

Նաև պետք է այս իմանալ, որ այն օրերում, երբ Սպա-
հան քաղաքում գտնվող բոլոր հրեաներին կամա թե ակա-
մա դարձրին մահմեդական, ապա եպարքոսը հրովարտակ

հանեց թագավորից և ուղարկեց պարսից տերության բոլոր
երկրները, երկրների իշխաններին, որ ուր էլ լինեն հրեանե-
րը՝ թե գլուղեբում, թե քաղաքներում, բոլորը պետք է թող-
նեն հրեության կրոնը և ընդունեն մահմեդականությունը:
Ովքեր կամավոր հնազանդվեն, լավ, Իսկ ովքեր ընդդիմա-
նան, այդպիսիներին իշխանները բռնությամբ ու տան-
ջանքներով բերեն անապատի պիղձ հավատին [մահմեդա-
կանություն]:

Սլ երբ արքունական հրամանը հասավ տեղերում, ան-
միջապես ինչպես եղեգնուտում բորբոքված հուր, բոլոր հրեա-
ներին հավաքեցին և ստիպում էին կատարել թագավորի ողջ
հրամանը: Բոլոր հրեաները, որտեղ էլ գտնվեին, շէին կամենում
ընդունել Մահմեդի կրոնը, այլ ոմանք կաշառքով, ոմանք
փախուստով, ոմանք էլ այլ հնարներով դուրս էին պրծնում:
Իսկ նրանք, որոնք հնարք չէին գտնում, ակամա, առերես
կեղծավորությամբ ընդունում էին մահմեդականությունը. և
թեպետ պարսիկների աչքում ձևանում էին, թե մահմեդական
են, բայց այդպես չէին, այլ բոլորը ծածուկ հրեական կրոն
էին պաշտում:

Հրեա ժողովրդից նրանք, որ պարսից ամեն քաղաքներում
բնակվում էին, անել վիճակում գտնվելով՝ ակամա, առե-
րես ընդունեցին մահմեդականությունը, սրանք են. նրանք,
որ բնակվում են Քաշանում, Ղումում, Քավրիզում, Արդա-
բիլում, Ղազրինում, Լառում, Շիրազում, Բանդարիքում:
Իսկ նրանք, որոնք կաշառքով, փախուստով կամ հայտնի
գիմադրելով ընդունեցին պարսից կրոնը, նրանք են, որ
բնակվում են Գուլբեքանում, Նունսարում, Բանդարում, Շուշ-
տարում, Համադանում, Սզղում, Քիրմանում, Նորասանում,
Դումավանդում, Աստապատում, Գիլանի երկրում, Փահրա-
պատի գլուղեբում:

Իսկ Փահրապատ քաղաքում բնակված հրեաները քացա-
հայտ կերպով ընդդիմացան արքունական հրամանին և չըն-
դունեցին մահմեդական կրոնը, և նրանց վերակացու իշխա-
նը, որի անունն էր Միրզա Սադրը, երբ լսեց, թե Սպահան
քաղաքում բնակվող հրեաներին ընդունել են տվել մահմե-
դականությունը, ինքն էլ սկսեց ձեռք գցել Փահրապատ քա-
ղաքում բնակվող հրեաներին և բռնությամբ մահմեդակա-

նացնել: Իշխանը այս արեւ էր մինչև թագավորի հրովարտա-
կի գալը. իսկ հրեաները նեղված նրա բռնութիւններից, իշխանի
երեսին ասացին, թե՛ «Թագավորի կողմից բեզ չի հրամար-
ված այդպիսի բան, ինչու՞ ես անտեղի տանջում մեզ: Այս
խոսքի վրա իշխանը բռնութիւնը մասամբ թուլացրեց, քայց
իր սրտում խիստ ռիս պահեց և համբերեց, մինչև արքունա-
կան հրովարտակ եկավ: Դրանից հետո իշխանը կանչեց
հրեաներին և ասաց. «Էլ ինչ ունեք ասելու, քանի որ ահա
թագավորի հրաման հրովարտակը: Արդ՝ եկեք կատարեք թա-
գավորի հրամանը և ընդունեք մահամեղական կրօնը»:

Իսկ հրեաները հայտնի ու համարձակ ընդդիմացան՝ ասե-
լով. «Մահմեդի կրօնը չենք ընդունում և մեր հայրենի կրօնը
չենք թողնում, իսկ դու ինչ կամենում ես, արա մեր նկատ-
մամբ»:

Իսկ իշխանը շատ շարշարանքների ենթարկեց նրանց:
Բազմաթիւ անգամ կախաղանից կախած բրածեծում էր
նրանց այնքան, մինչև որ անշնչանում էին, բազմաթիւ ան-
գամ լծի ջրում հեղձամղձուկ անելով՝ հանում էր ու նորից
բրածեծում: Նաև զորականներ ուղարկում նրանց տները
նրանց ունեցվածքն ավարելու և նրանց կանանց խայտառա-
կելու համար, որ շափազանց անպատկառորեն արին այս
գործը հրեաների կանանց, ուստի որ ուստի հետ: Եվ
այս հրեաները հարուստ, ունեւոր էին, որոնցից շատերը
շուկայում խանութներ ունեին, որ է գութան, որտեղ վաճա-
ռում էին թանկագին կերպաններ ու արծաթեղեն անոթներ,
սրոնց համար իշխանը հրամայեց մահմեղականներին, որ
հրեաների խանութների ամեն ինչ ավարի ենթարկեն, որ և
խսկույն կողտպուցին: Եվ խանութների ապրանքները ոչ թե
շափազոր էին, այլ՝ շատ:

Իսկ հրեա տղամարդկանցից կալանավորել էին ավելի
քան հարյուր հոգի, որոնց բոլորի պարանոցներին երկաթ-
ա ծանր ու երկայն շղթա էին գցել և բոլորին այդ շղթայով
շարան-շարան կապել էին միմյանց հետևից, որովհետև
շղթան մեկ էր, և միշտ բերում էին իշխանի դուռը դառնելու
և տանում էին բռնուր պահելու համար:

Այս գործը երկարեց մինչև հրեք-չորս ամիս, և այն բազ-
մաթիւ շարշարանքներից, որոնց իշխանը ենթարկեց հրեա-

ներին, ինքն էլ ձանձրացավ: Ապա նրանց հրամայեց, թե՛
«Որովհետև շեք կամենում թողնել հրեութիւնը, ձեզ վրա
երևացող նշան փակցրեք, որով ամեն տեսող ձանաչի ձեզ,
թե՛ հրեա եք»: Հրեաները այս հրամանը ընդունեցին մեծ հո-
ժարութեամբ: Իսկ իշխանը նրանց ծաղրածանակելու համար
հրամայեց մի լարանի վրա շարել պղնձե բոժոժներ, պղնձի
ու երկաթի կտորներ, ջրամիկ փարշի ու պուտուկի կանթեր և
կախել բոլոր հրեա տղամարդկանց պարանոցից, որպեսզի
հրեաները այդպիսի նշանով շրջեն փողոցներում: Իսկ այն
հրեաները, որ շունենան այդ նշանը, ենթարկվին ծեծի, բան-
տի, տուգանքի: Հրեաները ընդունեցին այս հրամանը, բո-
լորը իրենց պարանոցներից կախեցին իշխանի ասած (վըզ-
նոցը) և այդպես շրջում էին ամենուրեք:

Ուրիշ շատ տանջանքներ ու նեղութիւններ էլ կրեցին
հրեաները, այնքան, մինչև որ նրանց տանջող պարսիկները
ձանձրացան նրանց նեղելուց և ետ կանգնեցին, թողին հրեա-
նեքին շարշարելու: Եվ նրանք այսպես ազատվեցին պար-
սիկների ձեռքից և տակաւին իրենց հրեական հավատին են,
իսկ ապագան աստօժն է իմանալի, որին փառք հովիտայանս,
հավիտենից. ամեն:

Գ Լ Ո Ի Ե Լ Ծ

ՄԵՍ ՔԱՂԱՔ ԹԱՎՐԻՉԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Հայոց 1090 [1641] թվականի փետրվար ամսի հինգին՝
ուրբաթ օրը, Թավրիզ քաղաքում և իր շրջակա գավառներում
հանկարծակի ու անսպասելի մի ժամի ուժգին բախումով
այնպիսի ահավոր երկրաշարժ եղավ, որ երկրի հաստաշերտ
կեղևը դողում էր ինչպես տերևը, որը մեկը բանելով ձեռ-
քում, խաղացնում է, կամ ինչ-որ ամանում ջուր այս ու
այն կողմ է տանում-բերում: Քանզի ահավոր որոտումով
երկիրը թնդաց զղրդալով սանդարամետական անդունդնե-
րից: Սրանից հետո եղավ երկրաշարժը, որ կործանեց, տա-
պալեց, քայքայեց քաղաքի բոլոր շենքերը: Մեծամեծ, լայ-
նանիստ, բարձրաբերձ ու զարմանատես շենքերը, որ քաղա-

քի մեջ կային և մնացել էին հին ժամանակներից ու թագավորներից, ինչպես որ տեսնողներին է հայտնի, շատերը նրանցից մի ակնթարթում փյուրեց, հողաբլուր արեց:

Ինչպես որ այն նշանավոր շինվածքը, որին կոչում էին Ուստաշագրոտ*, այս երկրաշարժից փլվեց և շատ ուղտեր ու այլ անասուններ իր տակ թողեց, որոնք ձմռան ցրտից ու ձյունից ապաստանել էին նրանում:

Նաև բարձրաբերձ հորինվածք մահիկներ և մղկիթների մինարեններ բարձրագիր, երկնաբեր բարձրություններից խորտակված, բեկված, բաժանված դեպի ցած գալով վայր էին թափվում և, դարկվելով գետին, հեռու էին թռչում:

Նաև անվանի, լայնանիստ, բարձրաբերձ, հոյակապ և հուշակավոր շինվածքը, որը կոչում են Շամդազան**, որը քաղաքից քիչ հեռու է՝ Շոր գետի կողմը, սրա առաստաղը ամբողջապես փլվեց, մնացին շորջանակի պատերը, իսկ սրանք էլ հիմքից խախտվեցին և շորս կողմից ճեղքվեցին և բաժանվեցին շորս մասերի, որ այդպես կանգուն մնում է մինչև այսօր:

Իսկ ո՞վ կարող է թվել ապարանքները, բաղնիքները, իջևանատները, որ քաղվանսարա են միասին, որոնք հիմնովեր տապալվեցին, և բազմաթիվ կենդանիներ, մարդիկ, անասուններ կահկարասիներ, գանձեր, ունեցվածքներ մնացին հողի տակ, որոնք որոնելով քսան-երեսուն օր, պնդելով հողը, քարը՝ հազիվ էին կարողանում դռնել մեռածներին կամ ունեցվածքը:

Թեպետ այս երկրաշարժով մեծ վնաս եղավ Թավրիզ քաղաքին, բայց ավելապատիկ վնաս եղավ շրջակա գավառներին, ինչպես օրինակ Խոսրովշահ և Ուսկու կոչված գավառներին, Դուխտրկան գյուղին. քանդում, կործանում, մարդկանց և անասունների կորուստ:

Սաստիկ և ուժգին երկրաշարժից պատուվեց երկրի հաստաշերտ կեղևը, ելան սև ջրեր՝ բխելով իրրև աղբյուր, ջուրը գնում էր իր ընթացքով: Երեք օր հետո դարձյալ ուժգին երկ-

րաշարժ եղավ, և կտրվեցին այդ աղբյուրները, ուրիշ տեղերում այլ մանրիկ աղբյուրներ երևացին և ջրերի հավաքը ինչպես առաջին սև ջուրը, որքան ժամանակ երկրաշարժ կար, կային նաև սև ջրերի աղբյուրները, երկրաշարժի դադարից հետո կորան և գրանք:

Նաև ոմանք ասացին, թե ինչ-որ մի խաշնարած հովիվ, որի առջև ոչխարների հոտը ինչ-որ մի վայրում աբսոնում էր. մի օր երկրաշարժի հետ իսկույն ճեղքվեց երկրի թանձր կեղևը, և բացվեց խոր անդունդ, որտեղ սուզվելով կորան հովիվն ու ոչխարների մի մասը, որ կենդանի-կենդանի կլանվեցին երկրի կողմից ու այլևս չերևացին:

Նաև մի ամբողջ գյուղ, որ շինված էր քարքարոտ մի լեռան ստորոտում, երբ երկրաշարժն եղավ, ճեղքեց ու բաժանեց լեռան կարծր քարերը և խորտակելով քայքայեց այն և իբրև հողաբլուր խճով, քարով, հողով հոսեց գյուղի վրա և ողջ գյուղը ծածկեց, բոլորովին կորցրեց, անհայտացրեց:

Երկրաշարժի ժամանակ ձմեռ էր ու սաստիկ ցուրտ, քանդի այդ ձմեռ ձյուն առատ եղավ. իսկ երկրաշարժը ոչ թե մեկ կամ երկու կամ երեք անգամ եղավ ու դադարեց, այլ երկրաշարժը երկարեց մինչև վեց ամիս: Երկու ամիս երկրաշարժը հաճախակի էր լինում, այնպես էր լինում, որ մի օրում ցերեկվա ու գիշերվա ընթացքում հինգ-վեց անգամ երկրաշարժ էր լինում, պատահում էր, որ ավելի կամ պակաս էր լինում: Մինչև երկու ամիս այսպես էր ամեն օր: Երկու ամիս հետո երկրաշարժը լինում էր տասն օրը, քսան օրը, երեսուն օրը մեկ անգամ:

Այս պատճառով աճաբեկ, սրտաճաք և խելաթափ էին եղել ամենքը երկրաշարժի ահից, որ հանկարծակի էր լինում: Եվ չնայած շատերը փախուստով ճողպրում, ելնում էին տներից և ազատվում փրուզումից, մեռնելուց, բայց շատերն էլ մնում էին փլված ծածկերի տակ և խեղդվելով մեռնում էին, ուստի չէին կարողանում դիմանալ և ծածկի տակ բնակվել, այլ չտրաքանչյուր ոք ելնում էր ծածկից դուրս. ոմանք տան դռների մոտ, ոմանք այգիներում ու ծաղկանոցներում, ոմանք այլ հարմար տեղերում վրաններով ու տաղավարներով էին մնում այդ ձմեռ մինչև տիրոջ բարկության անցնելը, քանզի երկրի և ամբողջ աշխարհի բնակիչներին

* Իջևանատուն է:

** Շամդազանը բարեգործական [հիմնդրանոց-անկեանոց] հիմնարկություն է, որը 14-րդ դարի սկզբին կառուցել է Ղազան խանը, Թավրիզի մասերը:

հայտնի եղավ, որ այն սովորական երկրաշարժերի նման չէր, այլ տիրոջ հայտնի բարկության պատուհաս պատիժն էր հասել նրանց վրա նինձեացիների²¹⁹ նման:

Իսկ քաղաքի ու գավառների բնակիչները, երբ իրենց պատժապարտ տեսան տիրոջ առջև, որովհետև մշտապես նրանց խրատում էր բարկության գավազանով, խելքի եկան և մշտապարտ աղոթքներով, խնդրանքով, ուխտերով ու պատարագներով գիմում-կանչում էին նրան, որ կարող էր նրանց վաճառելից ազատել: Քանզի թեպետ մեղքերի պարտքի համար բարկությամբ խրատում է և սրամտությամբ հանդիմանում, բայց և արարչական գթությամբ և նախախնամական սղորմությամբ խղճում է նրանց:

Իր արարածներին խղճալը նրա էությունն է ըստ մարգարեի այն խոսքի, թե՛ «Գթած ողորմած է տերը, երկայնամիտ է և բազումողորմ»²²⁰: Նա միշտ բարկության մեջ չմնաց և հավիտյան ոխ չպահեց, այլ սրանցից իրենց մեղքը հեռացրեց ըստ երկնքի ու երկրի անջատման և գթաց իր ստեղծածների վրա, ինչպես հայրն ու մայրը իրենց զավակների վրա, որովհետև հիշեց, որ մարդիկ են և կազմված են հողից:

Սփռելով նրանց վրա տարածեց իր գութն ու ողորմությունը և վերացրեց նրանցից պատիժը և երկրին հաստատություն տվեց, աշխարհին հանդարտություն ու մարդկանց խաղաղություն, որոնք ապրում են՝ գոհանալով նրանից ամեն ժամ: Թեպետ խրատելով խրատեց, բայց մահու ըմբատեց: Սրանցով հայտնի երևաց նրա անմահ թագավորության ամենակարող զորությունը և նրա մարդասեր կամքի գութն ու ողորմությունը: Այս պատճառով բոլորը առհասարակ գոհության ձայնով փառափոռում են քաղցր տերությանը մեր աստծու. բարձունքում օրհնված հավիտյանս հավիտենից. ամեն:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴ ՊԱՏՐԻԿԻ* ԳԵՐԵՉՄԱՆԻ ՈՒ ՌՍԿՈՐԵՆՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես գրված է Վարդ Պատրիկի²²⁰ պատմությունը, որ նենգ հնարներով կոտորել տվեց հոռոմների ազգը պարսիկների ձեռքով, և հոռոմները տակավին այս քննն ու ոխը մտնեբն են պահել, մինչև այսօր էլ հնարքներ են մտածում վրեժխնդիր լինելու այն սխի դիմաց: Եվ տարեցտարի հոռոմների ազգից մարդիկ են գալիս Վարդ Պատրիկի ոսկորներին մասունքները գողանալու, որպեսզի իրենց մեջ տանելով նրանց վրա կատարեն իրենց շար կամքը, ինչպես որ ցանկանում է:

Այնպես եղավ, որ վերջին տարիներում ու ժամանակներում հայոց 1013 [1564] թվականին հոռոմներին ազգից դարձյալ երկու մարդ եկան Վարդ Պատրիկի ոսկորները գողանալու, որ թաղված է վասպուրական երկրի Հայոց ձոր²²¹ կոչված գավառի Խորգոմ գյուղի եկեղեցում: Արդ՝ Վարդ Պատրիկի ոսկորները թաղված են եկեղեցու մեջ, որ հնում շինված է եղել բնական գետնի վրա՝ հողի երեսին, ապա այդ եկեղեցին էլ հողով ծածկել են շատ հող կուտակելով նրա վրա եղել է մեծ բլուր, որ տեսնողների կողմից կարծվի, թե ի սկզբանե հավիտենից աստվածաստեղծ բլուր է և ոչ տարքովի: Հողը ծածկել է եկեղեցին և ավելի է բարձրացել, իսկ հետո բլրի վրա գագաթին՝ ներքևի եկեղեցու գլխին երկրորդ անգամ նոր եկեղեցի են կառուցել, որի մեջ քահանաները կատարում են ժամակարգությունը, եկեղեցու յոթ խորհուրդները²²², նաև գյուղացիները գալիս են այնտեղ, աղոթում: Գյուղը եկեղեցու շուրջբոլորը չէ, այլ եկեղեցու արևելյան կողմում բլրի կրճրին է, իսկ եկեղեցու և բլրի արևմտյան կողմում ծովն է, որ վանա ծով են կոչում, որ մոտ քսան կանդուն հեռու է եկեղեցուց: Նաև գյուղի ու եկեղեցու արևելյան կող-

* Սաղմ ճԹ 8, ճԵԲ 8:

* Պատրիկ հունարեն բառը 7-8-րդ դարերում զործածվում էր իբրև տիաղոս բարձր պաշտոնյաների համար:

մից գետ է գալիս և նրանց հարավային կողմից անցնում, խառնվում է ծովին: Երկու հոռոմները գալով՝ նախ իրենց ձևացնում են իբրև առաքինի ու հավատարիմ մարդիկ, որ հրաժարված են աշխարհիկ բաներից: Այնքան [վատահեղի են դարձել], մինչև որ քահանաներն ու ժողովուրդը հավատացել են ու եկեղեցու բանալին հանձնել նրանց և նշանակել են եկեղեցու լուսարար ու ժամկոչ: Իսկ նրանք շատ թե քիչ ժամանակ հետո հարմար պահի եկեղեցու արևմտյան կողմից մոտ տասնհինգ կանգուն եկեղեցուց հետո դետինը ծակել են, ական են փորել և այդպես ական փորելով՝ առաջացել, որ գուցե մտեն ներքևի եկեղեցին, որտեղ Վարդ Պատրիկի ոսկորներն են թաղված: Իսկ ականի փորված հողը բերել, թափել են ծովը փլի գլխից, քանզի ծովի եզերքը փուլ է, որ ծովի ալիքն է արել: Եվ որովհետև դյուղը բլրի արևելյան կողմում էր, իսկ արևմտյան կողմն անբնակ էր, այս պատճառով տեղը մարդկանցից ապահով էր, ուստի մարդիկ [երկու հոռոմ] վատահացած այդ բանը անում էին: Արդ՝ թափված հողից և ծովի ալիքների հարվածից ջրերը պղտորվել են և ջրերի պղտորությունը խառնվել է գետի ջրերին և քնացել է գետն ի վեր, քանզի գետի ջրերը թոշ տված* կանգնած են ծովագրին: Իսկ գյուղացիները տեսնում էին, որ ջուրը միշտ պարզ ու հստակ է եղել, իսկ այժմ պղտոր է: Ասում էին. «Անձրև չի եկել, հեղեղ չի եղել, ինչի՞ համար են այս ջրերը պղտոր»: Միմյանց ասում ու դարմանում էին, պատճառը որոնում: Երբեք, որոնելով՝ պատահել են թափված հողին, ապա գտել են ծակն ու ականը: Հետո բռնել են այդ մարդկանց, ծածուկ արգելափակել են ներքնատանը: Այնքան հնարքներ են գործ դրել գյուղացիները, մինչև որ այն մարդիկ ճշմարտությունը ասել են, թե՛ «Եկել ենք, որպեսզի Վարդ Պատրիկի ոսկորները տանենք»: Ապա գյուղացիներից ռամիկ մարդիկ, որոնք խորհրդակից են եղել, թաքում մի գիշեր այն երկու մարդուն դրել են տուփի [նալակ] վրա, հանել են ծովը և առաջ շարժելով՝ տարել են ծովի մեջ, քար են կապել նրանց պարանոցներից

* Բնագրում՝ ուղկամ տուեալ:

և այդպես թողել են ծովի ջրերի խորքը: Արդ՝ այդ գործի կատարումը այսպես է եղել, որը ծեր ու մեծ մարդիկ պատմեցին: Իսկ գյուղացիները այնուհետև ավելի զգուշությամբ են պահպանում այն եկեղեցին ամեն ժամանակ իբրև ավանդույթուն հայրերից անցած որդիներին ի փառս ասածու: Այս էլ այսպես:

Գ Լ Ո Ւ Ն Ա

ՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ԻՐ ՇՐՋԱԿԱ ԳՍԱՍՏՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՌՆԵՑԱՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Արդ՝ հայոց 1097 (1648) թվականի ապրիլ ամսի երկուսի ավագ ուրբաթ գիշերը, որ լուսանում էր ավագ շաբաթ օրը, կես գիշերը անցել, և վրա էր հասել առավոտվա ժամը, երբ առավոտյան աղոթքն էին կատարում, եղավ հանկարծակի թնդյուն ու դրդյուն, որից հետո այնպիսի ահավոր երկրաշարժ, որ այդքան գավառների բնակիչներից ոչ ոք նման երկրաշարժ չէր տեսել:

Այս երկրաշարժից փրվեց Վան քաղաքի ներքին բերդի պարիսպը Թավրիզի դարպասից մինչև Իզարի բուրգը: Նաև այստեղ-այնտեղ շատ տեղեր պարսպից փլուզվեցին ու փլվեցին, իսկ նրանք, որ չփլվեցին, խախտվեցին, որոնք բուրբը հետո քանդեցին և նորից ամբողջը շինեցին:

Վան քաղաքի եկեղեցիներից մի մասը խախտվեց, մի մասը ավերվեց. Սուրբ Սահակ անունով եկեղեցին բոլորովին ավերվեց, որը հետո խոշա Ախիջանը շինեց: Եջմիածին անունով եկեղեցին խախտվեց, որը դարձյալ նույն խոշա Ախիջանը նորոգեց ավելի լավ, քան առաջինն էր: Սուրբ Առաքելոց եկեղեցին ներսի կողմից առաստաղը փլվեց, որը խոշա Ատոմյանները նորոգեցին: Նաև Սուրբ Պողոս եկեղեցու գմբեթը փլվեց, որը Գերաքենց Ձերբաբը շինեց:

Իսկ մզկիթներից միայն Մուստաֆա փաշայի մզկիթը՝ մընաց և սրա մինարեն, մյուս մզկիթներն ու սրանց բոլոր մինարենները փլվեցին: Վերին բերդի մզկիթի մինարեն նույնպես փլվեց:

Բազմաթիվ տներ, ապարանքներ, շինվածքներ փրվեցին և իրենց ասակ թողին բազմաթիվ մարդկանց ու անասունների: Մեռածները այնքան շատ էին, որ բարձած սայլով տանում էին քաղաքից դուրս: Քաղելիս չէին կարողանում գերեզման փորել, այլ գետինը ճեղքելով մեծ վիհ էին անում և մեռելներին ութին, տասին փաթաթում էին կտավով, դնում վիհը և հողով ծածկում:

Ութ օր երկիրը երկրաշարժի մեջ էր այնպես, որ չէին կարողանում տներում բնակվել, այլ բացօթյա վայրում վրանով էին մնում, որովհետև այդ ութ օրը երկիրը անդադար չարժման մեջ մնաց, ինչպես նաև ջրի երեսին: Գրանից հետո մի քիչ հանդարտվեց, բայց շորս օրը, հինգ օրը, տասն օրը մեկ անգամ շարժվում էր: Այդպես մնաց մինչև հունիս ամիսը լրացավ, ապա երկիրը աստծու ողորմությամբ կայունացավ, հանդարտվեց:

Առաջին երկրաշարժից հետո յուրաքանչյուր օր, ով մեռնելուց ազատվեց, եկավ իր տունը, սկսեց պեղել հողը: Հողի տակից հանում էին ունեցվածք, մարդիկ: Թեպետ մեռածները անթիվ էին, բայց և կային շատերը, որոնք աստծու խնամքով կենդանի էին մնացել. դրանց հողի տակից հանեցին, այնպես որ տասը-տասնհինգ օր հետո կենդանի մարդ էին հանում հողի տակից:

Այս երկրաշարժի օրերին եղավ նաև այնպիսի բան, որի վրա շատերը զարմանում էին: Մի աղքատ ու չքավոր մարդ ազգությամբ հայ և հավատով քրիստոնյա նույն վան քաղաքից, նախքան երկրաշարժը քաղաքից ելավ, գնաց Քարափոս կոչված գյուղը մուրալու Այս մարդը ուներ երկու որդի՝ փոքրը մոտ տասը տարեկան էր, մի քիչ ավել կամ պակաս: Այս երկու երեխաները մնացին տանը: Երբ երեկոն վրա հասավ, ըստ մշտական սովորության քնեցին: Այն գիշերը, որ երկրաշարժ եղավ, սրանց տունը նույնպես փրվեց, և մահուկները մնացին տակը: Իսկ սրանց հայրը, որ գնացել էր Քարափոս գյուղը, քնել էր մեկի տանը: Երկրաշարժի ժամանակ տան գետնը ընկել և շարժել էր այդ մարդու ոտքերը: Այս պատճառով մարդը մնաց այդ Քարափոս գյուղում մինչև համբարձումը, երբ առողջացան նրա ոտքերը: Այս նա ելավ, եկավ իր քաղաքը և տեսավ իր փրված տու-

նը: Ինքը և ուրիշ բոլորը համարում էին, թե մահուկները տան տակ մնալով մեռել են:

Ապա հավաքելով որոշ մարդկանց բերեց այդտեղ, որոնք ամբողջ հողը պեղեցին, տեսան, որ մահուկները հողի տակ կենդանի են, և հիացան, փառք տվին աստծուն, քանի որ բառատունչորս օր անցել էր երկրաշարժից հետո, երբ մահուկները մնացել էին հողի տակ: Աստծու շնորհներով ու ողորմությամբ մահուկները կենդանի դուրս եկան: Իսկ ովքեր լսեցին ու տեսան, հիացած զարմանում էին: Այս լուքեր լսեցին ու տեսան, հիացած վարմանում էին: Այս լուքը հասավ մինչև քաղաքի փաշային: Փաշան մահուկներին տարավ իր առև, հարցրեց, ստուգեց ամեն ինչ և դրեց թղթի վրա այս բանը, որ կատարվեց մահուկների վրա և պահեց իր մոտ իրբև աստծու հրաշագործությունների հիշատակ:

Նաև հարցրին մահուկներին կերակուրների մասին, թե ինչ էիք ուտում, իսկ նրանք ցույց տվին քիչ հացի փշրանքներ, թե այս էինք ուտում երբեմն-երբեմն: Իսկ ջրի համար ցույց տվին մի աման, որի մեջ բազկաթիու կար, թե ծաբավելիս այդ ուտում, զովանում էինք, բայց ցերեկն ու վիշերը չէինք իմանում: Իսկ այդ մահուկները մինչև այժմ կան կենդանի ամենակարող աստծու շնորհներով:

Նաև վանա երկրի բոլոր վանքերը փրվեցին, ավերվեցին վերին վարագը և ներքին վարագը, սուրբ հայր Յոզիպի կեղեցիքն, Սալնապատի վանքի մեծ կեղեցիքն, Շուշանց վանքը, Ղուռուբաշի վանքը, Խեկուց վանքը, էրեմերա վանքը, Սրխու վանքը, Բերդակա վանքը, Կենդանանից վանքը, Կոնկի վանքը, Անգուանի վանքը, Արջակա վանքը, Ալեյի վանքը: Հիշածս վանքերից շինվեցին միայն երկու վարագոնները, Կոնկի վանքը, Խեբուց վանքը, իսկ մյուսները մնացին ավերակ: Այն գյուղերը, որ վանի շուրջն էին գտնվում, բոլորի շենքերը փրվեցին, դրանց կեղեցիքները ևս շենքերի հետ փրվեցին, իսկ Նորագեղի կեղեցիքն մի արտաշափ հեռու թռավ իր տեղից, հեռացավ, ապա փրվեց:

Այս երկրաշարժից բազմաթիվ աղբյուրներ, որ անսահման ժամանակներից բխում էին, ցամաքեցին. ինչպես Եզնարբրդի աղբյուրները, որ վեց ջրաղաց էին բանեցնում, բոլորն էլ ցամաքեցին: Բերդը այնտեղից փոխեցին ջուր չբխելու պատճառով և տարան Ղասրիկում շինեցին: Սույն-

պես և Ներքին Փագախ անվանված գյուղը, որի աղբյուրները ցամաքեցին, և ջուր չլինելու պատճառով այս գյուղը ևս տարան խասրիկում շինեցին: Այժմ գյուղի աղբյուրները տասներկուան էին, բոլորը ցամաքեցին և այժմ չեն երևում:

Հոգվոց վանքի մեծափառ ուխտի ձորում վանքին մոտիկ մի լեռ կար, որը կոչում էին Աբեղներ: Այն գիշեր, երբ երկրաշարժը եղավ, այդ հաստակառույց, արարչակերտ, կարծր քարային լեռը ահավոր երկրաշարժից խախտված, բեկբեկված, քայքայված ներքև հոսելով դեպի ձորը փլվեց և ամբողջ ձորը լցրեց, երեք մարդ իր տակն առնելով սպանեց, և ճանապարհը վերացրեց, որ հետո այլ կողմում շինեցին: Չորը լցնելով բազմաթիվ օրեր արգելեց գետի ջրի ընթացքը, որ այս շատ օրեր հետո քիչ-քիչ ջուրը իր համար ճանապարհ բացեց, որ այժմ իր ընթացքով գնում է: Հայոց ձորի գավառում՝ էրեմերի վանքին մոտիկ մի արտաչափ տեղ գետինը սուզվեց, երկրի խորքը կլանվեց, մի խոր և ահավոր փոս գոյացավ մինչև անգունդները: Փոսի միջից՝ անգունդից սև ջուր դուրս եկավ և այնտեղ փոսի մեջ լճացավ, որ կա մինչև այսօր:

Վան քաղաքի փաշան և այլ իշխաններ այս բոլոր կատարված քաները նկարագրեցին, ուղարկեցին Կոստանդնուպոլիս քաղաքը և հայտնեցին սուլթան Իբրահիմ խոնդկարին, թե քաղաքների, գյուղերի այսքան շենքեր, մզկիթներ, եկեղեցիներ ավերվեցին: Նաև Վան քաղաքի խոջաները (մարդ) ուղարկեցին Ռահիջան խոջայի մոտ, որ այդ օրերին Կոստանդնուպոլսում էր, որպեսզի թագավորից՝ թուլուլուլուն ստանա ավերված վանքերի, եկեղեցիների վերստին շինության համար, որ և խոջա Ռահիջանը թագավորից ստացավ հրամանը և ուղարկեց Վան խոջաներին, իսկ նրանք սկսեցին շինել քաղաքի եկեղեցիները. ինչպես պատմեցինք, նախ (շինեցին) Վարագա վանքի եկեղեցին: Կիրակոս վարդապետը, որ Վարագա վանքի առաջնորդն էր, հանձն առավ նախ շինել ժամատունը, որը և կառուցեց, վերջացրեց: Խոջա Ամրխանը շինեց Սուրբ Խաչի եկեղեցին, Մարխաս շելեբին՝ Աստվածածնի եկեղեցին, խոջա Դիլանյին՝ Սուրբ Սիրոնի եկեղեցին, խոջա Հովհաննեսը՝ Սուրբ Նշանի եկեղեցին: Այս եկեղեցիները շինեցին, մնաց Բերդով եկեղեցին, Քա-

ռասուն արեղաների եկեղեցին: Վանքի պարիսպը ևս ամբողջովին շուրջանակի շինեցին: Ներքին Վարագա վանքի և այլ վանքերի ու եկեղեցիների կառուցումը ավարտվեց և յուրաքանչյուրը իր տեղում կա աստուծու ողորմությամբ, որին փառք հավիտյանս. ամեն:

Գ Լ ՈՒ Ե Լ Ը

ԱՆՎԱՆԻ ՎԱՐԱԳ ԱՆՎԱՆՎԱՍՏ ՎԱՆՔԸ ԿՈՂՈՊՏԵԼՈՒ,
ԱՎԱԳ ՍՈՒՐԲ ԵՇԱՆԸ ԽՈՇԱՐԻ²²³ ԲԵՐԴԸ ՏԱՆԵԼՈՒ ԵՎ
ԱՅՆՏԵԼԻՅ ՎԱՆ ՔԱՂԱՔ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Լինում էր, որ ճամփորդ քարավանները Վանից գնում էին Թավրիզ, Թավրիզից՝ Վան: Խոջարի բերդի տերը, որ Սուլեյման բեկ էր կոչվում, քարավանների բեռները բռնությամբ բանում էր, ինչ բան որ հավանում էր, չնչին գին էր շարտում տիրոջը և ապրանքը կորզելով տիրոջից, սեփականում էր՝ պատճառաբանելով, թե գնեցին:

Նաև այս ժամանակ Վան քաղաքի իշխանն ու հրամայողը մի ավելի մեծ իշխան էր, որին կոչում էին Հուսեյին աղասա նույն Վան քաղաքից էր: Սրա մոտ գնացին այն մարդիկ, որոնց ունեցվածքն ու ապրանքները հափշտակել էր Սուլեյման բեկը, և շատ ամբաստանություններ արին Սուլեյման բեկի դեմ: Իսկ Հուսեյին աղան Սուլեյման բեկի արարքի մասին հայտնեց Կոստանդնուպոլիս թագավորի արքունիք: Ուստի թագավորից հրաման տրվեց Հուսեյին աղային Սուլեյման բեկի մասին, որ առած իրերը վերադարձնի տերերին: Բայց Սուլեյման բեկը չվերադարձրեց, ուստի Հուսեյին աղան առավ Վանի ամբողջ զորքը, նաև հավաքեց մարերի շրջակա բոլոր իշխաններին, որոնց հետ էր նաև մարերի մեծ իշխան Եղդիշերը՝ Ջուլամբերիկի, Շատախի և այլ բազմաթիվ գավառների, բերդերի տերը: Սրանց հետ զընաց նստեց Խոջարի բերդի շուրջը, որտեղ ամրացել էր, նստել էր Սուլեյման բեկը: Երեք ամիս նստած մնացին և ամբողջ երկիրը ավերեցին, ուստի Սուլեյման բեկը անճարության ու տարակուսանքի մեջ ընկնելով անելանելիության մատնվեց: Ոսկու և արծաթի շատ կաշառք տվեց Եղդիշեր մեծ

պարունին, որ գուցե շուսեյին աղային և մյուս ամենքին առնի հեռանա: Եվ գործն այդպես էլ ավարտվեց, որովհետև Սուլեյման բեկից մեծ հարստութիւն առան և հեռացան, ցրվեցին յուրաքանչյուրը իր տեղը:

Նրանց գնալուց հետո, երբ քիչ օրեր անցան, այդ ծամանակ Սուլեյման բեկի մոտ եկավ մի գոռոզ, արյունարբու, արյունահեղ, պատերազմում հաղթող, առաջամարտիկ Չոմար անուճով մարդ: Սրան օսմանցիներին խոնդկար թագավորը պարզեւէլ էր փաշայութեան պատիվ ու իշխանութիւն և երկիցս, երկիցս ուղարկել էր քաղաքներ ու երկրներ՝ նրանց իշխելու ըստ օսմանցիների օրենքների կարգի: Սակայն սա գնացած տեղերում խիստ բռնութեամբ ու անիրավութեամբ էր վարել իշխանութիւնը՝ կեղեքելով, կոշտպտելով, հափըշտակելով և ամենքի հետ անիրավութեամբ վարվելով՝ թե ազնվականների, թե ռամիկների: Ուր էլ գնացել էր, ամեն տեղերից անիրավութեան համբով ու ամբաստանութիւն էր հասել թագավորին ու վեղիրին, ուստի և քաղաքների փաշայութիւնից գցեցին, և եկավ թագավորի արքունիքը, այլևս նրան իշխանութիւն ու փաշայութիւն չտվին: Այս բանը շատ ծանր ու դժնդակ թվաց Չոմարին, ուստի ապստամբվեց թագավորից, ելավ Կոստանդնուպոլսից, զնաց Բուրսայի և Անկարայի կողմերը: Սրան հարեցին սրիկա, էլուզակ մարդիկ, որոնք բոլորը գողեր, ավազակներ, աշխարհավեր մարդիկ էին և շարագործութեամբ նման էին նրան: Սրանց հետ (Չոմարը) բնակվում էր լեռներում, անշեն վայրերում և այդպես էր անցկացնում իր կյանքը:

Երբ ցանկանում էր, նրանց հետ իջնում էր լեռներից, դարանամտում էր ճանապարհների վրա և երթևեկող քաղաքականների վրա հարձակվելով, ումանց կոտորում էր, ումանց փախուստի մատնում և ոսկի, արծաթ և ուրիշ բաներ, ինչ կամենում էր, առնում, գնում էր: Այս բանը անում էր ոչ թե հազվադեպ օրեր կամ ծածուկ, այլ բացարձակ, շատ օրեր և այնքան, մինչև որ ճանապարհների երթևեկութիւնը դադարեց: Լուրը հասավ Կոստանդնուպոլսի թագավորին, ուստի թագավորից հրաման ելավ՝ զօրապետ նշանակել և մեծ զորքով գնալ կովել նրա դեմ ու սպանել:

Նշանակված զօրապետը գնաց, կովեց նրա դեմ, բայց

չկարողացավ սպանել, և սակայն իր տեղից փախցրեց: Չոմարը ուր էլ գնում էր, նույն գործն էր անում, ուստի հրաման ելավ թագավորից բոլոր երկրների իշխաններին ու զորագլուխներին, որ ուր էլ Չոմարը գնա, այդ երկրի իշխաններն ու զորքը կովեն Չոմարի դեմ և սպանեն: Իսկ եթե այնպես լինի, որ մեկը բերի Չոմարի գլուխը, և նրա (սպանութեան) նշանը, մեծ պարգևներ ու մեծութիւն է առնելու թագավորից:

Եվ որովհետև (Չոմարի) այ ձևովի ճակովը ձևովի ափի մեջ անբաժանելի զորված, կպած էր, սրա համար ասացին նշանը բերի:

Թագավորի այս հրամանի համար Չոմարը ուր էլ գնաց, երկրների բոլոր զորքերն ու իշխանները հալածական դարձրին Չոմարին: Չոմարը հալածանքներից դադար առնելու տեղ չգտնելով, եկավ դիմեց Սուլեյման բեկին: Նրա առյուծասիրտ քաջութեան և հաղթական ճակատամարտերի համար Սուլեյման բեկը ընդունեց նրան և ասաց. «Ենթուսս եղբայրներ լինենք և պահենք մեր հայրենի իշխանութիւնը և միասին վայելենք»:

Գարձյալ մեկ այլ պատմութիւն, որ անհրաժեշտ է այս պատմութեան մեջ:

Վերոհիշյալ այն շուսեյին աղան ինչ-որ պատճառով սիրով ու միաբանութեամբ այնպես կապվեց մարերի Եղդիշեր մեծ իշխանի հետ, որ իր եղբոր դուստրը կնութեան տվեց Եղդիշերի կղբորը, որի անունն էր Խոսրով փաշա: Սրանք երկուսով՝ Եղդիշեր ու շուսեյին աղաները սերտ սիրով միաբանվեցին, եղան խնամիներ ու բարեկամներ:

Մի այլ պատմութիւն ևս: Այս շուսեյին աղան այնքան շատ զորացավ ու մեծացավ Վան քաղաքի մեջ, որ սրա հրամանին էին ենթարկվում փաշան, զադին*, ենկիշար աղասին**, զուլար աղասին***. իսկ այլ իշխաններ սրա ահից փախստական դարձան:

Նաև այնպիսի մի բան պատահեց: Ինչպես օսմանցիների սովորութիւնն է, հին փաշային հանելուց հետո սրա տեղը թագավորի արքունիքից նոր փաշա են ուղարկում: Այսպես

* Զոգևոր զատավորը:

** Ենկիշերի պետը:

*** Հավատարիմ ծառաներից կազմված զորքի հրամանատարը:

պարոնին, որ գուցե Հուսեյին աղային և մյուս ամենքին առնի հեռանա: Եվ գործն այդպէս էլ ավարտվեց, որովհետև Սուլեյման բեկից մեծ հարստութիւն առան և հեռացան, ցրվեցին յորաքանչյուրը իր տեղը:

Նրանց գնալուց հետո, երբ քիչ օրեր անցան, այդ ժամանակ Սուլեյման բեկի մոտ եկավ մի գոռոզ, արյունաբերու, արյունահեղ, պատերազմում հաղթող, առաջամարտիկ Չոմար անունով մարդ: Սրան օսմանցիներէ խոնդկար թագավորը պարզեց էր փաշայութեան պատիւ ու իշխանութիւն և երկիցս, երկիցս ուղարկել էր քաղաքներ ու երկրներ՝ նրանց իշխելու ըստ օսմանցիներէ օրենքներէ կարգի: Սակայն սա գնացած տեղերում խիստ բռնութեամբ ու անիրավութեամբ էր վարել իշխանութիւնը՝ կեղեքելով, կողոպտելով, հափըշտակելով և ամենքի հետ անիրավութեամբ վարվելով՝ թե աղնվականների, թե ռամիկների: Ուր էլ գնացել էր, ամեն տեղերից անիրավութեան համբով ու ամբաստանութիւն էր հասել թագավորին ու վեղիբին, ուստի և քաղաքների փաշայութեանց գեցեցին, և եկավ թագավորի արքունիքը, այլևս նրան իշխանութիւն ու փաշայութիւն չտրուցին: Այս բանը շատ ծանր ու դժնդակ թվաց Չոմարին, ուստի ապստամբվեց թագավորից, ելավ Կոստանդնուպոլիսից, գնաց Բուրսայի և Անկարայի կողմերը: Սրան հարեցին սրիկա, ելուզակ մարդիկ, որոնք բոլորը գողեր, ավաղակներ, աշխարհավեր մարդիկ էին և շարագործութեամբ նման էին նրան: Սրանց հետ (Չոմարը) բնակվում էր լեռներում, անշեն վայրերում և այդպէս էր անցկացնում իր կյանքը:

Երբ քանկանում էր, նրանց հետ իջնում էր լեռներից, դարանամտում էր ճանապարհների վրա և երթեկող քաղաքավանների վրա հարձակվելով, ումանց կոտորում էր, ումանց փախուստի մատնում և ոսկի, արծաթ և ուրիշ բաներ, ինչ կամենում էր, առնում, գնում էր: Այս բանը անում էր ոչ թե հաղվաղեպ օրեր կամ ծածուկ, այլ բացարձակ, շատ օրեր և այնքան, մինչև որ ճանապարհների երթեկնութիւնը դադարեց: Լուրը հասավ Կոստանդնուպոլիս թագավորին, ուստի թագավորից հրաման ելավ՝ զորապետ նշանակել և մեծ զորքով գնալ կովել նրա դեմ ու սպանել:

Նշանակված զորապետը գնաց, կովեց նրա դեմ, բայց

չկարողացավ սպանել, և սակայն իր տեղից փախցրեց: Չոմարը ուր էլ գնում էր, նույն գործն էր անում, ուստի հրաման ելավ թագավորից բոլոր երկրների իշխաններին ու զորագլուխներին, որ ուր էլ Չոմարը գնա, այդ երկրի իշխաններն ու զորքը կովեն Չոմարի դեմ և սպանեն: Իսկ եթե այնպէս լինի, որ մեկը բերի Չոմարի գլուխը, և նրա (սպանութեան) նշանը, մեծ պարգևներ ու մեծութիւն է առնելու թագավորից: Եվ որովհետև (Չոմարի) աջ ձեռքի ճկույթը ձեռքի ափի մեջ անբաժանելի գողված, կպած էր, սրա համար ասացին նշանը բերի:

Թագավորի այս հրամանի համար Չոմարը ուր էլ գնաց, երկրների բոլոր զորքերն ու իշխանները հալածական դարձրին Չոմարին: Չոմարը հալածանքներից դադար առնելու տեղ չգտնելով, եկավ դիմեց Սուլեյման բեկին: Նրա առյուծասիրտ քաջութեան և հաղթական ճակատամարտերի համար Սուլեյման բեկը ընդունեց նրան և ասաց. «Ենթուստ եղբայրներ լինենք և պահենք մեր հայրենի իշխանութիւնը և միասին վայելենք»:

Գարձյալ մեկ այլ պատմութիւն, որ անհրաժեշտ է այս պատմութեան մեջ:

Վերոհիշյալ այն Հուսեյին աղան ինչ-որ պատճառով սիրով ու միաբանութեամբ այնպէս կապվեց մարերի Եղդիշեր մեծ իշխանի հետ, որ իր եղբոր դուստրը կնութեան տվեց Եղդիշերի լղբորը, որի անունն էր Խոսրով փաշա: Սրանք երկուսով՝ Եղդիշեր ու Հուսեյին աղաները սերտ սիրով միաբանվեցին, եղան խնամիներ ու բարեկամներ:

Մի այլ պատմութիւն ևս: Այս Հուսեյին աղան այնքան շատ զորացավ ու մեծացավ Վան քաղաքի մեջ, որ սրա հրամանին էին ենթարկվում փաշան, դադին*, ենկիշար աղասին**, զուլար աղասին***. իսկ այլ իշխաններ սրա ահից փախստական դարձան:

Նաև այնպիսի մի բան պատահեց: Ինչպէս օսմանցիներէ սովորութիւնն է, հին փաշային հանելուց հետո սրա տեղը թագավորի արքունիքից նոր փաշա են ուղարկում: Այսպէս

* Հողեր գատավորը:

** Ենկիշերի պետը:

*** Հավատարիմ ծառաներից կազմված զորքի հրամանատարը:

էլ Վան քաղաքի հին փառաքին հանեցիւն և թագաւորի արքունիքից Վան ուղարկեցին նոր փառաքյի փոխանորդին: Հուսնյին աղան և հին փառան միաբանակեցին և շրնդունեցին եկած նոր փառաքյի փոխանորդին, այլ ետ դարձրին Կոստանդնուպոլիս: Իսկ Վան քաղաքի իշխանները, որոնք տեղով էին Հուսնյին աղայից, նրանից գաղտնի ու ծածուկ ամբաստանութան շատ բաներ գրեցին նրա մասին և ուղարկված Մուսափիմի հետ ետ ուղարկեցին թագաւորի արքունիքը:

Քիչ օրեր անց թագաւորի արքունիքից Վան քաղաք եկավ Սինան անունով մի ոմն իշխան ենիչերի աղասի, մտաւ բերդը և տիրեց վերին բերդը և բոլոր ենիչերիներին: Քիչ օրեր հետո այս նոր եկած Սինան աղան, որ ենիչերի աղասի էր, սկսեց վերին բերդից թնդանոթով արկակոծել փառաքյի ապարանքը, ասելով, թե՝ «Թագաւորից քո վրա հրաման կա՝ գնալ, ուստի պիտի ելնես, գնաս քաղաքից»: Նաև արկակոծում էր Հուսնյին աղայի տունը և պատգամ էր ուղարկում նրան, թե՝ «Մի պահիր փառաքյին, այլ ուղարկիր»: Իսկ Հուսնյին աղան ու փառան, երկյուղելով թնդանոթից, ելան, գնացին ներքին բերդի հյուսիսային կողմը Թաւրիզի դարպասին մոտիկ և մտան այն տեղը, որ կոչում են Պալթի արեներ, և այնտեղ ամբացան, որպեսզի արկը, որ գալիս է վերին բերդից, այդ տեղին չկալի, որովհետև լեռան ժայռը վերևից հովանի է նրա վրա: Իսկ Վանի ենիչերիները թեպետև թշնամանք ունեին Հուսնյին աղայի դեմ և ասում էին նրան, ըայց որովհետև խիստ վախենում էին նրանից, ուստի նրանք ևս հավաքվեցին այնտեղ՝ Հուսնյին աղայի մոտ:

Իսկ ենիչերի աղասին մարդիկ ուղարկեց խոշարի բերդը և Սուլեյման բեկին հայտնեց թագաւորից եկած հրամանի, Հուսնյին աղայի և փառաքյի թաքնվելու մասին: Իսկ Սուլեյման բեկը, քանի որ անցել էր քննը և վրեժխնդրութան ծարավը, մեծ տենչանքով ցանկանում էր այդպիսի լուր լսել: Չդանդաղեց, այլ ինքը կտրուկ վեր կացավ մեծ զորքով, իր հետ առնելով նաև վերևում հիշատակված Չոմարին գնացին, հասան Վան քաղաքը և քաղաքի շրջակա գյուղերում այստեղ-այնտեղ մշտապես շրջում էին, որ գուցե ձեռք գցեն Հուսնյին աղային: Նրանք շրջելով գնացին Արշակ գյուղը և այնտեղից Խառակոնիս գյուղը, որ պատկանում էր Հուսն-

յին աղային: Հուսնյին աղայի դեմ քինախնդրութան համար Սուլեյման բեկը գյուղի տանուտերին ձուլ վրա հանելով սպանեց:

Այնտեղից Սուլեյման բեկն ու Չոմարը իրենց զորքով ելան, գնացին Վարազա վանքը և այն, ինչ առաջ լսել էին Վարագի մեծահանդես միաբանութունից, այժմ աչքերով ամենը տեսան, մտքով գննեցին և մտածեցին, թե այս վանքը ունի երկար ժամանակ մթերված ինչք ու հարստութուն, պղնձյա, արծաթյա, ոսկյա սպասքներ. արդ՝ ժամանակն է, որ մենք ամբողջը գրավենք: Այս նկատառումով հանկարծակի վանքի բոլոր բնակիչներին բռնեցին, կապեցին և պահում էին կալանքի մեջ. մեկ-մեկ բերում էին իրենց առջև, հարցնում էին վանքի ունեցվածքի մասին և նրանցից պահանջում էին: Իսկ նրանք ինչ որ հայտնի էր, ցույց էին տալիս, այլ իրերի մասին ասում էին, թե բոլորը քաղաք են տարել և այնտեղ են պահում, որովհետև ավաղակների ահուդողից այստեղ չեն թողնում:

Իսկ վանքի բնակիչներից թեպետ ոմանց ավելի, ոմանց պակաս շարչարեցին, ըայց նրանց բոլորին թողին, իսկ նրանցից ով փախչելու հնար գտավ, անդարձ փախավ:

Ըայց վանքի միաբաններից երեք ծեր արեղաներ, որոնց անուններն են տեր Հովհաննես, տեղ Սահակ, տեր Մովսես, բռնեցին և պահում էին կապանքներում, այն էլ մեծ զգուշութամբ: Սրանց ասում էին. «Վանքի այլ բնակիչներ ավելի փոքր են, տեղյակ չեն վանքի թաքստոցներին. սրանք հնօրյա են և ծեր, սրանք ամեն ինչի տեղյակ են: Առաջ բերին, նախ համոզկեր խոսքերով, ապա սպառնալիքներով պահանջում էին ցույց տալ իրենց վանքի թաքստոցները: Իսկ արեղաները ասում էին, որ իրենք բնավ տեղյակ չեն այն բաներից, որոնց մասին խոսվում է: Քանզի իրենց կամքով ու սրտի ցանկութամբ հանձն առան մահն ու մեռնելը, քան թե ցույց տալը:

Բազմաթիվ հարց ու պատասխանից հետո սկսեցին նրանց շարչարել: Նախ՝ ոտքերից կախեցին նրանց և բերբով խոտագույնս ծեծեցին շափաղանց անխղճորեն ու անչափ: Ապա յուրաքանչյուր արեղայի երկու ձեռքերը տարան հետևը, ապա ձեռքերի երկու բութ մատները կապեցին իրար վրա, պարանը գցեցին նրանց երկու ձեռքերի միջև, ապա բարձր տեղից

կախեցին նրանց: Բերին ծանր քարեր դրին նրանց թիկունք-
ներին: Այդպես թողին կախադանի վրա, որ մնացին մինչև
երեկո. նրանց երկու ձեռքերի հողերը խախտվեցին, իսկ
աբեղաները ողբալով աղաղակում էին, թե շենք իմանում
ձեր պահանջածի տեղը, բայց անօրենները չէին լսում:

Սրանից հետո արեղանների գլուխները պարանից օղակ
հագցրին, որն այսպես էր: Կանթեղի պարանը, որ բարակ է
ու ամուր, օղակի ձևով կապեցին և անցկացրին արեղանների
գլուխները, օղի մեջ փայտ մտցրին և սկսեցին փայտը ուռ-
րել, պարանը մանվեց ու ոլորվեց սաստիկ ամբուխամբ և
թաղվեց արեղանների գլուխների մորթու և մսի մեջ, իբրև
մամուլի մեջ պնդվեցին ու սեղմվեցին նրանց գլուխները.
Բոլոր մսերը, մորթիները, գլուխներն ու պարանոցների երակ-
ները այտուցվեցին, դարձան կարմիր, և նրանց երկուսի
աչքերը կարծես դուրս պետք է թռչեին կապիճներից, իսկ
արեղանները անշնչացած, ուշագնաց իբրև մեռած ընկան
գետին:

Ապա բերին բարակ ու պինդ պարան, կապեցին արեղա-
ների աճուկներից և քաշելով վեր յուրաքանչյուրին կախե-
ցին բարձր տեղից, իսկ նրանց շուրջը բոլորված անօրեննե-
րը և սրանց զորքը հայհոյում, թքում, ծաղրում էին՝ ասելով.
«Այդքան շարշարանքներ եք կրում, ինչու՞ ցույց չեք տալիս
վանքի թաքստոցները»: Բայց արեղանները ցույց չէին տա-
լիս, որովհետև մահ էին հանձն առել:

Սրանից հետո Չոմարը ինքը եկավ, բաց արեց արեղանե-
րի ամոթույթները, շոր դեց նրանց առնանդամների վրա
ինքը առավ դրանք իր բերանը և ատամներով ծամում էր:
Դրանից արեղանները սարսափելի տառապեցին և անշնչա-
ցած ընկան իբրև մեռելներ:

Արդ՝ այսքան սարսուղի տանջանքներ կրեցին խճալի
արեղանները և գրեթե յուրաքանչյուր շարշարանքի ծամա-
նակ առանձին-առանձին մեռնում ու կենդանանում էին, մա-
նավանդ այս վերջին շարշարանքում, որ ահավոր սարսուղի
տանջանք էր: Եվ այս բազմաթիվ տանջանքներից ճնշված,
մաշված, տկարացած մարմնով այնպես որ ուժ չունեին
ոտքի վրա կանգնելու:

Այսքան շարշարանքները, որոնք անուն առ անուն հի-

շեցինք, երևացող ու բացահայտ էին, որոնք խոսքի շա-
րադրության բերումով նկարագրեցինք, նրանք, որ ավելի
փոքր էին, որ մենք թողեցինք, դու այն քո մտքով պատ-
կերացրու. և այս ամենը հնարելով գործադրում էր անիծ-
ված, անխիղճ, անասոված ու մարդադեմ գազան այն Չո-
մարը:

Այսքան տառապանքներից ու նեղություններից հետո, երբ
Չոմարը տեսավ, թե արեղանները թաքստոցները ցույց չեն
տալիս ինքը վեր կացավ որոնելու վանքի թաքստոցները:
Քանզի իր ձեռքը առավ մի գործիք, որ զլունգն է, և սկսեց
շրջել վանքի եկեղեցիների մեջ, տնկում և ամեն տեղերում:
Կանգնում ու նայում էր, դիտում գնում էր ամեն տեղ, ապա
որտեղ որ կասկածում էր, թե նմանվում է թաքստոցի, այն
քլունգով, որ բունել էր ձեռքում, թակում էր տեղը: Այսպես
շրջելով եկան, մտան եկեղեցիներից մեկը, և երբ դարկեց
կասկածելի տեղին, անմիջապես լավեց թնդյունի ձայնը, ուստի
անմիջապես քանդեցին այդ տեղը և գտան պղնձեղենով լիք
մի հոր, որովհետև վանքի բոլոր պղնձյա ամանները լցրել
էին այնտեղ, թաքցրել: Դրանք բոլորը դուրս բերին և հա-
վաքեցին մի տեղում: Եվ երբ սրանք գտան, ավելի դրդե-
ցին՝ կարծելով, որ այսպիսիք շատ կան և խիստ որոնումով
սկսեցին թակել բոլոր տեղերը: Այնտեղից գնացին մի այլ
եկեղեցի և բախելիս տեղը թնդաց, անմիջապես քանդեցին
և գտան մի դատարկ թաքստոց, ոչինչ չկար այնտեղ:

Այս թողին, գնացին մի այլ եկեղեցի և բախելիս հան-
դիպեց տեղը, որտեղ էր մեծ թաքստոցը. այստեղ պահված
էին Ավագ սուրբ նշանը և եկեղեցիների բոլոր անոթները:
Անմիջապես քանդեցին և գտան թաքստոցի դուռը, մտան ներս,
տեսան, որ հարստությամբ լիքն է՝ Ավագ սուրբ նշանը բազմա-
թիվ կիրպաններով պատված և զեղեցկաշեն արկղի մեջ դրված
և բազմեցրած բոլոր անոթների վրա. որը [Սուրբ նշանը]
Սուվյման բեկը ինքը գիրկն առած բերեց դուրս: Ապա
դուրս բերին այլ անոթներ ևս՝ բազմաթիվ արծաթեղեններ,
սկիհներ, լաշեր և մի մարդաշափ խաշ, որի կշիռն էր մի
խոնդկարի [թագավորական] լիտր* և վրան դրված ուներ

* Լիտրը հավասար է 12 ֆունտի, մոտ 5 կգ:

«Դավթի խաչ» և բազմաթիվ ոսկետուփ ու արծաթապատ ամփոփարաններ և այլ գրքեր, արծաթեղեններ, ջրոցներ, բուրվառներ, կանթեղներ, թանկագին կտորից մեծագին շուրջառներ, վարագույրներ, բեմի ծածկոցներ և այլ բազմաթիվ սպասքներ, որոնք այնտեղ էին պահելու Բոլորը հանին, բերեցին գուրա: Ինչ որ արծաթյա իրեր էին, դրին սնդուկի մեջ, ինչ որ պղնձյա էին, ջարդեցին: Նաև, էլ ինչ-որ գտան բարձին ձիերին, նաև Սուրբ Նշանը իր զարդերով: Բռնված մի քահանա բերին և նշանակեցին, որ գնա Սուրբ նշանի հետ սրան սպասավորելու համար: Թե Սուվեյման բեկը, թե Չոմարը իրենց զորքերով այդ ամենը առած՝ գնացին հասան Խոշար:

Արդ՝ վարագա բոլոր անոթները և ինչքերը այդ ձևով գնացին Խոշար, երբ մեր 1100 [1651] թվականն էր:

Իսկ երեք քաղաքները, որոնք այնքան տառապեցին, թեպետ մի տարի քաջ տալով ապրեցին, բայց (ապրում էին) իբրև մեռած գետուն, որովհետև ճլեբքամահ կյանքով էին մնում և մահ էին տենչում, որը մի տարի հետո վրա հասավ նրանց. մահը հանգստացրեց նրանց իրենց տառապանքներին:

Գ Լ Ո Ւ Ե Լ Փ

ՀՈՒՍԵՅԻՆ ԱՂԱՅԻ ԶՈՒՎԱՄԵՐԿ ԳՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իսկ Հուսեյին աղան ու փաշան, որոնք մտել էին Պալթի տները, և թաքնվել, այդպես թաքնված մնացին այնտեղ, մինչև երկու ամիս, իսկ թնդանոթը վերին բերդից մշտապես ներքին բերդն ու քաղաքը ծեծում էր ու ավերում: Ապա Հուսեյին աղան նկատելով ու մտածելով իմացավ, որ ոչ մի տեղից իրեն փրկություն չկա, բացի իր խնամի Եզդիշեր մեծ իշխանից, ուստի իր հավատարիմներից ոմանց առանց որևէ մեկի գիտություն ուղարկեց Եզդիշերի մոտ, ասելով. «Քեզ հայտնի է, որ վանա իշխաններն ու Սուվեյման բեկը իմ թշնամիներն են. արդ՝ ոչ մի տեղից ինձ փրկության հնար չկա, բացի քեզնից, ուստի պարտավոր ես շտապ ինձ օգնության հասնելու:

Իսկ մեծ իշխան Եզդիշերը հրաման տվեց իր մի իշխա-

նի, որի անունն էր Միրաբեկ՝ առնել զորք և գնալ: Նա առավ իր հետ հազար հինգ հարյուր (զորական)՝ ղենքերի մեծ պատրաստությունը, մանավանդ հրացանների: Սրանք հասնեցին հասան վանա երկիրը և քաղաքի մերձակայքում հարմար տեղերում շրջում էին, թե գուցե Հուսեյին աղային ձեռք գցեն, առնեն, գնան:

Երբ փաշան տեսավ, որ Եզդիշերի զորքերը եկել են Հուսեյին աղային տանելու, մտածեց իր մտքում իմացավ, որ նրա գնալուց հետո ինքը մենակ է մնալու, ուստի ինքը շտապեց. Հուսեյին աղայից շուտ իր ծառայողներով ելավ վան քաղաքից և գնաց, ուր կամեցավ:

Բայց թնդանոթը մշտապես վերին բերդից ծեծում էր ներքին քաղաքը և ավերում: Աղուհացքի առաջին շարաթում սկսեցին թնդանոթաձուլությունը, որը տևեց մինչև հոգեպալուստը*, ուստի բոլոր քաղաքացիները, իշխանները, ազնվական ու ռամիկ ծանձրացան: Մեծամեծները, ճորտապետերը (քրիստոնյա տղաներից կազմված զորամասի պետ) խորհուրդ արին, թե մի մարդու համար ինչու այսքան շարշարանք կրենք. բռնենք Հուսեյին աղային և տանք իրեն պահանջողների ձեռքը: Ոմանք այս մտադրությունը հայտնեցին Հուսեյին աղային, իսկ նա կամեցավ, որ այդ խորհրդակցությունը գլխավորներին, որոնք ճորտապետեր էին, որևէ հնարքով սպանելու Այս մտադրությունը ևս հայտնվեց ճորտապետներին և այլ գլխավորներին: Ուստի առաջնորդ լուսանալիս ճորտապետերը և այլ գլխավորներ առան իրենց նըշանները դրոշակը և գնացին ներքին բերդի այն դուռը, որը կոչում են Իսկալի դուռ: Դրոշակը տնկեցին պարսպի վրա և աղաղակեցին, թե՛ «Ծառան դարձավ, ծառան դարձավ»: Երբ ազնվական զորքերը այս լսեցին, բոլորը առան իրենց ղենքերը և ընթացան իրենց դրոշակի տակ: Մնաց Հուսեյին աղան ինքը մենակ, իր որդիներն ու ծառաները: Ուստի վախեցավ Հուսեյին աղան, թե գուցե իրեն բռնեն: Այդ ժամանակ ծառաները Հուսեյին աղային պարանով կախեցին ներքին բերդի պարսպից, որ իջավ, գնաց միացավ Եզդիշերի

* Աղուհացքը մեծ պատն է, իսկ հոգեպալուստը զատիկից 50 օր հետո է, նշանակում է 100 օր ամբակոծել:

գորքին: Իսկ Եզդիշերի գորքերը առան Հուսեյին աղային, գնացին Շատախ, այնտեղից Զուլամերկ Եզդիշերի մոտ. այս էլ այսպես:

Գ Լ Ո Ւ Ե Խ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՊԻՂՄ ՉՈՄԱՐԻ ՍԱՏԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Երբ Սուլեյման բեկն ու Չոմարը ավարելով կողոպտեցին Վարագա վանքը և առան, գնացին Խոշար, այնտեղ մնացին մինչև հայտնություն հրահանք*, ապա լրտեսները եկան նրանց պատմեցին, թե ահա Հուսեյին աղան այսինչ օրը կլնում է Ջուլամերկից և գնում է Խոնդկար թագավորի մոտ: Հայնժամ Սուլեյման բեկի կամքով ու խորհրդակցությամբ Չոմարը առնելով հարյուր մարդ՝ գնաց Բերկրիի ու Արճեշի վրա Հուսեյին աղայի ճանապարհը պահելու, թե գուցե սպանի նրան:

Իսկ թագավորի այս հրամանը, որ վաղ ժամանակից Չոմարի մասին եղել էր, թե Չոմարը որ երկրում էլ երևա, զորապետները իրենց զորքերով կովեն նրա դեմ և սպանեն, ուստի Կարինի փաշան, երբ լսեց Չոմարի գալու մասին, մի ոմն իշխանի շորս հարյուր մարդով ուղարկեց Չոմարի հետևից: Սրանք եկան Չոմարին հանդիպեցին Կեղի²²⁴ գավառում, որտեղ և մարտնչելով կովեցին Չոմարի դեմ և նրան հաղթեցին, քանզի Չոմարի զորքը կազմված էր հարյուր մարդուց, իսկ նրանց շորս հարյուր էր: Ուստի Չոմարի զորքից ոմանց սպանեցին, ոմանց փախցրին, իսկ ինքը Չոմարը միայն ութ մարդով ելավ ինչ-որ կողմ ու ազատվեց նրանցից: Կամեցավ ևս դառնալ, գնալ Խոշար Սուլեյման բեկի մոտ: Ծանապարհ ընկավ, եկավ հասավ Ոստանի կապանը²²⁵:

Իսկ Ոստանի հարկ առնողը, որ ճանապարհը պահում է և տուրքը առնում ճանապարհորդներից, հեռվից տեսավ Չոմարին և իմացավ, որ Չոմարն է, ինքը աճապարհներով դաշույնը իրենից հեռու գցեց և սկսեց այստեղ-այնտեղ որոնել:

* Հիսնակ կամ հիսունը՝ զատկից մինչև հոգեզալստյան տոնը, որ կազմում է հիսուն օր:

շրջել: Այս արեց այն պատրվակով, որպեսզի չգիտենան, որ ինքը Ոստանցի է և սպանեն: Բայց և Չոմարն էլ հեռվից տեսավ այդ մարդուն և իր մարդկանց ասաց. «Թե մեզ որևէ վնաս հասնի այս մարդուց կհասնի, ուստի երբ հասնեք նրա մոտ, սպանեք նրան և մի թողնեք»: Չոմարն ու իր մարդիկ եկան հասան այդ մարդուն, հարցրին նրան, թե ինչի համար է շրջում. իսկ նա խարեց նրանց և ասաց. «Ծանապարհորդ եմ, այստեղ եկա, կորցրի իմ դաշույնը, այժմ շրջելով որոնում եմ, որ գուցե գտնեմ այն»: Եվ մարդուց այս լսելով՝ իրենք սկսեցին նույնպես որոնել ճշմարտությունը իմանալու համար: Փոքր-ինչ այստեղ-այնտեղ շրջելով դաշույնը գտան, և դրանով համարեցին, թե իրոք ճանապարհորդ է մարդը, ուստի շտպանեցին, այլ թողին, որ գնա: Քանի որ այդ մարդը հմուտ էր վայրերին, նախքան Չոմարի կապանն անցնելը մի թաքուն ձորակով հասցնեց հասավ գյուղը և զղբականներին ասաց, թե ահա Չոմարը եկել է կապանը: Այս լուրը անմիջապես տարածվեց բոլոր զորականների մեջ, որոնք բոլորը կրակի նման ձիարշավ ընթացրով գնացին՝ ոմանք դեպի կապանը, իսկ ոմանք էլ դեպի վերին ճանապարհը, երկու ճանապարհն էլ բռնեցին: Իսկ Չոմարը ոչ թե գնաց վերին ճանապարհով, այլ կապանի ճանապարհով եկավ մտավ կապանը, որով կամենում էր անցնել:

Այս կապանը հետևյալ ձևով էր. շատ բարձր քարածալո էր, քարածալոի ներքև ծովն է ծովացած անհուն խորությունը, որ միայն աստծուն է հայտնի նրա խորության որքանությունը: Բայց շատ հին ու վաղնմի ժամանակներից քարածալոի կտրծքը իմաստություն էր և ծանր աշխատանքով, քարհատ արհեստավորներով քարը կտրել են և ճանապարհ են արել, որով ուղեորներ են գնում. բայց ոչ թե լայն, այլ այնքան միայն, որ մի դրաստ կարող է գնալ, ոչ թե երկու:

Իսկ Չոմարը, որ կապանի ճանապարհը մտած գնում էր, չգիտեր, որ այնտեղ մարդիկ են հավաքված իր համար և պահում են կապանի բերանը, ուստի անհող գնում էր: Երբ հասավ կապանի այս կողմի ելքը, իմացավ այդ, անասելի վախից ահ ու սարսափով բռնվեց, որովհետև առաջ՝ ընդդեմ նրանց գնալ, վախենում էր, թե գուցե հրացանով խփեն, սպանեն, ևս դառնալ, որտեղով եկել էր, չէր կարող, քանզի

տեղը շափազանց նեղ էր. ուստի բոլոր կողմերից անել վիճակում մնաց: Չոմարը նայելով տեսնում է իրեն մոտիկ փոքր ինչ գառիվայր տեղ, իսկ քարերի հոսքը իջնելով մի նեղ ձորակ հասնում է ծովեզրը: Թեպետ դժվարին էր, այլ սպանման երկյուղից Չոմարը իջավ ձիուց ցած, բռնեց սանձը և նրանով ինքն ու ձին իջան ծովեզրը. ապա հեծավ ձին, բռնեց երիվարի սանձը. ամենաքաջ պատրաստակամությամբ իրեն հավաքեց և երիվարը քշեց ծովի մեջ: Երբ երիվարը քշեց ծովը, սկզբում խորասուզվեց, գրեթե հասավ ծովի հատակը, քանզի երկար ժամանակ անհայտացավ, շերեաց: Եվ երբ անցավ որոշ պահ, այն մարդիկ, որոնք կապանի բերանն էին պահում, տեսան, որ հեռու տեղում ելան ջրի երեսը երիվարն ու Չոմարը, և այնքան հեռու տեղ դուրս եկան և երևացին, որ հրացանի գնդակը շեր հասնի, քանի որ կամեցան կրակել և սպանել նրան: Եվ որովհետև գնդակը շեր հասնի, ուստի շկրակեցին: Եվ շատ գովեստների արժանի այն երիվարն էր, որ վերցրած իրեն նստածին տանում էր ոչ թե իբրև ցամաքային կենդանի, այլ իբրև ջրային կենդանի գնում էր լողալով, ջնշում էր, փնշում էր, փռնգտում էր, ծովի ջրերի անհատելի խորությունը շարժելով կտրում էր և գնում լողալով: Գնաց, հասավ ծովեզրը և ելավ ցամաք Ոստանի կողմում:

Երբ Չոմարը ցամաք ելավ, չգիտեր սահմաններն ու ճանապարհները, կամ վայրի ցամաքային ու տղմային տեղերը, ուստի տագնապալից երկյուղի պատճառով երիվարը ուղիղ քշեց իր դիմացի կողմը և գնում էր [կարծես] ոչ թե գետնի վրա լող, այլ օդով: Գնալով հանդիպեց շատ խիստ տղմուտ տեղի, որը շատ լայն էր ու խոր: Նաև Չոմարը ինքը գիտեր ու տեսնում էլ էր, որ գավառի զորքերի բազմությունը գրոհ պուլով, ընթանալով հետամտում են իրեն: Եթե դառնա, գնացամաքային վայրով, վախենում է ընկնի նրանց ձեռքը, ուստի անմիջապես մտրակեց երիվարը, քշեց տղմի մեջ: Թեպետ քիչ տեղ գնաց, բայց տղմի շատությունը արգելեց ներան իր մեջ շատ ժամեր: Մեծ ջանքով ու շարշարանքով, այստեղ-այնտեղ տանել-բերելով հագիվ երիվարը տղմից

դուրս եկավ և իր հետ հանեց Չոմարին: Երբ Չոմարը տղմից ելավ, երկրորդ անգամ երիվարը քշեց իր դիմացի կողմը փախչելու համար, բայց, ինչպես ասացինք, անտեղյակ էր վայրի որպիսությունը, չգնաց ճանապարհի ու կամուրջի կողմը, որ հենց մոտ էր, նաև ստույգ կաղատվեր, եթե գնացած լիներ, այլ գնաց իր դիմացի կողմը: Գնալով հանդիպեց Շամիրամի առվին, որից անցնելը անհնար էր, բացի կամուրջից, քանի որ (առուն) լայն էր ու խոր և երկու կողմերից թմբերը բարձր, որից մարդ ու ձի չեն կարող իջնել ու կլնել: Այս առվի եզրով Չոմարը որոշ շափով գնաց գառիվար և ետ դարձավ եկավ Կեմ կոչված գյուղը:

Մինչդեռ այս բոլոր փորձություններն էին անցնում Չոմարի զլխով, երկրի զորքը գրոհ տալով կրակ կարած ընթանում էր Չոմարի հետևից, Եկան հասան Շամիրամի առուն և հապճեպով բռնեցին կամուրջի անցքը, քանզի վայրին լավ ծանոթ էին: Նրանցից (զորականներից) ոմանք եկան Կեմ գյուղը և այնտեղ գտան Չոմարին, որ իջել էր ձիուց և դաշտում ինչ-որ տեղ թաքնվել էր: Նրանք շրջապատելով պաշարեցին Չոմարին, որը իր հետ ուներ շորս հատ թափանչա հրացան, որոնք ուղղեց կրակելու, բայց շրջվեցին, քանզի վառողը թրջված էր ծովի ջրի ու տղմի մեջ: Մնացել էր մտահոգության մեջ, որովհետև քաջությունը լքել էր նրան: Իսկ երկրի զորքը շրջապատել էր նրան: Նրանցից մեկը, որի անունն էր Շեխուբեկ, քաջությամբ աճապարեց և հրացանը ուղղեց Չոմարին, ձգելով խփեց զլխին և այնտեղ սատկեցրեց շար ու անիծյալ այն Չոմարին: Նույն ժամին կտրեցին զլուխն ու աջ ձեռքը, առան և ձին, տարան իրենց Եզդիշեր իշխանի մոտ: Եզդիշերը ձին պահեց իր մոտ, իսկ Չոմարի զլուխն ու աջ ձեռքը նշանով ուղարկեց Կոտտանդնուպոլիս թագավորին: Թագավորը տեսնելով զլուխը և լսելով սպանման հանգամանքների մասին՝ դրա համար ուրախացավ, շատ թանկագին պարգևներ պարգևեց Եզդիշերին, նաև Սղերթի²⁶ երկիրը հանձնեց նրա խնամքին, որ արդեն իսկ Եզդիշերը տիրում է Սղերթի երկրին և որքան ինքը կենդանի է, կտիրի:

Բայց պատմողներն ասացին, թե Չոմարը մի տիկ գինի էր կապել ձիու փորին, երբ քշեց ծովի ու տղմի մեջ: Նաև ձիու

տապալակը Չոմարը միշտ ձիու վրա էր պահում, ուր էլ գնում էր՝ Երբ ձին քշեց ծովի ու տղմի մեջ, տապալակը ձիու վրա էր և բամբակը, որ տապալակի մեջ դրել ու կարել էին, ասացին, թե երեք լիտր էր՝ Իսկ ձին հսկայաձև էր, բարձրահասակ, զորեղ, լայնալանջ, երկայնավիզ, կատաղուզն, գեղեցկատես, սիզաճեմ. մարդու նման որոշում էր ժամանակն ու դիպվածը և ճանաչում իր տիրոջը: Այժմ Եղգիշեր իշխանի մոտ է, նրանից հինգ քուռակ են ստացել:

Արդ՝ պիղծ Չոմարի սատակումը այսպես հղավ, ինչպես որ պատմեցինք: Ժամանակն է, որ այսուհետև պատմենք Սուլեյման բեկի սատակման և Սուրբ նշանի Վան քաղաք վերադարձի մասին, քանզի մեր պատմությունը Սուրբ նշանի մասին է և ոչ թե անօրեն մարդկանց:

Գ Լ Ո Ի Խ Խ Ա

ՊԱՏՄԱՌԹՅՈՒՆ, ՍՈՒԼԵՅՄԱՆ ԲԵԿԻ ՍԱՏԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես նախօրոք պատմեցինք, Սուլեյման բեկը կողոպտեց Վարագա վանքը, վերցրեց բոլոր անոթները և Ավագ Սուրբ նշանը և տարավ Խոշարի բերդը ու այնտեղ էր պահում:

Հոգվոց վանքը, որ հիշատակվում է Սրբուհի Աստվածածնի վերափոխման պատմության մեջ, սուրբ առաքյալ Բարդուղիմեոսի կողմից է շինվել, և այնտեղ է պահվում Սրբուհի Աստվածածնի կենդանազիր պատկերը²²⁷: Այս վանքը Խոշարի երկրում է գտնվում և Սուլեյման բեկի իշխանության ներքո: Երբ սրա համար Սուլեյման բեկը եկավ Խոշար, իր մոտ կանչեց Հոգվոց վանքի առաջնորդ տեր Պետրոս եպիսկոպոսին և իբրև նրան երախտավոր ձևանալով ուրախությամբ ասաց. «Վարագից բերի ձեր մեծ Սուրբ նշանը, այժմ այն քեզ եմ տալիս, որպեսզի տանես, դնես մեր վանքում, այնտեղ մնա»:

Իսկ եպիսկոպոսը մաքրով իմանալով և խորհելով, թե այն իբրևն չի մնալու, ուստի պատասխանել էր. «Անհնար է, որ այդ Սուրբ նշան մեզ մոտ մնա, որովհետև ի բնե այդ նրանց

հայրերի ու պապերի սեփականությունն է և ոչ մերս: Եվ Պետրոս եպիսկոպոսը Սուրբ նշանը չէր տարել Հոգվոց վանքը, թեպետ Սուլեյման բեկը շատ անգամ էր ասել. «Եթե դու չտանես, ես այլ քահանաների կտամ և կուղարկեմ վանքը»:

Եպիսկոպոսը պատասխանել էր. «Երբ դու Սուրբ նշանը վանք ուղարկես, ես իմ միաբաններին կառնեմ, դուրս կգամ այնտեղից և կգնամ, (այդ ժամանակ) դու դիտես և քո վանքը»: Ապա Սուլեյման բեկը թողել էր և չէր ուղարկել:

Իսկ հայազուն քրիստոնյաները, որոնք Վան քաղաքում էին ու նրա գավառներում, բոլորը մեկ եղած սրտաբեկ, մեջքակոտոր, տրտմաթախիծ, անմխիթար լինելով մշտապես սուգ հագան Վարագը կողոպտելու համար, մանավանդ Սուրբ նշանի համար: Մշտապես հալվում, մաշվում էին, հեծում ու հառաչում էին, թե ինչպես արդյոք Սուրբ նշանի փրկության հնար կլինի: Նրանցից երևելի, բարեպաշտ քրիստոնյա մի մարդ՝ Վան քաղաքի խոջաներից, որ Խանենց խոջա Թումայի որդին էր՝ Մարխաս շեղերի անունով: Այս Մարխաս շեղերին վերցնելով մեծ նվերներ եկավ Խոշար Սուլեյման բեկի մոտ, նվերները մատուցեց և շատ օրեր այնտեղ մնաց՝ Նաև շատ մարդկանց միջնորդ անելով՝ աղաչում էր Սուլեյման բեկին Սուրբ նշանի փրկության համար: Բայց նա չհամաձայնվեց տալ Մարխաս շեղերին հազար ղուռուշից սկսեց, հասավ մինչև յոթ հազար ղուռուշ, որ տա Սուրբ նշանը, բայց Սուլեյման բեկը չտվեց: Շատ օրեր այնտեղ մնալուց հետո Մարխաս շեղերին, երբ Սուրբ նշանը չտվին, Խոշարից ելավ տրտում ու թախծոտ սրտով գնաց Վան քաղաքը:

Եվ ինչպես մարգարեն է ասում, թե «Մեղավոր մարդուն իր շարիքները կորստի են մատնում», այսպես էլ Սուլեյման բեկի շարիքները նրան կորստի մատնեցին հետևյալ ձևով:

Սուլեյման բեկի իշխանները՝ տասը մարդ կամ էլ ավելի՝ մտածեցին միասին սպանել Սուլեյման բեկին, որովհետև նրանք ասում էին, թե՝ «Որքան Սուլեյման բեկը իշխան է եղել, մեր երկիրն ու աշխարհը ամբողջովին ավերվեցին, որովհետև երբեք չղաղարեցին հեծյալ շարժումը, ավա-

* Սաղմ. ճլթ 12:

դակտութիւնը, ավարը, կոփվը, վրդովութիւնը. և քանի սա կենդանի է, զհասնք որ խաղաղութիւն չի լինի, ուստի սրան սպանենք, որ մեր աշխարհի խոտովութիւնը վերջանա՞:

Այս մտադրութիւնը որոշ մարդիկ իմացան և հայտնեցին Սուլեյման բեկին, թե՛ ռոք երեք փառավոր իշխանները, որոնք են՝ մուլա Ղաստամը, Մուստաֆա բեկը և Իբրահիմ բեկը դարձել են զխավոր և այլ իշխանների հետ մտածել ենք քեզ սպանելու: Սուլեյման բեկը բռնեց այդ երեք իշխաններին նետեց բանտ՝ երկաթե շղթաներով կապած: Երեք իշխանների բանտարկումը տեղի ունեցավ աղուհացքի առաջին շաբաթում: Իսկ կապված իշխանները աղերսագրով, միջնորդով, շատ ձևերով ազալանք ու խնդրանք արին Սուլեյման բեկին, որ իրենց ազատի, բայց նա չազատեց:

Երբ իշխանները համոզվեցին, որ չի ազատի, այլ կսպանի, ուրիշ հնարներ մտածեցին. իրենց մոտ բերին Սուլեյման բեկի աներոջը, որի անունն էր Մուստաֆա բեկ: Շատ օրեր ու շատ ձևերով խոսեցին նրա հետ, որ զուցե կարողանա մի հնար գտնել իրենց փրկութեան համար:

Խորհելիս, խոսելիս իշխանները Սուլեյման բեկի աներոջը ասացին. «Եթե դու կարողանայիր մեզ փրկել, մենք քեզ Սուլեյման բեկի փոխարեն մեզ համար իշխան ու պարոն կնշանակենք, քանզի դու իշխանի որդի ես: Ե՛վ իրոք այս Մուստաֆա բեկը իշխանի որդի է: Արդ՝ եթե դու սպանես Սուլեյման բեկին, անպատճառ քեզ Սուլեյման բեկի տեղը իշխան կդնենք: Ե՛վ երբ աները չէր հավատում, շատ երդումներով և պնայես խոսքերով ուխտ հաստատեցին այնքան, որ իշխանների խոսքերին հավատաց, քանզի խորագետ մարդ չէր, այլ սլարզամիտ էր, ուստի և հավատաց:

Սրանից հետո այսպիսի բան հնարեցին. այս երեք կապված իշխաններից մեկի որդին և երկուսի երկու ծառաները իրենց սրերը թաքցրին իրենց հագուստների տակ, արտաքուստ կանացի զգեստ հագան և սավանով ծածկեցին ու ձևացան իբր իսկական կին:

Կանանց կերպարանք առած այս երեք տղամարդիկ ու Սուլեյման բեկի աներ Մուստաֆա բեկը մի օր լույսը բաց-

վելու հետ ելան, ուղղվեցին ու զնացին բերդը: Եկան հասան բերդի առաջին դուռը, բերդի դռնապանը և մյուս մարդիկ տեսան, որ Սուլեյման բեկի աներն է գնում և իր առջև ունի մի փոքրիկ մատղաշ մանուկ՝ իր որդին, և երեք կանայք նրա հետևից: Երբ եկան, հասան բերդի դուռը, այդ ժամանակ դռնապանները հարցում արին Մուստաֆա բեկին կանանց մասին. իսկ նա ասաց, թե կանայք կապված իշխանների կանայք են, գնում են Սուլեյման բեկի կնոջ մոտ նրան խնդրելու, որպեսզի նա բարեխոսի Սուլեյման բեկի առջև սրանց ամուսինների համար: Երբ այս խոսքը զննապանները լսեցին, թույլ տվին զնալ: Նրանք անցնելով բերդի բոլոր դռներից, հասան մինչև վերջին դուռը: Այնտեղ նույնպես հարցում արին դռնապանները, Մուստաֆա բեկը սրանց ևս պատասխանեց առաջինի նման, ուստի զննապանները թույլ տվին, քանզի ով էլ տեսնում էր Մուստաֆա բեկին և նրա տղային առջևում և լսում պատասխանը, աներկբայորեն հավատում էին, քանի որ համարում էին, թե ինչպես երեկ և նախորդ օրը գնում դալիս է Մուստաֆա բեկը Սուլեյման բեկի մոտ, այդպես էլ այժմ, ուստի թողնում էին, որ զնա:

Նրանք անցնելով բոլոր դռները՝ զնացին հասան Սուլեյման բեկի ապարանքը. մոտեցան, կանգնեցին տան դռանը, որտեղ Սուլեյման բեկը զիշերը քնում էր և այդ ժամին տակավին անկողնում էր գտնվում, բայց արթուն էր: Սուլեյման բեկի կինը և երկու աղախինները ևս տանն էին: Նախ ներս՝ տուն մտավ Մուստաֆա բեկը, Սուլեյման բեկը երեսը բացեց և իր աներոջը տեսավ տանը և երեք կանանց տան դռան արտաքնամասում, դարձյալ վերմակով ծածկեց երեսը, որովհետև կարծեց, թե կերպավորված կանայք իրոք կին են, և կարծեց կապված իշխանների համար բարեխոսելու են եկել, ուստի իր երեսը ծածկեց:

Իսկույն փոթորիկի նման ընթացան կերպավորված կանայք և ընկան Սուլեյման բեկի վրա, իրենց սրերով ծակոտելով խոշխոջեցին, սպանեցին Սուլեյման բեկին:

Սուլեյման բեկի սատակումը տեղի ունեցավ աղուհացքի հինգերորդ շաբաթվա ուրբաթ օրը, ճիշտ այն օրը, երբ Սու-

լեյման բեկը Վարազը կողոպտեց, որովհետև տարին բոլորեց նույն օրը, երբ ինքը սպանվեց:

Սուլեյման բեկի սպանութիւնից հետո Սուլեյման բեկին սպանող երեք տղամարդիկ հապճեպ եկան, բացին բանտի դուռը և կապանքից ու բանտից հանին երեք կապված իշխաններին: Սրանք բանտից դուրս գալով եկան բերդի դուռը, եկան ու նրանց մտտ հավաքվեցին նրանց ուխտադիր ընկերները, ուրիշ շատ մարդիկ և աղմկելով խոսում էին: Իսկ երեք սպանող մարդիկ դարձյալ մտան բերդը և գնացին այն տունը, որտեղ սպանեցին Սուլեյման բեկին, առան նրա գլխակը, պատեցին ինչ-որ ձորձով և դուրս բերին բերդի դուռը ամբոխված մարդկանց մեջ, թե ձեր աչքով տեսնո՞ւ հավատացե՞ք, որ ստույգ ու անկասկած Սուլեյման բեկը սպանվեց: Երբ գեշը գցեցին նրանց մեջ, նույն ժամին երեք սպանողներն ու Սուլեյման բեկի աները հապճեպ դարձան, մտան բերդը, փակեցին բերդի դուռը և իրենցով արին բերդը այն մտքով, թե մենք ենք Սուլեյման բեկի սպանողները, ուստի մենք ենք իշխան լինելու նրա տեղում:

Իսկ Սուլեյման բեկի կինը ելավ բերդի պարսպի գլուխը, շատ գոռաց դեպի քաղաքը, բայց բարձրութեան պատճառով նրան ոչ ոք չսեսց: Երբ կինը տեսավ, թե քաղաքում նրա ձայնը լսելի չեղավ, առավ Սուլեյման բեկի գլխանոցը և նրա քիշմիրի շալը, որովհետև երբ նրան սպանեցին, գլխանոցը գլխին էր և արյունաթաթախ: գլխանոցը փաթաթեց շալով և նետեց քաղաքի մեջ: Գլխանոցը գնաց, ընկավ խոջա Վաստ անունով մի հայ քրիստոնյայի տան առջև: Սա տեսնելով ճանաչեց, որ դա իշխանի գլխանոցն է, բայց արյունաթաթախ լինելով երկյուղակասկած մնաց, թե մի գուցե իշխանին սպանել են: Սրանք անմիջապես աճապարանքով հասան բերդի դուռը և տեսան, թե իրոք Սուլեյման բեկը սպանված էր:

Այս խոջա Վաստ ասածս բարեկամ էր Սուլեյման բեկին, որովհետև սիրալիր հովանավորութուն և շատ այցելութուններ էր վայելում նրա կողմից: Սա ծածուկ մարդիկ ուղարկեց և հայտնեց Սուլեյման բեկի եղբայրներին, որոնց անուններն էին՝ ավագին՝ Իբրահիմ բեկ, կրտսերին՝ էվլիա բեկ: Նրանցից յուրաքանչյուրը իր բերդում էր գտնվում, իսկ

բերդերը շատ հեռու շէին խոշարից: Սրանք լսեցին թե չէ, զորականներով շտապ հասան խոշար: Երբ եկան բերդի դուռը, սպանող մարդիկ նրանց համար դուռը բաց չարին, որոնք մտել էին բերդի մեջ: Բոլոր մարդիկ քիշ օրեր մնացին այսպիսի իրարանցման մեջ: Մի օր իրարանցման ժամի Սուլեյման բեկի եղբայր էվլիա բեկը սուսերով հարվածեց Մուլա զատումին և սպանեց նրան՝ վրեժխնդիր լինելով Սուլեյման բեկի արյան:

Այս անցքերից հետո Սուլեյման բեկի կինը, որ տակավին բերդում էր, մի գիշեր առանց որևէ մեկի գիտութեան միայն ինքը բերդից պարան կախեց և վեր դեպի բերդը քաշեց Իբրահիմ բեկի մարդկանցից մեկին. նրանք վեր քաշեցին ևս տասը մարդ, որոնց հետ նաև Իբրահիմ բեկին: Ապա այս Իբրահիմ բեկը և իր մարդիկ հետամուտ եղան Սուլեյման բեկին սպանող մարդկանց, որոնք այնտեղ բերդում էին: Նրանք փախան, մտան զինանոցը. Իբրահիմ բեկը հրդեհեց զինանոցը, որից հրդեհված վառողը տունը վեր թոցրեց, սրա հետ նաև մարդկանց հօդս ցնդեցրեց, որոնք կտոր-կտոր եղած վայր էին թափվում:

Այնուհետև Իբրահիմ բեկը տիրացավ բերդին և ամբողջ երկրին, իսկ սրա եղբայր էվլիա բեկը գնաց իր տեղը՝ առաջվա բերդը, որ նախապես բնակվում էր. բերդը կոչվում էր Աբաղա²²⁸: Արդ Սուլեյման բեկի սատակումը պատմեցինք, այսուհետև կպատմենք Իբրահիմ բեկի իշխանութեան և սուրբ Նշանի Վան քաղաքը դարձի մասին:

Գ Լ Ո Ւ Ե Կ Ր

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԻԲՐԱՀԻՄ ԲԵԿԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԸ ՎԱՆ ՔԱՂԱՔ ԳԱՐՁԵՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արդ՝ այս ամենին իբրև ավարտ [պետք է ասենք], որ էվլիա բեկը վերադարձավ գնաց Աբաղա կոչված իր առաջվա բերդը, իսկ Իբրահիմ բեկը մտավ խոշարի բերդը և իր իշխանութեան ներքո նվաճեց բերդը և սրա ողջ գավառը և օր առ օր քիշ-քիշ հարցնելով տեղեկացավ իրենց բոլոր թշնամիների մասին, նաև նրանց մասին, որոնք ցանկանում էին Սուլեյման

բեկի սպանութիւնը: Օրըստօրն քիչ-քիչ նրանց բոլորին կոտորեց, ոչ մեկին չլինալեց՝ ոչ ծերերին, ոչ երեխաներին, ոչ տղամարդկանց, ոչ կանանց, այլ բոլորին իսպառ ջնջեց: Նաև բռնեց Սուլեյման բեկի կնոջն ու քրոջը և բանտ դրեց, բազմաձև շարշարանքներով շարշարեց նրանց, որպեսզի Սուլեյման բեկի գանձերի մնացուկը ցույց տան: Երբ ինչ որ գտաւ, առավ, հետո նրանց էլ սպանեց:

Սուլեյման իբրահիմ բեկը կրկին իր մոտ կանչեց Շոզլոց վանքի Պետրոս եպիսկոպոսին և ասաց. «Քեզ եմ տալիս Սուրբ նշանը, տար մեր վանքը և այնտեղ պահի, որ այնտեղ մնա»: Պետրոս եպիսկոպոսը սրան էլ այնպես պատասխանեց, ինչպես Սուլեյման բեկին. Սուրբ նշանը շտարաւ վանքը, այլ մնաց խոշարի բերդում:

Այն օրից հետո, երբ Սուլեյման բեկը Սուրբ նշանը վարագրեց հանեց, բերեց խոշար, գրեթե ցասումն ու պատուհասը տեղաց, լցվեց խոշարի երկիրը, որովհետև հողը բերք չէր տալիս, իսկ եթե լինում էր, հաղիվ սերմը վերցնում էին, հեծյալները արշավանքով ու խռովութեամբ գավառը լցվեց, նաև կենդանիները չէին աճում, այլ դեռևս պակասում էին: Այլև ամռան օրերին՝ սուրբ Գրիգորի պատին²²⁰ սաստիկ ու անշափ ձյուն եկավ, շատերը ասում էին, թե երկու կանգուն* նստեց, իսկ բոլոր անասունները առանց արտախ մնացին ձյան շատութեան պատճառով, որի հետևանքով բազմաթիվ անասուններ սովամահ եղան: Սրանից հետո նրանց երկրում անասունների անկում եղավ. ով հազար գլուխ ոչխար ունեք, հարյուր գլուխ հագիվ մնաց, ուստի խոշարի գավառի բնակիչները հավաքվեցին Իբրահիմ բեկի մոտ և հայտնեցին երկրի ավերման մասին և աղաչում էին սուրբ նշանը իր տեղը դարձնել, որպեսզի պատուհասը հեռանա իրենցից:

Նաև Իբրահիմ բեկը գողեցավ, քանի որ գողութեան ցավ հայտնվեց մարմնում, այլև ինչ-որ ցավ՝ որպես թե քամի գոյացավ նրա մեջ, որ բռնեց մեջքը, աղբերը և մշտապես տանջում էր նրան: Նաև Իբրահիմ բեկի կինը միշտ թախանձում էր նրան և պեսպես խոսքերով խոսում էր նրա հետ,

* Կանգունը արմունկից մինչև միջնամատի ծայրն է:

որպեսզի Սուրբ նշանը իր տեղը վերադարձնի: Վերոհիշյալ պատճառներով Իբրահիմ բեկը բարեհաճեց Սուրբ նշանը վերադարձնել իր տեղը:

Այս բանը հայտնվեց վան քաղաքի ժողովրդին, իսկ նրանք լցվեցին երկնային խնդութեամբ: Վերոհիշյալ Մարխա շեխբին իսկույն իր հետ առավ ժողովրդից ոմանց և հապճեպով հասան խոշարի բերդը, գնացին Իբրահիմ բեկի առջև, նրան ասացին աղաչական խոսքեր և նրա առջև դրեցին կանխիկ երկու հազար դուռուշ և առան Սուրբ նշանը և անոթների մնացորդը՝ թե խաչ, թե այլ ինչ, եկան վան քաղաքը: Սրա համար գավառի ողջ քրիստոնյա բնակչությունը վրա թափվելով գալիս էին Սուրբ նշանին երկրպագելու և արտասուքներով իրենց գոհունակութունն էին հայտնում աստծուն, որ Սուրբ նշանը կրկին բերեց իրենց մոտ:

Իսկ շուրջառններից երկուսը Չոմարն էր առել, իր համար կարել էր անդրավարտիք և հազել Սուրբ նշանը այլևս չըտարան վարագա վանքը՝ կասկածելով ու երկյուղելով հիշեցին անցյալ արհաւիրքը, այլ պահեցին վան քաղաքի Տիրամայր անվանված եկեղեցում:

Սուրբ նշանի վերադարձը վան քաղաք տեղի ունեցավ մեր 1104 [1655] թվականին շնորհներով ու մարդասիրութեամբ մեր տեր Հիսուս Քրիստոսի, որին փառք հովիտյանս. ամեն:

Գ Լ Ո Ւ Ե Խ Գ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԵՐՋԻՆ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐՍ ՀԱՅՏԵԱՐԵՐՎԱՍ ՆՇԽԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ
ՎԱՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՊԱՀՎԱՍ ԷՒՆ ՀԻՆ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Արդ՝ այն ժամանակ, երբ պարսից թագավորն էր մեծ, Առաջին Շահ-Աբաս կոչվածը, հանեց ջուղայեցի ժողովրդին հին Զուղայից և նրանց քշեց տարավ Պարսկաստանի Սպահան քաղաքը: Իսկ ջուղայեցի ժողովուրդը չկարողացավ իր ողջ ունեցվածքը վերցնել և իր հետ տանել, քանզի թագավորի հրամանը՝ ուղղված իշխաններին, շատ խիստ էր: Նրանք սրով շտապեցնում էին նրանց հապճեպ ելնել տեղից ու գնալ,

ուստի շկարողացան իրենց հետ վերցնել իրենց ունեցվածքը, այլ թաքցրին, պահեցին սենյակներում, հորերում, վիհերում և այլ պատշաճավոր տեղերում ու այդպես թողած գնացին:

Իսկ շրջակա գյուղերի ու գավառների բնակիչները, որոնք մոտ էին Հին Զուղային, գիտին պահուստների մասին, որ ջուղայեցիները արել էին, ուստի նրանք գալիս էին միշտ փնտրում, որոնում էին, պեղում էին հողն ու քարը հարստություն գտնելու համար, և շատերը շատ բան էին գտնում:

Այնպես եղավ, որ կրոնով մահմեդական Մեհրամ անուսով գյուղից այլազգի մի մարդ եկավ Հին Զուղա ինչք որոնելու: Եկավ վերին կաթան անվանված եկեղեցին. այնտեղ որոնելիս ավագ խորանի արևելյան պատի մեջ գտավ մի խեցե աման, որի մեջ դրված էր մի փոքրիկ փայտե արկղ, որ է սնդուկ: Երբ խեցե ամանի միջից հանեց փայտյա արկղը, խկույն նրանից բուրեց շատ թանձր անուշահոտություն. սրանով իր հոգում այլազգի այդ մարդը զգաց, թե դրանք սրբերի նշխարներ են: Արկղի մեջ կային մեծ ու փոքր ոսկորների կտորներ և դրանց հետ կար մի կտոր մազաղաթ, որի վրա ինչ-որ գիր էր գրված: Այդ մարդը առավ արկղը ոսկորներով ու մազաղաթով տարավ իր տունը, որ տեանի թե ինչ պիտի մտածի դրա մասին: Նշխարները նրա տանը մնացին շատ օրեր: Նրա հարստությունը սկսեց օրավուր նվազել, անասուններն ու կենդանիները սատկեցին, ամեն ինչ ջնջվեց, մինչև իսկ որդիներն էլ մեռան: Մարդը հիշեց և իմացավ, թե այդ ինչ պատահեց իրեն, նշխարներից է, ուստի այնուհետև հանեց նշխարները իր տանից և տարավ մի բացօթյա վայրում քարակույտերի մեջ պահեց, որ գուցե թե տիրոջ ցասումը նրա տան վրայից վերանա, բայց չվերացավ:

Սրանից հետո այս այլազգի մարդը եկավ Սուրբ Նախավկայի միաբանություն, որ գտնվում է Գարաշամբ գյուղում և այնտեղ Շմավոն անունով մի եպիսկոպոսի հայտնեց ամեն մի եղելություն: Այս եպիսկոպոսը այդ այլազգի մարդուն վաղ ժամանակներից ծանոթ էր. եպիսկոպոսը պատվիրեց դրանք բերել իր մոտ: Եվ երբ այլազգին արկղը բերեց ու տվեց եպիսկոպոսին, բացելուն պես իսկույն անուշ հոտ բուրեց և լցրեց տունը: Եպիսկոպոսը տեսավ մասունքները և

առավ մազաղաթի կտորը ու կարդաց. մազաղաթի վրա գրված էր հետևյալը-

«Սա սուրբ Հովհաննես Կարապետի նշխարների մասն է, որ Գրիգոր Լուսավորիչը բերեց Հայաստան և դրեց Նրամ²³⁰ քաղաքում. հայոց 421 [972] թվականին բերին Զուղա: Այսքան խոսք էր գրված մազաղաթի վրա: Շմավոն եպիսկոպոսը Սուրբ Հովհաննեսի նշխարների գյուտի համար գոհացավ աստծուց և լցվեց մեծ ուրախությամբ: Այլազգիի սիրտը գրավեց, նրան ինչք տվեց և նրանից նշխարները առավ. մարդը գնաց իր տեղը:

Օրեր հետո այս բանը հայտնի եղավ Սպահան գնացած ջուղայեցի ժողովրդին, որի պետն ու զխավոն էր խոջա Նազարը: Ոչ միայն (հայտնի եղավ) ջուղայեցիներին, այլ նաև պարսից թագավորական իշխանության ներքո բնակվող բոլոր հայազգի բրիստոնյաններին:

Քանզի այս խոջա Նազարը շափազանց հղոր էր ու նշավոր, նաև սիրելի էր Շահ-Աբասին, ուստի խոջա Նազարը ջուղայեցիներին մի քանի մարդ ուղարկեց Շմավոն եպիսկոպոսի մոտ և նրանից խնդրեց նշխարների մի մասը, նաև սպանալից ու ահազու խոսքեր: Խոջա Նազարի կողմից ուղարկվածները եկան եպիսկոպոսից պահանջեցին նշխարների մասը: Խոջա Նազարի երկյուղից վախենալով՝ եպիսկոպոսը շկարողացավ թաքցնել կամ գլուխը պրծացնել ջուղայեցիներին, մտածեց նրանց տալ նշխարները: Բայց մասերից մեծ կտորը թաքուն պահեց իր մոտ. սա թխակի գլուխն էր, որ բոլոր ուսոսկորների տեղն է: Իսկ մյուս մասունքները և գրված մազաղաթը դրին միևնույն արկղում և տվին ջուղայեցիներին, որոնք տարան Սպահան քաղաքը խոջա Նազարի մոտ:

Իսկ Շմավոն եպիսկոպոսը այն նշխարը պահեց իր մոտ մինչև այս ժամանակ, երբ մեր հայոց 1103 [1654] թվականն է, երբ մեծ վարդապետ Հակոբը, որ ջուղայեցի էր, նորոգում էր Սուրբ Ստեփանոս Նախավկայի միևնույն վանքը: Շատ ու անթիվ ծախսերով և ծանր աշխատանքով եկեղեցու հիմքից մինչև ավարտը կոփածո քարերով, նաև որջ պարիսպը, սրա մեջ գտնված շենքերը, հիմքից ձեռնարկելով վերստին նորոգեց:

Շմալոնն եպիսկոպոսը եկավ մեծ վարդապետ Հակոբի մոտ, նրան հայտնեց նշխարների մասին և ասաց, թե՛ «Կամենում եմ իմ հիշատակի համար խաչ շինել և այնտեղ հանգրստանալու դնել այն նշխարը: Իսկ վարդապետը ասաց եպիսկոպոսին, թե՛ «Կանոնների մեջ հրաման չկա սրբերի նշխարները խաչի մեջ դնելու, այլ պետք է դրվի ուրիշ արկղում»: Ուստի նշխարների համար շինեցին աղյուսածև արծաթյա այլ արկղ, ոսկեզօծեցին՝ թանկագին քարեր ընդելուզելով, այնտեղ դրին սուրբ Հովհաննես Կարապետի նըշխարը և համառոտ խոսքով գրեցին այս բոլոր անցուղաքձը և դրին Սուրբ նախավկայի նույն վանքում մյուս բաղնիքի մարմարե սրբությունների հետ, որոնք այնտեղ են գտնվում և բարեխոս են բոլոր քրիստոնյաների համար, մանավանդ պահապան ու պարծանք են հայոց աշխարհի համար: Սրանք կատարում են ամեն կարգի բժշկություններ բոլոր նեղյալների համար, որոնք դիմում են նրանց. Սրանցով փառավորվում է մեր օրհնված տեր Հիսուս Քրիստոսի անունը հավիտյանս հավիտեանից. ամեն:

Գ Լ Ո Ւ Ն Խ Դ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՆՄԵՂ ՄԱՆՈՒԿ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ

Այս երանելի նահատակ Նիկողայոսը Տիգրանակերտ²³¹ քաղաքից էր, որ այժմ կոչվում է Ամիդ. ծնվել ու սնվել էր նույն քաղաքում, հասակով պատանի էր դեռ՝ մոտ տասնհինգ տարեկան, տեսքով գեղեցիկ էր, հասակով վայելուչ, ազգությամբ քրիստոնյա հայի զավակ:

Մի օր, երբ Նիկողայոսը շրջում էր շուկայում իր մշտական սովորությամբ, մի մահմեդական մարդ, որի անունն էլ նորից Մահմեդ էր, մոտեցավ Նիկողայոսին, ձեռքը քսեց երեսին և վերաբերվում էր տոփական ցանկությամբ, որպես միշտ երևում է մահմեդականների մեջ ունակություն դարձած (արուի նկատմամբ): Իսկ Նիկողայոսը նեղվելով դրանից, սաստիկ բարկությամբ իրենից հեռացնում է: Այդտեղ էր մի այլ մարդ հավատով մահմեդական, որի անունը նույն-

պես Մահմեդ էր: Նիկողայոսի հետ այժմ խաղացող այս Մահմեդը Նիկողայոսին ասաց. «Ընչպե՞ս է, որ մյուս Մահմեդի հետ սեր ես անում և մերձավորվում, իսկ ինձ հետ չես անում»: Նիկողայոսը ասաց. «Քո մեքն էլ, նրա մեքն էլ էսպես անեն»:

Նույն ժամին այս Մահմեդը ասաց մոտիկ կանգնած մարդկանց ու խանութպաններին, թե՛ «Աստծու սիրուն վկա եղեք, որ դուք ինքներդ լսեցիք, որ սա հայհոյեց մեր օրենսդիր ու մարգարե Մահմեդին»:

Բաղմաթիվ մահմեդականներ այնտեղ նրանց վրա հավաքվեցին իբրև կատաղի շներ և Նիկողայոսին հափշտակեցին տարան դատարան դատավորի մոտ: Նրանցից ոմանք դատախազ գարձան, ոմանք վկաներ, ոմանք վրեժխնդիրներ և մահվան էին դատապարտում Նիկողայոսին:

Դատավորը Նիկողայոսին հարցրեց, թե իրո՞ք հայհոյել է պատգամաբեր Մահմեդին. Նիկողայոսը պատասխանեց. «Ես չհայհոյեցի և ոչ էլ որե՛կ խոսք ասացի պատգամաբեր Մահմեդին, այլ այս մարդը մարդկանց մեջ տոփանքով էր վերաբերվում ինձ հետ և խայտառակում ինձ, ուստի ես սըրան մայր հայհոյեցի»: Իսկ Նիկողայոսի հետ խաղացող այս Մահմեդը դատախազ եղավ և ասաց, թե պատգամաբեր Մահմեդին հայհոյեց: Նաև ասաց. «Ահավասիկ երկու մարդ վկա ունենա: Այս մարդկանց բերեց, կանգնեցրեց դատավորի առջև. մեկի անունը ասում էին առևտրական Ալլաշվերդի, իսկ մյուսին՝ հավազործ Սեիդ: Սրանք եկան դատավորի առջև վկայեցին, թե մենք զրանից լսեցինք, որ հայհոյեց Մահմեդին»:

Դատավորը Նիկողայոսին ասաց. «Որովհետև այդքան մահմեդականներ են հավաքվել քո զլխին, այդ կերպ էլ կդատապարտեն. դիտեմ, քեզ կենդանի շեն թողնի, այլ կսպանեն, ուստի լսիր իմ խոսքին և եղիր մահմեդական, որ աղատվես մահվանից»: Իսկ Նիկողայոսը հանձն շառավ լինել մահմեդական: Շատ անգամ ասաց դատավորը. «Քեզ շատ փող և թանկագին ունեցվածք, գեղեցիկ կին կտամ, եթե ընդունես Մահմեդի հավատը»: Իսկ Նիկողայոսը ասաց. «Ես իմ լույս հավատը չեմ թողնի և իմ Քրիստոս աստծու ուղիղ կրոնը չեմ փոխանակի ձեր կրոնով, իսկ եթե անմեղ ինձ սպա-

նում եք, այդ դուք գիտեք»: Իսկ նրանք, որոնք վրեժխնդիր մահճեղականներ էին, ստիպում էին դատավորին մահվան վճիռ կտրել Նիկողայոսի վերաբերյալ, որ սպանեն նրան, և դատավորը վճռեց:

Իսկ մահճեղականները, որոնք շար գազանի նման ծարավի են քրիստոնյաների արյան, Նիկողայոսին ու վճիռը առան, տարան փաշայի մոտ, որի անունն է Մուստաֆա փաշա և հայտնեցին նրան ամենը շատ ամբաստանություններով: Փաշան ասաց Նիկողայոսին. «Էսիր իմ խոսքերին և դարձի՛ր Մահճեղի պայծառ հավատին, որով պայծառացիլ է ամբողջ աշխարհը, ինչպես տեսնում ես, իսկ ես քեզ կնշանակեմ մշտապես ինձ համար իմ առջև սպասավոր և իբրև որդու կընդունեմ քեզ, կտամ քեզ շատ դրամ և թանկագին ունեցվածք, իշխանների ազդիկ, գեղեցիկ կին, ումը որ կամենաս, պետական պաշտոն և ուրիշ շատ բարիքներ»: Նիկողայոսը պատասխանեց. «Այդ բարիքներից ոչինչ ինձ պետք չէ ամենեւին, իսկ եթե ինձ բարություն ես անում, թող ինձ ապրեմ իմ հավատով, իսկ եթե ինձ իղուր դատապարտում և սպանում եք, դուք գիտեք»:

Բազմաթիվ անգամ փաշան ասաց. «Կտամ քեզ մեծություն, փառք, եթե քո հավատից հրաժարվես և ընդունես Մահճեղի հավատքը»: Բայց Նիկողայոսը չդարձավ մահճեղական: Իսկ մահճեղականները շատ խոսքերով թախանձում էին փաշային Նիկողայոսին սպանելու հրաման-վճիռ արձակելու: Երբ փաշան իմացավ, որ Նիկողայոսը չի դառնա, ապա նրան սպանելու վճիռ ու հրաման տվեց:

Այդ ժամանակ դահիճների խումբը հավաքվեց նրա զրլխին և մերկացրին նրան, զուխը բաց ու բոկոտն, ձեռքերը հոտը կապված առան նրան, տարան, պտույտ տալու քաղաքի բռնոր տեղերում: Իսկ մոռնեախիլը նրա առջևից հայտարարելով գնում էր: Նրան տարան մեծ հրապարակի մեջ, այնտեղ, որտեղ մահապարտների ձեռքերն ու ոտքերը քարի վրա կոտրատում են, որ հպտատված է այնտեղ: Այնտեղ ևս շատ անգամ դահիճները ասացին. «Քո հավատից հրաժարվիր և ընդունիր Մահճեղի հավատը, էլ մի համառիր, որովհետև ահա այժմ կոտրատում ենք քո ձեռքերն ու ոտքերը: Այդպես և այլ մահճեղականներ էին ասում, իսկ Նի-

կողայոսը ոչ մեկին բնավ չհամաձայնեց: Այդ պահին քաղաքի քահանաներից Մարտիրոս անուհով մի քահանա հաղորդը դրած արմավի մեջ բերեց, տվեց Նիկողայոսին, որը այն առնելով ճաշակեց: Երբ դահիճները այդ տեսան, աղմուկեցին և սկսեցին հարցուփորձ անել, թե այն ինչ էր, որ քահանան տվեց Նիկողայոսին. իսկ քահանան հապճեպով խույս տվեց, փախավ տեղից ու փրկվեց: Իսկ դահիճները բազմիցս ասացին Նիկողայոսին, թե՛ «Եկ դարձիր մահճեղական և փրկվիր մահվանից»: Երբ չդարձավ, ապա դահիճները ասացին Նիկողայոսին. «Որովհետև շես համաձայնում ընդունել Մահճեղի կրոնը, այժմ տարածիր քո ձեռքերը այդ քարի վրա, որպեսզի կոտրատենք»:

Եվ երանելի Նիկողայոսն ինքը ինքնին քարի վրա տարածեց երկու ձեռքերը, իսկ դահիճները խփեցին կացնով և ջարդեցին երկու ձեռքերի բազուկները, ապա պահանջեցին ոտքերը, և նա տարածեց, իսկ դահիճները փշրեցին երկու ոտքերի ոլոքները:

Նիկողայոսը այդպես ջարդոտված անդամներով այդ օրը մնաց այնտեղ հանդիսարանում ընկած, իսկ երկրորդ օրը քրիստոնյաները մոտեցան փաշային ու դատավորին և խնդրեցին թույլատրել նրան այնտեղից վերցնել և տանել իրենց տուն: Նրանք թույլատրեցին, իսկ քրիստոնյաները նրան վերցրին տարան իրենց տուն: Նիկողայոսը ձեռքերն ու ոտքերը ջարդոտելուց հետո կենդանի մնաց երեք օր, ապա իր սուրբ հոգին ավանդեց իբրև անուշ խունկ աստծու ձեռքը:

Այն գիշեր տեղի Քրիստոսը փառավորեց նրան երկնային լույսով, որ իջավ նրա վրա: Քրիստոնյաները բռնորը, որոնք այնտեղ էին, ահանատես տեսան այն և ուրախացան. մեծ խնդովյամբ ու ցնծությամբ փառավորում էին աստծուն: Նաև ինքը սուրբ Նիկողայոսը քանի զեռ կենդանի էր, պատմեց, թե այն ժամին, երբ փշրվեցին իր ձեռքերն ու ոտքերը, տեսավ, որ պայծառ լույսը շողալով երկնքից իջավ, մտավ իր բերանը:

Սրբի մահից հետո, մյուս օրը քրիստոնյաների բազմությունը հավաքվեց, վերցրեց Քրիստոսի նահատակին սաղմոսներով, օրհնություններով տարավ հայոց գերեզմանա-

տուն սրբերի գերեզմանոցը և դրեցին հանդիստ սուրբ նահատակների շարքում:

Այժմ ցավազարններն ու հիվանդները գնում են նրա սուրբ գերեզմանը և ամեն ցավի համար առողջութուն են գտնում սուրբ նահատակ Նիկողայոսի աղոթքներով և մեռ Քրիստոս աստծու շնորհներով, որին փառք հավիտյանս ամեն:

Սուրբ Նիկողայոսի նահատակության գործողությունը կատարվեց հայոց 1091 [1642] թվականի ապրիլ ամսի տասնհինգին օսմանցինների սուլթան Իբրահիմի թագավորության, որ նստում էր Կոստանդնուպոլիս մեծ քաղաքում, և Սուրբ Էջիածնի բարձրագահ աթոռի հայրապետ տեր Փիլիպոս պատվական հայրապետի կաթողիկոսության ժամանակ:

Նաև մինչդեռ սուրբ Նիկողայոսը կենդանի էր, այնտեղ Ամիդ քաղաքում պատահեց մի վարդապետ, որի անունը չգտանք: Սա եկել էր սուրբ Նիկողայոսի մոտ, բռնել էր նրա ջախջախված աչքը, համթուրել և խնդրել էր նրանից, թե՞ «Այս քո սուրբ աչք շնորհիր ինձ, քանզի ես պատրաստվում եմ եկեղեցի շինել, այս սուրբ աչք կդնեմ այն եկեղեցու հիմքում»: Սուրբ Նիկողայոսը սիրով տվեց, որովհետև ասաց. «Արդեն իսկ կտրիր և առ քեզ մոտ»: Բայց քանի կենդանի էր, շխտեցին, այլ մահից հետո կտրեցին, և վարդապետը ինքը առավ Նիկողայոսի սուրբ աչքը և մեծ փափագով տարավ դրեց եկեղեցու հիմքում, որ շինեց: Նաև այն քարը, որի վրա ջախջախեցին սուրբ Նիկողայոսի ձեռքերն ու ոտքերը, վարդապետը գողացավ, տարավ, դրեց եկեղեցու հիմքը, որ շինեց, որով փառավորվում էր մեր տեր Հիսուս Քրիստոսի անունը հավիտյանս հավիտենից. ամեն:

Գ Լ Ո Ւ Խ Խ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՎԱՏԱՅՅԱԼ
ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ

Այս երանելի մարտիրոս խաչատուրը Տիգրանակերտ քաղաքից էր, որ այժմ կոչվում է Ամիդ: Մնվել ու մեծացել էր նույն քաղաքում, աղգությամբ հայ էր: Սա ուներ ծնողներ,

եղբայրներ և մեծ ընտանիք: Ինքը մոտ քսան տարեկան էր, մի քիչ ավել կամ պակաս Գեղեցկատես էր և վայելահասակ, նաև շափազանց աղոթասեր էր և դրքերի ընթերցման ունկնդիր, ինչ որ քահանաները կարգում են եկեղեցում՝ ավետարան, ճաշոց, մանավանդ յայսմավուրք, նահատակների պատմություններ: Ամեն օր եկեղեցուց և նշանակված ժամի աղոթքներից անպակաս էր: Եկեղեցու վերի կողմին մտաիկ, որտեղ կարգում են բոլոր դրքերը, բռնում էր իր աղոթատեղը, և երբ կարգում էին նահատակների նահատակության պատմությունը, հորդառատ աղբյուրի նման արտասուքները բխում էին աչքերից, և ինքը ցանկանում էր մեծ սիրով սուրբ նահատակներին նահատակակից լինել: Միշտ իրենց տանը իր ընտանիքին, դրսում իր հետ կապված ընկերներին ասում էր, թե՞ «Ես չեմ կամենում իմ բնական մահով մեռնել, այլ կամենում եմ նահատակվել, իմ ճշմարիտ հավատի համար մեռնել»:

Սա աշակերտել էր մի քրիստոնյա մարդու, որ արհեստով փականագործ էր, շինում էր կողպեքներ և այլ նման մանր իրեր: Միշտ իր վարպետի հետ նստում էր խանութում շուկայի մեջ և գործադրում էին իրենց արհեստը: Սըրանց խանութը մոտիկ էր մզկիթին, որին Ջուսա մզկիթ էին ասում:

Մի օր խանութում խաչատուրը իր վարպետին ասաց, թե՞ «Ահավասիկ իջնելով այս խանութից գնում եմ, բայց կարծում եմ, որ այլևս չեմ գա այս խանութը»: Ոմանք ասացին. թե խաչատուրը ասաց. «Այս գիշեր երազ տեսա, ինձ հրամայվեց նահատակվել, և ես գնում եմ նահատակվելու, դրա համար եմ ասում, թե այլևս չեմ վերադառնա այս խանութը»:

Ապա այս խոսքերից հետո իջնելով խանութից՝ գնաց մեծ մզկիթի բակը և ջրի մոտ կանգնած ջրով ձեռքն էր լվանում, որ թափվում էր բարձր տեղից: Այդ ժամին մի մահմեդական մարդ եկավ, որ իշխան էր և կանաչագուլի²³², հայհոյեց խաչատուրին և ասաց. «Հեռացիր այդ տեղից, որպեսզի ես լվացվեմ»: խաչատուրը հայհոյեց նրան և նրա (զլխի) կանաչը: Սրանց երկուսի միմյանց հետ վիճաբանության ժամանակ բազմաթիվ մահմեդականներ հավաքվեցին

ներանց գլխին և Խաչատուրին հափշտակեցին, տարան դատավորի մոտ, և սկսեցին ոմանք դատախազ լինել, ոմանք վկաներ, ոմանք վրեժխնդիրներ. և Խաչատուրին մահվան դատապարտեցին:

Գատարանի մեջ դատավորը խոսեց Խաչատուրի հետ և ասաց. «Որդյակ, դու պատանի ես և նորոգ երիտասարդ. խնայիր քո պատանեկությունը և փրկիր քեզ, քանզի այսքան մահճեղականները, որ հավաքվել են քո շուրջը, չեն թողնի դու կենդանի մնաս, այլ համաձայնվիր իմ խոսքերին, դարձիր ձեր մուլար կրոնից և ընդունիր Մահճեղի հավատը, որ լավ է ու երանելի, ինչպես որ տեսնում ես բոլոր մահճեղականներին, որոնք բարգավաճել են բարեկեցիկ կյանքով, հզորացել են թաղավորությամբ և ժառանգորդ են այս կյանքի ու հանդերձալի»:

Իսկ երանելի Խաչատուրը պատասխանեց և ասաց. «Մուլար կրոն ձեր կրոնն է, ինչպես որ ձեր մարգարեն ու պատգամարե-րը սուտ մարգարե է. իսկ մեր կրոնը ճշմարիտ է ու քրիստոսազիր, ինչպես որ ինքը Քրիստոսը ճշմարիտ է, որին դուք ևս վկայում եք: Ես իմ Քրիստոս աստծուն չեմ ուրանա և իմ լույս հավատը չեմ թողնի: Զեր սուտ կրոնը չեմ հավանում. թեկուզ թողնեք, թեկուզ սպանեք, թեկուզ ինչպես նասի-միին²³³, քերթեք ինձ, ես իմ հավատից չեմ դառնա»:

Գատավորը շատ խոսեց նրա հետ, բազմաթիվ բարիքներ խոստացավ տալ նրան՝ դրամ, հարստություն, կին, պետական պաշտոն, բայց Խաչատուրը բնավ չընդունեց:

Մահճեղականներից ոմանք գնացին մուֆթիի²³⁴ մոտ, հայտնեցին, թե այն մարդը, որ պատգամաբեր Մահճեղին և նրա հավատը հայհոյում է, նրան ի՞նչ պետք է անել: Մուֆթին վերջնավճիռ²³⁵ տվեց. «Որովհետև պատգամաբեր Մահճեղին և նրա հավատը հայհոյեց և ինքը ասաց, թե նասիմիի նման քերթեք ինձ, իմ հավատից չեմ դառնա, պետք է նրան քերթել»:

Այս վերջնավճիռը մահճեղականները առնելով բերին դադիի* մոտ և վճիռ հանեցին: Ապա Խաչատուրին առան, տարան փաշայի մոտ և նրան հայտնեցին ամեն ինչ: Իսկ փա-

շան երբ տեսավ Խաչատուրի գեղեցիկ պատանեկությունը, խանդաղատական շատ խոսքերով խոսեց նրա հետ և ասաց. «Քեզ շատ գանձ, թանկագին ունեցվածք, պետական պաշտոն, իշխանների աղջիկ իրրե կին կտամ, որին դու հավանես, և թե հրաժարվես քո հավատից և ընդունես Մահճեղի հավատը. կլինես այսքան բարիքների տեր, նաև քեզ կփրկես մահից»: Իսկ երանելի Խաչատուրը պատասխանեց. «Այդ բոլոր բարիքները, որոնք խոստացար ինձ տալ, սուտ են ոչ դատարկ, քանզի անցավոր են, նաև ձեր հավատն է սուտ, որովհետև սուտ մարգարե է հնարողը, իսկ իմ հավատը ճշմարիտ է ու սուրբ, որովհետև Քրիստոսից է դրված, որի ճշմարտությունը դուք ինքներդ եք հաստատում: Ոչ թե սովորական ձևով սպանեք ինձ, այլ եթե կենդանի իսկ քերթեք ինձ, ես իմ Քրիստոս աստվածը և նրա ճշմարիտ հավատը չեմ ուրանա»: Փաշան ասաց. «Դուցից ցնդաբանել ու խելքը գցել է, տարեք, պահեցեք, երևի խելքի դա և զգոնանա»:

Տարան երկու ժամ պահեցին, իսկ բոլոր մահճեղականները նրա մոտ գալով ախոսում էին ու խնայում. ասում էին. «Մի կորցնիր քո գեղեցիկ պատանեկությունը»: Բայց նա շանսաց նրանց խոսքերին:

Գարձալ փաշան Խաչատուրին կանչեց իր առջև և ավելի բարիքներ խոստացավ, քան առաջին անգամ խոստացել էր տալ նրան, միայն թե ուրանա Քրիստոսի հավատը և դավանի մահճեղականությունը, իսկ Խաչատուրը շուրացավ: Ապա այնուհետև փաշան հրաման-վճիռ տվեց սպանել նրան:

Այդ ժամանակ եկան դահճեղները ինչպես արյունախում գաղաններ, շրջապատեցին նրան և մերկացրին, ձեռքերը կապեցին հետևը, առան, տանում էին սպանման տեղը: Եվ մոռենտիկը, որ ջառչին է, հայտարարելով դնում էր նրա առջևից:

Մահճեղականները նրա շուրջ հավաքվեցին ինչպես անթիվ ծովի ավաղ, որ վայրը չէր տեղավորում նրանց: Ինչպես կատաղի գաղան ատամ էին կրճտում նրա վրա. ծեծում էին, բռնցքահարում և քաշելով էին տանում: Այդպես նրան հանեցին միջնաբերդից, և երբ երան բերդի գոնից, այնտեղ միջնաբերդի դռան առաջին, որ նոր դուռ են կո-

* Հոգեորական դատավոր:

չում, հաշատուրը դահիճներին ասաց, թե՛ «Քերթեցեք ինձ
ի՛մ հավատի և այն սիրո համար, որ ունեմ իմ Քրիստոս
աստծու նկատմամբ»։ Այդ ժամանակ անօրեն ու մարդագեծ
գազան դահիճները աջ ուսից մինչև ձախ ուսը պատռեցին
նրա մարմնի մորթին և թիկունքի կաշին քերթեցին, մինչև
քամակը իջեցրին, կաշին շուռ տվին մեջքի վրա. նաև առջևի
կողմից քերթեցին լանջի մորթին մինչև ստիքների տակը և
մորթին շրջեցին փորի վրա։ Ապա տարան, շրջեցրին քաղա-
քի մեջ, շուկաներում, պողոտաներում, փողոցներում, հրա-
պարակներում։ Այս զարմանալի գործին ի տես ամեն ոք
աճապարանքով զնում էր, տղամարդ, կին, ծեր, երեխա,
նաև միանգամայն անարգել աղջիկներ*։ Բոլորը սարսուռ
էին։ Իսկ սուրբ հաշատուրի տեսքն ու կերպարանքը զվարթ
էր ու պայծառ իբրև հրեշտակի, և այդքան տանջանքից չէր
թուլանում։

Նախ ինքը՝ հաշատուրը, նախապես սովորել էր Նասիմի
շատ երգեր, որոնք Նասիմին ինքն էր ասել իր նահատակու-
թյան և Քրիստոսի տնօրինության (մարդեղության) վրա իբրև
աստվածաբանութուն։ Այդ երգերը այժմ այս հաշատուրը
բարձրաձայն եղանակով երգում էր իր քերթված լինելու վրա
և շրջում քաղաքում ամեն տեղ, ուր որ տարան նրան դա-
հիճները։

Երբ շրջեցնելը ավարտվեց, դահիճները նրան բերին մեծ
հրապարակ՝ այն տեղը, որտեղ մահապարտների ձեռքերն
ու ոտքերը ջախջախում են։ Մահմեդականները ժամ առ ժամ
ավելի էին հավաքվում ու բազմանում. նաև բազմաթիվ
քրիստոնյաներ եկան, հավաքվեցին այդտեղ և դիտում էին
այդ Գահիճները հաշատուրի հետ խոսեցին, թե՛ «Մի հա-
ձառիր և ընդդիմացիր իշխանների հրամաններին, ընդունիր
մեր կրոնը և փրկիր քեզ մահից, որովհետև դեռևս հնար ունես
ապրելու և դեղերով բժշկվելու։ Այսպես ասում էին նաև այլ
մահմեդականներ ու իշխաններ, թե՛ «Գոնե մի խոսք ասա
մեր հավատքի դավանությունից, և այդ բավական կլինի, որ
մենք պատճառ բռնենք և դրանով ազատենք քեզ»։ Նաև մու-
լաներից ոմանք հաշատուրին ասում էին. «Թեպետ և մեռ-

նում ես, կորցնում քո պատանեկությունը և զրկվում այս
կյանքից, բայց քո հոգին մի մեռցնիր, որ այն կյանքից ևս
չզրկվես։ Արդ՝ քո կյանքի վերջում ընդունիր Մահմեդի հա-
վատի դավանությունը, որ ապրի քո հոգին և ժառանգի
անանց կյանքը։ Սուրբ հաշատուրը բոլորովին ոչ մեկին չսեց,
այլ յուրաքանչյուրին պատշաճ պատասխան էր տալիս և ան-
սասան կանգնած էր քրիստոնեական հավատքի վրա և հա-
մարձակ ու անխափան Քրիստոս աստծուն էր դավանում։

Նախօրոք հրապարակի վրա հաստատել էին մի քար, որի
վրա ջախջախում էին մահապարտների ձեռքերն ու ոտքերը։
Գահիճները հաշատուրին ասացին. «Քանի որ համառում ես
և մեղ չես լսում, այժմ տարածիր քո ձեռքերը քարի վրա,
որպեսզի ջախջախենք»։ Նա իր հոժար կամքով ձեռքերը տա-
րածեց քարի վրա, իսկ դահիճները կացնով խփեցին և ջախ-
ջախեցին երկու ձեռքերի բազուկները։ Ապա պահանջեցին
ոտքերը, իսկ նա տարածեց նաև երկու ոտքերը, և դահիճ-
ները ջախջախեցին երկու ոտքերի ուղեքները։ Իսկ նրա սուրբ
արյունը, որ հորդառատ հոսում էր նրանից, թրջել էր ողջ
մարմինը և թացացրել էր ամբողջ վայրը։ Այնուհետև չկա-
րողացավ նստել, այլ ընկավ երեսնիվայր, տարածվեց գետ-
նին։ Իսկ քրիստոնյաները, որ շրջապատել նալում էին, աղիո-
ղորմ ողբերով և արյուն արցունքով լացում էին։ Այսպես և
շատ մահմեդականներ էին լացում արտասուքներով և հայհո-
յում դատավորներին, և ամենքը սոսկալով, զարմանալով
ապուշ էին կտրել և իրար հարցնում էին, թե ձեռքանից որևէ
մեկը տեսե՞լ է արդյոք այսպիսի բան, որովհետև չափազանց
սարսուռալի էր այս գործի երևույթը։

Այնուհետև սուրբ հաշատուրը չափազանց նվաղեց սաս-
տիկ ու ավելի ծանր տանջանքներից, շերմում ու պապակ-
վում էր ծարավից, ուստի աղաչեց շուրջը գտնվող մարդկանց
և նրանցից ջուր խնդրեց։ Ոմանք գթացին նրան և գնացին
ինչ-որ ամանի խեցիով ջուր բերին նրան. այդ խեցիով էլ
խմեց ջուրը։ Նաև սուրբ հաշատուրը մտտիկ կանգնած քրիս-
տոնյաներին աղաչեց, որ գնան քահանաների մոտ, իրեն հա-
ղորդ բերեն. իսկ քահանաները մահմեդականների երկյու-
ղից իրենք չեկան, այլ հաղորդը դրին հացի մեջ և տվին

* Աղջիկների փողոց դուրս գալը արգելված էր։

քրիստոնեյաներին, իսկ նրանք բերին տվին խաչատուրին. նա հացը առավ, հազորդով ճաշակեց և աստուց գոհացավ:

Այդպես ջախջախված անդամներով ընկած էր հանդիսաբանի մեջ մինչև իրիկվա մթնշաղը: Իսկ բաղիշեցի խաչատուր վարդապետը և բաշուեցի Սամվել արեղան երեկոյան մթնշաղի ժամանակ եկան սուրբ խաչատուրի մոտ և բնկած սուրբի մարմնի վրա կսկծագին այրումով ողբում էին և համբուրում էին նրա սուրբ գլուխը և խղճալով մխիթարում էին նրան հուսադրական խոսքերով և հավատի մեջ ամբաստնում:

Սուրբ խաչատուրը ասաց խաչատուր վարդապետին. «Դե գիտես, որ ձեռք չունեմ, որով բռնեմ քո սուրբ աչքը և համբուրեմ, ուստի խնդրում եմ քեզ, մոտեցրու քո սուրբ աչքը իմ շրթունքներին, որ համբուրեմ»: Վարդապետը իր աչքը մոտեցրեց խաչատուրի սուրբ շրթունքներին, որ տենչանքով համբուրեց, նաև վարդապետին ասաց սուրբ խաչատուրը. «Քեզնից խնդրում եմ՝ ինձ համար աղոթել»: Վարդապետը պատասխանեց. «Որդյակ, թեև մենք ունենք քահանայության կարգ ու աստիճան, բայց մեղավոր ենք ու աստու առջև պարտական. իսկ դու Քրիստոսի շնորհներով և քո նահատակությամբ տիրոջից ողորմություն գտար և քեզ համար աստու արքայության ճանապարհը բացիր և Քրիստոսի մոտ համարձակություն ունես, ուստի դու բարեխոսիր մեզ համար»:

Մահմեդականների երկյուղից շկարողացան նրա մոտ երկար մնալ, այլ սրբի աղոթքը առան և հապճեպ վերադարձան իրենց տեղերը:

Իսկ սուրբ խաչատուրը այդպես ջախջախված մարմնով կենդանի մնաց մինչև կես գիշեր և ապա իր սուրբ հոգին ավանդեց աստուուն ինչպես անուշ խունի:

Սուրբ հոգին ավանդելուց հետո տեր Քրիստոսը փառավորեց նրան, որովհետև երկնքից պայծառ լույս իջավ նրա վրա և մնաց բավական ժամանակ, որը տեսան նրան մոտիկ կանգնած պահապան զորականները. նաև շատ խանութպաններ, որոնք մոտիկ էին և արթուն, այլև այն մարդիկ, որոնք հրապարակում տախտակների վրա քնել էին. որովհետև ժամանակը ամառ էր, բոլորը տեսնում էին լույսը, փառավորում աստուուն, երանում էին սուրբ խաչատուրին և վկայում

քրիստոնեական հավատի ճշմարիտ լինելը, որ այսպիսի հրաշք երևաց երկնքից:

Առավոտյան լույսը բացվելիս այս լուրը ամեն տեղ հուշակվեց, և ովքեր լսում էին, աստուուն փառավորում էին:

Իսկ օրը բացվելու ժամանակ քրիստոնյաները մոտեցան դադիին ու փաշային, խնդրեցին՝ թույլատրել սրբին թաղելու, իսկ նրանք թույլատրեցին: Նաև քաղաքագլուխը տասնհինգ ղուռուշ առավ և ապա մի քահանա և ութ աշխարհական եկան, սուրբ նահատակի մարմինը դադաղով վերցրին, տարան հայոց գերեզմանատուն, որտեղ քրիստոնյաների անհաշիվ բազմություն հավաքվեց՝ ոչ միայն հայեր, այլև հոռոմներ, ասորիներ, յաղութիներ²³⁶, նաև շատ մահմեդականներ՝ ոմանք զվարճանալու և ոմանք նայելու համար: Իսկ քրիստոնյաները ջերմեռանդ տենչանքով համբուրում էին սրբին, որին պահեցին մինչև վերջին օրը, որպեսզի ժողովուրդը համբուրի, քանի որ քաղաքում մարդ չէր մնացել, որ չգար սրբի թաղմանը: Նրանք իրենց էին ողբում, երանում էին սրբին և մխիթարում էին նրա ծնողներին: Մեծ փառքով թաղեցին սրբին նահատակների շարքում:

Իսկ այն գիշեր երկրորդ անգամ տեր Քրիստոսը փառավորեց իր նահատակին, որովհետև երկրորդ անգամ երկնքից պայծառ լույս իջավ նրա սուրբ գերեզմանի վրա. այս տեսան պահապան քրիստոնյաները, որոնք մահմեդականների նենգությունից գերեզմանը գերծ պահելու համար զգուշացան, որ շխարհախեն: Նաև շատ քրիստոնյա տղամարդիկ սրբի սիրտ համար այդ գիշեր մնացին այնտեղ գերեզմանատանը, լույսը տեսան և առավոտյան եկան ամենին պատմում էին:

Արդեն բազմաթիվ բժշկություններ են կատարվում նրա սուրբ գերեզմանի կողմից ցավազարների, հիվանդների վրա, որոնք հավատով դիմում են նրան: Նաև այն խեցին, որով ջուլս խմեց սուրբ խաչատուրը, բժշկություն է անում. որովհետև երբ հիվանդների վրա այն խեցիով ջուր են թափում, սուրբ խաչատուրի աղոթքներով և մեր Քրիստոս աստուուն շնորհներով առողջանում են, որին փառք հավիտյանս ամեն:

Նաև աստվածային շնորհը իր նահատակի՝ սուրբ խաչատուրի պատվի ու սիրտ համար իր քրիստոնյա ժողովրդի հա-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՍԻՐՈՒՆ ԱՆՈՒՆՈՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ

մար այսպիսի խնամք ցույց տվեց. սրբի թաղման օրը այն մահմեդականները, որ եկել էին այնտեղ՝ գերեզմանատուն, նրանցից ոմանք շարացան ու նախանձաբեկ հղան սուրբ Խաչատուրի փառավոր թաղման պատճառով. նրանք զնացին փաշայի մոտ և շարախոսեցին քրիստոնյաներին, թե բոլոր քրիստոնյաները հավաքվեցին այն սպանվածի վրա և իբրև նահատակի ու մարտիրոսի բազմամբոխ հանդեսով և մեծ փառքով թաղեցին նրան: Իրանով ցույց են տալիս, որ իրենց հավատը ճշմարիտ է, իսկ մերը սուտ: Փաշան հրամայեց, թե՛ ռժոզ զորականները հսկեն ճանապարհների անցարաններում, որ վաղվան օրը, երբ քրիստոնյաները գնան սպանվածի գերեզմանին էքնահող անհլու, այդ ժամանակ բոլորին բռնեն, բերեն կալանքի տակ առնեն, որպեսզի ես նրանց դատապարտելով տուգանեմ»: Այս շարախոսությունը և նենգ մտադրությունը քրիստոնյաները բողոքովին չգիտեին, այլ աստված փրկեց իր ժողովրդին ինչ-որ սուղ պատճառով: Այդ օրը փաշայի մոտիկներից մի մարդ և մի քաղաքացի ազատ պատվավոր կովեցին իրար հետ: Քաղաքացի ազատ զինվորները և ենիչերիները զինվորական դասից էին, իրենց համար արհամարհանք համարելով՝ վրեժխնդիր եղան և փաշայի հետ կռվի կանգնեցին և իրենց զորքով փաշային արգելափակեցին միջնաբերդում մի շարախ: Թե փաշան, թե քաղաքացիք այդ կռվով զբաղվեցին, իսկ քրիստոնյաները ազատվեցին սուրբ Խաչատուրի բարեխոսությունը և բարեբար ասածու ողորմությունը:

Սուրբ Խաչատուրի նահատակությունը տեղի ունեցավ հայոց 1101 [1652] թվականի օգոստոս ամսի 20-ին տեր Փելիպոսի կաթողիկոսության, որ բարձրագահ աթոռ սուրբ էջմիածնում էր, և օսմանցիների սուլթան Մուրադի թագավորության ժամանակ, որ նստում էր Կոստանդնուպոլիս մեծ քաղաքում:

Եվ այժմ մենք հավատացյալներու խնդրում ենք, որ բոլոր քրիստոնյաներին ազատի մարդազնմ գաղաններից ու անիրավներից իր սրբերի բարեխոսությունը մեր տեր Հիսուս Քրիստոսը, որին հավիտյանս փառք. ամեն:

Սիրուն անունով մի մարդ, որ վասպուրական երկրից էր՝ այժմ Ամով²³⁷ կոչվող Գնունի գավառից և Ալյուր կոչվող գյուղից, ազգությամբ հայ, հավատով քրիստոնյա և քրիստոնյայի զավակ, ուներ մայր, եղբայր, որոնք նրան մտքրին աշխարհիկ կյանքի մեջ, նրա համար կին բերին: Իր տնտեսական կարիքների համար այս Սիրունը առնչվեց մի այլազգի մահմեդականի, նրանից վարձ էր առնում և ծառայում էր նրան իր աշխատանքով վարձի դիմաց: Գարնան մի օր Սիրունի տերը նրան ուղարկեց խլաթ, որ իր ընտանիքի համար միրգ բերի: Նա գնաց, կեռաս գնեց, բարձեց ձիուն և բերեց վան քաղաքը: Մինչդեռ վան քաղաքում ձին քաշում էր պողոտայով, եկան նրա վրա հավաքվեցին մահմեդականները պատանիներ և յուրաքանչյուրը կեռաս էր հափըշտակում բեռնից: Իսկ Սիրունը չէր թողնում, որ հափըշտակեն, այլ հալածում էր պատանիներին: Մահմեդական պատանիներից մեկը վերցրեց մի բռնաքար և խփեց Սիրունին, իսկ Սիրունը վերցրեց քարը և ձգեց քար նետողին. քարը կպավ տղայի գլխին ու վիրավորեց, ուստի պատանին անկողին ընկավ և հիվանդ մնաց երկու ամիս և հետո տղան սատկեց վերքերի պատճառով: Իսկ Սիրունի տերը Սիրունին փախցրեց, որպեսզի գուցե տղան փրկվի մահմեդականների ձեռքից. և Սիրունը գնաց Ալյուր գյուղը՝ իր տունը:

Իսկ Ալյուր գյուղի մահմեդական հարկահանները բռնեցին Սիրունին և կալանավորեցին: Գյուղի քրիստոնյաները մեծ կաշառք տվին հարկահաններին, որպեսզի Սիրունին թողնեն, բայց նրանք չթողին, այլ սատկած պատանու ընտանիքին իմացրին, իսկ նրանք վրեժխնդիր լինելով մեռածի արյան՝ գնացին փաշայի մոտ, զորականներ առան և ուղարկեցին Սիրունի հետևից: Սրանք գնացին, Սիրունին բերին վան քաղաքը փաշայի մոտ: Իսկ փաշան ուղարկեց դատավորի ու մուֆտիի մոտ և հարցում արեց, թե Մահմեդի օրենքը ինչ է հրամայում այս մարդու համար. մահապարտ լի-

նել և մեռնել, թե անպարտ համարվել և ազատվել: Այս պատ-
ճառով փաշան շսպանեց Սիրունին:

Բայց քաղաքի սուխտանները*, որ քրիստոնյաների արշան
ծարավի էին, շանսացիին փաշային, դադիին ու մուֆտինին,
այլ երկու-երեք հարյուր սուխտաններ միասին միացան, գրոհ
տալով կուտակվեցին անպարտ պատանի Սիրունի գլխին,
բոլորը մերկացրին իրենց սրերը, թրերն ու դաշույնները հո-
խորտալից խրոխտանքով ահաբեկեցին նրան, թե՛ «Ընդունիր
Մահմեդի հավատը և մահմեդական դարձիր, ասյա թե ոչ,
սրախողխող ու քարկոծ լինելով, կմեռնես մեր ձեռքով»:

Նաև բերին բարակ պարան, նրանով շատ ամուր պատե-
ցին երկու բազուկները ուսերից մինչև ձեռքերի թաթերը
այնքան պինդ, որ սաստիկ պնդությունից եղունգների մոտ
մատները ծայրերը պայթելով բացվեցին, որոնցից հոսող ար-
յունը թափվում էր ձեռքերից: Նաև բազմատեսակ տանջանք-
ների ենթարկեցին նրան՝ ծեծել, գլխին հարվածել, քարշե-
քարշ տանել, կալանքի տակ անկերակուր պահել. ամենքը
իբրև կատաղի գազան նրա վրա կրճատում էին ատամները,
յուրաքանչյուր մեկը իր սուրբ նրա վրա էր շողացնում և
ասում. «Մահմեդական դարձիր, ոչ միայն կազատվես մահ-
վանից, այլև շատ հարստություն ու բարիքներ կտանք քեզ»:
Իսկ Սիրունը չէր համաձայնվում, ասում էր. «Եմ լույս հա-
վատը չեմ թողնի և ձեր խավար կրոնը չեմ ընդունի»: Իսկ
մայրը, եղբայրները ու այլ բարեկամներ մշտապես աղաչելով
ասում էին նրան թե՛ «Այժմ քո անձը փրկելու համար առե-
րես ընդունիր նրանց դավանանքը, իսկ հետո, կգնաս այլ եր-
կրներ և քրիստոնյաների իշխանություններ և այնտեղ հա-
մարձակ կպաշտես քո քրիստոնեական հավատը»:

Եվ շնայած շատ աղաչեցին, սակայն նա համեն շառավ,
ասելով, թե՛ «Սովորական մահը այժմ հասել է ինձ. նաև
այնտեղ, ուր լինելու եմ, պատահելու է ինձ. այս կյանքի
չնչին տարիների համար, ինչպե՞ս կորցնեմ իմ հավատը և
դառնամ աստծու կողմից դատապարտված»: Ինքը Սիրունը
ուրախ էր ու սրտով բերկրալից իր խոստովանության ու նա-
հատակության համար. սրան ապացույց էր երեսի գույնը,

* Մահմեդական աստվածաբան

օրավուր պայծառանում էր երեսի ու գեմքի տեսքը:
Իսկ մարդադեմ գազան սուխտանները քսան օր ձեռքերը
հետևը կապած, գլուխը բաց պտույտ էին տալիս վան քաղաքի
մեջ, որովհետև փաշան, դադին ու մուֆտին սպանելու հրա-
ման չէին արձակում:

Ի հեճուկս նրանց բոլոր սուխտանները միակամ եղան,
երեք օր արգելելով խափանեցից կանչելը, որ մինարնի գըլ-
խից իրենց ազոթքի ժամին կանչում էին, ասելով, թե՛ «Սեան-
գարվեց, խափանվեց և գետնի տակ սուղվեց մահմեդական
հավատը, որովհետև անհավատ մի հայ մահմեդական է
սպանել»:

Եվ ըստ մշտական սովորության, որ կապած շրջեցնում
էին Սիրունին, բերին հասցրին պալատարանոցի շուկան. այն-
տեղ սուխտաններից մի ավելի շար, որ ձեռքին մերկ դաշույն
էր բռնել, ուժգին հարվածով Սիրունի թուլակշտին հարվա-
ծեց. Սիրունը ընկավ երեսի վրա: Մի այլ սուխտա առավ
ծանր մի քար, զարկեց Սիրունի գլխին և գլուխը փշրեց,
գլխի ուղեղը դուրս թափվեց, և զրանով Սիրունի կյանքը
վերջացավ, նա մեռավ:

Ապա պարան գցեցին ոտքերը, քաշեցին, տարան քաղա-
քից դուրս, այնտեղ, որտեղ մահապարտներին սպանում են,
այնտեղ մեռած մարմինը քարկոծեցին այնքան, մինչև որ
ծածկվեց քարերով, ապա արյունարբու գազան սուխտանները
թողին, գնացին:

Նույն գիշեր տեղ Քրիստոսը նրան փառավորեց երկնա-
յին լույսով, որ իջավ նրա վրա, սա տեսան ոչ միայն քրիս-
տոնյաները, այլև շատ մահմեդականներ, որ ամենքին պատ-
մում էին մինչև լուրը հասավ նրան սպանող սուխտաներին,
որոնցից ոմանք եկան հավաստի տեսան և գնացին, պատ-
մեցին մյուսներին: Նրանք իրենց սպասավորներից մարդիկ
ուղարկեցին, որոնք գնացին սատկած շների գեշեր գտան,
բերին գցեցին Սիրունի սուրբ մարմնի վրա, որ գուցե լույսը
վերանա, բայց լույսը չվերացավ մինչև օրվա լուսանալը մեր
Քրիստոս աստծու շնորհներով: Իսկ մյուս օրը քրիստոնյա-
ները գնացին փաշայի ու դադիի մոտ, թաղելու թույլտվու-
թյուն խնդրեցին: Սրանց թույլտվությամբ քրիստոնյաները
գնացին, վերցրին տարան քրիստոնյաների ընդհանուր գե-

բեզմանատուն և այնտեղ թաղեցին քրիստոնեական հավատի Սիրուն անունով խոստովանողին:

Սիրունի նահատակութունը եղավ մեր 1104 [1655] թվականի (օգոստոս)* ամսի 5-ին տեր Հակոբի կաթողիկոսության, որ Սուրբ էջմիածնի գերազահ աթոռին էր, և օսմանցիների սուլթան Մահմադի թագավորության ժամանակ, որ նստում էր մեծ քաղաք Կոստանդնուպոլսում:

Իսկ այն քարը, որով շարդեցին սուրբ Սիրունի գլուխը, այժմ լվանում և ջուրը լցնում են հիվանդների վրա, իսկ հիվանդը առողջանում է մեր Քրիստոս աստծու շնորհներով, որին հավիտյան փառք. ամեն:

Գ Լ ՈՒ Ե Խ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԵԻԹԱՐ ԱՆՈՒՆՈՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ

Մխիթար անունով քրիստոնյա մի մարդ, որ Վան քաղաքից էր, ազգությամբ հայ, քրիստոնյա ծնողների զավակ էր: Այս Մխիթարը նշանավոր էր Վան քաղաքում փաշայի, դադիի և ենիչեր զորապետի և այլ բոլոր իշխանների աջքում, որովհետև լավ ձիավար էր, զինախաղաց և զորեղ: Նաև խելոք էր, մտքով խոհուն, խոսքով ճարտասան, ուստի բոլոր ենիչերիները, սպաները և իշխաններից շատերը նրան բարեկամներ էին:

Նդավ, որ հիշատակածս Մխիթարը մի օր իր ընկերակից մարդկանց հետ իր տանը նստած քնարներով ու երաժրչական նվագարաններով զինեկամությամբ ուրախանում էին: Երաժշտության եղանակը լսելու համար մահմեդական շատ տղաներ գոնեբրին, երգիկներին, պատերի վրա զմարձանում էին: Իսկ Մխիթարի հայրը, ելնելով տղաների մոտ՝ տեղներից ջրում էր նրանց: Տղաներից ոմանք հակառակվելով խփեցին նրան: Նա գնաց տուն և պատմեց, թե տղաները

* Բնագրում օգոստոս բառը լկա, զնում ենք ըստ «Հայոց նոր վկաների» (էջ 467):

խփեցին իրեն: Այդ ժամանակ Մխիթարը իր արի քաջությամբ համապատասխան բարկությամբ ու ցասումով լցվեց, տանից ելավ, դաշույնը մերկ ձեռքում բռնած, և սկսեց հետամտել տղաներին: Նա հալածելով հայհոյությամբ անարգում էր մահմեդականների հավատն ու կրոնը՝ նույն ժամին մի մահմեդական էիբ անունով հաջի*, որ Մխիթարի մոտիկ դրացին էր, տեսնում ու լսում էր հայհոյանքներն ու անարգանքները, որ Մխիթարը ասում էր մահմեդական տղաներին: Նա Մխիթարին մեղադրելով ասաց. «Գաղաթեցրու հայհոյանքներդ, քանի որ անպատշաճ է այդքան հայհոյանքներ տալ տղաներին, որոնք հավատով մահմեդական են»: Իսկ Մխիթարը թողեց տղաներին, սկսեց հետապնդել հաջի էիբին և հալածելով հայհոյում էր: Այդ հալածելու ժամանակ այնտեղ պատահեց զուլլար աղասու Էնիչերիների զորապետի եղբայրը. նա ևս Մխիթարին մեղադրելով ասաց. «Մի անիր այդպիսի անպատշաճ բան»: Իսկ Մխիթարը դարձավ դեպի նա և սկսեց բարկությամբ նրան ևս հայհոյել:

Իսկ ինչ հաջի էիբն էր, գնացել էր սուլտանների մոտ, Մխիթարին ամբաստանելով սկսեց վշտագին սրտով նրանց պատմել Մխիթարի խոսքերն ու զործերը: Այդ ժամանակ շատ սուլտաններ հավաքվեցին միասին և վրեժխնդիր եղան Մահմեդի հավատի անարգանքի համար: Գնացին փաշային հայտնեցին, նրանից զորականներ վերցրին և եկան Մխիթարին բռնեցին, կապեցին, տարան փաշայի բանտը և արգելափակեցին: Իսկ Վանի բերդի ենիչերիները, որոնք Մխիթարին բարեկամ էին, անտեղյակ էին սրանց, և երբ լսեցին, թե բռնեցին Մխիթարին և բանտ գցեցին, այդ ժամանակ հիստուն ենիչերի և երկու շորվաջի** եկան, Մխիթարին բանտից դուրս բերին և առան, տարան վերի բերդը իրենց մոտ. այնտեղ պահեցին երկու օր: Երբ տեսան, թե սուլտանները և այլ մահմեդականները խաղաղվել են և ուխինչ չեն խոսում Մխիթարի մասին, նրան թողին, որ գնա իր տունը:

* Հաջի արաբերեն նշանակում է Մեքա [մահմեդական սրբավայր] ուխտագնացութուն կատարած անձ: Մենք՝ հայերս մահմեդի ենք անում Երուսաղեմ գնացածներին:

** Ենիչերիների հարյուրապետ:

Իսկ անօրեն սուխտաները վերստին հավաքվեցին, գնացին, Մխիթարին բռնեցին, կապեցին, տարան փաշայի մոտ, իսկ փաշան ուղարկեց մուֆտիի և ղազիի մոտ, թե ինչ է հրամայում Մահմեդի կրոնը այս մարդու համար՝ սպանել, թե ոչ։ Նրանք սպանելու հրաման չտվին, ուստի փաշան շապանեց, այլ հրամայեց ազատ թողնել։ Իսկ ինչ սուխտաներն էին, շիտզին, այլ ձեռքերը հետևը կապեցին, գլխաբաց, բոբիկ այստեղ-այնտեղ շրջեցնում էին իշխանների դռները, ծեծում, գլխին հարվածում էին, թքում և զանազան ձևերով տանջում և ասում էին. «Ուրացիր քո հավատը, պաշտիր մեր հավատը, ապա թե ոչ սրախողխող լինելով ու քարկոծվելով կմեռնես մեր ձեռքից»։ Այսպիսի խոսքեր ասելով, իրենց ձեռքերում մերկացրած սրեր բռնած խաղացնում էին նրա վրա։ Իսկ Մխիթարը ամեն տեղ, ուր էլ որ շրջեցնում էին նրան, բարձրաձայն ու համարձակ ամենքի առջև հայհոյում է Մահմեդին, սրա հավատն ու կրոնը և շատ խոսքերով անարգում էր ոչ թե մի օր, այլ ամեն օր և իր սրտի քաջությամբ ասում էր. «Դատարկ ու շնչին մահվան համար միթե վախենալով ձեզնից՝ կուրանամ իմ ճշմարիտ հավատը, տեք աստծուն ու իմ Քրիստոսին»։

Նաև Մխիթարի բոլոր բարեկամները, ծնողները և ընկերակից երիտասարդները եկան նրա մոտ, աղաչելով ասում էին, թե սուխտաներին դուր գալու համար առերես ու առժամ լայն ասա ինչ-որ խոսք և հետո, գնալով այլ երկիր, կպաշտես քո հավատը։ Իսկ Մխիթարը բոլորովին շրջողունեց նրանց խոսքերը, այլ քաջ սրտով, պայծառ դեմքով և համարձակ սուխտաների առջև դավանում էր Քրիստոս աստծուն և անարգում Մահմեդի օրենքը։

Նաև փաշան և նեիշերի զորապետը ուղարկեցին Մխիթարի մոտ և խոստացան տալ նրան շատ գանձեր և տնեցվածք, ազնվացեղ ձիեր, զենքեր, պետական պաշտոններ, որ գուցե թերևս սուխտաներին հաճելի որևէ խոսք ասի և իրեն մահվանից փրկի, որովհետև խիստ հոժար կամքով խնայում էին նրան նրա ամենաարի ու զարմանալի քաջության համար։ Իսկ Մխիթարը շրջողունեց նրանց ասածը քրիստոնեական հավատի համար։

Իսկ սուխտաները մշտապես այստեղ-այնտեղ իշխանների դռները շրջեցնում էին. որովհետև փաշան, ղազին և մուֆտին սպանելու հրաման չտվին, ուստի սուխտաները զայրացան և բոլոր մզկիթներից կանչելը արգելեցին, որ իրենց ազոթքի ժամին ելնելով մինարեի գլուխը՝ կանչում են։ Այս կանչելը երեք օր խափանեցին՝ ասելով, թե Մահմեդի հավատը խանդարելով խափանվեց և սուզվեց գետնի տակ, որովհետև մի անհավատ մարդ մարգարե Մահմեդի հավատը բացահայտ ու համարձակ հայհոյում էր։

Եվ մի օր, մինչդեռ քաղաքի պողոտաներում շրջեցնում էին, սուխտաներից ամենաշար մեկը, որ ձեռքում բռնած էր մերկ դաշույնը, ուժգին հարվածով խրեց Մխիթարի թիկունքի մեջը. արյունը ցայտեց մոտիկ պատի երեսը. այս հարվածից Մխիթարը ընկավ երեսնիվայր։ Իսկ մյուս սուխտաները հարձակվելով վրան սրախողխող ծակոտեցին նրան, որ անմիջապես մեռավ։ Ապա պարանը կապեցին ռոքերից և քաշելով տարան քաղաքից դուրս, այնտեղ, որտեղ բոլոր մահապարտներին սպանում են։ Այնտեղ հավաքված քաղմաթիվ մահմեդականներ այնքան քարկոծեցին մեռած մարմինը, որ մարմինը քարերով ծածկվեց, անհայտացավ, և ապա թողին, զնացին արյունաբերու և մարդադեմ գաղան սուխտաները։

Իսկ նույն դիշերը նեիշերի դիշերապահները, որ վերին բերդում էին, տեսնում էին, որ մի մեծ լույս փայլատակելով ու ճառագայթելով կանգնած էր նրա վրա։ Սրանք առավոտյան լուսանալիս եկան քաղաքամեջ պատմեցին այս տեսիլքը։ Մյուս օրը քրիստոնյաները գնացին փաշայի ու ղազու մոտ և սրբին թաղելու թույլտվություն խնդրեցին, իսկ նրանք թույլատրեցին. ուստի բոլոր եկեղեցիների քահանաներն ու ժողովուրդը հավաքվելով քաղմախումն հանդեսով վերցրին նրա թանկագին մարմինը և տարան հայոց գերեզմանոց և քրիստոնեական կարգով նրան թաղեցին սաղմոսերգությամբ և նրան պսակող Քրիստոսի փառքի օրհնությամբ։

Սրա նահատակությունը կատարվեց մեր 1105 [1656] թվականի նոյեմբերի տասներկուսին տեք Հակոբի Սուրբ Լեջմիածնի մեծափառ աթոռի կաթողիկոսության և օսմանցիների սուլթան Մահմեդի թագավորության ժամանակ, որ նստում է Կոստանդնուպոլիս մեծ քաղաքում։

Այժմ կիսնդրենք Քրիստոսից, որպեսզի սրբերի բարեխոսութեամբ ողորմի բոլոր քրիստոնյաներին. և նրան փառք հավիտյանս, ամեն:

Գ Լ Ո Ւ Ե Խ Ե Ը

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՎԵՏԻՍ ԱՆՈՒՆՈՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ազգով հայ, հավատով քրիստոնյա Ավետիս անունով մի մարդ, որ Ոստանի գավառից էր, իրենց աղքատության կարիքների համար ողջ ընտանիքով ելան, գնացին Բարձ կրկիրը, որ այժմ Աղբակ²³⁸ է կոչվում, և բնակվեցին Բաբլասան գյուղում: Ավետիս անունով այս մարդը իր անտեսական կարիքների համար վարձվեց Բաբղար անունով մի քուրդ իշխանի մոտ, որ Լոռիքան* կոչված բերդի իշխանավորն էր: Ավետիսը Բաբղար աղայի ծառայության մեջ մնաց երկու տարի:

Բաբղար աղայի՝ հավատով մահմեդական, ազգով քուրդ ծառաներից ոմանք, որ Ավետիսի ծառայակիցներն էին, նախանձելով նրան՝ օրերից մի օր կանգնեցին Բաբղար աղայի լառքե Ավետիսի մասին ասացին, թե իրենք շատ անգամ լսել են նրանից, որ ասում էր դառնում եմ քրիստոնեական հավատից և լինում մահմեդական: Խիստ ճշտիվ վրեժխնդիր էին լինում և տիրոջը ստիպում էին՝ քրիստոնեական հավատից Ավետիսին հանել: Իսկ Բաբղար աղա իշխանը Ավետիսին հարցրեց իրողության ճշտության մասին և պատասխան լսեց, թե ինքը չի ուրանա իր քրիստոնեական հավատը, նրանք զուր են իր վրա այդ խոսքերը ասում: Ուստի Բաբղար աղան շլսեց իր ծառաների վկայությունը, այլ սաստեց իր ծառաներին, որ լռեն. ներքե Ավետիսին, ասելով՝ «Թույլ տվեք ապրի իր հավատով»:

* Այս բերդը, որ գտնվում է Աղբակ գավառում [Վասպուրականի նահանգ] Մ. Հովհաննիսյանի «Հայաստանի բերդերը» (Վենետիկ, 1970 թ.) հոյակապ աշխատության մեջ չի հիշատակված:

Եվ թեպետ Բաբղար աղան սաստեց շարախոսներին, որ խոսքը շտարածվի, սակայն շկանիվեց, այլ օրավուր խոսքը ավելի տարածվեց, մինչև հասավ մեծ իշխան Խոսրով փաշային:

Խոսրով փաշան Եղդիշեր մեծ պարոնի եղբայրն էր, երկրի տերը և Բաբղար աղայի վրա իշխողը: Չար վկաները բռնեցին Ավետիսին, տարան Խոսրով փաշայի մոտ, որ բնակվում էր Փիզան* կոչվող բերդում, և միևնույն վկայությունը տվին նրա առջև: Խոսրով փաշան Ավետիսին հարցրեց զործի ճշտության մասին, բայց նա դավանեց քրիստոնեական հավատը: Խոսրով փաշան հրամայեց նրան կալանավորել և օրեր հետո բերեց իր առջև և հարցրեց նրան ու զտավ հաստատուն քրիստոսի հավատի մեջ՝ իրեն քրիստոնյա խոստովանելով: Եվ իր պատասխանի մեջ ասում էր, թե՛ «Ինչպե՞ս կարող եմ թողնել իմ լույս հավատը և գնալ խավարի հետևից, որովհետև Քրիստոսը ինքը լույս է, այդպես է և հավատը, որ նրանն է: Իսկ ձեր առաջնորդը, որին մարգարե եք ասում, ինքը պարտող է ու խարեբա, և նրա բոլոր խոսքերը սուտ են»:

Այնուհետև կամեցան աղաչական խոսքերով ու հնարներով նրան որսալ, որովհետև Խոսրով փաշան ասաց. «Կտամ քեզ պարոնություն ու գյուղ, իշխանի աղջիկ, որին որ դու հավանես»: Եվ բերելով իր աղնվավայել ձին ամեն ոսկիակազմ սարքով և կանգնեցրեց նրա առջև և ասաց. «Ինձ հետ մշտապես փառավոր կպահես և մեծապատիվ իշխան կանեմ քեզ, եթե համաձայնես իմ խոսքերին»: Բայց Ավետիսը չհամաձայնեց:

Այա Խոսրով փաշան կանչեց իրենց դատարկ կրոնի առաջնորդներին և նրանց հարցրեց, թե ի՞նչպես են հրամայում ձեր գրքերի օրհնքները այս մարդու համար՝ նրանք պատասխանեցին, թե՛ «Իրա սատած խոսքերը եթե հաստատվեն վկաներով, անհնարին է, որ դա ապրի ոչ Մահմեդի հավատով, այլ ապես անպատճառ պետք է մեռնի»:

Նախկին սուտ վկաները այս խոսքի վրա եկան այնտեղ նրանց առջև նույնպես հաստատեցին իրենց առաջին սուտ

* Փիզան բերդը նույնպես չկա հիշյալ գրքում:

վկայությունը: Խոսքով փաշան շատ անգամ իր առջև բերեց Ավետիսին և նույն բանը հրամայեց նրան, թե ուրացիր քրիստոնեական հավատը և ընդունիր մահմեդական հավատը, և ես ինչ բարիքներ, որ խոստացել եմ, ավելորդով կտամ քեզ: Բայց Ավետիսը չուրացավ իր քրիստոնեական հավատը: Իսկ Խոսքով փաշան երբ տեսավ, որ Ավետիսը ամուր է կանգնած քրիստոնեական հավատին և չի կամենում նրանից հեռ կանգնել, ուստի հրամայեց կապանքներից արձակել և թողնել իր կամքին, որ ապրի քրիստոնեական հավատով: Իսկ Մահմեդի օրենքներին կարդացողները՝ մուլաները, մուգառիսները* հավաքվեցին Խոսքով փաշայի մոտ և իրենց գրքերի խոսքերից էին ասում նրան, թե՛ «Դու պարտավոր ես բռնի կերպով նրան մեր ճշմարիտ հավատքին բերել, իսկ եթե չհամաձայնվի, սպանել»: Իսկ Խոսքով փաշան իր օձիքը թափ տալով ասաց. «Այդ մարդու արյան հանդեպ ես անպարտ եմ և այդ դատաստանից անմասն, եթե իմ խոսքին լսեք, կթողնեք դրան, որովհետև անմեղ է, իսկ եթե չեք թողնում, դուք գիտեք»:

Իսկ մուլաներն ու մուգառիսները բոլորը հարձակվեցին Ավետիսի վրա, հափշտակեցին և տարան իրենց մեջ, սկսեցին նրան զարգարել ազնիվ և թանկագին հագուստով, անուշամ կերակուրներով, ըմպելիքներով և հաճելի խոսքերով զվարճացնել նրան և Խոսքով փաշայի բոլոր խոստացածների կրկնակին խոստացան տալ նրան, բայց Ավետիսը չուրացավ քրիստոնեական կրոնը: Այնուհետև, երբ տեսան չուրացավ, սկսեցին նրան շարշարել պեսպես ձևերով, և մանավանդ որ պարանոցից մինչև ոտքերը մարմնի փափուկ տեղերը սրի ծայրով ծակոտեցին. նրա մարմինը մի ձեռնաշափ տեղ անծակ շմնաց, արյունից ներկվեց ողջ մարմինը և զգեստը այնպես, որ տեսնողների մարմինները սարսուցենում էր: Իսկ Խոսքով փաշան մի անգամ ևս խնդրեց Ավետիսին, երբ նրան բերին նրա առջև և տեսավ այդպիսի արյունաշաղախ մարմնով, սոսկալով զարմացավ և խիստ ցասումով մեղադրեց մուլաներին և այդ ժամանակ նույնպես հրա-

մայեց Ավետիսին թողնել, որ ապրի իր հավատով. իսկ արյունաբերու մուլաները շթողին, այլ առան-տարան բերդից արքա հրապարակի մեջ, այնտեղ ևս շատ անգամ ստիպեցին նրան, ասելով. «Ուրացիր քո հավատը և ընդունիր մեր հավատը, ապա թե ոչ գլուխդ կկտրենք: Բայց ես չհամաձայնվեց և չուրացավ, ուստի սրով կտրեցին երանյալ Ավետիսի գլուխը: Իսկ իր նահատակության ժամին Ավետիսը իր դեմքը դեպ արևելք էր բռնել, բայց շարիքների ծառա մուլաները բռնի կերպով նրա դեմքը դարձրին հարավային կողմը, սակայն սուրբը նրանց շինթարկվեց, այլ դեմքը ուղղեց դեպ արևելք և այդպես մեռավ քրիստոսի հավատի համար՝ դավանելով ճշմարիտ քրիստոս աստծուն:

Այն գիշեր տեք Քրիստոսը փառավորեց իր նահատակներին երկնային լույսի նշանով, որ իջավ նրա վրա. սրան ականատես եղան Փիղան բերդի բոլոր բնակիչները, և նրանք, որ բերդի շուրջն էին, նաև ինքը Խոսքով փաշան, որ իր տան բարձր շենքից նայելով՝ տեսնում էր սյունաձև ճառագայթած լույսը նրա [Ավետիսի] վրա. նաև (տեսան) սպանող մուլաները, ուստի սպանող մուլաները շտապելով այնտեղից վերցրին Ավետիսի մարմինը և տարան ինչ-որ ուրիշ տեղ, մեկի տան մեջ պահեցին. մինչև օրը լուսացավ, ապա կանչեցին Ավետիսի եղբորը, որի անունն էր Թարառուկ. սրան հրամայեցին՝ վերցնել Ավետիսի մարմինը և տանել թաղել: Հավաքվեցին քրիստոնյա մարդիկ՝ քահանաներ, աշխարհականներ, նահատակին վերցրին, տարան այն գյուղը, որ կոչում են Առակ և այնտեղ նրան հանգիստ դրին գերեզմանում սաղմոսերգությամբ, օրհնությամբ և հոգևոր երգերով:

Այս երանելի մարդու՝ Ավետիսի նահատակությունը կատարվեց մեր 1105 [1656] թվականի մարտի քսանին մեր հավիտյանս հավիտենից օրհնված Քրիստոս աստծու փառքի համար. ամեն:

* Արարերեն ուսուցչապետ, այստեղ նշանակում է աստվածաբան:

ԻՐ ՄԱՀՎԱՆ ԺԱՄԻՆ ՌԻՐԱՅԱՄ ՄԻ ՄԱՐԴՈՒ ՎՐԱ ԵՂԱՄ ԱՍՏԾՈՒ ՀՐԱՇՔԵ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակներս՝ պարսից մեծ ու առաջին Շահ-Աբաս արքայի թագավորության տարիներին, Նախիջևան քաղաքում, որի իշխանն էր Մախսուտ սուլթանը, աստծու հրաշք եղավ մի քրիստոնյա մարդու վրա, որին կոչում էին Ղարաշորակ: Այս մարդը հավատքով քրիստոնյա էր և քրիստոնյա ծնողների զավակ, բայց ինքն աստվածային օրհնքների հանդեպ անտարբեր էր, հեռացել էր քրիստոնեական բուրք կարգերից ու կրոնից, եկեղեցի չէր գնում, աղոթքներով չէր խոստովանում, չէր հաղորդվում, չէր մտածում, թե մահկանացու է և մեռնելու է, չէր մտահոգվում հատուցման մասին ըստ գործերի*, ինչպես որ գրում է Աստվածաշունչ գիրքը, այլ աստծու բուրք պատվիրաններից հեռացել էր: Իսկ կյանքի բուրք օրերում շրջում էր կրպակներում, շուկաներում, փողոցներում, հրապարակներում, այլազգիների և իշխանների դռներում որևէ բան վաճառելու համար. քանզի իր արհեստը առևտրամիջնորդությունն էր, որ ուիշների ապրանքը առնում ծախում է ուրիշների: Եվ իր ամբողջ կյանքի ժամանակը նա այսպես մնաց. քանզի պատմողները, որ ականտես են եղել նրա գործին, ասում են, թե մինչև վաթսուներե տարեկանը հասավ նա՝ ավել կամ պակաս:

Այնպես եղավ, որ այս Ղարաշորակը մահվան հիվանդությամբ հիվանդացավ. նրա մոտ քահանա կանչեցին, որ խոստովանեցրեց նրան: Բայց որովհետև քահանան գիտեր նրա անուղիղ վարքի և մոլար կենցաղավարության մասին, ուստի նրա հոգու փրկության համար քահանան նրան ասում է. «Եղբայր, դու ինքդ գիտնս, որ քո կյանքը ծուլ ու պղերգես անցկացրել և երբեք չես հիշել այս օրը, թե մահ կամ դատաստան կա քո առջև: Արդ՝ այսօր եկել, հասել է քեզ, խնդրում եմ քեզնից՝ ինձ լսես և մի քիչ ապաշխարանքով հանձն առնես պատն ու աղոթքը և, եթե այս հիվանդությամբ

* Սաղմ. ԿԱ 13.

մեռնես, աստված ինքը թողութուն է շնորհելու քեզ, որովհետև քո կամքով խոնարհվեցիր և ապաշխարություն հանձն առար, նաև աստծուց դու բարիքների վարձ կընդունես: Իսկ եթե ողջանաս և հիվանդությունից վեր կենաս, այն ժամանակ կկատարես քո ուխտած ապաշխարանքը և ես հավատում եմ աստծուն, որ այս սակավ ապաշխարանքի համար, որ դու հանձն ես առնում, աստված քեզ կատարյալ առողջություն կտա, որ վեր կենաս հիվանդությունիցդ»: Այս ամենը քահանան ասաց նրան, որ թերևս զղջա:

Իսկ նա ոչ միայն չզղջաց, այլ ամենամեծ մեղքն ու չարիքը գործեց: Նեղվեց ու խոժոռվեց քահանայի խոսքերից, քանզի շտապ իր մոտ կանչեց մահմեդականներից ոմանց և նրանց ասաց, որ իր մոտ բերեն մուլա և մուղդի*։ Եվ երբ բերին, այդ ժամանակ նրանց միջոցով ուրացավ Քրիստոսին ու սրա հավատը և հավատով ու դավանությամբ դարձավ մահմեդական: Եվ երբ այդ ողորմելի, թշվառական մարդը՝ Ղարաշորակը, այդպես արեց, քաղաքի բուրք քրիստոնյաները անմխիթար սգի մեջ ընկան ոչ միայն նրա կորստյան, այլև քրիստոնեական հավատի համար, որը ծաղր ու ծանակելով արհամարհական հայհոյում էին մահմեդականները: Նաև մահմեդականները ուրախացած ցնծալից ձայնով հրճվում էին ու խալտում այդ մարդու ուրանալու համար. որովհետև ուրացողը նշանավոր էր: Եվ նրա ուրանալուց հետո չորս օր անց ուրացող հիվանդը մեռավ: Քաղաքի մահմեդականների ողջ բազմությունը հավաքվեցին՝ ոչ միայն կարգացողներն ու հասարակ մարդիկ, այլ նաև երեւելի ու անվանի մարդիկ, իշխաններ, և իրենց զարդարեցին երեւելի զենքերով ու զարդերով, պայծառ հագուստներով և նրա դագաղը ավելի պճնազարդելով պաճուճեցին և ի պատիվ նրա դուրս բերին մահիկով դրոշակը և բարձրացրին ավելի քան քսան թուղ** ու մեծաշուք և երեւելի փառքով տարան իրենց մեռելների զերեզմանոցը, թաղեցին նրան և դարձան իրենց տները:

* Ղուրան կարդացող
** Թուղը թուրքական հնամեծի դրոշակ է, որ դուրս են բերել ի պատիվ Ղարաշորակի:

Իսկ արդարադատ աստված իսպառ անտես շարեց իր ժողովրդիին և քրիստոնեական հավատը, այլ իսկույն նախանձախնդիր եղավ, դատաստան ու վրեժխնդրութիւն արեց. ինչպես որ շորս օր ուրանալուց հետո սատկեց Ղարաշորակը, այսպես էլ իր թաղումից շորս օր հետո երեկոյան ժամին տեսան Ղարաշորակ ուրացողին, որին մահմեդականները թաղեցին. քանզի ելել էր վիճից, որտեղ թաղված էր, մերկ ու խայտառակ, դարշատեսք, այլակերպ իրեւ կատաղի շուն իր պատանը գցած ուսերին քաղաքի միջով գալիս էր, շուկայում և կրպակում շրջում էր, իսկ ովքեր տեսնում էին սարսափած ահաբեկվում էին, քանզի բոլորը ճանաչում էին նրան: Նրա զարհուրելի տեսքից ամեն ոք թողեց գործերն ու խանութը և հասցնեալ տագնապահար հազիվ ճողոպրելով փախավ իր տեղից անդառնալի ընթացքով:

Այլազգիներից ոմանք հրապարակի մեջ խոսք գցեցին, թե սա Ղարաշորակը չէ, այլ նոր երեցած ինչ-որ մեկն է: Այս պատճառով և այդ բանը ստուգելու համար տասը և ավելի մարդ միաբանվեցին և դիտելով իմացան այն ժամը, երբ Ղարաշորակը եկավ շուկա, այդ ժամանակ մարդիկ միաբան գնացին այն փոսը, որտեղ դրված էր Ղարաշորակը, տեսան, որ այնտեղ չէ: Այսպես արին ոչ թե մեկ, այլ շորս անգամ, որով ավելի ստուգվեց, թե նա է:

Եվ ամեն օր երեկոյան դեմ ելնում էր, նույնպես պատանը ուսը գցած գալիս էր շուկա, և մինչև առավոտվա լուսանալը դարձյալ գնում էր և մտնում իր գերեզմանը: Յոթ օր այսպես էր անում: Սրա զարհուրելի տեսքից ամբողջ քաղաքը սարսուռեց, սասանվեց: Երեկոյան դեմ, որ ժամին որ հասնում էր նրա գալուստի պահը, ամենքը թողնում էին իրենց խանութներն ու գործերը և փախչում էին իրենց տները: Նաև գիշերապահ գինվորների խմբերը, որոնց հասհաս (ժամապահ) են ասում, նույնպես դադարեցին գիշերը շրջելուց, քանզի վախենում էին:

Իսկ մահմեդականները ամոթահար, շտապունած, գլխիկոր, պապանձված, ապշած դետին էին նայում: Ապա նրանց խորհրդականները յոթ օր հետո եկան, խորհուրդ արին: Ընտրեցին արիասիրտ, բաջազոր, կորովի մարդիկ ավելի քան երեսուն հոգի և զինեցին նրանց զրահներով, սազմի գնե-

քերով, նետերով, աշտեներով, սուսերներով և այլ զենքերով ու պատվիրեցին նրանց՝ Ղարաշորակին սպանել և կորցնել: Իսկ պատրաստված մարդիկ աջք տնկած կանգնել էին զգուշությամբ և երկյուղալի տագնապով սպասում էին ուրացող մեռելի գալուն:

Եվ երեկոյան պահին մշտական ժամը մոտենալիս տեսան, որ գալիս էր Պատրաստված մարդիկ ընթացան նրան ընդառաջ, որ սպանեն, իսկ նա կրունկի վրա դառնալով՝ փախուստ տվեց, գնաց, մտավ այն փոսը, որտեղից դուրս էր եկել, որտեղ թաղել էին նրան: Իսկ զինակիր մարդիկ հասան այն տեղը, սրով խողխողեցին նրան, գլուխը կտրեցին, այլ հեռավոր տեղ կորցրին: Այս ձևով շորք վերացավ մեջտեղից, իսկ բոլոր այլազգիները սկսեցին հայհոյել ուրացող Ղարաշորակին և վկայում էին, որ քրիստոնեական հավատը ճշմարիտ է:

Եվ այս ամենը արեց սատանան, որ խախտի քրիստոնեական հավատը, բայց սրանով ավելի հաստատվեց Քրիստոսի ճշմարիտ հավատը, և բարձրացավ մեր տեր Հիսուս Քրիստոսի անունը, իսկ բոլոր քրիստոնյաները ավելի հաստատվեցին Քրիստոսի հավատի վրա և մեծ գոհությամբ փառավորեցին աստծուն ճշմարտութիւնը ի հայտ բերելու համար. սրանով փառավորվում է աստված հավիտյանս հավիտենից. ամեն:

Գ Լ Ո Ւ Խ Մ

ՄԱՍՆԱԿԻ ՀՐԳԵՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՂԱՎ ՄԵՍ ՔԱՂԱՔ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

Այս հրկիզությանը մենք ականատես չենք եղել, քանզի այդ օրերին մենք Սուրբ աթոռ էջմիածնում էինք, բայց այնպես եղավ, որ մեր վարդապետ միաբաններից մեկը պատահեց Կոստանդնուպոլսում. նա Ստեփան վարդապետ էր հորջորվում. տեղով Մեղրի գյուղացի լինելով՝ իր կենցաղավարության հանգամանքները գրեց էջմիածնի միաբաններին. միևնույն նամակում նկարագրել էր նաև Կոստանդնուպոլսում մեծ քաղաքի հրկիզութիւնը, որին նա այնտեղ ականատես

էր եղել: Նրա նամակը առնելով՝ նույն գրածը նրա շարա-
դրութեամբ հենց այժմ այստեղ արտագրեցի հետեւյալ պատ-
ճառով:

Նախ՝ որովհետև առձեռն պատրաստ գրվածը հարմար
չհամարեցի վերաշարադրել, և երկրորդ՝ իմ երկար աշխա-
տանքների պատճառով, որից ձանձրացել եմ, քանի որ ար-
դեն տասնմեկ տարին եմ թեկնոյսում, որ այս պատմու-
թյան վրա աշխատում եմ: Որովհետև հարյուր թվականին
սկսեցի [ուզում է ասել՝ 1100-1651] գրել, այժմ 111 թվա-
կանը թեկնոյսեցի և տակավին աշխատում եմ սրա վրա. և
երրորդ՝ որովհետև ծերացել եմ և ուժից խիստ ընկել, իսկ
մահը եկել ամեն օր կանգնել է իմ աչքերի դիմաց. գիտեմ,
որ ես կմեռնեմ; իսկ այս դիրքս կմնա կիսակատար, և իմ
թափած աշխատանքը ամբողջովին իղուր կկորչի, որովհետև
ոչ մեկի հոգը չէ աշխատանքը ձեռնարկելու և ի կատար ածե-
լու, ուստի շտապում եմ, աճապարում, դուցե ավարտեմ, որ
անկատար չմնա, և իմ աշխատանքը կորչի: Ստեփանոս
վարդապետի Կոստանդնուպոլսից ուղարկված գրածի սկիզբը
հետեւյալն է, որ միևնույն շարադրութեամբ արտագրում եմ:

«Բայց Բյուզանդիայի իրադարձութունների ու վշտաբեր
եղելութունների, անտանելի տառապանքների ու եղբրական
դիպվածների մասին ո՞վ կարող է պատմագրութեամբ արտա-
հայտել նյութական թղթի միջոցով միևնույն ձևով, որովհետև
աստուծու կողմից էր այն ցասումը և ամեն մարդու հակա-
ռակ ընթացքի մեղքերի դատապարտութունը: Ուստի ըստ
նախախնամութեան էր ընդհանուր վճիռը մի անձի նկատմամբ
իբրև զգաստացում բոլորի: Ապա թե ոչ ընդհանուր պատիժ
կատանային երկու կյանքում ըստ տերունական հրամանի ու
պայմանի* ըստ Նոյի լինելու օրերի և ըստ վերջանալի հա-
վիտենական ապագայի: Ուստի զարհուրելի իրեր, երկյուղով
լի տեսարաններ, սարսափելի ձայներ, բազմատեսակ ճայթ-
յուններ, բազմազան աղաղակներ, անսպառ տարակույսներ
(են լինում): Այսպես և այս կերպ ներկա ժամանակս հրաշա-

* Աստված հրամայեց և պայմանավորվեց, որ նորաստեղծ մարդը բո-
լոր ծառերի պտուղներից ուտի, բացի գիտութեան և բարու ծառի պտղից
[ՄԵ. Բ 17].

գործվեց, որի մասին տկարանում եմ այս նկարագրութեան
առջև: Քանզի հուլիս ամսի քսանմեկին ըստ հունական տո-
մարի և հայկական հազար հարյուր ինը թվականի շաբաթ
օրվա իններորդ ժամին պատահում է այդ շարաբաստիկ դեպքն
ու կսկծալի բանը այս մեծ քաղաքում: Քաղաքի հյուսիսա-
յին կողմից, նրա ծովի մոտ լինում է հրդեհի դեպք խիստ
մեծ ու շնորհատուղ երևույթով ըստ վերջին նշանի: Քանզի
արքայի նորաշեն պալատից սկսած դեպի վեր ընդարձակ և
մեծ տարածութեամբ ու սահմանով հրդեհը բռնում է մինչև
ջրաբեր կամարը, այնտեղից իջնում է միևնույն տեղը, որտե-
ղից սկսվեց՝ սաստիկ բորյաս բամու օժանդակութեամբ: Եվ
այսպես երկու ճյուղի բաժանվելով, տարածվելով ու սպառ-
վելով հասավ մինչև բլուրի գագաթը, որտեղ այլազգիների
մեծամեծ ժողովարաններն են կառուցված երևում, որոնք
արտաքին տեսքով գեղեցիկաշեն արժանի են հիացման ըստ
միևնույն նայվածքի: Ապա այնտեղից իսկույն ու ավելի շուտ
երեք ճյուղի բաժանվեց և յուրաքանչյուրի բաժանված ծայ-
րից շտապեցին իրենց առաջ դրված գործի կատարմանը ըստ
հաջողակ հողմի ստիպման ու հարվածի իբրև ինչ-որ շափով,
սահմանով ու ձևով բանականների պես: Քանզի, ինչպես
ասվեց, ճախրելով երկու եզրերով ամբողջ տարածութեան
հետ միասին մի վայրում փլվում էին բոլոր շենքերի կառուց-
վածքները լրիվ տապալումով ու ոչնչացումով, այսինքն՝
բարձրաբերձ աշտարակների, ոսկեզօծ պալատների, գեղեց-
կադիր սարավանդների, բազմածախս շինված ապարանքների
ու տների: Ինչպես ասվեց, երկու ծայրերից մեկը իջնելով
գագաթից դեպի արևելք, շրջան առած ծովեզրերով և անց-
նելով Մաքսապետականի ու Ավաղակոչականի դռներով վեր-
ջացավ իջևանատան մոտ: Իսկ մյուս ծայրը սաստիկ դեպի
արևմուտք զնալով ըստ իր զորութեան շառաշումով, պար-
փակելով նույն ձևով դիմեց յոթնակերտ աշտարակների
մոտով տարածութեան շնչին հեռավորութեամբ դեպի ծովը
իջնելով և անցնելով նորակոչիկ դռնով, միջոցի եզրի հետ
միասին դետեղվում է առաջինի ծայրի մոտ: Այսպես և այս
ձևով վաթսուներեք ժամում երևելի մայրաքաղաքը իր բոլոր
արդուզարդից դատարկվեց ըստ այլատեսակ քամիների
փլվան՝ բորյասների, հարավային քամիների (նոտոսների),

փոթորիկների և ուրիշ շատերի: Մինչև անգամ քարերը այ-
րեց և բուլբուլի մոխրի վերածեց: Եվ արդ՝ այնտեղ պետք
էր տեսնել ընդհանուրի տաղնապը, այնտեղ պետք էր տես-
նել կրծքերի կոծումը, ձայների աղաղակը, աչքերի արտա-
սուբը: Այնտեղ պետք էր տեսնել աղիքների գալարումը,
սրտերի մորմոքը, ձայների ճիչը: Այնտեղ պետք էր տեսնել
անձերի անուրածությունը [վշտից օղակվելը], մեջքերի
բեկումը, մտքերի սպառումը, որովհետև հուրը ստիպում էր,
մշտապես հրահրում և սարսափեցնում. ապարանքներ էին
փլվում, որոտմունք էին լինում, ցուլացումներ էին երևում:
Ուստի հարուստները տարակուսում էին, ռամիկները հուսա-
հատվում, աղքատները վարանում էին, վիրավորները գոշու-
ն էին, ծնողները սգում էին, որդիները դառնապես լացում,
որովհետև վերացավ նրանց հույսը, վերացավ իրենցից օգ-
նությունը, զրկվեցին իրենց ունեցվածքից: Ահա և միանգա-
մից մեկուսացան, միմյանցից հեռացան և անհայտացան,
որովհետև քայքայվեցին, պառակտվեցին և բաժանվեցին
հայրերը որդիներից, որդիները հայրերից, մայրերը դուստ-
րերից, դուստրերը մայրերից, բարեկամները բարեկամներից
և սիրելիները իրենց սիրելիներից, տակավին միմյանց չգտան
ըստ տերունական հրամանի:

Նաև չէին կարողանում ճանաչել մեռյալներին՝ զիակ-
ները թաղելիս, որովհետև մեռած մարդկանց թիվը ասում
էին երեք հազար ըստ բացահայտ ականատեսության, ըստ
կարգված հանձնաժողովի քննության: Ուստի և տրտմություն,
ուստի և հեծություն, ուստի և խռովություններ տարածվեցին
ընդհանուրի մեջ ըստ Աստվածաշնչի, թե՛ ձեր տարեկան տո-
ները սգի վերածվեն:*

Ահա կատարվեց այս ամենը մեր մեղքերի պատճառով
իբրև հավատացյալ մարդկանց խրատ ու զգուշություն, իսկ
ծայր աստիճան հակառակ կանգնածին կորուստ ու կոր-
ծանումս:

* Դարձցին տարեկանը ձեր ի սուգ և ամենայն ուրախութիւնը ձեր ի
արամութիւն (Տովբիթ Բ 6),

Եվ արդ՝ սիրելիներ, հարմար չեմ համարում այսպիսի
եղելությունը արհամարհել, մանավանդ [կամենում եմ]
արժանի անել պատմության, իսկ եթե ոչ, դուք ողջ լինեք
ամենքի տիրոջով. ամեն:

ԳՐԻՆ ԾԱ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՕՍՄԱՆՅԻՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ

ԽՈՆԳԿԱՐ ԿՈԶՎՈՂ

ՕՍՄԱՆԻ ՇԱՌԱՎԻՂՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԱՅՍ Է

Օսմանի շառավիղների կարգն ու սկիզբը, որ ծնվել են ու
բաղմացել, բաղմամբով բաղաքներ ու գավառներ տիրել են
ու թագավորի: Հայոց 671 [1222] թվականին Օսմանճուկ
գյուղաքաղաքից Օսման անունով ոման հարուստ հավաքելով
իր նմաններին ելավ պատերազմեց իր բուր տերերի դեմ և
նվաճեց նրանց. քիչ-քիչ մեծացավ և զարձավ բաղմամբով
քաղաքների ու գավառների թագավոր: Սուլթան Օսմանի մա-
հից հետո նրա աթոռը գրավեց նրա որդին՝ սուլթան Իրկորոզ
Օրխանը: Երրորդ սուլթանը Մահմադն է, չորրորդը՝ սուլթան
Մուրադը, հինգերորդը՝ Իլտրում Բայազիդը, վեցերորդը՝ սուլ-
թան Մուրադը, յոթերորդը՝ սուլթան Մահմադը, ութերորդը՝
սուլթան Բայազիդը, իններորդը՝ սուլթան Սելումը, տասնե-
րորդը՝ սուլթան Սլեյմանը, տասնմեկերորդը՝ սուլթան Սելի-
մը, տասներկուերորդը՝ սուլթան Մուրադը, տասներեքերոր-
դը՝ սուլթան Մահմադը, տասնչորսերորդը՝ սուլթան Ահմադը՝
հասակով երկսա, Զհանգիր (անունով):

Մանրամասն չեմ կարող պատմել սրանց պարագաները,
այլ համառոտ կասեմ:

Երբ լենկթեմուրն եկել է, նա Իլտրում Բայազիդին Բուր-
սայում նստեցրել է աթոռին, որ գահն է: Հետո նրա որդին՝
սուլթան Մուրադը գրավել է Ատրանան: Հետո սուլթան Մահ-
մադը հայոց 902 (1453) թ. գրավել է Պոլիսը, Կաֆան, Ակքըր-
մանը, Տրապիզոնը և շատ քաղաքներով ու գավառներով է
անցել սուլթան Մահմադը: Սուլթան Բայազիդը հասել է
սուլթան Սելիմին, երբ 963 [1514] թվին սուլթան Սելիմը

բազմաթիվ զորքերով ելավ, զնաց Շահիսմայիլի վրա և պատերազմեց Չալդրանում, բայց չկարողացավ գրավել այն: Ետ դարձավ, 964 (1515) թ. գրավեց Կամախը: 965 [1516] թվին գրավեց Ամիղը և հետո 966 (1517) թ. մեծ ջանքով գրավեց Մսրբը: 967 (1518) թվին այլազգիները Ամիղում հայերից առան մեծ կաթողիկեն՝ սուրբ Թեոդորոսը և դարձրին իրենց համար աղոթանոց: 970 [1521] թվականին մեռավ սուլթան Սելիմը, զահ նստեց սուլթան Սելիմանը: 984 (1535) թվին սուլթան Սելիմանը մեծ զորքով ելավ, զնաց Թավրիզ Շահթահ-մազի վրա, բայց չկարողացավ նրան հաղթել, ետ դարձավ, գրավեց Բաբելոնը, որ Բաղդադն է: Սակայն ճանապարհին շատ նեղութուններ կրեց, որովհետև հանդիպեցին մի ահագին մեծ գետի, որ թուրքերեն բառով կոչվում է Տողուզում, որ ինը ճյուղ է նշանակում: Այս գեղը շատ մարդիկ ու գանձ տարավ: 1005 [1556] թվին բացին Ամիղի նոր դուռը, որ նայում է արևելք, քանզի առաջին կառուցողը շորս դուռ էր բացել, իսկ վրայից երկար ժամանակ էր անցել: Որոշ ժամանակ անցնելուց հետո թուրքական թագավորը Ամիղը գրավեց և տնսավ, որ մի դուռը բերդի մեջ էր, ելքն ու մուտքը խցել էին այն, որ թագավորի հրամանով Ջրդուուն է կոչվում: 1000 [1551] թվին Ամիղում նորոգվեց սուրբ Կիրակոսը: 999 (1550) թ. սուլթան Սելիմանը կրկին մեծ զորքով ելավ, զնաց Թավրիզ Շահթահմազի վրա, բայց չկարողացավ գրավել. դարձավ Շամիրամակերտի վրա, որ Վանն է և գրավեց այն: Հետո Սելիմանը մեռավ, զահ նստեց նրա որդի սուլթան Սելիմը: 1019 [1570] թվին սուլթան Սելիմը մեծ զորք ուղարկեց Կիպրոս կղզու վրա, երկու տարի պաշարեց այն և գրավեց. շատ քրիստոնյաներ կոտորեց: Այս թագավորը ութ տարի թագավորեց: Հետո թագավորեց սրա որդի սուլթան Մուրադը:

1029 [1580] թվին թագավորը վերավորվեց հրեաների համարձակությունից և հրեաների ու բոլոր քրիստոնյաների գլուխներից վերացրեց զխարկները: Ապա տեղ-տեղ կաշառք տվին և թույլտվություն առան, զխարկ դրին տասնութ տա-

* Տողուզում նշանակում է խոզասպան:

** Հայկական եկեղեցի է:

րի հետո: Ապա Կոստանդնուպոլսում և այլ շատ քաղաքներում մնացին զխարկով:

Այս թագավոր սուլթան Մուրադը շատ զորք ուղարկեց Պարսկաստանի վրա և գրավեց Թավրիզը, Երևանը, Գանձակը, Արշարը և Շամախին մինչև Ալանների դուռը²³⁹, որ դրել է Ալեքսանդր Մակեդոնացին:

Երեսուն օրվա ճանապարհի լայնությամբ ու երկայնությամբ տիրեց երկրներին: Տասնհինգ տարի ասպատակվելով սովին ու սրից շատերը մեռան, շատ երկրներ ավերվեցին: Հետո մի փոքր ժամանակ խաղաղություն եղավ:

Սուլթան Մուրադի մահից հետո զահ նստեց նրա որդի սուլթան Մահմադը հայոց 1044 [1596] թվին, բայց խաղաղություն չարեց: Սրա ժամանակ շատ քաղաքներ ու երկրներ ավերվեցին, որովհետև չէր կարողանում թագավորությունը վարել: Բոլոր ծառաներն ու տերերը ապստամբվեցին և երես դարձրին նրանից, քանզի միայն ինքը չէր կառավարում: Ծրբ մի քաղաք տալիս էր որևէ փաշայի կամ պարոնի, տասն օր կամ քսան օր հետո մայրը կամ քույրը, կամ կինը, կամ վեղիքը տալիս էին մի այլ փաշայի և առնում էին շատ կարմիր դահեկան: Տիրապետեցին Ամիղը վեց ամսում ինը փաշայի տվին: Պատահում էր, որ փաշան էր գալիս, պատահում էր, որ փաշայի ներկայացուցիչը. նրանք որ գալիս էին, գիտեին, որ վերջը փուչ է, ուստի նրանք էլ սկսում էին կողոպտել ու թալանել քաղաքն ու երկիրը: Ինչ երկարեմ, երբ գրով չեմ կարող պատմել: Ամիղում այստեղ-այնտեղ շինություն կար, իսկ երբ Ամիղից կես օրվա տարածությունից դուրս ես գալիս մինչև մեծ քաղաք Պոլիս, ավերակ է, տեղ-տեղ են շինքեր գտնվում: Այս սուլթան Մահմադի ժամանակ Չոռոմ գյուղաքաղաքում հայտնվեց Յազիչի անունով մեկը, որ ուներ Հասան անունով մի եղբայր. ոչ թագավորական տոհմից էր և ոչ մեծ ցեղից, այլ գոհեհիկ մեկն էր և ավելի ոչինչ, քան մյուս բոլոր մարդիկ: Շատ ավերածություններ արեց, հարկապահանջություն էր գցել գյուղերում ու քաղաքներում մինչև Բյուզանդիայի քաղաքի դռները: Գանդատավորներ հավաքվեցին և զնացին սուլթան Մահմեդի մոտ, թե երկիր ու քաղաք բոլորը ավերվեցին մի ոչինչ մարդուց: Թագավորը հրաման տվեց, Ամիղ քաղաքում հավաքվեցին հի-

սուն հազար մարդ՝ ավելի, քան թե պակաս, զորագլխով գնացին նրա վրա, բայց չկարողացան հաղթել, այլ իրենք պարտվեցին: Նա Ուոհայում էր պաշարված, Ուոհայի բերդի մեծավորին բերդից ցած նետեց, տիրեց բերդն ու քաղաքը, մի ավագ քահանա, մի տանուտեր նահատակեց գանձ հավաքելու համար, իսկ մահմեդական մեծամեծներ շատ սպանեց և այնքան շատ վնաս տվեց Ուոհա քաղաքին, որ պատմել չի լինի:

Երեք տարի վրան հարձակվեցին, բայց իրենց զորապետով պարտվեցին ու ոչնչացան: Հետո թագավորը վիրավորվեց և հնարք մտածեց. ուղարկեց շատ գանձեր ու նվերահանդերձներ և նրան կանչեց, անցկացրեց մեծ ծովը և նշանակեց իր զորքերի զորապետ ֆոանգների ու մաճառների դեմ: Այնքան տկարացավ այս թագավորը, որ չկարողացավ հաղթել, այլ հնարք մտածեց և այդ արեց: Սա ինը տարի թագավորեց. սրա ժամանակ Օսմանի շառավիղների թագավորությունը խանգարվեց:

1053 [1604] թվին սուլթան Մահմադը մեռավ, գահնստեց սրա որդի սուլթան Ահմադ Ջահանգիրը մանուկ հասակում: 1067 [1618] թվին սուլթան Ահմադը մեռավ, թագավորեց սրա եղբայր սուլթան Մուստաֆան: Բեզամա արին՝ չորս ամիս ավրեց իբրև թագավոր, հարկադրանքով ցած իջեցրին և թագավորեցրին սրա եղբորորդի սուլթան Օսմանին տղա հասակում տասնչորս տարեկան և այս տարի՝ 1070 [1621] թվին սուլթան Օսմանը Թաթար խանի հետ գնաց լեհերի վրա պատերազմելու, վերադարձան բազմաթիվ գերիներով: Նրա ողջ երկիրը՝ բեզամա արին՝ Այս նույն տարին առաված սուլթան Օսմանից գերիների վրեժը առավ. զորքը հարձակվեց նրա վրա, սպանեց և թագավորեցրեց սուլթան Մուստաֆային՝ նրա հորեղբորը բանտից հանելով: Այս պատմությունը ավարտվեց:

*Բեզամայ բառը, որ երկու տեղ կրկնվում է միևնույն կապակցությամբ (արարին բեզամայ, բեզամայ արարին) անհասկանալի է: Թուսերեն հրատարակության մեջ թարգմանված է մեղադրեցին, բայց՝ «երա ողջ երկիրը Բեզամա արին»-ը այդ նշանակությամբ չի համապատասխանում:

Օսմանցի թագավորների կարգը

Ա. Օսման, Բ. Օրհան, Գ. Մուհամադ, Դ. Մուրադ, Ե. Բայազիդ, Զ. Մուրադ, Է. Մուհամադ, Ը. Բայազիդ, Թ. Սելիմ, Ժ. Սուլեյման, Ժա. Սելիմ հրեայի որդի, Ժբ. Մուրադ, Ժգ. Մահմադ, Ժդ. Ահմադ, Ժե. Մուստաֆա, Ժզ. Օսման, Ժէ. Էլի նույն Մուստաֆան, Ժբ. Մուրադ, Ժթ. Իբրահիմ, Ի. Մահմադ:

Օսմանցիների թագավորների մասին, թե ովքեր են մեկը մյուսից հետո

Սրանք են օսմանցիների թագավորները, որոնց Աստվածաշունչը օձ կոչեց. սրանք շատ ժամանակ առաջ տիրեցին աշխարհին և այս է նրանց ցեղը մեկը մյուսից մինչև այսօրվա ժամանակը: Օսմանցի մահմեդական թագավորների օսմանցի կոչվելու սկիզբն ու պատճառը հետևյալն է: Ա. Առաջին՝ անունը Օսման էր, որ ձոխ գլուղից էր՝ մի շինական հողագործ մահմեդական մարդ, որ թողեց հողագործությունը և մի առժամանակ եղավ զոդ. քիչ-քիչ զորացավ, գնաց միացավ սուլթան Ալադինին. նրանից զորք առավ, գնաց գրավեց Բուրսա քաղաքը: Բ. Սրանից հետո թագավորեց նրա որդի սուլթան Օրհանը. սա գրավեց Ջենգիշահերը և բացեց Կ. Սրանից հետո թագավորեց սրա որդի սուլթան Մուհամադը, Գ. սրանից հետո թագավորեց սրա որդի Մուրադը: Ե. Մուրադից հետո թագավորեց սրա որդի Բայազիդը, որ կոչվում էր Իլարիմ. սրան Լենկթեմուրը գրեց երկաթի վանդակի մեջ: Զ. Սրանից հետո թագավորեց մեկ այլ Մուրադ: Է. սրանից հետո մի այլ Մուհամադ, որ գրավեց Պոլիսը մեր թվականություն 902 [1453] թվին: Ը. Սրանից հետո թագավորեց սուլթան Բայազիդը. սրա ժամանակ Սևաստի վանքում էր գտնվում Մատթեոս վարդապետը: Թ. Սրանից հետո սրա որդի Սելիմը, որ սահմանեց երեսոս հավաքելը: Ժ. Սրանից հետո թագավորեց սրա որդի Սուլեյման խոնդկարը [թագավոր], որ ամենից շատ թագավորեց և շրջեց երկրով: Ժա. Սրանից հետո թագավորեց սրա որդի մի այլ Սելիմ: Ասում են, թե սա հրեայի որդի էր. քանզի սրա հայրը անզավակ էր, մայրը մի աղջիկ ծնեց, իսկ մի հրեա կին տղա ծնեց: Թագուհին դրա-

մով համաձայնեցրեց հրեային և աղջիկը փոխեց տղայի հետ, որին Սելիմ անվանեցին. այս է սրա պատճառը: ԺԲ. սրանից հետո թագավորեց սրա որդի Մուրադը, որ սև զրդակներ հագցրեց քրիստոնյաներին: ԺԳ. Սրանից հետո թագավորեց սրա որդին՝ մի այլ Մուհամադ: ԺԴ. Սրանից հետո սրա որդի Ահմադը: ԺԵ. Սրանից հետո թագավորեցրին սրա եղբայր Մուստաֆային երեք ամիս: Երեք ամսից հետո իշխանները Մուստաֆային զցեցին և թագավորեցրին Ահմադի որդի Օսմանին: ԺԶ. Չորս տարի հետո ենիչերիները սպանեցին Օսմանին և երկրորդ անգամ թագավորեցրին Մուստաֆային, որի մասին ասում էին, թե խելապակաս էր, մեր 1071 (1622) թվականին թագավորեց մի տարի վեց ամիս: Սրան վերացրին և թագավորեցրին Օսմանի որդի Մուրադին 1072 (1623) թվին: ԺԷ. Սրա ժամանակ և սուլն տարին կարմիր գլխարկավորները, որոնք զզլբաշներն են, Բաղդադը գրավեցին: Այս սուլթան Մուրադի հայրը՝ սուլթան Օսմանը մշտապես կերպարանափոխվում էր ու շրջում Կոստանդնուպոլիս քաղաքում՝ սրճարաններում, զինհտներում և այլ տեղերում. լցում ու տեսնում էր ենիչերիների ու սպանների անկարգությունները, անիրավությունները և անխնայ կոտորում էր սրանց մեծերին ու փոքրերին: Ուստի ենիչերիների դասերը միաբանվեցին և սուլթան Օսմանին սպանեցին: Նույն ժամանակ Կարին քաղաքում էր Աբազա փաշան, որ շափազանց արի ու քաջ պատերազմող էր և շատ հեծյալների տեր: Սա թագավորի արյան վրեժխնդրության համար սկսեց ենիչերներին կոտորել: Սկսելով Կարինից բոլոր քաղաքներում ու գավառներում կոտորելով զնաց մինչև Անկարա: Չափազանց անխնայ ու խիստ շարշարանքներով սպանում էր մինչև բոլոր ենիչիերիների սպառումը: Անկարայից վերադարձավ և կրկին եկավ Կարին, բերդը ամրացրեց և նստեց մեջը:

Նաև այն քարավանները, որ արևելքից և արևմուտքից գալիս էին Կարին ու գնում, արգելեց ամեն կարգի խորամանկությամբ ու խաբեությամբ, մինչև որ շատ քարավաններ հավաքվեցին: Ապա օրերից մի օր բոլորի ունեցվածքը հափշտակեց՝ թե կանխիկ, թե ապառիկ և հետո ապստամբվեց թագավորի դեմ և դարձավ ջալալի: Նաև կամեցավ միա-

բանվել պարսիկների հետ, որովհետև իր քեռորդուն մեծ զորքով ուղարկեց պարսից Շահ-Աբաս թագավորի մոտ:

Իսկ սուլթան Մուրադ թագավորը այս Աբազա փաշայի վրա ուղարկեց իր վեզիրին՝ խոսքով փաշային, որ եկավ Կարինի բերդը, գրավեց և Աբազա փաշային բռնեց, տարավ Պոլիս մեր 1077 (1628) թվին: Թագավորը Աբազա փաշային բանտարկեց և հետո 1083 (1634) թվի օգոստոս ամսին սպանեց:

Այս սուլթան Մուրադը իր վեզիր խոսքով փաշային ուղարկեց, որ գնա Բաղդադ քաղաքի վրա և գրավի այն: խոսքով փաշան գնաց, մտավ Պարսկաստան՝ Համադանի կողմը և հասավ մինչև Դարգազին քաղաքը: Չմեռն ու ցուրտը վրա հասան, վերադարձավ, եկավ Թոքաթ: Այս պատճառով սուլթան Մուրադը Մուրթուզա փաշային ուղարկեց խոսքով փաշային սպանելու: Նա եկավ Թոքաթ, խոսքով փաշային սպանեց 1079 (1630) թվին: Այս այն սուլթան Մուրադն է, և վեզիրը այն խոսքով փաշան է, որոնց հիշատակել ենք Սահակ կաթողիկոսի հակառակություն (ընդդեմ Մովսես կաթողիկոսի) գլխում (Ի գլուխ):

1083 (1634) թվին օգոստոս ամսին սուլթան Մուրադը խիստ արգելք դրեց ծխախոտի վրա իր տերություն բոլոր երկրներում: Բոլոր սրճարանները, որ կային բոլոր քաղաքներում, քանդեց, ավերեց և վերացրեց, որովհետև այն ժամանակ, երբ ենիչարիները սուլթան Օսմանին սպանեցին, սրճարաններում նստած սպանություն մասին էին խոսում սուրճ խմելով և ծխախոտ ծխելով:

1083 (1634) թվին սուլթան Մուրադը զնաց լեհերի վրա պատերազմի: Լեհերը հնազանդվելով նրան վերադարձրին իրենցից: 1083 (1634) թվին այս սուլթան Մուրադի ժամանակ հույները ծաղաղափի արին, երբ վեզիր էր Բայրամ փաշան, որ ազգությունը հույն էր: Ուստի կողմնապահություն արեց հօգուտ հույների, իսկ հայերին թյուր ներկայացրեց թագավորին, որի պատճառով թագավորը բարկացավ և հայերից սպանեց մի քահանա և երկու աշխարհական:

1084 (1635) թվի մարտ ամսին սուլթան Մուրադը Պոլսից դուրս եկավ, զնաց Երևանի վրա պատերազմի. օգոստոս ամսին հասավ այնտեղ. իր հետ ուներ լոթ հարյուր հազար

հեծյալ ռազմիկներ՝ չհաշված ծառայողները, բեռնակիրները: Մեծ ուժով ուժբակոծեց բերդը. մի օր գիշեր-ցերեկ վեց հար-
յուր և էլ ավելի արկով հարվածեցին բերդին, ուստի ինը
օրում բերդը գրավեց և բերդի իշխանին՝ Ամիրզունա խանի
որդի Քահամազդուլի խանին իր իշխաններով ուղարկեց Պո-
լիս. այնքան պահեց, որ այնտեղ մեռան: Այս այն Քահամազ-
դուլի խանն է, որ էջմիածնի քարերն ուղարկեց Սպահան:

Ապա սուլթան Մուրադը Մուրթուզա փաշային տասնհինգ
հազար քաջ կովոզ զորքով դրեց Երևանի բերդի մեջ, ինքը
անցավ գնաց մինչև Քավրդի: Չմեռն ու ցուրտը վրա հա-
սան: Նաև լուր եկավ Պոլսից, ուստի այնտեղից վերադար-
ձավ, վանի վրայով գնաց Պոլիս:

1085 [1636] թվի դեկտեմբեր ամսին՝ այս սուլթան Մու-
րադի ժամանակ պարսից Շահսեֆի թագավորը եկավ Երևա-
նի բերդը շրջապատեց. իր հետ ունեւ հարյուր հազար կըռ-
վոզ զինվոր՝ չհաշված բեռնակիրները և այլք: Երեք ամիս
նստեց բերդի շուրջը և մեծ ջանքով ու շարշարանքով հաղիվ
կարողացավ բերդը գրավել, օսմանցի զորքերից չափազանց
շատ կոտորեց և ինքը ողջ երկիրը գրավեց: Օսմանցի երեք
փաշայի և այլ նշանավոր իշխանների իր հետ տարավ Սպա-
հան, որոնք և այնտեղ մեռան:

1087 (1638) թվի ապրիլի 28-ին միևնույն սուլթան Մու-
րադը գնաց Բաղդադի վրա և նոյեմբերի 6-ին հասավ Բաղ-
դադ: Երեսուներեք օր բերդը մեծ ուժով ուժբակոծեց և դեկ-
տեմբերի 4-ին բերդը գրավեց. այնտեղ գտնված պարսից
զորքին իսպառ կոտորեց վրեժխնդիր լինելով իր այն զոր-
քերի համար, որոնց պարսիկները կոտորեցին Երևանում: Իսկ
պարսից փառավոր իշխան Խալաֆ բեկին, որ բերդում էր,
բազմաթիվ իշխաններով ուղարկեց Պոլիս, այնտեղ մեռան:
Իր իշխաններից իշխան նշանակեց Բաղդադում և ողջ երկիրը
հանձնարարեց նրան: Ապա Բաղդադից վերադարձավ, գնաց
մեծ փառքով մտավ Պոլիս 1088 (1639) թվի հունիս ամսի
2-ին: 1089 (1640) թվին հաշտութուն եղավ երկու ազգերի ու
թագավորների միջև՝ օսմանցիների ու պարսիկների, որով-
հետև պարսից Շահսեֆի թագավորը Երևանը գրավեց, իսկ
օսմանցիների թագավոր սուլթան Մուրադը՝ Բաղդադը: Այս

երկու բաղաբները գրավելուց հետո երկու թագավորները
համաձայնվեցին և հաշտութուն արին՝ պայման դնելով,
որ երեսուն տարի պահեն հաշտութունը: Ուստի ամբողջ
աշխարհը՝ արևելցիներն ու արևմուտցիները ողորմի են տա-
լիս երկու թագավորներին, որ ապրում են խաղաղության
մեջ: Որովհետև հաշտութունից առաջ փախուստի ու թաքս-
տի, հափշտակության ու ավարատության, գերության ու սպա-
նության, սովի ու սրի մեջ էին, մանավանդ մեր հայոց
խեղճ ազգը:

Այս սուլթան Մուրադ թագավորը չափազանց մեծացավ
արիությամբ, քաջությամբ, սրտոտությամբ ու խելքով և խիստ
հնազանդեցրեց օսմանցիներին, որոնք հիշելով նրա անունը
զողում էին, որովհետև կերպարանափոխվելով միշտ շրջում
էր քաղաքներում, զորքերի բանակում, ենկիշարիների ու սպա-
ների մեջ, տեսնում ու լսում էր նրանց շարութուններն ու
անիրավութունները: Նաև հասարակ շինականների մեջ շրթ-
ջելով հարցնում էր նրանցից տեղեկանում փաշաների, իշ-
խանների անիրավութունների ու հափշտակութունների մա-
սին և մյուս օրը անմիջապես շարամահ անելով սպանում
էր: Բազմաթիվ զորեղ ու նշանավոր փաշաներ, իշխաններ,
շեյխեր, դադիներ և մուֆտիներ կոտորեց և անխնա կոտո-
րում էր իբրև ոչխարների, ուստի բոլորը սարսռելով դո-
ղում էին նրանից: Որովհետև իբրև առյուծ հաղթող ու զո-
րեղ էր ամենքի վրա. և այսպես իր կյանքում մեծ փառքով
ու հաղթական զորությամբ նա իր թագավորութունը վարեց:
Իսկ 1089 [1640] թվին սուրբ Սարգսի շաբաթվա հինգշաբթի
օրը մեռավ այս սուլթան Մուրադ թագավորը. ողջ աշխարհը
սգաց սրա մահվան վրա: Մինչդեռ տակավին հոգեվարքի
մեջ էր սուլթան Մուրադը, իր առջև կանչեց իր եղբայր սու-
լթան Իբրահիմին և թագավոր դրեց իր տեղում, իսկ ինքը
մեռավ նույն օրը՝ 18-ին:

1089 (1640) թվին թագավոր նստեց սուլթան Իբրահիմը:
Սա հիշատակելու արժանի որևէ գործ չարեց՝ ոչ արիութուն,
ոչ էլ արդարութուն: Բայց սրա օրոք՝ օսմանցիների ազգը
կազմեց բազմաթիվ նավեր, լցրեց ռամիկ մարդկանցով, և
լուր տարածեցին, թե դնում ենք Մալթա կղզու վրա, բայց
խաբելով գնացին Կրետե կղզու վրա, որ վենետիկցիների

ձեռքում էր, և հեշտութեամբ գրավեցին այն, որովհետև կըղ-
զու բնակիչները համաձայն էին, որ օսմանցիները գրավեն:
Օսմանցիք Կրետե կղզին վնասակցիներին առան 1095 [1646]
թվին: Այս սուլթան Իբրահիմը հետևեց որովայնի և ախտա-
մուտքի բուժմանը, քանզի իզամուլուքի անտի մեջ շատ
ավելի թաղվեց, որովհետև բացի իր կանանցից ու հարճե-
րից բողբեր էլ էր պահում իր մոտ, նաև իշխանների կանանց
ու աղջիկներին բռնութեամբ բերում և իր կամքը հայտնի ու
համարձակ կատարում էր, ուստի վշտացան ազգը և իր իշ-
խանները և միաբանվելով նրա սուլթան Մահմադ որդուն
դրին նրա տեղը թագավոր, ապա սուլթան Իբրահիմին սպա-
նեցին 1097 (1648) թվին հուլիսի 19-ին: 1097 թվի հուլիսի
28-ին սուլթան Մահմադը նստեց թագավոր, բայց հիշելու ոչ
մի արժանի գործ չկատարեց, որովհետև զորութեամբ և մարմ-
նով տկար էր, նաև հասակով երեխա էր այնքան, որ հազիվ
իր տերութեան երկիրը նվաճած պահի, և այդպես մնում է
մինչև այսօր, երբ մեր 1111 (1662) թվին է: Իսկ ապագան
տեր աստծուն է իմանալի, որին փառք հավիտյան. ամեն:

Մի այլ խոսք ևս օսմանցի թագավորների մասին

Օսմանցիների թագավորութունը. Օսմանը, որ առաջինը
եղավ թագավոր մեր 691 (1242) թվին, թագավորեց հիսունութ
տարի. իրենց 1190 թվականին նստեց թագավոր, վաթսուն
տարի թագավորեց:

Օրխանը մեր 749 (1300) թվին նստեց թագավոր, քսան-
ինը տարի թագավորեց, իսկ իրենց 699 թվականին նստեց,
երեսուն տարի թագավորեց:

Մուրադը մեր 778 (1329) թվին թագավոր նստեց, հիսուն-
ութ տարի թագավորեց, իսկ իրենց 729-ին նստեց, վաթսուն
տարի թագավորեց:

Բայազիդը մեր 836 (1387) թվին նստեց թագավոր, տասն-
չորս տարի թագավորեց, իսկ իրենց 889-ին նստեց թագա-
վոր, տասնչորս տարի թագավորեց:

Մահմեդը մեր 850 (1401) թվին նստեց թագավոր, տասն-
ինը տարի թագավորեց, իրենց 803-ին նստավ, քսան տարի
թագավորեց:

Մուրադը մեր 869 (1420) թվին նստեց թագավոր, քսանինը
տարի թագավորեց, իսկ իրենց 823-ին նստեց, երեսուն տա-
րի թագավորեց:

Մահմեդը մեր 898 (1449) թվին նստեց թագավոր, երե-
սունմեկ տարի թագավորեց, իսկ իրենց 853-ին նստեց, երե-
սուներկու տարի թագավորեց:

Բայազիդը մեր 929 (1480) թվին նստեց, երեսունմեկ տա-
րի թագավորեց, իսկ իրենց 885-ին նստեց երեսուներկու
տարի թագավորեց:

Սելիմը թագավոր նստեց մեր 960 (1511) թվին, ինը տա-
րի թագավորեց, իսկ իրենց 917 թվին նստեց, ինը տարի թա-
գավորեց:

Սուլեյմանը մեր 969 (1520) թվին թագավոր նստեց, քա-
ռասունվեց տարի թագավորեց, իսկ իրենց 926 թվականին
նստեց, քառասունյոթ տարի թագավորեց:

Սելիմը մեր 1015 (1566) թվին նստեց, ինը տարի թագա-
վորեց, իսկ իրենց 973-ին նստեց, ինը տարի թագավորեց:

Մուրադը մեր 1024 (1575) թվին նստեց, քսան տարի թա-
գավորեց, իսկ իրենց 982-ին նստեց, քսանմեկ տարի թա-
գավորեց:

Մահմեդը մեր 1044 (1595) թվին նստեց, տասը տարի
թագավորեց, իսկ իրենց 1003 թվին նստեց, տասը տարի թա-
գավորեց:

Ահմադը մեր 1054 (1605) թվին նստեց, տասներեք տա-
րի թագավորեց, իրենց 1013-ին նստեց, տասներեք տարի
թագավորեց:

Մուստաֆան մեր 1067 (1618) թվին նստեց, երեք ամիս
թագավորեց, իրենց 1027-ին նստեց, երեք ամիս թագա-
վորեց:

Օսմանը նույն թվին նստեց, մեր և իրենց հաշվով չորս
տարի թագավորեց:

Կրկին միևնույն Մուստաֆան մեր 1071 (1622) թվին նըս-
տեց թագավոր, իրենց՝ 1031 թվին:

Նվ դարձյալ այս ստույգ է, մեր 622 (1243) թվին Օսմանը
նստեց և թագավորեց հիսունութ ամիս:

750 (1301) թվին Օրխունը նստեց թագավոր և թագավո-
րեց քսանինը տարի:

779 (1330) Թվին Մուրադը նստեց և թագավորեց Հիսունութ տարի:

837 (1388) Թվին Բայազիդը նստեց, թագավորեց տասնը-չորս տարի:

851 (1402) Թվին Մահմեդը նստեց, թագավորեց տասնը-ինը տարի:

870 (1429) Թվին Մուրադը նստեց, թագավորեց քսան-ինը տարի:

899 (1450) Թվին Մահմեդը նստեց, թագավորեց երեսուն-մեկ տարի:

930 (1482) Թվին Բայազիդը նստեց, թագավորեց երեսունմեկ տարի:

961 (1512) Թվին Սելիմը նստեց, թագավորեց ինը տարի:

970 (1621) Թվին Սուլեյմանը նստեց, թագավորեց քառասունհինգ տարի:

1015 (1566) Թվին Սելիմը նստեց, թագավորեց ինը տարի:

1024 (1575) Թվին Մուրադը նստեց, թագավորեց քսան տարի:

1044 (1595) Թվին Մահմեդը նստեց, թագավորեց տասը տարի:

1054 (1605) Թվին Ահմեդը նստեց, թագավորեց տասնը-չորս տարի:

1067 (1618) Թվին Մուստաֆան նստեց, թագավորեց երեք ամիս:

1067 (1618) Թվին Օսմանը նստեց, թագավորեց չորս տարի:

1071 (1622) Թվին դարձյալ նույն Մուստաֆան նստեց:

Մի այլ խոսք ու կարգ Օսմանցի թագավորների

692 (1243) Թ. թագավորեց տահիկ ազգից Օսմանը Հիսունութ տարի, որի անունով կոչվեցին Օսմանյու:

750 (1301) Թ. մեռավ սուլթան Օսմանը և թագավորեց սրա որդի Օրխանը քսանինը տարի:

761 (1312) Թ. սուլթան Օրխանը գրավեց Ատրանան:

779 (1330) Թ. թագավորեց Մուրադը Հիսունինը տարի:

779 (1330) Թ. թագավորեց Մուրադը Հիսունութ տարի:

837-ին (1388) Թ. թագավորեց Բայազիդը տասնչորս տարի:

851 (1402) Թ. մեռավ Բայազիդը, թագավորեց սրա Մահմեդ որդին տասնինը տարի:

851 (1402) Թ. թագավորեց Մահմեդը տասնինը տարի:

870 (1421) Թ. թագավորեց Մուրադը քսանինը տարի:

899 (1450) Թ. թագավորեց Մահմեդը երեսունմեկ տարի:

902 (1453) Թ. սուլթան Մահմեդը գրավեց Բյուզանդիան:

930 (1481) Թ. մեռավ սուլթան Մահմեդը և թագավորեց նրա որդի Բայազիդը:

930 (1481) Թ. թագավորեց Բայազիդը երեսունմեկ տարի:

961 (1512) Թ. թագավորեց Սելիմը ինը տարի:

961 (1512) Թ. Սելիմը սպանեց իր հորը՝ սուլթան Բայազիդին և ինքը թագավորեց ինը տարի: Խոսովոթյուն ծագեց երկու եղբայրների միջև՝ սուլթան Սելիմի և Ահմադի: Սուլթան Ահմադի որդի Մուրադ Սոֆին եղավ սուլթան:

961 (1512) Թ. խոսովոթյուն ծագեց սուլթան Բայազիդի որդիների միջև, և թագավորեց սրա փոքր որդի Սելիմը:

962 (1513) Թ. Սելիմը սպանեց իր հորը՝ սուլթան Բայազիդին և ինքը թագավորեց:

962 (1513) Թ. սուլթան Ահմադը գերվեց իր որդիներով ու դուստրերով, իսկ նրա զորքը փախավ:

962 (1513) Թ. սուլթան Սելիմը կոտորեց Շահիսմայիլի զորքը:

963 (1514) Թ. կամ 964-ին սուլթան Սելիմը գնաց Շահիսմայիլի վրա, և պատերազմեցին Չալղրանում*, բայց չկարողացավ այն գրավել:

964 (1515) Թ. սուլթան Սելիմը գրավեց Քեմախը:

965 (1516) Թ. գրավեց Ամիդը, 966 (1517) Թ. գրավեց Մսըրը, 966 Թ. գրավեց Շամը և Մսըրը:

968 Թ. Սելիմը շարացավ և սկսեց քրիստոնյաների առաջին մանկահավաքը:

970 (1521) Թ. մեռավ սուլթան Սելիմը, և թագավորեց նրա որդի Սուլեյմանը:

* Չալղրանը Մակուի մոտերն է:

- 975 (1526) թ. սուլթան Սուլեյմանը գնաց Պուտունի* հունգարիայի մայրաքաղաքը և գրավեց այն:
- 977 (1528) թ. սուլթան Սուլեյմանը գնաց Պուտուն՝ հունգարների մայրաքաղաքը, և գրավեց այն:
- 984 (1535) թ. սուլթան Սուլեյմանը գրավեց Բաղդադը:
- 985 (1536) թ. սուլթան Սուլեյմանը գրավեց Բաղդադը:
- 992 (1543) թ. դերջանցի Մաղաթիա վարդապետը²⁴¹ գնաց Սուլեյման սուլթանի մոտ և սրա հրամանով վերացրեց մանկահավաքը Դերջանից ու Բաբերդից²⁴²:
- 1015 (1566) թ. սուլթան Սուլեյմանը գնաց Փեչի^{**} և այնտեղ Սելիթվարում մեռավ:
- 1015 (1566) թ. սուլթան Սուլեյմանը մեռավ և թագավորեց նրա որդի Սելիմը ինը տարի:
- 1015 թ. թագավորեց Սելիմը:
- 1024 (1575) թ. մեռավ սուլթան Սելիմը, և թագավորեց նրա որդի Մուրադը քսան տարի:
- 1044 (1595) թ. հունվարի վեցին մեռավ սուլթան Մուրադը, և թագավորեց նրա Մահմեդ որդին հունվարի քսաներկուսին, տասներկու տարի: Սա երկու բերդ գրավեց հունգարներից:
- 1044 (1595) թ. դեկտեմբերի երեսունմեկին մեռավ սուլթան Մուրադը, և թագավորեց նրա Մահմեդ որդին հունվարի տասնյոթին:
- 1044 թ. մեռավ սուլթան Մուրադը, և թագավորեց նրա որդին ինը տարի:
- 1054 (1605) թ. մեռավ Մահմեդը, և թագավորեց նրա Ահմադ որդին տասնչորս տարի:
- 1067 (1618) թ. սուլթան Ահմադը Թաթար խանին և Խալիլ փաշային ուղարկեց Շահ-Աբասի վրա, բայց չկարողացան հաղթել նրան, միայն Թավրիզն ու սրա շրջակայքը ավերեցին և ետ դարձան:
- Այս տարի մեռավ սուլթան Ահմադը, և թագավորեց սրա եղբայր Մուստաֆան նոյեմբերի տասնինի շրեքշաբթի օրը, երեք ամիս: Սուլյն տարում իշխանները տապալեցին սուլթան Մուստաֆային և թագավորեցրին սուլթան Ահմադի որ-

- դի Օսմանին փետրվարի տասնվեցին երեքշաբթի օրը, որ թագավորեց շորս տարի:
- 1067 (1618) թ. թագավորեց Մուստաֆան երեք ամիս: սուլյն տարին փետրվարի տասնվեցին, երեքշաբթի, Օսմանը շորս տարի թագավորեց տասներեք տարեկանում:
- 1071 (1622) թ. իր զորքերի կողմից սպանվեց սուլթան Օսմանը, և բանտից հանելով սուլթան Մուստաֆային, սուլթան Ահմադի եղբորը կրկին թագավորեցրին մայիսի տասներկուսին:
- 1072 (1623) թ. գցեցին սուլթան Մուստաֆային և թագավորեցրին սուլթան Մուրադին օգոստոսի երեսունմեկի կիրակի օրը:

Գ Լ Ո Ւ Ն Մ

ՊԱՐՄԻՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԱԶԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սկզբում եղել է Շխաաֆին, որ Արտարիլի իշխանն էր, սրա որդին է Շելս-Հայդարը: Այս Հայդարը կին առավ քրոջը թավրիզի Յաղուբ թագավորի, որ Ջահանշահ թագավորի թոռն էր: Շելս-Հայդարից և Յաղուբ թագավորի քրոջից ծնվում է մի որդի և անվանվում Իսմայիլ: Այս Հայդարը և իր կինը մտածում են թույնով սպանել Յաղուբ թագավորին, որպեսզի իրենք գրավեն թագավորությունը:

Ետ սիրելու պատրվակով Յաղուբ թագավորին ճաշի են հրավիրում և ուտելու են տալիս թունավորված կերակուրը: Ուտելուց հետո դգաց, որ կերակուրը թունավորված է, ուտի բռնի կերպով նրանց ևս ուտել է տալիս կերակուրից: Սրանք երեքը՝ Յաղուբ թագավորը, քույրը և Շելս-Հայդարը միասին մեռնում են: Ապա երկիրը անտեր է մնում, ծագում են խռովություններ ու պատերազմներ: Մանուկ Իսմայիլին փախցնում են Ախթամար կղզին, այնտեղ սնվում (դաստիարակում) և հասնում է արբունքի:

Այդ ժամանակ սրա ազգականները առնում են նրան, բերում և բռնորին հայտնում, թե երկու կողմերի ժառանգն է

* Հավանորեն Բուդ [Բուդապեշտի մի մասը],
 ** Փեչը Պեչ քաղաքն է Հարավսլավիայում:

սա, քանզի Շրխ-Հալաբի որդին է, Յաղուբ թագավորի էլ՝ քնորդին: Ուստի, բոլորը համաձայնվելով, նրան թագաժող են դարձնում Յաղուբ թագավորի տեղը:

Այս իսմայիլը սերում է Շահթահազին, իսկ սա երկրորդ Շահթահազինն ու Շահխուղարանդային: Շահթահազից հետո թագավորում է երկրորդ Շահթահազիլը, իսկ այս Շահթահազից հետո՝ Շահխուղարանդան: Սրանից հետո թագավորում է սրա որդի Շահ-Աբաս առաջինը: Սրանից հետո թագավորում է սրա թոռ Շահսեֆին: Սրանից հետո թագավորում է սրա որդի Շահ-Աբաս երկրորդը: Եվ մեր 1115 (1666) թվի սեպտեմբերի տասին մեռավ այս Շահ-Աբաս երկրորդը: Նույն թվին և նույն ամսին նրա տեղը թագավոր դրին նույնի որդի Շահսեֆինը ըստ իր պապի անվան, ուստի սրան անվանում ենք Շահսեֆի երկրորդ:

Շահսեֆիի թագավոր նստելուց հետո, որովհետև ինքը միշտ ցավագար էր, ուստի շրջակա թշնամիները ասպատակեցին սրա երկիրը, որի համար գուշակները ասել են, թե այն օրը և ժամը, երբ նա նստեց թագավոր, երջանիկ օր չէր, ուստի հմայքով ընտրեցին երջանիկ օր և կրկին նստեցրին աթոռ և փոխեցին անունը, անվանեցին Շահ-Սուլեյման, և այժմ սրան Շահ-Սուլեյման են կոչում:

ՔԱՆԱԳԻՆ ՔԱՐՆԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ճայերեն	արաբերեն	բուրբերեն	ֆարսերեն [պարսկերեն]	ֆառսերեն	եբրայերեն
Կայծ (յաղուբ. ունի տասնվեց զույն. կարմիր երեք զույն. լուրջը՝ երեք զույն, դեղինը՝ երեք զույն, սպիտակը՝ երեք զույն, բայց կայծազույնը համարվում է լավ ֆար, որ ասվում է կարկենան	Յաղուբ	Յաղուբ. Քարբուկ	Յաղուբ	Ռուփիեի	Ռուբեն

ճայերեն	արաբերեն	բուրբերեն	ֆարսերեն (պարսկ.)	ֆառսերեն	եբրայերեն
Սարդիան. լիճնում է դեղին և սևին տվող կարմիր	Դեղին սեյլան*		Պինայի	Տպալիս	
Տպալիս. բացկարմրազույն է	Բավաղ սեյլան. բացկարմրազույն է	Պինատ և տպալիս			
Զմուխտ. ֆրանկի, սյուսի կանաչազույն	Զմուխ			Մմալա	
Շափյուղա. ծիրանազույն	Ճապալազում			Ամն-բովս	Կրկենան
Հասախ. դեղնազույն կանաչ	Զապարեան			Հիասպ	Հիասպիս
Եղնգաֆար [լիդրիոն]. լիճնում է տասներկու զույնի, լավը սպիտակ է	Ալմաս			Դիոմանդ	
Ակար. բազմազույն է. լավը սև է	Ցանըլեր				
[Ամեթիստոս] մեղնիկ [սուտակ]. լավը սպիտակ է	Լալ		Պալաշի		
Ոսկեֆար. խոր ու դեղին, լավն է պայծառ	Քիլիս կամ դեղին յազուր		Սաֆիր		
Բյուրեղ. սպիտակն ու պայծառը լավն է		Նաշաֆ			
Գունազմ	Լազ-վարտ, որ լազ-վարդն է				

* Սեյլան շեղկաստանում քաղաքի անուն է (ժանոթ. հրատ.):

ՔԱՆԿԱԳԻՆ ՔԱՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐՊԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կայծը, որը յաղութն է, այն հատկությունն ունի, որ եթե մարդ դնի բերանը, ծարավը կոտորվում է, իսկ եթե ոսկին հալես և կայծը հալած ոսկու մեջ գցես, չի այրվի, գույնը չի խանգարվի և պայծառությունը չի կորցնի: Այլև ասել են, թե ով իր հետ ունենա, նա մարդկանց մոտ [սիրով] կընդունվի, նաև զարկվածի [չարքերի կողմից] լավ է:

Սարդիոնը, որ [թուրք.] սեյլանն է, [ունի այն հատկությունը], որ երբ մեկից արյուն է հոսում, եթե երկաթի կամ քարի վերք չէ, քթից կամ այլ տեղից է, սարդիոնը մոտը պահի, արյունը կկտրվի. կրակի մեջ չի այրվում, ինչպես որ կայծն է, ինչպես մտնում է կրակը, այնպես էլ դուրս է գալիս, ոչ գույնն է կորցնում, ոչ էլ փայլը*: Նույնպես էլ դեղին սարդիոնը, որ կոչում են թիլա***, այլև պիճատի**** և տպազին են ասում:

Զմբուխտի սևը**** էթե օձի առջևը բռնես, տեսնելուն պես օձի աչքերից ջուր է իջնում, և օձը կտրանում է: Շատերն են այս բանի համար վկայում շատ անգամ փորձելով: Եվ, եթե քրքումով ծիրանաքարի վրա լավ մանրես և աչքերի վրա քաշես, աչքերի լույսը կավելացնի: Իսկ եթե զմբուխտը մատին լինի կամ հետը, ապա վնասակար թունավորները չեն մոտենա ունեցողին: Նաև սև հազ են ասում, այդ հազից մարդ չի աղատվում և նույն հազին, արյունահոսություն, փորցավին օգտակար է. փորձված է:

Հասսիսը, որ դապարճատն է, կանաչ, մի քիչ դեղնավուն է. հատկությունն այն է, որ վրան շատ նայելուց աչքե-

րի լույսն ավելանում է, կամ եթե ծեծում ու քաշում են աչքերին, աչքերի քորը վերանում է և բոր հիվանդության դեմ օգտակար է:

Նդնդաքարը, որ ավաստն է, հին ու նոր է լինում, հինը ավելի լավ է, ամեն քար մաշում է և կտրում, ինքը չի մաշվում: Կայծի ու սարդիոնի պես կրակի մեջ չի մոխրանում, ինչպես մտնում, այնպես դուրս է գալիս կրակից: Իսկ եթե կտրատում են, թե մեծ կտրվի, թե փոքր, եռանկյունի, քառանկյունի կամ վեցանկյունի կտոր է ստացվում և սերթիզ-փերթիզ, այսինքն՝ և ծայրը սուր և կողերը սուր: Արճիճով կտրվում է. արճիճը բարակացնում են և ավաստը դնում են արճճի մեջ, փաթաթում, ապա դնում են երկաթի սալի վրա և երկաթե կոանով հարվածում են արճճին, որի մեջ ավաստն է: Այնաստը կտրվում է և մնում է արճճի մեջ, չի սիւլում, այսինքն՝ ցրվում, արճիճի խոնավությունը այն հավաք է պահում: Հետո արճիճը բացում են, հանում են կտրատված ավաստը և գործածում: Իսկ եթե արճիճ չի գտնվում, ավաստը դնում են մեղրամմի մեջ, տասներկու տակ թղթով փաթաթում և կոանով հարվածում են փաթաթած թղթի վրա, որտեղ ավաստն է: Այնաստը մեջը կտրատվում է. թուղթը մոմով պցում են եռացրած ջրի մեջ. մոմը հալվում է, թուղթը բարձրանում է ջրի երեսը, իսկ կտրած ավաստը մնում է ջրի տակ, հետո հանում են, ծեծում պողպատ հավանդում և գործածում, որովհետև այս մանրած ավաստով ակնադործները տաշում են թանկագին ավաստը: Հետը պահելը ուրախություն է բերում: Նաև հատկանիշների գրքում ասել են, թե երկու պատերազմողներից ում մոտ որ ավելակշիռ ավաստ լինի, այն կողմը կհաղթի: Ստույգը աստված գիտե: Իսկ եթե կոչ ծննդաբերությունը ուշանում է, ավաստ քարը կապում են բազուկը, կինը աղատվում է: Այնաստ քարը նաև այս բանն է անում, որ ծննդաբերող կինը ձախ ձեռքում է բռնում աղամանաքարը: Բազմաթիվ անգամ փորձել են այս:

Ագաթը [կատվի աչք քարը], որ յանըհըրն է, ունի այն հատկանիշը, ինչ որ ունի կայծը: Հետը վերցնողը բոր, քոտտություն, քոր և այլ այսպիսի բաներ չի ունենա, ունեց-

* Բնագրում չկա գրված Մ՛ նշումը, թեև կա գրությունների ցանկում:
** Բնագրում ճիշտ [թուրք. փայլ, պայծառություն, ողորկություն]:
*** Թիլա պրակ. ոսկի:
**** Պիճատի պրակ. նոնաքար:
***** Բնագրում ըզսիտին:

վածքն ու շնորհքը չեն պակասի. մարդկանց մոտ ինքը և խոսքը կընդունվեն, խելքի շահ կունենա: Ինչքան էլ դինի խմի, խելքը չի կորցնի. ասել են, բայց ես չեմ հավատում, որովհետև գինին առյուծի կաթն է, ով որ ազահությամբ խըմի, փառքից, խելքից և ունեցվածքից կզրկվի:

Մեղեակիկը [սուտակը], որ լալն է [ամենթիտոսը] այն հատկանիշը ունի, որ եթե բերանդ առնես, ծարավդ կկտորի, ինչպես որ կայծը ունի այս հատկանիշը: Եթե ծեծեն ու խառնեն ուրախարար խյուսի հետ, սրտին ուրախություն է և հոգան ու մտմտութենքը կտանի սրտից, իսկ եթե աչքի դեպքին խառնես, աչքի լույսին օգտակար է, սրատես է դարձնում:

Ոսկեքարը, որ թիլան է [դեղին կայծը] ունի այն հատկանիշը, որ եթե բարակ շորով փաթաթես և կրակ դնես վրան, շորը չի այրվի. իսկ ով որ հետը ունենա, գիշերալախից ու երազատեսությունից զերծ կմնա և աստուծով շար փորձանքից կազատվի:

Բյուրեղը, որ պիլոքն է, ունի այն հատկանիշը, որ ծեծեն և հին խոցի վրա ցանեն, խոցը կառողջանա, իսկ եթե ատամները մաքրեն, ատամի ժանգը կտանի, հետը պահողը մղձավանջից և երազախարից զերծ կմնա: Իսկ եթե ներկվի կարմիր, կանաչ, դեղին, ամեն գույն ընդունում է. կրակի մեջ կրանում է և ալլևս չի նորոգվում. կրացածը աչքի դեպքի մեջ է մտնում:

Գոճաղճը [սուտակ], որ լաջվարդն է, երկնագույն կապույտ է և լավը այն է, որ երակներ չունի և սպիտակ չէ, կրակի վրա գույնը չի փոխում, ոսկեգույն բծեր է ունենում. եթե արթալաջրի մեջ զցես, լաջվարդը նույն ժամին սպիտակում է և լինում է ինչպես ձյուն: Յոանկստանում ընդունելի է: Մեծ-մեծ կտորով է լինում: Հազար դրամանոց* կտոր տեսա: Վեց հարյուր դրամը 1100 [1651] թվականին Հալեպում ծախվեց տասնհինգ ուսլով**, իսկ դրանից առաջ քառասուն ուսլով էր ծախվել: Ուղբեկստանից է ստացվում:

* Գրամը զանազան վայրերում տարբեր ծանրություն ունի, Հունաստանում՝ 3, չորստասներդական գրամ, գրեթե նույնչափ է արաբական գրամը (3, 310 գ.): նույն է նաև Թուրքիայում:

** Իսպանական հին արծաթյա դրամ:

Մարգարիտը հայտնի է և երկու տեսակ է. մի տեսակը կոչվում է պորտուգալական, մյուս տեսակը՝ հարմուղի: Հարմուղի մարգարիտը քաղցր են կոչում. լինում է հարթ և փայլուն, անցքը փոքր: մարգարիտի լավը այդ է: Պորտուգալականը հարթ չի լինում և փայլուն չէ, ինչպես շիրիներ: Պորտուգալականը քաղցր մարգարտի քառորդ գինը արժե, կրակի մեջ այրվում է և կրանում:

Մարջանը, որ հայերեն բուստ* է կոչվում, լավը մուգ կարմիրն է, լինում է նաև բաց-կարմիր, սպիտակ: Մառի նման է, բայց ծովում է բուսնում, փայտի պես ցեցակեր է լինում, որդնտում է ու ծակծկվում: Եթե թթվի մեջ են զցում, սպիտակում է, իսկ կրակի մեջ կրանում է և սպիտակում:

Յամանիի [Сердолик] լավը սլախն է, այսինքն՝ թափանցիկ է. մուգ կարմիր, միջակ կարմիր և բաց-կարմիր է լինում: Քառասուն դրամից ավել չի տեսնվել: Ասում են տուն փրվելու կամ պատ տապալվելու համար լավ է, որ յամանի կրողը տան կամ պատի տակ մնացած չի տեսնվել: Օսմանցիները, պարսիկները և բոլոր ուսմիհները [Եվրոպական Թուրքիայի բնակիչները] մոտ այս քարը ընդունելի՝ հաճելի է, որովհետև անունը գրում են վրան և դնում մատանու մեջ, Բայց լինում է սպիտակագույն, դեղին և ծովագույն [ծիրանի]: Բայց մուգ-կարմիրը, որ միագույն է և առանց երակի, լավն է: Եթե մատանու քարը լավն է, երկու կամ երեք ուսլե արժի:

Աղեղը կարմիր, բաց-կարմիր և ալ-կարմիր է լինում. լավը միագույնն է, առանց երակի: Գինը յամանու մեկ քառորդ գինն արժե:

Օձաքարը շորս տեսակ է՝ սև, դեղին, կարմրագույն և այլագույն: Այնպես է լինում, որ ամբողջովին վարդագույն է, կա որ բծավոր է, կա, որ երկայն ու կարճիկ է լինում: Բոլոր տեսակները օձի մաշկի են նմանվում: Ամեն տեսակի օձաքարը, եթե հարթ քարի վրա քացախ կամ կիտրոնաջուր լցնես և այս քարը քացախի մեջ զցես, եթե ծծաքարերը երկու հատ լինեն, կենդանու նման շարժվում են, գալիս են

* Բուստը արևատահարենում է, արևելահայերենում տարածված է մարջանը:

միմյանց ողջունում և միմյանցից հեռանում: Հատկութունը այն է, որ եթե օձը թունավորում է մարդուն, օձաքարը հասանին են քսում, մի պուտ խմեցնում են և քսում թունավորված տեղին, նույն օրը աստուծով թունավորվածը ազատվում է:

Հնդկիկները փնտրում են այս քարը և փողով գնում. իրենց թագավորը թագին ու մատին այս քարն է դնում, մի մսխալը երկու ոսկի արժե:

Կա մի այլ քար էլ, որ օձաքար են կոչում. թուրքերեն խտրելիազ աղչասի են կոչում. կլոր ու սպիտակ է լինում, սաղաֆի տեսակից է. մի երեսը ուռուցիկ է, մյուս երեսը հարթ: Հարթ երեսին կա բարակ սև թելանման եղրագիծ, որ խխունջաձև է: Սբա հատկանիշը այն է, որ եթե դոշարով (ռուփ) կարմիր քամու (օձիկ ցավ) կարմիր տեղի վրա դնես, կպչում է կարմիր տեղին և ութ օր վրայից չի պոկվում, մինչև որ աստուծով առողջանում է:

Յասը [հասպիս, արևադեմ] որ ունի կանաչ դանդուղ գույն, և վրան շատ կարմիր կետեր, Ֆոանկատանում ընդունելի հաճելի է, մշակելիս ալոու է, շատ է, ամեն տեղ կա:

Խամահի [Kpobobuk hematite], որ լինական երկաթ է, այսինքն՝ սանկհատիտ, և հայերեն սղուն քար են ասում. բոլորը ծիրանագույն են. երբ հեսանին քսես, կարմրում է, կա որ քսածը ալ գույն է ստանում, կա որ երկնագույն, որ ծիրանի է, և դեղնագույն, և սպիտակ: Բաց-կարմիրը, որ սրբածից է ստացվում, ուռուցքի համար լավ է: Եթե վարդաջրով հեսանի քսես և քսածը ամեն տեսակ ուռուցքի քսես, աստուծով օգնում է:

Ճգահ [հեղնգաքար], որ թուրքերեն պապաղորի է կոչվում, բոլոր գույները իր մեջ շաղկապված են, զուրս է դալիս Եմենից: Ֆոանկատանում ընդունելի, հաճելի է: Լինում է մեծ-մեծ, շոր ու ամուր:

Մղնադիս [մագնիս], թուրքերեն մղչաղուզ, հայերեն ադամանդ. սև գույնի է և հայտնի է, որ եթե մոտը պահում են, ջղացավին օգտակար է. նաև բևեռացուցիչ սլաքը սրանով են շինում. թուրքը դրլա նումայի է ասում, որ նշանակում է հարավացույց: Երկաթը ձգում է դեպի իրեն, սրան ասել են անշարժ հոգի: Եթե այս քարը թրի ու դանակի հետ միատեղ

մի գիշեր դնես, մյուս օրը այդ թուրն ու դանակը երկաթը կձգեն դեպի իրենց. ամեն տեղ էժան է:

Ցաշմ [հասպիս], բոլոր լեզուներով յաշմ են ասում. լավ սպիտակ թղթի գույն ունի, իսկ ստորինը՝ խուխի: Տիամար-նեքի համար լավը դանդուղի և ձիթապողի գույն ունեցողն է, իսկ ավելի ստորինը սևն է և երակոտը: Ամեն գույն ունեցողը լավը չէ: Պատահում է, որ մեկ կոտորը երեք հազար գրամ է լինում, նաև ավել է լինում կոտորը: Թուրքի մոտ ընդունելի, հաճելի է, իսկ սպիտակը պարսիկի մոտ է ընդունելի: Սպիտակը խաթայի է կոչվում, աշխարհում Հնդկաստանից է ստացվում: Ասում են կայծակի դեմ օգտակար է, որ որ լինի, կայծակը այնտեղ չի հարվածի: Սպիտակի զուտը, որ հարյուր դրամն է լինում, արժե չորս ոսկու, իսկ մյուսները ցած գին արժեն:

Նիլում [кианит]. արաբների մեջ կոչում են Ֆհամ. լավը զուտն է, ունի բաց-կապույտ գույն. թափանցիկ և բաց-կապույտ յաղութի է նմանվում, բայց չուրը չի ցուցվում յաղութի նման: Եվ մեծ և երկու-երեք մսխալ է լինում, էժան է:

Սելիմանի [ագաթ], որը շերտավոր է. մի շերտը սպիտակ է, մի շերտը սև. կապտավուն ու սպիտակը լավն է. մշակելիս խիստ ամուր է. այս քարը Ֆոանկատանում շատ հարգի է:

Սեպաճ (գիշերաքար, գիշեր) սև քար է, թեթև և շատ մուգ-սև է գույնը, եթե դցես չուրը, բարձրանում է ջրի երեսը, հատկութունը այն է, որ եթե փոքր երեխայի աչքերի դեմ կախեն օրորոցից, փոքրիկ երեխայի կապույտ աչքերը սևացնում է. Փորձված է, այս քարին նայելիս աչքերի լույսը ավելացնում է:

Դեհնե Ֆոանկների մեջ [դահական], որ արաբների մեջ կոչում են դհնեճ, եթե քացախով կամ կիտրոնի ջրով քսես զոհարահար դանակի վրա ոսկեգույն կամ արծաթի գույն է. քարը կանաչ է և կաղինագույն մի բծով կանաչ, երբ քսածը ոսկեգույն է, այդ լավն է: Մտնում է ակնադեղերի մեջ. մի մսխալը երեք-չորս ոսկու արժե. կրակի մեջ չեմ փորձել:

Փիրուզ. երեք տեսակ է՝ իսհադի, նշապուրի և շլապաքի: Լավը զուտն է, որ առանց երակի է, գույնով լավը իսհադին

է, նաև բացազուն նշապուրին, իսկ սպիտակագուն շպա-
պեքին շուտ է ծերանում և կանաչում: Փիրուզի մասին ասել
են, թե ով որ դնի մատը, դրամի պակասութուն չի ունենա,
խոսքը ընդունվում է. մատը դնողը շպետք է անպատեհ խոսք
խոսի ու մտածի, թե փիրուզ եմ դրել, խոսքս ընդունելի կը-
լինի: Կրակի մեջ այրվում է: Եթե խճաղին, միջակ բակլայի
չափ լինի, հիսուն ուսու արծե, նշապուրին սրա կես գինն
արծե, իսկ շպապեքին երկու դրամ արծաթ արծե:

Մղնադիս ֆղա, այսինքն՝ արծաթը ձգող. այն է՝ արծաթը
ձգում է դեպի ինքը: Եթե ոսկու, երկաթի, պղնձի [արծաթի]
և այլ խարտուր միատեղ լինեն, ապա այս քարը արծաթը
հավաքում է, ինչպես մագնիսը երկաթը: Այս քարը ժանգա-
զուն է, թափանցիկ է և սուղ. Հաբեշտանից է ստացվում.
հնդկները շատ են պահանջում այս քարը և կոչում են մըղնա-
դիս ֆղա, որ նշանակում է արծաթի աղամանդ. արծաթը
ձգում է դեպի ինքը որպես ազահ մարդը, որ միշտ արծա-
թասեր է և արծաթը իրեն բաշտո:

Այս խոսքերը, որ թանկագին քարերի մասին են, ահա
գրեցինք: Ներկա ժամանակին ժամանեց Սարգիս անունով
ոմն քահանա, որ մեր ազգից էր, հմուտ էր ու տեղյակ գըր-
քերին. բնակվում էր Բերա քաղաքում, որ այժմ Հալեպ է
կոչվում: Արաբերենի, օսմանցիների և ֆոանկի լեզուների
մեջ շատ հմուտ էր, նաև ծանոթ էր հոռոմի և հրեաների լե-
զուներին. արհեստով ականագործ էր, որ թանկագին քարե-
րը հարթում ու շինում էր, նաև սրանք գնող ու վաճառող էր:
Երբ մենք Երուսաղեմ էինք գնում, Հալեպում պատահեցինք
այս Սարգիս քահանային, որ զրույցների ժամանակ մեզ հետ
մշտապես խոսում էր ակննդենի որպիսութունից. նրա խոս-
քերը մեզ հավաստի եղևացին, ուստի աղաչեցինք նրան, թե
դրանք, որ բանավոր ես ասում, գրավոր շարագրիր, տուր
մեզ օրինակելու համար: Նա մեր խնդրանքի համար գրեց,
տվեց, իսկ մենք ընդհանուրի օգտի համար շարագրեցինք
այս պատմագրքում, նախ՝ որ մենք էինք խնդրել, և երկրորդ
որ այս խոսքը նորութուն է. արդ՝ պատահող, ձեզնից այս
ենք խնդրում, նախ մի համարեք մեզ ժամավաճառ, և երկ-
րորդ՝ ասեք՝ աստված ողորմի այն տեր Սարգսին և մեզ,
մենք էլ կասենք և ձեզ. ամեն:

Իսկ սրանից հետո գրված խոսքերը, որ ակննդենի մա-
սին է, առաջուց օրինակը կար. այդ նույնպես սույն շար-
քում դասելով գրեցինք ընթերցողների օգտակարութան հա-
մար ի փառս աստուծո:

Գ Լ Ո Ւ Ն Մ Ի

ԱՅՍ Է ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ ԳՏԵՎՈՂ ԳՈՂԱՐՆԵՐԻ ԳԻՐԲԸ, ԹԵ
ՈՐՏԵՂԻՅ ԵՆ ՍՏԱՅՎՈՒՄ, ԱՄԵՆԻՑ ԱՌԱՍՏԸ

Այժմասը լինում է տասներկու տեսակի. Երկու վայրից է
ստացվում: Հինը Զուլումաթից* է ստացվում: Ասում են, թե
Ալեքսանդրը գնաց Զուլումաթ, հասավ մի լեռան տակ, հան-
կարծ ձիու պայտը սայթաքեց. հարցրեց, թե այս ի՞նչ է,
իմաստունները, որոնք հետն էին, ասացին, թե այժմաս է,
երկնքի ցողից է առաջանում: Պարսիկները դրան խուդայի**
են ասում, Ալեքսանդրին ասացին, թե այս լեռան հետևը
ավազուտ դաշտ է, ամբողջովին այժմաս է և անմարդաբնակ,
թռչուններից բացի ուրիշ ոչինչ չկա այնտեղ: Ալեքսանդրը
ուզեց այդ այժմասից, ասացին, թե հեծյալները թող բարձրա-
նան լեռան գլուխը և լեռան գլխին անասունի լեշ գցեն: Այս
այնտեղ մեծ թռչուններ կան, այժմասը կկալի լեշերին, թռ-
չունները կտոնեն, կբարձրանան լեռան գլուխը, կնստեն,
կուտեն: Հեծյալները կգնան կթոցեն, ինչ որ կպած է եղել
լեշերին, բոլորը այնտեղ կմնա: Այդպես արին, որչափ որ կա-
րողացան: Այդ այժմասը շափազանց արժեքավոր է, այլ մարդ
այնտեղ չի գնացել, իսկ ներկայումս ինչ որ հին այժմաս
գոյութուն ունի, այն այժմասից է: Ասում են Հնդկաստանում
բարձր զին ունի, բայց ամեն երկրում գոհարագետների մոտ
այնքան էլ հարգի չէ: Կրակից դուրս է գալիս, ավելի լավն է,
քան նորը: Վեց երես ունի, որ կողմն էլ շրջես, երեք երես է
երևում: Ասում են, թե գոհարները տասնմեկ կարատից բարձր
չեն լինում, բացարձակ սխալ է, քսաներկու կարատ էլ է

* Քիչ հետո ասվում է, թե Զուլումաթը Զ կղզի է:

** Բառացի աստվածային:

լինում, գոհարագեաները հին արմատ չեն տեսել: Նոր արմատ ստացվում է Գուշարատում, Գեկանում, Քալբարկում, Մահուտի Գելբեքանում, Կարուճանում, Փոռում: Երեսունքառասուն կարատ է լինում. փոքում են խոր, շերտ ունի, շերտի մեջ է լինում, հանում են, լվանում: Հողի միջից է դուրս գալիս, յոթը գույն ունի. հինգ ցորենի քաշին մի մանճալի* են ասում: Լինում է սառնաշաքարագույն, ձիթապողազույն, պիստակազույն, բյուրեղային, դեղին, կարմիր, սև: Ամենից լավը սառնաշաքարագույնն ու բյուրեղը, սրանցից հետո ձիթապողազույնը, պիստակազույնը: Այլ տեսակները սրանց նման չեն: Արմատի կարատը հինգ ցորենի քաշ է: Գոհարների թագավորը արմատն է. երկու կարատ սառնաշաքարագույնը կամ բյուրեղին՝ (երեսի) լավ ջրով, այնպես, որ վրան բիծ չլինի Քալբարկում երկու ֆլորինով կարելի է առնել, իսկ Ֆոանկատանում քառասուն ֆլորինով կծախվի, եթե հաճախորդ լինի, էլ ավելի թանկ կծախվի. տաշևուց հետո առաջ է գալիս ծակելը, որ ֆոանկից բացի մարդ չգիտի: Տաշածի շորս կարատը տասը հազար օթմանի²⁴⁴ պետք է ծախել: Ֆրանկը Հալեբում ուժ չունի²⁴⁵, գոհարների թագավորը արմատն է, բայց առանց տաշելու մի բան չէ. նրա համար, որ դուրս է գալիս քարերի հետ խառնված, մինչև շտաշվի, չի երևա: Եթե հատկանիշից հարցնես, այն մարդը, որ ունի խայտարղևտ գույն, ապա արմատը վերացնում է, թագավորներին հաճելի է երևում, և խոսքը ընդունելի է լինում, շարքից չի վախենում, փորացավ չի ունենում, քոր չի առաջանում, մոռացկոտ չի լինում, հանդիստ է մնում: Եթե սալի վրա մանրեն ու տան մարդու, մահադնդ է:

Կայծի [յաղութի] կարատը շորս ցորենի հատիկի քաշ է: Կայծը երկու բանից է առաջանում. հինը Յելլոնում է առաջանում, սա մի կղզի է, որի լայնքը շորս փարսախ է, իսկ երկայնքը՝ շորս հարյուր: Այն լեռը [որից կայծը դուրս է գալիս] Սալանդիբի սար են կոչում: Աղամբ դրախտից, ասում են, այդ լեռան վրա իջավ. ասում են դրա շնորհիվ էլ կայծը [յաղութը] առաջացավ: Այդ լեռանից բացի այլ վայրում չկա: Այնպես իմացիր, որ [կայծը] շորս գույն ունի՝ կարմիր

ու լուրթ, դեղին ու սպիտակ: Կարմիրը յոթ երանգ ունի՝ ծիրանի, նոնագույն, եղբանագույն, գինեմրորագույն, գինեկույն, քացախագույն, գունատ [պալիսի]: Լուրթը հինգ երանգ ունի՝ երկնագույն, լեղակի, որ կանաչին է տալիս: Նախ դեղինը շորս երանգ ունի՝ մոմագույն, նարնջի, հարդագույն [ծղոտագույն], լեռնաբյուրեղագույն: Սրանք շատ են ստացվում, ուստի արժեք չունեն. կա նոր, որ դեռ խամ է (հասուն չի): Միբանի կարմիրը լրիվ համահավասար ջրով, եթե քսան կարատ լինի, արժե երկու հազար ֆլորին: Յելլոնի հանքից բացի այլ վայրում չկա, ոչ էլ Խորասանում: Լուրթ գույնի կայծ թագուսին* ունի ու Օսմանը Հնդկաստանում [յաղութի կայծը] արժեք ունի, որովհետև հնդիկները գոտու ծայրին են կապում: Եվ դեղինը Շիրվանում գին ունի: Երեխայի համար շատ լավ է, ու դեղինը ճանաչելը դժվար է, որովհետև ֆոանկը լեռնաբյուրեղը ներկում է [այնպես], որ կայծից [յաղութից] չի զանազանվում. վարպետ մարդ պիտի լինի, որ ճանաչի: Այնպես իմացիր, որ կատվի աչքից [թանկագին քար է] իր տեսակի կայծ [յաղութ] է առաջանում և մաքուր [թիրմիլ] կանաչ-կարմիր է առաջանում: Ասում են, թե հասպիսն էլ իրենից է լինում: Այնտեղ, որ կայծն է լինում, մի ջրոտ տեղ է. մարդիկ ավելի քան խոր փորում են, մի ավազոտ տեղ է, լվանում են: Երբեմն-երբեմն քար է դուրս գալիս, որ կանաչ ու սպիտակ երկններից փայլուն երակներ ունի, իմացիր, որ դա ալաթն է [այնիհուր]: Մի միավոր** դունարը*** կանաչ ջրով, երբ ամեն կողմ շուռ են տալիս, թվում է, թե ամեն կողմից ջուր է կաթում. սրա դինը երեքհարյուր ֆլորին արժե: [Այն քարը, որ] Միլի ու Յելլոնի հանքերից է ստացվում, արժեք չունի: Տաս ֆլորին գին ունի Արարիայում: Կայծի նոր հանքը Բենգալայի ծովեզերքի մոտ Բանդարում**** է ստացվում: Բանկավ են

* Կարծում ենք, որ Թավուտի աշխարհագրական անուն է և ոչ թե սիրամարգագույն: Նախադասության իմաստը այդ է թելագրում: Պատկանյանը թարգմանել է սիրամարգ, կրակ, երկիրք:

** Մաղ կամ մաղ պայմանական կերպով թարգմանում ենք միավոր [հավանորեն կշռի անուն է]:

*** Թանկագին քարի անուն է:

**** Պատկանյանը թարգմանել է իբրև նավահանգստային քաղաք:

* Բնագրում մաստանա: Ըստ Բ. Պատկանյանի:

ասում, որ մի կղզի է, այն կայծը [յարդութիւն], որ լավ երանգով [ջրով] կանաչ ու նոնազույն է, այն կղզուց է ստացվում, մանուր է ըրքնակի, որ քարայրի կակուղ է*, կրակից դուրս չի գալիս, հակինթը դրանից էլ լավն է, ֆուանկներին համար կոշտն ու փափուկը միևնույնն է, միայն լավ գույն ունենա: Կայծը [յարդութիւն] երանգով [ջրով] ու նոնազույնն են ուղում, փափուկին [ու կոշտին] շեն նայում:

Մեղեսիկ [լավ]. Իմացիր, որ առաջ մեղեսիկ չկար: Զեմ-շեղ անունով մի թագավոր կար, նրա ժամանակ երկրաշարժ եղավ, և շատ մարդիկ մեռան: Բայաշխանի մոտիկ մի քարձր լեռ կար, երկրաշարժից այդ լեռը ճեղքվեց, աստու հրաշքով մեղեսիկը [լավը] այնտեղ երեաց: Այն լավ մեղեսիկները, որ մարդկանց մոտ կան, բացի այն լեռանից, ուրիշ տեղ դրանց նմանը չկա: Ամեն երեք հարյուր տարին մեկ դուրս է գալիս: Այնուհետև մեղեսիկը յոթ գույն ունի՝ կարմիր, նոնազույն, հրագույն, քացախագույն, գինեզույն, կարիճագույն, սիսեռագույն: Իմացիր, որ տասնմեկ կարատ լրիվ կշիռը քառասուն ֆլորին արժե: Իսկ եթե երեք կամ չորս կարատ լրիվ կշիռ կարմրագույն լինի, մաքուր կարատը հինգ ֆլորին արժե: Նոնազույնը և հրագույնը դրա կես գինն արժեն, այդպես է նաև սիսեռագույնը: Իմացիր, որ մեղեսիկի հատկութունը, իմաստունները ասել են, տաք ու շոր է: Իվ հետը մեղեսիկ ունենա, ամեն հիվանդութան դեմ օգտակար է: Մեջքացավի համար լավ է, մարդկանց աչքին [մոտը ունեցողը] լավ կթվա, վատ երազ չի տեսնի: Երեխաների մոտ պահելը լավ չէ, դեերի դեմ էլ օգտակար է, կտապին խառնելիս ուրախացնում է, երեսի գույնը կարմիր է լինում, ախորժակ է բացում:

Զմրուխտ. երեք ցորենահատը մի կշիռ է**։ Մախվում է այդ կշիռով: Իմացիր, որ 1500 տարի առաջ երկու տեղից էր ստացվում, իսկ իր հանքը Եգիպտոսի մոտ է: Այն զմրուխտի գինը մի ֆլորին է, լինում է 516 կշիռ: Իսկ այն զմրուխտը, որ մարդկանց ձեռքում է, Ֆուանկստանում է ստացվում, այլ

* Ոչ մի կերպ չկարողացանք հասկանալ, թե ինչ է նշանակում օման-լուր է ըրքնակի, որ քարայրի կակուղ է՝ նախազատությունը:
** Բնագրում ըսվել, որ կարատից թիչ պակաս է:

տեղում չկա: Ունի երեք գույն՝ սամիթագույն, ուհանագույն և եղինջագույն: Ռեհանագույնն ու եղինջագույնը մեծ գին չեն, իսկ սամիթագույնի մի մսխալը Հնդկաստանում երկու հարյուր ֆլորին արժի: Նոնազույնն էլ նույն գինն ունի: Ոմանք ասացին, թե զմրուխտի բնույթը սառն ու շոր է, իսկ ուրիշներն էլ ասացին, թե լավ է, ով որ հետը ունենա, աչքերը շեն ցավի, տեսողությունը կուժեղանա, երկար կապրի, հավկուր չի լինի: Ասացին, թե զմրուխտը ամեն թույնի դեմ թունաթափ է (հակաթույն), եթե մարդու թույն տված լինի: Երկու կարատ նոնազույնը ուղտի կաթով տալիս են, ապա աստուծով ազատվում է, քրտինքը [թույնը] դուրս է գցում: Եթե վիշապ օձ տեսնի, դիմացը պահիր, աչքերը կպատվեն, կարիճ կամ օձ խայթելիս [զմրուխտը] վարդաջրով հարում են և քսում են [կծածի] վրա, ողջանում է. տազնապի ու մտահոգութան մեջ չի ընկնում:

Իմացիր, որ մարգարիտը երեք տեղից ավել տեղում չի լինում. ծովի ափից ստացվեց: Ղեսիմալաքանի մոտ մի կղզի կա՝ ափին, լավ մարգարիտը այն կղզուց է. մեկ էլ Իսահմերեում Բենգալիայի Քարուլի մոտ: Ընդարձակ է, այնտեղ շատ է ստացվում: Մեկ կամ կես մսխալ պակաս է զրտնըվում, մանր շատ է լինում: Մեկ էլ Եգիպտոսի մասում Կայրաման անունով մի ծով կա, սրա շուրջը նավահանգիստներ կան, շատ են բերում (այստեղ), իմացիր, որ սրա կենդանին հավի շափ է ու սերմը ձկնկիթի նման է, գցում է ծովի մեջ: Գաղտիկուրը [սատաֆ] նրա սերմից է, երբ անձրև է գալիս և մայիսն է լինում, դուրս են գալիս ծովի մակրեկույթին տաքանում և գոյանում են. գիշերը իջնում են ծովի մեջ, մինչև քառասուն օր այդպես մնում են, ապա գոյանում: Բժավորն ու դեղինը տարվա եղանակից է. իմացիր, որ ութ կարատը փայլուն (կամ անբիծ) է լինում, արժի ութսուն ֆլորին: Եթե սպիտակ քաֆուրագույնը (կամֆորագույն) մի մսխալ լինի, հազար հինգ հարյուր ֆլորին արժե, չորս կարատը վաթսուն ֆլորին արժե, երկու կարատ սպիտակ ֆոսֆորագույնը քառասուն ֆլորին արժե, դեղին մոմագույնը անարժեք է: Եթե հարցնեն, թե այսինչ ծանրութան մարգարիտն ինչ արժե, մինչև չտեսնես, չգնես: Բնույթը սուր է ու

Քաց, ցերեկակուրին* օգտակար է. աչքի բորին կամ եթե մարդը խայտաւոր է, ծեծում ու քացախով քսում են, աստուծով առողջանում է:

Իմացիր, որ փիրուզը ստացվում է շորս տեղից ոչ ավելի: Իր հանքը Նշավուրում է, լավն ու արծեքավորը այնտեղ է լինում: Երկրորդ հանքը Խոջանդեում է, այն էլ հինգ Ֆլորինից պակաս չի լինում: Երկրորդ հանքը Քիրմանում է՝ Շահավաքե գլուղում, բայց սա առաջինների համեմատ արծեքավոր չէ: Չորրորդ հանքը Իսպիրում է, որ արծեք չունի: Նշավուրի փիրուզից լավը չկա: Կավ մաքուրի քսան կարատը շորս հարյուր Ֆլորին արծե, իսկ մաքուր լավի մեծ կարատը մեկ Ֆլորին արծե: Փիրուզի (որակի) անկումը մուշկից, խոնավութունից ու կրակից, քաֆուրից է, թե որ սրանցից (զեբթ) պահեն, գույնը չի անցնի: Ակնագործները ասացին, թե բոլոր թանկագին քարերից սա լավն է. շատ հատկութուններ ունի, ով մտաւ պահի, թագավորների բարկութունից զերծ կմնա: Եթե առավոտյան դրան նայի, հոգս չի քաշի, աչքացավի դեմ օգտակար է, երկար ժամանակ բերրիության, անասունի (առատության) համար օգտակար է, մտաւ պահողը վատ երազ չի տեսնի:

Դեղթափը [փանդահը], որին կոչում են մաթուլի հայաթ**ⁿ, մտաւ պահելը շնորհներ է տալիս: Եթե մեկը շաքաթական վեց կարատ քարի վրա ծեծի և ուտի հարյուր քսան տարի կապրի. ցավ չի տեսնի. ով ուտի կամ մտաւ պահի, սրտոտ կլինի, շարաչքը վրան չի գործի, օձ կամ իժ չի խայթի: Ուտողը պետք է վարդաջրով հարի և զգուշութամբ ուտի, որ անդառնի չհասնի, վնաս է: Եթե հարցնես, թե որտեղից է ստացվում, ապա Շիրազի մոտ մի լեռ կա, որին Շարան քար են ասում. այդ լեռան վրա ցուլ կա, որ մեծ եղջուրներ ունի. որի՛շ խոտ չի ուտում. Շարան քար են ասում, այդ խոտից բացի այլ խոտ չի ուտում, այն փորում դեղաթափ ունի: Ազնիվ քարախունկն էլ այն լեռան վրա է լինում: Մի խոր ձոր կա, կաթում է այդ [ձորի] քարերին: Տարեկան հազար մսխալ

հազիվ է առաջանում: Հատկութունը այն է, որ եթե մեկը բարձր տեղից ընկնի ու ջարդվի, ապա եթե կես մսխալ խումեցնեն, կողջանա: Այդ տեղը պետական է. հարյուր խոյից մեկ խոյի մեջ է առաջանում, այն որ ունի մեծ եղջուրներ և նիհար է: Ընդերքում է լինում և փափուկ է, երբ բերան են դնում քար է դառնում: Եթե տասը մսխալ լինի երկու հարյուր Ֆլորին արծե, իսկ եթե երկու կամ երեք մսխալ է լինում, արծի տասնհինգ Ֆլորին: Շատերը կան, որ սարքում են, եթե կամենում ես իմանալ, քսիր քարի վրա, եթե սպիտակի, ուրեմն սարքված է, իսկ եթե այլ գույն ստանա, այն լավն է [իսկական է]: Դեղթափի տեղը առ վետաճրիպան կրով քսիր ձեռքդ, դեղինը լավն է: Կրակի մեջ եթե ծուխ առաջացավ, և տեղում բան չմնաց, լավն է, եթե հող մնաց, վատ է:

Դեղրափի մասին մի այլ խոսք ևս

Հաջարըլթեքը (այծեքարը), որ դեղթափն է և որը հայերը թունադեղ են կոչում, ունի առաջին դեղթափի հատկութունը, իսկ տեսքը նման է կաղնեպտղի, երկարավուն և կլորավուն է լինում, մեկը մեկի տակն է, մեջը կորիզ է, իսկ այս քարի գույնը հողագույն է, սևին է դարկում և մի քիչ էլ կարմրավուն է: Լավը այն է, երբ կաթով քարին ես քսում, կարմրագույն է դառնում: Իսկ այն, որ լավը չէ, երբ տրորում են, կանաչ գույն է ստանում: Այդ [քարը] գտնում են վայրի քոշի [արու այծ] փորի մեջ: Շիրվանի կողմերում է լինում, բժշկապետները շատ են խոսել: Բժշկարանի հեղինակը ասել է, թե այն քոշը, ասում են, օձից և մուխալից [հակաթույն բույս] բացի այլ կերակուր չունի: Այս պատճառով հիշյալ քարը առաջանում է քոշի փորում, դրա համար ազնիվ հակաթույն են [թիրաջը] ասում: Եվ երբ այս քարը քսում են, շատ գույն է առնում, լավը չէ: Իսկ լավը այն է, երբ քսում են, կարմրախառն սևագույնին է դարկում: Շամում այդ դեղթափի նման սարքում են այնպես, որ մեկը մեկից հազիվ է զանազանվում: Սրանց փորձարկելը այսպես է. եթե ասեղը կրակով կարմրացնես, ապա դնես այդ քարի վրա, եթե քարը սարքովի է, սև ծուխ է ելնում, թե ստույգ հակաթույն է,

* Իմա՝ դիշերը ավելի լավ է տեսնում, քան ցերեկը:

** Կյանքի ծագում՝ սնունդ:

դեղին ծուխ է բարձրանում: Եթե այն սամիթաջրով տրորեն և օձահարին քսեն կօղնի և անմիջապես ցավը կմեղմացնի: Ամեն տեսակի դաղանահարի օգնում է, շարք խափանում է: Եթե տասներկու գարեհատի քաշով տան, սրտի թուլությունը օգնում է և մարդուն լավ ուժ է տալիս: Իր ընդունելու շափող կես դանգ է [երկու գարեհատի կշիռ]. ով ամեն օր սրանից կես դանգ ուտի, կազատվի ամեն շար փորձանքից ու ամեն մահացու դեղերից. օգնում է նաև դյուրաբորբոքին, սրտ պատճառը այն է, որ դյուրաբորբոքը այդ բանը անում է ոչ իր բնույթով, իսկ այս դեղի հատկությունը խիստ ջերմ է, իմացիր:

Այնպես իմացիր, որ համպարը թանկադին քարերի կարգին չի պատկանում, բայց դրանց շարքում է գործածվում: Եմենի ծովի մակերևույթին է լինում: Զուլումաթը մի քանի կղզի է, այնտեղ ծառեր կան. այդ ծառերի վրա է իջնում ինչպես մանանա [տրփս], ինչպես մեղր: Վրան շատ ճանճ է իջնում: Ծառերի վրա այնքան է իջնում, որ ավելանում, հոսում է դեպի ծովը և ծովի մակերևույթը մոմի նման պատում է և խփում է ամբողջ, ծովեզրում շրջող մարդիկ հավաքում են 5—10 լիտր: Մի անգամ վաճառականները գտան ինչպես մի քար. մարդ չէր հանդիպել [ծովի] վրան քարի նման էր դարձել:

Իմացիր, որ համպարը շոքս տեսակ է լինում՝ շամամագույն, խաշխաշագույն, ծխախոտագույն, պիստակագույն: Շամամագույնը կլոր է լինում, երբ վերևի շերտը կտրեն, նմանվում է խաշխաշագույնին: Խաշխաշագույնն էլ այդպես է: Մխախոտագույնն էլ մեջը սպիտակ է ու ամուր: Պիստակագույնը սպիտակ է, շամամագույնը, պետք է իմանալ, 10 մսխալը 5 ֆլորինով կարելի է առնել, իսկ եթե այլ վայրում ծախսես, 15 և էլ ավելի կբերի: Եթե խաշխաշագույնը շոքս ֆլորինով առնես, տասներկուսով կծախվի, իսկ եթե ծխախոտագույնը և պիստակագույնը երկու ֆլորինով առնես, այլ վայրում վեց արծե: Համպարը անուշաբույր է, մարդու քիմքը անուշ է պահում, թախիծը վանում է, աչքերին լավ է, քոսի ու գլխացավի օգտակար է:

Լաշվարդի հանքը Բաղախշանում է, Քաղում էլ է լինում, սակայն ամայի է: Ինչ-որ տներում են մշակում, Քաշից է: Սա-

մասաում մի սևագույն քար կա, ծեծում ու բերում են ծախում. կրակից դուրս չի գալիս, իսկ բաղախշանը տասը օր կրակում մնում է, չի փշանում, որովհետև գոհար է: Այնպես իմացիր, որ լավը ձվի նման կեղև ունի՝ սպիտակ ու փափուկ: Հարյուր մսխալը արժի քսանհինգ ֆլորին: Խամը (չմշակված) կտոր-կտոր է լինում: Հարյուր մսխալ վանում են, կանդնում է քսանհինգ մսխալ: Ով իմանում է լվանալը, շատ շահավետ է, անլվան քաշին է նման: Ամալին ու բաղախշին կրակն է զանաղանում. աչքերին ավելի օգտակար է, քան ծարիր քաշելը, մարդու է պահում: Ծինար* ցավի դեմ օգտակար է, մեջքացավը վանում է:

Մարշանը երեք վայրում է լինում՝ Թուսե քաղաքում, որ Մզրիբի կողմն է: Գարձյալ ծովից են հանում, ինչպես մարգարիտը: Քանի դեռ ծովում է, փափուկ է, երբ դուրս են բերում, ամրանում է: Մի քաղաք էլ կա Յոանկատանում, Քիսա են կոչում, այնտեղ էլ է լինում: Օրմուզի ծովի նավահանգստներում կա, սև է լինում, որին ուսր են անվանում, նրա սպիտակը մի բան չէ, կարմիր շտաշածը կուճրաթում գնահատվում է: Տաշվածը արևելքում արծաթի հետ հավասար գնում է: Հատկությունը մոռացկոտի համար լավ է, գլուխը չի շարժի, սրտին ուժ է տալիս, ծախրաքարի հետ խառնված աչքերին օգտակար է:

Աղեղը (սարգին) երեք վայրում է լինում՝ Ա. Եմենում, Բ. Գուջարաթում, Պարվանում շատ է լինում, Գ. Քալբարկում. բայց սրանք Եմենինի նման չեն: Եմենինի բնույթը այն է, որ երբ իրեն նայելիս շար են կամենում, լավ է լինում: Հղի կնոջ մոտ օգտակար է:

Հասպիսը, Խաթայի ու Չինաստանի միջև մի գետ կա, այս գետի քարերը հասպիս են: Հասպիսը հինգ գույն ունի՝ սպիտակ, ձիթապտղագույն, կանաչ, սև, սամիթագույն: Ամենալավը ձիթապտղագույն քարն է: Այնտեղ, ով իր մոտ չի պահում (դրանից), նրան չեն հարգում: Տարեկան հինգ հահար ֆլորին է ստացվում, ով մոտը ունենա, երկրաշարժ չի լինի, մարդու սիրտ չի խփի, կայծակի դեմ օգտակար է:

* Հիվանդության անուն է:

ՄԱՐԵՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐԱՄ ԱՂՎԱՆԻՑ
ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Իսկ այժմ իմ՝ նվաստ Հովհաննեսի կյանքի տասներկու տարվանից հետո, երբ ինձ ճանաչեցի, բայց վախ ինձ, որովհետև աստժու պատվիրանով շարժվեցի: Եվ մեր հայոց 1021 [1572] թվականին Ատրպատականի թագավոր էր այլազգի ոմն Գահման անունով, որ կոչվում էր կարմրագլուխների շահ: Սա շափազանց խաղաղասեր էր և աչքը կուշտ: Ամենածերերը ասում էին, թե մինչև անգամ իր երկրից տասնհինգ տարվա հարկը չէր առել, նաև վաճառականների [վճարելիք] քաժը և մաքսը որ իր զանձարանում իր համար էր հավաքված լինում, վերացրեց իր երկրից: Նաև լկտի կանայք, որ բնակվում էին քաղաքում և բացահայտ կերպով շատերին մոլորեցնում էին, տուրք էին տալիս արքունիքին, և արվամոլության անասելի պղծություն էր արմատավորված պարսիկների մեջ, այդ ամենը հրամանով վերացրեց, իսկ եթե որևէ տեղ հայտնվում էին, հրամայում էր շարաշար տանջանքներով սպանել: Հիշյալ շահը մեր 1024 [1575] թվականին մեռավ՝ թագավորելով հիսունմեկ տարի:

Նրա որդիներից Իսմայիլ անունով մեկը, որը նախապես իր հոր կողմից մի հանդուգն գործի համար արգելափակված էր բանտում, այժմ ելավ, թագավորեց իր հոր տեղը: Սա սուրբ գործի դրեց՝ սպանելով իր յոթ հարազատ եղբայրների: Սկսեց իր զորքերի զորապետներին սպանել՝ ոմանց հայտնի, ոմանց գաղտնի: Մինչև իսկ գրեթե ջանում էր սպառել պարսիկ ժողովրդին: Այս իմանալով պարսիկ տիրառայացները, թե մոտեցել է իրենց կորուստը: Թավրիզի իշխան Ամիրխան անունով մեկը և Արարատյան գավառի իշխան Թոխմախ մականունով Մահմադ անվանված մեկ ուրիշը և այլ ուրիշներ, որոնց անունները հավաստի չգիտեմ, միաբանվեցին Իսմայիլի ծառաների հետ և գաղտնի սպանեցին նրան: Նրա զորքը չիմացավ նույն Իսմայիլի մահը և դատ ու դատաստան չեղավ: Ոմանց կողմից ասվեց, թե գնա-

ցել է լրտեսության այլ թագավորների երկրները, մի տարուց հետո վերադառնալու է: Այսպես էր կարծվում, հետո ամենքը ստույգ իմացան նրա մահը:

Եվ կրկին բոլորը միաբան գնացին Խորասան և բերին Խուղարանդա կոչված մի շինի՝ Իսմայիլի եղբորը, նույն Թահմազ շահի որդուն, որ իր հոր կաղմից նշանակված էր Խորասան երկրի տեր: Սրան թագավորեցին Իսմայիլի տեղը: Բայց սա թագավորական գործի մեջ անարի ու անպետք էր. ուստի զրկվեց կյանքից նույնպես:

Սրա իշխանության երկու տարում Բյուզանդիայի Մուրադ անունով թագավորը՝ ցեղով Օթմանի, որ խնդկար է կոչվում, հրաման տվեց իր զորքերին գնալ կարմրագլխի [զղբաշի] երկրի վրա: Եվ կալա անունով ոմն զորապետ մեծ զորքով եկավ, հասավ Արարատյան երկիրը, գերեց հայ, տաճիկ թվով վաթսուն հազար հոգի և քշեց, տարավ հոռոմների երկիրը: Մյուս տարին դարձյալ շարժվեց Վրաստանի վրա, հասավ Փայտակարան քաղաքը, որ Տփլիսն է, այնտեղ շինեց բերդեր և ամրացրեց. այնտեղ դրեց բազմաթիվ ռազմիկներ: Վրաց ոմն Բագրատունի թագավոր՝ Սիմոն անունով, որ երբեմն անհնազանդության համար բռնված էր նախապես հիշված Թահմազ շահի կողմից, տկարացել էր հավատի մեջ և գտնվում էր նրա ձեռքի տակ: Իսմայիլի թագավորելու ժամանակ [Իսմայիլը] Սիմոնին շնորհեց հայրենի իշխանությունը, տարածություններ, որ գնա իշխի յուրայիններին, բայց կրոնով մնա մահմեդական:

Սա գնաց իր տեղը՝ Տփլիս, հանդիմանվեց իր առաջնորդների, քահանաների, մանավանդ կնոջ և իր ընտանիքի կողմից, որոնք նրան ուրացող ու ապերախտ էին կոչում և նրա հետ չէին հաղորդակցվում: Սրանից նա զգաստացավ, ետ կանգնեց մահմեդականութունից, նորից դավանեց Քրիստոսի երկրպագելի խաչը և բոլորի աստված խաչված Քրիստոսին: Այս լուրը լսվեց պարսիկների կողմից, բայց ոչովհետև Իսմայիլը մեռել էր, իսկ ուրիշները ոչինչ չկարողացան անել նրան, զիջեցին նրան մնալու քրիստոնեական հավատի մեջ, գոնե միայն հավատարմություն ու մտերմություն պահպանի շահի տան հետ: Եվ այժմ կալան փախցրեց այս Սիմոնին և նրա երկրում շինեց բազմաթիվ բերդեր, բայց

այդ վայրերը տեսած շինելու պատճառով չեմ կարող նկարագրել տեղանքը, սակայն լսեցինք, թե Տիփսիսում, Գումանիսում, Գորիում, Կոսիում և այլ տեղերում բերդեր շինեց և նրանց մեջ զորքեր թողեց. իսկ ինքը անցնելով Ալանք՝ գնաց Երկաթի դռները (Գերբենդ), այնտեղ նույնպես բերդ շինեց, որ ասվում է Գամուրդափի, որտեղ բազմաթիվ զորքեր և Օսման անունով մի զորապետ դրեց, որը խիստ կարող ու անողորմ էր, իսկ ինքը վերադարձավ իր թագավորի մոտ և նրա ձեռքով սատկեց մատնիչների խոսքով, բայց ասածու վրեժխնդրությունը թույլ չտվեց, որ նա ապրի անմեղների արյան համար:

Իսկ 1028 (1579) թվին եղավ սաստիկ տարածամ մահ Ատրապատականում և ամբողջ Աղվանքում. կոտորեց բոլոր ազգերի բազմաթիվ մարդկանց այնպես, որ բազմաթիվ տղաներ մնացին անտերունչ, շատ հայրեր ու մայրեր մնացին անզավակ: Աղվանից երկիրը այսպիսի փորձություն մեջ լինելով սգում էր իր մեռածներին, կենդանի ընկածներին և իրենց ևս հոգալով մտածում էին «Այդո՞ք կազատվենք այս մահից տարածամ, թե ոչ»: Այս անսպասելի ժամին հանկարծակի եկավ, հասավ վայրագ, մահվան օրհասը մոռացած այն Օսմանը, որը նախապես ձեռնարկել էր թաթարների մոտ, որ Ղայթաղ են կոչվում, և բոլոր կովկասյան լեռնական լեզգիներին հավաքել էր իր մոտ Գերբենդում՝ բազմաթիվ ու անհամար արյունարբու հեծյալներով: Նրանցով ելավ, եկավ Կուր գետից այս կողմ: Փախստական դարձրեց Գանձակի ու Պարտավի իշխաններին, իսկ իրենք սփռվեցին դաշտերում ու լեռներում: Գանձակը, Պարտավը²⁴⁶, Ճարարերդը²⁴⁷, Խաչենը²⁴⁸, Վարանդան ²⁴⁹, Դիզակը²⁵⁰, Չարեթը²⁵¹ կոչված գետից մինչև Արաքս մի օրում ենթարկեցին, գերեցին, անհաճելիներին սրով սպանեցին և շորս-հինգ օրից հետո վերադարձան իրենց տեղերը:

Գարձյալ նույն տարում երկու պատիմների՝ մահվան ու սրի հետ եղավ սարսափելի ու անտանելի սաստիկ սով, այնքան, որ մարդիկ մահվան դիմաց որը մնալու, գերիներից անխնջ ու անօթևան շրջելու պատճառով, զազանանման անցան հումալիերություն, քանզի հայոց այն բոլոր գավառները, որոնք կարմրազուխների իշխանություն են եղել, որտեղ

քանդվելով ավերվեցին: Եթե որևէ անկյունում շինություն էր մնացած լինում, այնտեղ ղետեղվում էին տնանկներն ու մերկերը: Տղամարդիկ, կանայք առանց օթևանի արտասովալից դեմքերով շրջում էին օտարների դռներում, ուրիշների տներում իրենց համար ուտելիք խնդրելու համար: Ուտելիքները չբավականացնելու պատճառով նրանցից ուժեղները գաղտնի մտնում էին ոչխարների փարախները և տավարների գոմերը, և շկարողանալով անասուններից մեծերին մորթել, իրենց հետ սուր շունենալով, իրենց ուժով բռնում էին գեղեցիկ հորթեր, մատղաշ գառներ և ուլեր, պատռում էին նրանց կողերը, հանում էին նրանց սիրտն ու փորստին, հում-հում ուտում և գաղտնի դնում էին: Ոչ ոք կասկած չէր ունենում, թե այս բանը նրանց կողմից է արվում, մինչև որ ոմանք տեսել են նրանց այսպիսի գործերի վրա և հավաստի իմացել են այդ: Իսկ նրանցից թույլերը անասունների ու ձիերի աղբակտյտերի մեջ որոնում, գտնում էին դարու հատիկներ և ուտում: Այլև չիմանալով մաքուր և անմաքուր (կենդանիների) մասին, անցյալ տարվանից կամ հնուց փոքրցում ընկած ոսկորները վերցնում էին, դնում քարի վրա, քարով փոշի էին դարձնում և պցում բերանները և հոգոց հանելով հառաչում էին: Նաև հնացած կաշի փոկ, մաշված տրեխ դնում էին խեցու կտորի վրա եփոցին, վերցնում ուտում էին: Վա՛յ տեսողությունս, եղբայրներ: Երբ զարուհը եկավ. աղքատները սփռվեցին դաշտերը, սևացած մաքմնով որպես այծերի ու ոչխարների հոտեր ուտելով վայրի բանջարներ և կանաչ խոտեր՝ չէին հագնեում, քանզի սով էր իջել երկրի վրա և ոչնչացել էր հացի բերքը ըստ մարգարեի*: Մանավանդ մեռնում էին ուռած զուլսներից, ոմանք արոտտեղերում, որ չէին կարողանում վերադառնալ, ոմանք էլ, գալով գյուղամեջ, պատերի տակ և ավերակ տների անկյուններում էին մեռնում: Եթե որևէ մեկը լինում էր աստծուց երկյուղած, առնում էր դիակներից ինը-տասը և էլ ավելի պցում էր փոսի կամ հորի մեջ և հողը փլցնում էր վրաները, ծածկում, եթե ոչ, մնում էին անթաղ: Շատերը լսում էին, թե այսինչ տարնուտերի կամ հարուստի տրդին է մեռել, և նրա դիա-

* Գ. Բագարաց Ը 1:

կը ահա այնքինչ տեղում է: Նրա սիրելիներէց ու ծանոթներէց շատերը լսելով՝ իրենց եղով ու վայ էին ասում, իսկ թաղելը թողնում էին վաղվան, վաղն էլ՝ մյուս օրվան շափազանց ձանձրութիւն պատճառով: Դարձյալ ոմանք լսում էին, թե այն դիակը գազանները պատահուտեալ, ու ոսկորները ցըրել են. այս լսելով անտարբեր էին մնում, և այսպես մնում էր անթաղ:

Վայ թշվառականիս և պատմութեանս, եղբայրներ, քանզի շատերը զազիր շների ու կատմաների պիղծ մտից կերել են, նաև մարդկանց մարմիններից: Քանզի Ամարասի սահմաններում Վարանդի և Դիզակի երկրի մի գյուղում ոմն հարուստի միամոր յոթ տարեկան որդուն այրի կանայք մերձակա գյուղերից հալածելով և բնակվելով հարուստի տան մոտ և կերակրվելով ըստ դիպվածի հարուստի տնից՝ մի օր խաբելով տղային՝ իրենց տուն են կանչում և սպանելով մի ոտքը անդամների հետ ուտում են: Երեկոյան ծնողները տըզային որոնելով՝ գտնում են այրի կանանց տանը իրենց տղայի կիսակտոր դիակը: Նաև լսեցինք, թե մի ծեր մարդ իր դստեր մարմինը կերել է միևնույն երկրում: Ամենուրեք այսպես եղավ սովի տառապանքը 1028 և 1029 [1579 և 1580] թվականներին:

Վայ ինձ՝ պատժապարտիս, որովհետև մահով, սրով և սովով կոտորված մարդկանց մարմիններից գազանները այնքան էին կերել, մինչև իսկ անբան շները վայրենացել, շենից դուրս կենդանի մարդիկ էին որսում: Իսկ գայլերը ճանապարհին, նաև շենամիջում մտնում էին տները, քնած մարդկանց դուրս էին քաշում և ուտում: Մտնում էին հոտերի մեջ, հովվին ուտում էին, իսկ հոտերին շին վնասում: Եվ մահով, սովով ու սրով մեռածների ու գերվածների թիվը շեմ կարող ճշտել և գրի առնել, բայց իմ թղթերը և թանաքները ձեռ առչե եմ փոռում ըստ Դավթի դպիրների, որ Երուսաղեմի ժամանակ էր:

Իսկ 1032 [1583] թվականին Մուրադ խոնդկարի կողմից հրաման արձակվեց իր զորապետներին ու զորքերին գնալ Երևանի վրա և գրավել այն: Հենց եկան ավերեցին. բազմա-

թիվ եկեղեցիներ քանդեցին, քարերը տարան բերդ շինելու: Համարու կամեցան մեծ եկեղեցին ևս քանդել, որ Երկուերեսի²⁵² է կոչվում, իսկ Առաքել անունով մի վարդապետ, որ հետո կաթողիկոս եղավ, նրա հիշատակը օրհնութեամբ լինի, մտավ զորքի զորապետ Յահրադի մոտ և թույլ շտվեց, որ եկեղեցին քանդեն: Բայց վայ ականջներին և պատմութեանս, որովհետև երեսուն օր ջորիներ, ձիեր և իրենց անծանոթ բազմաթիվ տաճիկներ բնակվեցին եկեղեցում: Եվ եղավ այն, ինչ մարգարեն էր ասել, որովհետև հեթանոսները մտան աստծու ժառանգությունը և պղծեցին նրա սուրբ տաճարը*:

Սույն թվին վախճանվեց մեր մեծ ու երանաշնորհ վարդապետ Հովհաննեսը, որ Փոքր Սյունիք կոչված Մար²⁵³ գավառից էր, սուրբ առաքյալ Թադեի վանքից: Դոփի և Հասանի տոհմից որդին էր Ջհանշահ կոչված մի ազնվական ու բարի մարդու: Նա աշակերտն էր մեծ վարդապետ Ղուկաս Հաղպատեցու Չափազանց սրբասեր ու աստվածասեր էր, հեղ էր ու աղոթարար, ուղղափառների համար քարոզիչ էր, իսկ ստահակներին հանդիմանող, սիրով էր ուղղությունը և պատվում տոնախմբությունները, շատ ընթերցասեր էր ու գրասեր, այնքան, որ իր հիշատակի համար բազմաթիվ գրքեր տվեց և եկեղեցական շատ սպասքներ ու զարդեր (գնեց): Ալևորված և օրերով լեցուն հանգավ ի տեր մեր 1032 [1583] թվականին: Նրա պատվական մարմինը թաղված է Գեղամա երկրի Վասակաշեն²⁵⁴ գյուղում Սարգիս վարդապետի գերեզմանի մոտ: Նրանց հիշատակը օրհնութեամբ լինի, իսկ նրանց աղոթքը մեր ու ձեր վրա լինի, և տերանց տերը զթառջ աշխարհի վրա. ամեն:

Իսկ 1034 [1585] թվականին խրոխտ Մուրադից հրաման արձակվեց Գերբենդ Օսմանին՝ գալ իր մոտ կոստանդնուպոլիս. և սա անմիջապես գնաց, պատիվներ ստացավ նրա կողմից՝ նա Սրան զորապետ և իշխանաց իշխան նշանակեց ամբողջ արևելքի՝ Բյուզանդիայից մինչև Ալանք: Նրան հանձնեց մեծ զորք վեց հարյուր հազար և ուղարկեց շահաստան քաղաք Թավրիզի վրա: Սա շափազանց խրոխտանքով եկավ և գրավեց այն: Ավերեց և, ինչ որ կար, ամե-

* Ա Եզր Ա 49:

նը ավարեց: Բերդ շինեց, սակայն շահասցրեց բերդի ավարտին, այնտեղ սատկեց՝ արժանի շինելով այս աշխարհում իր Թագավորից հաղթության համար գովք լսելու, իսկ հանդերձալուծ իբրև նրա համար հատուցում ամենքին դատողին է հայտնի: Իսկ մյուս իշխաններից ու գլխավորներից բազմաթիվ պատերազմներով դեմ կանգնեցին կարմրագլուխներին [ղզըբաշներին], բերդը ավարտեցին և այնտեղ զորքեր դրին ծառա անվանումով, իսկ սրանց զորապետ նըշանակեցին Զաֆար անունով մի ներքինու, իսկ իրենք դարձան իրենց տեղերը՝ տանելով իրենց հետ նրա անմաքուր շաղիղը:

Այսուհետև վերադառնանք կարմրագլուխների պատմության ընթացքին: Այս ժամանակ նրանց Թագավորն էր նախապես հիշատակված Խուրաբանդան, որը կովեց Օսմանի զորքերի դեմ մեծ ջանքով, հաճախ տառապանքով, մեծ նեղություններով, շատ օրերի պատերազմով և երկու կողմերի անշափ արշան հեղումով, բայց շարունակաբար խանգարել նրանց Թավրիզի բերդի շինությունը: Այն ժամանակ իր իշխանության ներքո ունեւր Սև այգի կոչվածը [Ղարաբաղ], Գանձակը, որ Գանջան է: Եհնը գնացել էր այնտեղ իր Ամիրհամգա կոչված պատանի որդու հետ: Զորածոգով եղավ բոլոր կարմրագլուխների Թավրիզի և Օթմանի զորքերի մասին ինչ-որ բան մտածելու համար: Տիրատույց կարմրագլուխները Խուրաբանդայի վերքերի վրա վերք ավելացրին, մանավանդ հենց իրենց [վերքերի վրա]՝ կրկնակի ու եռակի, այդ եղավ կրկին նրանց համար կոտորած, քանի որ շահի որդուն սրով գաղտնի սպանեցին, որովհետև Թագավորի շուքը տղայի մեջ էր երևում, իսկ կարմրագլուխ պարսիկները նրանից խիստ վախենում էին: Եվ երբ այս այսպես եղավ, պարսիկները ցրվեցին, ամեն մեկը շիմանալով իր տեղը, ինչպես բզկտված հոտ, որ հովիվ շունի: Կրան ավելացրած օսմանցի Մուրադ Թագավորի խրոխտ հրամանը, որ պատել էր նրանց, ինչպես ծովը պատում է կղզիները: Խուրաբանդա շահը ծանր հեծեծանքներով Թախտոտ սրտով և տրտմությունով լցված գնաց Խորասան իր մյուս որդի Արասի մոտ, որին այնտեղ էր թողել իր Ատրպատական գալու ժամանակ, որ տիրի Խորասանին: Նրան հասավ

Խուրաբանդան և քիչ տարիներ անց մեռավ՝ ոչ մի քաջություն իր աղբին ցույց չտալով այդ անարին:

Թագավորեց նրա որդի Արասը նրա փոխարեն, որ շատ քաջ էր և պատերազմում հաղթող, որովհետև Գիլանը, որ Զորջանեթն է, ապստամբել էր սրա հոր դեմ, Արասը քաջությամբ նրանց իր իշխանության ենթարկեց: Նաև Օղբեկ կոչվածը Բալսից ու Բուխարայից ելավ գրավեց Հեր քաղաքը և շահի վայրերից ուրիշ տեղեր գցեցին իրենց իշխանության տակ, երբ նա [Արասը] Արգաբիլ էր գնացել իր հայրերի ու պապերի շիրիմների մոտ նվերներ ու ընծաներ բաշխելու: Լսելով [այս բանը] վերադարձավ այնտեղից, գնաց Օղբեկի վրա, ումանց կոտորեց, ումանց փախցրեց և իր վայրերը դարձյալ գրավեց: Նաև կրկու-երեք անգամ զորք ուղարկեց նրանց վրա և հետո ինքը գնաց, նրանցից շատերին սպանեց ու ժգին պատերազմով և նրանց Թագավորի որդուն բռնեց, վերադարձավ իր տեղը՝ Ղաղվին. և այսպես նվաճեց նրանց: Այժմ նրա իշխանությունը Խորասանից հասնում է մինչև Արտաբիլ և Արաքս գետը:

Իսկ 1037 [1588] թվականին դարձյալ հրաման արձակվեց Մուրադ խոնդկարի կողմից ում Ծահրադ կոչվածի, որ նրանք գրավել ու վերաշինել էր և Օսմանից առաջ ու Լալայից հետո արեւելյան կողմերի զորապետն էր: Այժմ վերստին նրա առաջվա իշխանությունը շնորհեց նրան և ուղարկեց Գանձակի վրա՝ հեռացնելու սակալ մնացած կարմրագլուխներին, որոնք այնտեղ էին, և նրա մեջ բերդ շինելու և վերադառնալու: Նա եկավ ծանր զորքով և արեց խոնդկարի հրամանի համաձայն. վնդեց, քշեց, հեռացրեց, հեռու վանեց, առանձնացրեց, զատեց, տարածամեց, հալածեց, փախըստական դարձրեց, վտարեց, մեկուսացրեց և ինքը հետամտելով մինչև Արաքս գետը՝ շատերին գերեց, որոնց սրտ ճարակ արեց, շատերին նաև գետահեղձ դարձրեց, իսկ ինքը վերադարձավ Գանձակում բերդ շինեց և այնտեղ զորք դրեց ըստ իրենց օրենքի ծառա կոչումով, վերադարձավ իր կայսրի մոտ:

Իսկ երբ Եհն-Արասը տեսավ այս ամեն եղածները իր երկրի մոտերքում, երկյուղեց իր հայրերի ու պապերի շիրիմի համար, գուցե թե Արգաբիլը գրավեն, էլ ավելի ներս

գալով շտապեն դեպի պարսիկները, դեսպաններ ուղարկեց, պատվիրակութիւն առաքեց Մուրադ խոնդկարի մոտ համոզելու նրան խաղաղութիւն և միմյանց հետ բարեկամութիւն անելու համար, բայց գոռողը այս բանը չսեց, պատանդներ պահանջեց նրանից: Շահ-Աբասը կրկին ուղարկեց իր եղբորորդուն մեծ իշխան դայակի և երկու հարյուր զինակիր սպասավորների հետ խոնդկարի մոտ, այնտեղ Կոստանդնուպոլսում պատանդ մնալու իրենց միջև խաղաղութիւն հղավ:

Եւ 1044 (1595) Թվականին մեռավ Մուրադ խոնդկարը, թաղվորեց սուլթան Մահմեդը իր որդու հետ: Այս Մահմեդի օրերում ֆուսկները, որ կոչվում են մաշառներ, բազմաթիվ նվերով ծով դուրս եկան, և սրանց միջև պատերազմ եղավ հինգ տարի: Ամեն տարի միմյանց դեմ դուրս են գալիս ուժգին պատերազմով և իրար կոտորելով, ինչպես տապարավորներն ու կացնավորները անտառն են հատում՝ սպառելով միմյանց հրով ու սրով: Եւ հաջորդ տարին երկու կողմերից օգնական զորք է հանվում իրենց արքաների միջոցով, և լինում է նոր նորոգված պատերազմ: հաջորդ տարին կրկնակի ուժեղ քան առաջին տարին:

1049 [1600] Թվականին, երբ մենք կանք, այսպես է, իսկ ապագան տեք աստծուն է հայտնի, թե ինչ է լինելու այն ժամանակ, որ կողմին է պարտութիւն տալու և որ կողմին հաղթութիւն, որովհետև զրոված է. «Ոչ թե իր ուժով է զորեղանում ուժեղը, այլ տեք իր հակառակորդներին տկար է դարձնում»:՝ Տեքը սուրբ է և նա իր խաչի հավատացյալներին կարող է անում:»

Այժմ դարձյալ կրկնենք վրաց Սիմոն թագավորի մասին, թե ինչ եղավ, քանզի երբ Սիմոնը կալախի փախավ, գնաց իր երկրի ինչ-որ անկյուն և բնակվում էր անտառներում, կապանատեղերում և սրտով խոցված էր իր երկրի զբաղման համար, բայց միջոց չէր կարողանում գտնել, իր փոքրավոր խրոխտութիւն դեմ սպասում էր, սպասում էր աստծու խնամքին: Պատգամներ էր հղում, հարկեր է խոստանում Մու-

* Ա. Թագ. Բ 9,

րադին, երբեմն տալիս էր, երբեմն չէր տալիս: Երբեմն շտապով ապստամբվում էր նրանից և բերդի վրա ավազակներ էր ուղարկում՝ պատճառը բերդի զորքերի վրա դնելով Մուրադ թագավորին էր հայտնում, և նրանից իրեն շնորհվում էր կատարված վնասը:

Երբ սուլթան Մահմեդը թագավորեց, իր ապստամբական մտադրութիւնը այսպես դրսևորեց՝ հարկերը շտվեց, ավազակները չափազանց շատացրեց, սրան ավելացրած՝ ինքը զորածոդով արեց, հարձակվեց Գորի բերդի վրա, և ութ ամիս նեղ դրութիւն մեջ դնելով նրանց, զրավեց այն: Քանզիով բերդի քարերը հրամայեց այլազգիների թիկունքով տանել Կուր գետը թափել և ապա տղամարդկանց սրակոտոր արեց, իսկ նրանց կանանց ու զավակներին իբրև ավար բաժանեց իր վրաց զորքին: Սրանից թուրք ազգը սրտով խորապես խոցվեց, իսկ Մահմեդ խոնդկարը չափազանց բարկանալով ցասումով բռնվեց և տաղնապալից հրաման տվեց Ֆահրադի տեղը և իշխանութիւնը հանձնել ներքինի Զաֆարին, որ Թավրիզում էր, և ուղարկեց Սիմոնի վրա առնելու օթմանական ու իսլամայական գնդի անարգանքի ու արյան վրեժը: Եւ երբ թագավորից թույլտվութիւն ստացավ այս երկրորդ վայրագ ամորձատ Զաֆարը, շատ խորխտացավ և սպառզամավորներ ուղարկեց իր իշխանութիւն կողմերը, իսկ ինքը Թավրիզից ելավ եկավ Այրարատ: Այստեղ նրա մոտ հավաքվեցին բոլոր զորակոչվածները: Նաև սուրհանդակներ ուղարկեց հեռավոր գյուղեր ու քաղաքներ, որ ուտելիքներ բերեն իրենց և ձիերին, ճանապարհային անցատեղեր պատրաստեն իրենց համար: Նաև քսան հազար մարդկանց խառնեց բոլոր երկրների հայերի, տաճիկների ու միկիկների հետ, որոնք հեռները պետք է ունենային կողովներ, թիեր, տապաբներ, կացիներ, բահեր, փայտատներ, տների հիմքերի համար բրիչներ: Նաև ժողովրդից խստագույն հարկեր առավ իրենց օրենքից դուրս:

Ապա ելավ, մեծ երկյուղով գնաց, քանզի վաղուց ի վեր շատ անգամ փորձել էին Սիմոնի քաջութիւն և նրա հնարիմաց պատերազմների մեջ և նրանից պարտված ամոթալից դեմքով ետ էին դարձել: Իսկ այժմ, երբ հասան վրաց երկիրը, նույնը մտածելով՝ վախենում էին, ուստի երեք օր

կանգ առան և դեռ ճակատամարտ չէին տվել և իրար նպատ-
գամներ ու պատգամավորներ չէին ուղարկել:

Վրացիները իրար հետ խորհրդակցելով ասում են Սի-
մոնին. «Թույլ տուր, որ այսօր մեր տունն ու ընտանիքը
տանենք լեռները, իսկ մենք մեր ամբողջ սրտով ու զորու-
թյամբ արյան ու մահու գնով պատերազմենք թուրքերի դեմ
և աստծու զորությամբ հաղթենք նրանց: Բայց այս քրիս-
տոնյա ազգի միջից աղոթքը բոլորովին վերանալու պատճա-
ռով, այնքան որ կլոր տարին փոքրից մեծ ամենևին եկե-
ղեցու դուռը չեն բանում, ուստի աստծու արդար դատա-
տանը թույլ չտվեց, որ վրացիների մտադրությունը կատար-
վի, որովհետև աստված մարգարեի բերանով ասում է. «Իսկ
եթե չդառնաք դեպի նա, նրա սուրբ սրված է և աղեղը լար-
ված»*, Եվ կամ ասում է. «Մի՞թե կրարձրանա փայտատը
առանց փայտահատի, և [կշարժվի] սղոցը առանց որևէ
մեկի քաշելու»: ** Եվ դարձյալ ասում է. «Ես եմ սպանում ու
ես ապրեցնում, հարվածում եմ և ես բժշկում»***: Եվ կամ
ասում է. «Քանզի 'ում որ տերը կամենում է կորցնել, նախ
հիմարացնում է»: Ուստի Սիմոնը հիմարանալով այժմ սա-
կավաթիվ մարդկանցով գինեխումի է նստում:

Եվ այն կողմը, որտեղ Սիմոնն էր, թուրքերը բնավ չէին
կարծում, թե Սիմոնը այնտեղ կլինի: Ավարառության հա-
մար թուրքերը մի գունդ են անջատում և գնում են այն կող-
մը: Եվ տեսնելով մի վրացու՝ բռնում են, և մի քիչ առաջ
գնալով՝ տեսնում են Սիմոնի գունդը: Բռնվածին հարցնում
են դրա ով լինելու մասին, նրանից լսում են, թե դա ինքը
Սիմոնն է: Տաճիկները խիստ վախենալով էտ են կանգնում
և անմիջապես զորավոր մարդիկ արագընթաց երկվարներով
բանակ են հասցնում և Ջաֆար զորապետին հայտնում, նա
չափազանց ուրախանում է և բազմաթիվ քաջ մարդկանց
խրախուսելով ուղարկում: Սրանք գնում, բռնում են Սիմո-
նին և բերում Ջաֆարի մոտ: Երբ նա եկավ, Ջաֆարը ըն-
դառաջ գնաց և ողջունեց Սիմոնին: Ապա իրենց լեզվով

* Սաղմ. է 12:

** Ես. Ժ 15:

*** Օր. լԲ 39:

բարձրաձայն օրհնեցին աստծուն ի լուր բանակի: Իսկ Սի-
մոնը նույնը կրկնելով ասում է. «Օրհնված է աստված և նրա
անփոփոխ տերութունը, որովհետև տերը մեռցնում, տերը
ապրեցնում է, իջեցնում է դժոխքը և հանում»*:

Եվ Ջաֆարը անմիջապես սուրհանդակ է ուղարկում խոնդ-
կարի մոտ նրան ավետելու, իսկ ինքը առնելով Սիմոնին
ժամանում է Թավրիզ: Խոնդկարը հրամայում է, որ իր տե-
րության բոլոր վայրերում քաղաքների փողոցները զարդա-
րեն, և ամենք ոք երեք օր խնջույքի նստի գիշեր-ցերեկ, այդ-
պես էլ եղավ, իսկ Սիմոնին՝ տանել խոնդկարի մոտ:

Ջաֆարը ձմռան և զարնան օրերին Սիմոնին պահեց
Թավրիզում, իսկ ամառ ժամանակ ուղարկեց կայսեր մոտ,
որ Բյուզանդիայում էր: Գնալիս, երբ հասան Կարին քաղաքը,
կանգ առան հրովարտակներ զրոջ մի իշխանի պատճառով,
որ իրենց լեզվով յազիչի են կոչում: Սա իր հետ ունենալով
ավելի քան քսան հազար մարդ՝ ապստամբել էր իր ավա-
զից, նաև թագավորից: Ահա երկու տարի է, ժողովրդի ղլխա-
հարկը, որ թագավորների համար է, կորզելով ժողովում է
իր համար: Սա Սիմոնի համար պատվիրել էր իր զորքե-
րին, որ ուշադիր լինեն և տանողներին հափշտակեն և իրեն
հասցնեն: Այս պատճառով Սիմոնը արգելափակված էր Կա-
րին քաղաքում: Արդ՝ օրհնյալ է աստված, որովհետև վերջը
նա է իմանում:

Համառոտ խոսք սկզբից մինչև մեր օրերը ժամանակագրությամբ գրված

Թեպետ այս համառոտ օրինակը վաղ ժամանակներին
գոյություն ուներ, բայց ըստ ժամանակադրական կարգի չէր,
և մենք կարգավորեցինք, երկրորդ՝ մի տեղում հավաքված
չէր, այլ մի մասը այնտեղ (մի մասը մի ուրիշ տեղ), այդպես
ցաք ու ցրվով, իսկ մենք հավաքեցինք մի տեղում, որոնք որ
գա՛նք: Երրորդ՝ և ինչ նշանավոր դեպքեր մեր ժամանակ-
ներում գործվեցին, որ սրանց հետ դասավորելով գրեցինք
յուրաքանչյուրն իր տեղում: Այս մասին հոգալով՝ շատ տըր-

նություն կրեցինք, ուստի դասավորելով մեր գրքում գրեցինք: Այս պատճառները իմանալով՝ դու մի մեղադրիր մեզ և մա-
նավանդ մասամբ բարի հիշիր ամենքի տիրոջ մոտ. ողջ եղիր
տիրոջ շնորհով:

Կ Լ Ի Խ Ե ՍԶ

Հայոց տասը [561] թվականին կարգավորվեց հինգհար-
յուրյակը²⁵⁵ որով ուղղվեց զատիկը: ԺԲ թվին քաղիրդի
շրթունքն²⁵⁶ էր և իսմայելցիների սկիզբը: 60 (611) թվին
հայտնվեց Մահմեդը: 62 (613) թվին վրացիները բաժան-
վեցին հայոց եկեղեցուց: 72 (623) թվին թուրքերը գրավե-
ցին Արճեշը: 76 (627) թվին տեր Կոմիտասը կառուցեց Հոփի-
սիմե վանքը և գրեց «Անձինք»-ը²⁵⁷: 80 (631) թվին իշխե-
ցին Աբուբաքրը, Օմարը, Օսմանը՝ 38 տարի:

88 (639) թվին տաճիկների Հայաստան մուտք գործելը

102 (653) թվին տեր Ներսես հայրապետը կառուցեց
Սուրբ Սարգիսը²⁵⁸ Դվինում և սուրբ Խորվիրապը²⁵⁹: 114
(665) թվին հայտնվեց Վարդա սուրբ Խաչը: 171 (722)
թվին Հայաստանում փայլեց Հոհան Օձնեցին:

223 (774) թվին շրջում է մուրացիկ տեր Նսային⁶: 235
(786) թվին տեր Սողոմոնը շինում է Մաքենիսը²⁶⁰: 247
(798) թվին Մահակն ու Հովսեփը նահատակվեցին Կարին քա-
ղաքում, որ էրզրումն է: 341 (892) թվին տեր Մաշտոցը տա-
սը ճգնավորների հետ փայլում էր²⁶¹: 399 (950) թվին Սմբատ
Տիեզերակալը Անիում հիմնարկեց Կաթողիկոսն²⁶²:

414 (965) թվին կառուցվեցին Հաղպատն ու Սանահի-
նը²⁶³: 428 (979) թվին: 414 (965) թվին Սմբատ թագավորը
պարսպում է Անին: 442 (993) թվին Կատրամիղեն ավար-
տեց Անիի Կաթողիկոսն: 465 (1016) թվին աստվածասաստ բար-

* Նսային կաթողիկոս է զարձնել 775-778 թվականներին: Հստ ավան-
գության նրա որբևայրի մայրը իր մանուկ զավակի հետ շրջել է ողջ երկի-
բը, Եկել հասել է Դվին՝ ամենուրեք հայտարարելով, որ ինքը կաթողիկոս
զավակ է մեծացնում, Այնքան է համառում, որ Դվինի Սիոն կաթողիկոսը
վերջնում է երիտային: Հետագայում դառնում է եպիսկոպոս և Սիոնի մա-
հիջ հետ օձվում է կաթողիկոս:

կությունը սաստկացավ. թուրքերը հարձակվեցին քրիստոնե-
յաների վրա և Սենեքերիմի օրերում հայերին Վասպուրակա-
նում անխնա կոտորեցին: Իսկ Սենեքերիմը այլազգիներից նեղ-
վելով՝ իր երկիրը 470 (1021) թվին հանձնեց հունաց Վասիլ
թագավորին, ինքը հինգ որդիներով Սևրաստիա գնաց. որ-
դիներն են՝ Դավիթ, Ատոմ, Կոստանդին, Վեստ, Աբուսահլ:
Այս ժամանակներում վախճանվում է տեր Սարգիս կաթողի-
կոսը, որի գերեզմանը գտնվում է Հոռոմոսի²⁶⁴ վանքում. սա
հայրապետ մնաց երեսուն տարի, բայց իր կենդանի ժամա-
նակ ձեռնադրեց Պետրոս հայրապետին՝ Գետադարձին, որ
հայրապետ մնաց երեսունվեց տարի, իսկ Սարգիսը երկու
տարի հետո վախճանվում է: Այս Սարգիսը Ստեփանոս Տա-
րոնեցուց²⁶⁵ խնդրեց գրել ընդարձակ պատմություն, որը և
Տարոնեցին արեց երեք մասով՝ սկսելով նախահայր Աղամից,
երբ նա դուրս եկավ վայելչության վայրից [գրախոսից], և
հասցրեց մինչև մեր 452 (1003) թվականը, երբ վախճանվեց
սքանչելի այր Գրիգոր Նարեկացին:

Նրանից հետո [Տարոնեցուց] սկսում է Արիստակես
լաստիվերցին և լալագին, դառը ողբալով պատմում է անց-
քերի թուր աղետները, որոնք շրջակա ազգերից հասան հա-
յերին. նաև թոնդրակեցիների աղանդը²⁶⁶ հասցնելով 530
[1081] թվականը՝ ավելի կամ պակաս: 478 (1029) թվին
եղավ սատանայի արձակումը: 1000 տարին լրացավ, և բազ-
մաթիվ ահավոր հրաշքներ եղան, որովհետև երկինքը արևել-
քից արևմուտք պատռվեց, և լույսը ցած հոսեց²⁶⁷, եղավ
խավար, երևացին աստղերը, և լավեցին ահավոր ձայներ:
489 (1040) թվին Սմբատ մագիստրոսը Դվինի Բագնայրը²⁶⁸
շինեց: 494 (1045) թվին Երզնկայում երկրաշարժ եղավ, և
լուսամուտների գույնը փոխվեց կարմրի, մառախուղը պա-
տել էր երկրի Լրեսը: Երկրաշարժի ժամանակ եկեղեցիները
և մեծամեծ շենքերը խախտվեցին, իսկ քաղաքն առհասա-
րակ փլվեց, գետինը պատռվեց և բազմաթիվ տղամարդ-
կանց ու կանանց կլանեց, երկար ժամանակ անդունդներից
ձայներ էին լսվում:

* 501 (1052) թվին տեր Պետրոս կաթողիկոսը Պոնտոս,
այն է՝ Տրապիզոն բերեց կենաց փայտը, Վասիլ թագավորի

ժամանակներում չբորհանք արեց, և գետը ետ դարձավ մի ժամ²⁶⁹... Այնտեղից տեր Պետրոսը գնաց Կոստանդնուպոլիս և այնտեղ մնաց շուր տարի: Այնտեղից եկավ Սերաստիա Սենեքերիմի որդիների մոտ և Սերաստիայում վախճանվեց: 506 (1057) թվին կաթողիկոս դարձավ տեր Խաչիկը, որ տեր Պետրոս կաթողիկոսի քեռորդին էր: Մինչև այս տեր Պետրոսը տասնհինգ կաթողիկոսներ են անցել, սա տասնվեցերորդն էր: Սրան անտեղի արքայքին և կաթողիկոս զրին աստժու մարդ Դիոսկորոսին՝ Սանահնի հռչակավոր վանքի վանահորը, և ապա աղվանից կաթողիկոսը դարձյալ գցեց տեր Դիոսկորոսին. Քրիստոսի մկրտության օրը [չբորհանքին] հայրապետական քողը պատռեցին և տեր Պետրոսին դարձրին իր տեղը: Սրա ժամանակ Անին թուրքից գրավեցին, Կոստանդնուպոլսի Տուկիթ անունով թագավորը մեռավ*, որը իր մոտ տանելով տեր Խաչիկին բանտ նետեց երեք տարի և նրանից պահանջում էր տեր Պետրոս կաթողիկոսի գանձը: 513 (1064) թվին վերացան Անիի թագավորները, երբ վերջին թագավորն էր Հովհաննեսը: 545 (1096) թվին ֆռանկները գրավեցին Երուսաղեմը: 549 (1100) թվին հույները ծոգատիկ արին: 550 (1101) թվին Երուսաղեմում լույսը շաբաթ օրը ըվառվեց, այլ վառվեց կիրակի ժամը իննին: 551 (1102) թվին ծառգարգարի տոնին ծոգատիկ արին տասը ազգեր. հայերը և ասորիները ուղիղ մնացին: 571 (1122) թվին Դավիթ թագավորը գրավեց Տփղիսը: 573 (1124) թվին Դավիթ թագավորը տաճիկներից գրավեց Անին և մեռավ. թագավորեց նրա որդի Դեմետրեն:

607 [1158] թվին մեռավ Դեմետրե թագավորը, և գահնստեց նրա որդի Դավիթը: 610 (1161) թվին թագավորեց մեծ Գորգին և ուժգին պատերազմով ջարդեց Շահարմենին²⁷⁰: 612 (1163) թվին Երտղուզ Աթաբեկը եկավ Անի, Մեծ Գորգին գրավեց այն: 615 (1166) թվին Երզնկայում երկրաշարժ եղավ: 617 (1168) թվին ահավոր երկրաշարժ եղավ Երզնկայում, տասներկու հազար մարդ մեռավ:

625 (1176) թվին Երուսաղեմի թագավորը ջարդեց Սալա-

* Բնագրում կոտորեցաւ է, որը կարծում ենք եղած պիտի լինի կատարեցաւ:

հաղին սուլթանին Երուսաղեմի դռների առջև, որ եկել էր հարյուր քառասուն հազար հոգով Երուսաղեմը գրավելու: 636 (1187) թվին հարգված քահանա Մխիթար Կաթողիկեցին թարգմանեց արեգակի և լուսնի խավարման պատճառները Ոճիքե անունով մի պարսիկից, որը ասում էր հունարենից պարսկերենի է թարգմանված:

Դարձյալ սուլն թվականին արեգակը խավարեց: Դարձյալ սուլն թվականին Մսրա սուլթան Սալահադդինը ֆռանկներից գրավեց Երուսաղեմը: 645 (1196) թվին հայերի վրա թագավորեց Լեոնը: Սուլն թվականին դարձյալ հույները ծոգատիկ են արել:

649 (1200) թվին զատիկ խանգարումը բացի հայերից ճիշտ չհամարեցին վրացիներն ու հույները: 652 (1203) թվին ֆռանկները գրավեցին հոռոմների թագավորությունը* 659 (1210) թվին իլաթում բռնեցին Իվանե աթաբեկին: 663 (1213) թվին վախճանվեց Մխիթար վարդապետը, որի մականունն էր Գոռ: 671 (1222) թվին մեռավ Լեոն թագավորը: 677 (1228) թվին Խորազմը²⁷¹ եկավ Հայաստան, երբ Հոհանի հայրը հավատաց Քրիստոսին: 680 (1231) թվին թագավորը²⁷² կոտորեց Խորազմին և գրավեց Գանձակը: 685 (1236) թվին թաթարները գրավեցին Անին և ողջ աշխարհը:

Դարձյալ սուլն թվին երկրաշարժ եղավ Երզնկայում, մի եկեղեցի փլվեց: 687 (1238) թվին թագավորը Լոռին ու Անին գրավեց: 688 (1239) թվին արեգակը խավարեց: Դարձյալ սուլն թվին մեռավ Ավագը: 691 (1242) թվին Պաշտը գրավեց Կարին քաղաքը, հոռոմները՝ Երզնկան:

700 (1251) թվին վախճանվեց վանական վարդապետը. Դարձյալ սուլն թվին թագավորեց Մանգու խանը: 703 (1254) թվին Երզնկայում երկրաշարժ եղավ: Դարձյալ սուլն թվականին (թագավոր) դարձավ Արզու խանը: Սա աշխարհը մարդահամարի ենթարկեց և ամեն մարդագլուխ հարկի տակ դրեց: 707 (1258) թվին թագավոր դարձավ Հուլավու խանը: 708 (1259) թվին վրաց Դավիթ թագավորը մտավ Աբխազիա: 709 (1260) թվին Մսրա սուլթանը կոտորեց թաթարի

* Հեղինակը նկատի ունի Կոստանդնուպոլսի գրավումը խաչակիրների 4օղմից 1204 թ.

գորքը, որի գլխավորն էր Իթրուղան: Դարձյալ սույն թվին
 Հուլիսու խանը գրավեց Հալեպը: 710 (1261) թվին սպան-
 վեց Զաքարիան: Դարձյալ սույն թվին Բաղդադը ավերեց:
 711 (1262) թվին Հուլիսու խանը (թագավոր) դարձավ: 713
 (1264) թվին Շահապանտին Վարդան վարդապետին տարավ
 Հուլիսու խանի մոտ: Իմաստասիրական բազմաթիվ հարցեր
 տվեց և մեծ պատվով հարգեց վարդապետին: 714 (1265)
 թվին Աբայ խանը (թագավոր) նստեց: 715 (1266) թվին
 Կաստանդին կաթողիկոսը ֆռանկներից բերեց հիվանդիս
 օծելու կարգի օրինակը՝ ձեթ օրհնելու և հիվանդին օծելու:
 716 (1267) թվին Արղուն խանը (թագավոր) նստեց: 717
 (1268) թվին երկրաշարժ եղավ Երզնկայում՝ կիրակի օրը,
 տասնհինգ հազար մարդ մեռավ: Դարձյալ սույն թվին քրիս-
 տոնյա տասը ազգեր մոլորվեցին: Հայերն ու ասորիները
 ուղիղ մնացին: Դարձյալ սույն թվին Մարցին* գրավեց Ան-
 տիոքը: 720 (1271) թվին Լեոնը (թագավոր) նստեց: 730
 (1281) թվին Երզնկայում երկրաշարժ եղավ, աստված պա-
 հեց, որ չփլվեց: 736 (1287) թվի մայիս ամսին Երզնկա-
 յում մեծ երկրաշարժ եղավ, շատ մարդիկ մեռան, որոնց քա-
 նակը միայն աստված գիտե: 738 (1289) թվին մեռավ Լեոնը
 և արքայվեց Կոստանդին կաթողիկոսը, մեռավ Հովհաննես
 կաթողիկոսը, զահ նստեց տեր Ստեփանոս կաթողիկոսը, և
 Տրիպոլիսը գրավեց թուրքը: 739 (1290) թվին սաստիկ երկ-
 րաշարժ եղավ Երզնկայում, աստված պահեց, որ չփլվեց:
 740 (1291) թվին հույները մոլորվեցին, ծռազատիկ արին:
 Այդ ժամանակ Կիլիկիա երկրում հայոց թագավորներ կային:
 Մեր հայոց ազգը երկու մասի է բաժանվել՝ մի մասը (դա-
 վանություն) ենթարկվում է հույներին, մյուս մասը մնա-
 ցել է ուղիղ հավատքով: 741 (1292) թվին մարցիք գրավե-
 ցին Հռոմկլան և տեր Ստեփանոսին գերի տարան, նույն տա-
 րում էր ծռազատիկը: 743 (1294) թվին տեր Գրիգոր Անա-
 վարդեցին կաթողիկոս նստեց, Հեթումը զնաց Ղանդազան,
 խանից հրաման արձակվեց ավերել եկեղեցիները. մեռավ
 Հեթումը 760 (1311) թվին:

755 (1306) թվին Տարոն գավառի Ղազարի վանք կոչ-

ված հրեշտակացույց միաբանություն մեջ և սուրբ մենաս-
 տանում, որ սուրբ առաքյալների հովանու ներքո էր, տեր
 Գրիգորի հայրապետության, Թորոսի որդի Լեոնի Կիլիկիայի
 երկրում թագավորելու, Ղազարի վանքի սուրբ միաբանության
 տեր Աբրահամի եպիսկոպոսության, նեոտոների ազգի Ղար-
 բանդ խանի կայսերական բռնակալության ժամանակ, որ (խա-
 նը) շար մարդ էր և քրիստոնյաներին ատող, խաբված շեյխերի
 դյուխական կախարհներից, իրենց գործակից սատանայի մի-
 ջոցով շար մտադրություն մեջտեղ հանելով՝ սկսեցին մար-
 տնչել Քրիստոսի անհաղթելի վեմի դեմ և հրովարտակ հա-
 նեցին իրենց տիրակալության տակ գտնվող բոլոր երկրներում
 քրիստոնյաների մասին, որ կամ դառնան Մահմեդի մուլար
 դավանությանը և կամ ամեն մարդ ութ դահեկան գլխա-
 հարկ տա և թուր ու ասլտակ ստանա երեսին, մորուքը փե-
 տի և իբրև Քրիստոսի համար նախատինք աչ ուսին մի սև
 կարկատան կարի: Եվ շար պաշտոնյաները իբրև արյունար-
 բու գազան հարձակվեցին բոլոր քրիստոնյաների վրա բո-
 լոր քաղաքներում, գավառներում, վանքերում և ամեն տե-
 ղերում: Հետախուզում էին՝ սարսափեցնելով բոլորին, քանզի
 մահաբեր հրովարտակի մեջ գրված էր. «Ժամ շորհնել, եկեղե-
 ցի շմտնել և ոչ էլ մանուկներ մկրտել»: Կամենում էին միան-
 գամից վերացնել քրիստոնյաների ողջ կրոնը: Իսկ Քրիստո-
 սի բանավոր հոտերը (քրիստոնյաները) քրիստոնեական
 հավատի վրա անխախտ մնացին՝ խրախուսվելով տերու-
 նական պատվերով, որ ասում է. «Երանի ձեզ, երբ նախա-
 տեն ձեզ և դատապարտեն»: Պահանջված բոլոր հարկերը
 տվին, հոժարությամբ հանձն առան նախատինքները, տան-
 ջանքները երկնավոր հույսի համար և Քրիստոսի թեթև լու-
 ծը աչ ուսի վրա: Իսկ անօրեն ու ամբարիշտ Ղարաբանդա
 խանը երբ տեսավ, թե դրանով չկարողացավ հաղթել Քրիս-
 տոսի բանավոր հոտին, այլ հարվածներ ավելացրեց քրիս-
 տոնյաների վրա՝ կամ բոլորին ներքինացնել, կամ մի աչքը
 հանել, կամ ընդունել Մահմեդի պիղծ դավանությունը:
 Լսում ենք, թե շատերը մեռան այս հարվածից Քրիստոսի

* Եղիպտոսի սուլթան Բելքարը:

* Մտաթ. Ծ 11:

անվան համար. բայց դեռևս մեզ չի հասել պիղծ Ղարաբանդա խանի մահարեհ հրամանը, առաջիկան աստված գիտե: Արդ՝ եթե ողորմած աստված այցելի և անցկացնի ցամառն ամառույզը և հնարավոր լինի Քրիստոսի առջև համարձակ կատարել քրիստոնեական պաշտամունքը, սրանով լույս ավազանի որդիները և սրբազգեստների դասը կմաքրազործվեն, սրա հետ նաև երջանիկ արժանախումբ ձեր սուրբ հանդեսը:»

805 (1356) Թվին Երզնկայում երկրաշարժ եղավ, օրը յոթ և ինն անգամ երեքում էր: Աստված պահեց, որ չփլվեց: 806 (1357) Թվին Զանիբեկը սպանեց Աշրաֆին և բանտ նստեց: 823 (1374) Թվի ղեկտեմբերի ութի ուրբաթ օրը Երզնկայում երկրաշարժ եղավ. մի ժամ դադարեց, կարծեցին, թե այլևս շարժ չի լինի. կրկին երկրաշարժ եղավ, և պարիսպը փլվեց: 830 (1381) Թվին Թուղթամ իշխանը Ղրիմին զորքերի հետ ուղարկեց Թավրիզ և քսան բյուր գերի տարավ: 833 (1384) Թվին Քեղայո խանը թախտ նստեց: Դարձյալ նույն տարին Բուրհան ղազին սպանեց Սեբաստիայի տիրոջը, Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսին նահատակեց և Սուրբ Քառասնից վանքը քանդեց: 834 (1385) Թվին թուրքը գրավեց Որոտանը և Կախիկ** ու Երեմիա վարդապետները մեռան: 835 (1386) Թվականին Թամրազ խանը գնաց մինչև Դեմիշխ (Դամասկոս) և վերադարձավ (Հայաստան),*** մնաց տասնյոթ տարի. գնաց Սամարղանդ, մեռավ:²⁷³ Դարձյալ սույն Թվին լենկթեմուրը եկավ Թավրիզ և Նախիջևան. Վանում կոտորեց ավելի քան երեք հազար մարդ: 836 (1387) Թվին Սամարղանդից բազմաթիվ զորքերով ելավ, եկավ, Սեբաստիան ավերեց և գնաց Անկարա. խոնդկարի եղբորը՝ Իլդրում Բայազիդին դրեց վանդակը: 841 (1392) Թվին դարձյալ եկավ Բաղդադ, մեծ ավերներ արեց Միջագետքում և վերադարձավ իր երկիրը: Սուլթան Ահմադի որդին՝ սուլթան Տահիրը, Ալնջի բերդում էր, վրաց թագավորը գնաց բերդի վրա, գրավեց և

Տահիրին տարավ Տփղիս: Իսկ թեմուրը երբ այս լսեց, 849 (1400) Թվականին դարձյալ եկավ Վրաստանի վրա, շատ զերիներ առավ, գնաց իր երկիրը և սատկեց 853 (1404) Թվին: 842 (1393) Թվին տեր Թորոսին և տեր Զարարիային սպանեցին: 855 (1406) Ղարա Յուսուֆին, որ թեմուրից փախել գնացել էր Շամ, կապանքով տարան Մաքր, այնտեղից եկավ Կարբի գավառը, գնաց Թավրիզ և գրավեց մինչև Սուլթանիս: 857 (1408) Թվին գնաց Արճեշ, Արճեկ: Շմեղդիներ ընկերացավ նրան և Վանում ու Ոստանում շատ ավերներ արին: Մյուս տարին Շմեղդիների հեծյալները եկան ու այրեցին Շատվանը²⁷⁴, Իսկ Ամիրբեկին բարկացած գնաց այրեց Բաղեշից վաթսույն գյուղ: 870 (1421) Թվին տեղի ունեցավ Շահուլիս առաջին զալուստը, խոյն էր տանուտեղը²⁷⁵, հաղթեց Թուրքմանին, գնաց Երկրորդ զալուստը եղավ 878 (1429) Թվին, տանուտեղը Աղեղնավորն էր, կոտորեց Սամաստում թուրքերին և Բուսայիդին նշանակեց խան և գնաց իր երկիրը: Երրորդ զալուստը եղավ 885 (1436) Թվին, երբ խեցեղեթինն էր տանուտեղը: 870 (1421) Թվին Զաղաթան եկավ Հայաստան: 871 (1422) Թվին Շահուլիսը եկավ Ղարաբաղ: 872 (1423) Թվին Ալեքսանդրը եկավ: 878 (1429) Թվին Զահանջան Շամշուլա բերդը գրավեց: 879 (1430) Թվին դարձյալ Շահուլիսը եկավ, Դեմետրեն գնաց Ղարաբաղ նրա դեմ: Դարձյալ սույն Թվին մահ տարածվեց: 887 (1438) Թվին Ղուլը եկավ Երզնկա, իսկ Սքանդարը սպանվեց որդու կողմից, և (թաղավոր) նստեց Զահանջան 889 (1440) Թվին Շամշուլը և (թաղավոր) նստեց Զահանջան մարդ կոտորվեց, ինը հազար մարդ գերվեց: 890 (1441) Թվին Լուսավորչի անհաջար տեր ղաջան և բերին էջմիածին, իսկ խորվիրապի վանահայր տեր Կիրակոսին օծեցին, դրին էջմիածնում և այնտեղ կաթողիկոսություն հաստատեցին: 892 (1443) Թվին տեր Կիրակոս կաթողիկոսին փոխեցին նախանձի պատճառով և մակվեցի Գրիգոր եպիսկոպոսը կաշառքով ու նվերներով նստեց կաթողիկոս. ինձ ու Սարգիս վարդապետին տուգանել տվին, ինչ վատություն, որ արին Կիրակոս վարդապետին և ինձ, աստված թող ների իրենց մեղքը իրենց: 893 (1444) Թվին Զահանջան Ախլցխան գերեվարեց: 895 (1496) Թ. Զաղաթան գնաց (Շահուլիս) վրա, Շահուլիսը իր մահով մեռավ: 901 (1452)

* Իմաստը մոթե է սկսած սրանով բառից:

** Կախիկ Հովհաննես Որոտանցու երկրորդ անունն է:

*** Հայաստան բառը ենթադրաբար մենք ենք ավելացրել: Բնագրում ասված է. «Երեք օրինակում էլ բառ է պակասում»:

Բվին եկավ Ջիհանշան, գրավեց Երզնկան: 902 (1453) Բվին սուլթան Մահմադը գրավեց Պոլիսը հուլիսի Մանվել Բազավորի ձեռքից: 907 (1458) Բվին Երզնկայում երկրաշարժ եղավ, երեսունհինգ հազար մարդ մեռավ: 910 (1461) Բվին Չիթախը գրավեց Տրապիզոնը: 916 (1467) Բվին Հասանբեկը գնաց Վրաստան և գերեց: Դարձյալ սուլյն Բվին Պարոն լույսին [Լույս պարոնին] Կաֆայում նահատակեցին²⁷⁶: 918 (1469) Բվին ամբողջ աշխարհում մահ տարածվեց: Նազաշ²⁷⁷ վարչապետը իր ողբը գրեց: 923 (1474) Բվին տեր Գրիգոր քահանայի որդի Դավթին Խարբերդում նահատակեցին: 931 (1482) Բվին մեռավ սուլթան Մահմադը և նստեց նրա որդի սուլթան Բայազիդը: Դարձյալ սուլյն Բվին Երզնկայում երկրաշարժ եղավ, երեսուն հազար հոգի հողի տակ մնաց: 932 (1483) Բվին Աղուբ բեգը...րիա* սարը գրավեց: 933 (1484) Բվին Յազուբ բեկը Շեխ Հայդարը գրավեց: 939 (1490) Բվին Յազուբ բեկը մեռավ: Սունխուրը կանգնեց 948 [1499] Բվին Սպահան կանգնեց, սրանից հետո էլ Ալվանդը: 950 (1501) Բվին Կարմրագլուխ [ղզլբաշ] Շահ-Իսմայելը պատերազմեց Ալվանդի դեմ և նրան փախցրեց, ինքը գրավեց գահը և նստեց: 962 (1513) Բվին սուլթան Սելիմը սպանեց իր հորը՝ Բայազիդին, և ինքը նստեց: 963 (1514) Բվին Սալիշմեն շահի հեծելազորը կոտորեց, բայց և Թագավորեց շահը: Սուլթան Սելիմը գնաց Զալարան, կուլեց շահի դեմ և ջարդեց նրան: 966 (1517) Բվին սուլթան Սելիմը գնաց գրավեց Շամը, Մսրբը: Դարձյալ նույն Բվին սուլթան Սելիմը հիմք դրեց տղաներ հավաքելուն: 968 (1519) Բվին սուլթան Սելիմը շարացավ, տղաներ հավաքեց քրիստոնյաներից: 970 (1521) Բվին Սելիմը մեռավ և Թագավոր նրստեց սուլթան Սուլեյմանը: Դարձյալ նույն Բվին Սերաստիայում բաղնիք շինեցին: 971 (1522) Բվին Պեխի որդի Սաֆարին ալեքցին: 975 (1526) Բվին սուլթան Սուլեյմանը գնաց, գրավեց ընկուղներ^{**} գահանիստը, որ Բուղում է: Դարձյալ նույն Բվականին Աթմաջա խալիֆան հայտնվեց: Դարձյալ նույն

Բվին Շահ-Իսմայելը մեռավ և Թագավորեց սրա որդի Շահ-Քահմազը: 976 (1527) Բվին Տոսիլի հոռոմները գլուխ բարձրացրին, իսկ Հուսեյին փաշան հարձակվեց, հոռոմներին ջարդեց ու գերեց: 992 (1543) Բվին Տաթևի վանքի Հայրապետ անունով) աբեղային ալեքցին: 984 Բվին Շեքուրիկ գյուղից մի քահանա ալեքցին: 985 (1536) Բվին խոջա Կոչջաին Սերաստիայում նահատակեցին: 988 (1539) Բվին հուլիսը գատիկ արին ծաղկազարդին: 990 (1541) Բվին Շահ-Քահմազը գնաց Վրաստան և Տիֆլիսն ու ամբողջ երկիրը ավերեց, անթիվ ու անհամար մարդիկ գերեց: Դարձյալ սուլյն Բվին Հոմա փաղիշահը եկավ Շահ-Քահմազի ոտքը և գնաց: 995 (1546) Բվին Ալխազը եկավ խոնդկարին հանեց, տարավ Քալբիդ իր եղբոր վրա, որը Քալբիդը ավերեց: Իսկ Քալբիդի տեր Շահ-Քահմազը եկավ ավերեց Խնուսը, Բասենը, Կարինը, Գերջանը, Քեղին, Բաբերդը, Երզնկան, Սպերը: 998 (1549) Բվին մահ տարածվեց: 999 (1550) Բվին Կարին քաղաքում յուրթանսուն հոգի ազատորդիներ մեկ գիշերում կոտորեցին. մեծ աղետ եղավ:

1003 (1554) Բվին խոնդկարը եկավ Շահ-Քահմազի վրա. նստեց Նախիջևանում, Սահաթը ավերեց և բազմաթիվ մարդիկ գերեց: 1006 (1557) Բվին կեղեցի Ղուկաս վարդապետը հոռոմացիների տոմարը վերականգնեց: 1008 (1559) Բվին խոնդկարի որդիները կուլեցին Ղոնիայում. Սելիմը Բայազիդին փախցրեց մինչև Կարին: Նա երեք որդիներով գնաց շահի մոտ, որտեղ նրանց սպանեցին: 1009 (1560) Բվին սուլթան Բայազիդը չորս որդիներով, երեսուն հազար մարդկանցով եկավ Շահ-Քահմազի ոտքը: 1012 (1563) Բվին մահ տարածվեց: 1015 (1566) Բվին սուլթան Սուլեյմանը գնաց Փեջի վրա և այնտեղ մեռավ: 1016 (1567) Բվին գահ նստեց Սուլեյմանի որդի Սելիմը: 1017 (1568) Բվին Սիմոնը գնաց Շահ-Քահմազի ոտքը: 1019 (1570) Բվին աղջկա բող եղավ Երզնկայում: 1020 (1571) Բվին գրավեցին Կիպրոս կղզին: 1022 (1573) Բվին Շահ-Քահմազը մեռավ: 1023 (1574) Բվին երկու տարի Թախտ նստեց Շահ-Իսմայելը: 1024 (1575) Բվին Սելիմը մեռավ, Թագավոր դարձավ սուլթան Մուրադը: 1025 (1576) Բվին պոշավոր աստղ դուրս ելավ և երևաց: Դարձյալ սուլյն Բվին Նոյեմբերի հինգի կեսից շերին Երզնկայում

* ... ռիա սարի անունն է. հավանաբար պակասում են բառի առաջին վանկ(եր)ը:

** Ընկուղները հոռոմներն են:

շատ ուժեղ երկրաշարժ եղավ. շորս ամիս ոչ մի մարդ շենում չկարողացավ քնել. ապա (երկրաշարժը) դադարեց: Գարձյալ սույն թվականին Շահ-Իսմայիլը մեռավ: Գարձյալ սույն թվին Շահ-Քահանազին բաղնիքում խեղդեցին. սրանից հետո սուլթան Հայդարին սպանեցին. փոքրիկ Շահ-Իսմայիլին բերդից դուրս բերին, թախտ նստեց: Սրանից հետո (թագավոր դարձավ) Ամիր Համզա Միրզան: 1027 (1578) թվին Խուզարանդան եկավ, թագավոր դարձավ: 1028 (1579) թվին Երևվանը գրավեցին: 1029 (1580) թվին Լալա փաշան եկավ Երևանը գերեց: Գարձյալ սույն թվին Մեծ ու Առաջին Շահ-Աբասը Մաշադում թախտ նստեց: 1030 (1581) թվին սուլթան Մուրադ թագավորը վերավերվեց հրեաների համարձակությունից և փաթաթանը վերացրեց բոլոր հրեաների ու բրիտանյանների գլուխներից և կարգադրեց զխաբկ դնել: 1032 (1583) թվին Երևանում բերդ շինվեց: 1033 (1584) թվին Երզնկայում երկրաշարժ եղավ. հունիսի տասնյոթին սուրբ Լուսավորչի երկուշարթի ժամի երեքին հանկարծ ցնցում եղավ, քաղաքը առհասարակ փլվեց. տասնհինգ հազար տղամարդ ու երեք մեռան. հինգ հազար մարդ էլ հողի տակ մնաց, որոնց կիսամահ հանեցին. մի մասը ապրեց, մի մասը մեռավ, մի մասն էլ անդամալույծ մնաց: 1034 (1585) թվին Օսման փաշան գնաց, գրավեց Շիրվանն ու Թավրիզը: 1037 (1588) թվին Ֆահրադ փաշան գրավեց Գանձակը: 1039 (1590) թվին քուրդը դուրս բարձրացրեց, եկավ Երզնկա: 1040 (1591) թվին Գլխրոլին հայտնվեց, աղգուլթյամբ շալալի քուրդ էր: 1041 (1592) թվին Անաստի տաճիկը բարկացավ և գրավեց Սուրբ Լուսավորիչ եկեղեցին: Գարձյալ սույն թվին Իբրահիմ փաշան հարկապահանջությամբ ավերեց Ամիրը: 1043 (1594) թվին մեռավ սուլթան Մուրադը, և սուլթան դարձավ Մահմադ թագավորը: 1046 (1597) թվին ջաջալի եղավ Ղարալազը: 1047 (1598) թվին Ղարալազը սուլթանի անստամբությունից, Գարձյալ սույն թվին ներքինի Զաֆար փաշան եղավ ջալալի, նստեց Թավրիզում: Գարձյալ սույն թվին մայիս ամսին արեգակը խավարեց: Գարձյալ սույն թվին մեծ երկրաշարժ եղավ Ամասիայում ու Չոռում, շատ շենքեր տապալվեցին, տեղեց մինչև շորս ամիս, ապա ցնցումը դադարեց: Գարձյալ սույն թվին անասունների խիստ անկում եղավ:

1048 (1599) թվի մարտ ամսի 17-ին այնպիսի դառնաշունչ ձմեռ եղավ, որ քառասուն սրբերի բաղամամարդ ուխտը խափանեց, չկարողացանք սովորական տոնախմբությունը անել: Գարձյալ սույն թվականին ուժեղացավ Ղարալազին և հոկտեմբերի իննի երեքշաբթի օրը գրավեց Ուսհայի բերդը, որ նախապես քաղաքում էր, այս Ցաղիչին ծնունդով Կապաղովկայից էր. լինելով սուլթան՝ մի առժամանակ մնաց, Ուսհայում մի մուլայի մոտ ուսման համար և հետո եղավ հրացանավոր, զինվորությունը այլ իշխանների էր սպասավորում. պատերազմներում հաղթող էր և հետո ինքնագլուխ գառնալով հավաքեց ընկերներ, թագավորից ապստամբվեց: Բազմացրեց իր զորքերը այնքան, մինչև անգամ ասում էին, թե երեսունվեց հազարապետներ ուներ, որ բուլբուբաշի էին կոչվում (զորապետ): Եվ ասում էին, թե յուրաքանչյուր օր այլապի ծախս ուներ, այսինքն՝ մի օրում երեսուն մոթ գարի էր տալիս ձիերին. այս մոթը Միջագետքի մոթն է, յուրաքանչյուր մոթը հոռոմների լտրով երկու հարյուր քսանչորս լիտր է անում, շորս հարյուր լիտր հաց (էին ուտում), հարյուր տասը ուլիար, երեսունհինգ լիտր բրինձ, տասը լիտր յուղ և հինգ հարյուր զոռուշ ոռճիկ, քանի որ ասում էին օրը հազար զոռուշ ծախս ունի:

Գարձյալ սույն թվին Հուսեյին փաշան ապստամբվեց թագավորից և բազմաթիվ տեղեր կողոպտեց, եկավ Կեսարիան պաշարեց. նույն տարին գնաց Ուսհա, միացավ Ցաղիչուն: Ցաղիչին քաղաքի գլխավորներից յոթ մարդ սպանեց՝ ոմանց կախելով, ոմանց խեղդելով, որովհետև դրանցից մեկը պարոն էր (իշխան), մեկը չավուշ*, իսկ մյուսը տիրեց քաղաքը. և փաշայի փոխանորդը փաշայից փախել էր: Գարձյալ սույն թվին հոկտեմբերի տասնհինգի երկուշաբթի օրը Փիալա փաշան և Մաքսուդ բեկը եկան Ուսհա՝ Ցաղիչու վրա. մաստիկ պատերազմ արին սուրբ դաստառակի** համար, բայց չկարողացան այն վերջնել: Գարձյալ սույն թվին հոկտեմբերի տասնութին եկավ թագավորի փոխանորդ վե-

* Զորապետ

** Դաստառակ նշանակում է թաշկինակ, սրբի, բայց այստեղ այն կտավն է, որի վրա իբր անձեռագործ Քրիստոսի նկարն է:

զիրը՝ Մահմադ փաշա կոչվածը: Սա եկավ Ուոհա Յաղիշու վրա: Յոթանասուներեք օր քաղաքը պաշարվեց: Դարձյալ սուլյն թվականին Ղարայաղիշին եկավ Չոռուս և նստեց այնտեղ. ավերեց շրջակա երկիրը հարկապահանջությամբ: Դարձյալ սուլյն թվականին ապստամբվեց Բոսա Սաֆարը:

1049 (1600) թվին Հուսեյին փաշան ապստամբվել էր թագավորից և ավերել շատ երկրներ ու միացել էր Յաղիշուն: Յաղիշին վեպիրի խնդրանքի համաձայն սրան բռնեց, տվեց նրա ձեռքը, և այս պատճառով հաշտութուն կնքեցին միմյանց հետ. մանավանդ գաղտնի կաշառքով կուրացրեց վեպիրի աչքերը և նրանից հեռացավ, զնաց Ուոհա: Դեկտեմբերի քսանչորսի շաբաթ օրը կաշառքով կուրացածը զնաց Ամիր: Դարձյալ սուլյն թվականին Ղարայաղիշին շարշարեց Ուոհա քաղաքը խիստ հարկապահանջությամբ: Հունվարի քսաներկուսին, երեքշաբթի օրը գլխատեց Աբրահամ անուետով մի քահանայի և Սքանդար անունով մի տանուտերի: Դարձյալ սուլյն թվին Ղարայաղիշին տիրեց Թոքաթին, Ամասիային, Մարզվանին, Չոռուսին. եղավ այնպիսի սով, որ մեկ լիտր ալյուրը նկարով* մի ֆլորին արժեր, իսկ մեկ քիլա (ընդեղենի շափ) գարին՝ մեկ դուռուշ: Դարձյալ սուլյն թվին ապստամբվեց Ղարաղաչը: 1050 (1601) թվին Ղարայաղիշին ավերեց Սևրաստիան՝ կողոպտելով ու այրելով և շատերին կոտորելով: Մեծ սով եղավ: Դարձյալ սուլյն թվականին Ղարայաղիշին Կեսարիայում հաղթեց Իբրահիմ փաշային: Դարձյալ սուլյն թվին Լավանդը, որ Սաթրլի էր կոչվում, թալանեց ու կողոպտեց Կիլիկիայի Սիս քաղաքը: Դարձյալ սուլյն թվին ապստամբվեց Ահմադ փաշան: Դարձյալ սուլյն թվին Հասան փաշան եկավ Ամիր: 1051 (1602) թվին Հասան փաշան պաշարվեց Թոքաթում: Դարձյալ սուլյն թվին սատկեց Ղարայաղիշին: Դարձյալ սուլյն թվին Ջալալին այրեց Թոքաթ քաղաքը: Դարձյալ սուլյն թվին ներքինի կոտորով փաշան հարկապահանջությամբ նեղ վիճակում դրեց Ամիրը: 1052 (1603) թվին ապստամբվեց Թավուլը: Դարձյալ սուլյն թվին Շահ-Աբաս Առաջինը եկավ Թավրիզից, պատերազմեց օսմանցիների դեմ և նրանցից խլեց Թավրիզն ու Նախիջևանը:

* Բնագրում երեսով. իմաստը անհասկանալի է, մեկը թարգմանեցիքը եկարով:

1054 (1605) թվին սուլյն Շահ-Աբասը պատերազմով օսմանցիներից առավ Երևան քաղաքը: Դարձյալ սուլյն թվին Ջղալօղլի զորապետը եկավ, եղած բոլոր ջալալիներին հավաքեց, Ղարաբաշին էլ հետը բերեց, տարավ շահի դեմ: Դարձյալ սուլյն թվին մեռավ սուլթան Մահմադ խոնդկարը և գահնստեց սուլթան Ահմադ թագավորը: Դարձյալ սուլյն թվին ապստամբվեց Ինջաղան:

1054 (1605) թվին ապստամբվեց Յուլադստին: Դարձյալ սուլյն թվին ապստամբվեց ջանփուլատցի Ալի փաշան, որ Քիլիսի ամիրան էր: Սա զորեղացավ, գրավեց Հալեպ քաղաքը և այն տիրեց երկու և կես տարի՝ ապստամբվելով թագավորից: Դարձյալ սուլյն թվին Ջղալօղլի զորապետը մեծ զորքով եկավ Երևան: Սա նրա առաջին գալն էր, որ եկավ շահի վրա: Այս պատճառով սուլյն Շահ-Աբաս Առաջինը Ատրպատական երկրի բնակիչներին՝ հայ, տաճիկ, հրեա միասին զջեց, տարավ Սպահան. սա մեծ աքսորն էր: Դարձյալ սուլյն թվին մինչև Ջղալօղլին ամբացած էր Վանա բերդում, պարսից զորքը պաշարեց այն. նա (Ջղալօղլին) գաղտնի դռնից ելավ, մտավ նավը և փախավ, զնաց Արծկե, այստեղից էլ ընկավ հնուսի բերդը և ապա զնաց Կարին, իր մոտ հավաքեց իր զորքը: Իսկ պարսից զորքերը հավաքեցին Ռշտունիքի բնակիչներին և զնացին իրենց երկիրը:

1055 (1606) թվին Ջղալօղլի զորապետը երկրորդ անգամ եկավ Թավրիզ Շահի վրա. պատերազմեցին: Ջղալօղլին պարտվեց, փախավ. իսկ զղլբաշները նրա գանձը գրավեցին և տասներկու փաշա իրենց հեծելազորով ջարդեցին: Այս պատերազմը եղավ հոկտեմբերի 25-ին: Ինքը՝ Ջղալօղլին զնաց Ամիր և այնտեղ փետրվարի 6-ին մեռավ: Սաստիկ սով եղավ Վանում, Կարինում: Հայրը որդուն Կերավ, որդին՝ հորը. ոչ շուն մնաց՝ ոչ կատու, բոլորին կերան: Այնքան մարդ կոտորվեց սովից, որ թաղելով շվեքաշորին, հոր փորեցին և մեջը լցրին: Դարձյալ սուլյն թվականին միլենուլյն Շահ-Աբասը զնաց Գանձակի վրա և օսմանցիներից գրավեց այն: Դարձյալ սուլյն թվին սաստիկ սով եղավ Պոլսից մինչև Թավրիզ և Բաղդադից մինչև

Կամուրջափին. շուն, կատու, մեռած ու կենդանի մարդիկ կերան սաստիկ սովից: Դարձյալ նույն թվին այս սովի պատճառով գալիերը ուժեղացան, մարդկանց համեմատությամբ և կենդանի մարդկանց պատառոտելով ուտում էին, որի պատճառով այդ գալիերին մարդագալ կոչեցին:

1056 (1607) թվին Շահ-Աբաս Առաջինը գնաց Շամախի և պատերազմով այն օսմանցիներին գրավեց: Դարձյալ նույն թվին Զալալին եկավ Կարին. մայիսի տասնյոթին կիրակի օրը, հուլիսի հինգին կիրակի օրը ելավ շատ անողորմ բան արեց:

1057 (1608) թվին սուլթան Ահմադը Մուրադ փաշային ուղարկեց Հալեպ ջանփուլատցի Ալի փաշայի վրա: Սա գնաց, կոտորեց նրա զորքին Գոգարչինլուկ դաշտում և իրեն փախուստի մատնեց: Դարձյալ սուլթան թվին Քավուլ անունով ջալալին ավերեց Խարբերդի ու Բալուի գավառները: Դարձյալ նույն թվին Սոֆին եկավ Կարին հուլիսի երեսուներեք շաբաթ օրը, ամբողջ երկրի՝ թե գյուղի և թե քաղաքի վաստակածը սաստիկ այրեց օգոստոսի մեկին (երկուշաբթի), երեքշաբթի գնաց:

1058 [1609] թվին Մուրադ փաշան [ժողովրդին] տեղահանեց: 1059 (1610) թվին Մուրադ փաշան Պոլսից մեծ զորքով ելավ գնաց Թավրիզ. խիստ ձյուն եկավ վինվորների վրա և անողոր դարձրեց: Չիլ փաշան և Ֆոանկ [զինվորներին] ընկան. հետո դարձավ, եկավ Ամիդ, ձմեռեց Ամիդում: Դարձյալ սուլթան թվի հուլիսի երեսունմեկի երեքշաբթի օրը Սոֆին եկավ Կարին, թուրք Զաբիմազի՝ թաթարի գեմ ուժեղ կոխով տվեց և օգոստոսի երեքի ուրբաթ օրը ելավ գնաց. տեղիս տերը Հասան փաշան էր:

1061 (1612) թվին Ամիդում մեռավ Մուրադ փաշան. վեզիրությունը ստանձնեց Նասի փաշան: Դարձյալ սուլթան թվին Ամիդից ելավ և դեսպանին իր մոտ տարավ Պոլիս և զզվաշի հետ հաշտություն կնքեց, իսկ դեսպանին Հասան փաշայի հետ վերադարձրեց. վերադարձրին ճան կարսեցիներին, որ կոտորեցին: 1062 (1613) թվականին Շահ-Աբաս Առաջինը գնաց Վրաստան և գերեվարեց:

1063 (1614) թվին Շահ-Աբաս Առաջինը Սուրբ էջմիածնի քարերը, մեր Սուրբ Գրիգոր կուսավորչի աչք էջմիածնից

հանեց, բարձեց, տարավ Սպահան: Դարձյալ միևնույն թվականին Ուլաշ գլուղաքաղաքում Սուրբ փրկիչ եկեղեցին շինեցինք: 1065 (1616) թվին Օթուղ Ահմադ փաշան եկավ Երևանի վրա. երկու և կես ամիս նստեց (Երևանի շուրջը), չկարողացավ գրավել, ջարդվեց ու ետ դարձավ: Դարձյալ նույն թվականին Ռուսը մտավ Տրապիզոն:

1066 (1617) թվին սուլթան Մուստաֆան երկու ամիս թագավոր նստեց, բայց և նույն տարին նրան փոխեցին և թագավոր նստեցրին սուլթան Օսմանին: Դարձյալ նույն թվի Տրե ամսի տասին և նոյեմբերի տասնութին Շահ-Աբաս Առաջինը Ազուլիս գյուղում տեր Անդրեաս քահանային նահատակեց քրիստոնեական հավատի համար, և այնտեղ՝ Ազուլիսի Խցաձորի եկեղեցում տեր Անդրեասին թաղեցին:

1067 (1618) թվին Խալիլ փաշան եկավ Թավրիզ, ջախջախվեց և հետո գնաց: Դարձյալ սուլթան թվին մահ տարածվեց, մեկ օրում Գումուշխանեում հարյուր քառասուն երեսուսուն մեռավ: Դարձյալ սուլթան թվին մեռավ սուլթան Ահմադը, թագավորության աթոռին նստեց նրա եղբայր սուլթան Մուստաֆային հարյուր օր: 1067 (1618) թվի կեսին սուլթան Մուստաֆային գահընկեց արին և թագավոր դրին սուլթան Ահմադի որդի սուլթան Օսմանին: 1068 (1619) թվի նավասարդ ամսին թրածև շող երևաց արևելքից դեպի արևմուտք, իսկ շողից հետո արևելքից աստղ երևաց, որ միշտ ընթանում էր դեպի հյուսիս:

1069 (1620) թվին սուլթան Օսմանը գնաց պատերազմի կեհաստանի վրա, բայց չկարողացավ գրավել: Դարձյալ սուլթան թվին Օսման թագավորը կեհաստանի վրա էր հարձակվել: Հյուսիսային կողմում կեսգիշերին երկինքը վառվեց, որպես թե արեգակը ամպի միջով վազում է և ծագման ժամին այրվում: Այդպես եղավ, երբ թագավորը պատերազմից վերադարձավ և գնաց Պոլիս. իր զորքը՝ ըմբոստացավ, թե մեղ այսպիսի թագավոր պետք չէ. զարկեցին, թագավորին սպանեցին: 1070 (1621) թվին Կոստանդնուպոլսի

* Այստեղ ծառա Սուլթանի հավատարիմ ծառաներից կաղմված զորքն է:

ծովը հունվար ամսի տասնչորսին այնպես սառեց, որ մարդ վրան շրջում էր: 1071 (1622) թվին նույն սուլթան Մուստաֆան երկրորդ անգամ թագավոր նստեց և թագավորական գահը զբաղեցրեց հարյուր հիսուն օր. երկրորդ անգամ տապալեցին նրան, որովհետև խելքից պակաս էր: Դարձյալ նույն թվականին Շահ-Աբաս Առաջինը գնաց Ղանդահար քաղաքը և կոչով գրավեց: Դարձյալ նույն թվին Իմամղուլի խանը գնաց Հուրմուզ և կոչով գրավեց: 1072 (1623) թվի սեպտեմբեր ամսին թագավոր նստեց սուլթան Մուրադը: Դարձյալ սուլթան թվին Աբաղա փաշան, որ նստում էր Կարին քաղաքում, ելավ այդտեղից և գնաց մինչև Անկարա. շատ ենիչերիներ ջարդեց զանազան շարաշար տանջանքներով՝ վերժխնդիր լինելով սուլթան Օսման թագապետի արշան, և դարձյալ ետ եկավ Կարին: Դարձյալ նույն թվին տղա հավաքողը հանդես եկավ: 1073 (1624) թվին Բաղդադում նստող Բաքիր փաշան մարդ ուղարկեց Շահ-Աբաս Առաջինի մոտ, թե եկ, որ Բաղդադը քեզ հանձնեմ: Շահ-Աբասը գնաց, բայց փաշան դրժեց (իր խոստումը) և չհանձնեց: Իսկ շահը սրով գրավեց Բաղդադը: 1074 (1625) թվի օգոստոս ամսին Ամիրի Քարեկ կոչված գլուղում մեծ հրաշք եղավ. մի կին ծննդաբերեց երկու գլխանի մեռած զավակ՝ մի գլուխը մարդու էր, իսկ մյուսը՝ հորթի, իսկ մարմինը մաքուր հորթի մարմին էր՝ ոտքերը, կնդակները, պոչը՝ ամեն ինչ նման էր հորթի, միայն գլուխը մարդու էր: Դարձյալ սուլթան թվականին ոտուր եկավ Տրապիզոնի ներքին բերդը գրավեց: Եկավ ապրիլի քսաներեքի կիրակի օրը, մնաց չորս օր, ապա հեռացավ: Երկու հարյուր քառասուն նավ ունեին, հազար հինգ հարյուր ոտա ջարդվեց: Դարձյալ սուլթան թվին վրացի մովրովը պատերազմեց զզլըբաշների դեմ և նրանցից բազմաթիվ հեծյալներ կոտորեց. սպանեց Ղարչղա, Յուսուֆ, Ղազախ խաներին: Դարձյալ զզլըբաշները երկու ամսից հետո երկրորդ անգամ զորաժողով են անում վրացիների դեմ. վրացիների գլխավորն էր միևնույն մովրովը, որ այս պատերազմում նույնպես կոտորեց զզլըբաշ զորքերին, սպանեց Ամիրգունա, Շահբանդա խաներին ու Սելիմ սուլթանին: Դարձյալ նույն թվին Կարինում՝ նստող Աբաղա փաշան այն քարավանները, որոնք Կարին

էին գալիս արևելքից ու արևմուտքից և գնում, հնարանքներով ու խաբուսությամբ բուրդին արգելեց (հեռանալ), մինչև որ բազմաթիվ քարավաններ հավաքվեցին, ապա մի օր բուրդի ինչքերն ու հարստությունները հափշտակեց՝ թե կանխիկ, թե վիճելի, և հետո թագավորից ապստամբվեց ու դարձավ ջալալի: Նաև կամեցավ միաբանվել պարսիկների հետ, քանի որ իր քեռորդուն մեծ զորքով ուղարկեց պարսից Շահ-Աբաս թագավորի մոտ:

1075 (1626) թվին Հաֆիզ Ահմադ փաշան երեք հարյուր հազար զորքով գնաց Բաղդադի վրա, չկարողացավ գրավել, հեծյալը ջարդվեց և ետ դարձավ: Դարձյալ նույն թվին օսմանցիները երեք ոսկի տուրք առան հայերից: 1077 (1628) թվին իսալի փաշան դարձավ վեզիր, եկավ Կարին, Աբաղայի վրա. իսկ Աբաղան նորից գլուխ բարձրացրեց, ենիչերիների ջարդեց, վեց փաշա բռնեց, երկուսին դրսում սպանեց, իսկ չորս փաշաներին տարավ բերդը և բերդի դուռը փակեց: Իսալի փաշան նստեց բերդի շուրջը երկուսուկես ամիս, յոթ ական փորել տվեց, ի վերջո չկարողացավ գրավել, ելավ գնաց: Կես-ճանապարհին թնդանոթները թողեց, իսկ Աբաղան հետապնդեց. ուխտուն շարան ուղտ ու վաթսուն շարան ջորի՝ բուրդը բռնեցրով (գրավեց), շատ մարդ բռնեց և շատ էլ կոտորեց: Վաղիրը գնաց թոքաթ: Դարձյալ սուլթան թվականին Մովսես վարդապետը Շահ-Աբաս Առաջինից հրաման ստացավ Սուրբ էջմիածնի լուսարարություն: Եկավ էջմիածին, սկսեց Սուրբ աթոռի, կիկղեցու, պարսպի և այլ բոլոր շենքերի նորոգությունը: 1077 (1628) թվին խոսրով փաշան վեզիր եղավ և եկավ Կարին Աբաղայի դեմ. վրացի մովրովը նրա հետ էր: Տասներհինգ օր հազար հինգ հարյուր երեք արկ խփեց, երեք կողմից բերդի պարսպը քանդեց, Աբաղային բռնեց ու տարավ Պոլիս:

1078 (1629) թվին Շահ-Աբաս Առաջինը մեռավ Փահլավատի Աշրաֆ քաղաքում և սրա փոխարեն սրա թոռ Շահսեֆին Սպահանում գահ բարձրացավ իբրև թագավոր: Դարձյալ նույն թվականի հունվար ամսի տասներեքին տիրոջ մարդեղություն օրը Սուրբ էջմիածնի կաթողիկոս օծեցին Մովսես վարդապետին: Դարձյալ նույն թվականին այս

Մովսես կաթողիկոսը գնաց Սպահան Շահսեֆի թագավորի մոտ՝ շատ դրամ ծախսեց թագավորի դռներին, շատ շարշարանքներ քաշեց, հաղիվ վերացրեց հարյուր թուման պարտքը, որ դրված էր էջմիածնի Սուրբ աթոռի վրա։ Դրանից հետո Սուրբ աթոռը ազատվեց։ 1079 (1630) թվին հայազգի բրիստոնյաները, որ կլով քաղաքում էին, իրենց նիկուլայոս անունով եպիսկոպոսին շնորհակցեցին, հակառակվեցին և չհնազանդվեցին նրան։ Իսկ եպիսկոպոսը հարեց ֆռանկ արեղաներին, որոնք ճիզիտների կարգից էին. նրանց ստորագրություն տվեց, հնազանդվեց և ընդունեց պապի դավանությունը, դարձավ կաթոլիկ ու նրանց օգնությամբ հափըշտակեց հայոց եկեղեցիները՝ բազմաթիվ անոթներով ու կալվածքներով։ Եկեղեցիների բոլոր անոթներն ու կալվածքները վատնեց, փչացրեց, ոչինչ չմնաց, միայն մնացին դատարկ եկեղեցիները. այդպես մնաց մինչև մեր 1101 (1652) թիվը։ Դարձյալ սույն թվին վեզիր խոսրով փաշան սուլթան Մուրադ թագավորի կողմից ուղարկվեց Բաղդադի վրա, բայց նա գնաց գեպի Համադան։ Հասավ մինչև Դարգազին, այնտեղից վերադարձավ, եկավ Թոքաթում ձմեռեց։ Իսկ սուլթան Մուրադ թագավորը Մուրթուզա փաշային ուղարկեց Թոքաթ, որը խոսրով փաշայի գլուխը կտրեց։ 1081 [1632] թվին Սելանիկի վրա մոխիր տեղաց երեք օր, երեք գիշեր։ Դարձյալ սույն թվին Լեհաստանում մի մարդու խաշների մեջ մահ ընկավ։ Նա աստծուն հայհոյել էր, թե որ սպանում ես, ապա եկ և կեր։ Աստված նրան պատիժ է տալիս. ինքը շուն է դառնում և սատկած ոչխարները ուտում։ Դարձյալ նույն թվին Երևան քաղաքում մայիս ամսի 14-ին վախճանվեց մեծահավատ սուրբ հայրապետ Մովսես կաթողիկոսը. սրան թաղեցին Կողես կոչված բլրում Կողես վարդապետի գերեզմանի մոտ։ 1082 [1633] թվին Բելգրադ քաղաքում մի տաճիկ խոզ է դարձել։ Դարձյալ սույն թվին հունվարի տասներեքին տիրոջ մարդեղություն օրը Մովսես կաթողիկոսի աշակերտ Փիլիպոս վարդապետին օրհնեցին Սուրբ էջմիածնի կաթողիկոս։ Դարձյալ նույն թվին օգոստոս ամսին սուլթան Մուրադ թագավորը շահազանց խիստ արգելք դրեց պիղծ ծխախոտի վրա և իր տերություններին բոլոր սրճարանները վերացրեց։

1083 (1634) թվին հուլյաները մուրովեցին, ծաղատի արին, իսկ հայոց ազգը, հարեշները, ասորիները, զպթինները մնացին ուղիղ ու ճշմարիտ։ Դարձյալ նույն թվին սուլթան Մուրադը գնաց լեհերի վրա պատերազմի, և (լեհները) հնազանդվելով ետ դարձրին։ Դարձյալ նույն թվին օգոստոս ամսին վերոհիշյալ Աբաղա փաշային սպանեց թագավոր սուլթան Մուրադը։ 1084 (1635) թվին սուլթան Մուրադ թագավորը ութսուն հազար մարդով եկավ Երևանի բերդի դեմ նստեց։ Մեծ ուժգնությամբ հրետանակոծեց բերդը և ինը օրից բերդը զրավեց, իսկ բերդի իշխան Թահմազդուլի խանին սրա իշխաններով ուղարկեց Պոլիս։ Տասներկու հազար քաշ ոստիկներ դրեց բերդի մեջ, ինքը անցավ, գնաց Թավրիզ, այնտեղից անցավ Վանի վրա և գնաց Պոլիս։ Դարձյալ նույն թվին Մանօղլուն բերին Պոլիս, և թագավորը նրան սպանեց։ Նաև Զէլ փաշային սպանեց նույն տարում։ Դարձյալ նույն թվականին թագավորը սպանեց Հուսեյին էֆենդի մուֆտին։ Դարձյալ նույն թվին մայիս ամսի 14-ին չորեքշաբթի օրը թագավորը աքսորեց հայերին, հոռոմներին և տաճիկներին։ Դարձյալ միևնույն թվին օսմանցիների երկրում մեկ լիտր լեղակը ութսունյոթ ռեալ եղավ։

1085 (1636) թվին պարսից Շահսեֆի թագավորը հարյուր հազար մարդկանցով եկավ Երևանի վրա. երեք ամիս նստեց, մեծ շարշարանքով ու կուլով բերդը օսմանցիներից առավ և բերդի իշխան Մուրթուզա փաշային և նրանցից բազմաթիվ զորքերի սպանեց, իսկ Շխիջան փաշային, Իբրահիմ փաշային և Մուսին փաշային բռնեց, տարավ Պարսկաստան։ Երևանում իշխան նշանակեց՝ Քալբիալի խանին։ Դարձյալ նույն թվականին Սոխորդ գյուղը վերևից վար իջավ. վանքի փազաղը* այնտեղ շինվեց։ 1086 (1637) թվին Սոխորդի աղբյուրը բաղիշեցի մահտեսի Սիմեոնի վերահսկողությամբ գյուղ իջավ։ 1087 (1638) թվին ապրիլի քսանութի շաբաթ օրը սուլթան Մուրադը գնաց Բաղդադի վրա պատերազմի և նոյեմբերի վեցին հասավ Բաղդադ։ Բերդը մեծ

* Պարսկ. փայկյան բան է, որ թուրք. ունի «գոմ», արտաբնոց իմաստները։

ուժով արկակոծեց երեսունութ օր. դեկտեմբերի տասնչորսի ուրբաթ օրը գրավեց Բաղդադ քաղաքը և դարձավ եկավ Ամիրդ: Դարձյալ սուլյն թվականին Փիլիպոս կաթողիկոսը Շահսենֆի թագավորից խնդրեց լուսավորչի աջը և Սպահանից հանելով բերեց Սուրբ Էջմիածին:

1088 (1639) թվի հունիսի երկուսին՝ հոգեգալստյան կիրակի, սուլթան Մուրադը վերադարձավ ու Պոլիս մտավ մեծ փառքով: 1089 (1640) թվին Սուրբ Սարգսի շաբաթվա հինգշաբթի օրը սուլթան Մուրադը մեռավ և տեղը թագավոր նստեց նրա եղբայր սուլթան Իբրահիմը: 1090 (1641) թվի փետրվար ամսի հինգի ուրբաթ օրը Թավրիզ քաղաքում սարսափելի երկրաշարժ եղավ, և սրա շրջակա դավառներում բազմաթիվ տներ ու շինվածքներ կործանվեցին, շատ մարդիկ հողի տակ մնացին, և Շամղազան, և Ուստաշագրտ պալատները փլվեցին: Երկու ամիս մի օրում հինգ-վեց անգամ երկրաշարժ էր լինում: Դրանից հետո տասնհինգ, քսան, երեսուն օրը մի անգամ էր երկրաշարժ լինում: Այսպես տեկց մինչև հինգ ամիս, ապա աստծու ողորմածությամբ դադարեց: Դարձյալ սուլյն թվին ռուսները եկան, Ղազարի բերդը գրավեցին և օսմանցիներից շատ մարդիկ կոտորեցին:

1091 (1642) թվի մայիս ամսի երեքին մեռավ պարսից Շահսենֆի թագավորը: Դարձյալ նույն թվի մայիսի վեցին Շահսենֆի թագավորի փոխարեն նրա տեղը թագավոր դրին նույնի որդի Շահ-Աբաս Երկրորդին: 1092 (1643) թվին օսմանցիները պատերազմով ռուսներից ետ առան (Ղ)Աղախ քաղաքը: Դարձյալ նույն թվականին Արարատյան երկիրը մորելիս եկավ: 1092 թվին, սուլթան Իբրահիմի թագավորության օրոք օսմանցիները ճանապարհորդություն ելան ծովով և հայտարարեցին, թե գնում են Մալթա կղզի. խաբս տալով, գնացին Կրետե կղզի, որ վենետիկցիների ձեռքում էր, և հեշտությամբ գրավեցին այն, որովհետև կղզու բնակիչները համաձայն էին օսմանցիների գրավմանը: 1095 (1646) թվի ապրիլ ամսի երկուսի ամառ ուրբաթ գիշերը լույս ավագ շաբաթ օրը սաստիկ երկրաշարժ եղավ Վան քաղաքում և իր երկրամասում: Քաղաքի պարսպի կեսը փլվեց, շատ եկեղեցիներ, մզկիթներ ու բազմաթիվ շին-

վածքներ կործանվեցին և անթիվ մարդկանց տակովն արին: Վարագա վանքի եկեղեցիները ավերվեցին: Ութ օր երկիրը շարժման մեջ մնաց, ինչպես նավը ջրի երեսին, ապա հանդարտվեց. բայց շոբա օրը, հինգ օրը, տասն օրը մեկ մի անգամ շարժվում էր: Այդպես մնաց մինչև որ հունիս ամիսը վերջացավ: Ապա աստծու ողորմածությամբ երկիրը հաստատուն դարձավ: Դարձյալ սուլյն թվին օսմանցիները սուլթան Իբրահիմին թագավորությունից տապալեցին, հետո սպանեցին և նրա տեղը հուլիս ամսի քսանյոթին թագավոր դրին նույնի որդի սուլթան Մահմեդին: Դարձյալ նույն թվին Շահ-Աբաս Երկրորդը գնաց Ղանդահար քաղաքի վրա և գրավեց այն, ապա Աֆղանիստանը սրի քաշեց: Դարձյալ նույն թվին պարսից զորքերը, որ Թիֆլիս քաղաքում էին, զորածողով արին, գնացին Կախեթի տեր վրաց Թամրազ թագավորի վրա: Կովի մեջ Թամրազի որդին, որի անունը Դավիթ էր և որը թագավորության ժառանգորդն էր, սպանվեց: Պարսիկները Դավթի գլուխը, սրա հետ նաև զոռակը, որ խաչվառն էր, առան, գլուխը ցցեցին ձողի վրա, իսկ խաչը գլխի վրա կախեցին զոռակից և այդպես Թիֆլիս քաղաքից մինչև Սպահան տարան իրենց Շահ-Աբաս Երկրորդ թագավորի առջև: Պարսից բոլոր քաղաքներում մեծ ցնծությամբ տրախություն էին անում, իսկ քրիստոնյաները մեծ սուզի ու տխրության մեջ էին, որովհետև քրիստոնյաների թագավորությունը կործանվեց:

1100 (1651) թվին Սուրբ Էջմիածնի Փիլիպոս կաթողիկոսը գնաց Երուսաղեմ, բայց մի կիտր տարի չոռոմասանի քաղաքում շրջեց և 1101 (1652) թվի տարեմուտին մուտք գործեց Երուսաղեմ: Սուրբ Հակոբի ներսը գույնզգույն քարերով ու զարդասալերով՝ պատեց և ավագ բնք բարձրացրեց, քանի որ շափազանց ցածր էր: 1101 թվականին Փիլիպոս կաթողիկոսը Երուսաղեմից ելավ և գնաց Պոլիս. այնտեղ մնաց մեկ տարի, քաղաքի եկեղեցիների պարտքը վճարեց, որ հասնում էր երեսուն հազար դուռուշի, և բազմաթիվ ճիշտ կարգեր հաստատեց այնտեղ: Դարձյալ նույն թվին Լիով քաղաքի նիկոլ հայկազպոսը եկավ Պոլիս Փիլիպոս կաթողի-

* Բնագրում՝ մուտախիլ, վտահ չեկք, թե ճիշտ ենք թարգմանել:

կոսի մտա, մեղա ասաց, արձակվեց բանադրանքի կապանք-
նեկից և, նրանից ընդունելով եպիսկոպոսական իշխանու-
թյուն, գնաց կլով քաղաքը՝ իր տեղը: Դարձյալ նույն թվին
Հնդկաստանի թագավոր Շահիջանը յոթ հարյուր հազար²⁷⁸
մարդ ուղարկեց Ղանդահարի վրա. Ովորանեկի փաշաղնին,
Սայդուլե խանին ղորապետներ նշանակեց, որոնք գնացին,
երկուսուկես ամիս նստեցին. քսան հազար զինվորներ ըն-
կան՝ չհաշված բանակի բեռնատարները, առևտրականները,
սևագործները²⁷⁹:

1102 (1653) թվին Փիլիպոս կաթողիկոսը դուրս եկավ
Պոլսից և մեծ փառքով եկավ, հասավ էջմիածին՝ իր ամո-
ռը: Դարձյալ սուլն թվին Դարիշուքուրը յոթ հարյուր հա-
զար մարդկանցով եկավ Ղանդահարի վրա, երեք ամիս նստեց,
հարձակվեց, երեսուն հազար մարդ զոհվեց, չկարողացավ
գրավել, ետ դարձավ:

1103 (1654) թվին էջմիածնի ղանդակատան հիմքը դը-
րին և սկսեցին շինել: Դարձյալ նույն թվի օգոստոս ամսի
երկուսի շրեքշարթի օրը՝ լուսնի երեսունին, երբ արեգա-
կը Առյուծ կենդանակերպում էր, օրվա կեսը անցել էր,
արեգակի երեք մասը խավարեց, և երկնքի աստղերը երևա-
ցին, ինչպես գիշերը:

1104 (1655) թվի մարտ ամսի քսանհինգին աղուհացքի
հինգերորդ կիրակի էջմիածնում վախճանվեց տեր Փիլիպոս
կաթողիկոսը. տարան թաղեցին Սուրբ Հոսիսիմե. եկեղե-
ցու մեջ: Դարձյալ սուլն թվի ապրիլ ամսի ութի ծաղկա-
զարդի տոնին Զուղայեցի Հակոբ վարդապետին օծեցին
Սուրբ էջմիածնի կաթողիկոս: Դարձյալ նույն թվականին
Բաղեշի տերը՝ Ավդալ խանը բարկացավ և կայմենում էր
ջալալի լինել. վանի Մալաք Մահմադ փաշան մեծ զորքով
եկավ Բաղեշ քաղաքը: Ավդալ խանին փախցրին, նրա տեղը
խան դարձրին նույնի Դիաղին անունով որդուն: Մի տարի
հետո Ավդալ խանը եկավ, խորամանկությամբ սպանեց իր
Դիաղին որդուն և կրկին ինքը խան նստեց: Դարձյալ սուլն
թվին դաշտեցի հայերին Սպահանի քաղաքամիջից հանե-
ցին և Շահ-Աբաս Երկրորդի հրամանով քաղաքի ծայրամա-
սերում բնակեցրին:

1105 թվին երևանցի և այլ հայերի Սպահանի քաղաքա-

միջից հանեցին և Շահ-Աբաս Երկրորդի հրամանով քաղաքի
ծայրամասերում բնակեցրին: Դարձյալ սուլն թվին Փիլան
կոչված բերդում քրդերը նահատակեցին Ավետիս անունով
մի քրիստոնյա մարդու, որն ազդեթյամբ հայ էր՝ Մարաց
երկրից: Տեր Քրիստոսը փառավորեց նրան երկնային լույ-
սով, որ իջավ նրա վրա: 1106 (1657) թվին հրեաներին, որ
բնակված էին Սպահան քաղաքում, պարսիկները բռնությամբ
և շարշարանքներով մահմեդականացրին: Սրանց հետ բըռ-
նությամբ մահմեդականացրին նաև այլ հրեաների, որ
պարսից այլ քաղաքներում էին բնակված: Դարձյալ սուլն
թվին մեռավ Դատիանի թագավորը, իսկ թագավորութունը
դադարեց, որովհետև նա թագավորության ժառանգորդ
որդի չունեի: Դարձյալ նույն թվականի փետրվար ամսի
քսանհինգին թոքաթ քաղաքում վախճանվեց Զուղայեցի
Սիմոն վարդապետը և այնտեղ թաղվեց: Սա շափաղանց
վարժ էր քերականության արվեստին և փիլիսոփայական
գրքերի գիտության մեջ, ճարտարախոս հակաճառող էր բո-
լոր ազգերի դեմ:

1107 (1658) թվին Ղարալիխանի տեր Զալ անունով մեծ
իշխանը գնաց Սպահան շահի պալատը և շահի կայսրքոսի
միջամտությամբ չսպանվեց, այլ կենդանի վերադարձավ
իր երկիրը: 1109 թվի մարտ ամսի մեկին Պաշխաշուխի
(Իմերեթի) թագավոր Աղեքսանդրը մեռավ, և սրա փոխա-
րեն Բագրատ անունով որդին թագավորեց: Դարձյալ նույն
թվականին այս Բագրատի, որի հոր Աղեքսանդրի փոխա-
րեն թագավոր նստեց, խորթ մայրը նրա երկու աջերն էլ
կտրացրեց, որովհետև թշնամութունը ընկավ նրանց միջև:
Նաև իշխանները միմյանցից պառակտվեցին, երկիրը ավեր-
վեց, թագավորութունը խափանվեց: Դարձյալ նույն թվի
ապրիլ ամսի մեկին՝ աղուհացքի հինգերորդ կիրակի օրը,
կատարվեց հետևյալը: Որովհետև շափաղանց ցուրտ ու ծանր
ձմեռ եղավ, Գեղամա լիճը սառեց, իսկ լճի մեջ գտնվող
Սևանա կղզու բնակիչները, քանի դեռ սառույցը ամուր էր,
սառցի վրայով գնում գալիս էին. երբ սառույցը այնքան
թուլացավ, որ չէր դիմանում մարդուն, այդ ժամանակ կամե-
ցան սառույցը ջարդել, որպեսզի ճանապարհ ճանապարհ
զուրս գալու. ուստի կղզու վանքի Բարսեղ անունով վարդա-

պետ առաջնորդը իր հետ վերցրեց մի արեղա, մի սարկավազ ու երեք աշխարհական. մտան տուփերի մեջ և սկսեցին սառույցը կոտրել. կոտրելով հասան լճի կեսը: Այնուհետև սկսեց ուժգին հողմ փչել. կամեցան ետ դառնալ կղզին, հողմը խանգարեց, որը ջրերի ալիքներով կոտրված սառույցները բերեց բեռնեց տուփերի վրա: Ծանրացած տուփերը անցան սուռույցի տակ, վարդապետը, արեղան և մի աշխարհական սուզվեցին, իսկ սարկավազն ու մի աշխարհական փրկվեցին խեղդվելուց աստծու ողորմածությամբ:*

Դարձյալ նույն թվի ապրիլ ամսի երեսունի երկուշաբթի օրը կայծակը խփեց, մի ձի սպանեց, որ մեր աչքերով տեսանք: Դարձյալ սույն թվի հուլիս ամսի քսանմեկի շաբաթ օրը հրդեհ ընկավ մեծ քաղաք Պոլսում, վաթսուներկու ժամ այրվեցին շափազանց շատ տեղեր: Դարձյալ նույն թվականին պարսից թագավոր Շահ-Աբաս Երկրորդը հրամայեց՝ մահմեդականներից 1500 տուն թուրք տարան լցրին Կախեթ, որ այնտեղ բնակվեն:

1110 (1661) թվին Կովկաս լեռան բնակիչ վրացիները, այն ազգերը, որ ասվում են թուշ ու փշավ, գիշերը եկան և այս 1500 տուն թուրքերին սրի քաշեցին՝ ծերերից մինչև ծծկերը: Դարձյալ սույն թվին շահը եպարքոսին գցեց իշխանությունից [վրացի] իշխանին ազատելու համար, քանզի խաների ու շահի առջև ասվեց, թե (վրացի) իշխանի թելադրությամբ վրացիները կոտորեցին 1500 տուն թուրքերին: Դարձյալ նույն թվին միևնույն (վրացի) իշխանի եղորորդիները նրա գլուխը կտրեցին և տարան շահի մոտ: Այս արվեց Թիֆլիսի Շահնավազ խանի թելադրությամբ, որ ազգով վրացի էր, որպեսզի ինքը հավատարիմ՝ երևա շահի առջև: Դարձյալ նույն թվականին Կախեթի տեր Թամարազ թագավորը ելավ, Վրաստանից գնաց Սպահան Շահ-Աբաս Երկրորդի մոտ՝ նրան հնազանդված, և, ինչպես սովոր են Ֆենգավոր պարսիկները, սկզբում սիրով ու մեծարանքով ընդունեցին նրան, բայց հետո քրիստոնեական հավատի ու օրենքների պատճառով իշխանների շարախոսությամբ շա-

հը քավեց նրան՝ երեսից գցեց, ապա արտոբեց Ֆահրապատի երկիրը՝ Աստարապատ քաղաքը, որտեղ և մեռավ. շատերը ասում էին, թե շահի ցանկությամբ թունավորելով մեռցրին նրան:

1110 (1661) թվին Թամրազը գնաց Սպահան, և նույն թվին նրան մեռցրին, նաև Թամրազի հետ եղած մարդկանցից ընտիրներին սպանեցին, բայց շահի թույլտվությամբ Թամրազի մարմինը տարան վերջինիս երկիրը՝ Կախեթ, նույն Թամրազի թոռան մոտ: 1114 (1665) թվի դեկտեմբեր ամսին կեսգիշերը անցնելուց հետո վաղ առավոտյան երկնքում արևելքի ու հարավի միջև երևաց մի գիսավոր աստղ, որ իր գեսը դեպի արևմուտք էր ձգել: Ելնելիս օրավոր շուտ էր դուրս գալիս և, այդպես շուտ դուրս գալով, հասավ մինչև երեկո [երեկոյան էր դուրս գալիս]. և երբ կեսգիշերը անցավ, իր գեսը դարձրեց դեպի արևելք և այդպես գնալով հասավ մինչև երեկոյան լույսը և հետո անհայտացավ: Նաև սույն թվի ապրիլ ամսին հյուսիսարևելքում առավոտյան պահին կրկին երևաց մի գիսավոր աստղ. իր գեսը ձգել էր արևմտյան կողմը: Ելնելիս օրավոր ուշ էր դուրս գալիս և այդպես գնալով հասավ մինչև առավոտվա լույսը և անհայտացավ:

1115 (1666) թվի սեպտեմբեր ամսի տասին վախճանվեց պարսից թագավոր Շահ-Աբաս Երկրորդը: Սա շափազանց բարեբախտ էր այնքան, որ իր շրջակա թշնամիները իրենց կամքով գալիս էին, սրան ի սեր և հնազանդություն: Նաև բարեգութ խնամք էր տածում հայոց ազգիս հանդեպ: Սրանից հետո թագավորեց սրա որդին, որին կոչեցին Շահսեֆի ըստ իր պապի անվան, ուստի սրան անվանենք Շահսեֆի Երկրորդ: Այս Շահսեֆիի թագավոր նստելուց հետո շրջակա թշնամի ազգերը գլուխ բարձրացրին և ասպատակեցին նրա երկիրը: Նաև ինքը միշտ հիվանդ էր և մարմնապես ցավազար, ուստի կախարհներն ու հմայողները հմայք անելով ասել են. «Շահսեֆի անունը, որ դրա վրա է, բախտավոր անուն չէ. նաև այն օրն ու ժամը, երբ դրան դրել են թագավորական գահին, երջանիկ պահ չի եղել: Ուստի անունը փոխեցին և անվանեցին Շահսուլեյման և հմայք

* Բնագրում երեք աշխարհականներից մեկը ռուսվում է», մյուսը՝ «փրկվում», իսկ երրորդը հայտնի չէ, թե ինչ է լինում: [Խմբ.]

անելով բախտաբեր օր ընտրեցին, վերստին գրին թագա-
վորական գահի վրա: Եվ այժմ առողջ է ու բարվոք վիճա-
կում: Շահսուլեյման անունը ասում ու գրում են ամեն
տեղ:

Գ Լ Ո Ւ Ե Ե Ն

ՀՐԵԱ ԱԶԳԻ ՀԵՏ ՏԵՂԻ ՌԻՆԵՅԱԾ ԱՆՅՔԵՐԻ ԵՎ ՍԱՐԵԹԱ
ԱՆՈՒՆՈՎ ՀՐԵԱՅԻ, ՈՐՆ ԱՍՈՒՄ ԷՐ, ԹԵ ԻՆՔԸ ՀՐԵԱԿԱՆ ԱԶԳԻ
ՔՐԻՍՏՈՍ ՓՐԿԻՉԸ Է ԵՎ ԱՐԴ ԵԿԵԼ Է ԵՎ ՀԱՅՏՆՎԵԼ, ՈՐ ՓՐԿԻ
ՆՐԱՆՑ, ԵՎ ԱՅԼ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՈՐ
ՀԱԶՈՐԳԵՅ ՍՐԱՆՑ

Մեր կենարար Քրիստոս աստծու 1666 և հայոց 1115
թվին* գերագույն և բարձրագահ աթոռ Սուրբ էջմիածնի տնր
Հակոբ Զուլայեցու կաթողիկոսության, օսմանցիների սուլ-
թան իրրահիմի որդի՝ սուլթան Մահմադի թագավորության
ժամանակ հայտնվեց Սաբեթա անունով մի ոմն ճարտար
հրեա, որ ծնվել և ապրել էր Զմյուռնիա քաղաքում, լավ
վարժվել էր հրեական գրի ու ուսման մեջ: Նաև ինքը բնա-
կանից հրաշալի ճարտասան էր: Օրավոր առաջադիմում և
կատարելագործվում էր ուսման մեջ: Սրա այս առաջադի-
մությունը տեսնելով՝ շատերը աշակերտում էին նրան, իսկ
նա ինքնաստեղծ ու հնարամիտ բաներ էր ուսուցանում
իրեն հետևողներին. քանզի աստծու անունը հակառակն էր
գրում և իրեն աշակերտածներին սովորեցնում էր կարգալի
Ապա գրքերը բացում, մրցահանդես էր սարքում, իրենց
օրենքների գիտունների հետ քննության էր մտնում և խոս-
քի ճարտասանությամբ նրանց հաղթում էր. աստծու անունը
հակառակն էր գրում, դնում էր նրանց առջև կարդալու հա-
մար, իսկ նրանք չէին կարողանում. ապա կանչում էր իր
աշակերտներին և հրամայում էր կարդալ, և քանի որ նրանք

* Բնագրում հիշյալ թվերը իրար շեն բռնում. հավանաբար ՌՈՂԵ-ի
փոխարեն վրիպակով տպագրված է ՌՈՂԵ [Խմբ.]:

նախնայես սովորել էին, վարժ խոսքով ու խրոխտ ձայնով
համարձակ կարդում էին, որի վրա հանդեսի ամբողջ ժո-
ղովուրդը հիացած, դարմացած ապուշ էր կտրում: Գրված
գիրքը կարդալուց հետո գրի կարգացողը սկսում էր սահ-
մեռվել ու դողալ, տանջվել, գետնին զարկվել, խեղդոտվել և
տարօրինակ ձայներ արձակել: Իսկ Սաբեթան վեր էր կե-
նում, հրեաների ունեցած սրսկման ջուրը առնում, սրսկում էր
հիվանդի վրա և տեղնուտեղը անմիջապես նրան բուժում
էր հիվանդությունից: Ուստի բոլոր տեսողները դարմա-
նում, ապուշ էին կտրում. Սաբեթայի կողմից արվածը դար-
մանալի ու ամենամեծ հրաշագործությունն էին համարում:
(Սա) իրեն հրաշագործ էր ցույց տալիս նրանց և աստծու
կողմից առաքված ու օծված, իսկ մարգարեների վկայու-
թյունները, որ Քրիստոսի գալստյան համար ասել են, որք
կարողանում էր, վերագրում էր իրեն և մեկնաբանում:
Անում էր, թե մարգարեների կանխագուշակած մեսիան, որ
գալու է փրկելու Իսրայելը, այդ ես եմ, որ եկել եմ Իսրա-
յելը փրկելու: Ժողովրդին ասում էր, պետք է վերացնել
շաբաթներն ու պասերը և մշտապես ապրել ուրախության
մեջ, իր անվան գիրն ու կնիքը հռչակել ու իրեն փառավո-
րել, աստծու կողմից օծյալ և հրեա ազգի համար ուղարկ-
ված փրկիչ (հայտարարել):

Մեծ փառքով ու մեծարանքներով պատվում էին նրան,
տնից տուն պատիվ տալու հրավերք էին անում նրան և զը-
նալիս ճանապարհին հովանի էին բռնում նրա գլխին, իսկ
ոմանք հագուստի փեշերը վեր բարձրացրած բռնում էին,
ստքերի առջև և տակը բեհեզ ու կերպաս էին տարածում:
Նրան երեք կույս աղջիկներ հանձնեցին, իսկ նա միառժա-
մանակ իր մոտ պահեց, ապա բաց թողեց: Իր ազգի բոլոր
մարդիկ նրա հետևից էին գնում: Հիվանդացածների խոս-
քերը, որոնք նախապես հիշեցինք, թե բնկնում էին ու խեղդ-
վում, ըստ դեի տանջանքի և խոսեցնելու զիվահարները
վայրիվերո ցնդաբանում էին: Դիվահարների այդ խոսքերը
և ուրիշ աչքակապուկ գործեր, որ իրենք տեսել էին մուրի-
ցուցիչ Սաբեթայից, նաև ուրիշ խոսքեր, որ իրենք իրենցից
կցմցում էին, բոլորը թղթի վրա գրած, թերթի վրա շաբա-

Հյուսած իբրև ավետավոր խոսքեր ուղարկեցին հեռավոր տեղեր, թե ավետիս ձեզ, ցրվածներ ու տառապածներ, Սաբեթան՝ մեր ազգի փրկիչը, լինելով Իզմիրում թագավոր, արդ երևացել, օրենքներ է նորոգել, զավազան ծաղկել*, մեզ ազատել, ազդերով ճոխացել և Իսրայելի ցրվածներին հավաքել: Իսկ նրանք հրեաներից, որոնք գիտուններ, իմաստուններ ու կարդացողներ էին, տեսնում էին, ողջ ազգը նրա հետևից է գնում, իսկ ոմանք նրանցից ակամա կամ պատկառելով են գնացած եղել իբրև նրան հնազանդվածների, ոմանք էլ պատրվակեղծով գնացին օտար աշխարհ, հեռացան նրանից: Իսկ նրանք, որ խելացի էին, վախենում էին, թե գուցե այս լուրը այլազգի մահամեղականների ականջն ընկնի, ազգովին մեզ ընաջնջեն: Այդ ազգի խաժամուժ ամբողջ այնքան միմյանց ասացին, մինչև լուրը հասավ Իզմիր քաղաքի մահամեղական իշխանների ականջը: Իշխանները միմյանց հետ մտածեցին, թե գրենք և վեզիրին հայտնենք. բայց հետո թեթևամտություն ու վայրիվերոյություն համարելով այդ, թողին և վեզիրին չհայտնեցին, այլ հրեաներին բռնելով ծանր տուգանք առան, բաց թողեցին: Բայց սուտ մարդարեի հոշակն ու համբավը օրավոր ավելանում էր և հասնում հեռավոր երկրներ, մանավանդ Կոստանդնուպոլիս: Նրանք, ովքեր լսում էին, ջերմեռանդ սիրով տարվում, բորբոքվում էին, ոմանք ճանապարհ ընկնելով՝ գալիս էին նրան ընծայաբերության, ուխտի, երկրպագության. իսկ ոմանք թանկագին իրեր, ոսկի ու արծաթ էին ուղարկում նրան, ոմանք էլ իրենց տներն ու կարասիները թեթև գնով վաճառում էին ի ասում, թե գնում են՝ Երուսաղեմ, որովհետև ասում էին նրանք, թե այնտեղ է գալու Սաբեթան, թագավորելու է, ցրված ազգը հավաքելու է: Այս լուրը ավելի տարածվելով՝ ամեն ոք զարմանում էր, ուստի բոլոր ազգերի՝ մահամեղականների ու քրիստոնյաների, մանուկներն ու փոքրերը, Պոլիս քաղաքի հարուստներն ու ոսմիկները

* Տես Թիւր ժէ 5 (եւեւ եղիցի մարդոյ զոր ընտրեցից զաւագան իւր ծաղկեցիք): Վկայության խորանում Աւարոնի զավագանը կանաչում է, և Աւարոնը զառնում է աստու ընտրյալը:

հարցնում, նեղում են հրեաներին. «Չֆուտ գելլի մի», խախամ գելլի մի»*: Կանայք տղամարդկանց հետ, երիտասարդները, մեծամեծները, փոքրերը, ծերերը երեխաների հետ (ուր պատահի) հարցնում են հրեաներին. «Նավի գելլի մի», թե ճալ գելլի մի»*: Այս բանը առակ են դարձրել ամբողջ աշխարհում, ծաղրում, կատակում են ճանապարհին, փողոցում. բերան ու լեզու այս բանում վարժվում է. «Նեպի գելլի մի», մսեհ գելլի մի»: Տանն ու փողոցում այս է հիշվելով ասվում, երգեր ու խաղեր շինելով սրան են հարմարվում, սուտ մարդարեիս ուղղված ծաղրն ու շշուռը հրեաներին են կշտամբում. «Թեճալ գելլի մի»:

Նաև Նաթան անունով մի հրեա տղամարդ, որ նախապես ուխտադիր, դաշնադիր և ընկեր էր այս Սաբեթայի հետ և Գազա քաղաքում էր, այնտեղից գրում է Կոստանդնուպոլիսի հրեաներին Սաբեթայի մասին և վկայություն տալիս, թե նա է մեսիան և օծյալը, որ արդ գտնվում է Ջմուռնիայում: Այս խոսքի վրա շափազանց բորբոքվեցին Պոլիսի հրեաները, և հոշակվելով բարձրացավ նրա համբավը, մինչև որ հասավ Պոլիս քաղաքի մահամեղական իշխաններին: Իսկ Պոլիսի ղազինն ու սարդարը մարդիկ պատրաստեցին, որ գնան Սաբեթային բռնեն և բերեն: Սաբեթան՝ այս լսելով, ելնում է, որ փախչի, գնա Թեսաղոնիկե: Իսկ ճանապարհի պահապանները բռնեցին նրան ծովում և բերին Պոլիս, հանեցին ցամաք, տարան Գոմրուկ խանի առջև: Երբ տարածվեց, թե հրեաների մեսիային բերին, հաղարհազարներ և բլուր-բլուրներ շտապում էին տեսնելու Սաբեթային: Եվ Սաբեթային տեսնելիս ամենքը հայհոյում, ծանակում, ծաղրում ու ձեռք էին առնում հրեաներին նրանց մոլորության համար:

Ապա տարան վեզիրի մոտ, որին (վեզիրը) հարցնում է

* Հրեան եկա՞վ:
** Քահանան եկա՞վ:
*** Քաղաքը եկա՞վ:
**** Մարդարեն եկա՞վ:
***** Մեսիան եկա՞վ:

անվան ու համբավի մասին, իսկ նա ամեն ինչից հրաժարվում և ուրանում է. ինքն իր մասին ասում է, թե ես վերծանող, օրինապահ ու աղոթարար մի մարդ եմ: Իսկ՝ վեղիբը պատասխանում է, թե՛ «Կաց կալանքի տակ մինչև Իզմիրից քո մասին վկայություն ստանանք և իմանանք քո խոսքերի ստույգությունը»: Այդ ժամանակ վերակացուն ապտակել է Սարեթային և գլուխը ծեծելով տարել բանտարկելու: Հայոց 1115 (1666) թվի հունվար ամսի քսանութին նրան բանտ գրին: Իսկ հրեաները ամսից ոչ շուկա դուրս եկան, ոչ խանութում նստեցին: Մահմեդականների երիտասարդները, ուր հասնում, ծանակում էին՝ ասելով. «Ջուհուդ գելդի մի՞, թեջալ գելդի մի՞»: Այս ծաղրածանակի համար հրեաները շատ կաշառք տվին ենիլերիների պետին, որպեսզի կարգադրի իր պաշտոնյաներին ու զինվորներին, որ արգելեն այդ բաները, որ «գելդին» չսսեն: Իսկ այդպես ասողները հազարապատիկ և ավելի շատացան:

Երբ Սարեթային արգելափակեցին բանտում, մարդ ուղարկեցին, նրա ունեցվածքը բերեցին, քանի որ մեծ հարստություն էր հավաքել, որ հրեաները շատ ավելի էին նրան ապրիս: Երբ նրա հարստությունը կտրեցին, մուրթալ հրեաները բոլորը ընդառաջ էին գնում և ողջագուրում էին հեռվից, մոտիկից ձեռքերը տարածելով իրենց համար փրկություն էին խնդրում:

Սրանից հետո մահմեդական իշխաններից դատավորի տեղակալը, քննիչը գնացին բանտ և Սարեթային հարցրին, թե մեզ ստույգը ասա, իրո՞ք դու թագավոր ես, ինչպես որ քո ժողովուրդն է ասում քո մասին. ինչ որ քո մասին ասում ես, ճիշտն ասա: Իսկ նա ամեն ինչից հրաժարվում է, թե՛ «Ոչ թագավոր եմ, ոչ մարդարե, ոչ էլ նշանավորներից, այլ մի գոհճիկ մարդ եմ և մասնագիտությամբ կարգացող»: Իսկ նրանք Սարեթայի խոսքերը զրեցին, արձանագրեցին ու տարան վեղիբին հայտնեցին: Իսկ ինչ հրեաներն էին, չէին դադարում Սարեթայի մոտ երթևեկելուց. և քանի որ բանտը Պոլիս քաղաքում էր, հրեաները չէին կարող համարձակ նրա մոտ գնալ ու գալ, ուստի վերակացուին կաշառեցին, որպեսզի նա դուրս իրենց համար մի հնար գտնի, որ գնալ-գալիս համարձակ լինեն: Իսկ նա վեղիբին

ասում է, թե հրեաները բանտը ոտքի կոխան դարձրին հաճախ երթևեկելով: Այդ ժամանակ վեղիբը խստով հրամայում է, թե տարեք Բողազ բերդի մեջ և այնտեղ բանտում պահեք նրան: Օրեր հետո վեղիբը դուրս եկավ Պոլսից, գնաց արևմուտք, որովհետև մեծ պատերազմ կար նրա դեմ: Երբ վեղիբը գնաց, հրեաները էլ ավելի համարձակություն առան, սկսեցին շափաղանց հաճախ երթևեկել նրա մոտ կանանցով ու որդիներով: Մերեր, երիտասարդներ, աղքատներ, հարուստներ, մինչև անգամ աղջիկներ, հարսներ, անարգել ուխտի ու երկրպագության էին գնում նրան ոչ միայն մերձակա դավառներից, այլև հեռու երկրներից Բուղդանից (Մոզապիա), Լիվից, Կաֆայից (Թևոդոսիա), Երուսաղեմից, Անտոնուից: Էլ ավելի Պոլսից էին գալիս նրա մոտ, առնում նրա օրհնությունը և արտասուքով աղաչում, թե ե՞րբ կլինի, որ ելնես, թագավորես և մեզ իրկես: Նրանց երթևեկության համար մահմեդականները նախանձով զբոսովեցին, և այն իշխանը, որին Բոստանլի բաշի են կոչում, սկսեց նրանց ճանապարհը կտրել և հրեաներից նշանավոր ումանց, որ գնում էին Սարեթայի մոտ, բռնեց, տաքավ տեղապահի (դայմագամի) մոտ: Եվ երբ տեղապահը հարցրեց. «Թե ինչու՞» եք գնում նրա մոտ, ստույգ ասե՞ք. «մարգարե՞» է նա, թե՛ թագավոր, ի՞նչ է, ճիշտն ասե՞ք»: Հրեաները թաքցրին և ճիշտը չասացին, այլ պատճառներ հնարեցին, թե անմեղ է և իզուր դատապարտված և բանտ է մտած, մեր ազգից աղոթավոր ու կարողացող մեկն է. նրբան միխթաբելու և նրա օրհնությունը ստանալու համար գնում ենք նրա մոտ: Այս խոսքի համար տեղապահը ոչինչ չի ասում նրանց, այլ ազատ է արձակում, որ ելնում ու գնում են: Իսկ դուրսը կանգնած մահմեդականները բարկություններ ու ծաղրանքով հրեաներին ասում են, թե «Մուրթալներ, ի՞նչ ունեք այդ մարդուց, որ այդքան մուրթվել եք նրա նկատմամբ»: Հրեաները պատասխանում են, թե՛ «Քիչ օրեր հետո ձեր աչքերը կտեսնեն»: Մահմեդականները իսկույն զեկուցեցին տեղապահին: Հրեաներին շտապով հետ դարձրին և սաստիկ ծեծեցին, ապա բաց թողեցին: Թեպետ այս բանը այլ հրեաներ լսեցին և վախեցան, բայց իրենց դատարկ հույսի մեջ չթուլացան:

Սլ հրեաների նախնիների ժամանակ, երբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքան գերեց հրեաներին և տարավ Բաբելոն, այդ օրը նրանց նախնիները սգո ամենամեծ տոնը նշանակեցին: Այդ օրվանից մինչև այժմ պատվով, ծոմով, սգով, ապաշխարանքով ու իրենց կոծելով կատարում են այն սգո օրերը: Նաև այդ օրերին Երեմիա մարգարեի ողբն են կարդում: Օգոստոս ամսին, երբ լուսինը տասնհինգ օրական է լինում, այդ տոնը կատարում են, իսկ մահմեդականները այդ տոնը կոչում են Ղարաբայրամ:

Իսկ դիվարնակ Սաբեթան երբ տեսավ, որ կուրացած Վոդովորդը իր նկատմամբ մոլի սեր ունի, սկսեց նրան էլ Կավելի մոլորեցնել իր հանդեպ, քանզի շատ թղթեր գրեց և ամեն տեղ ուղարկեց հրեաներին՝ հրաշալի բան հաղորդելով նրանց, ասում է. «Մնված եմ աստծու որդի, ձեզ Կաատող [ձիշտ] ժամանակին հասած»: Նույնի գրության պատճենն ու օրինակը այս է. «Աստծու միածին որդի և անզրանիկ՝ Յոսամպեսի Իսրայելի մեսիա փրկիչ: Իսրայելի համայն որդիներին՝ աստծու սիրելիներին, խաղաղություն: Կնչպես տիրոջ օրը, որ ցանկանում էին տեսնել երանելի Սբրահամը, Իսահակը և Հակոբը, այս օրերին մենք արժանավորվեցինք տեսության. ինձ ընդունեց Իսրայելի ազատության ու փրկության համար ըստ մեր տիրոջ ուխտի, որ ուխտեց մարգարեների և Իսրայելի սիրելիներից մեր հայրերի խոսքերով: Արդ՝ ձեր ամբողջ սուգը թող վերածվի ուրախության և ձեր պասը լինի տոն ու բանայիրս. քանզի այսուհետև այլևս չեք լա, ով իմ դավակներ Իսրայելի. ձեր անցյալի մասին այլևս չճողաք, քանզի ուրախություն փրկություն տվեց, որ անպատմելի է: Արդ՝ ձեր ազոթի ժամանակ երաժշտական արվեստի թմբակներով ու նվագներով, բարձր ցնծությունը գոհացեք նրանից, որ իր հավիտենական ուխտը կատարեց, որ ուխտել էր մեր հայրերի հետ. ամեն օր և ամսադուրսներին նույնանման ցնծացեք: Ձեր ցերեկվա ու գիշերվա սուգը, որ կոչվում է բուրիմ, դարձրեք ցնծության (ամբրան) օր՝ լուսաբեր ուրախության, որ եղավ իմ հայտնությանը: Ձեզանից ոչ ոք տրիշ գործերով թող չզբաղվի, այլ միայն ուրախությամբ ու ցնծությամբ, քանզի ձեզ տրվեցին իբրև վայելչություն

ազգերի ու հեթանոսների բոլոր օրերը, որ ոչ միայն երկրի երեսին է տեսնվում, այլ որ ծովի խորքերում ձեզ համար պահված են իբրև խնդություն վայելչություն. ողջ եղեք»:

Մոլորված ու դիվարնակ Սաբեթան այս գրությունը հրեական լեզվով ու գրով գրեց և ուղարկեց ամեն տեղ, որ հետո հրեաներից թարգմանվեց լատիներենի, իսկ լատիներենից թարգմանվեց օսմաներենի սուլթան Իբրահիմի որդու՝ սուլթան Մահմադ թագավորի մի իմաստուն ու մեծ թարգմանչի ձեռքով: Նաև լատիներենից թարգմանվեց հայերեն լեզվի ու գրի Երեմիա կոչված ոմն ճարտար դպրի՝ ձեռքով, որ նույն Պոլիս քաղաքից էր: Իսկ մոլորվածի գրությունը ինչ վայր էլ հասավ, այն սգատոնը ցնծությամբ տոնեցին, մինչև իսկ հանդգնեցին թմբուկներով ու նվագներով, որ երբեք հրեաներին այդպես չէին տեսել: Քանզի Սաբեթան հրամայեց այն մեծ սգի օրը և հիշատակը, որ նրանց նախնիները նշանակեցին Բաբելոն գերի գնալու առիթով դարձնել ցնծության ու ուրախության տոն՝ Սաբեթով ու խմելով, պեսպես դարդերով դարգարվելով, ուրախության գալով ու կատարելով, որովհետև սգո օրերը վերացան և ուրախության օրերը եկան հասան:

Ոմանք մեր հայոց ազգից Սաբեթայի մասին գաղտնի հարցում արին հրեաների գիտուններին ու խախամին, թե՛ «Լ՞նչ կասեք, թերևս ինչ-որ մարգարե է, կամ իրոք մեսիան է, կամ Քրիստոսն է, և կամ այլ ոք աստծու արժանավոր ծառայներից է»: Նրանք ասացին. թե՛ «Բոլորովին ստախոս է ու խաբբա, մոլորեցուցիչ է ու դիվարնակ. ահա մեզանից ութսուն ու ավելի մարդ, որ միաբանված ենք և նրան շնք ընդունում, որովհետև հակառակ է մեր հայրենի օրենքներին»: Այս միաբանված մարդիկ գնացին հրեաների մոտ և սկսեցին կովել, վիճել և հանդիմանել Սաբեթայի համար և ասել, ինչո՞ւ եք ընդունում նրան, ինչո՞ւ եք լուսմ նրան և ինչպե՞ս եք հետևել նրան, քանի որ խաբբա է ու մոլորեցուցիչ է և հակառակ մեր հայրենի օրենքներին: Որովհետև այսքան ժամանակ է, որ մեր նախնիները եկան այս աշխարհն ու գնացին, ոչ ոք նրանցից որևէ կարգ, որ փոռփիղների օրենքներով էր դրված, չխախտեց, կամ լուծեց, իսկ դա մեծ սգո շաբաթներն ու տոնը լուծել է հրամայում

և ինչ որ խոսում ու զործում է, կեղծիքով ու ստույգամբ է լի: Մարգարեական ի՞նչ նշան, կամ հրաշագործություն տեսաք նրանից: Թեպետ սրանք այսպես հակառակվում էին հրեաներին, սակայն հրեաները ըմբոստացան սրանց դեմ, սրանց հայհոյում, վիճում և մտադրվում էին ծեծել, գնում էին Սաբեթայի մոտ, նրանց ամբաստանում: Մեծ հակառակություն ու պառակտում ընկան հրեաների մեջ՝ ոմանք ասում էին՝ պետք է ընդունել, ոմանք՝ ոչ, ուստի բաժանվեցին որդին հորից, եղբայրը եղբորից և սիրելիները միմյանցից: Իսկ նրանք, որոնք ընդունում էին, սիրով կապված էին սրա հետ, գնում-գալիս էին և ողջունում: Եատերը ցերեկը շէին կարողանում մտնել նրա մոտ, մեծ շարշարանքով սպասում, գիշերն էին մտնում և ողջունում: Եվ այնտեղից իջնելով վարմացուցիչ ու հիացական խոսքեր էին սարքում ու տարածում նրա մասին և միմյանց ավետիս էին տալիս, թե Սաբեթան մեսիա, ազատիչ ու փրկիչ է եկել, մեզ հասել: Ինքեիրեն նրա համար թագավորական գահույթ է պատրաստվում, շտկվում է դատելու աթոռ և հաջողվում է արքայություն գավազան. քրիստոնյաներին խապառ բնաջնջելու է, մահմեդականներին հարկատու է դարձնելու:

Եվ այսպիսի սուտ ու սնոտի հույսի աչք տնկելով սպասում էին նրան: Նրա գալստյան համար ոմանք դեպի երկիրք էին պլշած նայում, ծովի վրա էին շրջում, ոմանք էլ ասում էին՝ թե երկնքով պիտի թռչի գա և մեզ համար լույս ծագեցնի: Ամեն մարդ նրան մեծ մեկն էր համարում և աստճուց ուղարկված, որովհետև նրան էին վերադրում Հովել մարգարեի խոսքը*, որ ասում է. «Վերջին օրերում, ասում է աստված, բոլոր մարմինները իմ հոգուց կլցնեմ, և կմարգարեանան ձեր ուստերը, ձեր դուստրերը. ձեր երիտասարդները տեսիլքներ կտեսնեն, իսկ ծերերը երազներով կերազեն և այլն»:

Նաև այս տարվա հունիս ամսի երկուսին արեգակը խավարեց. սա այն բնական խավարումն էր, որ պատահում է լուսնի ծնունդին. իսկ հրեաների խարված ազգը այդ հա-

մարեց նշան. ասում էին. «Տեսեք, որ երկնքից նույնպես նշան երևաց սրա համար»: Միմյանց հացկերույթի ու կռուների էին հրավիրում: Ոմանք էլ ասում էին, թե հրեաները գենքեր ու սրեր են պատրաստի պահում, որ մեսիալի նշնելուն պես այլ ազգերին բնաջնջեն:

Երբ շատ տարածվեց սուտ Քրիստոս Սաբեթայի համբավը և հասավ քրիստոնյաների թագավորության աշխարհը, և որովհետև քրիստոնյաները իրենց երկրներում ապրող հրեաների հետ կովելով վիճում էին, ուստի իրենց միջև գրազ բռնեցին: Քրիստոնյաները ասում էին, թե Սաբեթայի արարքները ճշմարտացի լինեն, մենք բոլորս հրեության կրնդունենք, իսկ հրեաները ասում էին, եթե Սաբեթայի խոսքերը սուտ լինեն, մեզ բոլորիս ազգովին սրով բնաջնջեք: Այս բանը ուխտելով պայմանավորվեցին և ժամանակ նշանակեցին, դատական ատյանում կանգնելով գրեցին, վճռեցին, դատավորների ու իշխանների կնիքով կնքեցին և սպասում էին պայմանավորվածությունը: Սակայն լեհերի երկրում հրեաներից շատերին կոտորեցին. սրանցից շատերը փախան և գնացին այլ երկիր, ոմանք էլ՝ եկան Նույն իր՝ Սաբեթայի մոտ: Սույն օրերում լեհերի երկրում գտնվում էր մի հրեա, որ խախտում էր. սա Սաբեթայի համբավը լսում է ու չի հավատում, այլ ասում է. «Ես գնում եմ այդ Սաբեթայի մոտ և նրա բոլոր հանգամանքներին ստույգ կերպով հասու լինեմ»: Սա գալիս, մտնում է Սաբեթայի մոտ. շատ օրեր դիտեց, տեսավ, խոսեց նրա հետ և հավաստի կերպով վերահասու եղավ, որ նրա խոսքերը կեղծիք էին, ուստի համարձակ ասում է. «Ինչու՞ մեր տառապած ու խեղճ ազգը մոլորեցրիք և քեզ «Ինչու՞ մեր տառապած ու խեղճ ազգը մոլորեցրիք և քեզ Քրիստոս ու մեսիա հռչակեցիք. դու երկնքից կամ երկրից ի՞նչ հրաշք ցույց տվիր, փրկության ի՞նչ գործ արիր, որ մեր օրենքների խոսքերը վկայում են, և ի՞նչ հրաշք արիր քո ծնունդի ու սնունդների մեջ, ահա քո ծնողները և քո սնունդը, ահա քո եղբայրները, ահա քո կինը և որդիները, որոնց զարդերով լցրել ես, ահա քո կյանքը և վարքը հավասար են մերին, ուսում ես, խմում, վախենում, բռնվում, ինչպես որ իլաք փախչելու և բռնվեցիր, բանտ մտար և կապանքներով արգելափակվեցիր»: Եվ շատ ուրիշ խոսքերով Սաբեթային

* Յովել Բ 28.

կշտամբեց, Իսկ Սարեթայի հետևողները ըմբոստանալով
ընդդիմացան այն խախտմին և վրան հարձակվեցին հայ-
հոյանքներով ու անարգանքներով. կամենում էին ոտքերի
տակ գցել: Շատ ու շատ վիրավորական խոսքեր ասացին
Նրան և իրենց ժողովի կողմից նզովեցին ու դուրս արին:
Իսկ այն խախամը կսկծալի սրտով, զայրացած հրեաների
կուրուսթյան ու արարքների վրա, այդպիսի սաստիկ զայ-
րագին սրտով դնաց մահամեղականների մոտ, ուրացավ
հրեուսթունը և դավանությամբ դարձավ մահամեղական: Սաս-
տիկ զայրագին սրտով ամբաստանում է հրեաներին ու Սա-
րեթային, իսկ մահամեղական իշխանները նրա ամբաս-
տանությունը հայտնում են տեղապահին [գայմագամին]: Այս
ամբաստանության վրա, որ խախամը արեց հրեաների ու
Սարեթայի մասին, առավել ավելի մեծ ամբաստանություն
Սարեթայի վերաբերյալ արեց Մահմուդ անունով մի շեյխ,
որ բնակվում էր Բողազում: Սա մշտապես տեսնում էր
հրեաների համարձակությունը, որ պնդում գալիս էին Սա-
րեթայի մոտ, նաև այն փառքն ու պատիվը, որ կանան-
ցով ու սիրելիներով հանգիստ ապրում էր: Նա դնաց զաղիի
մոտ և հայտնեց Սարեթայի հանգամանքները և մեծամեծ
տաճիկներ բերեց, վկա կանգնեցրեց, ամբաստանագիր և
խնդրագիր առավ զաղիից, և այն խնդրագիրը, նաև տաճիկնե-
րից մարդիկ առավ, դնաց Ատրանա քաղաքը, քանզի այն օրե-
րին թագավորն ու տեղապահը (գայմագամը) և այլ ամեն
մեծամեծներ այնտեղ էին: Մտնում է տեղապահի (գայմա-
գամի) մոտ և ամբաստանում Սարեթային ու հրեաներին.
ուստի տեղապահը (գայմագամը) զայրանում է և հրամա-
յում սենեկապետին՝ գնալ և այնտեղ Բողազում նրան կա-
խել: Եվ քանի որ այլ մարդիկ տեղապահին Սարեթայի մո-
տից ուրիշ քաներ էլ հայտնեցին, ուստի կրկնակի ու շտապ
մի այլ դոնապանի է ուղարկում Սարեթայի հետևից, թե՛
չկախել, այլ բերել Ատրանա, որը և կատարեցին այդպես:
Նրան առան, տարան Ատրանա տեղապահի մոտ, իսկ նա
այդ ժամանակ ոչինչ չխոսեց նրա հետ, այլ ուղարկեց ար-
քայի պալատ, որ պահպանեն նրան, մինչև արքան իմանա
և նրա մասին որևէ հրաման արձակի:

Եվ երբ Սարեթայի հանգամանքները հայտնեցին թա-
գավորին, որ սուլթան Իբրահիմի որդի սուլթան Մահմադ
խոնդկարն էր, թագավորը ինքը նստեց դատաստանի: Ատ-
րանում էին նաև զաղիասկյարը, կրոնապետը, տեղապահը
և արքայի բոլոր իշխանները:

Իսկ հեծյալները, ռամիկները բազմության թիվը որ-
շա՞փ էր, ինչքան երկնքի աստղերը և ծովի ավազը. դրանք
հավաքվել էին զվարճանալու: Այնտեղ կանգնեցրին բազ-
մաթիվ զորակահներ՝ աղեղներով, նետերով ու հրացան-
ներով: Կրակ էին բոբբոցել, ճրագներ էին վառել և այլ
պատրաստություններ էին տեսել Սարեթայի տանջանքնե-
րի համար: Ատյանում առաջ բերին մի մարդու, որին կո-
չում էին Հայաթիզադա. այս մարդը նախապես ազգությամբ
ու հավատքով հրեա էր, բայց հետո հրեուսթունը թողել և
ընդունել էր Մահմեդի կրոնը, դարձել էր տաճիկ: Սրան
առաջ բերին, որ դառնա թարգման Սարեթայի ու թագավորի
միջև: Այնտեղ ատյանում Հայաթիզադան ասում է Սարե-
թային. «Տեսնում ես զենքերի ու տանջանքների այս ողջ
պատրաստությունները, այս բոլորը քեզ համար են պատ-
րաստել: Արդ՞ ինչպես է, որ դու համբավ հանիր ու եր-
կիրը դղրդացրիր. նորադույն տանջանքներով ու մահով
քեզ խայտառակելու և սպանելու է արքան, եթե դու որևէ
զորություն և ուժ ունես, հրաշք գործիր, ցույց տուր զո-
րությունդ և փրկիր քեզ ու քո ազգը»: Իսկ Սարեթան ահից
ու երկյուղից այնքան սարսափեց, որ համարյա թե սիր-
տը աբյուն կտրեց, ուստի սկսեց ուրանալ և իր ազգը մե-
ղադրել, թե՛ «Իմ կույր ու մուրթված ազգը այս անպատեհ
անունը իմ մասին հռչակեց, իսկ ես այդ շեմ, ինչ որ նրանք
ասում են, այլ ես մի վերժանող եմ, ամեն զիրք կարգացի
ու վերահասու եղա, որ միայն ձեր մարդարեն է ճշմարիտ
մարդարե և աշխարհ է եկել բոլոր մարդկանց ուղղելու
համար: Ահա այս քսան տարի է, որ ես նրան հետևել եմ և
նրան ընդունել: Այնտեղ ատյանի մեջ ուրացավ հրեու-
սթյան հավատը, և դավանեցրին Մահմեդի հավատը, և այս-
պես թողեց իր հավատը և տաճկացավ: Այդ ժամանակ բո-
լոր ազգերն ու ցեղերը սկսեցին այդ Սարեթային և հրեա-

ների ամբողջ ազգը անարգել ու հայհոյել, նախատել ու թշուրել: Նաև հենց իրենք հրեաները ամաչեցին ու կորազուխ եղան, ամոթից իրենց տներից դուրս չէին գալիս: Իսկ Սաբելման, որ երբեմն պարծենում էր, թե երկինք պետք է ելնի, այժմ իջավ անդունդները: Նա որ Աբրահամով, Իսահակով, Հակոբով, Մովսեսով խրախուսվում էր, այժմ նրանց ուրացավ ու դարձավ Մահմեդի հպատակ: Նա, որ ստում էր, թե ամբողջ աշխարհը կդարձնեմ իմ հավատին, ինքն իր հայրենի ու աստվածատուր հավատը սրացավ, քանի որ նրա միտքը կառավարող սատանան նրան այսպիսի փառքի հասցրեց: Նա, որ սուտ էր համարում ճշմարտապես եկած մեր Քրիստոսին, ինքը խայտառակվեց մեր Քրիստոս-աստծու զորությունը: Եվ Քրիստոսի խոսքը կատարվեց, որ և ասաց, թե՝ «Կզան Քրիստոսներ ու սուտ մարգարեներ»: Եվ ահավասիկ տեսանք մեր ժամանակ, և փառավորվեց մեր առաջին Հիսուս Քրիստոսի անունը իր շնորհներով ու զորություններով, ուստի նրա անունը թող օրհնվի ու փառավորվի ամեն ժամանակ հավիտյան հավիտենից. ամեն:

1116 (1667) թվի նոյեմբերի 14-ին շորեքշաբթի ժամը իննին Երզնկա քաղաքում երկրաշարժ եղավ: Նախապես խոր անդունդներից դղրոցի ձայն լսվեց, ապա հանկարծակի ակնթարթում երկրաշարժ եղավ: Բազմաթիվ շինվածքներ, տներ, մզկիթներ, եկեղեցիներ, բաղնիքներ, իջևանատներ, քաղաքի պարիսպը և այլ կառույցներ փլվեցին, ու շատ մարդիկ սպանեցին. սրանց որբանությունը միայն աստված գիտի:

1117 (1668) թվի հունվար ամսի 4-ին սաստիկ ահավոց երկրաշարժ եղավ Ատրպատականի բոլոր սահմաններում առավոտյան մինչ հարցի ժամն էինք ասում* եղավ թրեդոցուն և սրանից հետո տեղի ունեցավ երկրաշարժը: Երկրաշարժը այնչափ ուժեղ էր, որ մինչև անգամ եկեղեցում կախված բոլոր կանթեղներն ու ջահերը տարուբերվելով գնում-գալիս էին, իսկ մարդկանց, որ հենվել կանգնել էին պատերին կպած, հետո շարտեց: Այս երկրաշարժը եղավ Աբաբաբիլ քաղաքում, Թավրիզում, Երևանում, Տիֆլիսում,

Փանձակում, Շամախիում, Գամուրղափունում և սրանց բոլոր սահմաններում: Այս երկրաշարժից Հաղպատի վանքի եկեղեցու ներսի երեսից որմնաքարերը թափվեցին, և եկեղեցին, որի անունն էր Տեսեանց՝ շինված Հաղպատի ու Սանահնի միջև, ամբողջովին փլվեց, իսկ Տիֆլիս քաղաքում նոր շինված մի եկեղեցու պատը և Վերին բերդի պատը խախտվեցին: Շամախի քաղաքը ամբողջովին հիմն ի վեր տապալվեց այնպես, որ ոչ մի շինվածք չմնաց, իսկ անթիվ մարդիկ մեռան, որոնց թիվը միայն Աստված գիտի:

Գ Լ Ո Ի Ե Մ Ը

Օրհնություն, գոհություն, բարեբարություն իմ տեր ու փրկիչ Հիսուս Քրիստոսին, որ ինձ՝ նվաստիս, տկարիս, անարժանիս, խոսքի սպասավոր Առաքել կոչվածիս, տվեց կարողություն դարիս վերջում և կյանքիս երեկոյան սկզբից նորովի սկսել, անել, շարահյուսել նոր առաջ բերված այս գիրքը, որ կոչվում է Պատմագիրք. նաև հասնել սրա ավարտին, որ եղավ: Ուստի երեսս գետին դրած արտասովալից աղաչանքով զոչում եմ նրան և ասում. «Գոհանում եմ քեզից, իմ Հիսուս Քրիստոս աստված և օրհնում եմ քեզ ու բո սուրբ ծնողին, բո լուսակառույց տաճարը և բո բնակարան Սուրբ էջմիածինը: Տեր իմ և աստված իմ Հիսուս Քրիստոս, բռն ու բոյններին են ամեն պարզեանշան բարիքները, դու ես խոսքը և տվողը, խոսքի գիրքը և գրողը, գրի ամեն պատրաստությունը: Դու օրհնյալ լինես հորդ ստեղծողի ու հոգուդ զարդարողի հետ բոլոր արարածների կողմից ամբողջ հավիտենականություն մեջ. ամեն:

Սրանից հետո իմ խոսքը կդարձնեմ ու կհայտարարեմ հարգարժան ու վեհ մարդկանց տքնաշան փրկիստփայական գիտություններ հաղեցած իմաստասերներին և գործնական առաքիլություններ մաքրապարզված սրբերին, սուրբ ավագանի ծնունդներին՝ Քրիստոսին հավատացողներին թող ծախուցված լինի: Նաև մեծ աղերսանքով խնդրում եմ, որ պեսգի մեղադրանքով շարհամարհվեմ իբրև ուժից վեր բանձեռնարկածի, որպես մտահաճ հանդգնածի, իմ քաջություն վրա հուսալով համարձակ եղածի և այս գործին, որ մշտա-

* «Օրհնյալ ես, Աստուած հարցն մերոց» շարականք:

պէս վեր է, քան մեր կարողութիւնը, ձեռնամուխ եղածիւ Այլ [այս գործը ձեռնարկել ենք] երիցս երջանիկ և քրիստոսահապատակ հայրապետի և Սուրբ աթոռ էջմիածնի հաջորդ տեր Փիլիպոսի՝ ամենայն հայոց կաթողիկոսի, ստիպողական հրամանով, որովհետև ինքը՝ այս բազմահանձար հայրապետ տեր Փիլիպոսը, բոլոր իմաստուն մարդիկ, առաքինիները, ավելի ծերերը, որոնք ապրել են ավելի առաջ և սրա [կաթողիկոսի] ժամանակ, որոնք և տեսել էին պատմութեան այս գրքում նկարագրված բոլոր իրողութիւնները, անցուդարձերը, այսինքն՝ հայոց աշխարհի ավերվելը և գերվելը, քրիստոնյաների վատնումը, նաև եկեղեցական կարգերի նվազելն ու պակասելը, բարձրագահ ու քրիստոնեական աթոռ Սուրբ էջմիածնի անշքանալն ու ավերը, նաև սրանց նորոգումը, այլև պատմական ուրիշ նյութեր, որոնք նկարագրվեցին այս շարադրանքիս մեջ, որոնց համար այն մարդիկ բոլորը մեծ ցանկութեամբ, էլ ավելի մեծ իղձով բաղձում էին գրքով հիշատակագրել սերունդներին ի գիտութիւն, որ յուրաքանչյուրը իր դարում կամ ժամանակում հանդես կգա: Նաև մշտական խնդրողական խոսքով Փիլիպոս կաթողիկոսից խնդրում էին, որպէսզի սա՛որնէ մեկին հրամայի կատարել պատմագրութեան այս ձեռնարկումը: Մանավանդ որ ինքը՝ կաթողիկոս Փիլիպոսը շատ ավելի էր մտահոգված այսպիսի գործերով, քան բոլորը, ուստի երբեմն սրան, երբեմն նրան հարկադրում էր, որ գլուխ բերեն այս գործը, և իր աշակերտներից շատերին հարկադրեց, որ գուցե որնէ մեկը հանձն առնի և գլուխ բերի: Իսկ նրանք՝ տեղյակ լինելով, գիտեին այն բազմազան շարշարանքները, որ կան այս գործի մեջ, ուստի իրենց այս տաժանքին շնթարկեցին, այլ իրենցից հեռացնելով ճողոպրեցին: Իսկ ես՝ նվաստս՝ շնչինս, ամեն բանում առաջալ կոչվածս, խոսքի սպասավոր, բնականաբարով Թավրիզ քաղաքից ու սույն տեր Փիլիպոս կաթողիկոսի աշակերտներից և Սուրբ էջմիածնի լուսակառույց աթոռի միաբանութիւնից լինելով, այստեղ սնվելով ու վարժվելով, ծերութեան հասակի հասնելով, նաև ակնկալում եմ սրա հովանու տակ հողում ամփոփվել, որ թերևս սրանում խորհրդավոր կատարումներին հաղորդակից լինեմ: Ուստի բոլորից

հետո հայրապետի ահեղ հրամանը ինձ տկարիս հասավ իբրև անարժան մեկի, իբրև մի տկար կենդանի, որ բռնվում է ցանցերով ու որոգայթներով և չի կարողանում ազատվել շամարեք, որ սրա նմանութեամբ խղճալիս բռնվեց այս գործի ցանցում: Եվ այս այսքան պատճառների մասին:

Առաջին՝ ինչպէս վերեւում ցույց տրվեց, շարադրացահայրապետի հրամանից ազատվել, թեպետ, բազմաթիվ միջնորդներով հայտարարեցի ու խոստովանեցի իմ տկարութիւնը, որ անկարող եմ սրա իրագործման համար:

Երկրորդ՝ ոչ միայն Փիլիպոս կաթողիկոսի հարկադրանքից, այլև մանավանդ մեծահոգ ու երկայնամիտ հայրապետ տեր Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի հարկադրանքից, որ Փիլիպոս կաթողիկոսից հետո հայրապետական գահը՝ Սուրբ էջմիածնի աթոռը ստանձնեց: Սա ևս ինձ հարկադրեց այս գործի համար, որ լքել էի, քանզի շափազանց շատ հոգնեցուցիչ, աշխատատար ու լուրջ թվաց ինձ այս գործը, ուստի հեռացա ու հրաժարվեցի սրա գրելուց, և այս ձեռնարկս որոշ ժամանակ մնաց խափանված: Ապա այնուհետև մեր սրբազան հայրապետ Հակոբ կաթողիկոսը վերստին հիշեցրեց այս գործը և ինձ իր առջև կանչեց և բազմաձև խոսքերով երկրորդ անգամ ինձ մղեց այս գործի մեջ: Այնուհետև ծանր համբերատար շարշարանքներով հաղիվ այսքան պատմութիւն հավաքեցի ու գրեցի: Երրորդ՝ նաև ևս ինքս տեսա Հայաստան աշխարհի ավերները, մեր ազգի պակասելը և մահմեդականների շարութիւնը. կսկծալի մորմոքումով այրվում էր իմ սիրտը, ուստի համաձայնվեցի սրանց արձանագրութիւնը կատարել: Զորրորդ՝ մանավանդ տիրոջ հանդեպ ունեցած բարի հիշատակի համար, որովհետև նայելով իմ հանցանքների շատութեանը խղճմբտանքիս մեղադրութեանը և անձիս մեջ բնավ չունենալով բարի նշույլի մասնիկ, հուսալով մարդասեր աստուծու առատ ողորմութեան վրա, որ մի բաժակ ջրի վարձը անտեսա շարեց, հոգացի սրա մասին և իբրև այրու լուման ցեցի տիրոջ գանձանակը*, որ թերևս սրանով գտնեմ ներումն իմ՝ աններելի հանցանքների համար, քանի որ տիրոջական սքաւկները՝ տեղաշարժի տղմալի ցնխի մեջ: Նաև մեծ

* Տես Մատ. Իմ 27, Գով. ԺԹ 23

հույսով ապավինած ձեր ընդունելի բարեխոսական մաղթանքներին, որպեսզի սրտանց խնդրենք, անպակաս տիրոջից, ինձ՝ անարժանիս պարզելի իր ողորմությունն ու իմ մեղքերի թողություն որպես Դազարի բույրերի մաղթանքներով նրան հարություն շնորհեց: Որովհետև ես այս դիտավորությամբ և հույսով հանձն առա այսպիսի բազմաշխատ, բազմաշատ ու տաժանելի գործ և երկար ժամանակ սրանով զբաղվելով, շատ երկրներ ու աշխարհներ շրջապայելով պատմական գրույցների համար ոչ միայն քրիստոնեյաններին, այլև ուրիշ աղբյուրից հարցնելով և բոլորի ասածները գրելով: Եվ խոսքի ճշտությունը գտնելու համար, եղավ որ մի պատմությունը տասն անգամ և էլ ավելի կրկնելով գրեցի. և ինը տարի սրանով զբաղվեցի, ունեցվածքս ծախեցի, հագիվ այսքան պատմություն մի տեղ հավաքեցի ու գրեցի, իսկ ինձ բնավ ոչ ոք չօրհնեց, այլ միայն տեր իմ Քրիստոսն էր օգնական: Նաև երբ Փիլիպոս կաթողիկոսը ինձ հրամայեց գրել այս գործը, և ես սկսեցի գրել, մեր 1100 [1651] թվականն էր. շոքս տարի աշխատեցի և պատմություն մի մասը հավաքեցի, իսկ Փիլիպոս կաթողիկոսի վախճանից հետո լքելով թողի և հեռացա սրանից՝ սրա մեջ տեսնելով բազում զտանգ և մտատանջ շարձարանք, որ իմ կարողությունից վեր, ծանր թվաց իմ տկարությունը, և այս գործը խափանված մնաց, մինչև որ վրա հասավ մեր 1107 [1658], թվականը. այնտեղևե Լակոբ կաթողիկոսի հրամանով կրկին մտանք այս գործի մեջ և սկսեցինք գրել մինչև հասանք մեր 1111 [1662] թվականը, և այս ժամանակ մենք դադար տալիսք այս ձեռնարկին: Նաև թիպետ երկրներ շրջապայելիս շատ տեղերում մասնակի կերպով գրվեց սրանից. սակայն սրա սկզբը գրվեց բարձրագույն աթոռ Մուրբ էջ միաձայնում, աջագետը ևս եղավ նույն տեղում շնորհիվ այս սուրբ և աստվածաբնակ տաճարի: Այս գիրքը ընդգրկում է վախճան տարվա պատմություն, և ինչ էլ որ գտնվեց և նետվեց լուսաշափոխներին*, եղավ Քրիստոսի շնորհիվ: Իսկ

* Ղուկասու ՔԱ 2-ում ստված է. «Ես եւ զկին ոմն այրի աղբատ, որ արի անդր երկուս լուսաշափոխներսոց այս տեսնելով ասում է. «Այրին այն աղբատ անի արի, քան զամենեկին»:

թերին ու թյուրը և այլ այսպիսիները եղան իմ տգիտությունից ու տկարությունից, ուստի աղաչանքով՝ ձեզանից ներումն եմ խնդրում: Նաև այս գործը ինձ հանդիպեց ոչ առույգ երիտասարդության տարիներում, այլ ողորմելի ծերության ժամանակ. որովհետև ծեր էի և մարմնով խիստ ցավագար, աչքերս լույսից պակասել էին, իսկ՝ ձեռքս թուլացած, դողում էր: Այսպես էլ ամեն այլ կարողություններով տկարացած՝ մահվան բոլոր կանչերը եկել աչքերիս դեմ կանգնել էին, իսկ դեհենի սպառնալիքները ավելի ու ավելի շատանում էին ինձ վրա: Ուստի՝ իմ դեմքը ձեր ռաբերի տակ եմ դրել և Քրիստոսի սերը ձեզ մոտ իբրև բարեխոս եմ բերել, որ ականջ չդնելով անտես շառնեք իմ աղաչանքները, այլ հայցում, մաղթում, խնդրում ու պաղատում եմ մեծ պաղատանքով, որ շնորհեք մեզ «աստված ողորմին» և «Քրիստոս որդին», «Լալրը մեր, որ յերկինս» նույն կարգով: Եթե նստած եք, թե ոտքի վրա կանգնած խնդրում եմ շղանդաղել ու ծուլանալ սրանք ասելով՝ ինչ-որ մեղ շնորհում եք, նաև՝ ձեզ մասնաբաժին լինի ահեղ օրը արդար դատավոր Հիսուս փրկչի առջև, որին պատիվ, երկրպագություն և անվերջ փառաբանություն բոլոր արարածներից՝ իմացողներից՝ ու զգացողներից անլուծի բաշականչությամբ ամեն:

ԳՐԲԻՍ ՀԻՇՍԱԿԱՐԱՆԸ

Փառք անրաժանելի ու միասնական սուրբ երրորդությունը՝ հորը, որդուն ու սուրբ հոգուն հավիտյան. ամենև Սա ուժ տվեց անարժան, մեղքերով լցված, անպիտան գրիչ Աթանաս դպրիս ավարտելու այս գիրքը, որ վերջին ժամանակներում շարադրվել է Առաքել վարդապետի կողմից, որ այժմ կոչվում է Առաքել պատմագիր: Մեր 1112 (1663) թվականին տեր Լակոբ սրբազան հայրապետի, որ Շոշ կոչված և այժմ Սպահան ասվող թագավորանիստ քաղաքից էր, ծագումով չուղայեցի, հայրապետության, պարսից Շահ-

Աբաս Երկրորդի թագավորության, Ամիրգունա խանի որդի Աբասղուլի խանին, այս տարի Նաջաֆղուլի խանին տապալեցին և Երևանը տվին Աբասղուլի խանին,— Աբարատյան իշխանության ժամանակ գրվեց այս գիրքը Աբարատյան երկրում, Կարբի գյուղաքաղաքում Գարբիև և Միրայել հրեշտակապետներին* և այստեղ գտնվող բոլոր սրբերի հովանու ներքո: Օհանավանքի մեծափառ միաբանության՝ Սուրբ Կաբապետի, Սուրբ Ստեփանոսի աջի և Սուրբ Աստվածածնի վարչամակի թեմում ու վիճակում սուրբ միաբանությանս հեղահոգի, խոհեմ, հնազանդ Հովհաննես արքեպիսկոպոսի առաջնորդությամբ, որ բնիկ Կարբի գյուղաքաղաքից էր. թող տեր աստված իր միաբանությունը հաստատ և իրեն անփորձ պահի մինչև խորին ծերությունը. ամեն:

Փառք ամենասուրբ երրորդության՝ հորը, որդուն և սուրբ հոգուն. ամեն:

Մեր տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով ու ողորմությամբ գրվեց այս գիրքը, որ կոչվում է պատմագիրք, հայոց 1115 (1666) մեծ թվականին Երևան մայրաքաղաքում, Կաթողիկե կոչված սուրբ եկեղեցու գավթում՝ հոգացողությամբ, ծախքով ու արդյունքով Առաքել վարդապետի, որ նույն ինքը այս պատմագրքի գրողն ու ստեղծողն է, թավրիղեցի Առաքել վարդապետը, որ օրինակը բազմացնելու համար գրել տվեց այս գիրքը. այս արդեն հինգերորդ օրինակն է, որ իր՝ Առաքել վարդապետի ձեռագիր օրինակից ընդօրինակվեց. նա մեծ ջանքով և ծանր հոգացողությամբ ծախում է ինչքերը և գրիչների ձեռքով գրել է ապիս, առաջին՝ օրինակները շատացնելու, և երկրորդ՝ տիրոջ հիշատակի համար:

Արդ՝ ով հանդիպի սրան, կարգալիս կամ ընդօրինակելիս, կամ զվարճանալիս, սրտանց հիշեցեք Քրիստոսով վերահիշալ Առաքել վարդապետին, որ զանազան և պեսպես ձեներով ծանր շարժարանքներով կրեց այս պատմագրքի համար և դեռևս նույն շարժարանքների մեջ է գտնվում: Ուտի աղաչում ենք՝ իրեն յուրայինների հետ հիշել տիրոջով և նրանց, որոնց սույն ձեռնարկի վրա աշխատանք

ունեն: Սրանց հետ խնդրում եմ Քրիստոսով հիշել ինձ՝ շնչին գրիչ Ավետիս երեցիս, որ Առաքել վարդապետի հրամանով այս գիրքը գրեցի ընդհանուրի օգտի համար: Արդ՝ ովքեր մեզ կհիշեք Քրիստոսով, բաշխեք մեզ «աստվածողորմի» և «Քրիստոս որդի» և «Հայր մեր, որ 'երկնքում ես» մեկի փոխարեն հաղարպատիկ կառնեք հավիտյան օրհնված 'մեր Քրիստոս աստծուց. ամեն: «Հայր մեր, որ երկնքում ես, սուրբ լինի (քո) անունը»:

* Եկեղեցի է:

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր ՈՒ Ք Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Դամուրդափունը այժմյան Գերբենզն է (զամուր զափու՝ երկաթյա գուռ)։ (էջ 18)։
2. Խուղաֆրինը կամ Խուղափրինը (աստծու ստեղծած) կամուրջի անուն էր Արաքս գետի վրա Պարսկաստանի սահմանում։ (էջ 18)։
3. Աղչոց վանք (Աղչկուց վանք) Գեղարդից յոթ կմ հարավ արևելք վանքային համալիր է, այս վանքի մաս եղել է Նույնանուն գյուղը, որտեղից Մելքիսեթ շարահուշ կաթողիկոսն էր։ (էջ 18)։
4. Աբխուզումը Իտրայիի Դավիթ թագավորի որդին էր. Դավթի մեկ այլ որդին (ուրիշ կնոջից) բռնաբարել էր Աբխուզումի քրոջը։ Աբխուզոմը սպանում է բռնաբարիչին և փախչում։ Երեք տարի հետո Շենրում է ստանում Դավթի կողմից և վերագառնում է նրուսպղեմ ու հաշտվում Դավթի հետ։ Դավթի նկատմամբ երախտամոռ է գտնվում, սկսում է ժողովրդասեր ձևանալ, սիրաշահել մարդկանց և փրկել թագավոր հայտարարելու ի վերջո Դավթի կողմից պարտվեց և սպանվեց (Բ թագ. ժԸ 33)։ Դավթի ժեջին ակնարկում էր նրա այդ կեղծավորությունը (էջ 19)։
5. Ամիզը այժմյան Գիարբեքիրն է Քուրբեայում։ (էջ 20)։
6. Հավուց քաղք գտնվում է Գառնիից դեպի արևելք Ազատ գետի ձախ ափին բարձունքի վրա։ Այժմ գրեթե ավերակ է։ Հայաստանի նշանավոր վանքերից է, մշակույթի և կրոնական կենտրոն էր։ Կառուցվել է 1013 թվականին և 1679 թվականին ավերվել երկրաշարժից։ Վանքերի համալիր է (էջ 23)։
7. Իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմուտքում գտնվող հնազույն Մարաստան (Մեդիա) երկիրը, որի բնակիչները կոչվել են մարեր։ (էջ 25)։
8. Ոսկանապատ գյուղը գտնվում է Կախիին Գարդման գավառում. հիմնված է Մհակ սարի ստորոտում Գանձակ գետակի ձախ ափին։ Գարդմանը համապատասխանում է ներկայիս Աղբրեղանի ՍՍՀ Ղազախի, Քովուզի հյուսիսային և Շամբորի շրջանի արևմտյան մասերին։ (էջ 25)։
9. Հաքեբ գյուղը գտնվում է Մեծ Հայքի Արցախ նահանգի Հաթերք գավառում։ Հիմնադրվել է Տրտու (Բարթառ) գետի ձախ ափին։ Այժմյան Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղն է։ (էջ 25)։
10. Խաչենը Մեծ Հայքի Արցախ նահանգի գավառներից է (այժմյան Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում)։ (էջ 25)։

11. Դիզակը Արցախ նահանգի գավառներից է։ Սահմաններն էին հարավից՝ Արարքը, արևելքից՝ Մուղանի դաշտը, հյուսիսից՝ Քյուրդուան գետը, արևմուտքից՝ Քիրս լեռը։ (էջ 25)։
12. Քուլիզ Մովսեսի գյուղի հին անունն է, որ գտնվում է Մեծ Հայքի Արցախ նահանգի Վարանդա գավառում։ (էջ 25)։
13. Բրիտանի մասին ռեմանյաններից մեջնա։ (էջ 25)։
14. Վերին Ղակամը գտնվում է Մեծ Հայքի Արցախ նահանգի Կոդթ գավառում, որ հետագայում բաժանվեց երկու մասի։ Շամբորի և Ղակամ գավառների։ Մեծից հաստան այս վերին Ղակամի կամ ուղղակի Ղակամի գյուղերից է։ (էջ 25)։
15. Քշարաղ, ավելի ճիշտ Քաշարաղ նոր ժամանակների անվանումն է հին Աղանեղ գավառի, որ ըստ Օրբելյանի կոչվել է նաև Խոտոտարբոլ Գանվել է Մեծ Հայքի Սյունյաց նահանգում։ Համապատասխանում է այժմյան Լալինի շրջանին։ Մեծ Հայքում երկու գյուղ կա Խանաթախ անունով. մեկը Արցախի (Ղարաբաղ) Խաչեն գավառում, իսկ մյուսը, որ հիշատակում է պատմիչը, Քաշարաղում է՝ Գորիսի մոտ։ (էջ 25)։
16. Ղըբըբալ այստեղ շիա մահմեդական պարսիկ է նշանակում, բառացի իմաստն է կարմրապուրի։ (էջ 30)։
17. Խանդլար կամ Խանդլար Քուրբական սուլթանների ամենապատվավոր տիրույթն էր, որ ունի միահեծան թագավոր, արքա նշանակույթունը։ Խանդլարը իրավունք ուներ օրական տասներորս մարդ սպանելու։ (էջ 31)։
18. Կարին քաղաքը գտնվում է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգում Արաքս և Եփրատ գետերի ակունքների մոտ։ Այժմ Քուրբեայի էրզրումի սանջակի վարչական կենտրոնն է. կոչվել է նաև Թեոդոսուպոլիս Քուրբերը անվանում են էրզրում։ (էջ 35)։
19. Բասենը Մեծ Հայքի Արարատյան նահանգի գավառներից է։ Գառնվում է Արարտի վերին հոսանքի շրջանում։ Մի ժամանակ նրա տարածքը ընդգրկել է նաև Վառանդ գավառը (Կարնի շրջանը)։ (էջ 35)։
20. Խնուս քաղաքը գտնվում է Բարձր Հայքի (Կարնիի) նահանգում։ Այժմ էրզրումի վիլայեթի Խնուս գավառի վարչական կենտրոնն է։ (էջ 35)։
21. Առձկն քաղաքը գտնվում է Մեծ Հայքի Տուրքերան նահանգի Բղետնիք գավառում՝ Վանա լճի հյուսիսային ափին։ (էջ 36)։
22. Արենշը գտնվում է Մեծ Հայքի Տուրքերան նահանգի Աղխովիտ գավառում՝ Վանա լճի հյուսիսային ափին (էջ 36)։
23. Բերկի քաղաքը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Անիերան գավառում է գտնվում, Վան քաղաքից 77 կմ հյուսիս արևելք։ 1915 թվականից առաջ Բերկին ուներ 2100 հայ բնակիչ (3100-ից)։ (էջ 36)։
24. Ջալալիներ Քուրբ սպսոսամբներ։ Սուլթանի դեմ ապստամբություն սկսեցին Քուրբ (Նվղոկիա) քաղաքի մոտերքը 1519 թվականին։ Ջալալիներ են կոչվում իրենց առաջնորդ շեյխ Ջալալին անունով։ Հետագայում Քուրբերը բուլբ տեսակի ապստամբությունները այդպես էին կոչում։ (էջ 39)։

25. Ի մասնագիշխման մասնագիտականների սրբավայրերից, այստեղ է թաղված Ալիի սերունդներից ութերորդ Իմամ Ռիզան: Սրբավայրը Մեշեդում է, որ Իրանի Խորասան նահանգի գլխավոր քաղաքն է: (էջ 39):

26. Մաճաղկեաբը Մեծ Հայքի Տուրքիերան նահանգի Ապահունիք գավառում գյուղ է: Սկզբնապես այնտեղ եղել է քաղաք, որ ըստ ավանդության հիմնադրել է Հայկ նահապետի Մանավազը: (էջ 40):

27. Ալաշկերտը Մեծ Հայքի Այրարատյան նահանգի Բագրևանդ գավառի գլխավոր քաղաքն էր: Հիմնադրել է հայոց Վաղարշ առաջին թագավորը: Այժմ Քուրբիայում է: Հին Վաղարշակերտ քաղաքն է, որ Քուրբական աղավաղումով է դարձել Ալաշկերտ: Բագրևանդ գավառի հյուսիսային սահմանը 1915 թվականից առաջ հարում էր սուսական հարավային սահմանին: (էջ 40):

28. Մակու քաղաքը գտնվում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արտաշ գավառում՝ Փոքր Մասիսից հարավ: Նախապես կոչվել է Շավարշան: (էջ 40):

29. Կաղզվանը Արևմտյան Հայաստանի քաղաքներից է, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Գարեղյանք գավառում, Կարսից հարավ, Արաքսի մոտերքը: (էջ 40):

30. Շիրակավանը գտնվում է Կարսից 40 կմ հյուսիս՝ արևմուտք, այժմյան Բաշլեզորայում գյուղի տեղում: Հետադարձում կոչվել է Երազավորս: (էջ 41):

31. Երվանդակերտ քաղաքը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Երասխանոք գավառում՝ Արաքս և Ախուրյանի գետերի խառնարանին մոտիկ: Հիմնադրել է Երվանդ վերջինը մ.թ.ա. 3-րդ դարի վերջում: (էջ 41):

32. Նավասարդը հայոց առաջին ամիսն էր, անշարժ ստամբով նավասարդի մեջ համընկնում էր օգոստոսի 11-ին: (էջ 43):

33. Աղբաղայան գտնվում է Երվանդակերտի տեղում (տես. ծան. 31):

34. Կարսը Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վանանդ գավառի գլխավոր քաղաքն էր: Գտնվում է Ախուրյանի վտակ Կարս գետի ափին: 1915 թվականից առաջ ուներ ավելի քան 10 հազար հայ բնակիչ: (էջ 44):

35. Մովսեսը հրեաների այն մարդարեն է, որ նրանց եղիպոտոսից առաջնորդեց դեպի Իսրայել: Ըստ ավանդության սա է գրել Աստվածաշնչի հեղափոխությանը (առաջին հինգ գրքեր): (էջ 45):

36. Հնաուն հաջորդեց Մովսեսին. անվանի զորավար էր և առաջնորդ. հազմից քանանացիներին, նրանց կրկիբը բաժանեց Իսրայելի ցեղերի վրա: (էջ 45):

37. Փառավան կղզիպատական հնագույն թագավորների հորքերումն է. դրանցից մեկը իսրայելցիներին քշեց եղիպոտոս իրևն սարովներ: Պատմիչը Եսթ-Աբասին համեմատում է փարավոնի հետ: (էջ 45):

38. Քրիստոսի ծննդից մոտ 540 տարի առաջ իսրայելցիները Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսորի ձեռքով արագրվեցին Բաբելոն: Պատմիչը կրկնակի համեմատություն է անում. պարսիկները բաբելացիներն են, իսկ հայերը՝ իսրայելցիները: (էջ 46):

39. Նաբուգոդոնոսորը ուղեց Երեմիա մարգարեին Բաբելոն տանել, նա շինեց, մնաց Երուսաղեմում իր ժողովրդի մնացորդի հետ և նրանց հետ էլ ստիպված եղիպոտոս գնաց: Երեմիան իբրև մարգարե, խրատում, հույս էր առնում իր ժողովրդին: (էջ 46):

40. Երեմիայի նման եղևիկելը նույնպես իսրայելցիների մարգարեն էր: Նա Նաբուգոդոնոսորի կողմից արագրվեց Բաբելոն, որտեղ խրատում և հուսադրում էր իր տարագրված ժողովրդին: (էջ 46):

41. Չորսարևիկը իսրայելցի էր, ծնվեց Բաբելոնում և դարձավ առաջնորդ և կազմակերպեց ու իսրայելցիներին առաջնորդեց Իսրայել: (էջ 46):

42. Շապուհ Բագրատունու զբոսում ասված է, թե Բյուզանդիայի Մոսրիկ կայսրը երկիրը խաղաղեցրեց այնպես, որ ժողովուրդը առակավոր խոսքով ասում էր, «Ինչպես Մոսրիկի ժամանակ անհոգ նստել է» (տես Պատմություն Շապուհ Բագրատունու, էջմիածին, 1921, էջ 5): Դավրիժեցին այդ է ակնարկում: (էջ 48):

43. Պատմիչը Աստվածաշնչի խոսքը՝ «Ձի կենդանի է բանն Աստուծոյ եւ աղող եւ հատու քան զամենայն սուր երկսայրի եւ անցանէ մինչև ցորշումն շնչոյ եւ ոգոյ եւ յօդից եւ ուղղոյ», բերել է աղավաղված: Այդ խոսքը թարգմանվում է այսպես՝ «Աստուծո խոսքը կենդանի է, և աղղու, և հատու ակիլի, քան բոլոր երկսայր սրերը. այն անցնում է մինչև շնչի, ոգու, հոգերի և ուղղի հասվածները»: (էջ 50):

44. Սարյուտոսը [sapores] Շապուհ կրթորդ պարսկական թագավորն է (309-379), որը կոչվում է նաև Շապուհ երկարակյաց: Թագավորում է 69 տարի: Սա ահավոր թշնամի էր Հայաստանի համար, հալածում էր բրիտանոյաններին, սպանել տալիս հայոց թագավորներին ու կաթողիկոսներին: (էջ 52):

45. Մառերը կամենում են իրենց համար թագավոր ընտրել: Ոչ ոք չի համաձայնում թագավոր լինելու Դիմում են դժնիկ փշին, որ դառնա թագավոր: Դժնիկ փուշը համաձայնվում է և հրամայում է բոլոր ծառերին, որ զան մտեն իր հովանու տակ, այլապես դժնիկից հուր կառաչանա և կոշնչացնի կիբառների եղևնածառերը (Պատ. Թ 15): (էջ 52):

46. Զաբիլյառ ավանը Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վանանդ գավառում (Կարս): Կառուցվել է Արտաշես Ա-ի ժամանակ (մ.թ.ա. 189-160) և Արտաշեսի որդի Զարեհի անունով կոչվել է Զարեհաշատ-Զարիշատ: (էջ 52):

47. Աղբաղը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից մեկն է: Այս գավառով է անցնում Թավրիզ-Վան ճանապարհը: Կենտրոնը Հաղամակերտ քաղաքն էր: (էջ 52):

48. տես ծան. 61:

49. տես ծան. 63:

50. Դավրիժեցին ակնարկում է Աստվածաշնչի Ծալի մարգարեի այս խոսքը. «Ահա (երկրում) հանդիցեն համբարուր եւ անդ դեք կարսուեսցեն եւ յուշկապարիկը բնակեսցեն ի նմա, եւ ողնիք ձագ հանցեն յապարանս նորա (Ծա ԺԳ. 21): (էջ 54):

51. Երեմիան Աստվածաշնչի նշանավոր մարգարեներից է. որը ողբում

է Իսրայիլի ժողովրդի անցյալ ու թշվառ վիճակը: Երեմիայի ողբը Հին կը-տակարանի գրքերից մեկն է: (էջ 54):

52. Խորհնացին բարձր կրթութիւն ստացած օտար երկրներից (Ասորիք, Հունաստան, Եգիպտոս) վերադարձել է Հայաստան, տեսել է, որ ոչ Սահակ Պարթևը կա, ոչ էլ Մեսրոպ Մաշտոցը: Սահակ Պարթևին առաջին անգամ պարսիկները գահընկեց արին, բայց նա կրկին վերադարձավ կաթողիկոսական գահը, բայց այս անգամ փեսան (Սահակը) անդարձ հետացել է: (էջ 54):

53. Տիգրանակեստ, այլ անունով կոչվում է Նիրհերտ, Մարտիրոսոս-լիս, Մուֆարդին, այժմ թուրքերը կոչում են Չարկին կամ Միլվան, հիմնադրել է Տիգրան Մեծը մ.թ.ա. 77 թվին: Ամիրը կապ չուեի Տիգրանակերտի հետ: Ամիրը գտնվում է Միջագետքում և այժմ կոչվում է Դիարբեքիր: (էջ 63):

54. Միջերկրեայ գաւառ ասելով Դավրիժեցին հասկանում է Հայաստանի միջնաշխարհը, որ ընդգրկում է Այրարատը, Տալքը, Այունիքը, Վասպուրականը, Մոկքը, Տուրուբերանը, Մոփքը և Բարձր Հայքը: (էջ 69):

55. Դալար աղախ-հավատարիմ ծառաներից կաղմված զինվորների հրամանատար: Եահր հավատարիմ ծառաները հետագայում դառնում էին շահի թիկնապահական զնդի զինվորներ՝ մի տեսակ նեկեղերներ: (էջ 70):

56. Աշտարակի շրջանի գյուղերից, որ ընկած է Քասախ գետի աջ ափին: Աշտարակից հյուսիս-արևելք երեք կմ-ի վրա: Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արագածոտն գավառում են գտնվում այժմյան Աշտարակ քաղաքը և Կարբի գյուղը: (էջ 72):

57. Օնանվանքը գտնվում է Մեծ Հայքի Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի Նույնանուն գյուղում: (էջ 73):

58. Օշականք Մեծ Հայքի Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի այն գյուղն է, որտեղ թաղված է Մեսրոպ Մաշտոցը: (էջ 74):

59. Գեղարձունիքը Մեծ Հայքի Այունյաց նահանգի շրբորդ գավառն է, որ համապատասխանում է այժմյան Մարտունու և Կամոյի (Քավառի) շրջաններին: (էջ 74):

60. Ապարանի գավառը Մեծ Հայքի Այրարատ նահանգի Նիգ գավառն է, որ տարածվում է Քասախ գետի վերին հոսանքների մասերում: Ընկնում է Արագած և Մաղկունյաց լեռների միջև: (էջ 74):

61. Կոտայքը Մեծ Հայքի Այրարատ նահանգի 16-րդ գավառն է, որ գտնվում է Երևանից արևելք: Հնում Երևանը մտած է եղել Կոտայքի սահմաններում: Գծախառնարար այդ միակ հին շրջանի անունը, որ մնացել էր մինչև վերջերս, այդ էլ փոխվել է Արտվանի շրջանի Կոտայք է կոչվում այժմ Հին Բարձարի, հետագայում՝ Երկավան (Երկավան՝ երկու վանք ունեցող) գյուղը: (էջ 74):

62. Մաղկունյաց ձորը այժմյան Հայաստանի Մաղկաձորն է, որ գտնվում է Հրազդանի շրջանում: Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վարաձունիք գավառի նշանավոր վայրերից է, որ կոչվել է նաև Մաղկոցձոր: Գտնվում է Հրազդան քաղաքից 5 կմ հյուսիս-արևմուտք: (էջ 74):

63. Գառնու ձոր ասելով պատմիչը հասկացել է այժմյան Հայաստա-

նի Գառնի ենթաշրջանը, որ մտնում է նախկին Կոտայքի, այժմյան Արտվանի շրջանի տարածքում: (էջ 74):

64. Ուրծածորը Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ուրծ գավառն է, որ համապատասխանում է այժմյան Արարատի շրջանին, Այրարատյան դաշտի արևելքում Ուրծ լեռներից հարավ: (էջ 74):

55. Կողբը Մեծ Հայքի Այրարատ նահանգի ճակատք գավառում ավան է: Գտնվում է Բարդուղ լեռան հյուսիս-արևելյան ստորոտին, Արարատի աջ ափին: Այստեղ է ծնվել 5-րդ դարի մատենագիր Եզնիկը: (էջ 74):

66. Առնու կամ Եղեմիա ասորիների մայրաքաղաքը Միջագետքում: Ասորիները, արարները, թուրքերը անվանում են Ուրֆա: (էջ 77):

67. Աերատան Փոքր Հայքի հայաբնակ քաղաքներից էր, այժմ կոչվում է Սվազ: (էջ 77):

68. Բուրսան, որ ծանոթ է Բրուսա անունով: Փոքր Ասիայի քաղաքներից է. գտնվում է Բուֆանեխում: (էջ 77):

69. Անկյուրան այժմյան Քուրքիայի մայրաքաղաք Անկարան է: (էջ 77):

70. Առամեկին եփրոպակալան Քուրքիան է, որ ընդգրկում է Քրակիան ու Մակեդոնիան: (էջ 79):

71. Բուղղանք Մոզդախան է: (էջ 79):

72. Կաֆան Դրիմի Թեոդոսիա քաղաքն է. նկարիչ Այվազովսկու ծննդավայրը: (էջ 79):

73. Պենտոք Սև ծովն է: (էջ 79):

74. Աղստն գավառը այժմյան Իջևանը և հարակից շրջաններն են զեպի արևելք: (էջ 85):

75. Մազրա գյուղը գտնվել է այժմյան Վարդենիսի շրջանում, որ կոչվել է Լան Մեծ Մազրա. այժմ անվանվում է Զոգ: (էջ 85):

76. Իսրայիլի թագավոր Հերովդեսը ամուսնացավ իր եղբոր կնոջ հետ: Հովհաննես Մկրտիչ մարգարեն՝ շատ խելոք մի մարդ, հանդիմանում է Հերովդեսին արյունաղդուժյան համար և պահանջում, որ հրաժարվի կնոջից: Հերովդեսի կինը՝ Հերովդիան վրեժով լցվում է Հովհաննես Մկրտչի դեմ, և փոքրիկ աչքից միջոցով թագավորից պահանջում է Հովհաննես Մկրտչի զոխը սկուտեղի վրա: Ե՛վ թագավորը և՛ զահրճները հարկադրված կարում են մարգարեի զոխը, ուստի զահրճը լաց է լինում: Դավրիժեցին Եահր-Արարան համեմատում է Հերովդեսի, իսկ իշխանին զահհի հետ (Մատթ. ԺԳ 1-12, Մարկ. 2 14-29):

Իսկ կնոջ շարժումը անպատիժ չի մնում: մինուճար պարուհի՝ դուստրը օտուտյցի վրա պարհիլա՝ սառույցը կտրվում է, և աչքից մինչև պարանոցը սուզվում է ջուրը: Սառույցը պաշանոցի մոտ սեղմվում է և աղչկա զոխը հասում: Մինուճին սկուտեղի վրա աղչկա հատված գլուխը ուղարկում են մորը: (էջ 121):

77. Յրաեկատն ասելով Դավրիժեցին հասկանում է կաթողիկ Եվրոպայի երկրները: (էջ 122):

78. Կարենիոր Գյումուշ (Արածթ) գյուղի հին անունն է: Գտնվում է

Հրազդանի շրջանում Հրազդան գետի ափին, շրջկենտրոնից 16կմ դեպի հարավ-արևմուտք Առաքելոց վանքը գտնվում է այս գյուղում, որ կոչվել է նաև Կարենավանք. այժմ ավերակ է (էջ 146):

79. Այս երկու վանքերը գտնվում են էջմիածնում և հայ ճարտարապետության նշանավոր կոթողներից են (էջ 147):

80. Երեզակը Մեծ Հայքի Սյունիք նահանգի գավառներից է: Սահմաններն են՝ արևելքից Գողթն, արևմուտքից Ջահուկ և Նախիջևան, հարավից Արաքսը, հյուսիսից Մոզուկը և Ջահուկը: Հստ Ծորեղյանի Սյունիքում նահապետներից մեկի կենը՝ Երեզակը շինում է իր անունով Երեզակ բերդը, և գավառը բերդի անունով կոչվում է Երեզակ (էջ 151):

81. Ապարան կամ Ապարանի գյուղը գտնվել է Երեզակ գավառում (տես ծան. 80): 17-րդ դարի սկզբում ունեցել է 500 տուն հայ բնակիչ (էջ 151):

82. Հստ Աստվածաշնչի այն կիևը, որ մեռոն է բերում Քրիստոսի մարմինը օծելու (էջ 171):

83. Անանիայի գամբարանը կամ, ինչպես Ալիշանն է ասում, անպատը գտնվել է Կոնդու՝ Սրբանի Կոնդ թաղամասում եղել է մի հին մասուն և շուրջը՝ խցեր: Առաքել Դավրիժեցու ժամանակ արդեն ավերակ էր (էջ 181):

84. Սանարի գավառը համապատասխանում է այն շրջանի տարածքին, որտեղ Ախուրյանը թափվում է Արաքսը: Առաջացել է 16-րդ դարում այդտեղ իշխող մահմեդական ցեղախմբի առաջնորդ Սադի անունից: (էջ 183):

85. Կաղզվանը գտնվում է Մեծ Հայքի Այրարատի Արշարունյաց կամ Երասխաձոր գավառում: Կարսից դեպի հարավ-արևմուտք 75կմ հեռու է (էջ 183):

86. Իով էր կոչվում ներկայիս Լվով քաղաքը: (էջ 183):

87. Շահի նրիտասարդ դրանիկներից, որը պատրաստ էր ձեռնելով շահի հրամանն ի կատար ածել: (էջ 185):

88. Կիլիկիայի հայոց մայրաքաղաքն է եղել Սիսը, որտեղ նստում էր նաև հայոց կաթողիկոսը, ուստի կոչվում էր կաթողիկոս Սիս: (էջ 192):

89. Ամրեղը գտնվում է Մեծ Հայքի Այրարատյան նահանգի Արագածոտն գավառում՝ Արագածի հարավային լանջին Բյուրականից 7կմ հյուսիս: Եղել է բերդ-ամրոց: 13-րդ դարում գործավ՛ վարչական կենտրոն: Պահպանվել են դղյակի, բերդապարսպի ավերակները, կենդեցու, բաղնիքի և արիչ կառույցների մնացորդներ: (էջ 198):

90. Կարբի գյուղ Հայկական ՍՍՀ Աշտարակի շրջանում, որ հետո կոչվել է Արագածոտն գավառ: Ինչպես նշում է Դավրիժեցին, Հարենին գտնվել է Կարբի գյուղի մոտ և Դավրիժեցու ժամանակ արդեն ավերված է եղել: (էջ 198):

91. Կարբուց թիչ հեռու անդեղախոր Քասախի ափին բարձր քարափի վրա կառուցված է Սաղմոսավանքը, որի հնությունը հասնում է մինչև 330 թվականը: Իսկ ներկայիս կանգուն վանքը կառուցել է Ջաքարյանների գործակալ իշխան Վալեն 13-րդ դարի սկզբում: (էջ 198):

92. Որպես թե՛ Տաթևի վանքը սկզբնապես կոչվել է Ստաթևի կամ

Եվստաթևի վանք, որ հետո ժողովրդի բերանում հնչյունափոխվելով դարձել է Տաթևի վանք: Ալիշանը կարականապես մերժում է այսպիսի վարկածը՝ Եշելով, որ Ստաթև կամ Եվստաթև առաքյալ Հայաստանում չի եղել և նման բան պատմագիրներից ոչ ոք, նույնիսկ Սահվանոս Օրբելյանը, որ այնքան մանրապատում է և սիրահարված իր երկրին ու սրա վանքերին և հատկապես Տաթևի՝ իր առաջնորդած վանքին, նման բան չի հիշում և մահավանդ Տաթևի՝ անունը ավելի հին է, քան ավանդությունը և մահավանդ նախապես այդ անունը եղել է գյուղի վրա՝ Տաթևը գտնվում է Մեծ Հայքի Սյունյաց նահանգի Մոզուկ գավառում այժմյան Գորխ քաղաքից հարավ-արևմուտք մի քանի կմ-ի վրա: Այնտեղ անշուշտ հին վանք եղել է, բայց ներկայիս կիսաքանդ և վերանորոգվող վանքը հիմնադրվել է 895 թվին տեր Հովհաննես Եպիսկոպոսի առաջնորդությամբ: (էջ 200):

93. Ալիշանը իր «Սիսական» աշխատության մեջ հիշատակում է Ջորո վանքը և Յրվանցը իրրև միևնույն վանքը, սակայն ստույգ տեղը չի որոշում, պետք է որ Տաթևի մոտերքը լինի: Կառուցվել է 9-րդ դարի վերջերին: 881 թվականին հիշատակվում է Կուրագետի Սմբատ երեցը: (էջ 200):

94. Փառնասի կամ Փառնաթի վանքը գտնվում է Հայկական ՍՍՀ-ի Սիսիանի շրջանի Արիս գյուղի հյուսիսային կողմում: Կառուցվել է 5-րդ դարում: Օրբելյան պատմիչը Տաթևից հեռու իր նշանակությամբ երկրորդ նշանավոր վանքն է համարում: Այժմ խիստ ավերված է: (էջ 200):

95. «Հարանց վարքերը» ժողովածուներ են, որտեղ նկարագրված են կենդեցական գործիչների՝ ճգնավորների արարչուն կյանքը, նրանց տանջանքները կրած նեղությունները հանուն քրիստոնեության, հանուն մեղքերի թողության, նաև դիվական փորձությունների դեմ պայքար, հրաշապատում տեխնիկներ և այլ հետաքրքրական դրույցներ են: (էջ 200):

96. Վիսը վանա ծովի ամենամեծ կղզին է, որ գտնվում է լճի հյուսիս-արևելյան կողմը: Ափից հեռու է մեկ կմ: (էջ 201):

97. Շամբ կամ Դարաշամբ հայկական գյուղ էր Արաքսի պարսկական ափին, այժմ թերևս արդեն անմարդաբնակ է: Այդտեղ է գտնվում Նախավայի վանքը: (էջ 201):

98. Բարկաշատը ըստ «Մեջնախորհրդի» ավերակ է վանա ծովի հյուսիսային ափին Արճիկից հարավ-արևելք: Հավանորեն սա Սյունիքի Բարկուշատն է, որ գտնվում է Բաղք գավառի արևելյան մասում: Այդ է ապացուցում Տաննավաբախ տեղանունը, որը ըստ Ալիշանի «Փողնելով ժամանակին ու հարմարությանը այս հայտնելու՝ որոնենք մյուս անվանի վանքը, որի տեղը նույնպես որոշ չէ, ոչ էլ նշված է քարտեզի վրա, այլ հավանորեն Բաղքի հարավարևմուտքի մասում է տեղադրված՝ Կասան գետի վտակի հովտում, որ կոչվում է Տաննավաբախ» (Ալիշան, «Սիսական» 278): Իսկ պատմական Բաղք գավառի մի մասը մտնում է այժմյան Ղափանի շրջանի մեջ: (էջ 201):

99. Շամբորը Մեծ Հայքի Արցախ նահանգի Փանեն գավառն է, որտեղ գտնվում էր Փառնոս քաղաքը, այժմ կոչվում է Կարաբեդու: (էջ 201):

100. Միտեր նրուաղեմի հարավում գտնվող բարձր բլուր է: Իսկ Աստ-

վածաշնչի խոսքը՝ «Զի ի Սիոն է կոչեն օրէնք եւ բան տեսն յԵրուսաղէմէն (տես Միքիէ Դ, 2)» (էջ 201)։

101. Կտուցը Վանա լճի արեւելյան մասում կղզի է արիք մեկ կմ հեռու Կտուց է կոչվել մի ժամանակ տեղաաւուրման հետեւանքով թերակղզի դառնալով։ Սղել է հաւ դրուիթյան կենտրոն, ունեցել է անապատական միաբանութիւն։ (էջ 202)։

102. 150 սաղմոսը բաժանվում է ութ կանոնի, այս ութ կանոնից յուրաքանչյուրը բաժանվում է 7 մասի, յուրաքանչյուր վերջին սաղմոսը, որ իր բովանդակութեամբ կարեւորն է, կոչվում է կանոնապոլուս։ (էջ 204)։

103. «Հայամավորքը» զիբք է, որտեղ համառոտված են սրբերի վարքն ու վկայարանութիւնները. անուր ստացել է այսպէս անուր տօն էջ նախադասութեան հաճախակի կրկնութիւնից։ (էջ 204)։

104. Եարականները եկեղեցական երգեր են, որոնց հավաքածուն կոչվում է շարակնոց։ (էջ 204)։

105. Հռչանց գլուղը գտնվել է Մեծ Հայքի Սյունյաց նահանգի Աղահնճք գավառում, որ համապատասխանում է այժմյան Լաշիէի շրջանին։ Այստեղ հայտնի են եղել Քաշաթաղ [Քշաթաղ] և Խոժոռաբերդ ամրոցները։ (էջ 206)։

106. Եինուհայրը կամ Հալիծորը Մեծ Հայքի Սյունյաց նահանգի (այժմյան Գորիսի) գյուղերից է։ (էջ 208)։

107. Մուկը Մեծ Հայքի ամենափոքր նահանգն էր, որ հյուսիսից ու արևելքից սահմանակից էր Վասպուրականին, արևմուտքից Աղծնիքին, հարավից Կորճայրին։ (էջ 211)։

108. Վարազը լեռ է Վանի մոտ, որի արեւելյան ստորոտին գտնվում էր հուլակավոր Վարազս վանքը։ Դավրիժեցին ակնարկում է այս վանքը, որ այժմ թուրքերի կողմից փլատակված է։ (էջ 211)։

109. Գողթնի գավառը գտնվում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգում. ընդգրկել է այժմյան Նախիջևանի Օրդուրադի շրջանը։ Յղեան Գողթնի գյուղերից է։ Այս գավառի նշանավոր բնակավայրերն էին Ջուղան, Վեբրի Աղուլիս գյուղաքաղաքը, Օրդվաթ գյուղը և այլն։ Այս գավառում կային հաւ նշանավոր վանքեր՝ Վերին Աղուլիսի Ս. Թովմա Առաքյալի վանքը, Յըղեայի Ս. Աստվածածին եկեղեցին, Մարվանիսի [Մերոպակիսի] Ս. Մեսրոպ վանքը և այլն։ (էջ 212)։

110. Աստապատ գյուղաքաղաքը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Նախիջևան գավառում է Արաքսի ձախ ափին։ Նշանավոր հուշարձաններից են Ս. Վարգան վանքը և Ս. Ստեփանոսը, որ Աստապատից հարավ-արևելք 3 կմ հեռավորութեան վրա Արաքսի ձախ ափին շինված է մի քարբարոտ բլուրի վրա. կոչվում է Քարատակի կամ Կարմիր վանք։ Ահա այս վանքի մասին է խոսում Դավրիժեցին։ (էջ 214)։

111. Ամաղեկացիները անապատաբնակ թափառական արարական ցեղեր էին, որ խորայնցիների հայրենիք վերադարձին հարձակվեցին նրանց վրա։ Հետոն խորայնցիների առաջնորդն էր արդեն Մովսեսից հետո։ Ամաղեկացիները այդտեղ շարժվեցին (տես Սլք ԺԷ 8-16)։ (էջ 215)։

112. Արցախում (Ղարաբաղ) կա Քոթուկ գյուղ, որ Ս. Զալալյանը տեղադրում է Քառասնից գյուղի մոտերքը, Եուշվա դիմաց (էջ 218)։

113. Դվինը Արարատյան դաշտի գյուղերից է, որ գտնվում է ներկայիս Արտաշատ քաղաքից 7 կմ հյուսիս-արևելք։ Այս գյուղի մոտ է գտնվում պատմական Դվին մայրաքաղաքը և հինավուրց ամրոցը։ (էջ 219)։

114. Մուրթենն ու Համանը Պարսից Արտաշես թագավորի բարձրաստիճան պալատականներն էին. Մուրթեն հրեա էր, իսկ Համանը ամաղեկ։ Մուրթենը գուշակում է, որ պալատական երկու ներքինիներ կամենում են Արտաշեսին սպանել. Մուրթենը հայանում է թագավորին, և ներքինիները խոստովանում են ու կախվում։ Համանը վրձնով է լցվում Մուրթենի դեմ, որովհետև բոլորը խոնարհվում ու երկրպագում էին իրեն, բայց Մուրթենից։ Համանը բամբասում է թագավորի մոտ ողջ երկրում գտնվող հրեաներին որպես խորամանկների ու սխիւրթների և պահանջում է իրավունք բոլոր հրեաներին ողջնացնելու ի թիվս որոց նաև հրեա Մուրթենին։ Արցախ իրավունք է տալիս, որ մի օրում Հեղկատատից մինչև Եմփուլիա 127 գավառների բոլոր հրեաներին կոտորեն և նրանց ողջ գույքը գրավեն։ Արտաշես արքայի երկրորդ կին Սաթենը, որ Մուրթենի հորեղբոր աղջիկն էր, բացում է Համանի խորագավանքը, թագավորը կոխում է Համանին և Մուրթենին մեռնում է իբրև առաջին պալատական [տես Սաթեն Ա-ից է]։ (էջ 220)։

115. Բազալը մովսարցիների թագավորն էր. (Մովսար Մեղայ ծովից հարավ-արևելք էր)։ Սրբ հրեաները եզրիպտոսից վերադարձան իրենց երկիրը, Բազալը կարճեց, թե կհարձակվեն իր վրա և կսպանեն իրեն. կանչեց Գլուխ Բաղայամին, որ հրեաներին անիծի։ Սակայն հրեաները ոչ մի վնաս չսպանեցին Բազալին։ Իսկ Բաղայամը եկավ և օրհնեց Բարայելը։ (էջ 221)։

116. Ըստ ավանդության Քաղեսո առաքյալը քրիստոնեության առաջին քարոզիչն էր Հայաստանում։ Հռոմից հինգ հուլի դեսպաններ են Հայաստան գալիս Մանատրուկ արքայի մոտ։ Դեսպանների գլխավորի անունն էր Խոռուսի կամ Քալուսի, որ հայերեն թարգմանվում է Ոսկի, որից էլ Ոսկեանք՝ Ոսկյաններ։ Այս դեսպանները առաքյալին հանդիպում են Հայաստանի սահմանամերձ մի ճանապարհի շատ համեստ մի տեսքով։ Հարցուփորձից իմացան, որ նա քարոզիչ է։ Այդ խոսակցության ժամանակ դեսպանները նկատեցին, որ եղնիկների մի խումբ անցնում էր մերձակա սարով։ Դեսպաններն ասում են, եթե դու բարձրյալ աստուծու ծառան ես, ասա թող եղնիկները կանգնեն։ Առաքյալը կանչում է եղնիկներին, և սրանք գալիս են դեսպաններին, այսինքն՝ Ոսկյանների մոտ [կեսակատար վարք և վկայարանութիւն սրբոց, ԸԲ, էջ 122]։ (էջ 223)։

117. Բաղը Մեծ Հայքի Սյունյաց նահանգի գավառներից մեկն էր։ Բաղը համապատասխանում է ներկայիս Ղափանի շրջանի մի մասին։ Իսկ Խոռուսանը Բաղքի գյուղերից է, որ առաջին անգամ հիշատակվում է 9-րդ դարի վերջերին։ (էջ 225)։

118. Նավակատիքի կերակուրների մեջ միայն մանդեն կերակուրներ չեն մտնում։ (էջ 227)։

119. Հեղին հրեաների թահանայալեան էր և միամասնակ քառա-

սուն տարի գատավորութուն արեց: Բայց իր զավակների վերաբերյալ անհոգ ու անտարբեր, ուստի պատժվեց ասածու կողմից: (էջ 229):

120. Այստեղ Դավրիժեցին հիշում է ետրեմացու շուրջը խոսքերը. «Ողորմիմ թեզ եկեղեցի Հայաստանեայց, խրթնացեալ ի բարեգարգութենէ բնմին, ի քաշէն զրկեալ ի հովուէ եւ ի հովուակիցէ...»: (էջ 230):

121. Վերին աշխարհ Հայոց արտահայտութիան տակ պետք է հասկանալ Սյունիքը, և ոչ թե Բարձր Հայքը՝ Կարինը: (էջ 230):

122. Հովհան երրորդ Իմաստասեր Օձնեցի Այծմայան Ալավերդու շրջանի Օձուն գյուղից էր: Կաթողիկոս դարձավ 717-728 թվերին: 719 թվին գնաց Գամակոս Օմար Բ ամիրադետի մոտ եկեղեցին հարկից ազատելու և քրիստոնյաների դեմ հայածանքը զաղարեցնելու համար: Նա նշանավոր մասնագիր էր Հայտնի երկասիրություններն են՝ «Ատենարանութիւն», «Կանոնք», «Մեկնութիւն ժամագրոց», «Հիմնարկէք և օրհնութիւն եկեղեցոյն և ալիւն «Պատմութիւն» ասելով [այստեղ] պետք է հասկանալ «Յազագա կարգաց եկեղեցոյն» [Յովհաննու Իմաստասիրի Աձնեցոյն «Մատենագրութիւն»-ը», Վենետիկ 1953, էջ 93-120] գործը: (էջ 237):

123. Օհանավանք կամ Յովհաննավանք Մեծ Հայքի Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի վանքերից է, որ այժմյան Աշտարակի շրջանի Օհանավանք գյուղում է գտնվում: Ըստ ավանդության վանքը գոյություն ունի հնուց ի վեր: Ղազար Փարպեցին է եղել վանքի առաջնորդը և իրենից հետո առաջնորդ է կարգել Հովհաննես անունով մեկին: Ներկայիս եկեղեցին հիմնովին ավարտվել է 1217 թվականին: (էջ 243):

124. Բարձր, ինչպես ասում է Դավրիժեցին, Աղրակ գավառն է: Սա Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից է: Գավառի կենտրոնը եղել է Հազամակերտ քաղաքը, որ այժմ թուրքերը անվանում են Բաշկալու: Մրանից թիւ հնուտ Սուրբ Խաչ վանքն է: (էջ 248):

125. Էրնկան գյուղը դարասկզբին 45 տուն հայ է ունեցել, գյուղում եղել է եկեղեցի 1660 թվականից: Գյուղը Ս. Բարդուղիմեոսի վանքից հնուտ է եղել մոտ 10 կմ: Հաստատ փաստեր կան, որ 300 տարի առաջ գյուղը ունեցել է 500 աուն: (էջ 248):

126. Դավրիժեցին զուգահեռ է անցկացնում հրեական առաջնորդների հաշորդության և հայ կաթողիկոսների փոխանորդության միջև: Մովսես մարգարեի մահից հետո առաջնորդությունը Հեսուն է վերցնում (ելք ժէ, 8-16 Թիւք ժԳ 6): Եղիան ըստ աստվածաշնչական ավանդության երկիրք է վերանում, վերարկուն ու առաջնորդությունը թողնում է իր աշակերտ Եղիսին (Գ Բագ. ժէ-ժԹ և Գ Բագ. Ա 2): (էջ 250):

127. Գորգա երկու կամ շուրս գլուխ սաղմոս է, որ ընդունված է իբրև մեկ ամբողջություն, որ վերջանում է փառք հօր բանաձևով: (էջ 254):

128. Աստվածածնի փոխման [երկիրք վերանալու] տոնը կատարվում է օգոստոսին: (էջ 266):

129. Ավագ պատը մեծ զատկի կամ Քրիստոսի հարության տոնի պատն է, որ շարժական է: Հին ժամանակ պատը պահում էին միայն աղ ու հաց ուտելով, ուստի պատը կոչվում էր աղուհացք, որ մասնավորվեց հատկապես իբրև Քրիստոսի հարության՝ մեծ զատկի պատի համար: (էջ 266):

130. Խաչվերացի տոնը կոչվում է նաև Սուրբ Խաչ: Այս տոնը կատարվում է սեպտեմբերի առաջին կեսին: (էջ 265):

131. Մաղկազարդի տոնը շարժական է, կապված է զատկի հետ, կատարվում է մի շաբաթ առաջ, կոչվում է նաև ծաղկաբարդ: (էջ 272):

132. Աստապատը գյուղաքաղաք էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Կաթողիկոս գավառում՝ Արարախ այս ասիին: (էջ 273):

133. Արարզը Դարայամբին մոտ գյուղ պետք է լինի: (էջ 273):

134. Մեղրին այժմ քաղաքատիպ ավան է. համանուն շրջանի շրջկենտրոնն է: Երևանից հեռու է 264 կմ դեպի արևելք, հնում կոչվել է Արևիք, որ մտնում էր Սյունյաց նահանգի մեջ: (էջ 273):

135. Երնչակի գավառը Մեծ Հայքի Սյունյաց նահանգի առաջին գավառն է եղել. հարավից սահմանակից է եղել Արարախին, արևմուտքից Նախիջևանին, հյուսիս-արևմուտքից Ճահուկին, հյուսիսից Մղուկ և Գողթն գավառներին: Երնչակի գյուղերից նշանավոր է Ապրակունիքը, որի մոտ կառուցված է Ս. Կարապետ վանքը: (էջ 273):

136. Արտաղ գավառը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի 15-րդ գավառն էր, որի կենտրոնը Մակու բերդաքաղաքն է, որ ընկնում է Փոքր Մասիսից հարավ: Հնում կոչվել է Եավարշան: Ըստ ավանդության այդտեղ է նահատակվել Հայաստանում քրիստոնեության քարոզիչ Քաղեոս առաքյալը, որի պատվին Մակուից քսան կմ հարավ-արևելք կառուցվել է Քաղեոս Առաքյալի վանքը: (էջ 275):

137. Մուղնին Մեծ Հայքի Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի գյուղ է, որ այժմ միացած է Աշտարակ քաղաքին: Հայտնի է Մուղնու Ս. Գևորգ եկեղեցին, որ մեծ ուխտատեղի է: (էջ 276):

138. Ուշին Մեծ Հայքի Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի գյուղերից մեկն է, որ շրջկենտրոն Աշտարակ քաղաքից 5 կմ հյուսիս է գտնվում: (էջ 276):

139. Օշական գյուղը հայտնի է իբրև Մեծուպ Մաշտոցի աճյունի հանգստավայր, Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի հնագույն գյուղերից մեկը, որ Աշտարակ քաղաքից արևմուտք 6 կմ հեռավորության վրա է: (էջ 277):

140. Բջնին Մեծ Հայքի Այրարատյան նահանգի Վարժապետից գավառի գյուղերից է: Այժմ ՀՍՍՀ Հրազդանի շրջանում է, շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևմուտք: Հայտնի է իր հանքային թրջիչա կոչվող ջրով: Այստեղ 7-րդ դարում կառուցվեց Ս. Սարգիս ամբարտաճակ եկեղեցին: Գրիգոր Մաղիստրոսը 1031 թ. կառուցել է Ս. Աստվածածին եկեղեցին, որ այժմ կանգուն է: (էջ 277):

141. Փասախ դետը սկիզբ է առնում Այրարատյան նահանգի Նիզ գավառից (Ապարան) հոսելով դեպի հարավ-արևմուտք, անցնում է Աշտարակի միջով և մտնում Այրարատյան դաշտը: (էջ 277):

142. Այս կամուրջը մինչև այժմ էլ կա Աշտարակում, սակայն այլևս երկրորդական դեր է կատարում, որովհետև գրանից ներքև կառուցված է շատ մեծ բարձրությամբ հսկա մի կամուրջ, որի վրայով անցնում է Երևան-Լենինական, Երևան-Կիրովական խճուղին: (էջ 278):

143. Շոտթը Մեծ Հայքի Սյունյաց նահանգի Երնջակ գավառի գյուղերից է Երնջակի հարավային սահմանը հասնում է մինչև Արարսի ափը Երնջակը շրջապատված է Գողթն, Մղուկ, Ճահուկ և Եսփիշանս գավառներով (էջ 279)։

144. Այս ներկայությամբ մեր եկեղեցու պատմության մեջ հայտնի չարահարու չարագլուխ Նիկոլ Թորոսովին է, որ կաշառատու Մեքքեթի կաթողիկոսի ձեռքով հակառակ ժողովրդի կամքի օծվեց նախկապուս 1628 թվականին ժողովուրդը նրան դուրս վճռեց եկեղեցուց, բայց նա զնաց զարձավ կաթողիկ, դիմեց ճիզվիթներին և սրանց խոստացավ, որ կհաստատենի բոլոր հայերին կաթողիկ կղարձնի Երզրթիների օգնությամբ խլեց հայոց բոլոր եկեղեցիները, բռնագրավեց եկեղեցու ողջ հարստությունը, կալվածները, ժողովուրդը մնաց առանց եկեղեցու, ստիպված ընդունեց Նիկոլին, իսկ սա առօրեանարար ողջ հայությունը կաթողիկ դարձրեց ու լեհահարեց (էջ 285)։

145. Կամենիցը Կամենեց-Պոդոլսկն է, Ալեքսանդրական քաղաքներից, որ 1430 թվին զբաղվել էին լեհերը և պահել մինչև 1793 թ., որից հետո միացվել է Ռուսաստանին։ Այս քաղաքում 16-րդ դարի երկրորդ կեսին մինչև 1200 հայ ընտանիք է ապրել։ Հայերը այնտեղ էին գաղթել Ղրիմից, Մուլգավայից, Փոքր Ասիայի հայաբնակ վայրերից (էջ 287)։

146. Նորընձա կրոնավորը քառասուն օր մեկուսացվում է առանձին, ապա քառասուն օրից հետո հանդիսավորապես դուրս է բերվում, այսինքն՝ քառասունից հանվում է (էջ 288)։

147. Բուրսա, որ ավելի հայտնի է Բուրսա անունով, Փոքր Ասիայի քաղաքներից է, գտնվում է պատմական Բուքնեիայում (էջ 290)։

148. Խարբրդը Արևմտյան Հայաստանի քաղաքներից է Խարբրդի վիլայիթի կենտրոնը, իսկ վիլայիթը հյուսիսից սահմանակից էր Երզրումի (Կարինի), արևելքից Գիարբեբի, հարավից Հալեպի, արևմուտքից Սվազի (Սեբաստիայի) վիլայիթներին (էջ 290)։

149. Կեսարիան Կապադովկիայի [Փոքր Ասիայում] կենտրոնական քաղաքն է, որ այժմ Թուրքիայի համանուն վիլայիթում է. կոչվել է նաև Մաժար, Գայսերի, Կայսերի, Ղայսերի (էջ 291)։

150. Մեկ ընտելություն ասելով միաբնակները [մի բնությունը ընդունողները] Քրիստոսի մեջ մարդկայինը և աստվածայինը միասնաբար իբրև մեկ ընտելություն են ընդունում, երկաբնակները Քրիստոսի մարդկային բնությունը առանձին են համարում, իսկ աստվածայինը առանձին (էջ 297)։

151. Եվտիբեն [Եվտիբեն] Բյուզանդիայի Նշանավոր հոգևորականներից էր. սա այնքան առաջ զնաց, որ աստվածային ու մարդկային բնությունները խառնուրդ համարեց և այս խառնուրդում մարդկային բնությունը այնքան չնչին գտավ, որ ընդունեց, թե մարդկային բնությունը աստվածայինի մեջ ոչնչացավ, ինչպես որ մի կաթիլ մեղրը ձուլի մեջ կամ մի շրտը բուցի մեջ, մինչև իսկ Քրիստոսի մարմնին երկնային ծագում վերադրեց, Սա ևս համարվեց ազանդավոր և հալածվեց բյուզանդական պաշտոնական եկեղեցու կողմից (էջ 297)։

Հայերը իրենց միաբնակ էին համարում, ընդունում էին, որ Քրիստոսի մեջ

երկու բնությունը միասնություն են կազմում. Քրիստոսը մարդ է և միասնական աստված։

152. Գոմինիկոս Կուղման իսպանացի էր. 12—13-րդ դարերում սեղեզեց Քարոզի և Քարայրի միաբնությունը, որ հրով ու սրով պայքարում էր Հռոմի եկեղեցու նկատմամբ հանդես եկած որևէ ազանդի դեմ։ Գոմինիկյանները իրենց կրոնական արշավանքները սղղած են եղել նաև Հայոց եկեղեցու դեմ (էջ 300)։

153. Արզնի, Արկնի, Արզնա՝ ավան Հայոց Մոսիթի նահանգի Պաղ-նատուն գավառում։ Գարսակզրին ունեցել է 6150 բնակիչ, որից 3 հազար հայ, մնացածը՝ թուրք, քուրդ, հույն (էջ 304)։

154. Բնադիրն է առաջին գրոց։ Արտախն բառը, երբ վերաբերում է դիտություն ու գրքերին, մեծ մասամբ նշանակում է հեթանոսական, այսինքն՝ ոչ քրիստոնեական, ոչ աստվածաշնչական, իսկ մասնակիորեն նշանակում է փիլիսոփայական։ Այստեղ բացարձակապես խորը վերաբերում է փիլիսոփայական գրքերին, ուստի և մենք առանց նեղվելու այդպես թարգմանեցինք (էջ 306)։

155. Բաղեշը հայկական Բիթլիս քաղաքն է, որ գտնվում է Մեծ Հայքի Աղձնայաց նահանգի Սալմոնո գավառում, Վանա լճից 18 կմ հարավ-արևմուտք։ Ամբողջու վանքը կառուցված է Բիթլիսի մեջ. այս վանքում 15-րդ դարում եղել է գրչության դպրոց։ Գարի վերջում հիմնադրվեց հույժվոր դպրոց։ Այստեղ Գարսեղ Աղջակեցին վանքի մատենադարանի փիլիսոփայական գրքերը 17-րդ դարի առաջին կեսին սկսեցին դասավանդել փիլիսոփայություն, ճարտասանություն, բերականություն, զբոսբուրդը մեծ անուն հանեց ներսես Մոկացու ժամանակ և ավելի ծաղկեց Վարդան Բաղեշեցի վարդապետի օրոք [մահը՝ 1704 թ.] (էջ 306)։

156. Ասիցավոր Մոկսի հայաբնակ գյուղերից էր, դարասկզբին ուներ 150 հայ բնակիչ (էջ 306)։

157. Վժանը Մեծ Հայքի Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի հնագույն գյուղերից է։ Այժմ Աշտարակի շրջանի Ուշան գյուղն է, որ աստուած է իր հին անվան վերականգնումին. շրջկենտրոնից հեռու է 14 կմ։ [Ուշանը՝ Վժանի՝ հետագա, ըստ որում այլ արտասանության արդյունքն է՝ հիմնված վ-ու և ծ-ջ հնչյունական անցումների վրա.— խմբ.] (էջ 306)։

158. «Գիրք սահմանաց» կամ «Սահմանք իմաստասիրութեան» 5-րդ դարի հայ մեծ փիլիսոփա Գավթի Անհաղթի աշխատությունն է, որ պրոված է հոնարանական հայերենով։ Գավթի իր այս գրքում տալիս է փիլիսոփայության վեց սահմանում։ 1) Առաջին սահմանումն այն է, որ փիլիսոփայությունը գիտություն է գոյի մասին որպես այդպիսին։ 2) Փիլիսոփայությունը գիտություն է աստվածային ու մարդկային իրերի մասին։ 3) Փիլիսոփայությունը հոգածություն է մահվան մասին։ 4) Փիլիսոփայությունը նմանեցումն է աստծու մարդկային հնարավորությունների չափով։ 5) Փիլիսոփայությունը արվեստների արվեստն է և գիտությունների գիտություն։ 6) Փիլիսոփայությունը սեր է իմաստության նկատմամբ։ Ըստ Գավթի Անհաղթի, այս վեց սահմանումները լրացնում են միմյանց և միասեղ սպառել կերպով սահմանում են փիլիսոփայությունը։

Գալիթ Անհաղթի այս գիրքը, թե հնում և թե այժմ իր գիտական ու պատմական արժեքը անխաթար պահպանում է: Հնում այն ծառայել է հայկական ուսումնական հաստատություններում իրեն դասագիրք: Գիրքը բաժանված է քսանմեկ պրակների (գլուխների): (էջ 307):

159. Պորփյուրը հույն փիլիսոփա է, սկզբնապես զբաղվում էր Պլատոնի ու Արիստոտելի գրքերի մեկնությամբ, իսկ հետո գրեց նաև փիլիսոփայական ինքնուրույն երկեր: Նրա գրքերից հայերեն է թարգմանված «Վերլուծութիւն ներածութեան Պորփյուրի», որ հրատարակված է Վենետիկում, 1333 թ.: Գալիթի ժեզին ակնարկում է Պորփյուրի այս գիրքը: (էջ 308):

160. «Պարապմանց գիրք» ասելով Գալիթի ժեզին ակնարկում է Կյուրեղ Աղեքսանդրացիի հայրապետի (5-րդ դար) «Պարապմունք» գիրքը, որ վերաբերում է Քրիստոսի մարդեղությանը (մարդանալուն): (էջ 308):

161. Նկատի ունի Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք դանձուց»-ը, որը գրված է Արիանոսների, հոգեմարտեների ու այլ աղանդավորների դեմ: (էջ 308):

162. Նրբից (գրականությունը)-ը մենք թարգմանել ենք փիլիսոփայական բաներով, իսկ արտաբնոց (գրականությունը)-ը՝ հեթանոսական: Նրբիցը, օրինակ, դանազան ուսումնասիրողներ այլևայլ կերպ են բացատրում: Ըստ Ն. Ակիլյանի այդ տերմինը պետք է հասկանալ զուտ ոճաբանական կողմից: Այդ գրվածքներում, ըստ Ակիլյանի, «կը տեսնուի խոսքերու. «ներբութիւն», խոր ոճ մը».: Օ. Կարկերը թարգմանում է Քր. livres subtils (նուրբ գրքեր) և հասկանում է այն գրքերը, որոնք թույլ էին տրվում կամ հանձնարարվում հավատացյալներին: Ալիշանը հասկանում է իրեն հայերի խրթնարան գրքեր: Ք. Պատկանյանը, Տեր-Մովսիսյանը հասկանում են իրեն փիլիսոփայական: Ինչ էլ որ հասկանան նուրբ բառի տակ, սակայն՝ զեղարմ մեզ համար կարևորը այն է, որ Գալիթի ժեզին նուրբ ասելով հասկանում է փիլիսոփայական, իմաստասիրական: (էջ 308):

163. Ոգմ կամ Ոգմի Մեծ Հայքի Վասպուրական եահանգի Մովս գավառի լճափնյա դուղերից մեկը: (էջ 309):

164. Խոսքը Արիստոտելի «Կատեգորիաների» մասին է, որ 5-րդ դարի վերջում թարգմանված է հայերենի: (էջ 311):

165. «Պերիարմենիանը» Արիստոտելի գրքերից է, որ թարգմանված է հայերեն «Յաղագս մեկնութեան» վերնագրով: Այստեղ Արիստոտելը բացատրում է քերականության խոսքի մասերը: (էջ 311):

166. «Աշխարհաց և առասպելաբանութեանց» գիրքը աշխարհագրական ելույթների և առակների ժողովածու է, որ կազմված է երկու մասից: Առաջին մասը կոչվում է «Գիրք աշխարհաց», պարունակում է Աշխարհացոյց Մովսեսի խորհանցոյց, «Մղոնաշափք», «Չորս գետք», «Գետք և զնացք նոցա մեծ և անուանիք քառասուն և երկուս» և «Անուանք քաղաքացի շնդկաց և Պարսից»: Առաջը Գալիթի ժեզին ակնարկում է գրքի այդ մասը: (էջ 311):

167. 13-րդ դարի փիլիսոփա-աստվածաբան Ալեքսանդր Մեծի գիրքն է, որ կոչվում է «Գրախոս հոգու յազգաց առաքինութեանց»: Թարգմանել է Մխիթար Անրատացին լատիներենից: (էջ 311):

168. Արիստոտելի «Անալիտիկա» գիրքն է «Վերլուծականը», որ Գա-

լիթ Անհաղթը մասամբ մեկնարանել է. հավանորեն նկատի ունի այս մեկնարանությունը: Արիստոտելի գիրքը նույնպես 5-6-րդ դարերի թարգմանությունն է: (էջ 311):

169. Հայերեն մի թարգմանություն կա, որ կոչվում է «Գալիթի են զեղեցիկը և պարսականի գարշիթեք».: Համարվում է Արիստոտելի «հեղինակություն»: (էջ 313):

170. Հովհաննես վարդապետ Կոզեռն է, որ կոչվում էր նաև Տարնացի: Նշանավոր տոմարագետ էր: Ապրել է 10-րդ դարի վերջերին և 11-ի սկզբներին, գրել է մի քանի գրքեր, որոնք շատ էլ հայտնի չեն: Թաղված է եղել Երևանի Կոնդի գերեզմանատանը, որ նրա անունով կոչվել է Կոզեռի գերեզմանոց: Այժմ այդ գերեզմանոցը չկա: (էջ 315):

171. «Փարոզգիրքը» մի ժողովածու է, որ բաղված է Սուրբ զրբից, եկեղեցական հայրերի իմաստություններից և այլ մատենագիրներից: Կազմված է երեք հատորից: Հայերենի է թարգմանել Վրթանես վարդապետ Ասկերյանցը: (էջ 317):

172. Հարցնեսը հավանորեն «Գիրք հայելի վարուց», որ ասի հարանց վարք» գիրքն է: (էջ 317):

173. տես ծան. 6:

174. Պրոկլոսը [Պրոկղ] հին հունական իդեալիստ փիլիսոփա է. ապրել է մոտավորապես 410-485 թվականներին: Մեզ է հասել նրա «Անտվածաբանության Նախահիմքերը» աշխատությունը: (էջ 319):

175. «Հնգնայ գիրքը», Թուլմա Աբվինացու հեղինակությունն է, որ 14-րդ դարում թարգմանել են ունիթոս աղանդավորները: Վերաբերում է հոգու և մարմնի փոխհարաբերությանը: Ընկերները գիրքը մեկնաբանել են կաթոլիկական ոգով, իսկ Լեհացին, որ այդ գիրքը թարգմանեց 1668 թվականին, մեկնաբանել է հայ եկեղեցու գիրքերից: (էջ 319):

176. Հովսեփոս Փլավիոսը հրեական պատմիչ է, որ գրել է Իսրայելի ողջ պատմությունը: Ստեփանոս Լեհացին թարգմանել է պատմության այն մասը, որ վերաբերում է հրեաների ապստամբությանը Հռոմի դեմ մեր թվ. առաջին դարում: Հոսեպոսը Լեհացու թարգմանության այդ մասում փառաբանում է Տիգրան Մեծին իրեն հռոմեական կայսրության դեմ պայքարող անկախ թագավորի՝ անսղակի կերպով պայքարի կոչելով հրեաներին: (էջ 320):

177. Գալիթի ժեզին նկատի ունի Դիոնիսոս Արիոսպագացու «Յաղագս-երկնայնոց բահանայապետութեանց» գիրքը, որ հայերեն թարգմանված է եղել դեռևս 8-րդ դարում, բայց որովհետև թարգմանված է խրթին լեզվով, Լեհացին ճշտել ու պարզ լեզվով է թարգմանել: (էջ 320):

178. Ստեփանոս Սյունեցին սովորել է Սյունիքում, Պոլսում, Աթենքում, Հռոմում: Քոչել է բազմաթիվ ինքնուրույն ու թարգմանական աշխատություններ, որոնցից մեկն էլ Արիոսպագացու վերոհիշյալ գիրքն է, որ թարգմանել է 712 թվականին: (էջ 320):

178. Գալիթի ժեզու ակնարկում գիրքը վերագրվում է Արիստոտելին կամ Պրոկլեսին, հայերեն հրատարակված է «Գրգուկ որ կոչի պատճառաց» 1750 թ.: Իսկ Լեհացին թարգմանել է 1660—62 թվականների ընթացքում: (էջ 320):

180. Վարպետ Մինասը նորըղայացի նկարիչ է եղել: Ըստ Տեր Հովհաննանցի՝ Մինասը եղել է Զորհարչան Մկրտչի որդին, որ ինքնապարսպումով զարձկ է այնպիսի նկարիչ, որ արվեստով Պարսկաստանի ոչ մի նկարչի չի գիշեր: Տես Հարութիան Տեր Հովհաննանց, Պատմութիւն Նոր Զուգայեցու, Նոր Զուգա, 1880, էջ 154 (էջ 321):

181. Վարպետ Հակոբյանի հիշատակութեամբ Դավրիժեցին, իր խոսքը ավարտում է նրա մասին: Բացի Դավրիժեցու հիշատակումից, այլ տեղեկություն նրա մասին չկա: (էջ 321):

182. Ամասիան աշխարհի հնագույն քաղաքներից է. ըստ ավանզության կառուցել է Ալեքսանդր Մակեդոնացու հորեղբայր Ամասիան: Գրտեղում է Քուրքիայում Մամսոն-Սերաստիա երկաթգծի վրա: (էջ 325):

183. Հռոմկլան, որ կռվել է նաև Հռոմեական կլա, Հռոմ քար, բերդաբաղաբ էր Եփրատեսիա նահանգում Եփրատի աջ ափին: Բերդաբաղաբը աճառիկ էր. 1115 թվականին Գրիգոր Պաճլավունին գնում է բերդը և այնտեղ հիմնադրում ու ավարտում է երկու հռչաշեն եկեղեցի և կաթողիկոսական աթոռը Սոփիոց (Չորրորդ Հայքում) փոխադրում Հռոմկլա: Մինչև 1292 թիվը այստեղ է հայոց կաթողիկոսական աթոռը: 1292 թվականին եղիպտացիք գրավում են Հռոմկլան, բնակչության մի մասին սրածռում են, գերում են Ստեփանոս Գ հայ կաթողիկոսին: Այդ տարվանից հայոց կաթողիկոսական աթոռը Հռոմկլայից փոխադրվում է Սիս [տես 88]: (էջ 325):

184. Տապանակը այն նվիրական արկղն է, որ ներսից ու դրսից պատված էր սուրբ և որի մեջ գեանդված էին հրեական օրենքների աստվածագիր տախտակները: Տապանակը հրեաների համար սրբազնագույն առարկա էր: Փղշապղինների հետ պատերազմելիս վերջիններս գերեցին տապանակը (Ա թագ., Գ): Սակայն հենց այնտեղ նրանց մոտ տապանակը իբր պատժեց փղշապղիններին, օտտի վերադարձրին և հանձնեցին իսրայելացիներին [Ա թագ., է1]: Դավրիժեցին անկարկում է տապանակի այդ պատիժը: (էջ 325):

185. Մեծ Հայքի Վասպուրական նահանգում է գտնվում Բերկրի քաղաքը, Վանից հյուսիս-արևելք 77 կմ-ի վրա է: Բերկրիի մոտ մի լեռան վրա է շինված Սուրբ Աստվածածնի Արզելան վանքը: (էջ 326):

186. Արծկն քաղաքավանը (Ալջավազ) գտնվում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արծկն գավառում: Գավառը ընկնում է Խլաթի, Բուլա-Նուխի, Մանազկերտի և Արճեշի մեջտեղում. հարավ-արևելքից սահմանադրվում է Վանա լճով: (էջ 326):

187. Խոսքը վերաբերում է Սքանչելագործ սուրբ նշան կամ Պատերազմի սուրբ նշան կոչված վանքին, որ գտնվում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Բզնունիք գավառում: Սա շատ նշանավոր վանք է եղել, որին պատկանել է շրջակայքի 30 գյուղ: (էջ 326):

188. Զհանշահը կարակոյունյունների (Քուրբանն վալիատուն ցեղեր) ամենախոշոր թագավորն էր, որ նվաճել է նաև Իրանը (Հայաստանը դրանց տիրապետության տակ էր): Իրենց գրոշակի վրա սև խոյ էր նկարված, զրա

համար այդպես են կոչվում: Սրանց իշխանությունը կործանվում է 1467 թվականին Էսպաղուրի մոտ կրած պարտությունը, որտեղ սպանվում է հիշյալ Զհանշահը: (էջ 326):

189. Երեք վանքերն էլ Մեծ Հայքի Վասպուրական նահանգի վանքերից են: Այդ տարին [1442թ.] Սսից կաթողիկոսական աթոռը փոխադրվեց էջմիածին, և եպիսկոպոսների, վարդապետների մեծագույն մասը լիաթողիկոսությունը հաստատեց էջմիածնում, կիրակոսին էլ օձեց կաթողիկոս Ըսա Օրմանյանի, ժողովը տեղի է ունեցել 1441 թվականին և ոչ թե՛ 1442: Կիրակոս կաթողիկոսը վասպուրականցի էր կամ, ինչպես Օրմանյանն է ասում, Արճեշից կամ Քաշերունի գավառի Խառարատա գյուղից: (էջ 327):

190. Զոնլ բերդի տեղը չկարողացանք գտնել: Հավանորեն Զուլամերիկի մոտերքն է, որ գտնվում է Փոքր Աղբակ գավառում [Ս. Երեմյանը տեղագրում է Էսհուկում]: Հավանորեն Զուլամերիկ կամ Զլամբ բերդը այդ երկու գավառների սահմաններում է: Թե Փոքր Աղբակը և թե Ճահուկը գտնվում են Կորճեշի նահանգում, որ Մեծ Հայքի հարավային նահանգն է (էջ 327):

191. Եփրեմ Խուրի Ասորին 4-րդ դարի ասորի մատենագիր է, որի կրկիրը 5-րդ դարում թարգմանված են հայերենի: (էջ 327):

192. Ճառաց. կեղեցիական սամուրի դիրքը, որ կաղաված էր Հին և Նոր կտակարանների հատվածներ ճաշածամին կարգալու համար, հնում կոչվում էր Տօնամակ: (էջ 327):

193. Մատնավանք, Մատռավանք կամ Մանրավանք Մաշ քաղաքի հյուսիսային կողմում Ս. Կարապետի վանքից մոտ քսան կմ դեպի արևելք Ելիսուս գյուղի դիմաց փոքրիկ վանք է: Մի Մատնավանք էլ եղել է Խաթուն: Հավանորեն Դավրիժեցին այս վանքն է անկարկում, որ ընկնում է Վանա լճի արևմտյան կողմը: (էջ 327):

194. Լուսավորչի աջը Սսում է եղել, 1441 թվականին Սսից անհայտացել է: Գողացվել է, բերվել էջմիածին, և այդ ոտակն էլ էջմիածնում վերահաստատվել է կաթողիկոսությունը, այսինքն՝ Սսից փոխադրվել է էջմիածին: Հաջորդ էջերում այդ մասին Դավրիժեցին պատում է մանրամասնորեն: (էջ 328):

195. Արշնի կամ Արկնի բերդը Չորրորդ Հայքի Պաշտոտուն գավառի մեջ է գտնվել. այժմ կոչվում է Տիգրանակերտի գավառ: (էջ 328):

196. Վանքերի անուններ են: (էջ 328):

197. Քաջբերունիք Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից է, որը կաղաված է երկու գավառից՝ Գրանի և Առերան գավառներից (Գրանին Արևմտյան Հայաստանի Արաղայի դաշտն է Թոնդրակ լեռան հարավային ստորոտներում): Առերանը Վանա լճի հյուսիս-արևելյան եզրերում է, որակը գտնվում է Բերկրի քաղաքը: (էջ 329):

198. Նետողների ալզ են կոչվել թաթար-մոնղոլները. այստեղ թուրքմեն Զհանշահի զորքը թաթար-մոնղոլների նմանությամբ հիշատակարանում կոչվում է ազգ նետողաց (նետածիգների ազգ): էջ 329):

199. Աստվածաշնչի «Դանիելի» գրքի Ը զրուխը սկսվում է այսպես. «Բազդասար արքայի թագավորության երրորդ տարում երազ տեսա (տես

օրը երեւեցաւ ինձ): Ես՝ Դանիելս առաջին երազից հետո Շոշ ապարանքում էի, որ էլամների երկրում է՝ Էլամական պետութունը Պարսից ժոցի հյուսիսում էր, որի մայրաքաղաքը իբրև Շոշ է կոչվել, բայց այդ Սպահանի հետ ոչ մի կապ չունի էլամները իշխել են մ.թ.ա. 1140-23 թվականներին: (էջ 329):

200. Նկատի ունի Վասպուրականի Գաղիկ Արծրունուն, որ թագավորեց 903 թվ.: (էջ 329):

201. Քրիստոսի անձի վրա վեճ էր գնում. Արիստը գտնում էր, որ նա ասածու որդի չէ, այլ մի ինչ-որ գերազույն արարած: Քրիստոնեական եկեղեցու շրջանակներում վեճերը բորբոքվեցին: Կոստանդնուս կայսրը (Բյուզանդիայի) 325թ. կրոնական ժողով հրավիրել տվեց Նիկիա (Փոքր ասիական քաղաք, այժմ Իզնիկ): Հրավիրված էին Տրդատն ու Գրիգոր Լուսավորիչը: Սրանց փոխարեն զնաց Աբիստակես՝ գրավոր հավատամք տանելով: Երեք հարյուր տասնութ հայրապետների ժողովը Արիստին դատապարտեց, Սրիստը նզովվեց: (էջ 330):

202. Զորարարելը Բաբելոն բշված հրեաների առաջնորդն էր, որ նրանց վերադարձրեց գերութունից: (էջ 331):

203 Բաշվանը կամ Բաղավանը գտնվում է Այրարատ նահանգի Բազրեվանդ գավառի Նպատ լեռան ստորոտում: Խոշոր կրոնական կենտրոն է եղել Այնտոզ է գտնվում 4-րդ դ. կառուցված բաղնիկ մեծ տաճարը Այժմ կոչվում է Ուշթիխան: (էջ 331):

204. Խոսքը վերաբերում է Այրարատյան նահանգի Կոզովիտ գավառում գտնվող Հին Բայազետին: (էջ 331):

205. Տես ծանոթ. 185:

206. Տոսպ գավառը Վանի գավառն է, որ հին անունով կոչվում է նաև Տուշպա (գիտական գրականության մեջ): Վանա լիճը նույնպես կոչվել է Տոսպա լիճ: (էջ 332):

207. Ոստանը Ռշտունիքի մայրաքաղաքն է: Ռշտունիքը Վանա ծովակի հարավային կողմում է: Իսկ Ոստան քաղաքը շինված է ծովի հարավ-արևմելյան ծայրին: Գաղիկ Արծրունին այստեղ շինեց պալատներ, տաճարներ և որանշխի ամառանոցներ, որոնք այժմ ավերակ են: (էջ 332):

208. Տուրուքերանը Մեծ Հայքի շրջաօրը նահանգն է, որ ուներ 25000 քիմ տարածություն: Տուրուքերանի կենտրոնական գավառն էր Տարոնը, որի գլխավոր քաղաքը Մուշն է: (էջ 333):

209. Մանաճիհի բերդը կոչվել է նաև Մանազկերտ. գտնվում է Վասպուրականի նահանգի Ռշտունյաց գավառում, ուղիղ Աղթամարի դիմաց ծովափին: Այս բերդի իշխանն էր Մանաճիհը: (էջ 333):

210. Նավասարդը հայոց առաջին ամիսն էր, որ անշարժ սոմարով ակվում էր օգոստոսի 11-ին և տևում էր մինչև սեպտեմբերի 9-ը: (էջ 333):

211. Թովմա վարդապետը Թովմա Մեծփյեղի պատմիչն է, որ գրել է «Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաշորդաց իրոց»: Բովանդակում է 1380-1441 թվականների ղեկավարը, վախճանվել է 1446 թվականին: (էջ 341):

212. Մխիթար Գուշն էր, որ շինեց Կայանի Գետիկ վանքը (1191-98). այս վանքը կոչվեց Նոր Գետիկ: Մեռել է 1213 թ.: Մեր գրականության

պատմության մեջ հայանի է իր «Գատաստանագրութ», որ օրենքների ժողովածու է, այլն՝ «Առականերով»: (էջ 344):

213. Հովհաննես Վարդապետ Տավուշեցի, որ հայանի է Վանական անունով (1181-1251): Եղել է Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու, Գրիգոր Ակեբեցու (Մաղաթիա արևդա) ուսուցիչը: Գրել է բազմաթիվ աշխատություններ: Ամենանշանավորը եղել է «Պատմությունը», որ վերաբերել է մոնղոլ-թաթարների Հայաստանում և հարևան երկրներում գործած լարիքներին, որը սակայն չի պահպանվել: (էջ 344):

214. Վարդան Արևելցին է, որ գրել է «Հատարան պատմութեան» գիրքը: Սկսում է արարչագործությունից, սակայն կարևորը իր ժամանակի պատմությունն է, որ վերաբերում է մոնղոլ-թաթարների արշավանքներին: Եղել է Գլաձորի համալսարանի ուսուցիչ: Մեռել է 1271թ.: Սրա աշակերտն էր ներսես Մշեցի՝ Տարոնեցի՝ Գլաձորեցի (մահը՝ 1284), որ հաջորդեց Վարդանին Գլաձորում: (էջ 344):

215. Եսայիի Սասունի նիլ գավառից էր: Սովորել է ներսես Մշեցու մոտ Վայոց ձորի Աղբերջ վանքում, ստացել է բարձրագույն կրթություն և վարդապետական աստիճան (դոկտոր): Հիմնադրել է Գլաձորի համալսարանը և եղել է այդ համալսարանի տեսչը: Դասավանդել է քերականություն, ճարտարապետություն, աստղաբաշխություն, երաժշտություն և այլ առարկաներ: Ժամանակին մեծ գիտնականի հուշակ է վայելել: (էջ 344):

216. Հովհան Ռոտունցի. Սյունիքի Ռոտուն գավառից (1315-1386). փիլիսոփա, աստվածաբան: Սովորել է Գլաձորի համալսարանում: Հիմնադրել է Տաթևի համալսարանը: Եղել է նշեցու աշակերտը: (էջ 344):

Սրա աշակերտն է Գրիգոր Տաթևացին. փիլիսոփա, աստվածաբան, տեսեսագետ, մանկավարժ: Իր ուսուցիչ Ռոտունցու մահից հետո վարել է Տաթևի և Ապրակունիսի բարձրագույն դպրոցների տեսչությունը:

217. Հովհաննես Համշեցի [մահը՝ 1497]: Կրթությունը ստացել է Ավագ վանքի [Բարձր Հայքի Փամբա գավառում]: Հետագայում ստանձնել է դպրոցի ուսուցչապետությունը և զպրոջը վերածել է համալսարանի: Այստեղ սովորելու են եկել Հայաստանի բոլոր ծայրերից: (էջ 344):

218. Խորձույաց կամ Խորձեն՝ Խորձուք գավառը գտնվում է Զորբորդ Հայքում: (էջ 345):

219. Նինվեն Ասորեստանի մայրաքաղաքն է եղել Տիգրիսի արևելյան ափին, ներկայիս Մուսուլի գեմ-գիմաց. հարուստ ու շքեղ քաղաքի համար ըստ Աստվածաշնչի գուշակվում է կործանում: Նինվեցիները մասամբ մեղմում են իրենց բարբը, բայց դա միայն ուղեցնում է կործանումը: Մ.թ.ա. 606թ. բաբելոնացիները կործանում են քաղաքը, որն այլևս ոտքի չի կանգնում: Գալթիթեցին այդ կործանումն է ակնարկում: (էջ 378):

220. Վարդ Պատրիկը Բեռդորոս Ռշտունու որդին է (7-րդ դար), որ մի որոշ ժամանակ եղավ հայոց սպարապետ: Պատրիկ տիտղոսը ստացավ Բյուզանդիայի Կոստանդին կայսրից: (էջ 379):

221. Հայոց Զորը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից մեկն է: Սկսվում Վանա լիճ հարավ-արևելյան ափերից տարածվում է մինչև Հայկական Տավրոս: Հնում կոչվել է նաև Սրվանդունի: (էջ 379):

222. Ինչպես արդեն չջատակ ծանոթութեան մեջ ասված է, հայոց եկեղեցու յոթ խորհուրդներն են ապաշխարութեանը, կնոնքը, գրոշը, պսակը, հազորդը, հիվանդին այցելութեանը, կարգը կամ ձեռնադրութեանը (էջ 379)։

223. Խոշարը բերդաքաղաք է Վանից հարավ-արևելք 35 կմ վրա Շինված է Խոշար գետի եզերքներին (էջ 355)։

224. Կեզի գավառը պատմական Հայաստանի Խորձան գավառն է, որ գտնվում է Զորբորդ Հայքում և այժմ կոչվում է Քշի (էջ 394)։

225. Ոստան անունով բնակավայրեր շատ են եղել Հայաստանում (Արտաշատ, Գլին, Վաղարշապատ)։ Ոստաններ եղել են նաև Արևմտյան Հայաստանում. Ոստան Ռշտունյաց, Ոստան Վասպուրականի, Ոստան Արծրունյաց, և այլն։ Այստեղ խոսքը վերաբերում է Վանա լճի եզերքին զբոսնելու մի փոքրիկ ավանի, որ մեծանալով դարձավ քաղաք և կոչվեց Արշտունյաց Ոստան։ Այս քաղաքի շինարարությունը վերագրվում է Վասպուրականի Գաղի Արծրունի թագավորին։ Մովի կողմից անհանր է բերդ մտնելու ճանապարհը ապառաժի կողի վրա փորված մի նեղ անցք է։ Այդ է, որ Գավրիժեցին կապ է կտրում, որ մենք կապով ենք արտահայտում։ (էջ 394)։

226. Սղերթը հնում կոչվել է Սերխեթը գավառ։ Աղձնիք նահանգի գավառներից է։ Աղձնիքը Մեծ Հայքի ամենահարավային նահանգն է։ (էջ 397)։

227. Հոգոց վանքը գտնվում է Վանից հարավ 40-50 կմ վրա Անձնացյաց գավառում մի խոր ձորի մեջ։ Վանքը կոչվում է Ս. Աստվածածնի անունով։ Վանքի բնմի տակ էր պահվում ս. Աստվածածնի պատկերը, որ ըստ առասպելի ս. Անդրեասի կամ ս. Հովհաննեսի կողմից է փոխադրված եղել, իսկ ս. Բարդուղիմեոսը՝ այստեղ է բերել։ Գավրիժեցին այդ է ակնարկում։ (էջ 398)։

228. Աբազան Մեծ Հայքի Վասպուրականի նահանգի Աորեան գավառում (այժմ Բերկրիի գավառ) գտնվող գաշտավայր է, որտեղ եղել են նաև բերդեր, որոնք ավերակվել են 1788 թ., որպեսզի ավազակաբներ չդառնան։ (էջ 403)։

229. Սուրբ Գրիգորի (Լուսավորչի) պսոքը պահում են ամռանը հունիսի երկրորդ կեսին։ Այս պսոքը պահում են ի պատիվ նրա՝ Խորվիրապից զուրս գալու։ (էջ 404)։

230. Խրամ ավանը գտնվել է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Նախիջևան գավառում։ Նախիջևանից հարավ Արաքսի աջ ափին։ Ենթադրվում է, որ եղել է այժմյան Գարաշամբի տեղում։ Այս այն երամն է, որի եկեղեցում (Նախիջևանի ևս) արարները 704 թվականին արում են հայ նախարարներին։ Այդպիսի նշխարներ 972 թ., իբրք, հիշյալ մազադաթի հետ փոխադրվում է հիմնովին ավերակված ավանից (էջ 407)։

231. Ամիդ քաղաքը, որ այժմ կոչվում է Դիարբեքիր, Տիգրանակերտը չէ։ Դիարբեքիրի ամրությունների կառուցումը մեր ավանդական պատմությունը վերագրել է Հայկազունի կամ Երվանդունի Տիգրանին (մ. թ. ա. 6-րդ դար), ուստի այդ քաղաքը պատմիչները անվանել են Տիգրանակերտ. մինչդեռ Տիգրանակերտը Տիգրան Մեծն է կառուցել, որ գտնվում է Աղձնիքում։ Այդ երկու քաղաքները թյուրիմացաբար նույնացվել են (էջ 408)։

232. Կանաչազուլու են կոչվում այն մահմեդական հողերուկանները, որ ըստ ավանդության մահմեդական կրոնի հիմնադիրներին մեկի՝ Ալիի սերունդներն են։ Գրանք առանձին արտոնություններ ունեն և կրում են կանաչ գլխափաթաթան (չալմա)։ Կոչվում են նաև սելիդներ (էջ 413)։

233. Նախմին մահմեդական բանաստեղծ էր [մեռել է 1417 թ.]։ Մահմեդական հերձվածի զինավար է եղել, ուստի և Հալեպում մահվան է դատապարտվել մաշկագեղձի միջոցով (էջ 414)։

234. Մոսթիի արարերն նշանակում է Մահմեդական-աստվածարան, Ղարանի մեկնիչ, որ եզրակացություն-վճիտ է հանում հոգեքո և իրավական հարցերի վերաբերյալ։ (էջ 414)։

235. Բնազրում բան է Ֆաթվա (արար.), որ նշանակում է վերջնավճիտ (էջ 414)։

236. Յաղուրիները (Հակոբիկներ) ատորի միաբնակներ են, որոնք հետևում էին Հակոբ Բարադայի աղանդին։ (էջ 419)։

237. Ամուկ, Ամիկ կամ Համուկ Վասպուրական նահանգի Աորեան (Գեանի) գավառն է։ (էջ 421)։

238. Տես ծան. 124։

239. Ալանների դուր Գարիալն է։ (էջ 441)։

240. Մոաղասիկը ծաղրական անվանումն է զատիկ այն տանի, որ տոնացույցների զանազանությունն պատճառով այլ օր է ընկնում, քան զատիկ հաստատված օրը։ (էջ 445)։

241. Գերջանը Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի գավառներից մեկն է։ Այս գավառի կենտրոնն է Մոստաթաթուն քաղաքը։ Գերջանը Կարինի (էրզրում) արևմտյան կողմն է։ Գերջանցի Մաղաթիա վարդապետը 1545թ. գնաց Կոստանդնուպոլիս սուլթանի Սուլեյմանի մոտ և փոխեց մանկահասակ օրհնը, ըստ որի պատանիներին հավաքում էին և դարձնում սուլթանի կամ այլ բարձրատեման իշխանավորների թիմնապահներ, նաև ներշնչներ։ Մաղաթիա վարդապետին հաջողվում է Գերջան գավառի, Բարձր քաղաքի և շրջակայքի մանկահավաքը զաղարեցնել (էջ 452)։

242. Բարեղը [Բայրեղ, Բայրուր] գտնվում է Բարձր Հայքի Սպիտ գավառում Կարինից 121 կմ հյուսիս-արևմուտք։ Երոթս գետով Բարեղը քաղաքը բաժանվում է երկու մասի։ (էջ 452)։

243. Իտալական հին ոսկյա դրամանիչ է։ (էջ 464)։

244. Թուրքիայում դրամական միավոր էր հնում։ (էջ 464)։

245. Կարչի ուղում եմ մտածել կար չի, այսինքն ում շունի, լեռայած չի կապակցվում հաջորդ նախադասությունը։ Հնարավոր է, որ կարչի այլ բան նշանակի։ (էջ 464)։

246. Պարտավը Մեծ Հայքի Ոսիք նահանգի և ողջ Հայոց Արևելից կողմանց մարտաքաղաքն էր սկսած 462 թվականից, այժմ կոչվում է Բարդա, կոչվել է նաև Պերդապատ, Պերդո-կավատ։ (էջ 471)։

247. Ըարաբերդը, որի իսկական անվանումը Զարաբերդ է [Զարբերդ, Զրբերդ, Զրաբերդ, Զերմուկի բերդ, Ճառաբերդ], գտնվում է Մեծ Հայքի Արցախ նահանգում, Թարթուս գետի հովտում, Երից մանկանց վանքի դիմաց Զրաբերդ գավառում։ (էջ 471)։

248. Խաչենը Մեծ Հայքի Արցախ նահանգի [Ղարաբաղի] գավառներից մեկն է: (էջ 471):

249. Վարանդան Մեծ Հայքի Արցախ նահանգի գավառներից մեկն է: (էջ 471):

250. Գիղակը Արցախի գավառներից մեկն է, որ կոչվել է նաև Պաղ-կանք: Սրա հարավային սահմանը Արաքս գետն է, իսկ հյուսիսային սահ-մանը Վարանդան: (էջ 471):

251. Զարնք գետը պետք է լինի Մեծ Հայքի Արցախ նահանգի Գարդ-ման կամ Փառխոս գավառում: Այդտեղ է նաև Զարնք բերդը և նույն անունով վանքը: (էջ 471):

252. Երևանում եղել է մի մեծ եկեղեցի, որ կոչվել է Երկուեքնսի: Թորամանյանի կարծիքով այդ եկեղեցին եղել է Զարենցի այժմյան դպրոցի տեղում, որտեղ գտնվում էր Ս. Գրիգոր Լուսավորչի՛ր Վերջինը շինված է եղել Երկուեքնսի տեղում: (էջ 477):

253. Մար գավառը կամ Մարա երկիրը Վաղուտի կամ Վայոտիքն է, որ Մեծ Հայքի Արցախ նահանգի գավառներից է, հետագայում կոչվել է նաև Զրարբերգ: (էջ 477):

254. Վասակաշենը այժմյան Վարդենիսն է (Բասարգեշար): (էջ 477):

255. Մինչև 363թ. հայերը զատիկը տոնում էին հրեաների հետ. շա-րաթվա որևէ օր: Հիշյալ թվականից հետո հայերը սկսեցին օգտվել Անդրիաս Քյուրանդացու կազմած տոմարական ցուցակներից, որ պատրաստված էր 200 տարվա համար: 561 թ. Դվինի եկեղեցական ժողովում որոշվեց երկու հարյուր տարին լրանալուց հետո ընդունել հայոց նոր թվականություն 532 տարեշրջանի համար: Այս 532 տոմարական շրջանը կյուրացնելով կոչում էին հինգհարյուրյակի Առաջին հինգհարյուրյակը լրանալուց հետո երկրորդը սկսվել է 1084 թ., իսկ երրորդը՝ 1616 թ.: (էջ 484):

256. Քաղիբղ հայերը կոչում էին Մահմեդից 8 տարի առաջ եղած արաբական զորավար Խալիֆ իբն Վալիդին, որը սովորում է Դամասկոսը և մտնելով Հայաստան ու Պարսկաստան շատ հայեր ու պարսիկներ սրի է բաշտում: Այս է պատճառը, որ հայերը նրա անունը [Խալիֆ] ծաղրանքով Փաղիբղ են ասում, որ նշանակում է անասունների թրեքով լցված փորի մեծ պարի: Այս զորավարի անունով արաբները մի ժամանակ քաղաքա-կանք են կոչվել: (էջ 484):

257. «Անձինք նուիրեալը» հոդնոր քերթվածը գրել է Կոմիտաս Կա-թողիկոսը 7-րդ դարում: Քերթվածը վերաբերում է Հռիփսիմյան կույսերին և երանց նահատակությանը Դավթակի ռոզբո հետ սա մեր անցյալի բա-Նաստեղծության գուլգործոցներից է: (էջ 484):

258. Դվինում կառուցված Սուրբ Սարգիսը այժմ գոյություն չունի: (էջ 484):

259. Ըստ «Հայկական Սովետական հանրագիտարանի» տվյալների ներսևի 642 թվականին կառուցած այդ վանքը եղել է մատուռ և այժմ գոյություն չունի: ներկայիս վանքը նոր է: (էջ 484):

260. Մարինիսը Մաքենացիների վանքն է, որ գտնվում է ՀՍՍՀ Մար-

տունու շրջանում, գոյություն ունի 8-րդ դարից, եղել է կրթական օջախ: (էջ 484):

261. Սա Եղվարդեցի Մաշտոց կաթողիկոսն է, որ եղել է Սևանա վան-քի վանահայր, Սյունիքի Մարիամ իշխանուհու առաջարկով կառուցել է Սևանա Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիները: (էջ 484):

262. Անիի Մայր տաճարը կամ Կաթողիկեն հայ ճարտարապետու-թյան փառքն է: Նշվում է, որ ավարտվել է 1000 թվականի սկզբում: Ռմանք ասում են, թե կառուցումը տևել է քսան տարի, ոմանք էլ՝ չորս տարի: Հիմնադրել է Սմբատ տիեզերակալ կոչված թաղավորը, բայց ավարտվել է Սմբատի հարսի և Գաղիկի կնոջ Կատրամիդն թաղուհու ձեռքով: Ելնա-րարության սկիզբը համարվում է 989 թիվը, իսկ ավարտը՝ 993: (էջ 484):

263. Հաղպատը գտնվում է Հայկական ՍՍՀ Քումանյանի շրջանում: Հայաստանի նշանավոր վանքերից է, ունեցել է դպրոց, եղել գրչության կենտրոն: Ամենահին վանքը Ս. Նշանն է, որ հիմնադրվել է 977 թվականին Թադրատունի Աշոտ թագավորի օրոք, կառուցողը նորոգվանույշ թագուհին է: Վանքի կառուցումը ավարտվել է 991 թվականին: Այնուհետև կառուցվել են այս տաճարին կից մյուս վանքերն ու շինությունները:

Սանահինի վանքը գտնվում է Հայկական ՍՍՀ Քումանյանի շրջանում և կոչվում է Սուրբ Աստվածածին, որն ըստ ավանդության Հայաստանի ամենահին եկեղեցին է եղել: Երկրորդ եկեղեցին շինվել է Աշոտ Ողորմա-ծի օրոք, 967 թվականին, բայց երբեմն համարվում է հիմնադրված 951 թվականին: Ս. Աստվածածինը այդ ժամանակ ավերված է եղել, այս նո-րը կոչվում է նախորդի անունով: Ավելի անվանի եկեղեցի է Ամենափրկիչը կամ Ս. Նշան. սա բոլորից մեծ է, շքեղ ու բարձր, նույնիսկ Հաղպատի վանքից: Սանահինի վանքի համալիրն ունի նաև այլ եկեղեցիներ ու շինու-թյուններ: (էջ 484):

264. Հոռոմոսի վանքը հիմնադրվել է 10-րդ դարի առաջին կեսին, Ախուրյանի աջ ափին: Հիմնադրել են Բյուզանդիայից փախած հայ վանական-ները, ուստի կոչվում է Հոռոմոսի վանք [Հոռոմի]: Այս վանքը անվանվել է նաև Ղոշավանք՝ շնորհիվ Անի տանող ճանապարհին կառուցված հաղթա-կան կամար համարվող դռան զմբեթավոր զույգ աշտարակների [ղոշա-զույգ] վանքը սահմանի մյուս կողմում է: (էջ 485):

265. Ստեփանոս Տարոնեցիին Ասողիկն է, որ ապրել է 10-րդ դարի երկրորդ և 11-րդի առաջին կեսերին: Սրա զիրքը կոչվում է «Տիեզերական պատմություն», որ գրել է Սարգիս կաթողիկոսի հրամանով: Գիրքը իբրք բաղկացած է երեք մասից: Առաջին զիրքը լուի ժամանակագրություն է հին աշխարհի ժողովուրդների պատմության: Երկրորդ զիրքը համառոտաձև է հայոց պատմության Տրդատից մինչև Աշոտ Առաջինը՝ ներառյալ կաթողի-կոսները: Երրորդ զիրքի մի մասն էլ քաղաքագրություն է: Սակայն իր՝ Ասողի-կի բուն պատմությունը սկսվում է 929 թվականից և հասնում մինչև 1004 թվականը՝ Գաղիկ Առաջինի տասնհինգերորդ տարին: (էջ 485):

266. Քոնդրակցիների ազանդը ծնունդ առաջ 9-րդ դարի 30-40-ական թվերին, Քոնդրակ ալմանում [Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Անդառնոսի գավառում]։ Քոնդրակցյան ազանդը սուր ծայրով ուղղված էր հայ եկեղեցու դեմ։ Քոնդրակցիները մերժում էին խաչը, եկեղեցին ու նրա խորհուրդները։ Մերժում էին Քրիստոսի աստվածային էությունը, նրան համարում էին մարգարի ու ուրիշ ոչինչ։ Նրանք չէին ընդունում հանրեթեյալ կյանքը, մարդու և աստծու միջև եկեղեցու միջնորդ լինելը, այլև ըստ նրանց հոգեվորականները դեր չունեն, այլևորդ են բոլոր ծեսերն ու արարողությունները։

Քոնդրակցյան շարժման գնահատականը, մեր կարծիքով, միակողմանի է։ Եթե Հայաստանը լիներ անկախ երկիր, ապա այդ շարժումը իրոք կարող էր համարվել հեղափոխական շարժում, բայց Հայաստանը հեծում էր օտար լծի տակ, վերացվում էին նախարարական տները, հայաժվում էր եկեղեցին, ուստի այդպիսի ներքին շարժումը միաժամանակ չուր է լցնում օտարների ջրաղացին։ Քոնդրակցիները պայքարելով հայոց եկեղեցու դեմ, փաստորեն կամենում էին կործանել այն միակ հաստատությունը, որ հոգում էր ժողովրդի մտավոր զարգացման, կրթության, ազգային ավանդների պահպանման համար՝ ժողովրդի զոյատեման համար։ (էջ 485)։

267. Մատթեոս Ուռհայեցին պատմում է, որ 471 (1022) թվին հույների Վասիլ կայսեր օրոք անապոստոս հրաշք եղավ, բարկություն թափվեց բոլոր արարածների վրա։ Հոկտեմբերի 3-ի երբորդ ժամին երկինքը պատրվեց արևելքից արևմուտք երկու մասի և հյուսիսից պայծառ լույս իջավ երկրի վրա, երկիրը շարժվեց, արեգակը խավարեց։ Ողջ երկիրը սուղ մտավ։ Հովհաննես հայոց թագավորի հրամանով իշխաններն ու ազնվականները եկան Հովհաննես Կողբանի մոտ, որ շատ զիտուն մարդ էր։ Եկողները սրան հարցնում են նրանցից պատճառը։ Կողբանը պատասխանում է. «Ով որդիներ, լսեցեք ինձ, վայ ու եղուկ է բոլոր մարդկանց, որովհետև այսօր հազար տարին լրանում է սատանայի կապանքների, որին մեր տեր Հիստոս Քրիստոսը իր սուրբ խաչով, մանավանդ Հորդանան գետում իր սուրբ մկրտությունը կապեց, և այժմ սատանան արձակվեց իր կապանքներից ըստ Հովհաննես Ավետարանի տեսիլքի վկայություն, ինչպես որ ասածու հրեշտակը նրան ասաց, թե հազար տարի կկապվի սատանան և դարձյալ կարձակվի» [տես. Մ. Ուռհայեցի, ժամանակագրություն, Վաղարշապատ, 1893]։ Այս է ակնարկում Առաքել Դավրիժեցին։ (էջ 485)։

268. Բագնալը [Բզնեի, Բզնայր] գտնվել է Անիից 4-5 կմ հեռավորության վրա Ալաշա լեռան հյուսիսային ստորոտում, համանուն գյուղի մոտ, կառուցել է Մերստ Մադիսարոս Պաշավունին 1012թ.։ Ելած դրեթն աճեցող է։ Քայց չգիտենք, թե ինչու է Դավրիժեցին այն տեղադրել Գլինում։ (էջ 485)։

269. Պետրոս Դեստաղարձ կաթողիկոսը օձվեց 1019 թ.։ Լեզնեղը առավ է, որ չորհրդերին Տրապիզոնի մոտ գետակի մեջ խաչը օրհնելիս հայոց պճազարի կաթողիկոս Պետրոս Գեստաղարձի հրամանով դեռի չորհրդ հետ դարձան, որպեսզի գետի ներքևում զանազան հույները հայոց օրհնած չորհրդ վերա-

տին շորհեն մարքելու նպատակով։ Այս կաթողիկոս կոչված ազգամաս հրեշք եկել էր Բյուզանդիայի Վասիլ կայսեր մոտ, որպեսզի քարեկամական հարաբերություններ հաստատի հույների հետ։ 1021 թվականի գեկտեմբերի վերջերին Պետրոս ազգաղավը պայմանագիր է կնքում Վասիլ կայսեր հետ, ըստ որի Հովհաննես Մերստի մահից հետո Անին պետք է հանձնվեր Վասիլ կայսեր։ Այդպես էլ լինում է։ Ազգահաթողիկոսը Անին ծախում է հույներին։ Նույնիսկ Արիստակես Հաստիվերցին իր ժամանակին հասկացել էր այդ կործանարար առուծախի էությունը և գրել է. «Այնտեղ գրվեցին հայոց կորստյան գիրն ու դաշինքը։ Բայց մի զարմանալի անհողություն ժամանակը նրան ըստ արժանավուն չի գատապարտել»։ (էջ 486)։

270. 11-րդ դարում Հայաստանում հաստատվել էին մի շարք սելջուկյան իշխանություններ, որոնց կոչում էին շահարմեններ, այսինքն՝ հայերի թագավոր Դրանցից էին Խլաթի Շահարմեն Սուբանյանները։ (էջ 486)։

271. Խորազմը Խորեզմշահ Զալալագդին էր, որ 1225 թվականին գրավեց Գլինը։ (էջ 487)։

272. Զգիտենք, թե հեղինակը ինչ թագավոր նկատի ունի։

273. Այստեղ պակաս բաներ կան, լրացնում ենք ըստ «Մեր ժամանակագրությունների»։ Բնագիրն է. «Թուին Պլե թամրազ խանն զնաց մինչև ի Դինիշխ և եկն հհաս... Եկաց անս Ժէ, զնաց ի Սմարղանդ, մեռաւ։ Ըստ «Մ. Ժ.»-ի Պլջ թվին Լանկ թամուր զնաց մինչ ի Դմբշխ և եկն ի Հայս, Եկաց անս Ժէ, զնաց ի Սմրղանտ, մեռաւ։ Տես Վ. Հակարյան, «Մեր ժամանակագրություններ» հ. 11 Երևան, 1956, էջ 515, (էջ 490)։

274. Բնագրում՝ զլատուան, պետք է լինի զՇատուան, որը գտնվում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Ռշտունիք գավառում (Գավառ), Նարեկա վանքից հյուսիս-արևմուտք։ (էջ 491)։

275. Տանուտերը այն աստեղատունն է, որի մեջ ավյալ ժամանակում գտնվում է արեգակը. գարնան ամիսներին արեգակը լինում է Խոյի, Ցուլի և Երկվորյակի աստեղատունները, ուստի և Գարնան տանուտերերը՝ Խոլը, Ցուլը և Երկվորյակն են հաշորգարար։ (էջ 491)։

276. Կաֆայում (Բեռոզոսիա) նահատակում են Աստվածատուրի 18-ամյա զեղեցիկ տղային այն պատրվակով, թե ուրիշ թաղաքում մահճական է դարձել, եկել է Կաֆա, ուրացել է մահճականությունը։ Գատավորը հակակնում է, որ վկանները սուտ են խոսում, ազատում է, բայց մահճական մոլեռանդ կրոնավորները նահատակում են (ըստ Աճառյանի) 1567թ.։ (էջ 492)։

277. Նաղալը Մկրտիչ Նաղալն է, որ ծնված պետք է լինի 14-րդ դարի վերջերին։ Մեր միջնադարյան նշանավոր տաղերգուներից է, որ մի շարք բանաստեղծությունների հետ գրել է նաև, «Ողբ վասն մեռելի»։ Դավրիժեցին այս «Ողբն» է հիշատակում (Աղբյուրներում հանդիպում է նաև Մկրտիչ Նկարագիր անվամբ։— Խմբ.)։ (էջ 492)։

278. Բնագրում բառն է լալ, որ հնդկերեն է և նշանակում է «հարյուր հազար»։ (էջ 506)

279. Ժամանակագիրը այսպես է գրում այդ առթիվ. «Եւ ի Թին ՌՃԱ (1652) Շահիջան Բաղաւորն Հնդկաց առաքեաց որդի իւր՝ շահզատայ Օվրանզզիրն էձՌ (7000, 000) մարդով և Սազուլա խանն սարդար կանգնեաց ի վերայ Ղանդահարայ, որք եկալ ասպատակեցին զըրբզն և Բ կես ամիս (երկուսուկես) նստան, ԻՌ (20 հազար) մարդ սիահի շարքվեցան Թող զօրդիրազարի մարզն և բեռնակիրսն»: Տես Վ. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ» հ II, էջ 429; (էջ 506):

Ա Ա Ձ Ե Ա Ն Ո Ւ Ե Ն Ե Ր Ի Յ Ա Ն Կ

Ա	
Աբաղա-փաշա— 444, 445, 500 501, 503	Ախիջան—խոջա—381
Աբաս (տուշարանդա շեյխի որդին) —478, 479	Անմաղ Ջահանգիր սուլթան— 439, 442—444, 449, 451—453, 480, 497—499
Աբաղուլի խան (Ամիրզոնա խանի որդին)— 528	Անման սուլթան—38
Աբայ խան (հետ քազավոր)— —488	Անմեղ փաշա— 78, 496
Աբդուամանման Մուսալիմ— 74	Աղամիր— 157, 158
Աբխաղամ— 18	Աղիջան— 124
Աբուսամի (Սենեֆերիմի որդին) —485	Աղշամար— 124
Աբրահամ Եպիսկոպոս— 488	Աղշազան փիր— 78
Աբրահամ Երանեի— 516, 522	Աղսաղ Մահմեդ խան— 84
Աբրահամ ճահապետ— 218	Աղսր բեգ— 492
Աբրահամ ֆահանա—496	Ամիր Համզա Միրզա— 491
Աղամ ճախանայր— 464, 485	Ամիրզոնա խան— 33, 40, 42, 43, 48, 49, 66, 157, 158, 164, 167—169, 173, 176, 182—184, 210, 223, 233, 236, 237, 248, 250, 446, 500, 528
Ազարիա վարդապետ— 345	Ամիրզա (Մահմեդ բեկի որդին)— —332
Աբարեկ իշխան— 25, 56, 87	Ամիրզեզին— 491
Աբմաջա խալիֆ—492	Ամիրխան խոջա— 191, 384
Աբանաս դպիր—527	Ամիրխան իշխան—472
Ալադին սուլթան—443	Անանիա առաքյալ— 181, 233, 235, 248, 251, 314
Ալանվերդի—409	Անավարզեցի— տես Գրիգոր Անա- վարզեցի
Ալանվերդի խան— 36—38, 40, 47, 67—69	Անդրե առաքյալ— 146, 147
Ալեֆառնադր քազավոր—25, 84, 86—91, 507	Անդրեաս երեց— 175 223, 278, 279, 281—284, 499
Ալեֆառնդր Մակեդոնացի— 441, 463, 491	Աննադր— տես Դավիթ Աննադր
Ալբուն—152—155	Աննի խոջա— 282
Ալի փաշա— 26, 497, 498	Աջա տերտեր— 152
Ալխազ—493	Աջաֆ— 490

չեցի

Ապարանցի— տես Սիմոն Ապարանցի

Ապիրաւ— տես Գրիգոր Ապիրաւ Առաքել Բաղիշեցի— 345

Առաքել Գավրիժեցի— 345, 523, 527, 528, 529

Առաքել կարողիկոս— 44, 343, 477

Առնչեցի— տես Սահփանոս Առնչեցի

Ասող բեգ— 178

Ասորի— տես Սփրեմ Ասորի

Ասովածածիկ— 320

Ասվածատուր (Նրուսաղեմի Եպիսկոպոս)— 261, 263

Ասովածատուր (Գեղարդի Եպիսկոպոս)— 23, 26, 48

Ավառիա— 362, 363, 363—372

Ավդալ խան— 25, 27, 28, 506

Ավետիս— 427, 429—431

Ավետիս— 507

Ավետիս Էրեց— 529

Ավետիք Բանանա— 136

Առոմ (Սենեֆերիմի որդին)— 485

Արիստակես— 201

Արիստակես Եպիսկոպոս— 22

Արիստակես Լաստիվեցի— 485

Արիստակես Հայրապետ (Գրիգոր Լաստիվեցիի որդին)— 182, 341

Արիստակես վարդապետ— 201, 209, 241, 290, 291

Արզուն խան— 487, 488

Արնիշեցի— տես Չորքան Գրիգոր

Արտաշես արքա— 220

Արտուրաք բեգ— 47

Արեակաղնեցի— տես Դավիթ Արեակաղնեցի

Արեանշիկ— 153

Քազրաւ բազավար (Ալեքսանդր բազավորի որդին)— 507

Քազրատունի— տես Սիմոն Քազրատունի

Քաղայամ— 221

Քաղակ բազավար—221

Քաղատար— 129

Քաղիշեցի (տես Առաքել Բաղիշեցի)— 345

Քանդամ բեկ— 178

Քաղիշեցի— տես Խաչատուր Բաղիշեցի, տես Հովն. Բաղիշեցի

Քայազիդ սուլթան— 439 443, 451

Քայազիդ Խորոմ սուլթան— 439, 443, 445—451, 490—493

Քայինգուր բեկ— 237, 238

Քայրամ փաշա— 445

Քալի— տես Բաստանչի

Քարդուպիմես առաքյալ— 398

Քարձարեղցի— տես Կոստանդին Քարձարեղցի

Քարսեղ արքեպ—209

Քարսեղ վարդապետ— 21, 195, 345, 507

Քարսեղ վարդապետ— 306—309

Քարսեղ Գավառցի վարդապետ— 306, 315, 345

Քարսեղ կարողիկոս— 343

Քաղար իշխան— 428, 429

Քալիք փաշա— 500

Քզուզ Պետրոս (խոջա Պետրոս)— 271, 277

Քեզում բազունի— 329

Քենգաղ—238

Քեյքարս— տես Մարցի

Քեֆաշ խան— 112

Քաստանչի Բաշի իշխան— 515

Քեզում Հովնանէս Բաստանցի— 491

Քարհան Ղաթի—490

Քուսայիդ խան— 491

Գարիկի հրեշտակապետ— 528

Գագիկ արքա— 329

Գայանե (սուրբ կայս) — 147, 248, 257, 258

Գավառցի— տես Բարսեղ Գավառցի

Գերանեց Զիրաֆ—381

Գլխողի բալայի— 494

Գիլան (մակառնուր Զորջանեք) — 479

Գիտնական— տես Հակոբ Գիտնական

Գիլում— 153, 159, 160

Գոմրուկ խան— 513

Գորգի— 86, 89, 90

Գորգի բազավար— 87, 88, 92, 428

Գրիգոր— 139, 140, 141

Գրիգոր Անավարզեցի կարողիկոս— 340, 388, 389

Գրիգոր Ապիրաւ կարողիկոս—340

Գրիգոր Եպիսկոպոս— 149, 226

Գրիգոր Կոստանդին (Նակ' ս. Գրիգոր, Կոստանդին) — 23, 66, 149, 150, 160—163, 167, 168, 170—

—172, 182, 241, 251—253, 303, 324, 251—253, 303, 324—329,

331, 334, 335, 337, 338, 340—

—342, 404, 407, 494, 498, 504

Գրիգոր Կեսարացի— 21, 225, 226, 227, 290, 291, 292, 345

Գրիգոր Խաննոդաք կարողիկոս— 340, 341, 342

Գրիգոր Ղաչարեցի վարդապետ— 346

Գրիգոր Մակվեցի կարողիկոս— 341, 391

Գրիգոր Մուսարեկցի կարողիկոս— 341

Գրիգոր Նարեկացի — 485

Գրիգոր Կրոնավար—326

Գրիգոր սպասավար— 151

Գրիգոր (Մրապիտ վարդապետ) — 23

Գրիգոր Տաթևացի— 306, 344, 345

Գրիգոր Տարնուցի վարդապետ— 344, 345

Գրիգոր Բանանա— 492

Գրիգոր Քարավիժ— 340

Գրիգոր կարողիկոս— 340

Գրեակապիտան Չրփուլա— 78

Գալուստիպ— 78

Գանձան բազավար— 472

Գանեիկ— 306, 344, 345

Գանեիկ Մարգարե— 66, 297, 329

Գավիթ Աննալոք— 310

Գավիթ Արեակաղնեցի կարողիկոս— 340

Գավիթ Բեկ— 185

Գավիթ (Գրիգոր Բանանայի որդին)— 492

Գավիթ Եպիսկոպոս— 201

Գավիթ բազավար— 486, 487

Գավիթ բազավար (Գեմետրի որդին)— 86, 88, 89, 91

Գավիթ (Քամրազ բազավարի որդին)— 505

Գավիթ կարողիկոս— 18, 19, 24, 26, 29, 34, 152, 163, 165—167,

172—177, 185, 186, 337, 341, 343

Գավիթ մարգարե— 240, 250, 259, 476

Գավրիժեցի— տես Առաքել Գավրիժեցի

Գարեհ—331

Գարիշաբուր—506

Գեմետրե բազավար (Գավիթ բազավարի որդին)— 486, 491

Գիպիտ խան— 506

Գիլանի խոջա— 384

Գիանիսիս Արիստապացի— 320

Գիսկրոս վանաճայր— 486

Նզդիշերի իշխան— 385, 387, 392—
—394, 397, 398, 425
Նզեկիսի— 46
Նյուդուգ Արարեկ— 488
Նղիա Մարգարե— 250
Նղիշե կաթողիկոս—342
Նսայի— 484
Նսայի մարգարե— 147, 240
Նսայի Նշեցի— 344
Նսայի վարդապետ— 273
Նեսիա զյիր— 517
Նեսիա խոշա— 193, 195, 196
Նեսիա մարգարե— 46, 54, 516
Նեսիա վարդապետ— 490
Նվա— 109
Նրանելի— տես Իսահակ Երանելի,
Հակոբ Նրանելի
Նփրեմ Ասորի— 327

Ձ

Ձալ իշխան—507
Ձախիա հայրապետ— 329, 330,
331, 334, 341, 342
Ձախիա վարդապետ— 193, 274,
329, 495
Ձէլի փաշա— 503
Ձիալ փաշա— 178
Ձիւրաբ— տես Գերաբեկ
Ձնանշան քաղաք— 342
Ձոբարեկ— 46, 331
Ձուլիկար խան— 28, 30, 31, 69,
86

Է

Էփր հաշի— 425
Էլիազ սուլթան— 47
Էնդիմալ— Գովար Նպարհու—346
Էվլիա բեկ— 402, 403

Թարառուկ (Ավետիսի Եղբայրը) —
—431
Թաղեսու առաքյալ— 312, 233, 325
Թաղեսու կաթողիկոս— 342, 343
Թարար խան— 442, 452
Թամրազ քաղաք— 84, 88, 91,
99, 100—103, 107—116, 120—
—122, 163, 505, 508, 509
Թամրազ խան— 490
Թանդրի Թանիմազ— 78
Թանիմազ շահ— 473
Թանիմազզուլի բեկ— 172
Թանիմազզուլի Հանես խան— 25,
56, 57, 59, 60, 87, 167, 170—
—172, 183—185, 188, 249,
250, 446, 503
Թավուլ փաշա— 78, 496, 498
Թեմուր— 491
Թեոդորոս— 341
Թոխմախ— տես Մանուկ իշխան
Թովմա վարդապետ— 341
Թովմա բարոնապետ— 327
Թորոս քաղաք— 489
Թորոս վարդապետ— 344, 345,
346, 391
Թովալ Օսման փաշա— 72
Թուրքամ իշխան— 490
Թումա Եպիսկոպոս— 206
Թումա խոշա— 191, 399
Թուրման— 491

Ի

Իբրանիմ բեկ— 400
Իբրանիմ բեկ (Սուլթան բեկի Եղ-
բայրը) — 402—405, 494, 496
Իբրանիմ սուլթան— 338, 354,
412, 443, 447, 448, 504, 505,
510, 516
Իբրանիմ փաշա— 503
Իբրուզ— 488
Իլտրում— տես Բայազիդ Իլտրում

Իմամզուլի խան— 120, 500
Ինչաղա փաշա— 78, 497
Իսահակ— 367, 388
Իսահակ Երանելի— 516, 522
Իսմայիլ (Դանիսե քաղաքի որ-
դիկ) — 472
Իսմայիլ քաղաք (Շրխ Հայդա-
րի որդի) — 453, 454
Իվանե աքարեկ— 487

Լ

Լարոնացի— տես Կոնստանդին
Լարոնացի
Լալա (Լալարեկ) — 142, 145, 238,
268
Լալա փաշա— 87, 473, 479, 480,
494
Լաստիվեցի— տես Արիստակես
Լաստիվեցի
Լավանդ (հակ Սարգիս) — 496
Լավաստի քաղաք— 88, 92, 103,
106—111, 113, 114, 116—
—119, 163
Լենկբեմալ— 439, 443, 490
Լուրաշ վերակազմ— 289
Լուե քաղաք— 487, 488, 489

Խ

Խալիֆ բեկ— 446
Խալիլ փաշա— 452, 499, 501
Խաչատուր— 412—420
Խաչատուր Բաղիշեցի վարդապետ—
—345
Խաչատուր Կեսարացի վարդապետ—
—291, 292, 296, 312, 315—
—317
Խաչիկ խոշա— 32
Խաչիկ կաթողիկոս—486
Խաչկո— 303—305
Խաչկո արքեպ (Տես՝ Օնոփրիոս
արքեպ) — 287
Խըր փաշա— 38
Խուրով սուլթան— 140

Խուրով փաշա— 192, 193, 357,
429, 430, 431, 445, 502
Խուրովիկ—259
Խուրազմ—487
Խարենացի— տես Մովսես Խարե-
նացի
Խուրաբանդա շինյա— 473, 478,
479, 494

Կ

Կալո— տես Կարապետ Կալո
Կախիկ վարդապետ— 490
Կարապետ— տես Հովհաննես Կա-
րապետ
Կարապետ Եպիսկոպոս— 164, 201
Կարապետ (Չագ) վարդապետ—
—211, 340, 341, 345
Կարապետ գրիշ— 327
Կարապետ Կալո վարդապետ— 345
Կատարմիդե— 487
Կեղեցի— տես Ղուկաս Կեղեցի
Կեսարեցի— տես Կոնստանդին Կե-
սարացի
Կիրակոս— 199, 200, 202, 206,
207, 226, 230, 327, 328, 384
Կիրակոս վարդապետ— 491
Կլայեցի— տես Ներսես Կլայեցի
Կոզա խոշա— 493
Կոզե վարդապետ— 248, 315,
502
Կոմիտաս կաթողիկոս— 484
Կոստանդին— 341
Կոնստանդին— 25, 86, 87, 89—
—91
Կոնստանդին Բարձրաբերդցի կա-
թողիկոս— 340
Կոնստանդին Կեսարացի (ճեռձ-
վածոյ) կաթողիկոս— 340
Կոնստանդին կաթողիկոս— 340,
488
Կոնստանդին Լամբրոնացի կաթա-
ղիկոս— 340

Կոնտանդին Պրահագործ կարո-
դիկոս— 340
Կոնտանդին (Մենեմբրիմի որ-
դին) — 485

2

Հակոբ Գիտնական— 340
Հակոբ Երանեփ— 516, 522
Հակոբ խոջա— 352
Հակոբջան— 321
Հակոբ Ջուլայեցի կարողիկոս—
— 159, 226, 269, 272, 273,
278, 289, 338, 343, 407, 408,
424, 427, 506, 510, 525, 526,
527
Հակոբ Ասեցի— 340
Հակոբ Բանան— 259, 342
Հաղպատեցի— տես Դուկաս Հաղ-
պատեցի
Համան— 220
Համազասպ եղիսկապոս— 236
Համբրենի— 198
Համզա— տես Ամիր
Համշենցի— տես Հովն. Համշենցի
Հայարիզազա— 521
Հայդար սուլթան— 494
Հայրաբեկ— 25, 28
Հայկազն մեյիֆ— 176
Հայրապետ— 309
Հայրապետ արեզա— 493
Հայրապետ խոջա— 212
Հանդամ— 60
Հանիս— տես Քանիազգուփ
Հասան-ալի— 331
Հասանբեկ— 492
Հասան փաշա (Ցազիլի եղբայրը)—
— 441, 496, 498
Հասիբ Անմաղ փաշա— 501
Հեթում քաղավար— 325, 488
Հեսու— 45, 46, 215, 250
Հիսուս— տես Քրիստոս
Հոնան վարդապետ— 304, 305,
344, 357
Հովել վարդաբեկ— 518

Հովնան մեծարար— 340
Հովնան Յենեցի— 237, 256, 484
Հովնանենս— 170, 171, 258
Հովնանենս աղա— 42
Հովնանենս արեզա— 389
Հովնանենս Բաղիշեցի— 345
Հովնանենս քաղավոր— 486
Հովնանենս խոջա— 354
Հովնանենս կարողիկոս— 192,
346, 488
Հովնանենս Կարապետ— 405, 407,
408
Հովնանենս Համշենցի— 306, 344,
345
Հովնանենս Մկրտիչ— 121
Հովնանենս Շիրակ վարդապետ—
— 345
Հովնանենս Ոստանցի— 345
Հովնանենս վարդապետ (Հզու-
ից)— 24, 344
Հովնանենս վարդապետ (Քաջբե-
րունուց)— 22
Հովնանենս վարդապետ— 255,
327, 328, 334, 335, 344, 472,
477
Հովնանենս Ոտնայեցի— 21
Հովնաբան— տես Նազաշ Հովնա-
բան
Հովսեփ— 64
Հովսեփ (հրեա)— 64
Հովսեփ կարդիկոս— 341
Հովսեփ Ղարաբաշ մեյիֆ— 124,
126, 128, 129, 131, 134
Հովսեփ (Ոզմից)— 309
Հովսեփ վարդապետ (Հզուից)—
— 22, 345, 484
Հոփսիմն (ս. կույս)— 146, 147—
— 151, 156—160, 167, 171,
175, 248, 247—260, 272
Հոմկլայեցի— տես Սանփանոս
Հոմկլայեցի
Հոդա— 35, 129, 367, 368
Հուլավու խան— 487, 488
Հումա փաղիշան— 439

Հուսեին աղա— 385—389, 392—
— 394
Հուսեին էֆենդի— 503
Հուսեին փաշա— 78, 493, 495
Հուսիկ— 326, 331
Հուսիկա եղիսկապոս— 128, 129

2

Ջագ (Կարապետ վարդապետ)—
— 211

Ղ

Ղազար— 526
Ղազարոս— 287
Ղափ խան— 24, 25, 27
Ղազախ խան— 500
Ղալարեկ— 25
Ղասում մուլլա— 406, 403
Ղառչա խան— 69, 70, 223, 238,
500
Ղարաբանդա խան— 489, 490
Ղարաղաշ խան— 78, 496
Ղարա Ցազիլի— 77, 78, 441,
494—496
Ղարայուսուֆ— 328, 495
Ղարաչարակ— 432, 435
Ղարաբաղ— տես Հովսեփ Ղարա-
բաղ
Ղըրխյաման— 126
Ղոնիս— 493
Ղըխյալա մեյիֆ— 129, 131—135
Ղուլ— 491
Ղուլբաթ— տես Նազիրու
Ղուկաս Կեղեցի— 20, 345, 493
Ղուկաս Հաղպատեցի— 477

Ճ

Ճզնազգեխաց— տես Միմոն Ճզնազ-
գեխաց

Մ

Մակեդոնացի— տես Արևաճազ
Մակեդոնացի
Մարեոս առաքյալ— 147
Մալախ Մանմուղ փաշա— 506
Մակվեցի— տես Վարդան Մակվե-
ցի
Մանմաղ բեկ— 332
Մանմաղ բեկ (Եկարիչ)— 323
Մանմաղ (Ենդիմալ Գովարթ) բեկ
— 346, 358
Մանմաղ (Քոխմախ մակաճու-
ճուլ) իշխան— 472
Մանմաղ հոնգակար սուլթան—
— 36, 38, 439, 441—443, 449—
— 452, 476, 480—481, 491,
497
Մանմաղ սուլթան— 439, 443,
449, 450, 494
Մանմաղ փաշա— 36, 37, 78, 496,
Մանմուղուլի խան— 145, 248,
261, 268—272
Մանմեղ— 62, 120, 121, 139,
156, 157, 364, 366, 373, 374,
409—411, 414, 415, 417, 421,
422, 425—427, 430, 484, 489,
521, 522
Մանմեղ— 408, 409
Մանմեղ— 409
Մանմեղ սուլթան— 338, 424,
427, 437, 443, 448—451, 492,
505
Մանմուղ— տես Մալախ
Մանտեփ խոջա Գրիգոր (Մոճա-
կենց Գրիգոր)— 277
Մանտեփ Մխիթար— 327
Մաղախ վարդապետ— 452
Մաղաուղ խոջա— 193, 195
Մաղաուղ սուլթան— 156—153,
432,
Մանգուլ խան— 487
Մանեղլի— 78, 503

Մանվել Եղիսեպոս (Խորվրայի) — 22, 23, 26, 188
 Մանվել Եղիսեպոս (Հավուց բանի) — 26, 48, 49
 Մանվել (Հունաց բազավոր) — 492
 Մանուկ — 22
 Մարգարա — 253
 Մասին — 337, 368
 Մատաղ — տես Ներսես Մատաղ
 Մարիամ — 120
 Մարխաս շեկերի — 384, 399, 405
 Մարկոս — 302
 Մատրնոս վարդապետ — 443
 Մարտիրոս Եղիսեպոս — 159, 164, 165
 Մարտիրոս Եղիսեպոս (Մուղենցի) — 276
 Մարտիրոս Բանանա — 411
 Մատուղ բեկ — 495
 Մեկիք Բարա — 25
 Մեկիք Հայկազ — 25
 Մեկիք շահ — 124
 Մեկիք Սպարտ — 25
 Մեկիք փաշիկ — 25
 Մեկիքսեր արևդա (Վժանցի) — 309, 315
 Մեկիքսեր Երևանցի — 306
 Մեկիքոր — 159
 Մեկիքսեր կարողիկոս — 18, 19, 24—26, 29, 34, 146, 149, 163—170, 172—178, 180—184, 215, 219—221, 223, 224, 231, 232, 234, 236, 285—287, 310, 312, 313, 314, 337, 343
 Մեսրոպ վարդապետ (Մաշտոց) — 276, 277, 484
 Մեսրոպ կարողիկոս — 340
 Մինաս (ճկարիչ) — 323
 Միրաբեկ (Յզդիշերի իշխան) — 393
 Միրավոյա շնյա — 137
 Միրախ խոջա — 191
 Միրզա — տես Ամիր

Միրզամամեդ — 152
 Միրզա Սադղ — 373
 Միրջարաք իշխան — 68, 70
 Միրզեյի — 176
 Միբայել Բեռնակապետ — 528
 Միսիրար — 424, 426, 427
 Միսիրար Գոշ — 344, 487
 Միսիրար կարողիկոս — 340
 Մկրտիչ — տես Հովհաննես Մկրտիչ
 Մկրտիչ Եղիսեպոս (Հավուց բանի) — 188
 Մկրտիչ Եղիսեպոս (Մակուի) — 275, 276
 Մկրտիչ վարդապետ — 326, 328
 Մոմակենց — տես Մահեստի Խոջա Գրիգոր
 Մովսեցի — տես Ներսես Մովսեցի
 Մովսես — 226
 Մովսես արեղա — 389
 Մովսես Երանեյի — 522
 Մովսես Խորենացի — 54
 Մովսես մարգարե — 45, 66, 250, 360
 Մովսես Սյունեցի վարդապետ (ճեռա՝ կարողիկոս) — 22, 175, 181, 186—191, 192—194, 201, 206, 223, 225, 227, 228, 230—246, 248—251, 273, 274, 277—279, 284, 285, 287, 290, 291, 297, 300, 312, 313, 315, 343—345, 445, 501, 502
 Մորիկ կայսր — 48
 Մարցի (Սուլթան Բեյբարս) — 488
 Մամամաղ սուլթան — 443, 444, 448, 450, 510, 517, 521
 Մամին փաշա — 503
 Մուսուլա իմամ — 361
 Մուսայիմ — 388
 Մուսաաֆա բեկ — 78
 Մուսաաֆա բեկ (Գվիրոզի) — 78
 Մուսաաֆա բեկ (Սուլեյման բեկի իշխան) — 400

Մուսաաֆա բեկ (Սուլեյման բեկի աներ) — 400, 401
 Մուսաաֆա սուլթան — 442—444, 449, 450, 452, 453, 499, 500
 Մուրաղ (Բյուզանդիայի բազավոր) — 473
 Մուրաղ Խրիստյալ — 124
 Մուրաղ սուլթան — 192, 250, 420, 439, 443, 448, 450, 451, 477—481
 Մուրաղ սուլթան (սուլթան Սեմազի որդին) — 439, 443, 449—451
 Մուրաղ սուլթան (սուլթան Սեյիմի որդին) — 439—441, 443, 444, 449—451, 493, 494
 Մուրաղ սուլթան (սուլթան Յամանի որդին) — 443—447, 500, 502—504
 Մուրաղ փաշա — 498
 Մուրթազա փաշա — 250, 445, 446, 502, 503
 Մուրտե — 220

3

Յագիչի — տես Ղարա Յագիչի
 Յազուր բազավոր (Շահնշահի բուր) — 453, 454
 Յազուր փաշա — 194, 195, 492
 Յանգյամիմի բազավոր — 305
 Յոլասովմաղ — 78
 Յուլադստի փաշա — 78, 497

Ե

Եսգար — 25
 Եսգար խոջա — 61, 152, 153, 155, 156, 162, 186, 187, 190, 235, 239, 240, 245, 252, 407
 Եսգի բեկ — 171
 Եսգիրյուր Ղարաբ ազա — 167
 Եսբան — 513
 Եսգաշ (Հովհաննես) — 492

Եսգի բեկ — 167
 Եսգիրյուրի իմամ — 263, 347, 348, 351, 528
 Եսգիրի — 414, 416
 Եսսիֆ փաշա — 69, 493
 Երեսն Ամկեցի — 306, 345
 Երեսն Բաղիշեցի — 306, 345
 Երեսն կարողիկոս — 342
 Երեսն Կյալեցի — 338, 340
 Երեսն Հայրապետ — 327, 484
 Երեսն Մատաղ — 306, 345
 Երեսն Մովսեցի վարդապետ — 201, 202, 206, 306, 309, 310, 312, 315
 Երեսն վարդապետ (Իշ զավանից) — 344
 Երեսն Սեբաստացի — 325
 Երեսն կարողիկոս (Սսի կարողիկոս) — 261, 263, 325, 340
 Երկողայոս — 408—412
 Եոյ — 436
 Եշեցի — տես Յսայի Եշեցի
 Եսրիշան տանուտեր — 137, 138

Շ

Շահ-Աբաս Առաջին — 24, 26, 27, 30—34, 37, 39, 42, 44, 46, 47, 55, 56, 58, 61, 69, 64, 86, 89, 92, 96—99, 103, 105, 107—121, 123, 134, 135, 140, 141, 144, 160, 161, 190, 216, 218, 223, 236—239, 244, 251, 278, 279, 283, 337, 350, 352, 353, 356, 358, 405, 407, 432, 445, 452, 453, 459, 496—501
 Շահ-Աբաս Երկրորդ — 65, 67, 69, 71, 77, 79, 83—85, 269, 338, 346, 349, 352, 453, 504, 505, 507—509, 528
 Շահարմեն — 486
 Շահբանդա իմամ — 500

Շանքամազ բազմադր— 86, 87, 440, 453, 493, 494
 Շան—Իսմայիլ— 493, 494
 Շանիսմայիլ (կարմրագրիս)— 86, 440, 451, 453, 492, 493, 494
 Շանիչան (Հեղկաստանի բազմադր)— 506
 Շանին շալարին— 227
 Շանխուրանդա— 86, 453
 Շանեզար մեխի— 85
 Շանեզար խան— 503
 Շանուխ— 491
 Շանուզ բեկ— 284, 285
 Շանսեֆի— 64, 65, 150, 191, 245, 246, 250, 252, 322, 323, 337, 446, 453, 501—504
 Շանսեֆի երկրորդ (Շան Սուլեյման)— 454, 509, 510
 Շամիրամ— 332
 Շապուհ— տես Մարյուտու
 Շեխուրբեկ— 397
 Շիլս—Հայդար (Շիսաաֆի որդին)— 453, 454
 Շիրակ— տես Հովհաննես Շիրակ
 Շիրակ խոջա— 191
 Շիսիչան փաշա— 503
 Շխատաֆ— 453
 Շմալուն եպիսկոպոս— 403 — 408
 Շմեզդին— 491

Ո

Ոլոզին— 260
 Ոհիբե— 487
 Ոսկան վարդապետ— 276
 Ոստանցի— տես Բրզոտ, տես Հովհաննես Ոստանցի
 Ովրդանկելի փաշազն— 506

Չ

Չարագ Իրանիմ— 174, 175
 Չելեպի— տես Անտոն

Չիրախ— 492
 Չիլ փաշա— 498
 Չոմար— 386—392, 394—398, 405,
 Չորթան Գրիգոր Արևիշեցի— 306, 345
 Չրաղ սուլթան— 29
 Չրաղ բեկ— 178
 Չրաղ խան— 322

Պ

Պատրիկ— տես Վարդ Պատրիկ
 Պարոն լույս— 492
 Պեխ— 492
 Պետրոս ստաֆյալ— 261, 310, 316, 318, 327
 Պետրոս Գեաղարձ հայրապետ— 485, 486
 Պետրոս եպիսկոպոս— 398, 399, 404
 Պոզոս Մոկացի վարդապետ— 201, 209, 211, 213, 215, 219, 228, 230—232, 279
 Պոզոս վարդապետ— 154, 175, 193—198, 206, 224, 284
 Պոզոս վարդապետ— 300, 301
 Պոզոս կաթողիկոս— 341
 Պատիկ ալա— 253
 Պրկոշ իմաստասեր— 319
 Պրոնազործ— տես Կոնստանդին Պրոնազործ

Ղ

Ղալալ— 253
 Ղալալ բեկ— 25
 Ղալալի— 496, 498
 Ղամանգիր— տես Անմազ
 Ղաղաբան— 491
 Ղանիբեկ փաշա— 490
 Ղանդիլխան Ալի փաշա— 78
 Ղաֆար հերիբեհի— 478, 481, 482, 483, 494

Ղաֆար փաշա— 36, 87
 Ղեմշեք բազմադր— 326—332, 453
 Ղեհանջան ազնվական— 477
 Ղեհանջան բազմադր— 326—332, 453, 491, 492
 Ղզալոզլի փաշա— 40—42, 44, 54, 66, 67, 70, 72, 83, 497
 Ղորչաներ— 479
 Ղուզայեցի— տես Սիմոն Ղուզայեցի

Ռ

Ռամիչան խոջա— 193, 195, 334

Ս

Սարեբա— 510—514, 516—522
 Սարյուտոս (Շապուհ երկրորդ)— 52, 55, 97
 Սարու խոջա— 107, 108
 Սադր— 362
 Սարքի— տես Լավանդ
 Սալանադին սուլթան— 487
 Սալիշմեհ շահ— 492
 Սալմաստեցի— տես Մանփանոս Սալմաստեցի
 Սահակ— 484
 Սահակ աբեղա— 389
 Սահակ կաթողիկոս— 181, 182—198, 224, 236, 243, 244, 445
 Սահակ Պարբե— 327
 Սայիդ— 363
 Սայիդ փաշա— 38, 39
 Սայրուլե խան— 506
 Սամվել աբեղա— 418
 Սատուն— 370, 371
 Սարգիս— 81
 Սարգիս— 447, 449, 504
 Սարգիս եպիսկոպոս— 198—200, 202, 206, 209, 226, 227, 230, 249, 334, 336
 Սարգիս կաթողիկոս— 342, 385

Սարգիս կաթողիկոս— 342
 Սարգիս վարդապետ— 477, 491
 Սարգիս ֆանանա— 462
 Սարուփան բեկ— 25
 Սարուփան խոջա— 191
 Սաֆար խոջա— 61, 152, 156, 160, 171, 253
 Սաֆրազ— 61, 235, 252, 322
 Սեփիմ խան— 112
 Սեփիմ սուլթան— 435, 440, 443, 445, 450, 492, 493, 500
 Սեփիմ սուլթան (սուլթան Սուլեյմանի որդին)— 435, 440, 443, 449, 450, 451, 493
 Սելիդ— 409
 Սենեֆերիմ— 485, 486
 Սերաստացի— տես Երեսու Սերաստացի
 Սեֆի— 245
 Սիմոն— 503
 Սիմոն Ապարանցի— 345
 Սիմոն Քազարտունի (Վրաց բազմադր)— 473, 480, 483
 Սիմոն խան— 25, 36, 86, 87, 111
 Սիմոն ձգնուզյաց— 345
 Սիմոն (Մարկոսի որդի)— 302
 Սիմոն Ղուզայեցի վարդապետ— 315—319, 493, 507
 Սիմոն ֆանանա— 319
 Սինան— 253
 Սինան Խլխան— 388
 Սինան փաշա— 40, 41
 Սիթուն— 421—424
 Սմբատ Մազիսարոս— 485
 Սմբատ Տիեզերակալ— 484
 Սյունեցի— տես Մտեփանոս Սյունեցի, տես Մովսես Սյունեցի
 Սողոմոն— 484
 Սողոմոն իմաստասեր— 195, 220, 222
 Սոֆի— 498
 Սպանդար բեկ— 136, 137
 Սսեցի— տես Հակոբ Սսեցի

Մտափն առաջալ— 200
 Մտեփան վարդապետ— 435, 436
 Մտեփանու— 182, 241, 325
 Մտեփանու— 260
 Մտեփանու եպիսկոպոս— 490
 Մտեփանու Առեփեցի— 324
 Մտեփանու Հոսովյայեցի կարդիկոս— 340, 488
 Մտեփանու Նախավկա— 74, 214, 215, 273, 289, 327, 331, 407, 528
 Մտեփանու Սալմաստեցի կարդիկոս— 342
 Մտեփանու Սյունեցի— 320
 Մտեփանու վարդապետ— 202
 Մտեփանու վարդապետ (Ավովից)— 319, 320
 Մտեփանու Տարանեցի— 485
 Մուխչյան բեկ— 385—389, 391, 392, 394, 398—404
 Մուխչյան սուլթան— 435, 440, 443, 445—452, 492, 493
 Մուրք Ասվածաձիկ— 528
 Մուրք Կարապետ— 528
 Մրապիտն կարգիկոս— 19—24, 29, 33—35, 40, 169, 193, 225, 227, 343, 345
 Մխանդար— 491, 496
 Մնատի տանիկ— 449

վ

Վանական վարդապետ— 457
 Վարդ Պատրիկ— 379, 380
 Վարդան եպիսկոպոս— 149, 150
 Վարդան Մակվեցի— 345
 Վարդան վարդապետ— 344, 358
 Վասիլ բագավոր— 485
 Վաստ Խոջա— 402
 Վարդետ Մինաս— 321, 322, 323 (նույնն է Մինաս)
 Վեստ (Սենեֆերիմի որդին)— 485
 Վլադիսլավ բագավոր— 299
 Վրբանես եպիսկոպոս— 334—337, 349

Տ

Տարեացի— 306
 Տահիր սուլթան (Սուլթան Անմադի որդին)— 490, 491
 Տարանեցի— տես Մտեփանու Տարանեցի
 Տրդատ բագավոր— 331
 Տոկիժ բագավոր— 486

ՈՒ

Ուլամի որդի— 25, 28
 Ուղուրլու բեկ— 124, 126, 127, 176.
 Ուռնայեցի— տես Հովնանենա Ուռնայեցի

Փ

Փարի (Լավասափ բագավորի ֆայրը)— 100
 Փեֆեր խան— 112
 Փեպալա փաշա— 495
 Փիլիփոս կարգիկոս— 191, 194, 248—258, 260, 261, 264—271, 273—278, 300, 302—305, 318, 320, 324, 337, 343—345, 412, 420, 502, 504—506, 524, 525, 526
 Փիլիպոս եպիսկոպոս (Բջեֆի վանքի)— 277
 Փիննաս— 367, 368, 370, 371
 Փիրբուղաղ խան— 69
 Փոլատ խոջա— 191

Ք

Քարթլափ խան— 503
 Քանդարի— 160
 Քաներլու Մանմեղ իշխան— 72
 Քարավեժ— տես Գրիգոր Քարավեժ
 Քեղայր խան— 490

Քյասաբյան— 78
 Քյուսուդի— 78
 Քոսա Սաֆար— 78, 496
 Քրիստոս (նաև՝ Հիսուս, Հիսուս Քրիստոս)— 23, 65, 73, 99, 105, 120—123, 128, 129, 133—135, 139—141, 159, 171, 187—199, 202, 207, 213, 214, 216, 218, 220, 223, 224, 227, 235, 239, 240, 247, 255, 259, 263, 264, 266, 281—283, 285, 297, 299, 306, 307, 314, 316, 330, 338, 345, 405, 408, 409, 411, 412, 414, 415, 416, 418—420, 423, 424, 426—429, 431, 435, 473, 486, 489, 490, 507, 510, 511, 517, 519, 522, 523, 526—529.

Քրլուն— 78
 Քուրդ ամիրա— 331

Օ

Օգբեկ— 473
 Օքման— 478

Օնան եպիսկոպոս— 164
 Օնանջան— 44
 Օնենցի— տես Հովնան Օնենցի
 Օղլան ֆելիշ— 25
 Օմար— 484
 Օմար աղա— 66
 Օնափրիտս արեղա (Տես՝ Խաչկարեղա)— 287, 288
 Օսման գուրապետ— 474, 477—479, 494
 Օսման սուլթան (Անմադ սուլթանի որդին)— 443, 444, 449, 450, 453, 499.
 Օսման սուլթան— 439, 442, 448—450
 Օֆուզանմադ— 174, 279, 499

Յ

Յանրադ— 477, 479, 481, 494
 Յառովա— 238

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ա

Աբաղա բերդ— 403
 Աբեղներ լեռ— 384
 Աբխազիա— 487
 Ագուլիս— 212, 283, 284, 499
 Ալանների դուռ— 441
 Ալախ— 474, 477
 Ալաշկերտ— 40, 52, 352
 Ալեքի վանք— 383
 Ալյուս գյուղ— 421
 Ալեքան գավառ— 47
 Ալեքի բերդ— 490
 Ալվանդ— 492
 Ալալցխայի գավառ— 76
 Ակերման— 439
 Անար— 47, 166
 Աղավնաբերդ— 27
 Աղբակ— 52, 248, 428
 Աղբամարի ս. Խաչ Եկեղեցի— 329, 331, 340, 341
 Աղբամար կղզի— 333—335, 337, 342, 453
 Աղջալա— 41, 44, 74
 Աղջուց վանք— 18, 39, 182, 241
 Աղստև— 85, 96
 Աղվանից աշխարհ— 25, 472, 474
 Անանան— 225
 Ամաղեկ— 215
 Ամասիա— 325, 494, 496
 Ամարտա— 476
 Ամբերդ— 198
 Ամենափրկիչ (Հալուց բառ)— 318
 Ամիգ (Տիգրանակերտ)— 20, 21

35, 68, 71, 83, 169, 343, 408, 412, 440, 441, 494, 496—498, 504
 Ամրդուլու վանք— 306, 309
 Ամուկ գավառ— 421
 Անատոլիա— 515
 Անգուսների վանք— 383
 Անի— 484, 486, 487
 Անկարա— 255, 386, 444, 480
 Անկյուրա— 277
 Աշրաֆ— 244, 501
 Ապարան— 52, 74
 Ապարաններ գյուղ— 151, 153, 154, 158
 Ապրակունիս— 157
 Առակ գյուղ— 431
 Առաքելոց վանք— 383
 Առշակա վանք— 383
 Ասիա— 69
 Ասկնջավա— 306, 309
 Ասորիք— 291
 Աստաղատ— 55, 154, 155, 214, 273, 278, 279, 373
 Աստուրյացառ Բաղաբ— 509
 Աստվածածին վանք (Օձնի գյուղի)— 334
 Աստվածածին վանք (Ջուղայի մոտ)— 57, 58, 168, 277, 327—329, 384
 Ասուփաս— 114
 Ավան— 384
 Ալիֆուրա (գետ)— 118, 119
 Ատրան— 521
 Ատրանա— 439, 450, 520

Ատրպատական— 24, 123, 124, 173, 235, 237, 252, 353, 356, 472, 474, 478, 479, 522,
 Արարիա— 465
 Արագ գյուղ— 273
 Արագած լեռ— 198, 199, 276
 Արագածոտն գավառ— 198
 Արաղբար— 217
 Արաղստան— 141, 144
 Արարալյան Երկիր— 33, 41, 43, 48, 52, 72, 75, 79, 146, 152, 156, 165, 173, 197, 198, 200, 233, 250, 269, 271, 278, 309, 331, 336, 352, 472, 473, 481, 504, 528
 Արախ— 43—45, 55, 58, 74, 107, 165, 183, 216, 273, 474, 479
 Արցիան վանք— 328, 331
 Արծկե— 36—38, 40, 53, 68, 326, 327, 491, 479
 Արդնի— 304, 328
 Արշար— 441
 Արենշ— 22, 36, 38, 40, 50, 329, 345, 352, 394, 484, 491
 Արշակ— 388
 Արտաքիլ— 79, 123, 184, 256, 373, 453, 479, 522
 Արտազ (գավառ)— 275
 Աֆղանիստան— 505

Բ

Բաբերդ— 352, 452, 493
 Բաբելոն— 440, 516, 517
 Բաբուսան գյուղ— 428
 Բաղաշխան— 470
 Բազավան— 331
 Բազնյար— 485
 Բաբուս գյուղ— 171, 172
 Բալաշխան— 466
 Բալխ— 479
 Բալխաններ— տես Ռուսկի
 Բալու գավառ— 498
 Բաղաբ— 352

Բաղեշ— 191, 306, 330, 352, 491, 506
 Բաղխ— 225
 Բաղդադ— 78, 82, 185, 186, 238, 440, 444—446, 452, 488, 490, 497, 500—504
 Բայազետ— 331
 Բանդար— 465
 Բանդարիք— 373
 Բասեն— 35, 40, 53, 80, 352, 493
 Բարկաշատ— 201
 Բարս (Աղբակ)— 248, 428
 Բելգրադ— 502
 Բենգալիա— 465, 467
 Բերա (Հալուց)— 69, 321, 462
 Բերդակա վանք— 383
 Բերդով Եկեղեցի— 384
 Բերկի— 38, 40, 53, 352, 394
 Բղնի գետ— 222
 Բյուզանդիա— 436, 441, 473, 477, 483
 Բոլու— 154
 Բողազի բերդ— 515, 520
 Բջնի— 79, 274
 Բրիտաս— 25
 Բրիեջլովի— 253
 Բուլ Բաղաբ— 492
 Բուլապեշտ— 452
 Բուլղան (Մոլդավիա)— 79, 123, 515
 Բունդար— 151, 373
 Բուրսա— 77, 267, 290, 291, 386, 435, 443
 Բուրվարի— 47, 135, 138—140

Գ

Գագա Բաղաբ— 513
 Գաղիկ— 352
 Գաղ— 278
 Գայանե Եկեղեցի— 260
 Գանդիման— 47, 327
 Գանձակ— 18, 33, 40, 83—85, 91, 98, 99, 101, 116, 123,

356, 441, 474, 478, 479, 487,
494, 497, 523
Գառեի— 18, 43, 48, 50, 52,
74, 174, 318
Գավառապատ— 352, 359
Գեղամա ծով— 52, 507
Գեղարդ— 23, 26, 49
Գեղարձայնյաց գավառ— 74, 75,
85, 157, 159, 477
Գեղեղունի— 124
Գիլան— 373
Գևում գավառ— 421
Գոգարձին բերդ— 27
Գոգարձինյան դաշտ— 496
Գոգարյարա— 361
Գոդրն— 25, 155, 212, 221, 222,
253, 350
Գարի— 103, 108, 163, 166, 474,
481
Գրիմ— 99, 105, 112
Գվա— 174
Գուրբեհանում— 373
Գումուշխան— 499
Գուլարատում— 464, 471
Գևարգ գորավարի վանք— 276
Գ
Գաղիանի— 116, 507
Գանքերե— 467
Գամաղափուն— 18, 78, 82,
474, 523
Գանդի— 176
Գալա գյուղ— 350
Գարաշամբ— 189, 215, 273, 278
406
Գարբի գյուղ— 135
Գարնազին ֆաղաֆ— 445, 502
Գեկան— 464
Գեմիշխ (Դամասկոս)— 490
Գերբենդ— 474, 477
Գերշան— 352, 452, 493
Գիզակ— 25, 474, 476
Գոփարկան— 376
Գումավանդ— 373
Գումանիս— 474

Գլին— 219, 484, 485
Ե
Եգիպտոս— 225, 226, 325, 466,
467
Եզդի— 373
Եղեղնաձոր— 52
Եղեղբերդ— 383
Եմեն— 460, 470, 471
Երզնկա— 352, 485—488, 490—
—494, 522
Երևանի Եկեղեցի— 477
Երկաթի դոներ (Գերբենդ)— 474
Երեշակ— 151, 158, 273
Երվանդակեթ— 41
Եվրոպիա— 319
Եվրոպական թուրքիա— 289
Երասաղեմ— 135, 199—201,
225, 228, 237, 240, 260, 261,
263, 266, 302, 320, 462, 476,
486, 487, 505, 512, 515
Երևան— 18, 29, 30, 32—41,
43, 52, 66, 72, 77, 78, 86,
88, 92, 97, 116, 123, 145,
150—152, 157, 164—168, 170,
173, 174, 180—185, 188, 189,
219, 220, 222, 223, 233,
235, 236, 238, 240, 247, 250,
252, 268, 269, 276, 277, 279,
314, 352, 356, 441, 445, 476,
479, 494, 497, 499, 502, 503,
522, 528
Զ
Զանգի շայ (Հրազդան)— 174
Զարիշատ— 52
Զենգիշենե— 443
Զմյուռնիա— 267, 510, 513
Զուլումաթ կղզի— 463, 470
Է
Էփսոս— 17—20, 22, 29,
40, 147, 149, 151, 157—167,
169—173, 178, 180—184,

187—191, 193—195, 197,
225, 229, 234, 235, 240—
242, 244—247, 249—254, 257,
261, 265—272, 274, 275, 279,
297, 299, 300, 302, 303, 306,
312, 313, 318, 320, 325, 327—
329, 331, 334, 336—339, 341,
343—345, 381, 412, 420, 424,
427, 435, 446, 498, 501, 502,
504—506, 510, 524, 525, 526
Էրզրում— 41, 68, 484
Էրեմիա վանք— 383, 384
Էրեղան— 248
Թ
Թաղեոս առաքյալի վանք— 275,
277
Թաղթիղարշու— 352
Թաննատի վանք— 200, 209
Թարիմ գյուղ— 141
Թարումխարյալ— 47
Թավրիզ— 18, 26—31, 33, 36,
40, 47, 52, 54, 55, 59, 60
66, 67, 69, 71, 72, 79, 82,
83, 86, 118, 123, 135, 152—
155, 156, 159, 178, 188, 211,
212, 223, 227, 250, 253,
278, 329, 342, 356, 373, 374,
381, 385, 388, 440, 441, 446,
452, 453, 472, 477, 481, 483,
490, 491, 493, 494, 497—499,
503, 504, 522, 524
Թավուսի— 465
Թնողուպոլիս (Կարին)— 233, 260
Թեզուրոս կարողիկե— 440
Բեսաղունիկե— 513
Թիֆլիս— 25, 84—88, 92, 96—
—99, 103, 109, 110, 111, 114,
119, 163, 178, 278, 505, 508
Թողիկի Եկեղեցի— 383
Թոխի— 171
Թորոսական— 352
Թոֆաթ— 77, 302, 319, 445, 496,
501, 502, 506

Թոսե ֆաղաֆ— 471
Քուրֆիա— 459
Ի
Իզմիր— 512, 514
Իլիսների երկիր (Անատոլիա)—
—123
Իլով— 183 (տես Լվով)
Իզարի բուրգ— 183
Իմամառու— 39
Իմերքիա— 103
Ինչլու ձոր— 85
Իսպիր— 468
Իսրայել— 46, 54, 64, 221, 511,
512, 516
Իսրաֆ— 329, 331
Լ
Լառի— 373
Լառիան— 428
Լեհաստան— 79, 197, 292, 312,
499, 502
Լիբանան— 52
Լիմ— 201, 202, 310, 312, 314
Լնշան— 47
Լոռի— 52, 278, 474
Լվով— 266, 285—287, 289, 290—
—292, 294, 297, 300—305,
313, 315, 319, 320, 344, 302,
505, 506, 515
Խ
Խարա— 471
Խալիպա— 80
Խալիֆալի— 47
Խանաձախ— 25
Խաշեն— 25, 474
Խառակունիս— 358
Խասոն— 514
Խարբերդ— 492, 498
Խեկուց վանք— 383

հլար — 330, 331—420, 487
 հնուս — 35, 40, 53, 68, 493, 497
 հոյ — 52, 188, 189, 352
 հոշարի բերդ — 385, 392, 394, 398, 399, 403—405
 հոջանդե — 468
 հոշենցի եկեղեցի — 172, 253
 հոռոմապատ — 141, 144
 հորասան — 39, 329, 373, 365, 473, 478, 479
 հորգամ — 379
 հասրովաշան — 376
 հարվիրապ — 22, 26, 188, 484, 491
 հոտանան — 225
 հրամ — 407
 հրամարի եկեղեցի — 493
 հուրաֆրին — 18
 հուր — 330
 հունաս — 373

Կ

Կարուղիկ (Անիի եկ.) — 484
 Կարուղիկ եկեղեցի (Երևան) — 528
 Կախեր — 25, 84, 89, 91, 103—106, 112, 120, 163, 505, 508, 509
 Կազգվան — 40, 52, 188, 352
 Կամախ — 440
 Կամենից — 287—289
 Կայշաման — 467
 Կարապետի (սուրբ) վանք — 193, 273, 274
 Կարբի — 72, 74, 76, 276, 491, 528
 Կարենիա — 146
 Կարին — 35, 36, 40, 41, 53, 68, 69, 80, 174, 183, 191, 197, 233, 260, 279, 352, 444, 445, 483, 484, 487, 493, 497, 498, 501

Կարս — 40, 41, 44, 52
 Կարսնան — 464
 Կաֆա (Քնոզոսթա) — 79, 123, 492, 515
 Կեղի գավառ — 394
 Կեմ — 397
 Կենդանանից վանք — 383
 Կեսարիա — 290, 292, 495, 496
 Կիլիկիա — 325, 328, 488, 489, 496
 Կիսրոս — 123, 440, 493
 Կիրակոս (սուրբ) վանք — 449
 Կոզեան — 248, 315, 502
 Կորա — 158
 Կոլբա — 103
 Կողբ — 74, 183
 Կոնկի վանք — 383
 Կոստանդնուպոլիս (հաս Պոլիս) — 18, 26, 36, 39, 40, 47, 78, 82, 87, 101, 123, 183, 192, 197, 228, 227, 250, 260, 261, 263—267, 290, 302—305, 384—387, 397, 412, 420, 424, 427, 435, 436, 439—441, 443—446, 447, 485, 486, 492, 497—499, 501, 503—505, 508, 512—515, 517
 Կովկաս լեռ — 103, 508
 Կոսայֆ — 52, 72, 74
 Կոսուց — 202
 Կրեան կղզի — 447, 448, 504
 Կուերար — 471
 Կուսանց վանք — 160
 Կուս — 112, 474, 481

Հ

Հաբեշտան — 462
 Հազարաջրիք աղբի — 140
 Հախեր — 25
 Հալապ — 69, 321, 458, 462, 464, 488, 497, 498
 Հալիձոր — 208
 Հակոբ (սուրբ) եկեղեցի — 261, 505

Հալապատ — 484, 523
 Հանկասար — 286
 Համազան — 373, 345, 502
 Համգաշիման — 52
 Հայաստան — 22, 24, 26, 41, 47, 50, 52—54, 62, 63, 79, 146, 160, 161, 260, 226, 301, 303, 350, 407, 484, 487, 490, 491, 525
 Հայոց ձոր — 379, 384
 Հավուց բառ — 22, 23, 28, 188, 236, 318
 Հարավսլավիա — տես Փեշ
 Հարություն (սուրբ) տաճար — 226
 Հեղի — 229
 Հլու — 22
 Հոգվոց վանք — 384, 398, 399, 404
 Հեղկաստան — 463, 465, 467, 508
 Հոջանց գավառ — 206, 207
 Հովհաննավանք — 257, 274
 Հորդանան — 226
 Հիփոսիմե (եկեղեցի) — 155, 260, 484, 506
 Հոմկլա — 325, 488
 Հոմոսի վանք — 485
 Հոռոմաստան — 247, 291, 294, 300, 301, 505
 Հ-ն — 329
 Հոռաստան — 234, 243, 319
 Հուսենիա վանք — 151
 Հարմուզ — 500

Ձ

Ձորո վանք (Զրվանց) — 200

Ղ

Ղազախ — 504
 Ղալախի բերդ — 504
 Ղազրին — 60, 112, 116, 118, 141, 144, 184, 244, 346, 347, 351, 373

Ղազվին — 479
 Ղազարի վանք — 488, 489
 Ղանդանար — 500, 505, 596
 Ղանդազան — 488
 Ղահիյարուխ — 27
 Ղասրիկ — 383, 384
 Ղարաբաղ — 98, 218, 448, 491
 Ղարաղլխան — 507
 Ղափան — 278
 Ղեսիմալխան — 467
 Ղզըշաղաշ — 96
 Ղափենրի երկիր — 225
 Ղրիմ — 79
 Ղրխրուպա (Կոստայի գավառ) — 72
 Ղում — 373
 Ղուրաշի վանք — 191, 383

Մ

Մագրա — 85
 Մալխա կղզի — 447, 504
 Մակու — 40, 52, 275, 352
 Մանուկի Գեղեղեցի — 464
 Մանազկերտ — 40, 52
 Մանաֆինրի բերդ — 333
 Մատանավանք — 327
 Մարաց երկիր — 507
 Մարզվան — 496
 Մարման — 345
 Մեհենիզ — 484
 Մեյիֆգասա — 25
 Մեհրամ — 406
 Մեշ Հայֆ — 345
 Մեղրի — 273, 435
 Մեհրեփա — 94
 Միլ — 465
 Միջագետք — 69, 490, 495
 Միջերկրյան գավառ — 69
 Մղրիք — 494
 Մշո դաշա — 37, 193, 330, 352
 Մոլղավիա — 289, 303
 Մոկաց գավառ — 308
 Մուր — 340, 440, 451, 487, 491, 492

Մյլսեր— 100
Մուզնի— 276
Մուշ— տես Մշո դաշտ
Մուշաղ— 494
Մուշկուն— 47, 166
Մուստաֆա փաշայի մզկիթ— 381

3

Յախյան— 50

Ն

Նախիչևան— 28—32, 40, 44,
52, 54, 55, 66, 71, 86, 153,
155—159, 175, 180, 189, 215,
216, 278, 279, 300 334, 336,
337, 345, 432, 490, 493, 496

Ներինե հռչական— 139
Ներին վարագ— 384
Ներին Փագախ— 384
Նիշ գավառ— 344, 345
Նշավուր— 468
Նուրազնի վանք— 333
Նոր Բարայել— 45

Շ

Շարան լեռ— 468
Շանակերտ— 278, 345
Շանքունոց ձոր— 334, 337
Շանդլվան— 468
Շամ— 451, 468, 491, 492
Շամախի— 18, 83, 85, 86, 89, 90,
91, 116, 201, 441, 498, 523
Շամաղագա պալատ— 504
Շամբ— 216
Շամիրամակերտ— 440
Շամղագան— 376
Շամշապատ— 349, 350
Շամշուղա բերդ— 327, 491
Շամխուր— 201
Շատախ— 385, 394
Շատվան— 465, 468, 497

Շարաբխան— 52
Շեխ-Հայդար— 492
Շենոմայր— 208
Շիրագ (գավառ)— 36, 47, 48,
114, 118—121, 331, 356,
373, 468

Շիրակավան— 41, 52, 352
Շիրվան— 465, 498, 497
Շխաբանա— 352
Շենոսիկ գյուղ— 493
Շոզ (ֆազաֆ)— 329, 527
Շոզակար (տանար)— 328
Շոռոբ— 222, 278, 279
Շոք (գետ)— 376
Շուշանց վանք— 383
Շուշտար— 373

Չ

Չալարան— 492
Չաղբառն— 440, 451
Չարբաղ— 350
Չարեֆ— 474
Չարեֆագետի անապատ— 201
Չինաստան— 471
Չղախոռ (գավառ)— 175
Չոռոմ— 441, 494, 496
Չոքս— 189
Չուրուրով— 189

Պ

Պայրի— 388
Պաշխաշուխ (Իմերեթիա)— 103,
107—110, 114, 115, 163, 507
Պարսկաստան— 22, 23, 25, 26,
40, 41, 44, 47, 52—56, 62—
—65, 111—113, 120, 123,
160, 163, 173, 243, 247, 267,
350, 352, 355, 356, 405, 441,
445, 503
Պարվանուս— 471
Պարտավ— 474
Պոլիս— տես Կոստանդնուպոլիս

Պողոս (սուրբ)— եկեղեցի— 381
Պոնտոս— 79, 123, 485
Պորտուգալիա— 459
Պոտոմոնի (Բուդապեշտ)— 452

Ջ

Ջղախոռ— 47
Ջանլ բերդ— 327
Ջրգուռ բերդ— 440
Ջուլամբրիկ— 327, 385, 392,
394
Ջուլա (նին)— 22—24, 29, 81,
32, 34, 35, 44, 54—60, 166,
335, 336, 405—407
Ջուլա (նար)— 172, 852, 859
Ջումա (մզկիթ)— 413

Ռ

Ռշտունիք— 497
Ռումելի— Ռուումելի (Բալկաններ)
—79, 123

Ս

Սալմաստ— 27, 52, 352, 391
Սալանապատի վանք— 383
Սալանդիր սար— 464
Սանար— 493
Սանաթի շրջան— 74, 183
Սաղմոսավանք— 198
Սամարղանդ— 490
Սանահին— 484, 486, 523
Սանդուխտ (սուրբ կույս)— 275
Սասուն— 330, 345
Սարգիս (սուրբ) վանք— 276, 484
Սերաստիա— 77, 81, 326, 485,
486, 490, 492, 493, 496
Սեանիկ— 502
Սեիթվար— 452
Սիս (Սիսական)— 192, 261, 263,
278, 325, 326, 328, 334,
338, 339, 341, 391, 396
Սոբորի երկիր— 379

Սպանան— 24—28, 47, 50, 60,
61, 86, 96, 98, 99, 105, 113,
114, 118, 124, 127, 135, 137,
—140, 146, 151, 152, 156,
159—163, 165—167, 169, 170—
—176, 178, 180, 184—187,
190, 235, 236, 238, 245, 251,
253, 269, 315, 317, 318, 321,
326, 327, 329, 337, 346, 347,
351—354, 356, 358, 365, 372,
373, 405, 407, 446, 492, 497,
501, 502, 504—509, 527

Սպեր— 493
Սպիտակ ձով— 78, 82
Սոխորդ գյուղ— 503
Սոմխեր— 25
Սոֆիան— 28, 69, 71, 83
Սյունյաց երկիր— 22, 23, 200,
225—227, 230, 231, 284
Սրխու վանք— 383
Սուլեյման սար— 157
Սուլթանիա— 184, 185, 491
Սունխուր— 492
Սուրբ Լուսավորչի եկեղեցի— 494
Սուրբ խաչ— 296, 384, 484
Սուրբ Կյան եկեղեցի— 384
Սուրբ Սանակ եկեղեցի— 381
Սուրբ Սիոնի եկեղեցի— 384
Սուրբ Փրկիչ եկեղեցի— 499
Սուրբ Քառասնից վանք— 488
Սևանա լիճ— 184, 201, 507
Սևաստի վանք— 443

Վ

Վաղարշապատ— 327, 328
Վայոց ձոր— 139, 174, 175
Վան— 22, 35—38, 40, 53, 55,
66—71, 188, 189, 191, 194,
227, 250, 326, 327, 332, 333,
381, 383—385, 387, 388, 392,
393, 399, 403, 405, 421, 424—
—426, 446, 490, 491, 497, 503,
504, 506
Վանա լիճ— 202 279

Վանուշուհ — 345
 Վարագ — 327, 384, 389, 392,
 394, 398, 399, 402, 484, 504
 Վասակաշեն — 477
 Վասպուրական — 67, 192, 202,
 310, 326, 379, 421, 485
 Վարանդա — 474, 476
 Վերին բերդ — 523
 Վերին Զակամ — 25
 Վերին Կարան — 57, 406
 Վերին Վարագ — 383
 Վժան (Ուջան) — 306, 309
 Վրաստան (Վրաց երկիր) — 18,
 36, 122, 163, 164, 167, 173,
 197, 234, 243, 247, 327 473,
 491—493, 498, 508

S

Տարև — 23, 24, 26, 200, 201,
 227, 284, 493
 Տանձափարախ — 201
 Տարուն — 488
 Տեսանց եկեղեցի — 523
 Տիգրանակերտ (Ամիդ) — 20, 22,
 68, 69, 193, 227, 408, 412,
 441
 Տիրամայր եկեղեցի (Վան) — 405
 Տողուզողլի (գետ) — 440
 Տոռիլ — 493
 Տոսպ — 332
 Տրապիզոն — 199, 200, 439, 485,
 492, 499, 500
 Տրիպոլիս — 488
 Տփլիս — 473, 474, 486, 491,
 493, 522, 523

Ց

Ցեյլոն — 464, 465
 Ցղեա (գյուղ) — 222, 253, 278
 Ցրփանց (Չորս վանք) — 200

Ռ

Ուզբեկստան — 458
 Ուլաշ (գյուղաքաղաք) — 499
 Ուժածոր — 52, 74
 Ուղտ (սուրբ) եկեղեցի — 423
 Ուշի — 276
 Ուջան — տես Վժան
 Ուոնա — 20, 21, 47, 327, 442,
 495, 496
 Ուտումեյի (Քաղկաններ) — 123,
 197
 Ուսկու զավան — 376
 Ուստաշագրտ — 376, 504
 Ուրմիա (զավան) — 26, 52, 352

Փ

Փանոս — 137, 138
 Փայտակարան — 473
 Փառչիշ — 137, 138
 Փարիս — 47, 135, 137—140
 Փարխենդ — 345
 Փեշ (Քաղաք Հարավսլավիայում)
 — 452, 493
 Փիզան բերդ — 429, 431, 507
 Փորթուգալիս — 151
 Փոքր Սյունիք — 477

Փ

Փարիկ (գյուղ) — 500
 Փարսուլ — 467
 Փայքարակ — 464, 471
 Փաղ — 479, 493
 Փաքակ — 174
 Փաշան — 373
 Փաշինոնի — 22, 329
 Փասախ — 277
 Փար (գյուղ) — 211
 Փարավաս (գյուղ) — 381
 Փարթի — 59, 105—107, 113,
 163
 Փեմախ — 451

Փրիս — 497
 Փիսաբաղաք — 471
 Փյոթուկու — 218
 Փյոռադարա — 50, 75
 Փշաբաղ — 206
 Փշաղսի — 25
 Փզիկ — 25
 Փրդստան — 69, 234, 243, 247
 Փրման — 331, 356, 373, 468
 Փուլքափա — 155

Օ

Օհանավանք — 73, 243, 528
 Օռոփ գյուղ — 334

Օծոփի զավան — 334, 337
 Օշական — 74, 79, 271
 Օսմանուկ — 439
 Օրմուզ ծով — 471

Տ

Տանրապատ — 112, 113, 118,
 124, 141, 142, 159, 180, 183,
 238, 240, 244, 278, 356, 373,
 501 509
 Տրանկստան — 122, 151, 155,
 175, 186, 187, 458, 460, 461,
 464, 467, 471

Գ Ա Վ Ր Ի Ժ Ե Յ Ո Ւ Լ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը

1. Գիրք պատմութեանց, շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դարէ-ժացոյ, յԱմսբէլոդամում, 1669:
2. Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վաղարշապատ, 1884:
3. Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վաղարշապատ, 1896:
4. Պատմութիւն նեղութեանց և վշտաց, զորս կրեցին հայ ազգու բրիս-տանեայքն, որք բնակեալք են ի քաղաքն Իլով [Գլ. ԻԸ], Տես Կ. Եզեանց: Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռովայ, Պետերբուրգ, 1884, էջ ԽԵ-ԿԶ:
5. «Տարագրութիւն Ջուղայեցոյ ի Սպահան» [Գլ. Ե], «Նորոգութիւն անապատական կենաց ի Հայաստան» [Գլ. ԻԱ] և «Սասանութիւն մեծի անապատին» [Գլ. ԻԲ]: Տես Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 611—614, 616—618 և 623—625:

Ջ Ե Ռ Ա Գ Ր Ե Ր Ը

[Մատենադարան]

6. Մ 1773 Առաքել Դարիժեցի, Պատմութիւն, գրված Կարբի, գրիչ Աթանաս զպիր, 1669 թ.
7. Մ 1772 Առաքել Դարիժեցի, Պատմութիւն, գրիչ Աւետիս երէց, Երեւան, 1666 թ.
8. Մ 5025 Առաքել Դարիժեցի, Պատմութիւն:
9. Մ 7296 Առաքել Դարիժեցի, 1725 թ.
10. Մ 4998 Ժողովածու էջ 136 Բ-ից 405ա. կա մի օրինակ, որ ար-տագրված է Ամստերդամի հրատարակութեանից [1669 թ.]:

11. Մ 5959 [էջ 95ա—103բ] հատվածներ են:
12. Մ 137 [Վիեննայի Մխիթ. մատենադարան],

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

13. Պատմութեան ամբողջական թարգմանութեանը հետեալ վերնագրով՝ «Livre d'histoires composé par le vartbiet Arakel de Taurisz» զետեղ-ված՝ M. Brosset, collection d'historiens arméniens, t. I St-Peters- bourg, 1874, p. 267—608.
14. Պատմութեան ՍԵ զլիթի ֆրանսերեն թարգմանութեանը ընդարձակ է ծանոթագրութեաններով՝ M. Brosset, Des historiens arméniens des XVII et XVIII siècles: Arakel de Tauriz, Registre chronologique, St.-Peters- bourg, 1873, p. 22—60:
15. Դավրիժեցու այն հատվածները, որ վերաբերում են վրաց պատմու- թյանը՝ Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIXe siècle, traduite du Géorgien par B. Brosset, St.-Petersbourg, 1856, p. 421— 445.
16. К. П. Пачкапов, Драгоценные катни, их названия и свойства по понятиям армян в XVII веке. С.—Петербург, 1873.
17. Аракел Давриженци, Кинга истории. Перевод с армянского, предисловие и комментарий Л. А. Ханларян.

Գ Ա Վ Ր Ի Ժ Ե Յ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

18. Արքայաժամ կաթողիկոսի Կրետացոյ պատմագրութիւն անցին իւ-րոց և Նաորշահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 76:
19. Զարբեայ Սարկաւացի Պատմագրութիւն, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 4, 6, 12, 14—15, 18, 20, 26, 53, 57, և 63:
20. Նույնի՝ հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 96:
21. Նույնի՝ հ. Գ, 1870, էջ 4, 6, 7, 29, 31, 38—40, 42 և այլն:
22. Խաչատուր արեղայի Ջուղայեցոյ պատմութիւն Պարսից, Վաղար- շապատ, 1905, էջ 100, 112, 127, 135, 138, 139 և 220:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

23. Արեղյան Մ. Հայոց հին զրականութեան պատմութեան, գիրք Բ, Երեւան, 1946, էջ 439—440 և 442—454:
24. Ալիշան Ղ. Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 131—132:
25. Աճառյան Է. Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1942, էջ 216:

26. Անասյան Հ. Գիտողություններ Ստեփանոս Սամաստեցու կենսագրության վերաբերյալ, «Էջմիածին», 1956, № 8—9, № 11—12:

27. Նույնի՝ Հայկական մատենագիտություն, Ե-ժՀ զր. հ. Ա, Երևան, 1959, էջ 1144—1155:

28. Ասախյան Վ. Առաքել Դավրիժեցի, «Պատմա-բանասիրական հանգես» Երևան, 1970, № 3:

29. Բրոսե Մ. (Brosset M.), Des historiens arméniens des XVIIe et XVIIIe siècles Arakel de Tauriz, Registre chronologique, annoté par M. Brosset, Saint-Petersbourg, 1873 (Mémoires de l'Académie Impériale des Sciences de Saint-Petersbourg VIIe Série tome XIX, № 5):

30. Բրոսե Մ. (M. Brosset), Collection d'historiens arméniens... traduit par M. Brosset, t. I, Saint-Petersbourg, 1874, p. XX—XXXII:

31. Գապպենեյան Գ., Հայ ողբերգականեր. Առաքել Դավրիժեցի, Տաճար 1912, էջ 337—340, 363—367 և 405—408:

32. Գանեղյան Լ. Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978:

33. Գրական թերթ, 1975, № 22.

34. Գուրյան Եղ., Պատմություն հայ մատենագրության, Կ. Պոլիս, 1885, էջ 81:

35. Զամինյան Ա., Հայ գրականության պատմություն, Նոր Նախիջևան, 1914, էջ 239—240:

36. Զարեհանյան Գ., Պատմություն հայերեն զգրության ի պետական վարժարանաց, Բ., Նոր մատենագրություն, Վենետիկ, 1878, էջ 172—179:

37. Թորոսյան Հ. (Thorossian H.), Histoire de la littérature arménienne des origines jusqu'à nos jours Paris, 1951, p. 205—206:

38. Ան, Հայկական տպագրություն, հ. Ա, Թիֆլիս, 1901, էջ 159—161:

39. Ան, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1946, էջ 360—364:

40. Ղազիկյան Ա., Հայկական նոր մատենագիտություն, հ. Ա, Վենետիկ, 1909, էջ 183—189:

41. Միզգյան Հ. Առաքել Դավրիժեցու առաջին հրատարակության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2:

42. Назаряну С. Обзор истории гайканской письменности. Казань, 1846, стр. 42—43:

43. Նյման Կ. Ֆ. (Neumann C. F.). Versuch einer Geschichte der armenischen Literatur, 1836, S. 248—249.

44. Զամինյան Մ., Պատմություն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 17:

45. Պետերման Հ. (Petermann H.), Reison im Orient, Bd. I, Leipzig, 1860, S. 223:

46. Պոստոլյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 213:


47. Ջավախիշվիլի Ի., «Եռյուղի մեծ դարձիկը» ժողովրդական պատմություն, 1935, թիվ 167—168:

1935, էջ 167—168 [Հայ պատմական հին գրականությունը, գիրք Ա. Թրիֆոսի, 1935, էջ 167—168]:

48. Սարգիսյան Խ., Առաքել Դավրիժեցին և իր պատմագրությունը, Փլաճոր, Բեյրութ, 1956, նո. 1, էջ 69—70:

49. Սոմալյան Ս. (Somalian S.), Quadro della Storia litteraria, dell'armenia, Venezia, 1829, p. 157—158:

50. Օրմանեան Մ., Ազգայնագրություն, մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2491—2492, § 1712:



Յ Ա Ն Կ

Առաջիկա պատմագրֆիս առաջարանք 17

Գլուխ Ա

Բռնավորների հարկապահանջութիւնից կաթողիկոսների կրած տառապանքների մասին 18

Գլուխ Բ

Մրապիտն վարդապետի էջմիածնի Սուրբ աթոռ գալու և կաթողիկոս լինելու մասին 19

Գլուխ Գ

Պարսից թագավոր Եահ-Աբասի Հայաստան գալու, ամեն ինչ գրավելու և Սրապիտն վարդապետի նորից իր տեղը դառնալու մասին 24

Գլուխ Դ

Քղալօղլու առաջին գալու մասին, որի պատճառով շահը բովանդակ Արարատյան աշխարհը և սրան մոտիկ սահմանակից գավառները սրա հետ միասին ամբողջովին տարազրեց 41

Գլուխ Ե

Ամենափարթամ գլուղաքաղաք Ջուղայի գեպի պարսից երկիրը տարազրելու մասին 53

Գլուխ Զ

Քղալօղլի զորավարի երկրորդ անգամ գալու, պարսիցիւն և վերագառնալու մասին 66

Գլուխ Է

Ջալալիների հայտնվելու, սաստիկ սովի, մարդակեր գայլերի և այլ ավարառութիւնների մասին, որ թափվեցին երկրի վրա 73

Գլուխ Ը

Փանձաի ու Եամախի քաղաքների գրավման մասին 89

Գլուխ Թ

Քե ինչ պատրվակով Եահ-Աբասը վրաց թագավորներին իր մոտ կանչեց և ինչ հեղինակութով դավեց նրանց 96

Գլուխ ժ

Եահ-Աբասի մի այլ դավադրութիւն պատմութիւնը, որ ուրիշ անգամ արեց վրաց թագավորի նկատմամբ 99

Գլուխ ժԱ

Պատմութիւն ու պատճառ վրաց երկրի ավերման և սրտեց լավասափ թագավորի մահվան, որ եղավ առաջին Եահ-Աբասի ձեռքով 98

Գլուխ ժԲ

Վախեթի Թամրազ թագավորի մոր նահատակութիւն պատմութիւնը՝ կատարված նույն Եահ-Աբասի ձեռքով 120

Գլուխ ժԳ

Պատմութիւն այն նեղութիւնների, որ կրեց հայոց ազգը առաջին Եահ-Աբաս թագավորի ձեռքից 123

Գլուխ ժԴ

Մյուս այն նեղութիւնների պատմութիւնը, որ հայ ժողովուրդը քաշեց առաջին Եահ-Աբաս թագավորի ձեռքից 135

Գլուխ ժԵ

Այն մասին, թե ինչու Աբաղստան կոչված երկրում ոչխարների հարկ չկա 141

Գլուխ ժԶ

Պատմութիւն սուրբ կույս Հոփսիմեի նշխարների մասին, թե ինչպես գտնվեցին ու հանվեցին ֆոսֆորների կողմից և թե ինչպես տարվեցին Սպահան քաղաքը 146

Գլուխ ժԷ

Քե ինչպես կամ ինչ պատճառով Սպահան քաղաք տարան մեք լուսավորիչ Սուրբ Գրիգորի աչք և Սուրբ աթոռ էջմիածնի քարեղը 160

Գլուխ ԺԸ

Հարյուր քուսան տուգանքի մասին, որ Շահը գրեց Մելքիսեթ կաթողիկոսի վրա 173

Գլուխ ԺԹ

Կաթողիկոսության և Սահակ կաթողիկոսի փախստյան պատմությունը 183

Գլուխ Ի

Սահակ կաթողիկոսի հակառակության մասին, որ գործեց ընդդեմ էջմիածնի ու Մովսես կաթողիկոսի 190

Գլուխ ԻԱ

Պատմություն բարեգործ մարդկանց՝ Սարգիս եպիսկոպոսի և տեր-կիրակոսի, որոնք եղան անապատներ շինելու և հաստատելու սկզբնավորողներ. Դրանով էլ պատճառ դարձան վանքերի, եկեղեցիների բարեկարգության և սրանց բնակիչների բարօրության 193

Գլուխ ԻԲ

Մեկ այլ պատմություն սույն Մեծ անապատի մասին 207

Գլուխ ԻԿ

Սուրբ վարդապետ Պողոսի քարոզչության և վարքի պատմությունը 211

Գլուխ ԻԿԲ

Տեր Մովսեսի վարդապետության ու կաթողիկոսության մասին, միա-ժամանակ էջմիածնի լուսակառույց Սուրբ աթոռի նորոգության մասին 225

Գլուխ ԻԵ

Տեր Փիլիպոսի վարդապետության ու կաթողիկոսության մասին, միա-ժամանակ Սրբուհի Գայանեի և Հովհաննիսի եկեղեցիների նորոգության և նրանց նշխարների հայտնվելու մասին 248

Գլուխ ԻԶ

Նշանավոր վանքերի նորոգության և բազմաձայն ու մեծավայելուչ եկեղեցիների շինության մասին 273

Գլուխ ԻԷ

Տեր Անդրեա քահանայի նահատակության մասին 278

Գլուխ ԻԸ

Պատմություն նեղությունների ու շարշարանքների, որ կրեցին կվով քաղաքում բնակված հայ քրիստոնյաները 288

Գլուխ ԻԹ

Այն մասին, թե ովքեր և ինչպես դարձան պատճառ փիլիսոփայական գրքերի ոճն ու դիտությունը և քերականության արվեստը հայտնաբերելու և նորոգելով սփռեցին հայոց վարդապետների մեջ, որ [դիտությունը՝ արվեստը] ամբողջովին վերացել ու անհետ էին եղել 308

Գլուխ Լ

Պատմություն մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի աչի մասին 324

Գլուխ ԼԱ

Մեր կաթողիկոսների շարակարգությունը, որ առել ու սկսել ենք սուրբ Ներսես Կլայեցուց և կարգավորելով հասցրել ենք մինչև մեր ժամանակը 338

Գլուխ ԼԲ

Վարդապետների կարգը՝ սկսած Մխիթար Գոշից գավազանով, որ իշ-նում է մինչև էջմիածնի դպրոցը 344

Գլուխ ԼԳ

Թե ինչ պատճառով հայ քրիստոնյաներին հանեցին Սպահանի քաղաքամիջից և տարան քաղաքի ծայրամասը գետից այն կողմ բնակեցրին 348

Մի այլ պատմություն, որ վերաբերվում է անցյալի պատմությունների կարգին 355

Գլուխ ԼԴ

Պատմություն Սպահան քաղաքում բնակված հրեաների և այն հրեաների, որոնք պարսից թագավորության իշխանության ներքո են բնակված, թե ինչ պատճառով իրենց կրոնից հանեցին և դարձրին մահմեդական 358

Գլուխ ԼԵ

Մեծ քաղաք Թավրիզի երկրաշարժի մասին 373

Գլուխ ԼԶ

Պատմություն Վարդ Պատրիկի գերեզմանի ու ոսկորների մասին 379

Գլուխ ԱԷ

Վան քաղաքում և իր շրջակա գավառներում տեղի ունեցած երկրաշարժի մասին 381

Գլուխ ԱԸ

Քննվանի Վարազ անվանված վանքը կողոպտելու, Ավագ սուրբ նշանը կոշտաբեհ²²³ բերզը տանելու և այնտեղից Վան քաղաք գարձնելու պատմությունն ու պատճառները 388

Գլուխ ԱԹ

Հուսեյին աղայի Ջուլամերկ գնալու մասին 392

Գլուխ Խ

Պատմություն պիղծ Չոմարի սատակման մասին 394

Գլուխ ԽԱ

Պատմություն Սուլեյման բեկի սատակման մասին 398

Գլուխ ԽԲ

Պատմություն Իբրահիմ բեկի իշխանության և Սուրբ նշանը Վան քաղաք գարձնելու մասին 403

Գլուխ ԽԳ

Պատմություն սուրբ Հովհաննես Կարապետի վերջին ժամանակներս հայտնաբերված նշխարների մասին, որ վաղ ժամանակներից պահված էին Հին Ջուղայում 405

Գլուխ ԽԴ

Պատմություն անմեղ մանուկ Նիկողայոսի նահատակության 408

Գլուխ ԽԵ

Պատմություն սուրբ Քրիստոսի հավատացյալ Մարտիրոս կաշատուրի նահատակության 412

Գլուխ ԽԶ

Պատմություն Սիրուն անունով քրիստոնյայի նահատակության 421

Գլուխ ԽԷ

Պատմություն Մխիթար անունով քրիստոնյայի նահատակության 424

Գլուխ ԽԸ

Պատմություն Ավետիս անունով քրիստոնյայի նահատակության մասին 428

Գլուխ ԽԹ

Իր մահվան ժամին ուրացած մի մարդու վրա եղած ասածու հրաշքի մասին 432

Գլուխ Մ

Մասնակի հրդեհի մասին, որ եղավ մեծ քաղաք Կոստանդնուպոլսում 435

Գլուխ ՄԱ

Պատմություն օսմանցի թագավորների. կոնդկար կոչվող օսմանի շառավիղների կարգը այս է 439
ա) օսմանցի թագավորների կարգը 443
բ) օսմանցի թագավորների մասին, թե ովքեր են մեկը մյուսից հետո 443
գ) Մի այլ խոսք ևս օսմանցի թագավորների մասին 448
դ) Մի այլ խոսք ու կարգ օսմանցի թագավորների 450

Գլուխ ՄԲ

Պարսից թագավորների ազգաբանությունը 453

Գլուխ ՄԳ

Թանձազին քարերի անունների և որպիսությունների մասին 456

Գլուխ ՄԴ

Այս է աշխարհի վրա գտնվող գոհարների գիրքը, թե որտեղից են ստացվում. ամենից առաջ ավաստը 463
Դեղձափի մասին մի այլ խոսք ևս 469

Գլուխ ՄԵ

Մարեցի Հովհաննես վարդապետի գրած Աղվանից աշխարհի պատմությունը 472
Համառոտ խոսք սկզբից մինչև մեր օրերը ժամանակագրությամբ գրված 483

Գլուխ ՄԶ

. 484

[Գլուխ ՄԷ]

Հրեա ազգի հետ տեղի ունեցած անցքերի և Սարեթա անունով հրեայի, որն ասում էր, թե ինքը հրեական ազգի Քրիստոս փրկիչն է

և արդ եկել է և հայտնվել, որ փրկի նրանց և այլ իրողություն-
ների պատմություն, որ հաշորգեց արանց 510

Գլուխ ԾԸ (ըստ բնագրի ԾԶ) 523

Մանրագրություններ	530
Անձնանունների ցանկ	557
Տեղանունների բառարան	570
Դավրիժեցու նրատարակությունները	556
Ձեռագրերը	556
Քարգմանություններ	557
Մատենագրական նյութեր Դավրիժեցու մասին	557
Գրականություն	557

ISBN 5-550-00008-1

Литературно-художественное издание
«Армянские летописцы»

АРАКЕЛ ДАВРИЖЕЦИ

История

Ереван, издательство «Советакан грох»
На армянском языке

Գրական-գեղարվեստական նրատարակություն

«Հայ մատենագիրներ»

ԱՌԱՔՅՈՒՄ ԳԱՎՐԻՃԵՑԻ

Պատմություն

Խմբ. վարիչ՝ Քոփչյան Ս. Է.
Մասն. խմբագիր՝ Համբարձումյան Վ. Գ.
Խմբագիր՝ Դանիելյան Հ. Հ.
Նկարիչ՝ Մատուրյան Հ. Կ.
Գեղ. խմբագիր՝ Մալխասյան Հ. Ս.
Տեխ. խմբագիր՝ Սևոյան Ա. Հ.
Վերստուգող սրբագրիչ Ազատյան Յ. Վ.

ИБ М 5546

Հանձնված է շարվածքի 24. 11. 1987 թ.: Ստորագրված է տպագրության՝ 7. 05. 1988 թ.: Ֆորմատ 84×108¹/₃₂՝ Քուլթ՝ տպագր. № 1: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 31,08 պայմ. տպ. մամ., 28,75 հրատ. մամ.: Տպարանակ՝ 20000: Պատվեր՝ 3530: Գինը՝ 3 ռ. 90 կոպ.: «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91: Издательство «Советакан грох», Ереван-9, ул.

Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի անտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան-10, Ալավերդյան փող. № 65:

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-10, ул. Алавердяна, 65.